

*Գիրքը նվիրվում է  
Շուշիի ազատագրման  
25-րդ տարեդարձին*

**VAHRAM BALAYAN**

**SHUSHI: THE PLACE AND THE ROLE  
IN THE ARMENIAN CIVILIZATION SYSTEM**

•

**ВАГРАМ БАЛАЯН**

**ШУШИ: РОЛЬ И МЕСТО  
В СИСТЕМЕ АРМЯНСКОЙ ЦИВИЛИЗАЦИИ**

**ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ**

**ՇՈՒՇԻ**

**ՏԵՂԵՆ ՈՒ ԴԵՐԸ  
ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**



Տպագրվում է Արցախի գիտական կենտրոնի և Արցախի պետական համալսարանի գիտական խորհուրդների երաշխավորությամբ:

Հետազոտությունը իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ կողմից տրամադրված ֆինանսական աջակցության շնորհիվ՝ SGS 14.10-005 գիտական թեմայի շրջանակներում:

Գիտական խմբագիրներ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. **Գևորգ Ստեփանյան**,  
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ **Մելանյա Բալայան**

Հրատարակչական խմբագիր՝ բան. գիտ. դոկտոր **Հովիկ Մուսայեյան**

Գրախոս՝ ԱրՊՀ պատմության ամբիոն

Բ 200 Բալայան Վահրամ  
ՇՈՒՇԻ. ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ/  
Վ. Բալայան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2017.— 560 էջ + 32 էջ ներդիր:

Գիրքը ընդգրկում է հայոց բերդաքաղաք Շուշիի պատմությունը Զ. ա. առաջին հազարամյակից մինչև մեր օրերը: Աղբյուրագիտական հարուստ նյութի հիման վրա ներկայացվել է Շուշիի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքը, արժևորվել նրա տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում:

Մենագրության մեջ տեղ գտած պատմական իրադարձությունները ջննդության են ենթարկվել ներազգային և տարածաշրջանային զարգացումների վերլուծության հենքի վրա:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, ազգագրագետների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 94(479.25)  
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-68-547-2

© Վ. Ռ. Բալայան, 2017  
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . .	7
Գլուխ 1. ՇՈՒՇԻԻ ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ . . . . .	25
ա) Աշխարհագրական դիրքը . . . . .	25
բ) Կլիման և հողային ծածկույթը: Կենդանական աշխարհը . . . . .	31
Գլուխ 2. ՇՈՒՇԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (Ք. Ա. 1-ին հազարամյակից մինչև 18-րդ դարի երկրորդ կեսը) . . . . .	38
Գլուխ 3. ՇՈՒՇԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ . . . . .	84
ա) Ղարաբաղի խանության կազմավորումը: Շուշիի պատմության եղերական շրջանը . . . . .	84
բ) Աղա Մուհամմադ խանի արշավանքը դեպի Շուշի ու Այսրկովկաս և դրա հետևանքները . . . . .	111
գ) 1804-1813 թվականների ռուս-պարսկական պատերազմը: Շուշիի պաշտպանությունը . . . . .	124
Գլուխ 4. ՇՈՒՇԻԻ ՄԵԿԴԱՐՅԱ ՎԵՐԸՆԹԱՅԸ (Քաղաքական գործընթացներ, տնտեսական և մշակութային ճեղքբերումներ) . . . . .	134
ա) Շուշին ցարական տիրապետության առաջին շրջափուլում (1805-1826 թթ.) . . . . .	134
բ) 1826-1828 թվականների ռուս-պարսկական պատերազմը: Շուշիի հերոսական պաշտպանությունը . . . . .	152
գ) Շուշիի վարչական և քաղաքական կյանքը 1828-1917 թվականներին . . . . .	166
դ) Շուշիի տնտեսական կյանքը 1813-1917 թվականներին . . . . .	186
ե) Շուշիի մշակութային կյանքի վերընթացը 1813-1917 թվականներին . . . . .	218
զ) Շուշին Արցախի հոգևոր թեմական կենտրոն . . . . .	288

է) Շուշիի բնակչությունը, միջէթնիկ հարաբերությունները, կենցաղը և սովորույթները . . . . .	307
ը) Շուշին որպես համամարդկային առաջադեմ գաղափարների ձևավորման, տարածման և ազգային ազատագրական պայքարի կենտրոն . . . . .	347
թ) Հայ-թաթարական ընդհարումները Շուշիում 1905–1906 թթ. և դրանց հետևանքները . . . . .	387
<b>Գլուխ 5. ՇՈՒՇԻՆ 1917–1920 ԹԹ. ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԵՐՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ . . . . .</b>	<b>423</b>
<b>Գլուխ 6. ՇՈՒՇԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐԲԵՋԱՆԻ ՀԱՅԱՍՊԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐՈԳԱՅԹՈՒՄ . . . . .</b>	<b>451</b>
<b>Գլուխ 7. ՇՈՒՇԻՆ ԱՐՑԱԽԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1988–2017 թթ.) . . . . .</b>	<b>473</b>
<b>ՎԵՐՋԱԲԱՆ . . . . .</b>	<b>492</b>
<b>PEՅԻՄԵ . . . . .</b>	<b>496</b>
<b>SUMMARY . . . . .</b>	<b>500</b>
<b>Օգտագործած աղբյուրների և գրականության ցանկ . . . . .</b>	<b>504</b>
<b>Անձնանունների ցանկ . . . . .</b>	<b>532</b>
<b>Տեղանունների ցանկ . . . . .</b>	<b>550</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ դժվար է գտնել Շուշիի պես մեկ այլ քաղաք, որն իրեն արարող ժողովրդի կյանքում ունենար ճակատագրական և որոշ առումներով հակասական դերակատարություն: Մի կողմից այն հայոց բազմաբնույթ և բազմաշերտ կենսագրության առանցք հանդիսացավ՝ նոր լիցք հաղորդելով հայ ժողովրդի ստեղծագործ ոգուն, մյուս կողմից էլ՝ կորուստների ու մաքառումների նախադեպ դարձավ:

Այս տեսանկյունից, գիտականորեն արժևորելով և լուսաբանելով Շուշիի ավելի քան երեք հազարամյա կենսագրության սովերոտ ու չբացահայտված էջերը, սույն աշխատությունը նպատակ ունի նոր ընթացք հաղորդել Հայոց արևելից կողմանց պատմության ուսումնասիրման և ամբողջականացման գործին:

Արդի ժամանակներում հայկական երկու հանրապետություններում՝ ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող արմատական տեղաշարժերի, ազգային արժեքների վերափմաստավորման պայմաններում բազում դարերի ընթացքում Շուշիի հայության ազատության, առաջադիմության, ազգային, համամարդկային արժեքների պահպանության համար պայքարի, պետականակերտման, տնտեսական, մշակութային կյանքում կուտակած հարուստ փորձի, քաղաքական տարաբնույթ, երբեմն իրարամերժ զարգացումների ուսումնասիրությունը, նրա մասսայականացումն ու այդ ամենի ստեղծագործաբար օգտագործումն ունի տեսական և գործնական մեծ նշանակություն:

Նախանցյալ ժամանակներում պետականակերտման գործընթացում թույլ տրված սխալներն ու անտրամաբանական հաշվարկները, որոնք, շատ դեպքերում, խոչնդոտ էին դառնում ազգային հիմնահարցերի լուծման ճանապարհին և կասեցնում արցախահայության բնականոն կյանքը, այսօր դաս են դառնում, հարուստ կենսափորձի յուրացման աղբյուր ծառայում պետական ու քաղաքական գործիչների համար:

Նորահայտ արխիվային վավերագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, պարբերական մամուլի և հրապարակի վրա եղած պատմագիտական գրականության հիմքերի վրա փորձել ենք համակողմանիորեն ուսումնասիրել

հնագույն շրջանից մինչև մեր օրերը Շուշիի և անմիջապես նրա հետ կապված ու բերդաքաղաքի պաշտպանական համակարգի մեջ ներառված բնակավայրերի պատմությունը՝ առավել ծանրանալով հիմնահարցը բնութագրող առանցքային կողմերի վրա: Շուշիի երեքհազարամյա պատմությունը, լինելով մեկ ամբողջություն, այդուհանդերձ, միապաղաղ և նույնօրինակ ընթացք չի ունեցել: Ուստի, ինչպես այս հանգամանքը, այնպես էլ նաև հրապարակի վրա առկա նյութերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը խնդրո առարկա ժամանակահատվածը պատմաշրջանների բաժանելու՝ ասել կուզի պարբերացնելու անհրաժեշտություն է առաջադրել:

Շուշիի բազմադարյան կենսագրության ամեն մի պատմաշրջան ունեցել է զարգացման յուրօրինակ օրինաչափություն և տրամաբանություն: Այդ ամենի բացահայտումը, վերագնահատումը, վերաիմաստավորումը հնարավորություն է տալիս հայ մարդու ստեղծած, հազարամյակների քուրայով անցած և բյուրեղացած արժեհամակարգային նշանակության երևույթները հասու դարձնել ոչ միայն ներկա սերնդին, այլ նաև համաշխարհային առաջադեմ հանրությանը՝ նպատակ ունենալով մի շարք առումներով դրանք ծառայեցնել մարդկության առաջընթացին:

«Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում» աշխատությունը բաղկացած է ներածությունից, յոթ գլխից, վերջաբանից, օգտագործած սկզբնաղբյուրների, գրականության, տեղանունների և անձնանունների ցանկերից:

Առաջին գլխի մեջ ներկայացված է բնակավայրի բնապատմական այն միջավայրը, որը, վաղնջական ժամանակներից սկսած, Շուշիի բարձրավանդակն ու հարակից տարածքները դարձրեց հայ մարդու կենսագործունեության դաշտ: Աշխարհագրական այդ միջավայրը դարձավ Հայոց արևելից նահանգները միջնաշխարհի հետ շաղկապող օղակ: Պատմական իրողությունների թելադրանքով Շուշիի սարահարթում ձևավորված ամրոց-բնակավայրը, ժամանակի հոլովույթում դարձավ Մեծ Հայքի անվտանգության պահպանման կարևորագույն բաղադրիչներից մեկը: Դա գիտակցել են ինչպես հայոց երկրի տերերը, այնպես էլ՝ նրա թշնամիները:

Երկրորդ գլխում մեկնաբանվել են Ք.ա. առաջին հազարամյակից մինչև 18-րդ դարի կեսերն ընկած ժամանակահատվածում Արցախի տարածքում ձևավորված հայկական իշխանությունների՝ տնտեսապես ու քաղաքականապես կայացման գործում ամրոց-բնակավայրի ունեցած դերակատարության հարցերը:

Քննարկվող ժամանակաշրջանի պատմությունն ուսումնասիրելիս արժևորվել է հայության ինքնության, հայոց պետականության պահպան-

ման ու ամրապնդման գործում Շուշիի ազգաբնակչության դերը, հատկապես ակնառու գործիչների հայրենանպաստ գործունեությանը տրվել են իրական գնահատականներ: Առանձնակի անդրադարձ է կատարվել բերդի ամրացման գործում Ավան հարյուրապետի ու նրա համախոհների գործունեությանը և այդ խորապատկերի վրա արժևորվել նրանց դերը երկրամասի ինքնուրույնությունը և հայահունչ դիմագիծը պահպանելու հարցերում:

Առաջին անգամ պատմագիտության մեջ փորձ է կատարվել ամբողջական տեսքով Ք.ա. առաջին հազարամյակից մինչև 18-րդ դարի կեսերը ներկայացնել Շուշիի պատմությունը: Ցույց է տրվել Շուշիի սարահարթի և հարակից կիրճերի բնակեցման, պաշտպանական կառույցների ստեղծմանն ուղղված հայ մարդու ջանքերն ու այդ ամենի շահեկան կողմերը:

Երրորդ գլխում բացահայտվում են այն հիմնական հանգամանքներն ու դրդապատճառները, որոնք նպաստեցին թուրքախոս քոչվոր ցեղի առաջնորդ Փանահ խանին և նրան հաջորդած Իբրահիմ խանին՝ հիմնավորվելու Շուշիում: Նորովի են մեկնաբանվում 18-րդ դարի երկրորդ կեսի իրադարձությունները, մասնավորապես՝ Արցախի մելիքների ռազմական, դիվանագիտական, քաղաքական քայլերը՝ Շուշիի նորաբույս տերերի հակահայ գործողությունները ձախողելու և հայրենի բնակավայրը նորից հայկական արժեհամակարգ վերադարձնելու ջանքերը:

Չորրորդ գլխում քննարկվում են Գյուլիստանի պայմանագրից հետո տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրողությունները, որոնք նպաստեցին Շուշիի՝ ամրացված բնակավայրից բերդաքաղաքի վերաճելու և հայաշունչ դեմքը լիարժեք պահելու գործընթացին:

Հանգամանորեն ներկայացվում է 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին հայոց Շուշիի դերը Այսրկովկասի առևտրա-արդյունաբերական կապիտալի ձևավորման ու զարգացման գործում:

Այդ խորապատկերի վրա բացահայտվում են նաև քննարկվող ժամանակահատվածում հայ ազգային, մշակութային պոռթկումների մեջ Շուշիի անուրանալի դերակատարությունն ու հենապյունային նշանակության նվաճումները: Շուշին իրավամբ դարձել էր «կովկասահայերի մտավորականության ինքնատիպ հանգույցներից մեկը»<sup>1</sup>: Նրանք թարմ շունչ հաղորդեցին բազմադարյան հայկական մշակութային, կրթական կյանքի նոր ընթացքին:

Միաժամանակ ներկայացվում է Շուշիի տնտեսական, հասարակական, մշակութային եռուղեղի ազդեցությունն ազգային փոքրամասնությունների, մասնավորապես թուրքերի (թաթարների) ընդհանրական ձեռքբերումների

<sup>1</sup> Հովհաննիսյան Ա., Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 76:

վրա: Այդ տարիներին Շուշիում տեսանելի էին ժամանակակից զարգացած քաղաքացիական հասարակությանը բնորոշ երևույթներ:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Շուշին՝ Արցախի տնտեսական, քաղաքական, մշակութային մայրաքաղաք լինելուց զատ, դարձել էր նաև Հայոց արևելից նահանգների հոգևոր թեմական կենտրոնը:

Շուշին մի առանձին հմայքով դեպի իրեն էր ձգում աշխարհի տարբեր ծագերում, մասնավորապես՝ Այսրկովկասի և Պարսկաստանի տարբեր բնակավայրերում ապրող հայերին: Շուշին դառնում էր հայահավաք կենտրոն:

Շուշի տեղափոխված հայերը, ենթարկվելով արցախյան միջավայրի ազդեցությանը, մի քանի տասնամյակների ընթացքում մոռացան իրենց բարբառներն ու սովորույթները, մերվեցին տեղացիներին և արդեն հանդես էին գալիս որպես մեկ ընդհանրություն՝ հայկական քաղաքամասի բնակիչներ: Նրանք իրենց ավանդն ունեցան Հայոց մեծ հայրենիքի այդ փոքր անկյունի շենացման ու բարգավաճման գործում:

Վերոհիշյալ գլխում առանձին քննարկման նյութ է դարձել հայ հասարակական, քաղաքական, ազգային-ազատագրական պայքարը հունավորելու, կազմակերպական նոր ընթացք ապահովելու գործում Շուշիի հայության դերակատարության հարցը:

Ակադեմիկոս Հ. Սիմոնյանը 20-րդ դարի սկիզբն իրավացիորեն բնութագրել է որպես դարաբաղդի հեղափոխականների ֆենոմենի շրջան<sup>2</sup>: Իսկ տվյալ ժամանակաշրջանի դեպքերի և իրադարձությունների մասնակից Ռուբենը գրել է. «Տաճկահայաստանի մեջ յեղափոխութեան ծնունդը բնական հետեւանք էր զուլումի և միւս կողմէ՝ ժողովրդական գիտակցութեան արթնացման: Այդ կարտահայտուէր բնական ձեւով՝ վայրի ու տարերային: Այդպես էին, օրինակ, Տարօնի մէջ Արաբոները, Չոլոները եւ Բազիկները: Բացի ըմբոստութենէն, անոնք չունէին դրական ու մշակուած նպատակ: Անոնց բովանդակութիւն եւ նպատակ տուողները տարօրինակօրէն եղան Սիւնէաց եւ Ղարաբաղի լեռներէն, առաւելապես Շուշուով քաղաքէն եկողները ... եթէ վասպուրականցիք բնական արմատն էին այդ շրջանի յեղափոխութեան, անոր պատուաստներն էին դարաբաղդիք, որ համ եւ բովանդակութիւն տուին անոր հիւթերուն»<sup>3</sup>:

Այդ համապատկերի վրա Շուշիի հայության առաջադիմական, ազատասիրական գաղափարների ամեն մի դրսևորման նկատմամբ ցարական

<sup>2</sup> Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1, Երևան, 2003, էջ 596:

<sup>3</sup> Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակարանները, հ. Բ, Թեհրան, 1982, էջ 134:

ինքնակալության թշնամական վերաբերմունքը շոշափելի էր ու տեսանելի: Դրանք իրենց արտահայտություններն ստացան շուշեցի մտավորականների, գործիչների հալածանքների, լուսավորական, կրթական, մշակութային հաստատությունների փակման և հայ-թաթարական արյունալի բախումների սանձազերծման դրսևորումներով:

Հինգերորդ գլխում ներկայացվել է 1917-1920 թթ. արցախահայության պետականության վերակերտման գործում Շուշիի հայության անուրանալի դերակատարությունը: 1918 թ. մայիսից սկսած՝ մուսավաթական Ադրբեջանն ամեն կերպ ձգտում էր տիրանալ Արցախի սրտին՝ Շուշիին, երկրամասը բաժանել երկու հատվածի, վերջնականապես ծնկի բերել ժողովրդին ու բռնազավթել Հայոց արևելից նահանգները: Բերդաքաղաքում գտնվող քաղաքական ուժերը, մանավանդ ՀՅ Դաշնակցությունն ամեն ջանք գործադրեցին՝ ձախողելու թուրքերի և նրանց դաշնակից անգլիացիների հայաստանյայց ծրագրերը: Այդ դաժան պայքարում 1920 թ. մարտի 23-ին մոխրակույտի վերածվեց, օտարազգիների բնութագրմամբ, «Փոքրիկ Փարիզը»՝ հայոց շենշող Շուշին:

Վերոհիշյալ գլխում գնահատականներ են տրվել տվյալ ժամանակաշրջանի քաղաքական զարգացումներին, որոնք տեղավորվում են ԼՂՀ միջազգային իրավական ճանաչման տրամաբանության մեջ:

Վեցերորդ գլխում բացահայտվել են խորհրդային տարիներին Շուշիի հայության վերջին բեկորների նկատմամբ բոլշևիկ թուրքերի (ադրբեջանցի) մոտեցումները, ձեռնարկված քայլերն ու ներկայացվել այդ ամենի հետևանքները: Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը բերդաքաղաքին վերապահել էր Արցախի հայության համար զսպաշապիկի դերակատարություն: Հայ մարդու հայրենիքում նրա իսկ ձեռքով կառուցված քաղաքը գործում էր ընդդեմ հայության:

Յոթերորդ գլխում ներկայացված է Շուշիի ազատագրման ռազմագործողությունը, որտեղ տեսանելի է հայրենիքն ազատագրելու համար հայ զինվորի աննկուն կամքը և Շուշիի ապագայի հանդեպ անսահման պատասխանատվությունը:

1992 թ. մայիսի 9-ի փառահեղ հաղթանակը համահայկական վերածննդի նախերգանքը դարձավ:

Աշխատության մեջ, տարբեր հարցերի հետ կապված, անդրադարձ է կատարվել պատմագիտական գրականության մեջ Շուշիին առնչվող գնահատականներին և այդ խորապատկերի վրա բացահայտվել ադրբեջանցի կեղծարարների խեղաթյուրումներն ու իրական նպատակները:

Շուշիի երեք հազարամյա կենսագրության պատմաքննական վերլուծության համար աղբյուրագիտական հենք են հանդիսացել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տարբեր ֆոնդերում պահվող նյութերը, Հայաստանի ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ) վավերագրերը:

Անտիպ հավաքածուներից խնդրո առարկա հարցերի լուսաբանման համար մեծ արժեք ունեն ԼՂՀ պետական արխիվում (այսուհետև՝ ԼՂՀ պետարխիվ), Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ) կուտակված փաստաթղթերը:

Պակաս կարևոր չեն Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության (այսուհետև՝ АВПРИ), Ռուսաստանի պետական ռազմապատմական (այսուհետև՝ РГВИА), Ռուսաստանի պատմության պետական (այսուհետև՝ РГИА), Վրաստանի պատմության կենտրոնական պետական (այսուհետև՝ ЦГИА Грузии) արխիվներում պահպանվող վավերագրերը:

Մենագրությունն ամբողջական տեսքի բերելու նպատակով լայնորեն օգտագործվել են տարբեր ժամանակներում մի շարք երկրների պարբերական մամուլում տեղ գտած նյութերը:

Ք. ա. առաջին հազարամյակից մինչև 18-րդ դարի երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածը Շուշիի պատմության վերաբերյալ կարևոր տեղեկություններ են հաղորդել հայ և արաբ մատենագիրները<sup>4</sup>:

Վերոհիշյալ շրջանի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել նաև թուրքական և ռուսական աղբյուրներում<sup>5</sup>:

<sup>4</sup> Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961: Եսայի կաթ. Հասան-Ջալալյան, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դեպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839: Վրդանիսեան Ստեփանոս, Ընտիր պատումիթն Դաւիթ Բէգին և պատերազմաց հայոց Խափանու, Վաղարշապատ, 1871: Չամչեանց Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984: Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965: Արաբական աղբյուրներ, Գ (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16), թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթությունները Ա. Տեր Ղևոնդյանի, Երևան, 2005: Ибн-ал Факих, СМОМПК, вып. XXXI, Тифлис, 1902: Караулов Н., Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, СМОМПК, вып. XXXII, Тифлис, 1903: Баладзори, Завоевания стран, пер. П. Жузе, Баку, 1927: Шихаб ад-Дин Мухаммад ан-насаби, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, 1973.

<sup>5</sup> Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Սաֆրաստյանը, Երևան, 1961: Бутковъ П., Материалы для новой истории Кавказа, съ 1722 г. по 1830 г., т. 1, СПб, 1869.

Սղնախական ժամանակաշրջանի Շուշիի պատմության որոշ հարցերին իրենց աշխատությունների մեջ անդրադարձել են Կ. Էգովը<sup>6</sup>, Վ. Լսցովը<sup>7</sup> և Ա. Աբրահամյանը<sup>8</sup>:

Վերջին տարիներին Շուշիում և նրա շրջակայքում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը<sup>9</sup> մեզ հնարավորություն են ընձեռում՝ առավել հանգամանորեն ներկայացնելու Ք.ա. առաջին հազարամյակից մինչև 12-րդ դարն ընկած ժամանակաշրջանի Շուշիի պատմության մանրամասները:

18-րդ դարի Արցախի մելիքությունների, Շուշիում ծվարած խաների հայադավ գործողությունների, երկրամասի վրա պարսկական արշավանքների, նույն ժամանակահատվածում Ռուսաստանի կողմից Այսրկովկասում տարվող քաղաքականության, 19-րդ դարի ռուս-պարսկական պատերազմներին Շուշիի հայության մասնակցության մասին են պատմում Հակոբ սարկավազ Զաքարյան Շուշեցու<sup>10</sup>, Բաֆֆու<sup>11</sup>, Ապրես Բեկնազարյանի<sup>12</sup>, Միրզա Յուսուֆ Ներսեսովի<sup>13</sup> աշխատությունները: Վերջինիս հաղորդած

<sup>6</sup> Эзов К., Сношения Петра Великого с армянским народом, Санкт Петербург, 1898.

<sup>7</sup> Лысцов В., Персидский поход Петра I, Москва, 1951.

<sup>8</sup> Աբրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953:

<sup>9</sup> Տես՝ Ենգիբարյան Ն., Տիտանյան Մ., Շուշիի երկաթեղարյան դամբարանները, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2007: Պետրոսյան Հ., Սաֆարյան Վ., Միջնադարյան Շուշին ըստ հնագիտական հետազոտությունների, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2007: Սաֆարյան Վ., Պետրոսյան Հ., Ենգիբարյան Ն., Շուշու և նրա շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները և հեռանկարները, «Կաճառ» գիտական կենտրոնի տարեգիրք 6 (71-82), 2012, Շուշի, 2014: Պետրոսյան Հ., Շուշիի և շրջակայքի խաչքարային մշակույթը, «ԱրՊՀ հայագիտական ուսումնասիրություններ», հոդվածների ժողովածու, 4/2013, Ստեփանակերտ 2014: Սարգսյան Գ., Յակոբեան Ալ., Նորայայտ Կարկառ քաղաքատեղին Արցախում, «Վարձք», հմ. 5, հունվար-մարտ, Երևան, 2012: Սարգսյան Գ., Կարկառ քաղաքի հայտնաբերումը և ուսումնասիրության առաջին արդյունքները, «Կաճառ» գիտական կենտրոնի տարեգիրք, 6 (71-82), 2012, Շուշի, 2014:

<sup>10</sup> Մաղալյան Ա., Յակոբ Զաքարեանի «Պատմութիւն գավառին Արցախու» աշխատութիւնը, «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-12, Վիեննա, 2006, էջ 317-394:

<sup>11</sup> Բաֆֆիի, Խամսայի մելիքությունները (1600-1828), Նյութեր հայոց պատմության համար, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1959:

<sup>12</sup> Բեկնազարյան Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Սանկտ Պետրբուրգ, 1886:

<sup>13</sup> Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը՝ բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Ք. Կոստիկյանի, Երևան, 2000:

տեղեկությունների մի մասը եզակի է և բացակայում է այլ աղբյուրներում: Նա փորձել է դեպքերն ու փաստերը շարադրել անկողմնակալ ձևով և այդ կապակցությամբ գրել է. «... որոշեցի մի իրական, ճշգրիտ ու ճշմարտացի պատմություն գրել, որ գերծ կլիներ ստից ու ավելորդ նկարագրությունից: ... Այդ դեպքերի մեծ մասին ինքս ականատես եմ եղել մի քանիսի մասին լսել եմ վկաներից, մի մասի վերաբերյալ էլ նյութեր եմ քաղել հայերեն և այլ հայտնի գրքերից»<sup>14</sup>: Քննության ենթակա հիմնահարցերի լուսաբանման տեսանկյունից հրատապ նշանակություն ունի Ռ. Տիտանյանի աշխատասիրությամբ հրատարակված ժողովածուն<sup>15</sup>:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վերաբերյալ կարևոր նյութ է պարունակում «Դիւան հայոց պատմութեան» շարքը<sup>16</sup> և Մոսկվայի Լազարյան ճեմարանի 1833–1838 թթ. հրատարակված եռահատոր ժողովածուն<sup>17</sup>: Որոշ սկզբնաղբյուրներում պակասող նյութը լրացնելու են գալիս ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ-ռուսական հարաբերությունները XVII և XVIII դարերում» քառահատորյակում տեղ գտած փաստաթղթերը<sup>18</sup>:

18-րդ դարի երկրորդ կեսի և 19-րդ դարի սկզբների Շուշիի պատմության որոշ հարցերին անդրադարձել են նաև մահմեդական հեղինակները՝ Միրզա Ադիգյոզալ բեկը<sup>19</sup>, Միրզա Ջամալ Ջևանշիրը<sup>20</sup>, Ահմեդ բեկ Ջևանշիրը<sup>21</sup>:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>15</sup> Հայկական աղբյուրները Ադա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795–1797 թթ.), աշխատասիրությամբ Ռ. Տիտանյանի, Երևան, 1981:

<sup>16</sup> Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Թիֆլիս, 1894, գիրք Դ, Թիֆլիս, 1899, գիրք Ը, Թիֆլիս, 1908, գիրք Թ., Թիֆլիս, 1911, Դիւան հայոց պատմութեան, Նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Ա, աշխատասիրությամբ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984, հ. Բ, Երևան, 2003:

<sup>17</sup> Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I–III, Москва, 1833–1838.

<sup>18</sup> Армяно–русские отношения в XVII в., Сборник документов, ч. 1, Ереван, 1953, Армяно–русские отношения в первой трети XVIII века, Сборник документов, т. II, ч. I, Ереван, 1964, т. II, ч. II, Ереван, 1967; Армяно–русские отношения во втором тридцатилетии XVIII века, Сборник документов, т. III, Ереван, 1978. Армяно–русские отношения во второй половине XVIII века, Сборник документов, т. IV, Ереван, 1990.

<sup>19</sup> Мирза Адигезал–бек, Карабаг–наме, Баку, 1950.

<sup>20</sup> Карабаг, сочинение Джемала Джеваншира–Карабаги, Тифлис, 1853; Мирза Джемал Джеваншир Карабаги, История Карабага, Баку, 1959.

<sup>21</sup> Ахмедь–бекъ Джеванширь, О политическомъ существовании Карабагского ханства съ 1747 по 1805 годъ, Шуша, 1901.

Վերոհիշյալ հեղինակները հանգամանալից քննարկել են Փանահ և Իբրահիմ խաների՝ Շուշիում հաստատվելու շարժառիթները և այդ խորապատկերի վրա ներկայացրել արցախահայության նկատմամբ նրանց սանձազերծած պատերազմները: Նրանք, անտեսելով պատմական փաստերը, փորձել են խաներին և նրանց ընտանիքի անդամներին ներկայացնել որպես Ղարաբաղի օրինական տերեր, ինչն էլ այսօր, փաստորեն, ի վնաս հայության փորձում են օգտագործել Ադրբեջանի պատմաշինարարները: Ի դեպ, Միրզա Ջամալ Ջևանշիրի աշխատությունը պարսկերեն, ադրբեջաներեն, ռուսերեն հրատարակվել է 1859 թ.՝ Բաքվում: Ադրբեջանցի «գիտնականները», իրենց գործելաճին համապատասխան, ռուսերեն և ադրբեջաներեն հրատարակություններում կամայականորեն ավելացրել են «Ադրբեջան» և «ադրբեջանցիներ» բառերը<sup>22</sup>:

Քննարկվող ժամանակաշրջանում Շուշիում և հարակից գավառներում տեղի ունեցած պատմական անցուդարձերը լուսաբանվել են ռուսական և ռուսալեզու աղբյուրներում<sup>23</sup>: Առանձնապես կարևոր են ռուս զինվորական տարեգիրներ Վ. Պոտտոյի և Ն. Դուբրովինի աշխատությունները<sup>24</sup>, որոնցում եզակի տվյալներ կան ռուս–պարսկական պատերազմների ժամանակ Շուշիի պաշտպանության և հայության սխրագործությունների մասին:

Շուշիի մեկդարյա (1813–1917 թթ.) տնտեսական, մշակութային աննախադեպ վերելքի, ժողովրդագրական, հասարակական, քաղաքական

<sup>22</sup> Ств` Мельтюхов М., Тер–Саркисянц А., Трапезников Г., Исторические фальсификации с политической подоплекой, Москва, 1999; 1855 թ. առաջին անգամ Ա. Բերժեն Միրզա Ջամալ Ջևանշիրի աշխատությունը պարսկերենից թարգմանել է ռուսերեն և հրատարակել «Кавказ» թերթում (Ств` «Кавказ», но. 61, 62, 65, 67, 68, 69, Тифлис, 1855) Պարսկերեն բնագրի և վերոհիշյալ ռուսերեն հրատարակության մեջ բացակայում են «Ադրբեջան» և «ադրբեջանցիներ» բառերը:

<sup>23</sup> Обозрение Российских владений за Кавказом, в историческом, финансовом, этнографическом отношениях, Карабахская провинция, т. III, ч. II, СПб, 1836; Жениховская В., Кавказ и Закавказье, Москва, 1901; Крымский А., История Персии, ее литературы и дервишской теософии, ч. III, Москва, 1906; Маркова О., Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966; Иоанисян А., Россия и армянское освободительное движение в 80–х годах XVIII столетия, Ереван, 1947; Записки А. П. Ермолова 1798–1826 гг., Москва, 1991.

<sup>24</sup> Потто В., Кавказская война, т. III, Персидская война 1826–1828, СПб, 1888; Генерал–адъютант Иван Давидович Лазарев, Тифлис, 1900; Утверждение русского владычества на Кавказе, т. I, Тифлис, 1901; Первые добровольцы Карабага въ эпоху водворения русского владычества (Меликь–Вани и Акопъ Юзбаши Атабековы), Тифлисъ, 1902; Геройская оборона Крепости Шуши, С. Петербург, 1903; Дубровин Н., Закавказье с 1803–1806 гг., СПб., 1866; История войны и владычества русских на Кавказе, т. I, СПб., 1871, т. II, СПб., 1886.



գործընթացների, միջէթնիկ հարաբերությունների, քաղաքի ազգաբնակչության սովորույթների, կենցաղի, առաջադեմ, ազատասիրական գաղափարների, ցարական իշխանությունների հետապնդումների, բացահայտ հակահայ քաղաքականության մասին հետաքրքիր նյութեր են պահպանվել հայկական աղբյուրներում: Ականատեսի վկայություններ են Մեսրոպ Թաղիադյանի ճանապարհորդական գրառումները<sup>25</sup>:

Քննարկվող հիմնահարցերի տեսանկյունից ինչպես աղբյուրագիտական, այնպես էլ պատմագիտական արժեք են ներկայացնում Սարգիս Ջալալյանցի, Մակար Բարխուդարյանցի, Հովհաննես Շահխաթունյանցի երկրագրական աշխատությունները<sup>26</sup>, Երվանդ Լալայանի, Ստեփան Լիսիցյանի ուսումնասիրությունները<sup>27</sup>:

Հայոց բերդաքաղաքի պատմության վերաբերյալ հարուստ նյութեր են ամբարված մեծ շուշեցի Լեոյի աշխատությունների մեջ<sup>28</sup>: Նա որդիական սիրով ու խանդավառությամբ է նկարագրել հայրենի քաղաքի վերընթացը: Մյուս կողմից էլ մեծավաստակ պատմաբանը խոր կսկիծով է ներկայացրել իր ծննդավայրի ողբերգական ճակատագիրը:

Խնդրո առարկա հարցի մասին զգալի վիճաբանական նյութ են պարունակում ներկայումս Շուշիում բնակվող Հրաչիկ Հարությունյանի աշխատությունները<sup>29</sup>: Հեղինակին հաջողվել է վեց հայկական, մեկ հայ-ռուսական, մեկ ռուսական և մեկ պարսկական գերեզմանոցներից հավաքագրել շուրջ հազար արձանագրություններ, որոնք պատմում են ռուս-պարսկական պատերազմների ժամանակ հայ կամավորականների մասնակցության, 1905–1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների, Շուշիի նշանավոր գերդաս-

տանների մասին: Ըստ էության վերոհիշյալ նյութերը սկզբնաղբյուրային նշանակություն ունեն:

Մեր տեսադաշտից չեն վրիպել նաև Շուշիի պատմության հետ կապված ինչպես հայ, այնպես էլ՝ օտարազգի ճանապարհորդ-ուսումնասիրողների թողած նոթերը<sup>30</sup>:

Թեմայի մշակման համար արժեքավոր նյութեր են հայթայթվել 19–րդ դարում և 20–րդ դարի սկզբներին հրատարակված զանազան փաստաթղթերի ժողովածուներից<sup>31</sup>:

Հատկապես մեծաքանակ նյութեր են կուտակված Ա. Բերժեի խմբագրությամբ կովկասյան հնագիտական հանձնաժողովի հրատարակած 12 հատորներում<sup>32</sup>:

Հետաքրքիր և բազմաբովանդակ նյութեր են տեղադրված «Կովկասյան օրացույց»-ում<sup>33</sup>:

<sup>30</sup> Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010; Տեր-Գասպաեան Արրահամ, Ճանապարհորդութիւն դէպի Ղափան, «Մեղու Հայաստանի», հմ. 101, 26 դեկտեմբերի, Թիֆլիս, 1885; Լերմոնտով Մ., Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1954; Березин И., Путешествие по Востоку, Казань, 1850; Верещагин В., Путешествие по Закавказью в 1864–1865 гг., СПб, 1870; Сегаль Л., Елизаветпольская губерния, впечатления и воспоминания, Тифлис, 1902; Personal narrative of a journey from India to England in the year 1824 by captain, the Hon., George Keppel in two volumes, volume 2, London, 1827, Researches of the E. Smith and Rev. H.G.O. Dwight in Armenia, 1833.

<sup>31</sup> Броневский С., Новейшие географические и исторические известия о Кавказе, ч. I–II, Москва, 1823; Обзорение российских владений за Кавказом в статистическом, этнографическом и финансовом отношениях, ч. 1, СПб., 1836; Записки Кавказского отдела Императорского русского географического общества, кн. IV, Тифлис 1862; Отчет по главному управлению Кавказским краем его императорским воеводством Великим князем Михаилом Николаевичем, 6 декабря, 1862– 6 декабря 1872 гг., Тифлис, 1873; Свод статистических сведений о Кавказе, поставлен и издан под редакцией Н. И. Воронова, т. 1, Тифлис, 1869; Статистические таблицы о народонаселении Кавказского края, Сборник сведений о Кавказе, т. VII, Тифлис, 1880; Сборник материалов по этнографии, вып. III, под редакцией В. Миллера, Москва, 1888; Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886., Тифлис, 1888; Сборник статистических сведений по Закавказскому краю, под редакцией Е. Кондратенко, ч. 1, Тифлис, 1902; Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ ՏՄՈՄՔԿ), вып. VI, Тифлис, 1888, вып. XI, Тифлис, 1891, вып. XIII, Тифлис, 1892; Первая всеобщая перепись населения Российской империи, Елисаветпольская губерния, т. LXIII, под ред. Н. Тройницкого, СПб., 1904.

<sup>32</sup> Акты собранные Кавказской Археологической комиссией (այսուհետև՝ ԱԿԱԿ), т. I–XII, Тифлис, 1866–1904.

<sup>33</sup> «Кавказский календарь» на 1846–1917 гг., Тифлис, 1845–1916.

<sup>25</sup> Թաղիադյանց Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. առաջին, Կալկաթա, 1847:

<sup>26</sup> Ս. Արքեպիսկոպոս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մաս Ա., Տիֆլիս, 1842, մաս Բ, Տիֆլիս, 1858; Բարխուդարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999; Շահխաթունեանց Յովհ., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842:

<sup>27</sup> Լալայան Ե., Երկեր, հ. 2, Երևան, 1988; Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը, Երևան, 1981:

<sup>28</sup> Բաբախանյան Առաքել, Մի քանի հնութիւններ, «Արձագանք», հմ. 9, 1 սեպտեմբերի, 1885; Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838–1913), Թիֆլիս, 1914; Մեսրոպ Թաղիադեան, «Գործ» ամսագիր, հմ. 4, ապրիլ, Բագու, 1917; Երկերի ժողովածու, հ. 3, գիրք II, Երևան, 1973, հ. 4, Երևան, 1984:

<sup>29</sup> Арутюнян Г., Шуши: Нововьявленные исторические надписи, Степанакерт, 2008, Հարությունյան Հ., Շուշի. քարաշեն անխոս վկաներ, Ստեփանակերտ, 2013:

Խնդրո առարկա հարցերի վերաբերյալ խորհրդային և հետխորհրդային շրջանում նույնպես փաստաթղթերի և վավերագրերի ժողովածուներ են տպագրվել<sup>34</sup>:

Իր վերելքներով ու վայրէջքներով հանդերձ՝ Շուշիի բազմադարյան կենսագրության մեջ բախտորոշ նշանակություն ունի 1917–1920 թթ. պատմաշրջանը:

Շուշիում ծավալված ազատագրական պայքարի և պետականակերտման դրվագները, 1920 թ. հայության ունեցած կորուստներն ուսումնասիրելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն ոչ միայն արխիվային փաստաթղթերն ու տվյալ ժամանակաշրջանի մամուլում սփռված նյութերը, այլև՝ դեպքերին մասնակից և ականատես գործիչների հուշագրությունները<sup>35</sup>:

Քննության առարկա հուշագրություններում տեղ են գտել փաստագրական որոշ սխալներ և պատմական անցքերի սուբեկտիվ գնահատականներ: Պատմաքննական մեթոդով այդ ամենը համադրվել է այլ աղբյուրների ու հատկապես արխիվային նյութերի հետ և դրա հիման վրա արժևորվել վաղանցյալ ժամանակաշրջանի իրադարձություններն ու դեպքերին մասնակից առանձին անհատների կատարած գործերը:

<sup>34</sup> Материалы по истории народов СССР. Колониальная политика Российского царизма в Азербайджане в 20–60–ые гг. XIX в., ч I, Москва–Ленинград, 1936, ч. II, Москва–Ленинград, 1937; Советско–иранские отношения в договорах, конвенциях и соглашениях, Москва, 1946; Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. 1, Ереван, 1972, т. II, Ереван 1978; Документы и материалы по истории армянского народа, социально–политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830–1870), под редакцией Н. Тавакаляна, Ереван, 1993; Դիվան հայ վիմագրության, պրակ V, Երևան, 1982; Վաերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք E, Երևան, 2000, գիրք Թ, Երևան, 2001, Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանոթագրութիւններ Ե. Փամբուքեանի, հ. Ե., Պեյրուֆ, 2007:

<sup>35</sup> Միքայելյան Ա., Ղարաբաղի վերջին դեպքերը, «Հայրենիք», հմ. 7, 8, 9, 11, 12, Պոսթըն, 1923; Լեո, Անցյալից հուշեր, թղթեր, գրառումներ, Թիֆլիս, 1925; Ստեփանյան Հ., Արցախյան կամ Շուշվա գնդի պատմությունը, «Հայրենիք», հմ. 1–7, Պոսթըն, 1934; Քիրս Սարուր, Ղարաբաղի կռիվների շուրջը, «Հայրենիք», հմ. 5, 6, Պոսթըն, 1934; Վերդեան Ա., Յուշեր, գրի առաւ Հայկ Աճէմեան, Թեհրան, 1959; Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա, Բ, Ե, Երևան, 1990; Мандельштам, Сочинение в двух томах, т. 1, Москва, 1990; Արամայիս, Ղարաբաղի տագնապը. Օրագրություն (26 ապրիլի–26 հուլիսի 1919), Երևան, 1993; Միտսար (Մ. Տեր–Սարգսյան), Լեռնային Ղարաբաղ, պատմական հիշատակարան, 1917–1923, «Ավանգարդ», հմ. 35, Երևան, 1991; Мелик–Шахназаров З., Записки карабахского солдата, Москва, 1995; Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917–1920), Երևան, 1999; Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917–1920), Պատմական ակնարկ, Երևան, 2008; Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, Երևան, 2011, հ. 2, Երևան, 2011; Քաջունի Ե., Զորաւար Անդրանիկ, Հայկական առանձին հարուածող զորամասը, Երևան, 2015.

Տվյալ ժամանակաշրջանի առանցքային նշանակության որոշ հարցերի լուսաբանման համար աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն Վ. Միքայելյանի<sup>36</sup> և Ա. Վիրաբյանի<sup>37</sup> խմբագրությամբ հրատարակված փաստաթղթերի ու նյութերի ժողովածուները:

19–րդ դարի սկզբներից մինչև 1920 թ. ընկած ժամանակահատվածը Շուշիի պատմության հետ կապված տարբեր հարցեր քննարկվել են Ադոյի<sup>38</sup>, Ա. Գյուլխանդանյանի<sup>39</sup>, Ա. Երեմյանի<sup>40</sup>, Բ. Խանդամիրյանի<sup>41</sup>, Շ. Մկրտչյանի<sup>42</sup>, Ս. Խուդոյանի<sup>43</sup>, Վ. Սևյանի<sup>44</sup>, Ռ. Տեր–Գասպարյանի<sup>45</sup>, Մ. Սարգսյանի<sup>46</sup>, Ս. Կարապետյանի<sup>47</sup>, Ա. Ղուլյանի<sup>48</sup>, Ա. Քյուրքչյանի<sup>49</sup>, Գ. Հարությունյանի<sup>50</sup>, Հ. Արահամյանի<sup>51</sup>, Հ. Սիմոնյանի<sup>52</sup>, Ա. Ասրյանի<sup>53</sup>, Ա. Մաղալյանի<sup>54</sup>,

<sup>36</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., Сборник документов и материалов, под редакцией В. Микаеляна, Ереван, 1992.

<sup>37</sup> Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003:

<sup>38</sup> Ա–Դո, Հայ–թուրքական ընդհարումները Կովկասում (1905–1906 թթ.), Երևան, 1907:

<sup>39</sup> Գիւլխանդանեան Ա., Կովկաս երկիրը, ժողովուրդը, պատմութիւնը, մաս Ա., Փարիզ, 1916:

<sup>40</sup> Երեմյան Ա., Գյուրջյան Գ., Նկարիչ Ստեփան Աղաջանյանի կյանքն ու արվեստը, Երևան, 1927:

<sup>41</sup> Խանդամիրյան Բ., Հարությունյան Ս., Էջեր Շուշիի հայ թատրոնի անցիւղից (1891–1905), Երևան, 1978:

<sup>42</sup> Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1983; Մկրտչյան Ս., Դաւթյան Ս., Մուսի, քաղաքի տրագիկական կյանքը, Երևան, 1999.

<sup>43</sup> Խուդոյան Ս., Արևելահայ դպրոցները 1830–1920 թթ., Երևան, 1987:

<sup>44</sup> Սևյան Վ., Շուշի, Երևան, 1991:

<sup>45</sup> Տեր–Գասպարյան Ռ., Շուշի քաղաքը, Երևան, 1993:

<sup>46</sup> Саркисян М., Из истории градостроительства Шуши, Ереван, 1996.

<sup>47</sup> Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեյջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999:

<sup>48</sup> Ղուլյան Ա., Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001.

<sup>49</sup> Քյուրքչյան Ա., 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմը, Երևան, 2000:

<sup>50</sup> Հարությունյան Գ., Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1985; Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Շուշիի ռեալականը, Երևան, 2001:

<sup>51</sup> Արահամյան Հ., Արցախյան գոյամարտը, Երևան, 1991; Արցախահայության հասարակական–քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901–1933), Ս. Էջմիածին, 2009:

<sup>52</sup> Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1–ին, Երևան, 2003, գիրք 2–րդ, Երևան, 2003:

<sup>53</sup> Ասրյան Ա., Արամ Մանուկյանի կյանքը և գործը, Երևան, 2005:

<sup>54</sup> Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, 2007:

Մ. Բալայանի<sup>55</sup>, Մ. Հարությունյանի<sup>56</sup>, Ա. Մելիք-Շահնազարյանի<sup>57</sup>, Վ. Բալայանի<sup>58</sup>, Ն. Բաղդասարյանի<sup>59</sup>, Ա. Տեր-Սարգսյանցի<sup>60</sup>, Գ. Ստեփանյանի<sup>61</sup> աշխատություններում:

1920 թ. մայիսին խորհրդային կարգեր հաստատվեցին Շուշիում: Բերդաքաղաքի համար սկսվեց ոչ միանշանակ և հակասություններով առլեցուն մի ժամանակաշրջան: Շուշի պատմության այդ շրջափուլի պատմական իրադարձություններին ճիշտ գնահատական տալն ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական կարևոր նշանակություն:

Խորհրդային ժամանակաշրջանի Շուշիի պատմության առանցքային նշանակության հարցերի լուսաբանման համար հիմնական սկզբնաղբյուրներ են հանդիսացել ՀՀ և ԼՂՀ արխիվներում պահպանված փաստաթղթերն ու պարբերական մամուլում տեղ գտած նյութերը:

Իրենց ուսումնասիրած նյութի շրջանակներում, այս կամ այն չափով, խնդրո առարկա հարցերին անդրադարձել են Ս. Ավագյանը<sup>62</sup>, Ա. Սարգսյանը<sup>63</sup>, Գ. Հովհաննիսյանը<sup>64</sup>, Ա. Խաչատրյանը<sup>65</sup>:

Շուշիում Ադրբեջանի վարած հակահայ քաղաքականության ծախքերը բացահայտելու և մեկնաբանելու տեսանկյունից ուշադրության արժանի են Բ. Ուլուբաբյանի<sup>66</sup> և Շ. Մկրտչյանի<sup>67</sup> աշխատությունները:

Արցախյան շարժման վերաբերյալ վերջին տարիներին հարուստ գրականություն է ստեղծվել: Շուշիի և հարակից շրջանների հայության նկատ-

<sup>55</sup> Բալայան Մ., Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2009:

<sup>56</sup> Հարությունյան Մ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ, 2010:

<sup>57</sup> Мелик-Шахназаров А., Владетели Варанды на службе империи, Москва, 2011.

<sup>58</sup> Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011; Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012:

<sup>59</sup> Բաղդասարյան Ն., Վարչաքաղաքական և սոցիալ տնտեսական կացությունը Ղարաբաղում 1813-1867 թթ., Երևան, 2015:

<sup>60</sup> Тер-Саркисянц А., Армяне Нагорного Карабаха, история, культура, традиции, Москва, 2015.

<sup>61</sup> Ստեփանյան Գ., Համազասպ Սրվանձտյանց, Երևան, 2016:

<sup>62</sup> Ավագյան Ս., Սովետական Ղարաբաղի մամուլը, Բաքու, 1963:

<sup>63</sup> Սարգսյան Ա., Հեղափոխության կրակների միջով, Երևան, 1967:

<sup>64</sup> Հովհաննիսյան Գ., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971:

<sup>65</sup> Խաչատրյան Ա., Հարությունյան Գ., Շուշիի մանկավարժական ուսումնարանը, Ստեփանակերտ, 2006:

<sup>66</sup> Ուլուբաբյան Բ., Փորձության օրերի խորհուրդը, Ստեփանակերտ, 2010:

<sup>67</sup> Մկրտչյան Շ., Արցախյան գրառումներ, (փաստավավերագրական ժողովածու), Երևան, 2001:

մամբ Ադրբեջանի ղեկավարության նախապես ծրագրված ու միութենական իշխանությունների լուր համաձայնությամբ իրագործած ցեղասպանության և բռնազաղթին են նվիրված մի շարք հրապարակումներ<sup>68</sup>:

Շուշիի ազատագրման ռազմագործողության մանրամասները հանգամանորեն քննարկվել են Ս. Հասրաթյանի<sup>69</sup> և Մ. Հարությունյանի<sup>70</sup> աշխատություններում:

Շուշիի հայահունչ դեմքի վերականգնման և 1992-2002 թթ. բերդաքաղաքի վերաբնակեցման գործընթացին է նվիրված Ա. Դաբաղյանի և Մ. Գաբրիելյանի համահեղինակությամբ 2004 թ. հրատարակված ուսումնասիրությունը<sup>71</sup>:

Խնդրո առարկա հարցերի քննարկման տեսանկյունից մեզ համար առանձին նշանակություն ունեն «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան» խորագիրը կրող հոդվածների ժողովածուի<sup>72</sup>, «Կաճառ» գիտական կենտրոնի տարեգրքի<sup>73</sup> և «Հայկական բանակ» հանդեսի «Աշխատանքային տետրեր» հավելվածի<sup>74</sup> մեջ ընդգրկված նյութերը:

Ադրբեջանական պատմագրությունը նույնպես անդրադարձել է Շուշիի պատմությանն առնչվող խնդրո առարկա հիմնահարցերին: Ներկայիս Ադրբեջանի հանրապետության մաս կազմող տարածքներում 1920 թ. ապրիլին՝ խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, ադրբեջանական ազգի կազմավորմանը զուգընթաց, նոր իշխանությունների ներկայացուցիչներն ակադեմիական շրջանակներին պատվիրեցին հայ ժողովրդի էթնոպատմամշակութային ատաղձի վրա, վաղանցյալ ժամանակաշրջանների իրողու-

<sup>68</sup> Սողոմոնյան Ն., Կուլցո. 1991-Մարդորսություն, Ստեփանակերտ, 1994; Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997; Մելիք-Շահնազարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998; Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ստեփանակերտ, 2005; Кривоусков В., Мятажный Карабах, из дневника офицера МВД СССР, Москва, 2007.

<sup>69</sup> Հասրաթյան Ս., Գոյամարտ (ԼՂՀ պաշտպանական բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց), Ստեփանակերտ 1998; Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001, Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2008:

<sup>70</sup> Հարությունյան Մ., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Երևան, 2000:

<sup>71</sup> Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., Շուշին 1992-2002 թթ. հայերի վերադարձը ազատագրած քաղաք (ազգագրական ակնարկ), Երևան, 2004:

<sup>72</sup> Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 25-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2007:

<sup>73</sup> «Կաճառ», հմ. 6 (71-82), 2012, Շուշի, 2014:

<sup>74</sup> Феномен Шуши. Историко-политологическое исследование (коллективная монография), «Աշխատանքային տետրեր», 1-2 (25-26), Երևան, 2013:

թյունները շուտ ու մուռ տալով, «գտնել» իրենց երկրի հնագույն արմատները և ստեղծել պատմություն: Պահը շատ հարմար էր: Ինչպես Արցախի, այնպես էլ խորհրդային Հայաստանից դուրս պատմական Հայաստանի որևէ տարածքի անցյալի ու ներկայի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի ուսումնասիրությունը հայ գիտնականների համար արգելված գոտի էր: Այսպես, խորհրդային Ադրբեջանի «պատմաբանները», օգտվելով կուսակցական ու պետական ամենաբարձր ղեկավարության հովանավորությունից, սկսեցին կեղծել հայոց պատմությունը՝ այն հարմարեցնելով իրենց պետական շահերին: Դեռևս խորհրդային տարիներին Ադրբեջանի իշխանությունները և նրանց պատվերը կատարող գիտնականներն իրենց ժողովրդին և աշխարհին փորձում էին ապացուցել, որ Շուշին կառուցվել է 18-րդ դարի երկրորդ կեսին Փանահ խանի կողմից և այն ադրբեջանական է<sup>75\*</sup>:

Ցանկալին իրականության տեղ ընդունելով՝ վերոհիշյալ ադրբեջանցի հեղինակների մի մասը պատմական փաստերի ճշման տակ, ստիպված էր իրենց իսկ գաղափարները մերժել և առերեսվել ճշմարտությանը: Դեռևս 1971 թ. Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ հնագիտական արշավախումբը քաղաքի արևելյան հատվածում, տեղազննական աշխատանքների արդյունքում, հայտնաբերել է ոչ միայն քարեդարյան կացարան, այլև 11-16-րդ դարերի ամրոցատիպ կառույցի հետքեր<sup>76</sup>: Ֆ. Շուշինսկին, ընդունելով այդ փաստը, գտնում էր, որ մինչև 1752 թ. Շուշիի տարածքում բնակավայր է եղել<sup>77</sup>:

Ադրբեջանի մեկ այլ հեղինակ՝ Գ. Արդուլանը, գրել է. «Ղարաբաղի մարզը ընդգրկում էր ... հինգ հայկական մելիքություններ, որի տերերը Նադիր

շահի ժամանակ իրենց տարածքներում օգտվում էին իշխաններին հատուկ բոլոր արտոնություններից և ունեին սեփական զինված ուժեր ...: Փանահ Ալին իրեն խան հռչակելով (1748-1760 թթ.) ձգտել է մելիքներին իրեն ենթարկեցնել՝ օգտվելով ստոր մեթոդներից և հնարքներից»<sup>78</sup>:

Ավելին, ըստ 1823 թ. ռուսական հարկացուցակների, Ղարաբաղի հինգ մահալների ազգաբնակչության 96,67 տոկոսը հայեր էին, իսկ 3,33 տոկոսը՝ թաթարներ<sup>79</sup>:

Հետխորհրդային շրջանի Ադրբեջանի ղեկավարությունը, ավելի հեռուն գնալով, իրենց գիտնականներին հորդորում է հիմնավորել, որ հայերը Ղարաբաղում հայտնվել են 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից հետո ու հետագայում, ԼՂՀ-ն և ՀՀ-ն կազմավորվել են արդրբեջանական հողերի վրա: Այդ գործում առավել ջանադիր էր Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևը<sup>80</sup>: Նույն թափով այդ կեղծարարությունը շարունակում է Իլիամ Ալիևը: Նա 2005 թ. դեկտեմբերին Ադրբեջանի գիտությունների ակադեմիայում արտասանած ճառում հավաստիացրել է, որ պատրաստ է վճարել ցանկացած գումար, միայն թե իրենց պատմաբաններն ապացուցեն, որ Լեռնային Ղարաբաղի հայերը եկվոր են<sup>81</sup>: Ադրբեջանի նախագահը, երևակայական մտավարժանքների դաշտում ավելի հեռուն գնալով, ՀՀ սահմանների մեջ «հայտնագործել» է «Արևմտյան Ադրբեջան» անունով նոր աշխարհագրական տարածք<sup>82</sup>:

Պատմության կեղծարարները, ոգևորվելով իշխանությունների քացահայտ աջակցությունից, մի աննախադեպ արշավ սկսեցին՝ ծուռ հայելու մեջ ներկայացնելով Հայոց արևելից նահանգների, այդ թվում՝ Շուշիի անցյալի իրողությունները:

<sup>75</sup> История Азербайджана, т. 2, Баку, 1960; Алиев Ф., Города Северного Азербайджана, Баку, 1960; Шушинский Ф., Шуша, Баку, 1968; Азербайджан, Москва, 1971; Авалов Э., Архитектура города Шуши и проблемы сохранения его исторического облика, Баку, 1977; Фатулаев Ш., Градостроительства и архитектура Азербайджана XIX – начала XX века, Ленинград, 1986; Ахундов Д., Архитектура древнего и средневекового Азербайджана, Баку, 1986, Алиев И., Нагорный Карабах, история, факты, события, Баку, 1990.

Վերոհիշյալ տեսակետը հետխորհրդային տարիներին ադրբեջանական պատմագրության մեջ շարունակել է գերիշխող մնալ: Տես՝ Мамедов С., Азербайджан по источникам XV – первой половине XVIII вв., Баку, 1993; Kuzaril T., Qarabag: Qarabag tarixinin saxtalasdirlimasi aleyhina, Bakı, 2002; Амирбекова Н., Вопросы военной истории Азербайджана в период Ханств, Баку, 2004; Гаджиева С., Азербайджан во внешней политике правительства Екатерины II, Баку, 2004; Гаджаева З., Карабахское ханство: Социально-экономические отношения и государственные устройства, Баку, 2008.

<sup>76</sup> Авалов Э., Архитектура города Шуши и проблемы сохранения его исторического облика, стр. 14:

<sup>77</sup> Шушинский Ф., Шуша, Баку, 1968, стр. 10.

<sup>78</sup> Абдулаев Г., Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965.

<sup>79</sup> The 1823 Russian survey of the Karabagh province: A Primary Source on the Demography and Economy of Karabagh in the Early 19th Century, Annotated translation from the original 1866 edition with an introduction and Comentary by George A. Bournourtian, California 2012, p. 439.

<sup>80</sup> «Бакинский рабочий», 23 декабря, Баку, 1997, 23 января, Баку, 1998, 31 марта, Баку, 1998.

<sup>81</sup> Բալայան Վ., Արցախի խորհրդային և ազատագրական պայքարի տարիների պատմության արտացոլումը պատմագրության մեջ, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», թիվ. 2, Ստեփանակերտ, 2008, էջ 64:

<sup>82</sup> «Выступление президента Азербайджана И. Алиева во время летней сессии ПАСЕ», 24 июня 2014 г. (<https://www.youtube.com/watch?v=ywwAgg5i7g>). Ադրբեջանական կեղծարարությանը հանգամանորեն իր հողվածում անդրադարձել է նաև Պ. Չոբանյանը: Տես՝ Չոբանյան Պ., Ժողովրդագրական տեղաշարժերը և տեղանունները Արևելյան Հայաստանում XIX դարի առաջին երրորդում, «Բանբեր հայագիտության», հմ. 3 (9), Երևան, 2015:

Ադրբեջանի պատմաշինարարները նոր տեսակետ մոգոնեցին, ըստ որի՝ հայերը Ղարաբաղում և նրա կենտրոն Շուշիում հայտնվել են միայն Թուրք-մենչայի պայմանագրից հետո<sup>83</sup>: Ավելին, նրանք աշխարհին փորձում են իրենց «մեծահոգությունը» ցույց տալ, որ հայերին «պապենական» հողում հյուրընկալել են, իսկ վերջիններս երախտամոռ են գտնվել: Դրանով չբավարարվելով՝ վերոհիշյալ հեղինակները Շուշիում գտնվող պատմամշակութային բոլոր արժեքները համարում են ադրբեջանական ժողովրդի սեփականությունը:

Թեման ամբողջական տեսքով ներկայացնելու նպատակով օգտագործել ենք Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության արխիվում պահվող նյութերը, որոնք սիրով մեզ է տրամադրել Սամվել Կարապետյանը: Ուսումնասիրության մեջ իրենց տեղն են գտել նաև հուշարձանագետ Սլավա Սարգսյանի և Հրայր Բազեի՝ Շուշիի վերաբերյալ նկարները, ինչի համար մեր երախտագիտությունն ենք հայտնում:

Այսպիսով՝ վերոհիշյալ ձեռագրերից, արխիվային փաստաթղթերից, բազմազան այլ սկզբնաղբյուրներից, մամուլից, թեմային առնչվող հրատարակված գրականությունից քաղված փաստերը նպաստել են տվյալ ուսումնասիրության առանցքային մասերի գիտական ընդհանրացումներին:

<sup>83</sup> Исмаилзаде Д., Население городов Закавказского края в XIX начале XX в., Москва, 1991; Мамедов С., Карабах, Баку, 2004; Карабаг. Кюракчайский договор – 200, Сборник статей, Баку, 2005; Мамедиаров И., Мусаев Г., Армяно-азербайджанский конфликт: История, право, посредничество, Тула, 2007; Каджар Ч., Старая Шуша, Баку, 2007; Карабах вчера, сегодня и завтра, материалы научно-практических конференций, вторая часть, Баку, 2009, Марджанлы М., Карабахская проблема с позиций геополитики, аналитический ракурс, Санкт-Петербург, 2009; Исмаилов Э., Очерки по истории Азербайджана, Москва, 2010.

## Գլուխ 1

# ՇՈՒՇԻԻ ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅԻՆ

### ա) Աշխարհագրական դիրքը

Ամեն մի երկիր և նրա առանձին հատվածներ, կապված աշխարհագրական դիրքից, բնակլիմայական պայմաններից, այս կամ այն ձևով վճռորոշ ազդեցություն են ունեցել տարածաշրջանում ապրող ժողովուրդների պատմական ճակատագրի վրա:

Այս տեսանկյունից հայոց բազմադարյան կենսագրության տարբեր շրջափուլերում Շուշին առանձնահատուկ տեղ ու դեր է ունեցել և պատմական իրողությունների հակասական խմորումների մեջ շարունակում է իր առաքելությունը:

Շուշին զբաղեցնում է Փոքր Կովկասի հարավարևելյան լեռնոտ տարածքը: Այն գտնվում է Մեծ Հայքի Արցախ նահանգի սրտում՝ Բերդաձոր գավառի մի գողտրիկ անկյունում:

Շուշին, ծովի մակերևույթից 1350–1800 մետր բարձրության վրա գտնվելով և Ղարաբաղյան լեռնաշղթայի կղզիացված մի սարահարթում լինելով, իրենից ներկայացնում է բնակլիմայական ուրույն մի շրջան:

Քաղաքը հարավից, արևմուտքից, հյուսիս–արևմուտքից և հարավ–արևելքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա շրջափակված է ավելի բարձր լեռներով ու լեռնաշղթաներով, որոնցից առավել նշանավոր են Մեծ Քիրս և Քառասուն աղջիկ<sup>84</sup> լեռնագագաթները: Նշված լեռները Շուշիի սա-

<sup>84</sup> Քառասուն աղջիկ լեռնագագաթի մասին ժողովրդի մեջ հետաքրքիր ավանդագրույց է պահպանվել, որը պատմում է վաղանցյալ ժամանակներում արցախահայության տառապանքների, հերոսական ոգորումների, մարդկային վեհ բնութագրի մասին: Այդ ամենը գրի է առնվել «Բագուի ծայն» թերթի 1913 թ. համարներից մեկում: Ավանդագրույցը պատմում է. «նրանք քառասուն հոգի էին, քառասունն էլ մատաղահաս ու չնաշխարհիկ կույսեր, նրանք սպիտակ էին որպես լեռանց գագաթի կուսական ծիւնը, կենսուրախ, որպես դաշտերի թիթեռնիկները: Նրանց երեսին խաղում էր անմեղ ժպիտը, որպես վաղորդեան արեգի ծիրանի շողերը ծիւնապատ լեռանց գագաթի վրայ:

Սրընթաց էին նրանք, որպես սարերի եղնիկներ ու անմեղ որպես ճերմակ աղանիս: Նրանց երկար արտևանունքների տակից հրաշագեղ աչքերն

րահարթից բաժանված են անդնդախոր, անտառապատ ձորերով և կիրճերով:

Միայն հյուսիսարևելյան ուղղությամբ լեռնաստանը գահավեժ իջնում է դեպի Ստեփանակերտ, Կարկառ գետի հունով փոխակերպվելով հարթավայրի՝ բացազատվելով խորանում է Միլլի դաշտավայրում:

Պարզկա օրերին տեսանելի և կարծես շոշափելի են դառնում հյուսիսային Կովկասի ձերմակազարդ լեռները: Բարձրավանդակը, որի վրա փռված են քաղաքն ու հարակից այգիները, հիմնականում ունի խորդուբորդ ու խիստ կտրտված լեռնային մակերևույթ: Շուշիի սարահարթը՝ արևելքից արևմուտք, թեք ուղղություն ունի: «Հայկական աշխարհ» թերթի թղթակիցը 1874 թ. գրել է. «Շուշի քաղաքի դիրքը բոլորովին քարքարոտ է, երեք կողմից ուղղաձիգ ժայռերով, միայն չորրորդ հյուսիսային թեքված կողմից հնարավոր է եղել ձանապարհ շինել դեպի Գանձակ: Քաղաքի մակերևույթը անհարթ է, հյուսիսարևելյան մասում, որտեղ գտնվում է քաղաքադուռն դեպի Գանձակ 3890 ոտնաչափ բարձր է ծովից, իսկ հարավարևմտյան մասն Երևանի քաղաքադուռն մոտ, որտեղ գտնվում է Շուշու ժայռը, Արիխի չափերով 4705 ոտնաչափ բարձր է: Իր բարձրությամբ Շուշին երկրորդ տեղն է

էին հուր ու բոց ցայտում, պատանի տղերանց սիրտը խորովում, հալ ու մաշ անում: Ու քառասունն էլ տեսնում ես ճամբորդ լեռան գագաթը, քառասունն էլ այստեղ վրաններում փակված գերի էին տարած խանի հարեմին: Կոպիտ ներքինին լայիռ կատակով սրան ու նրան էր դիպչում, ոսկե ամրոցներ, բեհեզ հանդերձներ, եղէմի վայելք նրանց գուշակում: Իսկ նրանք քառասունն էլ արտասալթոր աչքերով շուրջն էին դիտում և նախօրոք իրենց անարգանքն ու սև օրը սգում ...: Արևը մայր մտաւ, ճաճանչը կտրեց, աստղերը երկնքում մէկումեկ ցոլացին, լուսինը շողաց, հովասուն գեփիւռը սաղարթը շարժեց, քնեց ներքինին, ելան կոյսերը մութ վրաններից, եկան քարափը ամեհի ժայռին և լուռ ու մունջ, մանրաքայլ թափով մեծ ապառաժի ծայրին շարունեցան: Փակեցին աչքերը, իրար ետևից, անխոս սարի, մութ, լայնաբերան անդունդի խորքը իրենց նետեցին: Գիշերը անցավ, երբ արշալույսի շողերը խաղացին, նրանց էլ ոչ ոք վրանում չգտավ ...

Դէ եկ, զմայլիւր, դու հոգնած ճամբորդ, այս անուշահոտ կարմիր վարդերը նրանց արին է, վարդեր է բուսել, քաղցրահոտ շուշան: Նրանց արցունքն է՝ սարերի լանջը գողտրիկ զարդարել ու նրանք իրենց սգալի երգը վշտաբեկ սրտիս, սիրավառ սրտիս են յաւէտ կտակել: Ու ամեն տարի ուղիղ այն օրը, երբ քառասունն էլ նահատակ, տիրում է այստեղ խորին լռութիւն, թանձր ամպերը պարուրում լեռներ, հրոտ կայծակներ շանթում են ուժգին, որոտը գոռում, ահեղ դղրդում և անձրևային խոշոր մարդաբառով քառասուն կուսանց ողբերգը տոնում», «Բագուի ծայն», հմ. 55, 12 մարտի, Բագու, 1913:

Նկատենք, որ ինչպես աշխարհի մի շարք բնակավայրեր, լեռներ, գետեր, դաշտեր յուրացնելու նպատակով մեր հարևանները անվանափոխել են և հարմարեցրել իրենց լեզվի հնչյուններին, այնպես էլ քառասուն աղջիկը դարձրել են «գըրխ գըզ»:

բռնում Կովկասի քաղաքների մեջ, առաջին տեղը Ալեքսանդրապոլն է 5090 ոտնաչափ բարձրությամբ: Քաղաքը երեք կողմից բնական անմատչելի բերդ է, չորրորդ՝ հյուսիսային կողմից միայն պինդ քարե պատ է շինված»<sup>85</sup>:

Շուշիի հարևանությամբ, հարավային հատվածի անդնդախոր ձորով, հոսում են Քարինտակի (Ջառիստ), իսկ արևմտյան ուղղությամբ՝ Ղայբալու գետակները, որոնք էլ կազմում են Կարկառի ջրահավաք ավազանը: Այս երկու գետակները, իրենց գիրկն առնելով հազարավոր առուները, շրջապատին անզուգական ու անկրկնելի հմայք են հաղորդում: Ջառիստ և Ղայբալու գետակներն արագահոս, բայց ջրառատ չեն, հատկապես ամռան ամիսներին խիստ սակավաջուր են դառնում: Մնան աղբյուրներն են հալոցքային և անձրևային ջրերը, իսկ հիմնականում՝ լեռնային վճիտ առվակները: Պատահական չէ, որ այս գետակների ջրերում կան քաղցրահամ ձկներ: Երկու գետակները Ստեփանակերտի մուտքում՝ Մազի կամրջի տակ, իրար են միանում և, որպես Կարկառ գետ, Ասկերան քաղաքին չհասած, Բալուջա և Բադարա վտակներն իր մեջ առնելով հասնում մինչև Կուր: Ջառիստ և Ղայբալու գետակների ջրերը քաղաքի և հարևան գյուղերի բնակիչները դարեր շարունակ օգտագործել են ոռոգման համար: Սակայն 18-րդ դարից սկսած, բերդամրոցի ազգաբնակչության թվաքանակի ավելացմանը զուգահեռ, անհրաժեշտություն առաջացավ երկու գետակների վրա, մասնավորապես՝ Հունոտի կիրճում կառուցել տասնյակ ջրաղացներ, որոնց կիսավեր և մամռակալած պատերը լուռ վկաներն են նախանցյալ դարերում հայ մարդու շինարարական հմտության և բարձունքում թառած բարգավաճ քաղաքի մասին:

Ընդհանուր առմամբ հայկական բարձրավանդակի ոչ միայն նահանգները, այլև համարյա բնակավայրերից յուրաքանչյուրը հարևաններից բաժանված է բնական պատվարներով և, ըստ էության, կազմում է ոչ միայն վարչական առանձին միավոր, այլև բնակլիմայական ինքնուրույն ու ինքնատիպ մի ամբողջություն: Այդ տեսանկյունից Շուշին նույնպես բացառություն չէ:

Շուշին գտնվում է այն գլխավոր ձանապարհի վրա, որով Արցախը կապվում է Սյունիքի հետ: Այդ և Տրտու-Թարթառի հովտով ձգվող ձանապարհները հնագույն ժամանակներից Արցախը և Ուտիքը կապում էին Մեծ Հայքի միջնաշխարհի հետ: Կյանքի ձանապարհի համարում ունեցող այս երկու մայրուղիներն այսօր էլ իրար են կապում հայկական զույգ պետությունները՝ ՀՀ-ն և ԼՂՀ-ն:

<sup>85</sup> «Հայկական աշխարհ», հմ. 1-2, ապրիլ-մայիս, Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Շուշի, Երևան, 1874, էջ 36:

Արևելքում Գանձակի, արևմուտքում Երևանյան դռները Շուշիի բարձրավանդակի երկու կարևոր մասերն իրար շաղկապող օղակներն էին: Նույնիսկ քոչվորները սար էին բարձրանում կամ իջնում քաղաքի կենտրոնական Երևանյան փողոցով: Սակայն 20-րդ դարի սկզբներին, զարգացման հեռանկարներից ելնելով, քաղաքը շրջանցող նոր ճանապարհ է կառուցվել, որն առայսօր գործում է:

Շուշիի անհարթ և կտրտված մակերեսը բազմաթիվ դժվարություններ է ստեղծել շենքերի և փողոցների կառուցման համար: Պատահական չէ, որ 600 հա տարածություն զբաղեցնող քաղաքի միայն 280 հա վրա կարելի է շինարարական աշխատանքներ իրականացնել: Ամենայն հավանականությամբ այդ դժվարությունից էլ ծնվել է քաղաքի շինարարական, կառուցողական և ճարտարապետական յուրօրինակ ոճն ու տեսքը:

Քաղաքը բաղկացած է ընդգծված թեքություն ունեցող երկու հարթություններից, և պատմական զարգացումների արդյունքում այնպես է ստացվել, որ հետագայում՝ 19-րդ դարում, արևելյան հատվածում ձևավորվել էր թուրքական թաղամասը, իսկ նրանից բարձր սարահարթի արևմտյան մասում՝ հայկականը:

Շուշին արևելյան, արևմտյան և հարավային կողմերից շրջապատված է սառած լավայից կազմված ժայռագոտիով, որով ներս մտնելը մարդու համար փաստորեն անհնարին է: Ինչպես դիպուկ բնութագրել է Հակոբ սարկավազ Շուշեցին, «... յԱստուծոյ էր ամբարցել: Մնացած հյուսիսային մասը, նշում է նա, շրջապատված էր 5000 կանգուն (2,5 կմ – Վ. Բ.) ընդհանուր երկարությամբ պարսպապատերով, որոնց մեջ կար 50 աշտարակ և 4 դարպաս»<sup>86</sup>:

19-րդ դարի սկզբներին ցարական զենեքալները, լինելով Շուշիում, զարմանք և հիացմունք են ապրել բնության և մարդու արարած ներդաշնակ ստեղծագործությունից: Այդ տպավորության տակ, 1805 թ. գեներալ Ցիցիանովը Ալեքսանդր Ա-ին հաղորդել է. «Շուշին մի կողմից շրջապատված է բարձր պարսպով, իսկ մյուս կողմից ամբարցված է բնական ուղղահայաց բարձր ժայռերով, որոնց դեմ պաշարման ժամանակ անզոր է պատերազմական ամեն մի ռազմավարություն»<sup>87</sup>: Իսկ ռազմական պատմագիր գեներ-

րալ Պոտտոն 1826 թ. գրել է. «Շուշիի բերդը կառուցված է անմատչելի ժայռերի արանքում, որոնք իրար հետ շաղկապված են ու մեկ միասնություն են կազմում և միայն նեղ մուտք ունեն, որը ուժով գրավելը անհնարին է: Ով տիրում է այդ ամրոցին, նա իշխում է այդ երկրամասում»<sup>88</sup>:

Շուշիի գեղատեսիլ բնությունը և անառիկ բերդի մասին հիշարժան պատմությունները հետաքրքրաշարժ են դարձրել և դեպի իրենց ձգել ինչպես հայ, այնպես էլ օտարազգի ճանապարհորդներին:

1821 թ. Մեսրոպ Թաղիադյանը, լինելով Արցախում և միաառժամանակ ապրելով բերդամրոցում, մանրամասն ծանոթանալով տեղանքին, իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ այսպես է նկարագրել հայոց ուստանը. «Շուշին անառիկն համարեալ ամրոց՝ կղզի իմն էր գոգջիր ամբարձեալ ի վերայ քարալերին, որոյ յարևելից կողմանէ պարապատեր գետն ընդ որ մեք եկաք, իսկ յարևմտից գետք բխեալ յարևմտեան լերանց, և եկեալ համբուրեին զերեսարս ի հիւսիսոյ ստորոտս նորա: Բնութիւնն յամենայն կողմանց ահագին քարապարսպօք պատեաց զայն, բայց ի հիւսիսակողման մասնէն, ուր ելից զթերին բնութեան արուեստն՝ հզօր պատնիշօք ընդ դուռնն՝ որ հաներ յԱվետարանոցն գիւղ Շուշի զամենայն կերպարանս բերեր յինքեան զմիջնաբերդի, շրջակա լերինք յերից կողմանց նորա երևեին բերել զձև արտաքին պարսպաց բերդին, գետորացք յորդեալք գնովա գործ խրամոց կատարէին ջրալեաց, և ինքնին ի կենդրոնի ամբարձեալ, արդարև անառիկ լինէր, եթե ի մերձակայ լերանց անտի չհասանէին առ նա գնդակք թնդանօթոց: Հիւսիսակողմյան քարաժայռն է առաւել բարձր, և ահաւորագոյն ևս ձոր նորա»<sup>89</sup>:

Պակաս կարևոր չեն նաև ամերիկացի ճանապարհորդ Սմիթի տպավորությունները: 1830 թ., ուսումնասիրելով Շուշիի աշխարհագրական դիրքը, նա գրել է. «Բնությունը շատ բան է արել Շուշին անմատչելի դարձնելու համար: Այն իրենից ներկայացնում է բնական բերդի փոխակերպված մի լեռ: Այն կիրճը, որով մենք մոտեցանք քաղաքին, իր ստորոտում բաժանվում է երկու մասի, որոնք շարունակում են վեր խոյանալ ամեն մեկը մի կողմում, և որոնցից յուրաքանչյուրում հոսում է մաքրամաքուր ջրով աչքի ընկնող մի գետակ: Նույն կետից ոլորապտույտ ճանապարհով ձգվում է գրեթե ուղղաբերձ մի արահետ, որը երբեմն անցնում է ժայռերի եզրերով, մի հոգնեցուցիչ տարածություն, որը պետք է հաղթահարել, ամենավերևում գտնվող դարպասին հասնելու համար: Մնացած բոլոր կողմերում զլխապտույտ բարձրու-

<sup>86</sup> Բալայան Վ., XIX դարի և XX դարի սկզբների Շուշիի շինարարական կառուցողական արվեստի ձեռքբերումները և քաղաքի ազգային դիմագծի պահպանման արդի խնդիրները, Շուշին հայկական մշակույթի օջախ, հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ, «Կաճառ» 6 (71-82), 2012, Շուշի, 2014, էջ 80:

<sup>87</sup> www.yerkramas.org (article/32995)

<sup>88</sup> Потто В., Первые добровольцы Карабага, стр. 3-4.

<sup>89</sup> Թաղիադեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հատոր առաջին, էջ 286-287:

թյամբ ուղղաբերձ անդունդները կանխում են պաշտպանության արհեստական միջոցների անհրաժեշտությունը, բացառությամբ Երևանի դարպասի, որտեղ մի կարճ պատ պաշտպանում է դեպի լեռները բացվող վիթխարի ձորը: Այս ձորի ամեն կողմում վեր են խոյանում երկու ահագին աշտարակներ, որոնք կարծես հատուկ ստեղծվել են բնության կողմից ապահովելու այս թույլ կետի պաշտպանությունը: Ձորի վերին հատվածն իրենից ներկայացնում է անհարթ մակերևույթ, որը մեղմորեն իջնում է դեպի հյուսիս-արևելք: Քաղաքն այս մակերևույթի ընդամենը շատ փոքր հատվածն է զբաղեցնում նրա ամենացածր մասում, իսկ մնացած տարածությունը ծածկված է կանաչ սիզամարգով: Ձորն այնպես է շրջապատված իրենից շատ ավելի բարձր, խորդուբորդ մակերևույթով և հողմահարված լեռներով, որ նրա բարձրությունը չի գագացվում: Անդունդի եզրից շրջակա սարսափազդու կիրճերն այնքան խորն են երևում, որ նրանց ստորոտում հոսող սրընթաց լեռնային հոսանքներն ընդամենը անաղմուկ գետակների տպավորություն են թողնում: Հյուսիսում այս կիրճի առաջացրած բացվածքի միջից մարդ կարող է տեսնել ներքևում՝ մեծ հեռավորության վրա տարածվող Կուրի հովիտը կամ էլ նույն ուղղությամբ՝ մինչև այնտեղ, ուր տեսանելի է աչքի համար, տեսնում է վիթխարի Կովկասյան լեռնաշղթան, որը վեր է խոյանում շրջակա բոլոր լեռնագագաթներից բարձր՝ հորիզոնի գրեթե մեկ քառորդի չափով»<sup>90</sup>:

Չնայած Շուշին խորդուբորդ մակերևույթ ունի, այնուամենայնիվ, քաղաքից դեպի հարավ՝ մինչև Քարինտակի ձորը ձգվող հատվածը, փոխված է համեմատաբար հարթ մի տարածք, որը հայտնի է ձիարշավարան կամ «ջրդրր դուզ» անունով: Հասարակական նպատակներով օգտագործելու համար բերդաքաղաքի պատասխանատուներն այդ հատվածը չեն կառուցապատել: Եթե միջնադարում այն որպես ձիարշավարան էր ծառայում, ապա 19-րդ դարի կեսերից՝ քաղաքի բուն զարգացման ժամանակահատվածում, տեղացիների և հյուրերի համար աննկարագրելի գեղեցիկ զբոսավայր էր: Բնության այդ գեղատեսիլ վայրի մասին «Բագուի ձայն» թերթի աշխատակիցը, 1913 թ. զբոսնելով ձիարշավարանում, իր տպավորություններն է հաղորդել հայկական օրաթերթի միջոցով. «Շուշին իր դիրքով ատլի գեղեցիկ է, քան երոպական մի շարք քաղաքներ, որ անյթան արժանացել են գովքի ...: Քերծի գլխից ներքև այնքան խոր է, որ համարյա բան չի երևում, սակայն հարակից լեռնային վտակի խուլ վշշոցն է հասնում ականջիդ: Ներքև նայելիս կարծես ինչ որ մի ուժ քեզ գրկած՝ քաշում ձգում է դեպի ցած, դեպի անդունդը: Ուղիղ ոտներիդ տակ փոխված է ձորը, լայն ճյուղավորված ձոր հո-

վիտը: Նրա մի կողմից Քիրան է լերկ գլուխը տնկել դեպի երկինք, մյուս կողմից ահեղատես, տեղ-տեղ գրեթե հղկված ժայռերն են ձգվել դեպի երկինքը հպարտ-հպարտ ու հաղթ, իսկ հատակին մոտ, սրընթաց վտակի կողքին գյուղն է՝ Քարինտակը տեղավորվել:

Երեկոները, երբ հովն ընկնում է սարերի ծայրերից, բլուրների փեշերից հավաքած բուրմունքը բերում հասցնում է քաղաք»<sup>91</sup>:

Ձիարշավարանից դեպի հարավ՝ անդնդախոր ձորի մյուս պոնկին է գտնվում Խաչին տափը կամ, ինչպես թուրքերն են ասում, Թոփխանան<sup>92</sup>: Խորհրդային տարիներին, քաղաքը մեծացնելու նպատակով, ծրագրվել էր կամրջով իրար հետ կապել ձորի երկու հատվածները և շինարարություն կատարել «Խաչին տափ»-ում, որտեղ պետք է ապրեր շուրջ 100 000 մարդ:

Արցախյան շարժման տարիներին, մինչև Խորհրդային միության փլուզումը, ԼՂԻՄ կառավարությունը որոշել էր փախստականներին տեղավորելու համար ՀԽՍՀ օժանդակությամբ «Խաչին տափ»-ում կառուցել նոր ավան և, բնակչությանը աշխատանքով ապահովելու նպատակով, հիմնել այլումինի թիթեղի ու փայլաթիթեղի արտադրություն: Գործին խանգարելու համար Բաքվում այդ օրերին վայնասուն բարձրացրին. կազմակերպվեցին բազմահազար հանրահավաքներ, թե իբր հայերը «Խաչին տափ»-ում ոչնչացնում են հազվագյուտ բուսատեսակներ ու եզակի թիթեռնիկներ: ԽՍՀՄ համապատասխան մարմինների կողմից կատարվեցին ստուգումներ, և պարզվեց Ադրբեջանի ղեկավարության իսկական նպատակը:

## բ) Կլիման և հողային ծածկույթը: Կենդանական աշխարհը

Շուշիի կլիման պայմանավորված է նրա դիրքով և բարդ ռելիեֆով: Լինելով Կովկասի հարավային հատվածում, որտեղ տիրապետողը մեղմ կլիման է, մյուս կողմից էլ՝ շրջապատված լինելով անտառապատ բարձրաբերձ լեռներով ու միջանցիկ անդնդախոր ձորերով, քաղաքում ձևավորվում են յուրօրինակ բնակլիմայական պայմաններ: Շրջակա բարձր լեռները թույլ չեն

<sup>91</sup> «Բագուի ձայն», հմ. 121, 31 օգոստոսի, Բագու, 1913:

<sup>92</sup> 1795 թվականին Աղա Մուհամմադ շահը, երբ պաշարում է Շուշին, «Խաչին տափ»-ից հետևում էր մարտին և թնդանոթներով խփում էին բերդաքաղաքին: Այդ ժամանակներից սկսած շրջանառության մեջ է դրված նաև «Թոփխանա» անունը: Հետագայում Շուշիի հայկական թաղերից մեկը նույնպես կոչվեց Թոփխանա, որովհետև 1804-1813 թվականների ռուս պարսկական առաջին պատերազմից հետո այդտեղ պահվում էր մի թնդանոթ, որն այսօր Արցախի պատմաերկրագիտական թանգարանի ցուցանմուշներից մեկն է:

<sup>90</sup> Researches of the Rev. E. Smith anol Rev. H.G.O. Dwlght in Armenia ..., NEW YORK 1833, pp. 279-280.



տալիս, որ սառը օդը թափանցի քաղաք, և դրա համար այն ունի չափավոր խոնավ ու համեմատաբար մեղմ կլիմա: Շուշիի կլիման ուսումնասիրել են պրոֆեսորներ Ի. Ֆիգուրովսկին, Կ. Եգորովը, Ա. Աֆոնսկին, Պ. Սոկոլովը, Մ. Մայիլյանը, Ի. Լուկովը: Սարերի ազդեցության, օրվա տևողության, խոնավության, ջերմության և մի շարք այլ գործոնների համեմատությունն աշխարհի նշանավոր առողջարանային քաղաքների հետ թույլ է տվել նրանց՝ Շուշին դնել Դավոսի, Կիսլովոդսկի, Դիլիջանի շարքում:

1848 թվականից մինչև 1920 թվականը որոշ ընդհատումներով աշխատել է Շուշիի օթերևութաբանական կայանը<sup>93</sup>:

Քաղաքում ամռանը հով է լինում, ձմռանը կլիման համեմատաբար մեղմ է, գարնանը և աշնանը ջերմաստիճանը չափավոր տատանումներ է ունենում, որն ուղեկցվում է անձրևներով: Պատահական չէ, որ գարնանը, ամռանը և աշնան սկզբներին քաղաքը պատված է լինում կանաչով ու բնական ծաղիկներով: Շուշիի միջին տարեկան ջերմաստիճանը հավասար է +8,5: Ի. Ֆիգուրովսկին գրել է. «Չափավոր տաք, նույնիսկ հով ամառը, որը միաժամանակ համեմատաբար պարզ է և չոր, այդ վայրը դարձնում է առհասարակ Անդրկովկասի ամենալավ կլիմայական վայրերից մեկը և ամենալավը ամբողջ Արևելյան Անդրկովկասում: Շուշին և Թթու ջուրը այս տեսակետից վաղուց ի վեր հայտնի են, ինչպես և Դիլիջանը, ամառը այստեղ իր ջերմաստիճանով նմանվում է Ցյուրիխին, Բերնին, Ժնևին և այլ Շվեյցարական և Տիրոլյան վայրերին»<sup>94</sup>: Շուշիում մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 639 մմ<sup>95</sup>:

Գարնանը և աշնանը մշուշոտ օրեր շատ են լինում: 1874 թ. «Հայկական աշխարհ»-ի թղթակիցը գրել է. «Շուշու բարձր դիրքը, անտառների և խոր գետաձորերի մերձավորությունը իրենց մշտական տաքությամբ, թացությամբ և գոլորշիներով, Շուշին մառախլապատ Ալբիոն են դարձնում, մանավանդ գարնան և աշնան, երբ որ մեզը պատում է բոլոր քաղաքը և անթափանցիկ սփռված է մի քանի օր շարունակ»<sup>96</sup>:

Մեծավաստակ լեզվաբան Հրայրյա Աճառյանը, 1903 թ. ապրելով Շուշիում և գնալով բնության անակնկալներով, իր հուշերում գրել է. «Գեղեցիկ էր Շուշի քաղաքը: Երբ բարձրանում ես բարձունքի գլուխը, որ տեղական

<sup>93</sup> Տեր-Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 14:

<sup>94</sup> Фигуровский И., Материалы по районированию Азербайджанской ССР, т. I, вып. 1, часть 2, Баку, 1926, стр. 135. Նույնը տես, Տեր Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 16:

<sup>95</sup> Տեր-Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 18:

<sup>96</sup> «Հայկական աշխարհ», հմ. 1-2, ապրիլ-մայիս, Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Շուշի, Երևան, 1874, էջ 37:

բարբառով «քերծ» կամ «քերծեր» է կոչվում, առաջը բացվում է հոյակապ մի տափաստան: ... Երբեմն, մանավանդ, երբ մշուշ է լինում, կարծում ես, թե գտնվում ես մի ընդարձակ ծովի առաջ: ... Շուշվա կլիման շատ մեղմ է: Ձմեռը սաստիկ ցուրտ չէ, ամառը հով է ... աշունը մշուշապատ է: Մշուշը (տեղական բարբառով՝ թոխա, քշաթօխա) իջնում է մինչև տների ներսը: Այսպիսի տխուր աշունից հետո հաջորդում է «պուճուր ամառը» (ինչպես ասում են տեղացիք), որից հետո գալիս է մեղմ ձմեռը: Մշուշը (թօխա) շատ հաճախադեպ է Շուշվա համար, բայց դա էլ իր հաճույքն ունի: Ամառը այնքան հով է, որ առանց վերարկուի հաճելի չէ ման գալ»<sup>97</sup>:

Շուշիում տարվա բոլոր եղանակներին անընդհատ փչում է մեղմ հարավային քամին, որը, գտնվելով ծովի մակերևույթից 1400–1800 մետր բարձրության վրա, կոտրում և մեղմացնում է ձմռան սաստիկ ցուրտը: Պատահական չէ, որ մյուս առողջարանների համեմատ՝ ձմռանը Շուշիում կլիման ավելի մեղմ է լինում: Քաղաքի կենտրոնը մաքուր օդը, բնության ճոխությունը, գույների բազմազանությունը բուժիչ և բարենպաստ ազդեցություն են թողնում մարդու ֆիզիկական և հոգեկան վիճակի վրա: «Կովկաս» թերթի խմբագիր Իվան Սլիվիցկին, 1857 թ. լինելով Շուշիում, գրել է. «Անդրկովկասի երկրամասում Շուշիի նման չկա այնպիսի մի քաղաք, որտեղ ամառը այդքան հով ու հաճելի լինի: Ամռանը այստեղ կարելի է փրկվել Թիֆլիսի խեղդող տոթից, Երևանի համարյա մերձարևադարձային տապից և Ելիզավետպոլի ամառային ջերմախտից»<sup>98</sup>: Շուշիի բնակլիմայական բարենպաստ պայմանները թույլ են տալիս հեշտությամբ բուժել շնչառական ուղիների հետ կապված բազմաթիվ հիվանդություններ, բարձրացնում արյան հեմոգլոբինը, կարգավորում մարմնի նյութափոխանակությունը, արագ վերացնում հոգնածությունը:

Շուշիի դերը՝ որպես առողջարանային քաղաքի, ավելի է բարձրանում, մանավանդ, որ նրա շրջապատում կան հանքային բուժիչ ջրեր: Թթու ջուրը Շուշիից գտնվում է 18 կմ հեռավորության վրա: Այն խորհրդային տարիներին բերվել էր քաղաք, և ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից մարդիկ գալիս էին Արցախ՝ ստամոքսաղիքային հիվանդություններ բուժելու: Թթու ջրի հարևանությամբ է գտնվում երկաթի մեծ պարունակություն ունեցող մի աղբյուր, որը բուժում է ռևմատիկ հիվանդություններ: Հայտնի է նաև Շիրլանի թթու ջուր պարունակող աղբյուրը, որը քաղաքից 20 կմ հեռավորության

<sup>97</sup> Աճառյան Հր., Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 254 և 261; Նույնը տես Սևյան Ռ., նշվ. աշխ., էջ 54:

<sup>98</sup> «Кавказ», 21 июля, Тифлис, 1857.

վրա է գտնվում: Իրենց նշանակությամբ հայտնի են նաև Իսահակի (Պեխե) աղբյուրը, Ցեխի աղբյուրը, Շրշոանը:

Նորոքյա ժամանակներում, հայ մարդու հոգատար ջանքերի շնորհիվ, Իսահակի աղբյուրի շրջակայքը բարեկարգվել, բնությանը համահունչ կառուցվել են շինություններ, իսկ մայրուղուց մինչև հանգստյան գոտի ճանապարհը լիովին ասֆալտապատվել է: Այս ամենը լայն հեռանկարներ է բացում մոտ ապագայում քաղաքի զարգացման համար:

Շուշիի հողերի տեսակները պայմանավորված են երկրամասի կտրտված մակերևույթով և ենթարկվում են ուղղահայաց գոտիականության օրինաչափությանը: Չնայած լեռնային հողագոյացման տարաբնույթ պայմանները նպաստում են հողային ծածկույթի բարդ կառուցվածքին ու տրոհվածության ուժեղ արտահայտությանը, այնուհանդերձ, լեռնաստորոտներից դեպի լեռնագագաթները հաջորդաբար փոխվում են լանդշաֆտային պայմանները և դրանց համապատասխան հողերի ծագումնաբանական տիպերը:

Նախալեռնային և լեռնային վայրերին հատուկ՝ Շուշիի սարահարթում զգալի տարածություններ են գրավում սևահողային, իսկ նախկին անտառածածկ վայրերում՝ երբեմն մուգ դարչնագույն, պողոլային հողատեսակները: Լեռնային գոտիների արևակող լանջերի վրա՝ հիմնական տիպերին, պատահում են սակավաջուր, կմախքային հողատեսակներ:

Շուշիի հմայքը թերի կլիներ, եթե նա շրջապատված չլիներ անտառապատ ձորերով, վիհերով, լեռներով: Շուշիի բնակլիմայական պայմանների ձևավորման գործում անչափ մեծ է այն շրջապատող անտառների դերը: Այն կլիմայի անփոխարինելի կարգավորիչ է, զգալի չափով բարձրացնում է օդի հարաբերական խոնավությունը, տարվա ընթացքում կարգավորում է մթնոլորտային տեղումների քանակը, մեղմացնում շոգը, ձմեռային ցուրտը, քամիների կործանիչ ուժը, բարեբար ներգործություն թողնում շրջակա միջավայրի վրա:

Շուշիի շրջապատի անտառները հիմնականում խառը տնկարքներ են: Այստեղ խառը ձևով աճում են հաճարենին, կաղնին, բոխին, թխկին, թեղին, լորենին, հացին, կեչին, ճապկին, ակացիան: Որոշ հատվածներում մարդու կողմից ստեղծվել են եղևնու և փշատենու մշտադալար ծառերի պուրակներ: Անտառներում սովորաբար հանդիպում ենք հոնի, խնձորենու, թզենու, տանձենու, ընկուզենու, շլորի, զկեռի, տխլենու կղզյակների: Շատ են նաև մոշի և մասրենու թփերը:

Անտառներում առատորեն աճում են սոխի համ ունեցող խազազ կոչվող բուսատեսակը, սունկը, ավելուկը, եղինջը, ծնեբեկը, թրթնջուկը, կնձմնձուկը, ճոճոկը, խնջուղը, փիրփետը, շրիշը: Ամենուրեք տարածված են ուրցի

երկու տեսակները, բազմատեսակ ծաղիկներ ունեցող բույսեր՝ մանուշակ, անտառավարդ, կակաչ, շուշան, մեխակ, նունուֆար, անթառամ, որոնց հոգեպարար բույրով պարուրվում է ողջ շրջապատը:

Գարնան վերջին սագասոխին, մկանասոխին, աստղաշուշանին, ձնծաղիկին փոխարինելու են գալիս հրանուկը, անմոռուկը, որոնց դեղին և երկնակապտավուն գույնի հետ մեծ խայտաբղետություն են առաջացնում վարդակակաչի, երեքնուկի և կակաչների ծաղիկները:

Բուն քաղաքում լայնորեն տարածված են դեղաբույսերը: Քաղաքին առանձին հմայք են հաղորդում պտղատու այգիներն ու պարտեզները: Խաղողից, թզից, նուռից բացի այստեղ աճում են տարբեր տեսակի պտղատու ծառեր: Հայ մարդու քրտնաջան աշխատանքի շնորհիվ այստեղ տարբեր ժամանակներում հիմնվել են Արցախի խորհրդանիշեր հանդիսացող թթի այգիներ:

Շուշիի և նրա շրջակայքի կլիմայական ու բուսական ծածկին համապատասխան՝ գոյություն ունի բազմատեսակ կենդանական աշխարհ:

Ժայռերում ապրում են կարիճների, մողեսների և օձերի որոշ տեսակներ: Շատ հարուստ է բզեզների և թիթեռների ֆաունան: Կաթնասուններից նշված գոտում մշտապես ապրում են նապաստակը, աղվեսը, գայլը, վայրի խոզը, ոզնին, կովկասյան աքիսներ, երբեմն էլ՝ եղնիկ, արջ ու անտառային կատու:

Անտառաբնակ թռչուններից կարելի է մատնանշել փայտփորը, աղավնին, երաշտահավը՝ լորոս-ձուռակը, դեղնածաղիկը, մոշահավը, սարյակը, ծիծեռնակը, բուն, կաչաղակը, չարդը, ուրուն, գառնանգղը: Երկնակամարում մերթընդմերթ տեսանելի է արծիվների սլացիկ թռիչքը:

Շուշին և նրա շրջակայքը հարուստ են քարի տարբեր տեսակների հանքավայրերով: Հատկապես Շուշի քաղաքը գտնվում է կրաքարային բարձրավանդակի վրա: Քաղաքին և Արցախի տարբեր բնակավայրերին կրաքարային հանքերն անփոխարինելի շինանյութ են մատակարարել՝ բնակարաններ, հասարակական նշանակության շինություններ, եկեղեցիներ, բերդի պարիսպներ կառուցելու, քաղաքի փողոցները սալահատակելու համար:

Շուշիի բարձրավանդակը հրաբխային և լեռնակազմական գործողության հետևանքով առաջացած տարածք է, ֆիզիկա-աշխարհագրական մի ուրույն շրջան: Այն ընկնում է երկրաշարժի գոտու մեջ: Որոշ աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել Շուշիում տեղի ունեցած երկրաշարժերի ու դրանց հետևանքների մասին: 1840 թ. հունիսի 20-ին ուժեղ երկրաշարժ է եղել Շուշիում<sup>99</sup>, իսկ 1850 թ. հունվարի 7-ին՝ թույլ երկրաշարժ: Այս երկրա-

<sup>99</sup> «Кавказский календарь», на 1850 г., Тифлис, 1849, стр. 25.

շարժի մասին ականատեսը գրել է. «... հիանալի, տաք օրվա հետ կեսօրին, ժամը 4-ին բարձրացավ խիտ սառը մշուշ, իսկ գիշերվա ժամը 2-ին զգացվեց երկրաշարժի թույլ ցնցում, որը կրկնվեց ևս մի քանի անգամ՝ ոչ բարձր ստորգետնյա դողդոցով, ընդ որում առանց հետևանքների»<sup>100</sup>: 1854 թ. հոկտեմբերի 21-ի երկրաշարժը միջին հզորության էր<sup>101</sup>:

1859 թ. մայիսի 12-ի երկրաշարժի հետևանքով գրեթե վնասվել են բոլոր շինությունները, այդ թվում՝ եկեղեցիները<sup>102</sup>:

1861 թ. երկրաշարժի մասին ժամանակակիցը գրել է. «Անցեալ մայիսի 12-ին, յետ կէս աւուր, ժամը 4-ին և 10 րոպէ, եղաւ Շուշի քաղաքումը երկրաշարժութիւն, որը տևեց մինչև 15 վայրկեան: Այսպիսի երկրաշարժութիւն դեռ չէր եղած այդ քաղաքում, չնայելով նորա ամուր շինութիւններին, շատ տեղեր որմերը (պատերը) փոլ եկան, մինչև անգամ Հայոց եկեղեցվոյ գմբէթն ևս ճեղքուած է»<sup>103</sup>: Նույն օրվա երկրաշարժի մասին «Մեղու Հայաստանի» թղթակիցը պատմում է, որ 1861 թ. մայիսի 12-ին ժամը 17<sup>00</sup>-ին սաստիկ երկրաշարժ է տեղի ունենում քաղաքում, ավերվում են տներ, խանութներ, մի շարք շինություններ ճաքճքել են. «շատ մարդիկ երկիւղից բնակվում են վրաններումը ...»<sup>104</sup>:

1862 թ. մայիսի 12-ին նորից երկրաշարժ է տեղի ունենում, որի հետևանքով վնասվում են շենքերի 2-րդ հարկերը, բանտը, զորանոցները, պարիսպները, ռուսաց և հայոց երկու եկեղեցի, մեկ մզկիթ: 10 տուն և կրպակներ իսպառ քանդվել էին: Մարդկային կորուստներ չկային<sup>105</sup>:

1884 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը այնքան ուժգին էր, որ նույնիսկ ծերունիները նմանօրինակ բան իրենց կյանքում չէին տեսել: Շատ տներ ճեղքեր էին տվել, սակայն բարեբախտաբար զոհեր չկային<sup>106</sup>:

Նկատենք, որ չնայած 19-րդ դարում սեյսմիկ շինարարության այժմեական չափորոշիչներն ու պահանջները չկային, այնուամենայնիվ, Շուշիի շինություններն այնքան ամուր էին, որ հիմնականում դիմանում էին հզոր երկրաշարժերին, և մարդկային կորուստներ համարյա չէին լինում:

Այսպիսով՝ Շուշիի բնաաշխարհագրական միջավայրը մի հետաքրքիր ու ամբողջական տարածություն է կազմում, որտեղ արցախահայությունը հնագույն ժամանակներից, իսկ 18-րդ դարի վերջերից սկսած՝ նաև քաղա-

քական ու այլ շարժառիթներով այստեղ հայտնված ազգային փոքրամասնությունների՝ պարսիկների, թուրքերի, ռուսների, գերմանացիների, լեհերի որոշ ներկայացուցիչներ իրենց քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքն են կազմակերպել՝ ստեղծելով համամարդկային արժեքներ:

Այդ բարդ, երբեմն հակասական ու մրցակցային միջավայրում հայ մարդուն հաջողվել է ստեղծել մնայուն արժեքներ, որոնց վրա խարսխված ներկա սերունդը, նախնիների պատգամը հավատամք դարձրած, կերտում է Շուշիի խոստումնալից ապագան:

<sup>100</sup> «Кавказский календарь» на 1851(2) г., Тифлис, 1851, стр. 67–68.

<sup>101</sup> «Акты ...», т. XI, Тифлис, 1888, стр. 968.

<sup>102</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3826, թ. 2:

<sup>103</sup> «Համբաւաբեր ռուսիոյ», հմ. 2, Մոսկվա, 1861, էջ 3:

<sup>104</sup> «Մեղու Հայաստանի», 5 յունիսի, Թիֆլիս, 1861, էջ 178:

<sup>105</sup> «Кавказский календарь» на 1863 г., Тифлис, 1862, стр. 75:

<sup>106</sup> «Մեղու Հայաստանի», 16 դեկտեմբերի, Թիֆլիս, 1884, էջ 3:

## Գլուխ 2

### ՇՈՒՇԻՆՆԻ ՈՐՊԵՍ ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Ք. Ա. 1-ին հազարամյակից մինչև  
18-րդ դարի երկրորդ կեսը)

Շուշում և նրա շրջակայքում կատարված մասնակի հետազոտությունները, որոնց հետևանքով երևան են հանվել տարաբնույթ նյութեր, թույլ են տալիս եզրակացնելու, որ վերոհիշյալ տարածքում մարդը շարունակաբար ապրել է հնագույն ժամանակներից ի վեր: Բնակլիմայական բավարար պայմանները, աշխարհագրական հարմարավետ դիրքը, մանավանդ մարդու անվտանգ կյանքի համար նպաստավոր միջավայրը թույլ են տվել, որ Շուշիի սարահարթում և նրա հարակից վայրերում վաղնջական ժամանակներից ստեղծվեին բնակավայրեր:

ԼՂԻՄ կազմավորումից հետո իրականացված հնագիտական մասնակի պեղումների արդյունքում հայտնաբերված նորահայտ փաստերը վկայում են, որ հազարամյակներ շարունակ Արցախում, այդ թվում՝ Շուշիի սարահարթում ու հարակա շրջաններում ապրել են հայերի նախնիները:

Այդ իրողությունների փաստարկված պարզաբանումը ոչ միայն գիտական, այլ նաև քաղաքական նշանակություն ունի:

Տասնամյակներ շարունակ Ադրբեջանի իշխանությունները և նրանց պատվերը կատարող գիտնականներն իրենց ժողովրդին և աշխարհին փորձում են ապացուցել, որ Շուշին կառուցվել է 18-րդ դարի երկրորդ կեսին Փանահ խանի կողմից, և այն ադրբեջանական է: Սակայն պատմական փաստերի ճնշման տակ որոշ ադրբեջանցի հեղինակներ ստիպված էին առերեսվել ճշմարտությանը: Դեռևս 1971 թ. Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ հնագիտական արշավախումբը քաղաքի արևելյան հատվածում տեղազննական աշխատանքների արդյունքում ոչ միայն հայտնաբերել է քարեդարյան կացարան, այլ նաև 11-16-րդ դդ. ամրոցատիպ կառույցի հետքեր<sup>107</sup>:

<sup>107</sup> Авалов Э., Архитектура города Шуша, стр. 14.

Ադրբեջանցի հեղինակ Ֆ. Շուշինսկին, ընդունելով այդ փաստերը, գտնում է, որ մինչև 1752 թ. Շուշիի տարածքում բնակավայր է եղել<sup>108</sup>: Ավելին, նույն հեղինակը, ուսումնասիրելով 19-րդ դարի Շուշիի ճարտարապետությունը, խոստովանում է. «Շուշիի կառույցները, տները և փողոցները տարբերվում էին հին Ադրբեջանի այնպիսի քաղաքներից, ինչպիսին էին Բարդան, Գյանջան և Շամախին: Շուշիի փողոցները ավելի լայն էին, իսկ տների տանիքները ի տարբերություն մյուս մահմեդական քաղաքների՝ հարթ չէին, այլ սրածայր էին»<sup>109</sup>: Ճիշտ է, Ֆ. Շուշինսկին թուրքերին հատուկ կեցվածքով վերստին փորձում է յուրացնել հայ ժողովրդի հայրենիքի մի հատվածի քաղաքները, տվյալ պարագայում հայկական Պարտավը, Գանձակը և Շուշին, այնուամենայնիվ, մյուս կողմից էլ ասում է ճշմարտությունը, որ բերդաքաղաքը իրենք չեն կառուցել: Հարկ է նշել, որ ադրբեջանցի մեկ այլ հեղինակ գրում է, որ ադրբեջանցիները (թուրքերը - Վ. Բ.) Լեռնային Ղարաբաղում նատակեցության են անցել 19-րդ դարի կեսերից մինչև 1920-1930-ական թվականները<sup>110</sup>: Մյուս կողմից նա նկատել է, որ Շուշում ադրբեջանցիների (թուրքերի - Վ. Բ.) բնակությունը մինչև 1830-ական թվականները սեզոնային բնույթ էր կրում<sup>111</sup>:

2004 թվականից Շուշում և նրան հարող տարածքներում հնագիտական որոշակի աշխատանքներ են կազմակերպվել: 2005 թ. հունիս-հուլիս ամիսներին ծավալուն պեղումներ են կատարվել: Խնդիր էր դրված «Նախ՝ վերհանել լեռնաշխարհի հիշյալ հատվածում հայ ժողովրդի կազմավորման գործընթացները, ապա միջնադարյան հուշարձանների ուսումնասիրությամբ ցույց տալ Շուշիի սարահարթի՝ հայերով բնակեցված լինելն ու հայկական մշակույթի առկայությունը մինչև Փանահի հայտնվելը տարածաշրջանում»<sup>112</sup>:

Պեղվել են հյուսիսից և հյուսիս-արևելքից Շուշիի պարիսպներին հարակից Ք.ա. 1-ին հազարամյակի դամբարաններ: Հայտնաբերվել են բազմաթիվ խեցեբեկորներ, օբսիդիանից շերտ, երկաթե գեղարդ, արծաթե դրվատված զարդաթիթեղ, բրոնզե զանգ, երկու ապարանջան, օբսիդիանից նետասլաք, ուլունքներ, խողովակակոթառ, միջնաջիղ ունեցող սայրով նիզակ, սափորներ, կճուճներ, թաս-քրեղաններ, անոթների ծորակներ, որոնց

<sup>108</sup> Шушинский Ф., Шуша, стр. 10.

<sup>109</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>110</sup> Исмаил-Заде Д., Из истории кочевого хозяйства Азербайджана первой половины XIX в., Исторические записки АН СССР, вып. 66, Москва, 1960, стр. 96-99.

<sup>111</sup> Նույն տեղում, էջ 130-135:

<sup>112</sup> Ենգիբարյան Ն., Տիտանյան Մ., Շուշիի երկաթեդարյան դամբարանները, էջ 260:

մի մասը ավարտվում է կենդանու ոճավորված գլխով, ապարանջան, սարդիոնե ուլունք: Հատկապես հետաքրքիր է իշխանության խորհրդանիշ հանդիսացող գավազանի գլխադիրը<sup>113</sup>:

Վերոհիշյալ դամբարաններից հայտնաբերված, ինչպես նաև ՀՀ, ԼՂՀ և Արևմտյան Հայաստանի հնավայրերից տվյալ ժամանակաշրջանին վերաբերող, նախկինում ձեռք բերված հնագիտական նյութերը ոչ միայն համադրելի են և զուգահեռներ ունեն, այլ նաև, վստահաբար կարելի է ասել, նույն հայ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքներն են: Ասել կուզի՝ հնագույն ժամանակներից վերոհիշյալ տարածքները հայկական են, հայերի բնօրրանն ու հայրենիքը:

Հետագա ժամանակաշրջաններում՝ Վանի թագավորության գահակալների, այնուհետև Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների և Բագրատունիների օրոք, Արցախը, բնականաբար, նաև նրա մի մասը կազմող Շուշին, ներգրավված են եղել հայկական թագավորությունների կազմում: Նկատենք, որ 428 թ. մինչև 885 թ. ընկած ժամանակահատվածում, երբ մայր երկրում՝ բուն Մեծ Հայքի կենտրոնական նահանգներում, վերացել էր հայկական թագավորությունը, Հայոց արևելից նահանգների հայությունը, համախմբվելով Առանշահիկ իշխանական տան ներկայացուցիչների շուրջ, 5-րդ դարի երկրորդ կեսին Վաչեի, իսկ դարավերջին՝ Վաչագանի գլխավորությամբ պահպանեցին հայկական պետականության բեկորները: Այդ ավանդույթները պահպանվեցին նաև 6-9-րդ դարերի ընթացքում: Այն ինչ-որ չափով կարևոր դերակատարություն ունեցավ հյուսիսից և հյուսիսարևելքից դեպի Մեծ Հայքի մյուս նահանգները զավթողական արշավանքներ ձեռնարկած հորդաներին դիմակայելու գործում:

Շուշին և նրա շրջակայքն այդ ընթացքում գտնվում էին Խաչենի իշխանների տիրապետության տակ: Կյանքն այստեղ շարունակվում էր իր բնականոն հունով:

2012 թ. Շուշիի տուն-ինտերնատի կառուցման ընթացքում կատարված հողային աշխատանքների ժամանակ շինարարները գտել են մարդու ոսկորներ և կավահողից պատրաստված խողովակներ: Այն թվագրվում է 5-7-րդ դդ.<sup>114</sup>: 5-9-րդ դարերում, որպես բերդ, Շուշին շարունակում էր մնալ Կուր-Արաքսյան միջագետքը Սյունիքին և Այրարատին կապող հիմնական հանգուցակետում: Այդ տարածքների անվտանգության պաշտպանությունը Արցախի իշխանների գերխնդիրներից մեկն էր համարվում:

<sup>113</sup> Հայտնաբերված նյութերի մանրամասների մասին տես՝ Ենգիբարյան Ն., Տիտանյան Մ., նշվ. աշխ., էջ 260-265: Սաֆարյան Վ., Պետրոսյան Հ., Ենգիբարյան Ն., նշվ. աշխ., էջ 89-95:

<sup>114</sup> U. A. Regnum (02-03-2012; KK, 2012, N 2 և 25)

7-րդ դարի արաբական արշավանքները նկարագրող հեղինակները մեզ որոշակի տեղեկություններ են հաղորդել նաև Շուշիի մասին: Այսպես, Ալ-Բալազուրին գրել է, որ արաբ զորավար Սալման Իբն-Ռաբիա ալ Բահիրին, Բայլականն ու Պարտավը գրավելուց հետո զորքեր է ուղարկում՝ իրեն հնազանդեցնելու Շավշիի, Մեսվանի, Ուդի և Առանի մյուս բնակավայրերի բնակիչներին<sup>115</sup>:

Վերոհիշյալ արշավանքի մասին պատմում է նաև արաբ մեկ այլ մատենագիր՝ Իբն ալ-Ֆակիիրը: Նա ասում է, որ արաբական զորքերը գրավել են Առանի Սիսար, Մասկուվան, Ուզ, Մարան, Մախրագյալ բնակավայրերը<sup>116</sup>:

Կասկածից վեր է, որ Ալ Բալազուրիի մատնանշած Շավշին նույն Շուշին է: Արաբական զորավարները առաջին հերթին ձգտում էին գրավել առանցքային նշանակության բերդերն ու բնակավայրերը: Նկատենք նաև, որ Պարտավն ու Բայլականը Շուշիից այնքան էլ մեծ հեռավորության վրա չեն գտնվում: Ավելին, Արցախի հնավայրերի գիտակ, հետազոտող Սլավա Սարգսյանը իրավացիորեն նկատել է, որ Իբն ալ-Ֆակիիի հաղորդած տեղանունների մեջ Սիսարը համապատասխանում է Հարձլանք գավառին, որտեղ գտնվում է նաև Ծիծեռնավանքը<sup>117</sup>: Հետևաբար, ստացվում է, որ արաբական զորքերը փորձել են նվաճել Սյունիքը, Արցախը և Ուտիքը իրար կապող, մեկ ուղու վրա գտնվող բերդերն ու բնակավայրերը՝ դրանով իսկ զրկելով հայկական նահանգները իրար աջակցելու հնարավորությունից:

Հետագայում արցախահայությունը ազատագրական պայքարի միջոցով թոթափեց արաբական լուծը: 9-րդ դարի սկզբներին արաբները նորից փորձեցին իրենց գերիշխանությունը տարածել Հայոց արևելից նահանգների վրա:

821 թ. արաբները, Պարտավից շարժվելով Արցախի խորքերը, ասպատակեցին Ամարասը և, բազմաթիվ մարդկանց գերեվարելով, ամրացան Շիկաքար բերդում<sup>118</sup>:

«Այդ ժամանակ քաջ ու շքեղատեսք Սահլի Սմբատյան Եռանշահիկ իշխանը և իր քաջագոր եղբայրները իրենց զորքերով լուսադեմին վրա տվին,

<sup>115</sup> Балладзори, Завоевания стран, стр. 13.

<sup>116</sup> Ибн-ал Факих, стр. 27.

<sup>117</sup> Սարգսյան Ս., Արցախի ամրոցները, աշխատանքը ներկայացված է հրատարակության:

<sup>118</sup> Մեծավաստակ պատմաբան Բ. Ուլուբաբյանը Շիկաքարը և Շուշի բերդերը նույնացնում է: Մեր կարծիքով դրանք տարբեր բերդեր են և երկուսն էլ կարևոր ռազմավարական կետերում են գտնվում: Եթե Շիկաքարը գտնվում է դեպի լեռնաստանը ձգվող և հետզհետե նեղացող դաշտավայրի պարանոցի մուտքում, ապա Շուշին գտնվում է դրա վերջնամասում՝ բուն բարձրավանդակի սրտում: Տես Բ. Ուլուբաբյան, Զրուցարան, Երևան, 1991, էջ 330:

նրանց բոլորին միասին, դիաթավալ արին, ցիրուցան դարձրին և, ինչպես առյուծի ժանիքներից, գերիններին խլեցին», հիշատակում է պատմագիրը<sup>119</sup>:

9–13–րդ դարերի ընթացում հզորանում են Արցախի իշխանական տների ներկայացուցիչները: Ծաղկում են ապրում մշակույթն ու տնտեսական կյանքը: Այդ օրինաչափ և բնականոն զարգացումից դուրս չմնաց նաև Շուշին, որը այդ ժամանակներում ավելի շատ հայտնի էր Քար կամ Քարագլուխ<sup>120</sup>, Շոշիքար անուններով: Այդ անունն ինչ որ ձևով պահպանվել է մինչև ներկա ժամանակները: Պարզապես Շուշիի հարևան գյուղերի բնակիչները քաղաքի որոշ հատվածներ անվանում են «Քերծեն կրիօխ», որը կարելի է հասկանալ նաև բերդ, անմատչելի վայր ձևով: Պատահական չէ, որ 1724 թ. Իվան Կարապետը ռուսական արքունիքին գրել է. «Էս Քարայգլխին սղնաղումն Թարխան և Բաղի ուզբաշոնց քշտին ամ»<sup>121</sup>:

1725 թ. Արցախ թափանցած թուրքական զորքերի դեմ դաժան մարտեր էին ծավալվում: Ավան և Օհան հարյուրապետերի անունից ռուսական զորքերի հրամանատարությանը հղված նամակում ասվում է, որ թուրքերն արդեն հասել են վերոհիշյալ զորավարների բերդը, և հավելում. «Ը (8) օր կռիվ արին թօփով եւ դոբարով: Քարին մինչև կեսն կալան, էլ անել չի կարացին գնալ»<sup>122</sup>: Քանի որ Շուշիի բարձրավանդակը բավականաչափ ընդարձակ է և մյուս կողմից էլ կտրտված, հնարավոր է, որ թուրքերին հաջողվել է գրավել որոշ ամրացված հատվածներ, սակայն հայ պաշտպանները, համախմբելով ուժերը, կասեցրել և հետ են շարտել թշնամուն:

Միջնադարում բերդի գոյության մասին են խոսում նաև այլ փաստեր: 1981 թ. Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի համար օժանդակ տնտեսություն ստեղծելու աշխատանքներ կատարելիս Շուշիի բերդապարսպի կողքին հայտնաբերվել են «խաչքարեր, տապանաքարեր, հին բնակավայրի հետքեր: Խաչքարերից մեկը ՆԻ (971) թվականից է, մյուսը ՋԱ (1252)–ից»<sup>123</sup>:

2005 թ. Շուշիի արևելյան պարսպապատին կից գտնվող հայ–հունական գերեզմանոցի հին հատվածի պեղումները ցույց են տվել, որ այդ նույն վայրում 12–13–րդ դարերում եղել է հայկական գերեզմանոց, որի խաչքարերը հետագայում՝ 19–րդ դարի կեսերին, օգտագործվել են նոր թաղումների

<sup>119</sup> Մովսես Կաղանկատուացի, էջ 255:

<sup>120</sup> Այս Քարագլուխը չպետք է շփոթել Խրամորթի մոտ գտնվող Քարագլուխ–Շիկաքարի հետ:

<sup>121</sup> Հայ–ռուսական հարաբերությունները 18–րդ դարի առաջին երեսնամյակում, հ. 2, մասն 3, Երևան, 1967, էջ 186:

<sup>122</sup> Նույն տեղում, էջ 286:

<sup>123</sup> Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 209:

համար: «Այստեղից գտնված 12–13–րդ դարերի հինգ խաչքարերը վկայում են, որ Շուշիի սարահարթը հայերի կողմից բնակեցված էր Խաչենի հայկական իշխանության ամենածաղկուն դարաշրջանում»,– եզրակացրել են հնագետները<sup>124</sup>: Բուն Շուշիում՝ պարիսպներից ներս, հայտնաբերվել են երկու խաչքարերի բեկորներ, որոնցից մեկը ներկայումս պահվում է Շուշիի պատմաերկրագիտական թանգարանում: Այն թանգարան է բերվել բանտի տարածքից և օգտագործվում էր որպես բակի սալահատակի քար: Երկրորդ բեկորը գտնվել է «Մխիթարաշենի դարպասներ» կոչվող հատվածից, որը ժամանակին օգտագործվել է որպես աշտարակի շինաքար: Երկուսն էլ պատկանում են այս տարածքի՝ 12–13–րդ դարերի տիպական խաչքարերի թվին: Ընդհանրապես Շուշիի անմիջական շրջապատում վավերացվել են երկու տասնյակի հասնող խաչքարեր, որոնք բացի մեկից, որը կարելի է թվագրել 10–11–րդ դարերով, նույնպես պատկանում են 12–13–րդ դարերին<sup>125</sup>: Խաչքարերի մի մասի վրա կան արձանագրություններ: Դրանք պատրաստված են սպիտակ և դեղնավուն տեղական կրաքարից:

Միջնադարում Շուշիի գոյության փաստին անդրադարձել է նաև Ջալալ–ադ–Դին սուլթանի անձնական քարտուղար Շիխաբ ադ–Դին ան–Նասավին, որն ամրոցին «Կալադարա» անունն է տվել: Վերջինս վկայում է, որ մոնղոլների դեմ պայքարի ժամանակահատվածում պատսպարվելու նպատակով, դուրս գալով Գյանջայից, մեծ դժվարությամբ հասնում է Կալադարա ամրոցը, որտեղ գտնվում էին Ջալալ ադ–Դինի կինը՝ Դայա խաթունը, որդին՝ Մանկատու–շահրը և ուրիշներ<sup>126</sup>: Հավանաբար սուլթանի կենսագիրը «ուրիշներ» ասելով նկատի ուներ Ջալալ ադ–Դինի հարազատներին ու նրանց սպասավորներին, որոնք մոնղոլներից պաշտպանվելու համար անվտանգ վայր էին ընտրել արդեն 18–րդ դարի սկզբներին հայտնի Ավան հարյուրապետի պալատ–ամրոցը: Նկատենք նաև, որ արդեն նոր ժամանակներում նույնիսկ արցախահայերը Շուշիի բերդն անվանում էին դալա, իսկ նրա բնակիչներին՝ դլեցեք: Շիխաբ ադ–Դին ան–Նասավին միաժամանակ պատմում է, որ շահի ընտանիքի պատսպարանը գտնվում էր բարձր ժայռի վրա գտնվող քարանձավում, որի մեջ նաև աղբյուր կար, իսկ նրա հարևանությամբ ձորում՝ ջրաղաց<sup>127</sup>: Վերոհիշյալ տեսակետի օգտին է խոսում նաև մեկ այլ փաստ. այս նույն ամրոցի մոտակայքում պարսից Քեյ–Խոսրով արքան հաղթել է մոր կողմից պապին՝ թուրքերի առաջնորդ Աֆրասիյաբին<sup>128</sup>:

<sup>124</sup> Պետրոսյան Հ., Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 270:

<sup>125</sup> Պետրոսյան Հ., Շուշիի և շրջակայքի խաչքարային մշակույթը, էջ 24:

<sup>126</sup> Шихаб ад–Дин Мухаммад ан–Насави, նշվ. աշխ., էջ 278:

<sup>127</sup> Шихаб ад–Дин Мухаммад ан–Насави, նշվ. աշխ., էջ 274:

<sup>128</sup> Ֆիրդուսի, Սիաուշ վեպ Շահ–Նամայից, Շուշի, 1894, էջ 26:

Շուշիի սարահարթի տեղագնումն ու մասնակի ուսումնասիրությունները մեզ թույլ են տալիս ասել, որ 18-րդ դարի երկրորդ կեսից՝ պարսկական տիրապետության վերջին շրջանից մինչև 19-րդ դարի 20-ական թվականների վերջը, այսինքն՝ ուսական գերիշխանության նախնական փուլը՝ հիմնական ամրոցի կառուցման ժամանակահատվածը, քննության նյութ հանդիսացող վերոհիշյալ բարձրավանդակում կային առանձին ամրոցներ: Ըստ էության, Շուշիի հարևանությամբ հյուսիսարևելյան, արևելյան և հարավային հատվածներում դեռևս վաղ միջնադարից գոյություն ունեցած Կարկառի, Շոշի, Հունոտի և Քարինտակի ամրությունները և բարձրավանդակի վրա գտնվող բերդերը միևնույն պաշտպանական համակարգի առանձին մասերն էին: Դրանք արդեն 18-րդ դարի սկզբներին հանդիսանում էին Փոքր Սղնախի պաշտպանական շրջանի առանցքային մասը: Հենց նրանց վրա էլ դրված էր կիրճի պաշտպանության հիմնական գործը:

16-րդ դարից սկսած թուրքերը անընդհատ փորձում էին նվաճել կիրճը: Դրա ռազմավարական նշանակությունը նրանք քաջ գիտակցում էին: Վերացնելով այդ ամրոցների համակարգը՝ նրանք ըստ էության Արցախը կկիսեին երկու մասի: Դիզակի և Վարանդայի մելիքությունները կզրկվեին Խաչենի, Ջրաբերդի ու Գյուլիստանի հետ ունեցած կապից: Նման պայմաններում թշնամուն կհաջողվեր առանձին-առանձին հաշվեհարդար տեսնել հայկական իշխանությունների հետ:

Մեր այս դիտարկումը ինչ որ չափով համապատասխան փաստերով հիմնավորվել է նաև հնագետների կողմից: Մխիթարաշենի դարպասների մոտ պարսպապատվածի շրջակայքում ձեռնարկված լայնածավալ պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերի հիման վրա նրանք գտել են, որ. «... պարսպապատերից ներս գտնվող այս հատվածը բնակեցված է եղել գոնե մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբից: Հետաքրքիր է նաև պարսպապատի աշտարակի շարվածքում դիտվող 13-րդ դարին պատկանող խաչքարի բեկորը: Սա մի լուրջ տվյալ է՝ վերջ դնելու Շուշիի սարահարթն առաջին անգամ Փանահի կողմից բնակեցնելու ադրբեջանական առասպելին: Ամրոցը գտնվում է Շոշ գյուղի գրեթե դիմաց և ընդամենը 250 մ է հեռու խաչքարերով գերեզմանոցից: Հնարավոր է, որ այս ամրոցն էլ եղել է հոչակավոր Շոշի քարը կամ սղնախը, որից էլ, ըստ որոշ կարծիքների, Շուշի քաղաքը ստացել է իր անվանումը»<sup>129</sup>:

<sup>129</sup> Սաֆարյան Վ., Պետրոսյան Հ., Ենգիբարյան Ն., Շուշիի ու նրա շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները և հեռանկարները, էջ 93:

Շուշիի «Մխիթարաշենի դարպասներ» կոչվող հատվածում պահպանված պարսպաշարից կարելի է եզրակացնել, որ այդ հատվածում 16-ից մինչև 18-րդ դարի սկզբները գոյություն ունեւ առանձին ամրոց, որն անմիջապես վերահսկում էր լեռնանցքը: Նշված ժամանակահատվածում, մինչև Փանահի Լեռնային Ղարաբաղում հայտնվելը, Շուշիի սարահարթում եղած ամրոցների մասին ակնարկված է նաև խորհրդային Ադրբեջանում հրատարակված գրքերի մեջ: Այսպես, 1940-ական թվականների վերջերին խորհրդային Ադրբեջանի նախարարների խորհրդին կից ճարտարապետական հուշարձանների պահպանության վարչության մասնագետներն ուսումնասիրել են Շուշիի հին կառույցները: Ճարտարապետներ Ալիզադեի և Սարդարյանի գեկուցման մեջ ասված է. «Շուշին պաշտպանող պարիսպներից ներս, քաղաքի հարավ արևելյան մասում, գտնվում են երկու կառուցվածք, որոնք իրենց պլանով որոշ նմանություն ունեն. դա Իբրահիմ խանի ամրոցն է, և նրա աղջկա՝ Կարա Բոյուք խանումի ամրոցը: Իբրահիմ խանի ամրոցը չորս կողմից փակված է բերդի պատերով ու աշտարակներով: Բոյուք խանումի ամրոցի պատերում եղել են հրակնատներ: Գլխավոր մուտքի միացման կամարի վրա տրված է ամրոցի կառուցման թվականը՝ հիջրեթի 1121 թ., այսինքն 1709–1710 թթ. Կարա Բոյուք խանումի և Իբրահիմ խանի ամրոցները կառուցված են եղել քաղաքի բերդից առաջ»<sup>130</sup>: Նույն արձանագրության մասին խոսվում է նաև «Ադրբեջան (պատմական և տեսարժան վայրեր)» գրքույկում<sup>131</sup>: Իսկ Սովետական մեծ հանրագիտարանի երկրորդ հրատարակության 48-րդ հատորում գրված է, որ Շուշի քաղաքի հարավարևելյան մասում գտնված են որոշ չափով իրար նմանվող երկու ամրոցներ, որոնք կառուցված են 18-րդ դարի սկզբներին<sup>132</sup>:

Վերոհիշյալ ամրոցներն առ այսօր պահպանվել են: Դրանցից առաջինը, որ կառուցել էր Ավան հարյուրապետը, ադրբեջանցի հեղինակները վերագրել են Իբրահիմ խանին, իսկ երկրորդը՝ Ավանի եղբայր Թարխան հայրուրապետինը՝ Կարա Բոյուք խանումին<sup>133</sup>:

<sup>130</sup> Памятники архитектуры Азербайджана, т. 2, Баку, 1950, стр. 120–129.

<sup>131</sup> Азербайджан (исторические достопримечательные места), под редакцией М. Казаева, Баку, 1960.

<sup>132</sup> Большая советская энциклопедия, т. 48, 1957, статья о Шуше, Իբրահիմ խանի և Կարա Բոյուք խանումի ամրոցների մասին պատմող նյութը վերցված է Տեր-Գաապարյան Ռ. «Շուշի» մենագրությունից, էջ 34–35:

<sup>133</sup> Ализаде А., Саркисов А., О некоторых архитектурных памятниках Азербайджана, сборник, т. 2, Баку, 1950, стр. 120–122. Авалов Э., Архитектура города Шуша, стр. 25. Ашурбейли С. Архитектура Шуши и ближайших окрестностей (на основе экспедиции 1934 г.), «Научный архив ин-та истории АН Азерб. ССР», инв. но. 359: Տես՝ Ղուլյան Ա., Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001, էջ 96:

Ճարտարապետ, հետազոտող Արտակ Ղուլյանը, մանրամասն ուսումնասիրելով երկու հուշարձանները, հավաստի ու հիմնավոր փաստերով ապացուցել է, որ դրանք կառուցվել են 18-րդ դարի 20-ական թվականներին<sup>134</sup>:

Առաջինը գտնվում է Շուշիի հարավարևելյան ծայրամասում, ձորի եզրից մոտ 400 մ արևմուտք՝ հարավահայաց թեթույամբ բլրակի վրա<sup>135</sup>: Պատահական չէ, որ ժողովուրդը դարեր շարունակ սարահարթի այդ հատվածը անվանել է «Ավանա քերծ»: Ամրոցը՝ պարիսպներով իրար հետ միացած 4 աշտարակներով, քառակուսի շինություն է: Պատերը, ինչպես Շուշիի մյուս պարիսպները, կառուցված են կոպտատաշ կրաքարից: Մուտքի եզրամասերը սրբատաշ քարից են շարված:

Երկրորդ ամրոց-ապարանքը և ավերակները գտնվում են քաղաքի հարավարևելյան ձորափնյա դարավանդահարթակի վրա՝ նախորդից մոտ 250 մ դեպի հարավ-արևելք<sup>136</sup>: Ապարանքի հատակագիծը արտաքին եզրաձևով համընկնում է «Ավանա քերծ»-ի ամրոցին: Ամրոցը՝ չորս անկյունային սնամեջ բուրգերով ուղղանկյուն շինություն է:

Ամենայն հավանականությամբ, համեմատաբար խաղաղ պայմաններով Փոքր Սղնախի գինական ուժերը քարանձավային ամրոցներից տեղափոխվում և հաստատվում էին ձորի պռնկին գտնվող հարմարավետ զորանոցներում:

Վերոհիշյալ փաստը մի կողմից հիմնավորում է մեր իսկ առաջ քաշած այն տեսակետը, ըստ որի՝ մինչև Փանահ խանի հայտնվելը Շուշիի սարահարթում արդեն գոյություն ունեին մի քանի հայկական ամրոցներ, իսկ մյուս կողմից էլ ադրբեջանցի որոշ մասնագետներ համապատասխան նյութերով ժխտում են իրենց գործընկերների այն մոտեցումը, որի համաձայն՝ բերդաքաղաքի պատմությունը սկսվել է 1752 թ., և այն հիմնել են թուրքերը<sup>137</sup>:

Այս ժամանակաշրջանի վերաբերյալ գրավոր աղբյուրները որոշ տեղեկություններ են հաղորդում: Այսպես, 1691 թ., հավանաբար Թոխաթում ստեղծված և այլազգիների ձեռքից 1804 թ. փրկագնված Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Սուրբ Աւետարանի մեկնիչս Բենիաթի որդի Մարքարին է, զի այս էր անկած ի ձեռս անօրինաց ... և մեք Մարքարի որդիքս որ ենք Ղազանչեցի ի Շուշի պերթն ծնեալ՝ և քաղաքն Նուխի էինք,

<sup>134</sup> Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 96-105:

<sup>135</sup> Նույն տեղում, էջ 97:

<sup>136</sup> Նույն տեղում, էջ 101:

<sup>137</sup> Шушинский Ф., Шуша, стр. 4; Авалов Э., Архитектура города Шуша, стр. 20, 24.

տեսանք գմեկնիչս այս ի ձեռաց անօրինի մանաւանդ զբազում կարի և այլ իմն կերպ վիշտ և կսկիծ թուեցաւ անձնոյս մերոյ, և գնեցաք ի ԾԱ պարքն ընչից մերոց առաք ի ձեռաց այլազգոյն ի թվն. հայոց ՌՄԾԳ»<sup>138</sup>:

Մեկ այլ ձեռագիր հիշատակարանում, որը գրվել է 1708 թ., Շուշիի Մեղրեցոց Սր. Աստվածածին եկեղեցու մասին գրված է. «Ի թուականիս Հայոց ՌՃԾԷ այս է մուրրու Ս. Աստվածածին եկեղեցոյ. վախմ և յիշատակն որ տուեալ են. Աստված ողորմի Մելիքսեթ եպիսկոպոսին ...»<sup>139</sup>: Ձեռագրի մեջ հիշատակված են նաև մելիք-Շահնազար մեծի, մելիք Պեկի, Հուրիգատի, մելիք-Շահնազար Թոքրի, մելիք Ասլանի, Եարի պեկի կողակից Կուլուսարի անունները<sup>140</sup>:

Շուշիի սարահարթը, հանդիսանալով Վարանդայի Մելիք-Շահնազարյանների ժառանգական կալվածքը, 17-րդ դարի կեսերից նրանց տոհմի որոշ ուստեր այստեղ էին հաստատվել:

Շուշիի հարավային վերին մասում գտնվող «Գյավուրի սարից» դեպի արևելք՝ Քարինտակ գյուղը տանող արահետից 200 մ դեպի արևմուտք ընկած փոքրիկ հարթակում, Մելիք Շահնազարյանները 17-րդ դարի կեսերին պարսպապատ ապարանք են կառուցել: Այն 500 քառ. մետր մակերես ուներ և բաղկացած էր 22 սենյակներից: 1918 թ. մարտի 23-ին հայ-թաթարական ընդհարումների ժամանակ ապարանքը հրդեհի ճարակ է դարձել<sup>141</sup>: Մելիք Շահնազարի՝ Շուշիում եղած շինությունների մասին է գրել նաև Ֆիրուզին Շուշինսկին: Նա հայտնում է, որ Փանահի ժամանակ, երբ մելիք Շահնազարը կառուցում էր բերդի հարավային պարիսպները, նրա հարևանությամբ գտնվում էր վիթխարի մի բերդ, որին տեղացիներն անվանում էին «Մելիք Շահնազարի քարանձավ»<sup>142</sup>: 17-րդ դարում Շուշիում հայերի ներկայության մասին է պատմում նաև ոչ հայկական ծագումով գիտնական դոկտոր Համիդ Ալզարի «Միրզա Մելքում խան» աշխատությունը, որը հրատարակվել է դեռևս 1973 թ. Բերքլիի և Կալիֆորնիայի համալսարանների կողմից<sup>143</sup>: Գրքի մեջ ներկայացված է ծագումով շուշեցի հայ Միրզա Մելքում խանի գերդաստանի կենսագրությունը: Համիդ Ալզարին փաստերով ապացուցում է, որ Հովհաննես Մելքում խանի գերդաստանը Շուշիում ապրել է 1690-ական թվականներից: Նրանք զբաղվել են առևտրով և պատկանել են պարսից

<sup>138</sup> Թօփճեան Յ., Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 64:

<sup>139</sup> Թօփճեան Յ., նշվ. աշխ., էջ 279:

<sup>140</sup> Նույն տեղում:

<sup>141</sup> Мелик-Шахназаров Заре, Записки карабахского солдата, стр. 28.

<sup>142</sup> Шушинский Ф., Шуша, стр. 7.

<sup>143</sup> Hamid Acgar, Mirza Mackum Khan: a study in the history of Iranian modernism, Los Angeles, London, 1973.



շահի շրջապատին: Հովհաննես Մելքոն խանի մինուձար որդին՝ Հակոբը, որը հետագայում դարձել էր բժիշկ, ծնվել է Շուշիում՝ 1700 թ.: Նա ունեցել է երեք զավակ՝ Աղանուր Մելքոն, Տիգրան Մելքոն և Աբրահամ Մելքոն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախն ապրում էր պատերազմական շրջան, օգտագործելով շահի հետ ունեցած ջերմ հարաբերությունները, Միրզա Մելքոն խանն իր առևտրական գործառույթյան շրջանակներն ընդլայնելու նպատակով 1720-ական թվականներին տեղափոխվում է Իսպահան: Այստեղ նա շահի ֆարմանով իր ձեռքում է կենտրոնացնում Պարսկաստանի ծխախոտի արտադրության և մեծածախ առևտրի մենաշնորհը:

Նադիր շահի մահից հետո Պարսկաստանն ապրում էր անկայունության շրջան: Քաղաքական և տնտեսական այդ հանգամանքները հաշվի առնելով՝ նրա ավագ որդին՝ Աղանուրը, 1740-ական թվականների վերջերին տեղափոխվում է Հնդկաստան:

Նշանավոր շուշեցու զավակները, թոռները և ծոռները ժամանակի ընթացքում հաստատվել էին Ինդոնեզիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Բելգիայում: Այդ մեծ գերդաստանի շառավիղներից մեկը՝ հայտնի բժիշկ Հովհաննես Մելքոն Բեկը, որը կրում է նշանավոր նախապապի անունը, ապրելով Գենտում, իր կապերը չի կտրել հայրենի Արցախի հետ և բազմիցս այցելել է ԼՂՀ: 2001 թվականից Հովհաննես Մելքոն բեկն իր սեփական տունն ունի Շուշիում և համարվում է Արցախի նախկին մայրաքաղաքի պատվավոր քաղաքացի<sup>144</sup>:

2012 թ. Շուշիի հարավարևելյան ծայրամասում՝ Ավան հարյուրապետի դղյակից շուրջ 100 մ հյուսիս-արևմուտք, շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է վաղ քրիստոնեական ժամանակաշրջանին պատկանող դամբարանադաշտ, որը կարող է խոր ու համակողմանի ուսումնասիրության: Կարծում ենք, որ այդ դամբարանների պեղումները նոր լույս կսփռեն 4-9-րդ դարերի Շուշիի սարահարթի բնիկների կյանքի կենցաղի, սովորույթների վրա:

Վաղ և միջին դարերում Շուշիի սարահարթում տեղակայված ամրոց բնակատեղիների մասին ճիշտ պատկերացում կազմելու, նրանց ունեցած դերն ու նշանակությունը հանգամանորեն վեր հանելու համար կարևոր է նաև քննության նյութ դարձնել ներկայիս քաղաքին հարող բերդերին ու բնակավայրերին առնչվող որոշ հարցեր:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Կարկառ քաղաքը, որը 2012 թ. հայտնաբերել են պատմաբան Ս. Սարգսյանը և հնագետ Գ. Սարգ-

սյանը: Վերջինս մի քանի տարի պեղումներ է կատարել նորահայտ հնավայրում:

Քաղաքը գտնվում է Ստեփանակերտի և Շուշիի միջնամասում՝ Կարկառ գետի ձախ ափին, դեպի Շոշ-Սարուշեն-Կարմիր Շուկա տանող ավտոմայրուղու աջ եզրին գտնվող անտառապատ լանջի վերնամասում, ծովի մակերևույթից 950-1015 մ բարձրությամբ: Նրա միջնաբերդի բլրի գագաթը (աշխարհագրական կոորդինատներն են N 39 47 06,0; E 46 46 01,5 ծովի մակերևույթից 1015 մ) գտնվում է Ստեփանակերտի «Մագի» կամրջից ուղիղ գծով 2200 մ հարավ, ազիմուտ 180 աստիճան, իսկ Շուշիի «Գանձակի» դարպասներից՝ 2600 մ հյուսիս-արևելք, ազիմուտ՝ 30 աստիճան<sup>145</sup>:

Կարկառն իր մեջ ընդգրկում է շուրջ 40 հա տարածք: Ամենայն հավանականությամբ քաղաքը կազմված է եղել միջնաբերդից, բուն քաղաքից, որը նույնպես պարսպապատված էր: Այդ ամենի հետքերն առայսօր պահպանվում են: Պատահական չէ, որ Կարկառի հարևան գյուղերի բնակիչներն այդ տեղանքն անվանում են «Թըքվերեն (Թագավորի) տեղ»: Քաղաքի հարավային պարսպապատը «կիկլոպյան» շարվածք ունի, որի հարևանությամբ հայտնաբերվել է նաև երկաթե դարաշրջանին վերաբերող խեցեղեն: Ասել կուզի՝ 6-րդ դարում պարսից արքա Խոսրով Անուշիրվանը Կարկառը վերակառուցել և ավելի է հզորացրել: Ի դեպ, նույն ձևով են վարվել նաև Շուշիի նկատմամբ 18-րդ դարի երկրորդ կեսին Փանահ և Իբրահիմ խաները, ինչու չէ, նաև Արցախի հնագույն բնակավայրերին հետագայում տիրացած քոչվոր ցեղերը:

Հարկ է նշել, որ Խոսրով Անուշիրվանի կողմից Կարկառի կառուցման մասին առաջինը հիշատակել է արաբ աշխարհագետ Իբն Խորդադբեհը<sup>146</sup>, որն ապրել է 820-912 թվականներին: Բնականաբար, Սասանյան գահատոհմի ներկայացուցիչ Խոսրով 1-ի ժամանակներից չորս դար անց արաբ պատմիչը չէր կարող խորամուխ լինել փաստերի մեջ և ճշմարտացիորեն ներկայացնել քաղաքի կառուցման նախակիզը:

<sup>145</sup> Սարգսյան Գ., Կարկառ քաղաքի հայտնաբերումը և ուսումնասիրության առաջին արդյունքները, էջ 97: Ակադեմիկոս Ս. Երեմյանը գտնում է, որ Կարկառը երկրամաս է և գտնվում է Բայլականից հյուսիս՝ Ալգեօլ կոչված լճերի շրջանում: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի հեղինակները Կարկառը համարում էին ԼՂՀ Մարտունու շրջանի Հերիեր գյուղի հետ: Ս. Սարգսյանը և Բ. Կարապետյանը Կարկառը տեղորոշում են Շուշի բերդաքաղաքի տեղում, իսկ Հ. Պետրոսյանը՝ մերձակայքում: Ալ. Հակոբյանը Կարկառը տեղադրում է Կրկժան գյուղի տեղում: Տես՝ Սարգսյան Գ., Յակոբեան Ալ., Նորայայտ Կարկառ քաղաքատեղին Արցախում, էջ 46:

<sup>146</sup> Караулов Н., Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, стр. 15.

<sup>144</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 227:

Կարկառի կառուցման մասին իրենց գործերում հիշատակում են նաև 9-րդ դարի արաբագիր պարսիկ աշխարհագետ Իբն ալ-Ֆակիհը<sup>147</sup> և արաբ մատենագիր Յակուտ ալ-Համավին<sup>148</sup>:

13-րդ դարի վրաց անանուն ժամանակագիրը պատմում է, որ 1200-ական թվականներին Ջաքարե Երկայնաբազուկի գլխավորությամբ վրացական զորքերը Գեղարքունիքից անցան Խաչեն և, ճանապարհին ավերելով ամեն ինչ, հասան մինչև Կուր գետի ափերը: Ժամանակագիրը, ներկայացնելով արշավանքի հետ վերադարձի ողջ ընթացքը, խոսում է նաև Խաչենի Կարկառ քաղաքի մասին<sup>149</sup>: Նույն ժամանակաշրջանի պատմիչ Կիրակոս Գանձակեցիին Ներքին Խաչենի մեծ իշխան Հասան Ջալալի հայրենի կավածքներ (այսինքն՝ բնակավայրեր – Վ. Բ.) են համարում Ջրաբերդը, Ականան և Կարկառը<sup>150</sup>: Վերոհիշյալ բերդաքաղաքը տարածաշրջանի համար այնքան կարևոր տնտեսական և քաղաքական նշանակություն ուներ, որ բնակավայրի տերերը դարերի ընթացքում նրա շրջապատում ստեղծել էին ամրոց-գորակայաններ, դիտակետեր: Կարկառի միջնաբերդի հյուսիսարևմտյան մասում՝ Շուշիի մատույցներում, «Վրչկի» կոչված բլրի վրա, Շուշիից Ստեփանակերտ իջնող ճանապարհի աջ եզրին, կառուցված է եղել ամրոց-գորակայան: Այն ոչ միայն Կարկառի, այլ նաև Շուշիի համար առաջապահ պաշտպանական հանգույցի դեր ուներ: Կարկառի միջնաբերդից հյուսիս, նույնանուն գետի աջ ափին՝ ԼՂՀ քաղաքաշինության նախարարության մասնաշենքի հանդիպակաց բլրին, տեղակայված էր «Մելիքեն դուզ» ամրոց-գորակայանը:

Քաղաքի հարավային մատույցները հսկում էր միջնաբերդից ընդամենը 370 մ հեռավորության վրա բարձր բլրի գագաթին կառուցված դիտակետ աշտարակը: Արևելքից քաղաքը պաշտպանում էին Կարկառ գետի աջ ափի բարձունքին՝ «Շաղոտ» կոչված գյուղատեղիում հիմնված ամրությունները<sup>151</sup>:

<sup>147</sup> Արաբական աղբյուրներ, Գ (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16), թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, էջ 495:

<sup>148</sup> Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, էջ 103:

<sup>149</sup> Թորոսյան Խ., «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպես Ջաքարյան Հայաստանի ու Ջաքարյանների պատմության սկզբնաղբյուր, բնագրի թարգմանությամբ և մեկնաբանություններով հանդերձ, Երևան, 1992, էջ 398-399: Նույնը տես՝ История и восхваление венценосцев, пер. К. Кекелидзе, Тбилиси, 1954, стр. 54-55.

<sup>150</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 359:

<sup>151</sup> Կարկառ բերդաքաղաքի առաջապահ պաշտպանական համակարգերի մանրամասների մասին տես՝ Սարգսյան Գ., Յակոբեան Ալ., Նորայայտ

Գտնվելով Շուշիի կիրճի պաշտպանական համակարգի առաջնամասում՝ Կարկառը մինչև 14-րդ դարը կարևոր դերակատարություն է ունեցել դեպի լեռնաստանի խորքերը թափանցելու փորձ կատարող քոչվոր ցեղերի ու զավթողական նկրտումներ ունեցող պետությունների կազմակերպած արշավանքների դեմ:

Կարկառի հարևանությամբ, Շուշի քաղաքին հանդիպակաց, դեպի կիրճը ձգվող թեք սարալանջին է գտնվում Արցախի հնագույն բնակավայրերից մեկը՝ Շոշը: Ձեռագիր հիշատակարաններում որոշ տեղեկություններ են պահպանվել գյուղի մասին: 15-րդ դարի ձեռագրերից մեկում գյուղը հիշվում է ոչ թե Շոշ, այլ Շուշու ձևով. «գրեցաւ աստուածագիծ սուրբ աւետարանս ձեռամբ յոգնամեղ եւ ապիկար գրչի տեր Մանուելի ի թուականութեանս հայոց ՊԼԷ (1428) ի յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի գեղս Շուշու կոչեցեալ ...»<sup>152</sup>: Մեկ և կես դար անց մեկ այլ ձեռագրի հիշատակարանում գյուղը անվանված է Շուշոյ: Հիշատակարանում ասված է. «... խնամաւք նորին կատարեցի զմաքրափայլ Աւետարանս ի Փոսս նհանկ գաւառս Վարընթոյ, ի գաւառս, որ կոչի Շուշոյ, ընդ հովանաւ սբ. Ստեփանոսիս, ի հանգիստ սորա այրաւեր, եւ ընդ հովանաւ սբ. Աստուածածնին: Արդ գրեցաւ ի թիւս ՌԻԴ (1575)»<sup>153</sup>:

Փաստորեն կարելի է պնդել, որ Շոշ գյուղն ավելի ուշ շրջանում անվանվել է Շուշու կամ Շուշոյ, որը համահունչ է Շուշի տեղանվանը: Նկատենք, որ արցախյան բարբառով հնչող որոշ բառերի մեջ «ու»-ն գրական տարբերակում հնչյունափոխված դարձել է «ո»: Օրինակ կյում-գոմ, լակուտ-լակոտ, քաքուտ-քակոր:

Ամենայն հավանականությամբ նման անվանափոխությունների շնորհիվ Շուշու, Շուշոյ, Շուշին դարձել է Շոշ: Եվ այսպես, ներկայիս Շոշ գյուղի բնակչության նախնիները միջնադարում իրենց բնակավայրն անվանակոչել էին Շուշի և ձորի արևմտահայաց անմատչելի պոնկին կառուցել շրջակայքի վրա իշխող մի բերդ, որը դարեր շարունակ կիրճի փեշերին ապրող հայության համար դարձել էր փրկոցակ: Ժամանակի ընթացքում նոր ամրացված վայրը գյուղի անունից դարձել է Շուշի (գյուղի) բերդ, իսկ ուշ շրջանում՝ երբեմն Շուշվա դալա: Հետագայում եկվոր թուրքերը, ինչպես հայկական մյուս բնակավայրերի անունները, այնպես էլ Շուշին հարմարացրել են իրենց լեզվի հնչյունաբանությանը և դարձրել Շուշա:

Կարկառ քաղաքատեղին Արցախում, էջ 51-52:

<sup>152</sup> Մատենադարան, ձեռագիր հմ. 8211, թ. 359 բ-360 ա:

<sup>153</sup> Մատենադարան, ձեռագիր հմ. 4375, թ. 264 Ա, Բ:

Խորհրդային Ադրբեջանի հանրագիտարանի գլխավոր խմբագիր Ռասուլ Ռ-գան, առանց որևէ սկզբնաղբյուր մատնացույց անելու, Բաքվի թերթերից մեկում գրել էր, թե իբր «Շուշա» քաղաքը հարևան ու եղբայր հայերը վերցրել, իրենց լեզվին հարմարեցնելով, դարձրել են «Շուշի» և «Շոշ» ու վերջինով էլ կնքել են իրենց նորաստեղծ գյուղը<sup>154</sup>: Ռասուլ Ռ-գան հարցը ներկայացրել է իր երևակայության տիրույթում: Շուշի քաղաքի անվան ծագումնաբանությանն անդրադարձել է նաև մեծ շուշեցի Լեոն: Նա գրել է. «Այսօր էլ ժողովուրդը այդ բերդաքաղաքին տալիս է «Շոշուայ-Ղալա» անունը: Մեզ անհայտ մի ժամանակակից այս անուան համապատասխանող է դարձնում «Շուշի» անունը, որը, անշուշտ, «Շոշուայ» անուան փոփոխություն է: Կարծում եմ, թե այս անունը ժայռոտ մեծ բերդը, խաների բնակութեան վայր, ստացել է Շոշու անունով հայաբնակ փոքրիկ գիւղից, որ այժմ էլ գոյություն ունի նրա արևելյան կողմում: Բայց մեզ անհաւանական է թույլ այսպիսի հանգամանքը և մենք կարծում ենք որ, ընդհակառակը, գիւղը բերդից պիտի ստացած լինի իր անունը, իսկ բերդը, հաւանօրեն, գոյություն ունեցել է և հին ժամանակներում»<sup>155</sup>: Կիսելով մեծավաստակ պատմաբանի այն կարծիքը, որ Շուշին գոյություն է ունեցել հին ժամանակներում, այնուամենայնիվ, գտնում ենք, որ քաղաքի անվան հետ կապված նրա եզրակացությունը փաստարկված չէ և անընդունելի է:

Շուշիի կիրճի վրա անմիջապես, անդնդախոր ձորի մեջ է գտնվել Հոնուտ հայկական գյուղը, որը լեռնանցքի և Շուշիի պաշտպանության, ինչպես նաև քաղաքի կենսագործունեության ամենաառանցքային կետն էր հանդիսանում: Այն գրեթե կապած է Շուշիին: Երկու բնակավայրերն իրարից բաժանում է Ձիարշավարանի դաշտը, որը վերջնամասում՝ արևելյան ուղղությամբ, զառիթափ կտրուկ իջնում է դեպի ձորը:

Հոնուտը Շուշիին կապող ճանապարհն սկսվում է գյուղի ձախ հատվածի վերնամասից ու ձգվում է դեպի հյուսիս և մինչև քաղաք 2000 մ երկարություն ունի: Ճանապարհն անցնում էր հայ-ռուսական համատեղ գերեզմանատան արևելյան կողմով ու մտնում քաղաք բերդի Մխիթարաշեն կոչված դռնով: Ամենայն հավանականությամբ, այս ճանապարհից օգտվում էին Մխիթարաշեն ելումուտ անտղները:

1868 թ. Ելիզավետպոլի նահանգապետի հրամանագրով 2000 մ<sup>2</sup> տարածք է հատկացվել բանտ կառուցելու համար, որի պատճառով Մխիթարաշենի դուռը փակվել է: Հետագայում նոր ճանապարհ է կառուցվել, որը

<sup>154</sup> Ուլուբաբյան Բ., Փորձության օրերի խորհուրդը, էջ 33:

<sup>155</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 59-60:

շրջանցել է բանտի պարիսպը և ժայռի ստորոտով ձգվել մինչև պարսկական գերեզմանատան վերնամաս ու միացել Գանձակի դռներով Շուշի մտնող ճանապարհին<sup>156</sup>:

Շուշիի բնակիչները պատերազմների ժամանակ Հոնուտի և գետակի երկայնքով տեղակայված ջրաղացներն էին հասնում ոչ թե վերոհիշյալ ճանապարհով, այլ գաղտնի արահետներով: Հոնուտի գերեզմանոցում պահպանված արձանագիր շիրմաքարերը վկայում են, որ այդ գյուղում հայերն ապրում էին առնվազն 17-րդ դարից սկսած և հիմնականում ջրաղացների տերեր էին:

Հնարավոր է հաչենի, այնուհետև Վարանդայի տեր հայ իշխանները, հաշվի առնելով Շուշիի սարահարթի ռազմավարական նշանակությունը, բերդաքաղաքի ազգաբնակչության կենսագործունեությունն ապահովելու համար նպատակային հիմնել են Հոնուտ գյուղը:

Վերոհիշյալ բնակավայրը բնակեցման համար բավականին անհարմար դիրքում է:

1899 թ. «Նոր դար»-ի թղթակիցը նշել է, որ «Խեղճ հիւնողեցիք տարին 12 ամիս արեգակի երես միայն օրուայ 12 ժամին են տեսնում, մնացած ժամերում նրանք արեգակի ճառագայթ չեն տեսնում, որովհետև գիւղը խոր անդունդումն է գտնում»<sup>157</sup>:

19-րդ դարի երկրորդ կեսին, երբ Շուշին արդեն գտնվում էր ռուսական կայսրության կազմում ու համեմատաբար ապահով էր, Հոնուտի դերն ու նշանակությունն սկսեց խունանալ, և տեղաբնիկները սկսեցին լքել իրենց բնակավայրը: Գյուղը վերջին հարվածն ստացավ 1918-1920 թվականների ընթացքում, երբ օսմանյան թուրքերն ու կովկասյան թաթարներն անդադար արշավանքներ էին կազմակերպում դեպի Շուշի և հարակից հայկական բնակավայրեր: Հոնուտի վերջին բնակիչներն ստիպված տեղափոխվեցին Շուշի, Շոշ և Քարինտակ գյուղերը: Հոնուտի նման Քարինտակ գյուղը նույնպես կարևոր նշանակություն ուներ լեռնանցքի և Շուշիի պաշտպանության գործում:

Քարինտակի և նրա շրջակայքի ուսումնասիրություններն ու ձեռք բերված նյութերը<sup>158</sup> խոսում են նրա մասին, որ հայկական այս գյուղը, որը գտնվում է նույնանուն գետակի ձախ ափին և ընկած է Շուշի քաղաքից հարավ՝

<sup>156</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 151-152:

<sup>157</sup> «Նոր Դար», հմ. 79, 1899, Թիֆլիս, էջ 3:

<sup>158</sup> 1890-1892 թթ. Էմիլ Ռեյլերը այստեղ պեղումներ է կատարել: Հայտնաբերված նյութերը և հետագա ժամանակների ուսումնասիրությունները պարզել են, որ Ք.ա. 2-րդ հազարամյակից սկսած այստեղ բնակավայր կար:

խոր կիրճում, ու քաղաքից հեռու է ընդամենը 500 մետր, բնակեցված է եղել դեռևս քարի դարի ժամանակներից: Ճակատագրի բերումով այս գյուղը վճռորոշ նշանակություն է ունեցել Շուշին հայեցի պահելու գործում: Վաղ միջնադարից սկսած մինչև 1920 թ. մարտի 23-ի ողբերգական իրադարձությունները Քարինտակ գյուղը թշնամուց մշտապես անխոցելի էր պահում Շուշիի հարավային մատույցները, ապա մեր օրերում՝ արցախյան պատերազմի տարիներին, անգնահատելի դեր ունեցավ այս անգամ արդեն բնիկներից խլված՝ հայերի համար չարիք դարձած ու կրակակետի վերածված լեռնաստանից ոսոխին դուրս քշելու գործում:

1920 թ. մարտի 23-ի Շուշիի հայկական ջարդերի ժամանակ Քարինտակը դարձել էր հազարավոր հայերի փրկության վայր: Լեռնանցքի վերջնամասի և Շուշիի արևմտյան հատվածից պաշտպանությունն իր վրա էր վերցրել հայկական մեկ այլ գյուղ՝ Ջառիստը: Ի տարբերություն անկոտրում Քարինտակի՝ Ջառիստը ենթարկվեց Ղարաբաղի խաներին: Գյուղը շուտով հայաթափվեց, իսկ մի մասն էլ ուծացվեց: Թուրքերը դրանից հետո գյուղը վերանվանեցին Ջառուսլու:

Շուշիի պաշտպանական համակարգն ամբողջական չէր լինի, եթե կիրճի երկայնքով, իրարից որոշակի հեռավորության վրա, չգտնվեին բնական քարայրներ, որոնք դարերի ընթացքում հայ մարդը կառուցապատել ու առավել անմատչելի էր դարձրել:

Շուշիի արևելյան մատույցներում՝ Հոնուտ գյուղում, կան քարայրներ: Դրանցից մեկի մասին «Նոր Դար»-ի թղթակիցը 1899 թ. գրել է. «Քարայրիս առաջին մուտքն, որ քարակիր է, ներկայացնում է պահապանի կամ դռնապահի բնակարան. երկրորդ տեղն ծառաների, իսկ երրորդն ընդարձակ և գեղեցիկ քարայր է, որ է իշխողի բնակարանն: Քարայրիս մեջ կայ և ազնի ջուր»<sup>159</sup>: Մանավանդ Քարինտակի հարևանությամբ, գետակի երկու ափերին, գոյություն են ունեցել անմատչելի քարայրներ:

19-րդ դարի հեղինակներից մեկը նկարագրել է գյուղի հարավարևելյան կողմում գտնվող ժայռի մեջ պահպանված հսկայական, 3/4 վերստ երկարությամբ քարայրներից մեկը՝ Ալեքսանի դուզուն. «Քարայրը բաղկացած է երկու մասից, առաջին մասը, որի մակերեսն է 24 քառ. արշին, հարթ է, լուսավոր և չոր ..., քարայրի երկրորդ մասը սկսվում է անմիջապես առաջինից, սակայն նրա հետ միանում է փոքրիկ բացվածքով, քարայրի այդ հատվածը սարսափելի մութ է և խոնավ ... ջրի կաթիլները հոսելով քարայրի վերին մասից, հատակին առաջացնում է ջրափոս: Այդ քարայրում կարելի է թաքցնել մի ամբողջ գյուղ, և ոչ ոք չի կասկածի մարդկանց ներկայության մասին,

<sup>159</sup> «Նոր Դար», հմ. 79, 1899, Թիֆլիս, էջ 3:

առավել ևս, որ անտառը հնարավորություն չի տալիս քարայրն անմիջապես տեսնելու»<sup>160</sup>:

Հայտնի են նաև Մոսուն, Ափուն, Եղունիկի կարանները, խանի ամարաթները (ապարանքները): Վերջիններս «Դարձեալ դժուարամատչելի և հին քարայրներ են, որոց առաջին պատուած են տեղ տեղ և գտնուած են նոյնպէս նոյն վտակի աջ կողմի բարձրութեան վերայ», - գրել է Մակար Բարխուդարյանը<sup>161</sup>:

Արցախահայության կյանքում կարևոր դեր և նշանակություն է ունեցել Ավանի ժայռի նույնանուն այրը, որի «... Մուտքն կլորակ է, բայց դժուարաւ բարձրանալի. խիստ խոր, սուկալի մութ և բաւական երկար է քարայրս, որի ծայրն հասնում է համարյա թէ մինչև Շուշու տակն: ... Քարայրիս խորքումն ևս կայ ջուր», - նկարագրում է Մակար Բարխուդարյանը<sup>162</sup>: 18-րդ դարի սկզբներին վերոհիշյալ քարայրը Ավան հարյուրապետի կողմից կառուցապատվում, ամրացվում է և դառնում ՓոքրՍղնախի զորակայանը:

Այդ ժամանակներից սկսած, Գանձասարից հետո, Շուշին դարձավ արցախահայության դիմադրական շարժման երկրորդ խոշոր կենտրոնը և անուրանալի դերակատարություն ունեցավ երկրամասի հայության ազատագրական պայքարին նոր բովանդակություն հաղորդելու և պետականություն վերակերտելու գործում: Հարյուրամյակների ընթացքում Ավանի այրը կամ պալատները, բնական աղետների և մարդկային անհոգի վերաբերմունքի հետևանքով մնալով անտեր ու անխնամ, հիմնականում ոչնչացվել է: Եթե 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին այդ գործում առանձնակի եռանդ էին ցուցաբերում գանձախույզները, ապա խորհրդային ողջ ժամանակաշրջանում, Ադրբեջանի իշխանությունների հրահանգով Շուշիից վերացվում էր հայկական հետքը, մանավանդ այն ամենը, ինչ կապված էր մինչև 1752 թ. ժամանակահատվածը մոնոթեոնիկ բնակավայրի պատմության հետ:

Մակար Բարխուդարյանից դեռևս մի քանի տասնամյակ առաջ արքեպիսկոպոս Սարգիս Ջալալյանը, լինելով Ավանի պալատներում, այն հետևյալ կերպ է նկարագրում. «Այս պատի դուրս ցցված մասում, դժվարին գոտուց դեպի արեւելք է Մելիք Ավանո մեծանուն իշխանի բազմասենյականոց ամրոցը՝ կառուցված եռահարկ ամուր պարսպից ներս, անտաշ քարերով, որից ներս, ասում էին, կա եռահարկ պալատ՝ իր պարագաներով, առանձնատուն, արգելանոց ու հյուրանոց: Ուզում էի անձամբ տեսնել նույն

<sup>160</sup> Осипов Г., Селение Дашь-Алты Шушинского уезда Елизаветпольской губернии, «СМОМК», вып. 25, Тифлис, 1898, стр. 122.

<sup>161</sup> Բարխուդարյան Մակար, Արցախ, էջ 134:

<sup>162</sup> Նույն տեղում:

շինությունը, որի համար էլ մեծ դժվարությամբ հասա առաջին պարսպին, որ կոչվում է նախամարտկոց եւ այնտեղից էլ վերին, միանգամայն դժվարին բերդին ... Ես, չնայած վախեցա եւ չէի կամենում նրանից անցնել, սակայն հոյակապ բերդի սերը եւ ուղեկիցներիս հորդորներն ինձ ստիպեցին առաջ գնալ: Արդարեւ հոյակապ էր շինությունը եւ շքեղ արժանի դիտումի ու հիացումի: Նրա բոլոր կառույցներն ու սենյակները զննելուց հետո այնտեղից իջա գետը ...»<sup>163</sup>:

Ակնհայտ փաստ է, որ 17-րդ դարի վերջերից հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժումը ստացել էր նոր բովանդակություն և թևակոխել նոր փուլ: Հատկանշական է այն իրողությունը, որ այս անգամ շարժման իսկական կենտրոն դարձավ Արցախը: Նշված ժամանակահատվածում հայ իրականության մեջ, համատարած կորուստների ու հուսահատության պայմաններում, Արցախի մելիքական տների ներկայացուցիչները և Գանձասարի կաթողիկոսները, որպես հայկական կորուսյալ պետականության լավագույն ավանդույթների կրողներ, նոր էջ բացեցին հայ ազատագրական շարժումների պատմության մեջ: Արցախի մելիքները և Գանձասարի կաթողիկոսները, նախանձախնդիր իրենց իրավունքների և ազատությունների վերահաստատմանը, 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարի սկզբներին մշակեցին հայ ժողովրդի ռազմավարությունը, որը ենթադրում էր, սեփական ներուժին ապավինելով, Ռուսաստանի աջակցությամբ, վերականգնել հայկական թագավորությունը:

Զինված պայքարի միջոցով ոչ միայն հայության ինքնության փրկման, այլև ազատության նվաճման և պետականության վերահաստատման գաղափարի հայտնաբերումը հայության համար նոր արժեհամակարգի ստեղծման ելակետ դարձավ: Արցախի գործիչների համար անընդունելի էր միայն աղերսագրերի միջոցով, «բարեկամ» երկրների աջակցությամբ հայրենիքի ազատագրման՝ մինչ այդ բյուրեղացած կարծրատիպը: Նրանք գտնում էին, որ սեփական ներուժի վրա հենվելով կարելի է հասնել շոշափելի արդյունքի:

Արցախի ռազմաքաղաքական անվտանգության պահպանումը, ինքնիշխանության վերականգնման անհրաժեշտությունը երկրամասի հոգևոր ու աշխարհիկ տերերի մեջ ձևավորեցին այն գիտակցությունը, թե հնարավոր չէ ապահովել հայկական տարանջատ գոյությունն ու զարգացումը, եթե իրենք չմիավորվեն և չգործեն որպես մեկ ամբողջություն: Արցախյան իրականության մեջ օրեցօր գերիշխող էր դառնում ողջ Հայաստանի քաղաքական ինքնորոշման՝ Հայոց թագավորության վերականգնման ձգտումը:

<sup>163</sup> Զալալյանց Ա., հ. ք, էջ 247:

Երկրի ներքին կյանքում Եսայի կաթողիկոսի եռանդուն կազմակերպական ձեռնարկները, արտաքին ճակատում ակտիվ դիվանագիտական փնտրտուքները, հոգևոր դասի, մելիքների և ժողովրդի համախումբ ներդաշնակ գործողությունները համայն հայության համար Հայոց արևելից նահանգները տվյալ ժամանակահատվածում դարձրին հավատի և հույսի կերոններ: Ազատագրական պայքարի գործիչների համար Արցախը դարձավ յուրօրինակ հավաքատեղի:

Մինչև 1717 թվականը Ավան հարյուրապետը Շամախու խանի զորքերում ծառայող հայ զինվորականներից էր: Հայոց արևելից նահանգներում տեղի ունեցող անցուդարձերը ոգևորիչ էին նրա համար: Ավան հարյուրապետը որոշեց մի խումբ զինվորականներով՝ Շահին, Սարուխան, Շրուան, Թարխան, որոնք հայտնի էին նաև «Շիրվանցի տղերք» անունով, գալ Արցախ և զինվորագրվել ազատագրական պայքարի գործին: Մի հիշատակագիր նշել է թե «Ավան ուզպաշին, որ եկաւ, Շոշվա քարըն մտաւ, սահբ խուրուշ իլաւ, ՌՃԿԶ թ. (1717) էր»<sup>164</sup>: Պատմական մեկ այլ հիշատակություն հաղորդում է, որ 1717 թվականին Ավան հարյուրապետի գլխավորությամբ «շիրվանցիները» հաստատվել էին Արցախում՝ Շուշին դարձնելով ազատագրական պայքարի օջախներից մեկը<sup>165</sup>:

Իր կազմակերպական ունակությունների շնորհիվ Ավան հարյուրապետը կարճ ժամանակաշրջանում Արցախում մեծ հեղինակություն է դառնում և տիրում է Շուշիի և նրա շրջակայքի կալվածքներին, որոնք պատկանում էին Վարանդայի Մելիք-Շահնազարյաններին: Շուշիում Ավան հարյուրապետի հաստատվելու փաստը, բնականաբար, Մելիք-Շահնազարյանները դժկամությամբ ընդունեցին: Վարանդայի կենտրոնական, հարավային և արևելյան հատվածներում գտնվող բնակավայրերի վրա տարածված էր Մելիք-Շահնազարյան Բաղի Բ-ի իշխանությունը, իսկ հյուսիսային և արևմտյան շրջանների վրա՝ Ավան հարյուրապետի: Այդ իրողության մասին է պատմում ներկայիս Մարտունու շրջանի Հերիեր գյուղի Սր. Գրիգորիսի անվան եկեղեցու պատի վրա պահպանված արձանագրությունը:

Մելիք Բաղի Բ-ն և Ավան հարյուրապետը գործել են նույն ժամանակահատվածում: Երկուսն էլ աչքի են ընկել հակաթուրքական պայքարում, սակայն քաղաքական կողմնորոշման մեջ իրարամերժ էին: Եթե Ավան հարյուրապետը գտնում էր, որ ռուսների աջակցությամբ պետք է ազատագրել Արցախը, ապա Մելիք Բաղի Բ-ն նպատակահարմար էր գտնում շարունա-

<sup>164</sup> Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 609:

<sup>165</sup> Երկու վավերագրեր տ. Խաչիկ վարդապետի ձեռագրերի ժողովածուից, «Արարատ», հունիս, Վաղարշապատ, 1900, էջ 35:

կել համագործակցությունը պարսկական արքունիքի հետ: Շահ Թահմազ 2-րդի (1722–1732) արքունիքում Մելիք Բադի Բ–ն ընդունված անձնավորություն էր: Թուրքերի դեմ մղված պայքարում տարած հաղթանակի համար շահ Թահմազ 2-րդը թանկարժեք խալաթ է ուղարկել Վարանդայի մելիքին: Շահի հրովարտակի մեջ ասված է. «Թող հայտնի լինի շահական ողորմածությանը արժանացած ընկերների և կարգակիցների մեջ ընտրյալ Մելիք Բադիին, որ թուրքերի հարձակման և դուրս մղման ժամանակ նրա մատուցած գերազանց ծառայությունները հասան Բարձրագույն դռան աստիճանավորների գիտությանը: Այս ծառայությունների համար որպես պարգևատրություն Մեր շահական ողորմածությամբ ընծայում ենք նրան՝ ընկերների և կարգակիցների մեջ ընտրյալներին, թանկարժեք խալաթ, փայլուն, ինչպես արևի ճառագայթները: Թող նա բոլոր դեպքերում վստահ լինի մեր բարյացակամության վրա և գործադրի բոլոր ձիգերն ու ջանքերը հավատի և պետության թշնամուն վանելու և հեռացնելու համար: Այդպիսով նրա բարի ծառայությունները ավելի և ավելի կարժանանան մեր ողորմածությանն ու բարեհաճությանը»<sup>166</sup>:

Պահպանվել է նաև Մելիք–Շահնազարյան Բադի Բ–ի անվան հետ կապված քննարկվող ժամանակաշրջանում ստեղծված մեկ այլ փաստաթուղթ, որը նոր լույս է սփռում մինչև 1792 թ. ընկած ժամանակահատվածը Շուշիի պատմության վրա:

1724–1726 թվականներին Պետրոս 1–ինի պատվիրակ Իվան Կարապետը, լինելով Արցախում, տեղեկանալով երկրամասում ստեղծված քաղաքական կացությանը, ռուսական արքունիքին հղած զեկուցագրերից մեկում, ներկայացնելով Վարանդայի Մելիք Բադի Բ–ին, գրել է, որ նա իր մարդկանցով քաղաք է կառուցել, համագործակցում է պարսիկների հետ, չի ցանկանում ենթարկվել ցարին: Քանի որ քաղաքն անմատչելի է, Մելիք Բադի Բ–ն այդտեղից հարձակումներ է գործում հարևան գյուղերի վրա, թալանում և նորից ամրանում բերդում<sup>167</sup>:

Հայտնի է, որ Արցախում 1720–ական թվականներին քաղաք չկար, և Շուշիի սարահարթում եղած ամրոցները, ամբողջության մեջ, օտարի աչքում քաղաքի տպավորություն էին ստեղծում:

Ամենայն հավանականությամբ մելիք Բադի Բ–ն սարահարթում եղած բերդերն ավելի էր ամրացրել և դարձրել իր ապահով նստավայրերից մեկը: Նույն ժամանակամիջոցին Շուշիի կիրճի երկայնքով տեղակայված ամրու-

թյուններին էլ տիրություն էր անում Ավան հարյուրապետը: Բնականաբար, նույն տարածքում և ընդամենն իրարից մի քանի մետր հեռավորության վրա գտնվող ամրոցներին ու նրանց սպասարկող հարակից կալվածքներին պետք է տնօրիներ մեկ իշխան: Եվ այդ օրինաչափության տրամաբանությամբ էլ տարածաշրջանում գերիշխանության համար մելիք Բադի Բ–ի և Ավան հարյուրապետի միջև պայքար էր ընթանում: Մելիք Բադի Բ–ն ստիպված էր տեղի տալ արդեն ժողովրդի մեջ մեծ հեղինակություն ունեցող Ավան հարյուրապետին և տեղափոխվել Ավետարանոց ու Քոչիգ: Այդ մրցապայքարում հաղթելուց հետո Ավան հարյուրապետը ոչ միայն հիմնավորվում է Շուշիում, այլև այստեղ նոր բերդ է կառուցում, իսկ եղածներն էլ ավելի է ամրացնում:

1720–ական թվականների սկզբներին Ավան հարյուրապետը 700 քառ. մետր տարածությամբ չորս աշտարակներով ամրոց է կառուցում<sup>168</sup>:

Մի կողմից Ավան և Միրզա հարյուրապետերի, մյուս կողմից էլ մելիք Բադի Բ–ի հարաբերություններն այնքան լարված և թշնամական են եղել, որ Վարանդայի տերը նպատակահարմար չգտավ 1724 թ. հունվարին մասնակցել Գանձասարի հավաքույթին, չնայած որ հետաքրքրված էր Պետրոս Առաջինի հրովարտակով և ցանկանում էր իմանալ նրա բովանդակությունը<sup>169</sup>:

Պետրոս Առաջինի պատվիրակ Իվան Կարապետը, Արցախում ռուսամետ ճակատը հզորացնելու միտումով, միջնորդի դեր ստանձնեց և փորձում էր հաշտեցնել երկու կեղմերին: Ավան, Միրզա և Փանի հարյուրապետերը նույնպես ձգտում էին արագ լուծում տալ այդ հարցին, սակայն մելիք Բադի Բ–ն անսասան էր մնում իր անհանդուրժողական կեցվածքի մեջ: Նույնիսկ փորձ էր արվում գենքի ուժով հնազանդեցնել մելիք Բադի Բ–ին: Սակայն, վերջ ի վերջո, ողջախոհությունը հաղթում է: Հայի արյուն չհեղելու և ապագա մարտահրավերներին համատեղ ջանքերով դիմակայելու համար մելիք Բադի Բ–ն երկարատև բանակցություններից հետո հրաժարվեց հետագա առձակատումից, հանդիպեց Իվան Կարապետի հետ և հաշտվեց իր հարևան մելիքների ու հարյուրապետերի հետ:

Ավան հարյուրապետը մելիք Բադի Բ–ի դեմ պայքարի ընթացքում և մանավանդ դրանից հետո ջանադրաբար կառուցում է Շուշիի բերդը, քաջ գիտակցելով, որ ոչ հեռավոր ապագայում մեծ արհավիրքներ են սպասվում: Բերդի գոյության և կառուցման մասին սկզբնաղբյուրներում հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել:

<sup>168</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 49:

<sup>169</sup> Արրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 40–41:

<sup>166</sup> Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., էջ 165–166:

<sup>167</sup> Арутюнян П., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, Москва, 1954, стр. 229.

19-րդ դարի կեսերին ոռու հեղինակները նշել են, որ մինչև Փանահի՝ Շուշիում հայտնվելը Ավան հարյուրապետի ժամանակ ամրոցը դարձել էր Արցախի մելիքների ամենաապահով նստավայրը<sup>170</sup>: Նկատենք, որ այդ շրջանում եթե Գանձասարը Արցախի և շրջակա տարածքների համար հոգևոր կենտրոնի դերակատարություն էր ստանձնել, ապա Շուշին, քայլ առ քայլ դառնում էր նրա քաղաքական զարկերակը: Մինչև 1729 թվականը Շուշիից էին սկիզբ առնում քաղաքական գործընթացներից բխող նորանոր զարգացումները:

1724 թվականի հունվարի 4-ին Շուշիում հավաքվում են Դիզակի և Վարանդայի տերերը և ժողովրդի անունից հավատարմագիր հղում ոռուսաց ցարին: Նամակի մեջ ասված է. «Պատճառ գրոյս այս է, որ թվին փրկչին 1724, յունվար ամսին չորսումն, մեք, ... Դիզաղոյ և Վարանդոյ երկրիս ուզբաշէքս, և մեք մեր թամամից մեծով և փոքրով, վարդայպետով և քահանայիք, մելիքով և քողխողէքով, քելխով և ըռայաթով, թամամի մեր ասկարովս, ներքոյ գրեալքս մեր կամօքն և մեր յօժարութեամբն ծառայ դարցանք վերոյգրեալ մեծին արքային, որ էս թարեղէն մինչի գալուստն Քրիստոսի կամք ներքոյ հրամանին, որ ինչ որ մեր մեծ թագաւորն մեզ հրաման առի, որ հրամանըն կատարեմք: Եւ եթէ ինչ որ հրաման առի, հրամանըն կատարեմք ոչ, դառնամք, և թէ խաբեմք, մեր գլուխըն և մեր ապրանքըն թագաւորին լինի, առաջի աստուծոյ թագաւորն անպարտ լինի և մեք պարտական լինեմք:

Գրքվեցավ գիրս Շօշոյ Սղնաղումն թիվն հայոց ՌՃՀԳ (1724) յունվար ամսուն, գրոյս վերջ.»<sup>171</sup>: Նամակն իրենց ստորագրություններով և կնիքներով վավերացրել են Ավան և Թարխան հարյուրապետերը, ինչպես նաև 18 այլ պատասխանատուներ:

Մեկ օր անց՝ 1724 թ. հունվարի 5-ին, Շուշիի սղնախի ղեկավարները Պետրոս Առաջինի պատվիրակ Իվան Կարապետին վստահագիր են հանձնում, նրան միջնորդական առաքելություն վերապահում՝ Վարանդայի մելիք Բաղի Բ-ի հետ բանակցելու և երկու կողմերի միջև հակամարտությունը դադարեցնելու: Վստահագրի մեջ նորից խոսվում է Շուշիի սղնախի գոյության մասին<sup>172</sup>:

Այնուհետև, 1724 թվականի հունվարի 12-ին Ավան և Միրզա հարյուրապետերը հայտարարություն են անում իրենց զինված ուժերի թվաքանակի, զինատեսակների մասին, որտեղ նորից անդրադարձ է կատարվում Շուշիի սղնախի մասին<sup>173</sup>:

<sup>170</sup> «Съверная пчела», но. 210, 18 сентября, С. Петербург, 1851.

<sup>171</sup> Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 145:

<sup>172</sup> Նույն տեղում, էջ 147:

<sup>173</sup> АВПРИ, ф. 100, 1724 г., д. 4, л. 19.

Հաջորդ տեղեկությունը Շուշիի սղնախի մասին ներկայացված է Իվան Կարապետի՝ 1724 թ. հունվարին ցարական արքունիքին ուղղված գեկուցագրում: Նա գեկուցագրի մեջ հանգամանորեն պատմում է մելիքների, հարյուրապետների միջև ընթացող եղբայրասպան կռիվների մասին: Զեկուցագրի վերջում նշում է. «գրվեցավ Քարոյգլխի նոր շինուած դալումն»<sup>174</sup>: 1724 թ. հուլիսի 18-ի գեկուցագրի մեջ Իվան Կարապետը ցարական արքունիքին հորդորում է՝ արագացնել և զորք ուղարկել Արցախ, այլապես զգուշացնում է, որ, եթե ուշանան, թուրքերը իրենք կգրավեն Արցախը և այդ անմատչելի ամուր երկիրը հետ բերելը արդեն անկարելի կլինի: Վերջում նա շեշտում է. «Ես Քարոյգլխին սղնաղումն Թարխան և Բաղի ուզբաշանց քշդին ամ, սոնքան ան մեզ խաց տալման և պախում ան, թէ սոնքան չէ լինէն, մեզ վաղէց ին սպանել»<sup>175</sup>:

Վերջին երկու վավերագրերի մեջ Շուշին ներկայացված է «Քարազլխի սղնախ» ձևով:

Եսայի կաթողիկոսի, Արցախի մելիքների և հարյուրապետների պատվիրակ քյոխվա Չելեբի թողոններում պահպանված մի փաստաթղթում նա, խոսելով ոռուների հետ բանակցային գործընթացի մասին, ասում է, որ Ավան հարյուրապետի հետ հերթական հանդիպումը տեղի է ունեցել Շոշ գյուղի մոտ, իսկ նրա բերդը անմատչելի է և շրջապատված է լեռներով<sup>176</sup>:

Փաստորեն, 18-րդ դարի առաջին կեսին առնչվող փաստաթղթերում մեզ հետաքրքրող բերդը ներկայացված է Շօշ, Շուշի կամ Քարազլուխ անուններով:

1720-ական թվականների սկզբներին Մոսկվի ստորոտում տեղակայված Մեծ Սղնախի զորքերը՝ Եսայի Հասան Ջալալյանի գլխավորությամբ և Փոքր Սղնախի զինվորականությունը՝ Ավան հարյուրապետի առաջնորդությամբ, կարողացան ոչ միայն դիմակայել Դաղստանի լեռնականների մեծաքանակ զորքերի ճնշումներին, այլև նրանց դուրս շարտել երկրամասի սահմաններից:

Հայոց զորքի կողմից ջախջախված ավարառու լեռնականները նահանջեցին դեպի Կուրի ձախափնյակը և այլևս չհամարձակվեցին երևալ Ղարաբաղի կողմերում: Անարգ թշնամու դեմ տարած հաղթանակն ավելի էր ոգևորում լեռնաստանի հայությանը: Օրեցօր սղնախական ուժերն ավելի էին ծավալվում, մեծանում էր հայկական զորքերի թիվը:

<sup>174</sup> АВПРИ, ф. 100, 1739 г., д. 2, л. 59.

<sup>175</sup> АВПРИ, ф. 100, 1724 г., д. 2, л. 64-65.

<sup>176</sup> Эзов К., Сношения Петра Великого с армянским народом, стр. 429.

Ավան հարյուրապետի՝ 1724 թ. հունվարի 12-ի մի գրության մեջ նշված էր, որ նա ուներ արդեն 6900 հոգանոց զորք<sup>177</sup>:

Հյուսիսային լեռնականների դեմ ինքնապաշտպանության գործը տարերայնորեն վեր էր անցրել արևելյան իշխանության դեմ ուղղված ժողովրդա-ազատագրական շարժման: Այդ շարժման ղեկավարները ժամանակին այս երևույթի մեջ նշմարում էին հայոց ազգային հանգած իշխանության «նոր նորոգում»<sup>178</sup>:

Հայկական ինքնավարության տեղական մարմիններն իրենց ուժերը լարում էին Լեռնահայաստանում պարսկական իշխանության մնացուկները վերացնելու համար: 1722 թվականին Գյուլիստանի, Ջրաբերդի, Գանձակի հայկական զինված ուժերը ջանքեր են գործադրում՝ պաշտպանելու Լեռնային Ղարաբաղի մատույցները և փակելու Գանձակի ու Թիֆլիսի ճանապարհները պարսիկ ու նրանց հարող այն խաների առաջ, որոնք հարկ էին պահանջում նրանցից, կամ հարկահանության պատրվակով ավերում ու թալանում էին հայկական գյուղերը: Նման զինաբախումներ տեղի էին ունենում նաև հարևան շրջաններում: 1723 թ. հոկտեմբերին Դիզակի մահալում, հայկական զինված ջոկատները խանական հեծյալների հետ ունեցան զինված ընդհարում, որի ժամանակ վերջիններս կորցրին 2000 մարդ<sup>179</sup>:

Արցախահայությունը ոչ միայն թոթափում է պարսկական լուծը, այլև իր դիրքերում այնքան հաստատուն էր զգում, որ Ավան հարյուրապետի գլխավորությամբ 1724 թ. օգնության հասավ Սյունիքի ծանր մարտերում խիզախող Դավիդ-Բեկի զորքերին: Կապանից գրություն էր ստացվել, որ Բարգուշատի սուլթանը և Նախիջևանի պարսիկ խանը՝ Պարսկաստանի դրածո ֆեոդալները, հարձակվել են Սյունիքի վրա, չորս-հինգ հազար տղամարդ կոտորել և կանայք գերի տարել: Համատեղ ուժերով թշնամուն հալածում են Սյունիքից<sup>180</sup>: Ավան հարյուրապետի գլխավորությամբ արցախահայության զինական ուժի քաջագործությունների մասին պատմել է դեպքերի մասնակից Ստեփանոս Շահումյանը<sup>181</sup>: Նա սղնախների զորքերի հրամանատար է հիշում Հովհաննես Գուգարեցուն, որը նույն անձնավորությունն է, և արցախյան բարբառով այդ անունը հնչվում է Ավան (Ավանես) ձևով:

1723 թ. Արցախի սղնախականների, այդ թվում՝ Ավան հարյուրապետի համար սկսվեց փորձության մի նոր շրջան: Այս անգամ լեռնաստանի

հայությունը վիճակված էր դիմակայելու ավելի վայրագ ու անեղ թշնամու՝ թուրքերին, որոնք համառորեն փորձում էին հասնել Կասպից ծովի ափերը: Թիֆլիսը գրավելուց հետո, 1723 թ. հոկտեմբերին, թուրքական 80 հազարանոց զորքը Իբրահիմ փաշայի գլխավորությամբ շարժվեց դեպի Գանձակ: Քաղաքի պաշտպանությանը մասնակցում էր նաև սղնախների մարտական ուժերի մի մասը: Թուրքական զորքերը պարտություն կրեցին և նահանջեցին՝ Գանձակի պատերի տակ թողնելով հազարավոր սպանվածներ: Դեռ ավելին՝ հայ զինվորականության պահանջով Իբրահիմ փաշան ազատ արձակեց քաղաքի շրջակա գյուղերից գերեվարված հայերին: Ականատես լինելով հայկական բանակի մարտունակությանը՝ Իբրահիմ փաշան Ավան հարյուրապետին հակապարսկական և հակառուսական ճակատ ստեղծելու առաջարկություն արեց: Հայերը մերժեցին: Դրանից հետո թուրքերը, մանավանդ Այսրկովկասում գտնվող նրանց զորքերի հրամանատարը՝ Օմար փաշան, մի քանի անգամ ևս փորձեց լեզու գտնել Ավան հարյուրապետի հետ, բայց ամեն անգամ հայ զորապետից մերժում էր ստանում:

Իր հերթին Պետրոս Մեծը, ռուսական ազդեցությունն Արցախում չկորցնելու, սղնախականների հետագա անելիքները պարզելու, ինչպես նաև հետագայում հակաթուրքական և հակապարսկական ճակատ ստեղծելու նպատակով 1723 թ. Այսրկովկաս և, մասնավորապես, Արցախ է ուղարկում դեսպանորդ Իվան Կարապետին<sup>182</sup>: Նույն թվականի վերջին Իվան Կարապետը, վերցնելով կանցլեր Գոլովինի նամակը՝ ուղղված Արցախի աշխարհիկ և հոգևոր տերերին, որտեղ օգնելու և ազատագրելու նոր խոստումներ էր տրվում, մեկնում է Արցախ: Երկրամասն ապրում էր խառը և հակասական ժամանակներ: Այստեղ նորից կուռ և միասնական պետության պակասն իր բացասական դերն ունեցավ: Միասնական բռունցք ստեղծելու փոխարեն հայ հոգևոր և աշխարհիկ վերնախավի ներկայացուցիչները տարամիտվե-

<sup>177</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, стр. 57.  
<sup>178</sup> Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյան, նշվ. աշխ., էջ 58:  
<sup>179</sup> Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, էջ 116:  
<sup>180</sup> Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 82-83:  
<sup>181</sup> Ընտիր պատմություն Դավիթ Բեկին, հրատ. Ար. Գյուլամիրյանց, Վաղարշապատ, 1871, էջ 10-11:  
<sup>182</sup> Իվան-Կարապետը բնիկ արցախցի էր, Շոշ գյուղից: Նա Պետերբուրգում բնակություն հաստատած հայ առևտրականներից էր, Ղզլարի մետաքսի գործարանի հիմնադիրը, ցարական արքունիքում ռուսերեն գրությունների թարգմանիչ Ղուկաս Շիրվանովի եղբայրը: Նրա անունը Հովհաննես է եղել, բայց նոր միջավայրում փոխել են ռուսական ձևի՝ Իվանի: Կարապետ՝ նրա հայրանունն է, որը սովորաբար գործածում են անվան հետ միասին: Սակայն տվյալ դեպքում Իվանի հոր Կարապետ անունը գործածվել է ոչ սովորական ձևով՝ ոչ թե Իվան Կարապետովիչ, այլ՝ Իվան Կարապետ: Նա մեծ վստահություն էր վայելում ռուսական արքունիքում: Տես՝ Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 24-25: Դեռևս 1723 թ. մայիսի 10-ին, երկու այլ առևտրականների հետ միասին, հրավիրված է եղել Սենատ և հանձնարարություններ ստացել՝ աշխատանք տանելու հայ առևտրականների շրջանում՝ Ռուսաստանում առևտուրը զարգացնելու համար: Տես՝ Лысцов, Персидский поход Петра I, стр. 59.



ցին: Մի թևում հայտնվեցին Դիզակի, Վարանդայի և Խաչենի մելիքները, որոնց գլխավորում էր Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանը, իսկ մյուս խմբավորման մեջ էին Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքները: Սրանց առաջնորդն էր Ջրաբերդի մելիք Սարգսի եղբայրը, Երիցմանկաց վանքի հակաաթոռ կաթողիկոս Ներսեսը:

Շուշիի Փոքր Սղնախը ներկայացնող Ավան և Միրզա հարյուրապետերը հարում էին Եսայի Հասան-Ջալալյանի խմբավորմանը:

Եսայի Հասան-Ջալալյանը նպատակահարմար է գտնում ավելի խորացնել Արցախ-Ռուսաստան քաղաքական հարաբերությունները՝ երկրի վերջնական ազատագրության հույսը կապելով հյուսիսի հզոր հարևանի հետ: Ներսես կաթողիկոսն էլ անհեռանկար էր համարում նմանօրինակ քաղաքականությունը: Ըստ նրա՝ դա ավելի էր բորբոքում պարսիկներին և հատկապես՝ թուրքերին: Նա խոհեմ էր համարում վերջիններիս հետ լեզու գտնելու փորձերը:

Բնականաբար, 1723 թ. դեկտեմբերին Արցախ հասած ռուսական արքունիքի դեսպանորդ Իվան Կարապետը պետք է համագործակցեր Եսայի Հասան-Ջալալյանի գլխավորած խմբավորման հետ:

Իվան Կարապետն առաջին հերթին Շուշիում հանդիպում է Ավան և Միրզա հարյուրապետերի հետ: Վերջիններս մեծ համակրանքով են ընդունում ռուսաց դեսպանորդին և մեծ ոգևորությամբ փորձում նոր հիմքերի վրա դնել Արցախ-Ռուսաստան քաղաքական հարաբերությունները և խոստանում աջակցել ցարական արքունիքին<sup>183</sup>: Հանդիպման մասին Իվան Կարապետը հայտնում է ցարական արքունիքին, թե «Աստծոյ ողորմութեամբ թ (9) օրում խասայ խայերին Պզտիկ Սղնախն (խոսքը վերաբերում է Շուշիի Փոքր սղնախին – Վ. Բ.)»<sup>184</sup>: Այստեղ էլ 1724 թ. հունվարի 4-ին Պետրոս Առաջինին հասցեագրված հավատարմության երդմնագիր է կազմվում<sup>185</sup>, որը Արցախ-Ռուսաստան քաղաքական հարաբերությունների մասին ամենահին վավերագրերից մեկն է համարվում: Երդմնագրի տակ ստորագրել և իրենց կնիքներն են դրել Ավան և Միրզա հարյուրապետերը, ինչպես նաև

Դիզակի, Վարանդայի, Խաչենի մելիքներն ու հարյուրապետերը և Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը<sup>186</sup>:

Այնուհետև Շուշիի սղնախի պատասխանատուները Իվան Կարապետի հետ միասին գնում են Գանձասար, որտեղ Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի ներկայությամբ 12 000 զինվորների հավաքությամբ ընթերցվում է Պետրոս Մեծի հրովարտակը և Շուշիում կազմվում նրան հասցեագրված երդմնագիրը<sup>187</sup>: Պետրոս Առաջինին ուղարկած շնորհակալական գրության մեջ մելիքներն ու հարյուրապետերը, Եսայի Հասան-Ջալալյանի հետ միասին, ժողովրդի անունից ցարին հավաստիացրել են, որ իրենք, թեպետ իրենց առջև ունեն ուժեղ հակառակորդ, այնուամենայնիվ ի գորու են սեփական ուժերով դիմակայել նրան, մինչև որ ռուսական զորքերը հասնեն տարածաշրջան և համատեղ ջանքերով երկրից դուրս քշեն թշնամուն<sup>188</sup>:

Իհարկե, ոչ Պետրոս Առաջինը, ոչ էլ ռուսական մյուս ցարերը Հայաստանն ազատագրելու ոչ նպատակ և ոչ էլ ծրագրեր ունեին: Պարզապես ցարական արքունիքը հմտորեն օգտագործեց մահմեդականների լծից հայ ժողովրդի ազատագրվելու ձգտումը: Բնականաբար, կայսերական ծավալապաշտ նկրտումներ ունեցող ցարական արքունիքի արտաքին քաղաքականության հայեցակետում առավել ևս չէր մտնում Հայաստանի անկախ պետականության վերականգնման խնդիրը: Ռուսաստանը, հանդես գալով որպես քրիստոնյաների հովանավոր, ընդամենը փորձում էր Այսրկովկասի հաշվին ընդարձակել իր սահմանները՝ այդ հարցում ապավինելով Վրաստանի և Արցախի մելիքությունների օժանդակությանը:

Ռուս հեղինակները ժամանակին նկատել են, որ Պետրոս Առաջինի հիմնական նպատակն էր Ռուսաստանի գերիշխանությունը տարածել Կասպից ծովի վրա, որը Եվրոպան Ասիայի հետ կապող միջանկյալ օղակ կդառնար<sup>189</sup>: Այդ մտադրությունների մասին 1722 թ. սեպտեմբերին Պետրոս Առաջինը բաց տեքստով հայտնում է նաև Կ. Պոլսում ռուսական դեսպան Ի. Նեպլյունին. «Մեր զորքերը Վրաստանով և Հայաստանով անցնող Թուրքիայի սահմաններին չեն մոտենա և միայն Կասպից ծովի առափնյա շրջանները կմտնեն, որի մասին քեզ հանձնարարում ենք Բարձր Դռանը հավաստիացնել»<sup>190</sup>: Վերոհիշյալ ծրագրերից զատ Պետրոս առաջինը մերձկասպյան առափնյա շրջաններով հետազայում Հնդկաստան հասնելու գաղափարն

<sup>183</sup> АВПРИ, ф. 100, 1724 г., д. 4, л. 61–62.

<sup>184</sup> Նույն տեղում, ф. 100, 1724 г., д. 4, л. 14–15.

<sup>185</sup> Ա. Արրահամյանը երդմնագրի կազմման տեղ է համարում Շոշ գյուղաքաղաքը: Տես՝ Արրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, էջ 34: Սակայն պետք է նկատել, որ Շոշը փոքր և պաշտպանական հնարավորություններից համարյա զուրկ գյուղ է եղել, իսկ Ավան և Միրզա հարյուրապետերը պատերազմական այդ թոհ ու բոհի տարիներին ամրացած են եղել Շուշիի բերդում: Հետևաբար, կարող ենք ասել, որ այդ գրությունը կազմվել է Շուշի բերդավանում:

<sup>186</sup> АВПРИ, ф. 100, 1724 г., д. 4, л. 19.

<sup>187</sup> Эзов К., Сношения Петра Великого с армянском народом, стр. 386.

<sup>188</sup> Նույն տեղում, էջ 367:

<sup>189</sup> История человечества, под общей редакцией Г. Гельмольта, Т. V, Юго-Восточная и Восточная Европа, Санкт-Петербург, 1905, стр. 566.

<sup>190</sup> АВПРИ, ф. СРТ, 1722 г., д. 4, л. 56.

եր մտմտում: Այդ առթիվ նա գեներալ Մատյուշկինին գրել է. «Բաբուն մեր բոլոր գործերի բանալին է»<sup>191</sup>: Ահա այս քաղաքականության շարունակությունը դարձավ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև 1723 թ. սեպտեմբերի 12-ին կնքված պայմանագիրը, ըստ որի՝ մերձկասպյան տարածքներն անցնելու էին Ռուսաստանին: Իսկ ցարական արքունիքն էլ իր հերթին պատրաստվում էր ռազմական աջակցություն ցույց տալ շահ Թահմազին:

4. Պոլսում ռուսական դեսպան Ի. Նեպլյունն իր հերթին 1724 թ. հունիսի 12-ին Թուրքիայի հետ կնքեց պայմանագիր, որի համաձայն՝ թուրքերը ճանաչեցին Ռուսաստանի տիրապետությունը՝ Դերբենդից մինչև Մազանդարան ընկած Կասպից ծովի առափնյա շրջանները: Փոխադարձաբար ռուսները ճանաչեցին թուրքերի իրավունքներն Իրանի այսրկովկասյան տիրույթների նկատմամբ՝ ներառյալ Թիֆլիս, Գանձակ, Նախիջևան քաղաքները, Ղարաբաղի և Կասպանի մարզերը, ինչպես նաև նրանց տիրապետությունն Արդեբիլ-Թավրիզ գծից դեպի հյուսիս և Թավրիզ-Քերմանշահ գծից դեպի արևմուտք ընկած իրանական հողերի վրա<sup>192</sup>: Այս պայմանագրով չէր կարելի միջամտել կողմերի գրաված երկրամասերի գործերին, ուստի ռուսական արքունիքը պարբերաբար խուսափողական պատասխաններ էր տալիս օգնություն խնդրող հայերի նամակներին՝ միաժամանակ զգուշացնելով վրաց և հայ գործիչներին՝ չգրգռել թուրքերին: Դեռ ավելին, Արցախում իր ազդեցությունը չկորցնելու նպատակով՝ Այսրկովկասում տեղակայված ռուսական զորքերի հրամանատարությունը գտնում էր, որ հայերի խնդրանքը պետք է ոչ կատարել և ոչ էլ մերժել, այլ հուսադրելով պահել, մինչև որոշ ժամանակ անցնի, գուցե փոխվի իրադրությունը, ու այն ժամանակ հնարավոր ուրիշ որևէ միջոց ձեռնարկել<sup>193</sup>: Գերագույն գաղտնի խորհուրդն իր հերթին Այսրկովկասում տեղակայված զորքերի հրամանատարությանը, հայերին ոգևորելու նպատակով, հրահանգ է տալիս՝ կազմակերպել զինված ուժերի կեղծ զորաշարժեր<sup>194</sup>: Մյուս կողմից էլ Պետրոս Առաջինը ոչ միայն գործնական աջակցություն ցույց չտվեց, այլև զլացավ Արցախ ուղարկել ռազմական գործին գիտակ մասնագետների, հատկապես՝ զինագործ վարպետների՝ տեղում հրանոթներ ձուլելու համար<sup>195</sup>: Նույն երկիմաստ ու անորոշ, բայց մյուս կողմից էլ դիվանագիտական մոտեցումներով էր համեմված Պետրոս Առաջինի հայտնի հուշագիրը, որը նրա դեսպանորդ Իվան Կարա-

պետը ներկայացրել էր Արցախի սղնախականներին՝ 1723 թ. դեկտեմբերին Շուշիում, իսկ 1724 թ. հունվարին՝ Գանձասարում:

Հուշագրում նշվում է, որ Պետրոսը հայերին վերցնում է իր պաշտպանության տակ, հուսադրում, որ կօգնի նրանց ազատագրվելու, սակայն մինչ այդ Ռուսաստանը պետք է ամրապնդի իր դիրքերը մերձկասպյան շրջաններում և նախապատրաստվի Հայաստանին օգնելու՝ համալրելով Գիլանում, Բաքվում ամրացված զորամասերը: Հայերին կոչ է արվում չթուլացնել իրենց դիմադրությունը, իսկ մեծ վտանգի դեպքում՝ տեղափոխվել և բնակվել ռուսաց կողմից նոր նվաճված Կասպիականի ափերին<sup>196</sup>:

Փաստորեն, ցարական արքունիքը 1720-ական թվականներին, չկարողանալով գրավել ողջ Այսրկովկասը, իր տիրապետության տակ գտնվող մերձկասպյան առափնյա շրջաններից շահ ստանալու նպատակով այս անգամ փորձում է արցախահայերին վերաբնակեցնել վերոհիշյալ տարածքներում: Ռուսական կառավարությունը ձգտում էր իրականացնել իրար հետ փոխկապակցված միջոցառումներ՝ մերձկասպյան շրջաններից տեղահանել անվստահելի մահմեդականներին՝ այնտեղ վերաբնակեցնելով Ռուսաստանին հավատակից քրիստոնյաների<sup>197</sup>:

Այս ծրագիրը գործում էր դեռևս 1722 թվականից, երբ Պետրոս Մեծը գեներալ Մատյուշկինին ուղարկում է մերձկասպյան շրջանները նվաճելու: Նա գեներալին հրահանգում է. «Աշխատեք գործ դնել ամեն կերպ՝ հայերին և ուրիշ քրիստոնյաներին, թե կան, կանչելու Գիլան և Մազանդարան ու բնակեցնել, իսկ մուսուլմաններին, այն է՝ թուրքաց օրենքին հետևողներին շատ խաղաղ կերպով, որպեսզի իմացող չլինի, որքան կարելի է քչացնել»<sup>198</sup>:

Ռուսական կողմը փորձում էր իր գաղափարներն իրագործել՝ օգտագործելով և շահագրգռելով Պետերբուրգում գտնվող սղնախականների բանագնացներ Չալաբի Բյոխվային և Անտոն ու Սիմեոն Պոպով քահանաներին: Վերջիններս, առանց արցախահայության և նրանց ղեկավար մելիքների, հարյուրապետերի, Եսայի և Ներսես կաթողիկոսների կարծիքը հաշվի առնելու, ռուսական արքունիքին առաջարկել են թույլ տալ հայությանը տեղափոխվել և բնակվել մերձկասպյան ռուսահպատակ գավառներում<sup>199</sup>:

Ռուսական արքունիքը, իր ցանկությունը կատարված համարելով, 1724 թ. նոյեմբերի 10-ին Պետրոս Մեծի անունից հրովարտակ է հղում Եսայի կաթողիկոսին, Ավան և Միրզա հարյուրապետերին ու ողջ հայությանը, որ թողնեն իրենց հայրենիքի սահմանները և, շարժական ունեցվածքը վերցնելով,

<sup>191</sup> Абдулаев Г., Азербайджан в XVIII в. и взаимоотношения его с Россией, стр. 15.

<sup>192</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 156:

<sup>193</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, стр. 295.

<sup>194</sup> Նշվ. աշխ., էջ 297:

<sup>195</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2-րդ, էջ 151:

<sup>196</sup> Բախյան Վ., Արցախի պատմություն, էջ 118:

<sup>197</sup> Лысцов В., Персидский поход Петра I, стр. 150-151.

<sup>198</sup> Эзов К., նշվ. աշխ., էջ 381-382:

<sup>199</sup> Նույն տեղում, էջ 387-388:

տեղափոխվեն Բաքու, Գիլան, Մազանդարան<sup>200</sup>: Մինչ այդ հրովարտակի Արցախի հասնելը՝ Շուշիի սղնախի ղեկավարները, Ռուսաստանից ակնկալվող օգնության հույսը չկորցնելով, 1725 թ. մարտի 10–ին Թարխան, Ավան, Օհան հարյուրապետներն ու Վարանդայի մելիք Բաղին նամակ խնդրագրով դիմում են Պետրոս Մեծին, որտեղ նրանք միամտաբար նորից հավատում են, որ քրիստոնեական աշխարհին իրեն փրկիչ հոչակած ցարը զորքեր է ուղարկելու և ազատելու կործանման եզրին հայտնված հայությանը: Նամակում ասված է. «... Եթե մինչև ի մեկ Բ (2) ամիսն մեզ օգնություն չհասաւ այդ կողմէր թամամ քրիստոնեայ ազգս բնաջինջ կու լինի, մուղախասս, այլ ինչ օգուտ ձեր աշխատանքն. ահա աղաչեմք, անտես մի առնէք գաղաչանս մեր, այլ հասէք մեզ վասն սիրոյն Քրիստոսի մեզ օգնութիւն. այլ զինչ երկարեմք, դարձեալ Ֆիլիպն Գեանջցոց և մեր թղթով գնաց շահին մօտն, հիմա եկաւ խալաթով, ըռաղամով մեզ համար. այլև Քալպալի բէկն այս բանիս վերայ բերինք մեր մէջս, ղզլպաշին հետ հաշտեցինք, այլ և մեր մէջս որքան խոռով մարդ կայր, թէ՛ մելիքներ, թէ՛ ուզքաշիք ամենն մին եղան պարիշեցանք, այլ ջոկութիւն չկայ. միայն թէ մեր աչքն ձեր ճանապարհին է և ձեզ եմք ընթիզար, և խնդրեմք, որ Տէր Աստուած ձեզ երկար կեանք տայ, աջուղումն, որ շուտ մեզ հասնէք և ձեր մէկ օրն ՃՌ (100 հազ) լինի»<sup>201</sup>:

Ահա այսպիսի սպասողական դրության մեջ գտնվող սղնախականներին Անտոն քահանան և Քյոխվա Չալաբին բերում հասցնում են Պետրոս Մեծի ուղարկած գաղթի մասին հրովարտակը: Պատվիրակները 1725 թ. մայիսի 16–ին առաջինը դա ներկայացնում են Շուշիի սղնախի ղեկավարներին՝ Ավան և Միլլոգա հարյուրապետներին: Այդ ծանր կացությունից դուրս գալու և համատեղ որոշում կայացնելու նպատակով Ավան հարյուրապետը Եսայի կաթողիկոսին հրավիրում է Շուշի: Խորհրդաժողովի մասնակիցները որոշում են դիվանագիտորեն պատասխանել Պետրոս Մեծին, մի կողմից նրանք չեն մերժում ցարի առաջարկած արտագաղթի ծրագիրը, մյուս կողմից էլ հայտնում են, որ կարողանում են դիմակայել թշնամուն և պաշտպանել հայրենի հողը՝ ընդգծելով, որ եթե թողնեն իրենց ամրություններն ու լեռներն և հեռանան դեպի օտար դաշտեր, թշնամին ամեն կողմից կհարձակվի և կոչնչացնի խաղաղ ազգաբնակչությանը: 1725 թ. հուլիսի 25–ի նամակում, որի տակ դրված էին Եսայի և Ներսես կաթողիկոսների, Եզան, Բաղր, Թամրագ, Հովսեփ մելիքների, Ավան, Թարխան, Օհան, Եսայի, Սարգիս, Բաղի, Աբրահամ, Սարգիս հարյուրապետերի կնիքները, ասված է. «... մեք ելնումք տանով և տեղով և ամենայն ընչիւք գամք զձեր պար-

<sup>200</sup> Эзов К., նշվ. աշխ., էջ 420–421.

<sup>201</sup> Նույն տեղում:

սից նոր առուած երկրներն, որ է Պաքու, Կիլան, Դարպանդ և ասա բնակել. կամք Տեառնդ եղիցի և հրամանի քում մահու չափ եմք հնազանդ. բայց կամիմք որպիսութիւն և բանի կերպն որ աստ է յայտնել Տեառնդ և զի խնդիրքն մեր զոր գրեալ էաք, ոչ էլ ըստ այսմ կերպի, և այս քանի պատճառաւ. զի այս երկրներս, որ ծառայքս քո բնակեալ եմք, որ են Գանջայ, Ղարապաղն, Զ (6) միալ, այլ և Գեղարքունի, Քօլանի, Ղափան, Սիսիան և այլ երկրներ, այս ամեն միալ Լ (30), Խ (40), Ծ (50), փարէ գեղ է, և ամէն ԶՃ (600) տուն, ԵՃ (500), ԴՃ (400), մէկ Ճ (100) տուն, Ծ (50) տուն, փոքր Լ (30), Խ (40) տուն են և այս երկրներս վարով և տեղով շատ ամուր են, և մեք այս խալխս ամենքն իր երկրումն սղնաղ սղանդ եմք արել ամուր տեղերն, և ամենքս մէկ սղնաղին վերայ նստած պահում ենք. և մեր Դ (4) կողմի երկրներ օսմանցիք առել են, որ մեզ թշնամիք են, այլ և մեր մէկ կողմն էլ ղզլպաշ են, որ թշնամիք են. հարկաւ թէ, որ մեք այսքան ՌՌ (հազար–հազար) խալղս տեղահանեմք և դուրս բերեմք իրեանց ապրանքով և ուլախով, արձակ տեղ մտան թշնամին շուտ կու յաղթէ և խալղն գերի կառնէ. այլև Քուռ գետն, որ մեր առջևս է լօթկօվ կանցանուի, լօթկեն ղզլպաշի և ղարապօրկի ձեռին է և ոչ մեր, որ են թշնամիք, մեք մինչի լօթկի թետարիք կանեմք, և այսքան մարդ, անասուն անց կենալն, թշնամին մօտ է, զմեզ շուտ չաշմիշ կանեն, այս պատճառաւ շատ դժուար է ձեռք տալիս զմեր այդ կողմն անցնելն, թէ չէ հրաման արքայի ի վերայ գլխոյ մերոյ է»<sup>202</sup>:

Փաստորեն, Արցախի հոգևոր և աշխարհիկ տերերը պարկեշտության սահմաններում մերժեցին Պետրոս Մեծի՝ հայրենիքից արտագաղթելու առաջարկը: Նամակից պարզ երևում է, որ սղնախականները ոչ միայն մտահոգ էին Արցախի, այլ նաև հարևան Սյունիքի ու Ուտիքի հայության ճակատագրով և փորձում էին անաղարտ պահել հայկական նահանգների ազգագրական դեմքը:

Վաղ միջնադարից սկսած՝ Արցախի աշխարհիկ և հոգևոր տերերը, իսկ 19–20–րդ դարերում հասարակական քաղաքական գործիչներն ու մտավորականության լայն շերտերը մշտապես փորձել են Հայաստանի արևելյան նահանգների միասնականության խորապատկերի վրա նոր բովանդակություն հաղորդել պետություն ունենալու և այդ ճանապարհով միասնական երկիր ստեղծելու տեսլականին:

Անդրադառնալով արցախահայության արտագաղթի հարցին, Պետրոս Մեծից հետո՝ Եկատերինա կայսրուհու կառավարման ժամանակ, 1726 թ., Այսրկովկասում տեղակայված ռուսական զորքերի հրամանատար գեներալ Դոլգորուկովը ցարական արքունիքին հայտնում է, որ հայերը լսել անգամ

<sup>202</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2–րդ, էջ 168:

չեն ուզում կասափական երկրները գաղթելու մասին: Եվ ավելացնում է, թե նրանք կատարյալ իրավունք ունեն. նախ, որ պիտի իրենց վաճառականությունը թողնեն և երկրորդ՝ իրենց ընտիր և բարեբեր տեղերից պիտի գնան այնպիսի անպտուղ տեղեր, ուր ապրուստ գտնելը դժվար է<sup>203</sup>:

Արցախահայության համար ազատագրական պայքարի այդ թեժ շրջանում հայրենիքի սահմանները թողնելը մերժելի էր: Մյուս կողմից շարժման առաջնորդները գիտակցում էին, որ եղած ներուժով հզոր Թուրքիայի ու Այսրկովկասում նրանց կամակատար խաների դեմ պայքարելը դժվարին էր և անհեռանկար: Շուշիի սղնախի ռազմաքաղաքական ղեկավարությունը հասկանում էր, որ Ռուսաստանի խոստումները թեական էին և հեռու՝ գործնական քայլերից: Ուստի անհրաժեշտ էր տարածաշրջանում ունենալ մեկ այլ դաշնակից, որի շահերը կհամապատասխանեին հայության ձգտումներին: Ռուսաստանից ակնկալվող օգնությունը տեսանելի ապագայում անհեռանկար համարելով՝ սղնախների քաղաքական որոշ շրջանակներում հղանում է այն միտքը, որ հակաթուրքական ճակատ ստեղծելու ամենաիրատեսական քայլը հարևան մահմեդականների, հատկապես՝ շիաների և պարսկամետ խաների հետ դաշինք ստեղծելու մեջ է: Նկատենք, որ սղնախականների այս մոտեցումը Պետրոս Առաջինի՝ Այսրկովկասում վարվող քաղաքականությանը համահունչ էր: Ռուսական արքունիքը պարզ գիտակցում էր, որ իր հավակնոտ ծրագրերի իրականացման ճանապարհին ավելի շատ խոչընդոտ էր ոչ թե Պարսկաստանը, այլ առավել հզոր Թուրքիան: Ավան հարյուրապետը և Շուշիի սղնախի մյուս հրամանատարները, գիտակցելով այդ ամենը, միջնորդի դերակատարությունը վերապահեցին Պետրոս Առաջինի պատվիրակին՝ Իվան Կարապետին: 1724 թ. փետրվարի 22-ին հետևյալ բովանդակությամբ դիմում են հղել վերջինիս. «Մեք, Շոշի եղեալ ուզբաշէքս՝ ես Թարխանս, և ես Բաղիս, և ես Փանիս, և ես Սարգիսըս, և ես Սատեղս, մեր թաբուն թալեղօվս և մեր քելիխայ քաղխօղէքովս, և գանջոյ խայէրօվս, մեծօվ և փոքրօվ խնդրեցինք Իվան Կարապետէն, որ մեր կողմանէ մին գիր գրէ Գանջոյ մայալին քաղխօղէքնց վերէն, որ մեր միջումն բարըշոթուն ձգի, որ մինըզմինոյ խետ բարնշուցանք, որ մեք և գանջեցիք բարիշ լինենք, մինչի մեր թագայորըն գայ մեզ հասնի»<sup>204</sup>:

Երկարատև բանակցություններից հետո, 1724 թ. մարտի կեսերին, սղնախականների ներկայացուցիչների և Գանձակի մահմեդականների միջև կնքվեց փոխադարձ օգնության պայմանագիր: Հայկական կողմից պայմանագիրը ստորագրել են Գանձասարի Եսայի կաթողիկոսը, Երիցմանկաց

Ներսես կաթողիկոսը, Ավան, Միրզա, Թարխան, Բաղի, Սարգիս, Աբրահամ հարյուրապետերը և Թամրազ, Բաղի, Գրիգոր, Դանիել, Եգան մելիքները: Վերջիններս պարտավորվում էին թուրքերի կամ լեզգիների կողմից հարձակման դեպքում օգնել Գանձակի շիա մահմեդականներին: Գանձակի շիա մահմեդականների կողմից պայմանագիրը վավերացվել է 125 ստորագրություններով և կնիքով: Նրանք էլ իրենց հերթին խոստանում էին մեղապարտ ճանաչել ու պատժել ղաջարներին կամ քաղաքացիներին, եթե նրանք փորձեն կողոպտել սղնախներին ու Ղարաբաղի քրիստոնյաներին կամ օգնության չգան նրանց թուրքերից ու լեզգիներից պաշտպանելու համար<sup>205</sup>:

Ի դեպ, վերոհիշյալ պայմանագրի ստորագրումը ձեռնտու էր նաև Պարսկաստանի համար: Տնտեսապես թուլացած, քաղաքականապես անկայուն, երկպառակտչական պատերազմների մեջ ներքաշված երկրի համար ձեռնտու էր թեկուզև ժամանակավոր դադարը: Մյուս կողմից էլ հակաթուրքական ճակատի «հարդարման» գործն ինչ-որ չափով կմեղմեր Բարձր Դռան՝ Այսրկովկասի պարսկական տարածքների նկատմամբ հավակնությունները: Այս ժամանակահատվածում տարածաշրջանում նկատելի էին ռուս-պարսկա-վրացա-հայկական մերձեցման նախանշանները: Քաղաքական նոր զարգացումների գործում իր մեծ դերակատարությունն ունեցավ Շուշիի սղնախի զինվորականությունը: Այն ոչ միայն երկրամասի անվտանգությունը պահպանելու միջոց էր, այլև արցախահայության պետականության վերականգնմանն ուղղված շոշափելի քայլ:

Գանձակի պայմանագրի ստորագրումն իրագործվեց Թահմազ 2-րդ շահի ներկայացուցիչների, Պետրոս Մեծի պատվիրակի՝ Իվան Կարապետի, Գանձակի բեկլարբեկի, պարսկական կողմնորոշում ունեցող վրացական ծագմամբ Մուհամմադ կուլի խանի կամ, որ նույնն է՝ Կախեթի Կոստանդին թագավորի մասնակցությամբ և միջնորդությամբ:

Պայմանագրի ստորագրումից հետո Ղարաբաղի հայերը և Գանձակի մահմեդականները 200 հոգանոց մի պատվիրակություն են ուղարկում Պարսկաստան: Թահմազ 2-րդ շահը հավանություն է տալիս պայմանագրի դրույթներին:

Քանի որ տվյալ ժամանակահատվածում Արցախի և Սյունիքի հայության առջև դրված էին նմանատիպ խնդիրներ, ուստի ազատագրական շարժման առաջնորդները կիրառում էին նույն ռազմավարությունը: Մյուսյաց ազատագրական շարժման առաջնորդը՝ Դավիթ Բեկը, նույնպես փորձեց բա-

<sup>203</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2-րդ, էջ 171:

<sup>204</sup> Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 97:

<sup>205</sup> Բալայան Վ., Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1813 թ., Ստեփանակերտ, 2013, էջ 62-64:

րիդրացիական հարաբերություններ ստեղծել հարևան պարսկամետ խաների և Թահմազ 2-րդ շահի հետ: Շահը ոչ միայն ոգևորությամբ ընդունեց Արցախի և Սյունիքի պատվիրակներին, այլև հրովարտակով Դավիթ Բեկին ճանաչեց Կապանի (Սյունիքի – Վ. Բ.) տեր ու միաժամանակ Անդրկովկասի պարսկահպատակ խաների գլխավոր և շահի հուսալի դաշնակից<sup>206</sup>:

Շահը միաժամանակ Դավիթ Բեկին թույլ է տալիս դրամ հատել: Այսպիսով, Թահմազ 2-րդը փաստացի և իրավական տեսանկյունից ճանաչում է Արցախի և Սյունիքի հայության ինքնիշխանությունը: Միաժամանակ հայպարսկական նմանօրինակ մերձեցումն Արցախի և Սյունիքի հայությանը հնարավորություն է ընձեռում ոչ միայն սեփական ներուժը, այլև պարսից շահի ու նրան հպատակ խաների գինական ուժը նպատակաուղղելու թուրքական և հյուսիսային ցեղերի ագրեսիայի կանխմանը:

1724 թ. Կոնստանդնուպոլսի ռուս-թուրքական պայմանագրի ստորագրումից հետո թուրքական հրամանատարության առաջնահերթ խնդիրն էր՝ վերացնել Ռուսաստանի և Թուրքիայի արանքում գոյություն ունեցող հայկական սեպը: Այդ խնդիրը լուծելու համար 1724 թ. հունիսին թուրքական զորքը Գյումրիի վրայով մտավ Արարատյան դաշտը, այնուհետև գրավեց Նախիջևանն ու Օրդուբադը, ապա թափանցեց Գողթն, իսկ հարավում նվաճեց Համադանը: Չորս կողմից արցախի մեջ առնվեց Երևանը: Չնայած քաղաքի հերոսական պաշտպանությանը՝ սեպտեմբերի 26-ին պաշարված Երևանը անձնատուր եղավ: Երևանի անկումից հետո թուրքական բանակն առաջ շարժվեց և գրավեց Թիֆլիսը, Ղազախը, Լոռին ու մոտեցավ Գանձակին: Այս պայմաններում թուրքական հրամանատարությունը հարկադրեց Էջմիածնի Աստվածատուր կաթողիկոսին՝ նամակ գրել Եսայի Հասան Զալալյանին և խորհուրդ տալ նրան, որ համոզի Արցախի մելիքներին ու սղնախների մյուս առաջնորդներին՝ պատգամավորներ ուղարկել թուրքական հրամանատարության մոտ և իրենց հպատակությունը հայտնել, այլապես Ումար փաշան սպառնում է մտնել Ղարաբաղ և կոտորել հայերին:

Արցախի քաղաքական շրջանները որոշել էին մինչև վերջ կռվել թուրքական բանակի դեմ, ուստի և մերժեցին թուրքերի առաջարկը: Թուրքական 4700 հոգուց բաղկացած զորքը Շահին, Սալլահ և Ալի փաշաների գլխավորությամբ Գանձակի կողմերից, անհեռանկար համարելով Շուշիի սղնախը գրավելու մտադրությունը, մտավ Վարանդայի կենտրոնական հատվածները: Տեղացիները զգալով, որ չեն կարող դիմադրել թվով գերակշռող թշնամուն, առերես ընդունեցին նրանց հպատակությունը և կերուխումից

հետո Դիզակի մելիք Եգանի և Վարանդայի մելիքի աղջկա՝ Գայանեի գլխավորությամբ, մի գիշերվա մեջ, նախօրոք դրված պայմանով, կոտորեցին թուրքերին: Գայանեն<sup>207</sup> անձամբ ղեկավարում էր գործողությունն Ավետարանոցում և ինքն էլ սպանում իրեն հետապնդող Սուլեյման բեկին: Եսայի կաթողիկոսի տեղեկությունների համաձայն՝ միայն 150 ասկյարի հաջողվեց փախչել: Ղարաբաղցիներն ազատեցին 200 գերիների և իրենց հերթին գերեցին Սալահ փաշային:

Վերջինս բացեց Արևելքում, մասնավորապես՝ Արցախի նկատմամբ Բարձր Դռան վարվելիք քաղաքականության հեռապատկերները. «Հայն այս մեջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինիլ, որ մեր ճանապարհն բացուի: ... Դուք չէիք այս միջումս, մեք հիմա Դարպանտու և Պաքու վերա էինք գնացել, որ Ղատիմի մերն է»<sup>208</sup>:

Թուրքերի դեմ մղվող պայքարում Արցախի հայության անկոտորում կամքի մասին է վկայում նաև Մարտիրոս Եպիսկոպոսի 1726 թ. հունվարին Դերբենդի պարետին ուղղված հետևյալ տեղեկությունը. «Թուրքական փաշան Գանձակից գրել է Սղնախների հայերին, որպեսզի նրանք ուղարկեն 5 տարվա հարկը, առաջարկելով՝ եթե դրամը ձեզ մոտ պատրաստ է, ուղարկեցեք, իսկ եթե պատրաստ չէ, ապա հաճեցեք պատրաստել բոլոր տարիների համար: Իսկ եթե չուղարկեք, այն ժամանակ մենք կգանք և ուժով ձեզանից կվերցնենք: Եվ նրանք՝ Սղնախների հայերը պատասխանել են նրան, թե՛ մեզ մոտ դրամ չկա, բայց միայն ամեն մարդու մոտ մի հրացան է և մի սուր. եթե ցանկանում եք գալ եկե՛ք մենք աստծու օգնությամբ պատրաստ ենք ձեզ դիմավորելու և ձեզանից չենք վախենում»<sup>209</sup>:

Այդ ծանր իրադրության մեջ սղնախների ղեկավարները խնդրում են ռուսական արքունիքին՝ արագացնել իրենց օգնությունը: Նույնիսկ Ավան հարյուրապետը Գիլանում գտնվող ռուսական զորքերի հրամանատարությանն առաջարկում է՝ դաշնակիցների անարգել մուտքը Արցախ ապահովելու համար, իր տրամադրության տակ եղած զինված ուժերով ճանապարհ բացել և ընդառաջ գնալ նրանց: 1725 թ. դեկտեմբերի 19-ին գեներալ Մատյուշկինի՝ արքունիքին գրած զեկուցագրում ասված է. «Ավան յուզբաշին, հավաքելով 10 000 հոգի լավ զինված մարդիկ, Հայկական Սղնախներից ցանկացել է գնալ Գիլան՝ ռուսաց մոտ ...»<sup>210</sup>: Գեներալի զեկուցագրից

<sup>207</sup> Արամ Խաչատրյանի երաժշտական արվեստը ուսումնասիրող մի շարք արվեստագետներ գտնում են, որ մեծ կոմպոզիտորի «Գայանե» օպերայի հենքը կազմել է պատմական այս իրադարձությունը:

<sup>208</sup> Армяно-русские отношения, т. II, ч. II, стр. 249.

<sup>209</sup> Արրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 131:

<sup>210</sup> АВПРИ, ф. СРП, 1725 г., N 5, л. 365.

<sup>206</sup> Ղուկաս Սեբաստացի, Պատմութիւն Ղափանցիոց, Մատենադարան, Ս. Ղազարու, ծեռագիր թիվ 620, ք. օրինակ, գլուխ երրորդ:

երևում է, որ Ավան հարյուրապետը, պատերազմական գործողություններ վարելուց բացի, ամրացնում է Շուշիի բերդը<sup>211</sup>: Իրենց գործելաոճին համահունչ, ժամանակ առ ժամանակ, ցարական արքունիքը հուսադրական գրություններ է ուղարկում սղնախների պատասխանատուներին:

Դաժան մարտերը թուրքական բանակի դեմ շարունակվեցին ամբողջ 1726 թվականի ընթացքում: 1726 թ. հունիսի 15-ի նամակով Եսայի կաթողիկոսը, Իվան Կարապետը, Ավան, Աբրահամ, Թարխան և մյուս հարյուրապետերը Վախթանգ 6-ին հայտնում են, որ հունիսի 10-ին Գանձակից թուրքական զորքը Խաչենի վրա է հարձակվել, ավերել Ղազանչի, Ղապրթու, Չանկաթաղ գյուղերը, թալանել ու գերեվարել բնակչությանը, բայց սղնախներից գնացած հայկական զորքերը վրա են հասել, կոտորել թշնամուն, ազատել գերիներին ու վերադարձրել ավարը<sup>212</sup>:

1726 թ. օգոստոսի 1-ին գեներալ Լևաշովը հայտնում է, որ սղնախների հայերը ետ են շարտել թուրքական մեծ ուժերի չորս խոշոր հարձակումները և մինչև այժմ էլ համառորեն կռվում են<sup>213</sup>:

1726 թ. աշնանը թուրքական 40 հազարանոց բանակը, լեզգիների օժանդակ ուժերի հետ միասին, Սարը Մուստաֆա փաշայի գլխավորությամբ խորացան Ղարաբաղի մեջ և հասան մինչև Շուշի: Այդ դաժան կռիվների մասին ռուսական արքունիքին մանրամասն տեղեկություններ են հաղորդել Իվան Կարապետը, Ավան և Օհան հարյուրապետերը: Առաջին ճակատամարտը տեղի է ունեցել Շուշի բերդի շրջակայքում: Թուրքերը օգտագործեցին թնդանոթներ ու տասնյակ հազարավոր հետևակ: Եվ այդ ուժի ճնշման տակ հայ զինվորականությունը, 4 օր դիմադրելուց հետո, Ավան հարյուրապետի գլխավորությամբ ամրացավ Թարխան, Բաղի և Սարգիս հարյուրապետերի սղնախներում: Միաժամանակ Ներքին սղնախների բնակչությունը պատսպարվում է Վերին սղնախներում: Ներքին սղնախում ռուսական զորքերին ապահովելու համար պահվող ձիերն ու մյուս անասունները թուրքերն իրենց հետ տարան: Ավան հարյուրապետը, միանալով Վերին սղնախում (ամենայն հավանականությամբ ներկայիս Ասկերանի շրջանի Սղնախ գյուղը – Վ. Բ.) ամրացած Օհան և Սիմոն հարյուրապետերի հետ, 4 օր շարունակեցին ճակատամարտը: Համառ մարտերից հետո հայերը հաղթանակի հասան: Այս կռվում թուրքերից սպանվեցին 800 հոգի, ինչպես նաև երկու հրամանատարներ՝ Ղրխչեշմե աղասին և Ենկիչար աղասին: Գլխավոր հրամանատար Սարը Մուստաֆա փաշան փախուստի դիմեց: Ինչ-

պես Իվան Կարապետն է պատմում. «Սարը Մուստաֆա փաշեն քշերով վեր կացաւ Բ (2) օրէն ճանապարհն մի օր գնաց»<sup>214</sup>: Օսմանյան զորքերի այդ հարձակման մասին տեղեկություններ է հաղորդել թուրք պատմագիր Իսմայիլ-Ասրմ էֆենդի Չելեբի-Չաղեն իր «Թարիխի Չելեբի-Չաղեն» գրքում: Նա հպարտորեն նշում է, որ ասկյարներին հաջողվել է սպանել 400 հայերի և տիրանալ նրանց ունեցվածքին: Բայց միաժամանակ խոստովանում է, որ թուրքերն ստիպված հեռացել են Գանձակ<sup>215</sup>:

Հայ-թուրքական պատերազմն օրեցօր դառնում է ավելի կատաղի ու անխնա: Արյունահեղ կռիվները, ինչպես գրում էր Մինաս վարդապետը, տեղի էին ունենում համարյա ամեն օր: Իրանի 18-րդ դարի պատմությանն առնչվող «Յաղագս պատմութեանցն Պերսիոու երկրին» երկի մեջ գրված է. «Դարձեալ օսմանցին կամենում է, որ հայոց ուզբաշէքն էլ իւրեան հնազանդեն, բայց ոչ հնազանդին, վասն այն պատճառի, որ Շուշոյ բերթն իւրեանց հետ է, մանավանդ՝ իւրեանց տեղն էլ շատ պինդ տեղ այ: Որ և քանիցս անգամ բազում օսմանուց դօշուն է գնում, որ սոցա հաղտահարի, բայց ողորմութեամբն Աստծոյ կարողանում չեն: Բայց ընդդէմ նոցին բազում անգամ հայոց Ավան խանն բազում զօրովք հայոց օսմանցուն հետ կռվում է և միշտ յաղթում, որ և այսու գործովք օսմանլուն ձեռն է վեռման հայոց սղնաղէն և երկիւղ է կրում: Այլևս դօշուն չեն ուղարկում ի վերայ նոցա, և հայքն սղնաղու բոլորն մնում են աներկիւղ»<sup>216</sup>:

Ուշագրավ է գեներալ Դուգորուկովի 1727 թ. մայիսի 11-ին իր կառավարությանը հայտնած այն զարմանքը, թե ինչպես են հայերը դիմանում ստեղծված դրությանը. «Միայն Աստված էր պահպանում հայերին, թե չէ՝ մարդկային խելքից բարձր է հասկանալ, թե դեռ ինչպես են նրանք պահվում այդքան զորեղ թշնամու առաջ»<sup>217</sup>: Ադրբեջանցի հեղինակները նույնպես գտնում էին, որ 1720-ական թվականներին Արցախի մելիքները դաժան մարտեր էին մղում թուրք զավթիչների նկատմամբ<sup>218</sup>:

Արցախի հարավային սահմաններում անհաջողության մատնված թուրքերն այս անգամ էլ փորձեցին խոցել երկրամասի հյուսիսային դարպասները: Հայ զինվորականության հենակետներն էին դարձել Գյուլիստանն ու Ջրաբերդը: Հայերը ոչ միայն դիմադրում էին, այլև հաղթական մարտե-

<sup>214</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, стр. 290-291.

<sup>215</sup> Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, էջ 159:

<sup>216</sup> Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները, աշխատասիրությամբ Արտակ Մաղալյանի, Երևան, 2010, էջ 59-60:

<sup>217</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ 3, գիրք 2-րդ, էջ 171:

<sup>218</sup> Алекперов А., К вопросу об изучении культуры курдов, «Труды АЗФАН», вып. 25, Баку, 1936, стр. 139.

<sup>211</sup> АВПРИ, ф. СРП, 1725 г., N 5, л. 365.

<sup>212</sup> Բարխուդարյան Վ., Ոսկանյան Վ., Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978, էջ 126:

<sup>213</sup> Բալայան Վ., Արցախի պատմություն, էջ 121:

րից հետո թշնամուն հարկադրում նահանջել Գանձակ: 1726 թ. օգոստոսի 1-ին գեներալ Յու. Լևաշովի Ալեքսանդր Օստերմանի հասցեով առաքված ծածկագիր նամակում ասված է. «Թյուրքերը մեծ դժվարությամբ, բազմաթիվ անգամներ, հայերի վրա են գնացել, բայց ամեն անգամ մարտերում պարտվել են ...»<sup>219</sup>:

Չնայած ռազմի դաշտում արցախահայության ձեռք բերած հաղթանակներին, երկրամասի ռազմա-քաղաքական դեկավարությունը, անմիտ ձևով ժամանակ վատնելով, շարունակում էր նամակներ հղել ռուսաց արքունիքին: Եսայի կաթողիկոսի և Ավան հարյուրապետի հրահանգով նրանց պատվիրակ Քյոխվա Չալաբին մի քանի անգամ լինում է Պետերբուրգում և հանդիպում արքունիքի ներկայացուցիչներին: Վերջիններս էլ հուսադրական նամակներից և կեղծ խոստումներից զատ ոչ մի գործնական քայլ չէին ձեռնարկում:

Չկարողանալով կոտրել սղնախների հայության համառ դիմադրությունը՝ թուրքերը փորձում էին երկպառակություն առաջացնել ազատագրական շարժման առաջնորդների միջև, նույնիսկ կաշառք էին առաջարկում Եսայի կաթողիկոսին:

Երկար տարիներ տևող ռազմական գործողությունները, ռուսական արքունիքի սին խոստումները երկրամասում ստեղծել էին սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական ծանր կացություն: Ազատագրական պայքարի դեկավարները՝ Եսայի Հասան-Ջալալյանը և Ավան հարյուրապետը, հույս ունենալով, որ ռուսների օգնությամբ կարճ ժամանակահատվածում կկարողանային Այսրկովկասից դուրս քշել օսմանյան զորքերին, չկարողացան երկրի ներքին կյանքը համապատասխանեցնել պատերազմական երկարատև դրությանը: Կենդանի ուժի անընդհատ կորուստների պայմաններում անմշակ էին մնացել հողատարածքներն ու այգիները: Կրճատվել էր անասունների գլխաքանակը: Երեկվա անտրտունջ շինականն ու համբերատար արհեստավորը մշուշոտ ապագայի ուրվականից դարձել էին անհանդուրժող և հեռանում էին զինվորական գործից: Մելիքներն ու հարյուրապետներն ստեղծված կացության համար իրար էին մեղադրում: Կշտամբանքների սլաքներն ուղղված էին հատկապես Եսայի կաթողիկոսի և Ավան հարյուրապետի դեմ: Այսպես, այնքան մեծ դժվարությամբ ստեղծված միասնականությունն օր առ օր ձեռք էր տալիս: Անհույս մաքառումների պայմաններում Արցախի մելիքներն ու հարյուրապետերը, զգալով ռուսական արքունիքի երկդիմի քաղաքականությունը, նրանց պատվիրակին՝ Իվան Կարապետին, սպառնում են՝ պահանջելով հեռանալ Արցախից: Վերջինս

ստիպված 1727 թ. ամռանը տեղափոխվեց Բաքու և մնաց գեներալ Դուգորուկովի շտաբում՝ փորձելով նորից լեզու գտնել սղնախականների հետ<sup>220</sup>: Ազատագրական մաքառումների ամենաթեժ պահին՝ 1728 թ., վախճանվեց կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը: Ազատագրական պայքարի ողջ բեռն այս անգամ ծանրացավ Ավան հարյուրապետի ուսերին: Ցավոք արտի, նա շարունակեց ռուսների հետ անպտուղ բանակցությունները: 1729 թ. Ավան և Թախան հարյուրապետերը մեկնում են Բաքու և նորից հորդորում ռուսական հրամանատարությանը՝ օգնական ուժեր տրամադրել: Բայց այս անգամ ռուս պաշտոնյաները ոչ թե խոստումներ էին տալիս, այլ արհամարհական վերաբերմունք էին ցույց տալիս:

Հայատյաց գեներալ Ռուսյանցովն Ավան հարյուրապետի մասին իր կառավարությանը գրում է, թե նա մի շատ թույլ խելքի տեր մարդ է, և գանգատվում, որ ինքը հանգստություն չունի հայերից, որոնք շարունակ ձանձրացնում են իրեան իրենց հայտարարություններով<sup>221</sup>: Չնայած դրան՝ Ավան հարյուրապետը համառորեն փորձում էր ստանալ ռուսների աջակցությունը: Այս անգամ Ավան հարյուրապետի նամակը Պետրոս Երկրորդ ցարին է հասցնում նրա եղբայր Թարխան հարյուրապետը: Նամակում ասված է. «Արգ լիցի մեծութանդ քում այսօր քանի տարի է, որ մեք սղնախ եմք արարել. օսմանցու սուլթանի ղոշունի հետ կռիւ եմք տալիս լուսահոգի մեծ թագաւորի ութագով, մինչև այսօր քանի անգամ մարդ եմք ղրկել լուսայիոգի թագուհին և քո հրամանոցդ ղուլուղն, մեզ մին օգնութիւն չի եղև, գերա մեք երկուսս եկանք Բաքու. Ռհան ուզպաշին, Ապրհամ ուզպաշին, Պապի ուզպաշին, Ալաք ուզպաշին, պարոն Գրիգորն, պարոն Մելքուն, պարոն Ներսէսն ղրկեցինք քոյ հրամանոցդ ղուլուղն, վասն Աստուծոյ խաթրին մեզ մին օգնութիւն անես, ի սերն Քրիստոսի. քանի քանի Ռ (1000) հոգի կան մեր սղնախում, Աստուծոյ հրամանաւ և քո ողորմութեամբն մինչև այսօր բահել եմք, էսիր չեմք տվել, այսօր շատ նեղ տեղ եմք, լուսահոգի մեծ թագաւորի գերեզմանի խաթրին մեզ քօմակ և օգնութիւն հասուցանես որ անօրենի ձեռնին էսիր չի լինիմք, վերև Աստուած, ներքև քո հրամանքդ ես. մեզ քօմակ. մեր ամինայն աւհալն. Թարխան ուզպաշին և իմ վաքիլ Գրիգոր Մելքուն քո հրամանոցդ առգ կանեն, որ սոքա ինձ վաքիլ կարգեցի: Այս գրիս ասլն թողեցինք Սարեցին կամենտատին մոտ Աւան ուզպաշին միտովն»<sup>222</sup>:

Ռուսներին շահագրգռելու նպատակով Թարխան հարյուրապետը 1729 թ. հոկտեմբերի 21-ին Պետերբուրգում արտաքին գործերի կոլեգիային տե-

<sup>220</sup> Левиатов В., Очерки из истории Азербайджана в XVIII веке, Москва, 1951, стр. 94.

<sup>221</sup> Լեո, հ. 3, գիրք 2-րդ, էջ 173:

<sup>222</sup> Эзов Г., նշվ. աշխ., էջ 442:

<sup>219</sup> Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 131-132:

ղեկանք է ներկայացնում, որտեղ մանրամասն հաղորդվում է հայկական զորքերի թվաքանակի, կառուցվածքի, հրամանատարների, զինատեսակների, հանքային հանածոների, գյուղատնտեսական մթերքների արտադրության, զորքերում օգտագործվող ձիերի, անասնազխաքանակի մասին: Միաժամանակ նա նորից ռուս պաշտոնյաներին հորդորում է զորքեր ուղարկել Արցախ՝ խոստանալով տեղում լուծել նրանց պարենավորման հարցը: Չնայած արցախահայության ծանր վիճակին, Թարխան հարյուրապետը ռուսական արքունիքին հավաստիացնում է, որ սղնախականները պատրաստ են մինչև վերջ կռվել և չեն ցանկանում տեղափոխվել Կասպից ծովի առափնյա շրջանները<sup>223</sup>: Շարունակելով բանակցությունները՝ Գյուլիստանի և Շուշիի սղնախի զինվորականությունը ուժերի գերլարումով պայքարում էր թուրքական ազրեսիայի դեմ: Դրա մասին Ավան հարյուրապետը 1729 թ. նոյեմբերի 10-ին նամակով հաղորդում է գեներալ Վ. Դոլգորուկովին<sup>224</sup>:

Արցախից հնչող այդ աղերսանքներն անլսելի ու անհասկանալի էին մնում հեռուներում ճոխության մեջ ապրող ցարական արքունիքի պաշտոնյաներին: Ծավալապաշտ հովերով տարված կայսրության համար անհասկանալի էր հնագույն մի ժողովրդի՝ դժնդակ դարերի հոլովոյթում գտված մաքրամաքուր ավանդույթներից բխող արժեհամակարգի էությունն ու բաղձալի ազատության հասնելու և պապերից ժառանգած հող-հայրենիքում ապրելու ձգտումը: Դա նրանց աստծո կողմից վերապահված չէր: Նրանց դավանանքը շահն էր, որին զոհաբերվեցին թվով փոքր ազգերն ու ժողովուրդները: Եվ այդ տրամաբանությամբ, 1729 թ. Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված նոր պայմանագրով, Աստրաբադն ու Մազանդարանը ռուսները զիջեցին շահին<sup>225</sup>: Ցարական արքունիքին չէր հաջողվել հայերին Արցախից վերաբնակեցնել մերձկասպյան նոր գրավված շրջաններում, իսկ ակնկալվող եկամուտներ չէին ստացվում:

Պետրոս Մեծի ժամանակներից մեկնարկված Արևելքում ծավալապաշտական քաղաքականությունից միառժամանակ հրաժարվելով և Պարսկաստանի ու Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ ունենալու միտումով՝ ցարական արքունիքը փորձեց մարել արցախահայության ազգային ազատագրական պայքարի կրակը: Եսայի Հասան-Ջալալյանից հետո, սղնախականների ուժերը ջլատելու և նրանց առանց առաջնորդների թողնելու նպատակով, ցարական արքունիքն սկսեց բանակցել Շուշիի սղ-

նախի ղեկավարների հետ՝ նրանց խոստանալով Ռուսաստանում ապահով և բարեկեցիկ կյանք: Ցարական արքունիքն Ավան և Թարխան եղբայրներին խոստացավ տարեկան 1000 ռուբլի նպաստ և ապրելու վայր տրամադրել: Ցավոք, այդ ամենը գայթակղիչ էին:

Ռուսական կառավարության սին խոստումներից հոգնած և հետագա դիմադրությունն անհուսալի համարելով՝ Ավան հարյուրապետն իր համախոհներով 1729 թ. անցավ Ռուսաստան՝ ծառայության մտնելով ցարի բանակում: Նրան հետևելով՝ 1730 թ. օգոստոսի 18-ին սղնախներից Դերբենդ են անցել 137 հայեր՝ հարյուրապետեր Աբրահամի, Ալավերդիի, Բաղիրի, Սիմեոնի, Եպիսկոպոս Պետրոսի և գնդապետ Գրիգորի հետ<sup>226</sup>: Լեռյի կարծիքով՝ Ավան հարյուրապետն իր հետ տարել է հինգ հարյուրապետերի, 232 զինվորների, որոնցից 150-ին պահում էր իր հաշվին<sup>227</sup>: Սղնախների առաջնորդների նման քայլը կորստաբեր եղավ լեռնաստանի հայության համար՝ բաց անելով աղետալի գաղթի ճանապարհը, որն այնուհետև դարեր շարունակ դուրս էր քամում երկրի կենսական հյութերը, թուլացնում և ուժասպառ անում նրան:

Ցավալիորեն, Ավան հարյուրապետի անխոհեմ քայլը դարերի ընթացքում շատ ու շատ հայ ընտանիքների համար դարձել էր կենսակերպ: Բարեկեցիկ և անհոգ կյանք գտնելու ակնկալիքով դարերի ընթացքում հազարավոր հայ ընտանիքներ տեղափոխվեցին օտար երկրներ, հատկապես՝ Ռուսաստան: Եվ այդ կենարար ուժն իր բաժին պարտքը հայրենիքին տալու փոխարեն՝ օտարի տունն է կառուցել ու կառուցում և նրանց երկրները հզորացնում: Այդ ձևով հայ մարդու քրտինքով և ձեռքով կառուցվեցին մեր մոտիկ և հեռու հարևանների բնակավայրերն ու քաղաքները: Սակայն պատմության դժիսեմ դեպքերի բերումով այդ կառուցողների սերունդները չվայելեցին իրենց պապերի ստեղծածը: Գաղթականի ցուպը վերցրած, նրանք նորից ու նորից հայտնվում էին և այսօր էլ երևում են աշխարհի տարբեր ծագերում: Ճիշտ է ասված. «Պատմությունը կարելի է մոռանալ, իսկ պատմության դասերը՝ ոչ»:

18-րդ դարի 30-ական թվականներից սկսած՝ ցարական արքունիքը հատկապես նպատակային քաղաքականություն էր վարում Արցախի մելիքական տների վերացման գործում: Մանավանդ Գյուլիստանի պայմանագրից հետո, իրենց նվաճողական ծրագրերի իրագործման ճանապարհին Արցախի մելիքների համապատասխան զինական և նյութական օժանդա-

<sup>223</sup> Эзов Г., Եզվ. աշխ., էջ 446–448:

<sup>224</sup> Армяно–русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, стр. 320.

<sup>225</sup> Լեո, հ. 3, գիրք 2-րդ, էջ 174:

<sup>226</sup> Армяно–русские отношения во втором тридцатилетии XVIII в., сборник документов, составители Восканян В., Галустян Дж., Мартиросян В., Ереван, 1978, стр. 23.

<sup>227</sup> Լեո, հ. 3, գիրք 2-րդ, էջ 176:



կությունը ստանալուց հետո, ռուս պաշտոնյաները հայ ազնվականության ներկայացուցիչներին «քաղաքակիրթ» ձևով դուրս էին մղում երկրից: Ջինվորական գործի մեջ հմտացած այդ մարդկանց մենք տեսնում ենք անձայրածիր Ռուսաստանի տարբեր հատվածներում, որոնք իրենց բազկի ուժով կերտում էին հյուսիսի մեծ հարևանի հաղթանակները: Այդպես արցախահայությունը, գրկվելով ուղղորդող ուժից, քայլ առ քայլ, ոչ միայն կորցնում էր պետականության վերականգնման հնարավորությունը, այլ նաև վտանգում ազգային ինքնության գոյությունը:

1730–ական թվականներից Արցախն ապրում էր ծանր ժամանակներ: Վերոհիշյալ դեպքերից հետո հայաթափումն աննախադեպ ու մասսայական չափեր ընդունեց հատկապես Ծար գավառից: Ստեղծված պարապն արագաթափ լցվում էր օտար ցեղերով: Մի քանի տասնամյակի ընթացքում հայաշունչ այս գավառը գրեթե հայտնվեց խաչնարածների տիրապետության տակ: Արտագաղթածների մի մասը հանգրվանեց Վրաստանում: Չիրքին գյուղի հայերը վերաբնակվել էին Տփղիսում, յանշաղցիները՝ Տփղիսից ոչ հեռու Տաբախմեխիք (այժմ՝ Տաբախմեխ գյուղը Գարդաբանի շրջանում) գյուղում, խութավանքցիների մի մասը՝ Շուլավերում: Արդեն 1760–ական թվականներին գավառի տարածքը գրեթե լիովին հայաթափ էր, բացառությամբ՝ Խութավան գյուղի և երբեմնի եպիսկոպոսանիստ ու թեմական կենտրոն Դադի վանքի<sup>228</sup>:

Ծարի և Քաշաթաղի լեռնային արոտավայրերը դեպի իրենց էին ձգում Կուր–Արաքսյան տափաստանում ծվարած մահմեդական քոչվոր վաչկատուն ցեղերին:

Արտագաղթի ճանապարհին էր բռնել նաև Արցախի մյուս գավառների հայ բնակչությունը: Գյուլիստանի մելիքների մի մասը հանգրվանել էր Կախեթի Թելավ քաղաքում և Վրաստանի կազմում գտնվող Գուգարքի Բողնոփոր գավառում (Բոլնիս): Արտագաղթածների մի մասը բնակություն էր հաստատել Քարթլիի բազմաթիվ վրացական գյուղերում: Միայն շուրջ հարյուր գյուղ էին հիմնադրել արցախահայերը Շաքի և Շիրվան գավառներում<sup>229</sup>: Այս ճանապարհով Արցախի հայությունը Հյուսիսային Կովկասում հիմնեց ինը գյուղ<sup>230</sup>:

Ռուսաց ցարը, Ավան հարյուրապետին իր շահերին ծառայեցնելու նպատակով, նրան շնորհեց գեներալ–մայորի զինվորական կոչում: 1734 թ. Ավան հարյուրապետը դիմեց ցարական արքունիքին՝ թույլ տալ սեփա-

կանաշնորհելու Հյուսիսային Կովկասում արցախահայության հիմնած ինը գյուղերը: Ավան հարյուրապետը և Ռուսաստան տեղափոխված հայ զինվորականներն ստեղծեցին կամավորական մի ջոկատ, որն անվանվեց «հայկական էսկադրոն»: Այն ներառվեց մերձկասպյան շրջանում գործող ռուսական զորքերի կազմում, և արյուն էր հեղում՝ օտարի շահերը սպասարկելու համար:

Ի դեմս Ավան հարյուրապետի՝ հայրենիքին նվիրված զորապետի փոխարեն մենք արդեն տեսնում ենք ցարական արքունիքին նվիրված մի կամակատարի, որը կյանքի վերջին տարիներին ջանք չխնայեց Արցախից օտար ափեր տանելու իր հայրենակիցներին, որոնց կարիքն այնքան զգում էր հայրենի երկրամասը: Նմանօրինակ ճանապարհով ձեռք բերածն Ավան հարյուրապետը երկար չվայելեց: 1736 թ. նա մահացավ Աստրախանում:

Չնայած դրան, Արցախի զինվորականության մի մասը տոկաց, չերկնչեց դժվարությունների առաջ, մնաց հայրենիքում, իր շուրջը համախմբեց երկրամասի հայությանը, որը պատրաստ էր պատասխանատվություն ստանձնել, և պայքարը մակընթացություններով ու տեղատվություններով շարունակվեց նաև հետագայում: Սղնախների ազատագրական պայքարի ավանդները վախճան չունեցան: Այդ շրջանի ազատագրական շարժման առաջնորդները, շարունակելով Եսայի կաթողիկոսի և Ավան հարյուրապետի կիսատ թողած գործը, ամեն կերպ փորձում էին Ռուսաստանի պաշտոնական շրջանակներում հետաքրքրություն առաջացնել Արցախի նկատմամբ: 1733 թ. սեպտեմբերի 14–ին Այսրկովկասում Ռուսաստանի քաղաքական ծրագրերի մասին առաջարկություններով իր կառավարության առջև հանդես եկավ Պ. Շաֆիրովը. «Սղնախների հայերի միջոցով այս քաղաքը (իմա Շամախին – Վ. Բ.) վերցնելու դեպքում կարելի է ամբողջ փոքր Հայաստանը (իմա Արցախը – Վ. Բ.) կամ ինչպես այժմ են անվանում՝ հայկական սղնախները գրավել, որոնց բոլոր տարածքները հայ քաջ քրիստոնյաներով են բնակեցված և նրանք իրենք ինքնուրույն մի քանի տարի պաշտպանվում էին ինչպես թուրքերից, այնպես էլ պարսիկներից ...»<sup>231</sup>: Սղնախականները իրենց ուժերին այնքան վստահ էին, որ Իրանի նոր տիրակալ Նադիր շահի հետ դաշնակցած, 1735 թ. իրենց զորախմբերով մասնակցել են Գանձակի պաշարմանը և դեպի Կարս կազմակերպած արշավանքին: Դեպքերի մասնակից պարսիկ պատմագիր Մուհամմադ–Քյազիմը գրել է, որ հայ մելիքները, մասնավորապես Մելիք–Եզանը, Մելիք–Թամրազը և Մելիք–Հարու-

<sup>228</sup> Կարապետյան Ա., նշվ. աշխ., էջ 12:

<sup>229</sup> Նույն տեղում:

<sup>230</sup> Լեո, հ. 3, գիրք 2–րդ, էջ 176:

<sup>231</sup> Армяно–русские отношения во второй трети XVIII в., т. III, стр. 35.

թյունը իրենց իշխանությունը տարածել էին Կուր–Արաքսյան միջագետքում և փորձում էին գրավել նաև Գանձակի ու Երևանի բերդերը<sup>232</sup>:

Պատմական այդ բախտորոշ ժամանակահատվածում Արցախի քաղաքական պետական առաջնիշ ուժը Գանձասարից և Շուշիից տեղափոխվեց Դիզակի մելիքանիստ Տող ավանը: Այժմ Եսայի կաթողիկոսի և Ավան հարյուրապետի փոխարեն Դիզակի տիրոջ՝ Մելիք–Եգանին էր վերապահված արցախահայության առաջնորդի դերը: Նա էր աղեն հարաբերվելու Պարսկաստանի և Ռուսաստանի պաշտոնական շրջանակների հետ: Մելիք–Եգանի նման տաղանդավոր պետական–քաղաքական գործիչը, օգտագործելով Նադիրի հետ ունեցած իր ջերմ հարաբերությունները, իր վրա էր վերցրել ողջ Արևելյան Հայաստանի հայության հոգսերը: Դրա մասին է վկայում Տողի մելիքական ապարանքի ձևակառուցման Մելիք Եգանի թողած վիմագիրը. «Ես թողեցի ոչ Հայաստանս եսիր տալու»<sup>233</sup>: Քննարկվող ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների զարգացմանը, մասնավորապես՝ Արցախի մելիքների և Նադիր շահի հարաբերություններին անդրադարձել են նաև աղբյուրներից հեղինակները: Նրանցից Էլդար Իսմայիլովը գրել է. «Շահը (խոսքը վերաբերում է Նադիր շահին – Վ. Բ.) որոշել է Ղարաբաղում ուժեղացնել հայկական մանր իշխանների՝ մելիքների դիրքերը: Այդ ժամանակ կային հինգ մելիքություններ՝ Վարանդայի, Ջրաբերդի, Գյուլիստանի, Դիզակի և Խաչենի»<sup>234</sup>:

Այդ շրջանում չնայած Շուշին կորցրել էր իր դիմադրական կարողությունը, այնուամենայնիվ, շարունակում էր մնալ որպես բնակավայր:

1750 թվականից պահպանված աղբյուրներից մեկում հիշվում է. «Բեկնագար քենխուդայ Շուշեցի»<sup>235</sup>: Ներկայումս Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու հարավարևելյան կողմում՝ հիմնովին ավերված հայկական գերեզմանատան տարածքում, հրաշքով փրկված շիրմաքարերից մեկի կողքին գրված չորս տողից բաղկացած արձանագրությունը վկայում է, որ մեծչենցի հոգևորական Ասծատուր Մայիլյանի թոռ Պետրոսի աճյունը հողին է հանձնվել 1751 թ.<sup>236</sup>:

Իսկ հայոց Շուշիին շուրջ կես դար սպասվում էին մոայլ ու դաժան օրեր: Արցախի հպարտությունը համարվող այդ բնակավայրն օտարի դավա-

դիր որոգայթների մեջ վեր էր ածվելու դժոխային մի խառնարանի, որտեղից գահավիժող լավաները լափելու էին հայ մարդու դարերով ստեղծածն ու զուրգուրանքով պահված երազանքները: Բայց հազարամյակների հորձանուտում իր ժայռերի պես կարծրացած ու հղկված արցախահայությանն այլ բան էր վերապահված: Նա պետք է դիմակայեր նաև այդ փորձությանը՝ Շուշիին վերադարձնելով երբեմնի փառքն ու հայկական կերպարը:

Այսպիսով, բերված փաստերն ու մեկնաբանությունները մեզ հիմք են տալիս ասելու, որ երկաթե դարաշրջանից սկսած՝ Շուշին և նրան հարող տարածքները հայոց բնօրրաններից մեկն են եղել: Այստեղ հայ մարդը շարունակաբար ապրել է մի քանի հազարամյակներ: Աշխարհագրական տեսանկյունից այն, գտնվելով տափաստանից դեպի հայկական լեռնաշխարհի խորքերը տանող առանցքային կետերից մեկում, արդեն վաղ միջնադարից դարձել էր ամրացված բնակավայր: Հյուսիսից և արևելքից դեպի հայկական լեռնաշխարհի սիրտ՝ Այրարատ թափանցել ձգտող հորդաները դեմ էին առնում բնության և մարդու կողմից ներդաշնակորեն ստեղծված ամրություններին ու ջարդուփշուր դառնում: Տարեցտարի ահագնացող վտանգն Արցախի իշխաններին դրդում էր առավել անխոցելի դարձնել բերդավանը: Ժամանակների ոգուն համահունչ այն սովորական ամրոցից քայլ առ քայլ վեր էր ածվում պաշտպանական համակարգի: Հայկական զինական ուժը Շուշիի կիրճի երկայնքով տեղակայված ամրոցները դարձրել էր անխոցելի վահան: Այն առավել ընդգծված դերակատարություն ունեցավ սղնախական պայքարի տարիներին, որից մնացած ավանդույթներով բազում սերունդներն դաստիարակվեցին և հուսալիորեն պաշտպանեցին հայրենի սահմանները:

<sup>232</sup> Փափագյան Հ., Հայ–իրանական զինակցությունը 1726–1736 թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր շահի օրոք, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2, Երևան, 1972, էջ 76:

<sup>233</sup> Մակար Եպիս. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 199:

<sup>234</sup> Исмаилов Э., Очерки по истории Азербайджана, Москва, 2010, стр. 140.

<sup>235</sup> Դիան Հայոց պատմութեան, գիրք Գ, էջ 58:

<sup>236</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 268:

## Գլուխ 3

ՇՈՒՇԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆա) Ղարաբաղի խանության կազմավորումը:  
Շուշիի պատմության եղերական շրջանը

18-րդ դարի 40-ական թվականների վերջերին Պարսկաստանն ապրում էր խոռվահույզ ժամանակներ: Այդ երկրում տեղի ունեցող քաղաքական վայրիվերումները, կամա թե ակամա, իրենց ազդեցությունն էին ունենում անմիջապես հարևանությամբ՝ Արաքսի մյուս ափին գտնվող Արցախի վրա: Դա ինչ որ տեղ բնական է, որովհետև ի վերուստ պատմական ճակատագիրը միշտ էլ անակնկալներ է մատուցում քաղաքական անկայուն վարքագիծ ունեցող կայսրությունների հարևանությամբ գտնվող, ազգաբնակչությամբ և տարածքով փոքր երկրներին: Նադիր շահի կառավարման վերջին տարիների ծանր հարկային քաղաքականությունը, անհաջող պատերազմները Դաղստանի և Թուրքիայի դեմ ավելի են բարձրացնում ժողովրդական ցասման ալիքը բռնակալի դեմ: Նման պայմաններում 1747 թ. դավադրաբար վերջ են տալիս Նադիրի խոռվահույզ կյանքին: Նրա սպանությունից հետո երկրում սկսվում է անիշխանության մի շրջան: Ինչպիսի արագությամբ Իրանն իր հզորությանը հասավ Նադիր շահի օրոք, նույնպիսի արագությամբ նա դիմեց իր անկմանը՝ նրա մահից հետո:

Կենտրոնական իշխանության բացակայության և գահի համար մղվող պայքարի հետևանքով Պարսկաստանի տարբեր մարզերի շատ իշխողներ անկախություն ձեռք բերեցին: Ստեղծված խառնակ վիճակից օգտվեցին նաև շիա աղանդի քոչվոր այն թուրքերը, որոնք ժամանակին ընկճվել էին Նադիրի կողմից և արտաքսվել Խորասան: Այժմ, օգտվելով Նադիրի մահից և Իրանում ստեղծված անիշխանությունից, այդ ցեղերը նորից վերահաստատվեցին Այսրկովկասում, հատկապես՝ Կուր-արաքսյան միջագետքում և անհանգիստ կացություն ստեղծեցին Արցախի սահմանով մեկ: Կուր-արաքսյան միջագետքում թափառող ավազակաբարո թյուրքախոս ցեղերը

միավորվեցին ջևանշիր ցեղի սարըջալլու տոհմի առաջնորդ Փանահի շուրջը: Վերջինս բավականաչափ խորամանկ անձնավորություն էր և ապագայում, իշխանություն ունենալու համար, իրեն սերված է համարում Չինգիզ խանի տոհմից: Իրականում նա մի հովվի որդի էր և Նադիրի կենդանության ժամանակ նրա մունետիկն էր ու փողոցներում բարձր հայտարարում էր շահի որոշումները: Բայց կյանքը նրան այլ բան էր վերապահել: «Ջառչի Փանահը» 1747 թ. հեռանում է արքունիքից, դառնում ավազակապետ և աստանդական կյանք վարում Ղարաբաղի դաշտային հատվածներում: Պարսից կառավարությունը բազմիցս փորձել է ձերբակալել Փանահին: Սակայն նա, ստանալով Ջրաբերդի մելիք Ալլահ-Ղուլի սուլթանի հովանավորությունը, խույս տվեց դրանից: Հայ մելիքն իր մոտ Փանահին ծառայության էր ընդունել և դարձրել Ջրաբերդի մելիքության հարկահավաքը: Փանահն այդ ամենին յուրովի վարձահատույց եղավ. բարեկամությանը թույն խառնելով՝ դարձավ իր իսկ հովանավորի գերեզմանափորը:

Նադիրի սպանությունից հետո դեպքերը զարգացան ի նպաստ Փանահի: Իրեն ենթարկելով դաշտավայրի բոլոր քոչվոր ցեղերին՝ նա հարձակումներ էր գործում շրջակա բնակավայրերի վրա: Կողոպտված ավարը նա բաժանում էր իր կողմնակիցներին՝ դրա փոխարեն նրանցից հավաքագրելով զինվորական նոր ուժեր<sup>237</sup>: Ադրբեջանցի որոշ հեղինակներ նույնպես գտնում են, որ «Ջառչի Փանահ»-ի զբաղմունքը ավազակությունն էր<sup>238</sup>: Իր ազդեցության շրջանակները մեծացնելու նպատակով Փանահն ամուսնանում է Կուր-արաքսյան միջագետքում վիսող և թալանով զբաղվող մեկ այլ՝ քաբիրլի ցեղախմբի առաջնորդի աղջկա հետ: Շուտով նրա ազդեցության տակ են հայտնվում ջևանշիր, օթուզիքի, քյաբիրլու թյուրքախոս ցեղերը: Ավելին, խարդախ ճանապարհով նրան հաջողվում է Ադիլ շահից ստանալ խանի տիտղոս՝ առավել սանձարձակ ասպատակություններ սփռելով շրջակա տարածքների վրա:

Նկատենք, որ Նադիր շահի սպանությունից հետո նրա եղբոր որդուն՝ Ալի Ղուլի խանին, կարճ մի ժամանակահատված հաջողվում է դառնալ Պարսկաստանի գերագույն տերը՝ Ադիլ շահ (1747-1748 թթ.) անունով: Նա Պարսկաստանի տարբեր գավառներում իրեն դաշնակիցներ էր որոնում և, որպես այդպիսին, նկատել էր վերելքի ուղին բռնած Փանահին: Ճիշտ է, Փանահի խանական տիտղոսը հաստատող փաստաթուղթն առայսօր չի հայտնաբերվել, բայց դրա մասին, այնուհանդերձ, որոշ հեղինակներ ակնարկում են<sup>239</sup>:

<sup>237</sup> История Азербайджана, т. 1, Баку, 1958, стр. 337.

<sup>238</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 266:

<sup>239</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 48:

Այդ ամենը ոգևորիչ էին Փանահի համար, և նա, հեռուն գնացող նպատակներ հետապնդելով, փորձեց անցնել նստակեցության: Եվ նա կատարեց առաջին քայլը՝ Կարկառ գետի ձախ ափին, Կուրի հարևանությամբ, Աղջաբեդուց 26 կմ դեպի արևմուտք՝ քաբիրլի ցեղախմբի հավաքատեղիներից մեկում, կառուցեց Բայաթ ամրոցը: Այդ ժամանակ Այսրկովկասում մեծ հեղինակություն վայելող, Փանահի հակառակորդ Շիրվանի Հաջի Չելեբի խանը փորձեց գրավել բերդը, բայց անհաջողության մատնվեց: Երբ նա ձեռնունայն վերադառնում էր Շիրվան, ճանապարհին ասել էր. «Փանահ խանը մինչև այժմ մի ոսկի էր առանց դրամի դրոշմի, մենք եկանք այն դրամ դարձրինք ու վերադարձանք»<sup>240</sup>: Լեոն Հաջի Չելեբի խանի թևավոր խոսքը ներկայացրել է այլ ձևով. «Մինչև այժմ, ասել է Շիրվանի տերը, Փանահը մի դրամ էր առանց գրի (սիքի), մենք եկանք և տվինք նրան նաև գրեր»<sup>241</sup>: Նույն դեպքը Ֆիրուզին Շուշինսկին՝ նկարագրելով, մեջբերել է Միրզա Ջամալի խոսքը. «Փանահը խան է եղել: Մենք եկանք և կովեցինք նրա դեմ և չկարողացանք հաղթել: Մենք վերադառնում ենք նրան դարձնելով շահ»<sup>242</sup>: Երեք հեղինակներն էլ նույն միտքը մեզ ներկայացրել են տարբեր ձևակերպումներով: Անկախ այդ ամենից՝ իրավացի էր Շիրվանի խանը: Այս հաղթանակն ավելի ոգևորեց Փանահին: Նրա հիմնական նպատակն էր տեր դառնալ լեռնային Արցախին՝ իր բազմահազար ոչխարների հոտերի համար ձեռք բերելով հարուստ արոտավայրեր: Փանահի այս ծրագիրը շարունակում է արդիական մնալ նաև այսօր, Կուր-Արաքսյան միջագետքում թափառող թուրքախոս նախկին ցեղերի մնացորդներից ձևավորման ընթացքի մեջ գտնվող ադրբեջանցիների համար, որոնք ամեն օր Բաքվից ի լուր աշխարհի դրա մասին են հայտարարում:

1751–1752 թվականներին Փանահն ամրացրեց Արցախի հյուսիս արևելքում գտնվող Տիգրանակերտ կամ Թառնակյուտ բերդամրոցը, որն այդ ժամանակներում կոչվում էր Շահբուլաղ, և այստեղից հարձակումներ էր գործում Խաչենի ու Ջրաբերդի մելիքությունների վրա: Խամսայի մելիքները, չհանդուրժելով նորաբույս խանի համարձակ քայլերը, Խաչենի մելիք Ալլահվերդու գլխավորությամբ գրավեցին Տիգրանակերտը՝ Փանահին հալածելով Արցախի լեռնային հատվածներից: Ահա այս հակամարտությունների պայմաններում Ղարաբաղում տեղի են ունենում այնպիսի իրադարձություններ, որոնք համահունչ պետք է լինեն Փանահի նկրտումներին:

<sup>240</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 49:

<sup>241</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 3-րդ, գիրք 2-րդ, էջ 265:

<sup>242</sup> Шувшинский Ф., Шуша, стр. 5.

Իրանում ստեղծված անիշխանության պայմաններում Խամսան արագորեն գահավիժում էր, և առիթ էր պետք՝ ուշ միջնադարյան հայկական այս պետականության վերջին բեկորին վերջ տալու համար:

Առիթը հայ մելիքների ներքին գոտություններն էին: 1751 թ. Վարանդայի մելիքանիստ Ավետարանցում տեղի ունեցավ մի ընտանեկան սպանդ, ինչը հեղաբեկիչ դեր պետք է ունենար Ղարաբաղի հետագա ողջ անցքերի վրա և ճակատագրական պիտի դառնար արցախահայության համար:

Վարանդայի մելիք Հուսիկի (Հուսեյնի) մահվանից հետո, հին սովորության համաձայն, իշխանությունն անցավ ավագ որդուն՝ Հովսեփին: Վերջինիս կրտսեր եղբայր Շահնազարը, որը փառասեր անձնավորություն էր, չհանդուրժելով մելիք Հովսեփի իշխանությունը, դավադրաբար իր ձեռքով սպանեց եղբորը՝ չխնայելով նրա ընտանիքի անդամներին: Շահնազարի մեջ խոսեց թուրքի պիղծ արյունը, որը տակնուվրա արեց Խամսայի մելիքների կուռ միասնությունը: Ավանդության համաձայն՝ Հովսեփը մելիք Հուսիկի (Հուսեյնի) առաջին կնոջ՝ Աննայի որդին էր, որը Դիզակի մելիք Ավանի քույրն էր, իսկ Շահնազարը ծնվել էր Նախիջևանի խանի դուստր Զոհրա խանումից:

Ի դեպ, վերոնշյալ դեպքերի մանրամասները մեզ է թողել մեծ պատմավիպասան Րաֆֆին<sup>243</sup>, որն էլ հետագայում գերիշխող դարձավ հայ պատմագրության մեջ: Սակայն որոշ հեղինակներ այս տեսակետը չեն ընդունում՝ գտնելով, որ մելիք Շահնազարը մելիք Հովսեփին չի սպանել և Վարանդայի օրինական իշխանությունը պարզապես իրեն էր պատկանում<sup>244</sup>:

Չխորանալով այս տեսակետերի մեջ, պարզապես ընդգծենք. անկախ նրանից, թե մելիք Շահնազարը ինչ ճանապարհով էր դարձել Վարանդայի տերը՝ իր անխոհեմ քայլերով կործանարար դերակատարություն է ունեցել արցախահայության համար:

Ավետարանցում տեղի ունեցած եղեռնագործությունը Շահնազարի դեմ հանեց Խամսայի ավանդապահ մելիքներին, և վերջիններս միաբանվեցին՝ նրանից վրեժխնդիր լինելու համար: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ Մելիք-Շահնազարյանները խնամիական կապեր ունեին Խաչենի և

<sup>243</sup> Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 165–395:

<sup>244</sup> Бабаян Д., Политическая история Карабахского ханства в контексте Арцахской дипломатии XVIII века, Ереван, 2007, стр. 88–89; Чобанян П., Проблема легитимности Карабахских ханов в контексте политической истории Шуши, «Աշխատանքային տետրեր», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված 1–2 (25–26), Երևան, 2013, էջ 10–29; Мелик-Шахназаров А., Владетели Варанды на службе империи, стр. 41–42.

Ջրաբերդի մելիքների հետ: Սպանված մելիք Հովսեփը Խաչենի մելիք-Ալլահվերդի Հասան-Ջալալյանի փեսան էր:

Գյուլիստանի Մելիք-Բեգլարյան մելիք Հովսեփը, Ջրաբերդի Մելիք-Իսրայելյան Ալլահ-Ղուլի սուլթանը, Խաչենի մելիք Ալլահվերդի Հասան Ջալալյանը և Դիզակի Մելիք-Ավանյան մելիք Եսային պաշարեցին Ավետարանոցը, սակայն մելիք Շահնազարը տեղի չտվեց, և բերդը չգրավվեց:

Ժամանակն ու իրավիճակը գործում էին հոգուտ մելիք Շահնազարի և Ղարաբաղի դաշտավայրային հատվածում թափառող ու Արցախում տեղի ունեցող զարգացումներին հետևող Փանահ խանի:

Հայ մելիքների գծությունից օգտվելով՝ Փանահը որոշեց առաջին հարվածը հասցնել մելիք Շահնազարի ամենահիմնական հակառակորդին՝ մելիք Ալլահվերդի Հասան Ջալալյանին: Մանավանդ, մելիք Ալլահվերդու մոտ էր գտնվում մելիք Շահնազարի եղեռնագործությունից փրկված միակ թոռը: Սկզբում մելիք Ալլահվերդուն հաջողվեց ջախջախել Փանահի ելուզակներին: Խորամանկ խանը, ետ նահանջելով դաշտավայր և ուժերը վերախմբավորելով, մեծ կորուստներ պատճառեց հայերին: Մելիք Ալլահվերդին ստիպված քաշվեց լեռնաստան և ամրացավ Ուլուպապ բերդում: Ուլուպապի պարիսպների տակ տեղի ունեցավ վճռական ճակատամարտը: Հայերը պարտվեցին՝ տալով 300 զոհ: Այդ պարտությունը կործանարար եղավ Հասան-Ջալալյանների համար: Փանահ խանը նրանց իշխանությունից զրկեց և Խաչենը հանձնեց ծագումով խնձրիստանցի Միրզախանին, որը մինչև իր կյանքի վերջը հավատարմորեն ծառայեց Փանահին:

Այդ դեպքերից հետո մելիք Շահնազարն ավելի սերտորեն սկսեց համագործակցել Փանահի հետ: Իբրահիմ խանի պալատական պատմիչ և վեզիր Միրզա Ջեմալ Ջևանշիրը պատմում է, որ ռազմավարական նշանակության կարևոր հարցերը Փանահը քննարկում էր մելիք Շահնազարի հետ<sup>245</sup>: Վարանդայի տերը նպատակ ուներ Փանահի միջոցով շարքից հանել իր մյուս երեք մրցակիցներին՝ Դիզակի, Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքներին: Նենգադավ քոչվորին՝ Փանահին հայ մելիքների փառքը, տիրական դիրքը և Արցախի դրախտային հողն ու ջուրը հանգստություն չէին տալիս:

Մելիք Շահնազարը, լավ իմանալով Փանահի նկրտումները, օգտագործեց նրան և, որպես վարձատրություն, վերջինիս նվիրաբերեց Շուշիի անմատչելի հին բերդը: Քանի որ մելիք Շահնազարի նստավայրերից մեկը տեղակայված էր Շուշիի արևմտյան ամենաբարձր հատվածում, ուստի նա սկզբում Փանահին տրամադրեց ներկայիս քաղաքի արևելյան՝ ներքևի մասը: Դրա համար մելիք Շահնազարը Փանահից ստացավ վեց հազար թու-

ման<sup>246</sup>: Սա էլ բավարար էր, որպեսզի նա կարճ ժամանակահատվածում այն վերածեր անմատչելի ամրոցի:

Վարանդայի տիրոջ այս նոր դավաճանական քայլն ավելի սաստկացրեց Արցախի ներքաղաքական կացությունը: Ընդհարումները դարձան ավելի համառ և դաժան: Մելիք Շահնազարն ու Փանահը, հայ մելիքներին դիմագրավելու համար, սկսեցին վերակառուցել ու ավելի ամրացնել բերդը: Մելիք Շահնազարն իր ձեռքով դրեց նրա առաջին քարը, որն «իր և ամբողջ Ղարաբաղի մելիքությունների գերեզմանը դարձավ»<sup>247</sup>: Իսկ Շուշին, լինելով Արցախի սրտում, ավելի քան տիրական դիրք ուներ. «այդ բերդը դառնում է Փանահ խանի համար մի անխորտակելի գեներ՝ մի մեծ իշխանություն նվաճելու համար: Եթե Շահրուլաղում նախկին սարուջալլի ավազակապետը թույլատրելի էր համարում մտածել մի իշխանության մասին, - գրել է Լեոն, - որին ենթարկված կլինեին Ջիվանշիրի դաշտավայրերը, ապա Շուշու ահարկու ամրությունների գլխից նրա առաջ բացվում էին տիրապետական անհուն հորիզոններ - հարավում՝ մինչև Նախիջևան, արևմուտքում՝ մինչև Սևանի լիճը, հյուսիսում՝ մինչև Գանձակ և արևելքում՝ մինչև այն տեղն, ուր Կուրն ու Արաքսը խառնվում են իրար: Եվ այս ձգտումը երազ չմնաց խանի համար, այլ իրագործվեց շնորհիվ հենց այն հանգամանքի, որ նրա ձեռքում գտնվում էր Շուշիի բերդը»<sup>248</sup>:

Մելիք Շահնազարն ու Փանահն արագաթափ սկսեցին բերդի վերակառուցման աշխատանքները: Շինարարության վրա հիմնականում հայեր էին աշխատում, որոնց մելիք Շահնազարը հավաքագրել էր Վարանդայի գյուղերից:

Հայ մարդու ձեռքերով Արցախի սրտում առավել ամրացվում էր մի բերդավան, որը դարեր շարունակ, քաղաքական առումով, արհավիրքներ պետք է բերեր այդ նույն ժողովրդին:

Պատմագիտության մեջ տիրապետող է այն կարծիքը, որ Շուշիի բերդը Փանահի կողմից վերակառուցվել է 1752-1754 թվականներին<sup>249</sup>: Սակայն պետք է նկատել, որ դեպքերի ժամանակակիցներ Միրզա Ջեմալ Ջևանշիրը, որը Իբրահիմ խանի վեզիրն էր և պալատական պատմիչը, Միրզա Ադիգյոզալ-բեկը, որը Մեհտի-Ղուլի խանի մոտ էր պաշտոնավարել, իրենց աշխատությունների մեջ գրել են, որ Փանահը Շուշին սկսել է վերակառուցել հիջրեթի 1170 թվականին, որը համապատասխանում է քրիստոնեական

<sup>246</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 200:

<sup>247</sup> Բեկնազարյան Ա., Գաղտնիք Ղարաբաղի, էջ 72-73:

<sup>248</sup> Լեոն, հ. 3, գիրք 2-րդ., էջ 267-268:

<sup>249</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 206; Լեոն, հ. 3, գիրք 2-րդ., էջ 267; ՀժՊ, հ. V, էջ 194, Սևյան Վ., Շուշի, էջ 28; Шушинский Ф., Шуша, стр. 6.

<sup>245</sup> Мирза Джемал Джевандшир, стр. 20.

թվականության 1756–1757 տարիներին<sup>250</sup>: Ահմեդբեկ Ջևանշիրը, որը Փանահի տոհմից էր, հետագայում իր աշխատության մեջ վերահաստատել է երկու թուրք պատմագիրների կարծիքը<sup>251</sup>:

Վերոհիշյալ թուրք պատմագիրների կարծիքներն ավելի հավանական են, որովհետև տվյալ ժամանակաշրջանում շինարարական արվեստին վերապահված սակավ հնարավորություններով հագիվ թե հնարավոր լինե՞ր երկու տարում կառուցել արևելքից և հյուսիս արևելքից Շուշին շրջափակող պարիսպները:

Եկվորների կողմից բերդավանը հորջորջվեց Փանահաբադ, բայց տոհմիկ հայությունը դա չընդունեց և շարունակեց այդ բնակավայրն անվանել Շուշի, իսկ հետագայում էլ իրենց կողքին հայտնված նոր հարևանների ազդեցության տակ էլ՝ երբեմն Շուշվա դալա (Շուշիի բերդ):

Մելիք Շահնազարի դավաճանական քայլով պատմության մեջ առաջին անգամ թուրքը փորձեց բնավորվել Ղարաբաղում: Սակայն այնքան օտար էր Արցախի համար նորեկ բռնավորը, որ Փանահն անգամ իր տոհմային գերեզմանատուն ընտրեց Խաչենի իշխանից գնած Աղդամը:

Հայկական, վրացական, պարսկական և ռուսական աղբյուրները միաբերան վկայում են, որ մինչև 18–րդ դարի կեսերը Լեռնային Ղարաբաղում թաթարներ և այլազգի մուսուլմաններ չեն եղել<sup>252</sup>:

Փանահի՝ Շուշիում հայտնվելու փաստին և դրան հարակից իրադարձություններին անդրադարձել է ամերիկացի ճանապարհորդ Սմիթը, որը բերդավանում եղել է 1830 թ.. «Շուշին կենտրոն է Ղարաբաղի նահանգի, որն ընդգրկում է հնագույն Փայտակարանը, ինչպես նաև Ուտիքի, Արցախի և Սյունիքի որոշ հատվածներ, և զբաղեցնում է Քուռի ու Արագի միջև ընկած տարածությունը նրանց միախառնման կետում ...: Նադիր շահի իշխանության օրոք՝ գրեթե ավելի քան 80 տարի առաջ, հայ իշխանները, ովքեր մի տեսակ անկախության էին հասել նահանգի լեռներում, սակայն միմյանց հետ տարաձայնություններ ունեին, ստիպված էին տեղի տալ այս նվաճողի ուժին և ճանաչել ինչ–որ մահմեդական խանի իշխանությունն իրենց նկատմամբ: Վերջինս կառուցում է Շուշի քաղաքը և այն անվանում Փենահաբադ կամ Փենահի քաղաք: Այս անունն այժմ գրեթե մոռացության է մատնված հարևան մի գյուղից փոխառված Շուշի–քալասաի (կամ Շուշի բերդ) անվան պատճառով, որն ավելի տարածված ու կիրառելի է ...»<sup>253</sup>:

Փանահը, Շուշիում իրեն ապահով զգալով, շուտով իրեն հոչակեց Ղարաբաղի խան: Նորաստեղծ խանությունն ուներ խիստ ռազմավարական դիրք և Իրանի հետ Այսրկովկասը կապող ամենահիմնական օղակն էր: Պատահական չէր, որ պարսից արքունիքը Ղարաբաղի խանության նկատմամբ վարում էր մտրակի և մեղրաբլիթի քաղաքականություն. մերթ խաներին կոշտ մեթոդներով իրենց էին ենթարկեցնում, երբեմն էլ տրվում էին հավելյալ առանձնաշնորհներ՝ հարևան խաներին վերջիններիս գերիշխանության տակ դնելով:

1751 թ. Մուհամեդ Հասան խան Ղաջարը մեծաքանակ զորքերով շարժվում է դեպի Շուշի, սակայն բերդը չի կարողանում գրավել: Միրզա Ջեմալ Ջևանշիրը, նկարագրելով այդ իրադարձությունները, գրել է, որ Ղարաբաղի քաջ բնակիչները, առանց նշելու ազգային պատկանելությունը, քշում տանում են պարսից բանակի ձիերն ու անասունների հոտերը, որի հետևանքով նրանք մեծ կորուստներ են կրում<sup>254</sup>: Շուտով Իրանում Մուհամեդ Հասան խանի դեմ ապստամբում է Քերիմ Ջենդ խանը, և նա ստիպված հեռանում է Ղարաբաղից:

Միրզա Ջեմալ Ջևանշիրը գիտակցաբար Շուշիի բնակիչների ազգային պատկանելության մասին չի խոսում, որովհետև 1751 թ. Շուշիում միայն հայեր էին ապրում:

Փաստորեն, սա այն ժամանակաշրջանն էր, երբ Փանահը հաստատվել էր Տիգրանակերտում և, համագործակցելով մելիք Շահնազարի հետ, մտնում էր հաստատվել Շուշիում:

Փանահ խանը, մելիք Շահնազարի աջակցությամբ, հաջողությամբ դիմակայելով պարսից խաների ճնշումներին և օրեցօր ավելի ամրացնելով Շուշին, այս անգամ ձեռնամուխ եղավ իր հիմնական ախոյանների՝ Արցախի մելիքների ոչնչացման գործին:

Խաչենից հետո Փանահ խանի հաջորդ գոհը դարձավ Ջրաբերդի մելիքությունը: Փանահը հարձակվեց Ջրաբերդի վրա: Մելիք Ալլահ–Ղուլի սուլթանը հետ մղեց թշնամուն: Փանահ խանը, տեսնելով, որ հայ մելիքին ուժով ընկճելը անհնարին է, դիմեց խարդավանքի: Մելիք Ալլահ–Ղուլու զգոնությունը թմրեցնելու նպատակով Փանահը «բարեկամության» ձեռք մեկնեց նրան: Մելիք Ալլահ Ղուլին, միամտաբար հավատալով Փանահին, մեկնում է Ամարաս՝ նրա հետ բանակցելու: Այդ ժամանակ Նախիջևանի Հեյդար Ղուլի խանը գտնվում էր Փանահի մոտ: Երբ Ալլահ Ղուլի մելիքի փառահեղությունն ու հաստատակամությունը տեսնում է, Փանահ խանին ասում է. «Այդպիսի փառավոր անձը քեզ չի ծառայի, և երկու իշխան մեկ երկիրը չի

<sup>250</sup> Мирза–Агурезаль–Бек, Карабаг–наме, стр. 60; Мирза Джамамал Джеваншир, стр. 20.

<sup>251</sup> Ахмедъ–бекъ Джеванширъ, стр. 21, 72.

<sup>252</sup> Բախյան Վ., Արցախի պատմություն, էջ 131:

<sup>253</sup> Reseaches of the Rev. E. Smith and Rev. H.G.O. Dwight in Armenia ..., pp. 280.

<sup>254</sup> Шушинский Ф., Шуша, стр. 7:

ունենա: Ելքն այն է, որ դաշտյնիդ սայրը նրա կոկորդը խրես և Ամարասի սև հողը նրա արյամբ վարդագույն ներկես: Չէ՞ որ թակարդն ընկած որսը ձեռքից բաց թողնելը իմաստուններին վայել չէ»<sup>255</sup>: Այս դեպքը Լեոն նկարագրելով, Հեյդար Ղուլի խանի խոսքերը մի քիչ խմբագրած, վերագրում է մելիք Շահնազարին<sup>256</sup>:

Այս խորհուրդը Փանահը լսելով՝ հայ մելիքին ձերբակալեց և մահախեղդ արեց Շուշիի բանտում<sup>257</sup>:

Նահատակված մելիքի պայքարը շարունակում է նրա եղբայրը՝ մելիք Հաթամը (Ադամը): Պատերազմական գործողությունները նոր թափ ու ընթացք ստացան: Ջինարախումները հիմնականում տեղի էին ունենում Ջրաբերդի շրջակայքում: Անհավասար գոտեմարտում ուժերը խնայելու և հետագա պայքարը շարունակելու նկատառումով մելիք Ադամը նահանջում է Գյուլիստան և միանում իր դաշնակից մելիք Հովսեփին: Արյունահեղ ռազմական գործողությունները տեղափոխվեցին Գյուլիստանի մելիքության սահմանները: Այն ընթանում էր փոփոխական հաջողություններով: Պատերազմների թոհուրոհի մեջ ծնվեցին հերոսներ Թյուլի-Արզումանը, Դալի-Մահրասան, Չալաղան յուզբաշին, որոնց քաջարի ու դյուցազնական արարքները դարեր շարունակ երախտապարտ ժողովուրդը պահել է իր հիշողության մեջ և բերնեբերան փոխանցել սերունդներին, որոնց գործերով ոգևորված՝ այսօր հայ ռազմիկն անսասան է պահում հայրենի սահմանները: «Պատմում են, Արզուման անունով մեկը այդ ժամանակ, իր շուրջը համախմբելով մի խումբ քաջերի, այն վայրերում խիզախ արարքներ էր գործում: Փանահ խանի դեմ թշնամություն էր անում և նրա ստորադասներին վնասներ հասցնում: Մի անգամ Փանահ խանը Արզումանի հորն ասում է. «Ինչո՞ւ որդուդ չես խրատում, որ իր չարագործություններին վերջ տա ու այս կոիվներից ձեռք քաշի»:

Նա պատասխանում է. «Արզումանը իմ որդին չէ, քանի որ, եթե իմ որդին լիներ, ոչ մեկին չէր թողնի, որ Շուշիի բերդից դուրս գա»:

Մի անգամ էլ Փանահ խանը Չերաղ բեկ անունով մեկին հեծյալների մի խմբով ուղարկում է, որ գնան, Արզումանին մի հնարով բռնեն: Արզումանը, այդ լսելով, գալիս է նրա հեծյալների խումբը ցաքուցրիվ անում, իսկ իրեն՝ Չերաղ բեկին՝ գերում: Հաջորդ օրը նրա վրա նշան բռնելով՝ ասում է. «Կամ ընդունիր՝ որ Հիսուսն է Աստվածը, կամ էլ կրակում եմ»:

Չերաղն ընդունում է, որ Հիսուսն է Աստվածը, որից հետո Արզումանը նրան ազատ է արձակում: Երբ Չերաղը Փանահ խանին է ներկայանում, նրան (խանը) այսպես է դիմում. «Չամաչեցիր, որ մի կաթիլ արյան համար Հիսուսին Աստված անվանեցիր»:

Չերաղը բացատրում է. «Ո՛վ խան, եթե Արզումանին այնքան վճռական ու ահեղ, որ ես տեսա ու Հիսուսին Աստված կոչեցի, դու տեսներ, իրեն՝ Արզումանին, Աստված կկոչեիր»<sup>258</sup>:

Չնայած մելիք Հաթամն ու մելիք Հովսեփը համառորեն դիմադրում էին, այնուամենայնիվ, ստիպված էին տեղի տալ և ժամանակավորապես իրենց զինակիցների հետ տեղափոխվել Գանձակի Շահվերդի խանի մոտ, որը թշնամական հարաբերություններ ուներ Փանահի հետ: Շահվերդի խանը, հայ մելիքների զինական ուժն օգտագործելու նպատակով, մելիք Հովսեփին և մելիք Հաթամին բնակության վայր է տալիս հայկական Շամխոր գավառում:

Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքություններին մահացու հարվածներ հասցնելուց հետո Փանահն ամբողջ ուժով նետվեց Դիզակի մելիքության վրա: Փանահն իր դաշնակցի՝ մելիք Շահնազարի հետ մեկտեղ, մի քանի անգամ պաշարել է մելիք Եսայու Տող բերդավանը, բայց, խայտառակ պարտություն կրելով, հետ է նահանջել: Ճակատամարտերից մեկի ժամանակ Փանահ խանը նույնիսկ վիրավորվեց, բայց չընկճվեց: Փանահ խանի օրեցօր աճող ու զորեղացող ուժի պայմաններում մելիք Եսային գերադասեց հաշտություն առաջարկել: Պատերազմական գործողությունները դադար առան: Թուրք հեղինակ Միրզա Ջեմալ Ջևանշիրն ասում է, թե մելիք Եսային գնաց Փանահ խանի մոտ, բայց վերջինս դավաճանորեն սպանել տվեց նրան<sup>259</sup>: Բայց դա սխալ է: Մելիք Եսայու տապանագիրը վկայում է, որ նա ապրել է մինչև 1781 թ., իսկ Փանահը մահացել է 1762 թվականին<sup>260</sup>:

Եթե Փանահին հաջողվեց խաչենի և Վարանդայի մելիքություններն իր գերիշխանության տակ առնել, ապա նույնը չի կարելի ասել Դիզակի, Ջրաբերդի և Գյուլիստանի մասին: Ճիշտ է, նրանք մի պահ ընկճվել էին, բայց չիրաժարվեցին պայքարից ու ամեն առիթ օգտագործում էին Փանահին և նրա ժառանգ Իբրահիմին հարվածելու համար:

Փանահ խանը քաջ գիտակցում էր, որ Արցախի մելիքները, չնայած օտարության մեջ, այնուամենայնիվ, հայրենիքն ազատագրելու համար շարունակելու են պայքարը: Դա կանխելու, իր դիրքերն Արցախում ամրապնդելու և էթնիկ հենարան ստեղծելու համար Վրաստանից, Նախիջևանից և Միլ-

<sup>255</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 51:

<sup>256</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2-րդ, էջ 268:

<sup>257</sup> Карабах, сочинение Джемелия Джеваншира Карабаги, стр. 11-12.

<sup>258</sup> Ներսիսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 52:

<sup>259</sup> Карабаг, сочинение Джемала Джеваншира-Карабаги, стр. 14:

<sup>260</sup> Լեո, հ. 3, գիրք 2-րդ, էջ 271:

Մուղանի տափաստանում վխտող կարաչորլու, ջինլի, դամիրչի-հասանլի, դրզըլ-հաջիլի, սաֆի-քյուրդ, բոյահմեդլի, սահաթլի, քենգերլի և այլ շատ թափառական ցեղերի փոխադրեց Ղարաբաղ: Դրանց բնակեցրեց Շուշիի շրջակայքում և դաշտային Ղարաբաղից Շուշի տանող ճանապարհների երկայնքով: Դրանց մեծ մասը ժամանակի ընթացքում անցան նստակեցության: Ստեղծվեցին համանուն թուրքաբնակ գյուղեր: Արցախյան պատերազմի տարիներին այդ բնակավայրերը վերածվեցին ավազակորջերի, որտեղից օր ու գիշեր կրակ էին թափում հայկական բնակավայրերի վրա: Միաժամանակ Շուշիի արևելյան ստորին հատվածում ստեղծվեցին մահմեդականներով բնակեցված՝ Ղուրթլար, Ջուլֆա, Ղուլլուղ, Չուխուր, Հաջի Յուսեֆլու, Մարդինլու, Ջուղլար, Սաաթլու, Մամահին, Խոջե մարջանլու թաղամասերը<sup>261</sup>:

Չնայած նրանք տեղափոխվել էին քաղաքատիպ բնակավայր, այնուամենայնիվ, շարունակում էին ապրել քոչվորական կյանքով: Պատահական չէ, որ թուրքերով բնակեցված Շուշիի այդ հատվածը խորհրդային տարիներին շարունակել է կոչվել «քյոչալիլար մահլասի» (քոչվորների թաղամաս): Շուշիի մահմեդական գերեզմանատանը պահպանված շիրմաքարերը վկայում են, որ նրանք հայկական բնակավայր են հասել անգամ Իրաքից, Պարսկաստանից և պատկանում են քերթալա, մաշադի, դաջար ցեղախմբերին<sup>262</sup>:

Տիրելով Ղարաբաղի սրտին՝ Շուշիին, Փանահին իր եկամուտները մեծացնելու նպատակով ձգտում էր ունենալ քաղաքային կենցաղով բնակավայր և քայլ առ քայլ բերդավանդ դարձնել Արցախի վարչական և տնտեսական կենտրոն: Սակայն գյուղական ապրելակերպ դավանող և մաքրամաքուր բարոյական նորմերով ու ավանդույթներով ապրող ղարաբաղցիները ստեղծափոխվեց Շուշի: Եվ ոչ միայն դա:

Փանահ, իսկ հետագայում Իբրահիմ խաներն այնքան դաժանություններ էին սփռել Արցախի գավառներում, որ հայ ազգաբնակչությունը ոչ միայն ցանկություն չունեի տեղափոխվել Շուշի, այլև նախկինում իրենց պաշտպան բերդավանին արդեն դիտում էին որպես թշնամական կենտրոնի: Մի առիթով Լենոն Շուշիի հարևանությամբ գտնվող Շոշ գյուղի բնակչության մասին գրել է. «Շատ երկար ժամանակ, համարեա մինչև ռուսների տիրապետութիւնը, արհամարանքով էր վերաբերում իր առջև բարձրացած բերդին և նրա բնակիչները չէին ուզում տեղափոխուել բերդը: Այս հանգաման-

<sup>261</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 57:

<sup>262</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 267-268:

քը հասկանալի է և անկախ այն տխուր ճակատագրական դերից, որ կատարեց Շուշին Ղարաբաղի հայութիւնը կործանելու գործի մէջ»<sup>263</sup>:

Երբ 1919-1920 թվականներին Խոսրով Բեկ Սուլթանովը հայտնվեց Շուշիում, և բերդաքաղաքը նորից վերածվեց հայության համար չարիքի, Լենոն, նորից մտովին վերադառնալով 18-րդ դարի կեսերի զարգացումներին, Թիֆլիսում հայրենակցական միության նիստում ասել է. «Գյոռքագյոռ լինի մելիք Շահնազարը, որ դավաճանությամբ հիմք դրեց Շուշվա բերդին՝ օձը տեղավորելով Ղարաբաղի սրտում: Ղարաբաղի համար Շուշին մի դժբախտություն է եղել՝ նրա հիմնադրության օրից սկսած: Աղբբեջանը նրա միջոցով միշտ աշխատել է ոչնչացնել Ղարաբաղը: Դավաճանությամբ հիմք դրած այդ բունը դավաճանությամբ էլ պետք է կործանվի»<sup>264</sup>: Իհարկե, դա չի նշանակում, որ քննարկվող ժամանակաշրջանում Շուշիում հայեր չկային: Նախորդ գլխի մեջ արդեն փաստերով ներկայացվել է, որ հնագույն ժամանակներից այստեղ հայեր էին ապրում և ուժերի գերլարումով շարունակում էին մնալ նաև Փանահի ժամանակ:

Մյուս կողմից էլ մելիք Շահնազարը, Փանահին հակակշիռ ստեղծելու և նրա վրա ազդեցություն ունենալու նպատակով, իրեն հպատակ Վարանդայի գյուղերից հայեր է տեղափոխել և բնակեցրել Շուշիի արևմտյան վերին մասում: Հայերի մի հոծ զանգված էլ, Ջրաբերդի մելիք Հաթամի դեմ պատերազմի ընթացքում, Փանահը և մելիք Շահնազարը գերիների կարգավիճակով էին տեղափոխել բերդավան: Այդ ամենի հիմքերի վրա ձևավորվեց Շուշիի Ղարաբաղցոց թաղամասը:

Բայց սա դեռ մի փոքր մասն էր: Արցախի հարևանությամբ գտնվող հայկական մեկ այլ երկրամասում տեղի էին ունենում իրադարձություններ, որոնք էլ Շուշիի հայկական թաղամասի ավելացման նոր պատճառ դարձան:

1750 թ. Նախիջևանի Շահկերտ կամ Ղազանչի գյուղի հայերը, չդիմանալով Հեյդար խանի ճնշումներին, Հովհաննես Խանդամիրյանի գլխավորությամբ ապստամբում են նրա դեմ<sup>265</sup>: Նախիջևանի խանը, չկարողանալով ձնշել ապստամբությունը, դիմում է խարդավանքի: Հաշտություն է կնքում նրանց հետ և քիչ անց սպանում նաև շահկերտցիների առաջնորդին՝ Հովհաննես Խանդամիրյանին: Ջրկված լինելով առաջնորդից և հետագա հալածանքներից խուսափելու համար շահկերտցիները տեղափոխվում են Կապան: Այդ ժամանակ Նախիջևանի տիրոջ հակառակորդ Փանահ խանը,

<sup>263</sup> Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913, էջ 61:

<sup>264</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 396:

<sup>265</sup> Չանջեանց Մ., Հայոց պատմություն, հ. Գ, էջ 848:



հետամուտ իր տարածքների ընդլայնման քաղաքականության իրագործմանը, ընդունում է շահակերտցիների առաջարկը և համատեղ ուժերով, պարտության մատնում Հեյդար խանին:

Փանահին հաջողվեց Հեյդար խանից խլել Բարգուշատը, Կապանը, բուն Զանգեզուրը և Սիսիանը: Սակայն երկու խաների միջև կնքված հաշտության պայմանագրով որոշ տարածքներ նորից վերադարձվում են Նախիջևանի տիրոջը: Հեյդար խանի վրեժխնդրությունից խուսափելու նպատակով Ղազանչի գյուղի բնակիչները գաղթում են Շուշի, և այդպես ձևավորվում է Ղազանչեցոց թաղամասը:

Շահակերտցիների ճակատագրին արժանացավ նաև Հին Ջուղայի հարևանությամբ գտնվող վաճառաշահ Ագուլիսի հայությունը: 1752 թ. Ազատ խանն ավերեց Ագուլիսը: Բնակչության մի մասը սպանվեց, իսկ մյուսներին էլ գերի տարան կամ վաճառեցին<sup>266</sup>: Ագուլիսի ցաք ու ցրիվ դարձած բնակչության մի զգալի մասն իր հայրենակիցների՝ շահակերտցիների օրինակով, տեղափոխվեց Շուշի՝ հիմք դնելով Ագուլեցոց թաղամասի: Համարյա թե նույն ժամանակաշրջանում Մեղրիից այստեղ է տեղափոխվում հայության մի հոծ զանգված և հիմք դնում Մեղրեցոց թաղամասին:

Շուշիի ամեն մի թաղամասը կառավարվում էր քյանդխուդանների միջոցով:

Եկվորներն ունեին տարբեր սովորույթներ ու բարբառներ, որի հետևանքով բավականին երկար ժամանակ ապրում էին առանձին թաղերով: Նրանք ունեին իրենց եկեղեցիները և ուսումնական ու մշակութային հաստատություններ:

Փանահ խանն այս ամենը ձեռնարկելով, Շուշիում քաղաքային միջավայր ստեղծելուց բացի, լուծեց նաև մի քանի այլ խնդիրներ.

ա) բերդաքաղաքը բնակեցրեց համեմատաբար իրեն հնազանդ հայերով, նրանց անհրաժեշտության դեպքում հակադրելով Արցախի բնիկներին և, ինչու չէ, երբեմն էլ իր ցեղակիցներին:

բ) վերոհիշյալ բնակավայրերի հայությունն ուներ քաղաքային ապրելակերպ և հմուտ էր արհեստների ու առևտրի մեջ: Նրանց վաստակածով լցվում էր խանական գանձարանը:

Իր տիրական դիրքն ընդգծելու համար Փանահ խանն սկսեց նաև դրամ հատել: Դրանք կոչվում էին «Փանահաբադ»: Դրամներն արծաթից էին և արժեին 15 կոպեկ<sup>267</sup>: Այն կշռում էր մեկ մետղալից քիչ ավելի՝ արծաթով:

<sup>266</sup> Չամչեանց Մ., Հայոց պատմություն, հ. 9, էջ 854:

<sup>267</sup> Ахмед-бек Джеваншир, О политическом существовании Карабагского ханства, стр. 15.

Դրամի մի կողմում փորագրված էր. «Չկա Աստված բացի Ալլահից, Մուհամմադն է նրա մարգարեն»: Դրա վեց հատը մեկ ռուսական դրամի արժեք ուներ, իսկ ութ հատն անվանում էին Ղարաբաղի թուման<sup>268</sup>: Օրեցօր հզորացող և հարստացող խանը, Շուշիում իրեն վստահ զգալով, փորձում էր իր ուժերը չափել Այսրկովկասի պարսկահպատակ խաների հետ: Նա Ղարաբաղի Քազիմ խանին, Նախիջևանի Հեյդար խանին ու Գանձակի Շահվերդի խանին հորդորում է հարձակվել Շիրվանի և Դաղստանի տեր Հաջի Չելեբիի տիրույթների վրա: Վերոհիշյալ խաներն իրենց մտադրության մասին հայտնում են Վրաստանի Հերակլ թագավորին: Վերջինս համաձայնում է միանալ այդ արշավանքին: Դաշնակիցները իրար են հանդիպում Գանձակի մոտ, Ղըզըլ-Ղայե կոչված վայրում: Հերակլն անսպասելիորեն փոխում է իր մտադրությունը և ձերբակալում չորս խաներին: Այս անգամ երեկվա թշնամիները դառնում են դաշնակիցներ:

Գանձակի Շահվերդի խանի խնդրանքով Հաջի Չելեբին զորքերով անցնում է Կուրը և Գանձակի մոտ՝ Նիզամի Գյանջևիի դամբարանի շրջակայքում ջախջախում Հերակլին ու ազատում խաներին<sup>269</sup>:

Երեք տարի անց Հերակլը, մեծաքանակ զորքեր ժողովելով, դաշնակցելով չերքեզների հետ, հարձակվում է Գանձակի ու Ղարաբաղի վրա և հասնում մինչև Արաքս գետը՝ Խուդափերենի կամրջի շրջակայքը: Ընչաքաղց Փանահի արկածախնդրության հետևանքով ավերվում են հայկական բնակավայրերը: Անընդհատ կրկնվող պատերազմներն ու արշավանքները հյուծում էին Արցախի և Ուտիքի հայությանը: Նրանք ստիպված էին կովել երկու ճակատով՝ Փանահի և Այսրկովկասի, Պարսկաստանի ու Թուրքիայի մյուս տիրակալների դեմ:

1756 թվականին Ուրմիայի Ֆաթալի խանը, որ Նադիր շահի ամենահայտնի հրամանատարներից է եղել, հարձակվում է Շուշիի վրա: Փանահ խանը ստիպված ընդունում է նրա գերիշխանությունը<sup>270</sup>:

Ֆաթալի խանի Ղարաբաղից հեռանալուց հետո Փանահը նորից որոշակի ինքնուրույնություն ստացավ:

Ֆաթալի խան Ավշարը չմոռացավ Փանահի հանդգնությունը: Նա, օգտվելով Պարսկաստանում ստեղծված անիշխանությունից, Ազատ խանից հետ է գրավում Ատրպատականի մեծ մասը: Նա մի քանի անգամ փորձում է շարժվել դեպի Շուշի, բայց ամեն անգամ Ղարաբաղյան դաշտավայրում Փանահի և մելիք Շահնազարի միացյալ ուժերը հաղթում են նրան: Շուշին

<sup>268</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, Նշվ աշխ., էջ 55–56:

<sup>269</sup> Նույն տեղում, էջ 57–58:

<sup>270</sup> Исмаилов Э., Очерки по истории Азербайджана, стр. 147.

գրավելու համար Ֆաթալի խանը երեսունհազարանոց զորքով, որի կազմում էին նաև Ղարադաղի Քյազիմ խանի, Գյանջայի Շահվերդի խանի ու վրաց Հերակլ թագավորի ուժերը, 1761 թ. ձմռանը նորից շարժվում է դեպի Շուշի<sup>271</sup>: Դաշնակիցները բանակ են դնում Բալուջայի և Խոջալլուի միջև ընկած ընդարձակ դաշտում: Այստեղ Ֆաթալի խանն ամրություններ է կառուցում և որոշում է ձմեռն անցկացնել Շուշիից 20 կմ հեռավորության վրա:

Հայրենի գավառները հետ ստանալու ակնկալիքով Ֆաթալիի բանակին են միանում նաև աստանդական դարձած Ջրաբերդի մելիք Հաթամը և Գյուլիստանի մելիք Հովսեփը: Նրանք էլ իրենց համար են ամրություններ կառուցում, և վեց ամիս անց տեղի է ունենում վճռական ճակատամարտը: Թուրք պատմագիր Ահմեդ-բեկ Ջևանշիրն ասում է, որ Փաթալի խանի դեմ ելան Շուշիի հայերը, և Փանահի բարեկամ մելիք Շահնազարը, զորքերի գլուխ անցած, կոպեց դաշնակիցների դեմ ու, մինչև բերդավանին հասնելը, նրանց պարտության մատնեց: Գերվեցին երկու հազար հոգի<sup>272</sup>:

Փաստորեն, շուշեցի հայ մարդն իր արյունն անխոհեմ հեղում էր բռնակալ Փանահի իշխանությունն ավելի հզորացնելու համար: Դեպքերի ժամանակակից Մովսես Բաղրամյանը նկատել է, որ Փանահն իր նպատակներին հասնում է հայերի օգնությամբ, իր գանձարանը լցնում էր հայերից հավաքագրված հարկերի միջոցով: Հայերը ոչ միայն նրա ամրոցն էին անսասան պահում, այլ նաև նրա պալատի անդորրն էին հսկում: Խանի զորքերը հիմնականում կազմված էին հայերից<sup>273</sup>:

Եվ այդպես, շուրջ 50 տարի՝ մինչև 1805 թվականը, Շուշին հակադրվում էր ողջ Արցախին՝ հայության համար դառնալով չարիքի և դժբախտությունների կենտրոն:

Փաթալի խանը, համոզվելով, որ ուժի միջոցով անհնարին է հասնել հաջողության, մանավանդ՝ գրավել Շուշին, որոշում է դիմել խորամանկության: Նա Փանահ խանին առաջարկում է խաղաղություն հաստատել երկու կողմերի միջև և այն ամրապնդել իրենց գավակների՝ Իբրահիմ Խալիլ աղայի և իր դստեր ամուսնությամբ: Ֆաթալի խանը Փանահին ասում է. «Այսուհետև մեր միջև օտարություն չպետք է լինի, ուստի Ձեր արժանավոր գավակին՝ Իբրահիմ Խալիլ աղային, որին շատ եմ հավանել, մի քանի օրով մեզ մոտ ուղարկիր, որպեսզի մեր անկեղծ սիրով ու հյուրասիրությամբ պատվենք նրան»<sup>274</sup>: Փաթալի խանը սկզբում Իբրահիմ Խալիլ աղային հյուրընկա-

<sup>271</sup> Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, էջ 57-58:

<sup>272</sup> Ахмед-бек Джеваншир, О политическом существовании Карабахского ханства ..., стр. 47.

<sup>273</sup> Баграмян Мовсес, Новая тетрадь, Ереван, 1991, стр. 104.

<sup>274</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 60:

լեց իր զորակայանում, այնուհետև «պատվավոր գերու» կարգավիճակով իր հետ տարավ Ուրմիա: Նա Սյունիքի հայկական որոշ բնակավայրեր և Տաթևի վանքը թալանելով հասնում է Արաքսի ափը: Այդ ժամանակ Պարսկաստանի խաներից մեկը՝ Քերիմ Ջենդը, որոշում է իրեն հպատակեցնել Փաթալի խանին: Ճակատամարտերից մեկում զոհվում է Քերիմ խանի եղբայր Իսքանդար խանը: Քերիմ Ջենդ խանն իր եղբոր սպանության վրեժն առնելու նպատակով ավելի է սաստկացնում ռազմական գործողությունները: Իր համախոհների շրջանակն ընդլայնելու նպատակով Քերիմ Ջենդը հորդորում է Փանահ խանին՝ միանալ իրեն և պատանդությունից ազատել որդուն: Փանահը որոշում է օգտագործել պատեհ առիթը: Դաշնակիցների հարվածների տակ Փաթալի խանն ընկձվում է: Նա ստիպված հնազանդվում է Քերիմ խանին<sup>275</sup>: Վերջինս սպանում է Փաթալի խանին, իսկ Իբրահիմ Խալիլ աղային «խալաթ, սուր, ոսկյա թամբ ու նծույզ է ընծայում և Ղարաբաղի կառավարման ու խանության ռադամ շնորհելով՝ ազատ արձակում»<sup>276</sup>: Իսկ Փանահին սպասվում էր դաժան ճակատագիր, ասել կուզի՝ իր արածներին արժանի վերջաբան: Ճիշտ է ասված, որ խորամանկ աղվեսը միշտ երկու ոտքով է թակարդն ընկնում:

Քերիմ Ջենդ խանը, միտք ունենալով Պարսկաստանում ստեղծել կենտրոնաձիգ հզոր պետություն, նպատակ չունեթ թույլ տալ Փանահին՝ հիմնավորվելու Շուշիի անառիկ ամրոցում: Դա անկանխատեսելի հետևանքներով էր հղի: Նա Փանահին իր հետ տանում է Շիրազ, որտեղ էլ վերջինս 1762 թ. մահանում է:

Ավանդությունը պատմում է. «որ Փանահ խանը դիտմամբ մեռած է ձևացել՝ մերձավորներին նախօրոք պատվիրելով, որ իր «դին» Ղարաբաղ տանեն, որպեսզի այդպես Շիրազից դուրս գար, ճանապարհին ձի հեծներ և գնար Ղարաբաղ՝ ստանձնելու այնտեղի իշխանությունը: Քերիմ խանն այս հասկանալով՝ ասում է. «Նա իմ լավ բարեկամն էր, պետք է նրա դիակը պատվով ու հարգանքով Ղարաբաղ ուղարկեմ»: Հրամայում է նրա որովայնը պատռել, դեղերով լցնել, որից հետո միայն ճանապարհ է դնում Ղարաբաղ<sup>277</sup>: Փանահի կտակի համաձայն՝ նրան թաղում են Աղդամում՝ Խաչենի մելիքից գնած հողում:

Փանահի մահից հետո խանության համար պայքար սկսվեց Իբրահիմ և Միհրալի եղբայրների միջև: Իբրահիմը դաշնակցեց Ավարիայի Օմար խանի, իսկ Միհրալին՝ Ղուբայի Ֆաթալի խանի հետ: Ժառանգության համար

<sup>275</sup> Бакиханов А., Сочинения. Записки. Письма, Баку, 1983, стр. 130.

<sup>276</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 62:

<sup>277</sup> Նույն տեղում:

ծագած վեճը, որը ներքին ուժեղ պատերազմներ էր պատրաստում, լուծվեց Իբրահիմ խանի օգտին: Շուտով Միհրալին սպանվեց չքացահայտված հանգամանքներում: Այնուհետև 1763 թ. Իբրահիմը դարձավ Ղարաբաղի խանության միահեծան տերը: Շուշիի անմատչելի տիրական դիրքը, մելիք Շահնազարի կողմից Իբրահիմ Խալիլի տրամադրության տակ դրված հայկական ընտիր հեծելազորը Ղարաբաղի խանին դարձրել էին տարածաշրջանի ամենամեծ հեղինակություններից մեկը: «Նա ոչ միայն ոչ մեկին չէր ենթարկվում, այլև ավագն էր Շաքիի, Շիրվանի, Գանձակի, Թավրիզի, Նախիջևանի, Արդեբիլի, Խոյի, Մարաղայի, Երևանի խաների ու կառավարիչների մեջ, մինչև Արաղի ու Ատրպատականի սահմանագլուխը հանդիսացող Ղաֆլանքուի վայրն ընկած տարածքներում»<sup>278</sup>: Օգտագործելով հարևան խանությունների միջև հակամարտությունը և Պարսկաստանի ներքին անկայուն կացությունը՝ նրան հաջողվեց գրավել Ռեշտն ու Թավրիզը<sup>279</sup>:

Մելիք Շահնազարի վրա իր ազդեցությունը պահելու և ավելի մեծացնելու նպատակով Իբրահիմ խանը կնության վերցրեց Վարանդայի տիրոջ աղջկան՝ Հուրիզադին: Այնուհետև, Ավարիայի և Դաղստանի կառավարիչ Օմար խանի հետ ազգակցական կապեր հաստատելու և նրանց գինական ուժն օգտագործելու նպատակով Շուշիի խանն իր հարեմը համալրեց նրա Աղա Բիքե բրոջով: Դրանից հետո Իբրահիմ խանն իր գործողություններին ավելի ազատություն տվեց: Նա խանական գանձարանը համալրելու միջոց էր դարձրել հարևան վարչական միավորի ազգաբնակչության ալան թալանը: Այդ հարցում ավարառության սովոր հյուսիսկովկասյան ցեղերից կազմված և նրա տրամադրության տակ հայտնված զորագնդերն անփոխարինելի էին: Հենց նրանց աջակցությամբ 1783 թ. Իբրահիմ խանն ավերեց ու կողոպտեց Ղարադաղը, որտեղ մեծ քանակությամբ հայկական բնակավայրեր կային:

Այնուհետև ռազմական գործողություններ են ծավալում Նախիջևանի Քյալբալի խանի դեմ: Նորից այստեղ տուժում է մասնավորապես Սյունիքի հայությունը: Նախիջևանի Քյալբալի խանը, Երևանի խանից օժանդակ ուժեր ստանալով, կարողանում է մի առ ժամանակ զսպել Իբրահիմին: 1787–1788 թթ. Իբրահիմ խանը, զորքերը համալրելով, շարժվում է դեպի Խոյ: Այդ տարածքի խան Ջաֆար Ղուլին ջախջախում է Իբրահիմի զորքերին: Վերջինս ստիպված Ջաֆար Ղուլիից հաշտություն է խնդրում:

<sup>278</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 63:

<sup>279</sup> Ахмед–бек Джеваншир, О политическом существовании Карабахского ханства ..., стр. 22.

Հարթ չէին նաև հարաբերությունները Իբրահիմ խանի և վրաց Հերակլ թագավորի միջև:

Իբրահիմ խանի դրոմամբ՝ 1785 թ. Ավարիայի Օմար խանը, հյուսիս կովկասյան խառնամբոխ ցեղերի գլուխն անցած, արշավում է դեպի Վրաստան: Առանձնապես տուժում է Լոռիի Լավարի ձորում գտնվող Ախթալա մեծ գյուղը<sup>280</sup>: Ազգաբնակչության մեծ մասին սրի են քաշում, իսկ մնացածներին էլ՝ գերեվարում: Նույն ճակատագրին արժանացավ նաև Ախալքալաքի հոչակավոր Թմկաբերդի հայությունը:

Այսքան մեծ հաջողություններով հանդերձ, Իբրահիմ խանի համար անլուծելի էր մնում Արցախի մելիքներին, մասնավորապես Ջրաբերդի մելիք Հաթամին, Գյուլիստանի մելիք Հովսեփին, Խաչենի մելիք Ալլահվերդուն, իսկ մելիք Շահնազարի մահվանից հետո նրա որդուն՝ Վարանդայի նոր տիրոջ՝ մելիք Ջումշուդին իրեն հպատակեցնելու հարցը:

Ջրաբերդի և Գյուլիստանի տարագիր մելիքները Գանձակի խանությունում անգործության մատնված չմնացին: Նրանք, դաշնակցելով մերթ Ուրմիայի Ֆաթալի խանի, մերթ էլ Գանձակի Շահվերդի խանի հետ, հարձակումներ էին գործում Ղարաբաղի Իբրահիմ խանի տիրույթների վրա: Դեպքերի ժամանակակից Սիմեոն կաթողիկոսը նրանց անվանում է հզոր և քաջ իշխաններ<sup>281</sup>: Այս հանգամանքն անհանգստացնում էր Իբրահիմ խանին: Մյուս կողմից էլ, հայաթափելով գավառները, Ղարաբաղի խանը զրկվում էր իր գանձարանը լցնելու հեշտ տարբերակից:

Սկզբում Իբրահիմն իր և մելիքների միջև փորձեց միջնորդ դարձնել Գանձակի Շահվերդի խանին: Բայց սա էլ իր ծրագրերն ուներ և, Իբրահիմ խանին թուլացնելու նպատակով, ձգտում էր իր կողքին պահել Ղարաբաղի մելիքներին: Այդ ժամանակ Իբրահիմ խանն անմիջական բանակցություններ սկսեց մելիք Հաթամի և մելիք Հովսեփի հետ՝ վերջիններիս խոստանալով վերականգնել նրանց ժառանգական իրավունքներն ու ինքնիշխանությունը: Մելիք Հաթամի և մելիք Հովսեփի վերադարձը Ջրաբերդ և Գյուլիստան որոշ չափով կայունացրեց Խամսայի մելիքությունների քաղաքական կացությունը: Սակայն այս անգամ էլ Իբրահիմ խանը փորձեց խաթարել մելիքների միաբանությունը՝ պայթունավտանգ իրավիճակ ստեղծելով Գանձասարի թափուր կաթողիկոսական աթոռին նոր թեկնածուի ընտրության հարցում:

<sup>280</sup> Ջալալյան Ս., էջ 85:

<sup>281</sup> Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանը, Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, էջ 491:

Իբրահիմը մերթ հովանավորում էր օրինական կաթողիկոսին՝ Հովհաննեսին, մերթ էլ հակաաթոռ, Գանձակում նստող և հետագայում Արցախ տեղափոխված Իսրայելին: Գանձակի հայությունը և Ջրաբերդի մելիք Հաթամը պաշտպանում էին Գանձասարի նախկին կաթողիկոս Ներսեսի եղբոր որդուն՝ Իսրայելին: Անգամ մելիք Հաթամը, վերադառնալով Ջրաբերդ, Իսրայելին իր հետ բերեց և նրան տրամադրեց Երից Մանկանց վանքը, որտեղ 18-րդ դարի առաջին կեսին քայքայիչ գործունեություն էր ծավալել հակաաթոռ կաթողիկոս Ներսեսը: Նախադեպը կար, և Իբրահիմ խանը հմտորեն օգտագործեց այդ ամենը՝ ավելի խճճելով Խամսայի մելիքների՝ առանց այն էլ ոչ սովորական հարաբերությունները:

Դժվարին այս ժամանակներում Ղարաբաղ է գալիս Հովսեփ Էմինը: Նա առաջին հերթին փորձում է վերականգնել Արցախի միասնականությունը: Անգամ փորձում է լեզու գտնել Արցախի չարիք Իբրահիմ խանի հետ: Այդ նպատակով 1767 թ. նա Գանձասարից մեկնում է Շուշի: Տեղի հայ ազգաբնակչության ներկայացուցիչները Հովսեփ Էմինին հորդորում են հեռանալ բերդավանից, որովհետև տեղյակ էին, որ Իբրահիմ խանը հայ գործչի նկատմամբ դավադրություն էր նախապատրաստում: Այլ ելք չգտնելով՝ Հովսեփ Էմինը Շուշիից վերադառնում է Գանձասար: Բոլորից լքված՝ նա հուսահատ հեռանում է Արցախից:

Քննարկվող ժամանակաշրջանում Այսրկովկասը Ռուսաստանին միացնելու հարցը ցարական արքունիքի համար օրակարգային դարձավ: Այդ ընթացքում կառավարական շրջանակներում առաջ էին քաշվում դեռևս Պետրոս Առաջինի օրոք կազմված մերձկասպյան արշավանքների ծրագրերի իրագործման նախագծեր, որտեղ նորից առաջնային դերակատարություն էր վերապահվում Արցախի մելիքներին: Իբրահիմ խանից հալածված՝ մելիքների մոտ տակավին կենսունակ էին հյուսիսի մեծ հարևանի օգնությամբ երկրի փրկության ծրագրերը: Նրանք, ճիգերի վերջին լարումով ի մի բերելով երկրամասի տնտեսական ու ռազմական կարողությունները, նորից լծվեցին հայկական պետականության վերակերտման գաղափարին: Այս անգամ Արցախի ազատագրական պայքարի դերակատարները փոխվել էին: 1781 թ. վախճանվել էր Դիզակի մելիք Եսային, իսկ 1783 թ. իրենց մահկանացուն կնքեցին Ջրաբերդի մելիք Հաթամն ու Գյուլիստանի մելիք Հովսեփը:

Դիզակի տեր դարձավ մելիք Եսայու որդի մելիք Բախտամը: Մելիք Հաթամին հաջորդեց մելիք Մեծյումը, իսկ մելիք Հովսեփին՝ մելիք Արովը: Նրանց և Իբրահիմ խանի միջև պայքարն ավելի կատաղի բնույթ ստացավ: Իբրահիմ խանին հաջողվեց 1780-ական թվականներին կրոնափոխել

Դիզակի Մելիք-Ավանյանների տոհմակիցների մի մասին: Արդեն կրոնափոխ եղած մելիք Վահանին և մելիք Ասլանին են անցնում գերդաստանի կալվածքներն ու ողջ ունեցվածքը: Մելիք Եզանյանների տոհմից սերված Մելիք-Ասլանովների ներկայացուցիչները 1905-1906 թվականների հայթաթարական ընդհարումների ժամանակ կազմակերպեցին Նախիջևանի և Սյունիքի հայության կոտորածները, իսկ 1918-1920 թվականներին Ադրբեջանի հանրապետության հիմնադիրների շարքում էին՝ դառնալով կառավարության և խորհրդարանի անդամներ: Խորհրդային տարիներին Տողի նախկին ադրբեջանցիների մի մասը ուժացված հայեր էին, որոնք արցախյան ազատագրական պայքարի տարիներին պատուհաս էին դարձել հայերի համար:

Չնայած այս դժվարություններին՝ Ջրաբերդի մելիք Մեծյումին և Գյուլիստանի մելիք Արովին հաջողվեց ազատագրական պայքարը նոր ուղեծրի մեջ դնել: Վերստին բացվեց ու աննախադեպ աշխուժացավ Ռուսաստանի հետ կապող դիվանագիտական ճանապարհը:

1783 թ. ապրիլի 25-ին Գրիգորի Պոտյոմկինին հասցեագրած իր նամակում Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսը հիշեցնում էր, թե առանձնապես ջանադիր են մելիքները, առավել ևս՝ Արցախի մելիքները. լինելով անկախ, ինքնիշխան՝ ունեն բավական թվով զորք և պարենի տեսակետից էլ կարող են բավարարել կայսերական զորքերին<sup>282</sup>: Ռուսական կայսրությունը փորձում էր Արցախի մելիքություններն ապագա Հայաստանի քաղաքական հիմքը դարձնել, իսկ մելիքներից մեկին կարգել հայոց պետության թագավոր: Այդ առթիվ 1783 թ. ապրիլի 6-ին Գ. Ա. Պոտյոմկինը հրահանգ է տալիս Պ. Պոտյոմկինին. «Շուշիի Իբրահիմ խանին պետք է հեռացնել, որովհետև դրանից հետո Ղարաբաղը կկազմի բացի Ռուսաստանից ոչ ոքից կախյալ հայկական նահանգ: Դուք այդտեղ օգտագործեք ամեն ջանք, որպեսզի այս նոր նահանգը կազմակերպվի ժողովրդի համար առավել նպատակահարմար ձևով: Դրանով հայկական այլ խոշոր նահանգներ ևս կհետևեն նրա օրինակին կամ մեծ քանակությամբ կգան Ղարաբաղ»<sup>283</sup>:

Ջարգացնելով և կարևորելով այս գաղափարը՝ Գ. Ա. Պոտյոմկինը, 1783 թ. մայիսի 19-ին Եկատերինա 2-րդին ուղղված զեկուցագրում ասում է. «Չունենալով դեռևս Ձերդ կայսերական մեծության հրամանը՝ ես կարգադրություն եմ արել զենեռալ պորուչիկ Պ. Պոտյոմկինին Շուշիի Իբրահիմ խա-

<sup>282</sup> Մատենադարան, ծեռ. հմ. 2803, թ. 315:

<sup>283</sup> Маркова О., Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, стр. 183.

նի մասին, որը կմոտեցնի նրա հնազանդությունը: Այստեղ հարկ է նախատեսել, որպեսզի հարմար առիթով նրա նահանգը, որը բաղկացած է հայ ժողովրդից, տրվի ազգային կառավարման և դրանով իսկ վերականգնվի Արցախում քրիստոնեական պետություն, Ձեր գերագույն կայսերական մեծության խոստումների համաձայն՝ տրված իմ միջոցով հայ մելիքներին»<sup>284</sup>:

Դեպքերի հետագա զարգացումներն ապացուցեցին, որ ռուսական արքունիքը, ըստ էության, ոչ մի նպատակ չունեւ համասայի մելիքությունների հիմքերի վրա վերականգնել հայկական պետականությունը: Պարզապես երկդիմի քաղաքականությամբ փորձում էր ստանալ հայերի համակրանքն ու, առանց ջանքերի և անկանխատեսելի պատերազմի, իրեն ենթարկեցնել Իբրահիմ խանին:

Ռուս բարձրաստիճան պաշտոնյաները լավ էին հասկանում, որ, առաջ քաշելով անկախ Ղարաբաղի գաղափարը, այդ ճանապարհով կստիպեն Իբրահիմին՝ ընդունել իրենց հպատակությունը: Իսկ հայերի հարցում նրանք վստահ էին, որ սիրաշահելու միջոցով մշտապես կվայելեն նրանց համակրանքը: Մի առիթով Եկատերինա 2-րդը ասել է. «... միայն գենքի ուժով չէ, որ հաղթում են ժողովուրդներին ... այլ պետք է նվաճել նրանց վստահությունը ... նվաճել սրտերը ..., որի համար պետք է ամեն կերպ սիրաշահել և մեր կողմը գրավել ժողովրդի լավագույն մարդկանց»<sup>285</sup>:

Հայոց ազատագրության ամենավճռական պահին Իբրահիմ խանը հերթական անգամ ցույց է տալիս իր դիվանագիտական ճկունությունը: Նա, դեպքերի զարգացման ընթացքից դուրս չմնալու համար, բանագնացներ է ուղարկում գեներալ Պոտյոմկինի մոտ՝ իր հպատակությունը հայտնելով ռուսաց ցարին. «Վաղուց է, - գրում էր խանը, - ինչ ես տրամադրություն ունեմ դառնալ համառուսական ամենաողորմած գահի և անհուն առատաձեռնություններով թագավորող կայսրուհու հավատարիմ և ջերմեռանդ ստրուկը: Չունենալով ոչ ծանոթներ, ոչ կապեր, ինչպես կարող էի ես վստահել և մտնել այն ճանապարհը, որը տանում է դեպի այդպիսի մի մեծ երջանկություն: Սպասելով բարձրալի նախախնամությունից մի հարմար առիթի, որ հայտնեմ իմ ջերմեռանդությունը, ես վշտանում էի իմ հոգու մեջ»<sup>286</sup>:

Պավել Պոտյոմկինն Իբրահիմ խանի ցանկությունները հաղորդում է Գրիգորի Պոտյոմկինին: Վերջինս էլ դրա հիման վրա զեկույց է ներկայացնում Եկատերինա 2-րդին, որտեղ հարցնում է, թե հարմար չ'ի լինի, արդյոք,

<sup>284</sup> Иоаннисян А., Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, стр. 238.

<sup>285</sup> Маркова О., Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, стр. 183.

<sup>286</sup> Լեո, հ. 3, գիրք 2-րդ, էջ 346:

«այս անգամ շոյենք Իբրահիմին, որպեսզի անհրաժեշտության դեպքում նա մեր բռի մեջ լինի»<sup>287</sup>:

Ի պատասխան Գրիգորի Պոտյոմկինի՝ Եկատերինա 2-րդը հրահանգում է. «Ինչ վերաբերում է Իբրահիմ խանին, եթե նրան ռուսաց հպատակության մեջ ընդունելու նկատմամբ չկա ոչինչ դժվարություն կամ կասկածանքի առիթ, թվում է, թե մենք կարող ենք ուղեցույց ընդունել այն, ինչ արել ենք Հերակլ թագավորի հետ: Այս դեպքում դուք պիտի հանձնարարեք գեներալ Պոտյոմկինին կնքել նրա հետ դաշնագիր, որով նա պետք է հպատակվի ռուսաց կայսերական գահին և ճանաչի իմ և իմ ժառանգների բարձր իշխանությունն իր վրա և իր ժառանգների վրա: Այսպիսի պայմաններով կատարված ընդունելությունը կարող է դառնալ այստեղի տիրապետության մեղմության ապացույց և այտեղի մեր շատ հարևաններին կղրդի հետևել այս երկու տիրապետողների օրինակին»<sup>288</sup>:

1783 թ. մայիսի 19-ին Գրիգորի Պոտյոմկինը հրահանգ է տալիս Պավել Պոտյոմկինին. «... Շուշիի Իբրահիմ խանի հնազանդության և հպատակության մասին նրա խնդրանքը ավելորդ են դարձնում նրա հեռացումը: Ձերդ գերագանցություն, առանց իրականացնելու նախորդ հրահանգը նրա տապալման մասին, հաղորդեք նրան միայն, որ հարկը, որը ռուսական թագուհին կբարեհաճի հարգել, հավատարմությունն է: Եվ այդպես, եթե նա աներեր կմնա դաշինքի մեջ և մշտապես պատրաստ՝ կատարելու գերագույն հրամանները, ապա այդպիսի պայմաններում կարող է հուսալ հպատակության մեջ ընդունումը»: Իսկ Ացախի հայերին սիրաշահելու համար հորդորում է. «... աշխատեք փաղաքել հայերին և ներարկել նրանց մեջ բարի կամեցողություն դեպի Ռուսաստանը, որպեսզի նրանց միշտ ջանադիր և պատրաստ ունենալ օգտագործելու այն ձեռնարկումների համար, որոնք հանգամանքներն ու մեր գործերի շահերը կպահանջեն»<sup>289</sup>: Ցարական արքունիքը նմանօրինակ հուսադրական խոստումներ էր տալիս ռուսահայ գործիչներին՝ Հ. Լազարյանին և Հ. Արդույանին:

Մինչդեռ իրականում Գ. Պոտյոմկինն արդեն սկսում է հովանավորել Իբրահիմին և քայլեր կատարում, որոնք հետին պլան էին մղում հայոց ազատագրության հարցը: Այդ այն դեպքում, երբ Իբրահիմի բանագնացները հավատարմագրերով միաժամանակ թակում էին ռուսական, թուրքական և պարսկական արքունիքի դռները: Թուրքական սուլթանին ուղղած խնդրագրում նա ասում է. «Ամենապայծառափայլ բարձրալիդ զեկուցում եմ, որ

<sup>287</sup> Գալոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978, էջ 131:

<sup>288</sup> Дубровин Н., История войн и владычества русских на Кавказе, т. II, стр. 30.

<sup>289</sup> Иоаннисян А., Россия ..., стр. 237.

պատվիրակն են դարձնում ինձ վսեմագույն Դոան, որտեղ հենց հրեշտակներն են ապրում և նրանից են հորդում առատություններն անձայր, քան ծովը, ամբողջ իմ կյանքը, կարողությունը, հողերն ու ժողովուրդները ոտքի փոշի են փոխանորդի մեր մեծ մարգարեի: Ողորմագութ տեր, ... քեզանից օգնություն են սպասում և եթե զորացնենք մեզ, ապա մեր օրենքի թշնամիներին մենք գլխիվայր կդնենք»<sup>290</sup>:

Դիվանագիտական քայլերին զուգընթաց՝ Իբրահիմ խանը եռանդուն նախապատրաստվում էր՝ կանխելու Ռուսաստանի հնարավոր առաջխաղացումը: Այդ նպատակով նա հիմնում է Ասկերանի բերդը, միաժամանակ 1783–1784 թվականներին մելիքներից աշխատուժ պահանջում՝ Շուշի բերդաքաղաքի պարիսպներն անմատչելի դարձնելու համար:

Պարսկահպատակ խաները, մտահոգված ռուսների առաջխաղացումից, ձգտում են միասնական հակառուսական ճակատ հարդարել: Իբրահիմ խանն այդ նպատակով գաղտնի բանակցեց Խոյի, Շաքիի և Բաքվի խաների հետ և համաձայնություն ձեռք բերեց:

Ակտիվացել էին նաև թուրքամետ փաշաները, որոնք փորձում էին պարսկահպատակ խաների հետ համագործակցաբար դիմակայել ռուսներին: Ախալցխայի Սուլեյման փաշան, որը վրացական ծագում ուներ, նամակով դիմում է Իբրահիմ խանին. «Անիծյալ ռուսները ճանապարհ բացին Կովկասի լեռների վրայով. այդ ճանապարհը թույլ է տալիս նրանց տեղափոխել ոչ միայն հարկավոր իրերը, այլև թնդանոթներ և ամեն ինչ, որ հարկավոր է զորքերին կերակրելու համար: Նրանց զորքերը մաս մաս մտնում են Վրաստան և ամառվա վերջում նրանք ամենքը կժողովվեն Պարսկաստանում, օսմանյան երկրները խուժելու համար, որպեսզի կլանեն մեզ, ինչպես ամառային արագահոս հեղեղը կլանում է ամեն ինչ»<sup>291</sup>:

Արցախի մելիքները և Հովհաննես կաթողիկոսն իրենց հերթին հորդորում են փութացնել արշավանքը դեպի Գանձակի և Ղարաբաղի խանության տարածքները: 1783 թ. Հովհաննես կաթողիկոսը, Ադամ և Աբով մելիքները գեներալ Պ. Պոտյոմկինին խնդրում են հայությանն ազատագրել անհավատների ճնշումներից, միաժամանակ խոստանում երկար ժամանակ ռուսական բազմապարզ զորքերի թիկունքային ապահովում իրականացնել<sup>292</sup>: Այդ փաստաթղթի տակ ստորագրում է նաև Ղուկաս կաթողիկոսը:

<sup>290</sup> Հարությունյան Վ., Արցախի հիմնահարցի ակունքները, Ստեփանակերտ, 1998, էջ 12:

<sup>291</sup> Дубровин Н., История войн и владычества русских на Кавказе, т. II, стр. 25.

<sup>292</sup> Армяно-русские отношения во второй половине XVIII века, сборник документов, т. IV, стр. 225.

Իբրահիմ խանը ռուսների հետ ստեղծած «բարեկամական» կապերը հմտորեն օգտագործեց վրաց Հերակլ թագավորի և իր մշտական մրցակից համարվող Գանձակի խանի հետ ունեցած հարաբերություններում:

Երբ Արցախի մելիքները փորձում էին Իբրահիմին հեռացնել Արցախից, Հերակլ թագավորը, որի հետ հայերը, որպես քրիստոնյայի, հույսեր էին կապում, անցավ Շուշիի տիրոջ կողմը: 1784 թ. Իբրահիմը փորձեց գրավել Գանձակը, բայց պարտություն կրեց: Որպես պատասխան, նույն թվականի վերջին Գանձակի խանը, դաշնակցելով Դերբենդի խանի հետ, շարժվեց դեպի Շուշի: Դաշնակիցները Հերակլին նույնպես փորձեցին արշավանքին մասնակից դարձնել՝ նրան խոստանալով տալ Ղարաբաղի հայաբնակ գավառները: Հերակլը հրաժարվեց: Հակամարտությանը խառնվեց գեներալ Պոտյոմկինը՝ Գանձակի և Դերբենդի խաներին թույլ չտալով գրավել Շուշին:

Ռուսական արքունիքի քաղաքական վայրիվերումներն ու հակասական դիրքորոշումը ողբերգական են դառնում Արցախի հայության համար: Ռուսական օգնության խոստումներից խրախուսված՝ նրանք ըմբոստանում են խանի դեմ: Խանն էլ առերես հպատակություն հայտնելու ճանապարհով նույն ռուսական իշխանություններից իրեն ապահովագրած, դաժանորեն ճնշում, կողոպտում էր հայերին, քայքայում մելիքների ուժերը: 1787 թ. Իբրահիմ խանը բանակցությունների պատրվակով Շուշի է հրավիրում Դիզակի մելիք Բախտամին, Ջրաբերդի մելիք Մեժլումին, Գյուլիստանի մելիք Աբովին և ձերբակալում: Այնուհետև նրա զինված բանդաները կողոպտում են Գանձասարի վանքը և կալանավորում Հովհաննես կաթողիկոսին ու նրա հինգ եղբայրներին և տանում Շուշի: Ժողովրդական հերոսներ Թյուլի–Արզումանը, Դալի–Մահրասան և Ջարգար Մելքումը զինված խմբով հանդուգն հարձակում են գործում Շուշիի բանտի վրա և ազատում մելիք Մեժլումին ու մելիք Աբովին: Շուշիի բանտում սպանվում են Հովհաննես կաթողիկոսը և մելիք Բախտամը: Մելիքներին նորից իր ձեռքը գցելու նպատակով Իբրահիմ խանը ձերբակալում է մելիք Մեժլումի մորը և մելիք Աբովի ընտանիքի մի քանի անդամների: Մելիքները, որոնք փախուստից հետո հայտնվել էին Թիֆլիսում, միջոցներ էին որոնում՝ ազատելու հարազատներին:

1787 թ. օգոստոսին ռուս–վրացական միացյալ զորքերը Բուրնաշևի հրամանատարությամբ հայտնվեցին Գանձակի մատույցներում: Արցախի մելիքների մեջ հայրենիքն ազատագրելու նոր հույսեր առաջացան: Մելիք Մեժլումը և մելիք Աբովը միացան այդ արշավանքին: Ռուսական զորքերը Բուրնաշևի հետ մնացին Գանձակի մատույցներում, իսկ վրացական զորքերը, որոնք նպատակ ունեին պատժել Իբրահիմ խանին, որը հովանա-

վորում էր Հերակլի ենթակայության տակ գտնվող Ղազախի և Շամշադինի թուրքերին, մելիքների հետ միասին հասան Արցախ: Մի քանի ընդհարումների ժամանակ Իբրահիմ խանի զորքերը պարտվեցին: Թվում էր, թե արդեն ոչինչ չէր կարող խանգարել մելիքների ծրագրերի իրագործմանը: Բայց որերորդ անգամ ցարական արքունիքն իր շահերի գոհասեղանին դրեց արցախահայության ճակատագիրը:

1787 թ. օգոստոսի 17-ին Ս. Բուրնաշևը հրաման ստացավ վերադառնալ Ռուսաստան<sup>293</sup>:

Մելիք Մեծլումին և մելիք Աբովին, որպես սփոփանք, իշխան Գ. Պոսյոմկինն առաջարկում է տեղափոխվել Ռուսաստան՝ խոստանալով բարեկեցիկ կյանք<sup>294</sup>:

Մելիք Մեծլումը և մելիք Աբովը մնացին անդրդվելի ու պատեհ առիթ էին որոնում՝ Իբրահիմի հետ հաշվեհարդար տեսնելու:

Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքությունները գլխատված էին: Հայկական իշխանությունների տերերը վտարանդու կարգավիճակով գոյատևում էին Թիֆլիսում:

Իբրահիմ խանն այս անգամ փորձեց հաշվեհարդար տեսնել Ջրաբերդի և Գյուլիստանի հայության նկատմամբ՝ փորձելով բռնի տեղահանել հայկական բնակավայրերը: Հայությունը, կառչած պապենական հողերին, անհավասար գոտեմարտում պաշտպանում էր հայրենի երկրամասը:

Չկարողանալով ծնկի բերել Ջրաբերդի և Գյուլիստանի հայությանը՝ Իբրահիմ խանն իր ելուզակների թալանչիական ախորժակին հազուրդ տալու համար 1788 թ. շարժվեց դեպի Գանձակ և գրավեց քաղաքը: Դրանով Իբրահիմ խանը և նրա աներորդի՝ Ավարիայի Օմար խանը աքցանի մեջ առան վրաստանը: Հուսալքված Հերակլ թագավորին օգնության հասան մելիք Աբովն ու մելիք Մեծլումը, որոնք, վրաց-հայկական զորքերի գլուխ անցած, շարժվեցին դեպի Գանձակ: Արշավանքին միացավ նաև Դերբենդի Ֆաթալի խանը: Իբրահիմ խանը վաղորոք հեռացել էր Գանձակից: Ճիշտ է, վրաց-հայկական զորքերին չհաջողվեց երկարատև պաշարումից հետո գրավել քաղաքը, բայց Գանձակի Ջավադ խանը խոհեմություն ցուցաբերեց և հպատակվեց Հերակլ թագավորին:

Մելիք Մեծլումը համոզում է Ջավադ խանին՝ միանալ իրենց ուժերին և շարժվել դեպի Շուշի: Դաշնակիցները պաշարում են Շուշին, բայց պարենի

պակասի և բերդավանի անմատչելիության պատճառով հետ են վերադառնում: Նորից բախտը ժպտում է Իբրահիմ խանին:

Մելիք Մեծլումն ու մելիք Աբովը, անսալով Արդուսյանի հորդորներին, այս անգամ խնդրագրով դիմեցին հյուսիսային Կովկասում ռուսական զորքերի հրամանատար գեներալ Տեքելլիին: Բայց վերջինս մելիքների խնդրանքի հանդեպ առանձնակի հետաքրքրություն չցուցաբերեց: Մելիքների վիճակն օրեցօր ավելի էր ծանրանում: Շուտով Հերակլի և Իբրահիմ խանի միջև հարաբերությունները կարգավորվեցին: Իբրահիմ խանը Հերակլին խոստացավ Ղազախից և Շամշադինից Արցախ տեղափոխված վիրահպատակ թուրքերին տեղափոխել իրենց նախկին բնակավայրերը, իսկ դրա փոխարեն վրաց թագավորից պահանջեց իրեն հանձնել մելիք Մեծլումին և մելիք Աբովին: Հերակլը տվեց իր համաձայնությունը: Արցախի մելիքները, նախապես իմանալով դրա մասին, հեռացել էին Թիֆլիսից և հանգրվանել Շամքորում<sup>295</sup>, որը գտնվում էր Գանձակի խանի գերիշխանության տակ:

Մելիք Աբովն ու մելիք Մեծլումը հանգիստ չէին տալիս Իբրահիմ խանին: Նրանք հարձակումներ էին գործում Իբրահիմի հպատակության տակ գտնվող թուրքաբնակ գյուղերի վրա և հասնում էին մինչև Շուշի մատույցները: Սարսափահար թուրքերը հայերի տարագով էին ման գալիս<sup>296</sup>: Սակայն գերիսնդիրը՝ Արցախի ազատագրման հարցը, մնում էր առկախված: Այս դեպքերի մասին 1789 թ. փետրվարին Ղուկաս Կարնեցին գրել է. «Այլ վասն համասայու մելիքացն ծանիցես, որքան ինքն ի նոցանէ նուաճեալք էին ընդ ձեռամբ տաճկաց և ունայնացեալք յամենայնէ, մնացեալ էին Մելիք Ադամի որդի Մէճլումն և Մելիք Յովսէփի որդի Ապովն, որք սակաւ մի յիշխանութիւն էին, սակայն և նոքա յանցեալ տարին մինչ վրաց պետն գնաց ի Գեանջայ, յարեցան ի նա՝ ապստամբելով և յԻբրահիմ խանէն և, ի դառնալ փութով վրաց պետին վասն յառնելոյ լեզկեաց և սահմանս Վրացտանու, նոքա ևս քանէօք ընտանէօք իրեանց դատարկ փախեան ի Վրաց երկիրն և զրկեցան յամենայն կայից իրեանց և ի բնակութեանց»<sup>297</sup>:

Արցախի մելիքները, հայտնվելով անազորային վիճակի մեջ և ականատես լինելով 1787-1789 թվականների դեպքերի նմանօրինակ զարգացումներին, ապագայում պետականության վերականգնման հարցում սրբազրեցին իրենց դիրքորոշումները: Եթե նախկինում Արցախի մելիքներն ակնկալում էին Ռուսաստանից ստանալ օժանդակություն՝ թոթափելու մահմե-

<sup>293</sup> Иоаннисян А., Россия ..., стр. 188.

<sup>294</sup> Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 года, ч. II, стр. 195.

<sup>295</sup> Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 143-145:

<sup>296</sup> Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 155:

<sup>297</sup> Մատենադարան, ձեռ. 4501, էջ 1395:

դականների լուծը և վերակերտելու հայոց պետականությունը, ապա այս անգամ նրանց մոտեցումներն ավելի քան շերտավորված տեսք ստացան:

1. Ռուսաստանի օգնությամբ թոթափել օտարի լուծը և վերականգնել հայոց պետականությունը:

2. Առաջին գերխնդրի չիրականանալու պարագայում՝ ժամանակավոր ապաստան ստանալ Վրաստանում:

3. Իբրահիմ խանի լուծը թոթափելուց հետո հնարավոր է ընդունել նաև վրաց թագավորի գերիշխանությունը:

4. Եթե Ռուսաստանն այլևս ի վիճակի չէ օգնել արցախահայությանը՝ տապալելու Իբրահիմ խանին, ապա Արցախի մելիքներն ակնկալում են ցարական արքունիքից ստանալ տարածքներ Դերբենդի շրջակայքում կամ Կասպից ծովի ափերին և ողջ ժողովրդի հետ տեղափոխվել նոր բնակավայր:

Այս մոտեցումները նկատելի են ռուսական արքունիքին և Հովսեփ Արդուբանին հասցեագրված Արցախի մելիքների նամակներում<sup>298</sup>:

Տասնամյակներ շարունակ ցարական արքունիքի վարած երկիմաստ քաղաքականությունն Արցախի մելիքներին և ժողովրդին հասցրել էր մի այնպիսի վիճակի, երբ վերջիններս պատրաստ էին հրաժարվել ամեն ինչից, այդ թվում՝ պետականությունից, միայն թե փրկվեին Իբրահիմի ճիրաններից: Նման քաղաքականություն վարվել է նաև 1988–1991 թվականներին: Բարեբախտաբար, ժողովրդի համառության և նպատակասլացության շնորհիվ դեպքերն ի նպաստ հայության ընթացան:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Արցախի մելիքները և հատկապես ժողովուրդը պատրաստ չէին հրաժարվել դարերի ընթացքում պահած ու փայփայած պետականության բեկորներից ու հայրենի եզերքից և ապահով, բայց անհեռանկար կյանքով ապրել օտար ափերում:

1792 թ. արցախահայության կյանքում կարևոր իրադարձություն տեղի ունեցավ: Մահացավ մելիք Շահնազարը: Նրա հետ միասին գերեզման իջան արցախահայության և մասնավորապես Շուշիի հայության բնականոն կյանքը խաթարող, մահվան սքեմով պարուրված գործչի կերպարն ու տխուր համբավը:

Շուշիին դեռ մոտակա տասնամյակներում սպասում էր վերելքի ու զարգացման ոսկե դարաշրջանը, որը նոր բովանդակություն պիտի հաղորդեր հայության հասարակական–քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքին: Մելիք Շահնազարը քառասուն տարի հավատարմորեն ծառայեց

Փանահ և Իբրահիմ խաներին, Ղարաբաղի սրտում հզորացրեց Շուշի ուտանը, և այդ բարձունքից հրե լեզվակները, սողալով Արցախով մեկ, լափում էին հայկական կենարար ոգին: Նույնքան հավատարմությամբ էլ Փանահ և Իբրահիմ խաները փայփայում էին մելիք Շահնազարին: Ճակատագրի այդ քմահաճ խաղին արցախահայությունը թանկ վճարեց: Մելիք Շահնազարը ոչ միայն չարիք էր դարձել արցախահայության, այլ նաև իր ընտանիքի համար: Իր աղջիկներից մեկին՝ Հուրիգադին, կրոնափոխ արեց և ուղարկեց Իբրահիմ խանի հարեմը: Ինքը նույնպես ապրում էր մահմեդականի կյանքով և երեք կին էր պահում:

Ասում են՝ կյանքի վերջին տարիներին գիտակցել էր իր կատարած ահավոր սխալը: Իր մեղքերին թողություն տալու համար մելիք Շահնազարը հիմնովին վերակառուցել է Ամարասի վանքը: Բայց այս բարերարությունն էլ նոր դժբախտություն բերեց արցախահայությանը: Բանն այն է, որ Իսրայելին Իբրահիմ խանը և մելիք Շահնազարը ճանաչել էին կաթողիկոս և որպես նստավայր նրան տրամադրել Ամարասի վերակառուցված վանքը: Իսկ Աղվանից օրինական կաթողիկոս Հովհաննեսի եղբայր Սարգիսն ստիպված նստում էր Գանձակում:

Հակաաթոռ Իսրայել կաթողիկոսը ոչ միայն հավատարմորեն ծառայում էր Իբրահիմ խանին, այլև խոչընդոտում արցախահայ ազգային–ազատագրական պայքարի հետագա ընթացքին: Նա Արցախի մելիքների բոլոր զաղտնի քայլերը ներկայացնում էր Իբրահիմ խանին:

Մելիք Շահնազարը չորս որդի ուներ: Վարանդայի մելիքությունն անցավ նրա ավագ որդուն՝ մելիք Ջումշուդին: Վերջինս բավականին հայրենասեր գործիչ էր և հյու–հնազանդ չէր Իբրահիմ խանին:

Ջրկված լինելով հավատարիմ դաշնակցից՝ Իբրահիմ խանի դիրքերն օրեցօր թուլանում էին:

18–րդ դարի վերջերից արցախահայության և Շուշիի համար մի նոր դարաշրջան է սկսվում:

### բ) Աղա Մուհամմադ խանի արշավանքը դեպի Շուշի ու Այսրկովկաս և դրա հետևանքները

18–րդ դարի վերջերին Իրանում նորից գահակալական կոիվներ են սկսվում: 1786 թ. Կաջարների ներկայացուցիչ ներքինի Աղա Մուհամմադ խանն իրեն շահ է հռչակում, որից հետո եռանդուն գործունեություն ծավալում

<sup>298</sup> Армяно–русские отношения во второй половине XVIII века, сборник документов, т. IV, стр. 229–231, 473–474.



Իրանի տիրապետությունն Այսրկովկասի վրա վերահաստատելու և ռուսների առաջխաղացումը կանխելու համար:

Աղա Մուհամմադ խանը մինչև 1794 թ. անընդհատ պատերազմներ էր մղում Պարսկաստանի ծայր գավառների խաների դեմ, որոնք ուժերի գերլարումով փորձում էին դիմակայել իր անսահման դաժանություններով հայտնի ներքինի խանին: 1794 թ. նա, գրավելով Քիրման քաղաքը, այդտեղի քսան հազար կանանց բաժանում է իր զինվորներին, իսկ տղամարդկանց՝ կուրացնում: Շահին բերում են 7000 զույգ աչք, և նա անձամբ կշռում ու համրում էր դրանք<sup>299</sup>:

Այսկովկասի խաներն ու վրաց Հերակլ 2-րդ թագավորը հրաժարվեցին ընդունել Աղա Մուհամմադ խանի հպատակությունը:

1791 թ. նրա զորքերը, հատելով Արաքսը, փորձում են գրավել Թալիշի, Լենքորանի և Երևանի շրջանները, բայց դա նրանց չի հաջողվում: Շահին առավել շատ անհանգստացնում էին ռուսական կողմնորոշում ունեցող Արցախի մելիքները: Պարսից շահին ենթարկվելու պարագայում նա խոստացավ ճանաչել մելիքների իրավունքները և տապալել Իբրահիմ խանին: Սակայն Արցախի մելիքները մերժեցին շահին: Դեռ ավելին, նրան դիմակայելու համար անգամ դաշնակցեցին Իբրահիմ խանի հետ: Միայն շրջահայացություն ցուցաբերեց Ջրաբերդի մելիք Մեծյունը՝ միանալով Աղա Մուհամմադ խանին: Իբրահիմ խանին և անհազանդ մելիքներին պատժելու համար 1794 թ. ամռանը Սուլեյման շահզադեի զորքերը մտնում են Արցախ և խայտառակ պարտություն կրում<sup>300</sup>:

Արցախում կրած պարտությունը կատաղեցնում է Աղա Մուհամմադ խանին, և նա դաժանությամբ պատժում է ողջ վերադարձած զորապետերին:

Հետագա արհավիրքներին դիմակայելու նպատակով Վրաստանի Հերակլ թագավորի, Ղարաբաղի, Երևանի և Թալիշի խաների միջև հակապարսկական ճակատ է ձևավորվում:

1795 թ. պարսկական 80 000-անոց խառնիճաղանջ բանակը, անձամբ Աղա Մուհամմադ խանի գլխավորությամբ, անցավ Արաքս գետը և մտավ Այսրկովկաս: Նա բանակը բաժանեց երեք մասի: Մի մասն իր եղբոր՝ Ալի-Ղուլի խանի առաջնորդությամբ ուղարկեց՝ Երևանը գրավելու, երկրորդ խմբավորումը խնդիր ուներ հպատակեցնել Թալիշի, Շաքիի և Շիրվանի խաներին, իսկ հիմնական զորքերի գլուխ անցած նա 1795 թ. օգոստոսին

<sup>299</sup> Крымский А., История Персии, ее литературы и дервишской теософии, ч. III, стр. 267-268. Լեո, հ. 3, գիրք 2-րդ, էջ 384:

<sup>300</sup> Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), էջ 19:

շարժվեց դեպի Շուշի: Պարսից շահը 33 օր բերդավանը պահեց պաշարված վիճակում:

Աղա Մուհամմադ խանը Շուշիի հանդիպակաց ձորի մյուս կողմից՝ Խաչին տափից (Թոփխանա - Վ. Բ.), դեկավարում էր մարտը: Շահի բանակում գտնվող ֆրանսիացի հրետանավորները ոմբահարում էին բերդավանը, բայց՝ ապարդյուն:

Միրզա Յուսուֆ Ներսեսյանը գրել է. «Հրազենի ավերիչ կրակահերթերը չէին դադարում, և կողմերից ոչ մեկը կանգ չի առնում: Սպանվածներից բլրակներ են առաջանում, և նրանց արյունից առվակներ հոսում: Ղարաբաղի թե՛ մահմեդական և թե՛ հայ բնակիչները այն ծով բանակի առաջ տղամարդու պես կանգնած կռիվ են տալիս՝ ոչ մի ակնթարթ մարտից չխուսափելով և սիրանքներ գործելով: Շուշիի բերդում հրազենի գնդակներից մեծ թվով կանայք ու տղամարդիկ են վիրավորվում ու սպանվում: Իսկ Աղա Մուհամմադ խանի բանակի զոհվածներին թիվ ու հաշիվ չկար: ... իր բանակը ղարաբաղցիների խիզախ հարձակումներից ու հարվածներից կորուստներ է տալիս ու հուսալքվում: Ղարաբաղցիները հարձակվում էին պարսկական բանակի վրա, կողոպտում նրա գումակը»<sup>301</sup>:

Շահին չի հաջողվում կոտրել Շուշիի պաշտպանների դիմադրությունը: Արցախցի մի ծերունու պատմածի հիման վրա Վարդան Օձնեցին նկարագրում է, թե ինչպիսի խիզախություն են դրսևորել Շուշիի ամրոցը պաշտպանելիս 60 հայ քաջորդիներ, որոնք, ծածուկ դուրս գալով ամրոցից, հանկարծակի հարձակում են գործել թշնամու վրա, խուճապի մատնել և մեծ կորուստներ պատճառել նրանց<sup>302</sup>:

Շրջակա գյուղերի 12 000 հայ ընտանիքներ, պատսպարվելով Շուշին շրջապատող կիրճերի մեջ, թիկունքից հարվածում էին պաշարողներին<sup>303</sup>: Ֆիրուզին Շուշինսկին այդ դեպքերի մասին գրել է. «Վարանդայի, Դիզակի և Խաչենի հայերը, մելիք Շահնազարի գլխավորությամբ թաքնվելով անտառներում, հանկարծակի հարձակումներ էին գործում թշնամու ուժերի վրա՝ տանելով ձիերը, ջորիները, ուղտերը, իրենց ձեռքը գցելով մթերքներով բարձած քարավաններ»<sup>304</sup>:

<sup>301</sup> Ներսեսյան Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 68:

<sup>302</sup> Վարդան Օձնեցի, Նոր քաղաքական և եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի, մեծի և փոքրու, Մատենադարան, ձեռ. 4331, թ. 135:

<sup>303</sup> Տիտանյան Ռ., Նորահայտ նյութեր Շուշի բերդի պաշտպանության մասին, «ԼՀԳ», թիվ. 9, 1966, էջ 76-77:

<sup>304</sup> Шушинский Ф., Шуша, стр. 14: Հեղինակը մելիք Ջումշուդին շիրթել է մելիք Շահնազարի հետ: Վերջինս իր մահկանացուն կնքել էր 1792 թ.:

Պարսիկները, վախենալով բերդի պաշտպանների հանկարծակի հարձակումներից, իրենց ճամբարի շուրջը կառուցում են հսկիչ աշտարակներ: Սակայն գիշերը գաղտագողի Վարանդայի հայկական ջոկատները գրավեցին այդպիսի աշտարակներից մեկը, որը պաշտպանում էին Աղա Մուհամմադ խանի թիկնազորի մարտիկները: Մեկ ժամում գրոհով վարանդացիները ոչնչացրին նրանց, իսկ կենդանի մնացածներին գերեվարեցին և տարան Շուշի:

Ամրոցի պարիսպների տակ կրած պարտության համար Աղա Մուհամմադ խանի հրոսակները վրեժխնդիր են լինում անզեն ժողովրդից: Պարսից շահն առանձնակի դաժանություն էր ցուցաբերում գերի ընկած բերդապահ հայերի նկատմամբ: Նա հրամայեց ձիերը պայտել այնպես, որ պայտերը լինեն սմբակների երեսին, իսկ մեխերը դուրս ցցված լինեն սմբակների տակից: Ապա գերիներին փռել տվեց գետնին և պայտած ձիերով կոխկրտել տվեց նրանց: Սմբակներից դուրս ցցված մեխերը կատարելապես հոշոտեցին, մսի ու արյան զանգված դարձրին այդ թշվառներին<sup>305</sup>: Պարսկական զորքերը դաժան հաշվեհարդար տեսան նաև Շուշիի բերդը հարավից պաշտպանող Քարինտակի ազգաբնակչության հետ: 1795 թ. օգոստոսի 22-ին նրանք հանկարծակի մտնում են գյուղ և կոտորում եկեղեցում հավաքվածներին: Բնակչության մի մասն էլ, փախչելով անտառներն ու լեռները, փրկվում է վերահաս ջարդից<sup>306</sup>:

Շուշիի պարիսպների տակ կրած խայտառակ պարտությունից խուսափելու և թալանին սովոր բանակին բավարարելու համար Աղա Մուհամմադ խանն այս անգամ որոշեց գրավել Թիֆլիսը: Մյուս կողմից «Աղա Մուհամմադ խանը մտածում է, – գրել է Միրզա Յուսուֆ Ներսեսյանը, – որ, եթե մի քանի օր էլ այսպես անցնի, իր բանակը կկազմալուծվի, ցաքուցրիվ կլինի և կատարյալ կորստյան կմատնվի: Ուստի իր բանակի զորավարների ու սպաների հետ խորհրդակցելով՝ կարգադրում է ետ վերադառնալ. չէ որ ճիշտը սխալի կեսից ետ դառնալն է: Հակառակ դեպքում շուտով իրենց բանակից ողջ մարդ չի մնա ...»<sup>307</sup>:

Այդ հանգամանքները հաշվի առնելով՝ Աղա Մուհամմադ խանը, ասպատակելով Շուշիի շրջակայքում գտնվող հայկական բնակավայրերը, բազմահազար զորքերի գլուխ անցած շարժվում է դեպի Թիֆլիս: Կես ճանապարհին նրան է միանում նաև Երևանը պաշարած պարսկական զորքը: Վրաց Հերակլ թագավորն այդ օրերին լքված էր բոլորից, նույնիսկ նրան չէ-

<sup>305</sup> Ахмед–бек Джебешшир, стр. 24:

<sup>306</sup> Բաբախանյան Առաքել, Մի քանի հնութիւններ, «Արձագանք», 1 սեպտեմբերի, հմ. 9, Թիֆլիս, 1885, էջ 122:

<sup>307</sup> Ներսեսյան Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 68:

ին ցանկանում օգնել իր իսկ որդիները: Թիֆլիսի գրոհին մասնակցում էին նաև Գանձակի Ջավադ խանի և Ջրաբերդի մելիք Մեծլումի գնդերը:

Տարիներ շարունակ Հերակլ թագավորը համագործակցում էր Շուշիի Իբրահիմ խանի հետ, որի պատճառով Արցախի մելիքներն աստանդական էին դարձել: Իսկ Վրաստանում գտնվելու տարիներին տուն ու տեղից զրկված մելիքներն արհամարհական վերաբերմունքի էին արժանանում վրաց ազնվականության կողմից: Մելիք Մեծլումի հատուցման ժամն էր ևս եկել: Պատահական չէր, որ Աղա Մուհամմադ խանի բանակում մելիք Մեծլումն իր պատվավոր տեղն ուներ:

Պարսկական զորքերին հաջողվեց 1795 թ. սեպտեմբերի 12-ին մտնել Թիֆլիս: Վաճառաշահ քաղաքը թալանվում է, բնակիչների մի մասը սրի է քաշվում, իսկ մնացածները գերության են տարվում: Յոթ օր ու գիշեր քաղաքը թալանելուց հետո շահի զորքը մեծաքանակ ավարով քաշվում է դեպի Մուղանի դաշտ՝ այնտեղ ձմեռելու: Մինչ այդ շահը փորձեց հնազանդեցնել Շամախու և Նուխու խաներին: Բայց նրա զորքերը պարտություն կրեցին: Կատաղած շահն իր թույնը թափեց Թիֆլիսից բերված գերիների վրա: Շահը առավել դաժանաբար պատժեց Արցախից բերված 52 հայ գյուղապետերի: Նրա հրամանով շինվեց մի քարակիր պատ՝ 52 նեղիկ անցքերով, որոնց մեջ մտցվեցին գյուղապետերի գլուխները: Ապա պատի մյուս կողմից նրանց պարանոցներին անց կացրին հաստ պարաններ, որոնց ծայրերը կապեցին ամեհի ջորիների գավակներին ու հարվածներով ստիպեցին անասուններին՝ քաշել այդ պարանները: Նրանք այնքան քաշեցին, որ թշվառների գլուխները պոկվեցին<sup>308</sup>:

Աղա Մուհամմադ խանի՝ երկրից երկար ժամանակ բացակայելու պատճառով Պարսկաստանի ներքին նահանգներում ապստամբություններ են բռնկվում: Շահը շտապում է Պարսկաստան՝ փրկելու իր իշխանությունը:

Իբրահիմ խանը, օգտվելով ստեղծված իրավիճակից, Ավարիայի Օմար խանի հետ խորհրդակցաբար որոշում է Ջավադ խանին և մելիք Մեծլումին պատժելու համար գրավել Գանձակը: Քաղաքի գրոհին մասնակցելու համար Հերակլի զորքերը, որոնց գլխավորում էր թագավորի Ալեքսանդր որդին, շտապեցին դեպի Գանձակ: 1796 թ. հունվարին Իբրահիմ և Օմար խաների զորքերը պաշարում են Գանձակը: Շուրջ երեք ամիս բերդի պաշտպանները մելիք Մեծլումի գլխավորությամբ դիմակայում էին դաշնակիցների գրոհներին:

Ավանդությունը պատմում է, որ Իբրահիմ խանը, տեսնելով, որ չի կարողանում գրավել բերդաքաղաքը, մելիք Մեծլումի նկատմամբ դավադրու-

<sup>308</sup> Վարդան Օձնեցի, Մատենադարան, ձեռ. 4331, թ. 158:

թյուն է կազմակերպում: Նա գաղտնի Գանձակ է ուղարկում իրեն հյու-հնա-գանդ ծառայող կաթողիկոս Իսրայելի հորը՝ Ապրես աղային: Վերջինիս հաջողվում է բերդում խռովություն առաջացնել մելիք Մեծլումի և Ջավադ խանի դեմ: Ընդհարումների ժամանակ մելիք Մեծլումը ծանր վիրավորվում է: Ապստամբությունը ճնշվում է, և Ջավադ խանը Ապրես աղային գլխատել է տալիս ու գլուխն ուղարկում նրա փեսա մելիք-Ռուստամին ու Իբրահիմ խանին: Երրորդ օրը մելիք Մեծլումը Ջավադ խանի պալատում մահանում է: «Բայց Ջավատ խանը երկու ամբողջ շաբաթ նրա մարմինը պահեց իր տան մեջ, բժիշկը գնում գալիս էր, իր ժամանակին նրա սենյակը ընթրիք և ճաշ էին տանում, և ամեն օր Ջավատ խանն ուրախությամբ հայտնում էր հայոց գործերին, թե շուտով Մելիք-Մեծլումը, բոլորովին առողջացած, դուրս կգա: Դրանով խանը կամենում էր պահպանել հայոց բանակի եռանդը, որպես-զի իրենց իշխանի մահը լսելով չվհատվեն, մինչև ինքը թշնամու հետ գործը վերջացնի»<sup>309</sup>: Կորովի հայ զորավարից զրկվելուց հետո Ջավադ խանը, անհեռանկար համարելով Գանձակի պաշտպանության կազմակերպումը, հաշտություն է խնդրում Իբրահիմ խանից, նրան հայտնում իր հպատակու-թյունը և ռազմատուգանք վճարում: Միաժամանակ Ջավադ խանն իր որդուն և քրոջը, որպես պատանդ, հանձնում է Իբրահիմ խանին:

18-րդ դարի վերջերին Այսրկովկասում տեղի ունեցած քաղաքական ան-ցուղարձերը, տարածքային վերաձևումները, Հերակլ թագավորի դիրքերի թուլացումը և Աղա Մուհամմադ շահի հաջողություններն ի չիք դարձրին տա-րածաշրջանում Ռուսաստանի վերջին տասնամյակների ձեռքբերումները:

Կորուստները վերականգնելու նպատակով ցարական իշխանություն-ներն անհապաղ միջոցներ ձեռնարկեցին:

Օգտվելով առիթից, որ Խորասանում բռնկված խլրտումները ճնշելու հա-մար Պարսկաստան է ձանապարհվել Աղա Մուհամմադը, 1796 թ. գարնա-նը ռուսական արքունիքը գործնականորեն նախապատրաստվում է արշա-վանքի: Ռուսական էքսպեդիցիոն կորպուսը գլխավորելու էր կոմս Վալերի-ան Զուբովը: Վերջինիս Եկատերինա կայսրուհու խնդրանքով ուղեկցում էր արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը, որը քաջատեղյակ էր Այսրկովկա-սում և Պարսկաստանում տիրող քաղաքական կացությանը:

1796 թ. մայիսի 10-ին ռուսները գրավում են Դերբենդը: Ռուսական զեն-քի համար արշավանքը սկզբից ևեթ բարեհաջող էր:

Շուտով ռուսներին են հանձնվում նաև Ղուրան, Շամախին ու Բաքուն<sup>310</sup>: Ռուսական զորքերի այս հաջողությունները պայմանավորված էին նաև

այդ վայրերի հայերի աջակցությամբ: Հովսեփ Արղությանի կոչով ամենուր ստեղծվում են կամավորական ջոկատներ: Ռուսական իշխանություններն Այսրկովկասի քրիստոնյաներին ոգևորելու նպատակով հայտարարել էին, որ իրենց գերխնդիրն իր կալվածքներում Հերակլի իշխանության վերա-կանգնումն է, իսկ հայ մելիքներին և նրանց հպատակ Ղարաբաղի բնակիչ-ներին՝ ազատումը<sup>311</sup>:

1796 թ. աշնանը կոմս Վ. Զուբովը համալրում է ստանում և հոկտեմբեր ամսին մի զորաջոկատ գեներալ Ս. Մ. Ռիմսկի-Կորսակովի հրամանա-տարությամբ ուղարկում Գանձակի վրա: Քաղաքը գրավելուց հետո նրանք պետք է միանային ռուսական հիմնական ուժերին և հասնեին Կուր ու Արաքս գետերի խառնվելու վայրը: Հովսեփ Արղությանն այնուհետև խոր-հուրդ է տալիս «անցնել Կուր գետը և, կանգ առնելով Մուղանի դաշտում, հրաման տալ Շուշու Իբրահիմ խանին, որ նա ինքը գա Ձերդ պայծառափայ-լության մոտ կամ գոնե ուղարկի իր ավագ որդուն հայ մելիքների հետ: Ձերդ պայծառափայլության այդ հրամանի կատարումը կդառնա Իբրահիմի՝ դե-պի Ռուսաստանն ունեցած հավատարմության և ջերմեռանդության ապա-ցույց: Այնտեղ բոլոր կարևոր գործերը վերջացնելուց հետո կարելի է անար-գել գնալ Թավրիզի կամ Արդեբիլի վրա, ուր որ ավելի հարմար կդիտվի: Իսկ հիշյալ Իբրահիմ խանից անհրաժեշտ է պահանջել նրա որդուն՝ հազար զինվորների հետ և հինգ հայ մելիքներին՝ նրանց հինգ հազար զորքի հետ, զանազան գործողությունների համար, մասնավորապես իբրև առաջապահ զնդեր, որովհետև նրանց խորթ չէ պատերազմական ոգին: Իսկ եթե Շուշու խանը Ձեր հրամանը կատարել չկամենա, այդ կլինի նրա անհավատարմու-թյան և խորամանկ խաբեության բացարձակ ապացույց: Այս դեպքում կա-րելի է գործադրել հայ մելիքներին, որոնք հարմար զենք կդառնան նրան պաշտոնագուրկ անելու և բարձր աստիճանից ու բերդից զրկելու համար, իսկ այնուհետև ամբողջ Ատրպատականը կարելի է հնազանդության մեջ պահել առանց զենքի: Հայ զորքի թիվը, ի մեծ օգուտ Ռուսաստանի, կբազ-մապատկվի և կհասնի մեծ քանակության, և բոլոր ձեռնադրությունները վերջիվերջո կհանգեն բարեհաջող վախճանի: Շուշու խանը, իր կարծիքով, իր բերդը համարում է անառիկ, բայց այդ կարծիքի վերաբերմամբ կարող է հեշտությամբ խաբված լինել, որովհետև նրա բերդը և ուժը առավելապես հայերն են կազմում, որոնք թեև կտրիճ ու քաջ են, բայց ճշմարտապես ան-ձնատուր եղած լինելով ռուսաց գահին, ոչ միայն զենք չեն վերցնի ռուսների

<sup>309</sup> Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 198–200:

<sup>310</sup> Միրզա Յուսուֆ Ներսեսով, Աշվ. աշխ., էջ 71–72:

<sup>311</sup> Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 года, ч. II, стр. 209; Дубровин Н., Поход графа В. А. Зубова в 1796 г., «Военный сбор-ник», 1874, но. 5, СПб, стр. 13–15.

դեմ, այլև ամեն կերպ կաջակցեն Իբրահիմի կորուստյան, եթե նա ուխտադրուժ կհանդիսանա: Պետք է միայն հայ մելիքներին գաղտնաբար հուսադրել նորին մեծության ողորմությամբ և հովանավորությամբ»<sup>312</sup>: Իբրահիմ խանը կեղծավորաբար, ջերմ հարաբերություններ պահպանելով Ջուրովի հետ, միաժամանակ հակառուսական ծրագրեր էր մշակում: Նա Նուխու և Շամախու խաների հետ հակառուսական դաշինք կնքեց: Իբրահիմ խանն իր մոտ կանչեց Վարանդայի մելիք Շահնազարի որդի մելիք Ջումշուդին և մահ սպառնաց նրան, եթե հայերի մեջ ռուսամետ շարժում նկատի: Դրանից հետո Իբրահիմ խանը դավադրություն կազմակերպեց Ջուրովի դեմ, բայց հաջողություն չունեցավ:

Շուտով նորից ընդհատվեց ռուսական զորքերի հաղթարշավը: 1796 թ. նոյեմբերի 6-ին մահացել էր Եկատերինա 2-րդը, և նոր կայսր Պավել 1-ինը, լինելով իր մոր քաղաքական ծրագրերի հակառակորդը, քմահաճորեն չէր ցանկանում շարունակել այդ արշավանքը: Ռուսական զորքերի հեռանալը ծանր հարված էր հայության համար: Ժողովուրդն ապրում էր տագնապալից օրեր: Մշտապես կրկնվող պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի, Սյունիքի և Գանձակի շրջաններում սովն ու մահտարժամը սովորական երևույթներ էին: Հայության մի մասն ստիպված լքում էր հայրենիքը՝ հեռանալով Վրաստան և Ռուսաստան: Շուրջ 500 հայ ընտանիքներ բնակություն են հաստատում Կիզլյարում և շրջակա բնակավայրերում<sup>313</sup>:

Ռուսական զորքերի հեռանալուց հետո՝ 1797 թ. գարնանը, Աղա Մուհամմադ շահը նոր արշավանք սկսեց դեպի այսրկովկասյան երկրներ: Շահը, Խուդափերինի կամրջով անցնելով Արաքսը, շարժվում է դեպի Շուշի: Արցախն ապրում էր տագնապալի օրեր: Անընդհատ կրկնվող պատերազմները և երեք տարի երաշտի հետևանքով առաջացած անբերրիությունն ու սովը երկիրը կանգնեցրել էին կործանման եզրին: Հազարավոր ընտանիքներ իրենց գոյությունը քարշ տալու համար տեղափոխվել էին հարևան երկրներ: Կտրուկ կրճատվել էր գենք կրելու ընդունակ մարդկանց թիվը: Իբրահիմ խանը, հաշվի առնելով այդ ամենը, իր գլուխը փրկելու համար մերձավորներով լքում է ամրոցի պաշտպաններին և փորձում է հեռանալ Դաղստան՝ ապաստան որոնելով Օմար խանի մոտ: Աղա Մուհամմադ խանը, իմանալով Իբրահիմ խանի փախուստի մասին, առաջապահ գնդերից երկու հազար հոգուց քաղկացած մի զորագունդ է ուղարկում Շուշիի խանին ձերբակա-

լելու: Թարթառի գետանցի ժամանակ հետապնդող զորագունդը հասնում և կռվի է բռնվում Իբրահիմ խանի թիկնազորի հետ, բայց հաջողության չի հասնում:

Աղա Մուհամմադ խանը, հիմնական զորքերի գլուխ անցած, Վարանդայի հայկական գյուղերն ավերելով, հասնում է Ավետարանոց և հրամայում հրի մատնել մելիք Ջումշուդի տունը, որը շահի առաջին արշավանքի ժամանակ Շուշիի բերդի պաշտպանության կազմակերպիչներից էր:

Կոտրվել էր բանակի և ժողովրդի եռանդը, և Աղա Մուհամմադ խանն այս անգամ առանց դիմադրության գրավում է Շուշին: Շահը 1795 թ. կրած պարտության ողջ թույնը թափեց բերդավանի ազգաբնակչության վրա: Արյան նախճիր կազմակերպվեց: «Եւ ետ ածել զառաջեալ զամենայն իշխանս հայոց՝ եւ չարչարեալ զնոսա բազմատեսակ տանջանօք, զի ստօյգն ասացն զորքանութենէ յընչից իւրեանց, զոմանս գլխիվայր կախէին՝ ոմանց ի պարանոց արկանէին հրացեալ կասկարայս եւ հրացեալ շամփորք խարէին զմարմինս նոցա եւ ոմանց՝ կարմրացիալ սկահակս անցուցանէին եւ վերա սկաւառակի գլխոյն՝ ևս եւ այլով բազմատեսակ կոշկոճանօք վշտացուցանէին զամենայն բնակիչս քաղաքին: Ջնոյն չարչարանս ետուն կանանց ևս ասելով՝ գիտեմք, զի ունիք պահուստս ծրարեալս, անօթս արծաթեղէնս և կամ զայլ ծանրագին ազանելիս բերիջիք շահքն: Եւ իբրև այսպես յինէ որ տանջանօք անխնայ պարզեաց զամենեսեան քաղաքն յընչից՝ մինչև զեկեղեցիս ևս, վասն զի կանայք անձարացեալք թե ինչ տացեն այլ՝ ինչ ոչ մնաց՝ զի տացեն ի գերծուցանել զարս իւրեանց եւ վշտացն մտանէին յեկեղեցիս եւ փթթուցանէին զարծաթս, յաւետարանաց՝ տարեալ մատուցանէին շանց, զի ազատեսցին զնոսա»<sup>314</sup>:

Շուշիում և նրա շրջակայքում տեղակայված պարսկական զորքերի անկազմակերպվածության և վատ մատակարարման պատճառով գնդերում խլրտումներ են սկսվում: Անհանգիստ վիճակում էր գտնվում նաև Շուշիի խանի պալատում տեղակայված շահական արքունիքը: Հատկապես լարված էին շահի շրջապատի՝ պարսկական և թուրքական ծագում ունեցող պալատականների միջև փոխհարաբերությունները: Այս ամենն ավելի դյուրագրգիռ էին դարձնում առանց այն էլ կասկածամիտ շահին: Աղա Մուհամմադ խանի հրամանով ձերբակալվել էին մելիք Ջումշուդ Շահնազարյանը, մուլլա Փանահ Վազիֆը և շատ ուրիշ իշխանավորներ: Շահը «... աննշան մի սխալի համար զայրանում է իր գիշերային սպասավորներից երկուսի՝ Սաֆար Ալի բեկի ու Աբաս բեկի վրա և ասում. «Վաղն առավոտյան, երբ արևի սկավառակը հորիզոնում երևա, Շուշի ամրոցի բոլոր գերյալներին առանց

<sup>312</sup> Լեո, հ. 3, գիրք 2-րդ, էջ 395-396:

<sup>313</sup> Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 года, ч. II, стр. 424-425.

<sup>314</sup> Տիտանյան Ռ., նշվ. աշխ., էջ 40:

որևէ երկմտանքի գլխատելու եմ և սպանվածների գլուխներից աշտարակ եմ կառուցելու, իսկ ձեր կտրված գլուխները դնելու եմ ամենավերևում»:

Ասում են նաև, որ երեկոյան նամագի ժամանակ, նրանցից մեկին հրամայում է զորավարներից մեկին իր մոտ կանչել: Բայց սպասավորը նրա հրամանը չի լսում: Երբ Աղա Մուհամմադ խանը նամագն ավարտում է, նրանից հարցնում է. «Ինչո՞ւ զորավարը չի եկել»: Վերջինս, ներողություն խնդրելով, արդարանում է, թե՛ քանի որ շահը նամագ էր անում, նրա հրամանն իրեն լսելի չի լինում: Շահն անմիջապես հրամայում է կտրել նրա ականջները՝ ասելով. «Ավելի լավ է կտրել ականջը, որը չի լսում շահի հրամանը»<sup>315</sup>:

Համոզված լինելով, որ շահն իր խոսքից ետ չի կանգնի, Սաֆար Ալին գիշերով մտնում է շահի ննջարանը և դաշույնի հարվածներով վերջ դնում բռնակալի ոճրաշատ կյանքին<sup>316</sup>:

Արդեն անգլուխ շահական զորքը և ամբոխը հարձակվում են Աղա Մուհամմադ խանի նստավայրի վրա, թալանում թանկարժեք սպասքն ու զարդերը: Մնացած մասն էլ բռնագրավում է Իբրահիմ խանի եղբոր որդին՝ Մուհամմադ բեկը:

Երկար ժամանակ ժողովրդի մեջ պահպանվել է Աղա Մուհամմադ խանի ունեցած անսպառ հարստությունների մասին առասպելը: Ավանդությունը պատմում է, որ Աղա Մուհամմադ խանի կողմից Այսրկովկասում, այդ թվում Շուշիում թալանված ոսկին, մարգարիտը և այլ թանկարժեք քարեր ու սպասքներ թաքցված են Շուշիի հարավարևելյան կողմի նեղ և խոր ձորի մեջ<sup>317</sup>:

Աղա Մուհամմադ խանի սպանությունից հետո պարսից զորքը խառնիճաղանջ խմբերով հեռանում է դեպի Իրան, ուր իշխանության համար նոր պայքար էր սկսվել:

Շուշիում իրեն ժամանակավոր խան հռչակած Մուհամմադ բեկը Աղա Մուհամմադ խանի գլուխն ուղարկում է Բայլական՝ Իբրահիմ խանին: Վերջինս էլ այն հետո ուղարկում է Հերակլ թագավորին: Այս անգամ էլ ճակատագիրը Շուշին սկուտեղի վրա մատուցեց Իբրահիմ խանին: Նա առանց մի կրակոցի մտավ Շուշի և հաղթականորեն բազմեց խանական գահավորակին:

<sup>315</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, Նշվ. աշխ., էջ 74; Շիրմազանյանց, Ճանապարհորդություն Հայաստանում, «Արարատ» ամսագիր, հմ. 10, Ս. էջմիածին, 1877, էջ 306:

<sup>316</sup> Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 21:

<sup>317</sup> «Հայկական աշխարհ», հմ. 2, մայիս, Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Շուշի, Երևան, 1874, էջ 35–36:

Արցախահայության համար նոր դժոխային ժամանակներ սկսվեցին: Ժողովուրդն ապրում էր իր պատմության թերևս ամենատագնապալից ու մղձավանջային օրերը: Աղա Մուհամմադ շահի և Հյուսիսային Կովկասի խառնամբոխ ցեղերի, Այսրկովկասի կառավարիչների պարբերաբար կրկնվող ասպատակությունները, Իբրահիմ խանի խարդավանքներն ու հայաջինջ քաղաքականությունը քամել էին Արցախի կենսատու ուժերը: Այս ամենին գումարվեցին երաշտն ու բնական մյուս աղետները: Երկրամասում մոլեգնում էին սովն ու համաճարակ հիվանդությունները:

Ավանդությունները վկայում են, որ մարդիկ գերեզմաններից հանում էին նոր թաղած մեռելներին և ուտում, հարձակումներ գործում՝ գերիներ խլելու և մորթելու համար, երեխաներից մի քանիսին սպանում էին՝ մյուսներին հանգստացնելու<sup>318</sup>: Գաղթականների հոծ զանգվածները, տեղափոխվելով Վրաստան, մի կտոր հացի համար վաճառում էին իրենց երեխաներին<sup>319</sup>: Երկրամասի ազգաբնակչության թվաքանակը խիստ կրճատվեց: Եթե 18-րդ դարի 80-ական թվականներին Արցախում ապրում էր 60 000 ընտանիք, ապա 19-րդ դարի սկզբներին նրանց թիվը հասավ 24 000-ի<sup>320</sup>: Հուսալքվել էր նաև Գանձասարի Սարգիս կաթողիկոսը: Նա նույնպես տեղափոխվեց Թիֆլիս: Սարգիս կաթողիկոսը անգամ հրաժարվեց կաթողիկոսական աթոռից և դարձավ Հաղպատի վանահայրը: Աստանդական դարձած մելիքներն էլ միայն իրենց անձնական բարեկեցության մասին էին մտածում: 1799 թ. նրանք մեկնեցին Պետերբուրգ և Հ. Արդությանի միջնորդությամբ ցարին ներկայացրին իրենց աղերսագրերը:

Արցախում մելիքների վիճակի և նրանց տրամադրությունների մասին ճիշտ և համապարփակ պատկերացում կազմելու համար նպատակահարմար ենք գտնում Լեոյի աշխատությունից մեջբերել երկու փաստաթուղթ, որոնք նա քաղել է «Акты Кавказской Археологической комиссии» (т. 1, Тифлис, 1866 г.) ժողովածուից: Այդ փաստաթղթերը կազմվել են մելիք Ջումշուդի և մելիք Ֆրեյդունի կողմից ու Արդությանի միջոցով 1799 թ. ներկայացվել ռուսաց ցարին: Աղերսագրի մեջ ասված է. «Ամենաբարձրյալի օգնությամբ վնդեղելով մեր փրկիչ Հիսուս Քրիստոսին ատելի նշանները (մահամեղականություն), ընդունիր քո բարձր հովանավորության և իշխանության տակ Ղարաբաղը, որ պատկանում է մեզ, մելիք Ջումշուդիս, մելիք Ֆրեյդունիս և մյուսներին ժառանգությամբ և ոչ թե Իբրահիմ խանին, մեր հողերը

<sup>318</sup> Ахмедбек Джеваншир, О политическом существовании Карабахского ханства, стр. 38.

<sup>319</sup> Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 192:

<sup>320</sup> Сейранян П., Карабах и Россия, страницы истории, Москва, 1997, стр. 97.

հափշտակողին, և որ բաղկացած է հինգ զավառներից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձին մելիքը: Այս երկիրը մտցնելով Ձեր կայսերական գայիսունի հովանու տակ, դրանով Դուք կգրգռեք այժմ զանազան հեռու տեղեր ցրված հայերի մեջ ցանկություն՝ նորից վերադառնալու այնտեղ, իբրև մի անվտանգ և հուսալի երկիր, որի պահպանողը Ձեր բարձր բազուկն է. դրանով ռուսաց կայսրությունը կստանա նոր ուժեր՝ հաղթելու նրա բարությունը նախանձող թշնամիներին: 2. Եթե այս որևէ պատճառով ընդունելի չի լինի, այդ դեպքում մելիքները խնդրում են ամենախոնարհ կերպով, որ 12 հազար զորք տրվի մելիքներին, որպեսզի նրա օգնությամբ կարողանան գնալ Ղարաբաղ և հանել այնտեղից նրանց հավատարիմ հպատակ քրիստոնյաներին և մահմեդականներին, ինչպես նաև այն հայերին, որոնք ցրված են Շաքիում և Շիրվանում, որոնց ընդհանուր թիվը քսան հազար ընտանիքից ավելի կլինի: Նրանք ամենքը գաղթելու կատարյալ համաձայնություն են հայտնել Հովսեփ արքեպիսկոպոսին, երբ սա վերջին պարսկական արշավանքի ժամանակ տեսություն ունեցավ նրանց հետ»: Ճանապարհների շտկումը Կովկասյան լեռներում պետք է վերցնել կայսրն իր վրա, իսկ զորքերին կերակրելը մելիքներն իրենք են հանձն առնում: Ժողովուրդը Ղարաբաղից դուրս բերելուց հետո նոր բնակության տեղ խնդրում էին տալ այն «ընդարձակ երկիրը, որ Մոժարի անունով տեղից տարածվում է մինչև Եկատերինոգրադ և նրա շրջականները, որպեսզի այնտեղ բնակվելին ոչ միայն այս առաջին գաղթականները, այլև նրանք, որոնք հետո կգաղթեն և, օրօրի վրա բազմանալով ձեր կայսերական մեծության բարեկեցիկ իշխանության տակ, կարող են կազմել մի նոր – Փոքր Հայաստան Ռուսաստանում»: Այդտեղ գաղթելուց հետո մելիքները խնդրում էին շնորհել իրենց այնպիսի արտոնություններ, իսկ հպատակներին ապրուստի այնպիսի եղանակ, ինչպես կրարեհաճի կայսրը: «3. Եթե այս երկու խնդիրներն էլ անհաճո կլինեն Ձերդ կայսերական մեծությանը, այն ժամանակ գոնե շնորհ արեք հրամայելու վրաց թագավորին, որ տա մեզ բնակության համար իր իշխանության տակ գտնվող անքնակ հողը, որ հնում Գուգարք էր կոչվում, իսկ այժմ՝ Ղազախ, և տարածվում է մինչև Լոռու գավառը. այս տեղերում առաջ էլ կային հայ գյուղեր, որոնք զանազան ժամանակ ավերվել են պարսիկների ձեռքով: Այս բանի համար մենք պարտավոր կլինենք ընդմիշտ ունենալ դեպի թագավորը ոչ միայն հավատարմություն, այլև ամեն մի դեպքում պաշտպանել և օգնել նրան, վերապահելով մեզ այն իշխանությունը, որ մենք ունենք մեր հպատակների վրա մինչև այսօր: Այս երկիրը, թեև լեռնոտ է, բայց շատ բերրի է և հարուստ է զանազան հանքերով, ինչպես են՝ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, կապար և այլն, ունենալով դրա հետ և գործածության պիտանի շատ

անտառներ, որոնցով կարելի է վերանորոգել քարուքանդ արված բերդերը և պաշտպանել վրաց թագավորությունը բարբարոսներից, որպես թե մի պարիսպով»: Այդ պաշտպանության տակ հայերն էլ ծաղկած վիճակի կհասնեն, և, նրանց բարեկեցությանը նայելով, սահմանների հետևում ապրող շատ հայեր կգան բնակվելու այդտեղ: «Մեր ազգը կբազմապատկվի, ոմանք կմշակեն հողը, կշահագործեն մետաղները, իսկ մյուսները, որոնք հակում ունեն դեպի առևտուրը, հիմնելով զանազան գործարաններ, կարող են տարածել առևտուրը մինչև նույնիսկ Հնդկաստան հոգուտ ընդհանուրի և ձեր մեծության կայսրության: Եվ կարճ միջոցում հասնելով ցանկալի աճման և ծավալման, ունենալով առատությամբ բոլորը, ինչ որ հարկավոր է, մենք կարող կլինենք ոչ միայն պաշտպանել մեզ և Վրաստանը զանազան թշնամիներից, այլև հավիտյան կարողություն կունենանք և կպարտավորվենք, ամեն մի դեպքում, մեր ծախսով ոչ միայն փոքր, բայց գուցեև, եթե այնքան երջանիկ կլինենք, մեծ ուժով գործել թշնամիների դեմ հոգուտ ռուսաց կայսրության, լինելով ընդմիշտ երախտապարտ նրան և ձեր մեծության արքայական ողորմության՝ մեր փրկության համար: Վերականգնելով հայոց ազգը կրկին իր հայրենիքում, հարևան իշխանությունները, որոնք հաճախ թշնամություն են անում Ռուսաստանին, զրկելով ժամանակ առ ժամանակ իրենց հպատակ շատ հազար քրիստոնյաներից և նրանցից հավաքվող եկամուտներից, զգալի կերպով կթուլանան»: Այս դեպքում էլ մելիքները խնդրում էին զորք տալ՝ գաղթականներին երկրից դուրս հանելու համար»<sup>321</sup>:

Մելիքների աղերսագրերի հետ առանձին ներկայացվել էր մեկ այլ փաստաթուղթ, որի վերնագիրն էր՝ «Հինգ հայ մելիքների անուններն ու զավառները»: Փաստաթղթի մեջ ասված է. «Նրանց (մելիքների) ընդհանուր տիրապետությունը կոչվում է Ղարաբաղ

Առաջինը՝ նրանցից է մելիք Ջումշուդը, որդի մելիք Շահնազարի, որի զավառն անվանվում է Վարանդա և բերդը՝ Շուշի. նրա հետ է որդին և մի յուզբաշի:

Երկրորդը՝ մելիք Աբով, որդի մելիք Հովսեփի, որի զավառը կոչվում է Իգիրմիդորդ և բերդը՝ Գյուլիստան, որ արդեն իր հպատակների մեծ մասը հանել է այն գավառից, հույս դնելով նորին մեծության ողորմության վրա, և գաղթեցրել է Վրաստան՝ վրաց թագավոր Գիորգիի հովանավորության տակ. նրա եղբոր որդի մելիք Ֆրեյդունը վերոհիշյալ մելիք Ջումշուդի հետ այժմ գտնվում է այստեղ (Պետերբուրգ):

Երրորդը՝ մելիք Ռուստոմ, որդի յուզբաշի Ալլահվերդիի, տեղապահ վախճանված մելիք Մեծումի, որ մելիք Հաթամի որդին էր և թողել է 14 տարեկան

<sup>321</sup> Լեո, հ. 3, գիրք 2, էջ 410–411:

մի որդի, մելիք Հաթամ անունով, իսկ նրանց գավառը կոչվում է Ջրաբերդ-թեն նրանց տունն առաջնություն ունի այս հինգ մելիքների տների մեջ, բայց որովհետև այժմ այդ տունը չունի իր սեփական մելիքը, մելիք Մեծլումի որդու անչափահասության պատճառով, այլ ունի միայն վերոհիշյալ տեղապահը, ուստի և առաջնությունը տրվում է մելիք Ջումշուդին:

Չորրորդը՝ մելիք Աբբաս, որդի մելիք Բախտամի, որի գավառը կոչվում է Դիզակ:

Հինգերորդը՝ մելիք Ալլահվերդի, որդի մելիք Միրզախանի, որի գավառը կոչվում է Խաչեն:

Վերոհիշյալ մելիքներն ունեն իրենց իշխանության տակ յուզբաշիններ, այսինքն՝ զորքի հրամանատարներ, որոնցից մի քանիսը ստանում են այս աստիճանը ժառանգաբար, իսկ ոմանք ստանում են իրենց տերերից՝ մելիքներից իրենց ծառայության համար»<sup>322</sup>:

Պավել կայսրն ընդունեց երկու մելիքներին ռուսաց հպատակության տակ: Գյուլիստանի մելիք Ֆրեյդունը՝ մելիք Աբովի եղբոր որդին, ստացավ Բորչալուի մի մասը, իսկ Վարանդայի մելիք Ջումշուդը՝ Լոռին: Գյուլիստանի մելիք Աբովը հաստատվեց Բոլնիսում: Մելիքներին նշանակեցին ամենամյա թոշակ և տրվեցին շքանշաններ: Այս ճանապարհով ցարը վերացնում է արցախահայ պետականության վերջին հնարավորությունը: Հալումաշ դարձած հայ ազգաբնակչությունը ցրված էր Արցախից մինչև Կուր ու Աղստև: Բայց հայրենի հողին կառչած արցախցին իր մեջ գերբնական ուժ ունեն ու նաև պատասխանատվություն սերունդների առջև: Բարեբախտաբար, արցախահայությունը տուրք չտվեց իր մելիքների մի մասի ցանկություններին՝ տեղափոխվել նոր տիրույթներ: Նա գիտակցում էր, որ ամենինչ կորած չէ: Եվ այդ գիտակցությամբ ու մղումով արցախահայությունը շարունակեց պայքարը ազատության համար:

#### գ) 1804–1813 թվականների ռուս-պարսկական պատերազմը: Շուշիի պաշտպանությունը

19-րդ դարի վերջին Այսրկովկասին տիրելու նպատակով Պարսկաստանի և Ռուսաստանի միջև պայքարը նոր թափ է ստանում: Աղա Մուհամմադ շահի սպանությունից հետո նրա եղբորորդին՝ Ֆաթալի շահը, անցնելով իշխանության գլուխ, փորձեց Պարսկաստանի գերիշխանությունը նորից վերահաստատել Այսրկովկասում: Տարածաշրջանի ժողովուրդներն ապրում

<sup>322</sup> Լեո, հ. 3, գիրք 2-րդ, էջ 411-412:

էին խռովահույզ ժամանակներ: Այսրկովկասի բարերեր դաշտերն ու բնակավայրերը նորից ոտքի կոխան պիտի դառնային՝ հագուրդ տալով Պարսկաստանի և Ռուսաստանի ծավալապաշտ կայսրությունների արյունոտ ցանկություններին: Վտանգին դիմակայելու համար 1798 թ. վրաց Հերակլ թագավորին փոխարինած Գեորգի 12-րդը դիմում է ռուսաց ցարին՝ նրա հովանավորությունն ստանալու, հյուսիսային հարևանից միայն ակնկալելով՝ թույլ տալ ժառանգաբար իշխելու Վրաստանում: Ռուսական արքունիքը չէր կարող առիթը բաց թողնել և 1799 թ. մի գունդ զենեքալ Լազարևի գլխավորությամբ ուղարկեց Թիֆլիս: Նրանց հետ էր նաև պետական խորհրդական Կովաչևսկին, որի ձեռքում էր գտնվում Վրաստանի իրական իշխանությունը:

Ֆաթալի շահը կանգնեց կատարված փաստի առաջ: Դաշնակիցներ ձեռք բերելու և հակառուսական ճակատ ստեղծելու համար շահն իր հերթին փորձում էր սիրաշահել Արցախի մելիքներին: Այդ նպատակով շահը մելիք Ջումշուդին և մելիք Ֆրեյդունին նամակ-հրավեր է ուղարկում՝ վերադառնալու իրենց տիրույթները՝ խոստանալով շահական հովանավորություն<sup>323</sup>:

Նույն ժամանակահատվածում Ֆաթալի շահը Իբրահիմ խանից պահանջում է մելիքների նկատմամբ փաղաքշական վերաբերմունք ցուցաբերել<sup>324</sup>: Մելիքները ոչ միայն տեղի չտվեցին, այլև շարունակեցին հավատարիմ մնալ ցարական արքունիքին: Պարսից շահն այս անգամ փորձում է հարցը լուծել ուժային ճանապարհով: Այդ գործում առանձնակի եռանդ էր ցուցաբերում թագաժառանգ Աբբաս-Միրզան: Նա, ռազմական գործչի ունակություններ ունենալով, բարեփոխեց բանակը, ձեռք բերեց նոր սպառազինություն: 1800 թ. գարնանը նրա զորքերը մտան Արարատյան դաշտավայր և պաշարեցին Երևանը: Բերդաբաղաքը գրավել նրանց չհաջողվեց:

Դեպքերի զարգացման ընթացքն ի նպաստ Ռուսաստանի դարձնելու համար Գեորգի 12-րդի մահվանից մեկ տարի անց՝ 1801 թ. սեպտեմբերի 12-ին, Ալեքսանդր Առաջինի հրովարտակով վերացվեց վրաց թագավորությունը և միացվեց Ռուսաստանին:

Ալեքսանդր Առաջինի մանիֆեստով Ռուսաստանին միացվեցին նաև հայկական Լոռին, Փամբակը, Շամշադինը և Հայաստանի հյուսիսային մի քանի այլ շրջաններ: 1804 թ. հունվարին Գանձակի գրավումով այստեղ բնակվող հայերը նույնպես անցան ռուսական հպատակության տակ: Այնուհետև ռուսական հրամանատարությունն սկսում է եռանդուն նախապատ-

<sup>323</sup> АВПРИ, ф. СРП, оп. 77/6, 1796–1800, д. 473, л. 310; Армяно-русские отношения во второй половине XVIII века, т. IV, стр. 510.

<sup>324</sup> АВПРИ, ф. СРП, оп. 77/6, д. 490, л. 17.

րաստություն տեսնել՝ գրավելու ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Երևանի ու Նախիջևանի խանությունները և Շիրակը:

Ռազմական գործողություններ սկսելու առիթը նույնպես եկավ: Կաթողիկոս Հովսեփ Արղությանի մահվանից հետո Երևանի սարդարի ճնշման տակ կաթողիկոս ընտրվեց արքեպիսկոպոս Դավիթը: Վերջիններիս հակառակորդներն էլ կաթողիկոս օձեցին արքեպիսկոպոս Դանիելին: Դանիելը ռուսական կողմնորոշում ուներ: Էջմիածնի կաթողիկոսական աթոռին տիրելու համար զգվտոց սկսվեց: «Դավիթ–Դանիելյան» հակամարտությունը շարունակվեց մի քանի տարի: Պատեհ առիթն օգտագործելով՝ ցարական արքունիքը ներգրավվեց այդ վեճի մեջ՝ Երևանի Մահմադ խանից պահանջելով կաթողիկոս ճանաչել Դանիելին: Վերջինս ընդդիմացավ: Այդպես ռուս-պարսկական խորացող հակասությունները շուտով վերաճեցին 1804–1813 թթ. պատերազմի:

1804 թ. հունիսի սկզբներին ռուսական զորքերը, Վրաստանից մտնելով Արևելյան Հայաստան և կտրելով–անցնելով Լոռի Փամբակը, ընթացս գրավեցին Գյումրին: Հունիսի 12–ին այստեղ են հասնում ռուսական հիմնական ուժերը՝ գեներալ Ցիցիանովի գլխավորությամբ: Վերախմբավորելով եղած ուժերը՝ հունիսի կեսերին ռուսական զորքերը շարժվեցին դեպի Էջմիածին և Երևան:

Գեներալ Ցիցիանովը մի ջոկատ է ուղարկում՝ տիրելու Էջմիածնին, իսկ ինքը հիմնական ուժերով հունիսի 29–ի լույս 30–ի գիշերը անցնում է Հրազդանի ձախ ափը և գրոհում Արաս Միրզայի ճամբարի վրա: Պարսիկները պարտվում են և նահանջում Արաքսի աջ ափը: Դրանից հետո ռուսները հուլիսի 2–ին պաշարում են Երևանի բերդը<sup>325</sup>:

Դեպքերի սրընթաց զարգացումից անհանգստացած՝ Իբրահիմ խանը որոշեց հարաբերություններ հաստատել ռուսների հետ: Պարսկաստանն էլ, Ղարաբաղը կորցնելու հեռանկարից խուսափելու նպատակով, 1805 թ. հունվարին մեծաքանակ մի զորագունդ է ուղարկում Արցախ: Դեռևս Շուշի չհասած՝ Դիզակում հայ կամավորները խայտառակ պարտության են մատնում պարսիկներին:

Իբրահիմ խանի վրա ճնշումն ուժեղացնելու նպատակով Շուշի է ուղարկվում մայրը Լիսանևիչի գլխավորությամբ ռուսական մի ջոկատ: Իբրահիմ խանը խուսափողական պատասխանների միջոցով փորձում է ձգձգել բանակցությունները: Իբրահիմ խանին հասկացրին, որ բացասական պատասխանի դեպքում նրա նկատմամբ ուժ կկիրառվի: Շուշիի տիրակալը ստիպված գնաց զիջումների: 1805 թ. մայիսի 14–ին Գանձակից 30 վերստ

հեռավորության վրա՝ Կուրակ գետի ափին, գեներալ Ցիցիանովը և Իբրահիմ խանը ստորագրեցին պայմանագիր: Որպես շահագրգիռ կողմ հայերից ներկա էին Թիֆլիսի և Գանձակի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակիրն ու Վարանդայի մելիք Ջումշուդ Մելիք–Շահնազարյանը: Պայմանագրով Ղարաբաղն ընդունում է Ռուսաստանի հովանավորությունը: Շուշիում պետք է տեղակայվեին ռուսական զորքեր, ռուս աստիճանավորների հսկողության տակ Ղարաբաղը ղեկավարվելու էր խանի կողմից: Ռուսական արքունիքը միաժամանակ խոստանում է մշտապես պահպանել Իբրահիմի և նրա ժառանգների իշխանությունը<sup>326</sup>:

Միջազգային իրավունքի տեսանկյունից այս պայմանագիրը վավերական չէ: Նախ և առաջ Ղարաբաղի հողը, ջուրը և ազգային հարստությունը պատկանում էին մելիքներին և նրանց հայ հպատակներին: Իսկ Ղարաբաղն այդ պահին Պարսկաստանի մի նահանգն էր, և այդ երկրի իրավասու մարմինները Իբրահիմ խանին չէին լիազորել նման համաձայնագիր կնքելու:

Փաստորեն, այդ դաշնագրով ցարական Ռուսաստանն անսքող կերպով ցույց տվեց մերկապարանոց, շահախնդիր արտաքին քաղաքականության էությունը՝ հարազատ մնալով ծավալապաշտ նկրտումներին, անտեսելով մինչև վերջ իրեն հավատարիմ մի ողջ ժողովրդի՝ իր հայրենիքում ազատ ապրելու խնդրանքը, ամենակոպիտ ձևով ոտնահարելով Ղարաբաղի մելիքների իրավունքները: Այս նույն ձեռագիրն ուներ նաև 1921 թ. հուլիսի 5–ի Կովկասյան բյուրոյի հայտնի որոշումը:

Ադրբեջանի պատմաբանները, անհարկի արժևորելով իրավական տեսանկյունից խոցելի Քյուրակչայի պայմանագիրը, 2005 թ. Բաքվում հրատարակել են հողվածների ժողովածու<sup>327</sup>: Հարազատ մնալով փաստերն աղավաղելու և նենգափոխելու իրենց որդեգրած գործելաոճին՝ Ի. Ալիևը, Ք. Մամեդովը, Գ. Մամեդովան, Վ. Փիրիևը, Օ. Էֆենդիևը փորձել են Արցախի պատմությունը հարմարեցնել Ադրբեջանի պետական շահերին: Նրանք ոչ միայն մերժել են 18–րդ դարի պատմական իրողություններում Արցախում և Ուտիքում հայության ներկայության փաստը, այլ նաև իրենց հողվածներում օգտագործված սկզբնաղբյուրները հավատաքննության ենթարկելով՝ «սունի», «շիա», «մուսուլման», «պարսիկ» բառերը դարձրել են «ադրբեջանցի»՝ ըստ այդմ հիմնավորելով հայկական հողերի նկատմամբ իրենց ղեկավարության հավակնոտ ծրագրերը:

<sup>326</sup> АКАК, т. II, стр. 704–705.

<sup>327</sup> Карабаг. Кюрекчайский договор – 200, Сборник статей, Баку, 2005.

<sup>325</sup> ՀԺՊ, հ. V, էջ 119:



Իրենց մոզոնած ստերը հավաստի դարձնելու և միջազգային հանրությանը մոլորեցնելու նպատակով նրանք շրջանառության մեջ են դրել մեկ այլ կեղծիք ևս, ըստ որի՝ հայերը Արցախ-Ղարաբաղում հայտնվել են միայն Թուրքմենչայի պայմանագրից հետո<sup>328</sup>: Ավելին, նրանք աշխարհին փորձում են ներկայացնել իրենց «մեծահոգությունը», որ հայերին իրենց հողում հյուրընկալել են, իսկ վերջիններս երախտամոռ են գտնվել: Ցանկալին իրականության տեղ ընդունելով և նենգափոխելով 1823 թ. Պ. Երմուլովի և Պ. Մոզիլսկու կողմից Ղարաբաղում բնակչության հաշվառման արդյունքները՝ Ջ. Հաջիևան, չգիտես որտեղից, գրում է, որ այդ ժամանակ երկրամասի ազգաբնակչության 80 տոկոսը աղբրեջանցիներ էին<sup>329</sup>: Շարունակելով այդ մտավարժանքները և իբր չընդունելով Պ. Երմուլովի ու Պ. Մոզիլսկու տեղեկությունները Ջ. Հաջիևան գտնում է, որ քննարկվող ժամանակահատվածում աղբրեջանցիների թիվն իրականում ավելի շատ էր:

1805 թ. հունիսին Աբաս-Միրզան, մեծ բանակով անցնելով Արաքսը, մտնելով Ղարաբաղ՝ պաշարեց Շուշին: Ռուսական կայսրը Լիսանկիչի գլխավորությամբ և տեղի հայ կամավորների օժանդակությամբ համառ դիմադրություն ցույց տվեց թշնամուն:

Իբրահիմ խանը, չնայած իր երդմանը, որոշեց միանալ Աբաս Միրզայի զորքին՝ իր ընտանիքով գիշերը լքելով բերդը: Լիսանկիչը և մելիք Ջումշուդը, իմանալով դրա մասին, հետապնդում են խանին և Խանեն բաղ կոչվող տարածքում սպանում են նրան ու նրա ընտանիքի մյուս տղամարդկանց:

Նկատենք, որ այդ դժվարին պահին ռուսական հրամանատարությունը նորից զգաց արցախահայության օգնության կարիքը: «Ինձ հայտնի է ձեր վաղեմի քաջությունը, ուստի և կանչում եմ ձեզ՝ մեծ և ամենագոր թագավոր կայսրի սրբազան անունով, - կարդում ենք արցախահայությանն ուղղված գեներալ Ցիցիանովի դիմումի մեջ, - միանալ նրա մեծափառ և անպարտելի ռուսական զինվորներին՝ ընդդեմ պարսկական զորքերի ...: Ներշնչվեցեք ձեր նախնիների քաջությամբ, պատրաստ եղեք այս տարվա հաղթություններին և ռուսական զորքերի ուժեղ օգնությամբ ցույց տվեք, որ դուք այժմ էլ նույն քաջ ղարաբաղցի հայերն եք, ինչպես առաջ եղել եք ահարկու պարսկական հեծելազորի համար»<sup>330</sup>:

<sup>328</sup> Мамедов С., Азербайджан по источникам XV–первой половине XVII вв., Баку, 1993; Мамедияров И., Мусаев Г., Армяно-азербайджанский конфликт: История, право, посредничество, Тула, 2007; Карабах вчера, сегодня и завтра, материалы научно-практических конференций, вторая часть, Баку, 2009.

<sup>329</sup> Гаджиева З., Гарабагское ханство; социально-экономические отношения и государственное устройство, стр. 7.

<sup>330</sup> АКАК, т. II, стр. 833.

Արցախահայությունը, անսալով Ցիցիանովի կոչին, նորից լծվեց ռուսական զենքի հաղթանակին:

Գեներալ Ցիցիանովը մայր Լիսանկիչին հրամայում է Շուշիից շարժվել Ասկերան և պարսիկներից շուտ ամրանալ բերդում: Այս հրամանը Լիսանկիչին չի հաջողվում կատարել, որովհետև Շուշին լքելու դեպքում հնարավոր էր, որ թաթարները խռովություն բարձրացնեին:

Շուշիի պաշտպաններին օգնելու համար Գանձակից գնդապետ Կարյազինի հրամանատարությամբ 1805 թ. հունիսի 18-ին ուղարկվում է 400 հոգանոց մի ջոկատ՝ երկու հրանոթով: Մինչև Ասկերան հասնելը, Շահ-Բուլաղի մոտ պարսիկների և ռուսների միջև տեղի է ունենում ընդհարում, որը ավարտվում է վերջիններիս հաղթանակով: Կարյազինի ջոկատը մեծ դժվարությամբ առաջ է շարժվում: Ասկերանի մոտ ռուսական զորքերին շրջապատում է պարսկական Փիր-Ղուլի խանի 10 հազարանոց բանակը: Պարսիկները հրանոթների համազարկերով փորձում էին ընկճել ռուսական փոքրաթիվ ջոկատին: Ջոկատի թիվը ժամ առ ժամ շատանում էր: 400 հոգուց կենդանի էին մնացել 150-ը: Վերահաս աղետից փրկվելու նպատակով Կարյազինը հրամայում է հանկարծակի գրոհել պարսկական մարտկոցների վրա: Ռազմագործողությունը հաջող ելք է ունենում, և ռուսները վնասագերծում են չորս հրակետեր և իրենց ձեռքն են գցում 15 թնդանոթներ: Շուտով պարսից առաջապահ զորքերին օգնության է հասնում Աբաս Միրզայի 30 հազարանոց բանակը:

Կարյազինի հյուժված գումարտակին անգնահատելի օգնություն է ցուցաբերում կուսապատցի Վանի Աթաբեկյանը: Նրա ծառայությունները ռուսական զորքերի նկատմամբ այնքան մեծ էին, որ Պոտտոն գրել է. «Այդ մարդը միայնակ Կարյազինին ավելի օգուտ բերեց, քան կարող էին անել մի քանի հարյուր հեծյալներ միասին վերցրած»<sup>331</sup>:

Կարյազինը հանձնարարեց Վանի Աթաբեկյանին՝ գումարտակի ծանր վիճակի մասին տեղյակ պահել Շուշիի կայսրից: Կարյազինը հույս ունենալով մայր Լիսանկիչից օգնություն ստանալ: Վանի Աթաբեկյանը մեծ դժվարությամբ, գաղտագողի անցնելով պարսիկների միջով, հասնում է Խրամորթ գյուղ: Այստեղ Ջրաբերդի մելիք Ադամը և Ասրի-բեկ Փիրումյանը կամավորներ էին հավաքագրում՝ պաշարված Կարյազինի ջոկատին օգնելու: Վանի Աթաբեկյանը Կարյազինի նամակը քյաթուկեցի Մելքումի միջոցով ուղարկում է Շուշի, իսկ ինքը նույն ճանապարհով վերադառնում ռուսական ճամբար:

Աբաս Միրզայի զորքերը ռուսական ճամբարի վրա անընդհատ գրոհում են, բայց՝ ապարդյուն: Առանց այն էլ քիչ մարդուժ ունեցող ռուսական ջո-

<sup>331</sup> Потто В., Первые добровольцы Карабага ..., стр. 15.

կատից հիսուն զինվորներ, պորուչիկ Լսենկոյի գլխավորությամբ, գիշերը հեռանում են ճամբարից և հանձնվում պարսիկներին:

Վերջնական ջախջախումից Կարյագինի ջոկատին փրկելու նպատակով Վանի Աթաբեկյանը գաղտնի կաճաններով գիշերը հասնում է Շահբուլաղ: Սակայն բերդում կար 150 հոգանոց կայազոր Իֆիալ խանի գլխավորությամբ: Լուսաբացին Կարյագինի ջոկատը գրոհով մտավ Շահբուլաղ: Ռուս զինվորներն ամրանում են բերդում: Այստեղ է հասնում նաև Աբաս Միրզայի բազմահազարանոց զորքը: Աբաս-Միրզան փորձում է պաշտպաններին սովի մատնելով հարկադրել անձնատուր լինել: Զինվորներն արդեն սնվում էին խոտերով: Նորից օգնության է հասնում Վանի Աթաբեկյանը: Նա գաղտնի հեռանում է բերդից և հասնում հայրենի Կուսապատ: Ստեղծված կացության մասին Վանի Աթաբեկյանն իր եղբոր՝ Հակոբի միջոցով նամակ է ուղարկում Ելիզավետպոլ՝ գեներալ Ցիցիանովին, իսկ ինքը և հայրը հաց ու այլ սննդամթերքներ են հասցնում սովի մատնված զինվորներին: Հուլիսը կտրելով օժանդակ ուժեր ստանալուց՝ հուլիսի 7-ի գիշերը Վանի Աթաբեկյանի ուղեկցությամբ, Կարյագինի գումարտակը թշնամուց աննկատ հասնում է Մոխրաթաղ գյուղ: Կուսապատում հոր տանը գտնվող ալյուրի պաշարները հանձնելով ռուս զինվորներին՝ նրանց բարեհաջող հասցնում է ռուսական հիմնական ուժերին: Այս քաջագործությունների համար Ցիցիանովը Վանի Աթաբեկյանին նվիրեց իր արծաթե ժամացույցը<sup>332</sup>:

Ցիցիանովը, հիմնական զորքերի գլուխ անցած, շարժվում է դեպի Շուշի, իսկ Կարյագինին հանձնարարում ժամ առաջ հասնել Ելիզավետպոլ: Վանի Աթաբեկյանը, 60 հայ կամավորների գլուխն անցած, ռուսական ջոկատը ապահով հասցնում է Ելիզավետպոլ: Շուտափույթ ի մի բերելով ուժերը քաղաքի մատույցներում՝ Զեզամի մոտ, հայ կամավորների աջակցությամբ Կարյագինը նորից ջարդում է Աբաս Միրզայի զորքերին:

Վանի Աթաբեկյանի ծառայությունների համար ցարական արքունիքը նրան շնորհում է ենթասպայի զինվորական կոչում, պարգևատրում ոսկե մեդալով և ցմահ նշանակում տարեկան 200 ռուբլի: Վանի Աթաբեկյանի եղբորը՝ Հակոբին, գյուղացիների հետ միասին հողեր են նվիրում և պարգևատրում արծաթե մեդալով:

Իբրահիմ խանի սպանությունից հետո թուրք բեկերն ապստամբել էին: Ստեղծված վիճակից փորձում է օգտվել Աբաս Միրզան: Իրանից 1806 թ. նորանոր զորքեր արշավեցին դեպի Շուշի: Քաղաքի կայազորին օգնելու նպատակով Ելիզավետպոլից գեներալ Ներուսինի հրամանատարությամբ

ռուսական մի ջոկատ շարժվում է դեպի Շուշի: Այդտեղ էր գտնվում նաև Վանի Աթաբեկյանն իր կամավորներով:

1806 թ. հունիսի 8-ին գեներալ Ներուսինի ջոկատը հասնում է Ասկերանի բերդին: Այս անգամ նախապես մայրը Լիսաննիչին հաջողվել էր Շուշի-ից հասնել Ասկերան և դիրքավորվել բերդում: Հունիսի 13-ին պարսկական և ռուսական զորքերի միջև Կարկառի ափին տեղի է ունենում արյունալի ճակատամարտ: Հայ կամավորների գործուն մասնակցությամբ ռուսները փայլուն հաղթանակ են տանում, և Աբաս-Միրզան հեռանում է Ղարաբաղից: Այդ ճակատամարտում ցուցաբերած խիզախության համար Վանի Աթաբեկյանն արծաթե մեդալ է ստանում<sup>333</sup>:

1804-1813 թվականների ռուս-պարսկական պատերազմի ժամանակ անառիկ Շուշիի բերդը ռուսների համար հարմարավետ և ապահով հանգրվան էր դարձել: 1812 թ. սկզբներին պարսիկները մտան Ղարաբաղ: Դաշտավայրում տեղակայված ռուսական գումարտակը հանկարծակիի եկավ, նրանք մեծ քանակությամբ զոհեր տվին: Սպանվեց նաև գումարտակի հրամանատար մայոր Զինինը: Այստեղ էր գտնվում նաև Վանի Աթաբեկյանը: Նա կենդանի մնացած մարտիկներին ուղեկցեց մինչև Շահբուլաղի ամրոցը: Այստեղ են հասնում պարսկական հիմնական ուժերը՝ Աբաս Միրզայի գլխավորությամբ: Շահբուլաղում գտնվող ռուսական փոքրաթիվ կայազորն անելանելի վիճակի մեջ հայտնվեց: Վանի Աթաբեկյանը, ժամանակ շահելու և ճիշտ որոշում կայացնելու նպատակով, սկսեց բանակցել պարսիկների հետ: Վերջիններս համոզված էին, որ ռուսները պատրաստ են հանձնվել: Օգտվելով այդ խաբուսիկ հանգստությունից՝ Վանի Աթաբեկյանը գիշերը Շահբուլաղի կայազորը գաղտնի դուրս բերեց բերդից և հասցրեց Շուշի<sup>334</sup>:

Ընդհանուր առմամբ՝ արցախահայությունն անօրինակ հերոսություն ցուցաբերեց ռուս-պարսկական պատերազմի տարբեր ճակատներում:

Երևանի՝ 1804 թ. պաշարման ժամանակ ռուսական զորքերին մեծ օգնություն ցուցաբերեց Գյուլիստանի Մելիք-Աբովի որդի Ռոստոմ բեկի գլխավորած հայկական հեծյալ ջոկատը: Ռոստոմ բեկն անձնագոհության հրաշալի օրինակներ ցույց տվեց Բոլնիսում, Փամբակի և Ապարանի մարտերում:

Անհավասար մարտերում ընկան Ռոստոմ բեկի ջոկատի մատիկներից շատերը, իսկ ինքը՝ հրամանատարը, վիրավոր վիճակում գերվեց ու շղթայակապ ուղարկվեց Թավրիզի բանտը, որտեղ և դաժան խոշտանգումներից հետո սպանվեց<sup>335</sup>:

<sup>333</sup> Потто В., Первые добровольцы Карабага ..., стр. 36-37.

<sup>334</sup> Նույն տեղում, էջ 42-43.

<sup>335</sup> ՀԺՊ, հ. V, էջ 127:

<sup>332</sup> Потто В., Первые добровольцы Карабага ..., стр. 24-29.

Ծերունի մելիք Արովը որդու հերոսական նահատակությունից հետո, գլխավորեց հայկական ջոկատը և արիության բազում օրինակներ ցույց տվեց:

1806 թ. Ղարաբաղում պարսկական զորքերի դեմ մղվող մարտերում աչքի ընկավ Մելիք-Ջումշուդ Մելիք Շահնազարյանի հեծյալ ջոկատը: Ֆելդմարշալ Գուդովիչը, բարձր գնահատելով հայորդու ցուցաբերած ծառայություններն ու հմտությունը, գլխավոր շտաբ էր ներկայացրել Վարանդայի տիրոջը՝ փոխգնդապետի աստիճան շնորհելու համար:

1806 թվականից մինչև 1808 թվականը ռուս-պարսկական ճակատում հանգստություն էր տիրում: Կողմերը նախապատրաստվում էին վճռական գոտեմարտի: Երևանի և Նախիջևանի խանությունները գրավելու և երկու պետությունների միջև Արաքս գետը սահմանագիծ դարձնելու համար 1808 թ. սեպտեմբերի 25-ին ֆելդմարշալ Գուդովիչը Ապարանի վրայով շարժվեց դեպի Երևան: Մի քանի հաղթական ընդհարումներից հետո ռուսական զորքերը հոկտեմբերի 9-ին պաշարում են Երևանի բերդը: Ճիշտ է, այս անգամ էլ ռուսներին չհաջողվեց գրավել Երևանը, բայց հիմնականում տիրացան Նախիջևանի և Երևանի խանությունների տարածքներին:

Ռուսաստանի այս հաջողություններից անհանգստացած՝ Թուրքիան 1809 թ. ապրիլին ռազմական գործողություններ վերսկսեց Ռուսաստանի դեմ: Պարսկաստանի դեմ երկու ճակատով կռվելուց խուսափելու նպատակով 1810 թ. փետրվարին Թավրիզում և ապրիլին Ասկերանում ցարական արքունիքը շահական կառավարության հետ բանակցություններ սկսեց: Սակայն Պարսկաստանը, ակնկալելով մեծ տերությունների աջակցությունը, ընդհատեց բանակցությունները և վերսկսեց պատերազմական գործողությունները: Երևանի սարդար Հյուսեին-Ղուլի խանի զորքերը շարժվեցին դեպի Ախալքալաք: Պարսկական մեկ այլ զորաբանակ մտավ Շորագյալ-Փամբակ, իսկ Աբաս-Միրզան, հիմնական ուժերի գլուխն անցած, մտավ Ղարաբաղ՝ համառորեն փորձելով գրավել Շուշին:

Ռուսները ոչ միայն կասեցրին պարսիկների առաջխաղացումը, այլև անցան հակագրոհի: 1810 թ. ամռանը գնդապետ Պ. Կոտլյարսկու զորագունդը գրավեց Մեղրին, ապա հանկարծակի գրոհելով Աբաս-Միրզայի ճամբարը՝ նրան պարտության մատնեց ու հարկադրեց զորքերը դուրս բերել Ղարաբաղից:

Անհաջողության մատնվեց նաև 1811 թ. ամռանը Աբաս-Միրզայի կողմից դեպի Ղարաբաղ կազմակերպված արշավանքը: Արցախի հայության օգնության շնորհիվ ռուսներին հաջողվեց անխոցելի պահել երկրամասի սահմանները:

1812 թ. հայրենական պատերազմի ծանր շրջանում պարսկական զորքերը հարձակման անցնելով, ցանկանում էին վերստին գրավել իրենց կորցրած տարածքները: Նրանց հաջողվեց հետ գրավել Թալիշի խանությունը:

Ռուսական զորքերը, նախաձեռնությունը նորից իրենց ձեռքը զգելու նպատակով, 1812 թ. հոկտեմբերի 19-ին գեներալ Պ. Կոտլյարսկու գլխավորությամբ, անցնելով Արաքսի աջ ափը, Ասլանդուզի մոտ պարտության մատնեցին Աբաս Միրզայի 30 հազարանոց զորքին: Այս հաղթանակը ձախողեց նորից Ղարաբաղ ներխուժելու պարսկական ծրագիրը: 1813 թ. հունվարի 1-ին ռուսները գրոհով գրավեցին Լենքորանի նորակառույց բերդը:

Պարսկական զորքերի կրած ծանր պարտությունները Ֆաթ-Ալի շահին հարկադրում են հաշտություն խնդրել:

Հայ ժողովրդի ջանադիր մասնակցությամբ՝ ռուսական զորքերի հաղթանակներն ամբողջականացվեցին 1813 թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագրով: Այն ստորագրում են Ռուսաստանի լիազոր Ռտիչևը և Պարսկաստանի ներկայացուցիչ Միրզա Աբդուլ Հասան խանը: Պարսկաստանը ձանաչեց Դաղստանի և Արևելյան Վրաստանի, ինչպես և Գյանջայի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խանությունների միացումը Ռուսաստանին: Ըստ պայմանագրի երկրորդ կետի՝ այս տարածքների հետ Պարսկաստանը հրաժարվում էր նաև Արևելյան Հայաստանի Ղարաբաղի, Լոռու, Փամբակի, Շամշադինի, Զանգեզուրի և Շորագյալի գավառներից: Պարսկաստանը զրկվում է Պարսից ծովում նավատորմ ունենալու իրավունքից<sup>336</sup>:

Անկախ նրանից, թե ցարական իշխանություններն Այսրկովկասում ինչ նպատակներ էին հետապնդում, այն համապատասխանում էր Ղարաբաղի հայության ազատագրական ձգտումներին:

Ճիշտ է, արցախահայությանը չհաջողվեց վերակերտել պետականությունը, բայց, այնուամենայնիվ, երկրամասը, հայտնվելով ռուսական կայսրության կազմում, զարգացման և ազգային միատարրության պահպանման հնարավորություն ուրվագծեց: Երկրամասի կենտրոն Շուշին, լինելով Ռուսաստանը Պարսկաստանի հետ կապող առանցքային կետում, զարգացման նոր հեռանկարներ ստացավ: Սկսվեց Շուշիի պատմության նոր շրջանը:

<sup>336</sup> Договоры России с Востоком политические и торговые, С. Петербург, 1869, стр. 208–214; Советско-иранские отношения в договорах, конвенциях и соглашениях, Москва, 1946, стр. 24–26; «Тесакет», но. 15, Ереван, 1994, стр. 25.

## Գլուխ 4

**ՇՈՒՇԻԻ ՄԵԿԴԱՐՅԱ ՎԵՐԸՆԹԱՅԸ  
(ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ, ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ)**

**ա) Շուշին ցարական տիրապետության առաջին շրջափուլում  
(1805–1826 թթ.)**

Չնայած Կուրակչայի պայմանագրից հետո Պարսկաստանի և Ռուսաստանի միջև ռազմական գործողությունները շարունակվում էին, այնուամենայնիվ, պարզ էր հակամարտության ելքը: Արցախի մելիքները, ոգևորված ռուսական զենքի հաղթանակներով և, հաշվի առնելով արցախահայ պետականության վերականգնման վերաբերյալ ցարական կառավարության նախկինում տված խոստումներն ու հավաստիացումները, 1806 թ. մշակում են Արցախի ինքնավարության ծրագիր և արքունիք հանձնելու նպատակով, ներկայացնում Մինաս Լազարին:

Մելիքներն առաջարկում են Ղարաբաղում վերացնել խանական իշխանությունը և վերականգնել իրենց իրավունքները: Նպատակահարմար էր գտնվում Նոր Նախիջևանի հայությանը վերապահված արտոնությունները տրամադրել նաև արցախահայությանը: Մելիքներն անհրաժեշտ են համարում Ղարաբաղի լեռնային մասը ինքնավար կարգավիճակով «Արցախի օկրուգ» անունով դնել Ռուսաստանի գերիշխանության տակ: Այստեղ պետք է գործեին հայ հանրությանը բնորոշ կառավարման ու դատական համակարգեր, որոնք օրենքի ձևով ամրագրված կլինեն «Հայկական դատաստանագրքում»: Երկրի կառավարման ոլորտում լայն կիրառություն պիտի ստանար հայոց լեզուն: Որպես հպատակության նշան՝ մելիքները պարտավորվում են ցարին հարկի ձևով վճարել 4000 չետվերտ ցորեն և 4000 ոսկի: Նախատեսվում էր բնակչության աճին զուգահեռ շատացնել հարկերի քանակը: Մելիքները գրում են. «... մեզ շնորհվի, ինչպես այդ խոստացված է եղել վաղ ժամանակներից, նույն ամենաողորմած արտոնությունը ..., որպեսզի մեր իրավունքը և դատավարությունը հիմնված լինեն մեր նախնի-

ների սովորույթի եւ ավանդությունների վրա ...: Եւ եթե մեզ արված կլինի այսպիսի արտոնություն ..., այն ժամանակ կտեսնեք, թե ինչի ենք ընդունակ մենք ...»:

Այս ծրագրային դրույթների տակ ստորագրել են Վարանդայի տեր մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը, Գյուլիստանի տեր մելիք Բաղդր և մելիք Աբով Մելիք-Բեգլարյանը, Մելիք Հովհաննիսյանները, Ջրաբերդի տեր մելիք Հաթամ Մելիք-Մեծլումյանը, Խաչենի տեր մելիք Ալլահվերդի Մելիք-Միրզախանյանը և Դիզակի տեր մելիք Ղահրաման Մելիք-Ավանյանը<sup>337</sup>: Լազարյան գերդաստանի ներկայացուցիչները գտնում էին, որ հայկական պետականությունը տվյալ պահին հնարավոր էր վերականգնել, եթե հաջողվեր փրկել դժնդակ դարերի հոլովոյթով անցած և կենսունակ մնացած Արցախի մելիքական կարգը:

1816 թ. օգոստոսի 12-ին Հովակիմ Լազարյանը նամակով տեղեկացնում է Եփրեմ կաթողիկոսին, որ Այսրկովկաս են գալու Ա. Սոկոլովը և Ալ. Խուդաբաշյանը: Հ. Լազարյանը վեհափառին ներկայացնում է Տփղիսում և այլ վայրերում աստանդական դարձած մելիքների վիճակը և հորդորում վերոհիշյալ մարդկանց միջոցով խնդրել կուսակալին միջնորդել կայսեր առաջ՝ վերականգնելու Արցախի օրինական տերերի իրավունքները:

Հայկական պետականության վերականգնման վերաբերյալ համապատասխան ծրագրեր է կազմել նաև Քրիստափոր Լազարյանը: 1827–1828 թվականներին Ք. Լազարյանը ցարական արքունիք ներկայացրեց «Հայերի մասին», «Հատուկ իշխանական կալվածքի մասին», «Վրաստանի և հարակից մարզերի վերաբերյալ մի քանի մոտեցումների շուրջ», «Վրաստանի վերաբերյալ եղած մոտեցումների շուրջ լրացումների մասին» վերտառությամբ ծրագրեր, որտեղ հեղինակն անդրադարձել էր ցարական Ռուսաստանի հովանու ներքո հայկական թագավորություն կամ իշխանություն ստեղծելու, զինված ուժերի, մելիքների և հոգևորականության կարգավիճակի, Էջմիածնի կաթողիկոսական աթոռի, ասիական տարբեր երկրներից հայերին Արևելյան Հայաստան հավաքագրելու և նմանատիպ այլ հարցերի<sup>338</sup>:

Այս, ինչպես նաև նախորդ ժամանակներում ռուսական արքունիքին ներկայացված հայկական պետականության վերականգնման ծրագրերն այդպես էլ մնացին թղթի վրա: Հայ հասարակական և քաղաքական շրջանակները, թերևս ուշացած, հասկացան Արցախի մելիքներին ու նրանց հպա-

<sup>337</sup> Присоединение Восточной Армении к России, составители Ц. П. Агаян, С. В. Тер-Авакимова, Д. А. Мурадян, В. А. Дилоян, Ереван, т. 1, 1972, стр. 317–319: Տես նաև՝ «Кавказская Старина», Тифлис, 1872, стр. 40–41.

<sup>338</sup> Тунян В., А. С. Грибоедов и Армения, Ереван, 1995, стр. 34–36.

տակներին Վրաստան և այլ շրջաններ տեղափոխելու ցարական քաղաքականության նպատակներն ու էությունը:

Կտրվելով հայրենիքից, զրկվելով նյութական հնարավորություններից, զինական ուժից՝ Արցախի մելիքները դադարեցին քաղաքական գործոն լինելու հանգամանքից: Ցարական իշխանությունները ժամանակին, մինչև վերջ օգտագործելով մելիքների հնարավորությունները, այլևս հաշվի չէին նստում նրանց հետ: Հայ որոշ գործիչներ հորդորում էին մելիքներին՝ վերստեղծել իրենց զինական ուժն ու վաղեմի փառքը և ընթացս շտկել իրավիճակը<sup>339</sup>: Բայց դրանք ժամանակավրեպ և ապարդյուն քայլեր էին:

Սակայն դա չխանգարեց Արցախի մելիքներին այլ ձևերով օգտակար լինելու հայրենիքին: Աստանդական դարձած մելիքները նորից բռնեցին տունդարձի ճանապարհը՝ փորձելով հայրենի երկրամասում կյանքի կոչել իրենց վաղեմի ծրագրերը:

Նմանօրինակ քայլ առաջինը ձեռնարկեց Վարանդայի մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը: Նա դիմում է ռուսական իշխանություններին՝ խնդրելով թույլ տալ վերադառնալ հայրենի երկրամաս, որովհետև ինքը և իր հայրենակիցները չունեն հիմնական բնակության վայր<sup>340</sup>: 1805 թ. մելիք Ջումշուդը Լոռիում գտնվող իր կավածքները և, առհասարակ, ողջ ունեցվածքը վաճառում է ռուս պաշտոնյա կոմս Մուսին-Պուշկինին և իր համերկրացիների ու հարազատների հետ վերադառնում Արցախ<sup>341</sup>: 1817 թ. սեպտեմբերի 5-ին Վ. Մադաթովը Ա. Կուտուզովին ուղղած զեկուցագրում նշում է, որ Վարանդա է վերադարձել 187 ընտանիք<sup>342</sup>:

Մելիք Ջումշուդ Շահնազարյանի օրինակը վարակիչ էր Արցախի մելիքական մյուս տների ներկայացուցիչների համար:

1812 թ. Մելիք Բեգլարյաններն իրենց հպատակների հետ միասին Բուլնիսի և Բորչալուի գավառներից տեղափոխվեցին և հաստատվեցին հայրենի Գյուլիստանում:

Մինչև XIX դարի կեսերը Գյուլիստանի գավառի 18 գյուղեր Մելիք-Բեգլարյանների տիրապետության տակ էին գտնվում: Հայրենիք վերադառնալուց հետո այս տոհմը տրոհվեց երկու մասի. մելիք Հովսեփի թոռները կրեցին Մելիք-Հովսեփյան ազգանունը, իսկ մելիք Բեգլարի ժառանգները

դարձան Մելիք-Բեգլարյաններ<sup>343</sup>: Դրա մասին է վկայում նաև Ներսես Աշտարակեցին<sup>344</sup>:

Հայրենաշեն գործունեություն ծավալեց Հասան-Ջալալյան մեծանուն տոհմի՝ Կուսապատում հաստատված Աթաբեկյանների ճյուղը: Առանձնակի եռանդով էր գործում 1814 թ. մելիքական տիտղոս ստացած Վանի Աթաբեկյանը: Նա իր գերդաստանով Շաքիից տեղափոխվեց և, հաստատվելով հայրենի Կուսապատ գյուղում, կարճ ժամանակամիջոցում ավերված բնակավայրը շենացրեց:

Վանի Աթաբեկյանն իր հայրենակիցների հետ միասին վերաշինեց ու հիմնեց նոր գյուղեր՝ Մեծ Շենը, Մոխրաթաղը, Կարմիրավանը, Ծաղկաշենը, Ենգիջանը, Մաղավուզը, Լյուլասազը, Գյուլաթաղ, Ջանյաթաղ գյուղերը<sup>345</sup>:

Ցարական իշխանություններն այնքան էլ տրամադրված չէին թույլ տալու Արցախի մելիքներին՝ վերադառնալ հայրենիք: Նրանք գիտակցում էին, որ հայրենի հողի վրա դարերի ընթացքում պետական կյանքով ապրած մելիքական տները հայահավաք ուժ կդառնան, և վաղ թե ուշ նորից օրակարգում կհայտնվի հայոց պետականության վերականգնման հարցը: Պատահական չէ, որ ցարական իշխանություններն ամեն կերպ փորձում էին խոչընդոտել հայրենադարձությանը:

Հովակիմ Լազարյանը և Ալեքսանդր Խուդաբաշյանը ցարական իշխանությունների հարուցած դժվարությունները կանխելու նպատակով 1816 թ. օգոստոսին դիմում են Երմոլովին «վասն խղճալի մնացորդաց մելիքաց Ղարաբաղու և Սղնախու, որք զամենայն ստացուածս իւրենաց կորուսեալ՝ իբրև գտառապեալ մուրացկանս ի Տփղիս քաղաքի և այլ ուրեք աստանդական շրջեն առնելով ապրուստ իմն կամ զելս կեցութեան ... նորա ի դրանէ ողորմածագունեղ կայսերն հայցելոյ, զի բաւ է լինելոց նոցա, եթէ դարձուցեն ողորմելեացն այնոցիկ, գոնէ մասն ինչ ի գեղօրէից նոցա և ի հողոց, որով կարացեն ապրիլ և անցուցանել զկեանս իւրեանց»<sup>346</sup>:

Բազում արգելքներ հաղթահարելով, վերադառնալով հայրենիք՝ Արցախի մելիքները տեղում նոր դժվարությունների էին հանդիպում: Նրանց կավածքներին տեղ էին դարձել թուրք-թաթար խաներն ու բեկերը, կամ

<sup>339</sup> Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 258:

<sup>340</sup> Առաքելյան Գ., Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը XIX դարում, Երևան, 2003, էջ 33:

<sup>341</sup> Լալայան Ե., Երկեր, հ. 3, էջ 113:

<sup>342</sup> АКАК, т. IV, ч. I, док. 1081, стр. 726.

<sup>343</sup> Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., էջ 100:

<sup>344</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գ. 13, վավ. 192, էջ 1:

<sup>345</sup> Израелов Г., Село Касапет, Елизаветпольской губернии Джевансхирского уезда, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 13, Тифлис, 1892, стр 42-45.

<sup>346</sup> Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 33:

էլ նորահայտ հայ վաշխառուներն ու ցարական արքունիքին հավատարիմ ծառայող զինվորականները:

Այսպես, 1816 թվականից մինչև 1821 թվականն ընկած ժամանակահատվածը գեներալ Վ. Մադաթովին անցան նախկինում Մելիք-Շահնազարյաններին պատկանող 10-ից ավելի գյուղեր<sup>347</sup>:

Ճիշտ է, Մելիք-Շահնազարյանները դատական հայցերի միջոցով փորձում էին ետ վերադարձնել կորցրածը, բայց՝ ապարդյուն: Այդ տոհմի ներկայացուցիչներն ստիպված հետագայում զինվորական ծառայության մտան:

Հայրենի երկրամասում տեղի ունեցող նոր զարգացումներից անմասն չմնացին նաև Գանձասարի Հասան-Ջալալյան կաթողիկոսները:

Դեռևս 1786 թ. Շուշիի բանտում, Իբրահիմ խանի հրամանով սպանվում է աջախահայության ազատագրական պայքարի անխոնջ առաջնորդներից մեկը՝ Աղվանից կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանը:

Առանձնակի առելություն ունենալով Հասան-Ջալալյան տոհմի նկատմամբ՝ Իբրահիմ խանն անգամ համաձայն էր Գանձակի խանի հովանու տակ գտնվող Գանձասարի հակաաթոռ ճանաչված Տեր Իսրայելին հռչակել Աղվանից կաթողիկոս<sup>348</sup>: Իսկ Ամենայն Հայոց Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը 1787 թ. կոնդակով արդեն հաստատել էր Իսրայելին՝ որպես Աղվանից կաթողիկոս<sup>349</sup>:

Նման պայմաններում կաթողիկոսական աթոռի օրինական տիրոջ՝ Հովհաննես Հասան-Ջալալյանի եղբոր՝ Սարգիս Հասան-Ջալալյանի համար անտանելի կացություն է ստեղծվում, և նա ստիպված հաստատվում է Գանձակում: Նա այստեղ մեծ աջակցություն էր ստանում Ջավադ խանի ու այնտեղ ապաստանած մելիք Մեծումի կողմից, որոնց կողմից էլ «ձեռնադրեացա կաթուղիկոսի Գանձակ՝ ի յելիսավետապօլի թուին ՌՄԽԳ (1794 թ.)»<sup>350</sup>:

1795–1796 թվականներին պարսից Աղա-Մուհամմադ շահի ավերիչ ու մահասփյուռ արշավանքների ժամանակ Սարգիս Հասան-Ջալալյանն ստիպված էր հեռանալ Վրաստան, իսկ 1798 թ. Ամենայն Հայոց Ղուկաս կաթողիկոսի կողմից նշանակվեց Հաղպատի վանքի ու Վրաստանի թեմի առաջնորդ:

<sup>347</sup> Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. 2 (1814–1830), Ереван, 1978, стр. 84; Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 111, գ. 36, վավ. 80, թ. 1–3:

<sup>348</sup> Բալայան Մ., Հայ Աղվանից եկեղեցին, էջ 182–183:

<sup>349</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, վավ. 205բ, թ. 14–16:

<sup>350</sup> Շահխաթունեանց Յովհ., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զավառացն Արարատայ, Վաղարշապատ, 1842, էջ 348–349:

1805 թ. Սարգիս Հասան-Ջալալյանը վերադարձավ Գանձասար<sup>351</sup> և սկսեց շենացնել հայրենի տունը:

Եփրեմ Ձորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսի հատուկ շրջաբերական կոնդակով 1815 թ. Աղվանից կաթողիկոսությունը վերացվում է, և նախկինում Գանձասարի կաթողիկոսության մեջ ընդգրկված թեմերը միավորվում են՝ կազմելով Ամենայն Հայոց կաթողիկոսության ենթակայության տակ գտնվող մետրոպոլիտություն: Սարգիս Հասան-Ջալալյանին շնորհվեց մետրոպոլիտի աստիճան: Նա միաժամանակ նշանակվեց թեմի առաջնորդ: Եթե ցարական իշխանությունները ձգտում էին ամեն գնով ոչնչացնել Արցախում պետականությունը խորհրդանշող ինստիտուտները, ապա այդ ամենին ինչ-որ ձևով լծվեց նաև Էջմիածնի կաթողիկոսական աթոռը, որը ամեն կերպ փորձում էր իր ձեռքում կենտրոնացնել հայոց հոգևոր կյանքի կառավարման գործը: Մինչդեռ իրականում Գանձասարի կաթողիկոսական աթոռը Հայոց Արևելից կողմանց ազգաբնակչության միայն հոգևոր կարիքներն սպասարկող հաստատություն չէր. այն իրենից ներկայացնում էր որպես մի կրոնապետություն, որն, ըստ էության, կազմակերպում էր Այսրկովկասի մի ընդարձակ մասի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը:

Ցարական իշխանությունները, մելիքների՝ հայրենիք վերադառնալու համառ ձգտումներին դիմակայելու և հակակշիռ ստեղծելու նպատակով, սկսեցին հովանավորել թաթար խաներին ու բեկերին: 1806 թ. ցարական արքունիքը ռուսներին դավաճանած Իբրահիմ խանի որդուն՝ Մեհտի Ղուլին, Ղարաբաղի նկատմամբ տալիս է ավատական իրավունքներ: Միաժամանակ նրան շնորհվում է գեներալ-մայորի զինվորական կոչում:

Մեհտի Ղուլին իր հերթին ռուսների նկատմամբ իր հավատարմությունը ցույց տալու նպատակով ցարական արքունիքին վճարեց 8000 չերվոնեց<sup>352</sup> (ոսկի – Վ. Բ.): Մեհտի Ղուլի խանը, ստանալով ռուսների հովանավորությունը, Ղարաբաղում բնակեցնում է հարյուրավոր թուրք և քուրդ ընտանիքների: Այս և նմանատիպ այլ քայլեր հայոց երկրի համար կործանարար հետևանքներ ունեցան:

Քննարկվող ժամանակաշրջանում Կովկասի ազնվականների 41,53%-ը վրացիներ էին, ռուսները՝ 16,4%, թաթարները՝ 27,50%, իսկ հայերը՝ ընդամենը 5,46%<sup>353</sup>: Այս գործում իր բացասական դերն է կատարել վրացական

<sup>351</sup> Երիցյան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 251:

<sup>352</sup> Записки А. П. Ермолова 1798–1826 гг., стр. 373.

<sup>353</sup> Учреждение для управления Закавказским Краем, утверждение 10 апреля 1840 г., «Второе собрание законов», т. 5, но. 13, стр. 368.

ծագում ունեցող հայատյաց Ցիցիանովը: Մելիքների դիմադրական ուժը կոտրելու և նրանց տնտեսական կարողությունները իսպառ թուլացնելու նպատակով ցարական արքունիքը դիմում է նաև այլ քայլերի, այս անգամ փորձելով իրար հակադրել նախկին ավատատերերին ու ռուսական հովանավորությամբ ձևավորված նորաթուխ հայ ազնվականներին:

Այդ նպատակով 1816 թ. գեներալ Վ. Մադաթովին որպես սեփական կալվածքներ տրվում են Մելիք-Շահնազարյաններին պատկանող Վարանդայի Գյունե Ճարտար, Ղուզե Ճարտար, Ննգի, Քեշիշքենդ, Ավետարանոց գյուղերը, ինչպես նաև Գորիսի մահալի Խոտ, Շենեհեր, և Խալիզար համայնքները<sup>354</sup>:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Մադաթովին նվիրաբերվել են Չանախչի, Սղնախ, Քեշիշքենդ, Սարուշեն, Ննգի, Ղուզումքենդ, Գյունե Ճարտար, Ղուզե Ճարտար և Դիզակի Տող գյուղերը<sup>355</sup>:

Վերոհիշյալ կալվածքների փաստաթղթային ձևակերպումները ձգձգվեցին մինչև 1821 թվականը:

Ի հարկե, այդ ամենը հաշվարկված էր արվում՝ նպատակ հետապնդելով թշնամանք առաջացնել Մելիք Շահնազարյանների և նրանց հեռավոր ազգական Վ. Մադաթովի միջև, որն այդ ժամանակ Ղարաբաղի փաստացի տերն էր: Մելիք Շահնազարյաններն իրենց կալվածքները վերադարձնելու համար, հայտնվելով դատական քաշքշուկների մեջ, երկարատև պայքար սկսեցին:

1822 թ. ապրիլի 22-ին Ջահանգիրը և Խոսրով Մելիք-Շահնազարյանները դիմում են ցարին՝ տեղեկացնելով նրան, որ իրենցից Վ. Մադաթովը խլել է Շուշիում և Ավետարանոցում գտնվող տոհմական կալվածքները: Նրանք խնդրում են հետ վերադարձնել իրենց ժառանգական սեփականությունը<sup>356</sup>:

Երկարատև պայքարից հետո Մելիք-Շահնազարյաններին հաջողվեց ետ ստանալ իրենց կալվածքների միայն մի փոքր մասը: Դրանք հիմնականում գտնվում էին Շուշիում և այդպես հայոց բերդաքաղաքը ողջ 19-րդ դարում ու 20-րդ դարի սկզբներին Մելիք-Շահնազարյանների գործունեության հիմնական վայրը դարձավ:

Չնայած Արցախի մելիքներին և Գանձասարի հոգևոր տերերին այդպես էլ չհաջողվեց վերակերտել պետականությունը, այնուամենայնիվ, ռուսական տիրապետության շրջանում հայությունն ապրեց երկարատև խաղաղության մի շրջան, որն արգասաբեր էր Արցախի, մասնավորապես՝ Շուշիի

<sup>354</sup> Присоединение Восточной Армении к России, т. 2, стр. 22.

<sup>355</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 111, գ. 36, վավ. 80, թ. 1-3; Բաղդասարյան Ն., նշվ. աշխ., էջ 46:

<sup>356</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 43, թ. 2-3:

համար: Հայոց բերդաքաղաքի համար սկսվեց շենացման ու ծաղկման մի շրջան: Հզոր կայսրության մաս դառնալով, պաշտպանված լինելով ռուսական զենքով՝ Արցախը վերածվեց համեմատաբար կանխատեսելի հեռանկարով առեցուն երկրամասի և ապահով ու հանգիստ անկյունի: 19-րդ դարում Արցախն ապրեց քաղաքական, տնտեսական ու մշակութային բարեփոխումների պատմաշրջան: Ռուսական կայսրությունը փորձում էր նոր գրավված տարածքներում ամրակայել իր երկրին հատուկ քաղաքական և տնտեսական համակարգերը:

Ցարական կառավարությունն ձգտում էր Այսրկովկասը դարձնել իր հումքային կցորդը և արտադրված ապրանքների շուկա, «այն կապելով Ռուսաստանի հետ քաղաքացիական և քաղաքական կապերով իբրև մեկ մարմին, և ստիպել տեղի բնակիչներին խոսել, մտածել և զգալ ռուսաբար»՝ ինչպես գրում էին Պասկեևիչը, սենատորներ Մեչնիկովն ու Պ. Կուտաիսովը<sup>357</sup>: Ա. Երմոլովը ցարական արքունիքին ուղարկած զեկուցագրերից մեկում նշել է. «Այս երկրից (Ղարաբաղից – Վ. Բ.) կարելի է ստանալ մեծամեծ շահույթներ, այն դեպքում, երբ այստեղ կմտցվի մեր վարչակարգը»<sup>358</sup>:

Ցարական կառավարությունը ազգային փոքրամասնություններից պահանջում էր մոռանալ իրենց անցյալը և հավատարմորեն ծառայել Ռուսաստանին: Ցարի պատգամն ազգային փոքրամասնություններին բանաձևած ներկայացրել է Ջ. Ավալովը. «Ձեզ համար աշխարհում կա միայն մեկ իշխանություն. դա ռուսական ցարի կառավարությունն է Պետերբուրգում և նրաներկայացուցիչը Թիֆլիսում: Ճիշտ է, դուք ունեք ձեր լեզուն, ազգային սովորույթները և այլ առանձնահատկություններ, դա լավ է, բայց դուք հաղորդակցվում եք ռուսական քաղաքականության և ռուս ժողովրդի հետ, ուրեմն դուք պետք է լինեք ռուսներ կամ, առնվազն, նմանվեք նրանց»<sup>359</sup>:

Ֆինանսների նախարար գրաֆ Կանկրինը, վերոհիշյալ գաղափարն ավելի հստակեցնելով, 1827 թ. Նիկոլայ Առաջինին ներկայացրած զեկուցագրում ասել է. «Անդրկովկասյան գավառները որոշակիորեն կարող են համարվել մեր գաղութը, որն իր հարավային կլիմայի արտադրանքներով պետությանը մեծ օգուտ պետք է բերի: Անդրկովկասը Ռուսաստանի գաղութ կոչելը առաջին անգամ բացահայտ կերպով ցույց է տալիս տեղական

<sup>357</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20–60 –х гг. XIX в., ч. 1, стр. 32.

<sup>358</sup> Записки А. П. Ермолова, 1798–1826, стр. 290.

<sup>359</sup> Авалов З., Национальный вопрос на Кавказе, «Русская мысль», СПб, но. 12, 1911, стр. 27.

իշխանության բոլոր ձևերը: Դա հենց այն կետն է, որից պետք է նայել նրա վրա և ուղղություն տալ գործողությունների ամբողջ սիստեմին»<sup>360</sup>:

Նախքան Այսրկովկասում վարչակառավարական հստակ համակարգի ստեղծումը Բորչալուի և Գյուլիստանի պայմանագրերից հետո նախապատրաստական քայլեր են ձեռնարկվում Ռուսաստանում գործող օրենքներն ու իրավական ակտերը նոր նվաճված տարածքներում կիրարկության մեջ դնելու համար: Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանությունների տարածքների վրա ստեղծվեց մի ռազմական շրջան՝ Ղարաբաղի մարզ անունով, որի կենտրոնը Շուշին էր: Հայոց Արևելից նահանգների կառավարումն սկզբում իրագործում էին գեներալ Ցիցիանովի և գեներալ Նեսվետսկի միջոցով, իսկ 1815 թվականից՝ Ղարաբաղի, Շիրվանի և Շամախիի խանությունների ռազմական շրջանի հրամանատար գեներալ Հախվերդովի:

1816 թ., երբ ցարի հրամանագրով կովկասյան բանակի գլխավոր հրամանատար և քաղաքացիական մասի կառավարչապետ է նշանակվում գեներալ Ա. Երմոլովը, այդ գործընթացը դառնում է անշրջելի: Նույն թվականին Ա. Երմոլովն անձամբ հասավ Արցախ և տեղում ծանոթացավ ստեղծված իրավիճակին:

1817 թ. հունվարի 4-ին Ա. Երմոլովը Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի ռազմական շրջանի պետ է նշանակում Վ. Մադաթովին: Նրա նստավայրը Շուշին էր: Ղարաբաղի մարզը բաժանված էր 14 վարչական միավորների՝ մահալների: Դրանց կառավարումն իրականացվում էր Շուշիի պարետի կողմից նշանակված նախնների միջոցով, որոնք օժտված էին վարչական, ոստիկանական և դատական գործառնություններով<sup>361</sup>:

Չնայած Ղարաբաղում դեռևս պահպանվում էին Մեհտի Ղուլի խանի իրավունքները, այնուամենայնիվ, դա ձևական էր և երկրամասի փաստացի կառավարումը գտնվում էր գեներալ Վ. Մադաթովի ձեռքին: «Երեք խանությունների համար էլ ժողովրդական սոսկալի աղետ էր ավազակությունը, - գրել է Լեոն, - և այս դժբախտությունը Մադաթովն իր ձեռքն առած խիստ միջոցներով կարողացավ միանգամայն արմատախիլ անել, հաստատելով կատարյալ անդորրություն, այնպես որ առակ էր դառնում՝ Մադաթովի ժամանակ Ղարաբաղի կինն անգամ կարող է մենակ ման գալ, կրելով իր վրա ոսկով լիքը թաբախ»<sup>362</sup>: Օրեցօր ավելի էր բարձրանում Մադաթովի հեղինակ-

կությունը, և նա դառնում էր ժողովրդի կողմից սիրված գեներալ: Այս հանգամանքները գեներալ Վ. Մադաթովին դարձնում էին ավելի հանդուգն ու հավակնոտ: «Բացի իր վերադասից, - գրել է դեպքերի ժամանակակից Միրզա Յուսուֆ Ներսեսովը, - մյուս բոլոր իշխանավորների հետ իրեն պահում էր ինչպես հավասարը հավասարի պես»<sup>363</sup>: Որպես ռուսական շահերը ներկայացնող պաշտոնյա, Երևանի և Նախիջևանի խանությունների նկատմամբ Աբաս Միրզայի տրամադրությունները շոշափելու նպատակով, գեներալ Վ. Մադաթովը Արաքսի ափին՝ Խուդափերին կամրջի մոտակայքում, 1817 թ. ձմռանը հանդիպում է թագաժառանգի հետ<sup>364</sup>:

Աբաս Միրզան մեծ պատվով ընդունում է հայ գեներալին: Վ. Մադաթովը թագաժառանգին ուղղակի ասում է. «Դուք պետք է Գեղարքունիքից ու Սադարակից հրաժարվեք: Դրանք մեզ տվեք ...»<sup>365</sup>: Աբաս Միրզան անակնկալի է գալիս և չի կարողանում հստակ պատասխան տալ: Հաջորդ օրը թագաժառանգն իր գայրոյթն ու բողոքը միայն ներկայացնում է գեներալի քեռի Պետրոս քեկ Մադաթովին և հորդորում խելքի բերել նրան<sup>366</sup>:

Ռուսական իշխանությունները բավականաչափ ագրեսիվ խառնվածքի տեր Մադաթովին օգտագործում են նաև կամագուրկ և վախկոտ Մեհտի Ղուլի խանի վրա հսկողությունն ու ճնշումները մեծացնելու հարցում:

Ռուսական տիրապետության առաջին շրջանում Արցախի մելիքների և Գանձասարի կաթողիկոսի տնտեսական կարողությունները սահմանափակելու և քաղաքական գործընթացներից դուրս մղելու համար, Մեհտի Ղուլի խանին օգտագործելուց հետո, Ա. Երմոլովի առջև խնդիր էր դրված՝ վերացնել խանական կարգը և ազատվել նրանից: Օրեցօր նրա իրավունքները խուզվում էին, և խանի շուրջ օղակն ավելի էր սեղմվում: Նրա ազդեցությունը տարածված էր հիմնականում Շուշիի մահմեդական ազգաբնակչության շրջանում, և Մեհտի Ղուլին զբաղված էր միայն ու միայն գինարբուքներով: Բայց այստեղ էլ ամեն ինչ հարթ չէր: Նրա եղբոր որդին՝ Ջաֆար Ղուլի աղան, լավ հարաբերություններ ունենալով գեներալ Վ. Մադաթովի հետ, փորձում էր նրա օգնությամբ իշխանությունը խլել անձար հորեղբորից: Եվ առիթը շուտով եկավ: «1822 թվականի վերջերին Շուշիում կատարվեց մի այսպիսի գործ: Խանի եղբորորդի և հակառակորդ Ջաֆար Ղուլի աղան գիշերը թղթախաղով էր զբաղված Մադաթովի հետ, և երբ ուշ ժամանակով ձանապարհվեց իր տունը, մթության մեջ լսվեցին հրացանի ձայներ, և Ջաֆար Ղուլին թեթև վերք ստացավ: Լուր տարածվեց, թե այդ սպանության մի

<sup>360</sup> Պարսամյան Վ., Հայ ժողովրդի պատմություն (1801-1917 թթ.), հ. 3, Երևան, 1967, էջ 128:

<sup>361</sup> Мильман, Политический строй Азербайджана в XIX - начале XX веков, Баку, 1966, стр. 67-68; АКАК, т. 2, ч. 1, док. но. 67, 68.

<sup>362</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 396:

<sup>363</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 106:

<sup>364</sup> АКАК, т. 6, ч. 2, д. 504, стр. 272.

<sup>365</sup> Кавказский сборник, т. 21, Тифлис, 1900, стр. 1-2.

<sup>366</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 106-107:



փորձ էր, որ սարքել էր Մեհտի Ղուլի խանը: Մաղաթովը, հենվելով այդ լուրի վրա, ձերբակալեց խանի մարդկանցից մի քանիսին: Այսքանը բավարար եղավ, որ սարսափահար խանը թողնի ամեն ինչ և հապճեպ փախչի Պարսկաստան: Հետո պարզվեց, որ հրացանագարկություն սարքել էր Ջաֆար Ղուլի աղան, որը և իրեն վիրավորել էր թեթև կերպով»<sup>367</sup>:

Այսպիսով, 1822 թ. Ղարաբաղում խանական կարգի վերացումով փակվեց նաև նոր շրջանի Շուշիի պատմության ողբերգական էջը: Ողջ արցախահայությունը, մասնավորապես՝ Շուշիի հայությունը, ցնծություն էր ապրում:

Շուշիի պարետ նշանակվեց փոխգնդապետ Ի. Ռեուտը:

Կառավարման և դատական մարմիններ ստեղծելու նպատակով Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովը 1822 թ. աշնանը ժամանեց Շուշի: Ժողովուրդը մեծ ոգևորությամբ ընդունեց նրան: Որպես երախտագիտության նշան՝ Շուշիի հայ ազգաբնակչությունը գավառի միացման մասին մակագրությամբ Ա. Երմոլովին սուր է նվիրում<sup>368</sup>:

Խանական կարգի թուլացումը, իսկ հետագայում նաև՝ ռուսական զորքերի ներկայությունն Արցախում բարերար ազդեցություն ունեցան երկրամասում կայուն քաղաքական իրավիճակ ստեղծելու և տնտեսական զարգացում ապահովելու գործում: Պատահական չէ, որ հայ մտավորականության և առևտրական մեծահարուստ ընտանիքների մի մասը հանգրվանեց հայոց աշխարհի ապահով այս անկյունում, հատկապես՝ Շուշիում:

Նույնիսկ Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմը, Երևանի սարդարի հետապնդումներից խույս տալով, 1821 թ. սեպտեմբերից ապաստանել էր Շուշիում և փորձում էր նվիրակության միջոցով մեղմել Մայր Աթոռի տնտեսական ծանր կացությունը: «Նա այստեղ փող է ժողովում պարսից անյագութիներ կշտացնելու համար ...»<sup>369</sup>:

Ընդհանուր առմամբ՝ Մայր Աթոռը Էջմիածնում պարսկական տիրապետության վերջին շրջանում գտնվում էր դաժան ու անելանելի վիճակում: Պարսիկ խաները ոչ միայն թալանում էին մայր աթոռի ունեցվածքը, այլ նաև ծաղր ու ծանակի էին ենթարկում վանականներին, նույնիսկ՝ կաթողիկոսին:

Էջմիածնում ճաշի ժամանակ խանը պահանջում է, որ հոգևորականները մի շարական երգեն, որի մեջ հնչեին խան կամ Ալի անունները<sup>370</sup>: Պոտտոն

պատմում է, որ երբ Եփրեմ կաթողիկոսը 1821 թ. գնում է Մամադ սարդարի նովրուզի տունը շնորհավորելու, խանը նրան սպառնում է կախել վեհափառին տրված ռուսական շքանշանի ժապավենով<sup>371</sup>:

Երևանի խաները, շահ ստանալու նպատակով, արշավանքներ էին կազմակերպում դեպի Արևմտյան Հայաստան և բերած հայ գերիներին վաճառում Մայր Աթոռին: Այդպես, Մայր Աթոռի պարտքը Երևանի սարդարին հասավ 33 684 թումանի: Եփրեմ կաթողիկոսը և նրան ուղեկցող 40 եկեղեցականներ, մեծ դժվարությամբ հաղթահարելով Ա. Երմոլովի հարուցած արհեստական խոչընդոտները, հասան Շուշի: Սկզբում նրանք հանգրվանեցին քաղաքի ամենահարուստ տոհմի՝ Հախումյանների առանձնատանը, իսկ պատվիրակության անդամները՝ Անտոն եպիսկոպոսի տանը<sup>372</sup>:

Կաթողիկոսը ձմեռը և 1822 թ. գարունն անցկացրեց Շուշիում: Այդ ժամանակ նա բնակվում էր շուշեցի մեծահարուստ եղբայրներ Աղաբեկ և Ավագ Քալանթարյանների տանը<sup>373</sup>: Հետագայում կաթողիկոսը և նրան ուղեկցող հոգևորականները հյուրընկալվեցին նաև Թառումյանների տանը:

Շուշիի տնտեսական համեմատաբար բարվոք վիճակի, ժողովրդի նիստուկացի, բերդավանի մեծահարուստների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել Եփրեմ կաթողիկոսի ուղեկցորդների շարքում գտնվող Մեսրոպ Թաղիադյանը: Նա պատմում է, թե ինչպես մահճի մեջ Շուշիի մեծահարուստներից մեկը՝ Մարկոս Թառումյանը, Էջմիածնի կաթողիկոսական աթոռի պարտքը՝ 4000 ոսկու մուրհակը, հանձնել էր Եփրեմ կաթողիկոսին<sup>374</sup>:

Այդ նույն օրերին Շուշիում գտնված վիրահայ թեմի առաջնորդ և ապագա կաթողիկոս Ներսես Աշտարակեցին, հիացած Թառումյանների հյուրասիրությամբ, անսահման բարերարությամբ և շլացած նրանց հարստությամբ, գրել է, որ Թառումյանները ազգի և Ղարաբաղի պարծանքն են<sup>375</sup>: Մեսրոպ Թաղիադյանն ասում է, որ Մարկոս Թառումյանը խոշոր վաճառական էր և մեծ բարեգործ: Ամեն օր Թառումյաններն աղքատներին բաժանում էին 500 ռուբլի ողորմություն<sup>376</sup>:

տես՝ Լէօ, Մեսրոպ Թաղիադեան, «Գործ», ամսագիր, հմ. 4, ապրիլ, Բագու, 1917, էջ 22:

<sup>371</sup> Потто В., Первые добровольцы Карабага ..., стр. 52.

<sup>372</sup> Թաղիդեանց Մ., Ճանապարհորդություն ի Հայս, հ. 1, էջ 285–286:

<sup>373</sup> Թօփճեան Յ. Յակոբ, Ցուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 8:

<sup>374</sup> Թաղիադեանց Մ., Ճանապարհորդություն ի Հայս, հ. 1, էջ 325:

<sup>375</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 558:

<sup>376</sup> Լէօ, Մեսրոպ Թաղիադեան, «Գործ», ամսագիր, Բագու, հմ. 4, ապրիլ, 1917, էջ 23:

<sup>367</sup> Լեո, հ. 4, էջ 398:

<sup>368</sup> Присоединение Кавказа к России XIX в., СПб, 2005, стр. 116.

<sup>369</sup> Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, հ. Ա, էջ 189:

<sup>370</sup> Գաբրիել քահ. Պատկանեան, Ծաղկաբաղ ի լիակատար կենսագրութեան սրբազան հայրապետի Ներսէսի Ե., Ջմիռնիա, 1876, էջ 17–19: Նույնը

Մարկոս և Զոհրապ Թառումյանները Նախիջևանի Ղազանչի գյուղից էին: Նրանք սկզբում հաստատվել էին Երևանում, բայց, ենթարկվելով սարդարի հալածանքներին, հեռացել և հաստատվել էին Շուշիում, ուր նրանց առևտրական գործունեությունը պտղավորվում է և մեծ հաջողություններ են արձանագրվում:

Շուշիում էր ապրում նաև Հախումյանների առևտրական տունը: Նրանք Թառումյաններից ավելի հարուստ էին, բայց վերջիններս քիչ էին բարեգործություն կատարում<sup>377</sup>:

Մ. Թաղիադյանը պատմում է, որ նա սիրահարված էր Թառումյանների աղջիկներից մեկին, և այդ սերը փոխադարձ էր, բայց հեռանալով Շուշիից՝ դա մնաց որպես առաջին սեր<sup>378</sup>: Մեսրոպ Թաղիադյանը, շարունակելով պատմել Թառումյանների անհաշիվ հարստության մասին, գրել է, որ Մարկոս Թառումյանը մահից առաջ բերել է տվել Էջմիածնի մուրհակը, որով 4000 ոսկի էր տվել Մայր Աթոռին, և ևս ուրիշ մուրհակներ և երկու մեծ պարկ ոսկի: Ապա, դնելով իր ուռած ոտը այդ բոլորի վրա, ասել է. «Անպիտան դիրդ, եթե կարող ես՝ բժշկիր, ո՛վ աշխարհի մոլորության չաստուած: Ոչ, ո՛չ, այս դուրս է քո մտացածին կարողությունից և միայն իմ Աստծու կամքն է օրհնեալ, նա կարող է հարուածել ինձ և բժշկել»<sup>379</sup>: Դրանից հետո նա մուրհակները տալիս է իրենց տերերին, իսկ երկու պարկ ոսկին էլ բաժանում աղքատներին: Այնուհետև, նկարագրելով Մարկոս Թառումյանի թաղումը, գրել է. «Աղայի թաղումը կատարուեց չտեսնուած շքեղությամբ: Նոյն իսկ զօրքերն էլ էին մասնակցում յուղարկաորութեան: Կարծես Արտաշեսն էր մեռել»<sup>380</sup>՝ ակնարկելով հայոց մեծ արքային:

Կովկասի կառավարչապետ Երմոլովը շարունակում է հետապնդել կաթողիկոսին՝ նրանից պահանջելով հեռանալ Շուշիից կամ էլ, մնալու դեպքում, հրաժարվել կաթողիկոսական աթոռից: Այդ այն դեպքում, երբ Եփրեմ վեհափառն Այսրկովկասում ռուսների հաստատման գործում մեծ ծառայություններ էր մատուցել: Կաթողիկոսը նորից անելանելի վիճակի մեջ է հայտնվում: Այդ օրերին նրա ապրումների և խեղճ վիճակի մասին է խոսում Ա. Երմոլովին հասցեագրված նամակը: «Զգիտեմ թե, հակառակ իմ յոյսին ու սպասածին, գրել է Եփրեմ կաթողիկոսը, ինչու է յառաջանում ձեր ինձ արած այդպիսի առաջարկությունը:

Այդ, իհարկե, անելացնում է իմ դժբախտությունը և նույնը պետք է համարուի Արարատյան աթոռի համար: Եթե ձեզ կամ ձեր պաշտոնակատարին

<sup>377</sup> «Գործ», հմ. 4, ապրիլ, Բագու, 1917, էջ 24:

<sup>378</sup> Նույն տեղում, էջ 24–25:

<sup>379</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>380</sup> Նույն տեղում:

իմ ուղևորութեանս մասին կանխապես չծանուցանելովս այնքան մեղանչեցի, ուր ոչ միայն չպիտի կարողանամ ձեռք բերել ձեր ողորմությունը, այլ և ձեր ծաղրի առարկայ դառնամ աշխարհիս մեջ, այն ժամանակ հասկանալի է, որ, ինչպես դուք գրել էք, կասկածաւոր (պարսից) տէրութիւնից անկարող լինելով ուղիղ ճանապարհաւ թոյլտութիւն ստանալու գալուս մասին, վտանգաւոր համարեցիք մենք նաև այնտեղից կանխապես ձեզ ծանուցանելը:

Ապա եթէ այսպէս չլինէր, կարելի՞ բան է, որ ձեզ չհաղորդեիք: Վասն որոյ խնդրում եմ ողորմածաբար նայել մեր վշտալի դրութեան վրայ և խնայել մեզ յետին թշուառութեան մէջ բռնուողներիս, զի գրուած է՝ «մի թողուր քեզ յուսացողներին»:

Մենք դիմեցինք, որպէս յետին ապաստանի Ն.Կ.Մ. գահոյքի ողորմածափրութեան մեծ յոյսով արդարութիւն ստանալու նրա շնորհներից, նման շատերին, որոնք զանազան տէրութեանց և երկիրների ձեռքում ճնշուած և նեղուացած լինելով, ստանում են այստեղ (Ռուսաստանում) պատշաճաւոր յարգանք և հովանաւորութիւն: Վասն որոյ մի թողուք, որ ունայն անցնի մեր յոյսը, որով այս իմ եօթանասունամեայ (այդ ժամանակ կաթողիկոսը 72 տարեկան էր – Վ. Բ.) ծերութեան հասակում, այսպիսի ձմեռաց–ժամանակ, ամեն կողմից հարկից ստիպուած և բազմայի նեղութիւններ կրելով, սարեր ու ձորեր անցած, ենթարկեցի ինձ Ն.Կ.Մ. պաշտպանութեանը, վասն զի ո՛ր անելի պատշաճ էր մեզ դիմելու և կամ թե ո՛ր տերութեան վրայ յոյս դնելու»<sup>381</sup>:

Շուտով Եփրեմ կաթողիկոսին հասկացրին, որ Ա. Երմոլովի տեսակետը պաշտպանում է նաև Ալեքսանդր Առաջին ցարը:

Հայության ռուսական կողմնորոշման ջերմ ջատագով, մի ամբողջ ժողովրդի հոգևոր առաջնորդ Եփրեմ կաթողիկոսը պետք է ենթարկվեր ցարական աստիճանավորների քմահաճույքներին՝ անգամ իրավունք չունենալով առանց նրանց իմացության լինել Մայր Աթոռի իրավասության տակ գտնվող թեմերում:

Այդ պայմաններում Եփրեմ կաթողիկոսն ստիպված հրաժարվեց կաթողիկոսական աթոռից: Երմոլովը հրահանգել էր՝ Եփրեմին չպատվել որպես կաթողիկոս: 1822 թ. ամռանը Եփրեմ կաթողիկոսն ստիպված հեռացավ Շուշիից, մի քանի օր մնաց Գանձասարում, այնտեղից մեկնեց Ծիրանաքար և հյուրընկալվեց Մելիք–Վանի Աթաբեկյանի տանը: Կաթողիկոսին պատվեցին նաև Գյուլիստանում՝ մելիք Ֆրեյդուն Մելիք–Բեգլարյանի տանը:

<sup>381</sup> Երիցյան Ա., Եփրեմ կաթողիկոս Չորագետցի, «Արձագանք» թերթ, հմ. 96, Թիֆլիս, 1893:

Եփրեմ կաթողիկոսը Գանձակով հասավ Հաղպատ, ուր և, մեկուսացված բլուրից, մնաց մինչև 1828 թվականը: Ոչ ոք իրավունք չունեի այցելել կաթողիկոսին: «Մոռացաք գրեաթե զաշխարհ ամենայն», – գրել է Մ. Թաղիադյանը<sup>382</sup>:

Հաղպատում Մեսրոպ Թաղիադյանը հանդիպում է ծագումով շուշեցի, ֆրանսիայում պարսից շահի դեսպան Դավիթ խան Մելիք Շահնագարյանի (Դավիթ Ծատուր Մելիք-Շահնագարյան-Դե-Շապուր) հետ: Վերջինս բարձր կրթությամբ, մի քանի լեզուների գիտակ դիվանագետ էր: Նապոլեոն Բոնապարտն անձամբ ճանաչում էր շուշեցի դիվանագետին և մի քանի անգամ ընդունել էր նրան: Անգամ մի կարճ ժամանակահատված նա Ֆրանսիայի պատվավոր հյուպատոսն էր Թեհրանում կամ Բասրայում<sup>383</sup>:

Դավիթ Մելիք-Շահնագարյանը, որը Պարսկաստանում հայտնի էր նաև Միր Դավիթ անունով, շահի ամենամտերիմ և վստահելի դիվանագետներից մեկն էր և Եվրոպայում կատարում էր նրա գաղտնի հանձնարարականները: 1815 թ. շահի հատուկ հանձնարարություններով, դեսպանի կարգավիճակով, Դավիթ Մելիք-Շահնագարյանը Վիեննայի կոնգրեսում պաշտպանում էր Պարսկաստանի շահերը:

Լյուդովիկոս XVIII թագավորի կառավարման տարիներին Փարիզում Պարսկաստանի դեսպանի պարտականությունը շարունակում էր կատարել Դավիթ Մելիք-Շահնագարյանը: Նա աշխարհաքաղաքական բարդ պայմաններում կարևոր դերակատարություն ունեցավ երկու երկրների միջև քաղաքական, ռազմական, տնտեսական կապերի ամրապնդման գործում:

1816 թ. Փարիզում ֆրանսերեն լույս է ընծայվել Դավիթ Մելիք-Շահնագարյանի «Պարսկական պետության ներկա կացության մի քանի մանրամասների մասին» գիրքը: Այն թարգմանվել է պարսկերեն և ռուսերեն լեզուներով:

Հետագայում Դավիթ Մելիք-Շահնագարյանը կարճ մի ժամանակահատված ապրել է Ռուսաստանում, այնուհետև Երևանում, իսկ կյանքի վերջին տարիներին՝ հայրենի Շուշիում, որտեղ էլ 1853 թվականի ապրիլի 30-ին, 83 տարեկան հասակում կնքել է իր մահկանացուն: Նրա մարմինն ամփոփվել է Շուշիի Երևանյան դարպասների մոտ գտնվող գերեզմանոցում:

Նշանավոր շուշեցին մեծ ազդեցություն ունեցավ Մեսրոպ Թաղիադյանի վրա: Դավիթ Մելիք-Շահնագարյանի հետ հանդիպման տպավորու-

<sup>382</sup> «Գործ», ամսագիր, հմ. 4, ապրիլ, Բագու, 1917, էջ 27:

<sup>383</sup> Мелик-Шахназаров Арсен, Владетели Варанды ..., стр. 79.

թյան տակ նա որոշեց կրթությունը շարունակել Եվրոպայում: Այստեղ նորից կարևոր դերակատարություն ունեցան Թառումյանները: Մեսրոպ Թաղիադյանը Գանձակով վերադառնում է Շուշի և կրկին հյուրընկալվում Զոհրապ Թառումյանի տանը, պատմում նրան իր ծրագրերի մասին: Շուշեցի բարերարը 500 ոսկի է տալիս Մեսրոպ Թաղիադյանին և ճանապարհում: Տաղանդավոր երիտասարդը հետագայում դառնում է հայ պատմագրության երևելիներից մեկը:

Քննարկվող ժամանակաշրջանում Ացախում ռուսական իշխանությունները շարունակում են վարչական բարեփոխումները:

1825 թ. հունվարի 22-ին ցարի կողմից հաստատվում է «Անդրկովկասի կառավարման կազմակերպման» ծրագիրը: Ռազմական շրջանի կենտրոն դարձավ Շուշին:

Ռազմական շրջանը բաժանվել էր գավառների, իսկ սրանք էլ, իրենց հերթին՝ մահալների: Գավառները ղեկավարում էին պարետները, իսկ մահալները՝ մելիքները, բեկերն ու նայիրները: Պարետներն իրենց լիազորություններն իրագործում էին հազարապետների և հարյուրապետների օգնությամբ<sup>384</sup>:

Կենտրոնաձիգ և վստահելի իշխանություն ունենալու համար մահալների ղեկավարները, ռազմական շրջանի հրամանատարի ներկայացմամբ, նշանակվում էին Վրաստանի կառավարչապետի կողմից<sup>385</sup>: Շաքիի, Շիրվանի և Ղարաբաղի ռազմական շրջանի պետ շարունակում էր մնալ գեներալ Վ. Մադաթովը:

Ռազմական շրջանի ներքին անդորրը հսկվում էր տարբեր բնակավայրերում տեղակայված ռուսական զորքերի օժանդակությամբ: Որոշում կայացվեց ստեղծել «Շուշի ամրոցի և նրա օկրուգի քաղաքային դատարան»<sup>386</sup>:

1827 թ. Աղաբեկ Քալանթարյանը նշանակվում է Շուշիի քաղաքապետ (պոլիսմեստր), որի կապակցությամբ Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսը նրան շնորհավորական կոնդակ է հղում, միաժամանակ վշտակցում վերջինին՝ եղբոր մահվան կապակցությամբ<sup>387</sup>:

Ռուսական տիրապետության սկզբնական շրջանում հայ պաշտոնյաների թիվը բավականին սահմանափակ էր: Կարևոր պատասխանատու պաշ-

<sup>384</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье в первой половине XIX в., Ереван, 2003, стр. 43.

<sup>385</sup> Ерошкин Н., История государственных учреждений дореволюционной России, Москва, 1983, стр. 189.

<sup>386</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье в первой половине XIX в., стр. 27:

<sup>387</sup> Թովմեան Յ. Յակոբ, Ցուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 8-9:

տոնները հիմնականում գտնվում էին ռուս աստիճանավորների ձեռքին: Ռուս պաշտոնյաների հետ միասին Շուշիում հիմնավորվեցին նաև նրանց ընտանիքները: Տեղի հայությունը ռուսների նկատմամբ՝ որպես իրենց հավատակիցների, ջերմորեն էր վերաբերվում:

1805 թ. Կուրակչայի պայմանագրի կնքումից անմիջապես հետո Շուշիում մայր Լիսաննիչի հրամանատարությամբ տեղակայվեց 6-րդ սահմանապահ գունդը: Ջորանոցը գտնվում էր Մեղրեցոց և Գյանջեցոց թաղամասերի միջև ընկած հատվածում և տեղացիները այն կոչում էին «Կազարմայի թաղ»<sup>388</sup>:

1920 թ. մարտյան ողբերգության ժամանակ հայկական թաղամասի հետ հրի է մատնվում նաև «Կազարմայի թաղ»-ը: Ջորանոցներից և զինապահեստներից կիսավեր վիճակում առայսօր մնացել է վառողի պահեստի շինությունը: 1820-ական թվականներին գնդի հրամանատար է եղել Ֆյոդր Սեմյոնովը, որի աճյունն ամփոփված է Շուշիի ռուսական գերեզմանատան կենտրոնական մասում: Նա Շուշիի նախկին պարետ Իշչենկովի որդին էր<sup>389</sup>: 1824 թ. Ֆ. Սեմյոնովին փոխարինեց գնդապետ Չիչկովը:

Շուտով ռուսական գնդում սկսում են ծառայել նաև տեղաբնիկ հայ ընտանիքների, հատկապես Մելիք Շահնազարյանների, Դոլուխանյանների, Ջուրաբյանների ներկայացուցիչները<sup>390</sup>:

1820-ական թվականների Շուշիի մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել նաև անգլիացի ճանապարհորդ Գեորգ Կեպպելի հուշերում: 1824 թ. վերջինս մի կարճ ժամանակահատված ապրել է Շուշիում: Նա հյուրընկալվել է, ինչպես ինքն է ասում, Աղաբեկի տանը (խոսքը վերաբերում է Շուշիի քաղաքապետ Աղաբեկ Քալանթարյանին - Վ. Բ.):

Դաշտավայրից մտնելով լեռնաստան՝ նա գրել է. «Հեռավոր ու կտրտված հորիզոնում երևում էին Ղարաբաղի բերրի նահանգի՝ կտրուկ կերպով վեր խոյացող սև, բարձրաբերձ լեռները: Առջևում տեսանելի հսկայական ժայռազանգվածները, որոնց ասես բնությունն էր դեպի վեր նետել իր մեծ ջղաձգումներից մեկի ժամանակ, ամբողջացնում էին տեսարանի հիասքանչ բազմազանությունը:

Հեռվում երևում է Ղարաբաղի մայրաքաղաք Շիշան: Հնագույն քարտեզներում այս նահանգը ներկայացվում է որպես սակասեմիների երկիր, իսկ ուսյալ մարդիկ փորձել են ապացուցել, որ նրա բնակիչները ծագում են այն նույն ժողովրդից, որից սերում են անգլո-սաքսերը<sup>391</sup>:

<sup>388</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 50:

<sup>389</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 50-51:

<sup>390</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 52:

<sup>391</sup> Գեորգ Կեպպելը, մինչև հնդեվրոպական տեսության շրջանառության մեջ դնելը, ճիշտ է նկատել, որ հայկական լեռնաշխարհը, տվյալ պարագայում

... Ձախ կողմում որոշ հեռավորության վրա, մենք տեսանք Խանախին (նա նկատի ուներ Խանքենդին, որտեղ տեղակայված է եղել Շուշիի 6-րդ գնդի հեծյալ զորամասը, որի հրամանատարն էր փոխգնդապետ Գլադելին - Վ. Բ.), լավ կառուցապատված մի քաղաք, որտեղ ռուսական ուժեր են տեղակայված: Մենք անցանք մի քանի հայաբնակ գյուղերի մոտով, որոնք բոլորն էլ աչքի էին ընկնում իրենց մաքուր տեսքով: ... Երբ հասա մի լեռան գագաթին, Շիշան հայտնվեց իմ տեսադաշտում: Քաղաքը կառուցված է մեծ բարձրություն ունեցող հսկայական, թեթևի ժայռազանգվածի վրա: Վերելքն այնքան ուղղաբերձ է, որ թվում է, թե տները կախված են նրա վրա որպես թռչնավանդակներ: Ինձանից ավելի քան երկու ժամ պահանջվեց գագաթին հասնելու համար»<sup>392</sup>: Շուշիում նա հանդիպում է քաղաքում աշխատող երկու միսիոներների հետ, որոնցից մեկը ազգությամբ շվեդ էր, իսկ մյուսը՝ լեհ:

Այնուհետև նա, շարունակելով իր տպավորությունները, գրել է. «Շիշան ունի 2000 տուն: Բնակչության 1/3-ը թաթարներ են, իսկ մնացածները՝ հայեր: Քաղաքի, ինչպես նաև Ղարաբաղի ամբողջ նահանգի թաթարները պատկանում են մահմեդականների շիա աղանդին: ... Տների ստորին հատվածները կառուցված են քարով: Նրանք ունեն կավածածկ թեքադիր տանիքներ: Քաղաքը և բերդը շրջապատված են պարսպով, բայց նրա դիրքի բնական առավելությունները այն է, որ գտնվում է գրեթե անմատչելի ժայռի բնական առավելությունները այն է, որ գտնվում է գրեթե անմատչելի ժայռի գագաթին, որը նվազեցնում է արհեստական պաշտպանության անհրաժեշտությունը: Այստեղ խոսում են թուրքերենի բարբառներից մեկով, բայց հայերից բացի մնացած բնակիչները, որպես կանոն, կարդում և գրում են պարսկերենով: Առևտուրը հիմնականում հայերի ձեռքին է. այն կատարվում է Շեխի (Շաքի - Վ. Բ.), Նախշևան (Նախիջևան - Վ. Բ.), Խոյ և Թավրիզ քաղաքների հետ: Նախկինում բնակչությունն ավելի մեծաթիվ էր, բայց այն սկսում է աճել, քանի որ Ռուսաստանի համեմատաբար ավելի մեղմ տիրապետությունն այստեղ է բերում մեծաթիվ մարդկանց, ովքեր փախել են այստեղից՝ խուսափելով խաների կեղեքումներից»<sup>393</sup>:

Այսպիսով, հնագույն ժամանակներից էթնիկ հիմքում միատարր հայկական բնակավայրի ազգային կազմը տարբեր հանգամանքների ազդեցու-

նաև Արցախը, հնդեվրոպական ծագում ունեցող ժողովուրդների նախահայրենիքն է, և որ հազարամյակների ընթացքում մայր ցեղից տրոհված ճյուղերը, ինչպիսիք են, օրինակ, անգլոսաքսերը, նոր արոտավայրեր, բնակավայրեր գտնելու ակընկալիքով հասել են ներկայիս իրենց երկրները:

<sup>392</sup> Personal narrative of a journey from India to England in the year 1824 by captain, the Hon., George Keppel in two volumes, volume 2, London, 1827, p. 186-194.

<sup>393</sup> Նույն տեղում, էջ 193-194:

թյան տակ սկսեց փոխվել: 18-րդ դարի երկրորդ կեսից այստեղ հայտնվեցին թուրքեր, պարսիկներ: 19-րդ դարի սկզբներից քաղաքի ազգաբնակչությունը համալրվեց ռուսներով, լեհերով, հրեաներով և այլ ազգերի ներկայացուցիչներով: Նրանք նոր մշակույթ և ապրելակերպ բերեցին հայաշունչ այդ բնակավայրին: Այդ նոր միջավայրն առկայություն էր ինչպես հաջողություններով, այնպես էլ՝ հակասություններով ու դժվարություններով:

### բ) 1826–1828 թվականների ռուս-պարսկական պատերազմը: Շուշիի հերոսական պաշտպանությունը

Գյուլիստանի հաշտության պայմանագրից հետո Պարսկաստանը չէր հաշտվում Այսրկովկասում տարածքային կորուստների հետ: Անգլիայի դրոմամբ Պարսկաստանը փորձում էր ետ ստանալ կորցրածը, իսկ Ռուսաստանն էլ ոչ միայն չէր ցանկանում հողային զիջումներ կատարել, այլև նպատակ ուներ գրավել Հայաստանը և ավելի ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում:

Պարսկաստանը տենդագին նախապատրաստվում էր ռազմական գործողությունների: Երկու երկրների միջև լարվածությունը մեղմելու համար 1826 թ. փետրվարին ցարի ներկայացուցիչ իշխան Ա. Մենշիկովը մեկնում է Թեհրան: Ա. Մենշիկովը ոչ միայն ականատես եղավ, որ Աբաս Միրզան և Ֆաթե-Ալի շահը նախապատրաստվում էին պատերազմի, այլև նրան երկար ժամանակ թույլ չէին տալիս վերադառնալ Պետերբուրգ և պահում էին տնային կալանքի պայմաններում:

1826 թ. հունիսին ղարաբաղի հայ Ջհանգիր Լելե բեկը, Ղարաղաղից վերադառնալով Չանախչի, ռուսական զորքերի հրամանատարությանը հայտնում է, որ պարսիկները նպատակ ունեն տարբեր ուղղություններով ռազմական գործողություններ սկսել և մահմեդական ազգաբնակչության ու իրենց կողմն անցած բեկերի օգնությամբ գրավել Շուշին<sup>394</sup>:

1826 թ. հուլիսի 1-ին մայրը Չելյանը գեկուցում է Ի. Վելյամինովին, որ Թավրիզ ուղարկված շուշեցի խաչատուր Պետրոսը, հետ վերադառնալով, տեղեկություններ է հաղորդել, որ Պարսկաստանը նախապատրաստվում է առաջին հարվածը հասցնել Ղարաբաղին: Իրենց համախոհները շատացնելու նպատակով՝ պարսիկները լայնածավալ աշխատանք էին կատարում մահմեդական բեկերի հետ<sup>395</sup>: Ռուսական հրամանատարությունն այդ ամե-

նին լուրջ չէր վերաբերվում՝ վստահ լինելով, որ Շուշիի ամրություններն անհաղթահարելի են: Դեռ ավելին, Ա. Երմոլովը Շուշիի պարետ Ի. Ռեուտին կարգադրել էր ամրոցի կայազորը տեղափոխել Չանախչի (Ավետարանոց):

Այսրկովկասի ռուսահպատակ խաներն ու մահմեդական բեկերը, ոգևորված Պարսկաստանի հնարավոր հարձակումից, իրենք նույնպես պատրաստվում էին թիկունքից հարվածել ռուսական զորքերին: Ժամանակակիցը գրել է. «Հաճի Աղալարն էլ Ղարաբաղու դոշունն հավաքեց քուրտ ու ժագայ, և գնաց միաուրեցալ խանին և շահագատին, ջուրն կտրեցին, և ռուսն մնաց անձար. չորս կողմն կտրեցին մեր թիրքերն և պեկերի տղայքն. ռուսին ցրի տին և լալ լալ չինովնիկների գլուխ կտրեցին. լալ շատ հայերի գլուխներ կտրեցին տարան շահագատային և ամեն գլխոյ 10 պապախանի ոսկի տայր. թէ անասնոց համար, և թէ խոտի համար, որ հայքն դուրս գային, ձեռք անկածի գլուխն կտրէին թուրքերն դրսիցն ԼԵ գիւղից գիւղականք փախստական հազի կարողացան մտանել ի բերդն խիզանով. մնացեալքն մնացին արտաքս»<sup>396</sup>:

Նախապատրաստական աշխատանքներից հետո 1826 թ. հուլիսի 16-ին Աբաս-Միրզան, առանց պատերազմ հայտարարելու, 60 հազարանոց բանակով և 30 թնդանոթով ներխուժում է Ղարաբաղ: Աբաս Միրզան հանձնարարում է Ամիր խան սարդարին և Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանին՝ խոյից, Սալմաստից և Ուրմիայից հավաքագրված զորագնդով Նախիջևանի և Սիսիանի վրայով շարժվել դեպի Շուշի:

Պարսկական զորքերը միաժամանակ զարգացրին հարձակումը Շիրվանի, Լենքորանի, Նուխիի, Գանձակի, Թիֆլիսի ուղղություններով:

Մահմուդ Միրզայի գլխավորությամբ պարսկական զորքերը գրավեցին Գանձակը, ոչնչացրեցին շրջակայքի գերմանացի գաղթականներին և շարժվեցին դեպի Թիֆլիս<sup>397</sup>:

Այսպիսով, ռազմական գործողությունների առաջին իսկ օրերից պարսիկներին հաջողվեց գրավել Գանձակը, Շամախին, Նուխին, ինչպես նաև Թալիշի, Շաքիի, Շիրվանի և Շորագյալ-Փամբակի որոշ գավառներ: Պարսիկներն առանձնակի դաժանություն էին ցուցաբերում հայերի նկատմամբ՝ այդպիսով փորձելով վրժինդիր լինել ռուսներին աջակցելու համար: Վ. Պոտտոն գրել է. «... ամարոպը նախ ձայթեց անպաշտպան հայ բնակչության գլխին: Երևանի խանի առաջին արվածը կրեցին Փամբակի և Շորագյալի մարզերը: Գյուղերն ամայացրին, երեխաների ու կանանց մեծ մասը

<sup>394</sup> АКАК, т. VI, ч. II, док. 627, стр. 347.

<sup>395</sup> АКАК, т. VI, ч. II, док. 632, стр. 348.

<sup>396</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 54, վավ. 342:

<sup>397</sup> Հայք եւ ռուս-պարսկական պատերազմը, «Մասիս», հմ. 3860, Կ. Պոլիս, 1887, էջ 48:

տանջամահության ենթարկվեցին, հարյուրավոր ընտանիքներ գերության քշեցին»<sup>398</sup>:

Պարսիկների հարձակման ժամանակ Ղարաբաղում գտնվում էր ընդամենը 6 վաշտ՝ գնդապետ Ռեուտի գլխավորությամբ, որը տեղաբաշխված էր Չանախչի (Ավետարանոց) գյուղում: Փոքրաթիվ այս զորամասին օգնելու նպատակով Գորիսում գտնվող փոխգնդապետ Նազիմկայի հրամանատարության տակ եղած մոտավորապես 1000 հոգուց բաղկացած զորամասը հրաման է ստանում՝ միանալ գնդապետ Ռեուտի 42-րդ եզերական գնդին: Չնայած հայ ուղեկցողների հորդորներին՝ հասնել Ղարաբաղ աննկատելի կաճաններով, փոխգնդապետ Նազիմկան, հրանոթները նույնպես տանելու մտադրությամբ, գնաց հիմնական վտանգավոր ճանապարհով: Աբաս Միրզան հրամայում է Ամիր խան սարդարին և Մեհտի Ղուլի խանին՝ մինչև ռուսական զորքերի ուշքի գալը՝ հասնել Շուշի: «Ձեզ կարգադրվում է, – ասված էր Աբաս Միրզայի հրամանում, – Նախիջևանից Սիսիան լեռան կողմով առանց հապաղելու ուղիղ դեպի Շուշի արշավել, քանի որ, նրանք մեզ ծառայելու պատրաստ, զորքի գալստյանն են սպասում (խոսքը վերաբերում է Ղարաբաղի մահմեդական բեկերին – Վ. Բ.): Եթե ձեզ հետ սարքազ ու թեղանոթներ տանեք, արագ ընթանալ չեք կարողանա: Բացի այդ, հրետանին լեռներով տանելը խիստ դժվար է: Ռուսաց զորքի դեմ ես եմ կռվելու, և եթե սարքազ հետևակազորը ու հրետանին ձեզ տամ, հաղթել չեմ կարողանա: Սարդա՛ր, մեծ գործ ենք սկսել: Քանի որ առջևում կրակի ծովեր են փոթորկվում, պետք է զարկենք ու առաջ շարժվենք: Եթե առաջինը հարվածենք, երկար տարիներ հանգիստ ենք վայելելու, այլապես տառապանքներից չենք ազատվի ...: Ալլաի օգնությամբ ու շահի հավերժական բախտով հինգշաբթի օրը կանցնենք Խոզա-Աֆերինի կամուրջը և կանգ կառնենք Ջերբայի լի այգիներում: Ուրբաթ օրը կմտնենք Ամարաս, շաբաթ օրն էլ գրոհելով Ավետարանոցում գտնվող ռուսական զորքերի վրա՝ կռվի կրոնվենք ու մեկ օրում կլուծենք թե՛ ամրոցի, թե՛ նրա կայազորի հարցերը»<sup>399</sup>:

Փոխգնդապետ Նազիմկայի զորագունդը, լեռնային ոլորապտույտ ճանապարհները հաղթահարելով, փորձում է ժամ առաջ հասնել Շուշի: Ամիր խան սարդարը, Նազիմկայի զորագնդի առաջխաղացումը կանխելու նպատակով, հազարհոգանոց մի ջոկատ իր եղբոր որդի Մուհամմադ Ջաման խանի գլխավորությամբ օգնության է ուղարկում քուրդ ցեղապետ Հաջի Աղալար Բեկին: Սակայն այդ ջոկատը, ճանապարհին զբաղվելով թալանով ու կերուխումով, ժամանակին տեղ չի հասնում: Նրանց փոխարեն Արաքսի

ափից Աբաս Միրզայի գնդերից մեկն է տեղ հասնում: Հազարու գետի մոտ քուրդ և թաթար խռովարարները, Հաջի Աղալար Բեկի գլխավորությամբ, պարսկական միացյալ ուժերի հետ միասին շրջապատում են ռուսական ջոկատը, մի մասին կոտորում, մնացածներին՝ գերում:

Ռեուտի զորամասն այդ լուրն առնելուն պես, առանց հապաղելու, ամրանում է Շուշիի անմատչելի բերդում:

Աբաս Միրզան Քիրս լեռան կողմից հասնում է Ավետարանոց ու գրավում այն: Ջորքը և քուրդ ու թուրք ավագակախմբերը թալանում են գյուղն ու ռուսների թողած բեռները և զինամթերքը: Մեհտի Ղուլի խանի կարգադրությամբ կողոպտվում և հրո ճարակ են դառնում գեներալ Մադաթովի տունն ու կալվածքը, անարգվում նրա նախնիների գերեզմանները<sup>400</sup>: Դրանից հետո հուլիսի 26-ին պարսկական զորքերը տարբեր կողմերից շրջապատեցին Շուշիի բերդը:

Թագաժառանգ Աբաս Միրզան հիմնական ուժերով հանգրվանում է Սղնախ գյուղից հյուսիս-արևելք Նաբաթ-խան վայրում: Սղնախի արևմտյան մասում՝ անտառում, բանակ են դնում Ամիր խան սարդարը և Մեհտի Ղուլի խանը, իսկ Խոջալլուում՝ Աբաս Միրզայի եղբայր Շեյխ Ալի Միրզան<sup>401</sup>:

Աբաս Միրզան հաջորդ օրն առաջարկում է Ռեուտին՝ բերդը հանձնել՝ խոստանալով թույլ տալ կայազորին անարգել հեռանալ Թիֆլիս:

Շուշիի 1700 հոգուց բաղկացած կայազորը և 1500 հայ աշխարհագորայինները վճռականորեն որոշեցին պաշտպանել բերդը և շրջակա 22 հայկական գյուղերից այստեղ ապաստանած հայ բնակչությանը<sup>402</sup>: Թիկունքն ապահովելու նպատակով գնդապետ Ռեուտի կարգադրությամբ բերդից հեռացվեց պարսկամետ թուրք երիտասարդությունը: Միաժամանակ, Շուշիի պաշտպաններին ոգևորելու նպատակով Ռեուտը հայ կամավորներից մեկին անց է կացնում պարսպի մյուս կողմը և, նորից վերադարձնելով բերդ, բոլորի ներկայությամբ ընթերցում է սուրհանդակի բերած՝ իր իսկ կողմից կազմված նամակը, որը իբր թե Թիֆլիսից ուղարկել է գեներալ Երմոլովը: Դեռևս Շուշին չգրաված՝ պարսիկները երազում էին թալանել ամրոցի հեքիաթային հարստությունը: Աբաս Միրզան իր ծառաներին ասում է. «Դուք բոլորդ սպասում եք, որ ես Շուշի բերդը գրավեմ, և դուք կողոպտեք այնտեղի հարստությունները ...: Բայց ո՛չ, ես այնքան եմ սպասելու, մինչև որ նրա

<sup>400</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 117:

<sup>401</sup> Кавказский сборник, т. 22, Описание вторжения персиян в Грузию, стр. 138–141.

<sup>402</sup> Որոշ տվյալներով Շուշին ուներ 1500 զինվոր և 3000 հայ աշխարհագորային: Տես՝ Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 643, 645:

<sup>398</sup> Потто В., Первые добровольцы Карабага ..., стр. 58.

<sup>399</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 112–113:

բնակիչները իրենք անձնատուր լինեն, որից հետո իմ հայր շահի (խոսքը վերաբերում է իր հորեղբոր՝ Աղա Մուհամմադ շահի հարստություններին, որի վերաբերյալ ավանդազրույց էր ստեղծվել – Վ. Բ.) գանձերն ում մոտ էլ լինեն, ես եմ վերցնելու»<sup>403</sup>: Պարսիկները նախապես իրար մեջ բաժանում էին Շուշիի անվանի և հարուստ մարդկանց ունեցվածքը: Ջոհրաբ Թառումյանի ու Շեյխուվների հարստությանն Աբաս Միրզան էր տիրելու, Մուղղուսի Բաբա Հախումյանի և Խանդամիրյանների ունեցվածքին՝ Մեհտի Ղուլի խանը<sup>404</sup>:

Մերժում ստանալով՝ պարսիկները անգլիացի և ֆրանսիացի մասնագետների օգնությամբ ականապատում են բերդի պարիսպները և մի քանի անգամ գրոհում: Կրելով ծանր կորուստներ՝ Աբաս–Միրզան իր ուժերը խնայելու և Թիֆլիսը գրավելու նպատակով կրկին բանակցությունների մեջ է մտնում Ռեուտի հետ և երկու շաբաթով զինադադար կնքում, մինչև որ Երմոլովից կարգադրություն ստացվեր Շուշին հանձնելու մասին: Սակայն, դրան հակառակ, Ռեուտը Երմոլովից ստանում է հետևյալ հրամանը. «Պաշտպանեցեք մինչև վերջին մարդը, գլխով պատասխանատու եք բերդի հանձնման համար: Պաշտպանելով Շուշին՝ այն ձեզ պատիվ կբերի: Պահանջում եմ բոլոր միջոցները գործադրել պաշտպանության համար: Թաթարներից հավաքեք հացի պաշարները, թող դավաճանները սովամահ դառնան: Մեծահոգաբար վերաբերվեք հայերի նկատմամբ: Հայերին զինեք մեծ քանակությամբ, նրանք կպաշտպանվեն: Սպասեցեք մեզ»<sup>405</sup>: Իր հերթին գնդապետ Ռեուտը գեներալ Երմոլովին ներկայացրած զեկուցագրում գրել է. «Բերդը պաշտպանող հայերի վերաբերյալ պարտքս եմ համարում բացատրել, որ նրանց ծառայությունը արժանի է ուշադրության, որովհետև նրանք բոլորը գործում էին գերազանց քաջությամբ, դիմացան բազմաթիվ գրոհների, ետ մղեցին թշնամուն խոշոր կորուստներով, արհամարհում էին պարենի պակասը և բնավ չէին մտածում բերդը հանձնելու մասին, թեև վրա է հասել կատարյալ սովը»<sup>406</sup>:

Ղարաբաղի հայերն, իրենց քաջարի նախնիների ավանդներին հավատարիմ, հերոսաբար պաշտպանում էին հայրենի հողը: Շուշիի հայերը ոչ միայն կռվում էին ճակատի առաջին գծում, այլև միաժամանակ սննդամթերք հայթայթում, վառող պատրաստում, նորոգում բերդի փլված պատերը, կանայք և երեխաները փամփուշտ, հաց և ջուր էին մատակարարում զինվորներին, խնամում վիրավորներին: Շուշիի մեծահարուստները՝ Հախու-

մյանները, Թառումյանները, Գյանջում Խանդամիրյանցը, մելիք Ջումշուդի որդին՝ Բեհրանբեկ Մելիք Շահնազարյանը, իրենց ունեցվածքը հայրենի բերդավանի պաշտպանությանն ի սպաս դրեցին: Նրանց անունները հիշատակված են ռուսական կառավարությանը ներկայացված պաշտպանական կոիվները դեկավարող հայ անձանց ցուցակում<sup>407</sup>:

Անդրադառնալով հայերի սխրանքներին՝ «Մասիս» պարբերականը 1887 թվականին գրել է. «Բերդն ընդդիմացաւ քառասուն և ութ աւուր սարսափելի պաշարման մը: Աբաս Միրզա ուներ իւր բանակին մէջ ֆրանսիացի և անգլիացի ռազմագէտներ, բայց հակառակ բոլոր իրենց ջանքերուն, բերդն անձնատուր չէր լիներ ... հայերն էին որ իրենց քաջութեամբ կը պաշտպանէին զայն: Ահա ինչու որ կը պատմուի այդ մասին ռուսաց կողմանէ Մադաթօվի կենսագրութեան մէջ.

Ռուսք անխոռով էին վասն զի իրենց հետ էին հայերն որք ամենայն քաջութեամբ կը պատասխանէին ընդդէմ բերդին եղած ամէն յարձակմանց: Բերդին մեջ ոչ բավական պաշար կար եւ ոչ հրանօթ: Աբաս Միրզա տեսնելով պահպան գորքերուն այդ յամառ և աննուաճելի ընդդիմութիւնն, ըմբռնեց թէ կարող չը պիտի լինի տիրել բերդին յարձակումներով: Յուսահատած իշխանը խորամանկութեանց դիմեց, զանազան խոստումներով ուզեց հրապուրել հայերն որպէս զի առքա բաժանուին ռուսներէն և բերդն յանձնեն, բայց հայերն միահոգի և միասիրտ ռուսներու հետ, մերժմամբ պատասխանեցին այդ հրաւերին: Հայոց այս ընթացքն մեծ բարիք մը եղաւ ռուս համար: Սահմանագլխի այդ նշանաւոր բերդի գրաւումը անպատճառ շատ գէշ հետեւանքներ կունենար մեզ ռուսացս համար: Եթէ պարսիկ տիրէին այդ բերդին, այնուհետեւ այլ եւս առանց արգելքի կը դիմէին և Թիֆլիզ նախ քան անդ հասնին ռուսաց զինուորներու: Սքանչելի էին Շուշիի մեջ կատարուած գործողութիւնները: Գիշերը կը պատրաստէին վառօդ ու գնտակ եւ ցերեկը կը գործածէին զայնս: Հայոց կանայք եւ աղջկունք ցոյց կուտային եռանդ ու քաջութիւնը եւ կօզնէին պատերազմող զինուորաց, կը մասնակցէին կռույն: Եւ մինչեւ ցայսօր կենդանի կը մնան Շուշուայ մէջ այդ ինքնագոհութեան յիշատակներ»<sup>408</sup>: Արհեստավոր Պողոսն օրական պատրաստում էր 20–30 ֆունտ վառող: Հասարակ մարդիկ գիշերներն իրենց ուսերի վրա հացահատիկի պարկերը կածաններով իջեցնում էին Հունտս գյուղի ջրաղացները, ալյուր աղում և վերադառնում: Աբաս Միրզան մի քանի անգամ փորձեց վերացնել իր համար ատելի այդ ջրաղացները, բայց նրա բոլոր փորձերը

<sup>403</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 122:

<sup>404</sup> Նույն տեղում:

<sup>405</sup> Потто В., Геройская оборона крепости Шуши, стр. 30.

<sup>406</sup> Потто В., Первые добровольцы Карабага ..., стр. 62.

<sup>407</sup> «Кавказский сборник», т. 24, Тифлис, 1903, стр. 108.

<sup>408</sup> Ժիզն գեներալ Լէյտինանտա կնետգլխ Մադատովա, իզտանիե ֆտորոե, Սանկտ Պետերբուրգ, 1863, Հայք եւ ռուս–պարսկական պատերազմը, «Մասիս», հմ. 3860, Կ. Պոլիս, 1887, էջ 48–49:

փշրվեցին՝ զարնվելով հայերի հերոսական դիմադրությանը, որոնց առաջնորդում էին Սաֆար և Ռոստոմ Թարխանյան եղբայրները: Շուշիի պաշտպաններից աչքի ընկան նաև սուրհանդակ Հ. Ալթունյանը, կապիտան Մադաթովը և ուրիշներ<sup>409</sup>:

Շուշեցի Խաթունի անունն այդ օրերին բոլորը գիտեին Ղարաբաղում: Ժողովրդի մեջ հետաքրքիր մի պատմություն է մնացել նրա հերոսական արարքի մասին, որը գրի է առել «Մասիս» պարբերականի թղթակիցը: «Երբ Աբաս Միրզայի զորքերն սկսած էին պաշարել Շուշի բերդը, – պատմում է թղթակիցը, – նույն իսկ պաշարման սկսած օրը, մի աղքատ կին պարկ մը ցորենն առած կը տանի ջրաղացին աղալու համար: Շուշի բերդի ջրաղացները կը գտնուին Գարգար գետի ձորին մէջ մօտ Յիւնոտ գիւղին: Պէտք է տեսնել այդ անդնդախոր ձորն, ով որ տեսել է այն նեղ ճանապարհն որ քարափնէրու վրայէն, սարսափելի գահավէժներէն կը բարձրանայ դէպի ի բերդը, նա միայն կարող է վկայել թե որքան քաջութիւն, որքան սրտի ամրութիւն պէտք էր մի կնոջ, որ կարողացաւ անցնելով այդ ճանապարհներէ ոչ միայն ազատեալ իւր անձը պարսիկ զինվորներու ձեռքէն, այլ նաև կոտորել անոնցմէ շատերն:

Ամուսինը շալակած ալիւրի պարկը կնոջը հետ միասին կը բարձրանային քարափնէրու վրայէն, երբ յանկարծ վրայ կը կհասնին պարսիկ զինուորներու խումբ մը: Ամուսինը մոռանալով պարկն եւ միանգամայն կինը–երկուքն ալ անդ կը թողու եւ փախուստեան մեջ կը փնտրոտ իւր փրկութիւնը: Կինը մենակ կը մնայ անզէն, բայց չփախչիր, պէտք էր ազատել իւր զաւակներու ապրուստը: Կսկսի վերցնել քարերն եւ արձակել զինուորաց դէմ եւ կը յաջողի շնորհիւ քարի հարուածի մը, ուշաթափ գետինը ձգել զինուորներէն մին եւ իւել նորա հրացանն ու սուրն:

Այնուհետեւ, մի կողմէ կը պատերազմէր զինուորներու դէմ և միւս կողմէ քաշերով իւր ետեւէն ալիւրին պարկը, կը բարձրանար դէպի բերդն:

Հեռուէն, բերդի մեջէն կը տեսնուի նորա կոխն եւ աղաղակներով կը քաջալերեն կինը. նա մէկ կողմէն պարսից զինուոր կը սպանէ, միւս կողմէն կը ջանայ փրկել իւր զաւակներու ապրուստը: Ուրեմն պարկ եւ կին կը մտնեն ողջ առողջ բերդին մէջ:

Մինչեւ ցայսօր ամեն շուշեցի կը յիշէ այդ կնոջ անունն որ կը կոչուէր Խաթայի: Յետոյ ռուս զորավար Ռէուտի առաջարկութեամբ ռուսաց կառավարութիւնը թոշակ կապեց այդ կնոջ մինչեւ ցմահ»<sup>410</sup>:

<sup>409</sup> Потто В., Первые добровольцы Карабага ..., стр. 59.

<sup>410</sup> Հայք եւ ռուս պարսկական պատերազմը, «Մասիս», հմ. 3860, 1887, էջ 49:

Ամիր խան սարդարը և Մեհտի Ղուլի խանը Աբաս Միրզայի մոտ, իրենց խաթարված հեղինակությունը վերականգնելու և թագաժառանգին հաճոյանալու համար, որոշում են Շուշին գրոհելու նախաձեռնություն ցուցաբերել: Այդ ընթացքում լուրեր են տարածվում, որ Երևանյան դարպասների կողմից դուրս գալով՝ սննդամթերք հայթայթելու նպատակով այս ու այն կողմ են ցրվում ու շրջակայքի բերքն հավաքելով՝ քիչ–քիչ ամրոց են տանում<sup>411</sup>:

Նրանք որոշում են իրենց տրամադրության տակ եղած սարքազների չորս զորագնդերով և դաշտային Ղարաբաղի թուրքերից հավաքագրված թալանին սովոր 2000 հոգուց բաղկացած ավազակախմբով դարանակալել և Երևանյան դարպասի շրջակայքում բռնել ելումուտ անողներին ու հանկարծակի գրոհով մտնել ամրոց<sup>412</sup>: Վերոհիշյալ ուժերը հուլիսի 30–ին, գաղկարծակի գրոհով մտնել ամրոցի դարպասներին, կոտորում են ամրոցից ելումուտ անողներին, մի մասին էլ՝ գերեվարում: Այնուհետև նրանք գրոհում են ամրոցը: Շուշիի պարետ Գյանջում աղա Խանդամիրյանը բացում է հողով ամրացված դարպասը և, իր կամավորների զլուխն անցած՝ պարսպի տակ մարտի բռնվում: Նրան հաջողվում է ազատել գերիների մեծ մասին և, կորուստներ պատճառելով թշնամուն, հետ քաշվել ու նորից ամրանալ բերդում: Այդպիսով, տապալվում է Ամիր խան սարդարի և Մեհտի Ղուլի խանի ծրագիրը:

Շուշիի և Քարինտակի կամավորականները Սաֆար հարյուրապետի գլխավորությամբ թիկունքից, տարբեր տեղերից հանկարծակի հարձակումներ էին գործում թշնամու ուժերի վրա, անընդհատ լարվածության մեջ պահում Աբաս Միրզայի սարքազներին:

Վ. Պոտտոն վկայում է, որ առանց հայերի օգնության Շուշու կայազորը երբեք չէր կարող դիմանալ պաշարմանը: Հետագայում հայ կամավորներից շատերն արժանացան պարգևների և արտոնությունների: Ռոստոմ Թարխանյանն ստացավ ռուսական բանակի պրապորշչիկի կոչում և ցմահ թոշակ, իսկ Սաֆար Թարխանյանի մահվանից հետո նրա ընտանիքի անդամներին պետական գանձարանից նշանակեցին նպաստներ<sup>413</sup>:

Հայերի նկատմամբ վրեժխնդիր լինելու համար պարսկական զորքերն Արցախի տարբեր գավառներում հարձակումներ են գործում անպաշտպան բնակավայրերի վրա, կողոպտում և սպանում մարդկանց: Արյունահեղ մարտեր ծավալվեցին Դիզակում:

<sup>411</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 118:

<sup>412</sup> Кавказский сборник, т. 24, Тифлис, 1903, Описание вторжения персиян в Грузию, стр. 87, Утверждение, т. 4, ч. 1, стр. 108.

<sup>413</sup> Потто В., Геройская оборона крепости Шуши, стр. 32.



Ամիր խան սարդարի հրոսակախմբերը հասան Տոդ: Ազգաբնակչությունն ապաստանեց Գոչավանքում: Կանանց և երեխաներին պատսպարելով անտառներում՝ Տոդի և հարևան գյուղերի բնակիչները պաշտպանում էին իրենց բնակավայրերը: Հատկապես աչքի ընկան Տումի գյուղի երիտասարդները, որոնք, համարձակ գործողություններով մեծ կորուստներ պատճառեցին թշնամուն: Ժամանակակիցը գրել է. «... ամենքն սաստիկ և քաջք և անտառաբնակք որպես վայրենիք»<sup>414</sup>:

Պարենի և զինամթերքի սղության հետևանքով Շուշին ծանր դրության մեջ է հայտնվում: Օրեցօր բերդի պաշտպանների ուժն ու կարողությունը թուլանում է: Հայրենակիցների ծանր վիճակը մեղմելու և հարցը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը, մելիք Վանի Աթաբեկյանը և Գյուլիստանի մելիք Հովսեփ Մելիք-Բեգլարյանը հանդիպում են Աբաս Միրզայի հետ:

Աբաս Միրզան հեղինակավոր այդ գործիչների հնարավորություններն օգտագործելու նպատակով ընդառաջում է և հրամայում պատժել նրանց, ովքեր նախկինի պես կշարունակեն հայ սպանել:

Մի քանի անհաջող գրոհներից հետո, Աբաս Միրզան փորձում է պառակտում առաջացնել բերդում գտնվող հայերի ու ռուսների միջև: Նա հավաքել է տալիս մի քանի հարյուր հայ ընտանիք և Գանձասարի Սարգիս արքեպիսկոպոսի հետ ուղարկում է Շուշիի բերդի պարիսպների տակ, որպեսզի հայերին համոզեն՝ հանձնել ամրոցը, այլապես իրենց կկոտորեն: Բերդի հայ պաշտպանները պատասխանում են. «Մենք ռուսներին չենք դավաճանի ... ավելի լավ է մի քանի հարյուր մարդ ոչնչանա, քան ամբողջ ժողովուրդը ընկնի դժբախտների ծանր լծի տակ»<sup>415</sup>:

Այս դեպքից հետո ռուսական կողմը հայ գործիչներին մեղադրեց դավաճանության մեջ: Ա. Երմոլովի հրամանով մելիք Վանին, մելիք Հովսեփը և Սարգիս Հասան-Ջալալյանը ձերբակալվում են: Ութ ամիս անց վերոհիշյալ գործիչներն անմեղ ճանաչվեցին և Պասկենիչի կողմից ազատ արձակվեցին:

Աբաս Միրզան ամեն անգամ մի հայ հեղինակավոր մարդու ուղարկում է բերդի հայ պաշտպանների մոտ, որպեսզի հորդորի նրանց՝ հրաժարվել ռուսների հետ համագործակցելուց և գնալը ցած դնել: Հերթական անգամ, երբ հայ տանուտերերից մեկին՝ Սարուխան հարյուրապետին, Աբաս Միրզան բերդի պարիսպների տակ է ուղարկում, վերջինս պաշտպաններին հանձնվելու փոխարեն կոչ է անում պայքարը շարունակել: Մեհտի Ղուլի

խանը հրամայում է տանուտերի լեզուն կտրել: Բայց բեկերից մեկի միջնորդությամբ Սարուխան հարյուրապետը փրկվում է<sup>416</sup>:

Այլ ելք չգտնելով՝ Մեհտի Ղուլի խանն անձամբ ինքն է մոտենում բերդի պարիսպներին և բանակցում Շուշիի նախկին կառավարիչ Աղաբեկ Քալանթարյանի հետ: Խանը, Աղաբեկ Քալանթարյանին դիմելով, ասում է. «Աղաբեկ, դուք հայերդ, չե՞ք ամաչում, որ մեր աղ ու հացը մոռացած, մեզ վրա կրակում եք»: Աղաբեկ Քալանթարյանը պատասխանում է. «Մենք ձեր աղն ու հացը չենք մոռացել ու ձեզ վրա չենք կրակում: Եթե դուք բարեհաճեք մեզ մոտ գալ, մենք բոլորս կայսերը ծնկաչոք կաղաչենք ներել ձեր սխալները: Այդ դուք պետք է ամաչեք, որ գնացել եք ձեր հին թշնամուն, որը ծարավ է մեր արյանն ու ունեցվածքին, բերել եք, որ մեզանից վրեժ լուծի, մեր կանանց ու հարստությանը տեր դառնա»<sup>417</sup>:

Աբաս Միրզան մի քանի անգամ ևս գրոհում է Շուշիի վրա, բայց ամեն անգամ, մեծ կորուստներ տալով, հետ է նահանջում: Ռուսական հրամանատարությունը, օգտվելով Շուշիի պարիսպների տակ պարսկական զորքերի կրած խայտառակ պարտությունից, ի մի բերելով իրենց ուժերը, անցնելով հակագրոհի, ռազմական նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը:

Աբաս Միրզան, լսելով ռուսների առաջխաղացման մասին, իր քեռի Ամիր խան սարդարին և որդուն՝ Մուհամմադ Միրզային հրամայում է գնալ ռուսներին ընդառաջ և ամրանալ Գանձակում:

Գեներալ Մադաթովը երկուհազարանոց ռուսական զորագնդով, դուրս գալով Թիֆլիսից, շարժվում է դեպի Գանձակ: Անվանի գեներալի զորաշարժը մեծ խուճապ է առաջացնում պարսկական զորքերում:

Աբաս Միրզան Ամիր խան սարդարին գոտեպնդելու և գործողությունների մղելու համար նամակ է գրում իր քեռուն, որտեղ ասված է. «Պետրոս բեկը Մադաթովի քեռին է, իսկ դու՝ իմը, տե՛ս, թե Շուշի բերդը հայերի հետ ոնց է պաշտպանվում, մինչդեռ դու անառիկ բերդը այդքան զորք ու թնդանոթներով չես ուզում պաշտպանել: Մա՛րդ, մի չանախսեցու վախից չեն փախչի: Թե վախենում ես, որ սպանվելուցդ հետո երեխաներդ սոված կմնան, մի վախեցիր, սոված չեմ թողնի: Իսկ թե վախենում ես, որ գերի կընկնես, մի՛ մտածիր, կնոջս ականջօղերը կծախես, քեզ կազատեն: Այս ամենի մասին խորհիր ու ջանք մի խնայիր և թող Ալլահը քեզ հետ լինի»<sup>418</sup>: Այդ խոսքերը ոչ միայն չազդեցին Ամիր խան սարդարի վրա, այլև խուճապային տրամադրությունն ավելի մեծացրին:

<sup>416</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 122-123:

<sup>417</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 123:

<sup>418</sup> Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 6, стр. 664.

<sup>414</sup> Մատենադարան, ձեռ. 7823, թ. 69:

<sup>415</sup> Потто В., Первые добровольцы Карабага ..., стр. 68.

Ամիր խան սարդարը և Մուհամմադ Միրզան, 10 հազարանոց զորքի գլուխ անցած, Գանձակից հասնում են Շամքոր գետի ափը: Մաղաթովի հրամանատարության տակ գտնվող զորքերը, հասնելով հակառակորդին, ընթացս 17 թնդանոթներից կրակ են բացում պարսիկների վրա և մեծ կորուստներ պատճառում: Ամիր խան սարդարը իր պատիվը փրկելու համար մահ էր որոնում: Ռուսական զորքերն անցնում են գետը և գրոհում: Ճակատամարտում Ամիր խանի հետ զոհվում են հարյուրավոր սարքազներ:

Մուհամմադ Միրզան ցիրուցան զորքերի մնացորդների հետ հասնում է Գանձակ, և այստեղ էլ նրանց են միանում ամրոցի կայազորի զինվորներն ու ճողոպրում Ղարաբաղ՝ հասնելու Աբաս Միրզային: Շամխորի ճակատամարտում պարսիկները 1500 զոհ են ունենում<sup>419</sup>: «Ընդարձակ հարթավայրը ծածկվում է սպանվածների մարմիններով, որոնք իրար վրա կուտակվելով բլրակներ են գոյանում: Բազմաթիվ գերիներ ու մեծ ավար է ընկնում նրանց (ռուսների) ձեռքը, – գրել է դեպքերի ժամանակակիցը: Փախչողների ավանգարդը հասնելով գումակին՝ բոլորը միասին շտապում են դեպի Ղարաբաղ: Այնքան արագ էին հեռանում, որ բեռնակիրները, իրենց գործը թողած, գրաստներն ու ուղտերին ազատ են արձակում և իրենց բանակի ողջ ահռելի ավարը դաշտում թողնում ...»:

Գանձակն անցնելուց հետո Մուհամմադ Միրզան մի քանի անգամ հրամայում է կանգ առնելու շեփորները հնչեցնել, բայց ոչ ոք վախից կանգ չի առնում: Յուրաքանչյուրը շտապում է մյուսից առաջ անցնել: Ամրոց գիշերը անց են կացնում իրենց իրերը այս ու այնտեղ թափփելով խուճապահար փախուստի մեջ: Արշալույսին հասնում են Թարթառ գետի ափը, ուր ի վերջո դադար են տալիս, որպեսզի քիչ հանգիստ առնեն»<sup>420</sup>:

Այնուհետև Մաղաթովը սրընթաց գրոհով ազատագրեց Գանձակը: Այս հաղթանակի համար Վ. Մաղաթովը ստանում է գեներալ–լեյտենանտի զինվորական կոչում և ադամանդներով զարդարված սուր՝ «քաջության համար» մակագրությամբ:

Աբաս Միրզան ստիպված Շուշիի շրջակայքում կուտակած 60 000 հոգուց բաղկացած զորքը և 29 թնդանոթներ վերցրած՝ շարժվում է դեպի Գանձակ: Սեպտեմբերի 6–ին այդտեղ է հասնում նաև Պասկևիչը՝ 15 000 զորքի գլուխն անցած: Գանձակում ռուսներն արդեն ունեին 19 000 զինվոր և 22 թնդանոթ: Այս խոշոր ուժերի միջև սեպտեմբերի 13–ին Գանձակի մատույցներում տեղի ունեցավ վճռական ճակատամարտ: Ռուսական զորքերի ղեկավարումը Պասկևիչը հանձնարարել էր գեներալ Մաղաթովին: Առաջինը գրոհեցին

ռուսները: Պարսկական առաջապահ մարտունակ գնդերը կասեցնում են գրոհը և փորձում ձնշել ռուսներին: Պասկևիչը, խուճապի մատնվելով, ցանկանում է նահանջի հրաման տալ: Գեներալ Մաղաթովը համոզում է գլխավոր հրամանատարին՝ հրաժարվել այդ կործանարար մտքից: Նա, զորքերի կառավարումն ամբողջապես իր ձեռքը վերցնելով, փայլուն հաղթանակ է ապահովում:

«Ոչնչացնում են (ղզլբաշների) քաջարի առաջամարտիկներին, – գրել է դեպքերի ժամանակակիցը, – ու անմշակ կտավի կտորի պես ձեղքում Աբաս Միրզայի բանակը: Մահը սկսում է հնձել նրա մարտիկներին, որոնց վրա է կախվում մանուշակագույն երկինքը ...»:

Երբ ցրվում է հրի ու ծխի ամպը, և օդը պարզվում, (ղզլբաշներից) անվնաս մնացածները տեսնում են, որ իրենց ընկերները կողքին չեն, խուճապահար փախուստի են դիմում: Ոմանք, առանց գենք գործածելու, անգամ առանց փախուստի են դիմում: Ոմանք, առանց գենք գործածելու, անգամ առանց իրենց հրացանները պարզելու, բռնում են նահանջի ճամփան: Աբաս Միրզան, երբ տեսնում է դեպքերի նման ընթացքը, բլրից ցած է իջնում, հեծնում սրարշավ նժույգը ու սկսում փախչել: Մինչև Արաքսի ափը ձին չի կանգնեցնում: Ամբողջ բանակը թիկունք է դարձնում ու փախուստի դիմում: Այս ճակատամարտը տևում է մեկ ու կես ժամ, մինչդեռ Շամխորինը տևել է երեքից չորս ժամ»<sup>421</sup>:

Գանձակի ճակատամարտում պարսիկները կորցրին 2000 զինվոր: Ռուսները վերցրին 1000 գերի, մեծ քանակությամբ ռազմավար, երկու թնդանոթ, չորս զինադրոշմ<sup>422</sup>:

Կորցնելով մարտական հիմնական ուժերը՝ պարսիկներն այլևս անկարող եղան լուրջ դիմադրություն ցույց տալ: Մաղաթովը շարժվեց դեպի Ղարաբաղ: Աբաս–Միրզան ստիպված էր սեպտեմբերի 17–ին խուճապահար անցնել Արաքսի մյուս ափը:

Այդ հաղթանակներից հետո գեներալ Մաղաթովն ավելի մեծ հռչակ է ստանում, և նրան անվանում են Մաղաթով–Իրանեղոֆ (Իրան–ե–դաֆ, պարսկերեն նշանակում է «Իրանին հաղթող, դուրս քշող»)»<sup>423</sup>: Խաչատուր Աբովյանը՝ որպես դեպքերի ժամանակակից, գեներալ Մաղաթովի ժողովրդականության և հեղինակության մասին գրել է. «Ով էն ժամանակը կամ տեսած կամ լսած կլինի, թե Մաղաթովն ինչ արեց, նհախ տեղը չի նրա անունը հայի, թուրքի, ղզլբաշի բերանում մնացել: Աշխարք տակ ու վեր կրլի, բայց նրա հիշատակը անջնջելի կմնա մեր ազգի միջին ու մեր աշխարքումը»<sup>424</sup>:

<sup>421</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 133:

<sup>422</sup> ՀԺՊ, հ V, էջ 142; Утверждение, т. 4, ч. 1, стр. 175.

<sup>423</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 134:

<sup>424</sup> Սևյան Վ., նշվ. աշխ., էջ 48:

<sup>419</sup> Кавказский сборник, т. 22, стр. 23.

<sup>420</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, նշվ. աշխ., էջ 130:

Այսպիսով, Շուշիի հերոսական պաշտպանությունը, որը տևեց 48 օր՝ 1826 թվականի հուլիսի 8–ից սեպտեմբերի 10–ը<sup>425</sup>, կարևոր նշանակություն ունեցավ ռուս–պարսկական պատերազմի հետագա ամբողջ ընթացքի վրա: Իրեն գամելով հակառակորդի գլխավոր ուժերը՝ հնարավորություն ստեղծվեց ժամանակ շահել, կենտրոնացնել Կովկասյան կորպուսի ցրված զորամասերը, լրացուցիչ օգնական ուժեր ստանալ Ռուսաստանից և ջախջախիչ հարված հասցնել Այսրկովկաս ներխուժած պարսկական բանակներին:

Գեներալ Մադաթովը 1826 թ. սեպտեմբերի կեսերին մտնում է Շուշի: Տեղի հայությունը մեծ ցնծությամբ է ընդունում իր հայրենակցին: Մադաթովը Շուշիի ազգաբնակչության սոցիալական ծանր վիճակը մեղմելու նպատակով կարգադրում է բերդավանին մոտ պահվող տարածքների արքունի պահեստներից պարեն, առաջին անհրաժեշտության ապրանքներ տրամադրել<sup>426</sup>: 1826 թ. դեկտեմբերի 28–ից մինչև 1827 թ. հունվարի 16–ը ընկած ժամանակահատվածը Մադաթովը Ղարաբաղից և Շիրվանից հավաքագրած հայ կամավորականներով ու ռուսական փոքրաթիվ մի զորագնդով անցնում է Արաքսը և ասպատակում Ղարաբաղի խանի տարածքը՝ Մելքինից մինչև Ահար քաղաքը, և մեծ ավարով վերադառնում Ղարաբաղ<sup>427</sup>, որը հնարավորություն է տալիս երկրամասի բնակչությանը՝ ապահով անցկացնել ձմռան ամիսները:

Ժամանակակիցը գրել է. «Ամենուր լսելով Մադաթովի և ռուսական զորքի գալստյան մասին՝ բոլորը կամ հնազանդություն էին հայտնում ու սկսում նրան ծառայել, կամ էլ փախուստի էին դիմում: Նույնիսկ թագաժառանգ Աբաս Միրզան Թավրիզում մտածում էր փախուստի մասին: Ամեն օր կարգադրում էր ձիերը թամբել ու բակ հանել, իր կանանց ու աղջիկներին ձի հեծնել ու ձիավարել սովորեցնել, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը, Մա-

<sup>425</sup> Մինչխորհրդային և խորհրդային պատմագրության մեջ ընդունված էր Շուշիի պաշարման տևողությունը համարել 48 օր: Տես Գիլխանդանեան Ա., Կովկաս երկիրը, ժողովուրդը, պատմությունը, Ա մաս, Փարիզ, 1916, էջ 133; Պարսամյան Վ., Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Երևան, 1978, էջ 68; Սևյան Վ., Նշվ. աշխ., էջ 45; ՀԺՊ, հ. V, էջ 140; Бала-ян Б., Международные отношения Ирана в 1813–1828 гг., Ереван, 1967, стр. 145; Агаян Ц., Вековая дружба народов Закавказья, ч. первая, Ереван, 1970, стр. 133; Россия в судьбах армян в Армении, Москва, 1978, стр. 222; Շուշիի պաշտպանությունը մինչև 50 օր ներկայացրել է՝ Ջ. Գրիգորյան, Ռուս և հայ ժողովուրդների համագործակցությունը XIX դարի սկզբին, Երևան, 1957, էջ 71: Ա. Քյուրքչյանը և Ն. Բաղդասարյանը գտնում են, որ Շուշիի պաշտպանությունը տևել է 55 օր, տես՝ Քյուրքչյան Ա., 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմը, Երևան, 2000, էջ 33; Բաղդասարյան Ն., Նշվ. աշխ., էջ 69:

<sup>426</sup> Кавказский сборник, т. 26, Тифлис, 1907, Материалы, стр. 51, 102.

<sup>427</sup> АКАК, т. VI, ч. II, д. 703–705, стр. 387–389.

դաթովի Ղարաբաղն անցնելու ու Թավրիզին մոտենալու մասին իմանալուն պես, մեկական խուրջին փող վերցրած, փախուստի դիմեր»<sup>428</sup>:

1827 թ. հունվար–սեպտեմբեր ամիսներին Ատրպատականի տարածքից քոչվոր ցեղերն իրենց հերթին հարձակումներ էին գործում Ղարաբաղի հայկական բնակավայրերի վրա: 1827 թ. մարտի 3–ին 300 հոգանոց մի ավազակախումբ անցնում է Արաքսը և հասնում մինչև Հարար և Կոռնիձոր գյուղերը: Զոհվում է 4 մարդ, 2–ը՝ վիրավորվում: Հուլիսի 30–ին շահսանցիները՝ թվով 2000 մարդ, մտնում են Վարանդայի Գիշի գյուղը, կողոպտում բնակչությանը, սպանում 3 հոգու, իսկ 10 հոգու էլ իրենց հետ գերի տանում<sup>429</sup>: Սեպտեմբերի 6–ին պարսկական կանոնավոր մի զորագունդ հարձակվում է Շուշիի ուղղությամբ և ավերում հարակից հայկական բնակավայրերը<sup>430</sup>:

Հիմնականում գեներալ Մադաթովին հաջողվում է զսպել նրանց ու հենացնել Արաքսի մյուս ափը:

Մադաթովը Ղարաբաղից վերադառնում է Թիֆլիս և նախապատրաստվում նորից անցնել Արաքսն ու խորանալ Պարսկաստանի տարածքներում: Այդ նպատակով նա ռուսական մեծաքանակ գնդերով ու հայ կամավորներով հասնում է Արաքսի ափը և բանակ դնում Խուրափերինի կամրջի մոտակայքում: Սակայն շուտով Կովկասի կառավարչապետ Երմոլովին փոխարինում է կոմս Պասկենիչը, որը Մադաթովի փոխարեն Ղարաբաղի ու Գուշթասֆի (Շիրվանի և Շաքիի – Վ. Բ.) կառավարիչ է նշանակում իշխան Աբխազովին: Մադաթովին ենթակա զորքերը հանձնվում են գեներալ Պանկրատսին<sup>431</sup>: Ատրպատականում նախատեսված ռազմագործողությունը հետաձգվում է: Փոխվում է նաև ռուսների վերաբերմունքը Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանի նկատմամբ: Վերջինս, հույս չունենալով Աբաս Միրզայի օգնությամբ նորից տիրել Շուշիին, փորձում է լեզու գտնել ռուսների հետ: Ռուսական արքունիքը, ինչպես նախկինում, այնպես էլ այդ օրերին, ներում է Ղարաբաղի խանի դավաճանական արարքները և իր հիմնական դաշնակցի՝ արցախահայության շահերը կոխկրտելով և արհամարհելով՝ Մեհտի Ղուլի խանին թույլ է տալիս վերադառնալ Շուշի: Ավելին, իշխան Աբխազովը և գեներալ Պանկրատսը նրան ուղեկցում են մինչև բերդավան ու նրան վերադարձնում նախկին կալվածքներն ու իրավասությունների մեծ մասը: 1827 թ. մայիսից Ղարաբաղը և Շուշին հիմնական ռազմական գործողությունների բեմից հեռու էին գտնվում և դեպի Նախիջևան, Արարատյան դաշտ ռուսական զորքերի,

<sup>428</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ, Նշվ. աշխ., էջ 136:

<sup>429</sup> Присоединение Восточной Армении к России, т. 2, стр. 330.

<sup>430</sup> Նույն տեղում, էջ 378:

<sup>431</sup> АКАК, т. VII, д. 507, стр. 542.

զինամթերքի, պարենի տեղափոխման հարմարավետ ու ապահով վայրեր էին դարձել:

1827 թ. հուլիսի 7-ին ռուսները, երբ գրավում են Նախիջևանի նշանավոր Աբասաբադի բերդը, գերում են Ղաջար ազնվականներից Մուհամմադ Ամին խանին ու ղզբաշ մյուս խաներին և 3000 զինվորների: Դրա հետ միասին ռուսներն իրենց ձեռքն են գցում մեծ քանակությամբ զենք, զինամթերք, հատկապես՝ թնդանոթներ և դրանք, ինչպես նաև գերիներին, ուղարկում են Շուշի, իսկ այդտեղից՝ Թիֆլիս: Ռուսական զորքերը հայ կամավորական ջոկատների հետ ռազմաճակատի տարբեր հատվածներում նոր հաջողություններ են ունենում՝ մոտեցնելով քաղաքի հաղթանակի օրը:

1828 թ. փետրվարի 10-ին Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա՝ Թուրքմենչայ գյուղում կնքվում է հաշտության պայմանագիրը: Դրանով ավարտվում է ռուս-պարսկական պատերազմը: Արաքս գետը երկու երկրների միջև ճանաչվեց պետական սահման: Արևելյան Հայաստանը մեկընդմիջտ ազատվեց պարսկական լծից:

Առանց պետականության, բայց մեծ հավատով ու սպասումներով, որ այն նորից կվերակերտվի, հայությունն սկսեց ուրվագծել իր պատմության նոր շրջանը:

### գ) Շուշիի վարչական և քաղաքական կյանքը 1828–1917 թվականներին

Ռուս-պարսկական պատերազմից հետո, Այսրկովկասում տեղական իշխողներին քաղաքական ասպարեզից հեռացնելուն զուգահեռ, իրենց տիրապետությունը նոր նվաճված տարածքներում ամրապնդելու նպատակով շարունակվում են վարչական բարեփոխումները: Դրան էր ուղղված 1828 թ. հունվարի 1-ին զլխավոր շտաբի պետ Ի. Դիրիշին հասցեագրված Այսրկովկասի կառավարման համակարգի բարեփոխման նախագիծը: Նախատեսվում էր ստեղծել վարչատարածքային հինգ միավորներ՝ վրացական, իմերեթական, հայկական և երկու մահմեդական մարզեր: Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի նահանգները պետք է ներառվեին մահմեդական առաջին մարզի մեջ: Ըստ նախագծի՝ Վրաստանի և Իմերեթիայի համար պիտի գործեր ռուսական օրենսդրությունը, իսկ մնացածները պետք է ուղղորդվեին նախկին խանական վարչակարգերին հատուկ օրենքներով<sup>432</sup>:

<sup>432</sup> РГВИА, ф. ВУА, д. 1016, ч. 1, л. 82.

Անգամ ֆինանսների նախարար Կանկրինը 1829 թ. օգոստոսի 15-ին առաջարկում էր վերականգնել Շաքիի, Շիրվանի և Ղարաբաղի խանությունները<sup>433</sup>:

Սակայն, քանի որ Այսրկովկասում ընթանում էին ռազմական գործողություններ, և ցարական արքունիքին անհրաժեշտ էր օգտագործել հայ ժողովրդին, Նիկոլայ Առաջինը մերժեց այդ նախագծերը:

Ցարը չսխալվեց: Հայությունը 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին նորից լծվեց ռուսական զենքի հաղթանակներն ապահովելու գործին:

1828 թ. փետրվարին Երևանում ստեղծվեց 400 հայերից բաղկացած «Հայկական հեծյալ գունդ» և 800 հոգանոց «Հայկական հետևակային գումարտակը»<sup>434</sup>:

Հայկական բոլոր զավառներից, այդ թվում՝ Ղարաբաղից, հարյուրավոր կամավորականներ մեկնեցին ռազմաճակատ: Հայկական մարզից ռազմաճակատ մեկնածների թիվն անցավ երեք հազարի սահմանը<sup>435</sup>:

Նույն հաջողությամբ ցարական արքունիքը հայերին օգտագործեց Կովկասի լեռնականների դեմ մղվող պատերազմի ժամանակ: Առանձնապես արցախահայերն աչքի ընկան Շամիլին վերջնական պարտության մատնելու ռազմագործողությունների ժամանակ:

Շուշեցի փոխգնդապետ Իսահակ Հովհաննեսի Ղարամյանցի գունդը մի քանի ճակատամարտերում պարտության է մատնել Իմամ Շամիլին և ազատել Գրիբոեդովի աներոջը՝ զեներալ Ճավճավաձեին և ընտանիքի գերյալ անդամներին ու իշխան Օրբելուն:

Այդ մասին է վկայում Շուշիի հայկական գերեզմանատանը պահպանված փոխգնդապետի շիրմաքարը. «Հանգիստ հայազգի քաջ զինուորական փոխգնդապետ Իսայայ Յովհաննիսեան Ղրամեանց, ծն ի 1821 ամի և վախճ ի 1886 ամի ի 12 մարտի: Քաջամարտիկն Իսայ յաղթական փառօք Ջիմամն Շամիլ ի պարտութիւն մատնեաց եւ յետս դարձոյց գերեալ զընտանիս, Ճաւճաւաղգէ, Օրբել-վրաց իշխանաց 1854»<sup>436</sup>:

Շամիլի գերման և հյուսիսային Կովկասում պատերազմի ավարտման գործում անչափ մեծ էր մեկ այլ շուշեցու՝ զեներալ Հովհաննես Լազարյանի

<sup>433</sup> РГИА, ф. 560, оп. 22, д. 20, л. 33.

<sup>434</sup> ՀԺՊ, հ. V, էջ 180:

<sup>435</sup> Երիցյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, էջ 453:

<sup>436</sup> Տես՝ Շուշիի հայկական գերեզմանատուն, Նույնը տես՝ Գ. Арутюнян, Шуши: ... стр. 291.

(Իվան Դավիդովիչ Լազարև) դերը: Նա ծնվել է Շուշիում 1820 թ.: Մանկությունն ու պատանեկությունն անց է կացրել հարազատ քաղաքում:

1839 թ. Հովհաննես Լազարյանը ծառայության է մտել նշանավոր Շիրվանյան հետևակային գնդում և այնուհետև ունեցել փայլուն ռազմական կենսագրություն: Պատմաբան, գեներալ-լեյտենանտ Վ. Պոտտոն հիացմունքով գրել է. «Նա հազվադեպ ծնունդ էր, փայլուն և մեծագույն տաղանդ, որն ամենուրեք, որտեղ որ լիներ, իրենից հետո թողել է փառավոր հիշատակ: ... Լազարևը չուներ ո՛չ անվանի գերդաստան, ո՛չ հարստություն, ո՛չ կապեր վերևներում ...: Անսովոր միտք և հսկայական ունակություններ, որի առջև ակամայից խոնարհվում էին բոլորը՝ ահա նրա ուղու և պանծալի ծառայողական կարիերայի շարժիչը»<sup>437</sup>: Գեներալ Հ. Լազարյանի ռազմական տաղանդը փայլեց Շամիլի դեմ մղված մարտերում: 1848 թ. նա լեռնականների կողմից պաշարված Ախտա ամրոցից հանկարծակի դուրս է գալիս և 7-րդ զուամարտակի գլուխ անցած՝ գրոհում հակառակորդի ուժերի վրա ու փրկում ամրոցի կայազորին: Այնուհետև նա դարձավ Մեխտուլիի խանության կառավարիչ<sup>438</sup>: Գեներալին երկաթյա կամքի շնորհիվ հաջողվեց իրեն ենթարկեցնել լեռնականներին: Պոտտոն գրել է. «Շնորհիվ իր խորաթափանցության և լեռնականների խառնվածքին քաջատեղյակ լինելով, նա տիրապետում էր իր հարևանների մտադրությունը կռահելու գաղտնիքին: Նրա անունն անգամ սարսափազդու էր լեռնականների համար»<sup>439</sup>:

Շարունակելով այդ միտքը՝ ռուս գեներալը գրել է. «Կովկասի ժողովուրդների մոտ նրա խոսքը օրենքի ուժ ուներ»<sup>440</sup>:

1859 թ. օգոստոսին Շամիլը, երբ հասկացավ, որ պաշարված Գունիքը պահելն արդեն անհնարին է, ռուսական հրամանատարությանն առաջարկեց իր հետ բանակցությունների ուղարկել միայն գնդապետ Լազարյանին: Շուշեցի զորավարը, մտնելով լեռնականների ձամբարը, նրանց ողջունում է արևելյան ձևով և դիմելով Շամիլին՝ ասում է. «Շամի՛լ, ողջ աշխարհին հայտնի է քո քաջության և փառքի մասին ...: Ենթարկվի՛ր ձակատագրին և հանձնվի՛ր ռուսաց տիրակալի բարեհաճությանը. դրանով դու կփրկես մնացածներին, որոնք քեզ հավատարիմ մնացին քո տխրության պահերին:

<sup>437</sup> Братская помощь пострадавшим в Турции армянам, второе издание, Москва, 1898, стр. 288.

<sup>438</sup> Հովհաննիսյան Հ., Շուշեցի գեներալ-ադյուտանտը. Հովհաննես Լազարյան, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 95:

<sup>439</sup> Братская помощь пострадавшим в Турции армянам, стр. 290.

<sup>440</sup> Նույն տեղում, էջ 289:

Ցոյց տուր, որ դու մեծ ես, ինչպես երջանիկ, այնպես էլ տխրության ժամանակ ...»<sup>441</sup>:

Շամիլը խոհեմություն է ցուցաբերում և հանձնվում:

1859 թ. Հովհաննես Լազարյանը՝ արդեն գեներալ-մայորի զինվորական կոչումով, գլխավորում էր Դաղստանում գտնվող ռուսական ուժերը, միաժամանակ իրականացնում այդ նույն օկրուգի քաղաքացիական մասի կառավարումը:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, գեներալ-լեյտենանտի ռուսադիրներով, նա Ալաջայի բարձունքներում ռուսական զորքերի համար փայլուն հաղթանակ ապահովեց: Նա առավել փայլուն կազմակերպեց 1877 թ. նոյեմբերի 3-ի Կարսի գրոհը և ազատագրումը: Մարտերի ընթացքում ծանր վիրավորվում է մեկ այլ շուշեցի՝ գեներալ Լազարյանի եղբոր՝ Բաբաջանի որդի պորուչիկ Լազարևը<sup>442</sup>: Պատերազմի ավարտին նա ստացավ գեներալ-ադյուտանտի զինվորական կոչում և սկսեց իրագործել Միջին Ասիայի նվաճման ռուսական արքունիքի ծրագիրը: Հ. Լազարյանն այդտեղ էլ 59 տարեկան հասակում մահանում է համաճարակից:

Պետական բազմաթիվ պարգևների արժանացած շուշեցի գեներալին հուղարկավորեցին Թիֆլիսի Վանք եկեղեցու բակում:

Լեռնականների դեմ պատերազմում աչքի էր ընկել նաև հյուսիսային Կովկասում ռուսական զորքերի հրամանատարներից մեկը՝ շուշեցի Դավիթ Կոստանդյանը, որը զոհվել է 1844 թ.: Որդին հոր աճյունը տեղափոխել և հողին է հանձնել հայրենի Շուշիի հայկական գերեզմանատանը<sup>443</sup>: Շուշիում հաստատված Մելիք-Շահնազարյանների տոհմից ցարական արքունիքում ծառայել են միայն 32 սպաներ, որոնցից հինգը գեներալներ և հինգը գնդապետներ<sup>444</sup>: 1813-1817 թվականներին հայոց Շուշին ցարական սպայակույտի համալրման կարևոր աղբյուր էր դարձել: Արցախի մելիքական տների ներկայացուցիչները, կորցնելով իրենց իրավունքներն ու նյութական կարողությունները, հաստատվելով զարգացման ուղին բռնած քաղաքում, աստժո կողմից նրանց վերապահված շնորհքը և գեներտիկորեն ժառանգած ունակությունները սկսեցին օգտագործել տնտեսության, մշակույթի և այլ ասպարեզներում: Բայց մելիքական տների ու ոստերի համար Շուշիի բարձրավանդակը նեղ էր ու սահմանափակ: Նրանց թները երկար էին և առավել լայն գործունեություն ծավալելու համար հայտնվեցին կայսրության տարբեր քաղաքներում՝ Թիֆլիսում, Մոսկվայում, Պետերբուրգում,

<sup>441</sup> Братская помощь пострадавшим в Турции армянам, стр. 292.

<sup>442</sup> Потто, Генерал-адъютант Иван Давидович Лазарев, стр. 327-334.

<sup>443</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 277:

<sup>444</sup> Мелик Шахназаров А., Владетели Варанды ..., стр. 82-83.

Վարչավայում և հաջողություններ արձանագրեցին ինչպես ռազմական գործում, այնպես էլ՝ կյանքի այլ ասպարեզներում: Նրանց մի մասն էլ հայրենիքի նկատմամբ բարձր պատասխանատվությամբ շարունակեցին ապրել Շուշիում: Նրանք, հաղթահարելով ցարական պաշտոնյաների և թաթար խաների ու բեկերի հարուցած դժվարությունները, վաղվա օրվա նկատմամբ լավատեսությամբ լցված, շենացնում էին պապերի օջախները:

Ցարիզմի վարած մտրակի և մեղրաբլիթի քաղաքականությունը շարունակական ու նպատակային բնույթ ուներ: Նույնիսկ Այսրկովկասի ազգերին, զրկելով ներքին ինքնավարություն ունենալու ամեն մի հնարավորությունից, 1843 թ. թույլ տրվեց գավառներին, այդ թվում՝ Ղարաբաղին, ունենալ իրենց զինանշանը: Դրա հեղինակն էր գերմանացի զինանշանագետ Գուգո Շտրյոլը: Զինանշանի վերևի մասում ոսկեգօծ դաշտում կանգնած է վագրը, կողքին՝ հողից դուրս եկող լուսե երեք սյուն, ստորին մասում՝ կանաչ դաշտում սլացող ձի, ինչը խորհրդանշում էր, որ գավառում բուծվում էին ամենալավ տեսակի ձիեր<sup>445</sup>:

1830 թ. ապրիլի 24-ին Պասկևիչը ցարին է ներկայացնում Այսրկովկասի կառավարման համակարգի բարեփոխման նախագիծ, որով նախատեսվում էր տարածաշրջանը բաժանել երկու նահանգների՝ առաջինը՝ Վրացական, իսկ երկրորդի անունը կորոշեին ինքը՝ ցարը և Հայկական մարզը:

Երկրորդ նահանգի մեջ կմտնեին Ելիզավետպոլի՝ Շամշադինի ուղեմասի հետ, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Ղուբայի և Դերբենդի գավառները<sup>446</sup>:

Այդպիսով, ստացվում էր, որ հայ հոծ բնակչություն ունեցող Ղարաբաղը և զգալի քանակությամբ արցախահայերով բնակեցված Շամշադինը կտարրալուծվեին գերակշիռ մահմեդական ազգաբնակչություն ունեցող գավառների մեջ:

Այս նախագիծը նույնպես մնաց թղթի վրա:

1833 թ. դեկտեմբերի 12-ին սենատոր Պ. Կուտաիսովը զինվորական նախարար Չերնիշևին ներկայացրեց նոր նախագիծ, որը վերջինս կառավարական շրջանակներում շրջանառության մեջ դրեց 1834 թ. փետրվարի 2-ին և անվանեց «Ռուսական կայսրության Անդրկովկասյան մարզերի կանոնադրության հիմնական դրույթների նախագիծ»:

Ներկայացված ծրագրով նախատեսվում էր Այսրկովկասը բաժանել քրիստոնեական կամ Սևծովյան և մահմեդական կամ Կասպիական նա-

հանգների: Քրիստոնեական նահանգի մայրաքաղաք կդառնար Թիֆլիսը, իսկ մահմեդականինը՝ Բաքուն:

Ինչպես միշտ, այս անգամ էլ մահմեդական նահանգի մեջ հայտնվեց Ղարաբաղը: Հայերը պետք է օգտվեին միջնորդ դատարաններից, իսկ մահմեդականները՝ շարիաթից<sup>447</sup>: Ներկայացված նախագծերում, ինչպես նկատելի է, մշտապես առաջարկվում էր Ղարաբաղը կտրել բուն հայկական շրջաններից և կցել մահմեդական գավառներին:

Ղարաբաղն Արևելյան Հայաստանի այն եզակի երկրամասերից էր, որտեղ հայությունը միատարր էր և ապրում էր հայ աշխարհին հատուկ, դարերից եկած օրենքներով ու ավանդույթներով: Ցարական իշխանությունները, Ղարաբաղը կտրելով բուն հայկական միջավայրից, տարրալուծելով մահմեդական խառնամբոխի մեջ, այն կդարձնեին կանխատեսելի ու հեշտ կառավարելի:

Մյուս կողմից էլ, հայկական նահանգները բաժան-բաժան անելով, ցարական արքունիքը խորտակում էր Խ. Լազարյանի, Կ. Արղությանի, Ա. Խուրաբաշյանի՝ հայկական թագավորությունը վերականգնելու փափագած ծրագիրը:

Ցարական դրածոները, մասնավորապես Պասկևիչը և նրա կամակատարները, աննախադեպ հալածանքներ սկսեցին Հայաստանի պետականության վերականգնման գաղափարներով տոգորված Ներսես Աշտարակեցու, Արցախի մելիքների և հայ մյուս երևելիների նկատմամբ:

1837 թ. սեպտեմբերի վերջերին և հոկտեմբերի սկզբներին, երբ Նիկոլայ Առաջինը ժամանեց Այսրկովկաս, հայ ժողովրդի ներկայացուցիչները ցարին ներկայացրին ռուս չինովնիկների դաժան, անհոգի, նվաստացուցիչ վերաբերմունքն ու չարաշահումները:

1837 թ. նոյեմբերի 11-ին Նիկոլայ Առաջինը զինվորական նախարարին հանձնարարեց Այսրկովկասում վարչատարածքային բաժանումների ժամանակ հաշվի առնել տվյալ տարածքում ապրող երեք գլխավոր ազգերի՝ վրացիների, հայերի, թաթարների շահերը<sup>448</sup>:

Այսրկովկասի վարչակառավարչական համակարգի բարեփոխումների իրագործման նպատակով 1838 թ. փետրվարի 5-ին ստեղծվեց «Անդրկովկասի կառավարման գլխավոր խորհուրդը»:

1838 թ. օգոստոսի 16-ին Կովկասի կառավարչապետ Գոլովինի կողմից հաստատվեց սենատոր Գանի ներկայացրած «Ռուսական Անդրկովկասի կառավարման կանոնադրությունը»: Քննարկումների ընթացքում անհրա-

<sup>445</sup> Բաղդասարյան Ն., նշվ. աշխ., էջ 55, տես նաև՝ Դեմոյան Հ., Հայկական զինանշաններ, դրոշներ, պետական պարզանքներ, Երևան, 2008, էջ 63:

<sup>446</sup> РГИА, ф. 1377, оп. 1, д. 5, л. 4-10.

<sup>447</sup> РГИА, ф. 561, оп. 1, д. 2066, л. 644-677.

<sup>448</sup> РГИА, ф. 1268, оп. 1, д. 15, л. 99.

ժեշտ համարվեց Այսրկովկասն այս անգամ բաժանել երկու նահանգների՝ Վրաց-իմերեթական և Հայկական ու մեկ՝ Կասպիական մարզի: Այս անգամ նախատեսվում էր Ղարաբաղը ներառել Հայկական նահանգի մեջ<sup>449</sup>:

Թվում էր, թե այս անգամ հաշվի էր առնվել հայ ժողովրդի ցանկությունը, բայց շուտով պարզվեց, որ այդ գաղափարը քննարկումներից այն կողմ չանցավ: Դեռ ավելին, շուտով պարզ դարձավ, որ ցարիզմը նույնիսկ մտադիր չէր պահպանել արդեն տասներկու տարի գոյություն ունեցած Հայկական մարզը:

Երկարատև փնտրտուքներից հետո՝ 1840 թ. ապրիլի 10-ին, Նիկոլայ Առաջինը հաստատում է Այսրկովկասի նոր վարչական բաժանման նախագիծը: Այսրկովկասը բաժանվեց Վրացա-իմերեթական նահանգի և Կասպիական մարզի:

Վրացա-իմերեթական նահանգի մեջ մտնում էին Թիֆլիսի, Թելավի, Ելիզավետպոլի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Գորիի, Բելոկանի, Քութայիսի, Գուրիայի, Ախալցխայի գավառները, իսկ Կասպիական մարզը բաղկացած էր Բաքվի, Շիրվանի, Ղարաբաղի, Շաքիի, Թալիշի, Դերբենդի և Ղուբայի գավառներից: Շուրջի գավառը բաժանվեց 6 տեղամասերի՝ Մեղրու, Քաբիրլիի, Ջանգեգուրի, Ջևանշիրի, Ջրաբերդի և Վարանդայի:

Կառավարումը կիրականացվեց եռաստիճան համակարգով՝ գլխավոր, նահանգային, մարզային և գավառային վարչությունների միջոցով: Օրենքի մեջ մանրամասնված էին դատական իշխանության իրավասությունները: Առաջին անգամ մահմեդական և քրիստոնյա բնակչության իրավունքները հավասարվեցին: Նրանք բոլորն էլ համարվում էին ռուսական կայսրության հպատակներ<sup>450</sup>:

1841 թ. Այսրկովկասում ներդրվեց Ռուսաստանի մյուս նահանգներին հատուկ կառավարման համակարգ:

Այսպիսով, 1840 թ. օրենքով ցարիզմը, անտեսելով տարածաշրջանի առանձնահատկությունները, ստեղծում է խառը ազգային խայտաբղետ կազմ ունեցող և զարգացման տարբեր աստիճանների վրա կանգնած ժողովուրդներով բնակեցված վարչական նոր միավորներ:

Բնականաբար, այդ ամենը հաշվարկված էր: Նպատակը հստակ էր. ցարիզմը ձգտում էր իր ներքին խնդիրները լուծելու համար իրավիճակ ստեղծել, անհրաժեշտության դեպքում էլ՝ կայսրության տարածքում ապրող ազգային փոքրամասնություններին լարել իրար դեմ:

<sup>449</sup> Туляев В., указ. соч., стр. 63:

<sup>450</sup> Полное собрание законов Российской империи, Собрание второе, т. XV, отд. 1, 1840 г., СПб., 1841, стр. 237-307.

Ցարիզմը հայ ժողովրդին անսքող ձևով ցույց տվեց, որ պետք է հրաժարվել ազգային ինքնավարության պատրանքներից:

Կայսրության կազմում Արևելյան Հայաստանը, բաժան-բաժան դառնալով, ազգային իղձերի իրագործման ճանապարհին կորցրեց միասնականությունը և նպատակին հասնելու հնարավորությունը: Հետագա տասնամյակներում հայ ժողովրդի լուսավոր գավակներից մեծ ջանքեր պահանջվեցին՝ թոթափելու ստրկամտությունն ու բոլոր կենսունակ ուժերը համախմբելու մեկ նպատակի շուրջ և, ըստ այդմ էլ, վերակերտելու ազգային պետականությունը:

Ռուսական տիրապետությունն Այսրկովկասում ամրապնդելու համար ցարական կառավարությունը 1840-ական թվականներին դիմում է նոր միջոցների:

Կայսերական միապետական իշխանության գաղափարախոսությանը հատուկ կենտրոնաձիգ կառավարման համակարգ ստեղծելու նպատակով 1844 թ. դեկտեմբերի 27-ին ցարի հրամանով, ստեղծվեց Կովկասի փոխարքայությունը: Առաջին փոխարքա նշանակվեց իշխան Մ. Ս. Վորոնցովը (1844-1854 թթ.): Նրան տրված էին մեծ լիազորություններ, նա անմիջապես ենթարկվում էր ցարին:

Փոխարքայի նախաձեռնությամբ էլ 1846 թ. դեկտեմբերի 14-ին ցարի հրամանագրով Այսրկովկասը նոր վարչական բաժանման է ենթարկվում: Տարածաշրջանը բաժանվում է չորս նահանգների՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու և Դերբենդի<sup>451</sup>:

Հայկական շրջանները՝ Երևանը, Նախիջևանը, Ալեքսանդրապոլը և Ելիզավետպոլի հայաշատ վայրերը, հայտնվեցին Թիֆլիսի, իսկ Ջանգեգուրն ու Ղարաբաղը՝ Շամախիի նահանգի մեջ: Այս դեպքերում ևս անտեսվում էին երկրամասի ազգային առանձնահատկությունները, նորից բաժան-բաժան են արվում հայկական նահանգները:

Հայ հոծ բնակչություն ունեցող նահանգներն իրարից բաժանելու, հայության տարբեր հատվածները մեկուսացնելու քաղաքականությունը շարունակվեց նաև 1860-ական թվականների երկրորդ կեսին: Որոշվեց Ղարաբաղի գավառի կազմում գտնվող Սյունիքն առանձնացնել և այն առանձին կարգավիճակով մտցնել ապագայում ստեղծվելիք Ելիզավետպոլի նահանգի մեջ<sup>452</sup>:

<sup>451</sup> «Кавказский календарь» на 1849, Тифлис, 1848, стр. 37-40.

<sup>452</sup> Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие ..., стр. 50.

Ցարական կառավարության՝ 1867 թվականի դեկտեմբերի 9-ի ընդունած նոր օրենքով Այսրկովկասը բաժանվեց 5 նահանգների՝ Քուբայիսի, Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի և Բաքվի: Արևելյան Հայաստանի տարածքների մի զգալի մասը մտցվեց Երևանի, իսկ մյուս մասը՝ Ելիզավետպոլի և Թիֆլիսի նահանգների կազմի մեջ: Լեռնային Ղարաբաղը հայտնվեց Ելիզավետպոլի նահանգի մեջ<sup>453</sup>:

1868 թ. Ելիզավետպոլի նահանգական կենտրոն ճանաչվեց Գանձակը, որն իր բնակչության թվով ու քաղաքին հատուկ մյուս բնորոշ գծերով շատ էր զիջում Շուշիին:

Ղարաբաղը վարչատարածքային տեսանկյունից բաժանվեց 3 գավառների՝ Ջևանշիրի, Շուշիի, Ջերբայիլի:

Գործող կարգի համաձայն՝ գավառական կենտրոններ հռչակվեցին Թարթառը՝ Ջևանշիրի համար, որի մեջ ներառվեցին Գյուլիստանի, Ջրաբերդի նախկին մելիքություններն ամբողջապես և Խաչենի մի մասը, Ջերբայիլը՝ համանուն գավառի համար, որի կազմում էր Դիզակի տարածքի մի հատվածը: Շուշի գավառի մեջ ընդգրկվեցին ողջ Վարանդան, Խաչենի և Դիզակի զգալի մասը<sup>454</sup>:

Ընդհանուր առմամբ՝ Ելիզավետպոլի նահանգը բաղկացած էր 8 գավառներից՝ Նուխիի, Արեշի, Ղազախի, Ելիզավետպոլի, Ջևանշիրի, Ջերբայիլի, Շուշիի և Ջանգեզուրի<sup>455</sup>:

Եթե նախկինում Այսրկովկասում կային 18 գավառներ, ապա 1867 թ. օրենքով այն հասցվեց 29-ի: 1873 թ., մասնակի բարեփոխումների արդյունքում, Այսրկովկասը բաժանվեց 86 գավառների<sup>456</sup>: 1888 թ. մայիսի 10-ի օրենքով գավառների թիվը կրճատվեց և հասցվեց 37-ի: Դրա փոխարեն ոստիկանական տեղամասերի թիվը կտրուկ ավելացվեց: Եթե 1873 թ. Այսրկովկասի գավառներն ունեին 45 ոստիկանական տեղամասեր, ապա 1888 թ. դրանց թիվը եռապատկվեց և հասցվեց 125-ի<sup>457</sup>:

Կովկասի փոխարքային առավել լայն իրավունքներ տրվեցին:

<sup>453</sup> Нагорный Карабах, историческая справка, Ереван, 1988, стр. 16; В. Товмасын, В. Атаджанян, Ю. Нерсисян, Карабахский вопрос: Истоки и сущность в документах и фактах, Степанакерт, 1991, стр. 25.

<sup>454</sup> Բալայան Վ., Արցախի պատմություն, էջ 243:

<sup>455</sup> Свод статистических данных, извлеченных из посемейных списков населения Кавказа, стр. 53; Обзор Елизаветпольской губернии за 1897 г., Тифлис, 1898, стр. 2.

<sup>456</sup> Евангулов, Местная реформа на Кавказе, Спб., 1914, стр. 18-19.

<sup>457</sup> Նույն տեղում, էջ 20; Свод статистических данных, извлеченных из посемейных списков населения Кавказа, стр. 50-51.

Վերադաս պաշտոնյաներ էին համարվում նահանգապետերն ու գավառապետերը: Գյուղերը ղեկավարում էին տանուտերերը, որոնք երեք տարին մեկ ընտրվում էին համայնքի ընդհանուր ժողովում:

Այսպիսով, ցարիզմը վարչատարածքային նոր բաժանումների միջոցով ստեղծեց կենտրոնացված ոստիկանական վարչակարգ, որը հնարավորություն տվեց բռունցքի մեջ պահել Այսրկովկասը և արագաթափ ճնշել ազատագրական ամեն մի խմորում ու շարժում:

Այդ ընթացքում Շուշիի վարչական և կառավարման համակարգում նույնպես կատարվեցին փոփոխություններ: Շուշիում տնտեսական կյանքի աշխուժացումը նպաստեց բնակչության աճին: 1852 թ. Շուշին բնակչության թվով Այսրկովկասում զիջում էր Թիֆլիսին, Շամախիին և Նուխիին:

1852 թ. տվյալներով Շուշին ուներ 12 774 բնակիչ, որոնցից 6356 հոգին տղամարդ էին, իսկ 6418-ը՝ կանայք<sup>458</sup>:

1847 թ. Շուշին քաղաքի կարգավիճակ ստացավ:

Այսրկովկասում Թիֆլիսից հետո Շուշին հայերի տնտեսական, մշակութային երկրորդ խոշոր կենտրոնն էր:

Շուշին քանի որ գավառային կենտրոն էր, այստեղ էին կենտրոնացված գավառային իշխանության մարմինները: Աղբյուրներում որոշ տեղեկություններ են պահպանվել Շուշիի գավառապետերի, նրանց կյանքի և գործունեության մասին:

1883 թ. Շուշիի գավառապետ է հիշվում Գանչելին<sup>459</sup>: Նա պաշտոնավարել է մինչև 1884 թ. հոկտեմբերի 1-ը և ժողովրդասեր, բարեհոգի անձնավորություն էր: «Շուշին շատ տարիներից ի վեր չի ունեցած մի այսպիսի ժողովրդասեր, բարեհոգի, իր գործին արժանի և բոլոր ժողովրդին սիրելի գավառապետ, - գրել է «Մեղու Հայաստանի» թղթակիցը, - սա դեռ մի ամբողջ տարի չը կայ, որ նշանակուել է տեղս, բայց այդ կարճ ժամանակամիջոցում քաղաքը բոլորովին կերպարանափոխուել է. ամեն մի փողոցի երկու կողմով էլ սկսել են սալայատակներ (տրոտուար) շինել, առողջապահական կարգադրութիւններ եղան և այն փողոցները, որոնցով գարշահոտյիւնից անցնելը անկարելի էր լինում, մաքրուեցան: Այն ինչ այդ պատուական մարդը նշանակուել է գաւառապետ, դեռ ոչ մի անգամ ամբողջ Ղարաբաղում չի լսուած այն գողութիւնների մարդասպանութիւնների մասին, որոնք յաճախակի և համարեա թէ ամենայն օրը կրկնվում էին. սա ամբողջ Ղարաբաղը սարսափի մեջ էր պահում, ամենքն էլ սրանից սարսափում էին և միննոյն

<sup>458</sup> Кавказский календарь на 1853 г., стр. 430.

<sup>459</sup> Գավառացի, Նամակ Շուշոյ, «Մշակ», հմ. 19, Թիֆլիս, 1883, էջ 2:



ժամանակ յարգում, մի խօսքով սրա նշանակուած օրից մինչև օրս կարելի է Ղարաբաղի ոսկե դար կոչել»<sup>460</sup>:

1885 թ. Շուշիի գավառապետ էր Դուբրովսկին<sup>461</sup>:

1911 թ. Շուշիի գավառապետ էր հիշվում Լակոտոշինը, որին սպանել է Ադա բեկ Արդուլլա բեկ օղլին<sup>462</sup>:

1913 թ. Շուշիի գավառապետ է դառնում Քրիստաֆոր Պետրովիչ Խարատախայր: Այնուհետև նա դառնում է Ադդամի շրջանի հաշտարար միջնորդ: Նա մահացել է 1915 թ. հուլիսի 13-ին և թաղվել է Շուշիում<sup>463</sup>:

1914 թ. Շուշիի գավառապետ կապիտան Վ. Բրիշկինը դառնում է Գանձակի ոստիկանապետ, իսկ նրա տեղը նույն թվականի դեկտեմբերի 17-ին նշանակվում է Ա. Կանկովսկին<sup>464</sup>:

1916 թ. Շուշիի գավառապետ է դառնում Դրուսենկոն<sup>465</sup>: Նրա օգնականն էր Դղեբուադզեն<sup>466</sup>:

Սկզբնադրյուններում որոշ նյութեր են պահպանվել նաև Շուշիի քաղաքապետների, քաղաքապետարանի (ուպրավա) աշխատակիցների և նրանց գործունեության մասին:

1874 թ. Շուշիի քաղաքագլուխն էր Մարգար Ղուլյանը<sup>467</sup>:

1900 թ. քաղաքագլուխ դարձավ Կարապետ Եսայան-Դանիելյանցը, 1902 թ. նրան փոխարինում է Ջավադ բեկ Իշխանյանը<sup>468</sup>: Վերջինս ակտիվորեն մասնակցում է 1903 թ. հայ առաքելական եկեղեցու ունեցվածքի պետականացման դեմ մղվող համաժողովրդական պայքարին, որի պատճառով էլ իշխանությունները նրան անորոշ ժամանակով աքսորում են Կովկասից<sup>469</sup>:

1908 թվականից մինչև 1915 թվականը Շուշիի քաղաքագլխի պաշտոնը վարում էր Գրիգոր Քալանթարյանը<sup>470</sup>:

1915 թ. մարտից այդ պաշտոնում Գրիգոր Քալանթարյանին փոխարինեց Գերասիմ Մելիք Շահնազարյանը<sup>471</sup>: Լեոնային Ղարաբաղում մինչև

<sup>460</sup> Էմանուէլ, Շուշի, «Մեղու Հայաստանի», հմ. 81, 18 հոկտեմբերի, Թիֆլիս, 1884, էջ 2-3:

<sup>461</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, թ. 3:

<sup>462</sup> «Ղարաբաղ», հմ. 1, 17 նոյեմբերի, Շուշի, 1911:

<sup>463</sup> «Հորիզոն», հմ. 293, 30 դեկտեմբերի, Թիֆլիս, 1914, էջ 4:

<sup>464</sup> «Փայլակ», հմ. 46, 6 օգոստոսի, Շուշի, 1915:

<sup>465</sup> «Փայլակ», հմ. 86, 13 նոյեմբերի, Շուշի, 1916:

<sup>466</sup> «Փայլակ», հմ. 95, 22 դեկտեմբերի, Շուշի, 1916:

<sup>467</sup> «Հայկական աշխարհ», հմ. 2, մայիս, Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Շուշի, 1874, էջ 44:

<sup>468</sup> «Տարազ», հմ. 30, 18 օգոստոսի, Թիֆլիս, 1902, էջ 319:

<sup>469</sup> Հայկական ցուցերը Կովկասում, «Դրօշակ», հմ. 9, Ժնև, 1903, էջ 139:

<sup>470</sup> «Ղարաբաղ», հմ. 1, 17 նոյեմբերի, Շուշի, 1911, «Մշակ», հմ. 123, 1914, «Արեգ», հմ. 10, 3 ապրիլի, Բաքու, 1915:

<sup>471</sup> «Փայլակ», հմ. 1, 8 մարտի, Շուշի, 1915:

խորհրդային կարգերի հաստատումը Գերասիմ Մելիք Շահնազարյանը կատարեց Շուշիի քաղաքագլխի պարտականությունները: Վերջինս կադետական կուսակցության անդամ էր:

Եղիշե Իշխանյանը նրա մասին գրել է. «Գերասիմ Մելիք Շահնազարյանը, ձիշտ է, մաքուր մարդ էր, նիւթամոլ ու կաշտակեր չէր ուրիշ քաղաքագլուխների պէս, սակայն ջղագար, քմահաճ ու կամակոր, հիւանդագին անձնաւեր, դիտողութիւն չհանդուրժող մէկն էր»<sup>472</sup>:

Շուշիի քաղաքագլուխը գործադիր իշխանությանը վերապահված իրավասությունները իրագործում էր քաղաքային ուպրավայի (վարչության) կամ, ներկայիս եզրույթով՝ քաղաքապետարանի աշխատակիցների միջոցով: Քաղաքային ուպրավայի անդամները նշանակվում էին վերադաս ուսական իշխանությունների կողմից: 1916-1917 թվականներին քաղաքային ուպրավայի անդամներ էին Ա. Վարազյանը և նշանավոր բժիշկ Ն. Եարամիշյանը: Վերջինիս աշխատավարձը կազմել էր 2400 ռուբլի<sup>473</sup>: Քաղաքային ուպրավան ուներ տարբեր հանձնաժողովներ կամ բաժիններ՝ հասոյթային, քննիչ և հսկիչ: Հասոյթային տուրքի հանձնաժողովը ուներ 8 անդամ և 8 հոգի էլ՝ անձնափոխանորդ<sup>474</sup>: Շուշիի քաղաքագլխին և նրա աշխատակազմին վերապահված էին սոցիալ-կենցաղային, տնտեսական, մշակութային, կրթական բազմաբնույթ իրավասություններ:

Քաղաքային ուպրավան, բացի երկուշաբթի և շաբաթ օրերից, քաղաքացիների ընդունելություն էր կազմակերպում, լուծում նրանց հուզող հարցերը: Երկուշաբթի և շաբաթ օրերին՝ ժամը 9<sup>00</sup>-ից մինչև 11<sup>00</sup>, քաղաքապետի նախագահությամբ տեղի էին ունենում ուպրավայի նիստեր<sup>475</sup>, որտեղ քննարկվում էին կուտակված հարցերը և լուծումներ առաջադրվում:

1879 թ. Արցախում ցորենի վատ բերքի պատճառով Շուշի քաղաքում հացի խնդիր առաջացավ: Այլուրի գինը մի քանի անգամ կտրուկ բարձրացավ: Այլուրի մեկ փութը վաճառվում էր 4 ռուբլի 50 կոպեկով: Շուշիի ուպրավան, քաղաքային բյուջեյի հաշվին, Ռուսաստանից այլուր է բերում, հաց թխում ու 1 ֆունտը 3 կոպեկով բաժանում չքավորներին: Միաժամանակ այլուրը պարկերով դնում էին Թոփխանայի հրապարակում և քաղաքի ավագանու անդամներ Մինաս Խունունցը և Հարություն Արամյանը հացը և այլուրը բաժանում էին այն աղքատներին, որոնք Շուշիի ծխական քահանաներից

<sup>472</sup> Իշխանեան Եղիշե, նշվ. աշխ., էջ 306:

<sup>473</sup> «Փայլակ», հմ. 92, 11 դեկտեմբերի, Շուշի, 1916, հմ. 8, 5 փետրվարի, Շուշի, 1917:

<sup>474</sup> «Փայլակ», հմ. 92, 11 դեկտեմբերի, Շուշի, 1916:

<sup>475</sup> «Փայլակ», հմ. 11, 16 ապրիլի, Շուշի, 1915:

համապատասխան թուղթ ունեին: Այդ ձևով հացի գները զսպվեցին, և սովը հաղթահարվեց<sup>476</sup>:

Շուշի քաղաքի պարենավորման հարցը կազմակերպական հունի մեջ դնելու և ծագած խնդիրներն ընթացս լուծելու համար 1917 թ. քաղաքային ուպրավայում ձևավորվում է մի մարմին՝ քաղաքային պարենավորման կոմիտեն, որը գլխավորում էր քաղաքագլուխը՝ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը<sup>477</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Այսրկովկասի քաղաքային բնակչության պարենավորման հարցում ծանր կացություն էր ստեղծվել:

Առաջին համաշխարհային պատերազմի տարբեր ճակատներում մարտնչել են Շուշի գավառի տղամարդկանց 50 տոկոսը, իսկ Կարյազինոյի գավառում այդ թիվը հասել էր 55 տոկոսի<sup>478</sup>: Դրա պատճառով երկրամասում խիստ կրճատվեց աշխատավոր մարդկանց թիվը: Գյուղերում և Շուշի քաղաքում մնացել էին հաշմանդամներ, կանայք, ծերեր և մանուկներ: Տարեցտարի կրճատվում էր մշակովի ցանքատարածությունների քանակը:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը, 1913 թ. Շուշիի գավառում հացահատիկայինների ցանքատարածություններից աշնանացանի տակ են եղել 15 184 դեսյատին, իսկ գարնանացանի՝ 5137 դեսյատին հողահանդակներ, 1916 թ. համապատասխանաբար այն կազմել է 5711 դեսյատին և 3061 դեսյատին: Կարյազինոյի գավառում այդ թվերը հետևյալ տեսքն ունեին. 1913 թ. 5717 դեսյատին աշնանացան և 51 դեսյատին գարնանացան, իսկ 1916 թ. համապատասխանաբար 3882 դեսյատին և 22 դեսյատին:

Փաստորեն, Շուշիի գավառում երեք տարվա ընթացքում աշնանացանի ցանքատարածքները կրճատվել են 60 տոկոսով, գարնանացանը՝ 39 տոկոսով, իսկ Կարյազինոյի գավառում՝ 38 տոկոսով և 53 տոկոսով:

1913 թ. Շուշիի գավառում ստացել էին 799 283 փութ ցորենի, գարու, հաճարի, կորեկի, կարտոֆիլի բերք, իսկ 1916 թ.՝ 113 410 փութ: Նույն ժամանակահատվածում Կարյազինոյի գավառում ստացել են համապատասխանաբար 11 5161 փութ և 65 675 փութ:

Փաստորեն, Շուշիի գավառում 1913 թ. համեմատ 1916 թ. 85 տոկոսով, իսկ Կարյազինոյի գավառում՝ 50 տոկոսով քիչ բերք են ստացել:

1913 թ. Շուշիի գավառում պահում էին 62 059 գլուխ խոշոր, մանր եղջերավոր անասուններ և խոզեր, իսկ 1916 թ. 23 491 գլուխ, Կարյազինոյի

<sup>476</sup> «Փայլակ», հմ. 16, 3 մայիսի, Շուշի, 1915:

<sup>477</sup> «Նեցուկ», հմ. 1, 18 օգոստոսի, Շուշի, 1917:

<sup>478</sup> «Նեցուկ», հմ. 3, 31 օգոստոսի, Շուշի, 1917

գավառում այդ թիվը կազմել է համապատասխանաբար 9231 գլուխ և 5446 գլուխ:

Փաստորեն, Շուշիի գավառում անասնազլխաքանակը պակասել է 80 տոկոսով, իսկ Կարյազինոյում՝ 78 տոկոսով<sup>479</sup>:

Ահա այս պայմաններում անհրաժեշտ էր երկրամասը և հատկապես Շուշի քաղաքը պահել դրսից ստացված պարենի հաշվին: Այս հարցում բավականաչափ նախաձեռնող էին Շուշիի քաղաքագլուխն ու քաղաքապետարանի աշխատակիցները:

Առաջին հերթին քաղաքում մտցվում է հացի բաշխման քարտային եղանակ<sup>480</sup>: Այնուհետև, քաղաքագլխի հանձնարարականով, քաղաքային ուպրավայի անդամ Միքայել Դոլուխանյանը գավառի հարթավայրային գյուղերից Շուշիի ազգաբնակչության համար ցորեն էր գնում<sup>481</sup>, իսկ մեկ այլ լիագորի՝ Ամիրբար Բաբայանին, գործուղում է հյուսիսային Կովկաս՝ 42 վագոն ալյուր բերելու<sup>482</sup>:

Շուշիի քաղաքագլուխը քաղաքի պարենավորման հարցը փորձում էր լուծել Ռուսաստանի տարբեր քաղաքների իր գործընկերների հետ ունեցած կապերի և հայ համայնքների միջոցով:

Շուշիի քաղաքագլխի միջնորդությամբ Թիֆլիսի քաղաքային վարչությունը 1916 թ. օգոստոսին երկու վագոն ալյուր է ուղարկում<sup>483</sup>:

Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը 1916 թ. նոյեմբերի 1-ին հեռագրում է Բաքվի քաղաքագլխին և լիագոր Գ. Խաչիյանին: Հեռագրում ասված է. «Քաղաքային ինքնավարությունը պաշարած է պահեստիների (նկատի ունի վիրավոր և զոհված զինվորականներին – Վ. Բ.) ընտանիքներով և քաղաքի ու գիւղերի չքատրներով, որոնք պահանջում են պահպանել իրենց կեանքը: Թախանձագին խնդրում եմ իշխանատրներին՝ խնայել տեղական հասարակությունը և թոյլ տալ մեր քաղաքին պատկանող շաքարը, որ գնած է մուրհակներով պարտք առած կանխիկ դրամով, ուղարկել Շուշի»<sup>484</sup>:

1916 թ. նոյեմբերի 17-ին Շուշիի քաղաքագլուխը հեռագրում է ծագումով շուշեցի մոսկվայաբնակ ժամհարյան եղբայրներին, Արզումանյան առևտրական տանը, Տեր Մկրտչյան եղբայրներին, Բաքվի նավթարդյունաբերողների խորհրդին, Նիկիտ Ադամյանին, Ա. Դաստակյանին, բժիշկ-

<sup>479</sup> «Նեցուկ», հմ. 3, 31 օգոստոսի, Շուշի, 1917:

<sup>480</sup> «Ապառաժ», հմ. 12, 27 հուլիսի, Շուշի, 1917:

<sup>481</sup> «Փայլակ», հմ. 79, 16 հոկտեմբերի, Շուշի, 1916:

<sup>482</sup> «Փայլակ», հմ. 5, 22 հունվարի, Շուշի, 1917:

<sup>483</sup> «Փայլակ», հմ. 64, 21 օգոստոսի, Շուշի, 1916:

<sup>484</sup> «Փայլակ», հմ. 85, 6 նոյեմբերի, Շուշի, 1916:

ներ Լևոն Աթաբեկյանին, Ե. Մինաս-Վարդապետյանին, Թիֆլիս՝ Դավիթ Ավան Յուզբաշյանին (խան Սղնախսկի), ինժեներ Ղուլյանին, Սամսոն Հարությունյանին, Մովսես Յուզբաշյանին: Հեռագրում ասված է. «Պատերազմի զոհերին օգնող տեղական կոմիտեն միջոցներ չունենալու պատճառով դադարել է նպաստներ տալ պետական նպաստ չստացող զինուորների ընտանիքներին, որոնք ենթակայ են սովամահի: Շուշեցիներ, օգնության հասէք»<sup>485</sup>:

Հացի աճող գները զսպելու համար քաղաքային ուպրավան 1917 թ. փետրվարի սկզբներին հոգևոր սեմինարիայի մոտ՝ Ստարոկլադքիչինսկայա փողոցում և ջուլիականոցի հարևանությամբ, բացում է երեք փուռ<sup>486</sup>:

Քաղաքագլխի որոշմամբ, բերդաքաղաքի բոլոր աշակերտներին դպրոցական վարչությունների միջոցով ամսական մեկական ֆունտ շաքար էր բաժանվում<sup>487</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ազգաբնակչության սննդի մատակարարման հարցերի լուծման նպատակով տարեկան Շուշիի գավառը դրսից 100 վագոն պարենամթերք էր ստանում<sup>488</sup>:

Չնայած քաղաքային ուպրավայի անդամները հիմնականում հայեր էին, այնուամենայնիվ, նրանք միջոցներ են ձեռնարկում բնակավայրի իսլամ դավանող ազգաբնակչության կյանքի և կենցաղի մակարդակը բարձրացնելու և մոտեցնելու հայկական թաղամասերում ստեղծված կացությանը:

1915 թ. հունիսի 1-ին քաղաքային վարչությունը որոշում է պահանջել թաթարներից, որ յուրաքանչյուր բնակարան ունենա իր արտաքնոցը<sup>489</sup>:

1915 թ. հուլիսի 17-ին քաղաքապետի գլխավորությամբ տեղի ունեցավ ուպրավայի նիստ, որը քննարկեց Շուշիում խոլերայի հնարավոր տարածման հարցը: Որոշվեց. «1) կազմակերպել ժողովրդական ձրի դասախօսություններ տեղական լեզուներով խոլերայի նշանակության և նրա դէմ կուելու միջոցների մասին: 2) Բաց անել ու կահաւորել երկու բարակներ՝ մէկը հայկական, իսկ միւրը թիրքական մասում: 3) Հրաւիրել 2 բժիշկ, 4 ֆելդշեր և 2 դիզինֆեկտորներ, 4) Հիմնել 4 դիտողական կետեր՝ Եւլախում, Բարդայում, Աղղամում և Շուշու տակ, հսկելու և նայելու, որ հիւանդութիւնը չտարածի դրսից եկած ճանապարհորդների միջոցով: 5) Պատուիրել ձեռ բերել քաղաքի համար անհրաժեշտ հականեխիչ դեղորայք: 6) Օգտուել տեղիս զինուորական հիւանդանոցի դիզինֆեկցիօն կամերայից: 7) Ուժեղացնել քաղաքիս

<sup>485</sup> «Փայլակ», հմ. 87, 20 նոյեմբերի, Շուշի, 2016:

<sup>486</sup> «Փայլակ», հմ. 11, 19 փետրվարի, Շուշի, 2017:

<sup>487</sup> Նույն տեղում:

<sup>488</sup> «Նեցուկ», հմ. 3, 31 օգոստոսի, Շուշի, 1917:

<sup>489</sup> «Փայլակ», հմ. 25, 4 հունիսի, Շուշի, 1915:

ջրանցքների վրայ նշանակուած հսկողությունը քաղաքից դուրս: 8) Միջոցներ ձեռք առնել քաղաքիս ընդհանուր մաքրության և սանիտարական պայմաններին աւելի ևս մեծ աչալրջութեամբ հսկելու»<sup>490</sup>:

Նմանօրինակ հարց քաղաքային վարչությունը քննարկեց նաև 1916 թ. հոկտեմբերի 5-ի նիստում, որին հրավիրված էին նաև Շուշիի գավառի զինվորական պարետ, գնդապետ Ռաչկովսկին, բժիշկ Մեհմանդարովը, զինվորական հոսպիտալի գլխավոր բժիշկ Տեր-Գրիգորյանը, Ժամհարյանների հիվանդանոցի բժիշկներ Համբարձումյանը և Տեր-Գաբրիելյանը, Պենզինսկի գնդի բժիշկ Գելվին, բժիշկ Եարամիշյանը և բժշկուհի Աթաբեկյանը<sup>491</sup>:

Այսրկովկասի որոշ քաղաքներ, այդ թվում Շուշին, որոնք տարածաշրջանային նշանակության ձեռքբերումներ ունեին և որոշակի դերակատարություն էին ստանձնել քաղաքային կյանքի զարգացման և դրան համապատասխան մշակույթի ու ավանդույթների ձևավորման գործում, ստացավ ինքնավարության իրավունք:

Այդ որոշումով 1897 թ. փետրվարին Շուշիում ստեղծվեց քաղաքային դումա<sup>492</sup>: Վերոհիշյալ մարմինն ընտրության միջոցով ձևավորվում էր ժողովրդի կողմից: Պատգամավորների ընտրության ժամանակ հաշվի էր առնվում ունեցվածքային ցենզր: Ընտրական իրավունքից օգտվում էին 25 տարեկանից բարձր տղամարդիկ: Կանայք չունեին ընտրական իրավունք: Քաղաքային դուման տվյալ բնակավայրի համար օրենսդիր իշխանության դերակատարություն ուներ: Այդ մարմինը հիմնականում զբաղվում էր տնտեսական գործառույթներով՝ օրինակ քաղաքի բարեկարգման, շուկաների աշխատանքների կարգավորման, առևտրի, առողջապահության, լուսավորության հարցերով:

Ի դեպ, Շուշիի քաղաքային դումայի պատգամավորներ էին ընտրվում հիմնականում հայեր: Անգամ քաղաքի թաթար ազգաբնակչությունը նախընտրում էր ձայնը տալ հայ թեկնածուների օգտին:

1916 թ. քաղաքային դումայի անդամներ էին Լևոն Վարդապետյանը, Գերասիմ Բաղդասարյանը, Լևոն Վարազյանը<sup>493</sup>, իսկ թաթարներից՝ Նովրուզ Շաֆին<sup>494</sup>:

<sup>490</sup> «Փայլակ», հմ. 38, 19 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>491</sup> «Փայլակ», հմ. 79, 16 հոկտեմբերի, Շուշի, 1916:

<sup>492</sup> Տեղացի, Քաղաքային դումայի ծայնաւորների ընտրութիւնը, «Հորիզոն», հմ. 30, 8 փետրվարի, Թիֆլիս, 1914, էջ 3; Исмаилов Э., Очерки по истории Азербайджана, стр. 424.

<sup>493</sup> «Փայլակ», հմ. 58, 31 հուլիս, Շուշի, 1916:

<sup>494</sup> «Փայլակ», հմ. 68, 4 սեպտեմբերի, Շուշի, 1916:

1917 թ. Շուշիի քաղաքային դուման ուներ 22 պատգամավոր: Նրանցից միայն Ա. Կուլին էր թաթար<sup>495</sup>:

Ինչպես Շուշիի գավառի, այնպես էլ քաղաքի պետական և վարչական նշանակության շենքերը տեղակայված էին հայկական թաղամասերում, որոնք հրո ճարակ դարձան 1905–1906 թվականների հայ–թաթարական ընդհարումների և 1920 թ. մարտի 23–ի ողբերգական օրերին:

Քաղաքային դումայի որոշումները կյանքում իրագործվում էին ուպրավայի միջոցով: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին քաղաքային վարչության հիմնական մտահոգությունն էր՝ լուծել բերդաքաղաքի ազգաբնակչության պարենավորման հարցը:

Քաղաքային դուման ամեն ամսվա համար կենսական անհրաժեշտության մթերքների սակագներ էր սահմանում:

«Փայլակ»-ի թղթակիցը, քննարկելով առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Շուշիի ազգաբնակչության պարենավորման հարցը քաղաքային իշխանությունների կողմից կազմակերպական հունի մեջ առնելու գործը, նկատել է. «Անհամեմատ լաւ պայմաններում է գտնուում Շուշի քաղաքը ոչ միայն գաւառական, այլև մեծ քաղաքների շարքում:

Պատերազմը կարծես չէ շոշափել նրան և այստեղ չէ նկատուում այնքան խիստ թանգութիւն, ինչպէս միւս քաղաքներում: Պատերազմի երկու տարիների ընթացքում Շուշին չէ ապրել պարենավորման խիստ տագնապներ, շնորհիւ շաքարի, ալիւրի և այլ մթերքների պատեհ ներմուծման: Հէնց սկզբից քաղաքային ինքնավարութիւնը կարողացաւ իր ձեռքը վերցնել պարենաւորման գործը և կենտրոնացնել իր մօտ ներմուծող բեռների ցուցակագրութիւնը և ըստ ժամանակի համաչափ բաշխումը, որի շնորհիւ և կարելի եղաւ տագնապների հնարաւորութեան առաջն առնել: Բացի այդ, մասնաւոր առևտրականների վրայ հսկողութեան կազմակերպումը հնարաւորութիւն չտաւ նրանց սպեկուլեացիայի ենթարկելու առաջին անհրաժեշտութեան մթերքները»<sup>496</sup>:

Տեղերում հաջորդ տարիներին հացահատիկի համապատասխան պաշարներ կուտակելու նպատակով՝ Շուշիի քաղաքագլուխը 1915 թ. սեպտեմբերի 1–ին հեռագրում է Պետերբուրգ՝ Պետդումայի պատգամավոր Մ. Պապաջանյանին, ներկայացնելով գավառի գյուղացիության ծանր վիճակը՝ կապված անբերրիության հետ և խնդրում վերջինս՝ միջնորդել իրավասու մարմիններին՝ պետական միջոցներից գումար հատկացնելու և սերմացու

<sup>495</sup> «Փայլակ», հմ. 13, 26 փոստովարի, Շուշի, 1916:

<sup>496</sup> «Փայլակ», հմ. 61, 11 օգոստոսի, Շուշի, 1916:

ձեռք բերելու համար<sup>497</sup>: Հաշվի առնելով Շուշիի քաղաքագլխի խնդրանքը՝ պատգամավոր Մ. Պապաջանյանը 1915 թ. դեկտեմբերին և 1916 թ. Շուշիի և գավառի պարենավորման հարցի հետ կապված Պետական Դումայում մի քանի անգամ հարցապնդումներ էր արել<sup>498</sup>:

Սոցիալական և կրթական բնույթի հարցեր լուծելու նպատակով քաղաքային դուման 1917 թ. փետրվարին որոշում է Գեորգիևյան խաչ ստացած մարդկանց զավակների համար՝ երկու աշակերտ ռեալական դպրոցից, մեկական էլ Մարինսկի և բարձր տարրական դպրոցներից, թոշակ նշանակել<sup>499</sup>:

Շուշին, ինքնավար կարգավիճակ ստանալուց հետո, ընդգրկվել էր համառուսական քաղաքների կազմում:

Անդրկովկասի խոշորագույն քաղաքներից մեկը լինելով՝ Շուշին մշտապես գտնվում էր ցարական բարձրաստիճան պաշտոնյաների հետաքրքրությունների տիրույթում:

1882 թ. մայիսին Կովկասի կառավարչապետ իշխան Դոնդուկով–Կորսակովն այցելել է Շուշի և հանդիպումներ ունեցել ինչպես գավառային, այնպես էլ քաղաքային իշխանությունների և հանրության ներկայացուցիչների հետ<sup>500</sup>:

Պետական դումայի պատգամավոր Մ. Պապաջանյանը 1916 թ. հոկտեմբերի 20–ին ժամանել էր Շուշի: Նա մի քանի հանդիպումներ է ունեցել իշխանությունների և ժողովրդի ներկայացուցիչների հետ ու քննարկել գավառին ու քաղաքին առնչվող բազմապիսի հարցեր՝ առանձնակի ուշադրություն դարձնելով կրթության և սոցիալական ոլորտներին: Հատկապես Շուշիի ազգաբնակչությանն անհանգստացնում էին այդ տարիներին շատ տարածված ավազակային հարձակումները: Ճանապարհներն անվտանգ չէին, և զինված ավազակախմբերը թալանում էին անցորդներին ու տարբեր ապրանքներով բարձած կառքերը: Թալանը և սպանություններն այնքան էին տարածված, որ Եվլախից, Աղդամից, Կարյագինոյից Շուշի կառապանները հրաժարվում էին գնալ: Իշխանություններն ավազակախմբերին զսպելու համար ստիպված օգտագործում էին բանակային ուժերին՝ Կարյագինո ուղարկելով 500 սահմանապահ զինվորներ, բայց դրությունը չէր շտկվում: Հարցին վերջնական լուծում տալու համար պատգամավորը խոստացավ այն քննարկել Ռուսաստանի բարձրագույն իշխանությունների հետ<sup>501</sup>:

<sup>497</sup> «Փայլակ», հմ. 51, 3 սեպտեմբերի, Շուշի, 1915:

<sup>498</sup> «Փայլակ», հմ. 96, 25 դեկտեմբերի, Շուշի, 1916:

<sup>499</sup> «Փայլակ», հմ. 13, 26 փետրվարի, Շուշի, 1917:

<sup>500</sup> Շուշեցի, Շուշի, «Մեղու Հայաստանի», հմ. 49, 16 մայիսի, Թիֆլիս, 1882, էջ 3:

<sup>501</sup> «Փայլակ», հմ. 82, 27 հոկտեմբերի, Շուշի, 1916:

Այդ տարիներին Շուշիի քաղաքային ինքնավարության քարտուղարն էր Դավիթ Ավագյանը<sup>502</sup>:

Ցարական իշխանության տարիներին Շուշիում էին կենտրոնացված նաև գավառի արդարադատությունն իրականացնող ինստիտուտները:

Սկզբնական շրջանում, նախկին սովորության և ավանդույթների համաձայն, տեղերում դատավորի դեր էին կատարում մելիքներն ու բեկերը: Դրան զուգահեռ՝ Ռուսաստանում գտնվող դատական համակարգը քայլ առ քայլ սկսում է թափանցել նաև նոր նվաճված տարածքները:

1822 թ. դեկտեմբերին Շուշիում ստեղծվեց մարզային դատարան, որի նախագահը մարզի պարետն էր, իսկ երկուական անդամներ ընտրվում էին բեկերից ու հարկատու դասերից և մեկական ներկայացուցիչ՝ հայերից և մահմեդականներից: Չնայած այդ մարմինը կոլեգիալ էր, բայց իրականում որոշումները կայացվում էին պարետի կողմից, առանց վկայակոչելու որևէ օրենք<sup>503</sup>:

Այդ մարմնի վրա էր դրված հասարակական կարգի պահպանման, քրեական բնույթի հանցագործությունների բացահայտման և պատժի չափի որոշման ու հարկահանության գործը:

Այսրկովկասում վարչական բարեփոխումների արդյունքում 1841 թ. Շուշիում ստեղծվեց գավառային դատարան: Դրա հետ միասին վարչական որոշ պատասխանատուների օժտեցին արդարադատությունն իրականացնելու գործառույթներով: Այսպես, քրեական այն գործերը, որոնցով վնասի գումարը տասը ռուբլուց չէր անցնում, իսկ քաղաքացիականը՝ մինչև հինգ ռուբլի, կարող էր լուծել քաղաքագլուխը: Գավառապետի համար հայցագնի վերին սահմանն էր հարյուր ռուբլին, միաժամանակ նաև իրավունք վերապահվեց որոշ քրեական հանցագործությունների համար հանցագործներին մարմնական պատիժների ենթարկել<sup>504</sup>:

Շուշիի գավառային դատարանում պաշտոնական լեզուն ռուսերենն էր, իսկ դատավորներն ու ատենակալները հիմնականում ռուս պաշտոնյաներ էին: 1842 թ. օգոստոսին նոր օրենք ընդունվեց, որի համաձայն՝ ավագակության և կողոպուտի գործերը հանձնվեցին զինվորական դատարաններին, գավառի տեղամասերում մտցվեց ոստիկանական պրիստավի, իսկ գավառային կենտրոնում՝ ժանդարմերիայի ինստիտուտը: Շուշիի գավառին երկու ժանդարմ էին սպասարկում, որոնք քաղաքական նկատառումների համար կարող էին ձերբակալել ցանկացած քաղաքացու, մինչև երեք ամիս

<sup>502</sup> «Փայլակ», հմ. 64, 21 օգոստոսի, Շուշի, 1916:

<sup>503</sup> Հովսեփյան Վ., Իրավունքը և արդարադատությունն Արցախում, Ստեփանակերտ, 2016, էջ 154-155:

<sup>504</sup> Նույն տեղում, էջ 158:

ժամկետով բանտարկել, աքսորել և տուգանել նրան՝ մինչև հինգ հարյուր ռուբլու չափով<sup>505</sup>:

Ընդհանուր առմամբ՝ մահմեդական ցեղերով խիտ բնակեցված նահանգներում չէր գործում ոչ մի կարգ և օրենք:

Հայ հողագործն ու անասնապահը, արհեստագործն ու առևտրականն իրենց աշխատասիրության ու գործարար ջիղի շնորհիվ մի քանի անգամ թաթարներից և քրդերից լավ էին ապրում, ինչն էլ շարժում էր վերջիններին նախանձն ու չարությունը:

Օգտվելով ցարական իշխանությունների հովանավորությունից և որոշ տեղամասերում ունենալով թվական գերակշռություն՝ թաթար և քուրդ բեկերն ու աղալարները թալանում էին հայերին, խլում նրանց վարելահողերը, արտավայրերն ու անասունները:

Անգլիայի ճանապարհորդ Ջոն Ջոնսոնը, 1817 թ. լինելով Այսրկովկասում, ծանոթանալով հայերի և թաթարների կենցաղին և նիստ ու կացին, գրել է. «... իրենք (խոսքը վերաբերում է մահմեդականներին - Վ. Բ.) անարժեք են, ծույլ, մեծախոս, բայց ստորին ցեղ, նշանավոր իրենց խարդախությամբ և նախապաշարումով. կապված իրենց ցեղին և աղանդին: Նրանք կարծում են, թե գերազանց են բոլորից, տգիտությամբ ու նախապաշարումով ուռճացած, անձնապաստան ամբարտավանությամբ իրենց իրավունքն են համարում շատ պարագաներում վիրավորել քրիստոնյաներին ...»<sup>506</sup>

Վիճակագրական տվյալները վկայում են, որ 1871-1877 թթ. Այսրկովկասում ամենաշատ հանցագործությունները կատարվել էին Ելիզավետպոլի նահանգում, որի կազմում էր նաև Շուշիի գավառը: Դրա մասին պատմում է ներքոհիշյալ աղյուսակը<sup>507</sup>:

N	Նահանգներ	Ինքնասպանություններ	Ծեծկոտուքի դեպքեր	Սպանություններ	Ավագակային հարձակումներ	Կանանց առևանգումներ	Բռնարարության դեպքեր	Հրդեհման դեպքեր
1	Ելիզավետպոլի	50	1089	828	916	17	27	1961
2	Բաքվի	23	853	537	615	25	28	931
3	Երևանի	15	142	523	933	8	3	63
4	Քութայիսի	37	318	86	103	-	-	205
5	Թիֆլիսի	46	176	229	212	3	-	131

<sup>505</sup> Հովսեփյան Վ., նշվ. աշխ., էջ 161:

<sup>506</sup> Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2, ԺԹ դար, Երևան, 1934, էջ 635:

<sup>507</sup> Гласный суд на Кавказской почве, «Русская речь», 1879, кн. 12., стр. 187.

1873 թվականի ընթացքում դատարաններում քննվել են՝ Ելիզավետպոլի նահանգում՝ 5751, Թիֆլիսի նահանգում՝ 2983, Բաքվի նահանգում՝ 2933, Երևանի նահանգում՝ 3328 և Քուրայիսի նահանգում՝ 2182 գործեր<sup>508</sup>:

Շուշիում հաշտարար դատարանն ստեղծվեց 1868 թ. փետրվարի 17-ին<sup>509</sup>: Շուշիի հաշտարար դատարանը Աղդամում ուներ մեկ տեղամաս: Վերոհիշյալ դատարանը գործեց մինչև 1918 թ.: Շուշիի գավառի վերջին հաշտարար դատավորը եղել է ազգությամբ վրացի Իոսիֆ Կոբիևը<sup>510</sup>, որը հեղինակություն ուներ քաղաքի՝ ինչպես հայ, այնպես էլ թուրք ազգաբնակչության շրջանում: Երկու ազգերին հաշտեցնելու նպատակով նա իր վրա 1918 թ. միջնորդական առաքելություն էր վերցրել:

Այսպիսով, ցարիզմի վարչատարածքային և դատական բարեփոխումների միջոցով ռուսական կառավարման համակարգն արմատավորվեց նոր նվաճված տարածքներում, միաժամանակ ստեղծվեց կենտրոնացված ոստիկանական վարչակարգ, որը հնարավորություն տվեց բռունցքի մեջ պահել Այսրկովկասը, այդ թվում նաև՝ հայկական գավառները:

Այդ դժվարություններով հանդերձ, տարածաշրջանում տնտեսական, քաղաքական, մշակութային նոր խմորումները բարերար ազդեցություն ունեցան Շուշիի զարգացման համար:

## դ) Շուշիի տնտեսական կյանքը 1813–1917 թվականներին

Քաղաքական խնդիրները լուծելուց հետո ցարիզմը ձեռնամուխ եղավ նաև Այսրկովկասի տնտեսական յուրացմանը: Ցարական կառավարությունը ձգտում էր Այսրկովկասը դարձնել իր հումքային կցորդը և արտադրված ապրանքների իրացման շուկա: Դրան հասնելու համար ցարական կառավարությունն իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք շատ թե քիչ սկսեցին աշխուժացնել տնտեսական կյանքը:

Առաջին հերթին անհրաժեշտ եղավ պարզել և ճշտել, թե ինչ եկամուտներ էր ստանում խանը Ղարաբաղից, որոնք հետագայում պետք է մտնեին պետական գանձարան: Այդ նպատակով 1822–1823 թթ. երկրամասում անցկացվեց աշխարհագիր, ցուցակագրվեցին բոլոր բնակավայրերը, ընտանիքի անդամները, ճշտվեց հավաքվելիք հնարավոր տուրքերի չափը<sup>511</sup>: Հարկերի և տուրքերի առյուծի բաժինը հավաքվում էր Շուշիից:

<sup>508</sup> Բալայան Վ., Դրվագներ ..., էջ 44:

<sup>509</sup> ПСЗ, собрание 2-е, т. XVII, дополнение, стр. 16199 а.

<sup>510</sup> «Փայլակ», հմ. 8, 5 փետրվարի, Շուշի, 1917:

<sup>511</sup> Լիսիցյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 50:

19-րդ դարի սկզբներից՝ ցարական տիրապետության հաստատման առաջին իսկ օրերից սկսած, Շուշին սկսեց դեպի իրեն ձգել ոչ միայն Արցախի, այլ նաև հարակից գավառների հայ և թուրք ազգաբնակչության կարող ուժերին: «Մեղու Հայաստանի» թերթի լրագրողը նկատել է. «Շուշեցիները չափազանց ընդունակ են. եթե միայն ունենան ասպարեզ ցոյց տալու իրենանց ընդունակությունը ...»<sup>512</sup>:

Դա պատահական չէր, որովհետև զարգացման ուղին բռնած բերդաքաղաքն օրեցօր դառնում էր տարածաշրջանի վարչական, քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն, և այդտեղ ապրելը դառնում էր հաճելի ու պատվաբեր: Մյուս կողմից էլ բերդաքաղաքը շարունակում էր մնալ որպես պատերազմներից պաշտպանվելու հարմարավետ վայր: Օրինակ, 1842 թ. ամռանը Ղարաբաղում լուրեր տարածվեցին, որ պարսկական զորքերը ներխուժել են երկրամաս: Սարսափահար ազգաբնակչությունը, թողնելով բնակավայրերը, ապաստանեց Շուշիի բերդում<sup>513</sup>:

Քննարկվող ժամանակաշրջանում Շուշին առավել շատ հայտնի էր որպես արհեստագործական կենտրոն: Այս ժամանակահատվածում արհեստավորները ներառված էին համքարությունների մեջ և ղեկավարվում էին նախկին ավանդույթներով: 19-րդ դարում Շուշիում կային 41 արհեստավորական համքարություններ, որոնք կազմված էին ըստ արհեստագործական մասնագիտությունների: Յուրաքանչյուր համքարություն ուներ իր դրոշակը, ներքին կանոնադրությունը: Համքարությունները ղեկավարվում էին գլխավոր վարպետի (ուստաբաշու) կողմից: Վերջինս ընտրվում էր համքարության ընդհանուր ժողովում՝ մեկ տարի ժամկետով, և հաստատվում էր այդ պաշտոնում գավառապետի կողմից: Համքարությունները ենթարկվում էին քաղաքային իշխանություններին, իսկ ներքին կյանքում ունեին նշանակալի ինքնուրույնություն:

Համքարական ղեկավար կազմը բաղկացած էր ուստաբաշուց (գլխավոր վարպետից), նրա մեկ կամ երկու օգնականից, որոնք կոչվել են աղսախկալ (փորձառու, իմաստուն մարդ), գանձապահ (խազնադար) և սուրհանդակից (իգիթբաշի), որոնցից յուրաքանչյուրն ուներ իր որոշակի իրավունքներն ու պարտականությունները: Համքարության գերագույն մարմինը համարվում էր ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին և այնտեղ ձայն ունեին բոլոր լիիրավ անդամները: Ընդհանուր ժողովի պարտականությունների մեջ էին մտնում համքարության պաշտոնյաների հաշվետվությունները լսելը, նրանց ընտրությունները, այդ կազմակերպության մեջ ընդունվելու և դրանից հե-

<sup>512</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 11, 20 մարտի, Թիֆլիս, 1876, էջ 1:

<sup>513</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դրպոցի ..., էջ 78:

ռացնելու հարցերը, հարկերի ու տուրքերի բաշխումն ըստ անդամների, վարպետացումների ստուգողական աշխատանքների վերջնական գնահատումը, ինչպես նաև զանազան այլ խնդիրների քննարկումն ու որոշումների կայացումը: Համքարության անդամները կաշկանդված չէին միշտ միևնույն կազմակերպության մեջ մնալու պարտավորությամբ: Նրանք ազատ կերպով կարող էին թողնել իրենց զբաղմունքը, կամ ընտրել նոր արհեստ և մտնել մեկ այլ համքարության մեջ:

Համքարություններն արհեստավորների համար ծառայել են որպես միջոց՝ մրցակցության դեմ պայքարելու: Համքարություններում օրվա աշխատանքի որոշակի ժամանակամիջոց չէր սահմանվում: Աշխատանքը սովորաբար սկսում էին արևածագին և վերջացնում մայրամուտին: Համքարություններում արհեստավորները, ըստ իրենց գործառույթների, բաժանված էին երեք խմբի՝ վարպետներ (ուստա), ենթավարպետներ (խալֆա կամ քարգահ) և աշակերտ (շագիրդ): Համքարություններն օգնում էին իրենց հիվանդ, անդամալույծ, աշխատանքի համար անընդունակ դարձած ընկերներին: Համքարության անդամի մահվան դեպքում մյուսներն իրենց ուժերի չափ նյութապես օժանդակում էին նրա ընտանիքին՝ այն փրկելով սովից ու մուրացկանությունից:

Համքարությունները միաժամանակ հոգ էին տանում քաղաքի բարեկարգման ու պաշտպանության ուղղությամբ: Վերոհիշյալ աշխատանքները կազմակերպելու համար վարպետներից վերցված անդամավճարներից, տուգանքներից և այլ աղբյուրներից ձևավորվում էր համքարությունների բյուջեն: Շուշիում միևնույն արհեստով զբաղվողներն ապրում և աշխատում էին նույն թաղում կամ շարքում: Օրինակ, դարբինները բնակվել և աշխատել են «Շեյթան բազար»-ի շրջանում, ոսկերիչները՝ Երևանյան փողոցի վրա:

Համքարությունների աշխատանքները կանոնակարգելու նպատակով 1867 թ. ապրիլի 3-ին ցարական արքունիքի կողմից հաստատվում է «Արհեստագործական համքարությունների (ցեխերի) մասին» կանոնադրությունը: Ըստ այդ կանոնադրության՝ բերդաքաղաքի համքարությունների աշխատանքները կարգավորում էր «Կովկասյան տնայնագործական կոմիտե»-ի Շուշիի մասնաճյուղը:

19-րդ դարի սկզբներին Շուշիում կային 1864 արհեստավորներ, որոնցից 517-ը՝ վարպետներ, 948-ը՝ ենթավարպետներ և 399-ը աշակերտներ<sup>514</sup>:

<sup>514</sup> Հովսեփյան Վ., նշվ. աշխ., էջ 170:

1836, 1852 և 1902 թվականներին Շուշիում գործող արհեստների և արհեստավորների մասին է պատմում ներքոհիշյալ աղյուսակը<sup>515</sup>:

h/h	Արհեստի անվանումը	Վարպետներ			Ենթավարպետներ	Աշակերտներ
		1836 թ.	1852 թ.	1902 թ.	1902 թ.	1902 թ.
1.	Հացթուխներ	6	21	34	85	23
2.	Սագործներ		40	22	48	
3.	Հրուշակագործներ		6	4	10	4
4.	Դերձակներ	30	52	71	10	63
5.	Գորգագործներ	24	28	45	46	37
6.	Կոշկակարներ	44		50	43	48
7.	Ներկարարներ		15	12	6	10
8.	Հնոցապաններ			3	6	4
9.	Ատաղձագործներ	4	7	8	23	8
10.	Փականագործներ		20	6	15	4
11.	Պղնձագործներ		13	7	33	9
12.	Թիթեղագործներ			15	8	9
13.	Տանիքներ կառուցող թիթեղագործներ	3		10	22	6
14.	Ապակեգործներ			3	4	2
15.	Թաղիքագործներ	2	12	3	3	
16.	Թամբագործներ	10	7	3		4
17.	Համետագործներ	15	44	2	6	11
18.	Կառքեր պատրաստողներ			8	18	6
19.	Կաշեգործներ	9	27	6	12	
20.	Օձառագործներ			8	8	
21.	Կառապաններ			24	28	16
22.	Մետաղից զարդեր պատրաստող դարբիններ			10	18	10
23.	Ոսկերիչներ և արծաթագործներ	12	24	20	36	
24.	Ժամագործներ		2	7	9	
25.	Դարբիններ	25	27	54	60	45
26.	Խառատներ			1	2	
27.	Քարագործներ (որմնադիրներ)		38	20	30	2
28.	Հյուսներ		42	40	46	
29.	Տպագրիչներ			2	12	
30.	Լուսանկարիչներ			1	1	
31.	Բուրդ գզողներ	6				
32.	Մահուղ գործողներ	28				
33.	Ձեռնոցներ գործողներ	4				
34.	Վերմակներ (ծածկոց) պատրաստողներ	1				
35.	Կոշկաբուղ պատրաստողներ	2				
36.	Հրացանի, ատրճանակի փական պատրաստողներ	6				

<sup>515</sup> Обзорение Российских владений за Кавказом, в историческом, финансовом, этнографическом отношении, Карабахская провинция, т. III, ч. II, Спб., 1836, стр. 309; Сборник сведений о Елизаветпольской губернии, ч. II, Тифлис, 1902, стр. 54-59; Кавказский календарь на 1853 г., стр. 430-435.

37.	Հրացանների տնակ (որջ, բուն) պատրաստողներ	6			
38.	Սրեր, խանչալներ պատրաստողներ	10			
39.	Վարսավիրներ, սափրիչներ	3	25		
40.	Կոշկակար մաշիկագործներ	2			
41.	Պայտաներ		19		

1895 թվականի տվյալներով՝ Շուշիում 1000 բնակչի վրա հաշվում էր 22 արհեստավոր<sup>516</sup>:

Մեր համերկրացի Հրաչիկ Հարությունյանը, շնորհակալ աշխատանք կատարելով, ուսումնասիրելով Շուշիի հայկական գերեզմանոցների տապանաքարերը, նկատել է, որ 18–19–րդ դարերում Շուշիում կային 49 տեսակի արհեստներ: Դրանք են բրիլիանտչի (ակնագործ), ատթարություն (արդուզարդեր պատրաստող և վաճառող), անիվագործություն, ատաղձագործություն, բաշմաղչություն, բրուտագործություն, բաննահություն, բազագություն, բաղնիսպանություն, գոակագործություն (փափախիչ), գորգագործություն, դարբնություն, դանակագործություն, դեղագործություն, դերձակություն (դարգի), դաբաղագործություն (կաշի դաբաղող), զինագործություն, ժամագործություն, լուլասագ (հրացանների փողեր պատրաստող), լուսանկարչություն, խանչալասագ (սուր պատրաստող), խոհարարություն, դլեչի կամ կլայեկող, կոշկակարություն, կրագործություն, համբալություն (բեռնակիր), հյուսն (դուլգար), դոնդաղսագ (հրաձգային գեներփ փայտե մաս պատրաստող), մսագործություն (դասաբ), մաջար (տաշած քարերը զարդաքանդակող), նաջար (փայտը նախշող), ներկարարություն (կրասիլչիկ), նալբանդ (պայտառ), շիլաչի (բրնձից, կորեկից ու ձավարեղենից կերակուր պատրաստող), շեշխան, ոսկերչություն, չախմախսագ (գեներփ մաս պատրաստող), չիթչի (չթե կտոր դաջող, ներկող), պղնձագործություն (միսկար), ջրաղացպան, ջիլավչի (սանձ պատրաստող), սվաղչի, վարսավիրություն, վառողագործ (բարութչի), փականագործություն (չիլինգար), փայտոնչի, քարհանություն, քարտաշություն, հացթուխ<sup>517</sup>:

Շուշիի հայկական գերեզմանատների՝ 18 և 19–րդ դարերից մնացած շիրմաքարերի վրա դաջված են ուստա (վարպետ), քաջ ոսկերիչ բառերը: Շիրմաքարերի վրա քանդակված են նաև տվյալ հանգուցյալի արհեստը խորհրդանշող գործիքներ: Օրինակ՝ մուրձ, գնդան, մկրատ, ոսկերչի մկրատ, սուր, ձեռագործի հաստոց, վարսավիրի ծալովի ածելի, հրազեն, կացին, սղոց, կոշիկ<sup>518</sup>:

<sup>516</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, 1897, էջ 98:

<sup>517</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 144–145:

<sup>518</sup> Նույն տեղում, էջ 126–127:

Քանի որ տվյալ մասնագիտության գաղտնիքները սովորաբար հորից որդուն էին փոխանցվում և սերնդեսերունդ դառնում այդ տոհմի «սեփակա-նությունը», ուստի որոշ գերդաստաններ սկսեցին անվանակոչվել տվյալ արհեստը բնութագրող անուններով: Օրինակ Միսկարյան, Ղոնդաղսագյան, Բարութչյան, Դլեչյան, Նալբանդյան, Կրասիլնիկովներ, Դալլաքյան, Զարգարյան, Ժամհարյան:

Շուշեցի արհեստավորների, վարձու աշխատողների, բանվորների շահերը պաշտպանելու նպատակով քաղաքում ստեղծվել էր արհեստակցական միություն: 1917 թ. Շուշիի արհեստակցական միության վարչության անդամներ էին՝ Վարդան Հայկազը, Ներսես Հովհաննիսյանը, Նիկոլայ Առաքելյանը, Բագրատ Սիմոնյանը, Հովհաննես Համբարձումյանը, Շամիլ Սարուխանյանը<sup>519</sup>:

Ինչպես Հայաստանի մյուս քաղաքներում, այնպես էլ Շուշիում զարգացման բարձր հիմքերի վրա էր գտնվում ոսկերչական և ակնագործական արհեստը, որը հասել էր արվեստի կատարելության:

Շուշեցի ոսկերիչների արհեստանոցները տեղակայված էին Երևանյան փողոցի երկու կողմերում՝ հիմնականում Գյանջեցոց կամ Կազարմայի թաղամասում և հայկական շուկայում: Շուշիում ոսկերիչներ ապրում էին դեռևս 18–րդ դարից: Նրանցից Մելքումը իր հայրենիքի ազատության համար պայքարել է Ղարաբաղի Իբրահիմ խանի դեմ<sup>520</sup>:

19–րդ դարում և 20–րդ դարի սկզբներին Շուշիում նշանավոր ոսկերիչներ են եղել Դանիելը, նրա որդիները՝ Արզումանը, Գրիգորը և Հովհաննեսը, թոռները՝ Ալթինը, Միքայելը, Դանիելը, ծոռը՝ Հովհաննեսը, Հովհաննես Հահրամանյանը, Անդրեյ Ղահրամանյանը, Ավետիս Գրիգորյանը, Միրզա Յուզբաշյանը, Շովքեթ Ղուկասի Ղուկունցովը, Ավետիս Հովհաննեսի Դանիել–Բեկյանցը, ակնագործ Վանո Գյանջումյանցը<sup>521</sup>: 1905 թ. օգոստոսի 19–ին հայ–թաթարական ընդհարումների ժամանակ սպանվում է ոսկերիչ Հարությունը<sup>522</sup>:

Շուշիի ոսկերիչներին հումքով բավարարում և նրանց արտադրած ապրանքները Ռուսաստանում, Ֆրանսիայում, Միջին Ասիայի և Մերձավոր Արևելքի երկրներում իրացնում էին հայտնի վաճառականներ Արիստակես Խանդամիրյանը, Աստվածատուր Մելիք–Շահնազարյանը, Բեգլար Սահակյանցը և ուրիշներ:

<sup>519</sup> «Ապառաժ», հմ. 2, 28 մայիսի, Շուշի, 1917:

<sup>520</sup> Րաֆֆի, Երկեր, հ. 10, էջ 240–252:

<sup>521</sup> Հարությունյան Հ., Շուշիի տապանաքարերի արձանագրությունները, Երևան, 2008, էջ 284: Նույնի՝ Շուշի ..., էջ 19–20, 129:

<sup>522</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Է, էջ 351:



1882 թ. Մոսկվայի ցուցահանդեսին մասնակցել են շուշեցիներ Հովհաննես Զուրաբյանը, որը ներկայացրել է իր ստեղծած շոգեշարժ մեքենան, և Բադամյանը: Վերջինս ցուցադրել է իր պատրաստած ոսկյա զարդերը: Երկուսն էլ մրցանակի են արժանացել<sup>523</sup>:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Շուշիում ապրում և աշխատում էին ազգությամբ հայ 79 արձաթագործներ, 54 ոսկերիչներ, 5 աղամանդագործներ, 18 զինագործներ, իսկ թուրքերից 16 արձաթագործներ, 12 ոսկերիչներ և 7 զինագործներ<sup>524</sup>:

1895–1896 թթ. Երվանդ Լալայանը, ուսումնասիրելով Շուշիի ազգաբնակչության կյանքը և կենցաղը, նկատել է, որ քաղաքի հայ արհեստավորները և առևտրականները երեք անգամ ավելի էին թուրքերից<sup>525</sup>:

Շուշիի տնտեսական, մշակութային զարգացումը նպաստում է բերդաքաղաքի բնակչության զգալի աճին: Աննախադեպ ծավալներ են ստանում շինարարական աշխատանքները: Կառուցվում են նոր բնակելի թաղամասեր, մշակութային, հասարակական, վարչական շինություններ, վեր են խոյանում նոր եկեղեցիներ: Անց են կացվում նոր ջրագծեր, կոյուղիներ: Կարգի են բերվում և սալահատակվում փողոցները: Շուշիից նոր ճանապարհներ են կառուցվում դեպի Պարտավ, Եվլախ, Գանձակ, Գոխս, Կապան, Նախիջևան, Երևան: Եվ այս շինարարական եռուզեռի մեջ օրեցօր ավելանում էր որմնադիրների, հյուսների, ատաղձագործների, քարտաշների, փականագործների, կառապանների, բեռներ տեղափոխողների, ներկարարների, մետաղագործ, բրուտագործ վարպետների թիվը:

Շուշեցի քարագործ, փայտագործ, թիթեղագործ արհեստավորները ոչ միայն կառուցում էին իրենց հայրենի քաղաքը, այլև իրենց արհեստավարժ և ժրջան աշխատանքով շենացնում էին Այսրկովկասի՝ ինչպես հայկական, այնպես էլ այլազգիների, այդ թվում՝ թուրքերի, քրդերի բնակավայրերը:

Քաղաքը, ի բնե կառուցված լինելով կրաքարային ծագում ունեցող սարահարթի վրա, շինարարական արվեստի զարգացման համար լայն հնարավորություններ էր ստանում: Կրաքարը քարագործ վարպետներն անմիջապես հանում էին Շուշիի՝ արևելքից արևմուտք ձգվող ժայռագոտուց: Նրա մի մասն արհեստանոցներում մշակման միջոցով վեր էր ածվում կրի, որից ստացված ամուր շաղախն անփոխարինելի շինանյութ էր:

<sup>523</sup> Համբո, Ներքին տեսություն (Մոսկվայի աշխարհանդեսում պարզև ստացած հայերը), «Արձագանք», հմ. 35, 17 հոկտեմբերի, Թիֆլիս, 1882, էջ 540:

<sup>524</sup> Аствацатурян Э., История оружейного и серебряного производства на Кавказе в XIX – начале XX веков, Дагестан и Закавказье, Москва, 1977, ч. I–II, стр. 34–36.

<sup>525</sup> Լալայան Ե., Երկեր, հ. 2, էջ 46–89:

Շուշիում ապրում էին քարհան արհեստավորների գերդաստաններ: Օրինակ, Հարություն Համբաձումյանի գերդաստանը այնքան էր հմտացել այդ գործի մեջ, որ իրենց ազգանվանն ավելացրին նաև Քարհանյանց ազգանունը<sup>526</sup>: Քարագործ նշանավոր վարպետներ էին Բաբա Բալայանը, Առաքել Բալայանը, Հայրապետ Բաբայանը, Սամսոն Օհանյանցը, Առուստամ Բաղրյանցը<sup>527</sup>:

Շուշեցի շինարարների համար փայտանյութի անսպառ աղբյուր էր քաղաքի հարևանությամբ գտնվող անտառը:

Բրուտագործությունը Շուշիում այնքան զարգացած էր, որ մեծահարուստներից մեկը՝ Թադևոս Թամիրյանցը, որոշել էր քաղաքից դուրս կառուցել կավե խողովակներ (թունզիներ) արտադրող մի գործարան և դրանց միջոցով 17 կմ հեռավորության վրա գտնվող սառնորակ ջուրը հասցրել բնակավայր:

19-րդ դարի երկրորդ կեսին Շուշին, առևտրական, արդյունաբերական, մշակութային կենտրոնի կարգավիճակ ստանալով, դառնում է նաև տարբեր ազգերի ազնվական դասը ներկայացնող տոհմերի, մեծահարուստների, նշանավոր մտավորականների բնակավայր: Ռուսաստանի և Եվրոպական երկրների հետ նրանց շփումների արդյունքում այդ մարդիկ յուրացրել էին ոչ միայն տնտեսության վարման նոր մեթոդներն ու շուկայական հարաբերությունների գաղտնիքները, այլև արևմտյան կենցաղն ու բարքերը: Շուշին քանի որ ամառանոցային քաղաք էր, տարվա որոշակի ժամանակահատվածում այստեղ բնակվում էին Այսրկովկասի, Ռուսաստանի, Եվրոպական երկրների տարբեր բնակավայրերից բերդաքաղաք եկած հովեկներ: Նրանք էլ իենց սովորությունները, հատկապես նորաձևության վերջին հազ ու կապը փոխանցում էին տեղաբնիկներին: Պատահական չէր, որ շուշեցիների մեծ մասը հազնվում էր եվրոպական ոճով: Անհրաժեշտ էր շուշեցիների ճաշակին ու հիգիենիկ պատկերացումներին համապատասխան սպասարկում կազմակերպել:

Որոշ աղբյուրների ուսումնասիրություններից տեղեկանում ենք, որ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին բոլոր արհեստների մեջ ամենամեծ թվաքանակ կազմող մասնագետները Շուշիում եղել են դերձակները՝ 81 հոգի, սափրիչները՝ 35 հոգի, կոշկակարները՝ 91 հոգի, գդակագործները՝ 93 հոգի<sup>528</sup>:

<sup>526</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 133–134:

<sup>527</sup> Նույն տեղում, էջ 133:

<sup>528</sup> Լալայան Ե., Երկեր, հ. 2, էջ 84–85; Сборник сведений о Елизаветпольской губернии, ч. II, Тифлис, 1902, стр. 54–59.

Նշված արհեստավորներից որոշները տիրապետում էին եվրոպական վարսահարդարության, կոշկակարության, գդակագործության, դերձակության հնարքներին, իսկ մի քանիսն իրենց մասնագիտական կարողությունները կատարելագործել էին եվրոպական քաղաքներում:

20-րդ դարի սկզբներին Շուշիում նույնիսկ կար եվրոպական ոճի կոշիկներ կարող բանվորների միություն<sup>529</sup>: Կաշվի տարբեր տեսակները ներկրվում էին Պարսկաստանից, հիմնականում՝ Թավրիզից, Ռուսաստանից, Նուխիից, Ելիզավետպոլից, Թիֆլիսից: Շուշիում նույնպես կաշի էր մշակվում: 1888 թվականին քաղաքում կար հինգ կաշեգործարան, որտեղ 60 բանվորներ էին աշխատում<sup>530</sup>:

Ընդունված էր տոն օրերին Շուշիում հագնել սև, կարմիր, կանաչ և դեղին գույնի կոշիկներ: Քաղաքի աղքատ ազգաբնակչությունը հագնում էր մաշիկներ կամ, ինչպես տեղացիներն էին ասում, քոշեր: Գյուղերում շարունակում էին տրեխ հագնել:

Գդակագործությունը ևս Շուշիում բավականին զարգացած էր: Տարեցները հագնում էին բրգաձև, երկար, ծանր գլխարկներ, որոնք կարված էին տեղական ոչխարների մորթիներից: Բուխարայի և Շիրազի ոչխարների մորթուց կարված գլխարկները թանկարժեք էին, և դնում էին միայն հարուստները: Երիտասարդները և երեխաները կրում էին դարաբաղյան տիպի կլոր գլխարկներ: 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած շուշեցի տղամարդիկ, հատկապես մտավորականության ներկայացուցիչները և մեծահարուստ գերդաստանների օրիորդներն ու կանայք կրում էին եվրոպական ոճի գլանակ-գլխարկներ, որոնց տեղացիներն անվանում էին շլյապա կամ ցլինդր:

Հիմնականում ներքին սպառմանն էր ուղղված գույլայագործությունը: Բրդյա գույնզգույն թելերից շուշեցի կանանց գործած գուլպաները վաճառվում էին նաև Բաքվում, Ելիզավետպոլում, Թիֆլիսում: Այդ արհեստը տնայնագործական բնույթ ուներ և հատկապես ձմռան ամիսներին մեծահասակ կանանց հիմնական զբաղմունքն էր համարվում:

Առանձնապես հայտնի էին շուշեցի գորգագործները: Շուշիում գործված գորգերն ու կարպետներն աչքի են ընկել բնական գունային բազմազան կառուցվածքով, զարդանախշերի հարստությամբ, պատրաստված արտադրանքի արհեստավարժությամբ: Ժամանակի ընթացքում Շուշիում գորգագործները ստեղծեցին զարդանախշերի, հյուսվածքների ու գորգային հո-

<sup>529</sup> «Ապառաժ», հմ. 18, 20 օգոստոսի, Շուշի, 1917:

<sup>530</sup> СММПК, вып. 6, Тифлис, 1888, стр. 87.

րինվածքների զանազան տարբերակներ: Նրանց արտադրած գորգերը մեծ համարում ունեին Եվրոպայում, Ռուսաստանում և արևելքի երկրներում:

Բրոքհաուզ և Եֆրոնի հանրագիտական բառարանում կարդում ենք. «Շուշին Կովկասում գորգագործության ամենախոշոր կենտրոնն է, որի արտադրությունը սպառվում է նահանգի սահմաններից դուրս շատ հեռու և հասնում է Մոսկվա ու Պետերբուրգ: Մետաքսի գորգերի աշխույժ առևտուր է գնում, որը համարյա բացառապես գտնվում է տեղի հայերի ձեռքին»<sup>531</sup>:

1857 թ. «Կովկաս» թերթի լրագրող Իվան Սլիցկին գրել է. «Շուշիում դուք կարող եք գտնել տեղական արտադրության հիանալի գորգեր: Նախշերով, գույներով, ամրությամբ նրանք, իմ կարծիքով, ոչնչով չեն զիջում պարսկականին, նույնիսկ, տեղացիների կարծիքով, գերազանցում են Խորասանի գորգերին»<sup>532</sup>:

Մեկ այլ սկզբնաղբյուր ասում է. «Գորգագործության ծավալներով Շուշին էր պատկանում առաջին տեղն ամբողջ Կովկասում: Գորգագործությամբ էին զբաղվում նաև Ջեբրայիլի և Ջանգեզուրի գավառներում, սակայն այս գործվածքներն իրենց որակով զիջում էին Շուշիի գործվածքներին, դա է պատճառը, որ վերջիններս ավելի թանկ էին գնահատվում ...: Ջանգեզուրի գորգերը 2x1/4 / 1x1/4 խանական արշին Շուշիում վաճառվում է 7-8 ռուբլի, այն դեպքում, երբ շուշիները (Շուշիում գործված գորգերի անվանումը - Վ. Բ.) վաճառվում էր 15 ռուբլիով»<sup>533</sup>:

19-րդ դարի վերջերին օտարերկրացիներ էին գալիս Շուշի և իրենց հավաքածուների համար մեծ գումարներ առաջարկելով, բացառապես գնում էին գորգեր: Դա նպաստեց Շուշիում գորգագործության աննախադեպ զարգացմանը:

Շուշիում տարեկան արտադրվում էին 200 000 ռուբլու արժողության գորգեր<sup>534</sup>:

Շուշիում գորգագործության զարգացմանը նպաստող հանգամանքներ էին.

ա) Քննարկվող ժամանակաշրջանում այդ ասպարեզում ֆաբրիկային արտադրության և մրցակցության բացակայությունը նպաստում էր տնայնագործության վրա հիմնված գորգագործության զարգացմանը:

<sup>531</sup> Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, 1909, книга 79, т. 49, стр. 25.

<sup>532</sup> «Кавказ», но. 56, 21 июля, Тифлис, 1857.

<sup>533</sup> СММПК, вып. 11-ый, Тифлис, 1891, стр. 7.

<sup>534</sup> Նույն տեղում, էջ 39:

բ) Պարզ հաստոցների և գործիքների վրա մեծ գումարներ չէին ծախսվում ու դրա կազմակերպման համար մեծ ջանքեր չէին պահանջվում: Գործիքները պատրաստվում էին Շուշիում:

գ) Արտադրված ապրանքը կենցաղում մեծ կիրառություն ուներ և իրացման համար խոչնդոտներ չէին ստեղծվում:

դ) Բրդի և մետաքսի հումքի առատությունը:

ե) Բավականաչափ եկամտաբերությունը:

զ) Գորգերի արտադրություն կազմակերպելու համար հատուկ շինանյութեր չէին պահանջվում: Ամեն գորգագործի աշխատատեղն իր տունն էր: Տվյալ գորգագործը, գորգագործությանը զուգահեռ, կարող էր զբաղվել նաև այլ աշխատանքով:

1899 թ. Թիֆլիսում ստեղծված «Կովկասյան տնայնագործական կոմիտե»-ի նախաձեռնությամբ Շուշիում բացվում են գորգագործական դպրոցներ<sup>535</sup>: Այդ ուսումնարանները մինչև 1920 թ. նոր ընթացք հաղորդեցին ոչ միայն Շուշիում, այլ նաև ողջ Արցախում գորգագործության զարգացմանը: Գորգագործությունը քաղաքի տնտեսության մեջ կարևոր տեղ էր գրավում ու այնքան եկամտաբեր էր, որ 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների հետևանքով զոհված շուշեցիների կանանց աշխատանքով բավարարելու համար բարերարների կողմից բացվեց գորգագործարան, որտեղ 120 աշխատակից կար: Գորգագործարանի արտադրած որակյալ 700 գորգեր արտահանվել են եվրոպական երկրներ<sup>536</sup>:

Գորգագործությանը և կարպետագործությանը զուգահեռ՝ Շուշիում իր տեղն ուներ նաև ասեղնագործությունը: Շուշեցի դերձակներն ու ձեռագործի վարպետներն իրենց նորարարական մոտեցումները հանրաձանաչ դարձնելու նպատակով քաղաքում երբեմն կազմակերպում էին ցուցահանդեսներ: Նմանօրինակ մի ցուցահանդես 1915 թ. մայիսի 30-ին կազմակերպեց տիկին Ա. Տեր Ավետիքյանը, որն այդ ասպարեզներում շուշեցի վարպետների ձեռքբերումները պահպանելու և զարգացնելու համար քաղաքում բացել էր կար ու ձևի և ձեռագործի դպրոց<sup>537</sup>:

Քաղաքի ազգաբնակչությանն առաջին անհրաժեշտության մթերքներով ապահովելու համար ժամանակի ընթացքում Շուշիում բացվել էին սպանդանոցներ, հացի փոներ, հրուշակեղենի և տարբեր քաղցրավենիքների արտադրամասեր:

<sup>535</sup> Կարա Մուրզա, Տնայնագործական ժողով, «Ազգագրական հանդես», գիրք 1, էջ 8:

<sup>536</sup> Тер-Саркисянц А., Армяне Нагорного Карабаха, история, культура, традиции, стр. 205.

<sup>537</sup> «Փայլակ», հմ. 24, 31 մայիսի, Շուշի, 1915:

Շուշիի հացի փոները պատկանում էին Օհանջան Բարայանին և Հայրապետ Գրիգորյանին<sup>538</sup>, իսկ հրուշակեղենի և քաղցրավենիքների արտադրամասերն ու խանութները՝ Մադաթյան եղբայրներին, Գաբրիելյանների, Առուստամյանների ընտանիքներին<sup>539</sup>:

Շուշին վաղ միջնադարից հայտնի էր որպես ամրոց և շրջակա գյուղերի հայության համար ապաստարան էր, փրկության վերջին ապավեն: Եվ նա իր այս դերակատարությունը պահպանեց մինչև 19-րդ դարի կեսերը: Տեղի ազգաբնակչությունը փրկության հույսը ոչ միայն դրել էր բերդի ամուր պարիսպների, աշտարակների, այլ նաև բուն քաղաքում ստեղծված զենքի ու զինամթերքի և այդ ամենը գործածող քաջ զավակների վրա: Սկզբնական շրջանում բերդավանում գործում էին սրերի, իսկ 18-րդ դարի վերջերից՝ վառողի, ձեռքի ռումբերի պատրաստման, հրանոթների, ինքնաձիգների վերանորոգման արհեստանոցներ:

19-րդ դարի սկզբներից հայտնի էին զինագործ արհեստավորներ բարութի Ստեփանը, բարութի Պողոսը<sup>540</sup>:

19-րդ դարի վերջերին Շուշիի զինագործական արհեստանոցը պատկանում էր Աստվածատուր Ղուլյանին<sup>541</sup>:

Քաղաքում պատրաստված զենքն ու զինամթերքը չէին օգտագործվում միայն արցախահայության ինքնապաշտպանության համար: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին զինակիր խմբերը, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում շուշեցիները, այդ ամենը տեղափոխում էին Արևմտյան Հայաստան և կազմակերպում իրենց հայրենակիցների պաշտպանության գործը:

1917 թ. ռուսական կայսրությունում սկսված քաղաքական ցնցումների հետևանքով ստեղծված անապահով վիճակն Արցախի ազգային ուժերին, հատկապես՝ ՀՅԴ-ին, դրդում էր արցախահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար գործնական քայլերի դիմել:

Եղիշե Իշխանյանն իր հուշերում գրել է, որ 1917 թ. Արցախում «ունեցել ենք լաւ սարքաւորուած արհեստանոց, հմուտ վարպետի ղեկավարութեան ներքոյ, փչացող զէնքերի անվճար նորոգմանց համար, որի մասին տպագրուած թերթիկներով յայտարարուած է բոլոր գիւղերին, որ զէնքերը ձրիաբար կարող են նորոգել քաղաքի ազգային արհեստանոցում»<sup>542</sup>:

19-րդ դարի 70-80-ական թվականներին ռուսական կայսրությունում մի շարք բարեփոխումների շնորհիվ շուկայական հարաբերություններն

<sup>538</sup> «Փայլակ», հմ. 34, 5 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>539</sup> «Փայլակ», հմ. 33, 2 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>540</sup> Арутюнян Г., Шуши ..., стр. 16-17.

<sup>541</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 201:

<sup>542</sup> Իշխանյան Ե., նշվ. աշխ., էջ 341:

սկսեցին թափանցել տնտեսության տարբեր ոլորտներ: Շուշին նույնպես ներքաշվեց համառուսական շուկայի մեջ: Քաղաքում մեկը մյուսի հետևից երևան էին գալիս մասնավոր նոր ձեռնարկություններ: Հայ դրամատերերից շատերն սկսեցին իրենց միջոցները տեղափոխել արտադրության առավել շահավետ ոլորտներ՝ ստեղծելով զանազան գործարաններ ու ֆաբրիկաներ: 20-րդ դարի սկզբներին Շուշիում կային 570 արհեստանոցներ, ֆաբրիկաներ, արտադրական կենտրոններ<sup>543</sup>: Այդ գործարանների զգալի մասը զբաղվում էր մետաքսի արտադրությամբ: Մետաքսի մեծ ճանապարհին մոտ լինելով՝ Ղարաբաղի հայությունը հնուց ի վեր զբաղվում էր շերամապահությամբ և մետաքսագործությամբ: 1821 թ. Մեսրոպ Թաղիադյանը, լինելով Շուշիում, գրել է. «... կանայք երկրիս առհասարակ արուեստաւորք են և գործեն պէսպէս ձեռակերտս մետաքսիս»<sup>544</sup>: Շերամապահությունը նոր ընթացք ու թափ ստացավ 1870–1880–ական թվականներին:

19-րդ դարի 50-ական թվականներին Ղարաբաղում գտնվող մետաքսագործարանները տնայնագործական տիպի մանր ձեռնարկություններ էին՝ խարսխված բացառապես ձեռքի աշխատանքի վրա: Միայն 1868 թ. Շուշու գավառում կար 490 մետաքսագործական արհեստանոց, որտեղ թողարկվում էր 76 000 ռուբլու արտադրանք<sup>545</sup>:

Արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության առաջին փորձերը Ղարաբաղում կատարվել են 19-րդ դարի կեսերին: Շուշեցի Աղաբաբա և Գրիգոր Խաչատրյաններն ու Կարապետ Շահմուրադյանը 1856–1857 թթ. Ստեփանակերտում հիմնադրեցին մետաքսի ֆաբրիկա, որտեղ աշխատում էին Նուխիից եկած 25–30 հայ բանվորներ: Նույն դարի 60-ական թվականներին շուշեցի վաճառականները, լինելով Մարսել, Լիոն, Միլան, Վենետիկ, Ջենովա քաղաքներում, արտասահմանից օրինակում են մանարանը, մետաքս ոլորող մեքենան և միաժամանակ «ցելլիվսի» եղանակով սկսում են ստանալ առողջ սերմ: Առաջին անգամ ղարաբաղցի մետաքսագործի կիսանահապետական աշխատանքին փոխարինելու եկավ շոգու աշխատանքը: Այս հանգամանքը նպաստում է, որ երկրամասում զարգանա շերամապահությունը:

1873 թ. շուշեցի առևտրական Գ. Հարությունյանը քաղաքում հիմնեց մետաքսաղորման առաջին ֆաբրիկան, որտեղ Ռուսաստանում առաջին անգամ կիրառվեց բոժոժ չորացնելու հատուկ մեխանիկական սարքավորում:

Գ. Հարությունյանի ֆաբրիկան սերտորեն կապված էր «Ա. և Վ. Սապոժնիկովներ», «Ա. Իլին որդիների հետ և Կ.», «Ե. Ա. Սոկոլիկովա» մետաքսի առևտրով զբաղվող խոշորագույն ընկերությունների հետ<sup>546</sup>:

Մետաքսագործության զարգացման նպատակով էժան հումք ապահովելու համար շուշեցի գործարանները նպաստեցին ոչ միայն գավառում, այլ նաև տարածաշրջանում շերամապահության զարգացմանը:

Շուշեցի առևտրականները 1870–ական թվականներից արտասահմանից ներկրում էին շերամի որդի որակյալ սերմեր: Մանավանդ Արցախում լայն տարածված էր ճապոնական դեղին ցեղի մանր բոժոժ ունեցող հունդը, որին տեղացիները «յապոն» էին անվանում: Այն ծովային ճանապարհով Չինաստանից շուշեցի առևտրականները տեղափոխում էին Հունաստան, իսկ այնտեղից՝ Ղարաբաղ: Արցախի տարբեր գավառներից, ինչպես նաև Գյոկչայից, Աղդամից, Աղդաշից, Աղջաբեդուց շերամապահները գալիս էին Շուշի և ձեռք բերում որակյալ սերմեր: Արդեն 1870–ական թվականներին Շուշիում և նրա շրջակա գյուղերում 15 մետաքսագործարաններ կային<sup>547</sup>:

19-րդ դարի վերջերին Անդրկովկասում հունդի աճեցման և տարածման գործը կենտրոնացած էր 3 ընտանիքների ձեռքում, որոնցից մեկը՝ Տեր-Գրիգորյանները, շուշեցի էին<sup>548</sup>:

19-րդ դարի 70-ական թվականներից մինչև 20-րդ դարի սկզբները շուշեցի մի շարք ձեռներեց ընտանիքներ մետաքսաթել պատրաստող գործարաններ էին ստեղծել ինչպես Շուշիում, այնպես էլ՝ գավառի գյուղերում:

Այսպես, Սարգիս Ներսիսյանը, Ավշարյանների, Մնացականյանների, Ահարոնյանցների, Ճգնավորյանների, Ջոհրաբյանների, Թամիրյանների և Օհանյանների ընտանիքները գործարաններ էին հիմնել Շուշիում: Դանիել Ահարոնյանը՝ Քարինտակ, Սղնախ, Չանախչի, Ղարաբուլաղ, Կրկժան, Խանքենդի գյուղերում, Տեր Մկրտչյան եղբայրները՝ Տողում և Թաղարում, Համբարձում Ահարոնյանը՝ Խանաձախում, Քոլատակում, Բալլուջայում, Բաբաջան Ղազարյանը՝ Բաղարայում, Դաշբուլաղում և Հիլիսում, Գրիգոր Շահնազարյանը՝ Ծակուռիում, Դավիթ Ներսիսյանը՝ Շուշիում, Կոստանդ Հովակիմյանը՝ Սելդիշենում, Բաբայանները և Քամալյանները՝ Գիշիում:

Մետաքսամանման գործարաններ ունեին Դանիել Ահարոնյանը՝ Քարինտակում, Սղնախում, Չանախչիում, Ղարաբուլաղում, Կրկժանում, Ստեփանակերտում, Համբարձում Ահարոնյանը՝ Բալլուջայում, Խնաձախում,

<sup>546</sup> История Азербайджана, т. 2, Баку, 1960, стр. 237.

<sup>547</sup> Նամակ Շուշուց, «Մշակ», հմ. 150, Թիֆլիս, 1880, էջ 2; Առաքելյան Ա., Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում, Ստեփանակերտ, 1939, էջ 12:

<sup>548</sup> Բալայան Վ., Արցախի պատմություն, էջ 187:

<sup>543</sup> Тер–Саркисянц А., Армяне Нагорного Карабаха, история, культура, традиции, стр. 205:

<sup>544</sup> Թաղիդեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ 1, էջ 287–288:

<sup>545</sup> История Азербайджана, т. 2, Баку, 1960, стр. 237.

Քոլատակում, Դավիթ Ներսիսյանը՝ Ղայբալույում, Խնձրիստանում, Ղլաղում, Եղիշեն Սարուխանյանը՝ Վանքում, Հայրապետյան եղբայրները և Իվան Զաքարյանը՝ Առաքյուլում, Գրիգոր Շահնագարյանը՝ Շուշիում<sup>549</sup>: 1870-ական թվականներին Շուշիի մետաքսագործարաններում աշխատող կանանց աշխատավարձը օրական կազմում էր 30 կոպեկ, իսկ երեխաներինը՝ 20 կոպեկ<sup>550</sup>: Շուշիի համեմատ գյուղերում աշխատավարձը ավելի ցածր էր: Պատահական չէր, որ գործարարները նախընտրում էին արտադրություն կազմակերպել գյուղական վայրերում:

1912 թ. Լեռնային Ղարաբաղում կար 40 մետաքսագործարան, որտեղ աշխատում էր 2735 բանվոր<sup>551</sup>: Փաստորեն, ամեն գործարանում աշխատում էր 68-70 մարդ: Համեմատության համար ասենք, որ նույն ժամանակահատվածում Գանձակի նահանգում թուրքերն ունեին 39 մանարաններ, որոնցում աշխատում էր 1171 բանվոր: Այսինքն, ամեն գործարանում միջին հաշվով աշխատում էր 30 բանվոր: Ի դեպ, թուրքերին պատկանող 39 գործարաններից 25-ը գտնվում էր հայաբնակ Նուխիում<sup>552</sup>:

Շուշիում պատրաստված մետաքսաթելը և դրանցից գործած կտորները բավականին որակյալ էին և մեծ համարում ունեին Պարսկաստանում, Մերձավոր Արևելքի երկրներում, Ռուսաստանում, Եվրոպայում:

Ռուս նշանավոր գրող Վ. Վերեշչագինը 1864 թ., լինելով Շուշիում, գրել է. «Այստեղի մետաքսյա կտորները ամուր են, դրանց գույները հիմնականում վառ կարմիր էին»<sup>553</sup>: Իսկ ժամանակակիցներից մեկը ասել է. «Նուխին և Շուշին համարվում էին Անդրկովկասի մետաքսագործության թագավորություն»<sup>554</sup>: Պատահական չէ, որ Շուշիում արտադրված մետաքսյա թելը և կտորները միջազգային ցուցահանդեսներում մեծ գնահատականների էին արժանանում:

1877 թ. երեք ընկերներով՝ հաղորդեցի Ղուլի Հակոբյանը, շուշեցի Իվան Զոհրաբյանը և նորշենացի Ավագ Իսախանյանը բացել էին մետաքսագործարան, որի արտադրանքը 1882 թ. Մոսկվայի տոնավաճառում արժանացել է բրոնզե մեդալի, իսկ մեկ տարի անց՝ ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում՝ ոսկե մեդալի<sup>555</sup>:

<sup>549</sup> Հայկունի, նշվ. աշխ., էջ 12; Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 311-312:

<sup>550</sup> Հայկունի, նշվ. աշխ., էջ 12:

<sup>551</sup> «Բագուի ծայր», հմ. 53, 9 մարտի, Բագու, 1913:

<sup>552</sup> «Փայլակ», հմ. 24, 31 մայիսի, Շուշի, 1915:

<sup>553</sup> Верещагин В., Путешествие по Закавказью в 1864-1865 гг., стр. 272.

<sup>554</sup> Жениховская В., Кавказ и Закавказье, Москва, 1901, стр. 32.

<sup>555</sup> СМОМПК, вып. 6, 1888, стр. 174-175.

1889 թ. նոյեմբերի 12-ին կովկասյան ցուցահանդեսի մրցանակաբաշխության ժամանակ 48 ոսկե մեդալներից 15-ը բաժին է հասել հայերին, այդ թվում՝ մետաքսագործության ասպարեզում՝ շուշեցի Դանիել Արունյանցին<sup>556</sup>: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի վերջերին Արցախի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալատի վարագույրները<sup>557</sup>:

Շուշին հանդիսանում էր բոժոժի խոշոր շուկա Այսրկովկասում: 1894 թ. Շուշիում հիմնադրվեց Կովկասյան մետաքսագործական կայանի մասնաձյուղը: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի 85 բնակավայրերում շերամապահությամբ զբաղվում էին մոտ 12 000 տնտեսություններ, որոնք կազմում էր ամբողջի 45 տոկոսը: Վերոհիշյալ ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղում և, մասնավորապես, Շուշիում բնական մետաքսի արտադրության բուն վերելքը պայմանավորված էր մի շարք բարենպաստ գործոնների առկայությամբ. տարանցիկ առևտրական ճանապարհների հանգուցակետում գտնվելը, Շուշիի վաճառականների, գործարանատերերի սերտ կապերը Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի երկրների գործարար շրջանակների հետ, այս բնագավառում հնուց ի վեր եկած ավանդույթները, որին գումարվեցին նաև ղարաբաղցիների աշխատասիրությունը և հակումը դեպի արհեստը, էժան և որակյալ աշխատուժի գոյությունը, վառելանյութի՝ անտառներին մոտ լինելու հանգամանքը:

Մետաքսի արտադրությամբ Ռուսաստանի երկրամասերի մեջ Ղարաբաղը գրավում էր 2-րդ տեղը և տալիս էր Անդրկովկասի մետաքսի արտադրության 35 տոկոսը<sup>558</sup>:

Անհիշելի ժամանակներից Արցախում տարածված էին թթի օղու արտադրությունը և գինեգործությունը: 19-րդ դարի երկրորդ կեսին Շուշիի գավառում կային տնայնագործական բնույթի 463 օղեթորման գործարաններ<sup>559</sup>:

Միայն Շուշու գավառում 1895 թ. թորվել է 300 000 դույլ օղի: Գինու և օղու արտադրանքից Շուշու գավառում ստացվել է 1 323 270 ռուբլու եկամուտ<sup>560</sup>, որը տվյալ ժամանակահատվածում բավական մեծ գումար էր:

Առավել մեծ ծավալներ և որակ ապահովելու նպատակով շուշեցի մեծահարուստներ Խուրլարյանները և Սողոմոնյանները որոշեցին օղու և գինու արտադրությունը դնել գործարանային հիմքերի վրա: Այդ նպատակով

<sup>556</sup> Ա. Կ., Ներքին տեսութիւն (Կովկասեան ցուցահանդեսի պարգեւաբաշխութիւնը), «Արձագանք», հմ. 43, 19 նոյեմբերի, Թիֆլիս, 1889, էջ 703:

<sup>557</sup> Մկրտչյան Շ., Արցախ, Երևան, 1991, էջ 46:

<sup>558</sup> «Заря Востока», но. 1527, Тифлис, 1927.

<sup>559</sup> Науменко Е., Елизаветпольская губерния. Военно-статистическое описание, часть 1, Тифлис, 1903, стр. 363.

<sup>560</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 87:

1880-ական թվականներին նրանք Աղղամում հիմնում են սպիրտի և գինու գործարաններ, որոնց հիմքերի վրա ստեղծեց նաև կոնյակի փոքր գործարան<sup>561</sup>: Ի դեպ, շուշեցի հայ գործարարներն իրենց արտադրությունը հիմնել են Աղղամում՝ 5-6-րդ դարերում կառուցված հայկական եկեղեցու հարևանությամբ, չպատկերացնելով անգամ, որ հարևան թուրքերը ժամանակի ընթացքում սեփականացնելու են ամեն ինչ, այդ թվում՝ հայկական Ակնա-Աղղամը, Տիգրանակերտ-Շահբուլաղը և ուրիշ շատ ու շատ հուշարձաններ ու տարածքներ: 2000 թ. ԱրՊՀ դասախոսների և ուսանողների կողմից կատարված պեղումների արդյունքում հայտնաբերվել են վերոհիշյալ եկեղեցու հիմքերը: Արցախում արտադրված օղին, սպիրտը և գինին արտահանվում էին Կովկասի քաղաքներ, Ռուսաստան և եվրոպական երկրներ: Միայն Խուրթալյանների և Սողոմոնյանների գործարաններից արտահանվում էր տարեկան 100 000 փութ օղի և սպիրտ<sup>562</sup>:

Այս ամենից բացի Շուշի քաղաքում 1891-1895 թթ. կենտրոնացված էին 6 կաշվի, 5 օձառի, 10 ներկարարական և 2 աղյուսի գործարաններ<sup>563</sup>:

Այդ գործարանների հետ միասին Շուշիում 10 տնայնագործներ նույնպես զբաղվում էին օձառագործությամբ: Շուշի քաղաքի գործարանային օձառի ընդհանուր ծավալը 1891 թ. կազմում էր տարեկան 9125 փութ, որի արժեքը կազմել է 31 025 ռուբլի: Գործարանային օձառը վաճառվում էր 3 ռուբլի 40 կոպեկով<sup>564</sup>: Շուշիում գտնվող 2 աղյուսի գործարանները պատկանում էին Թադևոս Թամիրյանին: Քաղաքում կային նաև մոմագործական արտադրամասեր, որտեղ ձարալից մոմ էին ստանում:

Շուշեցի գործարարները և քաղաքային իշխանությունները մտահոգ էին որակյալ արհեստավորներ և բանվորներ ունենալու հարցում: Ուստի նրանք միջոցներ և ջանք չէին խնայում քաղաքում արհեստագործական ուսումնարաններ բացելու համար:

Այսպես, շուշեցի մեծահարուստները գումար են հանգանակում և 1883 թ. քաղաքում բացում արհեստագործական ուսումնարան<sup>565</sup>: 1815 թ. օգոստոսին քաղաքային դուման որոշում է Շուշիի արհեստագործական ուսումնարանի նոր շենքի կառուցման համար հատկացնել 2000 քառակուսի սաժեն

<sup>561</sup> История Азербайджана, т. 2, стр. 272.

<sup>562</sup> «Новое обозрение», но. 1840, СПб, 1889.

<sup>563</sup> «Ազգագրական հանդես», գիրք F, էջ 98; СМОМПК, вып. 11-й, 1891, стр. 73.

<sup>564</sup> СМОМПК, вып. 11-ый, 1891, стр. 65.

<sup>565</sup> Արցախեցի, Շուշիի շուրջը, «Մեղու Հայաստանի», հմ. 67, 26 յունիսի, Թիֆլիս, 1883, էջ 3:

հող և շինարարներին թույլատրել ձրիաբար օգտվելու ավազի և քարի հանքերից<sup>566</sup>:

Աշխարհագրական տեսանկյունից Շուշին կարևոր օղակ էր Միլի, Մուղանի տափաստաններից դեպի Արևելյան Հայաստանի լեռնային բնակավայրերը, ալայան մարզագետիկները տանող ճանապարհին, մյուս կողմից էլ Ռուսաստանը և Կովկասը Իրանի հետ ակոկող տարանցիկ մայրուղիների վրա գտնվելով՝ այն վեր է ածվել առևտրական կենտրոնի: Առևտրական մայրուղիներից մեկը ձգվում էր Հնդկաստանից միջինասիական երկրներ, Պարսկաստան և, Արաքսը հատելով, Խուրթալիերի կամրջով անցնում էր Ղարաբաղ, հասնում Շուշի և այստեղից էլ ձգվելով մտնում Գանձակ ու Թիֆլիս և, հյուսիսային Կովկասից ճյուղավորվելով, տարածվում ռուսական քաղաքներ: Մեկ այլ մայրուղի էլ ձգվում էր Շուշիից Գորիս, Երևան, այնտեղից էլ՝ Թուրքիա:

Ընդհանուր առմամբ, դեռևս 18-րդ դարի սկզբներից սկսած, հայերն առանցքային դեր ունեին Պարսկաստանի և Ռուսաստանի միջև առևտրական կապերի ընդլայնման գործում: 1737 թվականից մինչև 1745 թվականը Ռուսաստանից Պարսկաստան է ներմուծվել 3 598 163 ռուբլի 88 կոպեկի ապրանք, որից 416 005 ռուբլի 44 կոպեկի՝ ռուսների, 698 133 ռուբլի 92,5 կոպեկի՝ անգլիացիների և 2 484 024 ռուբլի 51,5 կոպեկի չափով հայերի միջոցով: Նույն ժամանակահատվածում Պարսկաստանից Ռուսաստան է արտահանվել՝ 2 429 913 ռուբլի 35,5 կոպեկի ապրանք, որից 631 510 ռուբլի 31 $\frac{3}{4}$ ՝ ռուսների, 200 460 ռուբլի 2 $\frac{3}{4}$  կոպեկի՝ անգլիացիների և 1 597 953 ռուբլի 5/8 կոպեկի չափով հայերի միջոցով<sup>567</sup>:

Արդեն 1849 թ. Պարսկաստանից Ռուսաստան ներմուծվել է 4 000 000 ռուբլու ապրանք<sup>568</sup>: Այդ ամենի մեջ իրենց գործուն մասնակցությունն են ցուցաբերել շուշեցի հայ առևտրականները: Շուշին դարձել էր մեծածախ առևտրի կենտրոն, որտեղ գտնվող պահեստները լցված էին ոչ միայն տեղական արտադրանքով, այլ նաև ռուսական, պարսկական, հնդկական, եվրոպական ապրանքներով: Ժամանակակիցը գրել է. «վերին դասը պարապում է վաճառականութեամբ Ռուսիայի, Երոպայի մի քանի քաղաքների և Պարսկաստանի հետ»<sup>569</sup>:

Շուշիում առևտրի զարգացմանը մեծապես նպաստել են քաղաքում 18-րդ դարում հիմնավորված Ագուլիսի և Ղազանչիի հայերը: Վերջիններս, ինչ-

<sup>566</sup> «Փայլակ», հմ. 47, 20 օգոստոսի, Շուշի, 1915:

<sup>567</sup> Бутковъ П., Материалы для новой истории Кавказа, стр. 222.

<sup>568</sup> Դաբաղյան Ա., Շուշիի հասարակական կյանքն ըստ «Կովկասյան տարեգրքի», Շուշին հայ քաղաքակրթության օրրան, Երևան, 2007, էջ 330:

<sup>569</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 11, 20 մարտի, Թիֆլիս, 1876, էջ 1:

պես և Նախիջևանի, մասնավորապես՝ Զուղայի հայերը, առևտրականի ջիղ ունեին, և նրանց ծավալած գործունեությունը վարակիչ էր տեղաբնիկների համար:

Լեոն իրավացիորեն նկատել է. «Այսպես էր զարգանում դարաբաղցի վաճառականի տիպը – թափառիկ, խիզախ, ձեռնարկող, ճարպիկ ու դիմացկուն: Այս յատկությունները, սակայն, անմիջապես Ղարաբաղի լեռնային առևտրական տնտեսությունից չմշակեցին: Նրանց մշակողը Շուշին էր, մի քաղաք, որ Ղարաբաղի հինքնատիպ և առանձնայատուկ իրականութեան մեջ ինքն էլ մի շատ խոշոր ինքնատիպություն էր: ... Նրա բնակչության մեծագույն մասը գաղթական էր Արաքսի հովտի առևտրական աշխարհի երեք կետերից: Այս ազգաբնակչությունը Շուշու անձուկ միջավայրում միաձուլեց, դարաբաղցիացաւ, ընդունելով իր մեջ և այն տարրերը, որոնք քաղաք էին տեղափոխուում Ղարաբաղի գիւղերից: Ահա այս ինքնատիպ միջավայրում էր զարգանում դարաբաղցի աչքաբաց, գործնական ընդունակություններով օժտուած վաճառականի յատկությունները»<sup>570</sup>:

19-րդ դարի սկզբներից Շուշիում սկսեցին գործել մասնագիտացված առևտրական ձեռնարկություններ: Դրանցից ամենախոշորները պատկանում էին Հախումյանների և Թառումյանների գերդաստաններին: Շուշեցի ամենահարուստ գործարարները Հախումյաններն էին, որոնք առևտրական կապեր ունեին Իրանի, Ռուսաստանի, եվրոպական երկրների հետ: Հախումյանները նշված երկրներում ունեին իրենց գործարանները և ռուսական կայսրության բանկերում ունեին մոտ մեկ միլիոն ռուբլի<sup>571</sup>: Թառումյաններն էլ, առևտրական լայն գործունեությունից զատ, հետաքրքրության շրջանակներ էին ընտրել նաև այլ ոլորտներ:

1808 թ. Բաքվի տուրքերի հավաքագրումը 4 տարով տրվել էր Բաբա Թառումյանին<sup>572</sup>: Նրա ձեռքին էր գտնվում նաև Կասպից ծովի նավթի, ձկան, աղի արտադրության կապալը:

Շուշիում քայլ առ քայլ ձևավորվում էր խոշոր առևտրական կապիտալ, որը հատուկ էր նոր ձևավորվող շուկայական տնտեսությանը:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Շուշիի շուկաներում և առևտրի կենտրոններում հաճախակի կարելի էր հանդիպել Հնդկաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Միջին և Մերձավոր Արևելքի երկրների, Ռուսաստանի, Այսրկովկասի տարբեր հատվածներից այդտեղ ժամանած առևտրականների:

<sup>570</sup> «Փայլակ», հմ. 18, 16 մարտի, Շուշի, 1917:

<sup>571</sup> Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 60:

<sup>572</sup> ՀԺՊ, հ. V, էջ 268:

Շուշեցի առևտրականներն էլ իրենց հերթին լինում էին վերոհիշյալ երկրներում: «Կասպի» ռուսալեզու թերթի լրագրողը, լինելով Շուշիում և այդ աշխույժ առևտրական եռուզեղը տեսնելով, գրել է. «Առևտրական քարավանները մեզ մոտ են գալիս Պարսկաստանից և մոտակա ռուսական քաղաքներից: Որքան գալիս էին մեր մոտ, այդքան էլ անգամ երկակի, եռակի չափ ավելի շատ մենք ուղարկում էինք այլ քաղաքներ և անգամ արտասահման: Եղել են դեպքեր, երբ մի քանի օր ուղտերի, ջորիների և էշերի քարավանները ձգվում էին քաղաքի մի դարպասից մինչև մյուսը, մեր մոտ բերելով չորացրած մրգեր, մետաքս և հումք մեր հարևան Պարսկաստանից, կամ էլ մեր մոտից տանելով բոժոժ, բուրդ, գորգեր և այլ ապրանքներ, մասնավորապես Թիֆլիս ու ուրիշ քաղաքներ, իսկ այդտեղից էլ տեղափոխելու արտասահման՝ մանավանդ Ֆրանսիա, Իտալիա և այլ երկրներ: Քաղաքի հրապարակները, մանավանդ այսպես կոչված «Կասպան» տարածքը, որտեղ գտնվում է քաղաքային կշեռքները, այնքան բազմամարդ են, որ դրանցից օգտվելու համար ժամերով պետք է սպասել: Այսպիսի հագեցած կյանքով էր ապրում Շուշին, առևտրի ասպարեզում բավականաչափ իր հետևից թողնելով հարևան քաղաքներին՝ Բաքվին, Ելիզավետպոլին, Նուխին, Շամախին, Երևանին, Նախիջևանին և ուրիշ քաղաքների»<sup>573</sup>:

Ցարական կառավարությունն Այսրկովկասը տնտեսապես ու քաղաքականապես Ռուսաստանին ենթարկելու, իր ազդեցությունը հարևան երկրների վրա տարածելու նպատակով հովանավորում էր առևտրականներին: Եվ պատահական չէ, որ բազմաթիվ միջոցառումներով խրախուսում էր առևտրական դասին ու ուղղորդում նրա գործունեությունը:

1821 թ. հոկտեմբերի 8-ի օրենքով Այսրկովկաս ներմուծվող ապրանքներից գանձվում էր 5% մաքս, իսկ Պարսկաստան առաքվող ապրանքների համար հաստատվում էր անմաքս տրանզիտ: Պատահական չէ, որ Այսրկովկասում արտաքին առևտրի ծավալները 1822–1870 թթ. ընթացքում հասան 15 399 969 ռուբլու<sup>574</sup>:

Մաքսային նման քաղաքականությունը խթան հանդիսացավ նաև Շուշիի առևտրականների աշխույժ գործունեության համար: Արդեն 19-րդ դարի 30-ական թվականների ցարական պաշտոնական աղբյուրները հաստատում են այն իրողությունը, որ հայ առևտրականներն իրենց ձեռքն են առել «ամբողջ Անդրկովկասի առևտուրը»<sup>575</sup>:

<sup>573</sup> «Каспий», но. 55, Баку, 1903.

<sup>574</sup> Документы и материалы по истории армянского народа, социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России, (1830–1870), стр. 34.

<sup>575</sup> Обозрение Российских владений за Кавказом, ч. 1, стр. 199.

Տարեկան մինչև 250 000 ռուբլի շրջանառություն ունեցող առևտրականները հիմնականում հայեր էին: Դրանցից հայտնի էին շուշեցի Թառույանների, Հախումյանների և Խանդամիրյանների ընտանիքները: Շահնազարյանների, Սարուխանյանների, Անդրեասյանների, Սահակյանների, Առաֆելովների, Առուշանյանների գերդաստանների ներկայացուցիչները նույնպես նշանավոր առևտրականներ էին: Վերոհիշյալ գերդաստաններից ետ չէին մնում առևտրական այն ընկերությունները, որոնք ղեկավարում էին Մկրտչյան, Բաբայան, Ղազարյան, Եսայան եղբայրները, Մելքում Խաչատրյանը, Ջաքար Մասկյանը, Վորոնցովը, Իսախանյանը<sup>576</sup>:

Երեք վաճառական հայ ընտանիքներ Շուշիի սարահարթից հսկում էին մի մեծ առևտուր, որի միջոցով իրար էին կապվում աշխարհի չորս ծայրերը՝ Չինաստանից մինչև Արևմտյան Եվրոպա, Հնդկաստանից մինչև Ռուսաստան և Սկանդինավյան երկրներ<sup>577</sup>:

Գերմանական «Ալգեմայն ցայտունգ» թերթը 1846 թ. նոյեմբերի 15-ի համարում գրել է. «Ղարաբաղի գլխավոր քաղաքը՝ Շուշին, առանց չափազանցության կարելի է համարել Կովկասյան Զիբրալթար»<sup>578</sup>:

«Շուշի քաղաքը համեմատաբար Ռուսիայի բոլոր հայաբնակ քաղաքների հարուստ է իր հարուստ բնակիչներով»,–արձանագրել է «Հայկական աշխարհ»–ի թղթակիցը,– «Սոսցա գլխաւոր պարապմունքն են առևտուր և արուեստներ: Առուտուրը Պարսկաստանի հետ անում են ձեռագործ ապրանքով, շաքարով, թէյով, մետաքսով և բամբակով: Նոյն առուտուրն անում են եվրոպական Լէյպցիգ, Լոնդոն, Մասրոէյլ և Մանչեստրը քաղաքների հետ: Բայց շուշեցիների առուտուրի գլխաւոր ձիւղը տորոն և մետաքսն է, որ ծախում են Մոսկվայի մէջ»<sup>579</sup>:

Առևտրի զարգացմանը խթանում են նոր ճանապարհների կառուցումն ու փոխադրական միջոցների կատարելագործումը: Կառուցվեցին և խճապատվեցին Շուշի–Եվլախ, Շուշի–Գորիս–Նախիջևան–Երևան ճանապարհները:

Արցախում, մետաքսագործության զարգացմանը զուգընթաց. փոխվում է նաև ապրանքների արտահանման և ներմուծման տեսականին:

Եթե մինչև 19–րդ դարի 20–ական թվականները Պարսկաստանից Արցախ բոժոժ և մետաքսաթել էր ներկրվում, ապա հետագա ժամանակներում երկրամասից մետաքսաթել և մետաքսյա գործվածքներ մեծ չափերով սկ-

<sup>576</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 292:

<sup>577</sup> Բախյան Վ., Արցախի պատմություն, էջ 190:

<sup>578</sup> «Allgemeine zeitung», 15 november, 1846.

<sup>579</sup> «Հայկական աշխարհ», հմ. 1, ապրիլ, հմ. 2, մայիս, Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Շուշի, Երևան, 1874, էջ 38:

սեցին արտահանել, բայց այս անգամ արդեն Ռուսաստան և եվրոպական երկրներ: Թավրիզ–Շուշի–Շամախի ճանապարհը կորցրեց իր նախկին նշանակությունը: Պարսկաստանի հետ առևտրաշրջանառությունն անկում ապրեց: Այսպես, Ջեբրայիլի, Նախիջևանի և Շարուրի մաքսային անցակետերի տարեկան շրջանառությունը միասին 1878 թ. կազմում էին. մուտքը՝ 2 464 407 ռուբլի, ելքը՝ 834 671 ռուբլի: Այդ այն դեպքում, երբ Խուդափերենի կամրջից հյուսիս գտնվող Ջեբրայիլի մաքսակետը, որը սպասարկում էր շուշեցի առևտրականներին, նույն ժամանակահատվածում արձանագրել էր ընդամենը 269 806 ռուբլու մուտք և 105 299 ռուբլու ելք<sup>580</sup>:

Նոր ստեղծված իրավիճակի պատճառով առևտրական հիմնարկությունների մի մասը փակվեց, մյուսները վերակառուցեցին իրենց աշխատանքը: Միաժամանակ հանդես եկան նոր առևտրական ընկերություններ, որոնք սկսեցին սերտ կապեր հաստատել Ռուսաստանի և եվրոպական երկրների հետ: Այս անգամ Շուշին դառնում է մեծապես ռուսական, եվրոպական և տեղական արտադրության ապրանքների մեծածախ և մանրածախ շուկա:

Մեծածախ առևտուրը հիմնականում կենտրոնացված էր հայերի ձեռքին: Թուրքերը զբաղվում էին մանրածախ առևտրով: Խոշոր առևտրականներին անվանում էին խոջաներ, իսկ մանրերին՝ սարաֆներ, չարչիներ:

Եթե 1850 թ. Շուշիում կար 493 առևտրական<sup>581</sup>, ապա 1902 թ. դրանց թիվը հասավ 1535–ի<sup>582</sup>:

19–րդ դարի երկրորդ կեսին Շուշիում գործում էին «Նադեժդա» և «Ռուսիյսկոյե» ընկերությունների գրասենյակները, որոնք կազմակերպում էին ապրանքների փոխադրումը<sup>583</sup>: Նշանավոր էին նաև «Սյունիք» և «Պա–տիվ» ընկերությունները: Այստեղ էր գտնվում «Զինգեր» գործակալությունը, որը շուշեցի սպառողներին է հասցնում կարի մեքենաներ:

Արցախի անտառներում եղած թանկարժեք շինափայտը նույնպես շուշեցի գործարարների հետաքրքրությունների շրջանակում էր: Այստեղ գործում էին մի քանի մասնագիտացված ձեռնարկություններ, որոնք զբաղվում էին փայտանյութի մշակման և ստացված արտադրանքն արտասահմանյան երկրներ փոխադրելու գործով: Քանի որ Գանձասարի և Խութավանքի ընդարձակ անտառներն Արցախի թեմի իրավասության տակ էին գտնվում, ուստի թեմի առաջնորդները, մասնավորապես Զավեն վարդապետը, ոչ մի-

<sup>580</sup> Кавказский календарь на 1881, стр. 51.

<sup>581</sup> «Кавказ», но. 23, Тифлис, 1850.

<sup>582</sup> Науменко Е., Елизаветпольская губерния. Военно–статистическое описание, часть 1, Тифлис, 1903, стр. 330.

<sup>583</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 112:



այն Շուշիի, այլ նաև Բաքվի, Թիֆլիսի, Էջմիածնի համապատասխան ձեռնարկատերերի հետ կանոնավոր գործնական կապեր էին պահում<sup>584</sup>:

Առևտրական կյանքը Շուշիում աշխուժանում է հատկապես ամռան ամիսներին, երբ քաղաքում շատանում էին հովեկներն ու իրենց առողջությունը վերականգնելու նպատակով Ռուսաստանից և հատկապես Այսրկովկասի տարբեր բնակավայրերից այստեղ ժամանած քաղաքացիները:

Առևտրի զարգացման, ինչպես նաև քաղաքի հյուրերին ընդունելու համար Շուշիում կառուցվել էին իջևանատներ և հյուրանոցներ:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Շուշիում կար 6 իջևանատուն և 4 հյուրանոց: Դրանցից ամենախոշորը «Բորժումի» երկհարկանի հյուրատունն էր, որը պատկանում էր Խանդամիրյաններին և կառուցված էր ներկայիս «Ավան պլազա» բազմահարկ հյուրանոցի տեղում: Առավել հարմարավետ էր Մարդի Դադյանի հյուրանոցը, որը գտնվում էր թեմական դպրոցի հարևանությամբ: 1918 թ. փետրվարին Շուշի ժամանած «անգլիական միսիայի» ներկայացուցիչներն ապրում էին վերոհիշյալ հյուրանոցում<sup>585</sup>:

Շուշեցիներն իրենց առօրյա գնումները կատարում էին երկու նշանավոր շուկաներից, որոնցից մեկը գտնվում էր թուրքական թաղամասում՝ մզկիթի հարևանությամբ (Շեթան բազար), մյուսը՝ հայկականում: Վերջինս գտնվում էր «Թոփխանա» հրապարակում և կրում էր նույն անունը:

Շուշիի շուկաները «ողողվում էր հեռու և մոտիկ, հայ ու թուրք գյուղացիության բերած գյուղատնտեսական և այլ տեսակի մթերքներով»<sup>586</sup>:

Աշնանը Տաթևից առևտրականները մսացու անասունները և Նախիջևանի աղն էին տեղափոխում Շուշիի շուկաներ, իսկ այստեղից Սյունիք էին տեղափոխում նավթ, կենցաղային և արդյունաբերական ապրանքներ<sup>587</sup>:

Քաղաքի շուկաներում եռուզեռն աննախադեպ էր լինում հատկապես կիրակի օրերին: 1885 թ. ամռանը Հայկունին, լինելով Շուշիում, նկատել է. «Թոփխանայում և թիրքաց հրապարակում մինչև կեսօր գիւղերից եկած բարին, կենսական մթերքը լիքն է, առատ և էժան: Հացը, միսը, իւղը, պանիրը՝ համեղ ու պատուական»<sup>588</sup>:

Շուշիի առևտրական հրապարակներն արևելյան շուկաների նման ոչ միայն կենցաղային, տնտեսական հարցերի լուծման միջավայր էին, այլև հասարակական խմորումների, տրամադրությունների, պատճենավորված արտահայտությունների վայր: «Մեղու Հայաստան»-ի լրագրողը, 1882 թ. լինե-

լով Շուշիի հայկական շուկայում, իրավացիորեն գրել է. «Նշանաւոր Շուշաց Ղալայ, համալսարան է Թոփխանա, ուր սկիզբ է առնում ամեն խաթաբալա: Ազգային հարցեր, քաղաքական հարցեր, և այլ տեսակ բաներ, վճռում են այստեղ Շուշուայ քաղաքապետներ»<sup>589</sup>:

Շուկաներից բացի կրպակների, խանութների «... շարքերը ձգված էին Շուշու հիմնական մագիստրալ գծով՝ Երևանյան փողոցով դեպի ցած, սկսած Վերին դարբասից (գորանոցից) փոստի մոտով դեպի Չերքեզենց խանութները, Թոփխանան, Ղափանը, Ղազանչեցոց և Ազուլյաց եկեղեցիները, այնուհետև դեպի քաղաքի մահմեդական մասը՝ Շեթանբազարը, իսկ այդ շարքերի առանձին ճյուղերը անցնում էին դեպի հայկական թեմական դպրոցը, գնում ցած, անցնում Շուշու քաղաքային դպրոցի մոտով և նորից մտնում մահմեդական թաղամասը»<sup>590</sup>:

Ցարական տիրապետության մեկդարյա ժամանակաշրջանում Շուշիի առևտրական կյանքի զարգացմանը խանգարում էին ճանապարհների անապահով վիճակը և երկաթգծի բացակայությունը: Առևտրական քարավանների թալանը սովորական երևույթ էր:

«Ավազակութիւնները Գանձակի նահանգում, մասնավորապես Շուշուայ գաւառում ընդունում են սպառնալից պատկեր», - գրում է «Ապառաժի» թղթակիցը, - «Օր չի անցնում, որ Ղարաբաղի բնակչութիւնը զոհ չտայ աւազակութեան, թէ՛ նիւթական, և թէ՛ մարդկային. տուժում են ազգաբնակչութեան բոլոր խաւերը: Երկիւղի մէջ է նույնիսկ Շուշին: Աշունը մօտենում է, ամառանոց եկողները պետք է վերադառնան, երեխաներին ուսումնարան հասցնեն, սակայն ճանապարհների անապահովութիւնից նրանք չեն վստահանում դուրս գալ քաղաքից»<sup>591</sup>: Թերթի էջերում նույն թեմայի վերաբերյալ «Ապառաժ»-ի այլ համարում ընթերցում ենք. «Ամսոյս 12-ին երեկոյան ժամը 7-ին աւազակները կողոպտեցին Եւլախից եկող օմնիբուսը (փոստային ծառայությունը - Վ. Բ.) Շուշոց 2-3 վերստ հիռաւորութեան վրայ, 11-ին գիշերը յարձակեցին Ասկերանի մօտ խանութի վրայ թալանելու, Մազի Կամուրջ կոչված կայարանի մօտ կտրեցին մի տուն, 3-ին յափշտակեցին Քարին տակեցի ձիաները և այլն և այլն: Թալանում են գիւղում, քաղաքում, մեծ ճանապարհի վրայ, դաշտում, անտառում, ամենուրեք և անխնայ»<sup>592</sup>:

Ավազակությունն այնքան էր տարածված, որ Աղղամից, Կարյազինոյից կառապանները հրաժարվում էին գնալ Շուշի: Ճանապարհների անվտան-

<sup>584</sup> «Ղարաբաղ», հմ. 1, 17 նոյեմբերի, Շուշի, 1911:

<sup>585</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 349-350:

<sup>586</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 293:

<sup>587</sup> СМОНПК, вып. 13, 1892, стр. 86, 98.

<sup>588</sup> Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, էջ 13:

<sup>589</sup> Քաղքցի, Ֆելիէտոն, «Մեղու Հայաստանի», հմ. 16, 21 փետրվարի, Թիֆլիս, 1882:

<sup>590</sup> Տեր-Գասպարյան Ռ., Շուշի, էջ 56:

<sup>591</sup> «Փայլակ», հմ. 63, 18 օգոստոսի, Շուշի, 1916:

<sup>592</sup> «Փայլակ», հմ. 80, 20 հոկտեմբերի, Շուշի, 1916:

գությունն ապահովելու նպատակով կառավարությունը լրացուցիչ սահմանապահ գնդի 500 զինվորների ներգրավեց այդ գործում: 1916 թ. հոկտեմբերի 20-ին Շուշիում Պետական դումայի պատգամավոր Պապաջանյանի հետ քննարկվեց ավազակության դեմ պայքարի հարցը: Պատգամավորը խոստացավ հարցապնդումով հանդես գալ Պետական դումայում<sup>593</sup>:

Ռուսական իշխանություններն առևտրականների անվտանգությունը պահպանելու նպատակով նրանց ուղեկցող հատուկ զինված ջոկատներ էին հատկացնում: Այդ ջոկատների ծախսերը հոգալու համար առևտրականների վրա հատուկ հարկ էր դրված:

Ավազակային խմբերը հիմնականում կազմված էին թուրքերից և քրդերից: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Շուշիի ճանապարհներին վխտող ավազակախմբերը գլխավորում էին Նորոզլին, Քերիմը, Ռաշիդը, Սուլեյմանը<sup>594</sup>: Թալանն ու ավազակությունը դարձել էին շահավետ գործ: Այդ ամենի կազմակերպիչներ էին նաև թուրք պաշտոնյաներն ու բեկերը: Դրանց մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում թուրք կոմունիստ Սալմանբեկ Ալիբեկովը: Նրա հայտնի խնդրագրի մեջ նշված է, որ նշանավոր ավազակապետներ էին Խոսրովբեկ Փոլադովը, Ալիբեկ Բեքուտովը, Միրզաբեկ Բեքուտովը, Աբդուլֆատրեկ Հասանբեկովը, Իբրահիմբեկ Հուսեինբեկովը, Իսմայիլխան Զիատիխանովը, Հյուսեինաղա Ջևանշիրը, Հյուսեինբեկ Վեզիրովը, Բեգլյարբեկ Սայրալինսկին<sup>595</sup>:

Աղբրեջանական պատմագրության կողմից հայ խաղաղ ազգաբնակչության թալանողները ներկայացվում են որպես ժողովրդի շահերի պաշտպաններ, իսկ ավազակապետները՝ հերոսներ: Ավազակապետ Ղաչաղ Նաբիի կերպարը դարձել էր աղբրեջանցիների կուռքն ու պատկառանքի առարկան<sup>596</sup>:

Շուշեցի որոշ առևտրականներ իրենց գործունեության շրջանակներն ընդլայնելու նպատակով տեղափոխվել և հաստատվել էին Մոսկվայում, Պետերբուրգում և այլ քաղաքներում: Շուշեցի Սարգիս Ծատուր Դավիթ Օրբելյանն առևտրական լայն գործունեություն էր ծավալել Մադրասում և

այդտեղ էլ 1794 թվականին վախճանվել ու թողել է կտակ՝ 80 000 հուն՝ Մադրասի հին դրամ<sup>597</sup>: 1860-ական թվականներին շուշեցի Գյանջեցյանների ընտանիքը տեղափոխվում է Աղդաշ, այդտեղ կառուցում խանութ, գեղեցիկ և ընդարձակ իջևանատուն, բոժոժ չորացնելու, հակեր կապելու, մետաքսի գործարան<sup>598</sup>:

Թիֆլիսում հաստատվել էին Սաֆարյան եղբայրները, Ղևոնդ Այդինյանը, Մոսկվայում՝ Գրիգոր Առաքելովը, Ժամհարյանները:

Շուշեցի մեծահարուստ առևտրականներն իրենց կուտակած դրամական միջոցները չփոշիացնելու, շահ ստանալու և ապահով ծերություն ունենալու նպատակով գնում էին անշարժ գույք ու վարձակալությամբ տալիս անհատների և ձեռնարկությունների, կամ էլ տոկոսադրույթով՝ բանկերին ու այս կամ այն անձանց փող էին տրամադրում:

Շուշիում առևտրի և տնտեսության մյուս ոլորտների զարգացման շնորհիվ աշխուժանում էր նաև բանկային համակարգը: 1914 թ. մարտին Շուշիում բացվում է «գյուղատնտեսական փոխադարձ վարկային ընկերություն», որի կանոնադրական կապիտալը 60 000 ռուբլի էր: Բանկը բաժանմունք ուներ նաև Աղդամում<sup>599</sup>: Փոխադարձ վարկային դրամատան շենքը գտնվում էր հասարակական ակումբի հարևանությամբ: Վերոհիշյալ բանկը իր տնտեսությունները կազմակերպելու նպատակով դրամական օժանդակություն էր ցույց տալիս չքավոր գյուղացիներին:

Տվյալ ժամանակաշրջանում Շուշիում գործում էր նաև փոխադարձ վարկային մեկ այլ ընկերություն, որի անդամների թիվը 1915 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1039 հոգի: Բանկն ուներ 191 415 ռուբլու կանոնադրական կապիտալ: Մեկ տարվա ընթացքում գործառույթներից բանկն ունեցել է 27 380 ռուբլի 19 կոպեկի զուտ արդյունք<sup>600</sup>: Շուշիի և գավառի տնտեսական կյանքի զարգացման գործին նպաստեց նաև Թիֆլիսի «Հայոց գյուղատնտեսական տնայնագործական ընկերության» Շուշիի մասնաձյուղը<sup>601</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին առաջին անհրաժեշտության մթերքների և ապրանքների գները Շուշիում մեծանում են: Դրա դեմ պայքարելու և չքավոր ընտանիքներին օժանդակելու նպատակով 1914 թվականին Շուշիում կազմակերպվում է սպառողական ընկերություն: Նախաձեռնող խումբը կազմված էր 10 հոգուց, որոնք հարյուրական ռուբլի

<sup>593</sup> «Փայլակ», հմ. 82, 27 հոկտեմբերի, Շուշի, 1916:

<sup>594</sup> Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, էջ 37, «Փայլակ», հմ. 64, 21 օգոստոսի, Շուշի, 1916:

<sup>595</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 179:

<sup>596</sup> Гасанов И., Из истории феодальных отношений в Азербайджане в первой половине XIX века, Известия АН Азерб. ССР, но 4, Баку, 1952; Гачаг Наби, составил А. Ахунгов, Баку, 1941; Ибрагимов З., Революция 1905-1907 гг. в Азербайджане, Баку, 1955; Сумбат-Заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX веке, Баку, 1958; Исмаил-Заде Д., Русское крестьянство в Закавказье, Москва, 1982.

<sup>597</sup> «Մշակ», հմ. 39, 1873, Թիֆլիս, էջ 3:

<sup>598</sup> Շահունյանց Վ., Նամակ Շուշուց, «Մշակ», հմ. 35, Թիֆլիս, 1873, էջ 3:

<sup>599</sup> «Հորիզոն», հմ. 61, 20 մարտի, Թիֆլիս, 1914, էջ 3:

<sup>600</sup> «Փայլակ», հմ. 9, 9 ապրիլի, Շուշի, 1915:

<sup>601</sup> «Փայլակ», հմ. 7, 29 հունվարի, Շուշի, 1917:

ներդրմամբ ստեղծեցին նախնական կապիտալը<sup>602</sup>: Մի քանի ամսվա ընթացքում սպառնոտի անդամների թիվը և շրջանառու ծավալներն անսահմանապարսպ մեծանում են:

1915 թ. Շուշիում գործում էր «Կուլտուրա»<sup>603</sup>, 1916 թ. վերին թաղում՝ «Ղուվուղ»<sup>604</sup>, 1917 թ. «Միություն» և «Աշխատավոր», «Ումիդ» (Յոյս) սպառողական կոոպերատիվները<sup>605</sup>:

Հայերի նախաձեռնությամբ թուրքական թաղամասում 1916 թ. բացվում է «Նադեժդա» սպառնոտը<sup>606</sup>:

Շուշիի բնակիչայական պայմանները, քաղաքի շրջակայքում գտնվող բուժիչ հանքային աղբյուրները, տնտեսական և մշակութային ձեռքբերումները նպաստեցին, որ հայկական հին բնակավայրը դառնա նաև զբոսաշրջային և առողջարանային կենտրոն:

Տվյալ ժամանակահատվածում ամենատարածված հիվանդություններից մեկի՝ թոքախտի բուժման համար Շուշիի կենարար օդն անփոխարինելի էր:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին մասնագետները պարզել են, որ թոքերի բուժման համար Շուշին ավելի լավ միջավայր ուներ, քան Արասթումանի, Սուխումի, Կիսլովոդսկի առողջարանները:

Վերոհիշյալ առողջարաններում և Շուշիում օդի ջերմությունը, խոնավությունը և ամպամած օրերի քանակը հետևյալ պատկերն ունեին<sup>607</sup>.

Բնակավայրեր	Օդի ջերմություն			Օդի խոնավությունը տոկոսով				Ամպամած օրերի քանակը			
	Ձմեռվա միջինումը	Ամառվա միջինումը	Տառա-նումները	Ձմեռ	Գարուն	Ամառ	Աշուն	Ձմեռ	Գարուն	Ամառ	Աշուն
Արասթուման	6,4°	17,5°	23,9°	80,3°	73,0°	71,6°	78,7°	57°	60°	45°	47°
Կիսլովոդսկ	4,7°	24,8°	29,5°	78,3°	75,0°	75,0°	77,6°	55°	64°	53°	49°
Սուխումի	5,1°	24,1°	19,0°	-	-	-	-	57°	62°	44°	48°
Շուշի	2,1°	19,4°	21,5°	75,0°	77,0°	69,0°	79,0°	51°	63°	44°	54°

Փաստորեն ջերմաստիճանի տատանումներն Արասթումանում և Կիսլովոդսկում ավելի բարձր էին, քան Շուշիում: Խոնավության տեսանկյունից ձմռանը և ամռանը Արասթումանի և Կիսլովոդսկի համեմատ Շուշիի կլիման ավելի չորային էր: Ինչ վերաբերում է ամպամած օրերին, ապա ձմռանը,

գարնանը և ամռանը դրանք վերոհիշյալ բնակավայրերի համեմատ Շուշիում անհամեմատ ավելի քիչ էր:

Զբոսաշրջային և առողջարանային կենտրոններ լինելու փաստը լրացուցիչ խթան դարձավ Շուշիի տնտեսական կյանքի զարգացման համար:

Շուշիի տնտեսական կյանքի զարգացումը նպաստել է քաղաքային կյանքի բոլոր ոլորտների զարգացմանը: Քաղաքի բյուջեն ձևավորվում էր հարկային եկամուտների հաշվին: Քանի որ Շուշիի տնտեսական բարձունքների և անշարժ գույքի 2/3-ը գտնվում էր հայերի ձեռքին, հետևաբար քաղաքի բյուջեի հիմնական համալրողները նրանք էին:

1849 թվականից մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը հրատարակված «Կովկասյան տարեգրքի» հատորներում հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Շուշիի բյուջեի մուտքերի և ելքերի մասին: Օրինակ, 1851 թ. Շուշիի բյուջեն համալրվում էր հիմնականում սպանդանոցներից և իջևանատներից եկած եկամուտների հաշվին: Վերոհիշյալ երկու ասպարեզներից էլ գանձվել է 2400 ռուբլու հարկ<sup>608</sup>:

1885 թ. Շուշիի բյուջեի մասին Հայկունին գրել է. «Քաղաքի տարեկան արդիւնքը հասնում է 50 000 ռուբլիի: Նոյնքան էլ ծախս կը լինի: Ծախուց մեջ ամենախոշորը դարձնողներն տրուած նպաստն է, ընդհանրապես՝ 10 000, իսկ քաղաքական-օրհորդականին՝ 1000 ռուբլի: Ընդամենը ուրեմն տարեկան 11 000 ռ., որոնց 2/3 մասը վճարում են հայք, իսկ 1/3 մասը՝ պարսիկք: Արդենց ամենամեծ աղբիւրքը տնահարկն է. 14 առ 100%: Քաղաքի դրամագլուխը՝ 12 000 ռուբլի: Պարտքը՝ 20 000 ռուբլի: Պարտքը գոյացել է և շատանում է գավառական ոստիկանարանի պահպանությամբ (6000 ռ.), որ ամբողջապես քաղաքն է հոգում, իհարկէ, զրկանք կրում: Մինչդեռ ոստիկանարանի գլխավոր ոյժերը գաւառն է խլում»<sup>609</sup>:

1886 թ. քաղաքի եկամուտները կազմել են 29 512 ռուբլի, ծախսերը՝ 25 316 ռուբլի<sup>610</sup>: 1910 թ. Շուշիի բյուջե է մուտքագրվել 56 081 ռուբլի 39 կոպեկի հարկ, իսկ ծախսվել՝ 54 386 ռուբլի 59 կոպեկ<sup>611</sup>:

Հարկերը հավաքագրելու համար քաղաքապետարանն ուներ «Եկամտային տուրքի Շուշիի քաղաքային վիճակային ատյան», որի նախագահը 1916-1917 թթ. Ֆոմինն էր: Այդ մարմինն ուներ քաղաքային գործակալներ (կոմիսերներ), որոնք էլ կատարում էին այդ աշխատանքը: Տվյալ ժամանակաշրջանում շուշեցիները, եթե որևէ աղբյուրից 850 ռուբլուց ավել եկամուտ

<sup>602</sup> «Գործ», հմ. 9, 7 մարտի, Բաքու, Շուշի, 1914:

<sup>603</sup> «Փայլակ», հմ. 49, 27 օգոստոսի, Շուշի, 1915:

<sup>604</sup> «Փայլակ», հմ. 64, 21 օգոստոսի, Շուշի, 1916:

<sup>605</sup> «Փայլակ», հմ. 3, 15 հունվարի, Շուշի, 1917, հմ. 17, 13 օգոստոսի, Շուշի, 1917:

<sup>606</sup> «Փայլակ», հմ. 85, 6 նոյեմբերի, Շուշի, 1916:

<sup>607</sup> «Փայլակ», հմ. 37, 16 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>608</sup> «Кавказский календарь» на 1852 г., стр. 432.

<sup>609</sup> Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, էջ 13:

<sup>610</sup> «Кавказский Календарь» на 1887 г., стр. 179.

<sup>611</sup> Обзор Елизаветпольской губернии за 1910 г., Тифлис, 1912, стр. 141-142.

էին ստանում, պարտավոր էին հայտարարագիր ներկայացնել և հարկ վճարել<sup>612</sup>:

Քաղաքի բյուջեում ավելացված գումարները պահ էին տալիս բանկերին: 1915 թ. Շուշիի ուպրավան Մոսկվայի վաճառականական բանկում ուներ 6500 ռուբլու արժեթղթեր<sup>613</sup>: Իսկ երբեմն քաղաքային բյուջեում առաջացված ձեռքվածքները Շուշիի ղեկավարությունը փորձում էր լուծել Ռուսաստանի տարբեր քաղաքներում, մասնավորապես Բաքվում և Թիֆլիսում ապրող շուշեցիների դրամահավաքի միջոցով: Առանձնապես դա զգալի էր խորհրդային կայսրության ձևավորման արշալույսին, երբ Ռուսաստանը հայտնվել էր անարխիայի և ամենաթողության ճիրաններում:

1918 թ. թիֆլիսաբնակ ղարաբաղցիների հավաքագրած 750 հազար ռուբլուց 670 հազարը ծախսվել էր քաղաքի կարիքների համար<sup>614</sup>:

1919 թ. սկզբներին Շուշիի Ազգային խորհուրդը արցախահայության ինքնապաշտպանության գործը և քաղաքացիական կյանքը կազմակերպելու համար դիմում է ներկայացնում Բաքվի Ազգային խորհրդին, որտեղ խնդրվում է բաքվաբնակ շուշեցիներից հանգանակել 2 700 000 մինչև 3 000 000 ռուբլի<sup>615</sup>:

Շուշիի տնտեսական կյանքի զարգացումը նպաստում է նաև շրջակա գյուղերի ազգաբնակչության սոցիալական և կենցաղային տարաբնույթ հարցերի լուծմանը: Նախկին խարխուլ տների փոխարեն արդեն կառուցվում են պատշգամբներով և թիթեղյա տանիքներով երկհարկանի տներ: «Փայլակ»-ի թղթակիցը, լինելով Դաշուշենում, գրել է, որ 60 ծխից բաղկացած գյուղի բնակչության արտադրած բանջարեղենը և Կարկառից որսացած ձուկը սպառում էին Շուշիում և «... ամբողջ գիւղում մի աղքատ մարդ չի գտնուիլ»<sup>616</sup>:

Քաղաքային կյանքով ապրելով հանդերձ՝ Շուշիի ծայրամասերում բնակվող ազգաբնակչության մի մասը զբաղվում էր նաև անասնապահությամբ: 1910 թ. Շուշիում պահում էին 280 ձի, 210 էշ, 150 ջորի, 300 խոշոր եղջերավոր անասուն, 100 գոմեշ, 50 այծ, 20 խոզ, ընդամենը՝ 1020 գլուխ<sup>617</sup>:

Քանի որ տարածաշրջանում մեծ համարում ունեին ղարաբաղյան ձիերը, ուստի Շուշիի մեծահարուստներն զգալի ներդրումներ էին կատարում այդ ճյուղի զարգացման համար:

<sup>612</sup> «Փայլակ», հմ. 13, 26 փետրվարի, Շուշի, 1917:

<sup>613</sup> «Փայլակ», հմ. 14, 26 ապրիլի, Շուշի, 1915:

<sup>614</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 388:

<sup>615</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 323:

<sup>616</sup> «Փայլակ», հմ. 83, 30 հոկտեմբերի, Շուշի, 1916:

<sup>617</sup> Обзор Елизаветпольской губернии за 1910 г., Тифлис, 1912, стр. 141.

1829 թ. Պուշկինը, լինելով Հայաստանում, գրել է, որ երիտասարդ ռուս աստիճանավորները նախընտրում էին երթևեկել ղարաբաղյան նժույգներով<sup>618</sup>, իսկ անգլիացիները նույն ժամանակաշրջանում ղարաբաղյան ձիեր էին գնում հնդկական հեծյալ գնդեր կազմակերպելու համար<sup>619</sup>:

1867 թ. Փարիզի, 1869 թ. Մոսկվայի, 1882 թ. Թիֆլիսի ցուցահանդեսներում ղարաբաղյան նժույգները գրավեցին առաջին տեղերը և պարգևատրվեցին պատվոգրով ու ոսկե մեդալով<sup>620</sup>:

19-րդ դարի վերջերից և 20-րդ դարի սկզբներից Շուշին քայլ առ քայլ կորցնում էր Անդրկովկասի տնտեսական խոշոր կենտրոն լինելու դիրքերը: Այդ ամենի հիմքում ընկած էին ինչպես տնտեսական, այնպես էլ՝ քաղաքական շարժառիթներ.

1) Ռուսաստանի և Պարսկաստանի հետ առևտրաշրջանառության ծավալների կտրուկ նվազման հետևանքով Շուշին դադարում է լինել տարանցիկ առևտրի հանգուցակետ:

2) Ռուսաստանում բուռն թափով զարգացող ֆաբրիկա-գործարանային խոշոր արտադրությունն սկսում է կլանել արհեստագործության հենքի վրա ստեղծված Շուշիի տնտեսությանը:

3) Հաշվի առնելով Շուշիի՝ բարձրավանդակի վրա գտնվելու հանգամանքը՝ անհնարին էր դառնում քաղաքը երկաթգծով կապել Անդրկովկասի մյուս խոշոր առևտրա-արդյունաբերական կենտրոնների հետ: Դրա փոխարեն տվյալ ժամանակահատվածում Թիֆլիսը, Բաքուն, Երևանը, Գանձակը, Եվլախը, Քութայիսին, Բաթումին, Ալեքսանդրապոլը, Նախիջևանը և Կարսը իրար հետ երկաթուղային կապ են հաստատում: Շուշին դուրս մղվեց շուկայական տնտեսության կանոններով ապրող կապիտալիստական աշխարհին հատուկ զարգացումներից:

4) Սարահարթի վրա թառած քաղաքը, ծավալվելու հնարավորություններից զրկված, այդպես էլ չդարձավ խոշոր արդյունաբերական կենտրոն:

5) Օրեցօր նոր թափ ստացող Բաքվի նավթարդյունաբերական համալիրը մագնիսի նման դեպի իրեն էր ձգում Արցախի բնակավայրերի և հատկապես՝ Շուշիի ազգաբնակչությանը: Տասնամյակներ շարունակ սև ոսկու մարմաջը Արցախի և, մասնավորապես, Շուշիի տնտեսության և ժողովրդագրական պատկերի վրա կործանարար հետևանքներ ունեցավ: Արցախից կենսատու հյութերը հոսում էին դեպի Բաքու, խորհրդային շրջանում՝ նաև Մումզայիթ ու Մինգեչաուր՝ շենացնելով օտարի տունը: Իսկ հայրենի

<sup>618</sup> Пушкин А., Путешествие в Арзрум, Избранные сочинения, т. II, Москва, 1937, стр. 447.

<sup>619</sup> «Кавказ», 15 июня, Тифлис, 1853.

<sup>620</sup> Шушинский Ф., Шуша, стр. 37.

Շուշին և հարևան հայկական բնակավայրերն օրեցօր խամրում և միայն որպես քաղցր հուշ էին մնում:

6) Քաղաքից առաջին հերթին սկսեց հեռանալ գործարար խավը: Նրանց օրինակին սկսեցին հետևել նաև մտավորականության ներկայացուցիչները: Տնտեսական և մշակութային տեսանկյունից անհրապույր մթոլորտն իր մեջ սկսեց սպանել ամեն մի նախաձեռնություն և նոր գաղափար:

Նման զարգացումների մասին «Փայլակ»-ը գրել է. «Վերջին տասնամյակում շատ բան է փոխել Շուշիում, իհարկէ, դէպի վատը: Այն մարդաշատ և եռուն կեանքով քաղաքը կարճ միջոցում համարեա անմարդաբնակ դարձաւ: Հին քաղաքացիների դասը մեծաւ մասամբ չքացաւ և նրանց տեղ այժմ մեծ մասամբ նորեկ գյուղացիներ են: ... քաղաքացիների այդպիսի կազմը շատ է աչքի ընկնում իր անկրթութեամբ»<sup>621</sup>:

7) Շուշիի տնտեսական տկարացմանը հակառակ սկսում են զարգանալ նրա շրջակայքում գտնվող գավառներն ու բնակավայրերը՝ Ջանգեգուրը, Ջեբրայիլը, Ջևանշիրը, Գյուլիստանը, Աղդամը, Բարդան, Կարյազինը: Վերոհիշյալ բնակավայրերը խզում են իրենց կապերը մայրաքաղաքի հետ և անմիջական հարաբերություններ ստեղծում նոր ձևավորվող ու ավելի կարևոր հանգույցների հետ: Բնականաբար Շուշիի ապրանքային և դրամական շրջանառության ծավալների կտրուկ անկումն անխուսափելի էր:

8) 20-րդ դարի սկզբներից սկսած՝ Ղարաբաղի դաշտավայրում վխտող թուրքախոս ցեղերն անցան նստակեցության: Կլիմայական բարեխառն պայմանները, բերրի հողերը, ջրային պաշարների բավարար չափը նպաստում են թանկարժեք բույսերի, հատկապես բամբակի մշակմանը: Ջարգանում է նաև շերամապահությունը: Տեղերում բացվում են մանարաններ: Շուշին կորցնում է մանածագործական կենտրոն լինելու երբեմնի համբավը:

9) Այդ ամենին գումարվեցին 1905-1906 թվականների հայ-թաթարական ընդհարումները: Հրդեհի ճարակ դարձան ոչ միայն բնակելի տները, այլ նաև խանութները, արտադրական ձեռնարկությունները: Դրանք մեծ մասամբ այդպես էլ չվերականգնվեցին:

10) Պակաս կործանարար չէր նաև առաջին համաշխարհային պատերազմը, որին զոհ դարձան հարյուրավոր շուշեցիներ:

Այդ ամենն իր բացասական ազդեցությունն է ունենում քաղաքի հասարակական կյանքի, մարդկային հարաբերությունների վրա: Խախտվում է կյանքի բնականոն ռիթմը:

Ժամանակին շուշեցի նշանավոր մտավորականներից մեկը՝ «Փայլակ» թերթի խմբագիր Լևոն Վարդապետյանը, նկատել է. «Հասարակականություն, հասարակական շահ գոյություն չունի շուշեցու համար, նա ապրում է սահմանափակած առօրեայ անձնական շահերով, դորա համար և Շուշում գոյություն ունի և զարգանում է ոչ թե հասարակություն, այլ քաղքենութեան քարացած մի մասսա:

Երերում է ամբողջ աշխարհս, ազգեր են փշանում, ազգեր ոտքի կանգնում, իսկ շուշեցուն ոչինչ չի հետաքրքրում, լինի նա ինտելլիգենտ թե յետին մշակ: Նրա մտքերը, նրա շահերը Շուշայ քաղաքից ու ամառային կյուրից հեռու չեն գնում: Փորձեցեք շուշեցու, նույնիսկ ամենաինտելլիգենտի հետ խօսել քաղաքում գոյություն ունեցող որևէ հասարակական հիմնարկութեան մասին, խիստ քննադատութեան կենթարկէ նա ամէնը, հրաշալի ծրագիրներ կառաջարկէ գործունեութեան, իսկ երբ առաջարկեն գործելու այդ հիմնարկութեան մեջ, երբ կըզայ նոյն հիմնարկութեան վերանորոգման օրը, նա թագ կը կենայ այստեղ այնտեղ կը փսփսայ, կուլիսների յետևից կը գործէ: Այդ է պատճառը, որ Շուշում բոլոր ընտրությունների ժամանակ լինում են շատ անակընկալ երևույթներ: Ընտրվում են պատահական մարդիկ, նրանք, որոնք ամենից յաջող կերպով կարողանում են խանութներում, մութ անկիւներում գործել, խտրություն չդնելով ոչ մի միջոցի մեջ:

Մի խօսքով Շուշին մի ճահիճ է, որի մեջ նեխած հոտերից փախուստ է տալիս ամեն մի գիտակից մարդ, որ մեջ արմատ չի բռնում ոչ մի բուսականություն: Եւ եթէ այդ ճահիճը ներկայ համաշխարհային ցնցումներից ևս չպատուի ու նոր հոսանքներ չընդունի իր մեջ, նա յալիտեան նեխած կը մնայ: ... Անշուշտ այդ բոլորը ունի իր խոշոր տնտեսական ու պատմական պատճառները»<sup>622</sup>:

Վերոհիշյալ պատճառները տխուր հետևանքներ ունեցան Շուշիի համար: Սարերով, անդնդախոր ձորերով, կուսական անտառներով շրջապատված, գեղանկարչական սքանչելի անփութությամբ, թերակղզու տեսք ունեցող սարահարթին փռված բերդաքաղաքն ավելի ու ավելի էր մեկուսանում և ապրում անպաճույճ ու անհեռանկար կյանքով:

Այսպիսով, ցարական տիրապետության մեկ դարը, Ռուսաստանում և տարածաշրջանում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացները Շուշիին բերեցին վերելք ու հռչակ, իսկ այդ պատմական փուլի վերջին շրջանում՝ հիասթափություն և անկում:

<sup>621</sup> «Փայլակ», հմ. 87, 20 նոյեմբերի, Շուշի, 1916:

<sup>622</sup> «Փայլակ», հմ. 60, 7 օգոստոսի, Շուշի, 1916:

## ե) Շուշիի մշակութային կյանքի վերընթացը 1813–1917 թվականներին

19-րդ դարի սկզբներին Շուշիում տնտեսության մեջ տեղի ունեցած դրական տեղաշարժերը խթանեցին նաև մշակութային կյանքի աշխուժացմանը: Օրեցօր փոփոխվող կյանքը նոր խնդիրներ էր դնում մշակութային գործիչների առջև:

Լուսավորության տարածումը, դժնդակ ժամանակներին դիմակայած ժողովրդին գրին ու գրականությանը հաղորդակից անելը դառնում էին հայ գործիչների առաջնահերթ խնդիրներից մեկը:

Շուկայական հարաբերությունների վրա հենված տնտեսությանն անհրաժեշտ էին կրթված և բանիմաց գործիչներ:

Նոր ժամանակը հրամայաբար թելադրում էր, որպեսզի մատաղ սերնդի կրթության գործը համապատասխանեցվի իր պահանջներին, այն է՝ աշխարհականացմանն ու ժողովրդականացմանը, մանկավարժական առաջավոր մեթոդների և կրթական մասնավոր համակարգի կիրառմանը:

1805 թ. Շուշեցի Մելիք Ագարյանը բացում է մասնավոր դպրոց, որտեղ սովորում էին 35 աշակերտներ<sup>623</sup>: Նույն թվականին Հակոբ Յուզբաշյանի բացած դպրոցում սովորում էին 45 աշակերտներ<sup>624</sup>:

Դարասկզբին Գանձասարի և Ս. Հակոբա վանքերին ու Շուշիի եկեղեցուն կից գործում էին դպրոցներ: Առաջին երկու դպրոցներում բեղմնավոր գործունեություն էր ծավալել Հովսեփ վարդապետ Տեր Ավագյանը (Արցախեցի), որը հեղինակել է աստվածաբանական, ճարտասանական, քերականագիտական բնույթի աշխատություններ: Նրա աշակերտներից էր Պողոս վարդապետ Ղարաբաղցին, որի մոտ էջմիածնում սովորել է Մեսրոպ Թաղիադյանը, իսկ Թիֆլիսում՝ Ստեփանոս Նազարյանը և Խաչատուր Աբովյանը:

Մ. Թաղիադյանը պատմում է, որ «իմաստասեր», «գիտնական», վարդապետ Հովսեփ Արցախեցուն և Պողոս Ղարաբաղցուն շուշեցի հարուստները բերել էին տվել՝ իրենց որդիներին ուսուցանելու համար<sup>625</sup>:

Բարգավաճող հայկական քաղաքը դեպի իրեն էր ձգում տարբեր ազգերի ներկայացուցիչների:

1823 թ. Շուշի են գալիս Բազելի «Ավետարանական քարոզչական ընկերության» ներկայացուցիչներ Ավգուստ Կրեյսը, Ավգուստ Դիտրիխս, Ֆիլի-

ցիան Զարեմբան, Կառլ Պֆանտերը, Ֆրիդրիխ Շարենբերգը և Ֆրեդրիխ Յուդտը: Նրանք 1827 թ. հիմնում են ուսումնարան (Լեմսի շկուլը), որը պատրաստել է մեծ թվով ուսուցիչներ ու քարոզիչներ: Ուսումնարանում սովորում էին 10–18 տարեկան 134 աշակերտ: Բողոքականները վկայում են. «մանկունք զանազան դասակարգերից էին, բայց մենք աշխատում էինք, որ չքատուրներ լինին: Նոքա հասակով 10–18 տարեկան էին, մեծ մասամբ Ղարաբաղցի Հայք»<sup>626</sup>:

Բողոքականների հրավերով դպրոցում աշխատել են Հովսեփ վարդապետ Արցախեցին, Պողոս վարդապետ Ղարաբաղցին, Միրզա Ֆարուխը (Հարություն Ամիրխանյանը), սարկավագներ Բարսեղը և Մովսեսը:

1835 թ. Կովկասի կառավարիչ բարոն Ռոզեն առ Բլուդովը այսպես է բնութագրել Բազելյան քարոզիչներին. «Այս միսիոնարները բնակաւորեցան Շուշի քաղաքում Ղարաբաղի նահանգի, որտեղ հայ ազգաբնակչությունն անելի զօրեղ է, քան միսիլմանը, և յընթացս տասնուերեք տարուան ոչ միայն ոչ մի տեղ զաղթականութիւն չեն հաստատել, այլ մինչև անգամ քրիստոնեայ չեն դարձրել ոչ մի հեթանոս և ոչ մի մահմէդական, և պարապել են հոգևոր գրեանք հայերէն թարգմանելով: Դրպրոցներ հիմնելով՝ սոքա իրենց նկրտումները դարձուցել են, ինչպէս երևում է, հայ երիտասարդութեան վերայ»<sup>627</sup>:

Դպրոցում սովորեցնում էին հայերեն կարդալ և գրել, թվաբանություն և աշխարհագրություն, սերտում էին Հին և Նոր կտակարանները, վարժվում էին թարգմանության մեջ գրաբարից աշխարհաբար և հակառակը: Որոշ աշակերտների ուսուցանում էին նաև ռուսաց լեզու:

Միսիոնարների բացած դպրոցն իր գործունեությունը շարունակեց մինչև 1837 թվականը:

Այդ դպրոցի շրջանավարտներից ոմանք հետագայում դպրոցներ են բացում Շուշիում և գավառի գյուղերում: 1829 թ. Շուշիում գործում էր Տեր Խաչատուրի մասնավոր դպրոցը՝ 10 աշակերտով, 1830 թ. Հ. Հարությունյանի դպրոցը՝ 15 աշակերտով, 1831 թ. Առաքել Սարկավագի դպրոցը՝ 50 աշակերտով<sup>628</sup>:

Ռուսաց լեզուն տեղական բնակչության մեջ արմատավորելու նպատակով 1830 թվականին կառավարության որոշումով Անդրկովկասում բացվում

<sup>623</sup> ՀԱԱ., ֆ. 56, ց. 1, գ. 78, թ. 9, 43:

<sup>624</sup> Մատենադարան, Կաթողիկոսական արխիվ, թ. 16, փ. 396, թ. 72:

<sup>625</sup> Թաղիադյան Մ., նշվ. աշխ. էջ 292:

<sup>626</sup> Ղուկասյան Հ., Բողոքականութեան հաստատուիլը Կովկասու հայոց մէջ, «Մեղու Հայաստանի», հմ. 53, 11 յուլիսի, 1885, Թիֆլիս, էջ 1–3:

<sup>627</sup> Ղուկասյան Հ., Բողոքականութեան հաստատուիլը Կովկասու հայոց մէջ, «Մեղու Հայաստանի», հմ. 55, 18 յուլիսի, 1885, Թիֆլիս, էջ 1–2:

<sup>628</sup> Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Շուշիի ռեալականը, էջ 9:

են 20 գավառական ուսումնարաններ, որոնցից մեկը՝ Շուշիում: Նորաբաց ուսումնարանում դասավանդում էին ռուսերենով:

Դպրոցի պահպանման համար Շուշիի հայությունը հանգանակում է 523 ռուբլի 16 կոպեկ<sup>629</sup>:

Ուսումնարանում սովորում էր 127 աշակերտ, որից 88-ը՝ հայեր: Այդտեղ դասավանդում էին 5 ուսուցիչներ, որոնցից մեկը վարիչն էր՝ հայագրի Մելքոն Խիտրովը, իսկ մյուսները՝ Կուզանովը, Բոյարդինը, Ա. Մելքոնյանը և մոլլա Ալահվերդիևը<sup>630</sup>:

Դպրոցում որոշ ժամաքանակ հատկացված էր նաև հայերենի ու թաթարերենի դասավանդմանը:

Շուշիի տեղական գավառական ուսումնարանը 1875 թ. վերափոխվում է և դառնում պետական քաղաքային դպրոց: Այն, որպես ոչ լրիվ միջնակարգ դպրոց, գործել է մինչև 1920 թ.:

1837 թ., ցարական կառավարության հրամանագրով արգելվեց Բագվեի քարոզչական ընկերության գործունեությունը: Նույն թվականին էլ կայսերական հրամանով Շուշի փոխադրված Ղարաբաղի թեմի կոնսիստորիայի նախագահ նշանակվեց ժամանակի նշանավոր քաղաքական-մշակութային գործիչ, Հասան-Ջալալյան մեծանուն տոհմի շառավիղներից՝ Բաղդասար Միտրոպոլիտը (1775-1854 թթ.), որը մեծագույն նպաստ բերեց Արցախի կրթական-մշակութային կյանքի աշխուժացմանը: Նրա ջանքերով էլ 1838 թ. հիմնվեց Շուշիի թեմական դպրոցը, որն անուրանալի դերակատարություն ունեցավ արցախահայության կյանքում:

Սկզբում դպրոցն ուներ 3 դասարան, որտեղ սովորում էին 65 աշակերտներ, դասավանդում էին 2 ուսուցիչներ<sup>631</sup>: 1886/87 ուսումնական տարում թեմականն արդեն ուներ 359 աշակերտ, 1893-1896 թվականներին՝ 400-500, իսկ 1896-1904 թվականներին՝ 506-588 աշակերտ<sup>632</sup>:

Ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում թեմական դպրոցը 1844 թ. փակվում է: Թեմի առաջնորդի խնդրանքով ժողովրդի կողմից որոշ միջոցներ հատկացնելուց հետո դպրոցը 1845 թ. օգոստոսի 17-ին նորից վերաբացվեց:

<sup>629</sup> Арутюнян Г., Просвещение и школа в Шуши как фактор национально-культурного возрождения Восточной Армении, «Աշխատանքային տետր», 1-2, Երևան, 2013, էջ 107:

<sup>630</sup> Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 46-48; Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 183:

<sup>631</sup> ՀԱԱ, ֆ. 56, գ. 3, փ. 293:

<sup>632</sup> «Փայլակ», հմ. 39, 23 հուլիսի, Շուշի, 1915:

Օրեցօր թեմականի բյուջեն դառնում է կայուն: Ստեղծվում է հոգաբարձուների խորհուրդ, որը հաճախակի հանգանակություններ էր կատարում ինչպես Շուշիում, այնպես էլ Բաքվում, Թիֆլիսում, Մոսկվայում: Թեմական դպրոցի հիմնական բարերարներն էին շուշեցի մեծահարուստներ Աղա Անդրեաս-բեկ և Սարգիս-բեկ Քալանթարյանները, Անդրեաս և Մարտիրոս Խանդամիրյանները, Համբարձում-բեկ Սարուխանբեկյանը, Կարապետ Ղուլյանը, Համբարձում Խաչատրյանը, Սիմոն Կոստանդյանը, Համբարձում աղա Հախումյանը, Բարա Բեգլարյանը, Պետրոս Աղամալյանը, դուբաջի հայ տորոնագործներ Պողոս Գասպարյան-Ալեքսանյանցը, Սահակ Բեկլամյանցը, մոսկվայաբնակ ժամհարյան եղբայրները: Բաքվում հանգանակությունները կազմակերպում էին ծագումով շուշեցի Մարկոս Դուլուխանյանը, Իսրայել Բեգլարյանը: Բաքվաբնակ Մուսայել Շահկեղանյանը մի խանութ նվիրեց դպրոցին: 1893 թ. մոսկվայաբնակ Անդրեաս Խանդամիրյանի կտակի համաձայն 20 200 ռուբլի պահ է տրվում Մոսկվայի պետական բանկին, և ստացված տոկոսները՝ 900 ռուբլի, դրվում է հոգեբարձուների տրամադրության տակ<sup>633</sup>: Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շախյանը 1910 թ. Բաքվում և Թիֆլիսում հանգանակեց 25 130 ռուբլի<sup>634</sup>:

1913 թ. թեմական դպրոցի 75-ամյա հոբելյանը նշելու համար Վերին Թաղավարդ գյուղից սերված մոսկվայաբնակ վաճառական Բաղդասար Արզումանյանը 200 000 ռուբլու աննախադեպ նվիրատվություն կատարեց<sup>635</sup>: Նույն թվականին Միքայել Արամյանցը Շուշիում գտնվող 30 000 ռուբլի արժողության տունը նվիրեց թեմական դպրոցին<sup>636</sup>: Բարկեն և Զավեն վարդապետները 1913 թ. թեմականի համար հանգանակել են շուրջ 600 000 ռուբլի<sup>637</sup>:

1861 թ. Մաթևոս կաթողիկոսի կոնդակով Արցախի թեմի վանքապատկան կալվածքների կառավարումը հանձնվել է Շուշիի թեմական դպրոցի հոգաբարձուներին, որպեսզի ստացված գումարով պահվեր դպրոցը<sup>638</sup>:

Ցավոք, 1910 թ. Էջմիածնի Սինողը վերստին իր ձեռքն է վերցնում թեմի կալվածքների կառավարումը և դրա պատճառով թեմականը զրկվում է որոշ հասույթներից:

<sup>633</sup> Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 189, 192-193, 265-268, 464-465, 560:

<sup>634</sup> Նույն տեղում, էջ 598:

<sup>635</sup> Նույն տեղում, էջ 629:

<sup>636</sup> Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 633:

<sup>637</sup> Քոչարյան Ա., Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցի հիմնադրման 75-ամյակի տոնակատարություններն ըստ արխիվային վավերագրերի, «Կաճառ», հմ. 6, 2012, Շուշի, 2014, էջ 68:

<sup>638</sup> «Փայլակ», հմ. 64, 21 օգոստոսի, Շուշի, 1916:

Թեմական դպրոցի համար եկամտի հաստատուն աղբյուր ունենալու նպատակով քաղաքի հայկական թաղամասի ամեն մի ծուխ տարեկան 20 կոպեկ սրբադրամ տուրք էր վճարում<sup>639</sup>: Դպրոցի չքավոր աշակերտների կարիքները հոգալու նպատակով թեմականը հաճախակի կազմակերպում էր մշակութային միջոցառումներ, որոնցից ստացված հասույթը տրամադրվում էր հոգաբարձուների խորհրդին:

1855 թ. թեմական դպրոցը պարապմունքները կազմակերպում էր Ագուլեցոց եկեղեցու երեցփոխան Գրիգոր Խաչատրյանի տան երեք սենյակներում<sup>640</sup>: Թեմական դպրոցի աշխատանքները հարմարավետ շենքային պայմաններում կազմակերպելու համար Բաղդասար միտրոպոլիտը մի հողամաս է վերցնում և սկսում շինարարությունը: Շենքի կառուցումն իր վերջնական ավարտին է հասցնում Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանը: 1871 թ. սեպտեմբերի 17-ին հանդիսավոր կերպով օրհնվում է նոր շինությունը<sup>641</sup>: Թեմականի պարապմունքները կազմակերպվում էին նաև դպրոցի բակում գտնվող նախկին առաջնորդարանի շենքում, որի մուտքի գլխին Սարգիս արքեպիսկոպոսը 1878 թ. փորագրել է տվել «Աղաչեմ յիշել զիս յայնմ աուր, յորժամ բանք սպառին և գործք թագաւորեն»<sup>642</sup>:

Անդրեաս Խանդամիրյանի կտակած գումարներով Շուշիում 1894 թ. օրհորդաց դպրոցի համար շինարարություն է սկսվում: Այն ավարտվում է 1898 թ.: Սակայն հոգաբարձուների խորհուրդը, հաշվի առնելով, որ նորակառույցի պայմաններն ավելի հարմարավետ են, որոշեց նույն թվականի դեկտեմբերից թեմականի ուսումնական պարապմունքները կազմակերպել նոր դպրոցում: Նախկին շենքն էլ տրամադրվեց օրհորդաց դպրոցին<sup>643</sup>:

Թեմականի ուսուցիչները բարձր մտավոր պատրաստություն ունեին: Նրանց մեծ մասն ավարտել էր Ռուսաստանի և եվրոպական երկրների նշանավոր բուհեր:

«Մեղու Հայաստանի» թերթի լրագրողը գրել է. «... ուսուցչական խումբը բաւական ընտիր է Շուշու հոգևոր ազգային դպրոցում, հոգեբարձուք դպրոցաւեր և հոգացող ...»<sup>644</sup>:

Տարբեր տարիներ այստեղ դասավանդել են հայ մշակույթի նշանավոր դեմքեր Պերճ Պոռշյանը, Մակար Բարխուդարյանը, Սեդրակ Մանդինյանը, Պետրոս Շանշյանը, Մանուկ Աբեղյանը, Լևոն Մանվելյանը, Երվանդ Լալա-

<sup>639</sup> «Գործ», հմ. 11, 9 մարտի, Բաքու, 1914:

<sup>640</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 209:

<sup>641</sup> Նույն տեղում, էջ 367:

<sup>642</sup> «Բագուի ծայն», հմ. 121, 31 օգոստոսի, Բագու, 1913:

<sup>643</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 555:

<sup>644</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 67, 3 սեպտեմբերի, Թիֆլիս, 1880, էջ 2:

յանը, Արտաշես Կանայանը, Ստեփան Դեմուրյանը, Վրթանես Փափագյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Հրաչյա Աճառյանը, Արշակ Չիլինգարյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Թախտաջյանը (ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի հայրը), Ավետիք Տեր-Պողոսյանը, Հայրապետ Մուսայելյանը, Խաչիկ Սամվելյանը, Արշալույս Աստվածատրյանը, Գարեգին Խաժակյանը (որը 1915 թ. մեծ եղեռնի զոհ դարձավ) և ուրիշներ: Նրանց շնորհիվ թեմականում և մյուս դպրոցներում փոխվել են ուսուցման, դաստիարակության հին ձևերը, կազմվել նոր ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր:

Թեմականի բազմաթիվ սաներ՝ Սիմոն Հախումյանը, Կոստանդին Մելիք-Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան), Լեոն, Մուրացյանը, Արսեն Տերտերյանը, քիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը, Գաբրիել Ղուլիբեկյանը և ուրիշներ, իրենց կրթությունը շարունակելով արտասահմանյան բարձրագույն հաստատություններում, դարձել են նշանավոր գիտնականներ, մշակութային, հասարակական, պետական գործիչներ:

Թեմականն Արցախի և, մասնավորապես, Շուշիի հայության կյանքում անփոխարինելի տեղ ուներ: Այնքան մեծ էր նրա ժողովրդականությունը, որ 1913 թվականին դպրոցի 75-ամյա հոբելյանական միջոցառումները վերածվել էին տոնի: Ժամանակակիցը գրել է. «Եկեղեցում ասեղ զցելու տեղ չկար, հայերից շատերը խանութները փակել են և եկել եկեղեցի, այդտեղ են և տեղույս ռուսաց պրոգիմնագիայի բարձր դասարանների աշակերտները, իրենց ուսուցիչների հետ միասին, այդտեղ են արհեստատուրները ու համբարական դրոշակակիրները, ձեռքներին բռնած երփներանգ դրոշակները: ... յարակից փողոցներն ու տների պատշգամբները լեփ-լեցուն էին հազարաւոր ամբոխով»<sup>645</sup>:

Թեմականում ազգային դաստիարակությունը բարձր հիմքերի վրա էր դրված: 1903 թ., երբ ցարական հրովարտակով փակվեցին հայկական դպրոցները, նույն ճակատագրին արժանացավ նաև թեմականը: Մի շարք ուսուցիչներ ձերբակալվեցին:

Թեմականի շրջանավարտներից մեկը՝ Աբրահամ Կիսիբեկյանը, 1903 թ. դեպքերի մասին գրել է. «Վերցրինք մեր գրքերը, մեր ուսուցիչը նորից կրկնեց ու պատվիրեց մեզ սիրել մայրենի լեզուն և պինդ պահել, չմոռանալ մեր սիրելի դպրոցը: ... Նրա արցունքները թափվում էին, նա այլևս իրեն զսպել չկարողացավ ...: Չկար այլևս մեր սիրելի ու անզուգական Թեմական դպրոցը, բայց նա խորն էր թափանցել մեր հոգու մեջ և նա դրել էր արդեն մեր

<sup>645</sup> «Բագուի ծայն», հմ. 119, 24 օգոստոսի, Բագու, 1913:



կյանքի հիմնաքարը՝ լինել միշտ անձնվեր դեպի այդ ժողովրդի լեզուն, կուլտուրան ու նրանից ոչինչ չխնայել»<sup>646</sup>:

Դպրոցների վերաբացումից հետո Թեմականը շարունակել է գործել մինչև 1920 թվականի մարտյան ողբերգական դեպքերը: Հայկական թաղամասի հետ միասին թուրքերը ուսումնական այդ հաստատությունը նույնպես հրո ճարակ դարձրին:

Աղջիկների կրթության և դաստիարակության հարցերով մտահոգ հայ մտավորականները 19-րդ դարի 60-ական թվականներից Շուշիում ձեռնամուխ եղան նաև իգական դպրոցների բացման գործին: Դրանում մեծ էր Թեմական դպրոցի 1863-1865 թթ. տեսուչ Պետրոս Շանշյանի դերը: Պետրոս Շանշյանի տեղակալը՝ մեծանուն գրող Պերճ Պոռոջյանը, իրավամբ գրել է. «Շանշյանը դրեց մեր Ռուսաստանի հայ նոր սերնդի մեջ ինքնաձանաչության և ինքնագարգացման հիմնաքարը»<sup>647</sup>: Բոլոր առումներով այնքան մեծ էր այդ մտավորականի դերակատարությունը, որ նրա աշխատած տարիները Պ. Պոռոջյանը որակել է որպես «Ոսկե դար»:

1863 թ. Պ. Շանշյանի նախաձեռնությամբ Շուշիում հիմնվում է իգական դպրոց, որը գործել է մեկ տարի և փակվել<sup>648</sup>: Բայց Շանշյանը չվհատվեց: Այս անգամ նա փորձեց իր գաղափարներն իրագործել մեծահարուստ Համբարձում Հախումյանի տիկնոջ՝ Մարիամ Հախումյանի միջոցով: Տիկին Մարիամը ծագումով Մելիք-Շահնազարյանների տոհմից էր: Նա սկզբում իր տանը դաստիարակում էր 7 աղքատ աղջիկների:

Պետրոս Շանշյանը և Պերճ Պոռոջյանը կազմում են ապագա դպրոցի կանոնադրությունը, որտեղ նախաբանում նշվել է. «Շուշույ հայ տիկնանց միաբանությունը, շարժված լուսավորութեան սիրով և աղջկանց կրթութեան վսեմ նշանակությամբը ընտանեկան կենսա համար, որից կախյալ է ինչպես իրաքանչյուր մարդոյ երջանկությունը, այնպես և ազգի բարօրությունը, հաստատում է Շուշիումը օրիորդաց ուսումնարան ամեն կարգի աղջկաց համար»<sup>649</sup>: Կաթողիկոսի կողմից կանոնադրությունը հաստատվելուց հետո դպրոցի բացումը գործնականորեն իրագործվում է 1864 թ. ապրիլի 7-ին, որտեղ պատրաստելու էին «լուսավորյալ վարժապետուհիք և լուսավորյալ մայրեր»<sup>650</sup>:

Մարիամ Հախումյանը դպրոցին հատկացնում է իր տան հինգ սենյակները, իսկ թեմականի ուսուցիչները ձրիաբար պարապում էին:

Աղքատ ընտանիքներից օրիորդները, որոնք կազմում էին դպրոցի աշակերտուհիների 3/4-ը, ուսանում էին տիկին Մարիամի և նրան մոտ ազգական հարուստ կանանց հաշվին: Կարճ ժամանակամիջոցում Մարիամյան դպրոցն այնքան է առաջադիմում, որ թուրքերը մինչև անգամ աղաչում էին իրենց աղջիկներին նույնպես ընդունել: «Տիկին Մարիամ Հախումյանը թողած իւր շքեղ և շոայլ սալոնը, հագած աշակերտների համազգեստի ձևով և սպիտակ գոգնոցը կապած, առաւօտից մինչև կէս օր պտըտում էր աշակերտուհեաց մէջ, որի ձեռագործը ուղղելով, որի դասը կրկնելով և աղքատներին քաջալերելով նորանոր գրքերով և ընծաներով»<sup>651</sup>:

Մարիամ Հախումյանը վախճանվել է 1885 թ. հուլիսի 19-ին՝ Գանձակում: Նրա մարմինն ամփոփվել է հայրենի քաղաքի՝ Շուշիի Մեղրեցոց եկեղեցու գավթում: «Շուշին շատ քիչ է տեսել այդպիսի հանդիսավոր յուղարկաւորութիւն և թաղումն և շատ քչերն են արժանացել այն յարգանքին, որը վայելեց հանգուցեալ տիկին Հախումյանը: Կարելի է ասել, որ Շուշուայ բոլոր ազգաբնակութիւնը և բազմաթիւ գիւղացիք մասնակցում էին այդ սոյն հանդեսին ...: Թաղումը կատարուեցավ վերին աստիճանի շքեղութեամբ, քաղաքի բոլոր եկեղեցիներում պատարագ էր կատարվում: Թուրք ազնուականութիւնը, հոգևորականութիւնը և բոլոր համքեարը այցելեցին հագուցելոյ գերեզմանը, իսկ Խորշիդ-Բեգում խանումը Մէյթի դուլի խանի դուստրը դառն արտասուք էր թափում հանգուցելոյ գերեզմանին վերայ՝ ասելով. «Հայերը թաղում են այստեղ ամենախելօք և ամենաազնի Մայկօ խանումին»<sup>652</sup>:

Մարիամ Հախումյանի գործը վարակիչ էր: 1876 թ. Շուշիում բացվել է իգական նոր դպրոց: Այն 1885-1886 ուսումնական տարում փակվել է: Մեկտարյա ընդմիջումից հետո դպրոցը վերաբացվել է որպես երկդասարան իգական դպրոց: 1891 թվականից դպրոցը վերափոխվել և դարձել է չորսամյա: 1908-1909 ուսումնական տարում կրթօջախը գործել է 5 բաժանմունքով<sup>653</sup>:

19-րդ դարի վերջերին Շուշիում բացվում է ռուսական իգական Մարինսկու դպրոցը, որի աշակերտների մեծ մասը հայուհիներ էին: Այսպես, 1898 թ. 257 աշակերտուհիներից 240-ը հայուհիներ էին, 14-ը՝ ռուս, 2-ը՝ թաթար և մեկ վրացի<sup>654</sup>:

<sup>646</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 123:

<sup>647</sup> Պոռոջյան Պ., Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1964, էջ 215:

<sup>648</sup> Գ.Տ.Գ., Նամակ Շուշոյ, «Մշակ», հմ. 65, Թիֆլիս, 1877, էջ 2:

<sup>649</sup> Պոռոջեանց Պ., Ղարաբաղու Տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացուիլը, Շուշի, 1864, էջ 293:

<sup>650</sup> «Խորհրդային դպրոց», 27 հուլիսի, Երևան, 1987:

<sup>651</sup> Տիկին Ս., Տիկին Մարիամ Հախումեան, «Մեղու Հայաստանի», հմ. 63, 15 օգոստոսի, Թիֆլիս, 1885, էջ 2:

<sup>652</sup> Տիկին Ս., Տիկին Մարիամ Հախումեան, «Մեղու Հայաստանի», հմ. 63, 15 օգոստոսի, Թիֆլիս, 1885, էջ 1-2:

<sup>653</sup> Խուրդյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ., Երևան, 1987, էջ 378:

<sup>654</sup> Բալայան Վ., Արցախի պատմություն, էջ 210:

Նոր ժամանակները պահանջում էին աղջիկների կրթության և դաստիարակության գործին մեծ ուշադրություն դարձնել: 1913 թ. ողջ Կովկասում կար 54 իգական գիմնազիա, որտեղ սովորում էր 20 539 աշակերտուհի, որոնցից ռուսներ էին՝ 11 640 հոգի (56,6%), հայեր՝ 4102 (19,9%), վրացիներ՝ 2428 (11,8%), թուրքեր՝ 156 (0,7%)<sup>655</sup>:

1874–1875 ուսումնական տարում Խորեն Ստեփանեի, Ղազարոս Աղայանի, Համբարձում Հախումյանի ջանքերով Շուշիի Կուսանաց անապատին կից բացվում է երկսեռ դպրոց, որտեղ սովորում էին 20 աղջիկ և 12 տղա<sup>656</sup>:

1862 թ. բացվեց Ագուլեցոց եկեղեցական–ծխական դպրոցը: 1865 թվականից Դորպատի համալսարանի շրջանավարտ Ա. Աբրահամյանի նախաձեռնությամբ սկսել էր գործել Շուշիի հայ բողոքականների դպրոցը: 1870–ական թվականներից սկսած Շուշիում գործել են Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցուն կից դպրոցը, Վերին թաղի Թաղևոսյան արական–ծխական դպրոցը, Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գավթում Գայանե Դանիելյանի երկսեռ կրթարանը:

1875 թ. փետրվարից Շուշիում իր աշխատանքները մեկնարկեց Խորեն վարդապետ Ստեփանեի մասնավոր ուսումնարանը<sup>657</sup>: 1884 թ. դեկտեմբերի 26–ին թեմականի տեսուչ Հ. Տեր–Գրիգորյանի նախաձեռնությամբ Շուշիում սկսեց գործել Ս. Հռիփսիմե Կուսանաց անապատի հոգևոր ծխական դպրոցը: Սկզբում այն տեղակայված էր եկեղեցուն մոտ գտնվող Արզուման Բաբայանի տանը<sup>658</sup>:

1881 թվականից քաղաքում գործում էին մի քանի մասնավոր դպրոցներ՝ Ա. Բաղդասարյանի՝ 29 աշակերտ, Ա. Պարոնյանի՝ 40 աշակերտ, Ա. Տեր–Գրիգորյանի՝ 30 աշակերտ, Ս. Տեր–Հովհաննիսյանի՝ 35 աշակերտ, Վ. Շախունցի՝ 30 աշակերտ<sup>659</sup>:

Արցախահայության կյանքում կարևոր երևույթ էր 1881 թ. Շուշիի ռեալական ուսումնարանի բացումը: Դպրոցը պետական էր, որտեղ ուսուցումը տարվում էր ռուսերենով: Քննարկվող ժամանակաշրջանում Կովկասում գործող ռեալական 9 դպրոցները նպատակ ունեին ազգային փոքրամասնությունների շրջանում տարածել ռուսաց լեզուն:

Քանի որ այն միջնակարգ դպրոցի կարգավիճակ ուներ, նրա շրջանավարտները կարող էին ուսումը շարունակել ռուսական և եվրոպական բուհերում, ուստի այն ինչ–որ ձևով սպառնալիք էր դառնում հայկական

դպրոցների, մանավանդ՝ թեմականի համար: «Այնուհետև այս դպրոցը պիտի դառնար սուկ աղքատ դասակարգի սեփականություն,–գրել է Լեոն,– որովհետև Շուշու ունևոր դասակարգը, որ դրանից առաջ ստիպուած էր իր գաւակներին գոնէ գրագիտութիւն սովորեցնել թեմական դպրոցում, այժմ միանգամայն հեռանում էր նրանից: Հեռանում էր նոյն իսկ և փոքր ի շատև ունևոր արհեստաւորութիւնը, հեռանում էին նոյն իսկ այն տեսակ տարրերը, որոնք կարող էին ուրիշներից ստացած օգնութեամբ, ողորմութեամբ ուսում տալ իրանց երեխաներին»<sup>660</sup>:

Այդ ամենով հանդերձ ռեալական ուսումնարանն իր գոյության 40 տարիների ընթացքում մեծ դեր է ունեցել հայ ժողովրդի տնտեսական, հասարակական–քաղաքական, մշակութային կյանքի զարգացման գործում:

Սկզբնական շրջանում ռեալականի ուսումնական գործընթացը կազմակերպվել էր շուշեցի հարուստ Մովսես բեկի տանը, այնուհետև Կովկասի փոխարքայի որոշմամբ՝ հայոց թաղամասում 1901 թ. կառուցված մի փոքր շենքում: 1907 թ. դպրոցը գտնվում էր Լոռիս Մելիքով փողոցի վրա գտնվող «Մարդուն» հյուրանոցի դիմաց՝ Աթաբեկյանների տանը: 1901–1908 թթ. շուշեցի մեծահարուստ նավթարդյունաբերող Գրիգոր Առաքելյանի (Առաքելով) միջոցներով կառուցվում է ռեալականի նոր շենքը: Խոնարհված շենքի ձևատիպն առայսօր պահպանվում է հայ բարերարի կատարած գործի մասին գրությունը:

Ռեալական դպրոցի հայ աշակերտների թիվը տարբեր տարիներին տատանվում էր 68–ից 80 տոկոսի սահմաններում: Այսպես, 1911–1912 ուսումնական տարում ռեալականում սովորում էր 370 աշակերտ, որից 252–ը (68,1 տոկոսը) հայեր էին, 95–ը (25,7 տոկոսը) թուրքեր, 16–ը (4,32 տոկոսը) ռուսներ, 3–ը (0,81 տոկոսը) հույներ, 2–ը (0,54 տոկոսը) հրեաներ<sup>661</sup>: 1912–1916 թթ. ընթացքում ռեալականի աշակերտների թիվը հասավ 420–ի, որից 333–ը հայեր էին, 87–ը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ<sup>662</sup>: Ռեալական ուսումնարանում աշխատում էին 16–23 ուսուցիչներ: Նրանց մեծ մասը հայեր էին՝ Սեդրակ Մանդինյանը, Սիմոն Հախումյանը, Համբարձում Առաքելյանը, Հակոբ Խոջամիրյանը, Սամվել Գյուլգաղյանը, Գաբրիել Ղուլիքնիսյանը, բժիշկ Աղասարյանը, Ռուբեն Տեր–Գասպարյանը, Արշավիր Քամալյանը, Ջավադ Բեկ Իշխանյանը, բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Առաքել Առաքելյանը, Ալեքսանդր Հովհաննիսյանը, Ներսես Աղասա-

<sup>655</sup> «Բագուի ծայն», հմ. 109, 21 հուլիսի, Բագու, 1913:

<sup>656</sup> Арутюнян Г., նշվ. աշխ., էջ 112:

<sup>657</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 11, 22 մարտի, Թիֆլիս, 1875, էջ 3:

<sup>658</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, թ. 2:

<sup>659</sup> Խուրդյան Ս., նշվ. աշխ., էջ 383:

<sup>660</sup> Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 405–406:

<sup>661</sup> «Ղարաբաղ», հմ. 10, 18 դեկտեմբերի, Շուշի, 1911:

<sup>662</sup> Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 24:

րյանը, Միքայել Ղարաբեկյանը, Հարութ Մելիքյանը<sup>663</sup>: Ռեալական դպրոցի տնօրենն էր մաթեմատիկոս Ա. Իվանովը<sup>664</sup>:

Ռեալականի սաների մի մասն իրենց կրթությունը հետագայում շարունակել են Ռուսաստանի և Եվրոպայի նշանավոր բուհերում: Նրանք, հաղորդակից դառնալով ռուսական և եվրոպական առաջադեմ գաղափարներին և հասարակական, քաղաքական, մշակութային նոր զարգացումներին, վերադառնալով հայրենիք, իրենց գիտելիքներն ու փորձն անմնացորդ նվիրել են հայոց երկրի զարգացմանը: Այդ գործիչների շարքում իրենց արժանի տեղն ունեն բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Հովհան Գաբրիելյանը, Անդրեաս Արզումանյանը, Արշակ Հակոբյանը, Հայկ Միրզաբեկյանը, Գրիգոր Սաղյանը, Նիկոլայ Փիրումյանը, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Իվան Կնունյանցը, ՀԳԱԱ ակադեմիկոս Վաչե Իսազուլյանցը, գիտության վաստակավոր գործիչ Բահաթուր Բահաթրյանը, պրոֆեսոր Հայկ Գյուլիքնիսյանը, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Ռուբեն Գյանջեցյանը, ակադեմիկոսներ Արմեն Թախտաջյանը, Անդրանիկ Իոսիֆյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Սերգեյ Վարունցյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ Միքայել Շահնազարյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խորեն Սարգսյանը, վաստակավոր ինժեներներ Հովսեփ Տեր-Աստվածատրյանը, Մկրտիչ Յուզբաշյանը, Հովհաննես Մելիք-Փաշայանը, քիմիկոս, պրոֆեսոր Գրիգոր Տեր-Ղազարյանը, լեզվաբան, ՌԳԱ թղթակից անդամ Ռուբեն Ավանեսովը, պատմաբան, հասարակական գործիչ Դավիթ Տեր-Դանիելյանը (Դավիթ Անանուն), Հայաստանի ժողովրդական նկարիչ Միքայել Արուստյանը, կոմպոզիտոր, խմբավար Եղիշե Բաղդասարյանը, դրամատուրգ, երաժշտագետ Եկատերինա Բահաթրյանը (Բահաթուրը), ժողովրդական արտիստ Գուրգեն Գաբրիելյանը, կոմպոզիտոր-խմբավար Դանիել Ղազարյանը, ժողովրդական արտիստ, ռեժիսոր, մանկավարժ Տիգրան Շամիրխանյանը, ժողովրդական նկարիչ Ստեփան Աղաջանյանը, ՀԽՍՀ վաստակավոր ձարտարապետ, ԽՍՀՄ ձարտարապետության ակադեմիայի իսկական անդամ Սամվել Սաֆարյանը, հասարակական, քաղաքական, պետական գործիչներ Լևոն Աթաբեկյանը, Սարգիս Բաղդասարյանը, Ալեքսանդր Բեկզադյանը, Իսահակ Դովլաթյանը, Հովհաննես (Իվան) Թևոսյանը, Վլադիսլավ Կասպարովը, Սարգիս Կապյանը, Հակոբ Բեջանյանը (Հակոբ Կամարի), Լյուդվիգ Կնունյանցը, Բոգդան Կնունյանցը, Սար-

գիս (Սաքո) Համբարձումյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Լևոն Վարդապետյանը, հայ ազգային ազատագրական պայքարի նշանավոր դեմքերից Մարտիրոս (Մարտիկ) Սարուխանյանը: Ստեփան Լիսիցյանը իրավագիտրեն նկատել է, որ բարձրագույն ուսումնական հաստատություններին հայկական որևէ մարզ այնքան շրջանավարտ չի տվել, որքան Ղարաբաղը<sup>665</sup>:

1870–1880–ական թվականներին թեմական և քաղաքային դպրոցներից բացի, Շուշիում գործում էին 10 հայկական դպրոցներ<sup>666</sup>: 1895–1896 ուսումնական տարում Շուշիում կար 10 հայկական դպրոց, որտեղ սովորում էին 981 աշակերտ, դասավանդում՝ 36 ուսուցիչ: Ռուսական 2 տիպի դպրոցներում 543 աշակերտներից 349–ը և 30 ուսուցիչներից 25–ը հայեր էին<sup>667</sup>: Ցարական կառավարության 1897 թ. հունիսի 2–ի և 1903 թ. հունիսի 12–ի որոշումներով փակվեցին հայկական դպրոցները: Ցարիզմն ավելի դաժանորեն էր վերաբերվում հայկական դպրոցների նկատմամբ, որովհետև Կովկասում հայությունն էր, որ առավել շատ ընկալունակ էր ազատության գաղափարների նկատմամբ: Այդ առաջադեմ մտածելակերպի ձևավորման և տարածման օջախներ էին հայկական կրթական հաստատությունները:

Շուշիում շարունակեցին աշխատել միայն ռուսական գիմնազիան և ռեալական ուսումնարանը:

Քանի որ Շուշիի ռեալական ուսումնարանում հայության ազդեցությունը մեծ էր, Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուն կրթարանի ղեկավարությունից պահանջել է.

«1. բոլոր կարգադրությունները և հրամաններն արձակել անպայման ռուսաց լեզվով, նույնիսկ նոր ընդունված փոքրիկների համար:

2. Փոխել աղոթքի կարգը – նախ աղոթել ռուսերեն, ապա՝ հայերեն՝ հաշվի առնելով այն, որ պետականությունը բարձր է ազգությունից:

3. Գրադարանը մաքրել հայերեն և ռուսերեն կասկածելի գրքերից:

4. Առաջարկվում է հայ դասատուներին և աշակերտներին ռուսների ներկայությամբ միշտ խոսել ռուսերեն»<sup>668</sup>:

Հայությունը չվիհատվեց: Պայքարի արդյունքում 1905 թվականից հայկական կրթօջախները նորից շարունակեցին իրենց հայրենաշեն գործունեությունը: 1911–1913 թվականներին Շուշիում շարունակեցին իրենց աշխատանքները՝ թեմական հոգևոր դպրոցը՝ 289–300 աշակերտներով, Մարիամյանը՝ 250–269, եկեղեցական–ծխական միդասյա երկսեռ դպրոցներ, ուր սովորում էր 60 աղջիկ և տղա, Մեղրեցոց եկեղեցական դպրոցը՝ 70–122,

<sup>665</sup> Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը, էջ 23:

<sup>666</sup> «Դպրոց», ամսագիր, հմ. 4, մաս 1, 1875–1876, Վաղարշապատ, էջ 133:

<sup>667</sup> Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 29:

<sup>668</sup> Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 34:

<sup>663</sup> Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 24, Տեր Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 111:

<sup>664</sup> «Փայլակ», հմ. 24, 13 ապրիլի, Շուշի, 1917:

Թաղևոսյանը՝ 120–135, Ագուլեցոց դպրոցը՝ 50, քաղաքայինը՝ 250, ռեալականը՝ 400, Մարինսկի ռուսական օրիորդաց դպրոցը՝ 100 և մեկ մասնավոր տարրական դպրոց՝ 60 աշակերտներով<sup>669</sup>:

Շուշեցի մեծահարուստ Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Ղուկասյան եղբայրներն իրենց հանգուցյալ քրոջ հիշատակը հավերժացնելու նպատակով Ամենայն հայոց կաթողիկոսի տրամադրության տակ են դնում երկու հարյուր հազար ռուբլի և Շուշիում գտնվող քառասուն հազար ռուբլի արժողությամբ իրենց սեփական տունը՝ «Մարիամ Ղուկասյան» անունով օրիորդաց դպրոց հիմնելու համար: Էջմիածնին նվիրաբերած հիմնական դրամագլուխը պետք է մնար բանկում, իսկ ստացված տոկոսները նպատակաուղղվեին դպրոցի գործունեությանը<sup>670</sup>: Դպրոցը բացվել է 1914–1915 ուսումնական տարում և ունեցել լրիվ միջնակարգ դասընթաց: Դպրոցի առաջին տեսուչը Հայրապետ Մուսայելյանն էր, իսկ 1916 թվականից հետո՝ Ասլան Շահնազարյանը:

1916 թ. Շուշիում կար 45 ուսուցիչ<sup>671</sup>: 1913 թ. թեմական դպրոցի տեսուչն (տնօրեն) էր Ղազար Տեր-Ղազարյանը, 1914 թ.՝ Ալեքսանդր Ծատուրյանը (Ռուբենի), 1913 թ. Մարիամյան օրիորդաց դպրոցի ավագ ուսուցիչն (տնօրեն) էր Հովակ Ստեփանյանը, 1914 թ.՝ Հարություն Թումյանը, իսկ «Մարիամ Ղուկասյան» դպրոցինը՝ Հայրապետ Մուսայելյանը<sup>672</sup>:

1915–1916 ուսումնական տարում Շուշիում գործում էին հետևյալ կրթական հաստատությունները. պետական դպրոցներ՝ քաղաքային դպրոց. սա ուներ երեք բաժանմունք և չորս դասարան՝ յոթ տարվա դասընթացով, ռուսական Մարինսկի դպրոցը կամ պրոգիմնազիան բաղկացած էր երեք բաժանմունքից և երեք դասարանից՝ վեց տարվա դասընթացով, ռուսական ռեալական դպրոցը, որն ուներ երկու բաժանմունք և յոթ դասարան՝ ինը տարվա դասընթացով: Հայկական մասնավոր դպրոցներ. Մարիամյան օրիորդաց դպրոց, որն ուներ երեք բաժանմունք և չորս դասարան՝ յոթ տարվա դասընթացով, հայոց թեմական դպրոց, որը բաղկացած էր մեկ բաժանմունքից և յոթ դասարանից՝ յոթ տարվա դասընթացով, «Մարիամ Ղուկասյան» օրիորդաց դպրոցը բաղկացած էր ութ դասարաններից: Կային նաև երկսեռ տարրական ծխական դպրոցներ: Ագուլեցոց եկեղեցական ծխական դպրոցը ուներ երկու բաժանմունքներ, որտեղ աշխատում էին եր-

կու ուսուցիչներ: Մեղրեցոցն ուներ երկհարկանի առանձին շենք: Այն ուներ երեք բաժանմունք: Շուրջ երեք հարյուր աշակերտների սպասարկում էին չորս ուսուցիչներ: Կանաչ ժամի կամ Վերին թաղի եկեղեցական ծխական դպրոցը նույնպես առանձին շենք ուներ: Դպրոցը բաղկացած էր երեք բաժանմունքներից, որտեղ աշխատում էին չորս ուսուցիչներ<sup>673</sup>:

Վերոհիշյալ պետական և մասնավոր դպրոցները գտնվում էին հայկական թաղամասում:

Շուշիում հայկական դպրոցների ծաղկման վերջին շրջանում Ղարաբաղի գործկոմը հայ կրթական հիմնարկությունների աշխատանքը կազմակերպելու համար 1917 թ. ապրիլի 27–ին ստեղծում է «ժողովրդական տուն» հաստատությունը, որի գործունեությունը համակարգելու նպատակով կյանքի է կոչվում հանձնախումբ, որի կազմում ընդգրկված էին Ալեքսանդր Ծատուրյանը, Հայկ Հովակիմյանը, Հայրապետ Մուսայելյանը, Ռուբեն Տեր-Գալստյանը և Սիրանուշ Զաքարյանը<sup>674</sup>:

Շուշիում կրթական կյանքի նման պոթեկումը ենթադրում էր ունենալ նաև հարուստ տպագրական և հրատարակչական բազա: Հայ տպագրության գործը, 1512 թվականին սկզբնավորվելով Վենետիկում, երկար ժամանակ զարգանում էր օտար ավերում: 1771 թ. Էջմիածնում հիմնվում է տպարան: 1828 թ. հայրենի հողում՝ Շուշիում, Բագելի քարոզչական ընկերության կողմից ստեղծվում է երկրորդ տպարանը, որտեղ տպագրվում է մեսրոպատա առաջին գիրքը՝ «Պատմութիւն Սուրբ Գրոց» խորագրով: Չբավարարվելով Շուշիում կատարած հրատարակություններով՝ Բագելի քարոզչական ընկերությունը գրքերի մի մասը տպագրել է տալիս Մոսկվայում՝ Լազարյան ձեռնարանի տպարանում:

Ութ տարվա ընթացքում բողոքականները Շուշիում և Մոսկվայում տպագրել են 11 679 օրինակ հայերեն, 728 օրինակ պարսկերեն, 147 օրինակ թուրքերեն և 100 օրինակ եբրայերեն գրքեր<sup>675</sup>, որոնք կրոնական, բարոյախոսական, գիտական և ուսուցողական բնույթի էին: Հայերեն հրատարակված գրքերն էին.

1. Պատմութիւն Սուրբ գրոց (Թարգմանություն ռուսերենից), Շուշի, 1828 թ. 44 էջ:
2. Ընթերցուածք ի Ս. Գրոց հին կտակարանի (ի պիտոյ վարժարանաց), Շուշի, 1829 թ., 28 էջ:
3. Հավաքումն Աստուածային վկայութեանց, Շուշի, 1829 թ., 184 էջ:

<sup>673</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 302–305:

<sup>674</sup> «Փայլակ», հմ. 29, 30 ապրիլի, Շուշի, 1917:

<sup>675</sup> Տեր-Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 87:

<sup>669</sup> «Մշակ», հմ. 151, Թիֆլիս, 1913, «Ղարաբաղ», հմ. 2, 20 նոյեմբերի, Շուշի, 1911:

<sup>670</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հզեւոր դպրոցի, էջ 634–636:

<sup>671</sup> «Փայլակ», հմ. 96, 25 դեկտեմբերի, Շուշի, 1916:

<sup>672</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 250–251:

4. Պողոս Ներսիսեանց Ղարաբաղի, Համառոտ հայկական քերականութիւն, Շուշի, 1829, 30 էջ:
5. Հովսեփ Արցախեցի, Համառոտ բառագիրք ի գրաբարէ յաշխարհաբարն (ի պիտոյ համբակաց), Շուշի, 1830, 398 էջ:
6. Ժամանակի վերջն (թարգմանություն), Շուշի, 1832, 46 էջ:
7. Անտարանի ճշմարտութեան և զորութեան համար (թարգմանություն), Շուշի, 1833 թ.:
8. Կիրեղ Երուսաղեմցի, Ճառ վասն տասն հրամանաց հավատոց, Շուշի, 1833 թ. 46 էջ:
9. Ճանապարհորդութիւն առ բարեպաշտ կեանս (թարգմանություն), Շուշի, 1833 թ., 150 էջ:
10. Քարոզ ավագ ուրբաթ օրին համար, Շուշի, 1833 թ.:
11. Մեղքը խաղ անելու բան չէ (թարգմանություն), Շուշի, 1833 թ., 14 էջ:
12. Չամչեան Միքայել, Քերականութիւն հայկազեան լեզուի, Շուշի, 1833 թ., 328 էջ:
13. Վարդապետութիւն Քրիստոսի խաչին համար, Շուշի, 1833 թ., 77 էջ<sup>676</sup>:

Շուշեցի հրատարակիչներն առաջին անգամ գործածության մեջ են դնում աշխարհաբար լեզուն: Լեզվաբան Ս. Ղազարյանն իրավացիորեն նկատել է, որ Շուշիում հրատարակված առաջին գրքերի մեջ զգալի չափով տեսանելի է աշխարհաբար լեզվի հղկվածությունն ու մատչելիությունը<sup>677</sup>: Իսկ անվանի լեզվաբան Գ. Սևակի կարծիքով՝ Հովսեփ Արցախեցու և Պողոս Ղարաբաղցու ուսումնամեթոդական ձեռնարկները ոչ միայն 30–ական, այլև 60–ական թվականներին աշխարհաբար լեզվով հրատարակված լավագույն ձեռնարկներն էին<sup>678</sup>:

Բազելցի քարոզիչների Շուշիից հեռանալուց հետո տպարանը գնում է Բաղդասար մետրոպոլիտը և այն վերանվանում «Հայոց հոգևոր տեսչության տպարան»: Այդ տպարանում մինչև 1840 թ. հրատարակվեցին գեղարվեստական, կրոնական, պատմագիտական, փիլիսոփայական, քերականական բովանդակության 11 անուն գրքեր: 1837 թ. Բաղդասար մետրոպոլիտն ամենից առաջ տպագրեց Բայրոնի «Շիլիոնի կալանավորը»՝ Մ. Ջոհրաբյանի թարգմանությամբ: Այդ գիրքը Բայրոնի նշանավոր ստեղծագործության հայերենով առաջին հրատարակությունն էր: Լեոն գրել է. «Բաղդասար Մետրապոլիտի տպարանի անդրանիկ պտուղը եկեղեցական գիրք էլ չէր,

<sup>676</sup> Տեր Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 87–88:

<sup>677</sup> Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 399:

<sup>678</sup> Հայ գիրքը 1801–1850 թթ., Երևան, 1968:

այլ «Շիլիոնեան կալանավոր»–ը, տպուած 1837 թուականին դարձեալ Մետրապոլիտի թոյլտութեամբ: Տարաբախտաբար, մենք չունինք այդ տպագրութիւնը, բայց կասկած չը կայ որ սա Շիլլերի գործի այն թարգմանութիւն է, որ կատարել է մի ժամանակ բավական բեղմնաւոր գրող Մուվսէս Ջոհրաբեան Արցախեցին, ուր զինուորական ծառայող էր և ոստիկանական պաշտօններ է վարել Շամախում և Բագում»<sup>679</sup>:

Այնուհետև տպագրվում է Եսայի կաթողիկոս Հասան Ջալալյանի «Պատմութիւն կամ ինչ–ինչ անցից դիպելոց Յաշխարին Աղվանից», Շուշի, 1839 թ., Դերժավիի «Աստվածը», 1839 թ., Հովսեփ Արցախեցու «Առաջին մաս փիլիսոփայութեան, որ ասի տրամաբանութիւն, համառոտեալ ի բուն տրամաբանութենէ վարդապետին Կորդոնի», (Շուշի, 1840 թ.) գրքերը, ինչպես նաև կրոնական, գեղարվեստական և այլ բնույթի գործեր:

Բաղդասար մետրոպոլիտի մահվանից հետո (1854 թվական) տպարանի աշխատանքները կառավարում էր թեմի նոր առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանը: Տպարանի աշխատանքներն ընդլայնելու նպատակով Գևորգ եպիսկոպոսի խնդրանքով մոսկվաբնակ Հովհաննես Ստեփանյան–Հովնանյանցը Փարիզում գնում է մի նոր տպարան և ուղարկում Շուշի<sup>680</sup>: Թեմի առաջնորդը հայ մեծահարուստների նվիրատվությունների հաշվին պահում է տպարանը՝ այն անվանելով «Տպարան Սրբոյ Էջմիածնի»: Այս անգամ տպարանը տեղափոխվում է թեմական դպրոց, և շարունակվում է տպագրական գործի զարգացումը: Շուշիում կրթության և գիտության վերընթացի պայմաններում անհրաժեշտություն էր առաջացել հրատարակել պատմագիտական, լեզվագիտական, բանասիրական բնույթի աշխատություններ, դասագրքեր, քարտեզներ, բառարաններ, գեղարվեստական գործեր: Պերձ Պոռոջյանի թարգմանությամբ, 1864 թ., հայերեն լեզվով հրատարակվում է Կ. Եզյանցի «Ներքին կեանք հին Հայաստանի» աշխատությունը: 1888 թ. նույն տպարանում հրատարակվում է Մանուկ Աբեղյանի «Նմուշները» բանաստեղծությունների ժողովածուն: 1864–ից մինչև 1902 թվականը «Հայոց հոգևոր տեսչության» տպարանը տպագրել է 41 անուն գիրք:

Մեծավաստակ պատմաբան Լեոն իր աշխատանքային գործունեությունն սկսել է հենց այդ տպարանում: Նա այստեղ հրատարակել է «Ծայրեր», Շուշի, 1888 թ., «Կոյրի աղջիկը», «Սպանուած հայրը», Շուշի, 1891 թ., «Թաթախման գիշերը», Շուշի, 1892 թ., գեղարվեստական և պատմագիտական գործերը:

<sup>679</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 124.

<sup>680</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 27, 4 յուլիսի, 1859, Թիֆլիս, էջ 211:

1881 թ. Տիգրան Նազարյանը Շուշիում բացում է թարգմանչական գրասենյակ, որը պարբերաբար հրատարակում է մանկական գրքույկներ ու տետրեր և մատչելի գներով, շատ դեպքերում էլ՝ ձրի բաժանում աշակերտներին<sup>681</sup>:

Տիգրան Նազարյանը տպագրել է Կոստանտին Մելիք-Շահնազարյանի «Ղըրցե կրնանոց պընը փեշակը» կենցաղագրական երգիծապատումը, իր թարգմանությամբ՝ լեհ նշանավոր գրող Հենրիկ Սենկևիչի հայերեն առաջին գրքույկը՝ «Պոզնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը, ինչպես նաև՝ Անդերսենի «Սոխակը» և «Խոզարածը ու արքայադուստրը» հեքիաթները:

1881 թ. Միրզաջան Մահտեսի Հակոբյանի տպարանի բացումը մեծ խթան հանդիսացավ Շուշիում տպագրական գործի զարգացմանը: Տպարանը գործեց շուրջ 25 տարի: Այստեղ հրատարակվել են շուրջ 50 անուն գրքեր: Միրզաջան Մահտեսի Հակոբյանի տպարանում առաջին անգամ առանձին գրքով լույս է տեսել Րաֆֆու «Խենթը», Լեոյի «Վեպ թե պատմություն», «Վահան Մամիկոնեան», «Իմ յիշատակարանը», Ավետիք Բահաբոբյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» գործերը, Ֆիրդուսու «Շահնամեն», Գոգոլի «Տարաս Բուլբան», Ջոն Դրեյքերի, Ալֆոնս Դոդեի երկերը:

1896 թ. նույն տպարանում Երվանդ Լալայանի խմբագրությամբ լույս է տեսնում «Ազգագրական հանդեսի» Ա գիրքը: Մանուկ Աբեղյանը համագործակցում էր այդ տպարանի հետ, որտեղ հրատարակվում էին նաև նրա գրքերը: Միրզաջան Հակոբյանը մահացել է 1895 թ.՝ 78-ամյա հասակում:

Շուշիի հին հայկական գերեզմանատանը գտնվող նրա տապանաքարի վրա արձանագրված է. «Այսքան տարի աշխարհում ես ապրեցի, բացի սերից ոչ մի լաւ բան չտեսի»<sup>682</sup>: Լավատեսությամբ լցված հայրորդու ստեղծած գործին տխուր վախճան էր սպասում. 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ թուրք խուժանը վառում է Միրզաջան Մահտեսի Հակոբյանի տպարանը:

1885 թ. դեկտեմբերի 10-ին Ելիզավետպոլի նահանգապետն արտոնագիր էր տվել Սմբատ և Վասակ Դադյաններին՝ Շուշիում գրքերի կազմատուն բացելու համար<sup>683</sup>:

Բերդաքաղաքում տպագրական գործի զարգացմանն անդրադարձել է նաև «Տարագ» շաբաթաթերթը՝ արժանվույնս գնահատելով հայ իրակաության մեջ շուշեցի հրատարակիչների դերը: «Տպագրութեան արիեստը

Շուշում լաւ է դրած, այդտեղ կան երկու հարուստ տպարաններ, որոնց մէջ գործում են արագատիպ մեքենաներ:

Կովկասում Շուշին Թիֆլիսից յետոյ առաջին տեղն է բռնում հայերէն գրքերի հրատարակութեան գործում և այդ կողմից նա առաջ է անցել այնպիսի մեծ ու հայաշատ քաղաքից, որպիսին Բաքուն»<sup>684</sup>:

Միրզաջան Մահտեսի Հակոբյանի գործը շարունակեցին Բագրատ Տեր Սահակյանը և Մելքուն Բաբաջանյանը: Բագրատ Տեր Սահակյանի տպարանում հրատարակվել են 19 գրքեր, իսկ Մելքուն Բաբաջանյանինը՝ 13: Նրանց ստեղծած երկու տպարանները դադարեցին գործելուց 1920 թ. մարտի 23-ի Շուշիի ողբերգական դեպքերից հետո:

1905 թ. Շուշիում գործել է նաև ընդհատակյա բուլշևիկյան տպարան: 1912 թ. հայությունը մեծ շուքով նշեց հայ տպագրության 400-ամյակը և գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանը: 1912 թ. հոկտեմբերին տոնական միջոցառումներ տեղի ունեցան նաև Շուշիում: Այդ օրերին նշվեց նաև Շուշիում գրատպության սկզբնավորման 85-ամյակը: Այդ տարիներին Շուշիում տպագրվել է շուրջ 150 անուն գիրք:

Չնայած Շուշիում կար թուրքական առանձին թաղամաս, այնուամենայնիվ, թուրքերը հեռու էին տպագրական գործից և, անհրաժեշտության դեպքում, օգտվում էին հայկական տպարանների ծառայությունից:

Ի դեպ, ադրբեջանցի պատմաբանները խոստովանում են, որ իրենց երկրում ազգային գրահրատարակության գործն սկսել են խորհրդային կարգերի հաստատումից հետո<sup>685</sup>:

Շուշիի տպարաններում են տպագրվել նաև բերդաքաղաքի թերթերն ու ամսագրերը:

1874 թ. մինչև 1920 թ. մարտը Շուշիում լույս է տեսել 28 անուն թերթ և հանդես, որից 25-ը՝ հայերեն, 3-ը՝ ռուսերեն: Թուրքերենով մինչև 1921 թ. Շուշիում ոչ մի թերթ չի հրատարակվել: 1874 թվականին Շուշիում տպագրվում է առաջին պարբերականը՝ «Հայկական աշխարհ» ամսագիրը: Վերոհիշյալ հանդեսը Խորեն Ստեփանեի խմբագրությամբ հրատարակվել է թեմական դպրոցի տպարանում: Ամսագրում պարբերաբար հանդես էին գալիս մշակույթի նշանավոր գործիչներ Գրիգոր Արծրունին, Գրիգոր Իզմիրյանը, Համբարձում Առաքելյանը, Հովհաննես Քոջուբեկյանը, Մաղաքիա Պլուզյանը, Մովսես Աթաբեկյանը: Նրանց հողվածներում քննարկվել են դպրոցական գործի, կանանց կրթության, թատրոնի, երաժշտության, կեր-

<sup>681</sup> «Արձագանք», հմ. 1, 21 փետրվարի, Թիֆլիս, 1882, էջ 6:

<sup>682</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 68:

<sup>683</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 300, թ. 1:

<sup>684</sup> «Տարագ», հմ. 22, 16 յունիսի, Թիֆլիս, 1891, էջ 319:

<sup>685</sup> Халафов А., Библиотечное дело в Советском Азербайджане в 1920–1925 гг., Библиотеки СССР. Опыт работы, вып. 33, Москва, 1966, стр. 16–27.

պարվեստի, ճարտարապետության, հայ առաքելական եկեղեցուն առնչվող հարցեր: Այդտեղ տպագրվել են Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից հատվածներ: 1881 թ. հրատարակվել է Նիկողայոս Տեր-Ավետիսյանի «Քնար խոսնակ» գրական հանդեսը, որն ունեցել է ընդամենը մեկ համար:

Դրանից հետո մեկը մյուսի հետևից սկսեցին հրատարակվել նոր թերթեր ու հանդեսներ: Այդ շարքում իրենց ուրույն տեղն են ունեցել «Գործ» ամսագիրը (1882–1884 թթ.), խմբագիր հրատարակիչ՝ Սիմեոն Հախումյան, «Ազգագրական հանդես»-ի առաջին գիրքը (1896 թ.), խմբագիր հրատարակիչ՝ Ե. Լալայան, «Կոկոն» (1895–1896 թթ.), «Աշակերտական թերթիկ» (1896–1897 թթ.), «Կոունկ» (1898–1900 թթ.) թերթերը:

20-րդ դարի սկզբներին Շուշիում հասարակական-քաղաքական գործընթացների, ազգային-ազատագրական պայքարի աշխուժացման պայմաններում հրատարակվող թերթերի ամսագրերի թիվը քառապատկվում է: Մեծ մասսայականություն էր վայելում «Ղարաբաղ» եռօրյա թերթը (1911–1912 թթ.) խմբագիր հրատարակիչներ՝ Նիկոլայ Յարամիշյան, Սիմոն Տեր-Մինասյան, «Միություն» (1913 թ.) թերթը, աշակերտական խմբատիպ թերթեր «Միրած» (1913–1917 թթ.), «Ծիածան» (1916 թ.), խմբագիր՝ Մ. Պետրոսյան, «Սրինգ» (1917 թ.), «Աշակերտ» (1912 թ.), կուսակցական, քաղաքական բնույթի թերթեր՝ «Պայքար» (1914–1917 թթ.), «Փայլակ» (1915–1917 թթ.), հրատարակիչ՝ Լևոն Վարդապետյան, խմբագիր՝ Խաչիկ Սամվելյան, «Ապառաժ» (1917 թ.), խմբագիր՝ Հայրապետ Մուսայելյան, «Ասպարեզ», խմբագիր՝ Հ. Մուսայելյան, «Նեցուկ» (1917 թ.), խմբագիր՝ Աշոտ Հովհաննիսյան, «Եռանդ» (1917 թ.), «Աշխատանք» (1917 թ.), «Արցախ», (1919 թ.), «Ղարաբաղի սուրհանդակ», խմբագիր՝ Արշավիր Քամալյան, (1919 թ.), «Նոր կյանք», (1919 թ.): Նշված թերթերի մի մասի հրատարակման գործընթացը ղեկավարվում էր կոլեգիալ ձևով:

Այդ թերթերի և ամսագրերի խմբագրությունների հետ համագործակցում էին հայ մշակույթի, գիտության, գրականության երևելի դեմքեր, որոնց մեծ մասն ապրում էր Շուշիում: Դրանց թվում էին Համբարձում Առաքելյանը, Ալեքսանդր Քալանթարը, Հակոբ Խոջամիրյանը, Մահտեսի Առուստամյանը, Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Թորոս Թորամանյանը, Երվանդ Շահագիզը, Նիկոլայ Տեր-Ավետիսյանը, Լեոն, Խաչիկ Սամվելյանը, Լևոն Մելիքսեթրեկը, Վրթանես Փափագյանը, Միրզա Տեր-Սարգսյանը, Պետրոս Զաքարյանը, Իվան Զոհրաբյանը, Առաքել Առաքելյանը, Լևոն Վարդունին, Հայկ Մուսայելյանը, Ալեքսանդր Ծատուրյանը, Լևոն Աթաբեկյանը, Ստեփան Մանդինյանը, թեմական դպրոցի գերմաներենի ուսուցիչ,

Պետերբուրգի հնագիտական ինստիտուտի անդամ Էմիլ Ռեուլերը: Նրանք իրենց հոդվածներում քննության նյութ էին դարձրել հայ հանրությանը և, ընդհանրապես, մարդկությանը հուզող մշակութային, տնտեսական, հասարակական-քաղաքական բնույթի հարցեր:

Թերթերի և ամսագրերի միջոցով Արցախի և, մասնավորապես, Շուշիի հանրությունը հաղորդակից էր դառնում աշխարհի առաջադեմ գաղափարներին: Այդ ամենին գումարելով նպատակասլացությունն ու աշխատասիրությունը՝ արցախահայությունն ավելի էր շենացնում իր քաղաքն ու երկրամասը:

Շուշիում հրատարակվող ռուսալեզու թերթերը նույնպես տպագրվում էին հայ բարերարների նյութական միջոցներով և մտավորականների ջանքերով:

1911–1914 թթ. հայազգի խմբագիր-հրատարակիչ Շամիրբեկ Մելիք-Ղարազյոզովի ջանքերով լույս է տեսնում «Шушинский листок» թերթը: 1911 թվականի հունիսի 9-ից մինչև նոյեմբերի 23-ը լույս է տեսել գրական, հասարակական, քաղաքական այդ թերթի 37 համար, 1912 թվականի սեպտեմբերի 16-ից հոկտեմբերի 14-ը՝ 3 համար, 1914 թվականի հունիսի 1-ից օգոստոսի 24-ը՝ 21 համար<sup>686</sup>:

1913–1914 թթ. հրատարակվել է «Шушинская жизнь» պարբերականը: Թերթի խմբագիրն էր մասնագիտությամբ իրավաբան Ստեփան Մանդինյանը:

Մեզ հայտնի ռուսալեզու երրորդ պարբերականը «Голос народа» հասարակական, քաղաքական թերթը, Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանի հովանավորությամբ լույս է տեսել 1919 թ. փետրվարի 24-ին: Թերթի խմբագիրն էր Ռուբեն Շահնազարյանը:

Շուշիում հրատարակված պարբերականները հանդիսանում էին տարբեր հոսանքների գաղափարների տարածման ձայնափողեր, ունեին շեշտված դիրքորոշում հասարակական-քաղաքական այնպիսի հրատապ հարցերի նկատմամբ, ինչպիսիք էին ագրարային բարեփոխումների, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, մշակույթի ստեղծման, աշխարհաբար գրական լեզվի մշակման, հանրության առաջընթացի ապահովման և այլ օրախնդիր հարցեր: Միաժամանակ Շուշիի պարբերականներում հետաքրքիր տեղեկություններ էին տպագրվում աշխարհի տարբեր ժողովուրդների և երկրների պատմական անցքերի, կարևոր իրադարձու-

<sup>686</sup> Հարությունյան Յ., Շուշիի ռուսերեն պարբերական հրատարակությունները, «Կաճառ», հմ. 6, 2012, Շուշի, 2014, էջ 148:

թյունների մասին, որոնք արցախահայությանը հաղորդակից էին դարձնում գիտական արժեք ներկայացնող փաստերին, առաջադեմ գաղափարներին:

Շուշիի մտավորականությունը փորձում էր տպագրված գրքերն ու թերթերը հասցնել հանրության լայն շրջանակներին: Այդ նպատակով 1870-ական թվականներից սկսած գրատպության զարգացմանը զուգընթաց Շուշիում կազմակերպվում է նաև գրավաճառության գործը: Շրջիկ գրավաճառների փոխարեն երևան են գալիս առաջին գրախանութները: 1877 թվականին Գ. Հակոբյանը Շուշիում բացում է գրախանութ<sup>687</sup>:

Մովսիսյանը, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանը, Խորեն Ստեփանեն, Մելքոն Բարաջանյանը և ուրիշներ մեծ աշխատանք են կատարել գրավաճառության ուղղությամբ՝ բերդաքաղաքում և Արցախի մյուս բնակավայրերում կազմակերպել գրքերի տոնավաճառներ, կապեր հաստատել Ռուսաստանի և հայկական այլ գաղթօջախների հետ, նպաստել այդ վայրերում Շուշիում հրատարակված գրքերի, ամսագրերի, թերթերի տարածմանը:

Գրքերի տարածման ուղղությամբ կարևոր աշխատանք է կատարել նաև Շուշիի «Կրթասիրական ընկերությունը», որը կազմակերպել է դպրոցներին, գրադարաններին գրքեր մատակարարելու գործը, հիմնել փոքրիկ գրախանութներ Շուշիում, Նուխիի ազգային հոգևոր դպրոցում և այլ հայաշատ վայրերում<sup>688</sup>:

1885 թվականին Վահան Դադյանը Գրիգոր բեկ Ջալալյանի տան մի սենյակը վարձակալությամբ դարձրել էր գրախանութ:

Արդեն 1891 թվականին Շուշիում կար երեք գրախանութ<sup>689</sup>:

Ազգային լուսավորական գործի զարգացմանը նպաստում է հայ մտավորականության առաջադեմ գործիչների նախաձեռնությամբ 1858 թվականին Շուշիում հիմնադրված «Հայոց հասարակաց ընթերցարան» ընկերությունը, որը ղեկավարում էր քաղաքի վառ անհատականություններից մեկը՝ Ավետիս Բահաթրյանը: Այդ ընկերության կազմում էին Բաբա Բեկլարյանցը, Ներսես բեկ Աթաբեկյանցը, Պետրոս բեկ Աղամալյանցը<sup>690</sup>: Ընկերությունը 1859 թվականին քաղաքում բացում է գրադարան-ընթերցարան, որի աշխատանքներին օժանդակել են Աստվածատուր Շխյանցը և Բաբա Բաղադուղյանցը<sup>691</sup>:

1881 թվականին, մասնավոր մարդկանց նախաձեռնությամբ բացվում է գրատուն-ընթերցարան<sup>692</sup>:

1880-ական թվականներին Շուշիում մասնավոր գրադարան-ընթերցարանների բացման համար յուրօրինակ մի մրցակցություն է սկսվում:

1887 թ. հունիսի 1-ից Վահան Դադյանը Գրիգոր բեկ Ջալալյանի տանը վարձակալությամբ գտնվող իր գրախանութին կից հիմնում է գրադարան-ընթերցարան<sup>693</sup>:

Շուշեցի մտավորականները քաջ գիտակցում էին, որ տվյալ ժամանակաշրջանում մասսայական-տեղեկատվական միջոցների բացակայության պայմաններում մտավոր ունակությունների զարգացման և երիտասարդության շրջանում գեղագիտական ճաշակի ձևավորման գործում առանցքային դերակատարություն ունեն գրադարաններն ու ընթերցարանները: Պատահական չէ, որ դպրոցներին և հանրային հիմնարկություններին կից նույնպես բացվեցին գրադարաններ ու ընթերցարաններ: Շուշիի թեմական և ռեալական դպրոցներին կից գործում էին գրադարաններ և ընթերցարաններ:

1905 թ. Նվարդ ժամհարյանն իր հանգուցյալ ամուսնու՝ Մարգար ժամհարյանի 238 կտոր գրքից բաղկացած գրադարանը նվիրում է թեմական դպրոցի գրադարանին<sup>694</sup>:

1914 թ. ապրիլին Մուրացանի ճոխ գրադարանը՝ 3000 ռուբլու արժողությամբ, նրա ժառանգները նվիրել են թեմականին, որի շրջանավարտն էր մեծ գրողը<sup>695</sup>:

Հայոց Բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղում 1889 թ. գրադարան է բացվում: 1889 թ. գրադարանի պահոցներում եղած 1834 գրքի փոխարեն 1895 թ. կար արդեն 6723 գիրք<sup>696</sup>: 1914 թ. բարեգործականի ընթերցարանի են հաճախել 17 244 հոգի, իսկ գրադարանից օգտվել՝ 571<sup>697</sup>:

1897-1898 թթ. շուշեցի հայտնի գործիչներ Հ. Հախումյանի և Ղ. Դուրխանյանի նախաձեռնությամբ հիմնադրվում է գրադարան-ընթերցարան, որն ուներ 4000 կտոր հայերեն և ռուսերեն գիրք:

Շուշիի գրադարանները հարստանում էին ոչ միայն տեղական տպագրության հաշվին, այլ նաև տարբեր երկրներում հրատարակված գրքերն

<sup>687</sup> Արցախեցի, Շուշի, «Մեղու Հայաստանի», հմ. 149, 1 օգոստոսի, Թիֆլիս, 1881, էջ 2:

<sup>688</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, թ. 25, 26:

<sup>689</sup> «Մշակ», 9 հունվարի, Թիֆլիս, 1909:

<sup>690</sup> «Հորիզոն», հմ. 85, 25 ապրիլի, Թիֆլիս, 1914, էջ 92:

<sup>691</sup> Լալայան Եր., Երկեր, հ. 2, էջ 92:

<sup>692</sup> Յովակ, Շուշայ Բարեգործական ընկերութեան գործունեութիւնը, «Հորիզոն», հմ. 78, 15 ապրիլի, Թիֆլիս, 1914, էջ 3:

<sup>687</sup> «Մշակ», հմ. 41, Թիֆլիս, 1877, էջ 4:

<sup>688</sup> Հարությունյան Մ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ, 2010, էջ 59:

<sup>689</sup> «Նոր Դար», հմ. 134, Թիֆլիս, 1891, էջ 1:

<sup>690</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 42, 15 հոկտեմբերի, Թիֆլիս, 1860, էջ 331:

<sup>691</sup> «Կռունկ Հայոց աշխարհի», փետրվար, Թիֆլիս, 1860, էջ 147-148:



ու պարբերականները շահագրգիռ անձինք հասցնում էին բերդաքաղաք և դարձնում հայ ընթերցասեր հանրության սեփականությունը:

Միայն 1913 թ. Շուշիի գրադարանները ստացել են 56-ից ավելի հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն թերթեր և ամսագրեր<sup>698</sup>:

Շուշիի ամառային ակումբին կից գործում էր ընթերցարան<sup>699</sup>, որը դարձել էր քաղաքի բնակիչների ամենասիրված վայրերից մեկը:

Շուշեցի մտավորականները նախանձախնդիր հոգատարություն են ցուցաբերել նաև անցյալից ստացված ժառանգությունը՝ ձեռագիր մատյանները պահելու և ապագա սերունդներին փոխանցելու գործում:

Ընդհանուր առմամբ՝ ձեռագիր մատյանների ընդօրինակման ու պատկերագրողման աշխատանքներն Արցախում սկզբնավորվել են դեռևս միջնադարում: Խոշոր գրչակետերն են եղել Գանձասարում, Ամարասում, Թարգմանչաց վանքում, Խորանաշատում, Երից Մանկաց վանքում, Գոշավանքում, Գոտչավանքում, Ծարի Ս. Աստվածածնի կամ Գետամեջի վանքում, Թաղասեռում, Գանձակում, Շուշիում, Շամախիում:

Շուշիից մեզ են հասել 20, Զակամա երկրից՝ 35, Շամախուց՝ 15 ձեռագրեր<sup>700</sup>:

1762 թ. Շուշիում ձեռագիր մատյան է թողել Ռեթեոս վարդապետի աշակերտ Գրիգոր արեղան<sup>701</sup>: Պահպանվել է 1791–1792 թվականներին Շուշիում ընդօրինակված մատյաններից մեկը: Հիշատակարաններից մեկը գրվել է Շուշիում 1822 թ. Հայրույնյան պարոն Գևորգի և նրա որդի Ալեքսանի տանը<sup>702</sup>: Չնայած 19-րդ դարի սկզբներից Շուշիում հիմնավորվել էր տպագրական արվեստը, այնուամենայնիվ, ազգային լավագույն ավանդույթների համաձայն, բերդաքաղաքում շարունակվում էր դարերից եկած մատյանների ընդօրինակման գործը:

Այդ անխոնջ երախտավորներից էր Հովսեփ Արցախեցին, որը 1831 թ. ընդօրինակել է «Գիրք տեսական փիլիսոփայութեան», «Հաղագս տրամաբանութեանը» և Պաղտասար դպիրի բանաստեղծությունների ժողովածուն:

1850 և 1863 թվականներին Շուշիում անհայտ հեղինակի կողմից ընդօրինակվել են բանասիրական բնույթի ժողովածուներ<sup>703</sup>:

19-րդ դարում Շուշիում ընդօրինակվել է Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից»-ի առավել ամբողջական տարբերակը, Հարություն Ալամդարյանի «Համառոտ բառարան ի ռուսաց լեզվի ի Հայս», Միքայել Աստապատցու «Բժշկարանն» ու «Տոմարական աղյուսակը», Հարություն Մելքոնյանի «Քերականություն հայկազյան լեզվին», գեղարվեստական գրականության ընտրանու գլուխգործոցներ՝ «Պատմություն Պղնձե քաղաքին», «Պատմություն աղջկան և մանկան», «Խրատ Խիկարոյ», «Խրատ Նուշիրվանի», «Վարք Աղեքսանդրի» և «Բախտագուշակ»-ը: Այս ձեռագրի հեղինակը շուշեցի Անդրեաս Մուսայելյանն է<sup>704</sup>:

Շուշիում ընդօրինակվել և նկարագրողվել են մի քանի ավետարաններ: Դրանցից մեկը նկարագրող է Անդրեաս Մուսայելյանը<sup>705</sup>: Ավետարանի մեջ տեղ գտած հայկական այբուբենի աղյուսակը, Արարատը և Մայր Արաքսն ընդգծում են շուշեցի հայ մարդու անսահման սերը դեպի իր հինավուրց և Մեծ Հայքի խորհրդանիշները ու շեշտում ազգին ու հայրենիքին ծառայելու պատրաստակամությունը: Ավետարանի մեջ տեսանելի են նաև Արցախին հատուկ գույների խաղն ու շուշեցի աղջիկներին բնորոշ հագ ու կապը:

Շուշիում գրադարան-ընթերցարանների աշխատանքները կազմակերպելուն զուգընթաց՝ Ա. Բահաթրյանը, Պ. Բաբայանը և Պ. Աստվածատրյանը քաղաքում եղած ձեռագիր մատյանները պահպանելու և դրանք ուսումնասիրելու նպատակով ստեղծեցին մատենադարան, որը կոչվում էր «Հասարակաց մատենադարան Շուշու հայոց»<sup>706</sup>:

Ձեռագրերի հավաքման և պահպանման գործում անուրանալի մեծ աշխատանք է կատարել Խաչիկ վարդապետ Դադյանը: 1880-ական թվականներին Շուշիում աշխատելու ժամանակ նա հավաքել է շուրջ 115 ձեռագիր մատյաններ ու 600 հիշատակարաններ, հրովարտակներ, շահերի և այլ պետությունների անունից եկեղեցական կոնդակներ: Խաչիկ Դադյանի ձեռագրերի հավաքածուի մեջ էին նաև Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանիցը», Մովսես Խորենացու և Եղիշեի աշխատությունները: Այդ ամենի մեջ կային նաև գործեր պարսկերենով ու ռուսերենով: Խաչիկ վարդապետը Մաշադի Աքաբից 80 ռուբլով գնել է «Պատմագրութիւն Աքաբար Շահ Նինդիի» պարսկերեն ձեռագիրը, որը գրվել է 1787 թ.: Այնտեղ ներկայացված էր 1293 թ. մինչև 1787 թ. հնդիկների, թաթար-մոնղոլների արշավանքների և նվաճումների մասին: Վերոհիշյալ ձեռագիրը հետաքրքիր

<sup>704</sup> Հակոբյան Հ., Շուշիի մատենական ժառանգությունը, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 274:

<sup>705</sup> Մատենադարան, ձեռ. հմ. 10107:

<sup>706</sup> «Կռունկ հայոց աշխարհի», հմ. 2, Թիֆլիս, 1860, էջ 148:

<sup>698</sup> «Բագուի ծայն», հմ. 101, 22 հունիսի, Բագու, 1913:

<sup>699</sup> «Փայլակ», հմ. 61, 11 օգոստոսի, Շուշի, 1916:

<sup>700</sup> Հակոբյան Հ., Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13–14-րդ դարում, Երևան, 1989, էջ 32:

<sup>701</sup> Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հ. Ա., Երևան, 1984, էջ 109:

<sup>702</sup> Նույն տեղում:

<sup>703</sup> Մատենադարան, ձեռ. հմ. 3869, 2622:

տեղեկություններ է պարունակում նաև Հայաստանի ու հայ ժողովրդի մասին: Այդ ձեռագրի մեծ մասը Խաչիկ Դադյանը հետագայում հանձնել է Էջմիածնի գրադարանին<sup>707</sup>:

Դադյան տոհմի մեկ այլ ներկայացուցիչ՝ Գրիգոր քահանայի մասին Լեոն գրել է. «Փշրանքները պահել է հայ հասարակ մարդու մոլեռանդ սերը դեպի իր հայրենի ասանդը-այժմ իսկ ականատես ենք լինում, թե ինչպես մի հասարակ մարդ ջուխտ աչքի պես է պահում հին պապերից մնացած մի որևէ ձեռագիր, կամ տնային իր, լինի դա զենք թե զարդարանք: Դրանցից մեկն է եղել և թաղավարդի Գրիգոր քահանայ Դադեանցը, որ վախճանուել է մի քանի ամիս սրանից առաջ Շուշիում, թողնելով իր Սմբատ և Վահան որդիներին հին ձեռագրերի մի հարուստ ժողովածու (մինչև 33 հատ) ...»<sup>708</sup>:

Քննարկվող ժամանակաշրջանում Շուշիում բուռն զարգացում է ապրում գիտական միտքը, մասնավորապես՝ հայագիտությունը: Հասարակական-քաղաքական կյանքը նոր խնդիրներ էր առաջադրում նաև հոգևոր-մշակութային գործիչներին: Լուսավորության և, հատկապես, հայագիտության զարգացումը, դժնդակ ժամանակներին դիմակայած ժողովրդին գրին ու գրականությանը, համաշխարհային գիտության ձեռքբերումներին հաղորդակից դարձնելը հայ գործիչների առաջնահերթ խնդիրներից մեկն էր: Նոր ժամանակը հրամայաբար թելադրում էր, որպեսզի նախ և առաջ մատաղ սերնդի կրթության գործը համապատասխանեցվի իր պահանջներին, այն է՝ աշխարհականացմանն ու ժողովրդականացմանը, մանկավարժական առաջավոր մեթոդների և կրթական միասնական համակարգի կիրառմանը:

Դեռևս 18-րդ դարից Շուշիում ապրել են գիտական մտքի ներկայացուցիչներ, ժամանակագիրներ: Նրանցից նշանավոր էր Սրաբի Թառումյանցը: Նա մահացել է 1794 թ. մարտի 23-ին:

19-րդ դարի առաջին կեսերից Շուշիում հայագիտական մտքի կենտրոնի դերն ստանձնում է Ղարաբաղի Հայոց Թեմական հոգևոր դպրոցը, որտեղ տարբեր տարիների դասավանդել են հայագիտության ակնառու գործիչներ Պ. Պողոսյանը, Մ. Բարխուդարյանը, Ս. Մանդինյանը, Մ. Աբեղյանը, Լ. Մանվելյանը, Ե. Լալայանը, Ա. Կանայանը, Ստ. Դեմուրյանը, Վրթ. Փափագյանը, Հ. Աճառյանը, Ա. Չիլինգարյանը, Ն. Աբեղյանը, Ս. Մելիքյանը, Լ. Թախտաջյանը, Ա. Տեր-Պողոսյանը, Հ. Մուսայելյանը, Խ. Սամվելյանը և ուրիշներ: Նրանց շնորհիվ դպրոցներում փոխվել են ուսուցման հին ձևերը, կազմվել են նոր ուսումնական ծրագրեր և դասագրքեր՝ նպաստելով նոր սերնդի հա-

յագետների ձևավորմանը: Վերոնշյալ գործիչները ոչ միայն դասավանդել են, այլ նաև հենց այդ տարիներին ստեղծել համահայկական, ինչպես նաև համամարդկային նշանակության ստեղծագործություններ: Թեմական դպրոցում հաճախակի կազմակերպվում էին գիտաժողովներ, քննարկումներ, բանավեճեր: Թեմականում 1913 թ. կազմակերպվեց գիտաժողով՝ «Մանկավարժական գրույցներ» խորագրով, որին մասնակցեցին ուսուցիչներ Ղարաբաղի տարբեր դպրոցներից: Վերջին օրը փորձնական դասի միջոցով ամփոփվեցին գիտաժողովի արդյունքները<sup>709</sup>: Թեմականում կուտակված լավագույն փորձը կիրառվում էր Արցախի դպրոցներում:

Շուշիում հայագիտական մտքի զարգացումը հայ մտավորականներից պահանջում էր ուժերի գերլարում, քանզի ժամանակի պահանջներին համահունչ հայագիտության առաջընթացը հնարավոր էր միայն ռուսական արքունիքի կողմից տարվող մեծապետական-շովինիստական քաղաքականությանը դիմակայելու միջոցով: Հայ մտավորականների համառ ջանքերի շնորհիվ միայն Շուշիում հնարավոր դարձավ հայագիտական առարկաների դասավանդումը դպրոցներում: Նշված փաստի վկայություններից է նաև 1889 թ. «Նամակ ռուսական կառավարութեան կողմից նորից դպրոցներում կրօնի և հայոց լեզվի դասաւանդումը թոյլատրելու վերաբերյալ» գրությունը<sup>710</sup>:

19-րդ դարում Շուշիում հրապարակ են եկել բառարանագիտական և հայոց լեզվի քերականությանը նվիրված աշխատություններ: 1829 թ. Շուշիում լույս տեսավ Պողոս Ներսիսյանց Ղարաբաղցու «Համառոտ հայկական քերականութիւն», 1830 թ. Հովսեփ վարդապետ Արցախեցու «Համառոտ բառագիրք ի գրաբարէ յաշխարհաբարն (ի պիտոյ համբակաց)» ուսումնասիրությունները և 1840 թ.՝ «Առաջին մասն փիլիսոփայութեան, որ ասի տրամաբանութիւն» քերականութեան դասագիրքը:

19-րդ դարում, հայ իրականության մեջ ազգային ինքնագիտակցության բուռն վերելքի պայմաններում, ազգային հոգևոր արժեքները՝ ազգագրական, բանահյուսական անբավ հարստությունը ժողովելու, սեփական արմատները, լեզուն, պատմությունը ճանաչելու, ուսումնասիրելու ու համայն մարդկությանն այդ ամենը ներկայացնելու գործը հայտնվեց շուշեցի մտավորականների ուշադրության կենտրոնում:

1860 թ. շուշեցի Առաքել Բահաթրյանը և իր եղբայրները՝ Ալեքսանդրն ու Գրիգորը արցախյան բարբառով սկսեցին հավաքագրել հայկական հեքիաթները, գրույցները, զվարճախոսությունները, խաղիկները:

<sup>707</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 171, թ. 22-23:

<sup>708</sup> Բաբ. Առ., Մի քանի հնություններ, «Արծազանք», հմ. 9, 1 սեպտեմբերի, Թիֆլիս, 1885, էջ 121:

<sup>709</sup> «Բագուի ծայն», հմ. 102, 25 հունիսի, Բագու, 1913:

<sup>710</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., էջ 356:

Բահաթրյանի հավաքածուի 61 հեքիաթներից 12-ը Տիգրան Նավասարդյանը հրատարակել է «Հայ ժողովրդական հեքիաթների» չորս գրքերում (VI, VIII, IX, X): Վերոհիշյալ 12 հեքիաթների հետ միասին «Հայ ժողովրդական հեքիաթների» VI հատորի Ղարաբաղին հատկացված բաժնում 34 հեքիաթ ևս տպագրվել է: Մնացած 15 հեքիաթն անտիպ վիճակում պահվում է Հայաստանի ազգային արխիվի 484-րդ ֆոնդում:

Առաքել Բահաթրյանը Գերմանիայում բարձրագույն կրթություն ստանալուց հետո մանկավարժական գործունեություն է ծավալել Սիմֆերոպոլում, Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցում: Նա, Ղազարոս Աղայանի հետ համագործակցելով, ով 1878-1882 թթ. Շուշիի թեմական դպրոցի տեսուչն էր, ստեղծում է ընթերցարաններ, մեթոդական ուղեցույց-գրքեր՝ «Ուղեցույց հայ ուսուցչի» (1882 թ.), «Համառոտ գործնական հոգեբանություն» (1882 թ.), «Ծաղկոց» (1882 թ.), «Առաջին ընթերցարան»<sup>711</sup>:

1887-1889 թվականներին ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանը, աշխատելով Շուշիի թեմական դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, կազմակերպում է գրական խմբակ, որտեղ քննարկվում էին հայոց լեզվի, գրականության, բանահյուսության, պատմության հետ կապված հարցեր: 1891 թ. Շուշիում լույս է տեսնում Բահաթրյան գերդաստանի մեկ այլ ներկայացուցիչի՝ Ավետիք Բաբայի Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» գիրքը: Նա հին հայկական վիպական ժողովրդական երգերի, եկեղեցական շարականների ու աղոթքների միջոցով քննության է ենթարկել հայոց հին տաղաչափական արվեստի դրսևորման ձևերը: Եղիշե Չարենցը, բարձր գնահատելով այդ աշխատությունը, գրել է. «Սա է գիրք հանձարեղ եւ զարմանալի՝ գրված լինելով 1890-ական թվականներին մի ինչ-որ անհայտ շուշեցի ուսուցչի ձեռքով ...: Մեր հին եւ նոր տաղաչափական արվեստի հետ կապված բոլոր պրոբլեմները շոշափված եւ մասամբ հանձարեղ ինտուիցիայով լուծված են այստեղ. պրոբլեմներ, որ սրանից հետո ոչ միայն չեն դրվել ու արծարծվել մեր տեսական գրականության մեջ, այլ մինչև օրս չեն էլ հասկացվել:

Այս գիրքը էապես մի զարմանալի հանք է՝ գտնված հանձարեղ բնագրի տեր հեղինակի կողմից, որ դժբախտաբար, միմիայն բնագրով ցույց է տալիս, մատնանշում է հանքի գոյությունը, մերթ անգամ շոշափում է հանքի անխափան ջղերը, եւ որքան դեռ ընդհանուր կուլտուրա եւ ջանք են հարկավոր, որպեսզի մեր գրականագիտությունը՝ զնալով Բահաթրյանների

<sup>711</sup> Խենյան Է., ժողովրդագիտական նյութերի հավաքածու ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թթ. մինչև XX 60-ական թթ.), Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Երևան, 2007, էջ 340:

հետքերով, բաց անի, համակվի եւ օգտագործի մեր հին տաղաչափության հրաշալի հատկությունները:

Ըստ էության՝ մեր նոր գրականագիտությունը (Աբովյանից մինչև օրս) ունի ընդհամենը երկու ինքնուրույն, միանգամայն անօրինակ, համարյա հանձարեղ դեմք, կամ անուն: Դրանք են՝ Գեորգ Ախվերդյանը եւ ահավասիկ, այս մոռացված գրքի հեղինակ Ավետիք Բահաթրյանը<sup>712</sup>: Ավետիք Բահաթրյանը 50 000 բառամթերքով կազմել է նաև գավառական բառերի բառարան:

Հայ ազգագրության և բանահավաքչության մեջ իր ուրույն տեղն ունի Տմբլաչի Խաչանը (Կոստանդին Մելիք-Շահնազարյանց): Նա նյութերի հավաքումն իրականացրել է 1874-1930 թթ.: Շուշիում Տմբլաչի Խաչանը հավաքել է հեքիաթներ, հանելուկներ, օրհնանքներ, անեծքներ, շուտասելուկներ, առած-ասացվածքներ: Նրա առաջին ստեղծագործությունը՝ «Ղըլցե կնանոց պընըփեշակը»՝ գրված հայրենի բարբառով, աչքի է ընկնում գունեղ պատկերներով, ժողովրդական իմաստություններով, աֆորիզմներով, թևավոր խոսքերով: Տմբլաչի Խաչանին փառք բերեց «Զուռնա-տմբլա» ժողովածուն, որը լույս տեսավ 1908 թ., Վաղարշապատում:

4. Մելիք-Շահնազարյանի «Ժողովրդական բժշկարան» և «Տնայնագործությունը Ղարաբաղում» ձեռագիր հավաքածուները գիտական կարևոր արժեք ունեն: Այդ նյութերը պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում<sup>713</sup> և ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում:

4. Մելիք-Շահնազարյանը գրել է նաև մանկական ստեղծագործություններ, պիեսներ, կատակներ, թարգմանություններ:

Անգնահատելի է ականավոր ազգագրագետ Երվանդ Լալայանի դերը հայ ազգագրության և հնագիտության զարգացման բնագավառում: Ժնևի և Լոզանի համալսարաններում հիմնավոր կրթություն ստանալուց հետո՝ նա 1896 թ. Շուշիում հիմնեց «Ազգագրական հանդես»-ը: Իր շուրջը համախմբելով ժամանակի լուսավոր մարդկանց՝ Ե. Լալայանը նոր աստիճանի հասցրեց ազգագրական-մարդաբանական-հնագիտական աշխատանքների դրվածքը ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Կովկասում: Ընկերության և նրա անխոնջ ղեկավարի ջանքերով ժողովված բազմապիսի նյութերը հիմք հանդիսացան Վրաստանի և Հայաստանի պատմության թանգարանների հիմնադրման համար:

<sup>712</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 45:

<sup>713</sup> ԳԱԹ, 4. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, հմ. 3:

19-րդ դարում Շուշիում հայագիտության բնագավառում արժանի ներդրում է կատարել Միրզա Ֆարուխ Մինասյան Ամիրխանյանցը: Նա ծնվել է Դիզակում՝ 1798 թ.: 1805 թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Միրզա Ֆարուխը գերվել և տարվել է Պարսկաստան: Տիրապետելով արևելյան և եվրոպական մի շարք լեզուների, նա պետական ծառայության է ընդունվում և դառնում Թեհրանի սարդարի քարտուղարը: Պարսկական արքունիքում ստանում է Ֆարուխ անունը: 1826–1828 թթ., ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, նրան հաջողվում է փախչել գերությունից և հիմնավորվել հայրենի քաղաքում՝ Շուշիում: Բաղդասար արքեպիսկոպոս Հասան Ջալալյանը նրան մկրտում է: Այստեղ էլ նա, համագործակցելով Բագելի ավետարանական քարոզչական ընկերության ներկայացուցիչների հետ, ձեռնամուխ է լինում գիտական-ուսումնական աշխատությունների հատարակմանը: Միրզա Ֆարուխի առաջին կինը Թավրիզի թրքուհի էր, որը չի ցանկացել քրիստոնեություն ընդունել և բաժանվել է: Այնուհետև Միրզա Ֆարուխը Շուշիում ամուսնացել է հայուհի Խանումի հետ, ունենցել հինգ զավակներ: Մահացել է 1855 թ. նոյեմբերի 11-ին: Նրա մարմինն ամփոփվել է Շուշիի հայկական գերեզմանատանը: Շիրմաքարի վրա արձանագրված է. «Լուսահոգի գիտնական Միրզայ Ֆարուխի Մինասեան Ամիրխանեանց»<sup>74</sup>: Շիրմաքարի հարևանությամբ գտնվում են կնոջ՝ Խանումի և դստեր՝ Եղիսաբեթի տապանաքարերը:

Պատմագիտության մեջ նա հայտնի է նաև Միրզա Յուսուֆ Ներսեսով անունով: Գրել է Ղարաբաղի պատմությունը պարսկերեն «Թարիխ-ե Սաֆի» (Ճշմարտացի պատմություն) պատմագրական երկը:

Միրզա Յուսուֆ Ներսեսովն իր երկասիրության մեջ ներկայացրել է Ղարաբաղի մեղիքությունների, խանության, 19-րդ դարի ռուս-պարսկական պատերազմների մանրամասները:

19-րդ դարում Շուշիում ազգագրության, հնագիտության, ընդհանրապես՝ հայագիտության զարգացումն անհնարին է պատկերացնել առանց Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի (1832–1906 թթ.): Նա ծնվել է Խաչենի Խանաձախ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի եկեղեցական դպրոցում, այնուհետև, 1862–1868 թթ., սովորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում: 1870 թ. ձեռնադրվել է վարդապետ: Եղել է տպարանի տեսուչ: 1876 թ. ստաձնել էր Զմյուռնիայի առաջնորդական փոխանորդի պաշտոնը:

1881 թ. Մ. Բարխուդարյանն աշխատանքի է անցել Շուշիի ռեալական ուսումնարանում: 1886–1887 թթ. դասավանդել է թեմական դպրոցում: Եղել

<sup>74</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 160:

է Շամախու թեմի առաջնորդ, Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ, Ազուլիսի Սբ. Թովմաս Առաքյալի վանքի վանահայրը:

Մակար Բարխուդարյանը, լինելով Արցախի պատմության խորագիտակ, դարձել է հայագիտական բնույթի բազմաթիվ հոդվածների հեղինակ: Իր գիտական աշխատություններն ընդհանրացրել է «Աղվանից երկիր և դրացիք» (1893 թ.) և «Արցախ» (1895 թ.) ուսումնասիրությունների մեջ: Նա մեզ է թողել նաև մանկավարժական բնույթի («Բարոյական առաձներ», «Չնաշխարհիկ տղա», «Միրզա Աննա») ժողովածուներ:

Հայագիտական մտքի նոր վերելքը Շուշիում կապված է հայ պատմագիտության երախտավոր Լեոյի (Առաքել Բաբախանյան) անվան հետ: Նա ծնվել է Շուշիում 1860 թ., ուսանել տեղի թեմական դպրոցում: Նրա՝ 60-ի հասնող կապիտալ աշխատությունների, հարյուրավոր հոդվածների մեջ ամփոփված են հայոց պատմության և գրականության բազմապիսի հարցեր: Լեոյի ուսումնասիրությունները գրված են հայրենասիրական շնչով ու լեզվական հրապուրիչ ոճով: Նրա աշխատությունների մի մասն առաջին անգամ հրատարակվել է Շուշիում, որի մասին խոսվել է վերևում:

19-րդ դարի վերջերին Շուշիում ապրել և ստեղծագործել է Դավիթ Անանունը (1879–1943 թթ.): Նոր շրջանի հայոց պատմության հարցերին է նվիրված նրա «Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում» եռահատոր աշխատությունը (հրատարակված 1916–1926 թթ.): Այստեղ նա անդրադարձել է արևելահայերի հողային հարաբերությունների, գյուղական համայնքի, առևտրի և արդյունաբերության զարգացման, քաղաքական կուսակցությունների, հասարակական հարաբերությունների և մշակույթի պատմության հետ կապված ամենաբազմազան խնդիրներին: Հայրենասիրական շնչով է գրված նրա «Ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածաշարը (1913 թ.):

1917–1923 թթ. Արցախի պատմության հարցերին է անդրադարձել Միրզա Տեր-Սարգսյանը (Միտասարը): Նա ականատեսի և դեպքերի մասնակցի հավաստիությամբ ներկայացրել է մեր պատմության կարևոր, երբեմն վիճահարույց հարցերի մանրամասները: Նրա գրչին է պատկանում «Կաթիլներ» խորագրով արձակ գործերի սովորաձավալ ժողովածուն, որը հրատարակվել է 1914 թ. Շուշիում:

Պատմագիտության զարգացման հաջորդ փուլը կապված է մեծանուն գիտնական, պետական, հասարակական, քաղաքական գործիչ Աշոտ Հովհաննիսյանի անվան հետ (1887–1972 թթ.): Նա ծնվել է Շուշի քաղաքում, նախնական կրթությունն ստացել ռեալական ուսումնարանում: 1906–1913 թթ. բարձրագույն կրթություն է ստացել Եննա, Հալլե և Մյունխեն քաղաք-

ների համալսարաններում: Այդ տարիներին նա ուսումնասիրել է 17-րդ դարի երկրորդ կեսի և 18-րդ դարի սկզբների հայ ազգային ազատագրական պայքարի մանրամասներն ու, եվրոպական արխիվներում պահպանված նյութերի հիման վրա 1913 թ. «Իսրայել Օրին և հայ ազատագրական պայքարը» թեմայով պաշտպանել գիտական թեզ: Համապատասխան կրթություն ստանալուց հետո Ա. Հովհաննիսյանը հայրենի քաղաքի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում դասավանդել է պատմություն:

Շուշիում ապրելու և աշխատելու տարիներին բարերար միջավայրի ազդեցության տակ ձևավորվում են նրա պատմագիտական հայացքները, որոնք էլ հետագայում նոր աշխատությունների ստեղծման հիմք են հանդիսացել:

Հայագիտության այն ժամանակների համար նոր ուղղության՝ հնագիտական-հետազոտական աշխատանքների հիմնադիրը դարձավ Խաչիկ Դադյանը, որը հրատարակչական և գիտամանկավարժական լայն գործունեություն էր ծավալել Շուշիում: Սովորել է Շուշիի թեմական դպրոցում, այնուհետև բերդաքաղաքում աշխատել որպես ուսուցիչ: 1884-1894 թթ. միաժամանակ զբաղվել է հնագիտական պեղումներով, վարել է զանազան պաշտոններ, կազմակերպել թանգարաններ, իրականացրել հետազոտական աշխատանքներ: Արցախում նա հնագիտական ուսումնասիրություններ է կատարել Առաջաձորում, Քոլատակ գյուղի շրջակայքում և Կաչաղակաբերդում: Նա միաժամանակ հավաքել է նաև հայոց պատմությանն առնչվող բազմաթիվ վավերագրեր և հանձնել Ս. Էջմիածին: Նմանատիպ աշխատանքներ Խ. Դադյանը կատարել է նաև Մակվում, Խոյում, Սալմաստում, Ուրմիայում: Նրա անվան հետ են կապված Զվարթնոցի, Դվինի, Արմավիրի պեղումները: Հավաքել է ժողովրդական երգեր, գրի առել Մեծ եղեռնի ականատեսների պատմածները և այլն: Հայագիտական մեծ արժեք ներկայացնող այդ աշխատանքներն այսօր պահպանվում են Հայաստանի Ազգային արխիվի՝ Խաչիկ վարդապետ Դադյանի ֆոնդում:

Շուշիի ռեալական ուսումնարանի ուսուցիչների նախաձեռնությամբ կազմակերպվել էր «Հնասերների ընկերություն»: Այդ ընկերության անդամները ծրագրել էին ուսումնասիրել Արցախի հնավայրերը, լուսաբանել պատմության չբացահայտված էջերը: Ընկերության աշխատանքներին ներգրավվել էին ուսումնարանի սաները, որոնք հետագայում դարձան ականավոր հայագետներ: Այդ խմբակի ղեկավարներից մեկը՝ ռեալականի ուսուցիչ Էմիլ Ռուսլերը, Շուշիի, Խոջալուի, Կարկառի և Խաչենի հովիտներում պեղումներ է կատարել: Հայտնաբերված արժեքավոր նյութերն այսօր

պահպանվում են Գերմանիայի, Սանկտ Պետերբուրգի, Մոսկվայի և Թիֆլիսի թանգարաններում:

Նշանավոր գրականագետ, մանկավարժ, հասարակական գործիչ, ծնունդով շուշեցի Լևոն Բաբայանը, բարձրագույն կրթություն ստանալով Գերմանիայում, իր աշխատանքային գործունեությունը շարունակել է հայրենի քաղաքում: Գրել է «Խոջալուի գերեզմանները» աշխատությունը, որի մեջ մանրամասն ներկայացված են 1890-ական թվականների Խոջալուի և Առաջաձորի հնագիտական պեղումների արդյունքները:

Շուշեցիները միաժամանակ իրենց նպաստն են բերել Արցախի սահմաններից դուրս՝ Հայոց աշխարհի մյուս նահանգներում, պեղումների կազմակերպման գործին: Այսպես, Անիի ավերակների ուսումնասիրությանը աջակցելու նպատակով շուշեցի Բեհբուդ բեկ Փիրումյանցը համաքաղաքացիներից 36 ուրվի գումար է հավաքել և ուղարկել Ալեքսանդրապոլում գտնվող հիմնադրամին<sup>715</sup>:

Բնագիտության ասպարեզում Շուշիում իրականացվում էին ուսուցողական և հետազոտական աշխատանքներ: Այդ ասպարեզում մեծ էր գիտության վաստակավոր գործիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավետիք Տեր-Պողոսյանի (1880-1954 թթ.) դերը: Սովորել է Ներսիսյան դպրոցում և Գևորգյան ճեմարանում: 1907 թ. ավարտել է Լայպցիգի համալսարանի բնագիտության բաժինը: Պաշտպանել է դոկտորական թեզ և, վերադառնալով հայրենի Շուշի, դասավանդել թեմական դպրոցում, այնուհետև՝ ռեալական ուսումնարանում: Նա այդ ուսումնական հաստատություններում ստեղծել է լաբորատորիաներ: Այդ գործը թեմական դպրոցում դեռևս 1879 թ. նախաձեռնել էր տեսուչ՝ բժիշկ Աղասարյանը, որը Պետերբուրգից բերել էր տվել համապատասխան լաբորատոր սարքավորումներ:

Երկրաբանության ասպարեզում 20-րդ դարի սկզբներին ծավալուն աշխատանք է կատարել գիտության վաստակավոր գործիչ, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ծնունդով շուշեցի Սամսոն Ապրեստովը: Նա մեծ ավանդ ունի Բաքվի նավթարդյունաբերության զարգացման գործում:

Մաթեմատիկայի պատմության, թվերի տեսության և անալիզի հետ կապված հարցերը լուսաբանել է ծնունդով շուշեցի, գիտության վաստակավոր գործիչ Բահաթուր Բահաթրյանը (1872-1934 թթ.):

Հայ գեղարվեստական խոսքի զարգացման գործում անչափ մեծ է Շուշիում ծնված և աշխատած գրողների դերը:

<sup>715</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 53, 26 մայիսի, Թիֆլիս, 1882, էջ 4:

19-րդ դարի սկզբներին Շուշիում աշխատել ու ստեղծագործել է Հովսեփ Արցախեցին<sup>716</sup>: Հայրենասիրական մեծ շնչով է գրված նրա «Սուրբ Վարդանանք» բանաստեղծությունը:

1851 թ. Շուշիում ծնվել և մինչև 1878 թ. այնտեղ ապրել է հայ արձակի խոշորագույն դասականներից մեկը՝ Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան, 1851–1908 թթ.): Նա լայն ընդգրկումների խոշոր գեղագետ է: Մուրացանի կարծիքով՝ ազգության, ինչպես և հայրենիքի պահպանման հիմքը գյուղացիությունն է: Ուստի պատահական չէ, որ նրա ստեղծագործություններում զգալի մաս է կազմում գյուղի և գյուղացիության թեման: Նա օժտված էր պատմականության խոր զգացողությամբ: Մուրացանը գրական ճանաչման արժանացավ «Ռուզան կամ հայրենասեր օրիորդ» (1881 թ.) պատմական դրամայով, որի ներկայացմամբ էլ հենց 1891 թ. բացվեց Շուշիի Խանդավիթյանի թատրոնի խաղացանկը: Նրա գլուխգործոցը «Գևորգ Մարգարեաբունի» պատմավեպն է:

1863–1864 թթ. Շուշիում մանկավարժական և ստեղծագործական աշխատանք է ծավալել Պերճ Պոռչյանը: Նա Շուշիում ապրելու տարիներին ուսերենից հայերեն թարգմանել–հրատարակել է Կ. Եզեանցի «Ներքին կեանք Հին Հայաստանի» աշխատությունը<sup>717</sup>:

1880–ական թվականներին Շուշիում ստեղծագործել են Նիկողայոս Տեր Ավետիքյանը և Սիմոն Հախումյանը: Ն. Տեր-Ավետիքյանի գրչին են պատկանում 12 անուն գրքեր, այդ թվում՝ «Վերածնության դար», «Տեղագրական նամականի» գրական երկերը:

Առանձին գրքով հրատարակվել են Ս. Հախումյանի «Մանիկ» վիպակը (1889 թ.) և Էդգրեն Լեֆլերից, Իբսենից, Օ. Շմիդտից կատարած թարգմանությունները:

1890–ական թթ. գրական ասպարեզում աչքի են ընկել Սամվել Գյուլգաղյանը, Լևոն Մանվելյանը:

Սամվել Գյուլգաղյանը գրել է պատմվածքներ, նովելներ, որոնց մի մասը հրատարակվել է արտասահմանյան պարբերականներում: Հատկապես նշանավոր են նրա թարգմանությունները: Առաջին անգամ պարսկերենից հայերեն են թարգմանվել Ֆիրդուսու «Ռուստամ և Ջոհրաբ»-ը, «Շահնամ»-ն և 1893 թ. տպագրվել Շուշիում: Լևոն Մանվելյանը գրել է վեպեր և դրամաներ: Իր ստեղծած հերոսներին նա բեմում ինքն էր ներկայացնում:

Գրական կյանքը Շուշիում նոր թափ է ստանում 20-րդ դարի սկզբներից: Այդ ժամանակ հանդես եկան Ջալալ Տեր-Գրիգորյանը, Գրիգոր Ներսիսյանը, Հակոբ Խանլարյանը, Լևոն Աթաբեկյանը:

Գիտության վաստակավոր գործիչ, հետազայում Հայաստանի գրողների միության անդամ, թարգմանիչ Ջալալ Տեր-Գրիգորյանը թարգմանել է Մ. Գորկու «Մրկահավի երգը», Վ. Շեքսպիրի «Անսանձ կնոջ սանձահարումը», Ն. Գոգոլի «Խելագարի հիշատակարանը», Յուլիան Սումբատովի «Դավաճանություն» ստեղծագործությունները:

Գրիգոր Ներսիսյանի ստեղծագործություններից նշանավոր են «Փոթորիկը», «Նոր տարին», «Ես հավատում եմ», «Արշալույսին» բանաստեղծությունները, «Ջախջախված ժանիքները» պիեսը, որը 1930 թ. բեմադրվել է Ստեփանակերտի հայկական դրամատիկական թատրոնում:

Հակոբ Խանլարյանի մի շարք բանաստեղծությունների տեքստերի հիման վրա կոմպոզիտորներ Ազատ Մանուկյանը, Դանիել Ղազարյանը, Արշալույս Այվազյանը երգեր են ստեղծել: 1919 թ. Շուշիում ուսերենով հրատարակվել է Հ. Խանլարյանի «Բանաստեղծություններ» ժողովածուն:

Լևոն Աթաբեկյանը հասարակական–քաղաքական գործունեությանը զուգընթաց գրել է քաղաքական, խոհական քառյակներ, բանաստեղծություններ և ժողովրդական մոտիվներով գրույցներ: Ղարաբաղի բարբառով գրված նրա «Մոր Նամակը», «Լաց մի ինիլ», «Չորանն ու Կարաբաշը» բանաստեղծությունները լայն ժողովրդականություն էին վայելում:

1881 թ. Նիկողայոս Տեր-Ավետիքյանը Շուշիում հրատարակել է «Քնար խոսնակ» գրական հանդեսը, որն ունեցել է միայն մեկ համար, որտեղ թարգմանաբար ներկայացվել են Պուշկինի, Լերմոնտովի, Հայնեի, Գյոթեի, Շիլլերի, Բայրոնի ստեղծագործությունները:

Շուշիի դպրոցներում, հասարակական վայրերում, մանավանդ՝ ամառային ակումբներում հաճախակի կազմակերպվում էին գրական–գեղարվեստական ցերեկույթներ, երեկույթներ, որտեղ ներկայացվում էին ինչպես հայ, այնպես էլ օտարազգի նշանավոր գրողների ստեղծագործությունները: Շուշեցի մտավորականների բնակարանները վերածվել էին գրական խմբակների:

Գեղարվեստական ճաշակ ձևավորող բաժրարժեք խոսքի տպավորության տակ էր ապրում շուշեցի հայ մարդը: Հազար անգամ իրավացի էր Սերգեյ Եսենինը. «Եթե նա բանաստեղծ չէ, նշանակում է շուշեցի չէ»<sup>718</sup>:

<sup>716</sup> Մատենադարան, ձեռ. 2835:

<sup>717</sup> Պերճ Պոռչեանի նամակները, «Գործ», ամսագիր, հմ. 3, Բագու, 1917, էջ 150–151:

<sup>718</sup> Есенин С., Собрание сочинений, Москва, 1962, стр. 205.

Շուշեցի հայ գրողները, գիտնականները, մշակութային տարբեր ոլորտների գործիչները նախանձախնդրորեն փորձում էին նպաստել քաղաքում ապրող թուրքերի շրջանում նույնպես առաջացնել մտավոր շարժում:

Պատահական չէ, որ 19-րդ դարի վերջերին թուրք մտավորականների կողմից ստեղծված գրական խմբակի առաջամղիչ ուժը դարձել էր Տեր Վահանը<sup>719</sup>: Հիշյալ ժամանակաշրջանում Շուշիում ապրել և ստեղծագործել են գրողներ Կասում-բեկ Ջաֆիրը (1784-1857 թթ.), Միր Մովսում Նավաբը (1833-1918 թթ.), Նաջաֆ-բեկ Վեզիրովը (1854-1926 թթ.), դրամատուրգ Աբդուռահիմ բեկ Հախվերդովը, գրաքննադատ Ֆիրիդուն-բեկ Ահմեդ-աղա օղլը Քոչարլին (1863-1920 թթ.):

Շուշիի մշակութային եռուզեռի պայմաններում աշխույժ ու բեղմնավոր է եղել Շուշիի թատերական կյանքը:

1840-ական թվականներից Շուշիում գործում էին սիրողական-թատերական խմբեր: Դպրոցների բարձր դասարանների աշակերտների և ուսանողների ուժերով կազմակերպվում էին գրական-գեղարվեստական երեկույթներ, ցերեկույթներ, թատերական ներկայացումներ:

Մասսայական բնույթի առաջին մեծ ներկայացումը հայ և ռուս մտավորականների ջանքերով 1848 թ. տրվել է թեմական դպրոցի դահլիճում<sup>720</sup>:

Արհեստավարժ թատրոն ստեղծելու ճանապարհին առաջին քայլը կատարվեց 1865 թ., երբ Շուշի են գալիս թիֆլիսահայ դերասաններ Գ. Չմկյանը, Մ. Ամերիկյանը և Ս. Մանդինյանը, տեղական ինքնագործ ուժերի հետ միասին բեմադրում Սրապիոն Հեքիմյանի «Սամվել կամ Կրոնք և տիրապետություն», Թ. Պետենցի «Վարդան Մամիկոնյան» և Օ. Անիսե-Բուրժուայի «Շկոլի վարժապետը» ներկայացումները<sup>721</sup>: Գ. Չմկյանը և նրա խմբի անդամները նպատակ ունեին շուշեցիների մոտ արթնացնել հայրենասիրական զգացումներ, ազգային գաղափարներ, հավաքական մտածելակերպ:

«Ներկայացումից հետո հանդիսականները ռազմաշունչ երգերով ու ջահերով, - գրել է ժամանակակիցը, - դուրս են գալիս փողոց, մտածելով, որ եթե մի բան ասված է հրապարակավ ու բարձրաձայն, լինելու բան է: Հանդիսականը զինվորական նվազախմբի հետ միասին ուղեկցում է դերասաններին, երգելով զեյթունցիների երգը: Երգում են նաև Գևորգ Աբովյանի երգերը, որ գրված էին հատկապես պատմահայրենասիրական դրամաների

համար: Յուրաքանչյուր երգից հետո հնչում են միահամուռ բացականչություններ՝ «կեցցե՛ ազգն հայոց», «կեցցե՛ սպարապետն Վարդան», «կեցցե՛ Չմկյան», «կեցցե՛ Մանդինյան», «կեցցե՛ Ամերիկյան»: Բոլոր ներկայացումներն ավարտվում են այսպես և բազմամարդ խնջույքներով: Շուշիի երևելի քաղաքացիները պարտք են համարում օրը մեկի տանը խնջույք սարքել, ուր ներկայացման մասնակիցների հետ հավաքվում են և հանդիսականները ...: Երգում են, ճառում, կենացներ խմում ազատության, հավասարության, եղբայրության կոչերով»<sup>722</sup>:

Այս ամենը վարակիչ եղան Շուշիի թատերասեր հասարակության համար: 1868 թ. սկսած՝ Համբարձում Հախումյանի տան դահլիճում, բեմադրվել են Հ. Կարինյանի «Վարդանանց պատերազմը», Տ. Նազարյանի «Ճապտոկ քոլաղ կտրի» և այլ պիեսներ<sup>723</sup>:

1869 թ. մայիսի 12-ին Շուշիի քաղաքային դպրոցի դահլիճում ներկայացվել է Վասակ Մաղաթյանի «Կրոթկրոթ» վոդևիլը:

Շուշիի հանրության գաղափարական և գեղարվեստական դաստիարակության գործում օրեցօր մեծանում էր թատրոնի դերը:

Ներկայացումներ էին կազմակերպվում թեմական, Մարիամյան դպրոցներում, քաղաքային ակումբում: Բեմադրվում էին նաև Ղարաբաղի բարբառով գրված պիեսներ:

1875 թ. թեմականի տեսուչ Խորեն վարդապետ Ստեփանեի ջանքերով և աշակերտների միջոցով տրվում է մանկական թատերական ներկայացում: «Մշակ»-ի թղթակիցը գրել է. «Շուշու հասարակութունը հիացած մնաց այդ գեղեցիկ խնջույքից»<sup>724</sup>: 1880 թ. թեմականի մի խումբ աշակերտներ, հոգաբարձուների թույլտվությամբ, դպրոցի դահլիճը և նրան հարակից սենյակը վերակառուցում են, ավելացնում բեմը, ձեռք բերում դեկորացիաներ, զգեստներ և թատերական այլ պիտույքներ<sup>725</sup>: Իսկ «Մեղու Հայաստանի» թղթակիցը Մարիամ Հախումյանի մասին գրել է. «Իր տան գեղեցիկ յարկը, ընդարձակ և շքեղ դահլիճով և կողմնակի երեք սենեակներով ձրի տուալ թատրոնի համար. շինեց թատրոնական բեմ և իր զույգներին ու ամենամօտ ազգականներին ստիպեց առաջին անգամ բեմ դուրս գալ: Երբ երիտասարդներն ու պատանիները քաջալերուած նորա յորդորանքներից կրկնում էին դերը թատրոնի դահլիճում և անզգուշութեամբ պատառոտում էին թանգ բեհեզեայ վարագույրները, կոտրտում էին ապակիները և թանգ

<sup>719</sup> Шушинский Ф., Шуша, стр. 88:

<sup>720</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 106; Шушинский Ф., Шуша, стр. 64:

<sup>721</sup> Մութաֆյան Լ., Շուշիի թատրոնը և նրա ներկայությունն Արցախի թատերական իրողությունների պատմության մեջ, «Կաճառ», հմ. 6, 2012, Շուշի, 2014, էջ 164:

<sup>722</sup> Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն, XIX դար, Երևան, 1996, էջ 416:

<sup>723</sup> Ղազարյան Մ., Արցախի արվեստի գանձերը, Անթիլաս, 1993, էջ 23:

<sup>724</sup> «Մշակ», հմ. 32, 1875, Թիֆլիս, էջ 3:

<sup>725</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 9, 5 փետրվարի, Թիֆլիս, 1880, էջ 2:

կահկարասիքը, տիկին Հախումյանը ուրախ ժպտում էր և նոցա բեմական թերութիւնները նկատում»<sup>726</sup>:

Շուշիում, առաջինը Արևելյան Հայաստանում, Նիկիտա-Մկրտիչ Խանդամիրյանի միջոցներով և նախաձեռնությամբ 1873 թ. կառուցվում է թատրոնի շենք, որի բացումը տեղի է ունենում նույն թվականի օգոստոսի 22-ին<sup>727</sup>: Սկզբում շենքը ծառայում էր որպես քաղաքային ակումբ, որտեղ միաժամանակ ներկայացումներ էին տրվում:

1880-1881 թթ. Շուշիի դպրոցներում կազմակերպվում են «Որդիական սեր կամ Ֆեոդորա», «Վարդանաց պատերազմ» և «Ղալալ Ղադո» ներկայացումները:

1882 թ. հուլիսի 23-ին, Գանձակում ավարտելով իր հյուրախաղերը, Շուշի է գալիս Պետրոս Ադամյանը: Նա դերասանուհի Զաբելի հետ Համբարձում Հախումյանի տան դահլիճում բեմադրում է Վ. Շեքսպիրի «Համլետ»-ը, Պ. Ջակոմետի «Ոճրագործի ընտանիքը», Շիլլերի «Ավագակները»: Լեոն, տպավորված այդ ներկայացումներից, հետագայում գրել է. «Մինչև այժմ էլ թվում է, թե պահել եմ ականջներիս մեջ մեծ արվեստագետի շեշտն ու հնչյունները: ... Հրաշք գործած բեմական հանձարը դարձել էր ամբողջ քաղաքի սիրելին»<sup>728</sup>:

1882 թ. սեպտեմբերի 4-ին Շուշի հյուրախաղերի են գալիս Ստեփանոս Ավետյան և Ալմա Սաֆրազյան ամուսինները: Նրանք դերասան Գրիգոր Ավետյանի աջակցությամբ բեմադրում են «Շուշանիկ», «Սանդուխտ կույս», «Սամվել», «Թուրթ խաղացողի կյանքը», «Խան Սարիբի վեզիրը» ներկայացումները:

Շուշեցի հայ առաջադեմ մտավորականների աջակցությամբ քաղաքի սիրողական խմբերն ավելի ու ավելի էին կատարելագործում իրենց բեմական արվեստը: Սիրողական այդ խմբերը 1883 թ. շուշեցիներ Աբրահամ Տեր-Գասպարյանի և Հովհաննես Ճաղարբեկյանի նախաձեռնությամբ բեմադրում են Գ. Սունդուկյանի «Պեպոն», «Քանդված օջախը», Թ. Ֆասուլյաձյանի «Երկու քաղցածները», Մ. Տեր-Գրիգորյանի «Վույ քի իմ վեչեր», «Ով է մեղավոր» վոդևիլները:

Շուշիում արհեստավարժ թատրոն ստեղծելու ճանապարհին կարևոր էր քաղաքի մեծահարուստների՝ Հախումյանների, Թառումյանների, Յուզբաշյանների, Ժամհարյանների, Խանդամիրյանների մեկենասությունը: Այն

հնարավորություն էր տալիս, որպեսզի քաղաքի աղքատ ազգաբնակչությունը նույնպես մասնակից դառնա թատերական տոնախմբություններին՝ վայելելով հոգևոր բերկրանքն ու հաճույքը:

Շուշիում արհեստավարժ թատրոնի ստեղծումը կապված է Նիկիտա Մկրտիչ Խանդամիրյանի անվան հետ: Տոհմիկ ազնվական շուշեցին բարձրագույն կրթություն էր ստացել Ֆրանսիայում: Մարտելում մասնագիտացել էր մետաքսի արտադրության մեջ: Սակայն դա չխանգարեց, որպեսզի Փարիզում հղկվի նրա գեղագիտական ճաշակը: Վերադառնալով Շուշի՝ նա ձեռնամուխ եղավ իր վաղեմի երազանքի՝ Շուշիում արհեստավարժ թատրոնի ստեղծման գործին:

Սկզբում Խանդամիրյանն իր շուրջը համախմբեց Շուշիում արդեն անուն հանած մի քանի դերասանների՝ Գ. Նազարյանին, Ա. Աբրահամյանին, Ա. Կոստանդյանին, Օ. Թառումյանին, Ս. Միքայելյանին, Գ. Իշխանյանին, Մ. Դավթյանին, դերասանուհիներ՝ Գ. Թառումյանին, Գ. Աթաբեկյանին, Գ. Գյանջեցյանին: Այդ հիմքերի վրա նա ստեղծեց մշտական գործող թատերախումբ:

1891 թ. նա Ղազանչեցոց եկեղեցու մոտ գտնվող և իր կողմից նախկինում կառուցած ակումբի շենքը հիմնովին վերակառուցեց և դարձրեց 350 տեղանոց դահլիճով քաղաքային թատրոն: Շենքն ուներ էլեկտրական լուսավորություն: Այն քարաշեն էր, բակի կողմից՝ եռահարկ: Դեկորների օգտագործումը մեքենայացված էր, դերասանները ունեին իրենց հարդասենյակները: Շենքի առաջին հարկում ապրում էր Խանդամիրյանն՝ իր ընտանիքով: Այդ նույն հարկում գտնվում էին ինչպես թատրոնի գրադարանը, այնպես էլ՝ հանրակացարան՝ դերասանների համար: Դահլիճն ուներ պարտեր, օթյակներ, ամֆիթատրոն: Դահլիճի հարևանությամբ ձեմասրահն էր<sup>729</sup>: Խորհրդանշական է, որ 1891 թ. Մուրացյանի «Ռուզան» ներկայացումով Շուշիի քաղաքային թատրոնն սկսեց իր գործունեությունը:

Կարճ ժամանակամիջոցում «Խանդամիրյան» թատրոնը հռչակ է ստանում ողջ Կովկասում: Մինչ այդ հայ արհեստավարժ երկու թատրոն հիմնադրվել էր 1851 թ.՝ Թիֆլիսում (Թամամշյանի) և 1861 թ.՝ Կոստանդնուպոլսում (Արևելյան թատրոն), որոնք գործում էին հայոց սահմաններից դուրս:

Ժամանակի մամուլը գրել է. «Ոչ միայն գավառում, այլ նույնիսկ Թիֆլիսում էլ անկարելի է մի ամսվա ընթացքում 10-12 ներկայացում տալ հայերի համար միայն, որպեսզի ամեն անգամ թատրոնը այսքան լիքը լինի և

<sup>726</sup> Տիկին Ս., Տիկին Մարիամ Հախումյան, «Մեղու Հայաստանի», հմ. 63, 15 օգոստոսի, Թիֆլիս, 1885, էջ 1-2:

<sup>727</sup> Հարությունյան Բ., XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրությունը (1801-1922), հ. 1, Երևան, 1980, էջ 119:

<sup>728</sup> Լեո, Անցյալից, էջ 33:

<sup>729</sup> Խանդամիրյան Բ., Հարությունյան Ս., Էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից (1891-1905), Երևան, 1978, էջ 11-12:



կամ թե համարյա թե լիքը»<sup>730</sup>: Ներկայացումների տարեկան հաճախականության մասին են խոսում հետևյալ փաստերը. 1891 թ.՝ 13 ներկայացում, 1892 թ.՝ 19, 1893 թ.՝ 20, 1894 թ.՝ 19, 1895 թ.՝ 24, 1896 թ.՝ 24<sup>731</sup>: Հայ և ռուս դրամատուրգներից բեմադրվել են առավելապես Հ. Պարոնյանի, Շիրվանզադեի, Պուշկինի, Գոգոլի, Լերմոնտովի, Օստրովսկու, Նայդյոնովի, Չեխովի, Նեմիրովիչ-Դանչենկոյի, արևմտաեվրոպական գրողներից՝ Իբսենի, Սերվանտեսի, Շիլլերի, Մոլիերի, Հյուգոյի, Ջիակոմետտիի, Ջուզեպեմանի և այլոց ստեղծագործությունները:

Սկրտիչ Խանդամիրյանը գրել է մի քանի պիեսներ: Նա ֆրանսերենից և ռուսերենից մի քանի թարգմանություններ է կատարել: Մանավանդ նշանավոր է ֆրանսիացի դրամատուրգ Ժորժ Օնեի «Դոկտոր Ռամոն» պիեսը:

Գրիգոր Ավետյանը բարձր է գնահատել Մ. Խանդամիրյանի դերը հայ թատերական արվեստի զարգացման գործում: «Նիկիտա Խանդամիրյանի թատրոնը, որը շնորհիվ իր տիրոջ, աչքի էր ընկնում իր սարք ու կարգով, իր մաքրությամբ, մանավանդ տիրոջ կողմից դեպի դերասաններն ունեցած սիրով ու հարգանքով – այս ամենը Շուշու Խանդամիրյան թատրոնը դարձրել էր մեզ համար մի ուխտատեղի, և ամեն ամառ շտապում էինք օր առաջ գնալ ու մեր սիրելի Նիկիտա Աբրամիչին տեսնել, – գրել է Գ. Ավետյանը: Արտասովոր մի մարդ էր նա, երկար ժամանակ Փարիզում էր ապրել և այնտեղից հետը բերել մաքրություն, խստություն ու ճշմարտություն՝ դեպի ամեն ինչ և ամենքի վերաբերմամբ»<sup>732</sup>:

«Խանդամիրյան» թատրոնը նաև թուրք մտավորականների սիրված վայրն էր: Նրանց մեծ մասը տիրապետում էր հայերենին և հայ լեզվի ու թատրոնի միջոցով հասու էր դառնում մարդկային բարձր արժեքներին:

Խոսելով 19-րդ դարի երկրորդ կեսի Շուշիի թատերական արվեստի մասին՝ Ֆ. Շուշինսկին նկատել է. «Տեղացի ռուս և հայ մտավորականները հաճախ իրենց ուժերով թատերական ներկայացումներ էին կազմակերպում: Ադրբեջանցի (նկատի ուներ թուրքերին – Վ. Բ.) առաջադեմ մտավորականությունը հաճույքով այդ ամենը նայում էր: Այդ ժամանակ դեռևս ադրբեջանական լեզվով չկար գոնե մեկ հատ դրամատիկական ստեղծագործություն»<sup>733</sup>: Շուշեցի դերուսույցները և դերասաններն այնքան էին հմտացել իրենց գործի մեջ, որ 1893 թ. Ա. Նազարյանը և Ն. Յարամիշյանը «Խանդամիրյան» թատրոնում բեմադրեցին Ուիլյամ Հիլբերտի և Արտուր Սիլի-

վանի «Երդվյալների դատարանը» երգիծական երաժշտական պիեսը<sup>734</sup>: Թատրոնի խաղացանկում ներառված էին ռուս, վրացի, եվրոպացի գրողներ Պուշկինի՝ «Ջրահարսը», «Ժլատ ասպետը», «Քարե հյուրը», Գոգոլի «Վերաքննիչը», «Ամուսնությունը», «Խելագարի նոթերը», Չեխովի «Արջը», «Առաջարկությունը», Լերմոնտովի «Դիմակահանդեսը», Օստրովսկու «Անտառը», «Արդյունավոր պաշտոնը», «Անմեղ մեղավորները», Նայդենովի «Վանյուշինի զավակները», Նեմիրովիչ-Դանչենկոյի «Կյանքի գինը», Սուխովո-Կոբիլինի «Կրենշինսկու հարսանիքը», Պոտապենկոյի «Օտարները», Պոտոխինի «Օրվա չարիքը», Ցագարելու «Խանումա», Շեքսպիրի «Օթելլո», «Համլետ», Իբսենի «Ուրվականները», «Նորան», «Դոկտոր Շտոկմանը», Սերվանտեսի «Դոն Բիշոտը», Շիլլերի «Ավագակները», «Խարդավանք և սեր», «Օրլեանի կույսը», Մոլիերի «Ակամա բժիշկը», «Տարտյուֆը», «Սկապենի արարքները», «Ազահը», Հյուգոյի «Անջելոն», «Էրնանին», Դյումայի «Քամելիազարդ տիկինը», «Քինը», «Մադամ Սան Ժենը», «Հայրենիքը», Ջիակոմետտիի «Ոճրագործի ընտանիքը», Ջուզեպեմանի «Պատիվը», «Սոդոմի կործանումը» ստեղծագործությունները: Այդ ամենի միջոցով շուշեցի հայ մարդը հասու էր դառնում թատերական գեղագիտության նորագույն ըմբռնումներին, հղկվում էր նրա գեղարվեստական ճաշակը:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, ինչպես Խանդամիրյան թատրոնում, այնպես էլ ռեալական ուսումնարանի, թեմական, Մարիամ-Ղուկասյան դպրոցների դահլիճներում հյուրախաղերով հանդես են եկել հայ բեմի բոլոր նշանավոր վարպետները՝ Գրիգոր Աբրահամյանը, Մաթեոս Աղայանը, Մարի Զաբելը, Վարվառա Մելիքյանը, Արշակ Հարությունյանը, Փառանձեմը (Սահակյան-Սաղաթելյան), Մարի և Վարդիթեր Ֆելեկյանները, Արամ Վրույրը, Հովհաննես Աբելյանը, Սիրանույշը, Սաթենիկ Աղամյանը, Հովհաննես Զարիֆյանը, Գրիգոր Ավետյանը, Պետրոս Աղամյանը, Արուս Ոսկանյանը, Օլգա Գուլագյանը, Վահրամ Փափագյանը: Շուշիում են ծնվել հայ բեմի ականավոր գործիչներ Գրիգոր Ավետյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Վաղարշ Վաղարշյանը: Նրանք ռեալական ուսումնարանում սովորելու տարիներին իրենց համակուրսեցիների կողմից արդեն սիրված և ճանաչված էին:

Խանդամիրյան թատրոնը գործեց մինչև 1905 թ. ազգամիջյան բախումները: Թուրքերը կործանեցին նաև հայ մշակույթի այդ նշանավոր օջախը, որը շատ բան էր տվել նաև իրենց: Ծնունդով շուշեցի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանն այդ դեպքերի մասին հետագայում գրել է. «Ես տեսա, թե ինչպես բորբոքուն, ահռելի մի բոց հարևան տնից սողաց դե-

<sup>730</sup> «Տարագ», հմ. 36, Թիֆլիս, 1893, էջ 540:

<sup>731</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 107:

<sup>732</sup> Ավետյան Գ., Քառասուն և հինգ տարի հայ բեմի վրա, Երևան, 1933, էջ 134-135:

<sup>733</sup> Шухинский Ф., Шуша, стр. 64:

<sup>734</sup> «Տարագ», հմ. 31, Թիֆլիս, 1893, էջ 496:

պի Խանդամիրյան թատրոնը, տանիքն առավ իր կործանարար ճարձատրունի մեջ, և շենքը սկսեց բոցավառվել: Կարծես ոչ ոք չէր տեսնում այդ կործանարար աղետը, որ գնար օգնության: Ես ձչալով փորձ արի վազել դեպի բոցավառվող թատրոնը, հրացանավոր մի մարդ բռնեց թևիցս և ինձ շարտելով բակի մի անկյունը, հրամայեց չշարժվել: Թատրոնի շենքը անտեր ու անօգնական իմ աչքի առաջ ճարձատրում էր բոցերի լափից»<sup>735</sup>:

Չնայած Շուշիի Խանդամիրյան թատրոնի շենքը հրո ճարակ դարձավ, բայց, ընդհանրության մեջ, նա մի ուրույն հետազոծ թողեց հայ թատերական բազմադարյան արվեստի պատմության մեջ:

1905 թ. հետո Շուշիում թատերական ներկայացումներ տրվում էին տարբեր դպրոցների դահլիճներում, մեծահարուստների տներում:

20-րդ դարի սկզբներին Շուշիում գործում էր Մելքունյան եղբայրների դահլիճը, որտեղ ներկայացումներ է բեմադրել Ա. Քոչարյանը:

Շուշիում նշանակալից ձեռքբերում էր հայ արհեստավարժ ռեժիսուրայի հիմնադիրներից մեկի՝ Գևորգ Պետրոսյանի գործունեությունն ու գեղարվեստական նպատակադրումները, որոնք միտված էին թատրոնի՝ իբրև հասարակական ինստիտուտի, կայացմանը, հայ բեմարվեստում գեղարվեստական-գեղագիտական նոր միտումների հաստատմանը, արդիական և նորարական թատրոնի հայեցակարգերի արմատավորմանը<sup>736</sup>: Նա Շուշիում շուրջ 40 պիեսներ է բեմադրել:

1910 թ. Շուշիում դերասանական ամենասիրված խմբերից մեկը Ամո Խարազյանի ղեկավարած խումբն էր:

Շուշիի թատերասեր հանրության միջավայրն այնքան հրապուրիչ էր, որ հայոց բերդաքաղաքում իրենց ներկայացումներն էին բեմադրում ռուս և ուկրաինացի բեմարվեստի գործիչները:

1902 թ. ուկրաինացի դերասաններ Ալյանսկայան, Զիրկան, Ռալչենկոն, Միխայլենկոն, Կամենսկին, Բալալովը, Յակովենկոն ուկրաիներեն լեզվով այստեղ ներկայացրել են «Նեսչաստնն Կոխաննա», «Բովալչինա», «Շելմեչինկո դենչինկ-պոռեվիզի», Տարաս Շևչենկոյի «Նազար Ստոդոլյա» պիեսները<sup>737</sup>:

20-րդ դարի սկզբներին թատերական կյանքի կազմակերպման գործում չնայած առկա էին որոշակի դժվարություններ, այնուամենայնիվ, մշակույթի այդ ասպարեզի պատասխանատուները նոր միջոցներ էին

որոնում՝ պատշաճ ձևով ապահովելու Շուշիի թատերասեր հասարակության պահանջները:

1914 թ. Շուշիում բացվել է «Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերության մասնաճյուղը», որի մեջ ընդգրկված էին 25 դերասաններ<sup>738</sup>: Այդ կազմակերպությունը տարեկան երկու ներկայացում էր բեմադրում<sup>739</sup>:

Վերոհիշյալ մասնաճյուղի հետ միասին Շուշիում լայն գործունեություն էր ծավալել «Ազատ թատրոն» կազմակերպությունը<sup>740</sup>: Այդ նույն կազմակերպության հրավերով 1915 թ. հունիս և հուլիս ամիսներին հայ բեմի մեծ վարպետներ Վահրամ Փափազյանը և Արուս Ոսկանյանը շեքսպիրյան դերերով հանդես եկան Շուշիում<sup>741</sup>:

1914 թ. հուլիսի 1-8-ը «Հայ դերասանական դրամատիկ ընկերությունը», Հովհաննես Աբելյանի գլխավորությամբ և մասնակցությամբ, ամառային դահլիճում ներկայացրել է Շիրվանզադեի «Չար ոգին» և Շեքսպիրի «Օթելլո»-ն<sup>742</sup>, իսկ օգոստոսին՝ Շանթի «Հին Աստվածներ» դրաման<sup>743</sup>:

1915 թ. մարտի 8-ին թեմական դպրոցի դահլիճում Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցի չքավոր աշակերտներին սատարելու նպատակով քաղաքի դերասանների ուժերով թատերական ներկայացում տրվեց<sup>744</sup>:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ 20-րդ դարի սկզբներից շուշեցի հայ մարդը ծանոթ էր նաև կինոարվեստի նվաճումներին: Շուշիում հարմարեցված երկու դահլիճներում կազմակերպվում էին կինոցուցադրումներ (սինեմոտոգրաֆիա)<sup>745</sup>:

Շուշիի բնակչությունը ծանոթ էր նաև կրկեսային արվեստին: 1848 թ. քաղաքում տրվեց կրկեսային ներկայացում<sup>746</sup>:

Հին ժամանակներից սկսած՝ Շուշիում տարածված էին մասսայական թատերականացված ներկայացումները: Մանավանդ կիրակի օրերին քաղաքի հրապարակներում իրենց վարպետությունն էին ցուցադրում լարախաղացները:

<sup>738</sup> Կովկասի Հայոց դրամատիկական ընկերության ճիւղ Շուշիում, «Հորիզոն», հմ. 50, 7 մարտի, Թիֆլիս, 1914, էջ 3, «Գործ», հմ. 9, 7 մարտի, Բաքու, 1914:

<sup>739</sup> «Փայլակ», հմ. 14, 26 ապրիլի, Շուշի, 1915:

<sup>740</sup> «Փայլակ», հմ. 35, 9 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>741</sup> «Փայլակ», հմ. 34, 5 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>742</sup> «Հորիզոն», հմ. 151, 13 հուլիսի, Թիֆլիս, 1914, էջ 3 և հմ. 159, 24 հուլիսի, Թիֆլիս, 1914, էջ 4:

<sup>743</sup> «Հորիզոն», հմ. 174, 9 օգոստոսի, Թիֆլիս, 1914, էջ 4:

<sup>744</sup> «Փայլակ», հմ. 2, 12 մարտի, Շուշի, 1915:

<sup>745</sup> «Գործ», հմ. 9, 7 մարտի, Բաքու, 1914:

<sup>746</sup> История Азербайджана, т. 2, стр. 130-133.

<sup>735</sup> Վաղարշյան Վ., Ընկերներս, բարեկամներս և ես, գիրք Ա., Երևան, 1959, էջ 53-54:

<sup>736</sup> Մուրաֆյան Լ., նշվ. աշխ., էջ 167:

<sup>737</sup> «Մշակ», հմ. 114, Թիֆլիս, 1902:

19-րդ դարի կեսերին Շուշիում հայտնի էր լարախաղաց Բախչի Մնացականյանը: Նրա գերդաստանի անդամները հետագայում իրենց վրա սկսեցին կրել Փահլեվանենց ազգանունը<sup>747</sup>:

Թատերական կյանքի հետ միասին Շուշիում աննախադեպ վերելք էր ապրել նաև երաժշտական արվեստը: Հայ երաժշտագետ Վ. Կարազանովը գրել է. «Անդրկովկասին երաժիշտներ և երգիչներ է մատակարարում Շուշին, որը համարվում է պոեզիայի, երգի և երաժշտության աստվածաշնորհի հայրենիքը: Այն Անդրկովկասի համար կոնսերվատորիայի դեր էր կատարում»<sup>748</sup>:

Ազգային երգարվեստի զարգացման գործում մեծ էր շուշեցի երաժիշտների դերը: Դեռևս 18-րդ դարից Այսրկովկասում և Պարսկաստանում հռչակված էին շուշեցի գուսանները: Ժողովուրդը նրանց հավաքական ձևով անվանում էր «սազանդար»:

Շուշիում 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին հայտնի սազանդարներ էին Ոսկանը, նրա եղբայրներ Առաքելն ու Հարությունը, Ոսկանի որդի Ասլանը: Շուշիի հայկական հին գերեզմանատան շիրմաքարերի վրա պատկերված են երաժշտական գործիքներ, պարային տեսարաններ<sup>749</sup>:

Սիրված և նշանավոր աշուղներ էին Հաթամը (Ադամ), նրա աշակերտը՝ Աթա Սայիլյանը, Միսկին Բուրջին, Ալեքսանը<sup>750</sup>: Շուշիում այնքան հարգի է եղել գուսանական արվեստը, որ քաղաքում ստեղծվել է աշուղական համաքարություն, որի մեջ ընդգրկված էին նաև Հայաստանի տարբեր նահանգների երաժիշտները:

Կոմպոզիտոր Ուզեիր Հաջիբեկովը աշուղ Ալեքսանի մասին գրել է. «... Այն ժամանակ (19-րդ դարի երկրորդ կեսին – Վ. Բ.) Ղարաբաղի գյուղական հարսանիքներում իր խմբով հանդես եկող աշուղ Ալեքսանը Ադրբեջանի երաժշտական արվեստի զարգացման և մի շարք վարպետ-մասնագետների հասունացման գործում մեծ ներդրում է ունեցել»<sup>751</sup>:

Շուշիի հայկական դպրոցներում, մանավանդ թեմականում, երգի և երաժշտության դասավանդման գործը պատշաճ բարձրության վրա էր գտնվում: Ուսուցիչները հայտնաբերում էին երաժշտական ունակություններ ունեցող աշակերտներին և մասնագիտական խմբակներում պարապմունքներ կազմակերպում նրանց հետ: Աշակերտներից կազմակերպվում էին

դպրոցական երգչախմբեր: Առավել տաղանդավորներն իրենց կրթությունը շարունակում էին ռուսական և եվրոպական կոնսերվատորիաներում: Այդ ճանապարհով երաժշտական բարձրագույն կրթություն են ստացել Գրիգոր Սյունին, Ստեփան Դեմուրյանը, Հովակիմ Մուրղանյանը, Միքայել Ղահրամանյանը, Եղիշե Բաղդասարյանը, Բելա Մելիքյանը, Եվգենյա և Աշխեն Բաղդասարյանները:

Շուշիում նշանակալից էր արևելյան երաժշտական արվեստի դրվածքը: 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին նշանավոր թառահարներ էին Արտեմը, Միրզա Սաղղջյանը, Սողոմոն Սելյանյանը, Մարդի Ջանիբեկյանը, Լազար Տեր Վարդանեսովը, Տեր Գրիգորը, նրա որդի Թադևոս Հարությունյանը, Բալա Մելիքովը, Գրիգոր Մելիքյանը, Լազար Գաբրիելյանը, Արսեն Յարամիշյանը, Բալայի որդի Գրիգորը, Փոքրիկ Գրիգորը, քամանչահարներ՝ Հովհաննես և Լևոն Կարախանյանները, Արմենակ Շուշեցին, Մակիչը, Սաշա Օզանեգաշվիլին, Բաղդազյուլի որդիներ՝ Աթային և Գասպարը:

Թառահար Արսեն Յարամիշյանը (1862–1930 թթ.) մեծ դեր է կատարել հայ և ադրբեջանական երաժշտական արվեստի զարգացման գործում: Նա մանկավարժական մեծ գործունեություն է ծավալել նաև Բաքվի կոնսերվատորիայում<sup>752</sup>, դառնալով ադրբեջանցի թառահարների դպրոցի հիմնադիրը:

Թառահար Լևոն Կարախանյանը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին հռչակված էր ողջ Անդրկովկասում, Իրանում և Միջին Ասիայում: Կոմպոզիտոր Զ. Պալիաշվիլին գրել է. «Թառահար Լ. Կարախանովը համարվում է երաժշտական այդ ասպարեզի ամենատաղանդավոր նվագողներից մեկը: Արևելյան մոտիվներով նրա կատարումները հասել են մշակութային բարձրակետին և իմ կարծիքով այդ ասպարեզում նա հավասարը չունի»<sup>753</sup>:

1901–1903 թթ. Շուշիում և Բաքվում կազմակերպված արևելյան երաժշտության մրցության ժամանակ Լևոն Կարախանյանն արժանացել էր առաջին մրցանակին: Նա հրավերով հանդես էր եկել Թիֆլիսի, Կինի և այլ քաղաքների համերգասրահներում:

Նրա կատարողական արվեստը բարձր են գնահատել կոմպոզիտորներ Մ. Իպոլիտով-Իվանովը, Դ. Ալակիշվիլին, պրոֆեսոր Ե. Բրաուդոն, Գ. Լյուբիմովը, Ի. Բորոզդինը: Լևոն Կարախանյանը միաժամանակ մի շարք երգերի հեղինակ է: Նշանավոր է նրա «Հայկական պար», «Արևելյան ֆանտա-

<sup>747</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 24:

<sup>748</sup> Караганов В., Кавказская музыка, Тифлис, 1908, стр. 28.

<sup>749</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 254, 257:

<sup>750</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 251:

<sup>751</sup> Гаджибеков У., В прошлом и новом Азербайджане, журнал «Советская музыка», но. 2, Москва, 1935, стр. 57.

<sup>752</sup> Шушинский Ф., Шуша, стр. 115–116.

<sup>753</sup> Шушинский Ф., Шуша, стр. 116.

զիս», «Թբիլիսյան էսքիզներ» ստեղծագործությունները: Նա դարձել է նաև վրացական «Հերակլ երկրորդ» ներկայացման երաժշտության հեղինակը:

19-րդ դարի 90-ական թթ. Շուշիի երաժշտական արվեստը նոր որակ ստացավ: Դա հիմնականում կապված էր այն հանգամանքի հետ, որ Շուշիում սկսեցին ապրել և աշխատել արհեստավարժ երաժիշտներ Ստեփան Դեմուրյանը, Արշակ Կոստանյանը, Միլանի կոնսերվատորիայի շրջանավարտ Բեգլար Ամիրջանյանը, Մոսկվայի Մեծ թատրոնի երգիչ Ներսես Շահլամանյանը, Քրիստափոր Կարա Մուրզան, Գրիգոր Սյունին, Դանիել Ղազարյանը և ուրիշներ:

Ստեփան Դեմուրյանը ծնվել է 1872 թ. հունիսի 12-ին Թիֆլիսում: Ներսիսյան դպրոցը ավարտելուց հետո մինչև 1917 թ., որոշ ընդհատումներով, աշխատել է Շուշիի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում: Այդ ընթացքում նա Պետերբուրգի կոնսերվատորիայում երաժշտական բարձրագույն կրթություն է ստացել:

Շուշիի թեմական դպրոցում Ստեփան Դեմուրյանը ստեղծել է երկսեռ քառաձայն խմբակ: Հաճախակի համերգներ էր կազմակերպում Շուշիում, ինչպես նաև՝ Արցախի մյուս բնակավայրերում: Նրանք կատարում էին Կոմիտասի «Հորովելը», «Լոռեցու գութաներգը», «Գյուլում-ջան», «Արաքսի արտասուքը», «Ջան մարալ ջան», «Եխտ-ջան», «Սիրո երգ», «Ճախարակ», «Բամբ որոտան», «Սիրեցի յարս տարան» ժողովրդական երգերը, Շուքերտի «Սերենադա»-ն, «Մարսելիոզ»-ը, «Չերնոգորական ժողովրդական հիմնը», Բախի, Չայկովսկու ստեղծագործությունները: Ստեփան Դեմուրյանի կազմակերպած համերգներում ասմունքում էին Վահրամ Փափազյանը և Արուս Ոսկանյանը<sup>754</sup>: 1905-1917 թթ. Ստեփան Դեմուրյանը Շուշիում կազմակերպված բազմաթիվ համերգներից ստացված հասույթը տրամադրել է աղքատ աշակերտների ուսման համար նախատեսված հիմնադրամին<sup>755</sup>:

Շուշիում աշխատելու տարիներին նա գրել է երգեր, մեղեդիներ, գիտական հոդվածներ, որոնք ավելի են հարստացրել հայ երաժշտական միտքը:

Շուշիի երգարվեստի զարգացման գործում առանցքային դերակատարություն է ունեցել Քրիստափոր Կարա Մուրզան: Նա 1895 թ. մինչև 1901 թ. մի քանի անգամ երկար ժամանակով մնացել է Շուշիում: Համերգներից բացի նա քաղաքում կազմակերպել է նաև երգչախումբ, որի կազմում էին Գրիգոր Սյունին, Հովակիմ Մուղունյանը, Դանիել Ղազարյանը, Նիկոլայ Թեմուրազյանը, Եղիշե Բաղդասարյանը:

Քրիստափոր Կարա-Մուրզան, շրջագայելով Արցախում, հավաքագրել և մշակել է բազմաթիվ ժողովրդական երգեր:

Առանձնապես տպավորիչ է ծագումով շուշեցի երգիչ, երգահան Գրիգոր Միրզոյանի (Սյունի) (1876-1939 թթ.) երաժշտական գործունեությունը: Էջմիածնի Գևորգյան ճեմարանը և Պետերբուրգի կոնսերվատորիան ավարտելուց հետո նա երկար տարիներ աշխատել է Շուշիում: Մշակելով ժողովրդական երգերը՝ Գ. Միրզոյանը դրանք հասցրել է կատարելության: Նրա մշակմամբ «Սարերի հովին մեռնեմ», «Ալագյազ», «Սարեն կգա ձիավոր», «Ախ, ալ վարդի», «Հտե մի օր», «Ինձ մի խնդիր», «Սարերը հովել ա» ժողովրդական երգերը դարձել են հայ երգչախմբային երաժշտության դասական նմուշներ:

Գրիգոր Միրզոյանը երաժշտություն է դասավանդել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Թիֆլիսում նա բեմադրել է «Արեգնազան» օպերան, գրել «Ալի և Քյարամ» երաժշտական դրաման: Նա բազմիցս համերգներով հանդես է եկել հայաշատ գաղութներում, դարձել հայ ժողովրդական երգերի մշակողն ու տարածողը:

Իր կյանքի վերջին տարիներին ապրել է ԱՄՆ-ում: Գրիգոր Միրզոյանը երաժշտական խմբեր և համերգներ է կազմակերպել Նյու-Յորքում, Բոստոնում, Չիկագոյում, Ֆիլադելֆիայում, Պրովիդենսում, Դետրոյտում:

Արցախի մշակութային կյանքում ակնառու էր արևելյան դասական երաժշտության գիտակ, թառահար, երգահան Նիկողայոս Տիգրանյանի դերը: Շուշիում նա մշակել է ժողովրդական պարեր, որոնք մեծ ընդունելություն ունեին հանրության լայն շրջաններում:

Շուշիում ծնվել և կյանքի մի մասն այստեղ անց է կացրել կոմպոզիտոր խմբավար Եղիշե Բաղդասարյանը (1881-1919 թթ.): Ավարտել է Պետերբուրգի համալսարանը: Նա Շուշիում ստեղծել է խոր և ժողգործիքների առաջին նվագախումբը: Ղեկավարել է Լազարյան Ճեմարանի ուսանողական երգչախումբը: Եղիշե Բաղդասարյանը Մոսկվայում հիմնել է «Հայ խմբավարական ընկերությունը»: Նա նշանավոր մի շարք երգերի, ռոմանսների («Մշոողբ է», «Մաղթանք», «Արևելյան եղանակներ»), հեղինակ է:

Շուշիում է ծնվել խմբավար, կոմպոզիտոր, երգիչ Դանիել Ղազարյանը (1883-1958 թթ.): Ավարտել է Շուշիի թեմական դպրոցը և Թիֆլիսի կոնսերվատորիան: Նա հեղինակել է մի շարք երգեր, ռոմանսներ, խմբային երգեր, ստեղծել հինգ մանկական օպերաներ, գրել «Սոս և Վարդիթեր», «Գիքոր» դրամաների երաժշտությունը: Դանիել Ղազարյանը երկար տարիներ մանկավարժական գործունեություն է ծավալել Շուշիում, Ստեփանակերտում, Նուխիում, Ղազվինում, Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Էջմիածնում,

<sup>754</sup> «Փայլակ», հմ. 37, 16 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>755</sup> «Ապառաժ», հմ. 18, 20 օգոստոսի, Շուշի, 1917:

Արմավիրում, Նոր-Բայազետում, Դիլիջանում, Կարսում, Պետերբուրգում, Թիֆլիսում, Խարկովում, Ռոստովում, Արմավիրում, Կրասնոդարում, Վլադիկավկազում, Նովոռոսիյսկում Սոչիում, Բաթումում, Բորժոմիում, Աշխաբադում, Գանձակում, Ախալցխայում, Ախալքալաքում: Դանիել Ղազարյանը 500 երաժշտական խմբեր է ստեղծել և տվել շուրջ 1000 համերգներ<sup>756</sup>:

Վերջին անգամ նա իր հարազատ Շուշի քաղաք այցելել է 1955 թ., վայելել հայրենի երկրամասի բերկրանքը և գրել «Ինչ սիրուն է Ղարաբաղը» երգը:

Արևելյան երաժշտական արվեստի զարգացման գործում անգնահատելի դերակատարություն են ունեցել ծնունդով շուշեցիներ Բոգդան Թումանյանը (1881–1975 թթ.), Հովհաննես Հովհաննիսյանը (1881–1938 թթ.), Ալեքսանդր Ալեքսանդրյանը (1889–1970 թթ.):

Հովհաննես Հովհաննիսյանն ավարտել է Շուշիի ռեալական ուսումնարանը, այնուհետև Նովոռոսիյսկի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Վերադառնալով հայրենիք՝ նա զբաղվել է բժշկությամբ, միաժամանակ Շուշիում ստեղծել զինվորական նվագախումբ: Այդ գործում նրան աջակցել է Պենզենսկայա գնդի հրամանատարը: Նվագախումբը տոն և կիրակի օրերին ձրի նվագում էր քաղաքի զբոսայգում և մեծ բավականություն պատճառում հասարակությանը<sup>757</sup>: 1920 թ. Հ. Հովհաննիսյանը տեղափոխվել է Բաքու և այդտեղ ստեղծել ժողգործիքների ադրբեջանական առաջին նվագախումբը, որի կազմում ընդգրկված էին 65 երաժիշտներ: Նա միաժամանակ դարձել է կանանց Ադրբեջանի պետական առաջին նվագախմբի կազմակերպիչը<sup>758</sup>: Դրանից հետո նա ստեղծել է կանանց ևս երկու նվագախմբեր: Հ. Հովհաննիսյանը մահացել է 1938 թ. հուլիսի 28–ին: Նրա մարմինը հողին են հանձնել Բաքվի հայկական գերեզմանատանը: «Бакинский рабочий» թերթը մահախոսականում գրել է. «Հանձին Հովհաննես Հովհաննիսյանի՝ Ադրբեջանի մշակույթը կորցրեց տաղանդավոր մարդու, մեծ կազմակերպչի, կոմպոզիտորի, արևելյան երաժշտության գիտակի ու լավ դիրիժորի»<sup>759</sup>: Այդքանով հանդերձ՝ ադրբեջանական ազգային երաժշտական արվեստի խոշոր կազմակերպչի շիրմաքարը Ադրբեջանի ներկայիս իշխանությունների կողմից պղծվել և հողին է հավասարեցվել:

Ալեքսանդր Ալեքսանդրյանը թեմական դպրոցն ավարտելուց հետո դարձել էր Շուշիի քաղաքային փողային նվագախմբի ղեկավարը: Նա մի շարք

երգերի և պարեղանակների հեղինակ է: Դրանցից մեծ մասսայականություն են վայելում «Զույգ սև աչքեր», «Դիլիջան», «Նազելի», «Նունե», «Նաիրյան աղջկա պար» և ուրիշ այլ ստեղծագործություններ:

Շուշիում է ծնվել հայ օպերային երգարվեստի ներկայացուցիչ Արշակ Կոստանյանը (1865–1920 թթ.): Երաժշտական կրթություն է ստացել Կազանում և Իտալիայում: Հիմնականում ապրել և ստեղծագործել է Մոսկվայում և դարձել այդ ժամանակաշրջանի ռուսական բեմի նշանավոր տենորներից մեկը: 1902 և 1904 թթ. Արշակ Կոստանյանը համերգներով հանդես է եկել Շուշիում: Նա իր հայրենակիցներին ներկայացրել է հայկական և ռուսական դասական երգեր:

Շուշիում է ծնվել աշխարհահռչակ դիրիժոր Ալեքսանդր Մելիք Փաշանը (1905–1964 թթ.): Սկսնական երաժշտական կրթությունն ստացել է Թիֆլիսում: 1922 թվականից Զ. Պալիաշվիլիի անվան օպերայի թատրոնի դիրիժորն էր: 1928–1930 թվականներին սովորել է Լենինգրադի կոնսերվատորիայում: 1931 թ. հունիսի 13–ին, որպես դիրիժոր, առաջին անգամ հանդես եկավ Մոսկվայի Մեծ թատրոնում: 1953 թ. մինչև իր կյանքի վերջը նա Մեծ թատրոնի գլխավոր դիրիժորն էր: Ալեքսանդր Մելիք Փաշանը Մեծ թատրոնում բեմադրել է 30 օպերաներ: Շուրջ 2500 օպերային ներկայացումների դիրիժորն է եղել: Բարձր մասնագիտական պատրաստության և անուրանալի տաղանդի համար նա երկու անգամ արժանացել է պետական մրցանակի: Ալեքսանդր Մելիք Փաշանը երեք անգամ պարգևատրվել է «Կարմիր դրոշի» և մեկ անգամ «Պատվո նշան» շքանշաններով: Նշանավոր կոմպոզիտոր Տ. Խրեննիկովը գրել է. «Ալեքսանդր Մելիք-Փաշանը սովետական երաժշտական արվեստի ամենաակնառու ներկայացուցիչներից է և շատ բան է արել այդ բնագավառը զարգացնելու համար: Ա. Մելիք-Փաշանի անունը ոսկե տառերով է գրվել մեր հայրենի երաժշտական արվեստի պատմության մեջ»<sup>760</sup>:

Ղարաբաղը հայկական ավանդական հորովելի նշանավոր կենտրոններից է: «Մաճկալ ես ...» երգի մեղեդին հորինվել է Շուշիում՝ ինքնուս կոմպոզիտոր Եգոր Հասրաթյանի կողմից, իսկ «Մի լար բլբուլ» երգի մեղեդին ստեղծել է շուշեցի կոմպոզիտոր Եղիշե Բաղդասարյանը<sup>761</sup>:

Տարբեր ժամանակներում Շուշիում համերգներով հանդես են եկել Կոմիտասը, Արմեն Տիգրանյանը:

Շուշիում թատերական և երաժշտական կյանքը հատկապես աշխուժանում էր ամռան ամիսներին: Ռուսաստանի և Եվրոպայի տարբեր քաղաք-

<sup>756</sup> Асатрян А., Консерватория Закавказья, «Աշխատանքային տետր», հմ. 1–2, Երևան, 2013, էջ 143–144:

<sup>757</sup> «Փայլակ», հմ. 12, 19 ապրիլի, Շուշի, 1915:

<sup>758</sup> Բրուտյան Մ., Արցախյան ոգին երաժշտության մեջ, Երևան, 2000, էջ 240–241:

<sup>759</sup> «Бакинский рабочий», но. 175, 30 июля, Баку, 1938.

<sup>760</sup> «Советская музыка», журнал, но. 9, 1964, стр. 73.

<sup>761</sup> Խանդամիրյան Բ., Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 53:

ներից հայրենի Շուշի էին վերադառնում ուսանողներ, հոչակավոր երգիչներ, երգահաններ, դերասաններ: Ամեն մեկն իր համաքաղաքացիներին յուրովի ներկայացնում էր տարիների ընթացքում ստեղծած աշխատանքի արդյունքները: Համերգների և ներկայացումների ձևով դա մի ստուգատես էր, որտեղ յուրաքանչյուր ստեղծագործող փորձում էր ստանալ շուշեցի բժախնդիր հանդիսատեսի արժանի գնահատականը և, ինչու չէ, նաև օրինանքը:

Ամռան ամիսների շաբաթվա երկու-երեք օրերին Շուշիում կազմակերպվում էին արևելյան և եվրոպական դասական երգերի և պարերի կատարումներ: Համերգները կազմակերպվում էին Շուշիի ամառային ակումբի, Խանդամիրյան թատրոնի, թեմական և օրիորդաց դպրոցների դահլիճներում: 1902 թ. օգոստոսի 21-ին Խանդամիրյան թատրոնում համերգով հանդես եկավ Ստեփան Բարխուդարյանը: Նրա երգացանկում ընդգրկված էին ինչպես հայկական ժողովրդական, այնպես էլ Չայկովսկու ստեղծագործությունները<sup>762</sup>: 1903 թ. հուլիսի 4-11-ը կայացան Քրիստափոր Կարա-Մուրզայի հիշատակին նվիրված համերգներ: 1907 թ. ապրիլի 10-ին կայացավ երաժշտության ուսուցիչ Հարություն Մելիքյանի ղեկավարած քաղաքի 90 հայ աշակերտներից բաղկացած խմբի համերգը<sup>763</sup>:

1913 թ. օգոստոսի 8-ին ամառային ակումբում հանդես եկան երգիչ Ա. Ստեփանյանը և դաշնակահար Ա. Գյուրջյան-Ղալամյանը<sup>764</sup>: Շուշեցի հանդիսատեսը մեծ ցնծությամբ ընդունեց Բախի, Ռախմանինովի ստեղծագործությունների կատարումները:

Նույն դահլիճում 1915 թ. հուլիսի 17-ին Թիֆլիսի երաժշտական դպրոցի շուշեցի ուսանող Մ. Խաչատրյանի ղեկավարությամբ կազմակերպվեց արևելյան ժողգործիքների համերգ, որին մասնակցում էին հայ և թուրք ունկնդիրներ: Առաջինը կատարվեց «Մեր հայրենիքը»<sup>765</sup>:

1917 թ. հուլիսին Շուշիի դահլիճում, մանավանդ՝ օրիորդաց դպրոցում, մի քանի համերգներով հանդես եկան Ս. Դեմուրյանը և երգիչ Ղարաբեշիշյանը<sup>766</sup>: 1919 թ. օգոստոսի 13-ին քաղաքի ամառային ակումբի դահլիճում ներկայացվեց Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան: Դիրիժորն էր Լ. Վարդունին<sup>767</sup>:

Ընդհանուր առմամբ՝ շուշեցին մշակութային միջոցառումների պակաս չէր զգում: Ամեն օր նա ականատես և ականջալուր էր դառնում մշակութային նոր իրադարձության: Դահլիճներն էլ հանդիսատեսի պակաս չէին զգում:

Օրինակ, 1913 թ. օգոստոսի 8-ին թեմականի դահլիճում դրվեց «Ղարաբաղի աստղագետը» ներկայացումը, օգոստոսի 9-ին նույն տեղը կազմակերպվեց բարբառների երեկույթ: Այդ նույն օրը՝ երեկոյան, ամառային ակումբի դահլիճում տեղի ունեցավ դաշնակահար Ղալամյան-Գյուրջյանի և երգչուհի Ա. Ստեփանյանի համերգը: Կատարվեցին Շոպենի, Մենդելսոնի, Ռախմանինովի երգերից, իսկ ասմունքող Կ. Պողոլինսկին Չեխովից կարդաց մի պատմվածք<sup>768</sup>:

Շուշիում էր ապրում տաղանդավոր ջութակահար Զայրմայր Աթայանը: Նա թոքախտից մահացել է 1913 թ. փետրվարի 8-ին<sup>769</sup>:

Շուշիում երաժշտական արվեստն այնքան հարգի էր, որ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին նպատակահարմար գտնվեց քաղաքում կազմակերպել արևելյան երաժշտական գործիքների արտադրություն: 1913 թ. սեպտեմբերին «Բագուի ձայն» թերթի թղթակիցը, լինելով Շուշիում, գրել է. «Շուշին մեծ քանակությամբ թառ է սպառում: Այստեղ, առանց չափազանցության կարելի է ասել, ամեն տուն թառ ունի, և ամեն կողմից թառ նվագելու ձայներ են հնչում: Շուշին երաժշտական քաղաք է, սիրահարական, գովասանական բոլոր երգերը, պարի բոլոր եղանակները շուշեցիների ստեղծագործության արդիւնք է: Այստեղի թառչիները հոչակված են իրանց նուազածության նուրբ տեխնիկայով – նրանց մատների տակից պատվական մեղեդիները ելնում են՝ մարդուս հոգին ձանկելու ուժով, նրան վերապացնելով դեպի ինքնամոռացության աշխարհը, մեղմ թախիծ, անդորր տխրություն բերելով ...»:

Երաժշտութուն միայն Շուշի չէ նկատում, այլ ամբողջ Ղարաբաղում և աչքի է ընկնում, որ թուրքներն ասելի սիրում են երգել, իսկ հայերը՝ նուագել, այդ պատճառով հայերից բազմաթիվ լաւ նոյն իսկ նշանաւոր թառ ածողներ են դուրս գալիս, իսկ թուրքերից՝ երգողներ:

Շուշին թառ է մատակարարում Վարանդային, Խաչէնին, Դիզակին, Զանգեզուրին, նոյն իսկ՝ Բաքուին, որտեղ հազարաւոր ղարաբաղցիներ կան: Եւ այդ թառերը երբեմն գնահատում են 100-150 ռոբլու, ի նկատի ունենալով նրա զարդարանքը՝ «սադափը», «ղանաղի» կազմը, կշիռը, և որ գլխավորն է՝ ձայնի ուժեղ, ղողանջուն լինելը»<sup>770</sup>:

<sup>762</sup> Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տատեգրություն, 1901-1910, Երևան, 2006, էջ 30-31:

<sup>763</sup> «Մշակ», հմ. 75, 10 ապրիլի, Թիֆլիս, 1907:

<sup>764</sup> Асатрян А., նշվ. աշխ., էջ 151:

<sup>765</sup> «Փայլակ», հմ. 39, 23 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>766</sup> «Ապառաժ», հմ. 12, 27 հուլիսի, Շուշի, 1917:

<sup>767</sup> Асатрян А., նշվ. աշխ., էջ 151:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին աննախընթաց զարգացում է ապրել հայ կերպարվեստի արցախյան դպրոցը: Այդ ժամանակաշրջանում հանդես են եկել մի շարք տաղանդավոր նկարիչներ, քանդակագործներ, որոնք բարձրագույն կրթություն էին ստացել Ռուսաստանի և եվրոպական երկրների առաջավոր բուհերում և, կերպարվեստի ասպարեզում ընկալելով նորարական մոտեցումները, այդ ամենը համադրելով ազգայինի հետ, ստեղծել են բարձրարժեք գործեր: Արցախի կերպարվեստի զարգացման գործում մեծ ներդրում է ունեցել Ստեփանոս Ներսիսյանը (1815–1884 թթ.): Նա ծնվել է Երևանում: Նախնական կրթությունը ստացել է Էջմիածնում և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Ավարտելով Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան՝ 1846 թ. աշխատել է Թիֆլիսում:

Առաջին անգամ Ս. Ներսիսյանը Շուշի է եկել 1848 թ., իսկ 1857–1865 թթ. ապրել և ստեղծագործել է բերդաքաղաքում<sup>771</sup>: Հավանաբար Շուշիի հետ ունեցած ջերմ կապերը 1870-ական թվականներին Ստեփանոս Ներսիսյանին ստիպում են որոշ ժամանակով վերադառնալ հարազատ միջավայր:

1848 թ. Ստեփանոս Ներսիսյանը Շուշիի եկեղեցական ծխական դպրոցում նկարչություն և վայելչագրություն է դասավանդել: Այդ տարիներին նա ստեղծել է «Տղամարդը ծխամուրձով» կամ «Լեռնցի» յուղաներկի պատկերը և գեներալ Մովսես Արղության–Երկայնաբազուկի դիմանկարը:

1857 թ. Ստեփանոս Ներսիսյանը հրավիրվում է Շուշի՝ թեմական դպրոցի նկարչության ուսուցիչ աշխատելու: Շուշիում նա հյուրընկալվում է Համբարձում աղա Հախումյանի տանը, որը դարձել էր քաղաքի մտավորականության հավաքատեղի: Պերձ Պոռչյանը, բանասեր Գարեգին Մուրադյանը, (ապագա Մելիքսեդեկ արքեպիսկոպոսը՝ Զմյուռնիայի հայերի հոգևոր առաջնորդը) և ուրիշներ քննարկում էին հասարակական հրատապ խնդիրներ, կրթական գործի, գրականության, արվեստի հարցեր<sup>772</sup>: Այդ միջավայրում են ձևավորվում Ստեփանոս Ներսիսյանի գեղագիտական հայացքները:

Նա իր կտավներում պատկերել է Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Ներսես Աշտարակեցու, գեներալներ Բարսեղ Բեհրությանի, Արշակ Տեր-Ղուկասյանի, անվանի դերասաններ Սոֆյա Մելիք Նազարյանի, նրա ամուսնու՝ իրավաբան, հասարակական–մշակութային գործիչ Գրիգոր Իգմիրյանի, հրատարակիչ Համբարձում Էնֆիաձյանի, մեծահարուստ վաճառական Ավետիք Թամամյանի, փաստաբան Մելիք–Աղամյանի յուղաներկ

դիմանկարները: Այդ կտավների միջոցով նկարիչը փորձել է գեղարվեստորեն բացահայտել հայ ժողովրդի լավագույն զավակների ներքնաշխարհի առավել բնութագրական կողմերը: Շուշիում ապրելու տարիներին նա ստեղծել է «Խնջույք Քոի ափին» կտավը:

Դպրոցահասակ աղջիկների և կանանց գեղարվեստական ճաշակը զարգացնելու, նրանց գեղագիտական դաստիարակությանը նպաստելու համար Ստեփանոս Ներսիսյանի նախաձեռնությամբ Շուշիում կազմակերպվել է նաև ձեռագործության խմբակ<sup>773</sup>:

Հայ նկարչական արվեստի զարգացման գործում մեծ ավանդ է թողել տաղանդավոր դիմանկարիչ Ստեփան Աղաջանյանը (1863–1940 թթ.): Նա ծնվել է Շուշիում, նախնական կրթությունն ստացել տեղի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում: Ստեփան Աղաջանյանն ուսումը շարունակել է Մարսելի նկարչական ստուդիայում, ապա՝ Փարիզի Ռոբերտ ժյուլիանի ակադեմիայում: Նրա ստեղծագործական վերելքին նպաստել են Լուվրում ցուցադրված Ռեմբրանդի, Վելասկեսի, Դելակրուի, Կուրբի կտավները:

1900 թ. Ստեփան Աղաջանյանը վերադառնում է հայրենի քաղաք: Նա նկարչություն և գծագրություն է դասավանդել Շուշիի դպրոցներում, արվեստի պատմություն՝ թեմականում և ռեալականում: Նա դպրոցներում կազմակերպել է ցուցահանդեսներ և արվեստանոց: Շուշիում ապրելու տարիներին Ստեփան Աղաջանյանը ստեղծել է «Հոր դիմանկարը», «Մոր դիմանկարը», «Քրոջ դիմանկարը» և «Ղարաբաղյան բնանկար» կտավները:

1902–1904 թթ. Ստեփան Աղաջանյանն ապրել է Բաքվում, այնուհետև 18 տարի՝ Դոնի–Ռոստովում: Այդ տարիներին նա մի քանի անգամ երկար ժամանակով եղել է հայրենի Շուշիում:

1921 թ. Ստեփան Աղաջանյանը տեղափոխվում է Երևան և գեղարվեստաարդյունաբերական տեխնիկումում (այժմ Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան) իր փորձն ու գիտելիքները փոխանցում մատաղ սերնդին: 1938 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ ժողովրդական նկարիչի կոչում: Այդ տարիները բեղմնավոր են եղել նկարչի համար: Ընդհանուր առմամբ նա ստեղծել է 130 կտավ: Նրա վրձինն են պատկանում «Գուլպա գործող կինը», «Սեդրակ բիձան», «Մարիետա Շահինյանը», «Ժաման», «Բանվոր», «Խաչատուր Ուսիկյանց» և ուրիշ այլ դիմանկարներ:

<sup>771</sup> Սարգսյան Մ., Ստեփանոս Ներսիսյան, Երևան, 1985, էջ 43–47:

<sup>772</sup> Агасян А., Мастера армянского изобразительного искусства нового времени и Шуши, «Աշխատանքային տետր», հմ. 1–2, Երևան, 2013, էջ 124:

<sup>773</sup> Աղասյան Ա., Նկարիչ Ստեփանոս Ներսիսյանի կյանքն ու գործունեությունը Շուշիում, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 231–232:

Ստեփան Աղաջանյանը սուր դիտողականությամբ, կենդանի անմիջականությամբ, իրեն հատուկ արտահայտամիջոցներով ներկայացրել է իր հերոսների բարեմասնություններն ու դրական համակրելի կողմերը: Նա նոր բարձրության հասցրեց ազգային ռեալիստական նկարչությունը, հանրագումարի բերեց իրեն նախորդող հայկական դիմանկարային արվեստի նվաճումները՝ գեղարվեստական նոր որակի հասցնելով այդ ժանրը<sup>774</sup>:

Ստեփան Աղաջանյանն իր ինքնատիպ կտավներով կապող օղակ դարձավ 19 և 20-րդ դարերի հայ գեղանկարիչների միջև:

Գեղանկարչության աչքի ընկնող դեմքերից էր Մարգարիտ Ալեքսանյանը (1852–1902 թթ.): Ծնվել է Շուշիում, նախնական կրթությունն ստացել Եղիասաբեթ Սարգսյանցի օրիորդաց դպրոցում: Բնությունից օժտված լինելով գեղանկարչի ունակություններով՝ նա իր գործի մեջ հմտացել է ինքնակրթությամբ: Նա երկար տարիներ նկարչություն, վայելչագրություն է դասավանդել տարբեր դպրոցներում, մանավանդ՝ թեմականում և ռեալական ուսումնարանում: 1881 թ. Մարգարիտ Ալեքսանյանը հրատարակել է «Հայկական գեղանկարչություն» ավրումը, որի մեջ արտացոլված են հայկական բնաշխարհը և Արցախին առնչվող տարբեր թեմաներ: Մ. Ալեքսանյանի ձեռագիր աշխատանքներից մեկը՝ Ավետարանը, այժմ պահպանվում է Էջմիածնի մայր աթոռի թանգարանում: Մ. Ալեքսանյանը ձևավորել և նկարագրող է Շուշիում հրատարակված մի շարք գրքեր:

Շուշիում այդ տարիներին մեծ հռչակ էր ձեռք բերել ինքնուս նկարիչ Ղամբար Ղամբարյանը (1830–1905 թթ.): Նա նկարագրող է Շուշիի մեծահարուստների տները, դարձել քաղաքի եկեղեցիների, մանավանդ՝ Ղազանչեցոցի գեղանկարչական հարդարանքների հեղինակը<sup>775</sup>: Ղամբար Ղամբարյանի (Ուստա Ղամբար) «Դիմանկարչական, մանրանկարչական և դեկորատիվ բնույթի ստեղծագործություններում շարունակում էին զարգանալ Շուշիում մինչև այդ ստեղծագործող հայ նկարիչների արվեստի ավանդույթները»<sup>776</sup>:

20-րդ դարի հայ քանդակագործական արվեստի խոշորագույն դեմքերից մեկը՝ Հակոբ Գյուրջյանը, (1881–1948 թթ.) ծնվել է Շուշիում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի ռեալական ուսումնարանում: Հայրենի քաղաքի մշակութաստեղծ միջավայրը կարևոր դերակատարություն է ունեցել պատանու աշխարհընկալման ձևավորման գործում: Նա հաճախակի էր լինում Ստեփան Աղաջանյանի արվեստանոցում, որն ավելի խո-

րացրեց ապագա քանդակագործի հետաքրքրությունները կերպարվեստի նկատմամբ:

1899–1904 թթ. Հակոբ Գյուրջյանը սովորել է Մոսկվայի ռեալական տեխնիկական ուսումնարանում: 1906 թ. նա վերադարձավ Շուշի, ամուսնացավ երգչուհի, դաշնակահարուհի Հայկանուշ Ղալամյանի հետ: Այնուհետև նա նորաստեղծ ընտանիքով տեղափոխվեց Փարիզ և ողջ գիտակցական ստեղծագործական կյանքը կապեց արվեստների մայրաքաղաքի հետ: Նա մեկ տարի սովորել է Մոնպելյեի բժշկական համալսարանում, 1907–1910 թթ.՝ Փարիզի Ժյուլիան ակադեմիայում, ապա հաճախել է Օ. Ռոդենի արվեստանոցը: Նա լավ հարաբերություններ է ունեցել այդ ժամանակաշրջանի Ֆրանսիայի լավագույն քանդակագործների՝ Էմիլ-Անտուան Բուրդելի, Արիստիդ Մայոլի և Շառլ Դեսպիոյի հետ:

Հակոբ Գյուրջյանի արվեստանոցը գտնվում էր Բուլոնում՝ Փարիզի գեղատեսիլ արվարձաններից մեկում, որին հայրենի եզերքի կարոտով անվանել է Շուշի: Այդ տպավորությունների տակ էլ 1910 թ. ստեղծվեցին նրա առաջին քանդակները՝ «Հորովել», «Հայ գեղջկուհիները»<sup>777</sup>: Մինչև իր մահը՝ 1948 թ., Հակոբ Գյուրջյանն ստեղծել է 450-ից ավելի աշխատանքներ՝ դիմաքանդակներ, այլաբանական, կրոնական, պատմական, դիցաբանական կերպարներ, անիմալիստական գործեր: Առանձնապես հայտնի են Ա. Չոպանյանի, Մ. Գորկու, Լ. Տոլստոյի, Ա. Շիրվանզադեի, Անդրանիկի, Մ. Շիրվանզադեի, Ֆ. Շալյապինի, Վ. Տերյանի, Մ. Սարյանի, Գ. Պասկալի դիմաքանդակները: Ի դեպ, Հենրիետա Պասկալի դիմաքանդակն այսօր պահպանվում է Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում: Փարիզի, Բրյուսելի, Բելգրադի, Տոկիոյի թանգարաններին ի պահ են տրված մեծանուն քանդակագործի ստեղծագործությունները: Նրա հեղինակած Լ. Տոլստոյի դիմաքանդակը զարդարում է Փարիզում գտնվող ռուս գրողի անվան հրապարակը:

Արվեստագետի ստեղծագործության մեջ ինքնատիպ միահյուսվել են արևելքի հնագույն և եվրոպական նոր արվեստների լավագույն ավանդույթները: Գյուրջյանի շնորհիվ հայ արձանագործությունը դուրս բերվեց համաշխարհային ասպարեզ:

Շուշիում կերպարվեստի և քանդակագործության վերելքը, քաղաքային կյանքի նոր պահանջները, եվրոպական տիպի լուսավոր բարձրահարկ բնակարանների կառավորման անհրաժեշտությունը նպաստեց նաև ասեղնագործության զարգացմանը: Ծածկոցների, տակդիրների, վարագույրների, սփռոցների, բարձերի, թիկնաբարձերի, սրբիչների ասեղնագործու-

<sup>774</sup> Երեմյան Ա., Գյուրջյան Գ., Նկարիչ Ստեփան Աղաջանյանի կյանքն ու արվեստը, Երևան, 1927, էջ 48–49:

<sup>775</sup> Ղազարեան Մ., նշվ. աշխ., էջ 28:

<sup>776</sup> Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 95:

<sup>777</sup> Агасян А., նշվ. աշխ., էջ 132:



մը շուշեցի կանանց սիրելի զբաղմունքն էր: Այդ աշխատանքների մի մասը դարձել են արվեստի նմուշներ: Նախկին և նոր զարդանախշերն արտացոլել են արցախահայության առօրյա կյանքի, կենցաղի բնորոշ կողմերն ու պատմաագագրական առանձնահատկությունները:

Ասեղնագործության նկատմամբ շուշեցիների հետաքրքրությունն այնքան էր մեծացել, որ դպրոցներում ձեռագործի դասավանդումն առանձին դասընթացով էր իրագործվում:

Շուշիի օրիորդաց դպրոցում 1880-ական թվականներին «Ձեռագործի արվեստ» էր ուսուցանում Զառի Արզումանյանը: Նրա աշակերտուհիներ Վարսենիկ Գյանջեցյանը, Մարիամ Բահաթրյանը, Ոսկի Թավրիզյանը, Բալախանում Առաքելյանը, Կատերինե Դոլուխանյանը դարձել են ասեղնագործության հմուտ գիտակներ<sup>778</sup>:

19-րդ դարի վերջերին Շուշիում ասեղնագործության ուսուցման և տարածման գործում մեծ դերակատարություն ունեին նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը, գեղագիտության, նկարչության ուսուցչուհիներ Մարգարիտ Ալեքսանյանը, Ոսկի Թավրիզյանը, Եկատերինա Բահաթրյանը:

Շուշիում առավել շատ տարածված էին բուսական զարդանախշերը, որոնք ինչպես ոճավորված էին, այնպես էլ՝ ճշգրիտ վերարտադրված: Զարդանախշերի մեջ տարածված էին երկրաչափական պատկերները, սյուժետային ու դիմանկարային մոտիվները:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Շուշիում կառուցված հուշարձանների, պաշտամունքային շենքերի, տարաբնույթ շինությունների ուսումնասիրությունը պարզորոշ ցույց է տալիս այն ընդհանուր օրինաչափությունները, որոնք գոյություն ունեին ինչպես Արցախի, այնպես էլ պատմական Հայաստանի մյուս նահանգների ճարտարապետական դպրոցների զարգացման գործընթացում:

Քննարկվող ժամանակահատվածում Արցախի, մասնավորապես Շուշիի, շինարարական արվեստը հիմնականում չի տարբերվում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Հայաստանում ընդունված շինարարական տեխնիկայից ու համապատասխան կազմակերպումից: Բնակելի տները 2-3 հարկանի էին՝ շինված կոպտաշար կրաքարից, իսկ շենքերի անկյունները, որմնամույթերը, կամարները, բացվածքների շրջանակները, քիվերը, հարդարանքի տարրերը՝ սրբատաշ, երբեմն էլ նախշազարդ քարից, միջհարկային ծածկերը՝ փայտից:

<sup>778</sup> Բագեյան Կ., Շուշիի ասեղնագործական դպրոցը, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 248:

Հայ ճարտարապետության պատմության հմուտ գիտակ Վ. Հարությունյանն իրավացիորեն գրել է. «Ամբողջությամբ վերցրած նրանք (խոսքը վերաբերում է շինարարական արվեստի պաշտպանված նմուշներին – Վ. Բ.) համոզիչ վկայում են, որ «Հայաստանի արևելյան կողմանց» կամ պատմական Արցախի ճարտարապետությունը մշտապես ստեղծագործական կապ է պահպանել կենտրոնական Հայաստանի ճարտարապետության հետ, սնվել նրա նվաճումներով, և հանդիսանում է զուտ հայկական»<sup>779</sup>:

Հարկ է նշել, որ մինչև 19-րդ դարի սկիզբը, ինչպես Արցախում, այնպես էլ Շուշիում կառուցված տների մեծ մասը գլխատներ էին, որոնց հարակից շինությունները փայտաշեն էին: Միջնադարում բերդավանի բնակելի տները կառուցվում էին առանց համապատասխան հատակագծի և պատահական չէ, որ ժամանակի ընթացքում ի հայտ էին գալիս բազմաթիվ կենցաղային անհարմարություններ: 18-րդ դարի Շուշիի երկու եկեղեցիները նույնպես փայտաշեն էին: Այդ կառույցների մի մասը մնացին մինչև 19-րդ դարի վերջերը և հաճախ մեծ հրդեհների պատճառ էին դառնում:

1877 թ. ապրիլի 20-ի երեկոյան Շուշիի թուրքական շուկայում հրդեհ է բռնկվում: Վառվում է 30 փայտաշեն խանութ, որոնց մեջ նաև մի քանի մարդիկ<sup>780</sup>: Նույն ձևով 1879 թ. սեպտեմբերի 1-ին հրդեհի ճարակ դարձան տասնյակ խանութներ<sup>781</sup>: Ամենայն հավանականությամբ դրանով էին պայմանավորված վրացական զինվորական օկրուգի ինժեներական ծառայության պետ, գեներալ-մայոր Պոստելսոնի կողմից 1846 թ. Շուշիի հատակագծի մեջ կատարած փոփոխությունները, ըստ որի պետք է քանդվեին արդեն քաղաքի կարգավիճակ ստացած բնակավայրի 700 հին տները<sup>782</sup>: Սակայն այդ ծրագիրը չիրագործվեց:

19-րդ դարի սկզբներից սկսած՝ Շուշիում տնտեսական և մշակութային կյանքն աննախադեպ վերելք ապրեց: Դրան զուգընթաց՝ քաղաքն արագորեն կառուցապատվում է քաղաքաշինության կանոնավոր սկզբունքներով: Դա պայմանավորված էր ոչ միայն ստեղծված համեմատաբար բարենպաստ միջավայրով, այլ կառուցողական արվեստի, շինարարական գործի կատարելագործմամբ, մշակույթի առաջընթացի նվաճումների արմատավորմամբ, հասարակության կողմից առաջադրված գործնական պահանջներով և իշխող գաղափարների ազդեցությամբ:

<sup>779</sup> Арутюнян В., Единины по духу и воплощению, «Коммунист», но. 194, Ереван, 1989.

<sup>780</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 17, 7 մայիսի, Թիֆլիս, 1877, էջ 4:

<sup>781</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 72, 19 սեպտեմբերի, Թիֆլիս, 1879, էջ 4:

<sup>782</sup> ЦГИА Грузии, ф. 4, оп. 2, ед. хр. 1915, стр. 1-2.

Ճարտարապետության զարգացումը սերտորեն կապված էր այն արմատական փոփոխությունների հետ, որոնք տեղի ունեցան երկրամասի տնտեսական և մշակութային ընդհանուր վերելքում:

Ելնելով քաղաքաշինության առանձնահատկություններից՝ քննարկվող ժամանակաշրջանում կազմվել և իրականացվել է Շուշիի կառուցապատման չորս գլխավոր հատակագիծ: 19-րդ դարում կազմված երեք հատակագծերը պահպանվում են Ռուսաստանի կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվում:

Առաջին հատակագիծը թվագրված չէ զինվորական ռուս ինժեներների կողմից: Հավանաբար կազմվել է 19-րդ դարի 20–30-ական թվականներին<sup>783</sup>: Մեսրոպ Թաղիադյանը, նկարագրելով 1820-ական թվականներին Շուշիում ծավալված շինարարությունը, նշել է, թե ինչպես նախկին փայտաշեն եկեղեցիների փոխարեն հայ մեծահարուստ ընտանիքների մեկենասությամբ կառուցվում են քարաշեն հողակապ տաճարներ, երկհարկանի բնակելի տներ, հյուրանոցներ, խանութներ և մշակութային լուսավորական բազմաթիվ շենքեր: Այդ հարցում առանձնապես նախանձախնդիր էին ժամհարյանների, Հախումյանների, Թառումյանների, Յուզբաշյանների գերդաստանները<sup>784</sup>:

Շինարարական այդ եռուգեղը պահանջ առաջացրեց 1836 թ. կազմելու երկրորդ հատակագիծը: Ամրոց բնակավայրում այդ ժամանակ կար քարաշեն 1698 տուն<sup>785</sup>:

Երկու հատակագծերում էլ ուրվագծված են հիմնական ճանապարհները, հրապարակները, պաշտամունքային և ռազմապաշտպանական շինությունները: Շինարարական գործն օրեցօր քաղաքում նոր թափ էր ստանում: 1851 թ. Շուշիում արդեն կային քարաշեն 1836 տներ և մի քանի հարյուրի հասնող հյուղակներ, որոնք գտնվում էին մահմեդականներով բնակեցված թաղամասում<sup>786</sup>:

1846 թ., Շուշիին քաղաքի կարգավիճակ տալուց հետո, անհրաժեշտություն առաջացավ կազմել նրա նոր հատակագիծը: Այն հաստատվել է 1853 թ.: Հատակագծի մեջ տեսանելի են քաղաքի 7 հրապարակները, ճանապարհները: Սարահարթի վրա հստակ երևում են նաև հայկական ու թուրքական թաղամասերը, որոնք ինչ որ մի տեղ ինքնուրույն առանձին բնա-

կավայրերի տպավորություն են թողնում: Շուշին հիմնականում կառուցապատվեց 1853 թ. մինչև 20-րդ դարի սկիզբը: Շուշեցի ճարտարապետները հսկում էին, որ քաղաքը կառուցվի ըստ հատակագծի: Եթե մինչև 19-րդ դարի կեսերը ճարտարագետները ռուսներ էին, ապա դրանից հետո այդ դերը իրենց վրա վերցրեցին հայ մասնագետները:

19-րդ դարում Շուշիում ապրել և ստեղծագործել են նշանավոր ճարտարապետներ Սիմոն Տեր Հակոբյանը (ծնված 1846 թ.), Համբարձում Ալեքսանյանը (1854–1890 թթ.), Մարգարե Մելիք Ղարակոչյանը (1846–1906 թթ.), Սարգիս Գասպարյանը (1820–1906 թթ.), Միաքայել Տեր Եսայանը (ծնված 1834 թ.), Արմենակ Ղոնդաղսագյանը, Ֆրեյդուն Աղալյանը<sup>787</sup>: 1915 թ. քաղաքի գլխավոր ճարտարապետն էր Բաղդասարյանը<sup>788</sup>, իսկ 1916 թ.՝ Ա. Բակունցը<sup>789</sup>:

19-րդ դարի երկրորդ կեսին, տնտեսական կյանքի վերելքի պայմաններում, Շուշիում աննախադեպ ծավալներ է ստանում ճարտարապետական-կառուցողական արվեստը: Ջարկ է տրվում քաղաքային բնույթի վարչական, ուսումնական, տնտեսական, առողջապահական, զանգվածային միջոցառումների համար նախատեսված շենքերի շինարարությանը, ինչն իր հերթին նպաստում է ճարտարապետական նոր ոճի ձևավորմանը: Երկու-երեք հարկանի, մեծ պատշգամբներով լուսավոր, նախշազարդ պատուհաններով կղմինդրածածկ տները կամարակապ դռները, քանդակազարդ վանդակներով փայտից և քարից պատրաստված աստիճանները Շուշիի ճարտարապետությանը բնորոշ կողմերն էին: Տներն ունեին ամուր հիմքեր, նկուղներ, ձիանոցներ: Մինչև տասը մետր երկարության դահլիճները շուշեցի մեծահարուստների պալատների կարևոր մասն էին կազմում, որտեղ ընդունում էին հյուրերին, կազմակերպում հարսանիքներ, խնջույքներ, անգամ թատերական ներկայացումներ: Սենյակների պատերի մեջ կառուցվում էին վառարաններ և պահարաններ: Տներն ու լայնարձակ բակերը փողոցի կողմից կտրված էին քարե ցանկապատներով, որոնց վրա դրված էին կամարակապ մեծ դռներ: Շուշեցիների բակերում թոնիրները և ջրհորերն անպակաս էին: Ճարտարապետական ուրույն ոճով աչքի էին ընկնում թեմական դպրոցը, քաղաքի ակումբի շենքը և Խանդամիրյանի եռահարկ 350 տեղանոց թատրոնի շենքը (կառուցված 1871–1891 թվականներին), Մարիամյան օրինորդաց դպրոցը (կառուցված 1891 թ.), ժամհարյանների քաղաքային հիվանդանոցը, ռեալական ուսումնարանի շենքը և այլն: Թեմական դպրոցը

<sup>783</sup> Саркисян М., Уроки градостроительства Шуши, «Աշխատանքային տետր», հմ. 1–2, Երևան, 2013, էջ 42, 44:

<sup>784</sup> Թաղիադյան Մ., նշվ. աշխ., էջ 266:

<sup>785</sup> Обозрение российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, ч. 3, стр. 309.

<sup>786</sup> «Кавказский календарь на 1852 год», Тифлис, 1851, стр. 433.

<sup>787</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 25, 136–137, 271:

<sup>788</sup> «Փայլակ», հմ. 36, 12 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>789</sup> «Փայլակ», հմ. 65, 25 օգոստոսի, Շուշի, 1916:

Շուշիի ամենանշանավոր շենքերից մեկն էր, որը գտնվում էր Լոռի-Մե-լիքյան փողոցի կենտրոնական մասում, Սեյրանանց աղբյուրի մոտ, Առաջ-նորդարանի շենքի հարևանությամբ: Թեմականի շինարարությունը սկսվել էր 1830-ական թվականներին և որոշ ընդհատումներից հետո ավարտին հասցվել է 1870-ական թվականներին՝ Սարգիս Ջալալյանցի ժամանակ: Շենքը կառուցված էր սրբատաշ խոշոր քարերից և բաղկացած էր մեկ կիսանկուղային և երկու լրիվ հարկերից: Կիսանկուղային հարկը բաղկացած էր յոթ սենյակներից, որտեղ գետնեղված էին գրադարանը, հանդերձարանը, դպրոցի տպարանը: Երկրորդ և երրորդ հարկերում կային 15 դասասենյակներ, տեսչանոց, ուսուցչանոց և 450 հանդիսատեսի համար նախատեսված դահլիճ: Դահլիճի պատերից կախված էին հին պատմական թանկարժեք նկարներ: Դպրոցն ուներ ընդհարձակ բակ, որտեղ կային բազմաթիվ ու բազմատեսակ մարմնամարզական հարմարություններ<sup>790</sup>: Ցավոք, մեր ժողովրդի համար կարևոր դերակատարություն ունեցած կրթական հաստատության շինությունն այսօր գոյություն չունի: Ռեալականի նոր հոյակերտ շենքը կառուցվել է 1901-1908 թվականներին Շուշեցի մեծահարուստ Գրիգոր Առաքելյանի միջոցներով, որի մասին պատմող գրությունն առայսօր պահպանվում է կառույցի ճակատային մասում: Շենքն ուներ ընդարձակ դահլիճ, լուսավոր ընդարձակ դասասենյակներ: Լեռն իրավացիորեն նկատել է, որ ռեալական ուսումնարանի շենքը ամենահոյակապն էր Շուշի քաղաքում<sup>791</sup>:

Ռուս հայտնի նկարիչ Վ. Վերեշչագինը, 1865 թ. լինելով Շուշիում, գրել է. «Շուշին լիովին տարբերվում է անդրկովկասյան քաղաքներից, որտեղ ես բախտ եմ ունեցել լինել: Երևանը, Նախիջևանը, Ելիզավետպոլը, որտեղ ես եղել եմ, իրենց վրա կրում են արևելքի բնութագիրը: Տները այդ քաղաքներում փոքր են, ցածրահարկ, հիմնականում կառուցված աղյուսից և հողից ու աչքի են ընկնում սակավաթիվ պատուհաններով և ցածր տանիքներով, որոնք շատ հաճախ կորչում էին շրջակա այգիների կանաչի մեջ: Փողոցները նեղ են, կեղտոտ, անհամաչափ:

Շուշին լիովին տարբերվում է այդ քաղաքներից: Տները համաչափ են կառուցված, գեղեցիկ են, բարձր, իսկ լուսավորությունը գերազանց է ապահովված, մանավանդ բազմաթիվ պատուհանների առկայության պայմաններում:

<sup>790</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 176:

<sup>791</sup> Բալայան Վ., XIX դարի և XX դարի սկզբներին Շուշիի շինարարական կառուցողական արվեստի ծեռքերումները և քաղաքի ազգային դիմագծի պահպանման արդի խնդիրները, «Կաճառ», հմ. 6, (71-82), 2012, Շուշի, 2014, էջ 79-80:

Քաղաքը կառուցված է այն քարից, որի հանքերը անմիջապես գտնվում են քաղաքի տակ: Փողոցները ամենուր սալահատակ են, տանիքները եվրոպական ոճի՝ կղմինդրապատ»<sup>792</sup>:

Պատահական չէ, որ ժամանակակիցները Շուշին անվանում էին «Փոքր Փարիզ»: Շուշին իր գեղեցկությամբ մշտապես գրավել է տեղագիր հեղինակների ուշադրությունը: Այսպես, 1885 թ. ամռանը Հայկունին, լինելով Շուշիում, իր տպավորությունները ներկայացրել է հետևյալ ձևով. «Երևակայեցեք մի նեղակ գոգաուր հովիտ, չորս կողմը լեռներ, մեջտեղում մի այլ լեռ, որոյ գլխին 5-6000 տներ՝ լոխն (բուրն) էլ քարաշեն և միայրկ, երկնայարկ և եռայարկ, մի քանիսն էլ քառայարկ: Մի հատիկ էլ հինգ յարկանի շինություն կայ, և այն էլ իջևանատուն: Տների ամենամեծ մասը՝ դստիկոններով, պատշգամբներով և ցանցաձև վանդակապատ լուսամուտներով է: Կտուրները թեք, մեծագույն մասը՝ աններկ և դիմացկուն փայտից, փոքրագույնը՝ երկաթեայ թիթեղից: Կան, որ ծածկուած են խառն՝ երկու իսկ նիւթից: Տները՝ քար, փողոցները՝ քար, շրջապատ պարիսպը՝ քար, չորս կողմը՝ քար, մի նոր տեսակ Ջէթուն կամ Սասուն է»<sup>793</sup>:

1891 թ. «Տարագ»-ի թղթակիցը, նկարագրելով Շուշին, գրել է. «Սարի գագաթը, որ բնութիւնը ստեղծել է Շուշու համար հարթ ու հաւասար չէ: Նրա վրայ բարձրանում են մեծ ու փոքր թումբեր, որոնք իրանց կարողութեան չափ մեծ ու փոքր ձորեր են կազմում: Թումբերն ու ձորերը հայերի թաղումն են, իսկ արևելեան կողմը, որ հարթ տափարակի է նման ամբողջապես թուրքերին է պատկանում: Հայերի բաժինը, տարածած լինելով թումբերի լանջերին, հեռուից նայողի առաջ աւելի գեղեցիկ և աւելի տիրապետող դիրք ունի: Օրինակ, նայեցէք հարաւային ժայռի գլխից դէպի հիւսիս: Ձեր առաջ երևում են բազմաթիւ մեծ ու փոքր տներ, որոնք մի գեղանկար անկարգութիւն են կազմում և ընկղմած են կանաչ պարտէզների ու ծառերի մէջ: Ամենից բարձր տեղ երևում է Նոր-թաղի փոքրիկ եկեղեցին, նրանից ցած՝ մեծ ու լայն առաջնորդարանը, ուր գետնուած է և Ղարաբաղի թեմական դպրոցը. Այդ շինութիւնը կարծեմ միակն է ամբողջ քաղաքի մէջ, որ գրաւելով լաւ տեղը, իր մեծութեամբ և դիրքով առանձին ուշադրութիւն է գրաւում քաղաքի ամեն կողմից նայելիս: Յետոյ գալիս են հայերի մեծամեծ տները, որոնց նմանը չըկայ թուրքերի բաժնում, ուր հոտած, նեղ ու մթին, սարսափելի փողոցները ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւնների բոյնն են կազմում»<sup>794</sup>:

<sup>792</sup> Верещагин В., Путешествие по Закавказью в 1864-1865 гг., стр. 260.

<sup>793</sup> Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, էջ 10:

<sup>794</sup> «Տարագ», հմ. 22, Թիֆլիս, 1891, էջ 318:

1902 թ. ականատեսը քաղաքի հայկական և թուրքական թաղամասերի առնչությամբ նշել է. «... լեռան լանջերի ստորին մասերում թիրքերի թաղն է, իսկ վերևի՝ հայերն են մեկը միսի վրայ կառուցել կրամիտի նման կարծր քարից և երկաթապատ պատուհաններով և դռներով իրանց անառիկ տները: Շուշու բոլոր տները քարաշէն են, կալ և կրով հիմքերը ապառաժ քարի վրայ և դժար թէ Շուշում կարելի լինի գտնել խոնաւ բնակարան»<sup>795</sup>:

1905 թ. «Տարագ»-ի մեկ այլ թղթակից գրել է. «Հայոց թաղն անհամեմատ մաքուր է, տները շինած են երոպական ճաշակով, փողոցները ծածկած են քարով, եզրերը սայլաց՝ մայթերով: Տների մեծամասնությունը շինուած է մի քանի յարկից: Կան և չորս յարկանի տներ: Իւրաքանչիւր տուն իրան կից ունի մրգաւետ այգի ծաղիկներով զարդարուն: Մեծ փողոցի վրայ է գտնուում հայոց վիճակաւոր առաջնորդարանը և նրան կից Թեմական դպրանոցը՝ չորս յարկանի քարաշէն տուն, որ կանգնել է երջանկայիշատակ Բաղդասար միտրոպոլիտ Արքեպիսկոպոսը»<sup>796</sup>:

Հայ մշակույթի և գիտության նշանավոր ներկայացուցիչները, որոնք աշխատանքի բերումով ապրել և ստեղծագործել են Շուշում, Արցախի մայրաքաղաքի ճարտարապետական ձեռքբերումներից տպավորված, իրենց հողվածներում և նոթերում որդիական ջերմությամբ ու ականատեսի ճշգրտությամբ ներկայացրել են այդ ամենը:

1903 թվականին իր տեսած Շուշին այսպես է նկարագրել Հրաչյա Աճառյանը. «Գեղեցիկ էր Շուշի քաղաքը ... տները ընդհանրապես քարաշէն են, սպիտակ, խոշոր, տաշած քարերով շինված: Կտուրը հարթ չէ, այլ ունի եռանկյունաձև տախտակյա տանիք, որ պարսկերեն բարբառով կոչվում էր թախթափուշ: Կտուրները ներկված են կարմիր, և բարձունքից դիտողը կարմիր, կանաչ և սև գույների զանազանությամբ սիրուն տեսարան ունի առաջը»<sup>797</sup>: Այդ ամենին լրացնելով՝ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը, 1955 թ. լինելով հայրենի Շուշիում, նկատել է. «Բոլոր տները, առանց բացառության, կառուցված են նույն տիպարով: ... Ստացվել է գեղեցիկ ու հետաքրքիր դասավորություն, որի շնորհիվ այդ քաղաքը բնավ չի կարող ձանձրացնել, չնայած բոլոր տները կառուցված են միևնույն «ճարտարապետությամբ»: Դա բոլորովին չի խանգարել, որ Շուշին դառնա կոլորիտային, երփներանգ՝ իր կրկնություններով հանդերձ, ավելին, այդ կրկնությունները գունախաղ են ստեղծում տների տարբեր բարձրության ռելիեֆի հարստու-

թյան, որմնախորշերի ու պատշգամբների բազմազանության, փողոցների անսպասելի դարձերի շնորհիվ»<sup>798</sup>:

Շուշիի քարաշէն տների թիվը անհավանական ձևով աճում էր: Եթե 1836 թ. Շուշիում կար քարաշէն 1851 տուն<sup>799</sup>, ապա 19-րդ դարի 80-ական թվականներին այդ թիվը մի քանի անգամ աճեց և հասավ 5779-ի<sup>800</sup>:

Ջարգացող քաղաքի համար շուշեցի ճարտարապետները նախատեսել էին նաև կանաչ գոտիներ՝ զբոսայգիներ: Շուշիի ամենամեծ զբոսայգիներից մեկը կառուցվել է 1859 թ.: Այն ձգվում էր Գանձակի դարպասներից մինչև նախկին խանական պալատ: Ջբոսայգին ուներ 100 սաժեն երկարություն և 20 սաժեն լայնություն<sup>801</sup>:

Շուշիում էին գտնվում քաղաքապետարանը, դատարանի, Առաջնորդարանի գավառային վարչության հին և նոր շենքերը: Միայն գավառային վարչության հին շենքից բացի, մնացածները տեղավորված էին հայկական թաղամասում:

Շուշիի հայաբնակ թաղամասերից յուրաքանչյուրն ունեցել է իր կենտրոնն ու եկեղեցին: Աղբյուրներում 1784 թ. օգոստոսի 2-ին հիշվում է Շուշիի «... նորաշէն եկեղեցւոյն նախջուանցւոց ...»<sup>802</sup>:

18-րդ դարում եղած պաշտամունքային կառույցների փոխարեն 19-րդ դարում Շուշիում սկսեցին վեր հաննել քարաշէն եկեղեցիներ: 1816 թ. կույս Հռիփսիմե Բահաթրյանցի միջոցներով նրա հոր կալվածքի վրա կառուցվում է Կուսանաց Սբ. Աստվածածնի միանավ թաղածածկ եռահարկ զանգակատնով վանքը: Առաջին մայրապետը եղել է Հռիփսիմե Բահաթրյանցը: Նա մահացել է 1865 թվականին: 1886 թ. Կուսանաց անապատի մայրապետն էր Վառվառա Բահաթրյանցը<sup>803</sup>:

1920 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Անապատից փրկվել են միայն Հռիփսիմե մայրապետն ու սարկավագուհի Նունե Սարգսյանը, որոնք հետագայում ապաստանել են Աշխաբադում<sup>804</sup>:

Ագուլեցոց Սբ. Աստվածածնի եկեղեցու մասին առաջին տեղեկությունները վերաբերում են 1785 թ., երբ Ղուկաս կաթողիկոսը թուղթ էր հղել «Առ

<sup>798</sup> Իսրայելյան Ռ., Հողվածներ, ուսումնասիրություններ, ակնարկներ, Երևան, 1982, էջ 20-21 և 129-131:

<sup>799</sup> «Кавказский календарь на 1852 год», Тифлис, 1851, стр. 433:

<sup>800</sup> ՀԱԱ, ֆ. 319 ց. 1, գ. 1, թ. 52:

<sup>801</sup> ЦГИА Грузии, ф. 8, оп. 1, ед. хр. 2254, стр. 3.

<sup>802</sup> Դիվան Հայոց պատմության, գիրք առաջին, հատոր Ա, էջ 450:

<sup>803</sup> «Նոր Դար», հմ. 75, Թիֆլիս, 1886, էջ 3, հմ. 111, Թիֆլիս, 1894, էջ 2-3:

<sup>804</sup> ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2722, թ. 7-8:

<sup>795</sup> «Տարագ», հմ. 32, Թիֆլիս, 1902, էջ 341:

<sup>796</sup> «Տարագ», հմ. 30, Թիֆլիս, 1905, էջ 286:

<sup>797</sup> Աճառյան Հր., Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 251:

Ազուլեցի Թումանի որդի Իփակչի Աստուածատուրին հարազատ գանձապետն մեր որ Շուշոյ բերթն, ի Նախիջևանցուց եկեղեցուցն»<sup>805</sup>:

1822 թվականին եկեղեցին վերակառուցվել է Ջոերապ, Մարկոս, Բաբա և Օհանջան Տեր Մատթեոսյան Թառումյան եղբայրների միջոցներով և հայտնի էր որպես «... զհոյակապ նորաշէն տաճարս յանուն սբ. Աստուծածնի»<sup>806</sup>: Դրա մասին վկայող արձանագրությունը գրված է եղել հարավային դռան ճակատային սրբատաշ քարին. «Կաման Աստուծոյ Սուրբ Աստուծածնայ աւագ եկեղեցիս կառուցին արդեամբք եւ ծախիւք իւրեանց իշխանաք ազնուագգի հարազատ աղայք Ջոհրապ. Հովհանջան. Մարկոս եւ Բաբա տէր Մատթեոսեն Թառումեանց ընդ որս եւ որդիք նոցա Յովհաննէս աղային եւ Աւետիս աղայ ի յիշատակ եւ ի փրկութիւն հոգուց իւրեանց և սոցա ծնողաց. ամուսնոց. որդուց. դստերաց իւրեանց ամենից եւ առհասարակ ննջեցելեցն և Տէր ի կայանս երկնից. ի 1822 ամի Տեան»<sup>807</sup>: Վերոհիշյալ արձանագրության մի մասը վերջերս գտնվել է Շուշիի հայկական գերեզմանատանը:

Ազուլեցոց եկեղեցին եռանավ բազիլիկ էր: Եկեղեցին կառուցված է եղել Խաչատուր Աբովյանի անվան ներկայիս դպրոցի մի մասի տեղում: Ազուլեցոց եկեղեցու երկարությունը 30 մետր էր, լայնությունը 17,50 մետր: Պատերն անտաշ քարից էր կառուցված և սվաղված էր: Եկեղեցին ուներ երեք մուտք: 1843 թ. եկեղեցին վերանորոգվել է: 1859 թ. մայիսի 12-ի երկրաշարժի հետևանքով այն վնասվել է<sup>808</sup>, որի պատճառով 1868–1887 թվականներին նորից հիմնանորոգվել է: Մոսկվաբնակ շուշեցիների միջոցներով 1888 թ. կառուցվում է եկեղեցու գմբեթը<sup>809</sup>: Բարերարների մեջ մեծ էր Մ. Պատվականյանի ներդրումը: Ի տարբերություն Շուշիի մյուս եկեղեցիների՝ Ազուլեցոցը շատ կալվածքներ ուներ: Շուշիում ուներ երկու սենյականոց բնակարան և 12 կրպակներ: Նրան էր պատկանում նաև Շարուր–Դարալագյազ գավառի Այնագուր (այժմ Աղավնաձոր), Ղզղաշ (այժմ անմարդաբնակ), Արարատի շրջանում Բախչաջուր (այժմ անմարդաբնակ) գյուղերը՝ 7103 դեսյատին տարածքով<sup>810</sup>:

Ազուլեցոց եկեղեցու քահանաներն էին 1821–1849 թվականներին՝ Ստեփան տիրացու Հայրապետյան Տեր Գրիգորյանցը, 1823–1849 թվականներին՝ Հովհաննես տիրացու Գրիգորյան Հեթումյանցը, 1821–1857 թվականներին՝ Խաչատուր Գրիգորյան Տեր–Օհանյանցը, 1823–1849 թվա-

կաններին՝ Հարություն Հակոբ–Քևխիյան Մելիքյանցը, 1851–1857 թվականներին՝ Ղևոնդ–Գրիգորյան Հեթումյանցը, 1874–1910 թվականներին՝ Գարեգին ավագ քահանա Աստվածատրյան–Հովհաննիսյանցը, 1894–1910 թվականներին՝ Կարապետ քահանա Տեր–Սարգսյան Վարդապետյանցը, 1901–1910 թվականներին՝ Արսեն քահանա Հախումյանցը<sup>811</sup>:

1905 թ. թուրքերը հրկիզում են եկեղեցին: Եկեղեցու պաշտպանությունն իրականացրել են մեկ տասնյակ հայորդիներ՝ 25 ամյա Ասլան Աղաբաբյանի հրամանատարությամբ: Նա մարտերի ժամանակ զոհվել է: Կիսավեր վիճակում եկեղեցին մնացել է մինչև 1960-ական թվականները: Թուրքերն այն օգտագործում էին որպես պահեստ: 1972 թ. եկեղեցին թուրքերը հիմնովին քանդեցին և տեղը մինչև 1974 թվականը կառուցեցին Շուշիի թիվ 4 թուրքական (ադրբեջանական) դպրոցը<sup>812</sup>:

1708 թվականի ձեռագրում հիշվում է Շուշիի Մեղրեցոց Սբ. Աստվածածնի եկեղեցու մասին<sup>813</sup>: Ամենայն հավանականությամբ եկեղեցին փայտաշեն էր:

Նույն եկեղեցու տեղը Մահտեսի Բաբա Հախումյանը 1832 թվականին կառուցում է Մեղրեցոց Սբ. Աստվածածնի եռանավ բազիլիկ եկեղեցին:

Եկեղեցու երկարությունը 24,75 մետր էր, իսկ լայնությունը 12,70 մետր: Այն կառուցված է Շուշիի սրբատաշ քարով: Սրբատաշ է եղել նաև եկեղեցու եռահարկ զանգակատունը: Վերոհիշյալ զանգակատունն իրենց միջոցներով կառուցել են Ներսես Ղազարյանը և Մինաս Վարդապետյանը<sup>814</sup>: 1906 թվականին եկեղեցին վերակառուցվել է: Խորհրդային Ադրբեջանի չարակամ ձեռքը հասավ նաև այս եկեղեցուն: 1925 թվականին Մեղրեցոցը գտնվում էր ծայրահեղ քայքայված վիճակում. «Մեղրեցոց եկեղեցույ լուսամուտներ, դռներ հանած, ոտքները նոյնպես, 4 սյունանոց տաճար, հիւսիսային պատի տակի շքեղ քանդակով տապանը անգիր, մարմարը հանած: Զանգակատունը իսպառ քանդած, չորս ոտքը կանգուն առանց սրբատաշ քարերի, արձանագիրը ընկած քանդած քարերի մեջ»<sup>815</sup>:

Մեղրեցոց եկեղեցու քահանաներից են եղել 1825–1830 թվականներին՝ Կարապետ Հարությունյան Ջգնավորյանցը, 1836–1857 թվականներին՝ Մկրտիչ Տեր Հովհաննիսյան Մինաս Վարդապետյանցը, 1844–1850

<sup>805</sup> ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 616, թ. 24:

<sup>806</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2626, թ. 8:

<sup>807</sup> Բարխուդարյան Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 92–93:

<sup>808</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3826, թ. 1–2, 12:

<sup>809</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8413, թ. 1:

<sup>810</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 264–265:

<sup>811</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 12, գ. 531, թ. 1, 2, 3, ֆ. Պ–56, ց. 18, գ. 542, թ. 10, գ. 564, թ. 259–260, ֆ. 57Պ, ց. 3, գ. 44, թ. 1–6:

<sup>812</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 239:

<sup>813</sup> Թօփճեան Յ. Յակոբ, Յուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի մասն Ա., էջ 45:

<sup>814</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 415, թ. 29:

<sup>815</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 415, թ. 30ա:

թվականներին՝ Հովակիմ Տեր-Գասպարյան Տերտերյանցը, 1849–1857 թվականներին՝ Գրիգոր Իսրայելյան Տեր Գրիգորյանցը, 1851–1857 թվականներին՝ Գրիգոր Հովհաննիսյան Իսկանդարյանցը, 1909–1910 թվականներին՝ Մինաս քահանա Մինաս Վարդապետյանցը, 1886–1910 թվականներին՝ Խորեն քահանա Իսկանդարյանցը, 1892–1910 թվականներին՝ Բարսեղ քահանա Տեր Մելիքսեդեկյանցը<sup>816</sup>:

Խորհրդային տարիներին Մեղրեցոց եկեղեցին վերափոխել և դարձրել են ամառային կինոթատրոնի շենք: Այսօր եկեղեցու արևելյան պատը լիովին պահպանվում է: 1,5 մետր բարձրության վրա պահպանվում են նաև եկեղեցու մյուս երեք պատերը:

Շուշիի արևելյան թուրքաբնակ հատվածում հայերն ապրում էին առանձին թաղամասում, որը հայտնի է «Ներքին թաղ» անունով: 19-րդ դարի սկզբներից թուրքերի կողմից ճնշումները մեծացան, և ծագումով դարաբաղի, տեղացի հայերը ստիպված 1840 թվականին տեղափոխվեցին Վերին թաղ<sup>817</sup>:

Նրանք Ներքին թաղում ունեին քարաշեն Սբ. Աստվածածնի եկեղեցին: 1827–1849 թվականներին այդ եկեղեցու քահանան էր Դավիթ Հովհաննիսյան Բաղդասարյանցը<sup>818</sup>: Ի դեպ, «Ներքին թաղ»-ում կար նաև մի սրբավայր՝ անհայտ նահատակի գերեզման, որը հայտնի է «Քամու խաչ» անունով: Սրբավայրը հարգի էր ոչ միայն քրիստոնյաների, այլ նաև մահմեդականների համար: Վերին թաղ տեղափոխվելուց հետո նրանք 1840 թ. կառուցում են փայտաշեն եկեղեցի:

Շուշեցի եղբայրներ Հովհաննես և Բաբա Հունանյանները ցանկություն էին հայտնել Վերին թաղում իրենց միջոցներով կառուցել նոր եկեղեցի:

1847–1857 թվականներին նույն սրբատեղիում կառուցվեց արդեն քարաշեն, խաչաձև գմբեթավոր Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին՝ Կանաչ ժամը: Այն հայտնի է նաև Ղարաբաղցոց եկեղեցի անունով, որն առայսօր կանգուն է:

1905 թ. եկեղեցու վանահայրը եղել է Հովհան Հովակիմյան Ղահրամանյանցը: 1878–1910 թվականներին Կանաչ ժամի միաբաններից էր Հովհաննես ավագ քահանա Տեր Գևորգյան Տեր Գրիգորյանցը, 1890–1910 թվականներին՝ Մուշեղ ավագ քահանա Վարդապետյանցը, 1865–1910 թվականներին՝ Դանիել քահանա Տեր-Հակոբյան Տեր Գրիգորյանցը,

1901–1910 թվականներին՝ Սամվել քահանա Գասպարյանցը, 1915 թվականին՝ Պետրոս Տեր Հովհաննիսյանցը<sup>819</sup>:

1842 թ. Ջրաբերոցոց թաղի ծխականները եկեղեցի կառուցելու խնդրանքով դիմում են հոգևոր իշխանություններին, բայց այն չի իրագործվում: 1857 թ. շուշեցի Մարիամ Գևորգյանը խնդրագրում նշել է, որ իր հանգուցյալ ամուսնու՝ Անդրեաս Մարգարյան Խանդամիրյանցի կտակած 10 000 ռուբլին ցանկանում է իր վաղամեռիկ որդու՝ Մնացականի հիշատակին Ջրաբերոցոց թաղում կառուցել եկեղեցի<sup>820</sup>:

Հոգևոր իշխանությունները դրա համար տրամադրում են առաջնորդարանին կից մեծ այգին, որը 1877–1879 թվականներին պարսպապատել է Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը<sup>821</sup>:

1883 թ. Անդրեաս Մարգարյան Խանդամիրյանցի կտակակատարներ Բաբա Բեգլարյանցն ու Հակոբ Օրբելյանցը ոչ միայն եկեղեցու, այլ նաև իգական դպրոցի կառուցման խնդրանքով վերստին դիմել են Արցախի թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Սագինյանցին: Այդ ժամանակ 10 000 ռուբլին բանկում դարձել էր 40 000 ռուբլի<sup>822</sup>: 1920 թվականին եկեղեցին ավերվել է: Հետագայում եկեղեցու տեղը առողջարանի շենք է կառուցվել:

Շուշիի ամենամեծ եկեղեցին համարվում է Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր տաճարը: 19-րդ դարի սկզբներին ներկայիս եկեղեցու տեղը գոյություն է ունեցել գմբեթավոր բազիլիկի հորինվածքով եկեղեցի:

Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին քայքայված վիճակում էր: 1847 թ. ծխականները դիմել էին հոգևոր իշխանություններին՝ վերանորոգելու թույլտվություն ստանալու: Սակայն, նկատի ունենալով եկեղեցու ծայրահեղ վատ վիճակը, նպատակահարմար գտնվեց հնի տեղում նոր եկեղեցի կառուցել: 1844–1858 թվականներին Հովհաննես և Աբրահամ Յարամիշյանները կառուցեցին Ղազանչեցոցի եռահարկ զանգակատունը<sup>823</sup>, որն առայսօր կանգուն է: Ջանգակատունը 22 մետր բարձրություն ունի: Շինության երկրորդ հարկի չորս անկյուններում փող փչող հրեշտակների մեծադիր քարե արձաններ են դրվել:

1860-ական թվականներին ծրագրվել էր փայտաշեն եկեղեցու տեղը կառուցել Անիի մայր տաճարի նման եկեղեցի: Սակայն ինչ-ինչ պատճառներով այդ մտահղացումը չիրականացվեց:

<sup>819</sup> ՀԱԱ, ֆ. Պ. 56, ց. 18, գ. 764, թ. 259–260, ֆ. 57–Պ, ց. 3, գ. 44, թ. 15–22, «Արարատ», հմ. 3, Վաղարշապատ, 1905, էջ 312, հմ. 5, 1915, էջ 435:

<sup>820</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3618, թ. 1:

<sup>821</sup> «Արձագանք», հմ. 23, Թիֆլիս, 1887, էջ 341:

<sup>822</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 861, թ. 2:

<sup>823</sup> Саркисян М., Из истории градостроительства Шуши, стр. 24.

<sup>816</sup> ՀԱԱ, ֆ. Պ– 56, ց. 12, գ. 531, թ. 10, գ. 538, թ. 15, ց. 18, գ. 542, թ. 27, ց. 18, գ. 538, թ. 23, ց. 18, գ. 764, թ. 259–260, ֆ. 57 Պ, ց. 3, գ. 44, թ. 23–28:

<sup>817</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2199, թ. 1:

<sup>818</sup> ՀԱԱ, ֆ. Պ 56, ց. 12, գ. 533, 538:

1868 թ. մայիսի 21-ին, ճարտարապետ Սիմոն Տեր Հակոբյանի նախագծի համապատասխան, դրվեցին եկեղեցու հիմքերը<sup>824</sup>: Նույն թվականի հունիսի 20-ին Գրիգոր եպիսկոպոս Սագինյանցի առաջնորդությամբ տեղի էր ունեցել «... մեծաւ հանդեսի հանդերձ դասուք հոգևորականաց և խուռն բազմութեամբ ժողովրդականաց կատարեցաւ միօք օծումն հիմանց Ամենափրկիչ անուն եկեղեցւոյ Հայոց Ղազանչեցոց հասարակութեան Շուշի քաղաքի ...»<sup>825</sup>:

Եկեղեցին կառուցելու հանգանակություններ կատարելու գործում մեծ էր երեցփոխ Ավետիս Յարամիշյանի դերը: Նյութական սղության պատճառով աշխատանքները ձգձգվել են և ի վերջո ամբողջացել են 1887 թվականին՝ շուշեցի Թադևոս Թամիրյանի նյութական օժանդակությամբ: 19 տարվա ընթացքում եկեղեցու շինարարության համար ժողովուրդը ծախսել էր 100 000 ռուբլուց ավելի<sup>826</sup>:

Եկեղեցին զարդարված է եղել արձաններով: Ժամանակակիցը Ղազանչեցոց և Ագուլեցոց եկեղեցիների մասին գրել է «... զարդ ու զարդարանքը անկարելի է հաշուել»: Մեկ այլ ականատես հիացմունքով նկատել է «Եկեղեցին մի հիանալի շինութիւն է ներկայացնում, որի նմանը, ինչպէս հաւատացնում են շատերը, չը կայ Կովկասի և ոչ մի հայկական տեղում: Նա շինուած է սրբատաշ սալաքարերից, հին հայոց ճարտարապետութեան կանոններով»<sup>827</sup>: 1889 թ. եկեղեցու շրջակայքը սալահատակվել էր Հովհաննես Խունյանցի միջոցներով<sup>828</sup>:

Ղազանչեցոցը 37 մետր բարձրություն ունի (արտաքին չափերը 44x38 մետր) և այդ տեսանկյունից միայն զիջում է Երևանում կառուցված Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցուն: Շուշիի եկեղեցիները, դրանց շրջակայքում եղած մշակութային արժեք ունեցած տապանաքարերը դարձան թուրքերի այլատյացության զոհերը: Միայն հայ մարդու համառության և պայքարի շնորհիվ փրկվեցին Կանաչ Ժամր և Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր տաճարը:

Ղազանչեցոցի քահանաներն են եղել 1817–1857 թվականներին՝ Հովհաննես Ղազարյան Շամախյանցը, 1828–1849 թվականներին՝ Ավագ Մինասյան Մխիթարյանցը, 1828–1857 թվականներին՝ Թադևոս Դանիելյան Տեր–Սահակյանցը, 1836–1857 թվականներին՝ Առաքել Թովմասյան Յուզ-

բաշյանցը, 1848–1849 թվականներին՝ Ռաֆայել Ղազարյան Վրթանեսյանցը, 1817–1857 թվականներին՝ Հովհաննես Տեր Գաբրիելյան Տեր–Գրիգորյանը, 1849–1857 թթ. Հովհաննես Հարությունյան Տեր–Մարտիրոսյանցը, 1878–1910 թվականներին՝ Հակոբ ավագ քահանա Այվազյանցը, 1892–1910 թվականներին՝ Հարություն ավագ քահանա Տեր–Սարգսյան Վարդապետյանցը, 1888–1910 թվականներին՝ Մեսրոպ քահանա Ապրեսյանցը, 1904–1910 թվականներին՝ Եղիշե քահանա Թարխանյանցը<sup>829</sup>:

Ղազանչեցոցի մոտ հուղարկավորել են հայ նշանավոր գործիչների, բարերարների: Եկեղեցու հարավ–արևմտյան մասում եղել է Արցախի թեմի առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոս Կ. Պոլսեցու տապանաքարը՝ վախճանված 48 տարեկանում, 18 սեպտեմբերի 1882 թվականին, հարավային կողմում՝ Թադևոս Բաբայանց Թամիրյանցի (1832–1899, 8 դեկտեմբերի) սև մարմարից տապանաքարը, ինչպես նաև Միքայել Թամիրյանցի (7 նոյեմբեր 1878– 25 օգոստոսի 1903), Արտեմ Աբրահամյանի (Տեր Մարտիրոսյան, 1881 մարտի 3, վախճ. 1906 հուլիսի 14–ին), Մարգար Համբարձումյան Ժամհարյանցի (1878–1905 թ. օգոստոսի 16–ին), Պողոս Գասպարյան Ալեքսանյանցի (17 փետրվարի 1872 թ. 44 տարեկան) տապանաքարերը<sup>830</sup>:

1925 թվականին Ղազանչեցոցը գտնվում էր ծայրահեղ անմխիթար վիճակում. «Ղազանչեցոց եկեղեցին գոմանոցի վերածած, դռներ, պատուհաններ հանած, ատեանի վերին կամարից երկու տեղ ծոված, սեղանի խաչկապի փայտը մնում է»<sup>831</sup>:

Շուշիի մահմեդական թաղամասում ժողովրդական բնակելի տները ոճական և շինարարական արվեստի տեսանկյունից, հիմնականում հայկական հատվածի շինությունների կրկնությունն են: Այս փաստը մեզ միանշանակ հուշում է, որ այդ շինությունները հայ քարագործ վարպետների կատարած աշխատանքի արդյունքն են: Ի դեպ նկատենք, որ խորհրդային շրջանում ևս հայ շինարարները կառուցում էին ԼՂԻՄ–ին հարակից ադրբեջանական և քրդական բնակավայրերի տների զգալի մասը:

Մահմեդականներին պատկանող կառույցների մեջ ճարտարապետական արժեք ունի «Խանի աղջկա» պալատը, որը կառուցվել է հայ ճարտարապետների և արհեստավորների կողմից: Այն կառուցվել է 19-րդ դարի կեսերին:

<sup>824</sup> «Նոր Դար», հմ. 170, Թիֆլիս, 1889, էջ 2:

<sup>825</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 12, գ. 511, թ. 5:

<sup>826</sup> «Մշակ», հմ. 33, Թիֆլիս, 1887, էջ 3; «Մասիս», հմ. 3868, Կ. Պոլիս, 1887, էջ 114:

<sup>827</sup> Կովկասյան լուրեր «Մասիս», հմ. 3868, Կ. Պոլիս, 1887, էջ 114:

<sup>828</sup> «Նոր Դար», հմ. 170, Թիֆլիս, 1889, էջ 2:

<sup>829</sup> «Արձագանք», հմ. 23, Թիֆլիս, 1887, էջ 341; ՀԱԱ, ֆ. Պ–56, ց. 12, գ. 538, գ. 18, գ. 542, 746, թ. 259–260, ֆ. 57Պ, ց. 3, գ. 44, թ. 7–14:

<sup>830</sup> ՀԱԱ, ֆ. 319, գ. 1, գ. 415, թ. 35, 36, 36ա, 37, 37ա:

<sup>831</sup> ՀԱԱ, ֆ. 319, գ. 1, գ. 415, թ. 41:

Ադրբեջանցի հեղինակների կարծիքով՝ 18-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի սկզբները Շուշիում կառուցվել են 9 մզկիթներ<sup>832</sup>։ Դրանք հիմնականում կառուցված էին եղեգից, փայտից։ Դրանցից միայն երկուսը, որպես 19-րդ դարի շինություններ, ճարտարապետական առումով կարևոր նշանակություն ունեն և այսօր պահպանվում են ԼՂՀ իշխանությունների և ժողովրդի կողմից։ Խորհրդային տարիներին Ադրբեջանի ղեկավարությունը և նրանց խոսափող պատմաբանները, Շուշիում ամեն ինչ ադրբեջանական տեսնելու մարմաջով, հիմնականում ոչնչացրել են պատմաճարտարապետական արժեք ներկայացնող հայկական բնակելի և հասարակական նշանակության հնամենի շենքերը, պաշտանմունքային կառույցները, գերեզմանոցները, իսկ մնացածն էլ վերակառուցելով, արձանագրությունները քերելով, շինությունների որոշ մասեր փոփոխելով, իսլամական ճարտարապետության ոճին մոտեցնելով փորձել են «սեփականացնել» և այդ ամենը «գիտականորեն հիմնավորել»։ Ավելին, նրանք այդ ամենը փորձել են վերագրել Ղարաբաղի խաներին, այդ այն դեպքում, երբ Շուշիի ճարտարապետական արժեք ներկայացնող շինությունները կառուցվել են 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին։

Սակայն մինչև խորհրդային շրջանը Շուշիի հայկական ճարտարապետական կոթողներին սպասվում էին տխուր և կործանարար ժամանակներ։ 1905–1906 թվականների հայ-թուրքական ընդհարումների և 1920 թվականի մարտի 23-ի հայկական ջարդերի ժամանակ հրո ճարակ դարձան մշակութային արժեք ունեցող հայկական ճարտարապետական կառույցները։

Վերընձյուղվելու, նորից ստեղծելու շնորհիվ օժտված շուշեցի հայ մարդը 1905–1906 թվականների դեպքերից հետո ձեռնամուխ եղավ վերաշինելու իր հին ու նոր բերդաքաղաքը։

1912 թվականին Շուշիի գլխավոր ճարտարապետ Ա. Ղոնդաղսագյանի կողմից կազմվեց քաղաքի թվով չորրորդ հատակագիծը<sup>833</sup>։ Նրա անունով է կոչվել քաղաքի փողոցներից մեկը։ Ճարտարապետ Ա. Ղոնդաղսագյանը զբաղվել է նաև գյուղատնտեսությամբ։ Ունեցել է կովերի ֆերմա։ Արցախում նա առաջինն է շշերի մեջ կաթ արտադրել և մատակարարել շուշեցիներին<sup>834</sup>։

Շուշիի խոշոր կառույցներից մեկը համարվում է բանտը։ Բերդը Ղարաբաղի խանության շրջանում բանտ է ունեցել։ 1868 թ. Ելիզավետպոլի նա-

հանգապետի հրամանով քաղաքի հյուսիս-արևելյան մասում 2000 քառակուսի մետր հողատարածք է հատկացվում, որի վրա էլ 160 հոգու համար բանտ է կառուցվում։ Բանտն ունեցել է նաև առանձին հիվանդանոց։ Բանտի առաջին ավագ հսկիչն էր Եֆիմ Կիրչիկը<sup>835</sup>։

Շուշիի հայության շինարարական գործունեությունն իր բազմաթիվ դրսևորումներն ունեցավ նաև ամրոցաշինության բնագավառում։

Շուրջ 610 հա տարածություն զբաղեցնող բերդի արևմտյան, արևելյան և հարավային հատվածները շրջափակված են բնական պարիսպներով, ինչպես դիպուկ բնութագրել է Հակոբ սարկավագ Շուշեցին. «... յԱստոյ էր ամրացրել։ Մնացած հյուսիսային մասը,– նշում է նա,– շրջապատված էր 5000 կանգուն ընդհանուր երկարությամբ պարսպապատերով, որոնց մեջ կա 50 աշտարակ և 4 դարպաս»<sup>836</sup>։ Պարիսպները ունեին 6–9 մետր բարձրություն։ Տարբեր հատվածներում պատերի հաստությունը 1 մ-ից հասնում է մինչև 2,1 մետրի։ Իրարից 3,5 մետր հեռավորության վրա գտնվում են հրակնակետերը։

Շուշիի ամրոցի շրջագիծը 10 284 գծամետր է, որի 6894 մետրը ժայռեր են, իսկ 3990 մետրը քարուկրե պատ<sup>837</sup>։

Բերդն ունեցել է չորս դուռ։ Հյուսիսային հատվածում Գանձակի կամ Ելիզավետպոլի դռներն են, արևմտյանը՝ Երևանյանը, հյուսիս արևելյանը՝ Ամարասի կամ Մխիթարաշենի։ Արևելյան հատվածի չորրորդ դուռը բացվում է Քարինտակ գյուղի վրա։ Ներկայումս Ամարասի (Մխիթարաշենի) և Քարինտակ տանող դռները պատերով փակված են։

Մեզ հասած Շուշիի պարիսպների մեծ մասը կառուցվել է 18-րդ դարի սկզբներից մինչև 19-րդ դարի 20-ական թվականները։

Շուշիի բնակելի տները, պաշտպանական, հասարակական, պաշտամունքային շինությունների մեծ մասը հայկական դասական և ժողովրդական ճարտարապետության արժեքավոր նմուշներ են, որոնց պահպանությունն ու վերականգնումը համայն հայության և, առաջին հերթին՝ արցախահայության սրբազան պարտքն է համարվում։

Այսպիսով, փաստերն ու մեկնաբանությունները հիմք են տալիս ասելու, որ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Արցախի սրտում՝ Շուշիում աստիճանաբար ձևավորվում են հայության այդ հատվածի մշակութային նոր ավանդույթներ, որոնք համահայկական ծիրի մեջ բյուրեղանում և դառնում

<sup>832</sup> Авалов Э., Архитектура города Шуши и проблемы сохранения его исторического облика, стр. 69; Фатуллаев Ш., Градостроительство и архитектура Азербайджана XIX – начала XX века, стр. 100.

<sup>833</sup> Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 221:

<sup>834</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 25:

<sup>835</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 203:

<sup>836</sup> Մատենադարան, ձեռ. 2734, էջ 3: Ըստ Հ. Հարությունյանի բերդն ունի 21 երկհարկանի աշտարակ, որոնցից 5-ը լրիվ ավերված են, բայց պահպանվում են հիմքերը, տես՝ Հարությունյան Հ., Շուշի, էջ 12:

<sup>837</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 12:



են համազգային արժեքներ: Շուշիի հայության մշակույթն առաջընթաց քայլ է կատարում՝ իր մեջ ներառելով ժամանակաշրջանի առաջնային գաղափարները, հիմքում ունենալով ազգայինը:

### զ) Շուշին Արցախի հոգևոր թեմական կենտրոն

18-րդ դարի վերջերին ու 19-րդ դարի առաջին տասնամյակներում բավական լուրջ տարաձայնություններ էին առաջացել Աղվանից կաթողիկոսական աթոռի շուրջը: Տարաձայնությունների հիմնական պատճառը տվյալ շրջանում պետք է որոնել հատկապես արտաքին և, ինչ-որ չափով, նաև ներքին հանգամանքներում: Այսպես, օրինակ, եթե Աղվանից հոգևոր առաջնորդը աջակցություն էր ստանում Գանձակի խանի կողմից, ապա բնականաբար, նա միաժամանակ արժանանում էր խանի հակառակորդների թշնամական վերաբերմունքին: Տարաբախտաբար, քաղաքական այս հակասությունների մեջ ներքաշված էր նաև Էջմիածինը: Եվ քանի որ Եփրեմ Ձորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսն իր հերթին հատուկ համակրանք էր տաժում տվյալ ժամանակաշրջանում Աղվանից հոգևոր առաջնորդի հավանական թեկնածու Սարգիս Հասան-Ջալալյանցի նկատմամբ, ուստի և ամեն կերպ խոչընդոտում էր, որպեսզի Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռը չանցնի նրան: Ամենայն Հայոց կաթողիկոսը նույնիսկ բանադրեց Սարգսին, որի պատճառով նկատելիորեն թուլացավ վերջինիս դիրքերն անգամ իր կողմնակիցների շրջանում: Բավական երկարատև ներեկեղեցական այս պայքարի արդյունքում, ինչպես նաև Էջմիածնի հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով ի վերջո Սարգիս Հասան-Ջալալյանցը հրաժարվում է կաթողիկոսությունից:

Եփրեմ Ձորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսի հատուկ շրջաբերական կոնդակով 1815 թ. Աղվանից կաթողիկոսությունը վերացվում է և նույն կոնդակով նախկինում Աղվանից կաթողիկոսության մեջ ընդգրկված թեմերը միավորվում են՝ կազմելով Ամենայն Հայոց կաթողիկոսության ենթակայության տակ գտնվող մետրապոլիտություն: Մետրապոլիտի աստիճան շնորհելով Սարգիս Հասան-Ջալալյանցին՝ նա նշանակվում է թեմի առաջնորդ<sup>838</sup>:

Աղվանից կաթողիկոսության վերացումը, անշուշտ, իր բացասական հետևանքներն ունեցավ ազգային պետականությունից զրկված Հայոց

<sup>838</sup> Տես՝ Լ. Մկրտումյան, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը 17-19-րդ դարերում, ատենախոսության սեղմագիր, Երևան, 2001, էջ 20:



Շուշին տիեզերքից



Շուշի քաղաքի համայնապատկեր



Շուշիի կիրճը



Շուշին 1850-ական թվականներին



Արվեստների քաղաքի և բնության սիմֆոնիան



Շուշեցիների առօրյան (19-րդ դարի կեսեր)



Շուշին 19-րդ դարի երկրորդ կեսին



Շուշիի համայնապատկեր (19-րդ դարի կեսեր)




Շուշին 19-րդ դարի վերջերին



Շուշիի արևելյան բերդապարսպի աշտարակները




Շուշիի Գանձակի (Ելիզավետպոլյան) դարպասից ձգվող պարսպաշարը



Շուշիի բերդապարսպի հյուսիսային հատվածը



Շուշիի մուտքը Գանձակի (Ելիզավետպոլյան) դարպասից




Մեղրեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին, կառուցվել է 1833 թ.




Մեղրեցոց եկեղեցու ներկայումս պահպանված արևելյան արսիղն ու կից խորանները



1905 թ. հայ-թաթարական ընդհարումներից հետո:  
Առաջին պլանում Ղազանչեցոց և Ագուլեցոց եկեղեցիները:



Ագուլեցոց եկեղեցու խորանը: 1905 թ. լուսանկար:



Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին, կառուցված 1868-1887 թթ.:  
19-րդ դարի երկրորդ կեսի լուսանկար:



Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին խորհրդային տարիներին



Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու ներկայիս տեսքը



Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (Կանաչ ժամ)՝ կառուցված 1847-1857 թթ.



Թաղևու Թամիրյանի աղբյուրը



Աղբյուր՝ կառուցված 19-րդ դարի վերջերին



Պեխե (Իսահակի) աղբյուրը




Շուշիում Կարա Մուրզայի կազմակերպած երգչախումբը



Գր. Միրզյանցի երգչախումբը, 1902 թ.







Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցը: 19-րդ դարի լուսանկար:



Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցը կիսավեր վիճակում



Ռեալական ուսումնարարանի շենքը՝ կառուցված 1901-1908 թթ.



Շուշիի արհեստագործական ուսումնարանը



Շուշիի քաղաքային գիմնազիայի շենքը



Մահտեսի Հակոբյանցի տպարանի շենքը



Շուշիի օրիորդաց դպրոցը



Թարխանյանների իջևանատունը, ներկայումս Ազգային պատկերասրահի շենքը



Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցը.  
 ներկայումս ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության շենքը



Ժամհարյանների հիվանդանոցը՝ կառուցված 1902 թ.



Թ. Թամիրյանցի ջրամբարը



Շուշեցի երիտասարդները Թ. Թամիրյանի գերեզմանաքարի մոտ



Նախկին տպարանի շենքը, ներկայումս Նարեկացի կենտրոնը



Նախկին տպարանի շենքը, ներկայումս Արցախյան գորգերի թանգարանը



Ռեուտի տունը



Թառույանների տունը՝ կառուցված 19-րդ դարի սկզբներին



Շուշին 1920 թ.՝ հայերի ջարդերից հետո



Շուշիի հյուսիսային գերեզմանոցը



19-րդ դարից պահպանված պատկերաքանդակներ



Ունցիկի տունը (19-րդ դար)



19-րդ դարից պահպանված Շուշիի բնակելի թաղամասերից հատվածներ



Բնակելի տուն Շուշիում (19-րդ դար)



Քաղաքային շուկան՝ կառուցված 19-րդ դարում



Շուշիի շրջվարչակազմի և քաղաքապետարանի շենքը



Քաղաքային շուկան վերանորոգումից հետո



Շուշիի տեխնոլոգիական համալսարանի շենքը





Շուշիի «Գրանդ հոթել» հյուրանոցը



Շուշիի «Ավան պլազա» հյուրանոցը

Արևելից կողմանց հայության համար, քանի որ նման պայմաններում այն երկրամասի հայությանը միավորող միակ ազգային հաստատությունն էր՝ թեկուզ և իր բացասական կողմերով հանդերձ: «Որքան կենդանի եղած է Աղուանից կաթողիկոսությունն, նույնքան պայծառ եղած են Աղուանից վանքերը: Բայց այս կաթողիկոսության մահից յետոյ՝ օրեցօր յափշտակված են վանօրեից կալուածներն, ցրուած են միաբանութիւններն և քայքայված են վանքերը»<sup>839</sup>:

Եվ այսպես, 1815–1828 թթ. Արցախի հոգևոր թեմն առաջնորդեց Սարգիս Ջալալյանցը. «... ձեռնադրութեան աշխարհական իշխանութեան օրինաբանեալ Տէրութեանն Ռուսաց վեր առաւ պատիւ և կոչումն կաթողիկոսական, և տուաւ միևնոյն անձին փոխան այնր կորման պատիւն մետրապօլութեան յԱրքեպիսկոպոսական պաշտաման»<sup>840</sup>:

Երկրամասում 19–րդ դարի սկիզբը նշանավորվեց քաղաքական նոր իրադարձություններով: 1804–1813 թթ. ռուս–պարսկական պատերազմից հետո, որն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով, հոկտեմբերի 12–ին Արցախի Գյուլիստան բերդավանում կնքված հաշտության պայմանագրով Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև Ղարաբաղի, Գանձակի և հարակից մի շարք այլ խանություններ: Փաստացիորեն այս պայմանագիրը հայ ժողովրդի համար ընդհանուր առմամբ իր դրական կողմերով հանդերձ՝ նաև բացասական որոշ հետևանքներ ուներ, թեկուզ և այն պարզ պատճառով, որ հայ ժողովուրդը միաժամանակ հայտնվել էր երեք առանձին տիրակալությունների տիրապետության տակ: Ինչ վերաբերում է հայոց եկեղեցուն, ապա արտաքին քաղաքական այս բաժանումներն, անշուշտ, ավելի էին նպաստում ներեկեղեցական հակասությունների սրմանը: Տվյալ պարագայում Հայ Աղվանից հոգևոր թեմը, գտնվելով ռուսական կայսրության տիրապետության տակ, իսկ Հայոց Մայր Աթոռը՝ պարսկական, բավական լուրջ արգելքներ էին հարուցվում նրանց միասնական գործելակերպի վրա:

Սարգիս Ջալալյանցի աթոռակալության շրջանում, չնայած այն ամենին, որ նրա նկատմամբ Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսի կողմից բազմաթիվ խոչընդոտներ էին հարուցվում՝ իր իսկ թեմում հոգևոր պարտականությունների իրականացման բնագավառում, բայց և այնպես նա մշտապես հնազանդորեն էր կատարում Էջմիածնի կողմից տրվող պատվիրանները: Դրա մասին հստակ վկայված է Մատենադարանում պահվող նրա նամա-

<sup>839</sup> Բարխուտարյանց Մ., Արցախ, էջ 156:

<sup>840</sup> Շահխաթունեանց Յովհ., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ Գաւառացն Արարատայ, էջ 349:

կում<sup>841</sup>: Արցախի թեմին առնչվող վավերագրերից մեկում վկայված է, որ «Արցախի թեմի առաջնորդ Ջալալեան արքեպիսկոպոսը հոգևոր ջերմեռանդ ծառայութեան համար Ալեքսանդր Երկրորդ կայսեր կողմից պարգևատրվել է սուրբ Վլադիմիրի երկրորդ աստիճանի շքանշանով (1820, 30 օգոստոսի, Ցարսկոյե սէլօ)»<sup>842</sup>:

Չնայած Պարսկաստանի կողմից հարուցվող արգելքներին՝ 1821 թ. Շուշի այցելեց Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսը, որը մեծաշուք ընդունելության արժանացավ թե՛ ժողովրդի, և թե՛ անգամ Ղարաբաղի Մեհտի-ղուլի խանի կողմից: Ամենայն Հայոց կաթողիկոսը որոշ ժամանակ մնաց Շուշիում՝ միջոցներ ձեռնարկելով հենց այստեղ էլ հանդիպել Ներսես Աշտարակեցուն: 1822 թ. Շուշիում կայացած հանդիպումից հետո Եփրեմ կաթողիկոսն ու Ներսես Աշտարակեցին այցելեցին նաև Գանձասար, որտեղ նրանց մեծ շուքով դիմավորեցին Արցախի թեմի առաջնորդ Սարգիս Ջալալյանցն ու Արցախի հոգևորական բարձր խավը: Գանձասարում կայացած այս հանդիպումը ևս մեկ վկայություն է Արցախի թեմի առաջնորդի անհատական վեհության ու մեծահոգության, քանի որ, անտեսելով տվյալ ժամանակաշրջանում Հայ եկեղեցու երկու մեծությունների անբարեհաճ վերաբերմունքն իր անձի նկատմամբ, որի արդյունքում նա զրկվել էր կաթողիկոսական կոչումից, այդուհանդերձ, արժանավայել ընդունելություն կազմակերպեց և մեծագույն պատվով էլ ճանապարհեց: Այդ մասին բոլոր մանրամասները ներկայացրել է Մեսրոպ Թաղիադյանը<sup>843</sup>:

Այսպիսով, տարաբնույթ փաստերի քննության արդյունքում անժխտելիորեն պետք է ընդունել Սարգիս Հասան-Ջալալյանցի ազգանվեր ծառայությունները: Հոգևոր առաջնորդը հոգ է տարել նաև Գանձասարի վանքի բարեկարգման ուղղությամբ՝ իրականացնելով վերանորոգումներ, որի մասին վկայված է վանքի տարածքում պահպանված արձանագրության մեջ:

Սարգիս Հասան-Ջալալյանցը վախճանվել է 1828 թ. և հուղարկավորվել Գանձասարի վանքի գավթում. «Այս է տապան Սարգիս Աղուանից կ/ա/թ/ո/դ/ի/կ/ո/ս/ին, որ է յազգէն Ջալալ Դօլին, թվի(ն) ՌՄՀԷ (1828)»<sup>844</sup>: Նրա արժանապատվության ողջ ժամանակաշրջանում Գանձասարը շարունակում էր մնալ որպես արցախահայության հոգևոր կենտրոն:

Սարգիս Հասան-Ջալալյանցի մահից միայն երկու տարի հետո՝ 1830 թ. նոյեմբերի 13-ին, Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսի կոնդակով Ղարա-

բաղի թեմի մետրոպոլիտ կարգվեց նրա եղբայր Բաղդասար Հասան-Ջալալյանցը<sup>845</sup>:

1836 թ. մարտի 11-ի Ռուսական կայսրության կողմից հաստատված «Յաղագս կառավարութեան գործոց Լուսավորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան» հատուկ կանոնադրությամբ՝ հայտնի «Պոլոժենիե» անվամբ, կայսրության տիրապետության տակ գտնվող հայ եկեղեցին բաժանվում է 6 թեմերի՝ Նոր Նախիջևանի, Աստրախանի, Վրաստանի, Շիրվանի, Երևանի և Ղարաբաղի<sup>846</sup>:

Կանոնադրության մեջ հատուկ կետով նշված էր նաև առանձին թեմերի աշխարհագրական սահմանները: Ղարաբաղի թեմի մեջ ներառված էին նաև Շաքի և Թալիշ գավառները: Համաձայն Էջմիածնի սինոդի հրամանով 1837 թ. կազմված «Հայ եկեղեցու վիճակագրութիւնը Կովկասում» օրագրության տվյալների՝ Ղարաբաղի թեմի մեջ ընդգրկված էին՝ «3 վանք, 53 եկեղեցի, 32 ժամատուն, 1 եպիսկոպոս, 6 վարդապետ, 2 աբեղայ, 117 ավագ քահանայ և քահանայ, 10 սարկավագ, 98 դպիր, 6 կոյս և 3 դպրոց»<sup>847</sup>: Իսկ 1840 թ. կազմված վիճակագրության համաձայն՝ նրանում մասնավորապես ներառված էին երեք քաղաքներ՝ Շուշի, Նուխի, Լենքորան և 156 գյուղ, որոնք բոլորը միասին ունեին 7167 տուն հայ ազգաբնակչություն<sup>848</sup>:

1839 թ. Ղարաբաղում ստեղծվել է վանական կառավարություն<sup>849</sup>: Մի շարք վավերագրեր փաստում են, որ վանական կառավարության մեջ նախ և առաջ ընդգրկվում էին հեղինակություն վայելող հոգևորականներ, որոնք պատասխանատու էին եկեղեցական կանոնների, ժամերգությունների, կարգադրությունների ճշտորեն կատարման համար:

Ղարաբաղի թեմի հոգևոր կենտրոնը նոր կանոնադրությամբ դարձավ Շուշին, որտեղ էլ տեղակայվեց առաջնորդարանը: 1837 թ. հուլիսի 1-ին Ռուսական կայսերական հրամանով թեմի առաջնորդ և հոգևոր վարչության նախագահ նշանակվեց Բաղդասար Հասան-Ջալալյանցը<sup>850</sup>: Ղարաբաղի թեմի առաջնորդը նույն թվականին իր օրինական օծումն ընդունեց նաև Էջմիածնում, որից հետո վերադարձավ ու հաստատվեց Շուշիում:

Եվ այսպես, Շուշին պաշտոնապես ճանաչվեց Ղարաբաղի հոգևոր կենտրոն: Լեոյի քննորոշմամբ՝ «Շուշին դառնում էր հոգևոր կենտրոն այն հայու-

<sup>845</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 12, գ. 532:

<sup>846</sup> Երիցյան Աղ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք 19-րդ դարում, մաս Բ, Թիֆլիս, 1895, էջ 557:

<sup>847</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 14:

<sup>848</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգևոր դպրոցի, էջ 7:

<sup>849</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 14:

<sup>850</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 116:

<sup>841</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 9-10:

<sup>842</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>843</sup> Թաղիադեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 270-330:

<sup>844</sup> Դիվան հայ վիճագրության, պրակ V, էջ 66:

թյան համար, որ ապրում էր երեք քաղաքներում (Շուշի, Նուխի, Լենքորան) և դրանց վերաբերուող գաւառներում»<sup>851</sup>:

Շուշին Ղարաբաղի հոգևոր կենտրոնի վերածելու գործում նշանակալից ներդրում ունեցավ Բաղդասար Հասան Զալալյանցը: Հատկանշական է, որ նրա կյանքի ու գործունեության բոլոր ուսումնասիրողները, ժամանակի բոլոր վավերագրերը միանշանակորեն հատուկ պատկառանքով են խոսում հոգևորական գործչի մասին՝ նրան ներկայացնելով նախ և առաջ որպես ազգանվեր, մեծ ժողովրդականություն վայելող առաջնորդ: «Արդէն այն հանգամանքը միայն, որ անդամալոյծ մի եպիսկոպոս էր կառավարում մի ամբողջ թեմ, մի անդամալոյծ, որ եկեղեցական ծեսերը կատարում էր յատուկ բազկաթոռի մէջ նստած և որին ձեռքերի վրայ էին այս ու այն կողմ տանում, ցոյց էր տալիս, թէ որքան կարևոր նշանակութիւն ուներ մետրապոլիտը ժողովրդի և հոգևոր իշխանութեան աչքում: ... Նա մի ստեղծագործող ոյժ էլ էր, որ ուղղութիւն էր տալիս, որին նայում էին պատկառանքով ... Անդամալոյծ առաջնորդը հարկաւոր դէպքերում այցելութիւններ էր անում իր ժողովրդի անդամներին, երբ հարկաւոր էր ազդու միջամտութիւն գործել զանազան առիթներով»<sup>852</sup>: Բազմաթիվ փաստեր վկայում են, որ Բաղդասար մետրոպոլիտն իր ողջ հնարավորություններով մշտապես պաշտպանել է ժողովրդի շահերը:

Տնտեսական ծանր վիճակ էր ինչպես ժողովրդի, այնպես էլ նրա հոգևոր հաստատության համար: Եվ այս ամենի հիմնական պատճառներից մեկը տիրող անօրինականությունն ու առանձին անհատների կողմից ցուցաբերվող կամայականությունն էր, հիմնախնդիր, որի դեմ պայքար էր ծավալել թեմակալ առաջնորդը: Թեմի մեջ ներառված եկեղեցիների մեծ մասը տարբեր պատճառներով զրկվել էր վանքապատկան իրենց կալվածքներից, իսկ դրանք վերադարձնելը բավական լուրջ հիմնախնդիր էր, որն էլ դարձավ Բաղդասար մետրոպոլիտի հիմնական մտահոգություններից մեկը: Վանքապատկան կալվածքների վերադարձման, ինչպես նաև երբեմնի մեծաշուք վանքերի ու եկեղեցիների վերանորոգման հիմնահարցը, որից կախված էր վանքերի ու եկեղեցիների հետագա գոյությունը նրա իսկ ներկայացմամբ բազմաթիվ անգամներ քննարկման է դրվել նաև Մայր Աթոռում: «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» աշխատության Ղարաբաղի հոգևոր թեմին նիվիրված պրակի մեջ զետեղված են Բաղդասար մետրոպոլիտի բազում գրությունները թեմի մեջ ընգրկված բազմաթիվ եկեղեցիների ու վանքերի վերանորոգման կապակցությամբ:

<sup>851</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգևոր դպրոցի, էջ 97:

<sup>852</sup> Նոյն տեղում, էջ 118:

Բաղդասար մետրոպոլիտի արժանահիշատակ ձեռնարկումներից է նաև նրա ծավալած կրթալուսավորական գործունեությունը, որի առաջին քայլերից մեկն էլ հանդիսանում է տպագրական գործը: Բազելցի քարոզիչներից գնելով Շուշիում նրանց հիմնած տպարանը՝ հոգևոր առաջնորդը մեծ ջանքեր է գործադրում՝ տեղում հրատարակչական գործը պատշաճ մակարդակին հասցնելու ուղղությամբ: Անշուշտ, տպագրվող հիմնական նյութը եկեղեցական բովանդակություն ուներ: Բայց և, Լեոյի խոսքերով. «չը պիտի մոռանանք ոչ մի դէպքում, որ տպարանը իւրաքանչիւր տեղում յայտնագործում է եղած գրական ոյժերը և նպաստաւոր մթնոլորտ է պատրաստում՝ նոր ոյժեր առաջ բերելու համար: Միևնույն դերը ճշտութեամբ կատարում էր տպարանը և Շուշում»<sup>853</sup>: Տպագրված գրքերի շարքում հիշատակման արժանի գործ էր Եսայի Հասան-Զալալյանի «Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից» տպագրված 1839 թ.:

Տպագրական գործը, անշուշտ, նույնպես իրականացվում էր ծանր պայմաններում, քանի որ գտնվում էր ռուս չինովնիկների խիստ հսկողության տակ: Մետրոպոլիտը մեծ պատասխանատվություն էր կրում հրատարակած գրքերի բովանդակության համար, ուստի և ստիպված էր գավառապետի հարցումներին պատասխանել, որ տպարանում հրատարակվում են միայն հոգևոր բնույթի գործեր, այն էլ Էջմիածնի սինոդի թույլատվությամբ:

1838 թ Շուշիում բացվել է Ղարաբաղի թեմական դպրոցը, որի հիմնադրման մասին մանրամասն տեղեկություններ չեն պահպանվել: «Ամենից բարձր տեղ երևում է Նոր Թաղի փոքրիկ եկեղեցին, նրանից ցած՝ մեծ ու լայն առաջնորդարանը, ուր զետեղուում է և Ղարաբաղի թեմական դպրանոցը. այդ շինութիւնը կարծեմ միակն է ամբողջ քաղաքի մէջ, որ գրաւելով լավ տեղը, իր մեծութեամբ և դիրքով առանձին ուշադրութիւն է գրաւում քաղաքի ամեն կողմից նայելիս»<sup>854</sup>:

Բաղդասար մետրոպոլիտի ժամանակ Արցախի թեմը 150 000 դեսյատին եկեղեցական հողեր ուներ, որոնցից ստացված եկամուտների մի մասի հաշվին պահվում էր թեմական դպրոցը: Կրթօջախին կից Բաղդասար մետրոպոլիտն ստեղծեց հարուստ գրադարան, որտեղ պահվում էին նաև Արցախի վանքերում եղած գրչագիր նշանավոր մատյանները<sup>855</sup>:

Հոգևոր առաջնորդի գործադրած բացառիկ ջանքերի շնորհիվ հետագայում հոգևոր այս դպրոցը կարողացավ ոչ միայն գոյատևել, այլև մինչև

<sup>853</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգևոր դպրոցի, էջ 124:

<sup>854</sup> «Տարագ», հմ. 18, Թիֆլիս, 1891:

<sup>855</sup> Արծրունի Գ., Եկեղեցական կալուածները, «Մշակ», հմ. 104, Թիֆլիս, 1880, էջ 1; Րաֆֆի, Խամսայի մեկիթությունները, «Մշակ», հմ. 125, Թիֆլիս, 1882, էջ 1:

իր գոյության ավարտը՝ 1920 թ., դարձավ հայ կրթամշակութային կյանքի կարևորագույն օջախներից մեկը: Այն իր գոյությամբ ու գործունեությամբ ավելի բարձրացրեց Շուշիի համբավը հաղորդելով նրան հոգևոր կենտրոնից զատ, նաև գիտական ու կրթալուսավորական կենտրոնի մեծագույն դերակատարություն, որի մանրամասներին մենք անդրադարձել ենք սույն աշխատության տարբեր մասերում:

Շուշիի հոգևոր ու կրթալուսավորական կենտրոնի վերածմանն իրենց մեծագույն նպաստն են ունեցել նաև 19-րդ դարի ընթացքում քաղաքում կառուցված եկեղեցիները՝ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ, Ագուլեցոց, Մեղրեցոց, Ներքին թաղի Ս. Աստվածածին, Վերին թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ, Ջրաբերդոց թաղի եկեղեցիները, Կուսանաց անապատը:

1854 թ. հունիսի 27-ին իր մահկանացուն կնքեց Ղարաբաղի թեմի առաջնորդ, 80-ամյա Բաղդասար Հասան-Ջալալյանը: Լեռնի վկայությամբ՝ նրա մահը մեծ սուգ էր ոչ միայն արցախահայության համար, այլև նույնիսկ ռուսների ու թուրքերի<sup>856</sup>: Համաձայն իր կտակի՝ հոգևոր առաջնորդը հուղարկավորվել է Գանձասարում: Սակայն, վայելելով ժողովրդի հարգանքն ու սերը, Ղարաբաղի թեմի առաջնորդի հիշատակի նկատմամբ անարժան վերաբերմունք ցուցաբերվեց: Անտեսելով մետրոպոլիտի կտակը՝ Ամենայն Հայոց Ներսես կաթողիկոսի հրահանգով նրա անձնական օգտագործման բոլոր իրերը տեղափոխեցին Էջմիածին, իսկ մնացածն էլ աճուրդի հանվեց Շուշիում<sup>857</sup>:

Մետրոպոլիտի մահից հետո որոշ ժամանակ Ղարաբաղի թեմը մնաց առանց հոգևոր առաջնորդի: Ըստ Լեռնի՝ նույնպիսի վիճակ էր նաև հայոց մյուս թեմերում, քանի որ Ամենայն Հայոց Ներսես կաթողիկոսը դրանով ցանկանում էր ավելի հաստատուն դարձնել նրանց ենթակայությունը Մ. Աթոռին: Սակայն նրա մահից հետո «... կաթողիկոսական տեղապահը Անդրկովկասի երեք թեմերի համար նշանակեց ժամանակավոր կառավարիչներ, որոնք պիտի կառավարեին թեմերը մինչև նոր կաթողիկոսի ընտրությունն ու հաստատությունը»<sup>858</sup>:

1857 թ. հունվարին Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ է նշանակվում Գևորգ Վեհապետյանը, որը քայլեր է ձեռնարկել ինչպես Շուշիի հոգևոր դպրոցի, այնպես էլ ողջ Ղարաբաղում գոյություն ունեցող ծխական դպրոցների բարեկարգման, ինչպես նաև նորերի բացման ուղղությամբ<sup>859</sup>:

<sup>856</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր դպրոցի, էջ 177:

<sup>857</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 245:

<sup>858</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր դպրոցի, էջ 218:

<sup>859</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8088, թ. 5:

1864–1878 թթ. Ղարաբաղի թեմն առաջնորդել է Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը: Պահպանվել են նրա նշանակման առթիվ Ամենայն Հայոց Մատթեոս կաթողիկոսին 1864 թ. գրված շնորհակալագիրը, ինչպես նաև «Սարգիս արքեպիսկոպոսի գրութիւնը Կաթողիկոսին՝ Արցախի թեմի առաջնորդի պաշտօնն ընդունելու և շուտով Վեհափառին ներկայանալու մասին»<sup>860</sup>:

Վավերագրերը փաստում են, որ Սարգիս արքեպիսկոպոսի առաջնորդության շրջանում ներեկեղեցական հակասությունները թեմի ներսում նույնպես առկա էին, և դա հասկապես սուր արտահայտություն էր ստացել կրթական բնագավառում: Հատկանշական է, որ այս բնագավառում հակասությունները խորացել էին նաև մյուս հայկական թեմերում: Առկա դրությունից դուրս գալու ելքն ընդհանուր բարեփոխումների իրականացումն էր, որին էլ նպատակաուղղված էր Ամենայն Հայոց Գևորգ Դ կաթողիկոսի գործունեությունը: «Գևորգ Դ. կաթողիկոսը 1867–1868 թուականներին ձեռնարկեց մի շարք վարչական և կրթական բարենորոգումների, որոնք գալիս էին որոշ չափով բաւարարութիւն տալու հայ ժողովրդի հասարակական կենսի զարգացումից առաջ եկող պահանջներին»<sup>861</sup>:

Սարգիս Ջալալյանցը Ամենայն Հայոց կաթողիկոսի հրահանգով ու քաղաքական հանձնարարությամբ 1867–1870 թթ. գտնվում էր Կոստանդնուպոլսում, իսկ հետո էլ, վերադառնալով Թիֆլիս, հավանաբար երկար ժամանակ էլ այստեղ է ապրել: Երկրամասից նրա երկարատև բացակայության պատճառով բնակչությունը հատուկ գրությամբ դիմել է Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Սարգիս արքեպիսկոպոսին Արցախի թեմ վերադարձնելու կապակցությամբ<sup>862</sup>:

«Վավերագրերում» զետեված են նաև Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված բազմաթիվ գրությունները, իսկ ավելի ձիշտ՝ խնդրագրերը, որտեղ, լսելով Սարգիս արքեպիսկոպոսին այլ թեմ ուղարկելու կաթողիկոսի որոշման մասին, Ղարաբաղի թեմ հոգևոր և թեմ աշխարհիկ գործիչները, խնդրելով Սարգիս արքեպիսկոպոսին վերադարձնել Ղարաբաղ, միաժամանակ նրան ներկայացնում են որպես «ժողովրդին սիրելի» առաջնորդ, որի ներկայությունը ժողովրդի համար անչափ կարևոր է. «... արդարև յօրէ անտի լսելոյն մեր գայս ցաւալի համբաւ զգալի ցալ պատճառեաց ի սիրտս մեր ի մասին մեկնելոյն ի վիճակէն մեր մի այնպիսի ազգասէր և արթուն հոգատար Հովուի: Ուստի որդիական սիրոյ համբուրիս համբուրելով զՀայ-

<sup>860</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 283–285:

<sup>861</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր դպրոցի, էջ 355–356:

<sup>862</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 307:

րական սուրբ գարշապար գթած և խնամառատ Հայրութեանդ, ամենախոնարհաբար խնդրեմք չզրկել զմեզ ի մարդասիրական և յԱզգասիրական խնամառատ գթոյն վիճակաւոր Հօր, որպէս վայելեալ ենք մինչ ցարդ զազգասիրական աշխատանս նորա ի վաղուց անտի ...»<sup>863</sup>:

Հավանաբար այդ խնդրագրերը հաշվի առնելով էլ բեկանվեց Ղարաբաղի հոգևոր առաջնորդին Բեսարաբիայի թեմ ուղարկելը, և նա կրկին վերադարձավ Շուշի ու անմիջապէս ձեռնամուխ եղավ կրթական համակարգի բարեկարգմանը: Առաջին հերթին կանոնակարգվեց աշակերտների ընդունելության կարգը: Հասարակական կյանքի բարեկարգմանն էր ուղղված արքեպիսկոպոսի կողմից 1872 թ. հրատարակված «Բարեկարգութիւնք, տնօրինեալք ի վիճակաւոր առաջնորդէն հայոց թեմին Ղարաբաղու ի Սարգիս արքեպիսկոպոսէն Հասան-Ջալալեանց յաղագս կարգի կատարման ինչ-ինչ հոգևոր ծիսից հայոց ժողովրդականաց ի նմին վիճակի», որով վերացվում էր նշանադրության, պսակի և հուղարկավորման ծեսերի հետ կապված զանազան շռայլ սովորոյթները, այդ թվում «կերուխումները» և հաստատվում են շատ պարզ ու վայելուչ կանոններ<sup>864</sup>:

1876 թ. Սարգիս Հասան-Ջալալյանցը հատուկ խնդրագրով դիմում է Ամենայն Հայոց Գևորգ Դ կաթողիկոսին՝ Ղարաբաղի հոգևոր առաջնորդի պաշտոնից իրեն ազատելու կապակցությամբ՝ հիմնավորելով, որ իր պատկանելի տարիքն ու հիվանդությունն այլևս թույլ չեն տալիս ժողովրդին ու եկեղեցուն օգտակար ծառայություն կատարելու: Լեոյի վկայությամբ՝ Սարգիս Ջալալյանցը, հիվանդության պատճառով բնակվելով Թիֆլիսում, «այնտեղից էր ուղղություն տալիս թեմի գործերին, և ինքն էլ զգում էր, որ դա լավագույն կարգաւորում չէ»<sup>865</sup>, ինչն էլ, հավանաբար, դրդել էր նրան այդ քայլին: 1876 թ. Շուշիի հասարակության կողմից նույնպէս համապատասխան խնդրագիր է ուղարկվել Ամենայն Հայոց կաթողիկոսին, որում, ներկայացնելով Սարգիս Հասան-Ջալալյանցի ազգանպաստ գործունեությունը, միաժամանակ նշվում է, որ «ցաւօք սրտի ասեմք՝ երբ ի 1875 ամի նա իր անձնական տկարութեանց պատճառաւ բացակայեցաւ աստի առողջութիւն գտնելու համար, դարձեալ մեր ժողովրդականաց մէջ սկսաւ ի վեր երևիլ նոր ի նորոյ անխաղաղութիւնք, անմիաբանութիւնք»<sup>866</sup>: Սակայն այս խնդրագրերին էջմիածնի կողմից մասնակի լուծում է տրվել: Հաշվի առնելով Սարգիս Հասան-Ջալալյանցի հիվանդությունը, 1876 թ. հուլիսին թեմակալի փոխանորդ է նշանակվել Գևորգ վարդապետ Սուրենյանցը (հետագայում

<sup>863</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 326:

<sup>864</sup> Տես՝ Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր դպրոցի, էջ 374:

<sup>865</sup> Նույն տեղում, էջ 376:

<sup>866</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 334:

նա դարձավ կաթողիկոս – Վ. Բ.), իսկ այնուհետև՝ 1877 թ. Արիստակես վարդապետ Սեդրակյանը, որն էլ մինչև 1881 թ. առաջնորդեց Ղարաբաղի թեմը՝ փոխանորդի կարգավիճակով: 1882 թ. թեմի առաջնորդ դարձավ Անդրեաս արքեպիսկոպոսը, որին էլ 1883 թ. հաջորդել է արքեպիսկոպոս Գրիգոր Սագինյանցը:

1887 թ. օգոստոսի 23-ին Գրիգոր արքեպիսկոպոսի՝ Շուշիից հեռանալուց հետո Ղարաբաղի առաջնորդական գահը թափուր էր մնացել: Ժողովրդի շրջանում մեծագույն ոգևորություն էր առաջացրել Կարապետ եպիսկոպոս Այվազյանցի հոգևոր առաջնորդ նշանակելու մասին լուրը. «Ահա այսպէս Կարապետ Սրբազանը փառաւորապէս և շքեղապէս ընդունվեցաւ Շուշույ հայ հասարակութիւնից, որը առաջին անգամն է, որ ժողովուրդը այսպիսի համակրական ցոյցերով է ընդունում իւր հովուին ...»<sup>867</sup>: Սակայն թեմակալ առաջնորդի նկատմամբ շուտով ծայր առավ անվստահության, առավել ևս՝ ատելության զգացում հոգևորականության, նաև ժողովրդի շրջանում, որի պատճառով սկսվեցին բողոքները նրա գործունեության նկատմամբ: 1889 թ. Ամենայն Հայոց Հայրապետին ուղարկվեց բողոքագիր, որում զգուշացվում էր, որ «եթէ իրերի դրութիւնը այս կերպ շարունակուլու լինի և սորա առաջը չառնուի, բոլոր մեր եկեղեցիների դռներն էլ պէտք է ընդմիշտ փակուին ոչ հեռուում: ... Նա եկել է կարծես միմիայն այն դիտաւորութեամբ, որ հիմնովին կործանէ մեր այս դարաւոր՝ արիւն քրտինքով ձեռք բերած ազգային գանձերը ...»<sup>868</sup>: Մի շարք փաստերի քննության արդյունքում պարզապէս դժվար չէ եզրակացնել, որ վերստին սրվել էր ներկեղեցական պայքարը, որի հիմքում, սակայն, առաջին հերթին փոխադարձ անձնական ատելությունն էր, իսկ այդ ամենից էլ մեծապէս տուժում էր ինչպէս ամբողջ եկեղեցական հաստատությունը, այնպէս էլ պետականությունից զրկված ժողովուրդը: Իրավիճակի սրման հիմնավոր պատճառներից էին նաև ռուս չինովնիկների միջամտությունները հայոց ներեկեղեցական հարաբերություններում, որի մասին վկայություններ կան Ամենայն Հայոց կաթողիկոսների՝ ռուս չինովնիկներին ուղղված նամակ-բողոքագրերում: Ասվածը փաստեմք թեկուզն մեկ օրինակով. 1897 թ. Ամենայն Հայոց Մկրտիչ կաթողիկոսը հատուկ նամակով դիմել է իշխան Գոլիցինին՝ բողոքելով թեմերում իր կատարած նշանակումները չհաստատելու վերաբերյալ<sup>869</sup>: Փաստերն ավելի քան համոզիչ են, որ ռուսական քաղաքականությունը հայ եկեղեցու նկատմամբ՝ նրան հնարավորինս թուլացնելու նպատակ էր հետապնդում:

<sup>867</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 348-352:

<sup>868</sup> Նույն տեղում, էջ 357:

<sup>869</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 385-386:

1895 թ. հունվարի 27-ին Ամենայն Հայոց Մկրտիչ կաթողիկոսի կոնդակով Ղարաբաղի թեմի առաջնորդ է հաստատվում Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանը, որը պաշտոնավարել է մինչև 1897 թ.<sup>870</sup>: Ըստ երևույթին, ռուս չինովնիկների ակտիվ միջամտությունների պայմաններում որոշակի ձգձգվել է նոր առաջնորդի նշանակման խնդիրը: 1898 թ. մարտի 7-ին Կովկասի կառավարչապետին ուղղված նամակով Հայոց Մկրտիչ կաթողիկոսը ժամանակավորապես Ղարաբաղի թեմի առաջնորդի պաշտոնում առաջարկում էր հաստատել Անանիա եպիսկոպոս Համազասպյանին, իսկ Շամախու թեմի առաջնորդ՝ Գրիգոր Գառնակերյանցին և, չսպասելով պատասխանի, անմիջապես նրանց հատուկ կոնդակով հաստատում է համապատասխան թեմերի առաջնորդներ: Սակայն 1898 թ., Պետերբուրգից ստանալով մերժողական պատասխան, Հայոց կաթողիկոսն ստիպված էր այս անգամ արդեն հատուկ գրություն ուղարկել Շուշի՝ Անանիա եպիսկոպոսին ետ կանչելու մասին<sup>871</sup>:

Անշուշտ, նման քաղաքականությունը չէր կարող բացասական հետևանքներ չունենալ հոգևոր կյանքում և ժողովրդի շրջանում նոր դժգոհությունների տեղիք չտալ: 1898 թ. մայիսի 8-ին Շուշիի քաղաքացիների կողմից խնդրագիր ուղարկվեց Մայր Աթոռ՝ Անանիա եպիսկոպոս Համազասպյանին թեմի առաջնորդ հաստատելու և ետ ուղարկելու վերաբերյալ<sup>872</sup>: Սակայն այդպես էլ հարցը դրական լուծման չարժանացավ, և 1898 թ. հունիսին Հայոց Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը հանդես եկավ նոր միջնորդագրով, որով խնդրում էր իշխան Գ. Ս. Գուլիցինին՝ Ղարաբաղի և Շամախու թեմերի առաջնորդներ հաստատել համապատասխանաբար Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցին ու Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանին:

Արցախի թեմում ստեղծված կացությանը մոտիկից ծանոթանալու նպատակով Խրիմյան Հայրիկը 1898 թ. մեկնում է Շուշի: Նա հյուրընկալվում է Ղուկասյան եղբայրների տանը<sup>873</sup>: Հետագայում այդ շենքում իր գործունեությունն էր ծավալել Մարիամյան օրիորդաց դպրոցը:

Ընդհանրապես՝ Հայոց եկեղեցում և, մասնավորապես՝ Ղարաբաղի թեմում տիրող այս անկայուն իրավիճակը, բնականաբար, ունեցավ իր բացասական հետևանքները: Իսկ 1903 թ. Ռուսական կառավարության հայոց եկեղեցական կալվածքների առգրավման վերաբերյալ հրամանագիրը, ըստ էության, մեծ հարված հասցրեց հայոց եկեղեցուն: Զրկվելով նյութական հնարավորություններից՝ եկեղեցին ի գորու չեղավ պահպանելու թե-

<sup>870</sup> «Արարատ», Սբ. Էջմիածին, 1897, էջ 377:

<sup>871</sup> Տես՝ Վաերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 387-390:

<sup>872</sup> Նույն տեղում, էջ 393:

<sup>873</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 327:

մական ու ծխական դպրոցները, որոնք ծառայում էին նաև մատաղ սերնդի ազգային դաստիարակությանը:

Այսպիսով, Հայոց եկեղեցու նկատմամբ իրականացված վերոնշյալ քաղաքականության արդյունքում փակվեցին բազմաթիվ կրթօջախներ, որոնց թվում էր և ողջ արևելահայության շրջանում մեծ հեղինակություն վաստակած Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցը: Եվ միայն համաժողովրդական պայքարի, Էջմիածնի հովանավորության ու Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսի մեծ ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ երկու տարվա դադարից հետո թեմական դպրոցում վերսկսել պարամունքները:

1905 թ. օգոստոսի 1-ին Ռուսական կայսրության հրամանով թույլատրվեց վերաբացել նաև հայոց եկեղեցական մյուս դպրոցները: Նրանց են վերադարձվում նաև նախկինում խլված կալվածքները, որը նյութական լուրջ հնարավորություններ պիտի ընձեռներ վերաբացված դպրոցների լիարժեք գործունեության համար: Սակայն, տարաբախտաբար, Ղարաբաղում այդ առիթով սկսված ոգևորությունը երկար չտևեց, քանի որ հենց օգոստոսին էլ նոր թափով բռնկվեցին հայ-թաթարական ընդհարումները: Թեմակալ առաջնորդը նման մղձավանջային պայմաններում ոչ միայն հուսահատության մեջ ընկավ, այլև մեծագույն ջանքեր էր գործադրում՝ դիմումներ հղելով նաև ազգային հաստատություններին ու ունեոր մարդկանց: «Դա մի ահագին խորհուրդ էր ներկայացնում: Յաղթանակում էր կեանքի գաղափարը: Նույն այն միջոցին, երբ աղետը մի ժողովրդի գոյութունն էր վտանգել, հինաուրց կրթարանը գալիս էր այդ իսկ թուլի բաց անելու իր փակված դռները, որպես զի կեանքի և առաջադիմութեան յաղթանակը տնկել ապա-ժոյժ աւերակների ապականութեան մէջ»<sup>874</sup>: Աշոտ եպիսկոպոսի դիմումներն արձագանքներ ունեցան և արդեն 1906 թ. ստացվեցին առաջին նպաստները Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձության և «Արամազդ» ընկերության կողմից: Սակայն, չբավարարվելով դրանով, նա խնդրեց և իրավունք ստացավ կաթողիկոսից՝ շրջագայելու Ռուսաստանի հայաբնակ վայրերը՝ թեմական դպրոցի հետագա գոյությունն ապահովելու նպատակով:

1909 թ. Աշոտ եպիսկոպոսի՝ Հայոց Հայրապետին հղված տեղեկագրում հիշարժան փաստեր կան Արցախի թեմի կազմության, ինչպես նաև հոգևոր առաջնորդարանի հոգաժողության շնորհիվ կրթական կյանքի աշխուժացման մասին: Այն մասնավորապես կրկին փաստում է, որ «Ղարաբաղի Հայոց թեմը պարունակում է իր մէջ Շուշու, Զիւանշիրի, Կարիագինի (Զիբրայիլ), Նուխու և Արեշի ամբողջ գաւառները, Գանձակի և Զանգեզուրի գաւառների

<sup>874</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգևոր դպրոցի, էջ 585:

մասերը, Լանքարան քաղաքը և Զաքարայայի շրջանից Կախ աւանը: Ամբողջ թեմում կայ ըստ շրջագայութեան 26 364 ծովս, արական սեռի 101 143 շունչ, իգական սեռի 88 857 – ընդամենը 190 000: ... Թեմն ունի 221 եկեղեցի, 9 վանք, որոնցից 3 շեն և 6 անմարդաբնակ»<sup>875</sup>: Սակայն, այս ամենով հանդերձ, թեմի ներսում շարունակում էր տիրել անհամերաշխ մթնոլորտ, ինչի վկայություններից են Հայոց կաթողիկոսին ուղղված բողոքագրերը:

1910 թ. Հայոց Հայրապետի կոնդակով Ղարաբաղի թեմակալ առաջնորդի պաշտոնից ազատվում է Աշոտ եպիսկոպոս Շախյանը, և թեմակալ առաջնորդ է հաստատվում Բենիկ վարդապետը: Սակայն ներեկեղեցական հակասությունները թեմի ներսում շարունակվում էին: 1911 թ. Հայոց Մատթեոս Բ կաթողիկոսի կողմից Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարչի պաշտոնում նշանակվեց Զավեն եպիսկոպոս Բարայանը<sup>876</sup>: Այդ պաշտոնում նա մնաց մինչև 1916 թվականը: Նրա առաջնորդության շրջանում թեմի ընդհանուր վիճակը բավական ընդգրկուն ձևով արտացոլված է «Համառոտ տեղեկագիր Ղարաբաղի թեմի հայ ազգաբնակչության հոգեւոր-վարչական, դպրոցական եւ կալուածական դրութեան մասին»<sup>877</sup> գեկուցագրում: Ներկայացնելով թեմում տիրող ընդհանուր իրավիճակը՝ թեմակալ առաջնորդն իր մտահոգությունն էր արտահայտում հատկապես պատմական նշանակության վանքերի ավերման և քայքայման փաստի կապակցությամբ. «ամբողջ Ղարաբաղը զարդարող և պատմական նշանակություն ունեցող, իր ժամանակին հայ ժողովրդի քաղաքակրթութեան նկատմամբ որոշ դեր կատարած վանքերն, այժմ ըստ մեծի մասին ոչ միայն պատմութեան սեփականություն են դարձել, այլև դատապարտուել են յաւիտենական մոռացութեան, ենթարկուելով ւաւերման, քայքայման և ամայութեան»<sup>878</sup>:

Ինչպես բխում է գեկուցագրի բովանդակությունից՝ քաղաքական ծանր իրավիճակում էր հայտնվել հոգևոր հաստատությունը և, այդ վիճակով էլ մտահոգ, Զավեն եպիսկոպոսը նախ ներկայացնում է իր առաջարկությունները՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով, և ապա միաժամանակ հույս հայտնում, որ «ժամանակի պահանջ հանդիսացող վերոյիշեալ պայմաններն ի կատար ածելով, մենք կարող կը լինենք քիչ թե շատ բարեկարգել, ինչպէս մեր վարչական, կրթական և այլ հաստատությունները, այնպէս էլ մեր հարուստ կալուածները և շահագործել նրանց մէջ թագնուած հարստությունները յօգուտ և ի պայծառութիւն Ս. Էջմիածնի, ինչպէս Ղարա-

բաղի, այնպէս և ընդհանուր հայ ժողովրդի և մեր ազգային կրթական և կուլտուրական հաստատությունների»<sup>879</sup>:

Ռուսական իշխանությունները 1912 թ. Զավեն եպիսկոպոսին թույլատրեցին կազմակերպել հանգանակություն՝ Ղարաբաղի սահմաններից դուրս նույնպես մեծ հեղինակություն վայելող, Շուշիի թեմական դպրոցի հոբելյանական 75-ամյակը նշելու, միաժամանակ և կրթօջախի նյութական պայմանները բարելավելու նպատակով: Ձեռնարկված միջոցառումները շուտով տվեցին իրենց դրական արդյունքները:

1916 թ. մայիսի 20-ի Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսի հայրապետական կոնդակով Ղարաբաղի թեմակալ առաջնորդ նշանակվեց Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը<sup>880</sup>: Նրա եռանդուն գործունեության մասին մի շարք վկայություններ կան «Վավերագրերում»: Սակայն սկսված համաշխարհային պատերազմն ու թուրքական իրար հաջորդող արշավանքներն այլևս անհնարին են դարձնում առաջնորդարանի բնականոն գործունեությունը:

1918 թ. մայիսի 27-ին Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգները հռչակվեցին որպես Ադրբեջանական հանրապետություն, որով էլ աշխարհի քաղաքական քարտեզի վրա սկիզբ դրվեց մի նոր մահմեդական պետության, և որն էլ ստեղծման պահից ի վեր հավակնում էր յուրացնել նաև Արևելյան Հայաստանի մնացած նահանգները, առաջին հերթին՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը: Հարձակման նշանակետ դարձավ նաև հայ եկեղեցին:

1918 թ. Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը նամակ է ուղարկել Մայր Աթոռ, որում մանրամասն ներկայացնում է թուրքական հարձակումների հետևանքով ստեղծված կացությունը, եկեղեցիների ու վանքերի բացահայտ կողոպուտը, թալանն ու ավերածությունները<sup>881</sup>: Դրությունը հատկապես օրհասական էր դարձել 1920 թ.:

1920 թ մարտին ներխուժելով Շուշի, թուրքերը նոր ավերածություններ սփռեցին քաղաքում՝ «կոտորելով առանց սեռի և հասակի խտրութեան մօտ 5000 հայ, որոնց թում թեմակալ առաջնորդ տ. Վահան Սրբազան եպիսկոպոսին, որի գլուխը կտրելով բարբարոսաբար շրջեցրել են քաղաքում ի տես զազանացած խուժանի»<sup>882</sup>: Հիրավի զազանության ակնհայտ դրսևորում, որ թուրքի կողմից արդեն իսկ անսպասելի երևույթ չէր: Շուշիում սկսված կոտորածների ու ավերածությունների մասին Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված գեկուցագրերից մեկում վկայված է. «Այրեց հայոց ամբողջ

<sup>875</sup> Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 465–466:

<sup>876</sup> Նույն տեղում, էջ 527–528:

<sup>877</sup> Նույն տեղում, էջ 544–562:

<sup>878</sup> Նույն տեղում, էջ 548:

<sup>879</sup> Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 465–466:

<sup>880</sup> Նույն տեղում, էջ 618:

<sup>881</sup> Նույն տեղում, էջ 662–663:

<sup>882</sup> Նույն տեղում, էջ 749:

քաղաքամասը ... Վահան եպիսկոպոսը սպանեց առաջնորդարանում, չկամենալով դուրս գալ: Առաջնորդարանը, թեմական դպրոցը, եկեղեցիները թալանած են, ապա այրած: Կոիւր սկսելով առաւօտեան ժամը 5-ին՝ հնարաւորութիւն չի եղել կոնսիստորիայից ոչ մի դուրս գալու, ոչ մի գործ ու գանձ ազատել, նոյնպէս և եկեղեցիներից»<sup>883</sup>:

1920 թ. մայիսին ռուսական 11-րդ կարմիր բանակը մտավ Շուշի, որի արդյունքում Լեռնային Ղարաբաղում հաստատվեցին խորհրդային կարգեր, որոնք կործանարար եղան հատկապէս հայ ազգային այնպիսի հաստատության համար, ինչպիսին էր եկեղեցին: Իսկ 1921 թ. հուլիսի 5-ի ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի՝ Արցախն Ադրբեջանին բռնակցելու մասին իրավաբանական տեսանկյունից միանգամայն անհիմն որոշումը, ըստ էության, դարձավ արցախահայության համար ամենաողբերգական իրադարձությունը:

Խորհրդային կարգեր հաստատվելու և հատկապէս Արցախը Ադրբեջանին բռնակցելու պահից ի վեր երկրամասում սկիզբ առան անսանձ կամայականությունները, բռնություններն ու թալանը, որից առանձանապէս տուժեցին եկեղեցին ու հոգևորականությունը: Ընդհանուր առմամբ ողջ Խորհրդային տարածքում կոմունիստները ծավալել էին հակաեկեղեցական ակտիվ քարոզարշավ, որից, բնականաբար, ոչ միայն զերծ չմնաց նաև Լեռնային Ղարաբաղը, այլև այստեղ այն առավել ծայրահեղական բնույթ էր ընդունել, քանի որ ադրբեջանական տիրապետության պայմաններում եկեղեցին առաջին հերթին ընդունվում էր որպէս հակաադրբեջանական շարժման կենտրոն ու քարոզիչ: Հենց 1920 թ. ամռանն էլ սկսվեց հոգևորականության նկատմամբ բռնությունների հզոր ալիքը, որը շարունակվեց մինչև 1933 թվականը՝ Արցախի թեմի ողբերգական վախճանը:

«Վավերագրերում» պահպանվել է Արցախի թեմի առաջնորդ Անանիա եպիսկոպոսի գրությունը Գերագույն հոգևոր խորհուրդին, որտեղ նկարագրված է բոլշևիկյան կառավարության կողմից եկեղեցու և հոգևորականության դեմ իրականացվող ոտնձգությունների մասին<sup>884</sup>:

Ղարաբաղի տարբեր եկեղեցիներից ստանալով քահանաների բողոքագրերը՝ իրենց եկեղեցիների նկատմամբ բոլշևիկների իրականացրած բռնարարքների ու թալանի մասին, թեմակալ առաջնորդը հայտնվում է ծանր կացության մեջ և, անգոր լինելով դրանց դեմն առնելու, «ի նկատի առնելով ժամանակիս ծանր ու անտանելի անցուդարձն», 1924 թ. մայիսի 27-ին ստիպված հոգևոր առաջնորդի պաշտոնից իրեն ազատելու վերաբե-

րյալ խնդրագիր է ուղարկում Գերագույն հոգևոր խորհրդին<sup>885</sup>: Էջմիածինի կողմից քայլեր ձեռնարկվեցին Ղարաբաղում հայ եկեղեցու դեմ իրականացվող բռնարարքները գոնե փոքր-ինչ մեղմելու ուղղությամբ: 1926 թ. Գերագույն հոգևոր խորհրդի կողմից գրություն ուղարկվեց ԼՂԻՄ ժողկոմխորհի նախագահ Արմենակ Ղարաբյոզյանին՝ «Արցախի գիւղերում կուսակցական գործիչների և իշխանութեան ներկայացուցիչների հակաեկեղեցական տգեղ ու պատիւ չբերող պահուածքի դեմն առնելու խնդրանքով»<sup>886</sup>, որտեղ փաստերով ներկայացված է, որ Խորհրդային Ղարաբաղում քսանից ավելի գյուղական եկեղեցիներ փակելուց, դրանք թատրոնի և ակումբի վերածելուց զատ իշխանության ներկայացուցիչները և կուսակցական գործիչները կոպիտ բռնություններով ու անվայելուչ արարքներով վիրավորում են գյուղի հավատացյալ բնակչության կրոնական սրբություններն ու զգացումները: Սակայն Էջմիածնի միջամտությունն ի գորու չգտնվեց կանխելու բոլշևիկների որդեգրած նման հակաազգային քաղաքականությունը:

Արցախի թեմի առաջնորդ Վրթանես վարդապետը Շուշիում համապատասխան գործունեություն ծավալելու անհնարինության պատճառով տեղափոխվեց Գանձասար: Գանձասարը վերստին ստանձնեց Ղարաբաղի հոգևոր կենտրոնի դերը, սակայն Խորհրդային անվանված, քայց և իրականության մեջ մուսավաթա-մահմեդական Ադրբեջանը թեկուզև քայլ առ քայլ, քայց և այնպէս շարունակում էր իր հակահայկական քաղաքականությունը հասցնել հաղթական ավարտին:

Եկեղեցին բացահայտորեն գտնվում էր ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի խիստ վերահսկողության տակ: Օգտվելով երկրում ստեղծված քառասային իրավիճակից՝ ադրբեջանական իշխանությունների հատուկ հրահանգներով պարզապէս խլվեց նրա ողջ ունեցվածքը: Առանց բացառության Արցախի բոլոր վանքերն առաջին հերթին զրկվեցին վանքապատկան տարածքներից, ինչի հետևանքով վտանգվեց նրանց հետագա ոչ միայն գործունեությունը, այլև պարզապէս գոյությունը:

Փաստաթղթերից մեկում՝ Էջմիածնի հոգևոր խորհրդին 1929 թ. փետրվարի 11-ին ուղարկված գեկուցագրում, վկայված է, որ թեմի 18 վանքերից պահվում են միայն 7-ը, 164 հայկական գյուղերում 112 եկեղեցիներից փետրվարի 1-ի դրությամբ 79-ը առգրավված են, որոնք էլ վերածվել են խրճիթ-ընթերցարանի, դպրոցի, շտեմարանի, 6 եկեղեցիներ կիսաավեր վիճակում են, իսկ մնացած 27 եկեղեցիներն էլ փակման վտանգի առջև

<sup>883</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 747:

<sup>884</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., էջ 828:

<sup>885</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 829:

<sup>886</sup> Նոյն տեղում, էջ 860-861:



են<sup>887</sup>: Եվ այդ վտանգն էլ չուշացավ. 1929 թ. փետրվարի 21-ին Ադրբեջանի մինիստրների խորհրդի որոշման հիման վրա ԼՂԻՄ կոմիտեն ձեռնարկեց 108 եկեղեցիների փակման գործը՝ դրանք վերածելով կուլտուր-լուսավորական հիմնարկությունների<sup>888</sup>: 1929 թ. հոկտեմբերի 4-ին մարզգործկոմի որոշմամբ փակվեց Ամարասի հոշակավոր եկեղեցին, իսկ պատմամշակութային արժեքներն ուղարկվեցին Բաքու՝ ուսումնասիրելու համար:

Նույն ճակատագիրն են ունեցել նաև ինչպես ԼՂԻՄ-ի մեջ ներառված, այնպես էլ նրա սահմաններից դուրս հայտնված պատմական Արցախի բազմաթիվ այլ հոգևոր կենտրոններում պահվող հազարավոր մասունքներ:

1929 թ. միանգամայն կեղծ մեղադրանքներով ձերբակալվեց և Շուշիի բանտ տեղափոխվեց Ղարաբաղի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը: «Ղարաբաղի թեմի առաջնորդ տ. Վրթանես եպիսկոպոսը երրորդ տարին է ինչ գտնվում է Շուշու ուղղիչ տանը: ... ստացած տեղեկություններից երևում է, որ նրա դատը տեղի է ունեցել, և նա արդարացել է եղած մեղադրանքներից», - գրված է 1931 թ. նոյեմբերի 7-ի Գերագույն հոգևոր խորհրդի՝ ՀԽՍՀ քաղվարչության նախագահությանը ուղղված նամակում<sup>889</sup>:

Ղարաբաղում եկեղեցու և հոգևոր թեմի նկատմամբ իրականացվող բռնարարական քաղաքականությունը շարունակվեց մինչև նրա վերջնական կազմալուծումը: 1932 թ. թեմակալ առաջնորդի՝ Էջմիածնի հոգևոր խորհրդին ուղղված զեկուցագրում նշված է. «Մինչև 1930 թի փետրուար ամիսը թեմումս գոյություն ունեին եկեղեցիներ, թեմական խորհուրդ, քահանայություն, ներկայումս թեմիս բոլոր եկեղեցիները վեր են ածուած դպրոցական, հասարակական, այլև այլ հաստատությունների: Ներկայումս թեմիս բոլոր քահանաները առանց բացառության հրաժարել են, է՝ որ իրենց կոչումից, և է՝ քահանայագործությունից ու պարապում են իրենց տնտեսութեամբ և կամ ծառայում են որպես ուսուցիչ ...»<sup>890</sup>: Այսպիսին էր եկեղեցու վիճակը Լեռնային Ղարաբաղում «եղբայրական» խորհրդային Ադրբեջանի տիրապետության պայմաններում:

Էջմիածնում 1932 թ. նոյեմբերի 10-ին գումարված Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցել է նաև Ղարաբաղի թեմի պատվիրակությունը՝ թեմակալ առաջնորդի գլխավորությամբ, որից հետո նրանց այլևս արգելվել է վերադառնալ Ղարաբաղ: Ի պատասխան Վրթանես եպիսկոպոսի՝ Մայր Աթոռին ներկայացրած գրավոր բողոքին, հայտնել են, որ «Հայրապետական լիազորը Նորին Սրբութեան կարգադրութեամբ անցեալ թուի

<sup>887</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 883-884:

<sup>888</sup> ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 63:

<sup>889</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., էջ 895:

<sup>890</sup> Նույն տեղում, էջ 896:

դեկտեմբերից սկսած բանակցութիւններ է վարել ամենահնարաւոր միջոց գործ դնելով Ձեր՝ Ղարաբաղի թեմ վերադառնալու համար: Նոյն զեկուցումից երևում է, որ Ադրբեջանի կառավարութիւնը ընդհանրապէս ընդունելի չի համարում Ձեր առաջնորդական պաշտօնավարութիւնը Ադրբեջանում: Վերոգրեալը հաղորդելով Ձեզ, Գերագոյն հոգևոր խորհուրդը Ձեր Արցախի թեմ գնալու վերաբերութեամբ բանակցութիւնները վերջացած է համարում»<sup>891</sup>:

Հակառակ Ամենայն Հայոց Խորեն Ա կաթողիկոսի գործադրած ջանքերին՝ Ադրբեջանի իշխանությունների կտրուկ մերժողական դիրքորոշման պատճառով այլևս հնարավորություն չտրվեց Ղարաբաղի թեմի առաջնորդին վերադառնալ Արցախ: Այսպես 1933 թվականին փակվեց Ղարաբաղի հոգևոր թեմը:

«Լուսավորյալ» 20-րդ դարը դժվար է անգամ համեմատել արաբական, սելջուկյան, մոնղոլ-թաթարական տիրապետության միջնադարյան ժամանակների հետ, քանզի թեկուզև ծայրահեղ ծանր իրավիճակին, գոնե եկեղեցուն գոյատևելու հնարավորություն էր տրված, մի իրողություն, որ բացառվեց «ինտերնացիոնալիստական» Ադրբեջանի կողմից: Եվ Լեռնային Ղարաբաղում կիրառվող հայ եկեղեցու իսպառ վերացմանն ուղղված քաղաքականությունն իրագործվեց ըստ էության: Ղարաբաղի հոգևոր թեմի վերացումով ավելի անսանձ բնույթ ընդունեց եկեղեցիների աստիճանական փակման ու դրանց իսպառ վերացման գործընթացը:

Արցախի երբեմնի վարչական ու հոգևոր կենտրոն Շուշիում հիմնականում 19-րդ դարում կառուցված եկեղեցիներից այսօր միայն երկուսն են պահպանված՝ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ և Վերին թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցիները:

Մասնավորապես հենց այդ քաղաքականության արդյունքում էլ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը դարձավ երկրագնդի վրա միակ հայաբնակ տարածքը, որտեղ արդեն 1930-ական թվականներից չկար որևէ գործող եկեղեցի: Պլանավորված նպատակային քաղաքականության ակնհայտ դրսևորում՝ իր էությամբ մարդկային իրավունքների, խղճի ու ազատության կոպիտ ոտնահարում:

Այսպիսով, խորհրդային տարիներին «եղբայրական» Ադրբեջանի իշխանությունների կողմից ամեն ինչ արվեց՝ Արցախի հայության հոգևոր-մշակութային զարկերակը կաթվածահար անելու համար, որի արդյունքում էլ Արցախը զրկվեց իր դարավոր ազգային հաստատությունից: Դրա հիմնական նպատակը հայությանը դիմազրկելն էր, մայր արմատներից վերջնա-

<sup>891</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 904:

կանապես կտրելը: Ազգային ու գաղափարա-քաղաքական լայնամասշտաբ բռնություններն ակնհայտորեն պատճառ հանդիսացան իր իսկ բնօրրանում արցախահայության հոգևոր կյանքի ընդհանուր անկման: Ակնհայտ փաստ է, որ ցանկացած ժողովրդական շարժում կամ պատերազմ ունի իրեն ծնող պատճառները, և դրանց հիմնավոր լուծումը մեծապես կախված է ճիշտ ընկալումից ու համակողմանի վերլուծությունից: Արցախյան հիմնախնդրի լուծման պարագայում թերևս ճիշտ կողմնորոշվելն այնքան էլ դժվար չէ, քանզի ինչպես պատմական փաստերը, այնպես էլ մարդկային քաղաքակրթության ներկա ժամանակներում տեղի ունեցող իրադարձություններն ավելի քան ակնառու են և մատնանշում են միայն մեկ ճանապարհ, որ կոչվում է «հանուն գոյության՝ Ազգային անկախություն»:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն իր նշանավոր «Հայոց եկեղեցին» աշխատությունը եզրափակել է հետևյալ արտահայտությամբ. «Հայն այն համոզումն ունի, թե իւր Ազգային Եկեղեցին, որ գինքն անցեալին մէջ պաշտպանեց, ապագային մէջ ալ պիտի պաշտպանէ»<sup>892</sup>: Սակայն խորհրդային տարիներին հայ ժողովրդին և, մասնավորապես, արցախահայությանը հասցված արհավիրքներն այնքան դաժան ու անողոք էին, որ մեկը մյուսին գորավիզ լինելու հնարավորությունը բացառված էր: Այդ հնարավորությունն ընձեռվեց միայն 1980-ական թվականների վերջին Արցախում նոր թափով սկսված ազգային-ազատագրական շարժումը: Արցախյան համազգային շարժումն իրենով ազդարարեց ոչ միայն քաղաքական, այլև հոգևոր վերածննդի սկիզբը: Ուրեմն պատահական չէ, որ համազգային շարժման հենց նախաշեմին էլ՝ 1989 թ., վերաբացվեց Արցախի հոգևոր թեմը:

1989 թ. Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի հայրապետական կոնդակով վերակազմավորվեց Արցախի թեմը: Թեմակալ առաջնորդարանը դարձավ Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որտեղ էլ 1989 թ. հոկտեմբերի 1-ին պատարագ մատուցվեց: Երկարատև լռությունից հետո Արցախում կրկին դողանջեցին հայկական եկեղեցու զանգերը՝ իրենց շուրջը համախմբելով հայ հավատացյալ ժողովրդին: Հայ եկեղեցու զանգերն իրավամբ ազդարարեցին ու սկզբնավորեցին մեր ազգային վերագարթոնքի սկիզբը: Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ Արցախի թեմի առաջնորդ օծվեց Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, որի գերաշնորհ առաջնորդությամբ էլ Արցախի վերաբացված թեմն սկսեց վերակազմավորվել և հերթով վերաբացել երբեմնի մեծ հոչակ վայելող մեր եկեղեցիներն ու վանքերը:

<sup>892</sup> Օրմանյան Մ., Հայոց եկեղեցին, էջ 248:

1992 թ. մայիսի 9-ին հայ ազատամարտիկների անկոտրում կամքի շնորհիվ թուրքի ճիրաններից ազատագրվեց Ղարաբաղի հոգևոր կենտրոն Շուշին, որը հոգևոր մեծ ցնծություն պարգևեց աշխարհասփյուռ հայ ժողովրդին: Ռուսական կայսերական զորքի կողմից 1827 թ. հոկտեմբերին Երևանի ազատագրության կապակցությամբ գրված է. Աբովյանի հայտնի տողերը. «Օրհնվի էն սիաթը», թերևս այս պարագայում ավելի քան բնորոշ են և «օրհնյալ հազար անգամ», որովհետև ոչ թե օտարի զորքն էր մտել մեր հողը՝ իբրև թե ազատագրելու, այլ մենք ազգովին ոտքի ելանք՝ մեր հայրենիքը ազտագրելու, ուրեմն՝ այն օրհնյալ է բազմիցս:

1992 թ. մայիսի 9-ին Շուշիի ազատարարների հետ մեկտեղ Շուշի մտան նաև հոգևոր հայրերը՝ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի առաջնորդությամբ, և նրանց առաջին քայլերից մեկն էլ հանդիսացավ Ղարաբաղի ազատագրված հոգևոր կենտրոնի՝ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու գմբեթի վրա Ս. Խաչի տեղադրումը: Այդ ամենն իրականացվել է մեկ նպատակով. «որպեսզի փառքի արժանացած Արցախի նախկին մայրաքաղաքը վերագտնի իր դեմքը: Անհրաժեշտ է ամեն կերպ վերականգնել քաղաքի նախկին հարուստ ավանդույթները, այն կրկին դարձնել հոգևոր-մշակութային կենտրոն»<sup>893</sup>:

Արցախյան ազատամարտից հետո Լեռնային Ղարաբաղի նորանկախ հանրապետությունում բուռն թափով ծավալվեց բազում դարերի թոհուրոհով անցած, գոյատևած, քայց և բոլոր ժամանակների ավերիչ հարվածներից խունացած մեր եկեղեցիների ու վանքերի վերանորոգման ու վերաբացման աստվածահաճ գործընթացը: Իր հայրենիքում իր իսկ ստեղծած հոգևոր կոթողներն անգամ պահպանելուց զրկված, քայց և հոգու գաղտնարաններում հույսը փայփայած ու պահպանած ժողովուրդը վերստին հնարավորություն ստացավ վերադառնալու իր ազգային ավանդակերպին: Երկարատև նորոգումներից հետո՝ 1998 թ., դողանջեցին 19-րդ դարից ի վեր Ղարաբաղի հոգևոր առաջնորդանիստ Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու զանգերը՝ ազդարարելով Շուշիի հոգևոր նոր վերածնունդը:

### Է) Շուշիի բնակչությունը, միջէթնիկ հարաբերությունները, կենցաղը և սովորույթները

Վաղ միջնադարից սկսած՝ Շուշիի արևելյան և արևմտյան հատվածները հայաբնակ էին: Վաղ և միջին միջնադարում հիմնականում կառուցապատ-

<sup>893</sup> «Ստեփանակերտ», 12 օգոստոսի, Ստեփանակերտ, 1999:

վում էր ապագա բերդաքաղաքի արևելյան մասը, որը ժողովրդի կողմից ստացավ «Ներքին թաղ» անունը: 18-րդ դարի սկզբներին Մելիք-Շահնազարյանները ներկայիս քաղաքի արևմտյան մասը դարձնում են իրենց նստավայրերից մեկը: Վարանդայի տարբեր գյուղերից բնակչությունը տեղափոխվում և հաստատվում էր մելիքի պալատի շրջակայքում: Անտառներով և քարի պաշարներով հարուստ բնակավայրը հնարավորություն էր ընձեռում կառուցապատել նաև անմատչելի սարահարթի արևմտյան հատվածը: 18-րդ դարի երկրորդ կեսին արդեն մեզ հայտնի իրադարձությունների պատճառով Փանահ խանը հաստատվում է Շուշիի արևելյան հարթակում: «Ներքին թաղ»-ի հայության համար սկսվում են դժվար ժամանակներ: Չնայած Վարանդայի մելիք Շահնազարը և Փանահը դաշնակիցներ էին, այնուամենայնիվ, երկուսն էլ ձգտում էին սարահարթում ազդեցիկ և գերիշխող դիրք ունենալ: Հետևաբար երկու կողմերն էլ սարահարթի արևելյան և արևմտյան հատվածները ջանադրաբար բնակեցնում էին իրենց հավատարիմ ազգաբնակչությամբ: Այդ մրցավազքի ընթացքում սկզբում Շուշի են տեղափոխում Արցախի Տիգրանակերտի հայությանը<sup>894</sup>:

Ղարաբաղի շուրջ տեղի ունեցած քաղաքական զարգացումները նպաստավոր էին Շուշիի վերաբնակեցման համար:

1750 թ. Նախիջևանի Ղազանչի (Շահկերտ) գյուղի հայերն ապստամբում են Հեյդար խանի դեմ: Ապստամբությունը գլխավորում էր Հովհաննես Խանդամիրյանը: Խանը նենգաբար սպանում է ապստամբության ղեկավարին: Գյուղի հայությունն ստիպված տեղափոխվում է Կապան և տեղի հայության հետ շարունակում պայքարել Հեյդար խանի դեմ: Ղազանչիի բնակիչները ավելի ապահով կյանք ունենալու նպատակով տեղափոխվում և հաստատվում են անառիկ Շուշիում<sup>895</sup>:

Թավրիզում հաստատված, ծագումով ուզբեկ Ազատ խանը 1752 թ. փորձում է գրավել Երևանը, բայց հաջողություն չի ունենում: Վերադարձի ճանապարհին նա թալանում է Ագուլիսն ու հարևան հայկական բնակավայրերը: Ագուլիսի հայության մեծ մասն էլ իր փրկությունը գտավ Շուշիում<sup>896</sup>: Ագուլիսցիների օրինակին հետևեց մեղրեցի հայության մի հոծ զանգված:

Քննարկվող ժամանակահատվածում Արցախի տարբեր գավառներից, մասնավորապես՝ Ջրաբերդից, նոր բնակիչներ համալրում են իրենց համերկրացիների շարքերը: Վերոհիշյալ գավառներից Շուշի տեղափոխված հայերը բնակություն են հաստատել հայրենակցական սկզբունքով: Բեր-

դավանի նորաստեղծ թաղերը նրանք կոչել են իրենց նախկին բնակավայրի (ղազանչեցոց, ագուլեցոց, մեղրեցոց, ղարաբաղցոց կամ ջրաբերդցոց) անուններով:

19-րդ դարի կեսերին պատմական այդ իրադարձություններին ակադեմիկոս Հակոբ Զաքարյան Շուշեցին գրել է. «Եւ մինչեւ ցայսօր ժողովուրդն Շուշոյ՝ որի յազգես մերմէ են՝ բաժանին ի չորիս թաղս կամ վիճակս՝ ագուլեցիք, ղազանչեցիք, մեղրեցիք եւ բուն ղարապաղցիք»<sup>897</sup>:

1840 թ. Ներքին թաղի ծագումով արցախցի 56 հայ ընտանիքներ, չդիմանալով թուրքերի ճնշմանը, տեղափոխվում և հաստատվում են Ղարաբաղցոց թաղամասում՝ այն կոչելով արդեն «Վերին թաղ» անունով<sup>898</sup>:

19-րդ դարի երկրորդ կեսին, մի քանի տասնամյակի ընթացքում, Շուշիի հայկական քաղաքամասը հյուսիսային և հյուսիս-արևելյան ուղղություններով այնքան էր ծավալվում ու մեծանում, որ անհրաժեշտություն է առաջանում նոր թաղամասեր կառուցել: Այդ ժամանակ Շուշիի հայկական քաղաքամասն արդեն բաղկացած էր 18 թաղամասերից. «1. Մելիքենց թաղ, 2. Դումլուղի թաղ, 3. Քամու ջեղաց (ջրաղաց – Վ. Բ.), 4. Խանցկեցոց թաղ, 5. Կազարմեն թաղ, 6. Վերին թաղ, 7. Փոշտին թաղ, 8. Աղբրին թաղ, 9. Ներքին թաղ, 10. Աղաբեկենց ձորին թաղ, 11. Ագուլեաց թաղ, 12. Ղազանչեցոց թաղ, 13. Մեղրեցոց թաղ, 14. Գեաուր Ղալին թաղ, 15. Հին հանգստարանի թաղ, 16. Դաբաղներին ձոր թաղ, 17. Բաղունց ձորին թաղ և 18. Դիզին թաղ»<sup>899</sup>:

19-րդ դարի կեսերին Վերին թաղի բնակչությունն աճում է ի հաշիվ այստեղ տեղափոխված փահլուրցիների և վարարակցիների<sup>900</sup>:

Արցախի որոշ գյուղերից այնքան շատ բնակիչներ էին ապրում Շուշիում, որ հաճախ այդ թաղերում ձևավորվում էին նոր միկրոմիջավայր կամ թաղամասեր, որոնք կոչվում էին նրանց նախկին բնակավայրերի անուններով: Օրինակ, Մեղրեցոց եկեղեցու ներքևով անցնող ճանապարհի տակ ապրում էին մի քանի տասնյակ գիշեցի ընտանիքներ և այդ մասը կոչվում էր «Գիշեցոց տներ»<sup>901</sup>:

Շուշիի հայկական թաղամասերի դասավորության մասին կարելի է պատկերացում կազմել մեզ հասած որոշ աղբյուրներում պահպանված տե-

<sup>894</sup> Ներսեսով Միրզա Յուսուֆ., նշվ. աշխ., էջ 55:

<sup>895</sup> Չամչեանց Մ., Հայոց պատմութիւն, հ. 9, էջ 848:

<sup>896</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 63:

<sup>897</sup> Մաղալեան Ա., Յակոբ Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատությունը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 2006, հմ. 1-12, էջ 382:

<sup>898</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2199, թ. 1-2; Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 64:

<sup>899</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 52:

<sup>900</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4627, թ. 27:

<sup>901</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 180:

ղեկություններից: «Վերի մասը, դեպի հարաւ, կոչում է Գեաւոր-Ղալայի թաղ,- գրել է Ադոն: Նրանից փոքր ինչ ցած Կազարմայի թաղ, որտեղ գտնուում էին Վերին կամ Երևանի դռները և որտեղից անցնում է Գորիսի խճուղին: Հյուսիսային մասը, ցցած Ղայբալի ձորի վրա կոչում է Քամու ջրաղացի թաղ, նրանից ցած՝ դեպի ներքին գերեզմանատունը՝ Ղումլուղի թաղ, իսկ հարաւարեւելեան մասը՝ Հին հանգստարանի թաղ և Բաղոնց ձորեր:

Այս թաղերի և թուրքական մասի մէջտեղում ընկած է հայերի շուկան՝ Մեծ Մէլդանը, որը կոչում է նաև Թոփխանա»<sup>902</sup>: Եղիշե Իշխանյանն այդ ամենին ավելացնում է. «Խանձք գիւղի բարգիւշատցիները գրեթէ բոլորը գաղթում են Շուշի և բռնում քաղաքի ամենաբարձր մասը, որտեղ հետագայում շինում է կայազօրի համար երկյարկանի մեծ շէնքը: Բարգիւշատցիները Գեաւորղալայ կոչած թաղի մօտից սկսած քաղաքի զառիվայրն են բռնում, մինչև Քամու ջրաղաց կոչած թաղը, բաւական ընդարձակ տարածութիւն, որը կոչում է Խանցքեցոց թաղ: Քամու ջրաղաց և Ներքին կոչած թաղի բնակիչների մի մասը Վարազացի (պետք է լինի վարանդացի - Վ. Բ.) և միւս մեծ մասը Խաչէնի և Ջրաբերդի գիւղերից վերաբնակվածներ ...»<sup>903</sup>:

Շուշին մի տեսակ դարձել էր հայահավաք կենտրոն: Այսրկովկասի և հարակից հայաշատ վայրերից մարդիկ ձգտում էին տեղափոխվել Շուշի և իրենց կյանքը կապել Արցախի նոր ձևավորվող մայրաքաղաքի հետ: 1787 թ. ժամանակագիրը գրել է. «Յայտսիկ ժամանակս մեծ մասն բնակչաց կողմանցն Ղազախու և Շամշուլտէի ... Խամսայու անցին ի սահմանս Շուշույ ...»<sup>904</sup>:

«Իւրաքանչիւր հարուստ գիւղացի թողում է իւր գիւղը, գութանը, գալիս Շուշի կամ՝ մի ուրիշ քաղաք՝ մտնում՝ վաճառական-չարչու մօտ կամ ինքնուրոյնաբար չարչութիւն անում՝ եւ «աղաւարի» ապրում-պատմում է «Գործի» թղթակիցը: Այդ իղէալներից վարակվում են օրըստօրէ եւ միւս գիւղացիքը ...»<sup>905</sup>:

Տարբեր գյուղերում արմատավորված սովորությունները Շուշիի միջավայրում փոխակերպվում կամ էլ այս կամ այն դրսևորումներով շարունակում են գոյատևել՝ դառնալով քաղաքային համակեցության նոր կանոններ: Օրինակ, «Ղարաբաղյան գյուղերում շատ տարածված էր համատեղ աշխատանքը՝ այսպես կոչված «միջին», երբ գյուղացիները իրենց ունեցած աշխատանքային գործիքները, օրինակ մեկը գութանը, մյուսը եզը, երրորդն իր

<sup>902</sup> Ա-Դօ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 148:

<sup>903</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 470:

<sup>904</sup> Դիւան հայոց պատմութեան, գիրք Ա-Բ, էջ 11-13:

<sup>905</sup> Ռուստամ, Արցախու աշխարհ (Ղարաբաղ), «Գործ», ամսագիր, հմ. 1, մարտ, Շուշի-Թիֆլիս, 1882, էջ 27:

մարդկային ուժը, իրար միացնում և հեշտությամբ հաղթահարում դժվարությունները, իսկ վերջում էլ միասին ճաշում են, որ երբեմն էլ վեր էր ածվում խնջույքի: Դա ավելի էր իրար հարազատ դարձնում մարդկանց: Նույնիսկ գյուղացիներով հավաքվում և վարում էին այն համագյուղացու հողը, բերում փայտը, որի կերակրողը մահացել էր: Եվ այդ ամենը փոխադարձաբար: Կամ, ասենք, համագյուղացիներից մեկը կապալառուներից պարտքի տակ է ընկել, բոլորը միասին միջի են անում և օգնում: Մի խոսքով՝ համատեղ աշխատելը, գործելը փրկում է շատերին կորստից, մահից, ամրացնում է հասարակական ու մարդկային կապերը, ավելի է լայնացնում գյուղացու աշխարհայացքը, նրանց համար հասկանալի է դառնում, որ անհատի բարօրությունը կախված է հասարակության ուժից, որ հարևանի, ընկերոջ հաջողության մեջ կարելի է որոնել իր բաղտավորությունը, երջանկությունը, որ անհատի սեփականությունը անցավոր է, իսկ հասարակականը մշտնջենական, որ համայնավարությունը ավելի գորեղ է, կենսաբեր, քան թէ անհատապաշտությունը»<sup>906</sup>:

Շուշիում, նոր ժամանակներին համահունչ, քաղաքացիական հասարակություն ստեղծելու ճանապարհին, անչափ կարևոր էր դարերի ընթացքում բյուրեղացած, համամարդկային արժեք ունեցող հայկական ավանդույթների վրա խարսխված, հանրային կյանքի կազմակերպումը:

1880 թ. երաշտի պատճառով Արցախում սովահարության դեպքեր են արձանագրվել: Ականատեսը գրել է. «Ջիւանշիր գաւառի բնակիչները երկար ժամանակ քաղցած մնալով զանազան կենդանիների գէշերով են կերակրվելիս եղել»<sup>907</sup>: Այդ նույն ժամանակ ծանր կացություն էր ստեղծվել նաև բերդաքաղաքում: Շուշեցի Մինաս Խունունցն իր անձնվեր ու անխնջ աշխատանքի շնորհիվ, Բաքվից բերելով մեծ քանակությամբ ալյուր, իր համաքաղաքացիներին փրկեց սովից: Այդ նույն գործին լծվել էր նաև Շուշիի ունևոր դասը՝ աղքատներին բաժանելով իրենց ունեցածի մի մասը:

Այդ օրերին «Մշակ»-ը գրել է. «Շատ ուրախալի էր տեսնել, թէ ինչպէս շատ ընտանիքներում, մինչև անգամ օրիորդներ և դպրոցական աշակերտուհիք կարդալով իրենց ազգակիցների աննախանձելի դրութիւնը, մեծ ցաւակցութիւն էին յայտնում այդ մասին: Ահա միակ ուրախալի երևույթը, որ սովից յետ յայտնի եղաւ իւրաքանչիւր մի հայաբնակ քաղաքում, և արդարև շատերը նրանցից, որոնք պարծանք էին համարում աւելի եւրօպական լեզուները գործածել մինչև անգամ ընտանեական շրջանում, կարդալ աւելի օտարազ-

<sup>906</sup> Առաքելյան Հ, Հողատիրութեան եի կալուածական խնդիրը Անդրկովկասում, «Գործ», ամսագիր, հմ. 1, մարտ, Շուշի-Թիֆլիս, 1882, էջ 65:

<sup>907</sup> Արցախեցի, Նամակ Շուշուց, «Մշակ», հմ. 94, Թիֆլիս, 1880, էջ 1:

գի լրագիրներ, վերջապես զգացին, որ լինելով հայ պիտի պահպանի հայոց լեզուն և ազգութիւնը»<sup>908</sup>:

Ընդհանուր առմամբ բարերարությունը, լայնամասշտաբ ծրագրերի իրագործումը հատուկ են սոցիալական, տնտեսական, հասարակական, քաղաքական տեսանկյունից ձևավորված հասարակարգերին: Շուշիի հասարակությունը նույնպես ապրում էր այդ տրամաբանության շրջանակներում:

Շուշեցի մեծահարուստները միջոցներ էին հատկացնում լուսավորական, կրթական, մշակութային, աղքատախնամ հաստատություններին, հոգում քաղաքի կարիքները:

Դեռևս 1861 թ. շուշեցի Առաքել Բաբայանը կառավարության կողմից արժանանացել է ոսկե մեդալի՝ «շարունակ օգտաւետ գործունեութեան և հասարակաց օգտին մեծագումար նուիրատութեանց համար»<sup>909</sup>:

Շուշիում իրականացվող բարեգործական ծրագրերը համակարգելու նպատակով «Հայոց բարեգործական ընկերության» Թիֆլիսի խորհրդի 1881 թ. դեկտեմբերի 22-ի որոշումով բացվում է այդ կազմակերպության Շուշիի մասնաճյուղը: Նորաբաց մասնաճյուղի վարչության նախագահն էր Հովհաննես Քալանթարյանը, փոխնախագահը՝ Մարգար Առստամյանը, անդամներ՝ Ջավադ Իշխանյանը, Սահակ Թաղևադյանը, անդամ-զանձապահ Դավիթ Աղամյանը, փոխանդամ և գործավար՝ Համբարձում Առաքելյանը, փոխանդամներ՝ Գայանե Աթաբեկյանը և Գրիգորիս Յուզբաշյանը<sup>910</sup>:

Բարեգործականի անդամները տարեկան վճարում էին 5-ական ռուբլի:

«Հայոց բարեգործական ընկերության» Շուշիի մասնաճյուղի 1882 թ. առաջին տարվա, մուտքերը կազմել է 1148 ռուբլի 65 կոպեկ, որից 500 ռուբլին նվիրել էին մայր և որդի Թագուհի ու Մարկոս Դուրլուխանյանները<sup>911</sup>:

1884 թ. «Հայոց բարեգործական ընկերության» Շուշիի մասնաճյուղի վարչության նախագահ ընտրվեց հաշատուր Բահաթրյանը, փոխնախագահն էր Մկրտիչ Խանդամիրյանը<sup>912</sup>: Նրանց ձեռնարկած քայլերի շնորհիվ բարեգործականի ծրագրերը օրեցօր ավելի էին ընդլայնվում:

Համաժողովրդական այդ մեծ գործին ներգրավված էին ոչ միայն շուշեցի մեծահարուստները, այլ նաև քաղաքի հայ հանրության լայն շրջանակները:

<sup>908</sup> Ապրեսյանց Ա., Նամակ Շուշուց, «Մշակ», հմ. 124, Թիֆլիս, 1880, էջ 2:

<sup>909</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 32, 25 սեպտեմբերի, Թիֆլիս, 1861, էջ 305:

<sup>910</sup> «Արձագանք», հմ. 16, 17 ապրիլի, Թիֆլիս, 1883, էջ 229:

<sup>911</sup> Լեո, Երեսնամյա հայոց բարեգործական ընկերությունը Կովկասում, Թիֆլիս, 1911, էջ 205, «Մշակ», հմ. 113, Թիֆլիս, 1882, էջ 1:

<sup>912</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 13, 17 փետրվարի, Թիֆլիս, 1885, էջ 3:

1882 թ. Պետրոս Աղամյանը և տեղացի դերասանները ներկայացում են տալիս և ստացված գումարը՝ 221 ռուբլի 65 կոպեկ, տրվում է ՀԲԸ Շուշիի մասնաճյուղին<sup>913</sup>:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին «Հայոց բարեգործական ընկերության» Շուշիի մասնաճյուղի ջանքերով քաղաքում և գավառի գյուղերում բացվել են դպրոցներ, գրադարան-ընթերցասրահներ, հոգացվել չքավոր աշակերտների և աղքատ ազգաբնակչության կարիքները:

Համաճարակային հիվանդությունների դեմ պայքարի, բնակչության առողջության հետ կապված հարցերը նույնպես բարեգործականի մասնաճյուղի ուշադրության կենտրոնում էին: Քննարկվող ժամանակաշրջանում շուշեցի մեծահարուստները՝ Հախումյանները, Թառումյանները, Ժամհարյանները, Ղուկասյանները, Խանդամիրյանները, Թաղևադյանը, Արաֆելյանը, Միրզաջան Խաչատրյանը, Ավագ Սարգսյան Մասիրխանյանը, Աղամյանը, Եսայի Արզումանյան-Թունիբեկյանը, Ավետիս Ղարաբեկյանը, Իսահակ Թաղևադյանը, Առաքել Բաբայանը, Պողոս Գասպարյան-Ալեքսանյանը և շատ ուրիշներ, մի քանի միլիոն ռուբլի են հատկացրել հայրենի քաղաքի բարգավաճմանը:

1915-1918 թթ. բարեգործական մեծ ծրագրեր է իրականացրել նաև Շուշիի «Եղբայրական օգնության կոմիտեն», որի գործունեությանը անդրադարձել ենք ուսումնասիրության այլ բաժնում:

Սկզբնական շրջանում ամեն թաղամաս իրենից ներկայացնում էր որպես մի առանձին համայնք: Թաղամասերն ունեին իրենց քաղխուղաները, եկեղեցիները, մշակութային կենտրոնները, ծխատար քահանաները:

20-րդ դարի սկզբներին Շուշիի թաղային կառույցների աշխատանքն առավել կանոնակարգվեց, ու այն ավելի կազմակերպված էր:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Շուշիի գործկոմը քաղաքի 18 թաղերում կազմակերպում և առանձին-առանձին ընտրում է երեք հոգուց բաղկացած թաղային կոմիտեներ, որոնք էլ կառավարում էին իրենց իրավասության տակ գտնվող տարածքներն ու ազգաբնակչությանը: Ի դեպ, Շուշիի վարչակառավարչական այս մոդելը ներկայումս կիրառվում է Երևանում:

Նախկին բնակավայրերից մնացած սովորությունների ու ավանդույթների համաձայն՝ թաղերում կազմակերպում էին իրենց առօրյան: Տների կառուցման, կահավորման մեջ նույնպես կային որոշակի առանձնահատկություններ:

<sup>913</sup> «Մշակ», հմ. 156, Թիֆլիս, 1882, էջ 2:

1840 թ. Ագուլեցոց եկեղեցին ուներ 447 տուն ծխական (1304 արական և 1174 իգական), Ղազանչեցոց եկեղեցին՝ 367 ծուխ (1221 արական և 1016 իգական) և Մեղրեցոց եկեղեցին՝ 102 ծուխ (241 արական և 217 իգական)<sup>914</sup>:

Ղազանչեցիներին բնորոշ է եղել շիտակությունը, ճշտապահությունը: 1902 թ. ականատեսը նշել է. «Ղազանչեցոց թաղը, դեպի Նահատակի (մատուռ, ուխտատեղի) տները, կարծեք մեկը միսսի վրայ լինեն կառուցած և այստեղից մի տեսարան է պատկերանում, նման Վենետիկին»<sup>915</sup>:

Շուշի տեղափոխված հայերը, ենթարկվելով արցախյան միջավայրի ազդեցությանը, մի քանի տասնամյակների ընթացքում մոռացան իրենց բարբառներն ու սովորույթները, մերվեցին տեղացիներին և արդեն հանդես էին գալիս որպես հայկական քաղաքամասի բնակիչներ:

Մեկ հարյուրամյակի ընթացքում շուշեցիների հագուկապի, կենցաղավարության մեջ շատ ու շատ փոփոխություններ կատարվեցին:

1821 թ. Մեսրոպ Թաղիադյանը, լինելով Շուշիում՝ մինչև բերդի՝ քաղաքի կարգավիճակ ստանալը նկարագրել է շուշեցիների տարազը. «Բնակիչք նորա ընդ այր և ընդ կին առոյգ են և աշխոյժք, զգեստուց նոցա կոչեցեալ Ղարաբաղի՝ խառնուրդ իմն է Վրացի և Պարսիկ ձևոց: Կանայք նոցա ունենին և զգոգնոց յառաջոյ իրեանց՝ ի պահպանութիւն զգեստոցն ի կեղտոյ: Պառաւունք զգենուն և զմիաշապիկ ի վերայ ամենայն զգեստուց իրեանց զի մի մխտեսցեն զնոսա: Կուսանք նոցա, որ զծայրագոյն պատկեր ամօթխածութեան ի դէմս կրեն, գեղեցիկք են յոյժ՝ և ախորժատեսիլք: Ոչ սքօղեն զգլուխս իրեանց, այլ զուտակ ի մորթոյ գառանց Ղալմուղաց դնեն ի գլուխս՝ զօրէն պատանեաց, ձինսափայլ փողքն ընդ կարմրութեան այտուցն զուգակշռեալ ...»<sup>916</sup>:

19-րդ դարում շուկայական տնտեսության զարգացման հետևանքով որոշակի փոփոխություններ է կատարվել մարդկանց տարազի, կենցաղավարության և ապրելակերպի մեջ: Տվյալ ժամանակաշրջանում Շուշիում ապրում էին առևտրականներ, արդյունաբերողներ, կալվածատերեր, նախկին մելիքական, խանական, բեկական ընտանիքների անդամներ, մտավորականներ, զինվորականներ, պետական պաշտոնյաներ, արհեստավորներ, բանվորներ, գյուղական կյանքից չկտրված նոր քաղաք տեղափոխված բնակիչներ: Ամեն մի դասակարգի կամ խավի ներկայացուցիչ Շուշի էր բերել իր ապրելակերպին հատուկ կենցաղավարություն: Այդ բազ-

<sup>914</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 45; Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 64:

<sup>915</sup> «Տարագ», հմ. 32, Թիֆլիս, 1902, էջ 341:

<sup>916</sup> Թաղիադեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. Ա., էջ 287-288:

մաշերտ միջավայրում էլ ձևավորվել են 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբներին շուշեցու կերպարին բնորոշ կողմերը:

Առևտրավաշխատական և արդյունաբերական կապիտալի կուտակումը հնարավորություն էր տվել Շուշիում արևմտյան միջավայրի և բարբերի արմատավորմանը: Մյուս կողմից՝ ասիական միջավայրը նորի առաջ իր դիրքերը հեշտությամբ չէր զիջում: Այդ ամենն արտացոլվել է ժամանակաշրջանի մամուլում և ականատեսների հուշերում:

«Գլխին ցիլինդր, ոտներին տրեխ, -այդպես է Շուշին,- գրել է «Բագուի ձայն» օրաթերթը: Եւրոպան ու Ասիան այստեղ խառնուած են իրար: Էշերի հետ միասին փողոցներով անցնում է ռետինե անիվներով կառքերը: Փողոցների մայթերից ամենան տարագով հագնված օրհորդներն ու տիկիներն են անց ու դարձ անում, իրենց գլխարկների սանջախներով, իսկ մյուս կողմից «ղալըցի այաներն» են քայլում, իրենց քիթկալով ու «պալիով», «կոտանով» ու «թափայով», «դրէի» հալավով ու ավանդական «կանաչ սաղրի չմուշկներով»:

Փափախ՝ - մի ամբողջ ոչխարի չափ ու լայնեզր շլեապա, տրեխներ՝ - ու ճոճոան, պսպղուն կօշիկներ, կարկատած չուխա՝ - ու անգլիական մահուդից կարած երոպական հագուստ: Սակայն կայ մի բան, որ խիստ ուշագրավ է.- տարագների տարբերութիւնը շուշեցիների յարաբերութեանց մեջ անջատող, միմիանցից հեռացող յատկութիւնը չունի, մի «շեապաւոր» ամբողջ ժամերով կարող է կանգնել ու սիրով զրուցել մի տրեխաւորի հետ: ... Այդ կողմից շուշեցիք դեմոկրատներ են»<sup>917</sup>:

1881 թ. Հայկունին գրել է. «Բնակիչները կամ հայ են, կամ պարսիկ, մի քանի տնւոր էլ՝ ծառայող ոսներ: Իրանք, ընդհանրապէս, քարակազմ են, կայտառունք թէ մեծերը և թէ մանկունք, մանաւանդ՝ հայկազունք: Քալուածքները՝ սեգ, շարժուածքները՝ բոի, խօսուածքները՝ տոզ: ... Տղամարդիկ հագնում են չուխայ, արխալուղ և շալվար, մէջքները՝ կամ բաց կամ քամար: Գլխներին երբեմն կոնաձև, երբեմն գլանաձև փափախ կայ: Նորերն են միայն, որ գործ են ածում ռուսական շաբկայ: Ոտնամաններից կօշիկը հագուագիւտ է և նորերին յատուկ: Ժողովրդի երկու իսկ սեռի սովորական կօշիկն է չմօշկ-քօշ՝ շինած փայտից, կաշիից և երկաթից, որով շուշեցիք օրնի բուն քաղաքի քարքարուտներն են դոփում և տրոփում: Գեղեցիկ սեռի զգեստները յար և նման են զողթնացուց և ջուղայեցուց զգեստներին: Գլխներին՝ սպիտակ (թրքուիեացը՝ սև կամ կապուտակ) չաղրա, որ անձրևի ժամանակ հովանոցի նման պարզում են: Չաղրայի ներքև՝ չարղատ արծաթեայ՝ չանգալով խառանաձև փաթաթած վզին: Ճակատներին՝ ճլատանոց՝

<sup>917</sup> «Բագուի ձայն», հմ. 121, 31 օգոստոսի, Բագու, 1913:

շատ ի շատ ոսկի կամ արծաթ, քունքերիցն այտերն ի վար՝ չնապատ – ծնտապատ և գիզիլ կամ գնտակ: Թևքերի լայն թեզանիքը՝ զարմայ և կոճակ, լոխր կամ ոսկի, կամ արծաթ: Այս է ահա հինաուրց շուշեցի և գաւառացի հայ կնոջ բոլոր զարդ ու զարդարանք: Քինք ու բերանները ծածկած քնթկալով՝ գոյնը միշտ և հանապազ սպիտակ: Իրանի (մարմնի) վրա՝ թիկնցամէջքում, նեղիկ գօտի արծաթեայ կամ բեհեզեայ, մէջքիցը ցած՝ ծնկակալ-վարտիք, իսկ ոտներին՝ բրդեայ գուլպէք: Եւ այդ ամենը՝ խատուտիկ ու նախշունիկ, թէն գերիշխող գույնն է՝ կարմրիկ:

Կան կնանիք, որ, ինչպէս թիֆլիսցիք, կապա ու դահրա և կովտա ու չիքիլա են գործածում: Կան, որ եւրոպաց կնոջ հանգի պէսն ու սեթեթով են: ... Կանանց կերպարանքը առհասարակ սիրուն է: Թշնեքիցը մանաւանդ կաթ և արին է կաթում: Գրաւիչ է նոյնպէս իրանց աչքերը, որ եզան խոշոր աչքերի նմանութիւն է բերում ...»<sup>918</sup>:

Շուշեցի աղջիկներն ամուսնանում էին մինչև 16 տարեկան լրանալը: Դրանից հետո նրանց վրա դրվում էր «տան մնացած» պիտակը և դժբախտ էր համարվում: Հարսնացուի ընտրման գործում մեծ էր ծնողների դերը: Հին սովորության համաձայն՝ Շուշիում հարսանիքները տևում էին 3–4 օր: Նորապսակներին հարսանքավորները տալիս էին փող և նվեր՝ «խալաթ»: Թաղումները կազմակերպվում էր ծխատար քահանաների միջոցով: Կային հատուկ լալկան կանայք, որոնք թաղումների ժամանակ երգում կամ բանաստեղծական ոճով սգում էին: Սգավոր ընտանիքներին բարեկամներն ու հարևանները նյութական օժանդակություն էին ցուցաբերում:

Շուշեցի տղամարդկանց վրա էր դրված դրսում աշխատելու և օջախի նյութական հարցերը լուծելու հոգսը: Շուշեցի կանայք հիմնականում տնային աշխատանքներով էին զբաղված: Նրանք «աշխատաւեր են և տոկուն: Տանը սանդիքով բուրդ են գզում, ճախարակով և իլիկով թել մանում, վիլիանով (կաժ) մետաքս փաթաթում. կապացու, վարտիկցու և վերարկուացու (դըլ-ջի) պատրաստում, բարձի երես, սփռոց և փոռց ասեղնագործում, քեարգահ բանում, կապերտ, խուրջին և թամբի պարկ ու պայուսակ շինում: Ոմանք էլ ընտիր գործ ու թաղիք են գործում և վաճառահանում: Եւ այդ բոլոր առարկաների շինողն էլ իրանք, ներկողն էլ: ... Ներկուածքները՝ պայծառ, մաքուր ու դիմացկուն, որ այլ և այլ հողերից և արմատ ու տերևներից էլի իրանք են պատրաստում»<sup>919</sup>:

Շուշեցի հին սերունդը երեկոյան ժամը 9–ին, 10–ին քնում էր, իսկ առավոտյան 4–5–ից՝ աշխատում:

<sup>918</sup> Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, էջ 11:

<sup>919</sup> Նոյն տեղում:

Եթե Արցախի գյուղերում բնակչությունը շարունակում էր ապրել գերդաստաններով, ապա Շուշիում, քաղաքային բնակավայրին հարիր՝ առանձին ընտանիքներով: Ամեն ընտանիքում ապրում էր 4–7 մարդ: Հոր խոսքը հարգի էր տան բոլոր անդամների համար: Հավատը գերբնական ուժերի նկատմամբ ու սնտիապաշտությունը Շուշիի ազգաբնակչության շրջանում խորը արմատավորված էր: Շուշեցի հայ և թուրք կանայք իրենց հետապնդող չար ուժերից ազատվելու համար հերթ էին կանգնում թուղթ ու գիր անող մոլլա բիլերի (գիտուն մոլլայի) և դերձակ Գաբրիելի տան բակում<sup>920</sup>:

Լուսնի խավարումների ժամանակ բնակչությունը եկեղեցիների զանգերի հարումով և հրացանաձգությամբ փորձում էր քշել և ոչնչացնել չար ուժերին<sup>921</sup>:

Կիրակի և տոն օրերին ժողովուրդը գնում էր եկեղեցի, աղոթում, մոմ վառում, մասնակցում ծիսական արարողություններին: Զատիկին, վարդավառին ու այլ նշանավոր տոներին քաղաքի հայ ազգաբնակչությունը խմբերով գնում էր «Քամու խաչ» և Դաշուշենի մոտ գտնվող «Սուրբ Սարիբեկը» և մատաղացու անասուններ ու թռչուններ զոհաբերում: Նշանավոր տոներին շուշեցիները թաղերով գումար էին հավաքում և եկեղեցիների բակում ոչխարներ զոհաբերում, տեղում միսը եփում, լավաշ թխում և այդ ամենը բաժանում իրենց ծխականներին:

Նոր տարվա տոնակատարությունը շուշեցիների ամենասիրված զբաղմունքն էր համարվում: Դեռևս նոյեմբեր ամսից քաղաքի բոլոր խավերի ներկայացուցիչները մեծ ոգևորությամբ նախապատրաստվում էին դիմավորելու նոր տարին: «Նոր տարին մոտենում է. ամեն տեղ տիրում է տօնական տրամադրութիւն, գրում է «Ղարաբաղ» թերթը,– փողոցներում և խանութներում ի ցոյց են հանւած պէս-պէս խաղալիքներ և զանազան թարմ ուտելիքներ. բնակիչները շտապում են զամբիղներով կրելու այդ բարիքները. նրանք պիտի վայելեն, ցնծան, հրճւեն ու ծիծաղեն և կուշտ պարկեն:

Ահա ակմբանցի նւագախումբը թնդում է բարձրաձայն, իսկ դահլիճում պճնւած օրհորդներն ու պարոններն են նագով–սագով պար բռնում ...: Մի ուրիշ տեղ էլ սինեմասօգրաֆի դաշնամուրն է հնչեցնում իր սովորական նւագը, սէանսները յաջորդում են իրար շարունակ, իսկ այցելուները շարան–շարան գնում ու գալիս են խնդումերես, ուրախ–զարթ»<sup>922</sup>:

Ի տարբերություն Արցախի գյուղերի, որտեղ շատ տարածված էր թոնրի հացը, Շուշիում հիմնականում օգտագործում էին լավաշ և մատնաբաշ:

<sup>920</sup> Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, էջ 21:

<sup>921</sup> «Փայլակ», հմ. 40, 25 հունիսի, Շուշի, 1917:

<sup>922</sup> «Ղարաբաղ», հմ. 13, 29 դեկտեմբերի, Շուշի, 1911:

Շուշեցիները տարեկան երկու անգամ լավաշ էին թխում և պահում հատուկ գործած շորի մեջ, որ կոչվում էր «ջեջիմ» կամ «մեզար»: Շուշիում սպառվող ալյուրը հիմնականում ձեռք էր բերվում Հունոտի կիրճի ջրաղացներից: Բնակչության թվաքանակի ավելացմանը զուգընթաց, ալյուր սկսեցին ստանալ նաև Ռուսաստանից: Ճաշի մեջ օգտագործվում էր կովի կաթից ստացված հալած յուղ և կտավիատի ձեթ: Շուշիում տարածված էր «մոթալի» պանիրը: Միս ավելի քիչ էր օգտագործվում: Շուշեցիների սննդի մեջ հիմնական բաժինը կազմում էր թարմ և եփած կանաչեղենը: Շուշեցիների համար սիրված կերակրատեսակներն էին՝ ժենգալով հացը, կորկոտը, կլոլակը, խաշիլը, քրլընգոշը, դոլման, խորովածը: Շուշեցիների սեղանից անպակաս էին թթվեղենը, բանջարեղենը, մրգերը, մուրաբաներն ու քաղցրավենիքները:

Ժամանակակիցը գրել է. «Շուշիին թարմ կանաչի էին մատակարարում Դաշուշենի գյուղացիները: Շուկայի (Մայդանի) մասին. ամեն ինչ կայ այնտեղ – կաղամբ, քեավառ, եգիպտացորեն, ռեհան, գինձ, նանա, տաքտեղ, պամիրդոր, վարունգ, – բոլորը ցօղոտ, բոլորը ախորժալի:

Շուշեացիք առհասարակ միս չեն սիրում, բայց կիրակե օրերը մսավաճառների խանութների առաջ էլ տեղ չի լինում. հերթի պետք է սպասել: Այդ օրը Շուշուայ հոչակաւոր «կլոլակի» օրն է. անթիւ տարիներով սրբագործուած մի նշանաւոր օր, որ հարիւրաւոր ընտանիքների երեխաների համար հարսանիք է բերում, և քաղաքի փողոցներից անցնելուց՝ «կլոլակ» թակելու ձայներ են լսում»<sup>923</sup>:

Շուշիում անչափ տարածված էր դոշաբով և թթի չիրով թեյախմությունը: Երեկոներն ընտանիքներում, դրացիների, բարեկամների, ընկերների, հարևանների հետ շուշեցիները քննարկում էին հազար ու մի հարցեր, մեկնաբանում օրվա նորությունները:

Շուկայական տնտեսաձևի արմատավորման պայմաններում հանրության շրջանում ավելի էր մեծանում պահանջը նոր գիտելիքների ստացման, տեղեկատվության փոխանակման ու իրացման նկատմամբ: Ներխմբային (ընտանեկան, ազգակցական, դրացիական) հաղորդակցությանը զուգահեռ՝ առօրեական էին դառնում նաև միջխմբային, միջանձնային շփումները և անհատական ժամանցի կազմակերպումը: Նորություններ իմանալու, նոր գիտելիքներ ստանալու, ժամանց կազմակերպելու համար անհրաժեշտ էին ակումբներ, զբոսայգիներ, խաղասրահներ, պարահրապարակներ, թատրոններ, կինոցուցադրության դահլիճներ, գրադարաններ, ընթերցասրահներ, սրճարաններ, թեյարաններ:

<sup>923</sup> «Բագուի ծայն», հմ. 121, 31 օգոստոսի, Բագու, 1913:

Շուշիում այդ նոր ծառայություններն ու ենթակառուցվածքներն ստեղծվեցին ինչպես քաղաքային բյուջեի, այնպես էլ՝ մասնավոր ներդրումների միջոցով:

Շուշիում հասարակության համար ժամանցի կարևոր հաստատություններից էին ակումբները: Հայկական թաղամասում կար երկու ակումբ՝ ամառային և ձմեռային:

1870–ական թվականներին ստեղծվեց ամառային հասարակական ակումբը: Այն եռահարկ էր, ուներ մեծ դահլիճ, ընթերցասրահ, գրադարան, սրճարան, ռեստորան, իսկ երեխաների համար՝ մանկական սպորտային հրապարակ:

Ձմեռային ակումբը երկհարկանի էր, որտեղ առանձին–առանձին գտնվում էին ընդունելության, համերգային ու պարային դահլիճներ, ընթերցասրահ և բիլիարդի սրահ: Ձմեռային ակումբը գտնվում էր քաղաքի կենտրոնում, իսկ ամառայինը՝ Շուշիի արևմտյան մասում գտնվող զբոսայգու մի անկյունում:

1883 թ. գերմանացի Մյուլլերի միջոցներով բացվում է մասնավոր ակումբ, որն ուներ մասսայական միջոցառումների համար դահլիճ և մի քանի խաղասենյակներ<sup>924</sup>:

Շուշիի ակումբներում կազմակերպվում էին թատերական ներկայացումներ, համերգներ, հայտնի գրողներին, արվեստի գործիչներին նվիրված ցերեկույթներ, երեկույթներ:

Շուշիի «Եղբայրական օգնության կոմիտե»-ին կից կանանց խմբակն ամառային ակումբում հինգշաբթի և շաբաթ օրերին կազմակերպում էր պարերեկույթներ<sup>925</sup>:

Ակումբներում գործում էին երգի, պարի խմբակներ: Երեխաներին ասիական և եվրոպական պարեր սովորեցնելու համար ամառային ակումբում 1915 թ. աշխատանքի է հրավիրվել Թիֆլիսում հայտնի պարուսույց Ինչչենցիի օգնական Ալեքսիձեն<sup>926</sup>:

Ի տարբերություն անդրկովկասի մի շարք քաղաքների՝ Շուշիի կանանց համար հանրային ժամանցի կարևոր վայրեր էին համարվում ակումբները:

Շուշիի ակումբներում տարածված էր նաև թղթախաղը: Դա գլխավորապես քաղաքի «ոսկի երիտասարդության» զբաղմունքն էր, որը կազմակերպվում էր որոշակի խաղադրույթների հիման վրա: Խաղամոլությունը,

<sup>924</sup> Գավառացի, Նամակ Շուշուց, «Մշակ», հմ. 194, Թիֆլիս, 1883, էջ 2; Ավագյան Ս., Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, 1982, էջ 16:

<sup>925</sup> «Փայլակ», հմ. 32, 28 հունիսի, Շուշի, 1915:

<sup>926</sup> «Փայլակ», հմ. 35, 9 հուլիսի, Շուշի, 1915:



որ հատուկ էր զարգացող, հարուստ և տնտեսական կայունություն ունեցող բնակավայրերին, թափանցել էր նաև Շուշի, որն ինչ-որ տեղ ստվերում էր բերդաքաղաքի դրական վարկանիշը:

Դրան անդրադարձել էր նաև ժամանակաշրջանի մամուլը. «Քաղաքի ակումբը՝ այդ միակ ժողովարանը, ուր գիշերները լցվում են քաղաքիս «խելքի և փողի» տերերի, թե անտերների ներկայացուցիչները մի խաօս է ներկայացնում, կաւճի փոշի, գլանիկների ծուխ ու մուխ, խաղաթղթերի չրրիկչրրիկոց, խաղացողների տրանջոց և ուրիշ շատ բաներ ...»<sup>927</sup>: «Եւրոպական քաղաքակրթութեան այս ժահրոտ մուրը համաճարակ ախտի պէս բռնել է մեր երկրի ամեն մի անկիւնը, մանավանդ մեր քաղաքը: ... Շատերն են լիքը գրպանով, քաղցր ծիծաղով այդտեղ մուտք գործում, բայց շատերն էլ դատարկ քսակով, պարտքի բեռներով, տխուր երեսով այդտեղից դուրս գալիս, իրենց տուն գնում»<sup>928</sup>: Այդ ամենին ականատես Հայկունին խրատական խոսք է ասում «... դուք փուչ և դատարկ ու իմաստակ նոր սերունդ, որ մինչև ի լույս հիւրանոցներում և կլուբում կը թառիք ու կը թափառիք, լաւ իմացէք, որ ձեր այդ կեանքով դուք կորած էք և յաւիտեան կը կորչիք: Թշուառք, այս կլուբներից, այդ կեանք մաշող, դրամ և պատիւ վատնող հիմնարկութիւններից հեռացէք, շուտ յետ փախէք»<sup>929</sup>:

Ընդհանուր առմամբ՝ մարդկային հասարակության հազարամյակների անցած ուղին վկայում է, որ հանրային կյանքի համար միշտ էլ կործանարար հետևանքներ են ունեցել օտարածին, հողի բարքերն ու սովորույթները:

Այդ ամենի ծիլերը տեսանելի էին նաև Շուշիում:

Քաղաքի ունևոր խավն իրենց գավակներին ռուսական կրթություն էր տալիս, և նրանք իրար հետ հաղորդակցվում էին ռուսերենով, գերմաներենով ու ֆրանսերենով: Նման գործելակերպը խաթարում էր հայոց երկրի մի անկյունի հայրենանվեր գործիչների ծրագրերի կատարմանը, խանգարում ազգային իղձերի իրագործմանը: Ի դեպ, ԼՂԻՄ-ի գոյության վերջին տարիներին նման կացություն ստեղծվել էր նաև Ստեփանակերտում, երբ պետական պաշտոնյաների, գրողների, մտավորականների մի մասը նպաստում էր հայաշունչ քաղաքի ռուսականացմանը: Արցախյան շարժումը չեզոքացրեց նաև այդ վտանգը:

Վերադառնալով Շուշիում ժամանցի կազմակերպման հարցերին՝ նկատենք, որ այն բազմազան էր, և այդ նոր ձևավորվող մշակույթը ենթադրում էր ունենալ որոշակի տարածքներ ու ծառայություններ:

<sup>927</sup> Արցախցի, Շուշիի շուրջը, «Մեղու Հայաստանի», հմ. 67, 26 յունիսի, Թիֆլիս, 1883, էջ 2:

<sup>928</sup> «Ղարաբաղ», հմ. 10, 18 դեկտեմբերի, Շուշի, 1911:

<sup>929</sup> Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, էջ 14:

1859 թ. Շուշիի հյուսիս-արևելյան կամ Գանձակի դարպասներից սկսած՝ քաղաքապետարանը, զբոսայգի կառուցելու նպատակով 100 սաժեն երկարությամբ և 20 սաժեն լայնությամբ մի տարածք է հատկացնում<sup>930</sup>: Շուշիի գլխավոր զբոսավայրը (բուլվարը) գտնվում էր քաղաքի հարավ-արևմտյան հատվածում (Քերծին գլխին): Այստեղ կային սալահատակ ձեմուղիներ: Ամառային երեկոներին գլխավոր զբոսայգին միշտ էլ մարդաշատ էր լինում: Քաղաքային իշխանությունները փորձել են զբոսայգի հիմնել նաև թուրքական մասում: Սակայն ոչխարները, այծերը, գոմաղքն ու զարշահոտությունն անպակաս էին այդ զբոսայգուց:

Չնայած քաղաքի սահմանափակ տարածքին, այնուամենայնիվ, այստեղ կային երեք հրապարակներ: Հայկական քաղաքամասում էին գտնվում Թոփխանան և Երևանյան կամ հայկական հրապարակները: Թուրքական քաղաքամասում նույնպես կար հրապարակ՝ մեյդանը: Քաղաքի ամենամեծ հրապարակը Թոփխանան էր, որի շուրջը կային թեյարաններ, խանութներ: Այդ հրապարակն այնքան մարդաշատ էր, որ երբեմն անվանում էին ժողովարան:

Շուշիի փոստի հարևանությամբ գտնվում էր քաղաքի բաղնիքը: Այն պատկանում էր Ղահրամանյանների ընտանիքին: Ամեն օր ժամը 12-ին սուլում էր բաղնիքի շշակը և ազդարարում աշխատանքային օրվա սկիզբը: Բաղնիքի շենքը բաղկացած էր ընդհանուր լողարանից և առանձին սենյակներից<sup>931</sup>:

Շուշիի ակումբները, պուրակները, հրապարակները, տեսարժան վայրերը ծառայում էին ոչ միայն քաղաքաբնակներին, այլ նաև Արցախի գյուղերի ազգաբնակչության ժամանցի կազմակերպմանը:

Ընդհանուր առմամբ՝ Շուշին ոչ միայն Արցախի, այլ նաև հարևան գավառների՝ Շաքիի, Շիրվանի, Ջանգեզուրի հայության համար նույնպես մայրաքաղաքի դերակատարություն ուներ: Չնայած վարչական տեսանկյունից Շուշին նշված գավառների հետ առնչություն, առավել ևս՝ պարտականություն չունեին, այնուամենայնիվ, քաղաքային իշխանությունները, կուսակցությունները, հասարակական, բարեգործական, առողջապահական, կրթական, մշակութային հաստատությունները, մտավորականները մտահոգ էին Շաքիի, Շիրվանի, Ջանգեզուրի հայության ճակատագրով և առօրյա հարցերով: Վերոհիշյալ գավառների հայերն իրենց հուզող հարցերը բարձրացնում էին Շուշիի համապատասխան մարմինների և իրավասու անձանց առջև: Շուշիում հրատարակվող թերթերում առանձին քննարկման

<sup>930</sup> The Analyticon <http://theanalyticon.com/?p=1640>, 21.04.2012

<sup>931</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 298:

նյութ էին դառնում այդ գավառների սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային հիմնահարցերը:

1911 թ. նոյեմբերի 10-ին Գորիսից Վ. Զեփյուռը գրել է. «Տարիներ շարունակ Զանգեզուրը մեծ յոյսերով ու ակրնկալություններով է մոտեցել դեպի պատմական Շուշին: Նա վերջինիս համարել է մի տեսակ, որի բաց լուսամուտներից դեպի մեր գաւառն է ցուլացել՝ դեպի կրթութեան ու յառաջադիմութեան հրաւիրող աստղը: Այժմ այդ դերը ատելի նշանակալից արտայատութեամբ իր վրայ է ստանձնում Շուշին ...»<sup>932</sup>:

1915 թ. հուլիսի սկզբին Շուշիի քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնագարյանը դիմում է Բաքվի քաղաքագլխին՝ աջակցելու շուշեցի վաճառականներին՝ քաղաքի և Զանգեզուրի գավառի համար 3000 փութ շաքար ձեռք բերելու<sup>933</sup>:

Շուշիի «Եղբայրական օգնության կոմիտեն» Գորիսում ուներ իր մասնաձյուղը, որի միջոցով չքավորներին ցորեն, ալյուր և շաքար էր բաժանում<sup>934</sup>: Իրենց հերթին Սյունիքի հայերը Շուշիում «Նեցուկ» թերթը հրատարակելու համար Գորիսում դրամահավաք են կազմակերպում<sup>935</sup>:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, անիշխանության և ամենաթողության պայմաններում, Շուշիի գործկոմը հոգում էր Սյունիքի հայության բնականոն կյանքը կազմակերպելու գործը<sup>936</sup>:

Արցախի և հարակից հայկական երկրամասերի բնակչության առողջության պահմանման և վերականգնման հարցերը լուծվում էր Շուշիի Ժամհարյանների հիվանդանոցում և նմանատիպ մյուս հաստատություններում:

19-րդ դարում Այսրկովկասի բնակավայրերում սանիտարական ոչ պատշաճ վիճակի և սոցիալական ծանր կացության պատճառով մասսայական համաճարակային հիվանդությունները տարածված էին, որոնց զոհ էին գնում հազարավոր մարդիկ: 1828 թ. միայն Ջրաբերդի կողմերում պարսկահայ գաղթականներից 1012 մարդ մահացել է մալարիայից<sup>937</sup>:

1823 և 1831 թվականներին Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում բռնկվել էր խոլերայի համաճարակը: Այդ հիվանդության մահացու ալիքները հասել էին մինչև Թավրիզ: Միայն Թիֆլիսում 40 000 ազգաբնակչությունից 10 000-ը 1831 թ. դարձան այդ համաճարակի զոհը<sup>938</sup>:

1892 թ. հունիսին Շուշիում խոլերայի նոր բռնկում է արձանագրվում: Քաղաքի կարող ուժերի պայքարի շնորհիվ այն շուտով մարվում է:

Այդ գործում մեծ էր բժշկապետ Տեր-Գրիգորյանցի, բժիշկ Բահաթրյանի, խոլերայի դեմ պայքարի ժամանակավոր հիվանդանոցի ղեկավար Աղամալյանի և Վահան սարկավազ Դադյանի դերը: Հարկ է նշել, որ քաղաքի թուրքական մասում խոլերայի դեմ պայքարի գործը ստանձնել էին հայ երիտասարդներից կազմված սանիտարական խմբերը: Այդ գործի համար Թիֆլիսի բարեգործական ընկերությունը տրամադրել էր 400 ռուբլի, այդ կազմակերպության Շուշիի մասնաձյուղը՝ 150 ռուբլի, Մերվի հայերը՝ 70 ռուբլի: Խոլերայի դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու, հասարակությանն իրազեկելու համար Շուշիի հայ երիտասարդների ջանքերով վերահրատարակվել է բժշկապետ Տեր-Գրիգորյանի «Խօլերա և նրա առաջն առնելու միջոցները» գրքույկը<sup>939</sup>:

1892 թ. տարածված խոլերայի հետևանքով Արցախի գյուղերում մահացել են միջին հաշվով 20-ից ավելի մարդ, իսկ Շուշիում, ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումների շնորհիվ՝ 35 մարդ<sup>940</sup>: Շուշիում առողջապահական գործն արհեստավարժ հիմքերի վրա դնելու ճանապարհին կարևոր քայլ էր 1867 թ. բժշկարանի հիմնումը<sup>941</sup>: Նշված ժամանակահատվածում քաղաքում աշխատում էին 3 բժիշկներ, և կար մեկ դեղատուն<sup>942</sup>:

19-րդ դարի երկրորդ կեսին Շուշիում ապրել և աշխատել են բժիշկներ՝ Սարգիս Բեկ Միքայելյան Շաքարյանցը (1834-1889 թթ.), Հովհաննես Բեկ Բալաբեկյան Աղասարյանցը (1840-1876 թթ.), Մարգարե Հովհաննիսյան Առուստամյանցը (1852-1901 թթ.)<sup>943</sup>:

1894 թ. Հովհաննես Ժամհարյանը դիմել էր Շուշիի քաղաքային ուսրավային (վարչությանը) և առաջարկել իր եռահարկ առանձնատանը բացել հիվանդանոց, իսկ պահպանման ծախսերի համար խոստացել տրամադրել 100 000 ռուբլի: Դրանից բացի նա հետագայում 150 000 ռուբլի էր հատկացրել անհրաժեշտ սարքավորումներ և կահավորանք ձեռք բերելու, իսկ 5000 ռուբլի՝ նվիրել դեղատան համար<sup>944</sup>:

<sup>932</sup> «Ղարաբաղ», հմ. 1, 17 նոյեմբերի, Շուշի, 1911:

<sup>933</sup> «Փայլակ», հմ. 35, 9 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>934</sup> «Փայլակ», հմ. 2, 5 հունվարի, հմ. 13, 26 փետրվարի, Շուշի, 1917:

<sup>935</sup> «Նեցուկ», հմ. 7, 28 սեպտեմբերի, Շուշի, 1917:

<sup>936</sup> «Փայլակ», հմ. 21, 26 մարտի, Շուշի, 1917:

<sup>937</sup> «Բագուի ծայն», հմ. 58, 13 մարտի, Բագու, 1913:

<sup>938</sup> The Missionary Hera lol, 1831, p. 27

<sup>939</sup> Խօլերան Շուշում, «Մշակ», հմ. 70, 23 յունիսի, Թիֆլիս, 1892, էջ 1, հմ. 75, 4 յունիսի, Թիֆլիս, 1892:

<sup>940</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1. գ. 176, թ. 3:

<sup>941</sup> «Հայկական աշխարհ», ամսագիր, հմ. 1, հունվար, Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Շուշի, Երևան, 1868, էջ 40:

<sup>942</sup> «Հայկական աշխարհ», ամսագիր, հմ. 1, ապրիլ, հմ. 2, մայիս, Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Շուշի, Երևան, 1874, էջ 39:

<sup>943</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 137-138:

<sup>944</sup> «Տարագ», հմ. 29, Թիֆլիս, 1902, էջ 312:

Հիվանդանոցի կանոնադրությունը հաստատվել է 1899 թ., իսկ բացումը կատարվել է 1902 թ. օգոստոսի 2-ին: Հիվանդանոցը կազմված էր կանանց, տղամարդկանց և երեխաների բաժանմունքներից: Սկզբում հիվանդանոցն ուներ 22 մահճակալ, մի քանի ամիս հետո այդ թիվը հասցվեց 46-ի: Աղքատների բժշկությունը ձրի էր կատարվում<sup>945</sup>:

Ժամհարյանների հիվանդանոցն Արցախի առաջին մասնագիտացված արհեստավարժ բժշկական հաստատությունն էր, որտեղ կատարվում էին նաև բարդ վիրահատություններ: Հիվանդանոցը սպասարկում էր բոլոր ազգերի ներկայացուցիչներին:

Ժամհարյանների հիվանդանոցն ուներ գլխավոր բժիշկ, երկու բժիշկներ, տասը բուժքույրեր, ֆելդշեր (բուժակ), վերակացու, փոխդեղարանապետ, դեղատան ծառա, չորս հիվանդապահներ, խոհարար, խոհարարի աշակերտ, լվացարարուհի, դռնապան<sup>946</sup>:

1906 թ. Ժամհարյանների հիվանդանոցի գլխավոր բժիշկն էր Ն. Տեր-Գաբրիելովը, բժիշկներն էին Արսեն Խաչատրյանը և տիկին Ե. Տեր-Աբրուժյանը<sup>947</sup>: 1915 թ. հիվանդանոցի գլխավոր բժիշկն էր Ս. Համբարձումյանը<sup>948</sup>: Գթության քույրեր և եղբայրներ պատրաստելու համար 1915 թ. Ժամհարյանների հիվանդանոցում բացվել են հատուկ դասընթացներ<sup>949</sup>:

Երեխաների սուր վարակիչ հիվանդությունների բուժման կենտրոն բացելու համար շուշեցի Ավան Յուզբաշյանը 1916 թ. միջոցներ էր հատկացրել<sup>950</sup>:

Քննարկվող ժամանակահատվածում Շուշիում կար նաև առանձին ատամնարուժական կաբինետ: Ատամնաբույժն էր Մելիք Փարսադանյանը<sup>951</sup>:

1910 թ. Շուշիում աշխատում էին 8 բժիշկներ, որոնցից 2 կին, 3 բուժակներ, 2 մանկաբարձ, 1 ատամնաբույժ և 6 դեղագործներ<sup>952</sup>: Հայտնի բժիշկներ էին Մովսես բեկ Աթաբեկյանը, Եփրեմ Վարդապետյանը, Ն. Երամիշյանը, Խ. Բահաթրյանը, թուրքերից՝ Մեհմանդարովը:

Խ. Բահաթրյանը մեծ հեղինակություն ուներ Շուշիում: Նա միաժամանակ հասարակական-քաղաքական գործունեություն էր ծավալել: Եղել է քաղաքային ինքնավարության, թեմականի և մյուս դպրոցների հոգաբարձուների

<sup>945</sup> «Տարագ», հմ. 30, 18 օգոստոսի, Թիֆլիս, 1902; «Каспий», но. 173, 10 августа, Баку, 1902.

<sup>946</sup> «Արշալոյս», հմ. 27, 5 փետրվարի, Թիֆլիս, 1906; Կիսիբեկյան Ա, Հուշեր, հ. 1, էջ 299:

<sup>947</sup> «Արշալոյս», հմ. 35, 17 փետրվարի, Թիֆլիս, 1906:

<sup>948</sup> «Փայլակ», հմ. 23, 28 մայիսի, Շուշի, 1915:

<sup>949</sup> «Փայլակ», հմ. 18, 10 մայիսի, Շուշի, 1915:

<sup>950</sup> «Փայլակ», հմ. 69, 8 սեպտեմբերի, Շուշի, 1916:

<sup>951</sup> «Փայլակ», հմ. 9, 9 փետրվարի, Շուշի, 1917:

<sup>952</sup> Обзор Елизаветпольской губернии за 1910 г., Тифлис, 1912, стр. 319.

խորհրդի անդամ, Ռուսաստանի առաջին պետական դումայի պատգամավոր<sup>953</sup>: Շուշիում գործում էր նաև զինվորական հոսպիտալ:

1918 թ. ազգամիջյան ընդհարումների, Թուրքիայի, նորաստեղծ Ադրբեջանի խարդավանքների պատճառով քաղաքի ազգաբնակչությունը պակասեց 1/3-ով: Բնակչության հետ միասին քաղաքը լքեցին շատ բժիշկներ:

1918 թ. Շուշիում շարունակեցին իրենց շնորհակալ աշխատանքը բժիշկներ Նիկոլայ Երամիշյանը, Իսահակ Զուրաբյանը, Սաքո Համբարձումյանը, Լուդվիգ Տեր Գրիգորյանը, Արամայիս Բաղդասարյանը և քարինտակցի Ավանես Ավանեսյանը<sup>954</sup>:

Շուշեցիներն իրենց կենցաղը ճիշտ կազմակերպելու համար կարևոր նշանակություն էին տալիս տների, բակերի կահավորմանը, հարդարմանը, փողոցների, մայթերի կառուցմանը, դրանց լուսավորության, մաքրության պահպանմանը: Տների պատերը ներսից սվաղված էին, ներկված, երբեմն էլ՝ պաստառված: Հատակը փայտից էր, շատ դեպքերում՝ ներկված: Հարուստների տները մանրահատակված էին: Կահ-կարասիքն՝ ինչպես ասիական, այնպես էլ եվրոպական էին: Շուշեցիները բնակարանները ջեռուցում էին փայտով: Տներում կային վառարաններ, որոնց վրա միաժամանակ կերակուր էր պատրաստվում: Պատերի մեջ տեղադրված վառարանները անվանում էին օջախներ: Փայտը հիմնականում մթերվում էր Խաչենի և Զրաբերդի անտառներից: Դրանով զբաղվում էին առանձին խմբեր, որոնք տարվա ընթացքում ոչ միայն փայտ էին քաղաք հասցնում, այլ նաև վարձի դիմաց կոճղերը մանրացնում և դարսում էին փայտանոցներում:

Քանի որ Շուշիի բնակիչներն ապրում էին առանձնատներում, հետևաբար ամեն մեկը ձգտում էր իր բակում ունենալ ծառ ու ծաղիկ, գեղեցիկ ծաղկանոցներ, մրգատու պարտեզներ: Քաղաքը գարնան և ամռան ամիսներին ընկղմված էր ծաղիկների ու կանաչի մեջ: Այս հարցում էլ շուշեցիները մրցակցում էին իրար հետ:

Ավանատեսները հիացմունքով են նկարագրել այդ ամենը:

«Յունիս-յուլիսին վարդի անոյշ բուրմունքն է տարածում այդ պարտեզներից, իսկ օգոստոսին ու սեպտեմբերին՝ կարմիր խնձորներն ու համեղ տանձերն են ծառերի ոստերը խոնարհեցնում դէպի գետին: Ծառերը մի անելորդ գեղեցկութիւն են բերում քաղաքին»<sup>955</sup>:

Հայկունին, 1881 թ. լինելով Բաղդասար մետրոպոլիտի նախկին դպիր Հաղամ ապոր պարտեզում, գրել է. «Տէ՛ր աստուած, որքան գեղեցիկ է այս

<sup>953</sup> «Ապառաժ», հմ. 19, 27 օգոստոսի, Շուշի, 1917:

<sup>954</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 321-322:

<sup>955</sup> «Բագուի ծայն», հմ. 121, 31 օգոստոսի, Բագու, 1913:

պարտեզը, որքան ջանք ու խնամք է թափած ծերունին նրա վրայ: Հապա այս ծաղկանոցը մի կատարեալ երօպական արանժեղ է: Ահա ձեզ մեխակ, ահա գամբազ, ահա ամսական, սպիտակ ու կարմիր վարդեր, ահա շուշան, ընտանի մանիշակ, մեկուն (խաշխաշ), ալեանդր, յասմիկ, սրինգ, նունուֆար, կակաչ և այլն: Մի խօսքով ասացի ես ծերունուն. «... և եղ տեր աստուած զԱդամ ի դրախտին փափկութեան՝ գործել զնա և պահել»<sup>956</sup>:

19-րդ դարի Շուշին միջնադարից ժառանգել էր ծուռումուռ, նեղ, հողածածկ անհարմար փողոցներ: Մանավանդ ծայրամասային փողոցները նման ձևով պահպանվել են 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին: Առավել շատ դա տեսանելի էր թուրքական քաղաքամասում:

Շուշիի հատակագծերը կազմվելուց հետո քաղաքի փողոցները, մանավանդ՝ կենտրոնականը, ժամանակակաշրջանի ոգուն համապատասխան, սկսեցին կառուցապատվել:

1873 թ. Շանկերեյնը գավառապետ դառնալուց հետո ձեռնամուխ է լինում քաղաքի ճանապարհների սալահատակմանը, որից հետո անցնում դեպի Գորիս տանող ճանապարհի շինարարությանը: Գավառապետն առավոտից բանվորների հետ հավասարապես աշխատում և խրախուսում էր նրանց<sup>957</sup>:

Շուշիի սալահատակած փողոցների մի մասն առայսօր պահպանվում և օգտագործվում է:

«Թոփխանայից սկսած մինչև հին հանգստարանի թաղը, Աղաբեկանց ձորը և ցածի Մեղանը, որտեղից արդեն սկսում է թուրքաց թաղը, շառափդաձև ձգում են երեք մեծ՝ այն է Թատրոնի, Ագուլեաց եկեղեցու փողոցները և Փօստի փողոցի շարունակությունը, մեջտեղ կազմելով երկու մեծ կարտալներ, - գրել է Ադոն: Թատրոնի փողոցի վրա գտնում էր Թամիրեանի թատրոնը, Ագուլեաց եկեղեցու փողոցի վերին շարքում՝ Ղազանչեցոց եկեղեցին, իսկ ցածր շարքում՝ Ագուլեաց եկեղեցին իր գեղեցիկ խանութներով:

Ահա այն երեք փողոցները որոնք կազմում են քաղաքի զարդը և որոնք իրենց մեջ ամփոփում էին ավելի քան 400 տներ և լեցուն խանութներ ...»<sup>958</sup>:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Շուշիի փողոցներն էին՝ Երևանյան, Թեմական (Եպարիսիալնայա), Վանքսկայա, Պետրովսկայա, Կազարմսկի, Բուլովարնի, Ստարոպոչտովայա, Մարտիրոսովսկի, Ջաֆարդարասինսկայա, Թամիրյան (Թամիրովսկի), Լորիս Մելիքյան, Առափելյան, Հին գերեզմանատան (Ստարոկլադրիշչենսկայա), Առաջնոր-

<sup>956</sup> Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, էջ 22:

<sup>957</sup> Վահան (Բաբաջան) Շահունյանց, Նամակ Շուշուց, «Մշակ», հմ. 35, Թիֆլիս, 1873, էջ 3:

<sup>958</sup> Ա-Դօ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 148:

դարանի, Գանջունցևսկի, Շախլինսկայա: Նրբանցքներն էին՝ Կուզնեցկի, Յուզբաշյան, Միրզոեվսկայա, Վարանդինսկի: Կենտրոնական ամենաշքեղ Երևանյան փողոցը թուրքերն անվանում էին Գավուր դալի փողոց:

Շուշիի փողոցների անունները, բացի որոշ բացառություններից, լիովին կապված էին հայկական իրականության հետ:

Շուշիի փողոցների վրա ամեն 100-150 քայլի վրա դրված էին նավթով վառվող լապտերներ: Քաղաքում կային այդ ամենն սպասարկող բանվորներ՝ լապտերավառներ:

20-րդ դարի սկզբին շուշեցի Մովսես Բեկ Յուզբաշյանը Քարինտակում գտնվող Դանիել Հարունյանցի մետաքսի գործարանից էլեկտրականությունը հասցնում է քաղաք և լուսավորում Ագուլեցոց թաղամասի մի հատվածը<sup>959</sup>: Մի քանի տարի անց Գ. Մելիք-Շահնազարյանը քաղաքապետ դառնալուց հետո սկսում է լուծել Շուշիի լուսավորվածության հարցը<sup>960</sup>:

Քաղաքի իշխանությունները և հայ ժողովրդի լավագույն զավակները Արցախի մայրաքաղաքը զարգացնելու նպատակով միջոցներ էին որոնում Շուշին դրսի հետ կապող ճանապարհները կառուցելու համար: Նախիջևանի և Պարսկաստանի առևտրաշահ բնակավայրերի հետ կապվելու նպատակով 1874 թ. նոր ճանապարհ է կառուցվում<sup>961</sup>:

Քանի որ թուրքական բնակավայրերով ձգվող ճանապարհներն ավագակային հարձակումների պատճառով անապահով էին, 1912 թ. որոշվեց Շուշիից հայկական շրջաններով լեռնային ճանապարհ կառուցել դեպի Գանձակ: Այդ նպատակով հայությունը 90 000 ռուբլի հանգանակեց: Նույն ժամանակում սկսվեցին Շուշի-Հաղրուք-Կարյազինո ճանապարհի կառուցման աշխատանքները<sup>962</sup>:

Քոչը քաղաքի միջով չտանելու և սանիտարական վիճակը պահպանելու նպատակով 1900-ական թվականներին կառուցվել է դեպի Գորիս գնացող՝ Շուշին շրջանցող ճանապարհը:

Շուշիի գործարար խավը քաջ գիտակցում էր, որ մրցունակ տնտեսություն կարելի է ունենալ միայն երկաթուղային հաղորդակցության զարգացումով: Շուշին, բավականաչափ հեռու գտնվելով Եվլախի երկաթուղային կայարանից, չունենալով կազմակերպված ժամանակակից փոխադրական միջոցներ, սոցիալ-տնտեսական կյանքը կանոնավոր հունի մեջ պահելու գործում մեծ դժվարություններ էր ունենում:

<sup>959</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 288:

<sup>960</sup> «Փայլակ», հմ. 13, 23 ապրիլի, Շուշի, 1915:

<sup>961</sup> «Հայկական աշխարհ», հմ. 1, ապրիլ, հմ. 2, մայիս, Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Շուշի, Երևան, 1874, էջ 37:

<sup>962</sup> «Մշակ», հմ. 168, Թիֆլիս, 1912:

Հայկական գործարար շրջանակները, մանավանդ ծագումով դարաբաղ-  
ցի մեծահարուստները՝ Ղուկասյանները, Արամյանները, Արաֆելյանները,  
Աղամյանները, Մ. Դոլուխանյանը, Մելիք-Ազարյանը, Փ. Յուզբաշյանը,  
Թունիբեկյանը, Խունունցը, Տեր-Մարգարյանը, Ի. Թադևոսյանը, Ջանու-  
մյանը որոշում են երկաթգիծը կառուցելու համար միջոցներ հանգանակել:  
1906 թ. Ռուսաստանի մինիստրների խորհուրդը հավանություն է տալիս  
Շուշի-Եվլախ երկաթուղու կառուցմանը: Նախագծի հեղինակն էր դարա-  
բաղցի Միրզա Սարուխանյանը: Ճանապարհը պետք է կառուցեր «Սարու-  
խանյան-Կուրիսկի» ընկերությունը<sup>963</sup>:

Սկսվեցին հողային աշխատանքները, կառուցվեցին կամուրջներ: 1915  
թ. մայիսին երկաթգիծը Եվլախից հասել էր մինչև Թարթառ: Սակայն բարդ  
քաղաքական, տնտեսական պայմանների հետևանքով ծրագիրը մնաց ան-  
կատար:

Շուշին ուներ իր փոստն ու հեռագրատունը: 1915 թվականից փոստ-հե-  
ռագրատան վարչությունը տեղակայվեց «Խանի տանը»<sup>964</sup>: 1882 թ. պոլսա-  
հայ Ներսիսյանն առաջին անգամ Շուշի բերեց հեռախոս և ֆոնոգրաֆ<sup>965</sup>:

Ի տարբերություն Այսրկովկասի մի շարք քաղաքների՝ Շուշին ուներ կո-  
յուղագիծ: 1912 թ. մայիսին Գանձակի նահանգապետը որոշում է մինչև ձո-  
րը կոյուղի կառուցելու համար քաղաքին տրամադրել 12 000 ռուբլի<sup>966</sup>:

Շուշիի ազգաբնակչության կենցաղային հիմնական դժվարությունը  
կապված էր ջրի հետ: Դարեր շարունակ շուշեցիներն այդ հարցը փորձում  
էին լուծել ստորերկրյա ջրերի հաշվին: 4-12 սաժեն խորությունից տեղաբ-  
նիկները ջուր էին հանում: Համարյա ամեն շուշեցու բակում կար ջրհոր:  
Սակայն ջրհորերի ջուրը, աղի լինելու պատճառով, շուշեցիների հիմնական  
մասի համար խմելու նպատակով չէր օգտագործվում: Այն առավել շատ ծա-  
ռայում էր կենցաղային պահանջներին: Խմելու ջուրը հիմնականում բերում  
էին քաղաքից 3-4 կմ հեռավորություն ունեցող աղբյուրներից: Ջրկիրները,  
տակառները էշերին բարձած, ձորից խմելու ջուրը հասցնում էին սարա-  
հարթի բնակիչներին: Դա նաև նրանց համար ապրուստի միջոց էր: Ամեն  
մի բեռ վաճառվում էր 5 կոպեկով: Հարուստ ընտանիքները տարեկան մի-  
ջին հաշվով 50 ռուբլու ջուր էին գնում<sup>967</sup>:

Հայրենակիցների բեռը թեթևացնելու նպատակով 1870 թ. շուշեցի Մահ-  
տեսի Անդրեաս Գյանջումյանցը իշխանությունից թույլտվություն է ստանում

50 000 ռուբլի ներդրումով աղբյուրների ջրերը խողովակաշարով հասցնել  
քաղաք: Բայց այդ ծրագիրն անկատար է մնում<sup>968</sup>:

Մեհտի Ղուկի խանի աղջկա՝ Խուրշիդ Բանու Նաթավանի, Հայրապետ  
Փիրիյանցի և Աղաջան Դանիելյանցի միջոցներով և ջանքերով 1873 թ.  
օգոստոսի 18-ին քաղաքից 7 վերստ հեռավորությունից ջուրը խողովա-  
կաշարով հասցվեց Շուշի: Այն երկու րոպեում տալիս էր վեց տակառ ջուր:  
Հայրապետ Փիրիյանցին և Աղաջան Դանիելյանցին, որպես նվեր, համա-  
քաղաքացիները տվել են 180 ոչխար և 20 տարբեր տեսակի ապրանքներ<sup>969</sup>:

Վերոհիշյալ ջրագիծը հնարավորություն տվեց Շուշիում ունենալ երկու  
աղբյուրներ, մեկը թուրքական թաղամասում՝ «Շեյթան բազար»-ում, մյու-  
սը՝ հայկական և թուրքական քաղաքամասերի սահմանագծում՝ ներքևի  
Գանձակի դարպասի մոտ:

Սակայն երկու աղբյուրները չէին կարող բավարարել արագաթափ աճող  
և 30 000-ից ավել ազգաբնակչություն ունեցող քաղաքի պահանջները:  
Խմելու ջրի հարցին վերջնական լուծում տալու համար շուշեցի մեծահա-  
րուստ Թադևոս Թամիրյանը նոր ջրագիծ կառուցելու նպատակով 100 000  
ռուբլի է հատկացնում: 1893 թվականից մինչև 1896 թվականը կառուցվում է  
18 կմ երկարություն ունեցող ջրատարը, որով խմելու ջուրը Սարի Բաբայից  
հասցվեց Շուշի: Ջրագծի վրա քաղաքի վերին բարձրադիր հատվածում,  
Երևանյան դռներից 150 մ հեռավորության վրա, կառուցվել է նաև ջրամ-  
բար, որի արևելահայաց պատի վրա արձանագրություն է թողնվել, որը բա-  
րեբախտաբար պահպանվել ու մեզ է հասել: Կամարաձև սրբատաշ քարի  
վրա գրված է.

*«1893-1901 թթ.*

*ի յիշատակ յաւերժական բարութեանց  
կառուցեալ այս ջրամբար եւ ջրողին  
ի Թադէոսէ Բապայեան Թամիրեանց  
աննահ նուէր Շուշոյ համայն քաղաքին,  
Татевосъ Бабаянъ Тамирянцъ»<sup>970</sup>:*

Ջրատարի կառուցման համար օգտագործվել են 40 000 կես մետրանոց  
կավե խողովակներ, որոնք պատրաստվել էին Թամիրյանցին պատկանող

<sup>963</sup> «Ղարաբաղ», հմ. 12, 25 դեկտեմբերի, Շուշի, 1911:

<sup>964</sup> «Փայլակ», հմ. 33, 2 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>965</sup> «Մշակ», հմ. 172, Թիֆլիս, 1882, էջ 1:

<sup>966</sup> «Փայլակ», հմ. 19, 14 մայիսի, Շուշի, 1915:

<sup>967</sup> «Բագուի ծայն», հմ. 121, 31 օգոստոսի, Բագու, 1913:

<sup>968</sup> Երկու խօսք Ղարաբաղի դպրոցի մասին, «Հայկական աշխարհ», հմ. 1, ապրիլ, հմ. 2, մայիս, Թիֆլիս, Բաբու, Գանձակ, Շուշի, Երևան, 1874, էջ 44:

<sup>969</sup> «Кавказ», но. 100, 29 августа, Тифлис, 1873.

<sup>970</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 91:

աղյուսի երկու գործարաններում, որոնցից մեկը գտնվում էր քաղաքի հարավային կողմում, իսկ մյուսը՝ Պեխի աղբյուրի մոտակայքում<sup>971</sup>:

Ջրագծի հանդիսավոր բացումը կատարվել է 1896 թ. սեպտեմբերի 8-ին. «քաղաքային իշխանությունները բազմահազարանոց հանրության մասնակցությամբ բացեց ջրագիծը, որը կառուցել է շուշեցի մեծահարուստ Թ. Թամիրյանցը, - գրել է «Կովկաս» թերթը: Մեր քաղաքը վաղուց էր զգում նման ջրագծի կարիքը: Ժողովրդի միջոցներով քաղաքի պատգամավորների նախաձեռնությամբ բարեգործի համար մեծ հանդիսություն կազմակերպվեց գեղեցիկ լեռան վրա, որը գտնվում է երկու ձորերի արանքում, դեպի Զանգեզուր տանող ճանապարհի և ջրագծի հարևանությամբ մեծ վրանի տակ 400 մարդու համար խրախճանքի սեղան էր պատրաստված: Առավոտից լսվում էր զինվորական, ինչպես նաև մի քանի խումբ ժողովրդական նվագախմբերի, երգիչների, աշուղների երգն ու երաժշտությունը: Ողջ քաղաքը փոքրից մինչև մեծ մասնակցում էին հանդիսավոր արարողությանը: ... Բոլորի երեսին կարելի է կարդալ երջանկություն, բավարարվածություն և ջրագծի մեկենասի նկատմամբ անսահման գոհունակություն:

Ուղիղ ժամը 12-ին հոգևորականությունը շարժվեց դեպի ջրագիծը: Ամբոխը մի ակնթարթում ժխորով և հրմշտոցով շարժվեց նույն ուղղությամբ, որտեղից 8 մեծ ծորակներից թափվում էր կենարար հեղուկը, մաքուր, զուլալ, ինչպես հաճախ այդ ամենի համար թափվում էր շուշեցի երեխաների աչքերից արցունքները: Արարողության ավարտից հետո. ամբոխը ուռա կանչելով գլուխներից վեր բարձրացրին օրվա հերոսին և այդպես նրան տարան մինչև խնջույքի սեղանը ...»<sup>972</sup>:

Թաղևուս Թամիրյանի ծառայություններն այնքան մեծ էին հայրենի քաղաքի նկատմամբ, որ նրա մահից հետո՝ 1899 թ. դեկտեմբերի 12-ին, ժողովրդական մեծ թափորով և ծիսակատարությամբ բարերարի մարմինը հուղարկավորեցին Ղազանչեցոց եկեղեցու բակում:

Երկու ջրագծերով ջուր ապահովելուց հետո քաղաքում կառուցվեցին մի քանի աղբյուրներ, Երևանյան փողոցի վերջնամասում՝ զորանոցի մոտ (Ռուսի աղբյուր), Կուսանաց եկեղեցու հարևանությամբ (Վանքի աղբյուր): Թեմականի և զինվորական հոսպիտալի մոտ գտնվող աղբյուրը ժողովուրդն անվանել էր «Սեյրանենց աղբյուր»: Ռեալական դպրոցի մոտ նույնպես աղբյուր կար: Ազուլեցոց եկեղեցու խանութների հարավային կողմում աղբյուր է եղել, որի վրա արձանագրված էր. «Որ արբուսցե ծարաւելոյն բաժակ մի ջուր / ասէ Յիսուս ոչ կորուսցէ զվարձս իւր: / Արդ իմ ծախիւք ի նա

<sup>971</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 94:

<sup>972</sup> «Кавказ», но. 249, Тифлис, 1896.

էր և դոյզն յիշատակ, ես Միրզաջան Պատան ... / բազմավաստակ կառուցի գայս պագնն / սրահը ջրամբար աղբիւր, զի տէր / տացէ ինձ վարձն զջուր կենաց իւր / ի. 25-ին օգոստոսի 1902 ամի»<sup>973</sup>:

Մեկ այլ աղբյուր գտնվում էր հայկական և թուրքական քաղաքամասերի սահմանագծին, և ժողովուրդն այն կոչում էր «Խանին աղջկա աղբյուր»: Մի քանի աղբյուրներ էլ կային թուրքական քաղաքամասում:

Քաղաքի հարևանությամբ՝ անտառներում, գտնվում էին մի քանի սովորական և հանքային աղբյուրներ՝ «Շրշուանը», «Պեխի աղբյուրը» (Իսահակի աղբյուրը), «Թթու ջուրը»:

Շուշեցիների համար ամենասիրված վայրերից մեկը համարվում էր «Պեխե աղբյուր»-ի շրջակայքը, որտեղ միշտ մարդաշատ էր լինում: Կազմակերպվում էին խնջույքներ, տոնական միջոցառումներ:

Շուշիից մոտ 3 կմ դեպի արևմուտք՝ Կարկառի վտակներից մեկի հարևանությամբ՝ բոխիների անտառի խորքում, 1871 թ. շուշեցի Աստվածատուր Ճզնավորյանի հիշատակին վարպետ Իսահակն աղբյուր է կառուցել: Աղբյուրի վրա եղած արձանագրությունը ոչնչացվել է: 1957 թվականից մնացած լուսանկարի մեջ հստակ երևում է արձանագրությունը:

*«Պեխե Աղբյուր  
յիշատակ է աղբուրս  
աստուածատուրոյ  
Դարթ~~ն Ճզն~~արց  
1871  
վարպետ  
Իսահակ»:*

Ինչպես շատ ու շատ հայկական մշակութային արժեքներ, այնպես էլ «Իսահակի աղբյուրը» թուրքերը (աղբրեջանցիները) հարմարեցրել են իրենց լեզվի հնչյունային համակարգին և կոչել «Իսաբուլաղ»:

Շուշեցիների համար հաճելի հանգստավայրերից էր քաղաքից 17 կմ հեռավորության վրա գտնվող «Թթու ջուր»-ը:

Բազելի քարոզիչները «Թթու ջուր»-ի մոտակայքում 1830-ական թվականներին գտել են նաև մեկ այլ հանքային աղբյուր, որն անվանել են «Զելտրսկի ջուր»: Ամռան ամիսներին այդտեղ հազարավոր մարդիկ էին հանգստանում: Աղբյուրի մոտ կային փոստակայան, մի քանի փայտաշեն տնակներ, որոնք կառուցել էր շուշեցի Արդումյանցը: Տարածքում գտնվող

<sup>973</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 415, թ. 35, 35ա:

մեկ այլ շինություն էլ պատկանել է Պարսկաստանի Նասր-էղդին շահի հորեղբայր Բեհմեն Միրզային, որն ապրել և վախճանվել է Շուշիում<sup>974</sup>:

18-րդ դարի վերջերից, Ղարաբաղի խանության շրջանից սկսած, հայերի հետ հարևանությամբ ապրում էին նաև թուրքեր և քրդեր: Բնական աճի և Անդրկովկասի ու Պարսկաստանի տարբեր հատվածներից ներթափանցումների հետևանքով 19-րդ դարում Շուշիում նրանց թիվը շատացավ, և ձևավորվեց թուրքական քաղաքամաս: Այն բաղկացած էր 17 թաղերից՝ «Քեօջարլու, Սաաթլու, Մամայի, Խօջա Ամիրջանլու, Մարտնլու, Վերին Դամիրջիլար, Համամի առաջ, Նոր թաղ, Ջուրթլար, Սեյիդլու, Ջուլփա, Գիլյուղ, Ներքին Դամուրջիլար, Չուխուր մահլա, ... Գուրտի, Հաջ Իստփլու, Չեօլգալա»<sup>975</sup>:

Շուշիի թուրքերը հիմնականում գաղթել էին Թավրիզից, Ջուլֆայից, Շիրվանից, Քեչարլու, Սաաթլու, Մամայի, Միրտնլու, Եաղլավանդ գյուղերից: Յուրաքանչյուր թաղում կար մի փոքրիկ փայտաշեն անշուք մզկիթ: Դրանից բացի թուրքական քաղաքամասում կար երկու քարաշեն մզկիթ՝ վերին և ներքին, որոնք 1874-1875 և 1883 թվականներին կառուցվել էր Իբրահիմ խանի դստեր՝ Գեովհար աղայի միջոցներով: Վերջինիս ծախսերով վերին մզկիթի մոտ կառուցվել է նաև մի փոքր հիվանդանոց: Վերին մզկիթի հարևանությամբ էր գտնվում գավառական դագիի (մահմեդական հոգևոր առաջնորդ - Վ. Բ.) նստավայրը: Ի դեպ, Շուշիի թուրքական քաղաքամասի նշանավոր շինություններում, այդ թվում «Խանի աղջկա տունը», և երկու քարաշեն մզկիթների կառուցվածքում նկատելի է հայ ճարտարապետական արվեստի ազդեցությունը:

Բոլոր թաղերը միմյանցից բաժանող միակ նշանը մի-մի չինարի ծառեր են կամ փայտյա երկար ձողերը:

Թուրքական թաղամասում գտնվում էին 6 փոքր կամուրջներ՝ Հաջի Ազիմի, Գեոհվար աղայի, մուլա Համիդի, Հաջի Իսմայիլի, Հաջի Երզաբեկի, Հաջի Փանահալիի: Այստեղ կային նաև ութ իջևանատներ, որոնք պատկանում էին Հաջի Արբաս Հաջի Մհարրամ զադեին, Մաշադի Հյուսեյին Մերսեաթ զադեին, Ղահրաման Մերսեաթ զադեին, Հաջի բեյուք բեկին, Նուր

բեկ զադեին, Քալբալայի Բաբաբիշի Հաջի Հուսեյին զադեին, Գեոհվար աղա Ջիվանշիրին, Ջավադ աղա Ջիվանշիրին, Սադդ խան Ջիվանշիրին<sup>976</sup>:

Անդրկովկասի շիա մահմեդականների շեյխ-իլ-իսլամ Ախունդ-մուլա-Հասան-Միրզա Նասրը-զադե Թայիրովը մինչև 1885 թ. հոկտեմբերն ապրել է Շուշիում և դպրոցներում դասավանդել պարսկերեն ու կրոն<sup>977</sup>:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբներին, երբ թուրքերն արդեն անցնում էին նստակեցության, նրանց նշանավոր տոհմերի ներկայացուցիչներն սկսեցին ապրել Շուշիում, որոնք տոն էին տալիս Անդրկովկասի տարբեր թրքաբնակ բնակավայրերի տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքին: Հայտնի թուրքերից էին Լյուտֆալի բեկ-Բեյրութովը, Ջավադ աղա Ջևանշիրը, Հասանբեկովը, Բաբաշքեկը, Խոսրով բեկ Փուլատովը, Նովրուզ Շաֆին, բժիշկ Մեհմանդարովը, Խասարուատ բեկ Թութայուկը, Աղա Աբդուռոռահիմը, Հաջի Մուրթուգա Սաֆարովը, Քերիմովը, պրինց Քեյզուակ միրզան, Սամեդ բեկ Գայիբովը, Մաշադի Թեմուր Սադրխովը, Իսկանդար Շաֆին, Ջենիշբեկ Մուրադովը, Ալեքսեյբեկ Սեյիդբեկովը, Ալլահվերանբեկովը, Իսմայիլբեկ Նովրուզովը, Նաջի Սուլեյմանովը:

Շուշիում էին հանգրվանել նաև ռուս, գերմանացի, լեհ և ազգային այլ փոքրամասնությունների նշանավոր գերդաստանների ներկայացուցիչները՝ Բ. Սվիրինը, Սինայ Լվովիչ Ռայխլինը, Իվան Ռազդորսկին, Նոտար Կապիցինը<sup>978</sup>:

Կրթություն ստացած թուրք ազնվականների մի մասը նախընտրում էր ապրել հայկական քաղաքամասում: Ժամանակակիցը գրել է. «Լիթֆալի Բեկ Բեհբուդովի կինը՝ Լեյլա խանումը, վարչաարժանի Կազան քաղաքի թաթար ծնողների աղջիկ էր, կրթած և բացի ռուսերենից գիտեր նաև լեհերեն, գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն: Բազուց փոխադրելով Շուշի, ամուսնուն պայման էր դրել հայկական թաղում ապրելու, չէր հանդուրժում թրքական թաղերի կեղտը: Աղախինը, ծառան և երեխաների դաստիարակը հայեր էին և այդ պատճառով թուրքերի յարգանքը չէր վայելում»<sup>979</sup>:

Հայ-թուրքական հարաբերությունների լարված ժամանակաշրջանում Լիթֆալի բեկ Բեհբուդովը հաշտարարի դեր էր ստանձնել, ինչի պատճառով արյան ծարավ հայրենակիցների զոհը դարձավ: 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին ապրած հայ, ռուս, թուրք հեղինակները, քաղաքական, մշակութային գործիչները նկատել են, որ Այսրկովկասի, այդ թվում Շու-

<sup>974</sup> Աբրահամ Տեր-Գասպարյան, Ճանապարհորդություն դեպի Ղափան, «Մեղու հայաստանի», հմ. 101, 26 դեկտեմբերի, Թիֆլիս, 1885, էջ 1-3:

<sup>975</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 52: Ըստ Միրզա Յուսուֆ Ներսեսովի Շուշիի թուրքական քաղաքամասում կային 10 թաղեր՝ Ղուրթլարը, Ջուլֆան, Ղուլյուղը, Չոխուրը, Հաջի Յուսուֆյուն, Մարդինլուն, Ջուրթլարը, Սաաթլուն, Մամահին, Խոջե Մարջանլուի, տես՝ Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 57:

<sup>976</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 52:

<sup>977</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 86, 3 նոյեմբերի, Թիֆլիս, 1885, էջ 3-4:

<sup>978</sup> «Փայլակ», հմ. 4, 19 հունվարի, Թիֆլիս, 1917:

<sup>979</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 88

շիի թուրքերը, խարխափում էին խավարի մեջ, տգետ էին, մոլեռանդ, նորի նկատմամբ՝ անընկալունակ, հետամնաց ու պահպանողական:

1880 թ. «Մեղու Հայաստան»-ի լրագրողը գրել է «... հայոց թաղը թե տների շինութեան կողմանէ և թէ մաքրութեամբ շատ բարձր է թրքաց թաղից, նորա փողոցները, հրապարակները և բնակչաց կեցութիւնը ավելի եվրոպականի է նման: ... Թրքաց թաղը նման էր պարսկականի: Թրքերի մօտ հասարակ երևոյթ է տեսնել մի ամենափոքր և անյարմար սենեակում գետեղված 10–12 անձինք և ընդամին նոցա ուտելեաց պաշարեղենը կամ զանազան տան կահ կարասիքը: Այդ բնակարանները այնպէս անյարմար, կեղտոտ, մութն ու խոնաւ են, որ օտար մարդ մտնելով առաջին անգամ ներս մի տեսակ շնչարգելութիւն և գլխի պտոյտ պիտի զգայ և չպիտի կարողանայ երկար մնալ այդտեղ ...:

Առհասարակ՝ թրքաց թաղումն՝ հագիւ կարելի էր գտնել մի տուն և մի բնակիչ, որոնք փոքր ի շատէ առողջապահական կանոնաց համաձայն դիրք և կեցութիւն ունենան. ինչպէս եղել են պարսիկների և խաների ժամանակ: ... Հայերը շատ բարձր են թրքերից, և մինչև անգամ հայերի աղքատ դասը թէ մաքրութեան, թէ առհասարակ բնակարանի և կեցութեան կողմանէ կարելի է ասել ատելի առողջապահական կանոնաց մօտ են, քան մինչև անգամ թուրքաց հարուստ դասը»<sup>980</sup>:

Ռուս նկարիչ Վասիլի Վերեշչագինը, 1865 թ. մայիսին լինելով Շուշիում, գրել է. «Կովկասում, ինչպես ամենուր, հայերը կատարում են առաջադիմական դեր, իսկ թաթարները՝ պահպանողականների, ընդհանրապես արգելակող տարրերի դեր»<sup>981</sup>: Ադրբեջանի 1918–1920 թվականների հանրապետության հիմնադիրներ Աղաևը, Թոփչիբաշևը, դեռևս 1906 թ. նշել են, որ «թուրքերը խիստ տգետ են և կառավարությունը ինքն է նպաստել դրան, այն ինչ հայերը ունեն ամեն տեսակի և տիպի դպրոցներ, թուրքերը դրանից զուրկ են, թուրք հոգևորականությունը նույնպես տգետ է»<sup>982</sup>:

1906 թ. հունվարի 30–ին «Խանի աղջկա» տանը թուրքերեն լեզվով կայացած գրական–երաժշտական երեկոյի ժամանակ նշվել է, որ «հայերից պետք է օրինակ վերցնենք նույնպես կրթվենք»<sup>983</sup>:

Շուշիի եկվոր թուրքերի հետ հայերը բարիդրացիական կապեր ունեին: Աբրահամ Կիսիբեկյանն իր «Հուշեր»-ում գրել է. «յուրաքանչյուր մի ադրբեջանցի ունեցել է մի հայ «քիրվա», կամ «աշնա» և յուրաքանչյուր մի հայ ու-

<sup>980</sup> Բ. Ա., Շուշի, «Մեղու Հայաստան»-ի, հմ. 27, 12 ապրիլի, Թիֆլիս, 1880, էջ 2:

<sup>981</sup> Верещагин В., Путешествие по Закавказью в 1864–1865 гг., стр. 260.

<sup>982</sup> «Արշալոյս», հմ. 44, 28 փետրվարի, Թիֆլիս, 1906:

<sup>983</sup> «Արշալոյս», հմ. 29, 8 փետրվարի, Թիֆլիս, 1906:

նեցել է իր ադրբեջանցի «քիրվան» կամ «աշնան», որոնք փոխադարձաբար պաշտպանել են սերտ, համերաշխ ու մտերմական հարաբերություններ: ... Սրանք միշտ իրար մոտ էին լինում, թե՛ տխրության և թե՛ ուրախության օրերին ու հարազատների նման ցավակցում, օգնում իրար կամ ուրախանում իրար հետ միասին»<sup>984</sup>:

Քաղաքին վերաբերող որոշ հարցեր հայերը և թուրքերը փորձում էին համատեղ լուծել: 1916 թ. Շուշիում ապրում էին Գեորգիկյան 12 ասպետներ, որոնք ազգությամբ հայեր էին: Այդ ասպետների որբերի և զավակների համար ստեղծվել էր առանձին հիմնադրամ: 1916 թ. նոյեմբերի 29–ին քաղաքի վաճառականները դրամահավաք են կազմակերպում: Հայկական քաղաքամասից հավաքվել է 370 ռուբլի, իսկ թուրքականից՝ 300 ռուբլի<sup>985</sup>:

Շուշիի հայ հանրության ներկայացուցիչները քաջ գիտակցում էին, որ թուրքական քաղաքամասի կենցաղային ծանր կացությունը, համատարած տգիտությունը պարարտ հող են ագրեսիվ և անկանխատեսելի հարևան ունենալու, հետևաբար միջոցներ էին ձեռնարկում՝ վերացնելու կամ գոնե մեղմելու այդ չարիքները:

1870–ական թվականներին Շուշեցի մի խումբ հայ երիտասարդներ՝ Սիմոն Հախումյանը, Համբարձում Առաքելյանը, բժիշկ Մարգար Առստամյանը, Նիկոլայ Տեր–Ավետիքյանը, Օրինկա Տեր–Մովսիսյանը, ստեղծում են մի խմբակ, որի նպատակն էր ժողովրդավարական գաղափարներ ու գրական հայերենը տարածել Շուշիի ազգաբնակչության շրջանում: Նրանք հետագայում, համախմբվելով «Գործ» ամսագրի խմբագրական խորհրդի շուրջը, ծրագրել էին Շուշիում ստեղծել թուրքական մտավորական խավ: Այդ կապակցությամբ «Ղարաբաղ» թերթը գրել է. «Թուրք ինտելիգենտցիային – որին մեր երկիրը այնքան կարօտ է, որն արդեն սկսել է պտոյտ գալ այնպիսի հարցերի և հիմնարկությունների շուրջը, որոնք կապ և առնչություն չունեն կրօնի հետ, կուլտուրական, նորանոր քայլեր ու նվաճումներ անելու յաջողութիւնն ենք ցանկանում»<sup>986</sup>: Խմբակի մեջ կային նաև երկու թուրք երիտասարդներ, վրացի ուսուցիչ, լեհ բժիշկ:

1899 թ. Թադևոս Թամիրյանը մահվանից առաջ մեկ միլիոն ռուբլի էր կտակել Շուշի քաղաքին, որից 100 000 ռուբլի՝ ռեալական, 300 000 ռուբլի՝ թեմական դպրոցներին, 100 000 ռուբլի՝ Մարիամյան իգական ձեմարանին, 100 000 ռուբլի՝ ռուս–թաթարական դպրոցին, 100 000 ռուբլի՝ աղքատների երեխաներին և որբերին<sup>987</sup>:

<sup>984</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 308:

<sup>985</sup> «Փայլակ», հմ. 90, 1 դեկտեմբերի, Շուշի, 1916:

<sup>986</sup> «Ղարաբաղ», հմ. 1, 17 նոյեմբերի, Շուշի, 1911:

<sup>987</sup> «Каспий», но. 273, Баку, 1899.



Թ. Թամիրյանի միջոցներով քաղաք բերված խմելու ջրի երեք մասը բաժին էր հասնում թուրքական քաղաքամասին և միայն մեկ բաժինը՝ հայկականին: Բայց դա չխանգարեց, որպեսզի այդ նույն թուրքերի ժառանգներն ամենադաժան ձևով վարվեին իրենց իսկ հայ բարերարի անխոս մահարձանի հետ: Հայրենական մեծ պատերազմից հետո Թ. Թամիրյանի շիրմաքարը ոչնչացնելու նպատակով ճարտարապետ Միրֆասեհ Բաղիրովի կարգադրությամբ այն տեղափոխվել էր Աղղամ: Քաղաքի արդեն մի բուռ մնացած հայության բողոքներից հետո շիրմաքարը վերադարձվել և նորից տեղադրվել էր Ղազանչեցոցի բակում՝ իր իսկական տեղը: Երկրորդ նման փորձը կատարվել էր 1955 կամ 1956 թվականներին: Այս անգամ էլ այդ սրբապղծությունը կանխվել է Շուշիի մանկավարժական տեխնիկումի մաթեմատիկայի ուսուցիչ Սամվել Շինականյանի կողմից: Դրանով չբավարարվելով՝ 1989 թ. սեպտեմբերի 14-ին Շուշիի թուրքերը պայթեցրին մեծ շուշեցու մահարձանը<sup>988</sup>:

1917 թ. շուշեցի մեծահարուստ Դավիթ Ներսիսյանը իր համաքաղաքացիների հոգսերը թեթևացնելու նպատակով 1000 ռուբլի նվիրատվություն է կատարել, որից 100 ռուբլին հատկացվել է քաղաքի մահմեդականների մեջ գրագիտություն տարածող Շուշիի մասնաճյուղին, 50 ռուբլի՝ Շուշիի չքավոր թուրքերին հաց մատակարարող հանձնաժողովին, 50 ռուբլի էլ մզկիթներին կից չքավոր աշակերտների ուսուցման համար<sup>989</sup>:

Մեկ այլ բարերարի՝ Արշակ Ղուկասյանի մահվան հետ կապված՝ նրա եղբայրները քաղաքին նվիրել են 2500 ռուբլի, որից 400 ռուբլին բաժին էր հասել Շուշիի թուրքերին: Այդ գումարը ծախսվել է քաղաքի մահմեդականների մեջ գրագիտություն և կրթություն տարածելու, ինչպես նաև չքավոր թուրքերին հաց մատակարարելու համար<sup>990</sup>:

Ռեալական ուսումնարանի մահմեդական աշակերտների համար գրքեր ձեռք բերելու նպատակով հայերը հանգանակություն են կատարել<sup>991</sup>: Շուշեցի հայերը թուրքերի կրթության հարցերին այնքան նախանձախնդիր էին վերաբերվում, որ նույնիսկ նրանց թույլ էին տալիս սովորել թեմական դպրոցում: Լեոն հիշում է, որ 1868–1869 ուսումնական տարում թեմականում սովորում էին երկու թուրքեր՝ Հաջինը և Շուշիի նախկին խանի աղջկա որդին՝ «կնեագ» Ուցմինը<sup>992</sup>: Երևի սա էր պատճառը, որ Շուշիի որոշ թուրքեր դիմում էին Արցախի թեմի առաջնորդին՝ իրենց «հայադավան ընդունելու

մասին»<sup>993</sup>: Հայերն այնքան մեծ վստահություն էին ձեռք բերել թուրքերի շրջանում, որ նույնիսկ մզկիթների կալվածքներից ստացված տարեկան եկամուտների ու ծախսերի ստուգման ու հաստատման համար ստեղծված 40 հոգանոց հանձնաժողովում 20-ին հայերից էին ընտրում<sup>994</sup>:

Ուշագրավ է նաև, որ 1882 թ. Սաֆրազյան ամուսինները քաղաքի ուսանողների և երիտասարդների մասնակցությամբ կազմակերպում են թուրքական սիրողական մի թատերախումբ, իսկ ծագումով շուշեցի Հովհաննես Աբելյանն աջակցել է Արաբլինսկուն՝ Շեքսպիրի «Լիր Արքան» պիեսը թուրքերեն բեմադրելու գործում: Փաստորեն, Այսրկովկասում թուրքերի թատրոնի թե՛ հիմնադրման վայրը, և թե՛ բուն երևույթն արգասիք են Շուշիի հայոց մշակութային միջավայրի<sup>995</sup>: Հայերը թուրքերի նկատմամբ նմանօրինակ վերաբերմունք ունեին Բաքվում և Գանձակում:

1906 թ. բաքվեցի հայտնի դերասան Ա. Պետրոսյանն օգնում է թուրքերին՝ բեմադրելու Նարիման-բեկ Նարիմանովի «Նադիր-Շահ» պիեսը<sup>996</sup>:

Հար և նման քայլերն ինչ-որ չափով բարելավում են շուշեցի թուրքերի կյանքն ու կենցաղը: Նրանց շրջանում հանդես են գալիս աշխարհի բառ ու բանին ծանոթ առաջին գրագետ մարդիկ:

Եթե 19-րդ դարի առաջին կեսին շուշեցի թուրք երեխաներն ընդհանրապես դպրոց չէին հաճախում, ապա 19-րդ դարի վերջերին դպրոցական տարիքի երեխաների մեջ թուրքերի տեսակարար կշիռը կազմել է 22 տոկոս, իսկ հայերինը՝ 52: 1889–1899 թթ. գրադարաններ հաճախողների թվում հայերը կազմել են 85 տոկոս, ռուսները՝ 8, թուրքերը՝ 4 և այլազգիները՝ 3<sup>997</sup>:

Ի տարբերություն Այսրկովկասի մյուս բնակավայրերի՝ հայերի ազդեցության տակ շուշեցի թուրք կանայք ոչ միայն չաղրա չէին կրում, այլ նաև փողոցներում ազատ խոսում էին տղամարդկանց հետ:

Քանի որ Շուշիում թուրքերը չունեին հրատարակչական ընկերություններ, գրադարաններ, ակումբներ, թատրոնի, կինոյի դահլիճներ, ուստի առաջադեմ գաղափարներին ձգտող նրանց ներկայացուցիչներն օգտվում էին հայկական տպարանների և մշակութային օջախների ծառայություններից:

<sup>993</sup> Մատենադարան, արխիվ Խրիմյան կաթողիկոսի, ց. 46բ, գ. 108, վավ. 868:

<sup>994</sup> Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, էջ 20:

<sup>995</sup> Մութաֆյան Լ., նշվ. աշխ., էջ 166–167; Հարությունյան Լ., Շուշիի թատրոնի ոսկեդարը, «Կաճառ», հմ. 6, 2012, Շուշի, 2014, էջ 181:

<sup>996</sup> «Արշալոյս», հմ. 24, 2 փետրվարի, Թիֆլիս, 1906:

<sup>997</sup> Թադևոսյան Ա., Հումանիտար մշակույթի էթնիկ առանձնահատկությունները Շուշիում գաղառում XIX դ. վերջին, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Երևան, 2007, էջ 304–305:

<sup>988</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 92–93:

<sup>989</sup> «Փայլակ», հմ. 4, 19 հունվարի, Շուշի, 1917:

<sup>990</sup> «Փայլակ», հմ. 9, 9 փետրվարի, Շուշի, 1917:

<sup>991</sup> «Փայլակ», հմ. 29, 30 ապրիլի, Շուշի, 1917:

<sup>992</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 354:

Հայերն էլ իրենց հերթին մասնակցում էին մահմեդականների կազմակերպած տոնակատարություններին: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Շուշիում գործող կուսակցություններն ու գաղափարական հոսանքները ձգտում էին իրենց հարևանությամբ ապրող թուրքերի շրջանում քաղաքական հասունություն ձևավորել՝ ստեղծելու համերաշխ մթնոլորտ, նրանց հորդորելով տուրք չտալ խանաբեկական սադրանքներին:

Շուշիի քաղաքային դումայի ընտրությունների նախօրյակին ՀՅԴ Արցախի կառույցը համապատասխան դիմում է հղել թուրք հանրությանը, որտեղ մասնավորապես ասված էր. ««Ապառաժ»-ը միշտ աչալուրջ և ուշադիր է դեպի մեր թուրք հարևանները, սրտանց ուրախանում և ողջունում է ամեն թարմութիւն, մտքի արթնացում, յառաջադիմութեան քայլերը նրանց մէջ: ... Սառնութիւնը, բաժանումը, թշնամանքը սերմանել է քաղաքներից, քաղաքներից են ծագել թիրիմացութիւնները, դաւերը, շնորհիւ շահագործող, կեղեքող տարրերի, դասերի: Քաղաքներից էլ պէտք է սկիզբ դնել հիմնական, գործնական համերաշխութեան, համագործակցութեան: ... Անշուշտ մեր այս կոչն ուղղւած է դեմոկրատ, ժողովրդական գործիչներին և հոսանքներին: Մենք միասին գործել, աշխատել կարող ենք միայն նրանց հետ, որոնք սոցորւած են աշխատաւորութեան, չքաւոր դասի դրութիւնը բարելաւելու ցանկութեամբ, պաշտպան են խեղձ, թշուառ ժողովրդի: Մենք կոչ ենք անում թուրք, գաղափարական երիտասարդութեան, ժողովրդի ծոցից ելած գործիչներին գալ, համախմբել, միասին գործել: Մենք կոչ ենք անում թուրք, խեղձ, մոռացւած մասսային, աշխատաւորութեան միանայ իւր վիճակակից եղբայրներին, ընկերներին և միասին, համերաշխօրէն ձգտել դրութեան թեթևացման, բարօրութեան»<sup>998</sup>:

Պատահական չէ, որ մինչև 1918 թվականը՝ Ադրբեջանի արհեստածին պետության ի հայտ գալը, Ղարաբաղի գործկումում, որտեղ ընդգրկված էին հայ քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, թուրքերի հետ համերաշխ էին աշխատում<sup>999</sup>:

Ինչպես քննարկվող ժամանակաշրջանում, այնպես էլ խորհրդային տարիներին տարածաշրջանի երկրների և ժողովուրդների պատմությանը քաջատեղյակ թուրքերը գիտակցում էին, որ Արցախը, այդ թվում Շուշին, հայկական է:

Երբ 1917 թվականի աշնանն Այսրկովկասի վարչական նոր բաժանումների շուրջ քննարկումներ էին ընթանում, թուրքական քաղաքական և հոգևոր շրջանակներն անվերապահորեն ընդունում էին, որ Շուշիի գավա-

<sup>998</sup> «Ապառաժ», հմ. 27, 19 հոկտեմբերի, Շուշի, 1917:

<sup>999</sup> «Ապառաժ», հմ. 7, 2 հուլիսի, Շուշի, 1917:

ղը հայկական է: Հետևաբար նրանք առաջարկեցին Ջևանշիրի գավառի 6, Կարյազինոյի գավառի 3 հայկական գյուղեր անցնեն Շուշիի գավառին: Միաժամանակ նրանք գտնում էին, որ Քարվանսարայի, Գանձակի և Շուշիի գավառները միանշանակ էթնիկական հիմքում հայկական էին<sup>1000</sup>:

Չնայած հայ մտավորականների և քաղաքական գործիչների ջանքերին, այնուամենայնիվ, Շուշիի թուրքերը շարունակում էին մնալ խանաբեկական և Թուրքիայի գործակալների ազդեցության տակ: Այս ուժերն էլ, պանթուրքիստական հովերով տարված, անտեղյակ և անգրագետ իրենց ցեղակիցներին լարում էին հայերի դեմ, որի հետևանքով 1905–1906 և 1920 թվականներին ավերվեց բարեշեն քաղաքը:

Շուշիի տնտեսական, քաղաքական, մշակութային վերելքներն ու վայրէջքները հիմնականում պայմանավորված էին դարերի ընթացքում այդ բնակավայրի ժողովրդագրական գործընթացներով, միգրացիոն տեղաշարժերով:

Մինչև 18-րդ դարի 50-ական թվականները Շուշին ազգային հիմքում միատարր հայկական բնակավայր էր: Ղարաբաղի խանության գոյության շրջանում Շուշի սկսեցին թափանցել թուրքեր և քրդեր: Ղարաբաղի խաների հակահայ քաղաքականության, ինչպես նաև 1795–1797 թթ. Աղա Մուհամադ խանի արշավանքների հետևանքով Արցախի մի շարք բնակավայրերից, այդ թվում Շուշիից, հայությունն սկսեց արտագաղթել:

1813 թ.՝ Գյուլիստանի պայմանագրից հետո, այդ ամենին գումարվեցին ցարական արքունիքի՝ Ղարաբաղի խանի և նրան հպատակ մահմեդական բեկերի նկատմամբ ունեցած քաղաքական սեթենթանքներն ու ընդգծված կողմնակալ մոտեցումները և հակահայ դիրքորոշումները: 1823 թ. իրենց դավաճանած Մեհտի-Ղուլի խանին ռուսները ոչ միայն թույլատրեցին Պարսկաստանից վերադառնալ Շուշի, այլև իր հետ բերել մահմեդական 3000 ընտանիքներ, որոնց մեծ մասը թուրքեր էին: Վերջիններիս ռուսական կառավարությունը 6 տարով ազատեց հարկերից: Մահմեդական վերաբնակիչների մի մասը հաստատվեց Շուշիում: Այդ ամենի հետևանքով, ի օգուտ թուրքերի, մի քանի տարով փոխվեց Շուշիի ազգագրական դեմքը:

Մեսրոպ Թաղիադյանը, լինելով Շուշիում, գրել է, որ 1821 թ. նոյեմբերին բնակավայրում ապրում էին հայեր և թուրքեր: Հայերն ունեին 500 տուն բնակչություն<sup>1001</sup>:

<sup>1000</sup> Անանուն Դ., Դարձեալ Անդրկովկասի վարչական բաժանումը, «Գործ» հմ. 11–12, նոյեմբեր–դեկտեմբեր, Բաքու, 1917, էջ 200–202:

<sup>1001</sup> Թաղիդեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. Ա, էջ 286–287:

Ռուսական աղբյուրների տվյալների համաձայն՝ 1823 թ. ամրոցում ապրում էր 8290 մարդ, որից հայեր՝ 3350 (41 տոկոս), թուրքեր (թաթարներ)՝ 4670 (56 տոկոս), այլ ազգեր, հիմնականում քրդեր՝ 270 (3 տոկոս)<sup>1002</sup>:

Հետաքրքիր է, որ ներկայումս աղբյուրներից հեղինակները, առանց սկզբնաղբյուրներ մատնանշելու, կամայականորեն նույն հարաբերակցությունը վերագրում են Շուշիի պատմության հետագա շրջանին, այդ այն դեպքում, երբ 1833 թվականից ժողովրդագրական պատկերը բերդավանում արդեն փոխվել էր: 1833 թ. Շուշիում ապրում էր 7304 մարդ, որոնցից 3850–ը (52,8 տոկոսը) հայեր էին, 3446–ը (47,1 տոկոսը) թուրքեր (թաթարներ), 0,1 տոկոսն էլ այլ ազգերի ներկայացուցիչներ<sup>1003</sup>:

Ըստ 1841 թ. եկեղեցական ծխական մատյանների՝ Շուշիի հայ ազգաբնակչությունը հետևյալ սեռային կազմն ուներ. «Սբ. ԱՄ Մայր եկեղեցվոյ Ագուլեաց – 447 տուն, 1304 արական, 1174 իգական, Ամենափրկիչ եկեղեցւոյ Ղազանչեցվոց – 364 տուն, 1221 արական, 1016 իգական, Սբ. ԱՄ եկեղեցւոյ Մեղրեցոց – 102 տուն, 241 արական, 217 իգական, Սբ. ԱՄ եկեղեցւոյ Ներքին թաղի – 46 տուն, 153 արական, 127 իգական»<sup>1004</sup>:

1841 թ. Շուշիում ապրում էր 5453 հայ: 10 տարվա մեջ հայերի թիվը հասավ 6827–ի, որոնցից Ագուլեցոց թաղում՝ 485 տուն, 1521 արական և 1312 իգական բնակիչներով, Ղազանչեցոց թաղում համապատասխանաբար 378 տուն, 1354 արական, 1051 իգական, Մեղրեցոցում՝ 188 տուն, 672 արական, 560 իգական և Վերին թաղում՝ 56 տուն, 202 արական, 155 իգական<sup>1005</sup>:

Հաջորդ տեղեկությունը մեզ է հասել ռուսական աղբյուրներից: 1854 թվականին արդեն քաղաքի կարգավիճակ ունեցող Շուշիում բնակչությունը կազմել էր 15 194 մարդ, որից 7760–ը (51,1 տոկոսը) հայեր էին, 7391–ը (48,6 տոկոսը) թուրքեր (թաթարներ), 43–ը (0,3 տոկոսը) ռուսներ<sup>1006</sup>:

1852 թ. Թիֆլիսից, Շամախուց և Նուխիից հետո Այսրկովկասում իր մեծությամբ չորրորդ քաղաքը համարվում էր Շուշին:

Այդ ժամանակներից սկսած՝ Շուշին բռնել էր համաչափ զարգացման ուղին: Արհեստագործության վրա խարսխված Շուշիի տնտեսությունը նոր բնագծեր նվաճելու համար աշխատուժի կարիք ուներ: Ինքնաբերաբար Արցախի լեռնային սակավահող գյուղերում կուտակված ազատ աշխատուժի

<sup>1002</sup> ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 163; (Описание Карабахской провинции, составленное в 1823 г. действительном статским советником Могилевским и полковником Ермоловым 2–ым, Тифлис, 1866 г.)

<sup>1003</sup> ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 51–52:

<sup>1004</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 43:

<sup>1005</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2604:

<sup>1006</sup> «Кавказский календарь» на 1856 г., отдел III, Тифлис, 1855, стр. 358–359.

սպառնալից կենտրոն դարձավ քաղաքի կարգավիճակ ստացած Շուշին: 6 տարվա ընթացքում քաղաքի ազգաբնակչությունը 4753 մարդով ավելացավ:

Համաձայն Շուշիում կազմված ընտանեկան ցուցակների՝ 1860 թ. քաղաքում կար 2966 ընտանիք, որը կազմում էր 17 484 մարդ: Հայկական քաղաքամասում բնակվում էր 9533 մարդ (54,53 տոկոս), իսկ թուրքականում՝ 7951 մարդ (45,47 տոկոս)<sup>1007</sup>:

1873 թ. Շուշիում կազմակերպված մարդահամարի տվյալներն առավել ամբողջական տեղեկություններ են հաղորդում մեզ քաղաքի բնակչության թվի և կազմի վերաբերյալ:

1873 թ. Շուշիում ապրում էր 24 552 մարդ, որից 13 504 (55 տոկոսը) հայեր էին, 10 804 (44 տոկոսը) թուրքեր (թաթարներ) և 244–ը (1 տոկոսը) այլ ազգերի ներկայացուցիչներ<sup>1008</sup>:

Շուշիի ազգաբնակչության օրեցօր աճող թվաքանակի մասին են խոսում 1886 թ. կազմված քաղաքի ընտանեկան ցուցակներից ստացված տվյալները:

1886 թ. Շուշիի ազգաբնակչությունն արդեն կազմել էր 26 806 մարդ, որից 15 188 (56,7 տոկոսը) հայեր էին, 11 595 (43,2 տոկոսը) թուրքեր (թաթարներ), 21 (0,07 տոկոսը) ռուսներ և միայն 2 հոգի՝ հրեաներ<sup>1009</sup>:

1886 թվականի տվյալներով՝ Շուշին բնակչության թվակազմով Բաքվից (86 611 մարդ) և Թիֆլիսից (78 445 մարդ) հետո իր մեծությամբ Այսրկովկասում երրորդ քաղաքն էր: Այդ նույն ժամանակահատվածում Շուշին ավելի շատ բնակիչներ է ունեցել, քան Երևանի նահանգի Նախիջևանը, Օրդուբադը և Նոր Բայազետը, կամ Քուբայիսի նահանգից՝ Բաթումը, Օզուրգեթին, Փոթին, Սուխումը, Ռեդուտ–Կալեն միասին վերցրած<sup>1010</sup>: 11 տարիների ընթացքում Շուշիի հայերի թվաքանակը պակասեց 768 շնչով:

<sup>1007</sup> Տեր–Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 78–79: Այս տվյալը հեղինակը վերցրել է «Камеральное описание города Шуша за 1860 г.», Архив министерства внут. дел Азерб. ССР, фонд 10, ед. хран. 48, лист 1–1025, սակայն ըստ ներկայացվածի քաղաքում հայերից, թուրքերից բացի այլազգիներ չկային, որը անհավանական է թվում: Ամենայն հավանականությամբ ազգային փոքրամասնությունների ցուցակները ներառվել էին հայերի և թուրքերի ընտանիքների կազմի մեջ:

<sup>1008</sup> Статистические таблицы о народонаселении Кавказского края, сборник сведений о Кавказе т. VII, Тифлис, 1880, стр. XXII–XXV.

<sup>1009</sup> Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г.; ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 118, թ. 89–93:

<sup>1010</sup> Իշխանեան Բ., ժողովուրդների տերիտորիական բաժանումները Անդրկովկասում, «Գործ», հմ. 11–12, նոյեմբեր–դեկտեմբեր, Բաքու, 1917, էջ 117, 121:

Այսպես, 1897 թ. առաջին համառուսական մարդահամարի տվյալներով Շուշիում ապրում էր 25 881 մարդ, որից 14 420-ը (55,7 տոկոսը)՝ հայեր, 10 778-ը (41,6 տոկոսը) թուրքեր (թաթարներ), 396-ը (1,5 տոկոսը)՝ ռուսներ, 133-ը՝ լեհեր, 1 չեխ, 1 լատիշ, 73 մոլդովացիներ, 1 ֆրանսիացի, 12 գերմանացիներ, 5 պարսիկներ, 1 օս, 2 գնչուներ, 4 հրեաներ, 39 վրացիներ, 4 ավարներ, 1 չեչեն, 8 բաշկիրներ, 1 չուվաշ: Դրանից բացի քաղաքում ապրում էին 249 ժամանակավոր բնակիչներ և 745 օտարերկրյա բնակիչներ<sup>1011</sup>:

Բնակչության թվակազմի նման անկումը կարելի է բացատրել հիմնականում տնտեսական այն տեղաշարժերով, որ 19-րդ դարի վերջերին կատարվեց Այսրկովկասում: Տնտեսական տեղաշարժերը հիմնականում պայմանավորված էին հետևյալ նոր զարգացումներով ու շարժառիթներով՝

ա) Պարսկաստանի հետ Ռուսաստանի արտաքին ապրանքաշրջանառությունն անկում էր ապրում, և Շուշին դադարում է մեծածախ առևտրի կենտրոն լինելուց:

բ) Տարածաշրջանի քաղաքների հետ Շուշիի երկաթուղային կապի բացակայությունը:

գ) Դաշտային Ղարաբաղի բնակավայրերի արագ զարգացումը և Շուշիին հակակշիռ ստեղծելու հանգամանքը:

դ) Բաքվի նավթարդյունաբերության աննախադեպ աճը: Բաքուն դարձել էր էժան աշխատուժի կլանման վայր:

1899 թ. Բաքվում կար 22 000 բանվոր, 1900 թ.՝ 26 000, իսկ 1901 թ.՝ արդեն 33 000: Հայերը կազմում էին բանվորների 25 տոկոսը, պարսիկները՝ 22, ռուսները՝ 19, լեզգիները՝ 14, Կազանի թաթարները՝ 3, այլազգիները՝ 1<sup>1012</sup>: Բաքվի բանվորների թիվը համալրվում էր Արցախից և Սյունիքից տեղափոխված հայերի հաշվին:

Քանի որ Շուշին վաճառաշահ քաղաք էր, հետևաբար առևտրականի հոգեբանություն ունեցող ազգաբնակչության մի մասը նոր կյանքի և տնտեսական շահավետ հեռանկարների որոնումների ակնկալիքով հայտնվում էր «սև ոսկու» համբավ ունեցող Բաքվում:

«Տարագ»-ի թղթակիցը տարակուսանքով գրել է. «Զարմանալի իրողություն է, որ թուրք ազգաբնակչութիւնը, լինի նա գիւղում թէ քաղաքում, վարակւած չէ գաղթականութեան, եթէ կարելի է ասել, համաճարակ ախտով: Շուշու թուրքերը տեղից չեն շարժում. Նրանք հետզհետէ առնում են գաղ-

<sup>1011</sup> Первая всеобщая перепись Российской империи, т. LXIII, Елисаветпольская губерния, 1904, под ред. Троицкого.

<sup>1012</sup> «Արշալոյս», հմ. 2, 30 օգոստոսի, Թիֆլիս, 1905: Վերոհիշյալ աղբյուրի մեջ 16 տոկոսը բացակայում է: Ամենայն հավանականությամբ դրանք էլ թուրքեր էին:

թող հայերի տները, հետզհետէ բարձրանում են դէպի հայոց թաղը ...»<sup>1013</sup>: Իսկ «Արձագանք»-ի թղթակիցը նույն ժամանակաշրջանում նկատել է. «Սիւնեաց աշխարհի Շուշի քաղաքը, որի որդիքը այնքան մեծ հակում ունեին ուրիշ քաղաքներ գաղթելու, դարձեալ բովանդակում է իւր պատերի մէջ 19 120 հայ, 32 570 բնակչից, ասել է 60%»<sup>1014</sup>:

19-րդ դարի 80-ական թվականներից, պանթուրքիստական գաղափարախոսության ձևավորման շրջանում, թուրք ազգայնականները փորձում էին Այսրկովկասի բնիկ ժողովուրդներին, մանավանդ հայերին, դուրս մղել և նրանց տեղը գրավելու ճանապարհով հաստատվել ու տարածաշրջանում թելադրողի դեր ստանձնել:

Դրա արձագանքները հասել էին նաև Շուշի: 1881 թ. Հայկունին գրել է. «Նրանց (թուրքերի - Վ. Բ.) տներն ամբողջապես լերան արևելեան լանջերուն են սփռուած եղել, իսկ այժմ դրանք կամաց-կամաց բարձրանում և բռնում են նաև լերան արևմտեան լանջերն եւս: Ինձ թվում է, որ շատ ժամանակ չանցած՝ շուշեցի հայք ստիպուած պէտք է լինին կան քաղաքի յետ ընկած անկիւններումը սեղմուիլ, կուչ գալ, կան թողնել իրանց բնակավայրը և գաղթել»<sup>1015</sup>:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Շուշիի ազգաբնակչության թվակազմի աճ է նկատվում: Դա հիմնականում բացատրվում է Շուշիի տնտեսության մեջ արհեստագործության նկատմամբ մանուֆակտուրային, ֆաբրիկային, գործարանային արտադրության զգալի աճով: Շուշեցի գործարարները, դաժան մրցապայքարին դիմանալու նպատակով տնտեսության մեջ սկսեցին ներդրումներ կատարել և ֆաբրիկաները հագեցնել ժամանակակից տեխնիկայով: Դա որոշակիորեն մեղմեց իրավիճակը: Լուծվեց քաղաքի ազգաբնակչության զբաղվածության հարցը: 1904 թ. Շուշիի բնակչության թիվը հասավ 33 187-ի, որից 17 982-ը (54,2 տոկոսը) հայեր էին, 14 548 (43,8 տոկոսը) թուրքեր (թաթարներ) էին, 593-ը (1,8 տոկոսը) ռուսներ և 64-ը (0,2 տոկոսը) այլ ազգերի ներկայացուցիչներ<sup>1016</sup>:

Շուշիի հայության համար նոր արհավիրք դարձան 1905-1906 թվականների հայ-թուրքական ընդհարումները, որոնց հետևանքով հայկական քաղաքամասում ավերվել են 300, իսկ թուրքականում 200 բնակելի տներ, հասարակական շենքեր:

<sup>1013</sup> «Տարագ», հմ. 22, Թիֆլիս, 1891:

<sup>1014</sup> Ա. Կ., Անդրկովկասի քաղաքների հայ ազգամակչութիւնը, «Արձագանք», հմ. 2, մարտ, Թիֆլիս, 1891, էջ 18:

<sup>1015</sup> Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, էջ 20:

<sup>1016</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 265, թ. 144:

Հարյուրավոր հայեր զոհ գնացին այդ ընդհարումներին, իսկ մյուս մասն էլ նորից վերցրեց գաղթականության ցուպը:

Նկատենք, որ այդ ընդհարումների ժամանակ, վերջին հաշվով, հայերին հաջողվեց ուժի միջոցով խաղաղություն պարտադրել թուրքերին: Այդ ամենով հանդերձ՝ հայության մի մեծ հատված անհասկանալի ու անբացատրելի տրամաբանությամբ իր ունեցվածքն ու հայրենիքը թողնում էր թուրքին և բախտ որոնում օտար ափերում:

Ցավալի այդ հարցերին անդրադարձել էր քննարկվող ժամանակաշրջանի հայկական մամուլը: «Արշալոյս» թերթը իր խմբագրականում գրել է. «Շատանալու, տարածվելու ձգտումով զինված թուրքը ոչ մի բանի առաջ կանգ չի առնում: Նա խլում է, գողանում է, հնարում է վեճեր, ... կազմակերպում սուտ վկայություն և կատարում սպանություններ: Կովի մեջ թուրքը բնագոյան բավականություն է ստանում, մինչդեռ հայը՝ վիշտ ու կսկիծ:

Պատմությունը ստեղծել է հայերի մեջ, հակառակ տարածվելու օրենքի, ցրվելու հակում, ... նա երկար չի մտածում, որ պայքարի և տարածվի իր երկրում, այլ դիմում է տարագրության:

Ինքնապաշտպանության զգացումը հայի մեջ դարերով ձնշված է եղել: Նա դարձել է ավելի վախկոտ, թուրքի ուժը իր երևակայության մեջ բարձրացնող և հակված ավելի փախչելու թուրքերից, քան նրան դիմադրելու: Համարյա առանց պայքարի թուրքերը տարիներ շարունակ նորանոր տարածքներ էին գրավում: Տարածվելու հոսանքը զարգանալով՝ թուրքերի մեջ առաջ բերեց մի քաղաքական վարդապետություն, որ թուրքը ամենից լավն է և նա պետք է տիրի Անդրկովկասին և, ինչու չէ, նաև աշխարհին: Այդ ամենը հիմնավորվում էր շարիաթի միջոցով, որ կայանում է հետևյալում. Անդրկովկասը առաջ պատկանում էր իսլամ դավանողներին, ուրեմն նա պետք է ազատվի քրիստոնյաներից, ռուսներից և նրանց դաշնակից հայերից, և որ ռուսներին անցնելը հակառակ է շարիաթին և կատարվածը ապօրինի է ...:

Ամեն մի հայ, ով կամենում է իրավացի տեր դառնալ իր կայքին, պարտավոր է տալ նախկին իսլամական պետությանը նշանակյալ հարկը: Իսկ եթե նա այդ հարկը չի տալիս, ուրեմն դա մեղսագործություն է և ամեն մի մահմեդական ոչ միայն իրավունք ունի, այլև պարտական է խլել նրանից կայքը»<sup>1017</sup>:

«Այժմ – պատմում է Շուշիում ապրող «Արշալոյս»-ի թղթակիցը, երբ համատարաբար քաղաքս խաղաղ և ապահով դրութեան մեջ է, քան հայ-թուրքական ընդհարումներից յետոյ, և մանաւանդ Շուշի-Եւլախ ճանապարհը

<sup>1017</sup> «Արշալոյս», հմ. 63, 23 մարտի, Թիֆլիս, 1906:

բաց է, – հայերը սկսել են մեծ խմբերով գաղթել քաղաքիցս դեպի Կովկասի և Ռուսաստանի ավելի ապահով քաղաքները:

Գաղթում են, ինչպէս կարողանում են ... Եվ այդպիսով գաղթում է ունկորը և չունկորը, տնատէրը և ոչ տնատէրը, վաճառականն ու արհեստավորը:

Գաղթում է նա, ով շատ հեշտութեամբ կարող է ապրել ուրիշ քաղաքներում, բայց և գաղթում է նա, ով գրկուած է ամեն ինչից և ամբողջ յոյսը դրել է իր բազկի վրայ՝ թե իրան և թե իր բազմամարդ ընտանիքը կերակրելու համար: Հատկապես կարելի է ասել, որ գաղթել են համարյա բոլոր ունկոր և միջին դասակարգերը: Մնում են, ուրեմն, ստորին (արհեստաւոր և բանւոր) դասակարգերը, որոնք առանց ունկորների գոյութիւն ունենալ չեն կարող, որովհետև ունկորն է գլխաւորապէս նրանց աշխատանք, գործ, ապրելու միջոց տալիս: Մարգարէ չպետք է լինել գուշակելու համար, որ վաղը, միւս օրը այդ դասակարգերն էլ, աշխատանք չգտնելու պատճառաւ, դիմեն օտար քաղաքները»<sup>1018</sup>:

Այս պայմաններում Շուշիի հայության թիվը կտրուկ պակասեց: Եթե հայ-թաթարական ընդհարումների նախօրյակին՝ 1904 թ. քաղաքում ապրում էր 17 982 հայ, ապա 1906 թ. այդ թիվը պակասեց 5184-ով և հասավ 12 798-ի<sup>1019</sup>:

Մի կարճ ժամանակահատված, երբ 1907 թվականից Ռուսական կայսրությունում կյանքը որոշակիորեն կարգավորվեց, մինչև 1917 թ. իրադարձությունները, Շուշին նորից ապրեց իր բնականոն կյանքով: Դա իր բարերար ազդեցությունն ունեցավ ժողովրդագրական գործընթացների վրա: 1914 թ. Շուշիի ազգաբնակչության թիվը հասավ 42 130 մարդու, որից 22 004 (52,2 տոկոսը) հայեր էին, 18 864-ը (44,7 տոկոսը)՝ թուրքեր (թաթարներ), 1188-ը (2,8 տոկոսը)՝ ռուսներ և 74-ը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ<sup>1020</sup>:

1916 թ. Շուշիում ապրում էր 43 864 մարդ<sup>1021</sup>: Մեկ այլ հեղինակի տվյալների համաձայն՝ Շուշիում 43 869 բնակիչներից 23 396-ը (53,33 տոկոսը) հայեր էին, 19 121-ը՝ մահմեդականներ, 1249-ը՝ ռուսներ, մյուսները՝ վրացիներ, լեռնականներ, եվրոպացիներ<sup>1022</sup>: Համարյա նույն տվյալներն են պարունակում անգլիական աղբյուրներում<sup>1023</sup>: Եղիշե Իշխանյանի հաշվարկներով՝ քաղաքում 1918 թ. ապրում էր 32 000 հայ<sup>1024</sup>:

<sup>1018</sup> «Արշալոյս», հմ. 37, 13 հոկտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1019</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 265, թ. 144:

<sup>1020</sup> «Кавказский календарь» на 1915 г., Тифлис, 1914, стр. 81–214

<sup>1021</sup> «Кавказский календарь на 1917 г.», Тифлис, 1916, стр. 190.

<sup>1022</sup> Ալեքսանյան Հ., Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916–1926 թթ., Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան, Երևան, 2007, էջ 116:

<sup>1023</sup> Armenia, political and Ethnic Boundaries 1878–1948, London, 1998, p. 447.

<sup>1024</sup> Իշխանյան Ե., նշվ. աշխ., էջ 321:

1886 թվականից մինչև 1914 թվականն ընկած ժամանակահատվածում Այսրկովկասի քաղաքների ժողովրդագրական գործընթացների խորապատկերի վրա տեսանելի է Շուշիի համանման զարգացումների արդյունքները: Ստորև ներկայացրած աղյուսակը<sup>1025</sup> պատմում է դրա մասին:

**Անդրկովկասի քաղաքները**

**Թիֆլիսի նահանգ**

	Թվականներ	1886	1897	1914	1886–1914
1	Թիֆլիս	78445	159590	344629	339,32%
2	Ախալքալաք	4303	5440	7484	73,92%
3	Ախալցխա	16116	15357	23924	50,84%
4	Գորի	7243	10269	25635	254,20%
5	Դուշեթ	2027	2566	2213	9,17%
6	Սղնախ	10604	8994	17690	66,80%
7	Թելավ	11214	13929	13231	35,82%
8	Ջաքարթալա	1231	3009	4000	224,13%
Ընդամենը՝		131183	21151	440826	236,04%

**Քութայիսի նահանգ**

1	Քութայիս	22643	32476	57917	156,00%
2	Բաթում	14803	28508	38615	160,86%
3	Օզուրգեթ	1472	4710	8580	482,88%
4	Փոթի	4709	7346	19667	317,64%
5	Սուխում	412	7998	46530	11193,68%
6	Ռեղուդ Կալե	382	780	802	109,98%
Ընդամենը՝		44421	81818	172111	287,70%

**Երևանի նահանգ**

1	Երևան	14738	29006	51286	248,00%
2	Ալեքսանդրապոլ	24230	30616	54316	116,80%
3	Նախիջևան	6939	8790	8945	29,00%
4	Օրդուբադ	4199	4611	5655	34,67%
5	Նոր Բայազետ	7488	8486	13290	77,50%
Ընդամենը՝		47594	81509	130492	174,15%

<sup>1025</sup> Իշխանեան Բ., Ժողովուրդների տերիտորիական բաժանումները Անդրկովկասում, «Գործ», հմ. 11–12, նոյեմբեր–դեկտեմբեր, Բաքու, 1917, էջ 117–121:

**Գանձակի նահանգ**

1	Գանձակ	20294	33625	56305	177,44%
2	Նուխի	25894	24734	54678	111,12%
3	Շուշի	26800	25881	42568	60,00%
Ընդամենը՝		72994	84210	153551	112,00%

**Բաքվի նահանգ**

1	Բաքու	86611	111904	248812	187,27%
2	Ղուբա	13917	15363	13459	-3,40%
3	Լենքորան	4222	8733	13967	223,70%
4	Շամախի	22139	20007	27527	24,07%
Ընդամենը՝		126889	156007	303765	147,28%

Այսպիսով, բարդ քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացների պայմաններում Շուշին ունեցավ ժողովրդագրական ուրույն զարգացում և համակենցության յուրատեսակ նորմեր: Այդ ամենը նորից քննարկելու, վերաիմաստավորելու և պատմական դասեր քաղելու անհրաժեշտություն ունի:

**ը) Շուշին որպես համամարդկային առաջադեմ գաղափարների ձևավորման, տարածման և ազգային ազատագրական պայքարի կենտրոն**

19–րդ դարի սկզբներից սկսած՝ Շուշիում տնտեսական և մշակութային կյանքի վերելքը պարարտ հող է նախապատրաստում հասարակական-քաղաքական գործընթացների աշխուժացման համար: Այսրկովկասում Թիֆլիսից հետո Շուշին երկրորդ քաղաքն էր, որտեղ եվրոպական առաջադեմ գաղափարները ոչ միայն ընկալվում, այլ նաև կենսակերպ էին դառնում: Քանի որ Շուշին առևտրական բազմաթիվ թելերով կապված էր եվրոպական և ռուսական խոշոր կենտրոնների հետ, հետևաբար նոր առաջադեմ գաղափարների թափանցումը բերդաքաղաք ավելի դյուրին ու սահուն էր կատարվում: Շուշեցի հարյուրավոր երիտասարդներ, սովորելով եվրոպական ու ռուսական նշանավոր համալսարաններում, շփվելով տեղի մտավորականության, հեղափոխական, հասարակական, քաղաքական գործիչների հետ, ոչ միայն վարակվում էին առաջադեմ գաղափարներով, այլև այդ ամենը բերելով հարազատ ծննդավայր, փորձում էին նոր մոտեցումներով

նպաստել հայրենիքի զարգացմանը: Շուշում նոր գաղափարների նկատմամբ առավել շատ ընկալունակ էին պատանիներն ու մտավորականները: Այդպիսի նպաստավոր միջավայր ստեղծվել էր Շուշիի թեմական դպրոցում, որը դարձել էր Արցախի ու հարակից հայկական գավառների աչքաբաց և ուսումնատենչ երիտասարդության կենտրոն:

1840–ական թթ. հայության պահանջով թեմական դպրոցների հոգաբարձուների խորհուրդները սկսեցին ձևավորվել ժողովրդի ընտրությամբ: Դա էլ նպաստել է, որպեսզի Շուշիի թեմականի տեսուչի պաշտոնում հայտնվեին տվյալ ժամանակաշրջանի լուսավոր դեմքերը:

1863 թ. Շուշիի թեմական դպրոցի տեսուչ է դառնում Պետրոս Շանշյանը: Նա բարձրագույն կրթություն էր ստացել Մոսկվայի, Պետերբուրգի և Սորբոնի համալսարաններում:

1849 թ. մինչև 1857 թ. նա աշխատել է Թիֆլիսում՝ որպես Ներսիսյան դպրոցի տեսուչ: Այդ ժամանակաշրջանը պատմության մեջ մտավ «Շանշեան դար»<sup>1026</sup> անունով: Մանկավարժական նոր մտքի ներկայացուցիչ լինելով՝ Պ. Շանշյանը վերացրեց աշակերտների նկատմամբ ծեծն ու բռնարարքները, մտցրեց ուսումնական նոր ծրագրեր, բարձր աստիճանի հասցրեց քննադատական առարկաների դասավանդման գործը: Մայրենի լեզվին դպրոցում պատշաճ տեղ հատկացվեց:

Լեոն իրավացիորեն նկատել է, որ «Շանշեանի դարը միաժամանակ և այն շրջանն է, երբ մեր դաստիարակութեան, մեր գրականութեան մեջ կրօնական տարրը սկսում է պակասել և հետզհետե զարգանում ու մեծանում է հայրենասիրական կամ, ավելի ճիշտ, ազգասիրական տարրը: ... Շանշեանի ժամանակի Ներսիսեան դպրոցը այն քուրան էր, ուր արծարծուեց այդ բացը՝ ռուսահայերի մեջ տարածուելու համար: ... Ազգային ուժեղ ինքնագործունեություն երոպական լուսաորութեան առաջնորդութեամբ – ահա Շանշեանի կառավարած դպրոցի նշանաբանը»<sup>1027</sup>: Շանշյանի գործը չսահմանափակվեց դպրոցի պատերից ներս: Նա անզիջում պայքար սկսեց նաև հասարակական առաջադիմությունն արգելակող ճորտատիրության դեմ:

Պ. Շանշյանը, լինելով ունեցվածքի տեր, 1851 թ. իրեն հպատակ գյուղացիներին ազատեց ճորտությունից: Նա աղքատ գյուղացիներից հարկեր ու տուրքեր չէր ստանում, ավելին՝ վճարում էր վերջիններիս հարկերը: Պ. Շանշյանն իր միջոցները ծախսում էր՝ հոգալու հասարակ ժողովրդի կա-

րիքները: Ընդհանուր օգտագործման համար նա կառուցել էր հացահատիկի պահեստ, խոտանոց և հարդանոց<sup>1028</sup>:

Նախքան Պ. Շանշյանի Շուշի գալը արցախյան միջավայրում նրա գաղափարների արմատավորման համար պարարտ հող էր նախապատրաստվել:

1858 թ. Շուշեցի մի խումբ երիտասարդներ ստեղծում են «ընթերցասիրաց ընկերություն»-ը: Մշակութային այդ օջախը շուտով դառնում է սահմանադրական և ազգային հարցերի քննարկման կենտրոն: Ընկերության հիմնադիրներից մեկը՝ Ավետիս Բահաթրյանը, գրել է. «Էստեղ կրգտնի ամեն մեկը իրան ախորժակին յարմար գրուածքներ, կը կարդացուի հրապարակական ճառեր, հետաքրքրական հատուածներ, էստեղ ընկեր ընկերի հետ կը խօսակցեն, կը լսեն, կը դատեն, կարծիքները կը շփուին իրար և կը միանա: Էստեղ նախ մեր ժողովրդի տարանջատ անհատներն իրար հետ և ապա կարգերը կարգերի հետ կը ծանօթանան, կը մերձենան, հաղոդակցութիւնը կը հեշտանայ, ընկերական կապերը կամրապնդին, նոր բաները սրընթաց փոթորիկի նման շուտով կը սփռուին, ազգային լուրերը վսեմ կերպարանք կստանան և էն ժամանակ մեր մեծի ու փոքրի սրտերի մեջ ձգուած կլինի մի էլեքտրական թել, այնպէս, որ եթէ մեզանից որ մեկին դիպչելու լինիս, արձագանքը կկրկնուի ամենիս սրտերի մեջ»<sup>1029</sup>:

«Ընթերցասիրաց ընկերության» ազդեցության տակ շուտով՝ 1860–ական թվականների սկզբին Շուշիում բացվեցին «Դպրոցասեր հայուհյաց ընկերություն»-ը, 1865 թ.՝ «Ազգանվեր հայուհյաց ընկերություն»-ը, 1868 թ.՝ «Շուշիի կուլտուրական միություն»-ը, 1890–ական թվականներին՝ «Մարդասիրական», «Դպրոցասիրաց», «Թատերական», «Հայուհյաց բարեգործական» ընկերությունները<sup>1030</sup>, որոնց գործունեության հիմքում դրված էին համամարդկային ու ազգային արժեքները: 1859 թ. Շուշիում առաջադեմ հասարակության մի շարք ներկայացուցիչներ կաթողիկոսից պահանջում են թեմականի հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկել նաև Համբարձում–աղա Հախումյանին, որը սահմանադրական շարժման կողմնակից էր և բավականին ջանադիր էր ազգային հարցերում: 1860 թ. հունվարի 24–ին Համբարձում աղա Հախումյանը հոգաբարձուների խորհրդի անդամ ընտրվելուց հետո դառնում է Պ. Շանշյանի համախոհներից մեկը:

Նմանօրինակ աշխույժ հասարակական կյանքով էր ապրում Շուշին, երբ 1863 թ. սեպտեմբերի 13–ին կաթողիկոսի թիվ 452 կոնդակով Պ. Շանշյանը

<sup>1028</sup> Եղիշէ ա. ք. Գեղամեան, Պետրոս Շանշեան, «Գործ», հմ. 2, փետրվար, Բագու, 1917, էջ 76:

<sup>1029</sup> «Կռունկ Հայոց Աշխարհին», հմ. 2, Թիֆլիս, 1860, էջ 570:

<sup>1030</sup> Բալայան Վ., Դրվագներ ..., էջ 51–52:

<sup>1026</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 283:

<sup>1027</sup> Նոյն տեղում, էջ 284

նշանակվում է թեմականի տեսուչ: Շանշյանի հետ միասին Թիֆլիսից Շուշի են ժամանում նրա համախոհ մի քանի ուսուցիչներ:

Ի դեպ, Մաթևոս կաթողիկոսի որոշումը պատահական չէր, որովհետև, ինչպես Լեոն է գրել. «... Շուշու հասարակութեան առաջադեմ մասը միտք յղացաւ նոյն այդ Շանշեանի ձեռքը յանձնել Ղարաբաղի թեմական դպրոցը: Այս մտքի գլխաւոր պաշտպանը Համբարձում-աղա Հախումեանն էր»<sup>1031</sup>: Վերջինս լավ հարաբերություններ ուներ վեհափառի հետ:

Պետրոս Շանշյանը Շուշիում իր գործունեության առաջին իսկ օրերից դարձավ բերդաքաղաքի հայության սիրելի գործիչներից մեկը:

Եղիշե արքեպիսկոպոս Գեղամյանը գրել է. «Նա ժողովրդի կողմից այնքան շատ է ընդունվում, որ նրա միասին ասում էին «այդ մարդը միս ու ոսկոր չունի, այլ հոգի է»: ... Շանշեանը ոչ միայն ուսուցչական մարմնի հոգի էր, այլև շուշեցիների ամենից սիրելի անձնատրուբիւնը իր ներշնչած պատկառանքով, իր առաքինի կեանքով, իր եկեղեցասիրութեամբ: Ժողովուրդը զարմանալով զարմանում էր նրա վերայ և գովելուց չէր կշտանում, տեսնելով, որ Շանշեանը, չնայած իր ազնուական կոչման, իր ստացած բարձրագոյն ուսման, փափկակեաց չէ, անձնասեր չէ, իրանցից անելի քաջասիրտ է»<sup>1032</sup>:

Պետրոս Շանշյանը, նրա տեղակալ Պերճ Պոռշյանը, թեմականի ուսուցիչներ Ղազարոս Աղայանը, Սեդրակ Մանդինյանը, իրենց շուրջը համախմբելով շուշեցի պայծառամիտ մտավորականությանն ու ազգային առաջադիմական ուժերին, մի աննահանջ պայքար սկսեցին կղերականության ու պահպանողական ուժերի դեմ:

«Դժուար թէ Շուշին երբևիցէ տեսած լինի այնպիսի փայլուն գաղափարական շրջան, գրել է, – «Բագուի ձայն» թերթը, – որպիսին հանդիսանում է Շանշեանի, Պոռշեանի ապա և Սեդրակ Մանդինեանի ու Ղազարոս Աղայեանի էպոխան: Այդ մարդիկ էին, որ թարմ հոսանք մտցրին Շուշյայ լճացած կեանքի մէջ և պայքարելով տիրացուների, կոնսիստորիայի և թեմական իշխանութեան դեմ՝ իրագործեցին երիտասարդութեան իղձերն ու տենչերը»<sup>1033</sup>:

Շանշյանի տեսչության շրջանում Շուշիի թեմականում ազգային դաստիարակության հարցն այնքան բարձր աստիճանի էր դրված, որ նույնիսկ այդ տարիներին ժողովուրդը թեմականին անվանում էր «Եղիշեան դպրոց»:

<sup>1031</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 286:

<sup>1032</sup> Եղիշէ ա. ք. Գեղամեան, Պետրոս Շանշեան, «Գործ», հմ. 1, հունվար, Բաքու, 1917, էջ 58–59:

<sup>1033</sup> «Բագուի ձայն», հմ. 119, 24 օգոստոսի, Բագու, 1913:

Այդ տարիներին Շուշիում ազատամիտ գաղափարներով տոգորված երիտասարդությունն առաջ էր քաշել հետևյալ պահանջները՝ 1. Վանքապատկան բոլոր կալվածքներից ստացված եկամուտների նպատակաուղղումը դպրոցների պահպանմանը, 2. դպրոցներում հայ հասարակության բոլոր խավերի երեխաների պարտադիր ընդունում, 3. սեմինարիաների շրջանավարտներին չստիպել անպայման դառնալ քահանա, 4. սեմինարիաները դարձնել գիմնազիաներ, որպեսզի շրջանավարտները կարողանան ուսումը շարունակել ռուսական համալսարաններում<sup>1034</sup>: Հետամնաց հոգևորականությունը Գևորգ քահանա Արամյանցի գլխավորությամբ պայքար են սկսում Պ. Շանշյանի, Գարեգին Մուրադյանի (ապագայում հայտնի եպիսկոպոս, կաթողիկոսի թեկնածու – Վ. Բ.) և նրանց համախոհների դեմ՝ վերջիններիս մեղադրելով լյութերականութեան մեջ:

Նույնիսկ Գարեգին Մուրադյանին ուստիկանության միջոցով վռնդում են Շուշիից:

Պ. Շանշյանի նկատմամբ վերջնականապես հաշվեհարդար տեսնելու համար կղերականներին հաջողվեց 1864 թ. հուլիսին Շուշիից հեռացնել առաջադիմական ուժերին սատարող Արցախի թեմի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսին:

Թեմականի հոգաբարձուների խորհրդի անդամները և շուշեցիները մի քանի անգամ համախոսական նամակներով դիմում են կաթողիկոսին՝ հորդորելով վեհափառին՝ Պ. Շանշյանին չհեռացնել դպրոցի տեսչի պաշտոնից:

Հարցը վերջնական լուծելու նպատակով 1864 թ. դեկտեմբերին Պետրոս Շանշյանը, արքեպիսկոպոս Մուրադյանը, թեմականի հոգաբարձուներ Համբարձում Հախումյանը, Եսայի Դոլուխանյանը, Համբարձում Խաչատրյանը, Մեսրոպ Թառումյանը, Բաբաջան Ավան-Յուզբաշյանը մեկնում են Էջմիածին: Սակայն դա չխանգարեց, որպեսզի կաթողիկոսը նույն ժամանակ էլ Պ. Շանշյանին ազատի թեմականի տեսչի պարտականություններից: «Երբ հասանք Աղստևի (Աղստաֆա) կայարանը, – պատմում է պատվիրակության անդամ Մուրադյանը, – Պ. Շանշեանց և Հախումեանց բաժանուցեան դէպի Թիֆլիս, իսկ մենք միւս պատգամաւորներով և աշակերտներով՝ ի Ղարաբաղ: Աննկարագրելի կերպի սրտաշարժ էր մեր մուտն ի Շուշի: Կանխաւ լուր հասած էր քաղաքն, աշակերտք խումբ խումբ շարուած էին ձանապարհի երկու կողմն: Իրենց սուր սուր աչքերով Շանշեանցին էին որոնում կառքերու վերայ: Հարցումներ էին անում և պատասխան էին ըն-

<sup>1034</sup> «Բագուի ձայն», հմ. 119, 24 օգոստոսի, Բագու, 1913:



դունում պատգամաւորներէն՝ թէ պիտի գայ: Ես լուռ էի և հազիւ զսպում էի արտասուքներս»<sup>1035</sup>:

Ինչպէս Լեոն է գրել՝ «Մատթէոս կաթողիկոսը չբաւականացաւ Շանշեանին հեռացնելով, այլ և ամեն միջոց ձեռք առաւ, որ արմատահան լինեն նրա ցանած սերմերը և նրա յիշատակն անգամ ջնջուած լինի»<sup>1036</sup>: Բայց Պ. Շանշեանի և նրա համախոհների ցանած հունդերը այնքան խորն էին, իսկ Շուշիի հայությունն էլ այնչափ կարոտ նոր առաջադեմ գաղափարների և քաղաքացիական հասարակության վայել կենսակերպի, որ պահպանողականների ջանքերն ապարդյուն անցան: Պ. Շանշեանի գործը շարունակեցին Սեդրակ Մանդինյանը, Ղազարոս Աղայանը, Սիմոն Հախումյանը, բժիշկ Առուստամյանը: Թեմականում նրանք տպագրեցին «Գործ» ամսագիրը, որտեղ արծարծվում էին ազատասիրական գաղափարներ:

Թեմականը քահանաներ պատրաստող հաստատությունից տարեցտարի վերածվում էր ազգային, գաղափարական գործիչների դարբնոցի: Շրջանավարտներից ամեն մեկը մի լուսավոր ճրագ էր դառնում խավար իրականության մութ անկյուններում:

1880-ական թվականներին Շուշիում հետադիմական և առաջադիմական ուժերի միջև պայքարն ավելի էր սաստկանում: Հետադիմական ուժերի պարագլուխ Կարապետ եպիսկոպոս Այվազյանին հաջողվում է Մակար կաթողիկոսի միջոցով առաջադեմ մի քանի գործիչների՝ Ստեփան քեկ Յուզբաշյանին, Նիկողայ Աթաբեկյանին, զրկել թեմականի հոգաբարձուների խորհրդում ընտրվելու իրավունքից: Թեմականի վիճակը ծանրանում է:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին առաջադեմ ուժերի ճնշման տակ թեմական դպրոցի տեսուչ է նշանակվում եվրոպական բարձրագույն կրթությամբ, շուշեցի լուսավոր դեմքերից, Արցախում դաշնակցության հիմնադիրներից մեկը՝ Լևոն Սարգսյանը: Նա դպրոցում նոր աստիճանի հասցրեց ազգային դաստիարակության դրվածքը: Լևոն Սարգսյանի նկատմամբ նույնպես հալածանքներ են սկսվում: 1894 թ. Շուշիի հասարակությունը բաժանվել էր երկու մասի: Մեծամասնությունը պաշտպանում էր Լևոն Սարգսյանին, իսկ մյուս մասը՝ փորձում նրան տապալել: Վերջիններս «Նոր Դար» թերթի միջոցով մի արշավ սկսեցին շանշեանական գաղափարները ոչնչացնելու ուղղությամբ: «Նոր Դար»-ականներն ինտրիգների միջոցով Լևոն Սարգսյանին հեռացրեցին աշխատանքից՝ նրան մեղադրելով անաստվածության մեջ: Նման մեղադրանքներ ներկայացրին նաև Դեմո-

<sup>1035</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 331-332:

<sup>1036</sup> Նույն տեղում, էջ 332:

րյանին: Լևոն Սարգսյանի հետ միասին դպրոցից հեռացավ նաև ողջ ուսուցչական կազմը: Ազգային հեղափոխական գործունեության համար դպրոցից հեռացրին մի խումբ աշակերտների՝ Սուրեն Մալխասյանին, Բ. Տոշյանին, Գրիգոր Գորգյանին, Դավիթ Տեր-Մկրտչյանին, Գևորգ Առստամյանին:

Թեմական դպրոց խցկված պահպանողական ուժերի անունից եպիսկոպոս Գառնակերյանը 1900 թ. նոյեմբերի 23-ին դիմում է զավառապետին՝ վերոհիշյալ աշակերտներին, որպես խռովարարների, աքսորել Շուշիից:

Աքսորվող աշակերտներին ուսիկանների ուղեկցությամբ դուրս տարան քաղաքից: «Նրանց ընկեր աշակերտները թողին դասերը և գնացին տեսնելու աքսորուողներին: Տեսարանը յուզիչ էր, - պատմում է ականատեսը, - աքսորուողները յանձնարարում էին ընկեր աշակերտներին վրեժխնդիր լինել»<sup>1037</sup>:

Պայքարը երկու կողմերի միջև օրեցօր ավելի էր թեժանում: Վերոհիշյալ միջադեպից մեկ տարի չանցած՝ 1901 թ. հունիսի 10-ին, Բենիկ վարդապետը նոր գրություն է հղում Շուշիի գավառապետին: Ներկայացրած փաստաթղթում Բենիկ վարդապետը Շուշիում սկսված աշակերտական ցույցերի կազմակերպման մեջ մեղադրում է թեմականի շրջանավարտ Եգոր Առստամյանին (Մենակ), որն իր տանն աշակերտական խմբակ էր ստեղծել և զբաղվում էր քաղաքական գործունեությամբ: Այդ ամենի մեջ Բենիկ վարդապետը մեղադրում է նաև Դավիթ Տեր-Մկրտչյանին, Գրիգոր Տեր-Ստեփանյանին, Նիկողայոս Պողոսյանին, Ղուկաս Վարդապետյանին, Ալեքսանդր Ծատրյանին (Ռուբենի): Նա գավառապետին առաջարկում է համապատասխան միջոցներ ձեռնարկել, իսկ Եգոր Առստամյանին՝ արտաքսել քաղաքից<sup>1038</sup>: Նման վերաբերմունքը չի ընկճում Եգոր Առստամյանին: Ավելին՝ նրա, Թուման Թումյանի (Թորգոմ) և Ալեքսանդր Ծատրյանի նախաձեռնությամբ Շուշիում սկսեց գործել «Կոկոն» խմբակը, որի կազմում էին թեմականի և ռեալական ուսումնարանի աշակերտներ ու շրջանավարտներ<sup>1039</sup>:

Հայկական դպրոցները դարձան ազգային ազատասիրական գաղափարների տարածման կենտրոններ: Նման պայմաններում ցարական իշխանությունները անհանդուրժողական կեցվածք որդեգրեցին հայկական դպրոցների նկատմամբ:

<sup>1037</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 566:

<sup>1038</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 568-569:

<sup>1039</sup> Հովհաննիսյան Ա., Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 25; Նույնի՝ Երկու բնութագիր, Երևան, 1927, էջ 20-22:

1890-ական թվականներից իշխանություններն սկսեցին փակել հայկական դպրոցները: Բռնագրավվում էին դպրոցական շենքերը, գույքը, դպրոցների համար եկամտի աղբյուր հանդիսացող հողակտորները, կրպակները, անգամ սառեցնում բանկերում մասնավոր կտակները, արժեթղթերը:

1899 թ. օգոստոսին Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Տիրայր վարդապետի՝ Էջմիածնի Սինոդին ներկայացրած զեկուցագրում նշվում է, որ Արցախի թեմում փակել են հայկական դպրոցների մեծ մասը, տեղական իշխանությունները բռնագրավել են դպրոցական գույքը, փակել 25-ից ավելի հայկական դպրոցներ<sup>1040</sup>:

Գ. Գոլիցինը, 1897 թ. դառնալով Կովկասի կառավարչապետ, հակահայկական քաղաքականությանը նոր թափ է հաղորդում: Հակակառավարական կառույցներ հայտարարվեցին հայ կրթական, բարեգործական, հասարակական կազմակերպություններն ու քաղաքական կուսակցությունները: Գ. Գոլիցինը գտնում էր, որ «Հայոց բարեգործական ընկերություններն ավելի շատ զբաղված են քաղաքականությամբ, քան բարեգործությամբ: Փաստերը ցույց են տալիս, որ անջատական շարժման շատ կուսակիցներ այդ ընկերությունների անդամ են»<sup>1041</sup>: Մասսայականորեն սկսեցին փակել հասարակական, բարեգործական կազմակերպությունները: Չնայած դրան՝ գյուղերում և, հատկապես Շուշիում, անլեզալ պայմաններում այդ կազմակերպությունները շարունակում էին գործել: Գոլիցինի հակահայ գործունեության թիրախում հայտնվեցին հայ մտավորականները, պետական ծառայողները, պաշտոնյաները:

1877 թ.՝ Մեծ իշխան Միխայիլ Նիկոլանիչի փոխարքայության ժամանակ Այսրկովկասի քաղաքացիական հիմնարկություններում աշխատում էին 2365 պաշտոնյաներ, որոնցից 523-ը (22,1%) հայեր էին: 1886 թ.՝ Դոնդուկով-Կորսակովի փոխարքայության ժամանակ, 3217-ից 661-ը (20,5%) հայեր էին, իսկ 1897 թ. Գոլիցինի ժամանակ 4065-ից արդեն 719-ն (17,6%) էին հայեր: Նրա իսկ կառավարման տարիներին՝ 1901 թ., այդ թիվը 4917-ից հասավ 617-ի (12,5%)<sup>1042</sup>:

1897 թ. Գանձակի նահանգի գավառապետների և նրանց օգնականների (տեղակալներ) կազմում 7-ը ռուսներ էին, 5-ը՝ թուրքեր, 5-ը՝ վրացիներ: Հայեր չկային: Նահանգապետի աստիճանը կազմված էր 6 ռուսներից և 4 թուրքերից: Պրիստավների և նրանց օգնականների մեջ 13 հոգի ռուսներ էին, 18-ը՝ թուրքեր, 4-ը՝ վրացիներ և 4-ը՝ հայեր: Հաշտարար միջնորդ-

ների պարտականությունները կատարում էին 14 ռուսներ, 3 վրացիներ, 3 թուրքեր: Հայեր չկային: Հաշտարար դատավորների, նրանց օգնականների և քննիչների պատկերը հետևյալն էր՝ 28 ռուսներ, 11 վրացիներ, 6 թուրքեր և 1 հայ: Այդ այն դեպքում, երբ նահանգի ազգաբնակչության շուրջ 35 տոկոսը հայեր էին<sup>1043</sup>: Ազգային գաղափարների ջատագով, հասարակական, քաղաքական կյանքում սկզբունքայնություն, համառություն և հետևողականություն ցուցաբերած շուշեցի հայերին Գոլիցինը պատերազմ էր հայտարարել:

1901 թ. Կովկասի կառավարչապետը ռազմական նախարար Ա. Կուրոպատկինին հաղորդել է, որ Շուշիում գործում են շուրջ 100 հեղափոխականներ, որոնց Սիբիր արքայազնի պարագայում վերջ կդրվի հայկական «անջատողականությանը»<sup>1044</sup>: Հարցին արմատական լուծում տալու համար նույնիսկ նա առաջարկում էր ավելի ծայրահեղ քայլերի դիմել՝ Շուշիի հայությանն արտաքսել Սիբիր<sup>1045</sup>: Միայն գեներալ Կուրոպատկինի սթափ մոտեցման շնորհիվ ձախողվեց Գոլիցինի խելահեղ ծրագիրը:

Իշխող վարչակարգը 20-րդ դարի սկզբներին նոր ծանր հարված հասցրեց Շուշիի կրթական, լուսավորական հաստատություններին, երիտասարդության ազգային դաստիարակության հարցերին: Դա հիմնականում կապված էր 1903 թ. հունիսի 12-ի Նիկոլայ Երկրորդի տխրահռչակ հրամանագրի հետ, որով բռնագրավվեցին հայ լուսավորչական եկեղեցու կալվածքներն ու գույքը: Հայ պատմագրության մեջ տիրում է այն կարծիքը, որ ցարական արքունիքն այդ օրենքով փորձում էր փակել հայկական դպրոցները, մշակութային հաստատությունները և սահմանափակել եկեղեցու ինքնուրույնությունը<sup>1046</sup>:

Մինչդեռ իրականում այն հեռագնա նպատակներ ուներ: Ցարական իշխանությունները լավ էին հասկանում, որ դարերի ընթացքում պետականությունից զրկված հայության համար եկեղեցին ազգային ինքնության և ինքնուրույնության ջատագովն ու դրան հասնելու կազմակերպիչն էր: Մյուս կողմից էլ կրթական հաստատություններում երիտասարդների և ուսուցիչների մեջ էին խմորվում ազատագրական գաղափարները, որոնք ժամանակի հողովոյթում կդառնային հայոց պետականության վերակերտման հիմնաքարեր: Այս հարցում չի կարելի թերագնահատել դարասկզբին Արևմ-

<sup>1040</sup> Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Շուշիի ռեալականը, էջ 34:

<sup>1041</sup> Ակնունի Է., Կովկասեան վերքեր, հ. I, Ժընև, 1903, էջ 80-81:

<sup>1042</sup> «Գործ», ամսագիր, հմ. 2, փետրվար, Բաքու, 1917, էջ 14:

<sup>1043</sup> «Նուէր որբերին», թերթ, 9 դեկտեմբերի, Բաքու, 1915:

<sup>1044</sup> Լազյան Գ., Հայաստանը եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 95-96:

<sup>1045</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 579:

<sup>1046</sup> Տես՝ ԸՄՊ, հ. VI, Երևան, 1981, էջ 353; Պարսամյան Վ., Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1979, էջ 305:

տյան Հայաստանում ծայր առած հակասությանական նոր շարժման դերը: Ցարական կառավարությունը մտահոգ էր, որ պայքարի ակիբը կտարածվի նաև Արևելյան Հայաստանում: Մանավանդ տարածաշրջանում, մեծ տերությունների ակտիվացման պայմաններում, կարող էին Ռուսաստանի համար հետևանքներն անկանխատեսելի դառնալ: Հնարավոր զարգացումները կանխելու նպատակով ցարական արքունիքը վաղորոք փորձում էր ոչնչացնել իր համար վտանգավոր թիրախները:

Մինչև վերոհիշյալ օրենքի ընդունումը Գ. Գոլիցինը Նիկոլայ Երկրորդին հավաստիացնում էր, որ «մեծ և միացյալ Հայաստան»-ի ստեղծման գործի գլուխ կանգնած է լուսավորչական եկեղեցին և տարեկան հարյուր հազարավոր ռուբլիներ է ծախսում զենք ու զինամթերք ձեռք բերելու համար<sup>1047</sup>:

Գ. Գոլիցինի այս հիմնավորումներին գումարվեց Նիկոլայ Երկրորդի հակահայ տրամադրվածությունը: Նա մի առիթով ասել է. «Իմ անձնական և վաղեմի կարծիքով հայերի հանդեպ ոչ մի վստահություն տաժել չի կարելի: Անշուշտ, նրանք են գլխավորում խռովության ամբողջ դավադրությունը Կովկասում»<sup>1048</sup>:

Եվ այսպես, 1903 թ. հունիսի 12-ի օրենքը գործածության մեջ դրվեց: Բռնագավթվեց եկեղեցուն պատկանող 1 775 905 ռուբլու արժողության ունեցվածքը<sup>1049</sup>: Հայ ժողովուրդն ապրում էր տագնապալի ու խռովահույզ ժամանակներ: Այսրկովկասի հայաշատ վայրերում ապստամբական տրամադրություն էր տիրում: Հակակառավարական պայքարի մեջ ներառվեց նաև արցախահայությունը:

1903 թ. օգոստոսի 29-ին Գանձակում մի քանի հազար մարդ հավաքվում է առաջնորդարանի մոտ և ներկայացնում իր բողոքը: Փոխնահանգապետ Անդրեևի հրամանով զինվորները կրակում էին ցուցարարների վրա: Ձուվում է 10 մարդ, իսկ 70-ից ավելի վիրավորվում են: Քաղաքում ռազմական դրություն մտցվեց<sup>1050</sup>: Համաժողովրդական շարժմանը միացան նաև Շուշիի հայերը: 1903 թ. սեպտեմբերի 8-ին նահանգապետ Լուցաուն 500 կազակների ուղեկցությամբ Գանձակից հասնում է Շուշի և փորձում ի կատար ածել կառավարության որոշումը: Ժողովրդի դիմադրությանը կազակները պատասխանեցին կրակոցներով: Ընդհարումների ժամանակ երկու կողմերից կային սպանվածներ և վիրավորներ: Զինված դիմակայությունը շարունակվեց մի քանի օր: Ձերբակալվեց ավելի քան 120 մարդ, որոնց թվում էին քաղաքագլուխը, Մկրտիչ Խանդամիրյանը, 7 աշակերտներ ռեալա-

<sup>1047</sup> Ակնունի Է., Դեպի կռիվ, Ժնև, 1904, էջ 20-24:

<sup>1048</sup> Հեղափոխական պայքարի վավերագրեր, Երևան, 1984, էջ 333:

<sup>1049</sup> Тунян В., Противостояние, «Эпоха», но. 45, 1992, стр. 10.

<sup>1050</sup> Ակնունի Է., նշվ. աշխ., էջ 218-221; ՀԺՊ, հ. VI, էջ 355:

կանից, 30-ը՝ թեմականից: Քաղաքում ռազմական դրություն հայտարարվեց: Երեկոյան ժամը 6-ից հետո փողոց դուրս եկածներին ձերբակալում էին: Փակվեցին խանութները: Չէին գործում քաղաքային ինքնավարության մարմիններն ու դատարանը: Բոլոր որոշումները միանձնյա կայացնում էր նահանգապետը: «Կօզակների ունակները վխտում են քաղաքի իւրաքանչիւր անկիւնում, - պատմում է ականատեսը, - և օր ու գիշեր զանազան վայրենութիւններով կարծես ուզում են իրենց բարբարոս նախահայրերին գերազանցել»<sup>1051</sup>:

Նահանգապետ Լուցաուն փորձում էր հայերին գրգռել թուրքերի դեմ: Նրա կարգադրությամբ թուրքերին զենք է բաժանվում: Շուշիում հավաքված թուրքերին դիմելով՝ ակնարկել է, թե «լսել եմ, որ դուք զինել էք և պատրաստել էք մեզ պաշտպանելու ու հայերին կոտորելու»: ... Դրան թուրքերը պատասխանել են թե «մենք ոչինչ չենք պատրաստում հայերի դեմ, նրանք մեր լաւ դրացիներն են»<sup>1052</sup>:

Ցույցեր և ընդհարումներ տեղի ունեցան նաև Արցախի մի շարք բնակավայրերում: ՀՅԴ «Ապառաժ»-ի կառույցը որոշեց վրեժխնդիր լինել արյունալի ընդհարումների կազմակերպիչների հետ:

Ահաբեկման ենթարկվեց Գանձակի փոխնահանգապետ Անդրեևը, Շուշիում սպանվեց ոստիկանապետ Սախարովը, գավառապետ Շումակովիչը, գավառապետի օգնական Ֆեոդորովը, հարկային տեսուչ Շչերբակովը, ժանդարմ Պողոչիվալովը, գաղտնի ոստիկան Խապիևը, գանձարանի պաշտոնյաներ Բադիևը և Կոպրունովը<sup>1053</sup>:

Ցարական արքունիքի շատ թե քիչ սթափ մտածող գործիչները չափազանց ուշացած հասկացան, որ իշխանությունների սխալ հաշվարկների և բիրտ ուժի քաղաքականության հետևանքով վտանգի տակ դրվեցին կայսրության հարավում իրենց ամենահուսալի դաշնակից ժողովրդի՝ հայության հետ հետագա համագործակցության հնարավորությունը:

Այդ կապակցությամբ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը խոստացել է «Կայսրութեան սահմաններում այդ հարցը մենք ստեղծեցինք, որովհետև անզգոյշ վարուեցինք հայերի կրօնական և ազգային հայացակետների հետ: Կովկասի հայութեան մեջ անջատական ոչ մի ձգտում գոյություն չունի: Ռուսահայերի մեջ ազգային շարժման բռնկումը և իշխանութեան դեմ ուղղուած տէրրօրիստական գործողութիւնները առաջ եկան այն

<sup>1051</sup> Հայկական ցույցերը Կովկասում, «Դրօշակ», հմ. 9, Ժնև, 1903, էջ 134-135; Ակնունի Է., նշվ. աշխ., էջ 235-241; Величко В., Кавказ. Русский вопрос и межплеменные вопросы, Баку, 1990, стр. 71-72.

<sup>1052</sup> Գաւառներում, «Դրօշակ», հմ. 8, Ժնև, 1903, էջ 119:

<sup>1053</sup> ՀԺՊ, հ. VI, էջ 356; «Դրօշակ», հմ. 2, Ժնև, 1905, էջ 31:

պատճառով, որ հայոց եկեղեցական կալուածները խլուեցին ու դրուեցին պետական կառավարութեան տակ»<sup>1054</sup>:

Հաշվի առնելով այդ հանգամանքները՝ ցարական կառավարությունը 1905 թ. օգոստոսի 1-ին անվավեր համարեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքը:

Չնայած այդ ամենին՝ Շուշիում ազգային, սահմանադրական, հեղափոխական խմորումները ավելի էին խորանում:

Աշոտ Հովհաննիսյանը, որպես դեպքերի մասնակից ու ականատես, նշել է, որ Շուշիի հեղափոխականների շարքերում հատկապես աչքի էին ընկնում Մենակը, Իսաջանը, Թորգոմը, Իշխանը, Արամը, Կոստյան, Շիրինյանը, Արաբին, Լետան, Սնարյանը, Ծատուրը<sup>1055</sup>: Շուշիի այդ երիտասարդներն էլ դարձան հայոց երկիրը թուրքական և ցարական բռնակալական վարչակարգերից ազատագրելու և ազգային պետականությունը վերակերտելու գաղափարների կրողները:

1906–1907 թվականներին տեղի ունեցան Շուշիի մետաքսագործական, կաշեգործական ֆաբրիկաների, տպարանի, կոշկակարների, դարբինների, հացթուխների, դերձակների համաքարությունների բանվորների ցույցեր: Առավել ակտիվ էր գործում թեմականի և ռեալականի աշակերտների կողմից կազմակերպած «Աշակերտական միություն»-ը, որը 1905–1907 թթ. գլխավորել է քաղաքի սովորող ցուցարարների պայքարը:

Թեմական դպրոցը նորից հայտնվում է ազգային, առաջադիմական գաղափարների քարոզման կիզակետում:

1907 թ. թեմականի տեսուչ Արշակ Չիլինգարյանը կազմակերպեց ուսուցիչներից կազմված մի գաղտնի խմբակ: Այդ խմբակի անդամներն էին Ս. Բաղդասարյանը, Հ. Մելիք-Հովսեփյանը, Ռ. Քաջբերունին, Ա. Հայրապետյանը, Մ. Հարությունյանը, Հ. Մելիք-Հայկազյանը, Ե. Սարգսյանը, Մ. Առստամյանը և Բ. Թորոսյանը: Շուտով խմբակը բացահայտվեց ոստիկանական մարմինների կողմից, և Ա. Չիլինգարյանն ու երկու ուսուցիչներեք տարով բանտարկվեցին և արքայազնի Ռուսաստան:

Բանտարկյալներին ազատելու համար թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսի խնդրագրերը մերժեցին Գանձակի նահանգապետն ու փոխարքան<sup>1056</sup>: «Ամեն օր խմբերով մարդիկ բանտերն էին նետվում,– պատմում է ականատեսը,– որոնք աչքի էին ընկել անցած շրջանում որպես ղեկավարներ կամ կովող ուժեր:

<sup>1054</sup> «Բագուի ծայն», հմ. 120, 28 օգոստոսի, Բագու, 1913:

<sup>1055</sup> Հովհաննիսյան Ա., Հուշեր և բնութագրումներ, էջ 68–69:

<sup>1056</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 607–608:

Ամեն օր խմբերով մարդիկ բանտերն էին նետվում, որոնք աչքի էին ընկել անցած շրջանում որպես ղեկավարներ կամ կովող ուժեր: ... Շուշվա հայկական քաղաքամասում իր դաժանությամբ հայտնի էր ոստիկանապետ (պրիստավ) Կասմանժևսկին, որից խորշում էին բոլորը:

Բավական էր, որ նա 2 կամ 3 հոգու փողոցում միատեղ կանգնած գրուցելիս տեսներ, իսկույն կձերբակալեր»<sup>1057</sup>:

1906–1907 թթ. Շուշիում գործում էին 10–12 հոգանոց «Կայծակ», «Որոտ», «Դրոշակ» դպրոցական գաղտնի խմբեր, որոնց հետ քաղաքական աշխատանքներ էին տանում կուսակցությունների, մտավորականների ներկայացուցիչները: 1913 թ. կազմակերպվեցին «Միություն», «Միրած» աշակերտական միությունները:

1906 թ. մարտի 19-ին Քրիստափոր Միքայելյանի մահվան տարելիցի կապակցությամբ Ղազանչեցոցում կազմակերպվեց հոգեհանգիստ: Նույն օրը Քրիստափոր Միքայելյանի, Ստեփանյանի և Մարգար Ժամհարյանի հիշատակին կայացավ գրական, երաժշտական երեկույթ<sup>1058</sup>:

Շուշեցի մտավորականները՝ ուսուցիչները, դասախոսները, ամեն կերպ ձգտում էին մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործը պատշաճ աստիճանի վրա դնել:

19-րդ դարի սկզբներից սկսած մինչև 1920 թ. Շուշիի հայկական դպրոցներում ամեն տարի նշում էին ազգային տոները, մանավանդ «Վարդանանց տոնը»: Ազատության համար նահատակված հայորդիների հիշատակին նվիրված տոնակատարությանը մասնակցում էր նաև քաղաքի չափահաս բնակչությունը:

Այդ օրը նույնիսկ փակվում էին խանութներն ու արհեստանոցները<sup>1059</sup>: Հայոց գրերի գյուտին և տպագրությանը նվիրված միջոցառումները Շուշիում վերածվում էին համաքաղաքային տոնախմբության: Այդ տարիներին շուշեցի մտավորականները միշտ էլ զգում էին ազգային հոգևոր մշակութային զարկերակի ռիթմերը:

1890 թ. թեմական դպրոցում, Ղևոնդ Ալիշանի 50-ամյակի կապակցությամբ, ուսուցիչները միջոցառում են կազմակերպում: «Նահապետին՝ Արցախու Շուշու թեմական հոգևոր դպրանոցի ուսուցիչներից, 1890 թի» մակագրությամբ հոբելյարին որպես նվեր ուսուցիչները մի ոսկյա գրիչ են ուղարկում<sup>1060</sup>:

<sup>1057</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 150:

<sup>1058</sup> «Արշալոյս», հմ. 64, 24 մարտի, Թիֆլիս, 1906:

<sup>1059</sup> Արցախեցի, Շուշի, «Մեղու Հայաստանի», հմ. 46, 22 մարտի, Թիֆլիս, 1881, էջ 1; «Փայլակ», հմ. 10, 12 փետրվարի, Շուշի, 1917:

<sup>1060</sup> «Նոր Դար», հմ. 60, Թիֆլիս, 1890:

Շուշեցի ուսուցիչների հայրենանվեր գործունեության մասին վկայել են նաև ազգային դաստիարակության քուրայով անցած գործիչները:

1881 թ. արքունական գանձարանի հաշվապահ, շուշեցի Պետրոս Տեր Հովակիմյան Մամիկոնյանցը, Ջաքաթալայից գալով հայրենի քաղաք՝ պատմում է. «... վազեցի դեպի տեղական հայոց երկսեռ ուսումնարանները: Այն ժամանակակից մանկավարժական կարգ ու կանոնը, որ շնորհիվ մեծապատիվ Սեդրակ Մանդինեանի մտցված է երկսեռ դպրոցների մեջ համոզեցին ինձ, որ այստեղ այժմ արդիւնատուր գործ է կատարվում:

Բոլոր ուսուցիչները, բայց նամանաւանդ պպ. Աղայեանցը, Յովհաննիսեանցը, Իշխանեանը, Ջաւադ-բէկը, Գիւլզադեանը, Խոջամիրեանը և այլք ... մի բանական մեքենայի առողջ անդամները, որոնք ամենատեսակ յարգանքի և ուշադրութեան արժանի են թէ իրենց անխոնջ գործունեութեամբ և թէ նամանավանդ նրանով, որ սնուած են զուտ հայկական ոգով»<sup>1061</sup>: Թեմականի շրջանավարտ Ա. Կիսիբեկյանը գրել է. «Վերհիշում եմ մեկիկ-մեկիկ, մեկը մյուսից հոյակապ, մեկը մյուսից պայծառ իմ սքանչելի ու պատկառելի դաստիարակներին՝ Գաբրիել (վարժապետ) Ղուլիքոխվյան, Թեոդորոս Տեր-Հովհաննիսյան, Արշակ Չիլինգարյան, Արսեն Տերտերյան, Արշակ Մեհրաբյան, Ստեփան Դեմուրյան, Ռուբեն Քաջբերունի, Սեթ Հարությունյան, Ավետիք Տեր-Պողոսյան, Արշակ Տոնոյան, Սպիրիդոն Մելիքյան, Նիկոլ Աղբալյան, Գրիգոր Տեր-Պողոսյան, Հայրապետ Մուսայելյան, վեհանձնագույն Իսահակ Տեր-Ղազարյան («Պեսիմիստ»), Նիկ. Յարամիշյան և շատ ու շատ ուրիշներ, որոնք մեզ ուսուցանել են և մեր արյան մեջ մտցրել՝ սիրելի հայրենիքը, սիրելի մայրենի գիրն ու գրականությունը և սրբությամբ պաշտպանել հայ պանծալի ժողովրդի դարավոր, առաջադեմ ու թանկարժեք կուլտուրան ...»<sup>1062</sup>:

Հայ մտավորականների ջանքերին հակառակ՝ ցարական իշխանություններն ամեն կերպ Շուշիի դպրոցներում խոչընդոտում էին հայոց լեզվի և պատմության դասավանդմանը:

1887 թ. մինչև 1906 թ. ռեալական դպրոցում արգելվեց հայոց լեզվի և պատմության դասավանդումը:

<sup>1061</sup> «Մեղու Հայաստանի», հմ. 39, 14 մարտի, Թիֆլիս, 1881, էջ 1:

<sup>1062</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 2, էջ 37: Նշված ուսուցիչների մեծ մասը ժամանակի ընթացքում դարձել են հայ գրականության, գրականագիտության, երաժշտական արվեստի մեծ երախտավորներ, հասարակական, պետական գործիչներ, որոնք ուրույն հետագիծ են թողել հայոց պատմության մեջ:

Շուշիի հանրությունը մի երկարատև պայքար սկսեց իշխանությունների դեմ՝ պահանջելով շաքաթական մի քանի ժամ պետական դպրոցներում թույլ տալ դասավանդելու հայոց լեզու և պատմություն:

Հեղափոխական խմորումները Շուշիում կասեցնելու նպատակով 1906 թ. իշխանությունների կողմից վերանայվեց նախկին որոշումը, և պետական դպրոցներում սկսվեց հայոց լեզվի ու հայոց պատմության դասավանդման գործընթացը: Անգամ Շուշիի քաղաքային ուպրավան դիմել է թեմականի տնօրինությանը՝ քաղաքի պետական դպրոցներում հայոց լեզվի դասավանդման համար համապատասխան ծրագիր մշակել<sup>1063</sup>:

Շուշեցի մտավորականները հաճախակի դիմում էին այն ընտանիքներին, որոնք իրենց երեխաներին ռուսական կրթություն էին տալիս, հորդորում առաջնորդվել հայեցի դաստիարակության սկզբունքներով:

Այդ ամենն իր արձագանքներն է գտել Շուշիում հրատարակվող թերթերի մեջ:

Այսպես, «Ղարաբաղ» թերթը, անդրադառնալով այդ հարցին, գրել է. «Օտար երոպացին է հետաքրքրում մեր անցյալով. մեր ազգով, մեր լեզուով, մեր պատմութեամբ ու գրականութեամբ, իսկ մենք ոչ միայն անտարբեր ենք դեպի մեր ազգն ու հայրենիքը, մեր պատմութիւնն ու գրականութիւնը այլ և անխղճօրէն հալածում ենք մեր ընտանիքներից մայրենի քաղցր լեզուն ու խօսքը. մենք մեր իսկ սեպիական ձեռքերով մեր զաւակներին օտարամտութեան թոյն ենք խմեցնում ...:

... Ո՞ր օրանից սկսած պիտի ուխտենք հայ մեծացնել մեր զաւակներին, հայի շունչ ու հոգի դնել նրանց կրծքի մեջ: Ի՞նչպէս պիտի ազատվի պատմութեան դատաստանից այն հայը, որ զաւակներ ունի և հայերէն չի սովորեցնում, այն հայը, որ փառաւոր անցեալ ունի և սրբութեամբ չի պահպանում այն ու անհաւատարիմ է նրան՝ ...:

Հայ ժողովուրդ, այսօր, երբ քո գլխի վերևում երկինքն է ամպամած ու չորս բոլորդ խաւարով պատած, երբ ազգը որպէս փոքրիկ նաւակ ահեղ փոթորկի և կեանքի անհատակ ծովի գոռ ալիքներին է մատնւած, աւելի քան երբէք պիտի միմեանցից հեռացող ձիւղերի պէս ծառի արմատին միանաս, մեր սիրելի Ղարաբաղը զարդարող սարերի պէս, ուր էլ որ լինիս, անդրդելի մնաս, և սերն ու միութիւնն ընտրելով քեզ ղեկաւար կանչես սիրոյ, լուսոյ և միութեան ամենամեծ Աստծուն ...»<sup>1064</sup>:

19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների Շուշիի և, ընդհանրապես, հայ իրականության մեջ, հասարակական, քաղաքական, հեղափոխական

<sup>1063</sup> «Փայլակ», հմ. 38, 18 հունիսի, Շուշի, 1917:

<sup>1064</sup> «Ղարաբաղ», հմ. 3, 24 նոյեմբերի, Շուշի, 1911:

խմորումներին ամենաեռանդուն մասնակցությունն են ունեցել շուշեցի շատ գերդաստաններ, որոնց մեջ ընդգծված տեղ ունեին ցարական պաշտոնյա Հարություն Բեկզադյանի որդիները: Նրա 7 տղաներն էլ բարձրագույն կրթություն էին ստացել: Ավագը՝ Տիգրանը, դաշնակցության համակիր էր, Հայաստանի առաջին հանրապետության դեսպանն էր Վրաստանում: Հովսեփը բժիշկ էր, Էսեռական կուսակցության նշանավոր գործիչ: Ալեքսանդրը բոլշևիկ էր, խորհրդային Հայաստանի ռազմաօդային անդամ, արտաքին գործերի ժողկոմիսար, Խորհրդային Միության դեսպանը Հունգարիայում: Նա ստալինյան բռնությունների գոհը դարձավ: 5-րդ եղբայրը միապետական էր, կոպել է բոլշևիկների դեմ, խորհրդային իշխանության հաղթանակից հետո ապրել է Հունաստանում, դարձել այդ երկրի բանակի գնդապետ: 6-րդ եղբայրը Անդրկովկասի Էսեռների աչքի ընկնող գործիչներից էր: Մյուս երկու եղբայրները քաղաքականությամբ չեն զբաղվել<sup>1065</sup>: Այս փաստը միաժամանակ խոսում է նաև քննարկվող ժամանակաշրջանում Շուշիում իր օրինաչափություններով ապրող, բազմաշերտ հասարակական, քաղաքական գործընթացների մասին:

19-րդ դարի երկրորդ կեսին, երբ արևելահայությունը Ռուսաստանի կազմում ուներ տնտեսական և մշակութային կյանքի ու, մանավանդ, ֆիզիկական գոյության համար անհամեմատ ավելի բարենպաստ պայմաններ, հայ ժողովրդի մյուս ստվար հատվածը (քննարկվող ժամանակահատվածում աշխարհի շուրջ հինգ միլիոն հայերից մոտ երեք միլիոնը գտնվում էր Թուրքիայի տիրապետության տակ)՝ արևմտահայությունը տակավին գալարվում էր թուրքական անագորույն լծի տակ:

Արևմտահայության վիճակն առավել ծանրացավ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո:

Բեռլինի վեհաժողովից հետո Թուրքիան փաստորեն վերածվեց ասիական պետության և հերթականությամբ կորցնում էր ինչպես եվրոպական, այնպես էլ աֆրիկյան նահանգները: Ակնառու լինելով նման իրավիճակին՝ Ռուսաստանի գերագահության տակ ապրող թուրք-թաթարական ժողովուրդների մեջ նոր երազներ սնուցվեցին: Նրանք այժմ բացահայտորեն դիմում էին «մեծ խալիֆին»՝ առաջարկելով Եվրոպայից հայացքը թեթել դեպի Փոքր Ասիա և, գլխավորելով թուրանական շարժումը, այնտեղ ստեղծել մահմեդական մի նոր հզոր պետություն, որի շոշափուկները պիտի տարածվեին մինչև Միջին Ասիա ու Աֆղանստան, դրանց վրայով՝ նաև Պակիստան ու Հնդկաստան:

<sup>1065</sup> Միմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, էջ 82-83:

Ռուս-թուրքական հերթական հակամարտությունների բովում, Կովկասի թուրքալեզու ժողովուրդներին Համիդի շուրջն համախմբելու, Ասիայում թուրքական ընդարձակ պետություն ստեղծելու ծրագրերն իրողության վերածելու ճանապարհին օսմանյան կայսրության, պանթուրքիստների առաջ իբրև գորեղ խոչընդոտ՝ հասակով մեկ կանգնում էր Հայաստանը:

Բեռլինի վեհաժողովից հետո հայ-թուրքական հարաբերությունների սրմանը պատճառ էր դառնում նաև ռուսական վտանգը, որը հավերժորեն կախված էր Թուրքիայի գլխին՝ հայկական բարենորոգումների պատրվակով:

Ելնելով դրանից՝ թուրքական պետական գործիչները հետևողականորեն կենսագործում էին մի զարհուրելի ծրագիր, որի նպատակն էր բնաջնջել արևմտահայությունը: Մեծ վեզիրը՝ Քյամալ փաշան, արդեն 1878 թ. ցեղասպանությունը հոչակում է պետական քաղաքականություն. «Եթե Եվրոպայի մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ, որ նույն դիմադրությունները ընենք մեր ասիական Տաճկաստանի մեջ, խելոքությունը բնաջնջել-վերացնելն է այն ամեն տարրերը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանել ...: Ուրեմն, հայ ազգը վերացնելու, անհետ անելու ենք ...»<sup>1066</sup>: Փաստորեն հայկական հարցի լուծման թուրքական եղանակը հայերի ֆիզիկական ոչնչացումն էր:

Եվ պատահական չէ, որ սուլթանական կառավարությունը 1870-ական թթ. վերջերից կտրուկ կերպով փոխեց Արևմտյան Հայաստանում իր գաղութակալ քաղաքականության մեթոդները: Նրա վարչական և ժողովրդագրական քաղաքականությունը ստանում է նոր բովանդակություն՝ արդյունքում ունենալով Արևմտյան Հայաստանի բնակչության ընդհանուր թվաքանակում մահմեդական բնակչության տոկոսային հարաբերությունն արհեստականորեն մեծացնելու միտում: Այդ նպատակի համար նա երկար տարիների ընթացքում դիմում էր բոլոր հնարավոր և անհնար միջոցների՝ նախապատվությունը տալով հայերի ֆիզիկական բնաջնջման գործելաոճին:

Բարձր դրան գաղտնի հրահանգով 1887 թ. հուլիսի 26-ին հրդեհվեց Ջեյթունի 1000 տուն: Օգոստոսի 27-ին Կ. Պոլսի հայաբնակ Սկյութար թաղամասում այրվեց հայերի 1200 տուն: 1888 թ. ապրիլին հրո ճարակ դարձավ Մարաշը:

Հայ բնակչությունը հարկադրված գաղթում էր օտար երկրներ: Խրիմյան Հայրիկը լակոնիկ ոճով գրում է. «Ո՛չ հայ, ո՛չ Հայաստան»:

Հայ ազատագրական շարժման ալիքը բարձրանում էր որպես պատասխան այն կեղեքումների, որոնց ենթարկվում էր արևմտահայությունը: Տվյալ ժամանակահատվածում, ծանր հիասթափությունից ու տևական որոնում-

<sup>1066</sup> «Մարտիկ», 15-21 ապրիլի, Ստեփանակերտ, 1998:

ներից հետո, արդեն մշակվում է պայքարի ուրույն գաղափարաբանություն, նոր որակ է ձեռք բերում հայ հեղափոխական-քաղաքական միտքը: «Երկիր» վերամկրտված Արևմտյան Հայաստանը զորեղ մագնիսի նման դեպի իրեն է ձգում աշխարհի բոլոր ծագերում սփռված հայ երիտասարդությանը: Իբրև այդ ամենի զարգացման բարձրակետ՝ ձևավորվում են հայոց ազգային-քաղաքական երեք կուսակցություններ, որոնք, տարընթացություններով հանդերձ, շարունակում են գործել մինչ օրս:

Հայ ազատագրական պայքարի վերընթացը, մասնավորապես՝ Բեռլինի վեհաժողովի դասերը, բալկանյան ժողովուրդների ազատագրության պատմական փորձը, հայ քաղաքական կուսակցությունների հանդես գալը հանգեցրին այն բանին, որ հայ ազատագրական շարժումները 19-րդ դարի 80-ական թվականներին թևակոխեցին նոր շրջան:

Այս փուլի ամենաբնորոշ գիծն այն էր, որ համաժողովրդական մաքառման ընդերքում գնալով հավաքական գիտակցություն էր դառնում այն գաղափարը, թե զուտ աղերսագրերով և մուրալով հնարավոր չէ ձեռք բերել ազատություն, գլխավորը դիմադրության սեփական պաշարներին ապավինելն է: Խրիմյան Հայրիկի թղթե շերտի պատմությունն արդեն նման գաղափարի լավագույն բանաձևումն էր և գործնական պայքարի անցնելու կոչը:

Թուրքական յաթաղանի դեմ արևմտահայության ինքնապաշտպանական պայքարում մեծ տեղ է գրավում ֆիդայական շարժումը: Հայդուկական շարժումներն Արևմտյան Հայաստանում առաջացան տարերայնորեն, կուսակցությունների երևան գալուց առաջ: Արևմտյան Հայաստանի հայդուկային պայքարի ավանգարդում կանգնեցին տեղացի ֆիդայիները՝ արևմտահայության ծոցից դուրս եկած, նրա կյանքով ու շնչով ապրող Արաբոն, Սերոբ Վարդանյանը (Աղբյուր Սերոբ, Սերոբ փաշա), Արմենակ Ղազարյանը (Հրայր, Ուրվական, Դժոխք), Անդրանիկ Օզանյանը (Անդրանիկ), Գևորգ Ադամյանը (Գևորգ Չաուշ): Նրանք տոն սվեցին հայդուկային շարժմանը և անջնջելի էջեր գրեցին մեր պատմության մեջ: Հայ երիտասարդությունը, դառնացած օսմանյան վարչակարգից, ծառանում էր նրա դեմ, մտնում հայդուկային խմբերի մեջ: Բաֆֆին այդ պայքարը բնորոշում էր որպես մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի բողոք, որպես ստրուկի ըմբոստացում իշխող բարբարոսության դեմ<sup>1067</sup>:

Արցախահայությունը նույնպես չէր կարող անտարբեր մնալ արևմտահայության ծանր կացության և մաքառումների նկատմամբ: Արցախի հեղափոխական, քաղաքական, հասարակական գործիչները, մտավորականության ներկայացուցիչները քաջ գիտակցում էին, որ հայ ժողովուրդը լիա-

<sup>1067</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ.9, Երևան, 1958, էջ 323-324:

րյուն կյանքով միայն կարող է ապրել Մեծ Հայքի բոլոր նահանգների կատարյալ ազատագրման և միասնական հայկական պետության գոյության պայմաններում: Արյան կանչը ոտքի հանեց տասնյակ արցախցի ֆիդայիների, որոնք, իրենց կյանքը չխնայելով, օգնության ձեռք էին մեկնում իրենց եղբայրներին, նրանց գեներ և օգնական ուժ հասցնում, աշխարհագոր հավաքագրում: Առանձնապես աչքի ընկան 1880-ական թվականներից Շուշում գործող ազատագրական խմբակների ներկայացուցիչները: Շուշում ազգային լուսավոր գաղափարներով տոգորված մտավորականության առկայությունը, քաղաքում օրեցօր արմատավորվող ազատագրական, հեղափոխական տրամադրությունները վարակիչ էին և բարերար ազդեցություն էին գործում երիտասարդության և հատկապես ուսանողության աշխարհայացքի ձևավորման վրա: Այդ տարիներին Շուշիի թեմական դպրոցը դարձել էր ազգային-ազատագրական, հեղափոխական գաղափարների խմորման կենտրոն: Թեմականը դարձել էր ազատագրական շարժման գործիչների դարբնոց: Այստեղ կրթություն ստացան և որպես անհատականություններ ձևավորվեցին Մենակը (Եգոր Առստամյան), Թորգոմը (Թուման Թումյանց), Իշխանը (Նիկոլ Պողոսյան), Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանը (Նիկոլ-Դուման), Սարգիս Հովհաննիսյանը (Արամ Մանուկյան) և ուրիշներ: Սկզբում նրանք ազատագրական գաղափարներ սկսեցին տարածել աշակերտների և համերկրացիների շրջանում: Այդ նպատակով ազատագրական խմբակի ներկայացուցիչներն սկսեցին հրատարակել «Կոկոն» ձեռագիր թերթը<sup>1068</sup>:

Ազատագրական գաղափարները և գործնական առաջին քայլերը թշնամաբար ընդունվեցին իշխանությունների կողմից: Պայքարի թափը կտրելու նպատակով աշակերտական շարժման ակնառու ներկայացուցիչներին հեռացրին թեմականից, իսկ մի մասին էլ ձերբակալեցին<sup>1069</sup>: Սակայն այդ բռնարարքները չէին վիատեցնում ազատագրական գաղափարներով տոգորված երիտասարդությանը: Դեռ ավելին, Արևմտյան Հայաստանից Շուշի հասած սահմուկեցուցիչ լուրերը նրանց ավելի էին բորբոքում և դրդում նպատակային գործողությունների:

Դեպի Երկիր համարձակ առաջին ձեռնարկումը իրականացրեց ծննդով Նուխի գավառի Նիժ գյուղից Սարգիս Կուկունյանը: Մինչև սահմանը հատելը Արևմտյան Հայաստանում ստեղծված իրավիճակին ծանոթանալու, թուրքական և քրդական զինական ուժերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հովսեփ Արղությանին, շուշեցի Մարտիրոս Մարգա-

<sup>1068</sup> Աճեմեան Հ., Սգապսակ Իշխանի, Թիֆլիզ, 1916, էջ 7:

<sup>1069</sup> «Հորիզոն», հմ. 78, 7 ապրիլի, Թիֆլիս, 1916:

ոյանին և Արշակ Բարխուդարյանին նա հանձնարարում է անցնել Երկիր: Նրանք հանդիպում են Արաբոյի հետ: Հայդուկապետը խորհուրդ է տալիս միաժամանակ հրաժարվել մարտական գործողություններից և նախապատրաստական աշխատանքներ ձեռնարկել, զենք ու զինամթերք տեղափոխել Երկիր և առաջին հերթին զինել տեղացիներին<sup>1070</sup>: Ազատագրական գործողություններով համակված ֆիդայիներն այդ խորհուրդը չընդունեցին: Ս. Կուկունյանը, Մանթաշյանից և Ծատուրյանից ստացած 5000 ռուբլի նվիրատվությամբ<sup>1071</sup> ձեռք բերելով զենք ու զինամթերք, շուրջ 100 հոգուց կազմված ջոկատով, հիմնականում արևելահայեր, այդ թվում՝ արցախահայեր՝ սղնախեցի Կոնստանտին Լիսինյանը, բարսումեցի Եփրեմ Դավթյանը, շուշեցի Հովհաննես Մարգարյանը, խաչենցի Աբրահամ Տեր-Անդրեասյանը, Արշակը<sup>1072</sup>, 1890 թ. սեպտեմբերի վերջին անցան սահմանը: Ջոկատը սահմանագլխին հանդիպում է թուրքական, քրդական և ռուսական զինված ուժերի հետ: Անհավասար մարտում ֆիդայիներից 6 հոգի զոհվում են, իսկ մնացածներն էլ հանձնվում են ռուս սահմանապահներին:

26 հոգու ձերբակալեցին Կաղզվանի բանտում: Ս. Կուկունյանն աքսորվում է Սախալին, որտեղ մնում է 15 տարի:

1890-ական թվականների կեսերից հայդուկային շարժումներն Արևմտյան Հայաստանում հատկանշվեցին վերելքով: Երկիր մտան նոր խմբեր, որոնք կազմակերպվում և ուղարկվում էին հայ քաղաքական կուսակցությունների, գերազանցապես դաշնակցականների կողմից:

Անհրաժեշտ էր Արևմտյան Հայաստանի սահմանամերձ համեմատաբար ապահով գոտիներում ստեղծել զենքի, զինամթերքի ու մարդուժի կուտակման հենակետեր: Որպես այդպիսին ընտրվեց Ջարեվանդի Ս. Աստվածածին վանքը (Դերեկի վանքը – Վ. Բ.): 1890 թվականին վանեցի երեք երիտասարդներ Սիբիրի աքսորից Պարսկաստան փախած դարաբաղցի Մովսես Իշխանյանի գլխավորությամբ վանքից դուրս քշեցին այնտեղ ապաստանած և մենաստանն ամբարի վերածած մի պարսիկի: Նրանք սկսեցին վերանորոգել և ամրացնել վանքը<sup>1073</sup>: Շուտով սրբավայրը դարձավ

<sup>1070</sup> Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Բ. Նավասարդյանի ֆոնդ 9-3, թ. 42:

<sup>1071</sup> Պետրոսյան Դ., Կուկունյանի խմբի արշավանքը, Երևան, 1992, էջ 21:

<sup>1072</sup> Ալաշկերտցի Արամայիս Ազնավուրյանի, էրզրումցի Արշակ Գավաֆյանի (Քեռի) հետ միասին դարաբաղցի Արշակը Հունոյի խմբում Ալաշկերտում Թաքաբինայի, Մատռաբերդի շրջակայքում կռվել է թուրքերի և քրդերի դեմ: Հունոյի խմբի ցրվելուց հետո նա միացել է Սարգիս Կուկունյանի ջոկատին: Տես՝ Խուդինյան Գ., Սարգիս Կուկունյան, «Լրաբեր», հմ. 11, նոյեմբեր, Երևան, 1989, էջ 28:

<sup>1073</sup> Խուդինյան Գ., ՀՅ դաշնակցության քննական պատմություն, ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը, Երևան, 2006, էջ 286:

ՀՅԴ և Արմենական կուսակցությունների մարտական խմբերի հավաքատեղի: Քուրդ ցեղապետերն այդ ամենին թշնամաբար էին վերաբերվում: Այդ պատճառով նրանք փորձեցին ավերել մենաստանը: Ջինված ընդհարումների ժամանակ, 1902 թ. մայիսին, զոհվեց Մովսես Իշխանյանը: Չնայած դրան՝ մինչև 1915 թ. Մեծ եղեռնը Երկիր անցնելու և զենք ու զինամթերք տեղափոխելու համար Դերեկը շարունակեց մնալ որպես հայ ֆիդայիների կենտրոնատեղի:

Հայ ազգային-ազատագրական պայքարի հերոսական և ոգեկոչող դրվագներից է Խանասորի արշավանքը, որի կազմակերպիչն ու ջատագովը դարձավ ծննդով Խաչեն գավառի Ղլաղ գյուղից, Շուշիի թեմական դպրոցի աշակերտ Նիկողայոս Տեր Հովհաննիսյանը (Նիկոլ Դուման): Նիկոլն իր առաջին մարտական մկրտությունն ստանում է թուրք-պարսկական սահմանագլխին գտնվող Դերեկա վանքի կռվում՝ 1894 թ. ամռանը: «Այդ կռիվներն, ի վերջո, յանգեցան ֆիդայիներու ազատ երթելեկեն Դիլմանէն-Դերեկ», - գրել է ժամանակակիցը<sup>1074</sup>: Ե՛վ Դերեկում, և՛ Բողազ Քյասանում թշնամին պարտվեց: Վերջին կռվում (1895-ի աշնանը) ֆիդայիները, Նիկոլի գլխավորությամբ, խույս տալով թշնամուց, ապաստանում են Բողազ Քյասան գյուղի մարագներում: Բազմաթիվ անհաջող գրոհներից հետո քրդերը հրդեհում են մարագները՝ փորձելով ծխախեղդ անել ֆիդայիներին: Նիկոլն անսպասելիորեն մրրիկի արագությամբ դուրս է թռչում մարագի դռնից և, տապալելով երկու քուրդ ցեղապետների, ջոկատի հետ միասին հեռանում մոտակա սարը: Նիկոլի անհավատալի քաջագործությունից ապշահար լինելով՝ քրդերը նրան անվանում են Դուման, այսինքն մրրիկ, փոթորիկ կամ Ղարա Դուման (սև մրրիկ): Դումանի խումբն անարգել հասնում է Վան՝ համարելով քաղաքի պաշտպանների շարքերը: Նիկոլ Դումանն առաջին հերթին փորձում է համախմբել տեղի ուժերը: Նրա հեղինակության և կամքի շնորհիվ համերաշխություն է ստեղծվում Վանում գործող քաղաքական ուժերի միջև: Նոր մարտական խմբեր և զենք հայթայթելու նպատակով նա մեկնում է Սալմաստ և ապահով հասնում Դերեկ: Հետապնդելով հայդուկներին՝ թշնամին պաշարում է Դերեկա վանքը: Ընդհարումների ժամանակ վանքը հրդեհվում է: Նիկոլ Դումանի խումբը, ձեռքբերելով պաշարման օղակը, նորից հեռանում է ապահով վայր:

1896 թ. հունիսին վանեցիները ֆիդայիների օգնությամբ հաջողությամբ դիմագրավեցին ջարդարարներին, սակայն դեպի Պարսկաստան անցնելիս մոտ մեկուկես հազար հայեր Վարազա լեռան շրջակայքում ուխտադր-

<sup>1074</sup> Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Բեյրութ, 1990, էջ 175:



ծորեն հարձակման են ենթարկվում թուրքերի և քրդերի կողմից: Միայն 30 հոգի կարողացան մազապուրծ անցնել Պարսկաստան:

Այս դեպքից հետո քրդական մազրիկ ցեղին պատժելու, ինչպես նաև եվրոպական տերությունների ուշադրությունը հայկական հարցի վրա սևեռելու նպատակով Նիկոլ Դումանը նախաձեռնեց ու կազմակերպեց 1897 թ. հուլիսի 25–27–ի Խանասորի հոշակավոր արշավանքը: Այդ առթիվ նա Դաշնակցության վարիչ մարմնին գրել է. «Այդպես չէր լինի, եթե կոտորվելու փոխարեն կովեինք: Միթե ժամանակը չէ, վերջապես, որ լուրջ քննության առարկայ դառնայ մեր գործունեության հին եղանակը և ընդունվեր նոր, ավելի նպաստավոր տակտիկա, որի առանցքը լիներ ոչ թե կոտորածը, այլ կոհիվը»<sup>1075</sup>: Նիկոլ Դումանը շրջանառության մեջ դրեց «ակն ընդ ական»–ի գործելաոճը: «Պետք էր վրեժ լուծել կողոպտված, անպատուած հայ ժողովրդի համար ...»,– գրել է Նիկոլ Դումանը<sup>1076</sup>: Նա ՀՅԴ ղեկավարներին և ֆիդայական շարժման կազմակերպիչներին խորհուրդ է տալիս Արևմտյան Հայաստանում մեծամասշտաբ գործողությունների դիմել՝ հակառակորդին ցույց տալու հայդուկների հատու հարվածի թափը, իսկ տեղաբնիկների մեջ՝ կոտորելու անպաշտպան լինելու վարքագիծը և ստրկամտությունը: ՀՅ դաշնակցության բյուրոյի որոշմամբ Խանասորի արշավանքի նախապատրաստական պահը դրվեց Նիկոլ Դումանի վրա: Այդ որոշումը պատահական չէր, որովհետև այդ տարիներին մարտական ընկերների մոտ Նիկոլ Դումանն անժխտելի հեղինակություն էր: «Հայ ազատագրական պայքարի հերոսներուն մեջ չկար մեկը, որ անոր մտքի պատրաստութիւնը ունենար»,– գրել է Դրոն, իսկ Աբրահամ Գյուլիսանդանյանի վկայությամբ «... հայ մարտական երիտասարդութեան պաշտամունքը» Նիկոլ Դումանն էր<sup>1077</sup>: Նա, մեկնելով Բաքու, հանգանակություն է կատարում, ձեռք բերում հագուստ, զենք, զինամթերք, համալրում հայդուկների շարքերը:

275 հոգուց կազմված հայդուկների խումբը Շուշիի թեմականի շրջանավարտ Վարդան Մեհրաբյանի (Խանասորի Վարդան) գլխավորությամբ Սալմաստից գաղտնի շարժվելով՝ բարձրանում է պարսկաթուրքական սահմանագլխին գտնվող Արաուլ լեռը, որտեղից 1897 թ. հուլիսի 27–ին անակնկալ հարձակում են գործում լեռան ստորոտում փոկված Խանասորի դաշտում գտնվող մազրիկ ցեղի վրա և կոտորելով՝ նահանջում:

Լինելով առաջապահ հիսնյակի հրամանատար՝ Նիկոլ Դումանն անմիջականորեն ղեկավարեց և հարձակումը, և կազմակերպված նահանջը:

Դիմելով վրեժխնդրության՝ Դումանը բարձրացրեց հայ հեղափոխականների հեղինակությունը ժողովրդի աչքում, որը Վանի կոհիվներից հետո բավականին ընկել էր: Միաժամանակ այս արշավանքը մեծ ֆիդայուն համոզեց, որ ազատության հասնելու միակ ուղին համահավաք ուժերով ընդհանուր ապստամբության կազմակերպման մեջ է: Խանասորի արշավանքին իրենց մասնակցությունը բերեցին նաև Շուշիի թեմականի նախկին աշակերտ Գրիգոր Միրզաբեկյանը (Մաժուն Խեչո) և շուշեցի բժիշկ, ռեալականի և Ժնևի համալսարանի շրջանավարտ Քրիստաֆոր Օհանյանը (Մխիթար, Սյունի, Բժիշկ)<sup>1078</sup>: Մաժուն Խեչոն 1909–1912 թթ. Եփրեմ Դավթյանի բանակում մասնակցել է նաև Պարսկաստանում սահմանադրական կարգերի հաստատման համար մղված մարտերին:

Նիկոլ Դումանը ֆիդայական շարժման ոչ միայն կազմակերպիչ էր, այլև ժողովրդական այդ պայքարի լավագույն գաղափարախոսը: Նա հայ ազատագրական ոգորումների այն եզակի առաջամարտիկներից էր, որ կարողանում էր տեսական իմացությունը հաջողությամբ ներդաշնակել պրակտիկ գործունեության հետ: 1907 թ. Ժնևում հրատարակվում են Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» և «Գործնական և համառոտ հրահանգներ» գրքույկները, որոնց մեջ արծարծված հիմնադրույթներն ու հրահանգները մշակվել են տարիների ընթացքում և հաջողությամբ կիրառվել ազատագրական պայքարի ժամանակ: Նիկոլ Դումանի հեղինակությունն այնքան մեծ էր, որ բոլոր հայտնի ֆիդայիները՝ Գևորգ Չաուշը, Հրայրը, Անդրանիկը, Ռուբեն Տեր–Մինասյանի վկայությամբ «բոլորն ալ հավասար սիրով պատրաստ էին ենթարկվելու Ղարաբաղի լեռնականի պողպատե կամփին»<sup>1079</sup>: «Մենք, խմբապետներս, զիրար չենք սիրեր. կար մեկը, որ կրնար գմեզ պահել իր բուռին մեջ, ան Դումանն էր,– խոստովանել է Անդրանիկը,– ան չկայ, և մենք զիրար չենք ձանչնա: Դումանը կրնար իշխել ամենուն վրայ ու հրամայել, և ամեն ոք կգիտնար իր տեղն ու ընելիքը»<sup>1080</sup>:

Թվում էր, թե սուլթանին հաջողվեց 1890–ական թվականներին զանգվածային կոտորածներով հայերի մեջ մեռցնել ազատաբաղձ ոգին, կաթվածահար անել հայ ազգային ազատագրական շարժումներն ու հայ ժողովրդին պարտադրել ստրկական գոյավիճակ: Սակայն նորից ասպարեզ իջան նոր ազատամարտիկներ, որոնք իրենց հերոսական պայքարի օրինակով սթափեցրին հուսահատության մատնված ժողովրդին:

<sup>1078</sup> Ղազինյան Ա., Արևմտահայոց պայքարի Արցախի զավակները, Երևան, 2015, էջ 207–208:

<sup>1079</sup> Լազյան Գ., Հեղափոխական դեմքեր, հ. 1, Հալեպ, 1990, էջ 329:

<sup>1080</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 685:

<sup>1075</sup> Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 150:

<sup>1076</sup> «Հայրենիք», հմ. 8, Պոսթրն, 1964, էջ 49:

<sup>1077</sup> Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Երևան, 2001, էջ 5, 62:

1890-ական թվականներին Երկիր մեկնեցին նաև շուշեցի հնչակյան գործիչներ Գաբրիել Կաֆյանը, Բարսեղ Զաքարյանը և Մարտիկ Սարուխանյանը: Գաբրիել Կաֆյանն Արևմտյան Հայաստանում զբաղվեց գաղափարական-քաղաքական աշխատանքով, հնչակյան խմբեր ստեղծեց երկրում: Վերջին երկուսը քաջաբար զոհվեցին: Մարտիկ Սարուխանյանը մասնակցեց 1896 թ. Վանի ինքնապաշտպանությանը և արմենական Մկրտիչ Ավետիսյանի, դաշնակցական Պետոյի հետ ղեկավարելով մարտերը՝ զոհվեց Պարսկաստանի ճանապարհին<sup>1081</sup>:

Հայդուկային պայքարն աշխուժացնելու նպատակով ՀՅԴ որոշմամբ Հայաստանում ստեղծվում է ինքնապաշտպանության գործը կազմակերպող ղեկավար կենտրոն:

Առաջին հերթին անհրաժեշտ էր Արևմտյան Հայաստանում ստեղծել զինագործական արհեստանոցներ և պահեստներ ու կուտակված զենքը, զինամթերքը և հանդերձանքը տեղափոխել Երկիր: Զինագործական այդպիսի արհեստանոցներից մեկը գտնվում էր Շուշիում: Այն կազմակերպել էին Ռոստոմը և Վարդանը: Այդ գործին տոն էին տալիս Թավրիզում ոմբաշինության մեջ հմտացած շուշեցի Կոստյա Համբարձումյանը, խարբերողի Կարոն, բուլղարացի Պետոն<sup>1082</sup>, Հարություն Թումյանը, Սուրեն Օհանյանը<sup>1083</sup>: Ծագումով շուշեցի զինագործների մի մասն էլ ակտիվ գործունեություն էր ծավալել նաև Կարսում: Այստեղից արևմտյան Հայաստանում գտնվող խմբերի հետ կապեր հաստատելն ավելի հեշտ ու անմիջական էր: Կարսում ռումբերի պատրաստման գործը դրված էր շուշեցի Իսաջանի վրա: Փորձարկումների ժամանակ ռումբի պայթյունից զոհվում են Իսաջանը և նրա հինգ ընկերները: Ռուբենը զոհված զինագործի մասին ասել է. «Կարսը սուգի մեջ էր, կը յիշէր գայն և անոր ըրած գործերը ու կըսէր յաճախ. «Եթե Իսաջանը ողջ լինէր, այդ գործի ելքը այլ կլինէր»<sup>1084</sup>: Այս միտքը շարունակելով՝ Իսաջանի գործերին քաջատեղյակ Արամ Մանուկյանը նկատել է. «Նա որ ողջ լինէր, Կարսի եւ Սասունի վիճակը ուրիշ կը լինէր: Ինձի եւ ընկերներիս ոգի տուողը նա էր»<sup>1085</sup>:

Եղած զենքն ու զինամթերքն Արևմտյան Հայաստան տեղափոխելը կապված էր մեծ դժվարությունների հետ: Ռուս և թուրք զինվորներն աչալուրջ հս-

<sup>1081</sup> Կոստանոյան Է., Շուշիի դերը հայ ազգային-ազատագրական պայքարում, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Երևան, 2007, էջ 108:

<sup>1082</sup> «Հայրենիք», հմ. 9-10, Պոսթոն, 1962, էջ 43:

<sup>1083</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 237:

<sup>1084</sup> Ռուբեն, Հայ հեղափոխականի մը յիշատակները, հ. Ա, Թեհրան, 1982, էջ 149:

<sup>1085</sup> Նույն տեղում:

կում էին սահմանը: Հետախուզական պրպտումներից հետո նախանշվեցին սահմանի անցման չորս ուղղություններ: «Առաջին՝ Մրգաստան (Երևան) – Դուրան բարձրավանդակ (Մուշ–Սասուն), երկրորդը՝ Երևան–Միրզաջան (Տաք աղբյուր) – Արձեշ (Ծաղկոտն), երրորդը՝ Խոյ (Ավարայր), ս. Թաթետուսի Առաքելի վանք, Արաղայի դաշտի Նազարուա, Խաչան գյուղերը, որտեղից՝ Պզտիկ և Անձավ գյուղերը, ապա՝ Արձակի կամ Թիմարի ճամբով՝ Վան, չորրորդը՝ Սալմաստ (Մինարեթ) Բաշկալե–Հայոց ձոր–Վան»<sup>1086</sup>:

Առաջին գծի պատասխանատուն շուշեցի Մենակն (Եգոր Առստամյան) էր: Ստանալով ՀՅԴ ղեկավար կենտրոնի հրահանգը՝ շուշեցիներ Թորգոմը (Թուման Թումյան) և Մենակը ձեռնամուխ եղան նոր մարդկանց հավաքագրման և մարտական խմբերի կազմավորման գործին: Արամ Մանուկյանն իր դասընկերոջ՝ Մենակի մասին ասել է. «Ան ծպտուած կանցնի Բասէի եւ Խնուսի շրջանները, իբր գիւղացի՝ քանի մը անգամ Սասուն կը հասնի եւ կատարյալ «Վալադ» կը դառնայ: Ան ցուցմունքներ կու տայ «Միրիկ» խումբին և խումբը անվտանգ Սասուն կը հասնի:

Մենակի մեկ ոտքը Բասէն էր, միւսը Կարս ու Ալեքսանդրապոլ: Այս ապերախտ, բայց ամենէն դժուարին գործին մէջ ան կը սպաննուի Ներուզ խումբին օգնութեան հասնելու ատեն»<sup>1087</sup>:

Մենակի մահվանից հետո նրա դասընկեր Թորգոմը շարունակեց կիսատ գործը: Դեռևս Շուշիում ուսումնառության շրջանում նա դարձավ թեմականում գործող աշակերտական խմբակի կազմակերպիչներից մեկը: Դպրոցն ավարտելուց հետո բժշկական կրթություն ստանալու նպատակով 1897 թ. նա մեկնում է Մոսկվա, որտեղ կապեր է հաստատում ռուս հեղափոխականների հետ: Արևմտյան Հայաստանում ստեղծված ծանր վիճակը նրան ստիպում է կիսատ թողնել ուսումը և անդամագրվել ֆիդայական շարժմանը: Սկզբում Շուշիում, Մենակի հետ միասին, զբաղվում է քարոզչական աշխատանքով: Երկիր անցնելու համար նա փորձում է զինվորական հմտություններ ձեռք բերել: Այդ նպատակով դառնում է ռուսական բանակի սպա և ծառայում Ալեքսանդրապոլում, որտեղից ավելի հեշտ էր իրագործել նվիրական երազները: Նա Մենակի հետ Կարսում հեղափոխական գործունեություն է ծավալում:

1903 թ. նորից մահացու վտանգ է կախվում Սասունի հայության գլխին: Թորգոմը, վերադառնալով Ղարաբաղ, կամավորական մի ջոկատ է կազմում՝ «Միրիկ» անունով: Խմբի մեջ էին Սասունի վերջին ապստամբության նշանավոր խմբապետեր Ֆարհատը, սերաստացի Մուրադը, Սեպուհը, Քե-

<sup>1086</sup> Փափագեան Վ., Իմ յուշերը, Հ. Ա, Պոսթոն, 1950, էջ 206–208:

<sup>1087</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 148:

դին, Որսորդը, Գևորգը, Առաքելը<sup>1088</sup>: Խմբի անցնելիք ճանապարհը նախորոշում է Մենակը:

1903 թ. մայիսի 25-ին «Մրրիկի» հաղթական մուտքը Սասուն՝ ցնծություն և ոգևորություն է առաջացնում տեղի և մյուս վայրերի հայության շրջանում: Սասունցիները ջերմ ընդունելություն են կազմակերպում նրա պատվին: «Մրրիկի» մուտքը Սասուն ողջունում է նաև մեծ գորավար Անդրանիկը: Եվ տարիներ հետո վերջինս իր հուշերում գրելու էր. «Լուր եկավ ինձի, թե 20 հոգի է բաղկացեալ ձիավոր խումբ մը եկավ Սեմալ: Ելանք գացինք Սեմալ, տեսնվեցանք Թումանի հետ, նրանց մեջ կային իմ նախկին ընկերներս ...»<sup>1089</sup>: 1903-1904 թվականներին միայն Թորգոմի խմբին բախտ վիճակվեց բարեհաջող հասնել Սասուն: Մնացած խմբերը, ընդհարվելով թուրքական կանոնավոր զորքերի և քրդական բանդաների հետ, մեծ զոհեր են տվել և ձախողվել իրենց ձեռնարկումների մեջ: 1903-1904 թվականներին սահմանն անցնող 431 ֆիդայիներից զոհվել են 200-ը<sup>1090</sup>:

Թորգոմը Սասունում զբաղվում էր կազմակերպչի, պրոպագանդիստի ու թղթակցի աշխատանքներով: Շուտով ՀՅԴ ընդհանուր ժողովին մասնակցելու նպատակով Կովկաս են մեկնում Թորգոմն ու Կայծակը: Թուրքական ձնշումներին դիմակայելու նպատակով ժողովը որոշեց Թորգոմին նորից վերադարձնել Սասուն: 1904 թ. հուլիսի 28-ին 61 հոգանոց «Որսկան» խումբն Օլթիով գնում է Երկիր՝ օգնելու արևմտահայ եղբայրներին: Սահմանում նրանք բախվեցին զինված մեծաքանակ թուրքերի և քրդերի հետ: Խումբը բաժանեցին երկու մասի, մի մասը ղեկավարում էր Թորգոմը, մյուսը՝ Որսորդը:

Թիկունքից հարվածում էին ցարական սահմանապահները՝ սևհարյուրյակային գնդապետ՝ ազգությամբ թաթար, Բեկովի հրամանատարությամբ: Ֆիդայիների մեծ մասը, այդ թվում նաև Թորգոմը՝ զոհվում են, մի մասն էլ, վիրավոր՝ գերի ընկնում: Բեկովի հրամանով թուրքերի ներկայությամբ բոլոր հայ գերիները սվինահարվում են: Հետագայում ֆիդայի Հմայակ Ջանփոլադյանը գնդակահարեց գնդապետ Բեկովին<sup>1091</sup>: Թորգոմն այդպես էլ մինչև իր կյանքի վերջն ապրեց անանձնական կյանքով՝ հավատարիմ մնալով Արևմտյան Հայաստանի ազատագրման վեհ գաղափարին: Հորը հասցեագրած իր նամակներից մեկում Թորգոմը գրել է. «Իմ ներկա ընթացքը անդառնալի է ...: Ինչպես գինեմուրը, որին, եթե նախատելու, հայ-

հոյելու, բանտարկելու էլ լինեն, դարձյալ կշարունակի արբենալ, այնպես և ես. այժմ չկա մի բան, չկա մի ուժ, որ ինձ հեռացնի այս ընթացքից»<sup>1092</sup>:

Մարտական գործողություններին մասնակցելուց բացի, ծագումով շուշեցի կամ էլ Շուշիում կրթություն ստացած ֆիդայիներն ու, առավել ևս, կուսակցական, քաղաքական գործիչներն անչափ կարևորում էին Արևմտյան Հայաստանում ՀՅԴ կառույցի հզորացման, ժողովրդի կազմակերպման, նրա սոցիալ տնտեսական, կրթական հիմնահարցերի լուծման գործը:

Արցախահայության կուտակված պատմական հարուստ փորձը հաշվի առնելով՝ նրանք գտնում էին, որ առանց ժողովրդի ներքին ինքնակազմակերպվածության, կրթական, գաղափարական մակարդակի բարձրացման, քաղաքական ուժերի համերաշխության անհնարին է գլուխ բերել Արևմտյան Հայաստանի ազատագրման գործը: Նրանց մի մասը, ազգի լուսավորյալ հատվածը ներկայացնելով, միաժամանակ փորձում էր ազատագրական պայքարի և պետականաշինության ասպարեզում ազգային ու համամարդկային արժեքների համադրությամբ գտնել այդ ամենի ռացիոնալ հատիկը՝ չհեռանալով հայության քաղաքակրթական ավանդույթներից՝ դա տարածելով արևմտահայ իրականության մեջ:

Վերոհիշյալ արձարծումների տեսանկյունից բնութագրական է Նիկոլ Դումանի, Խանասորի Վարդանի, Վանա Իշխանի և, հատկապես, Արամ Մանուկյանի գործունեությունը: Նիկոլ Դումանը գտնում էր, որ Արևմտյան Հայաստանը կարելի է ազատագրել միայն միասնական ուժերով՝ ժողովրդին նախապես հայրենասիրական գաղափարներ ներարկելով, գինելով և համընդհանուր ապստամբության միջոցով: Նա իր մարտական ընկերներին խորհուրդ էր տալիս գործել «... առանց ցույցերի ու ցուցամուլութեան ...»<sup>1093</sup>:

Դեպքերի զարգացման ընթացքի քննությունից Նիկոլ Դումանը նախորոք հասկացել էր, որ Սասունի 1904 թվականի ապստամբությունը դատապարտված էր անհաջողության: Չնայած դրան՝ նա հանձն առավ իրագործելու ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովի որոշումը՝ մեկնել Սասուն, կազմակերպել ու ղեկավարել ապստամբությունը<sup>1094</sup>:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին ՀՅ դաշնակցությանը՝ Արևմտյան Հայաստանում հիմնավորվելու տեսանկյունից, լայն գործունեություն էր ծավալել Խանասորի Վարդանը (Սարգիս Մեհրաբյան): 1894 թվականից նա դարձավ Դերեկից Վասպուրական անցնող ՀՅԴ առաջին

<sup>1088</sup> «Խորհրդային Ղարաբաղ», 1 նոյեմբերի, Ստեփանակերտ, 1989:

<sup>1089</sup> Վարանդեան, նշվ. աշխ., էջ 223:

<sup>1090</sup> «Հայրենիք», հմ. 1, 7 հունվարի, Պոսթըն, 1905:

<sup>1091</sup> Հայ վրիժառուներ, մաս Ա, Կիրովական, 1990, էջ 8: «Արցախ» ամսագիր, հուլիս-օգոստոս, Ստեփանակերտ, 1989, էջ 60:

<sup>1092</sup> «Ուրբաթ» շաբաթաթերթ, 28 մայիսի, Երևան, 1993:

<sup>1093</sup> Նիկոլ Դուման, Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան, Ժնև, 1907, էջ 10:

<sup>1094</sup> «Հայրենիք», հմ. 11, նոյեմբեր, Պոսթըն, 1923, էջ 120:

զինատար խմբերից մեկի ղեկավարը: 1898 թ. Աղբյուր Սերոբի, Գուրգենի, Սևաբեցի Սաքոյի, Հրայր Դժոխքի հետ միասին Խանասորի Վարդանը դառնում է Բարձրավանդակի (Սասուն) ՀՅԴ կենտրոնական կոմիտեի անդամ, իսկ 1904 թ.՝ համիդյան բռնաճնշումների սաստկացման շրջանում, նույն պարտականությունները Ս. Զավարյանի հետ միասին կատարում էր Լեոնապարի ԿԿ-ում<sup>1095</sup>:

Առանձնապես տպավորիչ էր Իշխանի (Նիկոլ Պողոսյան կամ Նիկողայոս Միքայելյան, ծնունդով Արցախի Քոասնի գյուղից, Շուշի թեմականի շրջանավարտ – Վ. Բ.) գործունեությունը Վանում: Վազգենի սպանությունից ու Վարդգեսի ձերբակալությունից հետո ՀՅԴ Վանի կառույցն անգործության էր մատնվել և գտնվում էր կազմալուծման եզրին: Ինչպես նկատել է Իշխանը, Վանում ՀՅԴ շարքերը այնքան էին նոսրացել, «... որ կարելի էր մի կառքով տանել»<sup>1096</sup>:

1903 թ. նոյեմբերին, ՀՅԴ բյուրոյի որոշմամբ, Իշխանը և Կոմսը (Վահան Փափագյան) մեկնեցին Վան: Ստեղծված իրավիճակին ծանոթանալուց հետո Իշխանը նպատակահարմար է գտնում կազմակերպական աշխատանք ծավալել նահանգի լեռնային շրջաններում: Նա գրել է. «Վանը ձեռք բերելու համար նախ պետք է անոր լեռնաբնակները ձեռք բերել, որոնք հերոսներ են ու արի տղամարդիկ»<sup>1097</sup>: Եվ Իշխանը չսխալվեց: Ինչպես Ռուբենը նկատել է. «Իշխանը ատոնց վրայ աւելցուց օրէնքն ու կանոնը եւ երկաթ բռունցքը»<sup>1098</sup>:

Կարճ ժամանակահատվածում Իշխանին հաջողվեց լեռնաստանում ստեղծել հեղինակավոր այնպիսի կուռ կառույց, որ հնարավորություն ընձեռեց ՀՅԴ բյուրոյին՝ նահանգում ունենալ կուսակցական երկու մարմին՝ մեկը բուն Վան քաղաքում՝ Շամի ԿԿ-ն, և նահանգում՝ Լեոնապարի ԿԿ-ն: Վերջինս իր մեջ ընդգրկում էր Գավառը, Կարկառը, Կարճկանը, Վերին և Վարի Հայոց Ձորը, Շատախը, Մոկսը, Ոզմը, Սպարկերտը, Մամբտանքը, Խիզանը: Լեոնապարի պատասխանատուն Իշխանն էր: Նրա ջանքերի շնորհիվ 1906 թվականին 173 հայկական գյուղերում արդեն գործում էին 245 խմբեր, որոնց մեջ ընդգրկված էին 6277 անդամներ<sup>1099</sup>:

<sup>1095</sup> Տասնապետեան Հր., ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ ժ ընդհանուր ժողով (1890–1924), Աթէնք, 1988, էջ 83:

<sup>1096</sup> Ռուբէն, հ. 2, էջ 127:

<sup>1097</sup> Նույն տեղում, էջ 128:

<sup>1098</sup> Նույն տեղում, էջ 181:

<sup>1099</sup> Նիւթէր ՀՅ Դաշնակցութեան, հ. Գ, էջ 53:

Իշխանն անառարկելի հեղինակություն էր, «եւ բոլորը կը քաշուէին անկէ»<sup>1100</sup>: Նրա հետ հաշվի էին նստում նաև քուրդ ցեղապետներն ու թուրք պաշտոնյաները:

Կուսակցական աշխատանքի և մարտական խմբերի ստեղծմանը զուգահեռ՝ Իշխանը զբաղվում էր նաև ազգաբնակչության տնտեսական, սոցիալական, դատական, մշակութային հարցերով: Հեռավոր լեռնային գյուղական համայնքներում զարկ տրվեց կրթական գործին: Բացվեցին տարրական ուսումնարաններ, իսկ Աղթամարում սկսեց գործել թեմական դպրոցը: Բազմազբաղ կուսակցական, հեղափոխական գործիչը թղթակցում էր նաև Վանում հրատարակվող «Աշխատանք» թերթին: Նա ընտրվել էր նաև Վանի քաղաքային ժողովում:

Թուրքական իշխանությունների համար Իշխանի հեղինակությունն աչքի փուշ էր դարձել: Վանի ապրիլյան ինքնապաշտպանության նախօրյակին, կուսակալ Ջևդեթի հրամանով, Իշխանը սպանվեց<sup>1101</sup>:

Նույն ճակատագրին արժանացավ նաև հնչակյան ղեկավարներից մեկը՝ ծագումով շուշեցի Փարամազը, որը 20-րդ դարի սկզբներին մեծ դեր է խաղացել արևմտահայության ազատագրական պայքարի կազմակերպման գործում:

Երիտթուրքերի կառավարությունը 1915 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի սուլթան Բայազիտի հրապարակում կախաղան բարձրացրեց հնչակյան կուսակցության 20 ղեկավարների, այդ թվում՝ Փարամազին<sup>1102</sup>:

Արևմտահայության ազատագրական պայքարին նոր որակ հաղորդեց ծննդով շուշեցի, թեմականի նախկին աշակերտ Արամ Մանուկյանը (Սարգիս Հարությունի Հովհաննիսյան): Նա, որպես վառ անհատականություն, քաղաքականության նրբերանգների ու զինվորական գործի գիտակ, իրեն փայլուն դրսևորեց 1903–1915 թվականներին: 1903 թվականին, հաստատվելով Կարսում, նա իր դասընկերների՝ Թորգոմի, Մենակի, Իսաջանի և Իշխանի հետ նախապատրաստվում էր անցնել թուրքահպատակ Հայաստան:

1905 թ., Վանից Կոմսի հեռանալուց հետո, Արամը դարձավ քաղաքի ՀՅԴ (Շամ) կառույցի հիմնական կազմակերպիչը: Նա իրեն անմնացորդ նվիրեց արևմտահայության ազատագրության գործին: Հայկական օրակարգում Արևմտյան Հայաստանի գործն առաջնային համարելով՝ Ա. Մանուկյանն իրավացիորեն գրել է. «... ես աւելի վանեցի եմ զգում ինձ, քան թէ դարաբաղցի»<sup>1103</sup>: Նա, հակաթուրքական համընդհանուր ապստամբու-

<sup>1100</sup> Ռուբէն, հ. 2, էջ 168:

<sup>1101</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, 1978, էջ 374:

<sup>1102</sup> ՀԺՊ, հ. VI, էջ 554:

<sup>1103</sup> Վրացեան Ա., Հին թղթեր նոր պատմութեան համար, Բեյրութ, 1962, էջ 37:

թյան կազմակերպիչներից մեկը լինելով, փորձում էր միասնական ճակատ ստեղծել: Այդ նպատակին հասնելու համար նա փորձում էր ազատագրական պայքարին համահայկականություն հաղորդել՝ ձգտելով արևելահայությանը նույապես ներգրավել հայրենանվեր այդ ձեռնարկի մեջ: Արամը մեծ թափով գինում էր ժողովրդին, միաժամանակ փորձում համախմբել սուլթանական վարչակարգից դժգոհ ուժերին:

Արամ Մանուկյանին հաջողվեց համագործակցաբար աշխատել արմենական և հնչակյան գործիչների հետ: Վերջիններիս համար նա հեղինակություն էր: Արամի նվիրվածության և հետևողական աշխատանքի շնորհիվ ՀՅԴ-ն շուտով դարձավ Վանի ամենամարտունակ կառույցը: Այն երբեմն պետության գործառույթներ էր իրականացնում, լուծում ժողովրդին հուզող տնտեսական, սոցիալական, դատական բնույթի հարցեր:

Եթե 1880–1890-ական թվականներին առանձին-առանձին գործող ֆիդայական խմբերի հետ սուլթանական վարչակարգը հեշտությամբ հաշվեհարդար էր տեսնում, ապա այս անգամ արևելահայ գործիչների ազդեցության տակ ձևավորվող նոր խմբումների մեջ իշխանություններն առավել մեծ վտանգ էին տեսնում: Նույնիսկ Վանի մահմեդական հասարակ ազգաբնակչությունը համակրանքով էր վերաբերվում Արամին: Նա դիվանագիտական նուրբ հնարքներով կարողանում էր միաժամանակ խաղաղ գոյակցություն պահպանել մահմեդականների և իշխանությունների հետ: «Հայութիւնը անարժան է այսպիսի մարդ ունենալու, օսմանցիի արժանի է այս մարդը», – ասում էին թուրքերը<sup>1104</sup>:

Այս նոր գործելաոճը թշնամաբար էր ընդունվում իշխանությունների կողմից: Նրանք սկսեցին հետապնդել Արամին՝ փորձելով նրա հետ հաշվեհարդար տեսնել: 1906 թվականին Վանի կուսակալ Թահիր փաշան, իր մոտ հավաքելով ոստիկանության ու զինվորականության ղեկավարությանը, ասել է. «Շատ–շատ վտանգաւոր կացութեան մէջ ենք. մենք մեզ չխաբենք: Անշուշտ նոյնքան, եթէ ոչ անոր տասնապատիկը պահեստներ կը գտնուին լեռներու մէջ, Իշխանի տրամադրութեան տակ եւ այդ վտանգաւոր Արամը՝ շրջաններն ալ գինուած ու ցրած ուժեր ունի եւ մեր գլխուն փորձանք կը պատրաստէ: ... Հոս միայն մէկ թշնամի կայ, որ գիտէ թէ ինչ կուզէ. ան արժանի է փաշա կոչուելու, Արամն է: Հոն լեռներու մէջ մէկ թէկ կայ, Իշխանն է: Ասոնք փեթակներու մայրը եւ այժմ թէ՛ քաղաքի եւ թէ՛ գիւղերու առաջնորդն են ...»<sup>1105</sup>:

Մեծ եղեռնի նախօրյակին երիտթուրքերը Վոսմյանին և Իշխանին սպանելուց հետո Վանի հայությանը զլխատելու և հեշտությամբ ոչնչացնելու նպատակով փորձում էին հաշվեհարդար տեսնել նաև Արամ Մանուկյանի հետ: Այս կապակցությամբ Թալեաթը գրել է. «... Ա. Մանուկեանն ալ մէջտեղէն վերցնել ուզած է, սակայն Մանուկեան աւելի ճարպիկ գտնուելով ապստամբած եւ կուսակալ Ճէտէթը փախուստի մատնելով, իր վարչութեան տակ առժամեայ կառավարութիւն մը հիմնած է»<sup>1106</sup>: Փաստորեն, Թալեաթ փաշան Վանի հայության ինքնապաշտպանությունը և հազարավոր մարդկանց փրկությունն անմիջապես կապում էր Արամ Մանուկյանի հետ:

Ահագնացող վտանգին դիմակայելու նպատակով Արամի նախաձեռնությամբ 1915 թ. ապրիլի 5-ին ազգային երեք կուսակցությունների ներկայացուցիչներից ստեղծվեց Վանի ինքնապաշտպանության զինվորական մարմին: Ժամանակակիցների վկայությամբ՝ ինքնապաշտպանության մարտիկներն ու ժողովուրդը, անկախ քաղաքական հայացքներից, հավատում ու վստահում էին Արամին և անառարկելիորեն ենթարկվում նրան<sup>1107</sup>:

Արամ Մանուկյանը կարևորություն էր տալիս քաղաքում կարգ ու կանոնի պահպանմանը: Նույնիսկ այդ նպատակով ստեղծվեցին ոստիկանական ջոկատներ: Արտաքին աշխարհից կտրված, փոքրաքանակ ուժերով և վատ զինվածության պայմաններում Արամը հասկանում էր, որ թշնամուն կարելի էր դիմակայել միայն կազմակերպվածության, հնարամտության ու անձնորացության շնորհիվ: «Ընտրելու մէկ բան միայն կը մնար մեզի համար. կամ անձնատուր ըլլալ եւ թողուլ, որ խողխողեն մեզ իբր ոչխար, կամ մեռնիլ զէնի ձեռին կռուելով»<sup>1108</sup>: Այս էր Վանի ինքնապաշտպանության կազմակերպիչ՝ Արամ Մանուկյանի՝ պահի սթափ գնահատականի և իրավիճակից ելք որոնելու միակ ճիշտ մոտեցումը:

Նա Վանի ներուժը նպատակաուղղեց գերխնդրի լուծմանը՝ քաղաքի պաշտպանությանը և ժողովրդի փրկությանը: Կարճ ժամանակահատվածում ստեղծվեցին զենքի և զինամթերքի պատրաստման արհեստանոցներ: Նույնիսկ ձուլեցին պղնձե երեք հրանոթ<sup>1109</sup>: Ստեղծվեցին ամրությունների և պաշտպանական դիրքերի շինարարության ու պարենի հայթայթման խմ-

<sup>1106</sup> Ռիֆաթ Մէվլան Զատէ, Օսմանյան յեղափոխութեան մութ ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, ֆաքս. հրատ, 1990, էջ 93:

<sup>1107</sup> ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 64, թ. 12–14:

<sup>1108</sup> Լեփսիուս Յ., Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի: Հայաստանի քարտերը, Կ. Պոլիս, 1919, էջ 106:

<sup>1109</sup> Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (հուշեր, 1900–էն 1940), Փարիզ, 1947, էջ 277:

<sup>1104</sup> Ռուբէն, հ. 5, էջ 269:

<sup>1105</sup> Ռուբէն, հ. 5, էջ 267–268:

բեր: Սկսեց գործել հիվանդանոցը: Քաղաքի պաշտպանության ժամանակ գոհվեցին 300 հայեր, իսկ թուրքերի կորուստներն անցնում էին հազարից:

Վանի հերոսամարտի շնորհիվ անխուսափելի եղեռնից փրկվեցին ավելի քան 200 հազար հայեր: Եվ ոչ միայն: Դեպքերի ականատեսների և մասնակիցների գնահատականով Վանում «Արամը հանդիսացաւ հայու հերոսական ոգին, փրկելով անոր ռազմական պատիւը»<sup>110</sup>:

1915 թ. մայիսի 6-ին ռուսական զորքերը գեներալ Նիկոլանի հրամանատարությամբ մտան Վան: Ռուսական հրամանատարության որոշմամբ Վանի ժամանակավոր նահանգապետ նշանակվեց Արամ Մանուկյանը: Այստեղ դրսևորվեց նաև Արամի պետական գործչի ձիրքը: Այդ դժվարին օրերին նա փորձում էր վերականգնել հայկական ազգային պետականությունը: Նիկոլայ երկրորդին հղած հեռագրում Արամը ցարին խնդրում էր՝ ռուսական հովանու ներքո ձանաչել Հայաստանի ինքնավարությունը<sup>111</sup>:

Արամի շնորհիվ Վանում կյանքը խաղաղ հունի մեջ է մտնում: Մայիսի 7-22-ը նա ձևավորեց հայ գործիչներով համալրված պետական ապարատը՝ իր օրենսդիր և գործադիր ճյուղերով: Ստեղծվեցին ոստիկանական տեսչություն, կալվածական-գաղթականական, տնտեսական, առևտրական, առողջապահական մարմիններ, քաղաքային, գավառային վարչություն<sup>112</sup>:

Արամի այս քայլերը ստեղծագործ աշխատանքի մղեցին նահանգի հայությանը: Վանի ազգաբնակչության մեջ նորից վերականգնվեց դարեր առաջ կորսված պետական կյանքով ապրելու ձգտումը: Արամ Մանուկյանն, ի տես բոլորի, ապացուցեց, որ ներքին կյանքի կարգավորմամբ, ազգային-պետական ինստիտուտների գոյության պայմաններում կարելի է լուծել անլուծելի թվացող բազում ու բազմաթիվ հարցեր:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության օրհասական վիճակը և հայրենիքի ազատագրման հույսը համահայկական ժողովրդական ինքնաբուխ պոռթկման՝ կամավորական շարժման հիմք դարձավ: Արևմտյան Հայաստանն ազատագրելու հույսը համակել էր նաև արցախահայությանը:

Կամավորական շարժման կազմակերպման աշխատանքներն իր վրա էր վերցրել դեռևս Թիֆլիսում գտնվող Հայկական Ազգային Բյուրոն: Այն գործում էր 1912 թվականի վերջերից, որի անդամներից էր նաև Լեոն: Ազգային Բյուրոյի ենթաբաժիններ կային նաև Պետերբուրգում, Մոսկվայում, Նոր

Նախիջևանում, Բաքվում, Շուշիում: Այստեղ գործող կառույցն անվանվեց «Եղբայրական օգնության բյուրո»: «Քանի որ Ղարաբաղի հայ ժողովուրդը ևս իրապես զգում է, որ ներկայումս Տաճկահայաստանում հայի ինքնուրույն գոյության խնդիրն է ասպարեզի վրա դրած, այդ հարցի հաջող լուծմանը պետք է նպաստենք բոլոր հայերս, նա չէ կարող անտարբեր մնալ հայի այս ճակատագրական թուլեին և նա պատրաստ է ամեն զոհողություն հանձն առնել և յուր մասնակցությունը ցույց տալ մեր հայրենիքի սրբազան գործին», - կարդում ենք Հայոց Ազգային Բյուրոյին հասցեագրած Շուշիի Եղբայրական օգնության կոմիտեի նամակում<sup>113</sup>:

Կամավորական շարժումն օրեցօր վերածվում էր ազգային մեծ ուժի: Ցարական իշխանությունները, վախենալով, որ դրանք հետագայում կարող են դառնալ պետականության ձգտող հայության ազգային բանակի հիմքը, 1915 թ. վերջերին որոշեցին դրանք ցրել և տարրալուծել ռուսական գործադրում: Չնայած դրան՝ հայ կամավորները մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը շարունակում էին կռվել Արևմտյան Հայաստանի ազատագրության համար: Նրանցից էր շուշեցի, ռեալական դարոցի շրջանավարտ Կոնստանտին Համբարձումյանը (Պարոն Կոստի Ուխտավոր): Նա խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի նախագահ, հայտնի բոլշևիկ Սարգիս (Սաքո) Համբարձումյանի եղբայրն էր), Քրիստափոր Միքայելյանի մտերիմ ընկերը: 20-րդ դարի սկզբներին Արևմտյան Հայաստանում նա դարձել էր ֆիդայական շարժման կազմակերպիչներից մեկը: ԱՄՆ-ում և Բելգիայում ուսում ստացած այդ գործիչը կարևոր դերակատարություն ունեցավ նաև կամավորական շարժման ծավալման գործում: Արամ Մանուկյանից հետո 1915 թ. ռուսական հրամանատարության կողմից նշանակվել էր Վան-Վասպուրականի նահանգապետ: Այդ պաշտոնում մնացել է մինչև 1917 թ.:

Թուրքական հրամանատարությունը, օգտվելով Ռուսաստանում ծայր առած խառնաշփոթից, իր դիմաց ունենալով բարոյալքված զորամասեր, 1918 թ. հունվարին դեպի Վան և Էրզրում ռազմական գործողություններ ծավալեց: Վանի ազգաբնակչությանը փրկելու նպատակով, Կ. Համբարձումյանի գլխավորությամբ հայկական զինված ջոկատներն անհավասար մարտեր են մղել թշնամու դեմ, որի ժամանակ Պարսկաստանի սահմանագլխին՝ Սային Կալայի մոտերքում, Կ. Համբարձումյանը գոհվել է:

Արևմտյան ռազմաճակատում գեներալ Բրյուսիլովի հրամանատարությամբ գործող ռուսական զորքերում ծառայել է շուշեցի գնդապետ Կոստանտին Բեգլարի Դյուլիսանովը, որը բազում քաջագործություններ է կատարել

<sup>110</sup> «Աշխատանք», հմ. 4, 12 փետրվարի, Երևան, 1919:

<sup>111</sup> Елисеев Ф., Казаки на Кавказском фронте 1914-1917, Москва, 2001, стр. 97.

<sup>112</sup> Ասրյան Ա., Արամ Մանուկյան, կյանքը և գործը, էջ 122:

<sup>113</sup> ՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 4, թ. 2:

և պարզևատրվել Սբ. Աննայի 2-րդ աստիճանի, Վլադիմիրի 4-րդ աստիճանի, Սբ. Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշաններով և «Վասն քաջութեան» մակագրությամբ Գեորգևյան ոսկյա գնեքով<sup>114</sup>: Եթե հայերը ռազմաճակատում սխրանքներ էին գործում, ապա թիկունքում թուրքերը զբաղված էին ալան-թալանով:

1917 թ. Պետական դումայի պատգամավոր Մ. Պապաջանյանի նախաձեռնությամբ Շուշիում հրավիրվել էր հայերի և թուրքերի համատեղ հավաք, որտեղ ժողովականները պարզել են «որ առաջակութեամբ պարապողները թուրքերից են»<sup>115</sup>: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանում կովել են Շուշի գավառի չափահաս տղամարդկանց 50 տոկոսը, իսկ Կարյազինո գավառի՝ 55 տոկոսը<sup>116</sup>:

Ընդհանուր առմամբ՝ ռազմական գործողություններին Արցախից մասնակցել է արական սեռի չափահաս հայ ազգաբնակչության 33 տոկոսը<sup>117</sup>:

Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատելու գործին անմնացորդ նվիրվեցին արցախահայ ֆիդայիներ ու գործիչներ Գաբրիել Կաֆյանը, Բարսեղ Զաքարյանը, Մարտիկ Սարուխանյանը, Նիկոլ Միքայելյանը, Մարգար Ժամհարյանը, Սարգիս Հովհաննիսյանը, Միքայել Հովհաննիսյանը (Մ. Վարանդյան), Լևոն Աթաբեկյանը, Բախչի Իշխանյանը, Իսահակ Դանիելբեկյանը, Հակոբ Հովհաննիսյանը, Սիմոն Նարինյանը, Դավիթ Տեր Դանիելյանը (Դ. Անանուն), Միսակ Տեր-Դանիելյանը (Արամայիս) և ուրիշներ:

19-րդ դարի 80-ական թվականներից սկսած՝ Արևմտյան Հայաստանում ծավալված ազատագրական պայքարի մանրամասների և դրան արցախահայության մասնակցության ու ղեկավարության վերաբերյալ ամփոփ ու անկողմնակալ գնահատական է տվել այդ իրադարձությունների մասնակից և ականատես Ռուբենը: «Տաճկահայաստանի մէջ յեղափոխության ծնունդը բնական հետեանք էր զուլումի եւ միւս կողմէ՝ ժողովրդական գիտակցութեան արթնացման, - գրել է Ռուբենը: Այդ կարտայայտուէր բնական ձեւով՝ վայրի ու տարերային: Այդպես էին, օրինակ, Տարօնի մէջ Արաբոները, Չոլոները եւ Բազիկները: Բացի ընթոստութենէն, անոնք չունէին դրական ու մշակուած նպատակ: Անոնց բովանդակութիւն եւ նպատակ տուողները տարօրինակօրէն եղան Սիւնէաց եւ Ղարաբաղի լեռներէն, առաւելապես Շուշուալ քաղաքէն եկողները: Մէկ կողմ թողած երկրորդական ուժերը, որոնք

<sup>114</sup> «Փայլակ», հմ. 6, 29 մարտի, Շուշի, 1915:

<sup>115</sup> Զիլինգարյան Ա., Հայության մեծ տագնապը, Կովկասահայ իրականութիւնը, «Գործ», հմ. 2, փետրվար, Բագու, 1917, էջ 109:

<sup>116</sup> «Նեցուկ», հմ. 3, 31 օգոստոսի, Շուշի, 1917:

<sup>117</sup> Զիլինգարյան Ա., նշվ. աշխ., էջ 90:

գային այդ շրջաններէն Վասպուրական նահատակուելու համար, պէտք է նկատել, որ Վասպուրականի յեղափոխութեան ծագման առաջին օրերէն, անօր փախստական եւ պաշտօնական բոլոր առաջնորդները եղան շուշեցիները: Հնչեակեաններու մօտ՝ Մարտիկը, Փարամազը, Դաշնակցականներու մօտ՝ Վարդանը, Նիկոլ-Դումանը եւ հետագային Իշխանն ու Արամը: Այսպէսով՝ եթէ վասպուրականցիք բնական արմատն էին այդ շրջանի յեղափոխութեան, անոր պատուաստներն էին ղարաբաղցիք, որ համ եւ բովանդակութիւն տուին անոր հիւթերուն»<sup>118</sup>:

Կամավորական ջոկատների պահպանության ծախսերը հոգում էին հայերը: Հավաքված նվիրատվությունների և հանգանակությունների չափը 1914 թ. սեպտեմբերից մինչև 1915 թ. մայիս ամիսն անցավ մեկ միլիոն ռուբլուց<sup>119</sup>: Մոտավոր հաշվարկներով Շուշիի հայությունը հավաքագրել է 11 484 ռուբլի 60 կոպեկ<sup>120</sup>: Դրանից բացի ռազմաճակատ էր ուղարկվում մթերք, հագուստ: Շուշիի բարեգործական հաստատությունները խնամում էին վիրավոր կամավորներին, հոգում նրանց ընտանիքների կարիքները:

Պատերազմական գործողությունների մասնակիցներին, նրանց ընտանիքների անդամներին, զոհվածների երեխաներին օգնելու նպատակով քաղաքում գործում էին «Շուշիի եղբայրական օգնության կոմիտե»-ն, «Նպաստամատույց հանձնաժողով»-ը և «Պատերազմից տուժած զինվորների և նրանց ընտանիքների օգնության ընկերություն»-ը: Այդ կառույցների աշխատանքը թափանցիկ դարձնելու նպատակով ամեն ամիս նրանց հաշվետվությունը տպագրվում էր թերթում:

Հանգանակություններ կատարելու համար վերոհիշյալ կազմակերպությունները, նրանց աջակցող երիտասարդները կազմակերպում էին ցերեկույթներ, երեկույթներ, խնջույք-ձաշեր:

Շուշիի «Պատերազմից տուժած զինվորների և նրանց ընտանիքների օգնության ընկերություն»-ը միայն 1915 թ. մարտ ամսին քաղաքի 162 ընտանիքների շուրջ 11 633 ռուբլի 63 կոպեկ օգնություն է տվել<sup>121</sup>:

Արցախի գյուղերից մեկում, երբ «Եղբայրական օգնության կոմիտե»-ի անդամները հերթական հանգանակությունն էին կատարում, «Փողոցում մի կին ձայնը դողալով հարցնում է՝ «Էդ ինչի համար էք հաւաքում».- «Կամաւորների», - լսում է հաւաքող խմբի միջից. «Սպասէք» կանչում է կինը, նս-

<sup>118</sup> Ռուբեն, հ. Բ, էջ 134:

<sup>119</sup> Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից մինչև 1917 թ.), Երևան, 2004, էջ 665:

<sup>120</sup> Արախամյան Հ., Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933), Ս. Էջմիածին, 2009, էջ 151-152:

<sup>121</sup> «Փայլակ», հմ. 2, 12 մարտի, Շուշի, 1915:

տում է ձիւնի վրայ, հանում ոտքից գուլպաները, հագնում մաշած չուստերն և տալիս է ասելով. «Էլ ոչինչ չունեմ տալու, էս մի ջուխտ գուլպաներն են, ուղարկէք, թող հագնի իմ ախպերներից մեկը»<sup>1122</sup>:

«Շուշիի եղբայրական օգնության կոմիտե»-ին հասցեագրված նամակում ռազմաճակատից կամավորները գրել են. «Ստացանք ձեր թանկագին ընծան և ուրախացանք ինչպէս երեխաներ: Ուրախացանք ոչ յատկապէս ուղարկած իրերի համար, այլ այն պատճառով, որ մեր հայրենակիցները չեն մոռացել մեզ: Ահա այդ է, որ մեզ հրճուանք է պատճառում, ոյժ ներշնչում, ոգի տալիս: Թուրքերին մենք այնպիսի ջարդ տվեցինք, որ երկար տարիներ չեն մոռանայ: Սարիղամիշը եւ շրջակայքը լիքն են նրանց դիակներով. մինչև այժմ դեռ չենք կարողացել հաւաքել: Սակայն մեր եղբայրներից էլ քիչ չընկան, բայց նրանց արդեն թաղել ենք և վրանները խաչ կանգնեցրել: ... Մենք կը շարունակենք պաշտպանել մեր հայրենիքը, - եթէ կը մեռնենք, յիշեցէք ձեր սուրբ աղօթքների մէջ ...»<sup>1123</sup>:

1915 թ. գարնանը և ամռանը Այսրկովկասի հայությունն ապրում էր խռովահույզ ժամանակներ: Անհրաժեշտ էր փրկել Մեծ եղեռնից հրաշքով փրկված հարյուր հազարավոր գաղթական հայրենակիցների:

Այդ գործին լծվեց նաև Շուշիի հայ հանրությունը: «Հորիզոն»-ը այդ օրերին գրել է. «... դարաբաղցիները առաջին անգամ չէ, որ պատսպարում են իրենց թշուառ տաճկահայ եղբայրներին»<sup>1124</sup>:

<sup>1122</sup> «Փայլակ», հմ. 33, 2 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>1123</sup> «Փայլակ», հմ. 2, 12 մարտի, Շուշի, 1915:

<sup>1124</sup> «Հորիզոն», հմ. 187, 21 օգոստոսի, Թիֆլիս, 1915: 1880-ական թվականներից սկսած, երբ Արևմտյան Հայաստանում թուրքական ճնշումները մեծանում են, շուշեցի հայերը ամեն ջանք գործադրում էին՝ հայրենակիցներին աջակից լինելու: 1880 թ. Վանում ազգային հիվանդանոց հիմնելու համար շուշեցի 46 կանայք նվիրատվություն են կատարել: Այդ նպատակով Շուշիում հանգանակվել է 1005 ռուբլի: «Մշակ», հմ. 41, 1880, էջ 3, հմ. 70, Թիֆլիս, 1880, էջ 3: Շուշիի իգական դպրոցի աշակերտուհիները 1880 թ. Ղումաշ Թառույանի տանը մի միջոցառման ժամանակ Վանի սովյալների համար դրամահավաք կազմակերպեցին: Արցախեցի, Նամակ Շուշուց, «Մշակ», հմ. 49, Թիֆլիս, 1880, էջ 3: 1880 թ. հոկտեմբերին Թաղևուս Թամիրյանը 50 ռուբլի էլ տրամադրում է Խրիմյան Հայրիկին՝ արևմտահայ չքավոր գյուղացիներին բաժանելու համար: «Մեղու Հայաստանի», հմ. 87, 12 նոյեմբերի, Թիֆլիս, 1880, էջ 4: Նույն նպատակի համար թիֆլիսաբնակ շուշեցիներ Բալաբեկ Մելիք-Կարապետյանը և Մարկոս Դուլխանյանը 600 ռուբլի են նվիրաբերել: «Մեղու Հայաստանի», հմ. 35, 14 մայիսի, Թիֆլիս, 1880, էջ 3: 1881 թ. մարտի 2-ին թեմականի ուսուցիչները հունվար և փետրվար ամիսների աշխատավարձը՝ 48 ռուբլի, նվիրաբերել են արևմտահայերին: «Մեղու Հայաստանի», հմ. 46, 22 մարտի, Թիֆլիս, 1881, էջ 1: 1881 թ. ապրիլի 7-ին Շուշիի ուսուցիչները 24 ռուբլի են հանգանակել տաճկահայերի համար, - գրել է «Մեղու Հայաստանի» թերթը: «Մեղու Հայաստանի», հմ. 63, 18 ապրիլի, Թիֆլիս, 1881, էջ 2; Մանդինյանց Ա., Շուշի,

1915 թ. հուլիսին Շուշիում ստեղծվում է փախստականների ընդունման և տեղավորման հանձնախումբ, որի ղեկավարն էր քաղաքագլուխ Գերասիմ Մելիք Շահնազարյանը, իսկ պատվավոր նախագահը՝ Ջավեն վարդապետ Բաբայանը<sup>1125</sup>:

Նախատեսված էր Գանձակի նահանգում տեղավորել 60 000 գաղթականների: Դրանցից 24 000-ը բաժին էր ընկնում Ղարաբաղին, որից 9000-ը Ջիվանշիրի, իսկ 15 000-ը՝ Շուշիի գավառներին: Շուշի քաղաքում պետք է ապաստաներ 2000 հոգի<sup>1126</sup>:

Գաղթականների կարիքները հոգալու նպատակով էջմիածնում ստեղծված հիմնադրամին Շուշիի «Եղբայրական օգնության կոմիտեն» 1914 թ. նոյեմբերի 10-ից մինչև փետրվարի 20-ը տրամադրել է 1500 ռուբլի և 400 ռուբլու էլ՝ հագուստներ: Նույն ժամանակաշրջանում Արցախի գյուղերից հավաքագրվել է 4970 ռուբլի, թիֆլիսաբնակ դարաբաղցիներից՝ 2000 ռուբլի: 1915 թ. օգոստոսին թիֆլիսաբնակ շուշեցի Դավիթ խան - Ավան Յուզբաշյանը գաղթականներին նվիրաբերել է 3000 ռուբլի: Այդ նույն նպատակով 1915 թ. մայիսի 27-ին Շուշիի «Եղբայրական օգնության կոմիտե»-ն 1000 ռուբլի, հուլիսի 1-ին Ջավեն վարդապետը ծխականներից ստացած 571 ռուբլի 10 կոպեկը փոխանցել են Մայր Աթոռին<sup>1127</sup>:

Նպաստամատույց գործառույթները հստակեցնելու, Շուշիի հայությանը համազգային խնդիրներին մասնակից անելու նպատակով «Եղբայրական օգնության կոմիտե»-ն 1915 թ. հուլիսի 28-ին հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասված էր. «Քաղաքացիներ. հինգշաբթի, ամսոյս 30-ին, յատուկ կազմած խմբակները շրջելու են քաղաքը, իրեր ժողովելու փախստականների համար: Կարիզ է զգացում հագուստի, տեղաշորի, թէյի, շաքարի և սապոնի: Պատրաստեցէք, ով ինչ կարող է, շրջող խմբերին յանձնելու կամ անձամբ ուղարկելու կոմիտեի մթերապահետը՝ թեմական դպրոցում, ուր յղած նիւթերը ընդունում են ժամը 10-ից մինչև 1-ը»<sup>1128</sup>:

Շուշիում գտնվող փախստականների օգնության կազմակերպությունները համապատասխան պաշարներ կուտակելու նպատակով Ասկերանում,

«Մեղու Հայաստանի», հմ. 136, 16 հուլիսի, Թիֆլիս, 1881, էջ 1: Հար և նման օրինակները բազմաթիվ են և իրենց տեղն են գտել սովյալ ժամանակաշրջանի մամուլի էջերում:

<sup>1125</sup> «Փայլակ», հմ. 41, 29 հուլիսի, Շուշի, 1915:

<sup>1126</sup> «Փայլակ», հմ. 41, 29 հուլիսի, Շուշի, 1915: Ճանապարհին սովից ու հիվանդություններից տասնյակ հազարավոր գաղթականներ մահացան և միայն մի քանի հարյուր հոգի հասան Արցախ:

<sup>1127</sup> «Փայլակ», հմ. 4, 19 մարտի, հմ. 24, 31 մայիսի, հմ. 34, 5 հուլիսի, հմ. 48, 23 օգոստոսի, Շուշի, 1915:

<sup>1128</sup> «Փայլակ», հմ. 41, 29 հուլիսի, Շուշի, 1915:



Շոշում, Թաղավարդում, Ննգիում ստեղծեցին հինգ աշխատակիցներից կազմված պարենի հավաքագրման բաժիններ, պահեստներ, գյուղերում նշանակեցին գաղթականների հարցերով զբաղվող լիազորներ, բացեցին բժշկական կետեր, բաղնիքներ<sup>1129</sup>:

Վերոհիշյալ կոմիտեին կից գտնվող կանանց խմբակը զբոսայգում բացում է «Մի բաժակ թեյ» անունով թեյատուն, որից ստացված հասույթը տրամադրվում էր գաղթականներին<sup>1130</sup>:

1915 թ. հուլիսի 28-ին շուշեցի ուսանողները կազմակերպում են երեկույթ, որտեղ հանդես է գալիս Վահրամ Փափագյանը:

Ստացված գումարի կեսը հատկացվում է Վանի փախստականներին, իսկ մյուս մասը՝ պատերազմից տուժածներին<sup>1131</sup>:

Հայրենակիցներին օգնելու խանդավառությունը Շուշիում այնքան մեծ էր, որ նույնիսկ դարոցահասակ երեխաները նույնպես ձեռնամուխ եղան այդ սուրբ գործին: Այդ շարժումը համակարգելու համար «Փայլակ» թերթի խմբագրատունը հիմնադրեց առանձին «Մանկական ֆոնդ»<sup>1132</sup>: Հատկապես հուզիչ է 1916 թ. «Արարատ» ամսագրում տպագրված և հետո «Կոչնակ» թերթում արտատպված հոդվածը, որտեղ գրված է, թե ինչպես շուշեցի 70-ամյա Թամարա Խաչատրյանցը, հայ գաղթականներին օգնելու համար «ազգին կարոտութիւններ ի նկատի առնելով», մեջքով 300 կուժ ջուր է կրում և վաստակած 3 ռուբլին ուղարկում վեհափառին<sup>1133</sup>:

Շուշեցիներն առավել շատ մտահոգ էին գաղթական որբերի, ինչպես նկատել է «Փայլակ» թերթը. «խորտակած Հայաստանի փոքրիկ ոստեր»-ի<sup>1134</sup> ճակատագրով: Անհրաժեշտ էր «նրանցից պատրաստել արժանատի քաղաքացիներ ապագա վերանորոգված հայրենիքի համար»: Այդպես էր մտածում շուշեցի հայ մարդը<sup>1135</sup>:

Նրանց խնամքը կազմակերպելու համար 1916 թ. օգոստոսին թեմակալի փողոցի վրա Ներսես Մելիք Փաշայանի տանը «Եղբայրական օգնության կոմիտե»-ն որբանոց բացեց<sup>1136</sup>: Սկզբում որբանոցի տնօրենն էր Արտեմ Պետրոսյանը, իսկ հետո դարձավ Սառա Քուրթայիսյանը:

Որբերի առողջության հետ կապված հարցերը լուծելու նպատակով Ժամհարյանների հիվանդանոցում առանձին բաժանմունք է ստեղծվում: Շուշիի

<sup>1129</sup> «Փայլակ», հմ. 48, 23 օգոստոսի, Շուշի, 1915:

<sup>1130</sup> «Փայլակ», հմ. 25, 4 հունիսի, Շուշի, 1915:

<sup>1131</sup> «Փայլակ», հմ. 42, 20 օգոստոսի, Շուշի, 1915:

<sup>1132</sup> «Փայլակ», հմ. 45, 13 օգոստոսի, Շուշի, 1915:

<sup>1133</sup> «Կոչնակ», հմ. 5, Թիֆլիս, 1916, էջ 122:

<sup>1134</sup> «Փայլակ», հմ. 79, 16 հոկտեմբերի, Շուշի, 1916:

<sup>1135</sup> «Փայլակ», հմ. 51, 3 սեպտեմբերի, Շուշի, 1915:

<sup>1136</sup> «Փայլակ», հմ. 66, 28 օգոստոսի, Շուշի, 1916:

որբանոցի 80 երեխաների կրթության գործը կազմակերպելու նպատակով, թեմի առաջնորդ Զավեն վարդապետի հանձնարարականով, 1915 թ. հուլիսի 28-ին թեմական դպրոցում ստեղծվում է 7 հոգուց բաղկացած մի մարմին, որի անդամներն էին Անուշ Տեր-Միքայելյանը, Սարգիս Տեր-Գասպարյանը, Ռուբեն Շահնազարյանը, Գաբրիել Կիրակոսյանը, Վարդան Վարդապետյանը, Արմեն Բեգլարյանը և Առաքել Չալյանը<sup>1137</sup>: Քիչ անց «Եղբայրական օգնության կոմիտե»-ն քաղաքի հայկական դպրոցների կազմից ստեղծում է մեկ այլ հանձնախումբ, որի անդամներն էին Հայրապետ Մուսայելյանը, Անուշ Տեր-Միքայելյանը, Հարություն Թումյանը, Մելիք Եսայանը և Սաթենիկ Զաքարյանը<sup>1138</sup>:

Վերոհիշյալ երկու հանձնախմբերն էլ նպատակասլաց, լիարժեք աշխատանքներ ծավալեցին, ինչի արդյունքում Շուշիի որբանոցի սաներից շատերը դարձան հայտնի ուսուցիչներ, կրթության, մշակույթի նշանավոր գործիչներ, որոնք, բնավորվելով Արցախում, արժանի ներդրում ունեցան իրենց կորսյալ մեծ հայրենիքի մի փոքր փրկված հատվածի շենացման և զարգացման գործում:

Քննարկվող ժամանակաշրջանի մամուլը բարձր է գնահատել շուշեցիների ավանդը հայ գաղթականների օժանդակման գործում:

«Հորիզոն» թերթը գրել է. «Թող Շուշու հայ հասարակութան օրինակը վարակի և միս հայ զաւառների հասարակութիւններին»<sup>1139</sup>:

Այսպիսով, 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած Շուշին դարձավ սահմանադրական շարժման, ազատամիտ, առաջադեմ ազգային գաղափարների ձևավորման, արժարժման և տարածման կենտրոն: Նմանօրինակ միջավայրը մագնիսի նման դեպի իրեն էր ձգում հայոց երկրի տարբեր հատվածներում ապրող լուսավոր զավակներին, որոնք, տեղացիների հետ միասին, նոր որակ հաղորդեցին այդ ամենին: Շուշիից ճառագած նոր գաղափարները տարածվեցին նաև Հայաստանի նահանգներում:

Արդեն 1870-1880-ական թվականների սահմանագծին համաեվրոպական թատերաբեմում, միջազգային-քաղաքական լուրջ վերադասավորումների պայմաններում, ասիական տարածաշրջանում մեծ տերությունների տնտեսական, քաղաքական շահերի անհամատեղելիության համատեքստում, ռուս-թուրքական հերթական հակամարտությունների բովում, Կովկասի թուրքալեզու ժողովուրդներին Համիդի շուրջը համախմբելու, թուրքական ընդարձակ պետություն ստեղծելու ծրագրերն իրողության

<sup>1137</sup> «Փայլակ», հմ. 42, 2 օգոստոսի, Շուշի, 1915:

<sup>1138</sup> «Փայլակ», հմ. 83, 30 հոկտեմբերի, Շուշի, 1916:

<sup>1139</sup> «Հորիզոն», հմ. 187, 21 օգոստոսի, Թիֆլիս, 1915:

վերածելու ճանապարհին օսմանյան կայսրության, պանթյուրքիստների առաջ, իբրև զորեղ խոչընդոտ, կանգնած էին Հայաստանը և հայ ժողովուրդը: Սուլթան Աբդուլ Համիդը խնդիր դրեց այդ ծրագիրն իրագործել արևմտահայերի զանգվածային ջարդերի կազմակերպման միջոցով: Այդ ամենին, որպես պատասխան, բարձրանում էր հայ ազատագրական շարժման ալիքը: Ազատագրական պայքարի սկզբնափուլում՝ 1880–ական թվականներից մինչև 1896 թվականը, նպատակաուղղված էր հայի տեսակի պահպանմանը: Այն ինքնաբերաբար էր, ծրագրված ու հստակ համակարգված չէր ուստի ի սկզբանե դատապարտված անհաջողության: Այս անհավասար գոյամարտի կիզակետում հայտնվեցին նաև մի քանի տասնյակ շուշեցի երիտասարդներ:

Հայ ազատագրական շարժման դասերը, բալկանյան ժողովուրդների ազատագրության պատմական փորձը, քաղաքական կուսակցությունների ասպարեզ գալը նոր որակ հաղորդեցին դիմադրական պայքարին:

Ծանր հիասթափությունից ու տևական որոնումներից հետո, 19–րդ դարի 90–ական թվականների կեսերին արդեն մշակվում էր պայքարի ուրույն գաղափարաբանությունը: Նոր որակ էր ձեռք բերում հայ հեղափոխական-քաղաքական միտքը:

Այս փուլի ամենաբնորոշ գիծն այն էր, որ համաժողովրդական մաքառման ընդերքում գնալով հավաքական գիտակցություն էր դառնում այն գաղափարը, թե փրկության միակ ճանապարհը, սեփական ներուժին ապավինելով, դրան համազգային ընդգրկում հաղորդելով, ազատության հասնելն է: Որպես վերջնականապես՝ ազատագրական շարժման գործիչների մեջ հղացավ հայկական պետականության վերակերտման գաղափարը:

Արևմտյան Հայաստանի ազատագրման և պետականության վերականգնման գաղափարաբանությունը, ծնունդ առնելով Շուշիում, այդ քաղաքում ծնված ու դաստիարակված գործիչների շնորհիվ համահայկական երանգավորում ստացավ: Հեղափոխական քուրայում իմաստնացած այդ գործիչները կարողացան արցախահայության՝ բազում դարերի ընթացքում ազատագրական պայքարի և պետականաշինության ասպարեզում կուտակած հարուստ կենսափորձը համամարդկային արժեքներին համադրելով՝ գտնել այդ ամենի ռացիոնալ հատիկը, ըստ այդմ, չհեռանալով հայության քաղաքակրթական ավանդույթներից, դա տարածել արևմտահայ իրականության մեջ:

Հայ ազատագրական շարժումների պատմության մեջ սուլթանական բռնատիրության դեմ հայդուկային կռիվները և ապստամբական բռնկումները, ինքնապաշտպանական մարտերը թեև չհանգեցրին ժողովրդի ազա-

տագրությանն օսմանյան լծից, բայց և այնպես, հայությունը համոզվեց, որ առանց այդ պայքարի և ոչ մի ժողովուրդ չի հասել իր ազատությանը: Այդ պայքարը թույլ չտվեց, որ հայերի իրավագուրկ վիճակը հանգեցվի ստրկամիտ հնազանդության, և ժողովրդի մեջ միշտ վառ պահեց ազատաբաղձ ոգին: 20–րդ դարում այդ նոր կուտակումները հանգեցրին ազգային պետականության վերակերտմանը:

### թ) Հայ-թաթարական ընդհարումները Շուշիում 1905–1906 թթ. և դրանց հետևանքները

20–րդ դարասկզբին կովկասահայությունն ապրում էր անհանգիստ ժամանակներ: Այս անգամ հայության համար արհավիրք էին դարձել ազգամիջյան հակամարտությունները: Հայ-թաթարական ընդհարումների գլխավոր դրդապատճառները տնտեսական, քաղաքական և կրոնական բնույթ ունեին:

19–րդ դարի վերջին Բաքուն դարձել էր նավթարդյունաբերական խոշոր կենտրոն: Ռուս, հրեա և եվրոպացի հանքատերերի կողքին հայ գործարար շրջանները նույնպես սկսեցին գնել թուրքերի (թաթարների) նավթահանքերը և իրենց ձեռներեցության շնորհիվ ստեղծեցին պատկառելի հարստություն: Այս հանգամանքը գրգռում էր թուրքերին, որոնք զգում էին, որ տնտեսական մրցակցությունում դուրս են մղվում:

Բաքվի նահանգի և քաղաքի հայ-թաթարական ընդհարումների պատճառները և հետևանքները քննության ենթարկված սենատոր Կուզմինսկին նկատել է, որ մուսուլմանների «... մշտական կախվածությունը հայերից առևտրական ու փողային ոլորտներում միշտ արթնացնում է անվստահություն միմյանց նկատմամբ և պարունակում թաքնված չարություն, որոնց արտահայտման համար հաճախ բավական է ամենաչնչին պատճառը՝ հայերի և թաթարների մեջ լուրջ բախումներ բռնկվելու համար»<sup>140</sup>:

1905 թ. հոկտեմբերին Բաքվի մզկիթում մուլլան հայտարարել է, որ մեկ միլիոն հայերը զավթել են ամեն բան, իսկ յոթ միլիոն թուրքերին թողել միայն կանաչի ծախելը<sup>141</sup>:

Այսրկովկասի դաշտավայրային հատվածներում վիստող թուրքական, քրդական ցեղախմբերը, իրենց քոչերի տուտը բռնած, ամառային արոտավայրեր հասնելու համար ոտքի կոխան էին դարձնում նախալեռներում և

<sup>140</sup> Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1–ին, էջ 143:

<sup>141</sup> «Արշալոյս», հմ. 38, 14 հոկտեմբերի, Թիֆլիս, 1905:

լեռներում գտնվող հայկական բնակավայրերի ցանքատարածություններն ու այգիները: Այդ հողի վրա անվերջանալի վեճեր և ընդհարումներ էին տեղի ունենում քոչվորների ու հայերի միջև:

Միայն Գանձակի նահանգում քոչվորների թիվը անցնում էր 100 000-ից, որոնք իրենց անասուններն անց կացնելով հայկական գյուղերով՝ ավերում էին ամեն ինչ<sup>1142</sup>:

Ամեն տարի մինչև ատամները զինված քոչվորները Միլի, Մուղանի տափաստանից մի քանի տասնյակ հազարների հասնող ոչխարների հոտերի հետ միասին, Շուշիի Ելիզավետպոլյան և Երևանյան դռներով անցնելով, լարված ու պայթյունավտանգ իրավիճակ էին ստեղծում հայկական քաղաքամասում:

Շուշիում, այնուհետև Թիֆլիսում հրատարակված «Գործ» ամսագրի թղթակիցը, ականատես լինելով քոչվորների ալան-թալանին սովոր կենցաղավարությանը, գրել է. «Ըստ երեւութին միեւնոյն երկրում՝ երկու հակառակ տարր է բնակվում, մեկը ընդունակ ամեն բոլոր իւր կեանքը վտանգի ենթարկելու, տարիներով ձիան վերայ կեանքն անցկացնող, միշտ թուրը կապած, մարդասպանութիւնը, աւազակութիւնը իւրեան համար կեանքի գաղափար շինած, իսկ միւսը ընդունակ օրը 24 ժամ՝ քրտնել. ձին մշակ, ինքը մշակ, դեմքը խաղաղ ու խոնարհ, գլուխը ցածր, քայլը դանդաղ ու հաստատ, թրի տեղ ձեռին բահ ու գութան, ազատ մշակութիւնը բնութեան մեջ, խաղաղ քրիստոնեական կեանքը իւր համար գաղափար շինած:

Մտնում էք, օրինակ, մի թուրքի գիւղ, համարյա ամեն վրանի առաջ կապած է մի թամբած գեղեցիկ ձի, վրանի մէջ ոչինչ յարմարութիւն կեանքի համար, քայց մի գեղեցիկ թուր եւ հրացան անհրաժեշտ կարիք է, մինչդեռ հայերի տասը տանից մեկում մի հրացան չի գրտնուիլ, այն էլ ժանգոտած, ընդհակառակ. մտնելով հայի գիւղը մարդը զգում է մի առատութիւն այստեղ ցորէն է դարսած, այնտեղ դարման, միւս տեղը փայտ և այլն. այնպէս որ զգում ես, որ հայի գերդաստանական կեանքը անելի հիմնաւոր, նորա տունը անելի տաք է քանթէ թուրքինը: ... վաճառականութեան, մշակութեան, արհեստների, երկրագործութեան կենդրոնը հայ տարրն է: Հողը թուրքի ձեռին է, իսկ նոցանից հանած պտուղը հայի ձեռին, երկրի իշխանութիւնը թէ օրէնքի հիման վերայ, թէ ապօրինի, գողութեամբ, աւազակութեամբ թուրքի ձեռին է, իսկ փողը հայի ձեռին, որ բանտարկեալները համարեա ամեն անկիւնում՝ թուրքեր են, իսկ սպանուածները, կողոպտուածները հայեր, որ

դատաստանատներում՝ զանգատուողները միշտ հայեր են, իսկ յանցաւորները միշտ թուրքերը»<sup>1143</sup>:

Չնայած վերոհիշյալ դժվարություններին՝ հայությանը հաջողվեց Կովկասում տնտեսական բարձունքները կենտրոնացնել իր ձեռքում:

Տնտեսության աշխուժացման պայմաններում զարթոնք էր ապրում հայ հանրության քաղաքական կյանքը: Հայ քաղաքական կուսակցությունների կազմավորումը, պետականության վերակերտման պայքարը, ֆիդայական ազատագրական կոմիտեներն ու Կովկասում ահաբեկչական արարքներով ցարական բռնատիրության դեմ ծառայումն ահ ու սարսափի մատնեցին իշխանություններին: 1905 թ. հոկտեմբերի 25-ին Թիֆլիսում, ցուցարարներին դիմելով, փոխարքան ասել է. «Ռուս ժողովուրդը միշտ պատրաստ է զոհուել իր Հայր թագաւորի հավատի ու հայրենիքի համար ...: Նա թոյլ չի տայ զանազան հայերի ու վրացիների իրանց նպատակներին հասնեն սեփական թագաւորութիւն հիմնեն Կովկասում»<sup>1144</sup>:

Հարկ է նշել նաև, որ 1905 թ. Ռուսաստանում բռնկված հեղափոխությանը մասնակցեց նաև հայությունը: Ցարական իշխանությունները քաջ գիտակցում էին հպատակ ժողովուրդների համերաշխության և միասնական գործողությունների լուրջ հետևանքները: Այդ իսկ պատճառով դիմեցին փորձված միջոցի՝ նրանց միջև բորբոքելով կրոնական ու ազգային թշնամանք՝ այդ կերպ փորձելով դուրս մղել նրանց հեղափոխության ոլորտից: Ժամանակին Վահան Մինախոյանը գրել է. «Քաղաքանականապէս, այդ ընդհարումները արգասիք էին ռուս միապետութեան սադրանքների եւ նպատակ ունէին հեռու պահել յեղափոխութիւնից Անդրկովկասը, տեղական ազգամիջյան պատերազմների միջոցով, ինչպէս նաեւ հայ ըմբոստ ժողովրդի ողնաշարը կոտրել»<sup>1145</sup>: Ցարական պաշտոնյաները գտնում էին, որ թուրքերը (թաթարները) գահին ավելի հավատարիմ են, քան հայերը: Պատահական չէ, որ 20-րդ դարի սկզբներին ոստիկանական մարմիններում մեծ քանա-

<sup>1143</sup> Ռուստամ, Արցախու աշխարհ (Ղարաբաղ), «Գործ», հմ. 1, մարտ, Շուշի-Թիֆլիս, 1882, էջ 25-27: Թալանի մեջ վարժված թուրքը ամեն վայրկյանի հարմար պահի է սպասում՝ կողոպտելու հայ հարևանի արյուն-քրտինքով ստեղծված ունեցվածքը: Գենետիկորեն այդ ամենը թուրքերին փոխանցվել է սերնդից-սերունդ: 2015 թ. Քարվաճառում հայ պատանուն սպանած թուրք երեք դիվերսանտներից մեկը՝ Դիլիամ Ասկերովը, դատարանում ասել է. «Հորթին մենք մորթել ենք այն առավոտը, երբ մենք հյուր ենք ուսնել է. «Հորթին մենք մորթել ենք այն առավոտը, երբ մենք հյուր ենք ուսնել (խոսքը վերաբերում է մյուս թուրք դիվերսանտին - Վ.Բ.): Հյուրը Քելբաջարից էր: Մենք սովորեցրել ենք նրան հորթ գողանալ: Նա պարտավոր է սովորի, որպեսզի հետագայում կարողանա հորթի գողությամբ զբաղվել: Թող սովորի, մեր ազգային սովորությունն է»:

<sup>1144</sup> «Արշալոյս», հմ 40, 26 հոկտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1145</sup> Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Երևան, 2013, էջ 150:

<sup>1142</sup> «Արշալոյս», հմ. 42, 25 փետրվարի, Թիֆլիս, 1906:

կությանը թուրքեր էին ընդգրկել, որոնք էլ 1905–1906 թթ. դարձան հայկական ջարդերի կազմակերպիչներ:

Հայ-թաթարական բախման մեջ որոշակի դեր խաղաց օսմանիզմի, պան-իսլամիզմի ու պան-թուրքիզմի գաղափարախոսությունը:

1905 թ. «Русские ведомости» թերթը գրել է. «Գերմանիայի իմացությամբ Կոստանդնուպոլսում ձեռնարկվել է մի դավադրություն, որին մասնակցել են հիշյալ խաներն ու բեկերը (խոսքը վերաբերում է Ղարաբաղի խաներին ու բեկերին – Վ. Բ.), նպատակ ունենալով գլխովին բնաջնջել Կովկասում ապրող հայերին ու ջարդել մյուս ազգություններին, որպեսզի թուրքերի համար ճանապարհ բացվի դեպի Կովկաս ...: Ահա այս նույն դավադրության հիման վրա էլ Ղարաբաղի խաներն ու բեկերը, օգտվելով հեղափոխությունից և ազատությունից, սկսեցին իրագործել իրենց պլանները: Ոչ ոք չի կարող հերքել, որ այդ նույն խաներն ու բեկերն են մահմեդական հետամնաց զանգվածներին լարել հայերի, ռուսների դեմ ...»<sup>1146</sup>:

Թուրք նախկին խաներն ու բեկերը, ֆինանսական և նյութական կարողությունների տեր դարձած նոր ձևավորվող առևտրավաշխատական խավը գտնում էին, որ Այսրկովկասը պատկանում է մահմեդականներին և, հետևաբար, պետք է սրբազան պատերազմի միջոցով ոչնչացնել քրիստոնյաներին, մանավանդ՝ հայերին:

Այսրկովկասի ոստիկանության պետ, գեներալ Շիրինկինը 1906 թ. իր գրություններից մեկում նշել է, որ «Անդրկովկասյան թաթարների, կամ ավելի ձիշտ թուրքերի մուսուլմանական ընդհանուր մոլեռանդությունն ընդեմ քրիստոնյաների, ընդհանրապես, բարդանում էր դեպի հայերն ունեցած յուրահատուկ ատելությամբ, մասսամբ որպես մուսուլմանական երկրները քրիստոնեական պետությունների կողմից նվաճման, իսլամի ստորացման և իրենց ինքնուրույնության կորստի համար մեղավորների: Անդրկովկասի նվաճման գործում Թուրքիայի դեմ Ռուսաստանի հետագա պատերազմներում հայերի դերը մահմեդականները չեն կարողանում մոռանալ: Ճակատագրական իրադարձությունները ցանկալի պահ էին նախապատրաստել իսլամի ստորացման համար վրեժը ներկայումս հայերից լուծելու համար: ... Եթե նկատի ունենաք, որ նրանց նման ձգտումը սրբագործվել է կրոնով և, որ նրանց համար դուրանը պահպանել է նախասկզբնական թարմությունը, ապա կարելի է պատկերացնել թե ռուսական պետական այրերի կարճատեսության հետևանքով իրադարձությունների ընթացքում ինչպիսի վտանգ էր կախվում հայ ազգի գլխին»<sup>1147</sup>:

<sup>1146</sup> «Русские ведомости», но. 173, СПб, 1905:

<sup>1147</sup> Միմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 2-րդ, էջ 104:

1900 թ. Գանձակի մոլլա Աթաքիշին հավաքված մահմեդականներին ասել է. «Տեղական թուրքերն ուզում են Կովկասը բաժանել Ռուսաստանից և յանձնել իր նախկին տիրոջը, բայց քանի որ այդ բանին կարող էին խոչընդոտ լինել հայերը, որոնք, ինչքան էլ թշնամի լինեն ռուսներին, բայց թուրքերը հաւատացած են, որ դժար թուրքերին կանցնեն ռուսների կողմը, ինչպես արել են նրանք անցեալներում: Այդ խոչընդոտի առաջն առնելու համար թուրքերը որոշել են նախ ոչնչացնել հայերին»<sup>1148</sup>:

«Աղքատ թուրքը տեսնում է իր կողքին իրան հետ համեմատած անելի հարուստ հային և նա նախանձում է նրան, – գրել է «Արշալոյս» թերթը, – նա մտածում է և մտածում է գիշեր և ցերեկ, որ՝ թե այդ հային հալածի, սպանի, թալանի, ինքը կլինի անելի հարուստ, անելի ապահով այն պարզ պատճառով, որ հայը կթողնի երկիրը, կըթողնի հողը և կը գնայ ուրիշ տեղ ապրելու, իսկ նրա ունեցուածքը, նրա հողը կմնայ իրան թուրքին: Այսպես է մտածում թուրքը և նրա այս մտածումը ուղղութիւն է տալիս թուրք բեկը, խանը, աղան»<sup>1149</sup>:

Օգտագործելով մահմեդական բնակչության մոլեռանդությունը և խավարամոլությունը՝ ցարական պաշտոնյաները, թուրք կալվածատերերը, մեծահարուստները և մահմեդական հոգևորականները ձգնում էին իրենց ցեղակիցներին հավատացնել, որ իրենց թշնամության և աղքատության հիմնական պատճառը հայերն են, հետևապես պետք է նրանցից վրեժ լուծել:

Արդյունքում՝ Բաքվում, Նախիջևանում, Շուշիում, Գանձակում և այլ հայաշատ քաղաքներում 1905–1906 թթ. տեղի ունեցան հայ-թաթարական ազգամիջյան ընդհարումներ:

Այսրկովկասում հայ-թաթարական կռիվները ոչ մի տեղ այնքան արյունալի ու կատաղի չեն եղել, որքան Ղարաբաղում և, մանավանդ, նրա կենտրոն Շուշիում: Դա պատահական չէր, որովհետև բազում դարերի ընթացքում թուրք գործիչները համոզվել են, որ դեպի իրենց հայրենիքը՝ Միջին Ասիա ձգվող ճանապարհին անցնում է Նախիջևանով և միատարր հայ բնակչություն ունեցող Ղարաբաղով, որտեղ մանավանդ ազգային իշխանության առկայությունը համարյա թե անհնարին է դարձնում իրենց դիվային ծրագրերի իրագործումը և հատկապես արևմտյան Այսրկովկասը թուրքացնելու ու վերջնականապես կլանելու գործը:

Արխիվային վավերագրերը և տվյալ ժամանակաշրջանի մամուլը վկայում են, որ դեռևս այդ իրադարձություններից շատ առաջ էին թուրքերը սկսել զենք ու զինամթերք գաղտնի տեղափոխել Շուշի, ինչպես և մոտակա

<sup>1148</sup> «Արշալոյս», հմ 27, 5 փետրվարի, Թիֆլիս, 1906:

<sup>1149</sup> «Արշալոյս», հմ 69, 4 դեկտեմբերի, Թիֆլիս, 1905:

մահմեդական գյուղերը: Այդ գործերը կազմակերպում էին Հյուսեին Բեկ Ջիվանշիրը, Բահաթուր բեկ Կալաբեկովը, Ադիգյոզալ Բեկը:

1905 թ. օգոստոսի սկզբներին, չնայած Շուշիում մթնոլորտը լարված էր, այնուամենայնիվ, հայերը, որոնք մեծամասնություն էին կազմում քաղաքում, փորձում էին մեղմել կրքերը՝ նշանակություն չտալով Այսրկովկասի տարբեր հատվածներից եկած լուրերին: 1905 թ. հուլիսին Խաչենի ձորում և Վանք գյուղի շրջակայքում մի քանի մասնավոր ընդհարումներ տեղի ունեցան: Առիթից օգտվելով՝ Շուշի-Եվլախ խճուղու երկայնքով թուրքերից կազմված ավազակախմբերն սկսեցին թալանել և սպանել հայերին: Մթնոլորտի շիկացմանը նպաստեց նաև մամուլում կեղծ ու սադրիչ հակահայկական բովանդակությամբ տեղեկությունների հրապարակումը: Շուշիում ընդհարում առաջացնելու նպատակով քաղաքի ոստիկանապետ Խոսրով բեկ Փոլադովի նախաձեռնությամբ օգոստոսի 7-ին թուրքական քաղաքամասում մի թուրք լապտերավառ է սպանվում, և դա վերագրում են հայերին<sup>1150</sup>: Այդ նույն ժամանակ Տոնավարզից 4 շուշեցի հայեր քաղաք էին վերադառնում: Նրանք պատահաբար հայտնվեցին դեպքի վայրում, և թուրքերը, նրանց վրա կասկածելով, սկսեցին կրակել: Մեկին բռնեցին, իսկ մյուսները վիրավոր հասան հայկական քաղաքամաս: Այս դեպքն առիթ դարձնելով՝ թուրք ավազակախմբերը Աղղամում թալանում և վիրավորում են Եվլախից Շուշի եկող 100 հայ և ռուս ճանապարհորդների:

Օգոստոսի 16-ին «Շեյթան քաղաք»-ում թուրքերն սպանեցին երկու հայերի, այնուհետև Գանձակի դարպասի մոտ վիրավորեցին կաղարծեցի հայի: Նման միջադեպ եղավ նաև Զառիստում, որտեղ բերդաձորցի մի հայ վիրավորվեց: Նույն օրը սպանեցին նաև նախկին հաշտարար դատավոր ռուս Լունիակինին, որը ժամանակին համարձակվել էր թուրքերից գնել «Խանի աղջկա» տունը և լավ հարաբերություններ ուներ հայերի հետ<sup>1151</sup>:

Թուրքերի հարևանությամբ ապրող հայերն ստիպված տեղափոխվում են հայկական քաղաքամասի խորքերը: Թուրքական քաղաքամասից սկսեցին գնդակների տարափ տեղալ հայկական քաղաքամասի վրա:

Օգոստոսի 16-20-ը դաժան ընդհարումներ են տեղի ունենում քաղաքում: Ընդհարման հենց առաջին օրը քաղաքում բռնկվեց հրդեհ, որն ավելի ձգնաժամային դարձրեց իրավիճակը:

Ականատեսը վկայում է, որ այդ ժամանակ քաղաքի շրջակա մահմեդական գյուղերից քաղաք են ներխուժում թուրք-բրդական մի քանի ավազակային ջոկատներ, որոնց քաղաքի թուրքերը նետում են առաջ, իսկ իրենք

<sup>1150</sup> Հայ-թուրքական կռիւր Շուշում, «Դրօշակ», հմ. 12, Ժնեւ, 1905, էջ 184:  
<sup>1151</sup> «Արշալոյս», հմ 11, 11 սեպտեմբերի, Թիֆլիս, 1905:

«ետևից, մի ձեռքում բռնած փալաս և նավթի կուլա, «յա Ալի» կանչելով վառում տները»<sup>1152</sup>:

Հայկական քաղաքամասից մի քանի հազար կանայք, երեխաներ ապաստանեցին ռուսական զորանոցում: Ի տարբերություն շատ ու շատ ռուս չինովնիկների և զինվորականների՝ գնդապետ Իվանովն օգնում է անգն բնակչությանը: Դաժան մարտեր ծավալվեցին Ագուլեցոց եկեղեցու շրջակայքում: Քսանհինգամյա Ասլան Աղաբեկյանն իր 10 ընկերների հետ միասին եկեղեցին և նրա շրջակայքում գտնվող տները քաջաբար պաշտպանել է: Մարտերում Ասլան Աղաբեկյանը զոհվել է:

1905-1906 թթ. Շուշիի հայկական ջարդերի նահատակների աճյուններն ամփոփվել են քաղաքի հարավային ծայրամասում գտնվող հայ բարերար Առաքելյանի միջոցներով կառուցած գերեզմանոցում: Այստեղ է ամփոփվել նաև Ագուլեցոց եկեղեցու պաշտպանների հրամանատար Ասլան Աղաբեկյանի մարմինը, որի շիրմաքարի վրա բանաստեղծական ռճով ներկայացված է հայ մարդու քաջությունը, կսկիծն ու տառապանքը<sup>1153</sup>:

ԳՈՌԻՆ ԶՈՐԵՑԻ ԱՍԼԱՆ Դ. ԱՂԱԲԵԿԵԱՆՑԻ ՅԱՏԿ

*Ուր գնացիր Քաջադրէր ջան  
չես մոռացել յախտեան  
Շուշի մէջ կուեցիր  
Առաջ մեզնից հեռացիր  
Ակուլեանց մայր ժամունը էիր  
Տասնապետ ու Քաջընտիր  
Քաջ կուում էիր Տու հատուկ  
Փափակտ թերի Հայտուկ  
Հասակտ Քսանհինգ ամաց  
Ազգանունտ Աղաբաբեանց  
Շատերը թողիր քեզ փափագ  
Գիշերան սուրբ նահատակ  
Փափակտ թերի մնացաւ  
Եղաւ մեզի սրտացաւ  
Օրիորտները միաձայն*

*Ու շատ Քաջեր հայից ընկան  
Դու էլ ընկար Քաջ Ասլան  
Ոմանք զինուոր են դժգոհ  
Իսկ դուք եղաք ազգի զոհ  
Եղբայրք ունիս Քաջընտիր  
Արսենն է վրեժխնդիր  
Կրերազէ տըխուր ողբալով  
Ծնողանցտ սիրտ տալով  
Երբ զինուորինից եկար  
Թակարտի մէջը ընկար  
Մտար ազգային լծի տակ  
Յանկարծ կպաւ տաք գնդակ  
Չի խնայեց տխուր հորտ  
Ոչ էլ Թումաս Եղբօրտ  
Կոլորեց Քեզ մահը գաժ*

<sup>1152</sup> Բայայան Վ., Հայկական ջարդերը Շուշիում 1905-1907 թթ., 20-րդ դարասկզբին ԼՂՀ Քաջաթաղի շրջանի հայկական գյուղերի բնակիչների բռնի տեղահանման 100 ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը, Բերձոր, 2005, էջ 26: «Արշալոյս», հմ. 2, 30 օգոստոսի, Թիֆլիս, 1905:  
<sup>1153</sup> Арутюнян Г., Шуши, стр. 25:

Կանչում են քեզ ազրեր ջան  
Նշանածո վիզը ծուծ  
Լայէն աչքերն է ուռած  
Չրարժանացաւ պասկիտ  
Ծնողներից անաչելով  
Կանչում էր Քեզ ողբալով  
Խընայե ինձ ով անգին  
Հողը մտնենք միասին

Չըեղար հողիտ արժան  
Թումաս եղբայրտ երբ եկաւ  
Լալով շիրիմիտ ընկաւ  
Արին էր վագում աչքերից  
Եղբայր կուզեր Քաջերից  
Երանի այն նահատակին  
Հասնի արյան պասկին:

Արյան ծարավ թուրք խուժանին հաջողվեց խուժել Ազուլեցոց եկեղեցի և Ղուրանը դնելով սեղանին՝ երդվել «համախալամական պատերազմ սկսել հայերի դեմ»<sup>1154</sup>:

Օգոստոսի 18–ին ժամը 10–ին թուրքերը հաշտության առաջարկություն են անում: Բանակցությունները պետք է ընթանային Խունունցի տանը: Թուրքերը, պատրվակ բռնելով, բանակցություններին չեն գալիս: Պարզվում է՝ Աղղամից հարյուրավոր թուրք զինյալներ օգնության են հասել և նորից փորձում են բռնությունները շարունակել:

Երեկոյան քաղաք էր հասել նաև նահանգապետը, որը փորձում էր կողմերին հաշտեցնել:

Թուրքերը, թարմ ուժեր ստանալով, օգոստոսի 19–ին Ազուլեցոց եկեղեցու և Ղումլուղի թաղամասում հարձակման են անցնում: Մոլլան առջևից գնալով՝ «յա Ալի» գոռալով ոգևորում էր թուրք խուժանին: Չնայած հայ պաշտպաններին հաջողվել էր հարձակումը կասեցնել, այնուամենայնիվ, հրդեհը լափում է հայկական քաղաքամասի մի մեծ հատվածը: Ականատեսը գրել է. «Հրդեհը սկսել է Ազուլեաց եկեղեցու ներքևից, Քոչարեանի տան մոտերքից, քամին առաջ է գնում դեպի արևմուտք – կարմիր սարսափը հետզհետե շարունակում է լափել տախտակից տանիքաուր հայ տները և յամառութեամբ առաջ է գնում դեպի հայկական կենդրոնը: Գնդակների վզվզոցն էլ հնար չեն տալիս փրկելու կամ կղզիացնելու այրուող տների կատաղի բոցերը ...: Հրդեհը բռնել է Քամալեանի տնից սկսած ամբողջ հայկական միջին թաղը և մինչև կես գիշեր կլանել քաղաքի հարուստ մասը, մինչև Թոփխանա: Միս կողմից հրդեհը սկսել է թուրքական բաղնիսի մօտի Սարուխան–Բեզեանի տնից, որի թուրք բնակիչները երկար ժամանակ իբրև դիրք բանեցնելուց և այդ մասի հայկական ամբողջ թաղը կրակի և աւարի ենթարկելուց յետոյ, այրում են և այդ տները և հեռանում: Այդտեղից Աղաբեկեանց ձորի ամբողջ զուգահեռական տները այրուած են: Ազուլեաց

<sup>1154</sup> Բալայան Վ., Հայկական ջարդերը Շուշիում 1905–1907 թթ., էջ 26:

և Ղազանչեցոց եկեղեցիների աջ ու ձախ փողոցների վրայ գտնուող բոլոր տները մինչև մի կողմից Բարեգործական ընկերության գրադարանի ներքին մասը, իսկ միս կողմից Խուրվարեանի խանութի գլուխը այրուած են ...: Այրուած են 260 տուն և մոտ 300 խանութ»<sup>1155</sup>:

Քաղաքի գլխավոր փողոցի բոլոր կառույցները հրդեհվեցին: Հրո ճարակ դարձան նշանավոր շուշեցիներ Խաչատրյանցների, Հովհաննես Խունունցի, Քամալյանների, Թաղևոս Թամիրյանի, Տեր–Միքայելյանի, Նիկիտ Ամրումյանցի, Սպանդարյանի, Մուքեյլյանի, Այդինյանի տները, Խանդամիրյանի թատրոնի դահլիճը, զինվորական հիվանդանոցը, քաղաքային դումայի, հաշտարար դատարանի, հայոց թաղի շուկայի շինությունները, Մարդի աղայի, Կրասիլնիկյանցի քարվանսարայները, Մահուեսի Հակոբյանի տպարանը, Տեր Մկրտչյանցի, Ահարոնյանցի բոժոժի պահեստները: Այրվել և թալանվել են մթերքների շտեմարանները:

Այդ օրերին կողոպտվում և ավերվում են Աղղամում գտնվող շուշեցիներ Բաղդասարյանների, Ահարոնյանի, Սողոմոնյանի սպիրտի գործարանները: Թուրքերը վառում են նաև Ղայբալիշենում գտնվող Ներսիսյանի մետաքսի, Պեխի աղբյուրի մոտ գտնվող Թամիրյանի աղյուսի և թունգերի գործարանները:

Օգոստոսի 19–ին հաշտության բանակցությունները վերսկսվեցին: Հայերը թուրքերին հանձնեցին 30 գերի: Թուրքերի մոտ գտնվող 40 հայերից ազատվեցին 5–ը:

Օգոստոսի 20–ին թուրքերը նորից կրակահերթի տակ առան հայկական քաղաքամասը: Փոխնահանգապետ Բարանովսկին, որը հայկական թաղամասից տեղափոխվել էր թուրքական մաս, գավառապետի միջոցով թեմի առաջնորդին հայտնում է, որ ինքը անկարող է զսպել թուրքերին:

Օգոստոսի 20–ին մի խումբ կտրիճ հայ տղաներ, ձեռքի ռումբերով անցնելով հակահարձակման, թուրքերին դուրս են քշում Ազուլեցոց եկեղեցուց: «Եկեղեցու բակի անկիւններից վզվզում են հայկական գնդակները և մի–մի վայր են գլորում թուրքերից շատ–շատերը,– գրել է ականատեսը: Ներս ենք մտնում. սուսկալի տեսարան: Եկեղեցու բակում թափուած էին բազմաթիւ նաթոտ ցնցոտիներ. Եկեղեցու մէջ ընկած են կոտորած ջահերը և եկեղեցական պատկերները: Ամբողջ եկեղեցու հատակը ծածկուած է գարու հատիկներով: ... Պատռոտած, այս ու այն կողմն են նետուած եկեղեցական գրքերը, կոտորուած են պահարանները, պատի վերայ ռուսերէն

<sup>1155</sup> «Արշալոյս», հմ 11, 11 սեպտեմբերի, Թիֆլիս, 1905; Որոշ տվյալներով Շուշիում 400 տուն էր վառվել, տես՝ «Արշալոյս» հմ. 1, 28 օգոստոսի, Թիֆլիս, 1905:

տառերով հայհոյում են քրիստոնեաներին»<sup>1156</sup>։ Ամենուրեք թուրքերի ձեռագիրը նույնն էր։ Նմանօրինակ դաժանություններ նրանք ցուցաբերել են նաև Բաքվում և Գանձակում։

1905 թ. օգոստոսի 18-ին Գանձակում, հայ-թաթարական ընդհարումներին նվիրված խորհրդակցության ժամանակ, գավառապետ Ռեուտը նշել է. «Պարոններ, ես յուսահատուած եմ, ամբողջ 8 տարի ես ծառայում եմ ոստիկանական մասում և այդ ժամանակամիջոցում ես երբէք տեսած չեմ այնպիսի սանձարձակութիւն և անկարգութիւն, որին այժմ եմ ականատես. մահմեդական ազգաբնակչութիւնը զուրկ է որևէ բարոյական հիմքից. նա կանգնած է կրթութեան ամենաստոր աստիճանների վրայ։ Ինչպէս եղել էր նա 100 տարի սրանից առաջ, այնպէս էլ նա այսօր է մնացել. նա ոչինչ չի ընդունում, բացի իշխանութեան ոյժից, ուստի տեղեկանալով պետական վերջին կարգադրութիւնները, որ ոստիկանութիւնն այլևս իրաւունք չունի ծեծելու կամ որևէ յանցաւորի դեմ վարչական միջոցներ ձեռք առնելու, թուրքերը սկսել են թալանել ու սպանել, հարկեր հաւաքել, ծեծել – մի խօսքով պահում են իրենց ամենամեծ կերպով՝ բառիս բուն նշանակութեամբ։ Իսկ գաւառական վարչութիւնը, ստիպված եմ խոստովանելու, միանգամայն անզօր է գաւառիս մուսուլման ազգաբնակչութեան շահատակութիւնները զսպելու։ Թուրքերը մեծ մասամբ նեղում են հայերին և ռուս գաղթականներին։ Ես թուրքերից հանգստութիւն չունեմ, զորօրինակ՝ ամենակարճ միջոցում մուսուլմանները հայ գիւղերի մէջ կատարեցին բազմաթիւ ոճրագործութիւններ։

Ես Ջարմազաճ եմ մնացել, տեսնելով հայ գիւղերի համբերատարութիւնն ու օրինապահութիւնը։ ... Ինչ անել։ Երկու չարիքից փոքրագույնն ենք վերցնում։ Հայ գիւղերում կան ընտրուած մարդիկ, որոնք օրինակելի կարգապահութիւն են մտցնում իրենց հասարակութեան մէջ։ Ես ցանկացած մուսուլմանների գիւղերում էլ այդպիսի կարգեր եմ ներմուծել, բայց ավաղ, ոչինչ դուրս չեկավ։ Մուսուլմաններն այն աստիճանի են հասել, որ սկսել են իրար դէմ գնալ՝ միմեանց սպանում, թալանում ...։ Խաւար, վայրենի ամբոխին տրուած է ազատութիւն և այդ ազատութիւնը նրան միանգամայն փչացրել է, ոչ մի խնդիրք, համոզում, ազդեցութեան ոչ մի խօսք այլևս նրանց համար նշանակութիւն չունի»<sup>1157</sup>։

Շուշիի պաշտպաններին հաջողվեց թուրքերին կանգնեցնել հայկական քաղաքամասի վերին մասույցներում՝ Բաղունց թաղում։ Հայ արհեստավորների հնարամտությամբ հաջողվեց կարգի գցել զրեթն անգործածե-

լի հինավուրց թնդանոթը։ Դրանից կրակ բացելով գրոհող հակառակորդի վրա՝ խուճապ առաջացրին նրանց շարքերում։ Հայերը նույն թնդանոթից սկսեցին կրակել նաև թուրքերի ամենահիմնական դիրքերից մեկի՝ Գոհար աղայի տան վրա։ Հայերը քաջագործություն են կատարում նաև Նահատակի դիրքում։ Սարսափահար թշնամին հաշտություն է խնդրում։ Ղազիի գլխավորությամբ թուրքերը հավաքվում են ռուսական եկեղեցու մոտ և սպիտակ դրոշակ բարձրացնում։

Խանի աղջկա պալատում գտնվող փոխնահանգապետը նշանավոր թուրքերի ուղեկցությամբ դուրս է գալիս և երաժիշտների ուղեկցությամբ շարժվում դեպի հայկական քաղաքամասը։ Նույն ձևով Արցախի թեմի առաջնորդը, Ներսես վարդապետը և մի քանի հայեր գնում են թուրքական քաղաքամաս։ Կատարվում է գերիների փոխանակություն<sup>1158</sup>։

Այդպես, օգոստոսի 20-ին ավարտվում են չորսօրյա կռիվները։

Հարկ է նկատել, որ 1905–1906 թթ. ծանր ու տագնապալի օրերին պետականությունից ու սեփական իշխանություններից զուրկ հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու բարդ և պատասխանատու գործը ստանձնում է Հայ հեղափոխական դաշնակցությունը։ «Եվ մի ազգ, եթե ուզում է մնալ հարգված, եթե չի ուզում կորչել, պետք է լինի զենքի ընդունակ, միշտ պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության համար, մանավանդ քաղաքական ցնցումների վարկյաններում»<sup>1159</sup>։ Այդ օրերին նման սկզբունքով էր գործում Հայ հեղափոխական դաշնակցության անվեհեր մարտիկ Նիկոլ Դումանը։ Առանց հապաղելու նա իր փոքրաթիվ խմբով, շեշտակի հարվածներով Բաքվում կասեցրեց զազազած ամբոխի առաջխաղացումը։ Ոգևորված Դումանի հաջողություններով՝ բազմաթիվ հայ երիտասարդներ հավաքվեցին հայդուկապետի դրոշի ներքո։ Տղամարդկանցից կազմվում են 5–15 հոգանոց ինքնապաշտպանական խմբեր, որոնք իրենց հսկողության տակ են վերցնում հայկական թաղամասերը և ապահովում նրանց անվտանգությունը։

Այսրկովկասի հայաշատ վայրերը պաշտպանելու նպատակով Հայ հեղափոխական դաշնակցությունը ժողով գումարեց, որտեղ Նիկոլ Դումանը ռազմական ծրագիր ներկայացրեց, ըստ որի՝ ամեն մի գյուղ և շրջան պետք է ստեղծեր ինքնապաշտպանական ջոկատ, սակայն խմբապետը պետք է լիներ ոչ տեղացի փորձառու ֆիդայիներից մեկը։ Այսպես, Ջանգեզուր և լիներ ոչ տեղացի փորձառու ֆիդայիներից մեկը։ Այսպես, Ջանգեզուր և Դարալագյազ ուղարկվեցին Կոտոյի Հաճին, Աղյուծ Ավազը, Սեբաստացի Մուրադը, Քեռին և Դրոն։ Ավելի ուշ Ագուլիսի շրջանի պաշտպանությունը

<sup>1156</sup> «Արշալոյս», հմ. 2, 30 օգոստոսի, հմ. 11, 11 սեպտեմբերի, Թիֆլիս, 1905։

<sup>1157</sup> «Արշալոյս», հմ. 6, 5 նոյեմբերի, Թիֆլիս, 1905։

<sup>1158</sup> «Արշալոյս», հմ. 2, 30 օգոստոսի, հմ. 11, 11 սեպտեմբերի, Թիֆլիս, 1905։

<sup>1159</sup> Նիկոլ Դուման, Նախագիծ ինքնապաշտպանության, Երևան, 1992, էջ 7։

ստանձնեցին Մուրադը, Կայծակ Առաքելը և Ավոն: Մշեցի Սմբատ Բարոյանը հանձն առավ Ղամարլուի շրջանը, Սեյտո-Պողոսը՝ Արագածի շրջանը, Ուսուլ Գրիգորը և Արամայիսը՝ Աղբաբայի շրջանը, իսկ Ծուռ Դալուն՝ Կողբի շրջանը: Գանձակ ուղարկվեցին Աբրահամ Գյուլխանդանյանը, Սեպուհն ու Բուլանխցի Մարտիրոս Վարժապետը: Թիֆլիսը և շրջակա հայկական բնակավայրերը հանձնարարվեց Կարո Բաստրմաճյանին: Արցախի պաշտպանությունը ստանձնեցին Խանասորի Վարդանը, Համազասպը: Իսկ Երևանի ընդարձակ շրջանը հանձն առավ Նիկոլ Դումանը՝ որպես օգնական ունենալով Սարգիս Օհանջանյանին և Գալուստ Ալոյանին<sup>1160</sup>:

Ինքնապաշտպանության կենտրոնական շտաբը գլխավորում էր Նիկոլ Դումանը: Նա խմբապետերին հրահանգել էր գործել «ակն ընդ ական»-ի սկզբունքով:

Նիկոլ Դումանը քաջ գիտակցում էր, որ ֆիդայական ջոկատներով անհնարին է դիմակայել թուրք-թաթարական բազմահազար զինյալ ավազակախմբերին և նրանց աջակցող ցարական կանոնավոր զորքերին: Ուստի պետք էր ստեղծել կանոնավոր ինքնապաշտպանական բանակ, որը պետք է ունենար համապատասխան կառուցվածք, հստակ սահմանվեր հրամանատարների և զինվորների պարտականությունները: Այդ նպատակով մշակվում և շրջանների ինքնապաշտպանական խմբերին է առաքվում 4 մասերից և 33 կետերից բաղկացած «Հրահանգ» շրջաբերականը<sup>1161</sup>:

Մուսավաթական Աղբեջանի հիմնադիրներից մեկը՝ Աղաևը, դաշնակցությանը ցարական իշխանությունների առջև վարկաբեկելու նպատակով 1906 թ. փետրվարի 27-ին Կովկասի փոխարքայի մոտ խորհրդակցության ժամանակ նշել է. «Դաշնակցությունը 15 տարի գոյութիւն ունի, իմացանք որ հիանալի մատուցեր ունի, մի ամբողջ արմիա, այն ժամանակին կուում էր Թիւրքիայի դէմ, երէկ կառուարութեան դէմ, էսօր՝ մեր թուրքերիս դէմ ...»<sup>1162</sup>:

Նման գործելակերպն Այսրկովկասի տարբեր բնակավայրերում թուրքերին ստիպեց պարզել սպիտակ դրոշակ և սկսել բանակցություններ: Այդ ամենի շնորհիվ հայությունը փրկվեց վերահաս մասսայական ջարդերից:

ՀՅԴ Արևելյան Բյուրոն Արցախում կազմում է Ջինվորական մարմին, որը գլխավորում էր դշլաղեցի Սարգիս Մեհրաբյանը (Խանասորի Վարդան): Նրան հանձնարարված էր կազմակերպել Արցախի և Սյունիքի հայության ինքնապաշտպանական մարտերը: Ջինվորական մարմնի որոշմամբ՝

<sup>1160</sup> Վ. Բալայան, Արցախի պատմություն, էջ 271–272:

<sup>1161</sup> Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 244:

<sup>1162</sup> «Արշալոյս», հմ. 46, 2 մարտի, Թիֆլիս, 1906:

Արցախն ըստ գավառների բաժանվեց պաշտպանական շրջանների, որոնց հրամանատարներ նշանակվեցին փորձառու ֆիդայիներ: Վարանդայի պաշտպանությունը կազմակերպում էին Հայրում Վարդանյանը, Արամայիսը (Միսաք Տեր Դանիելյանը) և Գրիգոր Միրզաբեկյանը (Մածուն Խեչոն): Խաչենի շրջանի հրամանատարն էր Համազասպը:

Ջինվորական շրջանն իր հերթին բաժանվում էր ենթաշրջանների<sup>1163</sup>:

Հաշվի առնելով Շուշիի ռազմավարական նշանակություն ունենալու հանգամանքը՝ նրա պաշտպանությունը կազմակերպելու համար Ջինվորական մարմինը քաղաքը բաժանեց թաղերի: Ամեն մի թաղ ուներ իր թաղապետը և նրա օգնականը: Յուրաքանչյուր թաղում ռազմական տեսանկյունից կարևոր կետերը վերածվեցին դիրքերի, որոնցից ամեն մեկը հսկում էին 4–ից մինչև 10 կամավորներ: Հայերի կարևոր դիրքերն էին Ճաքած քերծի գլուխը, Վերին դարպասները, Իրզաբեկի պարտեզը, Քարինտակի ճանապարհի բերանը, Գոհար աղայի տան դիմացի և նրանից վեր սարի վրա կրակակետերը, Բաղունց հորերը, Վերդանց պարտեզը, Ալեքսան բեկի տունը: Մեկ դիրք կահավորվել էր թատրոնի շենքից ներքև, երեքը՝ հին հանգստարանի շրջակայքում, տպարանի, Ագուլեցոց եկեղեցու մոտ: Երեք հենակետ տեղակայվել էր Աղաբեկանց ձորում, երեքը՝ Ղումլուղում, մեկը՝ Աղա Իրզայի տան մոտ, մեկը՝ Քամու ջաղացում, մեկը՝ Բարութխանում: Դրանից բացի ստեղծվեց պահեստային ջոկատ, որը կոչվեց Թռուցիկ խումբ<sup>1164</sup>:

ՀՅԴ ջանքերով Շուշիում կազմակերպվեցին սանիտարական և հրշեջ խմբեր, վիրակապական կետեր: Կոիվն սկսելուն պես ամեն պաշտպանական շրջանում սկսեցին գործել տնտեսական հարցեր լուծող թաղապետները, որոնք հսկում էին զինվորների համար կահավորված ճաշարանների գործունեությունը: Կովոդներին ժամանակին հասցվում էր տաք կերակուր, ջուր, թեյ: Կովոդների և հրամանատարության հետ կապ ստեղծելու համար կազմակերպվեց սուրհանդակների կենտրոն: Փամփուշտ բաժանելու համար հատուկ մարդիկ էին կարգված<sup>1165</sup>:

ՀՅԴ ձեռնարկած կազմակերպական քայլերը ոգևորիչ էին Շուշիի ազգաբնակչության համար: Ամեն մեկը փորձում էր իր լուրման ունենալ հայկական քաղաքամասի պաշտպանության գործում: «Մի քանի րոպե չէր անցել կուից, երբ սկսեց մի արշաւանք «Դաշնակցութեան» կենտրոնական գրասենեակի վրայ,– պատմում է ականատեսը: Արշաւանքը՝ հայերի կողմից

<sup>1163</sup> Ստեփանյան Գ., Համազասպ, էջ 90–91:

<sup>1164</sup> Հայ-թրքական կռիւը Շուշում, «Դրօշակ», հմ. 12, Ժնեւ, 1905, էջ 184:

<sup>1165</sup> Հայ-թուրքական ընդհարումներ. Երկրորդ եւ խոշոր ընդհարումը Շուշում, «Դրօշակ», հմ. 9, Ժնեւ, 1906, էջ 136:



...: Քաղաքացիներ, որոնք երբեք չեն օժանդակել քաղաքը պաշտպանող միակ յեղափոխական կազմակերպության, եկել էին նոյն կազմակերպությունից գէնք ու փամփուշտ պահանջելու, իրենց տները պաշտպանելու համար: Նոյնպէս եւ զանազան խմբակների պատկանող մարդիկ, որոնց գործը մինչև այն Դաշնակցութիւնը արատաւորելն էր, շտապում էին մեզնից ռազմամթերք աղերսել ...: Ստեղծել էր մի ուշագրաւ դրութիւն: Ժողովուրդը եւ «Դաշնակցութիւն» ի մի էին ձուլել: Սահմանագիծը հայ քաղաքական կուսակցութեան եւ հայ մասսայի միջեւ՝ չքացել էր»<sup>1166</sup>:

Դարերի ընթացքում պետականությունից զրկված, մահմեդական աշխարհով շրջապատված հայ մարդն իր հայրենիքում, ստրկական շղթաներով պարուրված, դարձել էր դաժան ու քմահաճ ճակատագրի գերին: Նրա մեջ ջարդվել էր դիմադրական կարողությունը, ջնջվել հոյսը ապագայի նկատմամբ: Ամեն մի ընտանիք իր մեջ էր ամփոփված, հոգսերի բեռն ուսած, հանրային շահը սեփականին ստորադասած, հանապազօրյա հացի խնդիր լուծելով՝ փորձում էր մաքառել ցավի ու դաժանության դեմ:

19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկզբներին ֆիդայական շարժման ծավալման, հայ քաղաքական կուսակցությունների, մասնավորապէս, ՀՅԴ ազգահավաք, պետականամետ գործունեության շնորհիվ հայ մարդն սկսեց թոթափել ստրկության շղթաները: Նա հասկացավ, որ համահայկական ջանքերի մեկտեղումով կարող է իր հայրենիքում ազատ ապրելու իրավունք վաստակել: Այդ կապակցությամբ Թիֆլիսում հրատարակվող «Արշալոյս» թերթը գրել է. «Հայի ամբողջ միջնադարեան և նոր պատմութիւնը մի բառով կարող ենք արտահայտել՝ նահատակութիւն: Մահմեդականութեան հանդէս գալով հայի նահատակութեան համար նոր ասպարեզ է բացուում: Այդ ամբողջ շրջանում հայը մենակ է իր ցաւի հետ. նա անօգնական է իր դարդոտ, անբաժանելի վերքի հետ: Նա՝ մի բուռ հայերից կազմուած այդ հայութիւնը՝ շրջապատուած բազմամիլիոն մահմեդական խառնիճաղանջ տարրերով, տարել է կորիզուիս իր խաչը, տնքացել է այդ խաչի ծանրության տակ և նոյն խաչը դաւանող ոչ մի ազգից իսկական օգնութիւն չի գտել: ... Եւ այդ հայը, կրոնին, հաւատին, ներքին անկախութեանը հաւատարիմ հայը՝ անզօր դիմադրելու իր թշնամուն, բաց է արել նահատակների երկար ու ձիգ շարքը, այն շարքը, որի սկիզբն անցեալի հեռու և մութ օրերն է գնում հասնում, իսկ վերջը, ավա՛ղ, չկայ դեռ:

Գուցէ ոչ մի երկիր իր զաւակների արիւնով, այնպէս չի ողողուած, ինչպէս Հայաստանը հայի արյունով: Կարմիր է եղել հայի անցյալը, կարմիր է եղել

<sup>1166</sup> Հայ-թուրքական կռիւը Շուշում, «Դրօշակ», հմ. 12, Ժնեւ, 1905, էջ 184:

Հայաստանը: ... Հայաստանի ծաղիկները հայի արեամբ պարարտացող հողից են աճում, հայի գետերը նոյն հայի կարմիր արեամբ են շառագունած:

... այժմ չէք գտնի կորիզուիս սուս ու փուս նահատակուող հայ, այժմ չէք գտնի կամաւ, առանց դիմադրութիւն ցոյց տալու մեռնող հայ: Այժմ հայը կեանքի զօրեղ դասից խրախուսել է: ... Եւ հայի արդի պատմութիւնը տալիս է ոչ լոկ նահատակներ, այլ կոռուղ նահատակներ: Հայն այժմ գէնքը ձեռքին դիմադրում է թշնամուն, այն թշնամուն, որ յանդգնում է գալ, խանգարել նրա անդրութիւնը, խլել նրա ունեցածը, ոտնձգութիւններ անել նրա սահմաններում: Դրան վկայ են անառիկ Ղարաբաղի բազմաթիւ հերոսների սխրագործութիւնները, դրան վկայ են Բագուի քաջամարտիկ հայ կտրիճների հերոսութիւնը, որոնք դիմադրել են անմիտ ու անխոհեմ թշնամու յարձակումներին և պատուով են դիմադրել: ... Հայն այժմ կոռուղ է, մարտնչող է: Նա չի ապաւինում միայն իր ներքին աշխարհին. նա կամաւ մահուան չի դիմում: Նա մեռնելուց առաջ աշխատում է իրեն մեռցնողին մեռցնել. նա կռուելով է մեռնում: Հայ մարդ, իմացած լինես, որ քանի զարգացնես, քանի կատարելագործես նոր տիպը, այնքան կը բարեփոխուի քո վիճակը, այնքան հաստատուն կը լինի ոտքիդ տակի հողը»<sup>1167</sup>:

Կազմակերպված պայքարի շնորհիվ Այսրկովկասի բոլոր բնակավայրերում, այդ թվում՝ Շուշիում, թշնամական ուժերն ստիպված էին հաշվի նստել հայերի հետ:

Շուշիի հայկական թաղերի պաշտպանության ժամանակ անօրինակ սխրագործություն կատարեց 19-ամյա Իշխան Հեյրաթյանը: Նա ոչնչացրեց 17 թուրք գրոհայիների: Շուշիի առաջին ընդհարումների օրերին (օգոստոսի 16-20) հայերը տվել են 40 սպանված և 68 վիրավոր: Զոհված մարտիկների թվում էին Մարգար Ժամհարյանը (Մռավ), Իշխանը, Լևոնը, Շամիրը, Ասլանը<sup>1168</sup>: Ինքնապաշտպանական մարտերի կազմակերպիչ Մարգար Ժամհարյանին հուղարկավորել են Ղազանչեցոց եկեղեցու բակում: Նրա գերեզմանը սրբավայր էր դարձել քաղաքի հայերի համար:

Թաթարներն ավելի շատ կորուստներ ունեցան՝ շուրջ 500 սպանված<sup>1169</sup>: Նրանց գրպաններից հանված թղթերը նորից ապացուցում էին, որ թուր-

<sup>1167</sup> «Արշալոյս», հմ. 44, 1 նոյեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1168</sup> Շուշայ ընդհարումը, «Դրօշակ», հմ. 11, Ժնեւ, 1905, էջ 167; Մարգար Ժամհարեան (Մռաւ), «Դրօշակ», հմ. 12, Ժնեւ, 1905, էջ 189-190; «Արշալոյս», հմ. 32, 7 հոկտեմբերի, Թիֆլիս, 1905: Որոշ աղբյուրներում ներկայացված է 45 սպանված և 75 վիրավոր, տես՝ «Արշալոյս», հմ. 1, 28 օգոստոսի, Թիֆլիս, 1905:

<sup>1169</sup> Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 332:

քերն առաջնորդվում էին պանթուրքիզմի գաղափարներով և փորձում էին այդ ամենին համախալամական բնույթ հաղորդել:

Բաքվի և Շուշիի թուրք գործակալները շրջում էին Այսրկովկասի մահմեդական բնակավայրերով և տեղի բնակիչներին գրգռում հայերի դեմ<sup>1170</sup>:

1905–1906 թթ. Կովկասում տեղի ունեցած իրադարձություններն ուղղորդվում էին Թուրքիայի կողմից: Այդ երկրի կառավարական շրջանակների հաշվարկներով՝ Արևմտյան Հայաստանի հարցի լուծման բանալին Կովկասում էր գտնվում: Ոչնչացնելով կովկասահայությանը՝ Արևմտյան Հայաստանի հայությանը կզրկեն հնարավոր աջակիցներից: Մի առիթով սուլթան Աբդուլ Համիդ II–ը, նայելով Կովկասի քարտեզին, ասել է. «Նայեցէք ... ամբողջ Երևանի, Գանձակի և Բագուի նահանգները Ալլահի և մեծ մարգարէի տնօրինութեամբ անհրաժեշտ շարունակութիւն են տաճկական հողերի. միակ խանգարիչները այս տեղերում խառն բնակուած հայերն են. ոչնչացնելով դրանց և տիրելով այդ նահանգներին, կը միացնէինք Կովկասի մուսուլմանութիւնը մեզ հետ»<sup>1171</sup>:

Այսրկովկասի հարևանությամբ գործող թուրքական վիլայեթների փաշաներին Բարձր դռան կողմից հրահանգվել էր ամեն կերպ աջակցել սահմանից այն կողմ գտնվող իրենց հավատակիցներին: Այդ նպատակով Բայազետի փաշայի հրամանով համիդիե գնդերը բազմիցս փորձել են հատել սահմանը<sup>1172</sup>:

Ռուսական պետական սահմանը զինված քրդական ջոկատների կողմից անցնելու կապակցությամբ ցարական արքունիքը սուլթանին 1905 թ. սեպտեմբերին բողոքի նոտա է հղել<sup>1173</sup>:

Ընդհանուր առմամբ՝ ռուսական կայսրության տարածքում ապրող ժողովուրդների 1/5 մասը մահմեդականներ էին, և նրանք գտնում էին, որ իրենք բնական իրավունք ունեն Ռուսաստանի վրա:

Պանթուրքիստական, պանիսլամիստական գաղափարներով տոգորված գործիչները երազում էին, որ ռուսական առաջին հեղափոխությունը կկործանի ցարական վարչակարգը և նոր սահմանադրական կարգը հնարավորություն կտա կայսրության մահմեդական հպատակներին՝ ձայնի միջոցով տիրել իշխանությանը:

Այդ կապակցությամբ Բաքվում տպագրվող թուրքալեզու «Հայեթի» թերթը գրել է. «Ահա այդ ապագայի համար էլ մենք պիտի պատրաստունք կռուելու և այդ թող ամեն մի մահմեդական լաւ հասկանայ: Իսլամի ապա-

<sup>1170</sup> «Արշալոյս», հմ. 30, 5 հոկտեմբերի, Թիֆլիս, 1905:  
<sup>1171</sup> «Արշալոյս», հմ. 76, 31 դեկտեմբերի, Թիֆլիս, 1905:  
<sup>1172</sup> «Արշալոյս», հմ. 33, 8 հոկտեմբերի, Թիֆլիս, 1905:  
<sup>1173</sup> «Արշալոյս», հմ. 11, 11 սեպտեմբերի, Թիֆլիս, 1905:

գան պիտի ապահովուի միայն Իսլամի դրոշակի տակ: Մինչև մահմեդականութիւնը չդարձնենք մեր նշանաբանը և առաջնորդը՝ մեզ ստրկութիւնից ազատում չկայ:

Կասպից ծովի եզերքից Աստրախան, ծովի ափերից սկսած մինչև Ուրալ-Թուրղայի նահանգները նրանց բնակութեան տեղերն են, սրանք Խիվայի խանութեան կալմկների հետ ի միասին առնելով, լինելով, մի լեզու են խօսում: Եթէ մեզանում կրօնական կառավարութիւնը մի է, պետք է, որ մեր համախմբական ոյժն ևս մէկ լինի»<sup>1174</sup>:

Համախալամական զավթողական ծրագրերի իրագործման ճանապարհին ամենամեծ խոչընդոտը թուրքերը հայերին էին համարում, և պատահական չէ, որ 1905–1906 թթ. նրանք սրբազան պատերազմ էին հայտարարել քրիստոնյաներին:

1905 թ. Շուլավերում մոլլան իր աղոթքի խոսքում նշել է. «Կոտորեցէք հայերին, այդ պիղծ գեաւորներին: Ալլի թուրը արնաթաթախ իր դրնից (պատեանից) ինքն իրան դուրս է եկել մի թզաչափ. դա նշան է, որ հայերի բարըղը թամամել է, պետք է կոտորուին. մենք թուրքերս պետք է միահեծան տեր լինենք աշխարհին, իսկ բոլոր կրօնների մէջ մեր մահմեդական օրէնքը պետք է գլուխ բարձրացնի, թագաւորող լինի»<sup>1175</sup>:

Սուլթանական իշխանությունը ձգտում էր համախալամական շարժման քողի տակ թուլացնել նաև Պարսկաստանին և Ատրպատականի թրքոթյանը ներգրավել Այսրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին: Օգտվելով Պարսկաստանի թույլ վիճակից՝ Թուրքիայի աջակցությամբ Ռահիմ խան Չալաբեանին, Խոսրով խան Շահսևանին Արաքսի աջափնյակում 20–րդ դարի սկզբներին թուրքական պետություն էին ստեղծել և անարգել կողոպտում էին ինչպես Ղարաղաղի, Մուղանի դաշտավայրի և Ղարաբաղի հայկական գյուղերը, այնպես էլ՝ պարսկահպատակ բնակավայրերը:

1905 թ. հոկտեմբերին թուրքերից և քրդերից բաղկացած 200 հոգանոց մի ավազակախումբ, անցնելով Արաքսը, մինչև Շուշիի մատույցներն ավերեց հայկական բնակավայրերը<sup>1176</sup>:

Համախալամական շարժման շրջանակները մեծացնելու ձգտումներով Այսրկովկասից և Ատրպատականից թուրք գործակալները Պարսկաստանում սուտ լուր էին տարածում, թե իբր Շուշիում հայերը 20 պարսկահպատակ աշակերտներ են սպանել: Պարսից շահն այդ սուտը պարզելուց հետո գնացել էր Աստարա և տեղական իշխանություններին զգուշացրել. «Թէ

<sup>1174</sup> «Հայեթի», թուրքալեզու թերթ, հմ. 63, 11 սեպտեմբերի, Բաքու, 1905:  
<sup>1175</sup> «Արշալոյս», հմ. 51, 9 նոյեմբերի, Թիֆլիս, 1905:  
<sup>1176</sup> «Արշալոյս», հմ. 52, 15 նոյեմբերի, Թիֆլիս, 1905:

ամենաձանր պատժի կենթարկուի նա, ով կը փորձէ սպառնալ հայերին կամ անկարգութիւններ առաջ բերել՝ հայերին վնասելու նպատակով: Իմ կայսրութեան մէջ, – ասել է նա, – ես ամեննին չեմ ցանկանում, որ հայի մի մագին անգամ դիպչեն. ես չեմ ցանկանում, որ իմ երկիրն ևս դառնա թատերաբեմ այնպիսի վայրագ դէպքերի, ինչպէս դարձել է Անդրկովկասը»<sup>1177</sup>:

Պարսկաստանի հոգևոր և աշխարհիկ ղեկավարները, մինչև վերջ բացահայտելով Թուրքիայի կողմից նախաձեռնված համախալամական շարժման բուն նպատակը, անզիջում պայքարում էին դրա դեմ:

Այդ օրերին պարսիկ բարձրաստիճան հոգևորականներից մեկըն ասել է. «Պարսկաստանը անկախ երկիր է. մասնակցելով համախալամական շարժման, նա պիտի կորցնի իր անկախութիւնը, որովհետև համախալամական շարժումը կրօնական շարժում չէ, այլ քաղաքական շարժում և չի գտնուիլ իհարկէ մի հիմար մեր աշխարհում, որ ցանկանա իր հայրենիքի ազատութիւնը գոհ բերել իրան կրօնակից բայց ոչ դաւանակից մի կառավարութեան քաղաքական ձգտումներին: Ուժեղացել համախալամականութիւնը, նշանակում է ուժեղացնել Կ. Պոլսոյ Սուլթանի ոյժը, և նրան ուժեղացնել կրօնական աստառ կրող քաղաքականութեամբ, նշանակում է Պարսկաստանը քաղաքականապէս կործանել: Բացի այն, որ մասնակցելով համախալամական շարժման, մենք մեր քաղաքական անկախութիւնը կը կորցնենք, այլ և՛ կրօնապէս մենք կը լինենք Սուլթանի և նրա պալատականների ստրուկները, ինչպէս է թուրքական ամբողջ հոգևորականութիւնը»<sup>1178</sup>:

Թուրքիայում, ինչպէս պետական մյուս կառույցները, այնպէս էլ կրօնական գործիչները գործում էին միայն ու միայն սուլթանի և կառավարության հրահանգներով: Հայկական կոտորածների ժամանակ Շեյխ-ուլ-իսլամի տված մի ֆեյթվան (վճիռ) դուր չէր եկել սուլթանին, և վերջինս իսկույն պաշտոնազրկել է հոգևոր առաջնորդին<sup>1179</sup>:

1905 թ. օգոստոսի 16–20–ը Շուշիի ընդհարումների ժամանակ հայերի հաղթանակը կատարյալ չէր լինի, եթե ժամանակին Վարդանի հրահանգով չփակվեր Ասկերանի կիրճը:

1905 թ. օգոստոսի 17–ին Սեյիդու գյուղից մի քանի հարյուր զինված թուրքեր Շուշիի իրենց ցեղակիցներին օգնելու նպատակով փորձում են անցնել Ասկերանով: Սակայն Համազասպի գլխավորությամբ հայ մարտիկների հարվածների տակ ձողալու են: Նույն օրը թուրքերի մի քանի փորձեր

<sup>1177</sup> «Արշալոյս», հմ. 8, 8 սեպտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1178</sup> «Արշալոյս», հմ. 37, 13 հոկտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1179</sup> Նույն տեղում:

ևս ձախողվեցին<sup>1180</sup>: «... այնքան զօրեղ է լինում հայերի ինքնապաշտպանութիւնը և այնպիսի մեծ աւեր են սպառում նրանց գնդակները, որ ժամը 10–ին թուրքերը հաշտության առաջարկներ են անում», – օգոստոսի 17–ի կոիվների մասին գրել է «Լումայ» ամսագիրը<sup>1181</sup>:

Հարվածի թափը մեծացնելու նպատակով Արցախի հարակից մահմեդական բնակավայրերից մարտական նոր ուժեր են հավաքագրվում: Օգոստոսի 18–ին նրանք հավաքվում են Թարթառում և մզկիթում խորհրդակցելուց հետո շարժվում են դեպի Շուշի<sup>1182</sup>:

Աղղամում նրանց են միանում Սեյիդուից, Մարգուլուից, Շեյխից հավաքված թուրք հեծյալները և երեք՝ Խրամորթ, Խանաբադ ու Ասկերանի ուղղություններով փորձում ձեռքել հայկական բնագծերը: Մի քանի տասնյակ հայ մարտիկներ ջախջախիչ հարվածներ հասցրին թշնամուն: Թուրքերը, բազմաթիվ զոհեր տալով, նահանջեցին և ապաստանեցին Աղղամում<sup>1183</sup>:

1905 թ. օգոստոսի 19–ի ժամը 11–ին թուրքական մեկ այլ հրոսակախումբ Ադիգյոզալ բեկ Ադիգյոզալովի գլխավորությամբ նորից շարժվեց Ասկերանի ուղղությամբ:

Մարտերի մասնակից Ա. Վերդյանն իր հուշերում գրել է. «... թուրք յայտնի աւազակապետ Ադիգեօզալ Բեկը, որ իր 150 ձիավորներով թուրքերին օգնութեան հասաւ և երբ փորձեց մօտենալ մեր դիրքերին, մենք միահամուռ յարձակումով յետ քշեցինք նրան և հալածեցինք մեր սահմաններից դուրս»<sup>1184</sup>:

ՀՅԴ «Ապառաժ»-ի ԿԿ–ի տեղեկագրերից մեկում ընթերցում ենք. «Ասկերանում Համազասպի, Իսրայէլի, Խէչոյի, Արամայիսի, Գրիգորի, Ալեքսանի ղեկավարութեամբ խմբերը ամսի (օգոստոս – Վ. Բ.) 20–ից սկսած 4 գիշերները կռուի են բռնում թուրքերի հետ, որոնք մեծ բազմութեամբ աշխատում են անցնել Ասկերանից դեպի Շուշի»<sup>1185</sup>:

Հայ ինքնապաշտպանական ջոկատները, Ասկերանի կիրճն անառիկ պահելով, ոչ միայն վերահաս աղետից փրկեցին Շուշիի հայությանը, այլ նաև նախկինում քաղաք մտած, ժողովրդին թալանած և վերադարձի ճանակ

<sup>1180</sup> Արամայիս, Մի քանի գլուխ հայ-թուրքական ընդհարումներից, մասն Ա., Ի. Ասկերան, Ի. Վարանդայ-Խաչէն, Թիֆլիս, 1907, էջ 7:

<sup>1181</sup> Արինալից օրերը Կովկասում, «Լումայ», ամսագիր, հմ. 6–7, օգոստոս–սեպտեմբեր, Թիֆլիս, 1905, էջ 161:

<sup>1182</sup> Ընդհարումները Ջիվանշիրի գաւառում, «Դրօշակ», հմ. 11, Ժնեւ, 1905, էջ 171:

<sup>1183</sup> Արամայիս, նշվ. աշխ., էջ 10:

<sup>1184</sup> Վերդեան Ա., Յուշեր, Գրի առաւ՝ Հայկ Աճէմեան, Թեհրան, 1959, էջ 29:

<sup>1185</sup> Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանոթագրութիւններ Ե. Փամպուքեանի, Կ. Ե, Պեյրուք, 2007, էջ 308:

նապարհը բռնած ավազակախմբերից խլեցին գողոնը: Ասկերանի մարտերին մասնակից Արամայիսն իրավացիորեն նկատել է. «... Վարանդայի, Խաչենի ու մասնաւորապէս Շուշուայ համար՝ Ասկերանը նշանաւոր դեր է խաղացել. նա մի կատարեալ Սախկալ-թութան»<sup>1186</sup> է եղել թուրք հրոսակախմբերի համար հայ-թրքական ընդհարումների սկզբից մինչև վերջը»<sup>1187</sup>:

Ասկերանի կիրճում «թուրքերի կորուստը շատ մեծ էր, - գրել է Արամայիսը, - մեծ էր նրանով, որ շատ նշանաւոր բեկեր ևս այնտեղ իրանց համար գերեզման գտան և այլևս ասակախմբեր կազմել ու հայերի տները քանդել չէին կարող. մենակ Ափաթուռից 3 նշանաւոր բեկեր էին սպանել, որոնցից մէկը Խազալինսկիյ յայտնի տոհմից էր: Մեր կորուստները միայն մեր արձակած փամփուշտներն էին և միայն դժգոհում էինք, որ զինւորները շուտ հասան ու չը թողեցին, որ զէնքերը հաւաքենք»<sup>1188</sup>:

Շուշի քաղաքի և ամբողջ գավառի հայությունը 1905 թ. օգոստոսի 21-ից մինչև 1906 թ. հուլիս-օգոստոսյան բախումները, հարաբերական անդորրի պայմաններում, ապրում էր խռովահույզ ժամանակներ:

Թուրքերը չհանգստանալով՝ նորից նախապատրաստվում էին նոր ընդհարումների:

1905 թ. սեպտեմբերի սկզբներին Աղղամում հայտնաբերում և առգրավում են Թափալը գյուղի բեկի նամակը, որով նա Շուշիի թուրքերին խորհուրդ էր տալիս կանանց և երեխաներին տեղափոխել Արաքսի ու Կուրի

ափերը և նորից հարձակում գործել հայկական քաղաքամասի վրա ու կոտորել բոլորին»<sup>1189</sup>:

Շուշիի թուրքերը շարունակում են զենք ստանալ Պարսկաստանից և Բաթումի վրայով՝ Թուրքիայից: Մեն հատուկ շոգենավ Թուրքիայից զենք էր տեղափոխում Բաթում և Անապա: Թուրք մուլաները 1905 թ. անվանել են «չափաղուլի», այսինքն կողոպուտի և ավազակության տարի»<sup>1190</sup>: «Արշալոյս»-ի թղթակիցը 1905 թ. սեպտեմբերի 6-ին գրել է. «Շուշուց Ելախ, Ելախից Շուշի գնացող-եկողները թալանի են ենթարկում, ճանապարհորդները կողոպտում, վերջիններից եղել են և միանգամայն անհետացողներ ...: Ժողովուրդը սարսափի մէջ է, չէ ստացում դրսից ոչ աղի, ոչ նաւթ, ոչ շաքար և ոչ մի կենսական մթերքը, եղած պաշարը վերջանալու վրայ է»<sup>1191</sup>:

Թուրք ավազակախմբերի կողմից Շուշիի շրջակայքում հայերի սպանությունը սովորական երևոյթ էր դարձել:

1905 թ. հոկտեմբերի 20-ին «Պեխի աղբյուրի» (Իսահակի աղբյուր - Վ. Բ.) մոտ հինգ հոգուց քաղկացած թուրքական ավազակախումբը սպանում է ցախ հավաքող մի հայի և նրա ութամյա որդուն, իսկ մեկ այլ քաղաքացու՝ Հարությունին՝ վիրավորում»<sup>1192</sup>:

Հոկտեմբերի 22-ին շուշեցի Արղուլլահ Բաղիր Արաբին և Կուրբան Ասադին քաղաքի մոտ մի հայ պատանու սպանեցին»<sup>1193</sup>:

1905 թ. նոյեմբերի 28-ին Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը հեռագիր է ուղարկում փոխարքային, որտեղ ներկայացնում է Շուշիի ծանր կացությունը: Հեռագրի մեջ մասնավորապես ասված էր. «Շաքաթ օրը սպանեցին մի հայ հովիւ քաղաքի մոտերքում, տարան նախիրը, իսկ երէկ, սպանեցին քաղաքի պատերի մոտ մի հայի, որի ականջներն ու քիթը կտրեցին և յափշտակեցին նրա երկու ընկերներին, որոնք նոյնպէս երևի սպանուած կը լինին: Այսպիսի երևոյթները կրկնվում են ամեն օր:

Գաւառներում տեղի են ունենում խմբական յարձակումներ հայ գիւղերի վրայ (Դուլանլար, Խրամորթ, Խանաբաղ և այլն): Ամբողջ գաւառում փոստային խճուղիները փակել են թուրքերը: ... Քաղաք չեն մտնում կենսական մթերքները: Հայերի պաշարները վերջացել են: Քաղաքին սով, ցուրտ և հիւանդութիւն է սպառնում, չլիշելով որ իրաքանչիւր բոլակ կարող է սկսել կոտորած և հրդեհը»<sup>1194</sup>:

<sup>1186</sup> «Սախկալ-թութան» ծորը գտնվում է Որոտանի ակունքի մոտ: Տեղանքի անվան ծագումը կապված է հետևյալ ավանդազրույցի հետ. «Տաթևից Հալիծոր գնալիս Դավիթ-բեկը պատահում է Ֆաթալի-խանի օգնականին: Սա ծաղրելով Դավիթին, ասում է. «Դավիթ-բեկ մորուքդ բռնիր, նամազդ արա, վերջդ եկել է»: Դավիթ-բեկը պատասխանում է. «Մենք այսպիսի տեղերում նամազ չենք անում, ոչ էլ մորուք բռնում, մենք թրի կոթ ենք բռնում, տղամարդ ես դիմացիր»: Ասում է, թուրք քաշում, վրա է տալիս խանի ծիավորներին, բոլորին կոտորում է, և դառնում խանին, ասում է. «Մորուքդ բռնիր, այ շուն, նամազդ արա, վերջդ եկել է, և թոց-նելով նրա գլուխը նետում է Որոտան գետի մեջ: Դրանից հետո այդ ծորի անունը դնում են Սախկալ-թութան (Մորուսակալ)»: Տես՝ Ղանայյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 44-45: Այս ավանդության հիման վրա էլ հետագա դարերում վտանգավոր և դժվարանցանելի կիճերին ու ճորերին փոխաբերական իմաստով նույնպես տրվել է «Սախկալ-թութան» անունը: Տես՝ Ստեփանյան Գ., նշվ. աշխ., էջ 108:

<sup>1187</sup> Գնթունի, Յիշողութիւններ մօտիկ անցեալից, պր. առաջին (Ասկերան), Թիֆլիս, 1907, էջ 5:

<sup>1188</sup> Հայ-թաթարական ընդհարումները Անդրկովկասում, «Դրօշակ», հմ. 13, Ժնեւ, 1905, էջ 204:

<sup>1189</sup> «Արշալոյս», հմ. 25, 29 սեպտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1190</sup> Նույն տեղում:

<sup>1191</sup> «Արշալոյս», հմ. 9, 9 սեպտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1192</sup> «Արշալոյս», հմ. 44, 1 նոյեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1193</sup> «Արշալոյս», հմ. 39, 25 հոկտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1194</sup> «Արշալոյս», հմ. 68, 3 դեկտեմբերի, Թիֆլիս, 1905:

Շուշիի հայությանն անհուսության մատնելու և վերջնականապես կոտրելու նպատակով թուրքերը փակում են Շուշի-Եվլախ և Շուշի-Գորիս ճանապարհները: Հայկական բնակավայրերը շրջափակելու և ժողովրդին սովի մատնելու գործն առավել ջանադրաբար էին իրականացնում Աղդամի, Ավդալի, Գյուլափուլի թուրքերը: Իրենց այդ սև գործը վերոհիշյալ գյուղերի թուրքերը «պատվով» իրականացրին նաև 1988-1991 թթ. արցախահայության ազատագրական պայքարի առաջին փուլում: Բարեբախտաբար, հայ ազատամարտիկներին հաջողվեց վերացնել հայոց հողի վրա եղած այդ թարախային կետերը՝ ապահովելով Արցախի հայության անվտանգությունը:

Ստեղծված ծանր կացությունը ներկայացնելու և միջոցներ ձեռնարկելու համար 1905 թ. նոյեմբերի 29-ին քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնազարյանը հեռագիր է ուղարկում փոխարքային, որի մեջ ասված է. «Քաղաքի դրուսիները վատ է. ամեն օր սպանություն կայ. խմբական յարձակումներ են տեղի ունեցել Խանաբադ և Խրամորթ հայ գիւղերի վրայ: Խճուղիները Եվախից Շուշի և Գորիս՝ աւազակային խմբերի ձեռքին է»<sup>1195</sup>:

1905 թ. դեկտեմբերին Շուշիից մի պատվիրակություն է մեկնում Թիֆլիս: Դեկտեմբերի 3-ին նրանք հանդիպում են փոխարքայի պաշտոնակատար գեներալ Մալամային: Շուշեցիները գեներալին խնդրեցին զինվորական ուժով ապահովել ճանապարհների անվտանգությունը: Միաժամանակ առաջարկեցին քաղաքապետարանի հայ և թուրք պաշտոնյաներին փոխարինել չեզոք ազգերի ներկայացուցիչներով<sup>1196</sup>:

1905 թ. դեկտեմբերի 31-ին մի խումբ շուշեցիներ դիմում են հղում կոմսուհի Վորոնցով Դաշկովին, որի մեջ նրանք պատմում են, թե ինչպես են թուրքերից և քրդերից բաղկացած ավազակախմբերը սպանում անզեն հայերին: Նրանց հավաստմամբ այդ ամենին գումարվել էր ցուրտն ու սովը<sup>1197</sup>:

Փոխարքայի մոտ հերթական հանդիպումը տեղի ունեցավ 1906 թ. մարտի 4-ին: Շուշեցիների ներկայացուցիչ Լ. Ղուլյանն ասել է. «Եվախից մինչև Աղդամ (60 վերստ) թուրքերը փակեցին արդեն յուլիսից, որ և տևեց ամբողջ 4-5 ամիս: Այդ ճամբին ճամբորդ հայերը ենթարկվում էին կողոպուտի և սպանության: Շուշին մնաց առանց հաղորդակցութեան: Երկաթուղու Եվախ կայարանում թուրքերը կողոպտում են ամեն ապրանք: ... Բանը այնտեղ հասաւ, որ Շուշին սկսեց մթերքներ ստանալ փոստով՝ աղ, շաքար, ալիւր և այլն»<sup>1198</sup>: Մեկ այլ ներկայացուցիչ ասում է, որ Աղդամում հայ ճամ-

<sup>1195</sup> «Արշալոյս», հմ. 66, 1 դեկտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1196</sup> «Արշալոյս», հմ. 69, 4 դեկտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1197</sup> «Արշալոյս», հմ. 4, 7 հունիսի, Թիֆլիս, 1906:

<sup>1198</sup> «Արշալոյս», հմ. 49, 5 մարտի, Թիֆլիս, 1906:

փորդներին կողոպտում, գերում և սպանում են: Պատգամավորներից մեկը՝ Իշխանյան Ջավադ Բեկը, նշել է, որ Շուշիի վնասը այդ ամիսներին կազմել է 8 միլիոն ռուբլի, և քաղաքը «2 ու կես ամիս քաղցում է»<sup>1199</sup>:

Չնայած հայերի խնդրանքներին՝ ռուսական իշխանություններն այդպես էլ ոչ միայն չօգնեցին, այլև ամեն կերպ սկսեցին հովանավորել թուրքերին: 1905 թ. աշնանը Շուշիում տեր ու տնօրինություն էր անում գեներալ Նակաշիձեի քրոջ որդին՝ քեռուց ոչ պակաս հայատյաց գեներալ Տակայաշվիլին: Նա ոչ միայն զինաթափում է հայկական ջոկատները, այլ նաև Շուշիի գավառի բարձր պաշտոնները բաժանում թուրքերին: Տակայաշվիլին Շուշիի գավառապետ Պիվավարովին ազատեց աշխատանքից և նրա տեղը նշանակեց հայերի ջարդերի կազմակերպիչ Սելիմ բեկ Ռուստամբեկովին: Եվախ-Շուշի ճանապարհի հսկողությունը նա հանձնում է հայտնի ավազակապետ Աբաս-բեկ Վեզիրովին<sup>1200</sup>: Վերջինիս թողտվությամբ ռուս կոզակները Եվախ Շուշի խճուղու յուրաքանչյուր 5 վերստ ճանապարհի համար հայ ուղևորներից 3-5 ռուբլի փող էին պահանջում<sup>1201</sup>: Տակայաշվիլին 1905 թ. օգոստոսի 25-ին ձերբակալել տվեց շուշեցի երեք նշանավոր հայերի՝ բժիշկ Աթաբեկյանին, Ռ. Յուզբաշյանին և Յ. Մելիքյանին: Ցարական գեներալները թուրքերի մոտ հայտնված հայ գերիներին ազատելու համար փրկագին են պահանջում: Տակայաշվիլու չարագործությունները կանխելու համար Շուշիի հայ քաղաքացիները փոխարքայից խնդրում են նրան պաշտոնազրկել և հեռացնել հայկական երկրամասից:

Ի պաշտպանություն Տակայաշվիլու՝ թուրքերը նամակով 1905 թ. նոյեմբերի 11-ին դիմում են Վորոնցով-Դաշկովին: Նամակի մեջ մասնավորապես ասված էր. «Շուշի քաղաքի թուրք հասարակութեան պատգամաւորները, 40 հոգուց ժողովի մեջ յայտնելով լիակատար վստահութիւն և խորին համակրութիւն գեն. Տակայաշվիլու կարգադրութիւններին ազգաբնակութիւնը խաղաղացնելու համար, ի նկատի առնելով նրա կատարեալ կոռւքտութիւնը, ամենայարգոյաբար խնդրում ենք Ձերդ Պայծառափայլութեան չզրկել ազգաբնակութիւնը այդպիսի գործիչից»<sup>1202</sup>: Այդ օրերին ռուսալեզու պաշտոնական մի քանի թերթեր լուտանքներ էին թափում հայերի զլխին, արդարացնում թուրքերին:

1905 թ. Շուշիի օգոստոսյան դեպքերի հետ կապված՝ «Русские ведомости» թերթը գրել է. «Բանից դուրս է գալիս, որ այն բոլոր արիւնալի սար-

<sup>1199</sup> Նույն տեղում:

<sup>1200</sup> Գանձակի նահանգում, «Դրօշակ», հմ. 11, Ժնեւ, 1905, էջ 173:

<sup>1201</sup> «Արշալոյս», հմ. 30, 5 հոկտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1202</sup> «Արշալոյս», հմ. 54, 12 նոյեմբերի, Թիֆլիս, 1905:

սափների հեղինակը հայերն են, ... իսկ տուժող կողմը հանդիսանում են թուրքերը ...»<sup>1203</sup>:

Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ կառավարության դիրքորոշման և կողմանակալ մոտեցումներին է անդրադարձել ռուսալեզու «Сын Отечества» թերթը: Անդրադառնալով 1905 թ. Շուշիի և Գորիսի հայ-թաթարական ընդհարումներին, վերոհիշյալ թերթը գրել է. «Փոխարքայի օգնական Սուլթան Կրիմ-Գիրեյը գրել է նահանգապետներին, որ ձեռք չառնեն վարչական խիստ միջոցներ և չզրգոնեն թուրքերին: Հայտնի ավագակ Մեշեհի Քյազիմ օղլին, որ սարսափ էր տարածում Գանձակի և Ղազախի գավառներում իր ավագակություններով, նշանակված է պրիստավ Գանձակի նահանգապետի կարգադրությամբ, համաձայն Սուլթան Կրիմ-Գիրեյի նամակի: Սուլթան Կրիմ-Գիրեյը հանդիպեց ավագակապետ Դալի-Ալիի հետ, որից հետո թուրքերը ավելի ակտիվացան: Ընդհանրապես տեղական իշխանությունների բռնած դիրքը թուրք տարրերի նկատմամբ երկրի համար կործանիչ հետևանքներ է ունենում»<sup>1204</sup>: Նույն թերթը մեկ այլ համարում անթաքույց ուղղակի ներկայացնում է կառավարության գործելավճճը. «Վատթար վարչությունը, զորքը, կողք-կողքի կանգնած թաթարների հետ հայերի դեմ են կռվում: Ուրանալ այս իրողությունը հազիվ թե կարելի է»<sup>1205</sup>:

1906 թ. հունվարի սկզբներին գնդապետ Օզերովսկին, կառավարական ուժերի գլուխ անցած, Ասկերանի կիրճով թուրքերին ուղեկցեց ու պարենի մի մեծ խմբաքանակ հասցրեց Շուշիի մահմեդականներին: Օզերովսկին իջևանել էր թուրքերի թաղամասում և մերժել Արցախի թեմի առաջնորդի խնդրանքը՝ հանդիպելու և Շուշիի հայության անմխիթար վիճակը քննարկելու: Երբ գնդապետ Օզերովսկին նորից վերադարձավ Աղդամ, նույն օրը վերոհիշյալ բնակավայրից մի քանի հազար հոգուց բաղկացած զինված թուրքերը շարժվեցին դեպի Ասկերանի կիրճը: Հայ պաշտպանների հերոսության շնորհիվ թուրքերը հետ շարժվեցին ելման կետ<sup>1206</sup>: Օզերովսկին Մալիբեյլուի թուրքերի կողմից Շուշիի հայերից գողացած անասունները փոխանակ վերադարձնի տերերին, տալիս է քաղաքի մահմեդականներին: Իսկ գեներալ Գոլոշչակովը 60 ֆուրգոն մթերք է հասցնում Շուշիի թուրքերին: Հայերի պահանջով կատարված խուզարկությունների արդյունքում ալյուրի պարկերից հանել են երեք գծանի 8 հատ հրացան և 2000 փամփուշտ<sup>1207</sup>:

<sup>1203</sup> «Արշալոյս», հմ. 8, 8 սեպտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1204</sup> «Сын Отечества», но. 284, Петербург, 1905.

<sup>1205</sup> «Сын Отечества», но. 218, Петербург, 1905.

<sup>1206</sup> «Արշալոյս», հմ. 5, 11 հունվարի, Թիֆլիս, 1906:

<sup>1207</sup> «Արշալոյս», հմ. 16, 24 հունվարի, Թիֆլիս, 1906:

1906 թ. հունվարի 6-ին տեղացի 2000 թուրքեր Պարսկաստանից օգնության հասած 1000 զինյալների հետ միասին շարժվեցին դեպի Արանգամին, Նախիջևանիկ և Փիրջամալ հայկական գյուղերը: Միայն դաշնակցության կազմակերպած ջոկատների հարվածների տակ թշնամին նահանջեց: 1905 թ. վերջերին և 1906 թ. սկզբներին, օգտվելով ցարական իշխանությունների հովանավորությունից, բազմահազարանոց թուրքական խաժամուժը Շուշիի գավառում՝ Նաջաֆ-Կուլի աղայի, Ջանգեզուրի գավառում՝ Իլդրիմ բեկի և Ջեբրայիլի գավառում՝ Հյուսեյն աղայի գլխավորությամբ փորձում էին ոչնչացնել հայությանը<sup>1208</sup>:

Այդ օրհասական օրերին, կառավարությունից ոչ մի օգնություն չստանալով, Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը փորձում է ստանալ Մայր Աթոռի աջակցությունը:

1906 թ. հունվարի 11-ին նա Գարեգին արքեպիսկոպոսին խնդրագիր է ուղարկում, որտեղ ասված էր. «Մի վաճառականի յանձնեցեք վերադիր վճարով փոստով ուղարկեն իմ հասցեին կէս փութ կատաֆիլի մոմ, մէկ փութ շաքար և երեք ֆունտ թէյ, եթէ ներելի լինէր, հաց էլ կը խընդրէի: Այժմ քաղաքը մթութեան մէջ է. ոչ նաւթ կայ և ոչ մոմ. մի քանի օր առաջ նաւթի ֆունտը 50 կոպէկ էր վաճառում, մոմինը 80 կոպէկ, շաքարի ֆունտը մի ռուբլի, բայց այժմ այն էլ վերջացաւ:

Եթէ իմ դրութիւնն այս է, երևակայեցեք աղքատների դրութիւնը. արդէն սկսել է կորել հացի գործածութիւնը, բայց այս էլ շուտով կը սպառուի:

Հաղորդակցութեան ներկայ դրութիւնը եթէ չփոխի, սովամահ լինողներ շատ կըլինեն»<sup>1209</sup>:

Շուշիի զինվորական մարմինը, տեսնելով, որ իշխանությունները գործնական քայլերի չեն դիմում թուրքերին զսպելու, քաղաքի պաշարված հայությանը օգնելու, որոշում է Շուշիի թուրքական թաղամասին սովամահության սպառնալիքով հարկադրել թուրք պարագլուխներին՝ դադարեցնել հայկական գյուղերի վրա հարձակումները և ճամփորդներին թալանելն ու սպանելը<sup>1210</sup>:

Հայերի ծրագրերը ձախողելու նպատակով 1906 թ. հունվարի 3-ին կառավարական զորքերը թնդանոթներից ոմբակոծելով Ասկերանի և Շուշիի մերձակա հայկական գյուղերը՝ բացում են քաղաք տանող ճանապարհը<sup>1211</sup>: Հայկական ինքնապաշտպանական ջոկատներն ստիպված էին ժամանա-

<sup>1208</sup> «Արշալոյս», հմ. 5, 11 հունվարի, Թիֆլիս, 1906:

<sup>1209</sup> «Արշալոյս», հմ. 12, 19 հունվարի, Թիֆլիս, 1906:

<sup>1210</sup> Արամայիս, Մի քանի գլուխ հայ-թաթարական ընդհարումներից, մասն Ա., էջ 55:

<sup>1211</sup> «Արշալոյս», հմ. 5, 11 հունվարի, Թիֆլիս, 1906:

կավորապես հեռանալ Ասկերանի կիրճից: Մի քանի օր անց՝ 1906 թ. հունվարի 16-ին, գեներալ Գոլոշչակովի գլխավորությամբ կառավարական մեկ այլ զորագունդ Ասկերանի կիրճով հասնում է Շուշի՝ ճանապարհին ուժահարելով Խրամորթ, Խանաբադ, Քյաթուկ, Ղլիշբադ, Դաշուշեն և Շոշ գյուղերը<sup>1212</sup>:

Գեներալի հրամանով զենք գտնելու նպատակով սկսեցին խուզարկություններ կատարել հայկական գյուղերում և Շուշի քաղաքում: Կանոնավոր զորքերը զենք որոնելու պատրվակով թալանում էին հայկական բնակավայրերը:

Գեներալի հրամանով ոչ միայն սկսեցին զինաթափել հայերին, այլ նաև ձերբակալում էին ինքնապաշտպանության կազմակերպիչներին: Գոլոշչակովը բանտարկել տվեց բժիշկ Բահաթրյանին և Գերասիմ Մելիք Շահնազարյանին ու որոշեց նրանց աքսորել Օրենբուրգի մարզ<sup>1213</sup>: Համաժողովրդական դժգոհությունները գեներալին ստիպեցին հրաժարվել այդ որոշումից:

Հասարակական կարծիք ձևավորելու նպատակով Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը 1905 թ. մարտի 29-ին հեռագիր է ուղարկում «Արշալոյս» թերթի խմբագրությանը՝ խնդրելով այն զետեղել թերթի էջերում: Հեռագրի մեջ ասված էր. «Ամենայն օր հայ գիւղերից քաղաք են գալիս վշտահար ու անբեր կենսական հայեր և հաղորդում սարսափների տեղեկությունները: Խստությունները, բարբարոսությունները կոզակների կողմից շարունակում են Երմոլաեի հաշտարար միջնորդի աչքի առաջ: Այս ցուրտ ձմռան, առանց ձիւնի, ցեխին նայելու, կանայք ու երեխաները, զօրքը գալուն պէ փախչում ապաստանում են անտառները, սարերն ու ձորերը: Գիւղացիք մահը կեանքից գերադաս են համարում չկարողանալով տանել անպատուությունը: Ինչպէս մորեխը լափում, փչացնում է ցանքսերը, այնպէս էլ կոզակները ոչնչացնում են գիւղացիների ամբողջ գոյքը: Կոզակները թալանում, կողոպտում, այրում են հայերի՝ դարերի ընթացքում արհեստներով ձեռք բերած ստացածքը: Ունևոր մարդիկ մնացել են առանց ծածկի, առանց մի կտոր հացի ու հագուստի: Որդու աչքի առաջ բռնաբարում են մօրը, եղբոր աչքի առաջ՝ քրօջը: Սօս գիւղում մի տղայ փորձել է պաշտպանել մօրը, երբ նրան բռնաբարելիս են եղել. կոզակները այնպէս անաստուած ծեծել են թշուառին, որ երեք ժամից մեռել է: Այդ այն գիւղն է, որ պաշտպանել ու յետ է մղել 3000 թուրք խուժանի յարձակումը: Մի խօսքով գիւղերում ամեն ինչ աներված, կողոպտած է. հայերը կորցրել են պատիւ, փող, հացի պա-

շար, հագուստ, տնային իրեղեններ: Կատարվածը յիշեցնում է Սուլթանի կառավարությունը: Հայերի դրությունը անտանելի է: Հաւատացած ենք, որ մեծ թագաւորը և բարի ու ողորմած փոխարքան առանձին ուշադրութիւն կը դարձնեն»<sup>1214</sup>:

Փոխարքային ներկայացնելու նպատակով Աշոտ եպիսկոպոսը մեկ այլ հեռագիր էլ ուղարկում է հայ պատգամավորներին: Հեռագրում ասված էր. «Կանանց, նոյն իսկ պառանների և աղջիկների բռնաբարութիւնը տեղի է ունեցել Թաղում, Ազոխում և Սօսում:

Մարդկանց տանջելը տեղի է ունեցել Թաղ, Տօղ, Ազօխ, Շեխեր, Սօս, Գիւնէյ Ճարտար, Գիւղէլու և Չարաղ գիւղերում: Մեռել է մեկը ...

Գիւղերը ատերած են բառիս բուն նշանակութեամբ: Աներել, կողոպտել են կոզակների կողմից, որոնք կատարեալ ազատութիւն էին ստացել իրանց ղեկավարներից, մանաւանդ հաշտարար միջնորդ Երմոլաեի կողմից, գաւառապետ Ֆրէյլիխից, հարիւրակի գլխաւոր Հաջիեվից: Կանանց գլուխներից պոկում էին գլխի զարդերը, վերցնում մետաքսի և բրդի ձոթեր, գորգեր, իսկ ծանր և սակաւագին իրերը ոչնչացւում էին – կոտրատում ու այրում:

Առհասարակ կոզակները բոլոր գիւղերում ծեծում էին և դուրս քշում ժողովրդին, որպէսզի ազատօրէն օգտուեն ուրիշի ստացածքից: Տորենն ու գարին հանում էին շտեմարաններից, մի մասը տալիս էին ձիւններին, միւսները ոչնչացնում էին, զրկելով ժողովրդին հացի պաշարներից, կոտորում էին տաւարը, հորթերը, ոչխարները: Կոտրատում էին արաղով և գինով լի տակառները: Գիւղացիները զրկեցին իրանց բոլոր ունեցածից: Այժմ նրանք թափառում են լեռներում, անտառներում, վախենալով վերադառնալ իրանց բնակարանները, որովհետև մի և նոյն գիւղը ենթարկւում է նորանոր այցելումների, թէև շատերը ազատ չմնացին բռնաբարութիւնից նոյն իսկ անտառում:

Ջահաթաղ, Թաղ, Տօղ և Ճարտար գիւղերում ուժակոծեցին տները թնդանոթներով:

Դրագունները Տօղում հրդեհեցին տները, գոյքը, երկիւղից եղել են երեխաների մահուան դէպքեր, կանանց վիժումներ, խելագարութիւններ: Բոլոր գիւղերում խլում էին գէնքերը, ամեն մի տնից պահանջում էին 5 ռուբլի տուգանք: Բնակիչները կատարում էին անխօս, չնայելով, որ բոլոր գիւղերում հայ պատելիները և հոգևորականները ընդառաջ էին գնում աղ ու հացով, պաշտօնեաները չէին ընդունում: Տօղում նույնիսկ հրամայեցին կոզակներին գանակոծել նրանց: Հասարակութիւնը ճաշ էր պատրաստել զօրքի և պաշտօնեաների համար, բայց հաշտարար միջնորդ Երմոլաեվը, որ գործի

<sup>1212</sup> «Արշալոյս», հմ. 10, 17 հունվարի, հմ. 12, 19 հունվարի, Թիֆլիս, 1906:

<sup>1213</sup> Հայ-թուրքական ընդհարումները, «Դրօշակ», հմ. 3, Ժնեւ, 1906, էջ 38:

<sup>1214</sup> «Արշալոյս», հմ. 69, 30 մարտի, Թիֆլիս, 1906:

ղեկավարն էր և թշնամաբար էր տրամադրված դեպի հայերը, չընդունեց ճաշը, այլ խնճոյք սարքեցին տեղական Ասլան-բեգ Մելիք-Ասլանովի մոտ, որը Մինքենդ գիւղը անբող պաշտոնաթող ոստիկանական պրիստալ յայտնի Սաղըդ-բեգ Մելիք-Ասլանովի եղբայրն է: Ճաշից յետոյ Երմուլանվի և գորախմբի գլխավոր Հաջիեվի ղեկավարութեամբ սկսեցին իրանց գազանութիւնները: Ներս խուժեցին գիւղի ամենայարգի ու համեստ՝ ամենահարուստ վաճառական Յարութին Մուսայելեանի տունը, յափշտակեցին արժէքաւոր գոյքը, ապա հրդոհեցին տունն ու մնացած գոյքը: Ներկայ գտնուող վեց տնատէրերից մեկը, Բաբա Դովլաթեանը աղերսում էր թոյլ տալ հանգեցնելու կրակը և այդ բանի համար կոզակները ձգում են նրան բոցերի մէջ: Գիւղացիները հագի հագ կարողացան ազատել Թաղ գիւղում 8 տուն: Կանայք փակեցին նկուղներում: Կոզակները իմացան այդ բանը, կտորեցին դռները, ներս մտան և ամենաանգութ կերպով բռնաբարեցին»<sup>1215</sup>:

Ջորքերի կատարած ոճրագործությունների մասին 1906 թ. մարտի 28-ին Շուշի քաղաքի հայ կանայք հեռագրով տեղյակ պահեցին կայսրուհուն: Հեռագրում մասնավորապես ասված էր. «Մի ամբողջ տարւայ հայ-թուրքական կոտորածի արիւնահեղ սարսափներից յետոյ. մեզ հայերիս վրա պայթեց մի նոր և անելի ահեղ արհաւիրք, որի նմանը մեր պատմութիւնը չէ յիշում նոյն իսկ մահմեդական տիրապետութեան ժամանակներից: Մեր գաւառն է ուղարկած կոզակների թուրքիկ խումբը իբրև թէ հայերին և թուրքերին խաղաղեցնելու ...:

Այդ գորախումբը ... գաւառի խաղաղ հայ ազգաբնակչութեան վրա այնպիսի սարսափելի բաներ է գործադրում, որոնց նկարագրելը մարդու երակների մէջ արին է սառեցնում: ... Թուրքերի ձեռքից ընկած զոհերի դեռ ևս թարմ գերեզմաններին կից անելանում են նորերը կոզակների շնորհիւ: ... Բայց որ ամենասարսափելին է և որ կարող է վրդովեցնել խորապէս ամեն մի կնոջ, դա այն է, որ պղծում է ամեն մի կնոջ համար ամենանւիրական սրբութիւնը, նրա կուսութիւնը: Իրենց ամուսինների, եղբայրների և հայրերի աչքի առաջ բռնաբարում են կանայք, քոյրերը և աղջիկները: Չեն խնայում նոյն իսկ երկունքով բռնած կանանց անկողինները»<sup>1216</sup>:

«... գաւառապետը և հաշտարար միջնորդը հրամայեցին թուրքերին ըստ իրանց հայեցողութեան տանել ուզած ապրանքը հայերից: Գիւղացիները գրկելով ամեն ինչից, այժմ գտնուում են ամենաողբալի դրութեան մէջ. Լէնկթեմուրի, Չինգիսխանի, Շահ-Աբրասի ժամանակներում, նոյն իսկ տեղի չեն ունեցել այնպիսի դէպքեր, որոնք կատարուում են քրիստոնեայ պե-

<sup>1215</sup> «Արշալոյս», հմ. 69, 30 մարտի, Թիֆլիս, 1906:

<sup>1216</sup> Ա-Դօ, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում, Երևան, 1907, էջ 408:

տութեան մէջ 20-րդ դարում», - ներկայացված է Աշոտ եպիսկոպոսի մեկ այլ հեռագրում<sup>1217</sup>:

Յարական պաշտոնյաների թուրքամետ գործելաճի մասին հանգամանորեն ներկայացվել է նաև 1905-1906 թթ. Բաքվի հայ-թաթարական ընդհարումների պատճառներն ու հետևանքներն ուսումնասիրող սենատոր Կուզմինսկու զեկուցագրում<sup>1218</sup>:

Շուշեցի մի թուրք իրավացիորեն նկատել է. «Թագաւորը մեզ հետ է, իսկ Աստուած ձեզ հետ»<sup>1219</sup>:

Չնայած ուշացած, այնուամենայնիւ, Շուշիի դէպքերի մասնակից թուրքերն իրենք էին խոստովանում, որ ազգամիջյան ընդհարումների կազմակերպիչը ցարական իշխանություններն են: «Վերջապես ճանաչեցինք մեր իսկական դուշմանին. մեր աչքով տեսանք, թե ով է մեր շէն քաղաքը ավերակ ու մոխիր դարձնողը, - պատմել է շուշեցի թուրքերից մեկը: ... Հիմա մենք խելքի ենք եկել, բավական է այլևս: Հայեր, դուք էլ խելքի եկեք: Բավական է, տնաքանդ եղանք ռուս չինովնիկների և գեներալների գրպանները լցնելով»<sup>1220</sup>:

Առանձնապէս սանձարձակ էր գործում Շուշիի ոստիկանապետ Սախարովը, որն իր մոտ է կանչում թուրքերին և հորդորում կոտորել հայերին: Խաղաղ բնակչությանն ահաբեկելու նպատակով նա քաղաք է բերում լեզգիներից կազմված մի ջոկատ և նրանց զինում: Հայ վրիժառուներն սպանեցին ինչպէս Սախարովին, այնպէս էլ՝ պրիստավ Շումակենիչին<sup>1221</sup>:

Իշխանությունների սանձարձակ գործերը զսպելու նպատակով ՀՅ Դաշնակցության Կովկասի պատասխանատու Կենտրոնական Կոմիտեն 1906 թ. հունիսին հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը սրանով յայտնում է բոլոր ոստիկաններին, ստրաժնիկներին, ոստիկանապետներին, գավառապետներին, ժանտարմներին եւ խուզարկու ոստիկանութեան անդամներին, որ այսուհետեւ նրանցից իւրաքանչիւրը անխնայ կերպով կոչնչացուի, եթէ համարձակուի հայերի ձեռքից գէնք խլել, խուզարկութիւններ կատարել կամ բանտարկել այդ նպատակով: Թող նրանցից իւրաքանչիւրը նախքան այդ տեսակ գործ սկսելը յիշէ Պաքուի նահանգապետ Նակաշիձէին, Գանձակի փոխնահանգապետ Անդրեւին, գաւառապետներ՝ Բոկոսլաւսկուն, Շմերլինգին, Պալովին, ոստիկանապետ Սախարովին, պրիստաներ՝ Նալչանսկուն, Ջաւախովին,

<sup>1217</sup> «Արշալոյս», հմ. 66, 26 մարտի, Թիֆլիս, 1906:

<sup>1218</sup> «Արշալոյս», հմ. 24, 2 փետրվարի, Թիֆլիս, 1906:

<sup>1219</sup> «Արշալոյս», հմ. 16, 24 հունվարի, Թիֆլիս, 1906:

<sup>1220</sup> «Ալիք», հմ. 80, 4 օգոստոսի, Թիֆլիս, 1906:

<sup>1221</sup> «Հայրենիք», հմ. 1 (37), նոյեմբեր, Պոսթըն, 1925, էջ 34:



Շումակեիչին, Տէր Սահակովին, ոստիկան Սերգոյին, դոնապահ Շէկոյին եւ ուրիշ շատերին, որոնք ՀՅ Դաշնակցութեան վճռով մահուան պատժին են արժանացել»<sup>1222</sup>:

1906 թ. ձմռանը և գարնանը Շուշիում գտնվող հայ քաղաքական կուսակցությունները, մանավանդ՝ դաշնակցությունը, միջոցներ էին որոնում արյունահեղությանը վերջ տալու և երկու ժողովուրդների միջև համերաշխություն վերականգնելու:

Այդ նպատակով 1906 թ. հունվարի 21-ին ՀՅԴ «Ապառաժ»-ի ԿԿ-ն հանդես է գալիս հայտարարությամբ, որի մեջ մասնավորապես ասված է. «Հ Յեղ. Դաշնակցութիւնը կուել է միմիայն բռնութեան ու բռնապետութեան դէմ: Այժմ էլ այս յեղափոխական հուժկու պայքարի արիւնլայ օրերում ՀՅ Դաշնակցութիւնը քեզ է կանչում, թուրք ճնշած, հարստահարած ժողովուրդ, բաց արա մտքիդ խավար աչքերը, տես քո մերձաւոր և հեռաւոր թշնամուն ու քո իսկական բարեկամին – հայ ժողովրդին:

Բէկերի ու հարուստների համար ինչ հոգս, ա՛յ աղքատ ու խելճ թուրք-հայ ժողովուրդ, թէ դու սովամահ ես լինում, կուից, միայն դու ես տուժում, միայն դու ես քարութանդ լինում:

Ուրեմն ձեռք-ձեռքի տուք երկու ազգերի ճնշած, հարստահարած աշխատաւոր մասսաներ, ընդդէմ ձեր իրական թշնամիների և այն ժամանակ մեզ հետ միասին կանչեցէք կեցցէ համերաշխութիւնը, հայ ու թուրք ժողովուրդների, կորչի թշնամանքը»<sup>1223</sup>:

Սթափության և համերաշխության կոչերն այդպես էլ մնացին անարձագանք: Թուրքերը տենդագին պատրաստվում էին նոր ընդհարման: 1906 թ. մայիսի 19-ին նրանք հայկական քաղաքամասում թռուցիկներ են տարածում, որի բովանդակությունը հետևյալն էր. «Հայերը չը կարծեն, թէ մենք խաղաղուել ենք. մենք ձեզ նորից կուի ենք կանչում իբրև անհաշտ թշնամիների»<sup>1224</sup>:

Ռուս սպաներից մեկը թուրքերին ասել է. «միւս շաբաթ իմ հերթապահութեան օրն է և ես ձեզ լիազօրութիւն եմ տալիս յարձակելէ հայերի թաղերի վրայ. իմ կողմից ոչ մի խոչընդոտ, ոչ մի արգելք չի լինի»<sup>1225</sup>:

1906 թ. հուլիսի 12-ին իր տանը թուրքերն սպանեցին Սահակ Միրզոյանին: Նորից սկսվեց արյունահեղությունը:

<sup>1222</sup> Ներսիսյան Ա., ՀՅ Դաշնակցութեան պատմութիւն (1898–1908), հ. Բ, Երևան, 2008, էջ 271:

<sup>1223</sup> «Արշալոյս», հմ. 20, 28 հունվարի, Թիֆլիս, 1906:

<sup>1224</sup> Կովկասեան ընդհարումներ, «Դրօշակ», հմ. 6, Ժնեւ, 1906, էջ 88:

<sup>1225</sup> Նույն տեղում:

Հուլիսի 13-ին Ղայբալուի ձորից թուրք-քրդական հրոսակները փորձում էին երևանյան դռներից ներխուժել Շուշի, բայց քարինտակցիների և ղայբալիշենցիների հուժկու հարվածների տակ ստիպված են լինում նահանջել: Հայերն այս անգամ հանկարծակիի չեկան և ավելի լավ էին նախապատրաստվել: Ավելին, Վարդանի հրամանատարությամբ հայ պաշտպանները հարկադրեցին թշնամուն լքել մի շարք կարևոր դիրքեր: Իշխանությունները, տեսնելով հայ կտրիճների հաջողությունները, վրացի սպա Մաչավարիանիի գլխավորությամբ զորք ուղարկեցին՝ կասեցնելու նրանց առաջխաղացումը: Խանի աղջկա տնից սպա Չերնյավսկու գլխավորությամբ զորքերը կրակի տակ էին առել հայկական դիրքերը: Հայ մարտիկներն ստիպված թողեցին թուրքերից գրաված դիրքերը: Միաժամանակ կառավարական զորքերը կրավորական դիրք էին որդեգրել Թուրքիայից իրենց ցեղակիցներին օգնության եկած մահմեդական ջոկատների անարգել մուտքի հանդեպ<sup>1226</sup>: Ընդհարումը թեժացնելու նպատակով նույն օրը ռուսական Դերբենդյան գունդը, անցնելով հայկական քաղաքամաս, այստեղից սկսեց կրակել թուրքերի և քրդերի դիրքերի վրա:

Աղդամից բազմահազար զինյալ թուրքերի առաջխաղացումը դեպի Շուշի կասեցնելու նպատակով հայկական ինքնապաշտպանական ջոկատները նորից դիրքավորվեցին Ասկերանի կիրճում:

Հուլիսի 15-ի գիշերը թուրքերն սկսեցին գնդակոծել Շուշիի հայերի դիրքերը: Առավոտյան ժամը 7-ին հայկական ջոկատները, անցնելով հակազրոհի, գրավեցին թուրքերի համար կարևոր Դիկտանդուրուի դիրքը: Այստեղ նրանք 30 դիակ թողնելով՝ նահանջեցին<sup>1227</sup>: Հայերին հաջողվեց դուրս քշել նաև Աղա Իրզայի այրված տնում դիրքավորված թուրքերին:

Դրանից հետո թուրքերը հաշտություն խնդրեցին:

Գեներալ Գոլոշապովի պահանջով՝ վերոհիշյալ դիրքերը հայերն ստիպված հանձնեցին թուրքերին:

Հուլիսի 21-ին Աղա-Իրզայի դիրքից թուրքերը կրակեցին չեզոք գոտում կանգնած ռուս զինվորների և մի քանի հայերի վրա: Մեկ զինվոր զոհվեց, իսկ երկուսն էլ մի քանի հայերի հետ վիրավորվեցին:

Հուլիսի 22-ին հայերը հետ մղեցին թուրքերի գրոհը և երկրորդ անգամ գրավեցին Աղա-Իրզայի դիրքը: Թուրքերն ունեցան բազմաթիվ սպանվածներ, իսկ հայերը՝ 15 վիրավոր:

<sup>1226</sup> Բալայան Վ., Հայկական ջարդերը Շուշիում 1905–1907 թթ., էջ 28:

<sup>1227</sup> Կովկասեան ընդհարումներ. Հայ-թուրքական ընդհարումները Շուշու շրջանում, «Դրօշակ», հմ. 8, Ժնեւ, 1906, էջ 123:

Շուշիում տեղի ունեցած ընդհարումներն առիթ դարձան ողջ Ղարաբաղով մեկ հայ-թաթարական նոր բախումների:

Ռուս զինվորի սպանությունից հետո զորքն սկսեց ուժեղանալ թուրքական քաղաքամասը: Երեք թաղերում հրդեհ բռնկվեց: Հրո ճարակ դարձան պարսից արքայազնի տնից մինչև գավառական վարչության և ռուսական եկեղեցու միջև ընկած առանձնատները: Կրակի մատնվեցին Կաջարների և Ջաֆար-բեկ ու Ռասուլ բեկ Վեզիրովների պատկանող տները<sup>1228</sup>: Հրդեհը կլանել էր թուրքերի 200 տուն<sup>1229</sup>:

Թշնամուն վերջնական ընկձելու նպատակով Վարդանի հրահանգով գավառից 120 մարտիկներ տեղափոխվեցին քաղաք:

Թուրքերը, դաշտային Ղարաբաղից, Լաչինից և Պարսկաստանից օժանդակ ուժեր ստանալով, 1906 թ. օգոստոսի 4-ին (նոր տոմարով – Վ. Բ.) անցան հակահարձակման: Հայերը ոչ միայն դիմադրեցին, այլ նաև կարողացան մտնել թուրքական քաղաքամաս: Երկու օրվա մարտերից հետո թուրքերը զինադադար խնդրեցին: Հայկական կողմը ներկայացրեց հետևյալ պահանջները.

- ա) ավերել Դիկտանդուրու և Գիվերագ դիրքերը,
- բ) արգելել թուրքական նոր զինայլների մուտքը քաղաք,
- գ) ընդհարման առաջին զոհ Սահակ Միրզոյանի ընտանիքին փոխհատուցում տրամադրել,
- դ) արտաքսել Գանձակի նահանգից ընդհարումների հրահրիչներին<sup>1230</sup>:

Բացի առաջինից, թուրքերը մնացած պայմաններն ընդունեցին: Սակայն նույն գիշերը թուրք բեկերի ղեկավարությամբ գրոհայինները վերսկսեցին հրաձգությունը: Կատաղի մարտերի ընթացքում հայերին հաջողվեց գրավել Դիկտանդուրու դիրքը: Թուրքերն այդտեղ տվեցին 40 սպանված: Հայերը հաջողություն արձանագրեցին նաև մյուս ճակատում: Հայ մարտիկները չեզոքացրին թուրքերի Աղհարզու դիրքը<sup>1231</sup>: Մութն ընկնելուն պես փախուստի մատնված թուրքերին հաջողվեց տանել նաև իրենց հրանոթը:

Հայերը գործի դրին նաև ինքնաշեն հինգ և երկու հատ էլ թուրքական թնդանոթներ: Քաղաքի արհեստավորները պատրաստել էին նաև ձայնային ռումբեր ու հրթիռներ, որոնք սարսափ էին տարածել թուրքերի շրջանում:

Հուսահատության հասած թուրքերը դատարկել էին «Շեյթան բազարը», շատ ընտանիքներ ապաստան էին գտել բանտի պարիսպներից ներս: Դա

<sup>1228</sup> Կովկասեան ընդհարումներ ..., «Դրօշակ», հմ. 8, Ժնեւ, 1906, էջ 124:  
<sup>1229</sup> Հայ-թուրքական ընդհարումներ. Երկրորդ եւ խոշոր ընդհարումը Շուշում, «Դրօշակ», հմ. 9, Ժնեւ, 1906, էջ 136:  
<sup>1230</sup> «Դրօշակի» հեռագիրներ, «Դրօշակ», հմ. 8, Ժնեւ, 1906, էջ 115:  
<sup>1231</sup> Նույն տեղում:

առիթ դարձավ, որպեսզի իրենց քաղաքամասում մնացած թուրքերը թալանեն յուրայինների տները<sup>1232</sup>:

Օգոստոսի 14-ի առավոտյան բժիշկ Մեհմանդարովը թախանձագին խնդրում է գեներալ Գոլոշչապովին՝ միջնորդել հայերի հետ հաշտություն կնքելու:

Հայերը ութ կետից բաղկացած պայմանագրի նախագիծ են ներկայացնում թուրքերին: Հայկական զինվորական մարմինը, լավ իմանալով թուրքերին, բանակցություններին զուգահեռ նախապատրաստվում էր նաև թշնամու հնարավոր հարձակումը կանխելու:

Մինչև օգոստոսի 21-ը քաղաքում հատուկենտ հրացանաձգության ձայներ էին լսվում: Օգոստոսի 21-ին մարտական գործողությունները վերսկսվում են:

«Թուրքերը այս անգամ դիրք էին բռնել Աղա-Իրզի աներակների ներքին մասում, իսկ մերոնք-վերևի,- պատմում է ականատեսը: Երեկոյեան դեմ էր արդեն. բաւական ոյժ կենտրոնացրինք աներակների ներսը և շուրջը ու ռումբ-ձւաներով փառաւոր ջարդ տալուց յետոյ՝ դուրս քշեցինք թուրքերին և աներակները նորից ամբողջութեամբ գրաւեցինք: ... 22-ի առաւօտեան և աներակները նորից ամբողջութեամբ գրաւեցինք: ... 22-ի առաւօտեան հրացանաձգութիւնը բոլորովին դադարեց և այդպիսով վերջացաւ այն կռիւլը, որ ընդմիջումներով տևեց ամբողջ 9 օր, և որը կատարեալ պատերազմատեղի էր վերածել ամբողջ քաղաքը»<sup>1233</sup>:

Հայերի հաղթանակը կատարյալ էր: 1906 թ. հուլիս-օգոստոսյան ընդհարումների ժամանակ հայերն ունեցան 24 սպանված և 102 վիրավոր<sup>1234</sup>:

Անդրկովկասի ցարական իշխանություններն ու թուրք-թաթար մոլեռանդ խավն անակնկալի եկան հայ մարտիկների վճռականությունից: Անպաշտպան ժողովրդի դեմ դյուրին հաղթանակների վարժված մահմեդական խուժանը համոզվեց, որ անհնարին է կոտրել արցախահայության կամքը:

Հայ-թաթարական ընդհարումները կործանարար հետևանքներ ունեցան Շուշիի համար: Քաղաքն ունեցավ մի քանի հարյուր սպանված, վիրացան Շուշիի համար: Քաղաքն ունեցավ մի քանի հարյուր սպանված, վիրացան Շուշիի կենտրոնական ամենահարուստ և նշանավոր հատվածը: Տասնամյակների ընթացքում շուշեցիների ստեղծած պատկառելի հարստությունը մի քանի օրերի ընթացքում ոչնչացվեց:

Քաղաքի նյութական վնասները տարբեր գնահատականներով 12-15 միլիոն ռուբլու էին հասել: Աղքատությունը, սովը, հիվանդությունները խու-

<sup>1232</sup> Հայ-թուրքական ընդհարումներ. Երկրորդ եւ խոշոր ընդհարումը Շուշում, «Դրօշակ», հմ. 9, Ժնեւ, 1906, էջ 136:  
<sup>1233</sup> Նույն տեղում, էջ 137:  
<sup>1234</sup> «Դրօշակի» հեռագիրներ, «Դրօշակ», հմ. 8, Ժնեւ, 1906, էջ 115:

ժեցին շուշեցիների օջախները: Քաղաքաբնակների մոտ վախն ու անապահովության զգացումն արմատավորվեց, ջնջիվեց հավատը վաղվա օրվա նկատմամբ: Հարյուրավոր ընտանիքներ ապահով կյանքի հույսով տեղափոխվեցին Ռուսաստանի քաղաքներ: Մանավանդ քաղաքը լքում էին միջոցներ ունեցող և հայտնի գերդաստանների ներկայացուցիչները: Այդ արևածոր ընթացքը կործանարար էր նաև քաղաքում մնացողների համար: Փակվեցին արհեստանոցները, ֆաբրիկաները, ուսումնական և մշակութային հաստատությունները: Շուշիի հայության պաշտպանության գործն առավել դժվարացավ: Դրան հակառակ՝ աշխուժացավ և ինքնավստահ դարձավ թուրքական տարրը: Օրեցօր Շուշին կորցնում էր հայեցի դեմքը:

Ժամանակաշրջանի մամուլը գրել է. «Շուշուց Ելվախ ճանապարհը բացվել է: Ամեն օր հեռանում են քաղաքից: Նրանք գնում են Բաքու, Թիֆլիզ և ուրիշ քաղաքներ, որ կեանքը քիչ շատ ապահով է: Քաղաքը ամայացել է: Գաղթելու պատճառը մասամբ մթերքների թանկութիւնն է, բայց գլխատրապես վախը: Վախենում են գեներալ Գոլոշչակովից, որ սպառնում է խիստ միջոցների դիմել, եթե քաղաքացիք զենքը չյանձնեն իշխանութեան, վախենում են և թուրքերից, որ այսօր-էրուց գարունը բացելուն պէս սարը քաշելիս կարող են նորից սկսել իրանց գազանութիւնները»<sup>1235</sup>: «Շուշին՝ Ղարաբաղի մայրաքաղաքը, դատարկում է և մարդիկ գուշակում են, որ այնտեղ հայ չի մնա»: Նման տխուր փաստ է արձանագրում «Արշալոյս»-ի թղթակիցը<sup>1236</sup>:

Շուշիի դատարկվելը ծանր կացություն է ստեղծում նաև գավառի հայության համար: Եթե նախկինում գյուղաբնակ հայության համար Շուշին իրենց արտադրած մթերքների սպառման լավագույն շուկան ու ժամանակավոր աշխատավայրն էր, ապա 1906 թ. հետո պատկերը փոխվեց: Ստեղծված իրավիճակում գյուղաբնակ հայությունն իր սոցիալական խնդիրները լուծելու համար նախընտրեց ընտանիքներով, այս անգամ անվերադարձ, տեղափոխվել Բաքու, Թիֆլիս, հյուսիսային Կովկասի և Միջին Ասիայի քաղաքներ:

Այդ ամենով հանդերձ՝ Շուշիի հայության մեծ մասը, քաղաքական ուժերի գլխավորությամբ, հայրենի քաղաքը վերաշինելու և Արցախը կանգուն պահելու պատասխանատվություն վերցրեց: Անհրաժեշտ էր քաղաքի վերականգնման աշխատանքներին ներգրավել տարբեր երկրներում ապրող ծագումով շուշեցիների, բարեգործական հաստատությունների:

<sup>1235</sup> «Արշալոյս», հմ. 39, 22 փետրվարի, Թիֆլիս, 1906:

<sup>1236</sup> «Արշալոյս», հմ. 66, 26 մարտի, Թիֆլիս, 1906:

Միայն ժամհարյան եղբայրները Մոսկվայից իրենց հայրենակիցներին են ուղարկել 10 000 փութ ալյուր և գումար<sup>1237</sup>: 1905 թ. սեպտեմբերի 7-ին «Русь» թերթը հաղորդել է. «Մոսկվայի հայ գաղութը Շուշիի անօթևան մնացած բնակչության համար ամեն օր գնացքներով ալյուր է ուղարկում: Գումարը դյուրությամբ է հավաքվում, նվիրատվությունները կամովին է կատարվում:

Հարյուրավոր ընտանիքներ կորցնելով ամեն ինչ, մնացել էին քաղցած ու անօթևան: Ուտելիք ստանալու նպատակով Շուշիից և Բաքվից ամեն օր հուսահատական խնդրանքներ են ուղարկվում»<sup>1238</sup>:

1905 թ. հոտեմբերին Մոսկվայից, Թիֆլիսից, Տաշքենդից, Բաքվից, Եկատերինոդարից, Վլադիկավկազից, Աշխաբադից, Կուշկայից, Գանձակից, Արմավիրից, Քութայիսից, Մերվից, Կիևից, Պոլոցկից, Պարսկաստանից 17 075 ռուբլի 67 կոպեկի ալյուր և հագուստեղեն են ուղարկել հայ-թաթարական բախումներից տուժած Շուշիի և Արցախի մյուս բնակավայրերի հայերին<sup>1239</sup>: Ազգանպաստ այդ գործին իրենց ներդրումն են ունեցել Ժնևի, Փարիզի, Բերնի, Լայպցիգի համալսարանների հայ ուսանողները: Նրանք հայրենակիցներին են ուղարկել 2541 ֆրանկ: 1905 թ. դեկտեմբերի 28-ին «Նպաստամատույց հանձնաժողով»-ին հասցեագրված նամակում ասված էր. «Եւրոպայի հայ ուսանողութեան անունից՝ ուղարկելով այդ համեստ գումարը՝ հաւաքած համալսարանական չքաւոր երիտասարդութեան շրջանում և նրա ջանքերով, խնդրում ենք հաւատալ, որ դա նիւթական նպաստ չէ մեր երկրի անծայր դժբախտութեան. վերքը շատ է մեծ և նպաստը շատ աննշան. այլ սոսկ համակրանքի արտահայտութիւն՝ մեր հալածական և արհնւլայ ժողովրդին»<sup>1240</sup>:

1905 թ. նոյեմբերի 8-ին Թիֆլիսում կազմակերպվեց Գ. Սունդուկյանի «Էլի մեկ գոհ» ներկայացումը, որից ստացված հասույթը տրամադրվեց Շուշիի գոհերի ընտանիքներին<sup>1241</sup>:

Շուշիի վերաշինման գործում նախանձելի ջանադրություն էին ցուցաբերում «Թիֆլիսի հայուհյաց բարեգործական ընկերությունը», Բաքվի և Թիֆլիսի դարաբաղցիների համայնքները:

Թիֆլիսաբնակ դարաբաղցիները այդ աշխատանքները կանոնավոր հունի մեջ դնելու նպատակով ընտրեցին 10 հոգուց բաղկացած հանձնաժողով, որի մեջ մտան բժիշկներ Աղասարյանը, Գևորգ Բեկյանը, Լ. Ղուլյանը,

<sup>1237</sup> «Արշալոյս», հմ. 12, 14 սեպտեմբերի, հմ. 32, 7 հոկտեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1238</sup> «Русь», Петербург, но. 7, 7 сентября, 1905.

<sup>1239</sup> «Արշալոյս», հմ. 45, 2 նոյեմբերի, Թիֆլիս, 1905:

<sup>1240</sup> «Արշալոյս», հմ. 9, 15 հունվարի, Թիֆլիս, 1906:

<sup>1241</sup> «Արշալոյս», հմ. 55, 13 նոյեմբերի, Թիֆլիս, 1905:

Մ. Դոլուխանյանը, Գ. Մելիք-Կարազյոզյանը, Ա. Մելիք-Ազարյանը, Կ. Դանիելյանը, Հ. Առաքելյանը, Յ. Խունունցը, Մ. Աթաբեկյանը: Որոշեցին Թիֆլիսում ապրող դարաբաղցիներից ամսական վճար հավաքել և դա նպատակաուղղել Շուշիի հայությանը կենսամթերքներ, իսկ գյուղաբնակներին՝ սերմացու տրամադրելու գործին<sup>1242</sup>:

Այսպիսով, 1905-1906 թթ. Շուշիի հայ-թաթարական ընդհարումները բերդաքաղաքի հայության բազմադարյան կենսագրության բախտորոշ և ճակատագրական դրվագներից մեկը դարձան: Քաղաքի հայությունը, հաղթահարելով թուրք խուժանի վայրագություններն ու ցարական պաշտոնական շրջանակների սադրանքներն ու կամայականությունները, պահպանեց իր ազգային դիմագիծը: Հարուստ կենսափորձով իմաստնացած Շուշիի հայությունը նախապատրաստվում էր առաջիկայում նոր մարտահրավերների դիմակայմանը:

## Գլուխ 5

### ՇՈՒՇԻՆ 1917-1920 ԹԹ. ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԵՐՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1917 թ. Ռուսաստանում քաղաքական արագաթափ զարգացումներն իրենց անմիջական ազդեցությունն ունեցան Արցախի, մասնավորապես՝ Շուշիի պատմական ճակատագրի վրա: 1917 թ. փետրվարին Պետերբուրգում բռնկված հեղափոխությանը կայսրության տարածքում առաջին արձագանքողների շարքում էին ազատության համար պայքարի պատրաստ շուշեցի հայերը:

1917 թ. մարտի 6-ին Շուշիի քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնազարյանն ազգաբնակչության անունից դիմում է Պետական դումայի նախագահին՝ ողջունում նոր կարգերը և հավաստիացնում, որ պատրաստ են աջակցելու օրինական իշխանություններին<sup>1243</sup>:

1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունն արմատապես փոխեց ռուսական կայսրության քաղաքական համակարգը:

1917 թ. մարտի 9-ին ժամանակավոր կառավարությունը Կովկասի փոխարքա Ն. Ռոմանովին հեռագրեց պաշտոնից, և ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (Օզակոմ): Տեղերում նույնպես ստեղծվեցին իշխանության համապատասխան մարմիններ: Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կարգադրությամբ՝ երկրամասում հիմնվեցին գավառային, քաղաքային և գյուղական գործադիր կոմիտեներ:

Նույն օրը Շուշիում տեղի ունեցավ համաքաղաքային բազմամարդ ցույց: Ռեալական ուսումնարանի երաժշտախմբի ուղեկցությամբ՝ ցուցարարները շարժվեցին դեպի քաղաքապետարանի (ուպրավայի) շենքը: Քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնազարյանը նոր կարգերի հաստատման կապակցությամբ պատշգամբից ողջունեց հավաքվածներին և կոչ արեց՝ անխոնջ պայքարել խաղաղության ու աշխատանքի համար: Հայկական քաղաքամասից ցուցարարները շարժվեցին դեպի թուրքական մաս: Ճանապարհին

<sup>1242</sup> «Արշալոյս», հմ. 23, 1 փետրվարի, Թիֆլիս, 1905:

<sup>1243</sup> «Փայլակ», հմ. 16, 9 մարտի, Շուշի, 1917:

նրանց միացան գինվորներն ու թեմական, քաղաքային և մյուս դպրոցների սաները: Մզկիթի հրապարակում տեղի ունեցավ հսկայական միտինգ, որտեղ բոցաշունչ ճառերով հանդես եկան ինչպես հայ, այնպես էլ թուրք, ռուս և այլ ազգերի ներկայացուցիչներ: Ելույթ ունեցողները կոչ արեցին միասնաբար հաղթահարել բոլոր դժվարությունները: Վերջում ցուցարարների անունից նոր կառավարությանը ողջույնի հեռագիր ուղարկվեց<sup>1244</sup>: Մարտի 10-ին ձևավորվեց քաղաքային գործկոմը, որի կազմում ընտրվեցին հաշտարար դատավոր Կոբիևը, ռեալական դպրոցի տեսուչ Մոգիլևսկին և ուսուցիչ Բրունսը<sup>1245</sup>:

Մարտի 10-ին Շուշիում կազմավորվեց 40 հոգուց բաղկացած Ղարաբաղի գործադիր կոմիտեն, որի լիազորությունները տարածված էին Շուշիի, Զանգեզուրի, Զևանշիրի և Կարյազինի գավառների վրա<sup>1246</sup>:

Նույն ժամանակահատվածում, ինչպես Ղարաբաղի մյուս բնակավայրերում, այնպես էլ Շուշիում ստեղծվեցին նաև բանվորների, գինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդներ:

Ժամանակավոր կառավարությունն Արցախը, Գանձակը, Ախալքալաղը և Շարուր-Նախիջևանը ձանաչեց որպես հայկական տարածքներ<sup>1247</sup>:

Այս հանգամանքը, ինչպես նաև մահմեդականների կրոնական անհանդուրժողականությունը, առավել խորացրին անվստահությունը հայերի և թուրքերի միջև: Նույնիսկ Աղդամը ու նրան հարակից թուրքական բնակավայրերը հրաժարվեցին ենթարկվել Շուշիում նստած Ղարաբաղի գործկոմին և ստեղծեցին իրենց իշխանության մարմինը: Իրավիճակը կարգավորելու նպատակով Ղարաբաղի գործկոմը Շուշիից Աղդամ է ուղարկում Մուսաբեկ Կուլիևին, Հասան Գաիբովին, Գրիգոր բեկ Մինասբեկյանին և Վասիլի Տորոպովին<sup>1248</sup>:

Թուրքերի և հայերի միջև հակասություններն օրեցօր ավելի էին սրվում: Դա տեսանելի էր նաև Ղարաբաղի գործկոմում: Այդ պատճառով էլ Շուշիում ստեղծված երկու մարմիններն էլ անգործության մատնվեցին:

Հայերն իրենց ներքին կյանքը վարելու նպատակով ստեղծեցին Ղարաբաղի Ազգային բյուրո, իսկ թուրքերը՝ Ազգային կոմիտե<sup>1249</sup>:

<sup>1244</sup> «Փայլակ», հմ. 17, 12 մարտի, Շուշի, 1917:

<sup>1245</sup> Նույն տեղում:

<sup>1246</sup> «Փայլակ», 16 մարտի, Շուշի, 1917:

<sup>1247</sup> Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, էջ 73:

<sup>1248</sup> «Փայլակ», հմ. 32, 11 մայիսի, Շուշի, 1917:

<sup>1249</sup> «Ավանգարդ», հմ. 34, Երևան, 1991:

Դժվարին այդ պայմաններում Շուշիում գործող կուսակցությունները, մանավանդ՝ ՀՅԴ-ն, որը մեծ վստահություն էր վայելում հանրության շրջանում, ձգտում էին քաղաքական գիտելիքներ տալ ազգաբնակչությանը, համերաշխություն սերմանել թուրքերի շրջանում: Այդ նպատակով Շուշիում հաճախակի կազմակերպվում էին հանրային դասախոսություններ, որտեղ Հայրապետ Մուսայելյանը, Հովակ Ստեփանյանը, Հարություն Թումյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Վահան Նավասարդյանը, Կնունյանցը (Ռիզել) ներկայացնում էին Անդրկովկասի, Ռուսաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական վիճակն ու նոր զարգացումները, նախապատմական հասարակության և պետության ծագման հանգամանքները, կառավարման ձևերը հին Հունաստանում, Հռոմում և Հայաստանում, անգլիական, ֆրանսիական հեղափոխությունների ազդեցությունը համաշխարհային գործընթացների վրա, Ռուսաստանում սահմանադրական շարժման հարցերը: Միաժամանակ ՀՅԴ գործիչները, ինչպես Շուշիում, այնպես էլ գավառի հայկական ու թուրքական գյուղերում հանրության հետ հանդիպումներ էին կազմակերպում, բացատրում ազգամիջյան թշնամության կործանարար հետևանքները<sup>1250</sup>:

Այդ աշխատանքներն առավել կազմակերպված անցկացնելու նպատակով, բոլոր կուսակցությունների համաձայնությամբ, Ղուկասյան դպրոցում բացվում է ժողովրդական համալսարան<sup>1251</sup>:

Նմանօրինակ աշխատանքը հանրության շրջանում ավելի է մեծացնում կուսակցությունների, մանավանդ՝ ՀՅԴ ազդեցությունը: 1917 թ. հոկտեմբերի 22-ին, Շուշիի քաղաքային դումայի ընտրության ժամանակ, միայն հայկական քաղաքամասում ՀՅԴ-ն ստացավ 3700 քվե, բոլշևիկները՝ 1700, կադետները՝ 400, իսկ տետների ու մենշևիկների միացյալ ցանկը՝ 300 քվե<sup>1252</sup>: Նմանօրինակ հաջողություն ՀՅԴ ներկայացուցիչներն ունեցել են նաև 1917 թ. նոյեմբերին կայացած Բաքվի և Թիֆլիսի քաղաքային դումաների ընտրությունների ժամանակ: Բաքվի դումայում ՀՅԴ-ն ներկայացված էր 17 հոգով, իսկ մահմեդական կազմակերպությունները միասին՝ 14 մանդատով: Թիֆլիսի քաղաքային դումայի ¼-ը՝ շուրջ 24 պատգամավորներ ՀՅԴ-ից էին<sup>1253</sup>: Ավելին, ազգային կյանքը կազմակերպելու նպատակով Թիֆլիսում ստեղծվել էր համախորհուրդ մի մարմին, որի 200 անդամներից

<sup>1250</sup> «Ապառաժ», հմ. 2, 28 մայիսի, հմ. 7, 2 հուլիսի, հմ. 12, 27 հուլիսի, Շուշի, 1917:

<sup>1251</sup> «Ապառաժ», հմ. 23, 24 սեպտեմբերի, Շուշի, 1917; Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 20:

<sup>1252</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 42:

<sup>1253</sup> «Աշխատանքի դրոշակ», թերթ, հմ. 18, 5 նոյեմբերի, Բաքու, 1917:

110-ը դաշնակցականներ էին: Այդ մարմնում հայ ժողովրդական կուսակցությունը ներկայացված էր 40, սոցիալիստ հեղափոխականները՝ 23, սոցիալ-դեմոկրատները՝ 18 պատգամավորներով, իսկ 9 հոգի էլ անկուսակցականներ էին<sup>1254</sup>:

Ընդհանուր առմամբ, 1917 թ.՝ մինչև 1920 թ. խորհրդային կարգերի հաստատումն Արցախում, հայկական պետականության գոյության պայմաններում Շուշիում կուսակցական կյանքն աշխուժացավ: Գործող իշխանությունները, որ ուղղորդվում էին ՀՅԴ-ի կողմից, հանդուրժողաբար էին վերաբերվում բոլոր կուսակցությունների այդ թվում ընդդիմության դաշտում գտնվող բոլշևիկներին: Դաշնակցության համար անչափ կարևոր էր առաջիկա բարդ զարգացումների պայմաններում պահպանել ազգային համերաշխությունը: Այդ կապակցությամբ Շուշիում գտնվող բոլշևիկյան կուսակցության «Նեցուկ» պաշտոնաթերթը նկատել է. «Դաշնակցութիւնը, որպէս մի կազմակերպութիւն, որ իր պաշտպանության տակ է առնում բոլոր աշխատատեղերին, թէ կեղեքողներին և թէ կեղեքուողներին, թէ նրանց, որոնք չունին աշխատանքի միջոցներ ... և թէ նրանց, որոնք ունին այդպիսի միջոցներ: Դաշնակցութիւնը թշնամի է դասակարգային կուի նշանաբանին ...»<sup>1255</sup>:

Դեպքերի ականատեսը գրել է. «Ամենագլխավորը նա էր, որ Ղարաբաղում մինչև սովետական իշխանության հաստատվելը կուսակցությունների միջև գոյություն ուներ միայն փոխադարձ հարգանք և մտերմական հարաբերություններ, որպիսի դրությունը հնարավորություն էր տալիս ամենափոքր ուժերին անգամ մասնակցելու հասարակական բոլոր աշխատանքներին»<sup>1256</sup>:

1917-1920 թվականներին Արցախում ամենաազդեցիկ կուսակցությունը ՀՅԴ-ն էր, որի ղեկավար մարմինը՝ «Ապառաժ»-ի կենտրոնական կոմիտեն, գործում էր Շուշիում: Դաշնակցությունը Շուշիում ուներ առանձին ակումբ, որը գտնվում էր Լոռիս-Մելիքյան փողոցի վրա գտնվող Աթաբեկյանների տանը: Դաշնակցության պաշտոնաթերթը «Ապառաժ»-ն էր, որ շաբաթական 3-4 անգամ լույս էր տեսնում Շուշիում: Կուսակցության 90 տոկոսը մտավորականության ներկայացուցիչներ էին:

Շուշի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը 1917 թ. բաժանվեց երկու ճյուղերի՝ բոլշևիկյան և մենշևիկյան: Բոլշևիկների պաշտոնաթերթը «Նեցուկ»-ն էր, իսկ մենշևիկներինը՝ «Փայլակ»-ը:

Շուշիում գտնվող էսէռների կուսակցությունն իրենից մեծ ուժ չէր ներկայացնում: Նրա մեջ ընդգրկված էին 5-6 հոգի, պաշտոնաթերթն էր «Նոր կյանք»-ը: Կադետների կուսակցությունը գլխավորում էր Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը: Նրանց պաշտոնաթերթն էր «Шушинский листок» շաբաթաթերթը<sup>1257</sup>:

1919 թվականից, երբ Խոսրով քեկ Սուլթանովը հաստատվեց Շուշիում, Արցախի նկատմամբ Թուրքիայի, նորաթուխ Ադրբեջանի և նրանց հովանավոր անգլիացիների ճնշումը մեծացավ: Շուշիում ծվարած հայ կոմունիստների մեծամասնությունը տուրք տվեց մուսավաթականների մոգոնած, իսկ հետագայում բոլշևիկների գաղափարական հիմնաքարը դարձած հակահայկական ու հակամարդկային այն տեսակետին, ըստ որի «Ղարաբաղը տնտեսապես սերտորեն կապված է Ադրբեջանի հետ և առանց Բաքվի նավթի չի կարող գոյատևել, ուստի անհրաժեշտ է այդ երկրամասը մտցնել Ադրբեջանի կազմի մեջ»: Այս կեղծ «դոկտրինը» պատճառ դարձավ, որպեսզի հազարամյակներ շարունակ իր հայրենիքում ապրած մի ամբողջ ժողովուրդ ազատագրվի և շուրջ մեկ դար էլ հեղվի հազարավոր անմեղ մարդկանց արյունը:

Արցախահայության՝ միացյալ Հայաստանի կազմում ապրելու բնական իրավունքը պաշտպանող Դաշնակցությունն ստիպված էր երկար ժամանակ պայքարել մուսավաթականների և բոլշևիկների հակահայկական այդ քաղաքականության դեմ:

Ճակատագրի քմահաճ բերումով մի շարք հայ բոլշևիկների՝ Արմենակ Ղարաբյոզյանին, Թևանդրոս Միրզաբեկյանին, Անոն Ավետիսյանին, Մակիչ Արզանյանին, Հայկ Առուստամյանին, որոնք այնքան շատ բան արեցին Ղարաբաղն Ադրբեջանին բռնակցելու գործում, այդ նույն երկրի ղեկավարների կողմից էլ ոչնչացվեցին: Իսկ նրանց մի մասն էլ՝ Սաքո Համբարձումյանը, Սուրեն Շադունցը և ուրիշներ, չկարողանալով տանել Ադրբեջանի ճնշումները, ստիպված տեղափոխվեցին խորհրդային Հայաստան: Մինչ այդ էլ Ալեքսանդր Ծատուրյանին և նրա համախոհներին էլ գլխատել էին մուսավաթականները:

Նմանօրինակ բարդ զարգացումների հիմնական պատճառը 1917 թ. հոկտեմբերյան պետական հեղաշրջումն էր: Նախկին Ռուսական կայսրության ողջ տարածքում քաղաքական նոր իրավիճակ էր ստեղծվել: Այսրկովկասում նոյեմբերի 19-ին կազմավորվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատը: Այսրկովկասի քաղաքական ուժերը, չընդունե-

<sup>1254</sup> «Աշխատանքի դրոշակ», թերթ, հմ. 15, 15 հոկտեմբերի, Բաքու, 1917:

<sup>1255</sup> «Նեցուկ», հմ. 2, 24 օգոստոսի, Շուշի, 1917:

<sup>1256</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 2, էջ 5:

<sup>1257</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 315-317, հ. 2, էջ 3-5:

յով Ռուսաստանում ստեղծված նոր կացությունը, երկրամասը հռչակեցին անկախ վարչաքաղաքական միավոր:

Տեղերում զգալի էր անիշխանության մթնոլորտը: Նախկին իշխանության մարմինները կազմալուծվեցին: Երկրամասում վիստում էին հանցագործ տարրերից կազմված բանդաները, որոնք անարգել թալանում էին խաղաղ բնակչությանը:

Ավագակության ու թալանի դեմ պայքարելու նպատակով Ղարաբաղի գործկոմին կից ստեղծվել էր մեծ լիազորություններով «Հասարակական ապահովության կոմիտե»<sup>1258</sup>: Վերացվեցին հարևան շրջանների հետ ունեցած նախկին ավանդական կապերը: Մանավանդ դադարեցվեց դաշտային Ղարաբաղից Շուշի և հայկական մյուս բնակավայրերը ներկրվող ցորենի մատակարարումը: Շուշիում մտցվեց հացի բաշխման քարտային եղանակ:

Հեղափոխությունից անմիջապես հետո Շուշիից հեռացավ քաղաքի հայկական մասում տեղակայված 533-րդ հետևակային սիբիրյան զորամասը<sup>1259</sup>: Չնայած հայերի խնդրանքին՝ զորամասի հրամանատարությունը հրաժարվեց գեներալ տալ հայերին: Այդ ամենը նրանք Պարտավում հանձնեցին թուրքերին:

1917 թ. դեկտեմբերին ճակատից վերադարձող դարաբաղի հայ զինվորներին Եվլախ-Շուշի խճուղու վրա թուրք-թաթարական բանդաները զինաթափեցին և գնդակահարեցին<sup>1260</sup>:

Արցախի բնակչության պաշտպանությունը կազմակերպելու, երկրամասում կարգ ու կանոն հաստատելու, իրավասու իշխանություն ստեղծելու նպատակով Հայ հեղափոխական դաշնակցության Ղարաբաղի «Ապառաժ» կոմիտեն նպատակահարմար գտավ Շուշիում գործող բոլոր քաղաքական ուժերի ջանքերի համադրմամբ կյանքի կոչել լիազորված մի մարմին, որ «գործելու է իբրև Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր տեղական իշխանություն և որի հիմնական նպատակն էր՝ կազմակերպել ժողովրդին, վերջ տալ գլուխ բարձրացրած անիշխանությանը և բոլոր միջոցներով պահպանել խաղաղությունը և համերաշխությունը երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների միջև»<sup>1261</sup>: «Քաղաքական լուրջ անհրաժեշտություն էր նույնպես, որ Ղարաբաղի հայության կառավարող օրգանն իր կազ-

<sup>1258</sup> «Ապառաժ», հմ. 10, 20 հուլիսի, Շուշի, 1917:

<sup>1259</sup> Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-1920 թթ.), պատմական ակնարկ, Երևան, 2008, էջ 46:

<sup>1260</sup> Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-1920 թթ.), էջ 41:

<sup>1261</sup> Նույն տեղում, էջ 51:

մով լինել այնպիսին, որ կարողանար հավատ և վստահություն ներշնչել նաև հարևան մուսուլմանությանը»<sup>1262</sup>:

Փաստորեն, Լեռնային Ղարաբաղում ստեղծվելիք իշխանությունն ի վերուստ բացառեց որևէ էթնիկ միավորին ծառայելու մտայնությունը և փորձեց հանդես գալ որպես իր լիազորության շրջանակներում գտնվող տարածքների բոլոր ազգերի շահերի պաշտպան: Դրա մասին է վկայում նաև հետագա դեպքերի զարգացման ընթացքը:

Նախապատրաստական աշխատանքներից հետո 1917 թ. դեկտեմբերին Շուշիում կայացած հայ քաղաքական ուժերի հավաքն ստեղծեց տեղական իշխանության մի մարմին, որն անվանվեց «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ»<sup>1263</sup>: Այդ մարմինը հետագայում անվանվեց Միջկուսակցական բյուրո: Այն օժտված էր օրենսդիր և գործադիր գործառնություններով:

Որոշվեց նորաստեղծ կառավարության մեջ համամասնական սկզբունքով ներառել տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների: Փոխադարձ համաձայնությամբ՝ հինգ տեղեր տրվեցին դաշնակցությանը, իսկ մնացած կուսակցությունները ներկայացվեցին երեքական անդամներով: Կառավարության անդամներ ընտրվեցին Հայրապետ Մուսայելյանը, Անուշավան Միքայելյանը, Եղիշե Իշխանյանը, Հարություն Թումյանը, Ասծատուր Ավետիսյանը, Աշոտ Մելիք-Հովսեփյանը, Լևոն Վարդապետյանը, Նիկոլայ Իսախանյանը, Հռիփսիմե Մելիք-Հովսեփյանը, Արամ Միքայելյանը, Ալեքսանդր Մելքումյանը, Ալեքսանդր Ծատուրյանը, Արմենակ Ղարազյոզյանը և Մելիքսեթ Եսայանը: Խորհրդի նախագահ ընտրվեց դաշնակցական Հայրապետ Մուսայելյանը, իսկ քարտուղար՝ դաշնակցական Նիկոլայ Իսախանյանը:

Համաշխարհային հեղափոխության մոտալուտ հաղթանակից ոգևորված և ազգային պետականությունը չընդունող բուլշևիկյան կուսակցության երեք ներկայացուցիչներ մի քանի օրից հրաժարվեցին մասնակցել նորաստեղծ իշխանության մարմնի գործունեությանը: Փաստորեն, Միջկուսակցական բյուրոյի մեջ էին դաշնակցականներ, մենչևիկներ և էսեռներ:

Վերոհիշյալ փաստերն ու դեպքերի զարգացման ընթացքը մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ 1917 թ. դեկտեմբերին, մի քանի ամիս առաջ, դեռևս մինչև Անդրկովկասյան ազգային երեք հանրապետությունների ծնունդը, Շուշիում դրվեց պետական մի միավորի հիմքը, որը վերջնական տեսք ստացավ 1918 թ. հուլիսին:

<sup>1262</sup> Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-1920 թթ.), էջ 50:

<sup>1263</sup> Նույն տեղում, էջ 50, 52:

Հայ քաղաքական ուժերը Շուշի քաղաքում ազգամիջյան լարվածությունը կանխելու և մահմեդական բնակչության հետ համագործակցության եզրեր գտնելու նպատակով մահմեդական կոմիտեին առաջարկեցին ստեղծել մի նոր մարմին՝ Ազգամիջյան կոմիտե, որի մեջ ներառվեցին 6 հայեր և 6 մահմեդականներ: Կառավարման համակարգի անաչառությունը պահպանելու նպատակով որոշվեց վրացի Իոսիֆ Իլլարիոնի Կոբիևին նշանակել կոմիտեի նախագահ:

Հայ գործիչների հանդուրժողական, ավելի ձիշտ՝ զիջողական այս քայլն այդպես էլ չգնահատվեց թուրքերի կողմից: Իրարամերժ շահերի գոյության պայմաններում Ազգամիջյան կոմիտեն, կարճատև գործունեությունից հետո, 1918 թ. ապրիլի վերջին դադարեցրեց իր գործունեությունը<sup>1264</sup>:

Գործուն իշխանություն ունենալու և Շուշիից ազդեցությունը նաև գավառ տեղափոխելու նպատակով Միջկուսակցական բյուրոն նպատակահարմար գտավ ընտրական համակարգի միջոցով տեղերում ստեղծել վարչական և դատական մարմիններ:

Առանձնակի ուշադրության կենտրոնում էր պարենի հայթայթման գործը:

Երկրի հայ բնակչության անվտանգությունն ապահովելու համար 1917 թ. դեկտեմբերին ստեղծվեց Ռազմական խորհուրդ՝ Հարություն Թումյանի գլխավորությամբ: Զինված ուժերի համալրումն իրականացվում էր կամավորության սկզբունքով: Զենքը և զինամթերքը հիմնականում ձեռք էին բերվում դրսից: Շուշիում վերագործարկվեցին նախկին զինագործական արհեստանոցները: Քայլեր ձեռնարկվեցին ռուսական բանակի՝ ծագումով արցախցի սպաներին երկրամաս հրավիրելու ուղղությամբ:

1918 թ. հունվարին Շուշիից Թիֆլիս է մեկնում Հայրապետ Մուսայելյանը և, բանակցելով Արցախ-Ջանգեզուր հայրենակցական միության անդամների հետ, կազմակերպում է Արցախյան գունդը, որի կազմում էր 600 զինվոր: Գնդի հրամանատար է նշանակվում ծնունդով շուշեցի, գնդապետ Միքայել Մելիք-Շահնազարյանը, իսկ տեղակալ՝ պորուչիկ Հովակ Ստեփանյանը:

Միաժամանակ 1918 թ. հունվարի 1-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին կից գործող «Հայ զինվորական միություն»-ը «հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը փրկելու ...» նպատակով որոշել էր ստեղծել գնդեր և գումարտակներ: Այդ որոշման համաձայն՝ Շուշիում պետք է ստեղծվեին մեկ հատուկ և մեկ հրաձգային գնդեր<sup>1265</sup>: Այդ գործը նախանձելի բծախնդրությամբ էր իրականացրել ծնունդով Ճարտարից, նախկին ցարական զորքերի կապիտան Արտաշես Վարդապետյանը: Նա վաղաժամ զրկվել էր

ծնողներից: Արտաշեսի խնամքը և դաստիարակությունը ստանձնել էր նրա հորեղբայրը՝ Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու քահանա Տեր Հարությունը: Ա. Վարդապետյանը մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմին: 1917 թ. Աշնանը, վերադառնալով Շուշի, նա ձեռնամուխ եղավ Արցախի նոր ձևավորված պետության զինված ուժերի ստեղծման գործին:

Ադրբեջանի ղեկավարության ցանկությունն իրագործելով՝ բերդաքաղաքում հաստատված գեներալ Շատելվորդը Արտաշես Վարդապետյանին արտաքսեց Շուշիից: 1920 թ. հունվարի 23-ին նա վախճանվել է Թիֆլիսում:

1918 թ. ապրիլի 9 (22)-ին Անդրկովկասյան սեյմը երկրամասը հռչակեց խորհրդային Ռուսաստանից անկախ վարչաքաղաքական միավոր: Անդրկովկասի երեք ժողովուրդների՝ հայերի, վրացիների, թուրքերի ներկայացուցիչներ ստեղծում են Անդրկովկասի ժողովրդական դաշնային հանրապետություն:

Անդրկովկասյան սեյմում գտնվող հայ և մահմեդական ներկայացուցիչների համաձայնությամբ՝ Լեռնային Ղարաբաղին տրվում է ազատ շրջանի կարգավիճակ<sup>1266</sup>:

Փաստորեն, Անդրկովկասի իշխանություններն ստիպված էին հաշվի նստել նախորդ ժամանակահատվածում տարածաշրջանում գոյություն ունեցած վարչաքաղաքական միավորների հետ, ասել է թե՛ ձանաչել են 1917 թ. ձևավորված արցախահայ պետականությունը:

Շուտով կյանքն ապացուցեց, որ Անդրկովկասի միացյալ կառավարությունը երկարատև գործել չէր կարող: Խախուտ այդ միությունը շուտով փլուզվեց: Նրա առանձին երեք մասերից գոյացան ազգային իշխանություններ:

1918 թ. մայիսի 27-ին «Մուսավաթ» կուսակցությունը նախկին Բաքվի և Ելիզավետպոլի նահանգները հռչակում է «Արևելյան Անդրկովկասի մուսուլմանական հանրապետություն»<sup>1267</sup> և առաջին անգամ հավակնում տիրանալ պատմական Հայաստանի բաղկացուցիչ մաս հանդիսացող Արցախին ու Սյունիքին:

Փաստորեն, անխուսափելի էր դառնում բախումն Արաքսից հյուսիս ընկած տարածքների վրա առաջին անգամ հորջորջվող Ադրբեջանի և իր

<sup>1266</sup> «Մշակ», հմ. 144, 25 հուլիսի, Թիֆլիս, 1918:

<sup>1267</sup> 1918 թ. սեպտեմբերին, երբ թուրքական զորքերի կողմից Բաքվի հայության նախճիրից հետո «Արևելյան Անդրկովկասի մուսուլմանական հանրապետության» ղեկավարները հիմնավորվեցին նավթառատ քաղաքում, հետագայում իրանական Ատրպատականին հավակնելու համար, Նուրի փաշայի խորհրդով, այդ նորաթուխ մահմեդական պետությունը անվանակոչեցին Ադրբեջան:

<sup>1264</sup> ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 30, թ. 23-24, 28-29:

<sup>1265</sup> Ա-դո, Հայութեան երկունքը, Երևան, 2014, էջ 111:



ազատության ու ինքնիշխանության համար պայքարող Ղարաբաղի հայության միջև:

Ադրբեջանում փաստացի իշխանությունը գտնվում էր թուրք զինվորականության տրամադրության տակ: Նրանք զենք ունեցող տեղի մահմեդականներից կազմակերպեցին հրոսակախմբեր: Առանձնապես դաժանորեն էր գործում, այսպես կոչված, «վայրի դիվիզիան», որի հսկողության տակ էր գտնվում Շուշի-Եվլախ ճանապարհը:

Անդրկովկասում տեղակայված թուրքական զորքերի հրամանատարությունը ձգտում էր օր առաջ մտնել Շուշի, ոչնչացնել նորաստեղծ պետության ծիլերն ու ամբողջովին նվաճել Արցախը, Զանգեզուրը և Նախիջևանը:

1918 թ. սեպտեմբերի 15-ին, թուրքերի՝ Բաքու մտնելուց 6 օր անց, սեպտեմբերի 21-ին, Կ. Պոլսի իթթիհատական «Ենի Գյուն» թերթում հրատարակվեց Անդրկովկասի քարտեզը, որտեղ Հայաստանը չկար, իսկ հայկական տարածքները, այդ թվում և Ղարաբաղը, ներկայացված էին Ադրբեջանի կազմի մեջ<sup>1268</sup>:

Այս պայմաններում օրեցօր ծանրանում էր արցախահայության վիճակը: Լեռնային Ղարաբաղը կտրվեց արտաքին աշխարհից և հայտնվեց պաշարման օղակի մեջ:

Շուշիի քաղաքական ուժերը, հաշվի առնելով տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, ուժերի հարաբերակցությունը, ինչպես նաև ՀՀ-ից սպասվող անհուսալի օգնությունը, որոշեցին նախկինում ստեղծված պետական կառույցներն ավելի ամրապնդել և, հենվելով սեփական ներուժի վրա, հաղթահարել թուրքերի ու նրանց հետ գործակցող անգլիացիների ճնշումները: Այդ նպատակով 1918 թ. հունիսի 17-ին Շուշիում հրավիրված միջկուսակցական երկրորդ հավաք-խորհրդակցությունում որոշվեց ստեղծել նոր մարմին՝ «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների կոմիսարների խորհուրդ»<sup>1269</sup>:

Նոր ստեղծված այս մարմինն այնքան վստահ էր իր ուժերին, որ փորձում էր օգնել նաև Ադրբեջանի հայությանը: 1918 թ. հուլիսի 8-ին Ղարաբաղի կոմիսարների խորհուրդը Բաքվի ժողկոմխորհի նախագահ Ստեփան Շահումյանին հղում է հետևյալ բովանդակությամբ մի նամակ. «Թանկագին ընկեր Ստեփան Շահումյան, հայկական Ղարաբաղը պատրաստ է օգնելու ձեր կռիվող ուժերին թիկունքային շեշտակի գործողություններով: Թշնամու դեմ կարող ենք հանել մինչև 20 հազար լավ սպառազինված և ամեն ինչով ապահովված փորձված մարտիկներ: Մեզ ներկայումս անհրաժեշտ են

տվյալներ թշնամու ուժերի քանակի և դասավորության մասին: Հարվածի ուղղության և ժամանակի մասին տեղեկացրեք»<sup>1270</sup>: Նույն բովանդակության մեկ այլ նամակ էլ հասցեագրվել էր դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեին:

Կոմիսարների խորհրդի գործունեությունն իրավական հիմքերի վրա դնելու, ինչպես նաև երկրի ներքին և արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերը լուծելու նպատակով որոշվեց հրավիրել Ղարաբաղի հայության առաջին համագումարը: Շուշի քաղաքը բաժանվել էր ութ ընտրական տեղամասի<sup>1271</sup>:

1918 թ. հուլիսի 22-26-ը 180 պատգամավորների մասնակցությամբ Շուշիում հրավիրվեց համագումար: Միաձայն որոշվում է Ղարաբաղը ճանաչել որպես Արարատյան հանրապետության մաս: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստեղծված իրավիճակում Ղարաբաղը կտրված է ՀՀ-ից, անհրաժեշտ համարվեց ստեղծել Ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած ժողովրդական կառավարություն, որի ղեկավար ընտրվեց Եղիշե Իշխանյանը: Զինված ուժերի շտաբի պետ է նշանակվում Արտաշես Վարդապետյանը:

Դեպքերի զարգացման արդյունքում Շուշին նորից դարձավ ազգային-ազատագրական պայքարի և հայոց պետականության կերտման կենտրոն: Այստեղից տրված ազդակների շնորհիվ ձևավորվում են համահայկական օրակարգեր, ուրվագծվում ազգային հիմնահարցերի լուծման շրջանակները:

Բերված փաստերը մեզ թույլ են տալիս ասելու, որ 1918 թ., ի դեմս Լեռնային Ղարաբաղի, Անդրկովկասում գործում էր չորրորդ ինքնիշխան հանրապետությունը: Այն ուներ պետությանը հատուկ բոլոր ինստիտուտները՝ օրենսդիր մարմին, գործադիր, դատական իշխանություն, բանակ, մայրաքաղաք:

Այդ դժվարին ժամանակներում Շուշում ծնված և դաստիարակված մի շարք գործիչներ իրենց անուրանալի լուծման ունեցան մայր հայրենիքում պետականության վերակերտման և ՀՀ կայացման գործում:

Հայաստանի հանրապետության առաջին խորհրդարանի 46 պատգամավորներից 3-ը ծագումով Շուշիից էին: Նրանցից Արշալույս Բաբալյանը ծնվել է 1886 թ., Շուշիում, ավարտել է Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Սոցիալ-դեմոկրատ էր:

<sup>1268</sup> Ա-դ.ո, Հայութեան երկունքը, էջ 554-555:

<sup>1269</sup> «Հայրենիք», հմ. 11, Պոսթըն, 1933, էջ 85:

<sup>1270</sup> Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 93:

<sup>1271</sup> Նույն տեղում, էջ 101:

Միքայել Ղարաբեկյանը ծնվել է 1886 թ., Շուշիում: Ավարտել է Լայպցիգի համալսարանի պատմության ֆակուլտետը: Սոցիալ-դեմոկրատ էր:

Պետրոս Զաքարյանը ծնվել է 1868 թ. Շուշիում: Ավարտել է Պետրոգրադի առևտրական ճեմարանը, անկուսակցական էր: Նա ընտրվել էր խորհրդարանի ավագ քարտուղար:

ՀՀ հիմնադիր և առաջին կառավարության 6 անդամներից մեկը՝ Արամ Մանուկյանը, ծնվել է Շուշիում 1879 թ.: Ավարտել է Շուշիի և Երևանի թեմական դպրոցները: Դաշնակցության առանցքային գործիչներից էր: 1918-1920 թթ. զինաբախումների ժամանակ Շուշին գաղթականության համար փրկողակ էր դարձել: Այստեղ ապաստան էին գտել հազարավոր մարդիկ: Միայն Բերդաձորի ենթաշրջանի 5000 խաղաղ բնակիչ քրդերի և թուրքերի կողմից 1918 թ. սեպտեմբերի 17-ին, իրենց բնակավայրերն ավերվելուց հետո, հանգրվանել էին Շուշիում:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ դեռևս 1918 թ. հուլիսի վերջին կառավարության կազմում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ: Ստեղծվեց գաղթականության գործերի վարչություն: Նորաստեղծ վարչության պետ նշանակվեց Մուշեղ Զաքարյանը, իսկ օգնական՝ Անուշավան Տեր-Միքայելյանը<sup>1272</sup>:

Թուրքական կանոնավոր զորամիավորումների ճնշումն Արցախի, մասնավորապես Շուշիի նկատմամբ օրեցօր ավելի էր մեծանում: Այդ նպատակով Էնվեր փաշայի հրամանով թուրքական մի զորագունդ մոտեցվում է Արցախի սահմաններին և տեղակայվում Գանձակում: Թուրքական մեկ այլ զորամաս 1918 թ. օգոստոսին անցավ Հազարու գետի կողմերը՝ նպատակ ունենալով Արցախը կտրել Սյունիքից, միաժամանակ թույլ չտալ, որ Շուշիի գունդը Գորիսից անցնի Լեռնային Ղարաբաղ: Նուրի փաշայի տրամադրության տակ դրվեց «վայրի դիվիզիան», որը նույնպես նախապատրաստվում էր ներխուժել Արցախ:

Այս ամենը զուգակցվում էր տնտեսական ճնշումներով: Լեռնային Ղարաբաղի հայությանն արգելվեց տնտեսական կապեր պաշտպանել Դաշտային Ղարաբաղի մահմեդական բնակչության հետ: Հայերին արգելված էր վաճառել հաց, աղ և առաջին անհրաժեշտության ապրանքներ, հատկապես՝ պարենային:

Դրանից առավել շատ տուժում էր Շուշիի քաղաքաբնակ հայությունը:

1918 թ. սեպտեմբերի 4-ին, մուսավաթական կառավարության կողմից Ղարաբաղի պարետի պաշտոնում նշանակված Իսմայիլ Հակկի բեկը, գրավոր վերջնագիր է ուղարկում Շուշիում գտնվող կառավարությանը՝ գեներ

<sup>1272</sup> Իշխանեան Ե, նշվ. աշխ., էջ 180:

վայր դնել և ճանաչել Ադրբեջանի իշխանությունը<sup>1273</sup>: 1918 թ. օգոստոսի 18-ին Նուրի փաշան կոչով դիմում է արցախահայությանը՝ խղճալ իրենց երեխաներին և ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը<sup>1274</sup>: Նույն պահանջով Ղարաբաղի ժողովրդական կառավարությանն է դիմում Ադդամում գտնվող Կովկասյան մուսուլմանական առաջին դիվիզիայի հրամանատար Զամիլ Զահիդ բեյը<sup>1275</sup>:

Այս օրախնդիր հարցը քննարկելու համար 1918 թ. սեպտեմբերի 7-10-ը Շուշիում հրավիրված արցախահայության երկրորդ համագումարը մերժում է այդ անօրինական պահանջները:

Թուրքական բանակը սեպտեմբերի 22-ին մտավ Լեռնային Ղարաբաղ՝ ավերելով Դահրազ, Վարազաբույն, Փիրջամալ, Նախիջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ, Խանաբաղ, Ղիշբաղ, Քարազուխ գյուղերը: Այնուհետև սեպտեմբերի 25-ին մտավ Շուշի: Բանակի հետևից շարժվում էր «տեղական թաթարների հազարավոր խումանը՝ գրավված գյուղերն ու քաղաքը ավերելու և թալանելու նպատակով»<sup>1276</sup>:

Թուրքական հրամանատարությունը լուծարեց Ղարաբաղի կառավարությունը: Ավելի քան 60 մտավորականներ, այդ թվում և Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Եղ. Իշխանյանը, ձերբակալվեցին ու նետվեցին բանտ: Թեպետ Շուշին ընկավ, սակայն Արցախի գավառները մնացին անառիկ: Շուշեցի գործիչները, տեղափոխվելով գավառ, ամենուրեք կազմակերպեցին ինքնապաշտպանական ջոկատներ: Ահեղ մարտեր ծավալվեցին Ջրաբերդի, Վարանդայի և Դիզակի շրջաններում:

Շուտով Թուրքիան պարտվեց առաջին համաշխարհային պատերազմում: Շուշիից հեռացան թուրքական կանոնավոր զորքերը:

Ադրբեջանն այս անգամ էլ Ղարաբաղին ցանկացավ տիրել Անգլիայի օգնությամբ: Արցախի իշխանությունները ձեռնամուխ եղան դիմակայելու նաև այդ արհավիրքին:

1918 թ. հոկտեմբերի 11-ին, երբ Անդրանիկը Գորիսից պատրաստվում էր վերադառնալ Սիսիան, Շուշիից երեք հոգի՝ դաշնակցական Մուշեղ Զաքարյանը, սոցիալ-դեմոկրատ (մենչևիկ) Արսեն Բակունցը և ժողովրդական կուսակցության անդամ Սերգեյ Բաղիրովը հանդիպեցին զորավարի հետ և նրան համոզեցին իր տրամադրության տակ եղած զինված ուժերը շարժել դեպի Շուշի և լուծել Արցախը Հայաստանի հանրապետությանը միացնելու հարցը:

<sup>1273</sup> Իշխանեան Ե, նշվ. աշխ., էջ 194:

<sup>1274</sup> «Մշակ», 18 փետրվարի, Թիֆլիս, 1919:

<sup>1275</sup> «Մշակ», 23 փետրվարի, Թիֆլիս, 1919:

<sup>1276</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 49, թ. 47:

Անսալով իր հայրենակիցների խնդրանքին՝ Անդրանիկը շարժվեց դեպի Շուշի, միաժամանակ հանձնարարեց Սիսիանում գտնվող «Շուշինսկի բոտայի» մարտիկներին և Շուշվա գնդի հրամանատար գնդապետ Մելիք-Շահնազարյանին՝ միանալ իրեն և համատեղ ուժերով ազատագրել հայկական երկրամասը<sup>1277</sup>:

Ճանապարհին Անդրանիկն Արցախից ստանում է Դիզակի զինված ուժերի հրամանատար Արտեմ Լալայանի, Վարանդայի հրամանատար Սոկրատ բեկ Մելիք-Շահնազարյանի, հաղորդեցի հրամանատար Աղաջանի նամակները, որոնցում ներկայացված էր Շուշիի կացությունը, թուրքական զորքերի թիվը, տեղաբախշվածությունը, նրանց զինական վիճակը: Նրանք Անդրանիկին հորդորում են մտնել Շուշի՝ հավաստիացնելով, որ ժողովուրդը պատրաստ է մինչև վերջ կռվել և նրա հրամանատարության տակ դնել 15 000 հոգանոց զորք: Հոկտեմբերի 26-ին Հարար գյուղից Ալեքսան Առաքելյանը Տեղ գյուղում հանդիպում է Անդրանիկին և ներկայացնում առկա կացությունը:

Ժողովրդի տրամադրությանն ավելի լավ իրազեկված լինելու նպատակով Անդրանիկը սուրհանդակ է ուղարկում Շուշի, որը, նոյեմբերի 21-ին վերադառնալով, զորավարին է ներկայացնում բերդաքաղաքի զինվորական և քաղաքական ղեկավարության ստորագրությամբ երկու նամակներ, որոնցից մեկում առաջարկվում է անմիջապես մտնել Շուշի, իսկ մյուսում՝ արյունահեղությունից խուսափելու նպատակով՝ 10 օր հետո<sup>1278</sup>:

Անդրանիկի զորքերը նոյեմբերի 29-30-ը, հաղթահարելով քրդերի և թուրքերի դիմադրությունը, հասնում են Մարքիզ գյուղը, իսկ դեկտեմբերի 1-ին՝ Ավդալար: Այստեղ էլ զորավարը ստանում է գեներալ Թոմսոնի և Ադրբեջանի վարչապետ Խան-Խոյսկու նամակները: Վերջինիս նամակն ուղղված էր Շուշիի քաղաքագլխին, Ազգային խորհրդին և հայկական զինվորականությանը, որով պահանջվում էր Թոմսոնի նամակը հանձնել Անդրանիկին: Թոմսոնին ուղղված պատասխան նամակում Անդրանիկը ներկայացնում է Շուշիում թուրքական զորքերի կատարած վայրագությունները և որ արյունահեղությունը դադարեցնելու համար ստիպված է մտնել Ղարաբաղ:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ին, Ավդալար է ժամանում Անտանտի ռազմական միսիան, և մայրո Կիպոն ու կապիտան Սիրայտը Անդրանիկին են հանձնում Թոմսոնի նամակը, որում մասամբ գրված էր. «Ես ձեզ նախագուշացնում եմ, որ եթե դուք չկատարեք ինձնից ստացված հրահանգը, դուք

<sup>1277</sup> Քաջունի Եղիշե, նշվ. աշխ., էջ 116:

<sup>1278</sup> Քաջունի Եղիշե, նշվ. աշխ., էջ 113-120:

անձամբ պատասխան կտաք ձեր գործողությունների հետևանքով առաջացած արյունահեղության համար: Իմ հրահանգը կատարելուց ձեր ամեն տեսակ խուսանավումը անպայման լրջորեն կանդադարեալ հայ ժողովրդի հարցի վրա, երբ այն կդրվի խաղաղության կոնֆերանսում ...»<sup>1279</sup>:

Անդրանիկն ստիպված տեղի տվեց և վերադարձավ Գորիս: Նենգ Ալբիոնը, մի կողմից հայտարարելով, որ վիճելի տարածքների ճակատագիրը կորոշվի Փարիզի խաղաղության կոնֆերանսում, մյուս կողմից՝ 1919 թ. հունվարի 15-ին Ղարաբաղում և Զանգեզուրում ստեղծեց գեներալ-նահանգապետություն և նահանգապետ նշանակեց հայտնի հայատյաց, ազգությամբ քուրդ Խոսրով Բեկ Սուլթանովին: Այդ առթիվ Թոմսոնին փոխարինած գնդապետ Շատելվորդի պաշտոնական հաղորդագրության մեջ ասված էր. «... բժիշկ Սուլթանովը նշանակված է Շուշվա, Զանգեզուրի, Ջերբայիլի և Ջևանշիրի գավառների գեներալ նահանգապետ և օգտվում է անգլիական հրամանատարության պաշտպանությունից ...»<sup>1280</sup>:

Սուլթանովի ընտրության հարցը պատահական չէր: Սուլթանովը Ս. Օրջոնոկիձեի տեղեկություններով «իթթիհատականների կուսակցության աջ թևին էր պատկանում, որի մեջ գրավում է առաջին, թե երկրորդ տեղը»<sup>1281</sup>: Սուլթանովը և նրա եղբայրները՝ Սուլթանն ու Իսկենդերը, հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներն էին: Բժշկի մասնագիտությամբ այդ դահիճը 1918 թ. օգոստոսին և սեպտեմբերին Բաքվի հայության ջարդերի կազմակերպիչներից էր: Ադրբեջանի տարածքում ռուսական զորքերի զինաթափման, թալանման և նրանց ոչնչացման գործում առանցքային դեր ուներ:

Ադրբեջանը, ոգևորվելով նման հովանավորությունից, նոր վերջնագիր ներկայացրեց Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդին: Այդ նպատակով Սուլթանովը ստանում է նոր ուժեր և աքցանի մեջ առնում Արցախը: Մուսավաթական Ադրբեջանի վերջնագիրը քննարկելու համար 1919 թ. փետրվարի 12-21-ին Շուշիի թեմական դպրոցում հրավիրվեց Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը: «Հայկական Ղարաբաղը, - ասված է համա-

<sup>1279</sup> ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 39, թ. 2: Պատվիրակության կազմում էին նաև Ադրբեջանի ներկայացուցիչ Արդուլֆաթթահ բեկ Հասանբեկովը և Բաքվի Հայոց Ազգային խորհրդի անդամ Գուրգեն Չիլինգարյանը: Այդ նույն օրը բժիշկ Արտաշես Գյանջեցյանը Անդրանիկին գաղտնի հանձնում է «Ապառաժ»-ի կառույցի նամակը, որով դաշնակցական գործիչները զորավարին հորդորում են չենթարկվել սադրանքների և մտնել Շուշի ու փրկել Ղարաբաղը: Տես՝ «Հայրենիք», հմ. 7, Պոսթոլն, 1935, էջ 129:

<sup>1280</sup> «Երկիր», հմ. 99, Երևան, 1993:

<sup>1281</sup> Սկյան Վ., նշվ. աշխ., էջ 72:

գումարի որոշման մեջ,– իրագել է պահել ամբողջ աշխարհին, որ նա իր տարածքում չի ընդունել և չի ընդունում Ադրբեջանի իշխանությունը»<sup>1282</sup>:

Անդրկովկասում Անգլիայի քաղաքական շահերի և նրանց նպատակների ու հայկական հարցի նկատմամբ ունեցած դիրքորոշման մասին է պատմում այդ օրերին՝ փետրվարի 23–ին և 26–ին, Անդրանիկին ուղղված Շուշիի դաշնակցական կառույցի դիմումը, որի մեջ մասնավորապես ասված է. «Անգլիան այժմ ունի Կովկասի վրա. Նա շահագրգռված է «Ադրբեջանի» և «Վրաստանի» հողերի ընդարձակման խնդիրներով, որովհետև այս վերջինների հողերի ընդարձակումը նշանակում է հենց իր ապագայի՝ Բրիտանական Կովկասի սահմանների մեծացում: Ուրեմն այս հարցում Անգլիայի ու Ադրբեջանի շահերն իրար զուգահեռաբար են, և սրանով է միայն կարելի բացատրել այն երևույթը, որ Բրիտանիայի թշնամի Ադրբեջանն այսօր մեծարվում է, իսկ նրա զինակից հայերս շարունակ զսպվում ենք»<sup>1283</sup>: Իրենց նպատակին հասնելու համար անգլիացիները ձնշումն ավելի էին մեծացնում ՀՀ և Արցախի ղեկավարության նկատմամբ:

1919 թ. մարտի 26–ին Բաքվում գնդապետ Շատելվորտը հանդիպում է Շուշիի քաղաքագլուխ Գ. Մելիք–Շահնազարյանի և դաշնակցական գործիչ, Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանի հետ: Նրա փորձերը՝ համոզել ընդունելու Ադրբեջանի գերիշխանությունը, ապարդյուն անցան: «Ամենից անհաշտը հայերից,– գրում է Շատելվորտը,– դաշնակցության հայտնի անդամ Ասլան Շահնազարյանն է: Ես այդ պարոնին բազմիցս զգուշացրի վերադառնալ Շուշի և բնակչությանը համոզել ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Նա հայտարարեց, որ ինքը մտահոգված չէ այդ պայմանով վերադառնալ Շուշի»<sup>1284</sup>:

Իրենց որոշումներն արցախահայության վզին փաթաթելու նպատակով 1919 թ. ապրիլի կեսերին գնդապետ Շատելվորտը մեկնել էր Շուշի: Նա բոլոր միջոցներով փորձում էր Շուշիում գտնվող հայ գործիչներին համոզել՝ ընդունելու Ադրբեջանի հպատակությունը: Շատելվորտին պաշտոնական պատասխան տալու համար Շուշիում 1919 թ. ապրիլի 23–29–ը հրավիրվեց Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը, որին մասնակցել էր նաև անգլիացի գնդապետը: Նրա ջանքերն ապարդյուն անցան: Հին-

գերորդ համագումարի որոշման մեջ ասված էր. «Ղարաբաղի հայության քաղաքական, պատմական, կուլտուր–իրավական և մանավանդ տնտեսական պայմանները չեն կարող ոչ մի դեպքում հիմք ծառայել հայ ժողովրդի շնչին փաթաթելու Ադրբեջանի թեկուզ ժամանակավոր իշխանության վարչական ձևը»<sup>1285</sup>:

Սուլթանովը, արցախահայության վճռականությունից գազազած, որոշեց բռնությունների դիմել և բնակչությանը խեղդել սովի ճիրաններում: Այդ նպատակով դեպի դաշտային Ղարաբաղ տանող բոլոր ճանապարհները փակվեցին: Հրի ու սրի մատնվեցին մի քանի հայկական գյուղեր: Առանձնակի դաժանությունների ենթարկվեցին Շուշիի մոտ գտնվող Ղայբալիշենի հայերը: Ականատեսը վկայում է. «Մի արևոտ օր, մոտ 30–40 ցահել թուրք անգլիացի սեւազգեստ զինվորների հետ Շուշիից իջան դեպի Ղայբալի գետը: Նրանց խմբված գնալը մեզ, արդեն ամեն ինչ հասկացող երեխաներիս, ընկալելի էր եւ հավաքվեցինք Քամու աղացի մոտ: Կես ժամ չանցած՝ ամբողջ գյուղը կորավ հրդեհի բոցերի ու ծխի մեջ: Երեկոյան լուր տարածվեց, որ գյուղում կենդանի մարդ չի մնացել»<sup>1286</sup>: «Գյուղի բոլոր տները այրվում են,– պատմում է արխիվային վավերագիրը,– իսկ կիսավեր և այրված տները լի են դիակներով: ... 70 տուն ունեցող գյուղի ազգաբնակչությունից ազատվել են մոտավորապես 160 հոգի: Կոտորածի ժամանակ քաղաքից (Շուշիից – Վ. Բ.) դիտելիս են եղել անգլիացիք և ոչ մի միջոց չեն ձեռք առել կոտորածը դադարեցնելու»<sup>1287</sup>:

Սուլթանովի, թուրք էմիսարների և անգլիացիների ներկայությունը Շուշիում և նրանց խառնակիչ գործողությունները քաղաքի թուրքերի և հայերի միջև հարաբերությունները վերջնականապես թշնամական դարձրին:

1919 թ. հունիսի 4–ին առավոտյան ժամը 10–ին, Շուշիում գտնվող անգլիական միսիայի համաձայնությամբ, Խոսրով բեկ Սուլթանովի հրամանով թուրքական ու քրդական հրոսակախմբերն սկսեցին կրակել հայկական քաղաքամասի խաղաղ բնակչության վրա: «Քերծի գլխի» ուղղությամբ նրանք անցան հարձակման: Հայ պաշտպանների դիմադրության շնորհիվ նրանք նահանջեցին:

Խաթարվեց քաղաքի բնականոն կյանքը: Դեպքերի ժամանակակիցը գրել է. «Հայկական թաղամասը դարձավ ասպատակությունների ու խժժությունների մի սոսկալի ասպարեզ: Սովորական երևույթների շարքն անցան հայ աղջկերանց առևանգումները: Հանցագործ տարրերը ոճրագործ

<sup>1282</sup> ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 12:

<sup>1283</sup> Махмуриян Г., Губернаторство Карабах–Зангезур и Британская политика 1918–1919 гг. в Карабахе, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Երևան, 2007, էջ 172:

<sup>1284</sup> Հարությունյան Հ., ՀՅ Դաշնակցությունն Արցախի համար մղվող պայքարում 1917–1920 թթ., Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Երևան, 2007, էջ 144:

<sup>1285</sup> «Երկիր», հմ. 99, Երևան, 1994:

<sup>1286</sup> Հարությունյան Հ., Շուշի, էջ 285:

<sup>1287</sup> ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 252, թ. 171–182:

Սուլթանովի կողմից հովանավորվելով, օրը ցերեկով շրջում էին հայկական քաղաքամասի փողոցները՝ սարսափահար անելով անպաշտպան հասարակությանը: Դեռ մութը վրա չհասած՝ փակվում էին խանութների ու տների դռներն ու պատուհանները, դադարում էին փողոցներում անցն ու դարձը: Հասարակական հիմնարկություններում (թատրոն, կինո, երեկոյթներ) մեղելային լուսություն էր տիրում: Քաղաքի ամբողջ հայ հասարակությունը գիշերները կծկված, սրտատրոփ սպասում էր զանազան դժբախտ անակրճակների: ... Սանձարձակ դարձան հալածանքներն ու բռնությունները և շատ-շատերը, որոնք կասկածելի էին թվում, բանտ նետվեցին: Ինտելիգենցիայի առաջավոր մասը, հալածանքների ենթարկվելով, հեռացավ քաղաքից: Կանգ առավ քաղաքական կյանքը: Դադարեցին լույս տեսնել թերթերը, կանգ առավ կուլտուրական կյանքը»<sup>1288</sup>:

Այս և Սուլթանովի մյուս չարագործությունների մասին վկայել են Ադրբեջանի խորհրդարանի անդամներ Կարաբեկովը և Ռուստամբեկովը<sup>1289</sup>: Վերոհիշյալ չարագործությունները ղեկավարում էին թուրք էմիսարները: «Պատգամավոր Խոջայանի ստացած տեղեկություններով իբր թե էնվերը գտնվում է Սուլթանովի հայտնի բնակավայրում – Հաջի Սալմոնում, իսկ անգլիացիների ունեցած տեղեկություններով նա իբր թե գտնվում է Ադրանում»<sup>1290</sup>:

Այդպիսի լարված իրավիճակում 1919 թ. հունիսի 28–30–ը Շոշ գյուղում հրավիրվեց արցախահայության 6–րդ համագումարը: Որոշվեց շարունակել պայքարն Ադրբեջանի ոտնձգությունների դեմ, մյուս կողմից էլ, ժամանակ շահելու համար, նպատակահարմար գտնվեց փոխել մարտավարությունը<sup>1291</sup>:

Օրեցօր ահագնացող վտանգին դիմակայելու մտահոգությամբ 1919 թ. օգոստոսին Շոշ գյուղում հրավիրվեց արցախահայության յոթերորդ համագումարը: Ձգտելով խուսափել նոր արյունահեղությունից, ժամանակ շահել և կենտրոնացնել առկա ուժերը՝ համագումարը գնաց փոխգիջման: Համագումարի կողմից ընտրված 16 հոգուց բաղկացած պատգամավորությունն օգոստոսի 22–ին Սուլթանովի հետ քննարկեց և ստորագրեց 26 կետից բաղկացած համաձայնագիր<sup>1292</sup>, որով Լեռնային Ղարաբաղը մինչև Փարիզի խաղաղության կոնֆերանսում հարցի վերջնական լուծումը իրեն ժամանակավորապես համարում է Ադրբեջանի սահմաններում: Ադրբեջանի զոր-

քերը չեն մտնում Ղարաբաղ, երկրամասի գործերն առաջվա նման վարելու էին Հայոց Ազգային խորհուրդը և հայության համագումարները:

Փաստորեն, վերոհիշյալ համաձայնագրի ընդունումով Ադրբեջանի հանրապետությունը ճանաչեց արցախահայության պետականության գոյության փաստը: Օգոստոսի 22–ի համաձայնագրի ստորագրման պահին Ադրբեջանի հանրապետության կառավարությունը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը գտնվում էին հավասար իրավասություններով կարգավիճակում:

Պատահական չէր, որ այդ համաձայնագրի ստորագրումից հետո Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը շարունակում էր մնալ որպես արցախահայության միակ օրինական իշխանությունը:

Օգոստոսի 22–ի համաձայնագիրը, ոչ հայանպաստ իր շեշտադրումներով հանդերձ, միանշանակ ժխտում է նաև ադրբեջանական պատմագրության մեջ տեղ գտած այն թյուրըմբռնումը, թե իբր Լեռնային Ղարաբաղը 1918–1920 թվականներին գտնվում էր Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կազմի մեջ<sup>1293</sup>: Եթե Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի «անբաժանելի մասն» էր, ապա ինչ միտք ուներ այդ երկրի կառավարության հետ պայմանագիր ստորագրել: Հարցին ադրբեջանական պատմագրության տեսանկյունից մոտենալու պարագայում ստացվում է, որ Ավստրիան պետք է լինի Գերմանիայի կազմում, որովհետև 1938 թ. փետրվարի 13–ին Ավստրիայի կառավարությունը Գերմանիայի հետ կնքված պայմանագրով միացավ այս երկրին: Կամ էլ Սիրիան այսօր Եգիպտոսի մաս պիտի կազմեր, որովհետև 1958 թ. փետրվարի 1–ի պայմանագրով միանալով Եգիպտոսին՝ կազմավորվել էր մեկ միասնական երկիր՝ Արաբական Միացյալ Հանրապետություն:

Սուլթանովը, ավելի հեռուն գնալով, Ղարաբաղի Ազգային խորհրդից պահանջում է վերջնականապես ենթարկվել մուսավաթական Ադրբեջանին: Դրան հասնելու համար Սուլթանովը Շուշին վերածել էր Ադրբեջանի և Թուրքիայի զինված ուժերի կենտրոնատեղիի: Միայն 1919 թ. վերջերին և 1920 թ. սկզբներին մուսավաթական կառավարությունը գեներալ Ալի աղա Շիխլինսկու հրամանատարությամբ Շուշի էր ուղարկել 7000 հոգուց բաղկացած մի նոր զորամաս: Շուշիում էր գտնվում Թուրքիայի սպայակույտի

<sup>1288</sup> Կիսիբեկյան Ա., Հուլիս, հ. 1, էջ 361–362:

<sup>1289</sup> ՀԱԱ, ֆ. 190, ց. 1, գ. 252, թ. 154:

<sup>1290</sup> Նույն տեղում, ֆ. 150, ց. 1, գ. 252, թ. 175:

<sup>1291</sup> «Արձագանք», 16 հունիսի, Թիֆլիս, 1919:

<sup>1292</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 9, թ. 67–68:

<sup>1293</sup> Алиев И., Нагорный Карабах, история, факты, события, Баку, 1988; Конфликты в Нагорном Карабахе, Сборник статей, Баку, 1990; Исторические факты о деяниях армян на Азербайджанской земле, Баку, 2003; Марджанлы М., Карабахская проблема с позиций геополитики, аналитический ракурс, Санкт Петербург, 2009; Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20–е годы 20–го века), Баку, 2010.

մի մեծ խումբ՝ Խալիլի և Էնվերի եղբայր Նուրի փառայի գլխավորությամբ: Լեռնային Ղարաբաղի սահմաններին կուտակվել էին 10 000 զինվոր և քրդական մեկ դիվիզիա:

Միաժամանակ Սուլթանովը հրամայեց մուսավաթական բանակը տեղաշարժել և կենտրոնացնել ռազմական նշանակություն ունեցող կետերում՝ այստեղից Ջանգեզուր ներխուժելու միտումով:

Ստեղծված իրավիճակը քննարկելու համար 1920 թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 5-ը Շոշ գյուղում հրավիրվեց արցախահայության ութերորդ համագումարը, որը մերժեց Սուլթանովի պահանջը և գտավ, որ օգոստոսի 22-ի համաձայնագիրն Ադրբեջանի կողմից պարբերաբար խախտման հետևանքով կորցրել է իր ուժը: Համագումարը մուսավաթական կառավարությունից պահանջում է վերջ տալ կոտորածներին, այլապես «նման դեպքերի կրկնությունը կստիպի Լեռնային Ղարաբաղի հայությանը՝ իրենց կյանքն ու պատիվը պաշտպանելու համար դիմել համապատասխան միջոցների»<sup>1294</sup>: Կազմակերպվեց Ղարաբաղի պաշտպանության կենտրոնական մարմին՝ շրջաններում իր ճյուղավորումներով<sup>1295</sup>:

Մարտին սկսվեց համաժողովրդական ապստամբություն: Ադրբեջանական ուժերի հարձակումն սկսվեց 1920 թ. մարտի 22-ի երեկոյան: Ապստամբության ղեկավարները, քանի որ լավ չէին հաշվարկել ուժերի հարաբերակցությունը, սկզբում անհաջողություններ ունեցան:

Թուրքերը, մեծաքանակ զորքեր կենտրոնացնելով Շուշիում, 1920 թ. մարտի 23-ին հրի մատնեցին և թալանեցին հայկական թաղամասը: Խաղաղ բնակչության սարսափելի սպանդ կազմակերպվեց: Հազարավոր հայեր զոհվեցին, հրի մատնվեց քաղաքի հայկական թաղամասը, կրակի ճարակներից փրկված հայերի գույքն ու կայքը բաժին հասավ թուրքերին: Թուրքերն այս եղեռնագործությունը կազմակերպեցին՝ արդեն ունենալով համապատասխան փորձառություն և, օգտվելով իրենց համար նպաստավոր պայմաններից ու անպատճելիության մթնոլորտից, փորձում էին Արևելյան Հայաստանը նույնպես արժանացնել Արևմտյան Հայաստանի ճակատագրին:

1920 թ. Շուշիի մարտյան ջարդերի կազմակերպիչներն առաջնորդվեցին 1915 թ. ապրիլի 24-ի եղեռնագործության ժամանակ երիտթուրք առաջնորդների գործելաոճով և նախօրոք մշակված ծրագրով: Հայտնի է, որ 1915 թ. ապրիլի 24-ին զանազան կեղծ ու շինծու պատրվակներով Կ. Պոլսում բանտարկվում ու աքսորվում են ավելի քան 800 հայ մտավորականներ, հա-

սարակական, քաղաքական գործիչներ, արվեստագետներ, գիտնականներ, բժիշկներ, ուսուցիչներ: Այդ ծրագրի իրագործումը նպատակ ուներ ոչնչացնել ոչ միայն հայ մտավորականության ծաղիկը, այլ նաև ժողովրդին զրկել ինքնապաշտպանությունը կազմակերպող կարող ուժից:

1920 թ. մարտի 22-ին՝ Շուշիի ողբերգության նախօրյակին, Խոսրով բեկ Սուլթանովի հրամանով ձերբակալում են քաղաքի նշանավոր 400 հայերի և նետում թուրքական թաղամասում գտնվող բանտը: Դեպքերի ականատես Գրիգոր Մինասբեկյանը գրել է. «Խեղճ Իվան Բեկը (խոսքը վերաբերում է Եղիշե Իշխանյանի հորը – Վ. Բ.) բանտում լինում է առաջին զոհը, որովհետև պահանջած է լինում որ իրեն տանեն Խոսրով Բեկ Սուլթանովի մօտ՝ իմանալու, թե ինչու են ձերբակալել մարդկանց, որոնք ոչ մի բանից տեղեկություն չունեն և անմասն են: Տեղնուտեղը սպանում է Իվան Բեկը, ապա սրածում են բոլոր բանտարկեալները: Անկարելի է գրչով նկարագրել թուրքերի գործած խժժություններն ու զազանությունները»<sup>1296</sup>:

Մինչև հայկական քաղաքամասի վրա հարձակվելը Սուլթանովը չբնակեցված հայկական տներում տեղավորել էր թուրք սպաների և զինվորների, որոնք էլ մարտի 22-ի լույս 23-ի գիշերը թանձր մառախուղի քողի տակ վառեցին այդ շինությունները և մեծ խուճապ առաջացրին բնակչության ու ինքնապաշտպանական ջոկատների շրջանում: Դրանից օգտվելով՝ թուրքերի կանոնավոր զորամասերը և խուժանն անարգել սկսեցին ջարդել և կողոպտել հայերին: Փրկվածների մի մասը փորձեց խճուղիով հեռանալ Քարինտակ: Սակայն նրանցից 2000-3000 հոգի՝ հիմնականում կանայք և երեխաներ, հավատալով Գիգի աղային և Ռուբեն Շահնազարյանի խոսքերին, թե իբր Սուլթանովը երաշխավորում է նրանց անվտանգությունը, հավաքվում են Բեգլարյանների առանձնատան բակում: Սուլթանովը կանանց ու երեխաներին բանտարկում է, իսկ Ասկերանի անկումից հետո «կատաղած զինվորների ու ամբոխի քմահաճոյքին է յանձնում 2-3000 հայ քաղաքացիներին ...»<sup>1297</sup>:

Բարբարոսաբար ոչնչացվեց երբեմնի շեն ու շենշող հայոց Շուշին: Այդ մասին Հրաչյա Աճառյանը գրել է. «... ադրբեջանցի ազգայնամուլները գիշերային հանկարծական հարձակում գործեցին հայոց վրա և կրակ տվին: Այդ գիշերը ուժեղ քամի էր: Քամին տարածեց հրդեհը, չոր թախտափուշերը հեշտությամբ վառվեցին, և ամբողջ քաղաքը հրո ճարակ դարձավ: ... Այդպես դատարկվեց Շուշին ու մեռավ:

<sup>1296</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 579:

<sup>1297</sup> Միքայելեան Ա., Ղարաբաղի վերջին դեպքերը, «Հայրենիք», հմ. 12, Պոսթըն, 1923, էջ 121-122:

<sup>1294</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 16, գ. 563, թ. 29-35:

<sup>1295</sup> «Խորհրդային Ղարաբաղ», հմ. 257, Ստեփանակերտ, 1989:

Ղարաբաղիք, ինչպես հայտնի է, լավ կռվողներ են եղել միշտ և այդ օրն էլ կարող էին դիմադրել, բայց, ինչպես ասացի, հարձակումը բոլորովին հանկարծակի եղավ, և հայերն էլ ոչ մի պատրաստություն չունեին»<sup>1298</sup>:

Շուշիի կործանման առթիվ վրացական մի թերթ գրել էր. «Կովկասում մի աղամանդ կար, թուրքերը փշրեցին այդ աղամանդը»<sup>1299</sup>:

Շուշիի ջարդերից փրկված անօթևան մարդկանց օգնելու նպատակով Թիֆլիսում 1920 թ. հունիսի 30-ին հրավիրվում է խորհրդակցություն և որոշվում է դոկտոր Ռուբեն Յուզբաշյանին գործուղել Արցախ: Ռուբեն Յուզբաշյանը երկու անգլիացի սպաների ուղեկցությամբ հասնում է Շուշի և, քաղաքին լավ ծանոթ լինելով, շրջելով բոլոր թաղամասերը, ակնատես է լինում սահմուկեցուցիչ տեսարանների. «... ամենուրեք աներակների կոյտ է, - պատմել է Ռուբեն Յուզբաշյանը, - և չափազանց ծանր տպավորություն է թողնում մարդուս վրայ հենց առաջին վայրկեանից: Մատերի վրայ համարող մի քանի շենքեր են կանգուն մնացել՝ զօրանոցը, ռեալական դպրոցի շենքը, եկեղեցիները և կիսաեր վիճակում՝ զանազան թաղամասերում մի շարք շենքեր: Աներակ թաղամասերում հանդիպել է մարդկանց, հայերի իհարկե, որոնք իրենց աներակ կամ կիսաեր տներում փնտրտուքներ էին կատարում, տեսնելով իրեն, մօտենում են և մէկը ճանաչելով սկսում է զանգատել, խոր դժգոհություն յայտնում և անիծում էն մարդկանց, որոնք թշառութեան են մատնել ժողովրդին: Նրան հետևեցին միսները և պատմեցին, թե ինչպես իրենք անտեղեակ են եղել ... հանգիստ քնած իրենց տեղում, յանկարծ տակն ու վրայ է լինում ամեն ինչ, տները վառում են իրար ետևից, մարդիկ լեղապատառ, գլուխները կորցրած աջուձախ վագում, շատերը սպանում և ով կարողանում է, իրեն զցում է Քարինտակ գիւղը, շատերն էլ գերի են ընկնում: ... Պատմում էին, որ աննկարագրելի է այն ընտանիքների վիճակը, որոնք գիւղերում ազգական և բարեկամ մարդիկ չունեին, որ նրանց օգնութեամբ կարողանային ապրել: Նրանք, որոնք Թիֆլիս կամ Բագու աշխատող ձեռքեր ունեն, օգնութիւն ստանում են կամ փոխադրում են իւրայինների մօտ: Ընդհանուր առմամբ պատկերը անելի քան տխուր է և ընկճող. հնարաւոր չէ նկարագրել խօսքով կամ գրչով: ... թուրքերը գազագել, անգթութիւններ են գործել, կանանց աղջկերանց բռնաբարել»<sup>1300</sup>:

Թիֆլիսում տպագրվող «Սլովո» թերթը 1920 թ. ապրիլի 16-ին գրել է. «քաղաքի հայկական թաղամասում քարը քարի վրա չի մնացել»<sup>1301</sup>:

Շուշիի հայկական ջարդերի մասնակից Ադրբեջանի բանակի սպա Ալի-մարդանբեկովն իր եղբորը հղված նամակում գրել է. «Քո տեսած հայկական Շուշին հիմնովին վառված է: Թողնվել է 5-10 տուն: Հազարից ավելի հայեր գերի են վերցված: Ոչնչացրել ենք բոլոր տղամարդկանց, նույնիսկ խալիֆին (Վահան եպիսկոպոսին - Վ. Բ.), բոլոր հայտնի և հարուստ մարդկանց: Մուսուլմանները թալանել են հայերի անթիվ անհաշիվ հարստությունները և այնքան են հարստացել, որ լկտիացել են»<sup>1302</sup>:

Ադրբեջանի կոմկուսի անդամ Օջախկուլի Մուսաևը 1921 թ. հունիսին ՌԽՖՍՀ կառավարությանը գրել է. «Նախկին գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովի հրամանով ջարդերը շարունակվել են 6 օր, հայկական մասի բոլոր տները թալանվել և վառվել են մինչև վերջ ... Դաժան հաշվեհարդարի այդ օրերին Խոսրով բեկ Սուլթանովը հանդես է եկել ճառով մահմեդականներին սրբազան պատերազմի կոչ անելով, վերջնականապես վերջ տալու հայկական Շուշիին, չխնայելով ոչ կանանց և ոչ էլ երեխաներին ...»<sup>1303</sup>:

1936 թ. հունվարի 21-ին Կրեմլում, խորհրդային Ադրբեջանի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ, վերհիշելով Շուշիի եղեռնագործությունը, Ս. Օրջոնոկիձեն ասել է. «Ես այսօր ևս սարսափով եմ հիշում այն պատկերը, որ մենք տեսանք 1920 թ. մայիսին: Հայկական գեղեցկագույն քաղաքն ավերվել, ոչնչացվել էր հիմնովին, իսկ ջրհորներում մենք տեսել ենք կանանց ու երեխաների դիակներ»<sup>1304</sup>:

Ինչո՞ւ Բաքվում նստած մուսավաթական կառավարությունը հենց Շուշին դարձրեց իր հարվածի հիմնական թիրախը: Դա ուներ մի շարք պատճառներ.

ա) Շուշին տվյալ ժամանակաշրջանում հայկական երկրորդ պետության մայրաքաղաքն էր, որտեղ կենտրոնացված էին քաղաքական ինստիտուտները, երկրի կառավարման լծակները: Ոչնչացնելով այդ ամենը՝ նշանակում էր գլխատել երկիրը և ժողովրդին մատնել անտերության: Մուսավաթականներին թվում էր, թե մայրաքաղաքը ավերված տեսնելով՝ արցախահայությունը կհուսալքվի, և թևաթափ ժողովուրդը կհանձնվի Ադրբեջանի ողորմությանը, ասել կուզի՝ կկլանի հայկական երկրամասը և վերջնականապես կլուծի իր գերխնդիրը:

<sup>1302</sup> Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան, ֆ. 2, գ. 5, էջ 107:

<sup>1303</sup> РГАСПИ, ф. 1022, оп. 2, д. 168, л. 17; Նույնը՝ Нагорный Карабах в 1918-1923 гг., док. 443.

<sup>1304</sup> «Ազատ Արցախ», 23 մարտի, Ստեփանակերտ, 2000:

<sup>1298</sup> Աճառյան Հր., Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 255:

<sup>1299</sup> Սևյան Վ., նշվ. աշխ., էջ 80:

<sup>1300</sup> Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 623:

<sup>1301</sup> «Слово», 16 апреля, Тифлис, 1920.

Պատահական չէ, որ ջարդերից քիչ անց՝ մարտի 30-ին, մուսավաթական կուսակցության խորհրդի ժողովը, իսկ ապրիլի 1-ին՝ Ադրբեջանի խորհրդարանն ընդունեցին բանաձևեր, որոնցում գոհունակությամբ էին նշում կատարվածը, ապա սպառնում ավելի դաժան գործողություններ իրականացնել, եթե հայերը չհնազանդվեն<sup>1305</sup>:

բ) Շուշին, լինելով քննարկվող ժամանակաշրջանի հայկական մշակութային ու լուսավորչական կյանքի առաջատար օղակներից մեկը, ազատամիտ ոգու ջահակիրն էր: Աննկուն հերոսների, արվեստների, գրականության, գիտության նշանավոր գործիչների ծննդավայրը հանդիսանալով՝ յուրօրինակ և չկրկնվող դերակատարություն ուներ հայոց քաղաքակրթական համակարգում: Ոչնչացնելով այդ մարգարիտը՝ մուսավաթականներին և նրանց ուսուցիչներին՝ պանթուրանական հովերով տարված թուրք ոճրագործներին՝ 1915 թ. ցեղասպանության մեղսագործներին թվում էր, թե դրանով կկտրվի հայոց պատմական առաքելության կենարար զարկերակը, և ժողովուրդը հետագա տասնամյակներում կնետվի անէության և ստրկամտության գիրկը:

գ) Շուշին ոչ միայն Արցախի կենտրոնն էր, այլ նաև աշխարհագրական տեսանկյունից հայկական երկրամասը ՀՀ-ին կապող հիմնական օղակն էր: Ոչնչացնելով Շուշին՝ հայկական երկրամասի կապը մայր հայրենիքի հետ համարյա անհնարին էր դառնում: Ճիշտ է, Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը շարունակում էին պայքարել, բայց դրանք բազմիցս ավերվել էին, և հայկական Շուշիի բացակայության պայմաններում նրանց գոյությունը համարյա անհնարին էր դառնում: Մյուս կողմից էլ, վերացնելով այդ բնակավայրերը, Ղարաբաղի դաշտավայրերում հանգրվանած թուրքական ցեղերը լայն հնարավորություն են ստանում՝ կապվելու հայկական Քաշաթաղը (այդ ժամանակների Հաջի Սամլուն – Վ. Բ.) վաղուց նվաճած քրդերի՝ իրենց հավատակիցների հետ:

դ) Շուշիում հայկական ջարդերի կազմակերպման համար պակաս կարևոր հանգամանք չէր նաև քաղաքում թուրքական թաղամասի առկայությունը: Տասնամյակների ընթացքում Շուշիից հայ գործարար խավը եռանդի, նախաձեռնող շնորհքի, նպատակասլաց աշխատանքի շնորհիվ իրենց ձեռքում էին կենտրոնացրել առևտուրը, արդյունաբերությունը, արհեստները և դրա շնորհիվ՝ կուտակել պատկառելի կապիտալ: Այդ ամենը դրվեց հայկական թաղամասի ծաղկման ու բարգավաճման վրա: Ստեղծելով եվրոպական ճաշակի և ինքնատիպ ճարտարապետական նկարագիր ունեցող քաղաք՝ Շուշիի հայերը կամա թե ակամա առաջացնում էին իրենց

<sup>1305</sup> «Азербайджан», но. 67, 2 апреля, Баку, 1920.

կողքին ասիական կենցաղով ու բարքերով ապրող հետամնաց, ռխակալ և մոլեռանդ թուրքերի հակակրանքը, զայրույթը և ատելությունը: Հենց նրանք էլ իրենց հավատակից ու ազգակից օսմանյան թուրքերի կանոնավոր գորքերի հետ իրագործեցին Շուշիի հայերի ցեղասպանությունը:

Շուշիի հայերից թալանած կայքին ու գույքին հիմնականում տեր դարձան քաղաքի եկվոր թուրք բնակիչները: Դեպքերին ժամանակակից Ա. Կիսիբեկյանն իր «Հուշեր»-ում գրել է. «Նա մեզ տվավ Մուրթուզա անունով մի ուսուցչի հասցե և ասաց,– գնացեք, ձեր աշխատավարձը ստացեք նրանից: Մենք, գտնելով նրա բնակարանը, բարձրացանք պատշգամբը և սրբելով մեր ոտները՝ մտանք սենյակը: Սենյակի պատերն ու հատակը ծածկված էին գորգերով: Երկու թե երեք գորգի ծայրերին գործած էր հայկական տառեր. Ինչպես երևում էր, այս 50–55 տարեկան, 20–25 տարվա թուրք ուսուցիչը ևս մասնակցել էր Շուշվա հայերի տների թալանման: Ես նրան ձանաչում էի դեռ մինչև սովետական իշխանությունը»<sup>1306</sup>:

Մարիետա Շահինյանն իրավացիորեն գրել է. «Բայց կանցնեն տարիներ, գուցե և տասնամյակներ, և Շուշի կգան զրոսաշրջիկներ, այս անգամ արդեն ոչ թե նրա գեղեցկության և կլիմայի համար, այլ նրանում եղած ամբողջ Անդրկովկասի համար ուսանելի դասի համար, այն դասի, որի նմանը մենք տեսել ենք Պոմպեյում և Հերկուլանում: Միայն թե այնտեղ գործող անձը եղել է բնության կույր տարերքը, իսկ այստեղ մարդկային զանգվածի կողմից գրգռված գազանի կույր տարերքը՝ մարդկային ստոր խոսքի օգնությամբ»<sup>1307</sup>:

1921 թ. Ս. Օրջոնկիձեն, լինելով Շուշիում, տեսնելով ավերված հայկական քաղաքը, գրել է. «Անցյալ տարի, նախքան խորհրդային իշխանության հաստատվելը, հայկական Շուշի քաղաքը խայտառակ ձևով ոչնչացնելը, բռնաբարություն, կոտորած, երեխաներին ու կանանց հորերն ու անդունդը գցելը,– այս է Անդրկովկասում նացիոնալիզմի տիրապետության անփառունակ շրջանը: Կանցնի ժամանակ, կրքերը կմեղմանան, և մեր սերունդները անեծքով կհիշեն նրանց, ովքեր եղել են այս նողկալիության հանցավորները»<sup>1308</sup>:

Ցավոք, բոլշևիկյան կուսակցությունը և խորհրդային վարչակարգը Շուշիի հայկական ջարդերին իրավական գնահատական չտվեց և հանցագործներին պատժելու համար համապատասխան քայլեր չձեռնարկեց: Ավելին, այդ ոճրագործության հեղինակների մի մասը բարձր պաշտոն-

<sup>1306</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 2, էջ 97:

<sup>1307</sup> Մկրտչյան Շ., Արցախյան գրառումներ, էջ 175:

<sup>1308</sup> Օրջոնկիձե Գ., Ընտիր հողվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 75:



ներ ստացան և դարձան նորելուկ խորհրդային Ադրբեջանի հենասյունները: Խոսքով բեկ Սուլթանովը Շուշիի ջարդերից երկու ամիս անց դարձավ հեղկոմի ղեկավար: Խոսքով բեկ Փոլատովն էլ Միջին Ասիայում կուսակցական, խորհրդային բարձր պաշտոնի տեր դարձավ: Եղեռնագործության կազմակերպիչները հետագայում դարձան Արցախի հարևանությամբ գտնվող խորհրդային Ադրբեջանի շրջանների ղեկավարները: Ժամանակակիցը գրել է. «Երկու երեք տարի է ապրում եմ այս շրջանում՝ Աղդամում, եղել եմ ցարական և թե Ադրբեջանի իշխանության օրոք: Ցավալով պիտի արձանագրեմ, որ ոչինչ չի փոխվել: Սուլթանովի տեղը Մամեդովն է, Մեխմանդարովի տեղը՝ Գադիմովը: Դերակատարները փոխվել են, դերերը մնացել են նույնը: ... Աղդամում նստած թուրք հայտնի կոմունիստ Մ. Թ. բեկն այն անձնավորությունն է, որ Ղարաբաղի կռիվներին Սուլթանովի աջ թևն էր, որն անձամբ թալանել է Շուշիում կոտորածի ժամանակ: Երբ պատահաբար տեսա այդ գորգերը, որոնց վրա հայերեն տառերով գրված էր «Շուշի» անունը, նա կարմրեց»<sup>1309</sup>:

Շուշիի հայության՝ դարերի ընթացքում ստեղծածը մի քանի ժամերի ընթացքում ոչ միայն հրդեհվեց ու ավերվեց, այլև այդ ամենի մի մասը դարձավ թուրքերի սեփականությունը: Դա ոգևորիչ էր թուրքերի համար: Տարիներ անց, Շուշիում Ադրբեջանի գրողների արտագնա նստաշրջանում, գրող Ռասուլ Ռզան Շուշիի 1920 թ. մարտյան հայկական ջարդերը ներկայացրել է որպես ադրբեջանական ժողովրդի փառապանծ սխրանք՝ նշելով, որ «Ադրբեջանական ժողովուրդը՝ այստեղ Շուշիում է գրել իր պատմության ամենափառավոր էջը, և դուք պարտավոր եք այդ չմոռանալ երբեք»: Իսկ բանաստեղծ Նաբի Խազրին իր ցեղակիցներին պոետական խոսքով կոչ է անում. «Շուշվա ճանապարհին դու լավ ճանաչիր քո բարեկամին և թշնամուն»<sup>1310</sup>:

Մի հետաքրքիր փաստ ևս. Շուշին հայաթափելուց հետո քաղաքի թուրքերը հայկական բնակավայրում սկսեցին իրենց տեր զգալ: 1920 թ. մարտյան ողբերգությունից հետո նրանք իրենց մեռելներին սկսեցին հուղարկավորել Շուշիում: Մինչ այդ՝ Փանահ խանից սկսած մինչև 1920 թ. մարտ ամիսը, նրանք լավ գիտեին, որ Արցախում հյուր են, և այդ թաղումները կատարում էին Արցախի սահմաններից դուրս:

Շուշիի հայկական թաղամասի ավերվելուց մի քանի ամիս անց հայ մտավորականներ Դ. Անանունը, Տ. Նազարյանը, Երևանում և եվրոպական երկրներում փորձում էին դրամահավաք կազմակերպել՝ հայկա-

<sup>1309</sup> Խաչենցի, Ղարաբաղի դրությունը, «Դրոշակ», հմ. 12, Փարիզ, 1928, էջ 333-334:

<sup>1310</sup> Ուլուբաբյան Բ., Փորձության օրերի խորհուրդը, էջ 92:

կան բնակավայրերը վերաշինել և եղեռնից փրկվածներին վերադարձնել իրենց տները:

Այդ ծրագիրը խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը խափանեց:

Շուշիում հայերի նկատմամբ իրագործված ջարդերն ապստամբության ղեկավարների համար սթափեցնող ներգործություն ունեցան: Լեռնային Ղարաբաղի կառավարությունը, ի մի բերելով ուժերը, ռազմաճակատներում նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը:

Առավել կատաղի մարտեր ծավալվեցին Ասկերանի ռազմաճակատում: Հայկական փոքրաթիվ ուժերը Դալի Ղազարի գլխավորությամբ մարտի 27-29-ը մի քանի ջախջախիչ հարվածներով հետ մղեցին թուրք-թաթարական մեծաքանակ զորքերի հարձակումները: Բանն այնտեղ հասավ, որ ահաբեկված թուրքերն ստիպված էին թողնել Աղդամը և մի քանի սահմանամերձ բնակավայրեր: Խայտառակ պարտության հետևանքով Ադրբեջանի զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Սելիմովը հեռացվեց պաշտոնից: Պարտությունից կատաղած մուսավաթական կառավարությունը նորանոր ուժեր է նետում ռազմաճակատ: Արդեն մարտի 30-ին Ղարաբաղի ռազմաճակատում կենտրոնացվեց Ադրբեջանի կանոնավոր բանակի 70-80 տոկոսը, բազմաազար «կամավորական» խաժամուժ, այստեղ մնացած թուրքական բազմաթիվ ջոկատներ, դադստանցի մուսուլմանների և քրդական զորախմբեր, ծանր ու թեթև հրետանի: Զորքերի ընդհանուր քանակը հասնում էր մոտ 80 000-ի<sup>1311</sup>:

Ապրիլի 3-ին, օգտվելով թանձր մառախուղից, թշնամին իր գերազանցող ուժերով ձեռքեց պաշտպանական գծի ճակատը և շարժվեց դեպի Շուշի: Ղարաբաղը բաժանվեց երկու մասի, Աղդամ-Շուշի ճանապարհն ընկնում է հակառակորդի ձեռքը: Դալի Ղազարը, կորուստներ չտալու համար, իր ջոկատին հրամայում է նահանջել, իսկ ինքը մնում է և կռվում մինչև վերջին փամփուշտը, իսկ վերջին գնդակն ուղղում իր թունքին:

Հեշտ հաղթանակի սովոր թուրքը լեռնաստանում հանդիպեց համառ դիմադրության: Ապրիլի 5-13-ը լարված մարտեր տեղի ունեցան Վարանդայի ուղղությամբ: Սղնախ գյուղի տակ թշնամին մեծաքանակ կորուստներ է տալիս, որի հետևանքով, ինչպես նաև Հայաստանից սպասվելիք օգնության լուրն առնելուց հետո, լքում է ռազմաճակատի գիծը:

Չնայած Հայաստանի հանրապետության ծանր վիճակին՝ կառավարությունը 1920 թ. ապրիլի 14-ին Զանգեզուրից Վարանդա ուղարկեց Դրոյին, իսկ Ղափանից Դիզակ՝ Նժդեհին: Այդ օրերին կազմվեց Արցախի ժամանակավոր կառավարությունը, որի կազմը հաստատեց Վարանդայի Թաղա-

<sup>1311</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 98:

վարդ գյուղում 1920 թ. ապրիլի 25-ին հրավիրված Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը: Միաժամանակ համագումարը որոշեց «հռչակել Լեոնային Ղարաբաղի միացումը Հայաստանի հանրապետությանը՝ որպես նրա անբաժան մաս»<sup>1312</sup>:

Արցախը պաշտոնապես ընդունում է Հայաստանի հանրապետության դրոշը, զինանշանը, հիմնը, դրամը:

Այսպիսով, բերված փաստերն ու մեկնաբանությունները հիմք են տալիս ասելու, որ դեռևս մինչև Ադրբեջանի և ադրբեջանցիների՝ որպես էթնոքաղաքական հանրության ասպարեզ գալը արցախահայությունը 1917-1920 թթ. վերակերտել էր իր պետականությունը՝ դառնալով տարածաշրջանային գործոն: Արցախի համար բախտորոշ նշանակության այդ տարիներին Շուշին հայտնվել էր քաղաքական բարդ զարգացումների կիզակետում:

1917 թ. Ռուսաստանում, քաղաքական ցնցումների ժամանակ, ոչ սովորական պայմաններում Շուշին նորից դարձավ ազատագրական պայքարի և պետականակերտման ջահակիրը: Այդ պատվաբեր առաքելության իրականացման ճանապարհին Շուշին անդառնալի կորուստներ ունեցավ: Հայաթափման եզրին հայտնված արնաքամ բերդաքաղաքը նոր պատմաշրջանում՝ խորհրդային տարիներին, բազում անակնկալների և հակասությունների հանգուցակետ դարձավ:

<sup>1312</sup> Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, էջ 40:

## Գլուխ 6

### ՇՈՒՇԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅԱՍՊԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐՈԳԱՅԹՈՒՄ

1920 թ. գարնանն արցախահայությունն ապրում էր մղձավանջային ժամանակներ: Թուրք-թաթարական անընդմեջ կրկնվող արշավանքներին գումարվել էր խորհրդային Ռուսաստանի ծավալապաշտ քաղաքականությունը, որը ենթադրում էր ամեն գնով խորհրդային կարգեր հաստատել տարածաշրջանի երկրներում: 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այդ գործընթացը դարձավ անշրջելի:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության համար անսահման հնարավորություն ստեղծվեց խորհրդայնացման քողի տակ, առանց մի կրակոցի, տիրել Լեոնային Ղարաբաղին, Զանգեզուրին և Նախիջևանին: Հայասպան այդ գործի մեջ ներքաշվեցին նաև հայ բոլշևիկները, որոնք երազում էին օր առաջ տեսնել Լեոնային Ղարաբաղի կառավարության անկումը:

Առաջին հերթին խնդիր դրվեց պառակտել Արցախի քաղաքական ուժերի միասնությունը, որին լծվել էր ինքնահռչակ նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը:

1920 թ. փետրվարի 28-ից մարտի 5-ը Շուշում հրավիրված Ղարաբաղի հայության 8-րդ համագումարի հետ միաժամանակ Շուշիում հայ բոլշևիկների նախաձեռնությամբ հրավիրվեց խորհրդակցություն: Հարկ է նշել, որ ընտրված 130 պատգամավորներից Շուշիի խորհրդակցությանը մասնակցում էին 62 պատգամավորներ, որոնցից 10-ը ընդունված հակահայկական բանաձևերին ձեռնպահ են քվեարկել<sup>1313</sup>:

Այդպիսով, չնայած քվորումի բացակայությանը, Շուշիի բոլշևիկյան խորհրդակցությունն ընդունում է հակահայկական որոշում, որի մեջ նշված է. «Լեոնային Ղարաբաղի վերջնական միացումը Ադրբեջանի հանրապետությանը կախված է այն պետական քաղաքականությունից, որ կունենա Ադրբեջանի կառավարությունը Լեոնային Ղարաբաղի նկատմամբ: Պատգամավորական խորհրդակցությունը գտնում է, որ այդ պետության մեջ

<sup>1313</sup> ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 14, թ. 72:

նա կգտնի խաղաղ կյանքի և ազատ զարգացման բոլոր պայմանները»<sup>1314</sup>։ Խորհրդակցությունը քննադատում է նաև Շուշիում կայացած արցախահայության 8-րդ համագումարի՝ Ադրբեջանի դեմ զինված պայքարի որոշումը։

Միաժամանակ որոշվեց Ադրբեջանի կոմկուսակցության առաջին համագումարի պատգամավոր ընտրել Արմենակ Ղարաբյոզյանին։ Վերջինս ընտրվեց Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի կազմում և մինչև կյանքի վերջը պայքարեց իր հայրենակիցների դեմ։

1920 թ. մայիսի 5-ին 11-րդ կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի 280, 281, 282-րդ գնդերը Բաքվից շարժվեցին և մայիսի 7-ին գրավեցին Գանձակը։ Շարունակելով ռազմերթը՝ 281-րդ հրաձգային գունդն առանց դիմադրության մտավ Պարտավ, իսկ մայիսի 9-ին՝ Աղդամ։

281-րդ գնդի հայ զինվորներից մեկը հետագայում իր հուշերում գրել է. «Դեռ Շուշի չհասած կարմիրներին դիմավորեցին Խանքյանդիում (Ստեփանակերտ) կանգնած երկրորդ դարաբաղյան ադրբեջանական գնդի պատգամավորությունը, որը ողջունեց մեր գալուստը Ղարաբաղ։ Շուշի քաղաքից 1-2 կմ հեռավորության վրա մեզ նորից դիմավորեցին ազգաբնակչության և տեղական նոր կազմված իշխանության ներկայացուցիչները, Բաքվի 5-րդ գնդի հրամանատար Իսրաֆիլովի գլխավորությամբ տեղական բնակչության ներկայացուցիչները։ Տեղի ունեցավ թուուցիկ միտինգ, որտեղ ողջույնի ձառեր արտասանեցին Շուշի գավառի հեղկոմի անդամներ Սուլթանովը (նախագահ), Մուսաևը (նախագահի տեղակալ), Վելիբեկովը, Սուլեյման Նուրին, Իբրահիմովը և մեր գնդի հրամանատար Աբուզարովը, զինկոմ Գայդալովը և ուրիշներ։ Նրանք իրենց ուրախությունն էին հայտնում ռուսական կարմիր բանակի գալստյան առթիվ և նշում, որ կարմիր բանակը եկել է իրենց ազատագրելու խաների ու բեկերի ձանկերից։ Ամեն ձառից հետո գոչում էին «Յաշասն ռուս գրմըզը օրդու» (կեցցե ռուսական կարմիր բանակը – Վ. Բ.)»<sup>1315</sup>։

Փաստորեն, մուսավաթական և բոլշևիկ թուրք գործիչները, Շուշիի իրենց ցեղակիցների հետ միասին, բոլոր պայմաններն ստեղծում էին կարմիր բանակի անարգել մուտքն Արցախի մայրաքաղաք ապահովելու համար։ Հայաթափված քաղաքն անգոր էր դիմակայել նոր արհավիրքին։

1920 թ. մայիսի 12-ին 11-րդ կարմիր բանակը մտավ Շուշի։ Այդ նույն օրը Ադրժողկոմը Ղարաբաղի արտակարգ կոմիսար է նշանակում Դադաշ Բունիաթզադեին։

ՀՀ կառավարությունը, պարզորոշ գիտակցելով տարածաշրջանային արագաթափ նոր զարգացումների տխուր հետևանքները հայոց պետականության ապագա ճակատագրի վրա, փորձում էր ընթացս միջոցներ ձեռնարկել՝ իրավիճակը շտկելու։

ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից խորհրդային Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությանը հասցեագրված նոտայում ասված է. «... ադրբեջանական հեղաշրջման իսկական իմաստն ըմբռնված և գնահատված է հայ ժողովրդի և նրա կառավարության կողմից ինչպես որ հարկն է։ Այդ հեղաշրջումն իբրև խանարեկական մուսավաթական կառավարության փոփոխում, սոցիալիստական հեղափոխության կառավարության կողմից Ադրբեջանի պետական և քաղաքական կյանքում ըստ էության ոչ մի փոփոխություն չի մտցրել։ Այդ այսպես կոչված սոցիալիստական կառավարության առաջին քայլն ուղղվեց Ղարաբաղի և Զանգեզուրի հայ աշխատավոր գյուղացիությանը Ադրբեջանի իշխանությանը ենթարկելուն, հակառակ ժողովրդի կամքին»<sup>1316</sup>։

Իր հերթին Լեռնային Ղարաբաղի կառավարությունն էլ Դրոյի հետ համագործակցաբար փորձում էր շտկել իրավիճակը։ Այդ օրերին կառավարությանն ավելի շատ մտահոգում էր ոչ թե երկրի խորհրդայնացումը, այլ այդ քողի տակ Արցախի բռնակցումը Ադրբեջանին։

1920 թ. մայիսի 6-ին Թաղավարդում գտնվող կառավարությանը մուսավաթական Խոսրովբեկ Սուլթանովի ղեկավարած հեղկոմը դիմում և առաջարկում է խորհրդային կարգեր հաստատել Ղարաբաղում և միանալ խորհրդային Ադրբեջանին։

Ղարաբաղի կառավարությունը ոչ միայն մերժում է, այլ նաև հայտարարությամբ դիմում է արցախահայությանը, թե «Ղարաբաղի հեղկոմի կոչը՝ դադարեցնել արյունահեղությունն ու անցնել խաղաղ աշխատանքի՝ վստահություն չի ներշնչում։ Վերջին անարյուն հեղափոխությունն Ադրբեջանում ոչ թե բոլշևիկյան, այլ համախալամական բնույթ է կրում»<sup>1317</sup>։

1920 թ. մայիսի 22-ին Լեռնային Ղարաբաղի կառավարությունը հրավիրում է իր վերջին նիստը, որտեղ քննարկվում են ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելու, խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի նկատմամբ վարվելիք քաղաքականության հարցերը։ Որոշվեց. «Առաջին. բնակչության ֆիզիկական գոյությունը փրկելու համար ... ավելի ուժեղացնել ժողովրդի ինքնապաշտպանությունը, մինչև որ քաղաքական հաստատուն դրություն կստեղծվի, իսկ Դրոն պիտի մնա այստեղ։

<sup>1314</sup> ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 14, թ. 72; «Կոմունիստ», 13 ապրիլի, Երևան, 1923:

<sup>1315</sup> Սարգսյան Ա., Հեղափոխության կրակների միջով. Երևան, 1967, էջ 55:

<sup>1316</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 44-45:

<sup>1317</sup> «Կոմունիստ», 29 ապրիլի, Երևան, 1930:

Երկրորդ. խորհրդակցությունը ողջունում է Ղարաբաղի սահմաններին կարմիր բանակի մոտենալը, սակայն գտնում է, որ հայ բնակչությունը որոշել է երբեք և ոչ մի պայմանով իր բախտը չկապել Ադրբեջանի հետ՝ պատրաստ լինելով իր ներսում խորհրդային կարգեր հաստատել<sup>1318</sup>:

1920 թ. մայիսի վերջերին Լեռնային Ղարաբաղի կառավարությունը Դրոյի հետ խորհրդակցաբար որոշեց դիմել Լենինին՝ հայտնելով.

«ա) որ Ղարաբաղի հայ աշխատավոր ժողովուրդը երկար տարիներու ընթացքին պայքարած է ռուս ցարական կառավարության և Ադրբեջանական խան-բեկական իշխանության դեմ:

բ) որ Ղարաբաղի ժողովուրդը բարեկամական զգացմունք ունի հանդեպ Ռուսաստանի մեծ զանգուածի, բայց չի հավատում մի հեղափոխության, որ արինառուշտ Սուլթանովների միջոցով ու ղեկավարությամբ է առաջ տարում:

գ) որ Ղարաբաղի հայ ժողովրդի կամքն է միանալ Հայաստանի Հանրապետության»<sup>1319</sup>:

Հեռագրի մեջ արտացոլված է քննարկվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի հայության տրամադրությունը՝ խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ միանալու Հայաստանի Հանրապետությանը:

Ղարաբաղի կառավարությունը արյունահեղությունից խոսափելու և հնարավոր քաղաքացիական պատերազմ չսանձազերծելու համար գնաց նման զոհաբերության. իշխանությունը հանձնեց բոլշևիկներին:

Այդ օրերին ժողովրդի մեջ նորից ձևավորվում էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու և մայր հայրենիքին միավորվելու գաղափարը: Սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը և մեկ այլ երկրի օժանդակությամբ փրկվելու խաբուսիկ հույսը հայության համար տարածքային նոր կորուստների պատճառ դարձան:

1920 թ. մայիսի 26-ին Թաղավարդ գյուղում հրավիրվեց Ղարաբաղի հայության տասներորդ համագումարը: Երկրամասը հայտարարվում է խորհրդային: Ստեղծվում է իշխանության նոր մարմին՝ հանձին հեղկոմի, որի նախագահը դարձավ Սաքո Համբարձումյանը: Քննարկվող ժամանակաշրջանում Ղարաբաղում գործում էին երկու հեղկոմներ:

Ադրբեջանի խորհրդայնացումից անմիջապես հետո նոր իշխանության ներկայացուցիչները, իրենց գերխնդիրը համարելով Ղարաբաղին տիրելու գործը, Շուշիում մուսավաթական Խոսրովբեկ Սուլթանովի գլխավորու-

<sup>1318</sup> «Կոմունիստ», 1 մայիսի, Երևան, 1930:

<sup>1319</sup> Միքայելյան Ա., Ղարաբաղի վերջին դեպքերը, «Հայրենիք», հմ. 12, Պոսթըն, էջ 125:

թյամբ անմիջապես ստեղծեցին հեղկոմ: Քանի որ հայասպան Սուլթանովը ժողովրդի մոտ ոչ մի հեղինակություն և ազդեցություն չունեի, հետագա դժվարություններից խուսափելու նպատակով Նարիմանովը 1920 թ. մայիսի 14-ին նրան պաշտոնազուրկ արեց և տեղը Ղարաբաղի հեղկոմի նախագահ կարգեց Բահադուր Կասըմ օղլի Վելիբեկովին:

Վերջինիս հրահանգված էր տեղ ու տնօրինություն անել Լեռնային Ղարաբաղի, Աղդամի և Քրդաստանի վրա: Նստավայրն էր Շուշին:

Բնականաբար, ինչպես միշտ, այս անգամ էլ արցախահայությունը չէր կարող հանդուրժել օտարի գերիշխանությունը: Համակերպվելով ստեղծված իրավիճակին, որոշակի հույսեր կապելով նոր կարգերի հետ՝ երկրամասի հայությունը Սաքո Համբարձումյանի գլխավորությամբ ստեղծեց իշխանության մարմին՝ հեղկոմ, որի նստավայրն էր Վարանդայի Թաղավարդ գյուղը:

Սաքո Համբարձումյանը և Լեռնային Ղարաբաղի հեղկոմի անդամները, անսալով Ն. Նարիմանովի հորդորներին, 1920 թ. հունիսի 16-ին տեղափոխվեցին Շուշի, և մայիսի 20-ին հայերից ու թաթարներից կազմվեց Ղարաբաղի հեղկոմ՝ Բահադուր Վելիբեկովի նախագահությամբ: Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի կողմից Ղարաբաղի արտակարգ կոմիսար նշանակվեց Դադաշ Բունիաթզադեն, կոմիսարի տեղակալ՝ Արմենակ Ղարաբյոզյանը:

Փաստորեն, նոր ստեղծված մարմինը թե՛ թուրքական (թաթարական) և թե՛ հայկական մասով ադրբեջանամետ էր:

Արցախը հեշտ յուրացնելու նպատակով խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը ձեռնամուխ եղավ նաև երկրամասում ավանդաբար գոյություն ունեցող հայկական շրջանների տարրալուծմանը հարևան թուրքաբնակ և քրդաբնակ գավառների հետ: Այդպես Ջրաբերդի շրջանը մտցվեց Ջևանշիրի գավառի մեջ, Դիզակը՝ Ջեբրայիլի, իսկ Խաչենն ու Վարանդան մնացին Շուշիի գավառում:

Այս ապօրինության դեմ պայքարելու նպատակով 1920 թ. օգոստոսի 3-ին հրավիրվեց Շուշիի գավառային կոմիտեի նիստ, որտեղ որոշվեց դիմել Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին՝ պահանջելով Ղարաբաղի հայկական շրջանները կազմակերպչորեն մեկ վարչական միավորի մեջ կենտրոնացնելու: Միաժամանակ հատուկ որոշումով հանձնարարվեց նորընտիր կոմիտեին՝ աննահանջ շարունակել պրպտումները Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծման համար<sup>1320</sup>:

1920 թ. Շուշիի մարտյան ողբերգությունից հետո քաղաքում տեղ ու տնօրինություն անող մուսավաթականների և թուրք կոմունիստների գործելա-

<sup>1320</sup> Հովհաննիսյան Գ., նշվ. աշխ., էջ 219:

ճր սթափեցնող ազդեցություն ունեցավ հայ բուլշևիկ որոշ գործիչների վրա: Նրանք հասկացան, որ հայկական երկրամասն իրենց կուսակիցները կործանման են տանում: Մյուս կողմից էլ, հաշվի առնելով հայության տրամադրությունը, միջոցներ էին որոնում՝ Արցախը վերամիավորելու ապագայում ստեղծվելիք խորհրդային Հայաստանին:

Լեոնային Ղարաբաղի կոմկուսի անդամ Սուրեն Շադունցը, որն արցախահայության դատի պաշտպանության հարցում այնքան էլ շատ աչքի չէր ընկնում, ականատես լինելով Ադրբեջանի վարած քաղաքականությանը, 1923 թ. հունիսի 18-ին Ս. Օրջոնոկիձեին, Ադր.ԿԿ և ՀԿԿ Կենտկոմներին գրել է. «Ես գտնում եմ, որ ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Զանգեզուրում ազգային հարցը ճիշտ լուծելու և այդ երկրի տնտեսական վերածննդի համար անհրաժեշտ է Ղարաբաղի լեոնային մասը Զանգեզուրի հետ միասին առանձնացնել իբրև մեկ ինքնավար միավոր: ... Հայերի ջարդը Շուշիում, Զանգեզուրի կոմունիստական ջոկատի զինաթափումը Շուշիում, լեոնային հատվածի շահերը լրիվ արհամարհելը բավական ակնառու կերպով ասում են, որ այդ երկիրը թողնել Ադրբեջանի սահմաններում՝ այն պայմաններում, որոնք եղել են մինչև հիմա, չի կարելի: Ուստի, ես գտնում եմ, որ այդ ինքնավար մարզը պետք է կապված լինի Անդրժողկոմխորհի հետ»<sup>1321</sup>:

Բայց ուժերն անհավասար էին: Խորհրդային Ռուսաստանը, ելնելով իր ծավալապաշտ քաղաքականությունից, անտեսելով հայ ժողովրդի տարրական իրավունքները, ամեն կերպ պաշտպանում էր խորհրդային Ադրբեջանին:

1920 թ. մայիսին՝ խորհրդայնացումից հետո, Արցախը կորցրեց պետականությունը, բայց ո՛չ ըմբոստ ոգին:

Երկրամասում չկար քաղաքական մի ուժ, որ կարողանար նոր ոգի ու եռանդ հաղորդել ազատագրական պայքարին: Դաշնակցական գործիչների մի մասը հեռացել էր Արցախից, մի քանի հոգի էլ անցել էին ընդհատակ:

Իրական իշխանություն ունեցող հայ բուլշևիկներն էլ համակերպվել էին ստեղծված իրավիճակին և, համաշխարհային հեղափոխության մոլուցքով տարված, դարձել էին Նարիմանովի և մոսկովյան կենտրոնական իշխանությունների կամակատարը:

Նման բարդ և անհուսալի պայմաններում ազատագրական պայքարի կազմակերպչի դերում հանդես եկավ Գարեգին Նժդեհը: Նա կարճ ժամանակահատվածում կարմիր բանակայիններին և թուրք ասկյարներին ջախջախեց Սյունիքում և ստեղծեց ազգային մի իշխանություն, որի իրավասությունները տարածված էին նաև Լեոնային Ղարաբաղի վրա:

<sup>1321</sup> ՀԱԱ, ֆ. 85, ց. 24, գ. 307, թ. 1:

Դեռևս 1920 թ. մայիսին Դրոն Թևան Ստեփանյանին նշանակում է Լեոնային Ղարաբաղում Նժդեհի տեղակալ՝ Կարմիր բանակի դեմ պայքարելու, արցախահայության ազատագրական շարժմանը կազմակերպված ընթացք տալու համար<sup>1322</sup>:

1920 թ. աշնանը Կապանում Թևան Ստեփանյանը հանդիպում է Գարեգին Նժդեհի հետ: Սպարապետը լուծում է Արցախում գտնվող գորամիավորումների հանդերձանքի, զենքի, զինամթերքի և ֆինանսական հարցերն ու ապստամբների առաջ, որոնց թիվն այդ ժամանակ հասել էր 1800-ի, խնդիր է դնում Լեոնային Ղարաբաղը միավորել Զանգեզուրի և Հայաստանի հետ<sup>1323</sup>:

Ապստամբները կարճ ժամանակահատվածում ազատագրում են ամբողջ Դիզակը, Վարանդան, Խաչենի զգալի մասը: «Հակառակորդը Լեոնային Ղարաբաղում գրաված գյուղերը միացնում է Արարատյան հանրապետությանը», - տազնապով գրում են բուլշևիկ գործիչները<sup>1324</sup>:

Գարեգին Նժդեհը, ականատես լինելով արցախահայության հերոսական ոգորումներին ու հաջողություններին, Արցախն ամբողջապես ազատագրելու նպատակով 1921 թ. հունվարին նոր գորամասեր է ուղարկում: 1921 թ. Երևանում փետրվարյան ապստամբության հաջողությունից հետո Ղարաբաղում արմատական քեկում կատարվեց: Մեկը մյուսի հետևից ազատագրվում էին գյուղերը: Շուշին այդ օրերին դարձել էր հակահայկական ուժերի կենտրոնատեղի:

1921 թ. փետրվարի 15-ին Շուշիի գավառային հեղկոմի նախագահ Շամիլ Մահմուդբեկովը խուճապահար հեռագիր է ուղարկում Ն. Նարիմանովին և Ս. Օրջոնոկիձեին՝ հաղորդելով, որ հայկական գյուղերն առանց դիմադրության հանձնվում են Թևանին<sup>1325</sup>:

Կենտրոնից աջակցություն ակնկալելով՝ ԱևՍՀ ներկայացուցիչ Բ. Շախտախտինսկին Լենինին զեկուցում է. «Հայաստանի մի մասը, մասնավորապես Ղարաբաղը և Զանգեզուրը, մնում է դաշնակների ձեռքին, որոնք կապ ունեն Թավրիզի հետ, որտեղ ապրում են Անտանտի գործակալները: Նրանք զավթել են Ղարաբաղի համարյա ողջ լեոնային մասը: Մեր կողմից զինած կոմբջիցների շուրջ հազար հայ մարդ անցել են դաշնակների կողմը»<sup>1326</sup>:

<sup>1322</sup> «Նորք», հմ. 6, Երևան, 1990, էջ 86:

<sup>1323</sup> Բալայան Վ., Արցախի պատմություն, էջ 312:

<sup>1324</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 189, թ. 5-6:

<sup>1325</sup> Նույն տեղում, գ. 203, թ. 1-2:

<sup>1326</sup> АВПРИ, ф. 04, оп. 39, л. 232, д. 53001, л. 76-77.

1921 թ. ապրիլի 2-ին, Երևանը գրավելուց հետո, կարմիր բանակն իր ողջ ներուժը կենտրոնացնում է Ջանգեզուրում և Ղարաբաղում՝ հայկական ինքնավարության վերջին կղզյակները ոչնչացնելու համար:

1921 թ. ապրիլի կեսերին դաժան մարտեր էին ծավալվում Հին Թաղերի և Խժաբերդի ուղղությամբ: Ուժերն անհավասար էին: Հետագա դիմադրությունը դառնում էր անիմաստ: 1921 թ. ապրիլի 18-ին սյունեցիների ջոկատը, կապիտան Ամիրջանյանի գլխավորությամբ, Ավդալարի և Ջաբուխի ուղղությամբ ձեռքում է կարմիր բանակի ու տեղացի քրդերից բաղկացած զորամասերի պաշարման օղակը և Ջանգեզուրում միանում Նժդեհի հիմնական ուժերին: Հայաթափելուց և խորհրդայնացնելուց հետո, մինչև 1923 թ. ԼՂԻՄ կազմավորումը, Շուշիում էին կենտրոնացած գավառի կուսակցական և խորհրդային մարմինները, որոնք ամեն կերպ փորձում էին ընկճել Լեոնային Ղարաբաղի հայությանը և ավարտին հասցնել երկրամասի բռնակցումը խորհրդային Ադրբեջանին:

1920 թ. հունիսի 16-ից Շուշիում գործում էր Բ. Վելիբեկովի գլխավորած Ղարաբաղի հեղկոմը: Ս. Համբարձումյանը նշանակվեց կուսակցության Շուշիի գավառային կոմիտեի առաջին քարտուղար: Քիչ անց, 1920 թ. հոկտեմբերին, Շուշիի գավկոմի առաջին քարտուղար ընտրվեց Ս. Ադիգյոզալովը:

Խորհրդային իշխանության արշալույսին Շուշիում արդեն լույս էին տեսնում մի քանի թուրքալեզու թերթեր, որոնք դարձել էին կեղծ ինտերնացիոնալիզմի և խորհրդային Ադրբեջանի գաղափարական խոսափողերը:

1920 թ. հուլիսին Շուշիում «Գյուղացիական կոմունա» թերթի ընդամենը մեկ կամ երկու համար է լույս տեսել հայերեն, ռուսերեն ու թուրքերեն<sup>1327</sup>:

1923 թ. հունվարին Շուշիում թուրքերեն լույս է տեսել «Ջավան էքինչի» (Երիտասարդ հողագործ) թերթի ընդամենը երկու համար<sup>1328</sup>: Նույն թվականի մայիսի 7-ից սկսել է հրատարակվել գավկուսկոմի և գավգործկոմի պաշտոնաթերթը՝ «Ղարաբաղ էքինչիսի» (Ղարաբաղի հողագործ) անվանմամբ: Այն նույնպես կարճ կյանք է ունեցել, և 10-րդ համարից հետո հրատարակությունը դադարեցվել է<sup>1329</sup>:

Շուշիի շրջանը կազմավորվելուց հետո, 1932 թ. նոյեմբերի 7-ից, սկզբում Ադրբեջանում, այնուհետև Շուշիում լույս է տեսել շրջկոմի և շրջգործկոմի

<sup>1327</sup> Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934), Երևան, 1934, էջ 106; Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), Համահավաք ցանկ, կազմեց Ա. Կիրակոսյան, Երևան, 1970, էջ 69:

<sup>1328</sup> Ավագյան Ս., Սովետական Ղարաբաղի մամուլը, էջ 5:

<sup>1329</sup> Նույն տեղում, էջ 5:

պաշտոնաթերթ՝ «Սոսյալիզմ մալդարգրար» (Սոցիալիստական անասնապահություն) անվանմամբ, որը 1938 թ. մինչև 1962 թ. վերանվանվել է «Կոլխոզ բայրաղը» (Կոլտնտեսային դրոշ)<sup>1330</sup>: 1962 թ. մինչև 1992 թ. այդ թերթն ունեցել է «Շուշա» անունը, որը հետագայում հրատարակվել է Բաքվում<sup>1331</sup>: 1920-1921 թթ. Շուշիում լույս է տեսել նաև ռուսալեզու «Кавказская коммуна» թերթը, որն ունեցել է 106 համար<sup>1332</sup>:

1921 թ. օգոստոսի 1-ին հրավիրվեց Շուշիի գավառի խորհուրդների արտահերթ համագումար, որտեղ Բաքվի բանվորների ծանր վիճակի մասին զեկուցումով հանդես եկավ Լ. Միրզոյանը: Նա բոլոր գյուղական խորհուրդների նախագահներին պարտավորեցրեց կարճ ժամանակահատվածում գյուղացիներից հացահատիկ հավաքել և ուղարկել Բաքվի բանվորներին: Միաժամանակ, անդրադառնալով Ղարաբաղյան հարցին, նա ընդգծեց, որ քաղաքական, տնտեսական և մշակութային տեսանկյունից Ղարաբաղը կապված է Բաքվի հետ: Այդ հանգամանքը կանխավ որոշում է հարցը, թե երկրամասը քաղաքական որ միավորի կազմում պիտի լինի<sup>1333</sup>:

Ադրբեջանի ղեկավարությունը 1922 թ. աշնանը նոր արշավ սկսեց արցախահայության նկատմամբ: 1922 թ. նոյեմբերին երկրամասի գյուղական և շրջանային խորհուրդների նախագահներին ու քարտուղարներին կանչում են Շուշի՝ խորհրդակցության, որին մասնակցում էին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ալիհեյդար Կարաևը և Լևոն Միրզոյանը: Կարաևը պահանջում է Լեոնային Ղարաբաղը միավորել Ադրբեջանական ԽՍՀ-ին: Հավաքի մասնակիցների մեծամասնությունը գտնում է, որ Լեոնային Ղարաբաղի վերամիավորումն Ադրբեջանի ԽՍՀ-ին նպատակահարմար չէ: Նրանք պնդում են, որ հարցը պետք է վճռվի երկրամասի բնակչության հանրաքվեի միջոցով: Մի շարք պատգամավորներ իրենց ելույթներում նշում են, թե Լեոնային Ղարաբաղի աշխատավորների համար միայն ցանկալի է լինել Խորհրդային Հայաստանի կազմի մեջ:

Սակայն Կարաևի և Միրզոյանի ճնշման տակ խորհրդակցությունը որոշում է ինքնավար մարզի կարգավիճակով Արցախը թողնել Ադրբեջանի կազմում<sup>1334</sup>:

<sup>1330</sup> Ավագյան Ս., Սովետական Ղարաբաղի մամուլը, էջ 43-45:

<sup>1331</sup> Հարությունյան Յու., Շուշիի ռուսերեն պարբերական հրատարակությունները, «Կաճառ», հմ. 6 (71-82), 2012, Շուշի, 2014, էջ 155, «Шуша», но. 98, 18 августа, Шуша, 1990.

<sup>1332</sup> «Սովետական Ղարաբաղ», 17 հունվարի, Ստեփանակերտ, 1968:

<sup>1333</sup> Гулиев Дж., Под знаменем ленинской национальной политики, Баку, 1972, стр. 304.

<sup>1334</sup> Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան, ֆ. 2, ց. 34, գ. 5569, թ. 1-7:

Բողոքների ալիքը ահագնանում է: Արցախահայությունը վրդովմունքով է ընդունում այդ անօրեն որոշումը: Բանն այն էր, որ այդ խորհրդակցությունը լիազորված չէր նմանօրինակ հարց լուծելու, որովհետև մինչ այդ գյուղական ու շրջանային խորհուրդները դրան հակառակ որոշումներ էին կայացրել:

Մուսավաթական թուրքերի կատարած գործն իր ավարտին հասցրին բուլշևիկ գործիչները: 1921 թ. 400 շուշեցիներ դիմում են Լեռնային Ղարաբաղի կենտրոնական նախագահ Արմենակ Ղարաբաղյանին՝ խնդրելով թույլ տալ վերադառնալ հայրենի քաղաք, վերաշինել տները և բնակվել այնտեղ: Խորհրդային Ադրբեջանի դրածոն մերժեց այդ խնդրանքը: Դրա փոխարեն հարևան թուրքաբնակ և քրդաբնակ գյուղերից սկսեցին մահմեդականների տեղափոխել Շուշի և հայերի՝ շուրջ 800 երկհարկանի կիսավեր տները տրամադրեցին նրանց<sup>1335</sup>:

Շուշին լիովին հայաթափելուց հետո խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունն արգելեց այն դարձնել ԼՂԻՄ-ի կենտրոն: 1921 թ. հուլիսի 5-ին՝ Կովկասյան բյուրոյի տխրահոշակ որոշումը կայացնելու ժամանակ, Նարիմանովը պնդում էր, որ Շուշիի փոխարեն Խանքենդի գյուղը դարձնեն ԼՂԻՄ-ի վարչական կենտրոն:

Ավելին, ԼՂԻՄ-ի սահմանները ճշտող հանձնաժողովի անդամ Միր Ջաֆար Բաղիրովը 1923 թ. հոկտեմբերի 8-ին ԱԿ(Բ)Կ Կենտկոմին հայտնում է, որ անհրաժեշտ է Բերդաձորի և Ստեփանակերտի արանքում գտնվող թուրքաբնակ Խալիպալու, Ջարալու, Մուսուլմանլար գյուղերը, ինչպես նաև Շուշի քաղաքն ընդգրկել Քրդստանի օկրուգի կազմի մեջ և այն դարձնել նոր ձևավորվող վարչական միավորի կենտրոն<sup>1336</sup>: Միայն արցախահայության պայքարի շնորհիվ այդ ծրագիրը ձախողվեց:

Հայ ժողովրդի պարծանքը հանդիսացող հայաշունչ ու հայաբույր Շուշին խորհրդային ողջ ժամանակահատվածում (մինչև նրա ազատագրումը՝ 1920 թ.-1992 թ. մայիսի 9-ը) արցախահայության համար դարձել էր վախի, սարսափի, տխուր և անհեռանկար, անհույս ապագայի խորհրդանիշ:

1921 թ. հունվարին Շուշիում տեղի ունեցած դեպքի ականատեսը պատմում է. «Ես և Լամբարոնը կանգնած էինք պատշկամբում և զրուցում էինք, երբ տեսանք մի մեծ խումբ մարդկանց՝ շրջապատված ասկյարներով, բերին «Խանեն աղջկա» աղբյուրի մոտ գտնվող ազատ տարածությունը: Բացի ասկյարներից, շրջապատել էր նաև թուրք ամբոխը և քարերով, փայտերով խփում էին այդ կապած կոներով մարդկանց: Ես և Լամբարոնը սարսափում

էինք այդ տեսարանից, որը կատարվում էր մեր աչքի առջև: ... ամբոխը ծեծելով այդ մարդկանց, քշեց դեպի բանտը:

Տրոնավար գյուղից բերած 60-65 մարդկանց քշելով հինավուրց բերդի մեջ՝ սկսեցին կոտորել քարերով, դազանակներով ու սրերով: Մի քանի մարդիկ, որոնք վիրավորված մնացել էին դիակների տակ, ուշքի գալով, դուրս են գալիս գիշերը ու փախչում»<sup>1337</sup>: 1921 թ. դեպքերի մասին ժամանակակիցը գրել է. «Առանց որևէ դատի ու քննության կացնահարում և տմարդի եղանակով սպանվում են Թարթառում Ղարաբաղի հայ գյուղացիության շահերին երկար տարիներ նվիրված գործիչները, հարյուրավոր ինտելիգենտ ուժեր տարվում են Բաբու, Գանձակ, Շուշի և փակվում բանտերում»<sup>1338</sup>:

Խորհրդային իշխանության կողմից Շուշիում ստեղծվել էր «հեղափոխական դատարան» կամ ավելի շատ հայտնի «տրոյկա»-ն, որն առանց դատ ու դատաստանի գնդակահարում էր բերդաքաղաք բերված հայերին: Իսկ արդեն 1960-ական թվականներին Բերդաձորի գյուղատնտեսը Շուշիի կենտրոնում սպանվեց ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահի տեղակալ Ջ. Բեգլյարովի եղբոր կողմից և մնաց անպատիժ: Քաղաքում սպանել են երաժշտական տեխնիկոմի հայ պահակին և որդուն: Ստեփանակերտի անտառտնտեսության ավտովարորդ Սուրեն Ուլուբաբյանին Շուշիում ատրճանակով սպանել են միայն այն պատճառով, որ նրա ազգանունը համապատասխանում էր Բագրատ Ուլուբաբյանի ազգանվան հետ:

Խորհրդային տարիներին արցախահայությանը երկար ժամանակ հոգեբանական տեսանկյունից զոհի կարգավիճակում պահելու, քաղաքի նախկին ազգաբնակչությանն իրենց օջախները վերադառնալու և վերաշինելու գործին խոչընդոտելու նպատակով Ադրբեջանի իշխանությունների հրահանգով մինչև 20-րդ դարի 60-ական թվականների կեսերը Շուշիի ավերակները պահպանվեցին: Հրաշքով փրկված Ղազանչեցոց եկեղեցին ու Կանաչ ժամը երկար ժամանակ մնացին կիսավեր վիճակում: Այդ ամենի փոխարեն արագաթափ վերանորոգվեց Շուշիի մզկիթը: Հայկական հին շինությունների մի մասի կամարաձև լուսամուտներն ու շքամուտքերը սլաքաձև դարձրին՝ փորձելով դրանք ներկայացնել որպես մահմեդական ճարտարապետական արվեստի նմուշներ:

Քաղաքի ավերակները հոգեցունց ազդեցություն էին ունենում նաև առաջին անգամ Շուշի այցելած ինչպես հայերի, այնպես էլ օտարազգիների վրա:

<sup>1335</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, էջ 7; հ. 2, էջ 143:

<sup>1336</sup> www.irs-az.com/100331140534plf, Վ. Բալայան, Դրվագներ ..., էջ 178:

<sup>1337</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 2, էջ 158-159:

<sup>1338</sup> Արնոտ գիրք, Գորիս, 1921, էջ 2; ԼՂՀ պետարխիվ, ֆ. 268, ց. 13, գ. 1, թ. 9:

Մարինտա Շահինյանը քաղաքի ավերումից մի քանի տարի հետո, լինելով Շուշիում, «Լեռնային Ղարաբաղ» գրքում գրել է. «Ես տեսա Շուշիի կմախքը: Իմ առաջ հառնում էր երկու բլուր, որոնք ծածկված էին ավերված շենքերի կմախքներով: Քարից բացի ոչինչ չի մնացել, ոչ տանիք, ոչ դուռ, ոչ պատուհան, ոչ հատակ, ոչ երկաթ, ոչ ծառ, ոչ տախտակ, ոչ փայտամած, ոչ մեխ, միայն քարեր, քարեր ու քարեր՝ ինչպես անատոմիական կմախքի մաքրված ու կրծած չորացած ոսկորները:

Առաջինը, որից ապշեցի, լռությունն էր: Այդպիսի լռություն ես չեմ զգացել երբեք և ոչ մի տեղ: Այն անչափ անբնական էր: Հանկարծ մարդուն թվում էր, թե լռությունը քրտմնջում է, քարերը շնչում են, օրորվում, խշխշում և գլխիդ մազերը ցից-ցից կանգնում են: Այստեղ 1920 թ. մարտին երեք օրվա ընթացքում ավերվել ու հրկիզվել է 7 հազար տուն, և մորթվել են, թվերը տարբեր են, ոմանք ասում են երեք-չորս հազար, ոմանք էլ ավելի քան 12 հազար հայ: Փաստն այն է, որ երեսունհինգ հազար հայերից Շուշիում անգամ մեկ հայ չի մնացել»<sup>1339</sup>:

1930 թվականին Օսիպ Մանդելշտամը, լինելով Շուշիում, այդ հոգեցունց տեսարանները ներկայացրել է «Ֆայտոնչի» բանաստեղծության մեջ: Բանաստեղծի կինը՝ Նադեժդան, հետագայում գրել է. «... Այդ քաղաքում, որը ըստ երևույթին մի ժամանակ հարուստ էր ու բարեկարգ, ակնհայտ երևում էր ավերման ու կոտորածի պատկերը: ... Ասում են, որ ջարդերից հետո բոլոր ջրհորները լցված էին դիակներով: Իսկ նրանք, ովքեր ողջ են մնացել, փախել են մահվան քաղաքից ...»<sup>1340</sup>:

Անպատժելիությունը հետագայում ծնեց նոր ոճրագործություն: Եթե խորհրդային իշխանության արշալույսին ավերվեց քաղաքամայր Շուշին, ապա այդ նույն կարգերի մայրամուտին եղեռնագործության ենթարկվեց Սումգայիթի, Բաքվի, Գանձակի և մյուս քաղաքների ու գյուղերի հայությունը:

Հայկական թաղամասը նորից վերաշինելու փոխարեն հողի երեսից վերջնականապես ցնջելու և ինքնատիպ ճարտարապետական կառույցները վերացնելու մարմաջով տարված՝ 1960-ական թվականներին քանդեցին հազարավոր հայկական շենքեր, շինություններ: Դա ավարտելուց հետո սկսեցին հաշվեհարդար տեսնել նաև քրիստոնեական 6 հայկական, 1 ռուսական, 1 հայ-ռուսական գերեզմանատների հետ:

Դեռևս 1950-ական թվականներից Բաքվի թերթերում տպագրվում էին «աշխատավորների» նամակներ, որոնցում կոչ էր արվում ոչնչացնել հայ-

կական գերեզմանատները: Եվ ահա 1966 թ. Բաքվում «Ստրոիտել» թերթում հրատարակվեց ոմն «Ճարտարապետ» Ք. Սայիդովի «Մեռածները կերան ապրողներին» հոդվածը, որտեղ հեղինակն առաջարկում էր քանդել Շուշիի 8 գերեզմանատներից 7-ը և միայն թողնել գործող աղբրեջանականը<sup>1341</sup>:

Շուտով այդ վայրագ ծրագիրն իր արտացոլումը ստացավ 1974 թ. կազմված Շուշիի գլխավոր հասակագծում: Նախատեսվում էր հայկական գերեզմանատների տեղը կառուցել բազմահարկ շենքեր և զբոսայգի: Շուշիի հյուսիսային հատվածում գտնվող գերեզմանատան միջով անցկացվեց նոր ճանապարհ, որի կարիքը քաղաքն ամենևին չէր զգում: Ռուսական գերեզմանատունը վերածվել էր անասունների փարախի: 1975 թ. Շուշիի միակ ռուսական եկեղեցին քանդեցին և տեղում մշակույթի տուն կառուցեցին: Շուշիի Մեղրեցոց եկեղեցուց պահպանվել էր միայն մի պատ, և սրբավայրի տեղը կառուցվել է ամառային բացօթյա կինոսրահ: Կանաչ ժամը վերածվել էր հանքային ջրերի ըմպելասրահի: Դաժան հաշվեհարդարի ենթարկվեց Ղազանչեցոց հոյակերտ կառույցը: Քանդվեցին եկեղեցու տանիքի վեղարի, կողապատերի սրբատաշ քարերը, քիվերը, քանդակներն ու արձանագրությունները քերվեցին, գմբեթավոր սյուների ու պատերի տակ խարույկներ վառվեցին:

1958 թ. օգոստոսի 26-ին Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսը գրություն է հղել ՀԵԳԽ-ի նախագահ Ս. Գասպարյանին, որում անդրադարձել է նաև այս եկեղեցու վիճակին. «Ողբալի կացության է մատնված Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի Ս. Ամենափրկիչ եկեղեցու շենքը, որը ճարտարապետական ու պատմական մի հիասքանչ կոթող կարելի է համարել: Բարերախտաբար այս եկեղեցին ամբողջությամբ դեռևս կանգուն է, փլված է միայն կենտրոնական գմբեթը և որոշ ավերածության է ենթարկված շենքի ներսը:

Անցյալ 1957 թ. սեպտեմբերին, երբ անձամբ այցելեցի այս եկեղեցին, ... ականատես եղանք աննկարագրելի մի տեսարանի: Բացի փլված գմբեթից, եկեղեցու բոլոր դռներն ու պատուհանները հանված էին, երբեմնի այս աղոթավայրը ուղղակի վեր էր ածվել անասունների ախոռի ...: Այդ պահին մեզ հետ էր նաև Աղբրեջանական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կրոնից Գործերի լիազոր պ-րն. Մամեդովը: Նա ևս մեզ հետ միասին վրդովվեց այդ տեսարանով և համաձայնվեց, որ ճարտարապետական և պատմական այդ հոյակապ կոթողի նման ողբալի վիճակը հետևանք է դատապարտելի անտարբերության: Հենց տեղվույն վրա մենք պայմանավորվեցինք պ-րն. Մամեդովի հետ, որ տեղական իշխանությունները ձեռք կառնեն ամե-

<sup>1339</sup> Шагинян М., Нагорный Карабах, Москва, 1930, стр. 41-42.

<sup>1340</sup> Мандельштам, Сочинение в двух томах, т. 1, Москва, 1990, стр. 107.

<sup>1341</sup> «Строитель», но. 9, 2 февраля, Баку, 1966.



նատարական միջոցները եկեղեցու շենքը հետագա ավերածությունից պաշտպանելու համար՝ ներսը մաքրելու և շենքի դռներն ու պատուհանները հասարակ տախտակով գամելու, որպեսզի անասունները չմտնեն, մինչև որ հնարավոր լինի հնությունների պահպանման պետական պատկան մարմինների միջոցով նորոգելու այդ եկեղեցին, որ իբրև պատմական ու ճարտարապետական հնություն կարող է միայն պատիվ բերել որևէ քաղաքի:

Ահա անցել է 1 տարի, սակայն մեր ունեցած տեղեկությունների համաձայն ոչ մի միջոցառում չի կատարված և եկեղեցին մնում է նույն անմխիթար վիճակում»<sup>1342</sup>:

Ղազանչեցեց եկեղեցու հարավ-արևելյան հատվածում գտնվող ամենահին հայկական գերեզմանատունը հիմնովին ավերվեց, ու քաղաքը կառուցած հայ մարդկանց շիրիմների վրա բնակարաններ կառուցվեցին: Որպես շինանյութ թուրքերն սկսեցին օգտագործել հայատառ արձանագրություններով շիրմաքարերը: 1970-ական թվականներին հանվել ու ջարդվել է նշանավոր «Պեխի աղբյուր»-ի հայատառ արձանագրությունը:

1971 թ. նախկին շուշեցի Արտաշես Առուշանյանը գրել է. «60 տարի բացակայությունից հետո խոր ծերության հասակում եկա տեսնելու իմ հայրենի Շուշի քաղաքը: Սակայն սրտի ցավով եմ գրում, որ քաղաքը գտնվում է սոսկալի դրության մեջ: Միթե հնարավոր չէ մի քիչ բարեխղճություն ու պատասխանատվություն ցուցաբերել անցյալի ժառանգության պահպանության նկատմամբ: Այստեղ ոչնչացվում են մի ժողովրդի քրտինքով ստեղծված հուշարձանները: Այստեղ քանդում, ավերում են հայ արվեստի արժեքավոր կոթողները: Այստեղ հողի երեսից քերում են գերեզմանոցները, բնակելի տները, պատերից՝ վիմագրությունները, բարձրաքանդակները: Այստեղ նույնիսկ քաղաքի պատմության թանգարանում ոչինչ չեն ասում հայկական քաղաքամասի, հուշարձանների, նշանավոր հայ գործիչների, հեղափոխականների մասին: Տվյալ պահին Ղազանչեցոց տաճարը վեր են ածել արտաքնոցի, Կանաչ ժամ եկեղեցին՝ պահեստի, Ագուլեցոց և Մեղրեցոց եկեղեցիները քանդում են: Այս ամենը տեսնելով՝ Շուշիում հանգստացող նախկին շուշեցիներս լացում ենք: Միթե այսքան անտեր է հայ ժողովուրդը: Բա որտեղ են մեր դեպուտատները, գիտնականները, ղեկավարները:

Սակայն մեր ժողովրդի հնության գանձերը պահպանելով կթեթևանա մեր ցավը: Նրանք, ովքեր կարծում են թե ոչնչացնելով մոռացության կտան մեր հիշողությունը, սխալվում են դրանով, նրանք նոր ցավ, նոր հիշողություն են առաջացնում»<sup>1343</sup>:

<sup>1342</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», հմ. 1 (99), Երևան, 2001, էջ 110–111:

<sup>1343</sup> Մկրտչյան Շ., Արցախյան գրառումներ, էջ 353–354:

Ղազանչեցոց եկեղեցու մոտ գտնվող հայկական գերեզմանոցը թուրքերի կողմից ոչնչացնելու կապակցությամբ շուշիաբնակ Անանյանը 1982 թ. ապրիլի 4-ին նամակ է գրել Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին: Նամակում մասնավորապես ասված է. «Գերեզմանոցի շուրջն ամեն կողմից անհատական մարդիկ բնակելի շենքեր են կառուցում, տապանաքարերից շատերը մնացել են տների բակերում, քանդում–կոտրատում–փչացնում են: Տապանաքարերից շատերը վայր են գցել իրենց հիմնաքարերից, նրանց տեղը աղբանոց է դարձել ...: Հարգելի Սուրբ Հայր, իմ կարծիքով բոլոր ազգերն իրենց պապական հնությունները պահպանում են անհապաղ: Չեմ երկարացնում, կարծեմ պարզ կլինի, միայն խնդրում եմ, եթե հաճելի լինի, ուղարկեք Ձեր կողմից, կամ հնության պահպանության կոմիտեից հատուկ լիազորված մարդ, տեղում ուսումնասիրելու ...»<sup>1344</sup>:

1982 թ. հունվարի 14-ին, երբ Հ. Ալիևը հերթական անգամ եղավ Շուշիում, նկատել է, որ քաղաքի կենտրոնում գտնվող Թադևոս Թամիրյանի միջոցներով կառուցված աղբյուրի վրա հայատառ գրություն կա: Նա Շուշիի շրջկոմի առաջին քարտուղար Հաջիևին հանձնարարում է աղբյուրը վերանորոգել: Այդ հրահանգը կատարվելուց հետո աղբյուրի ճակատային մասից անհետացավ հայատառ. «Այս ջուրն Թամիրյանցի ջրամբարիցն է բերված, 1900 թ.» արձանագրությունը<sup>1345</sup>:

Քաղաքի երկու մուտքերում գտնվող հայկական գերեզմանոցները Շուշի այցելողների աչքերից հեռու պահելու նպատակով ծառապատվեցին: Միայն Արցախի հայության պայքարի շնորհիվ<sup>1346</sup> հաջողվեց փրկել գերեզմանատների մի մասը, որտեղ պահպանվող հայատառ գերեզմանաքարերը լուռ վկաներն են մի ժամանակվա հայկական չնաշխարհիկ քաղաքի փառավոր անցյալի, որ այսօր նորից իր տերերի գրկում հառնել են ավերակների միջից:

Հայ հանրության ճնշման տակ 1981 թ. սկսվեցին Ղազանչեցոց եկեղեցու վերանորոգման աշխատանքները: Սակայն այստեղ էլ ամեն ինչ հարթ չէր ընթանում: Հազար ու մի խոչընդոտներ էին ստեղծվում Շուշիի թուրք ղեկավարների կողմից: Անգամ շինարարական աշխատանքները ղեկավարող բրիգադավար Վ. Բաբայանին անանուն սպառնալիքներ էին տալիս՝ պահանջելով եկեղեցու գմբեթին խաչ չտեղադրել: Նրա հավաստմամբ՝ Ադրբե-

<sup>1344</sup> Հարությունյան Հ., Շուշի ..., էջ 190:

<sup>1345</sup> Բեգլարյան Հ., Նշվ աշխ., էջ 463:

<sup>1346</sup> 1960 թ. ամռանը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն Վիկտոր Համբարձումյանի և Սերո Խանգաղյանի ուղեկցությամբ եղել է Շուշի քաղաքում: Հայկական գերեզմանատների անխնամ վիճակը տեսնելով կաթողիկոսը կշտամբանքի խոսքեր է ուղղել քաղաքի թուրք ղեկավարներին:

ջանի մշակույթի նախարարը խոստացել էր փոխել հավատը, եթե Ղազան-չեցոց վրա հանկարծ խաչ դրվի<sup>1347</sup>: Խորհրդային տարիներին եկեղեցին այդպես էլ մինչև վերջ չվերանորոգվեց:

Ընդհանուր առմամբ Ադրբեջանի ղեկավարությունը ընդգծված աստելություն ուներ Արցախի հայկական եկեղեցիների նկատմամբ: Պատահական չէ, որ ողջ խորհրդային ժամանակահատվածում երկրամասում գործող եկեղեցի չկար:

Վիճակը շտկելու նպատակով 1950 թ. Գևորգ Զ կաթողիկոսը գաղտնի նամակով (թիվ 419) դիմում է Ստալինին՝ խնդրելով թույլ տալ Արցախում եկեղեցիներ բացել: Նամակում մասնավորապես նշված էր. «Շուշին-Նուխին-Կիրովաբադը 1910 թ. ունեին մոտ 320 եկեղեցի, իսկ այժմ 1»<sup>1348</sup>: Կաթողիկոսի խնդրանքը մերժվեց:

1920 թ. մարտյան ջարդերից հետո հայերի հետ միասին քաղաքը լքեցին նաև ռուսները, վրացիները, գերմանացիներն ու այլ ազգերի ներկայացուցիչներ:

Հայկական քաղաքամասի ավերակներում տիրող մեռելային լուրջությունը, մոխիրների և ջրհորերի մեջ մնացած անմեղ զոհերի ոսկորները հանգիստ չէին տալիս նաև քաղաքի մյուս հատվածում ապրող դահիճներին: Շուշիից սկսեցին հեռանալ նաև թուրքերը:

1921 թ. Շուշին ուներ 9223 բնակիչ, որոնցից 8894-ը թուրքեր էին: 1923 թ. Շուշիում ապրում էր 6965, 1926 թ.՝ 5104, 1939 թ.՝ 5428, իսկ 1959 թ.՝ 6100 մարդ<sup>1349</sup>:

Դրան հակառակ՝ ԼՂԻՄ-ի կենտրոն Ստեփանակերտը հայ մարդու աշխատասիրության, ստեղծագործական եռանդի շնորհիվ օրեցօր ավելի էր զարգանում, մեծանում ու գեղեցկանում: Ստեփանակերտը դառնում էր մարզի տնտեսական ու մշակութային կենտրոնը: 1959 թ. Ստեփանակերտում 19 600 համարյա միատարր բնակիչ կար:

Այդ ամենին նախանձով էին հետևում խորհրդային Ադրբեջանի ղեկավարները: Նրանք ձգտում էին Շուշին Ստեփանակերտին հակակշիռ թուրքական բնակավայր դարձնել:

1923 թ. հուլիսին ԼՂԻՄ-ը բաժանվեց չորս շրջանների՝ Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի: Շուշիին տրվեց առանձին քաղաքի կարգա-

<sup>1347</sup> Тер-Саркисянц А., նշվ աշխ., էջ 463:

<sup>1348</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1938-1955 թթ.), կազմ. Բեհրուդյան Ս., գիրք Զ, Երևան, 1999, էջ 612:

<sup>1349</sup> Տեր-Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 83: «Бакинский рабочий», 24 сентября, Баку, 1959; Кочарян Г., Нагорный Карабах, Баку, 1925, стр. 9.

վիճակ: Շուշիի քաղաքի ղեկավարի նախագահ նշանակվեց Բ. Բինյաթովը, տեղակալ՝ Մ. Ալիևը<sup>1350</sup>:

1924 թ., Շուշիից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող Ստեփանակերտի հարևանությամբ, թուրքաբնակ Մալիբեյլի գյուղի հիմքի վրա ձևավորվեց նոր շրջան: Շուշիի շրջանը մեծացնելու նպատակով 1930 թ. նոր վարչատարածքային բաժանմամբ հայկական յոթ գյուղեր՝ Քարինտակը և Բերդաձորի ենթաշրջանի բնակավայրերը մտցվեցին վերոհիշյալ միավորի մեջ: Նրա կազմում էին երեք թուրքաբնակ գյուղեր՝ Մալիբեյլին, Ջարուսլուն և Լիսազորը: Շրջանն ուներ 289 քառ. կմ տարածք: 1965 թ. Շուշիի շրջանում արդեն ընդգրկված էին 27 գյուղեր, որոնցից 21-ը թուրքաբնակ էին<sup>1351</sup>:

Նկատենք, որ ընդամենը 30 տարվա ընթացքում քոչվորների մի մասն էլ անցավ նստակեցության, և ԼՂԻՄ-ի տարածքում գտնվող նախկին արտավայրերը դարձրին գյուղեր, որտեղ ապրում էին 10-30 ընտանիքներ: Տարեցտարի ոչ միայն Շուշի քաղաքում, այլ նաև շրջանում, հայերի թիվը պակասում էր: Եթե 1959 թ. Շուշիի շրջանում ապրում էր 3794 հայ, ապա 1979 թ. այդ թիվը պակասեց 913-ով և հասավ 2881-ի<sup>1352</sup>: Շրջանում հայերի տեսակարար կշիռը 35,7 տոկոսից դարձավ 18 տոկոս:

Բաքվի կենտրոնական իշխանության մարմինները բոլոր առումներով հովանավորում և աջակցում էին Շուշիի թուրք ղեկավարներին, նրանց քաջալերում և դրդում առավել համարձակ հակահայ գործողությունների:

1929 թ. հոկտեմբերի 21-ին մարզգործկոմի նախագահության նիստում ընդգծվել է, որ Ադրբեջանի կենտրոնական իշխանության ղեկավարների և կոմունալ շինարարության մասին ճանապարհային, արդյունաբերական և կոմունալ շինարարության մասին շատ դեպքերում ձևական բնույթ ունեն: Իսկ ինչ վերաբերում է Շուշի քաղաքին և շրջանի գյուղերին, որոնք հիմնականում թուրքաբնակ էին, կենտրոնումը մարզային իշխանություններին պարտավորեցնում է մշտական ուշադրության կենտրոնում պահել<sup>1353</sup>:

Նման վերաբերմունքի մասին է խոսում ներքոհիշյալ աղյուսակը<sup>1354</sup>.

<sup>1350</sup> «Խորհրդային Ղարաբաղ», 12 օգոստոսի, Ստեփանակերտ, 1923:

<sup>1351</sup> Азербайджанская ССР: административно-территориальное деление, Баку, 1968, стр. 113.

<sup>1352</sup> «Հայաստանի հանրապետություն», 18 ապրիլի, Երևան, 1997:

<sup>1353</sup> ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 7:

<sup>1354</sup> Մկրտչյան Շ., Արցախյան գրառումներ, էջ 314:

Մթերքների տեսակներ	Ստեփանակերտ քաղաք		Շուշի քաղաք		Մարզի մյուս հայկական շրջաններ, քաղաքատիպ ավաններ		Ընդամենը մարզում
	Նախատեսված ֆոնդը	Փաստացի վաճառվածը	Նախատեսված ֆոնդը	Փաստացի վաճառվածը	Նախատեսված ֆոնդը	Փաստացի վաճառվածը	Փաստացի վաճառվածը
Տարբեր տեսակի ձավարեղեն	2,4	2,1	11,4	13,4	0,35	0,5	1,55
Շաքար	17,3	16,1	31,8	32	16,7	20,7	20,5
Բուսական յուղ	1,3	1,1	1,1	0,6	0,12	0,4	0,6
Մարգարին	0,7	0,8	0,5	0,2	0,15	0,2	0,3
Կենդանական յուղ	4,9	6,5	12,4	13,7	2,8	3	4,4
Կաթնամթերքներ	151,1	44	117	151	3,8	3,9	12,5
Պահածոյացված կաթնեղեն	3,1 ոուր.	2,9 ոուր.	7 ոուր.	7,6 ոուր.	0,55 ոուր.	0,8 ոուր.	1,7 ոուր.
Պահածոյացված ձկնեղեն	1,9 ոուր.	2 ոուր.	2 ոուր.	0,2 ոուր.	1,4 ոուր.	1,5 ոուր.	2 ոուր.
Միս	17,7	20	28	28	3,5	4,2	12,55
Երշիկեղեն	3	2	1,9	0,6	0,3	0,6	0,8
Մակարոնեղեն	4	4,5	5,7	7,5	2	2,8	4,2
Օղի	170,8 դ/լ	184 դ/լ	372 դ/լ	382 դ/լ	77 դ/լ	82 դ/լ	120,1 դ/լ

Շուշիից հայկական հետքը լիովին ջնջելու և այն միայն ու միայն թուրքական քաղաք ճանաչելու մարմնաջով տարված՝ Հեյդար Ալիևը և Ադրբեջանի բարձրագույն իշխանությունները հազար ու մի տեսակ մտացածին, երևակայական գաղափարներ էին առաջադրում: Շուտով առաջ քաշեցին մոլլա Փանահ Վազիֆի չեղած գերեզմանի վրա դամբարան կառուցելու հարցը: ԼՂԻՄ-ի բյուջեի հաշվին 2 մլն ուրլի հատկացվեց այդ դամբարանի կառուցման համար:

1982 թ. հունվարի 14-ին Վազիֆի դամբարանի բացմանը մասնակցելու և դրան նվիրված միջոցառումներն անձամբ ղեկավարելու համար Հ. Ալիևը 300 հոգուց բաղկացած մի շքախմբով ժամանել էր Ստեփանակերտ և Շուշի<sup>1355</sup>:

<sup>1355</sup> Բեգլարյան Հ., Արցախ նամե, գիրք 4-րդ, Ստեփանակերտ, 2005, էջ 467:

Դամբարանի բացման ժամանակ Հ. Ալիևը երևակայությամբ համեմված իր ճառում նշել է. «Այստեղ (Շուշիում) է սկիզբ առել Ադրբեջանի պատմությունը եւ այստեղ է, որ նա պիտի շարունակի զարգանալ»<sup>1356</sup>:

Դեռևս 1968 թ. բանաստեղծ Սամեդ Վուրդունի տղան՝ Վազիֆ Վեքիլովը, մոլլա Փանահ Վազիֆին նվիրված «Ես ճշմարտություն եմ որոնել» հոդվածում գրել է, որ Ղարաբաղն այն հողն է, ուր ադրբեջանցիները տեղ են հատկացրել և հաց ու ջուր տվել եղբայր հայերին<sup>1357</sup>:

Ահա այդ զառանցական մտավարժանքներով Ադրբեջանը փորձում էր հզորացնել խորհրդային տարիներին թուրքաբնակ դարձած Շուշին: Ալիևի անդամը՝ կազմվեց և հանրապետության նախարարների խորհրդի կողմից հաստատվեց Շուշիի՝ 1984–2000 թվականների զարգացման նոր պլան–հատակագիծը, ըստ որի նախատեսվում էր կառուցել Ջրղըր-դուզ–Թոփխանա (Խաչին տափ – Վ. Բ.) ճոպանուղին, բնակելի նոր թաղամաս, առևտրական կենտրոն, առողջարանային շենքեր, փակ ջրավազան, մարզադաշտ, հյուրանոցներ, կենցաղի տուն, զբոսաշրջային համալիր<sup>1358</sup>:

Շուշիի թուրք (ադրբեջանցի) ազգաբնակչությունը տարեցտարի աճում էր: 1988 թ. քաղաքում ապրում էր 13 500 մարդ, որի 15 տոկոսը՝ մոտ 2200 հոգի հայեր էին, իսկ մնացածը՝ թուրքեր (ադրբեջանցիներ)<sup>1359</sup>:

Արցախյան ազգային–ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից Շուշիի հայությանը նորից արտաքսեցին իրենց հայրենի բնակավայրից: Դրա փոխարեն Խորհրդային Հայաստանից տեղափոխված թուրքերով (ադրբեջանցիներով) սկսեցին վերաբնակեցնել քաղաքը:

Պատահական չէ, որ Շուշիի ազգաբնակչությունը 1989 թ. հասել էր 16 000-ի, որից 15 710-ը ադրբեջանցիներ (թուրքեր) էին և ընդամենը 290-ը՝ հայեր<sup>1360</sup>:

Շուշիի վրա վերահսկողությունը չթուլացնելու նպատակով շրջանի ղեկավարությունը, մասնավորապես շրջկոմի առաջին քարտուղարը, շրջգործկոմի նախագահը, միլիտերը, պետական անվտանգության կոմիտեի ներկայացուցիչը, դատախազը անմիջապես նշանակվում էին Բաքվից:

Շուշիում խորհրդային կարգեր հաստատվելուց և հիմնականում հայաթափվելուց հետո երեսնիվայր շուռ տրվեց հայության կողմից այնքան դժվարությամբ ստեղծված կրթական համակարգը: Խորհրդային իշխանու-

<sup>1356</sup> Բեգլարյան Հ., նշվ. աշխ., էջ 442:

<sup>1357</sup> «Молодежь Азербайджана», но. 112, 21 сентября, Баку, 1968.

<sup>1358</sup> «Կոմունիստ», հայերեն թերթ, թիվ 207, Բաքու, 1984:

<sup>1359</sup> Դաբադյան Ա., Գաբրիելյան Մ., նշվ. աշխ., էջ 26:

<sup>1360</sup> ethno-kavkaz.narod.ru/rnkarabakh.html.

թյան արշալույսին՝ 1920 թ., փակվեց Շուշիի ռեալական ուսումնարանը: Հոյակերտ այդ շենքում 1921–1922 ուսումնական տարում գործում էր ուսուցչական սեմինարիան, իսկ 1922–1923 ուսումնական տարվանից՝ մանկավարժական տեխնիկումը<sup>1361</sup>:

1925–1927 թվականներին Շուշիում գործում էին մեկ երկաստիճան, չորս տարրական հայկական դպրոցներ, չորս լիկկայան և մեկ մանկավարժական ուսումնարան, որտեղ սովորում էին 224 աշակերտներ և ուսանողներ<sup>1362</sup>:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Շուշիի հայկական դպրոցները փակվեցին: 1930–ական թվականներից Շուշիում գործել է նաև երկամյա ուսուցչական ինստիտուտ, որի տնօրենն էր Աղասի Սաֆարյանը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ Բաքվի իշխանությունները խնդիր դրեցին Շուշիում լիովին վերացնել հայկական հետքը, առաջին հարվածը հասցվեց դպրոցներին: 1945 թ. սեպտեմբերից ուսուցչական երկամյա ինստիտուտը տեղափոխեցին Ստեփանակերտ: Դրանից հետո Շուշիում շարունակեցին գործել միայն մանկավարժական տեխնիկումը, թիվ 1 միջնակարգ դպրոցը և Խ. Աբովյանի անվան գիշերօթիկ դպրոցը:

Խորհրդային տարիներին Շուշիում գործել են մի քանի աղյուսակային (թուրքական) միջնակարգ դպրոցներ, գյուղատնտեսական տեխնիկում, պիոներական ճամբարներ, առողջարաններ, հանգստյան տներ, զբոսաշրջային կենտրոն: Այստեղ են գտնվել նաև երկու մանկատներ: Տվյալ ժամանակաշրջանում Շուշիի մզկիթում տեղ էր գտել քաղաքի պատմության թանգարանը, որտեղ հայերի մասին ակնարկ անգամ չկար:

Խորհրդային տարիներին չնայած Շուշին հայաթափվել էր, այնուամենայնիվ, մինչ այդ հայկական քաղաքում ծնված, մեծացած ու դաստիարակված շատ ու շատ հայորդիներ, ապրելով ԽՍՀՄ–ի տարբեր հանրապետություններում, փայլուն ձևով իրենց դրսևորեցին գիտության, կրթության, մշակույթի, ռազմական գործի, տնտեսական կյանքի տարբեր ասպարեզներում:

Շուշիում են ծնվել Խորհրդային Միության հերոսներ, գեներալ–մայոր Անդրանիկ Ղազարյանը, գեներալտ Զրանտ Ավագյանը, լեյտենանտ Ռուբեն Բաղիրյանը, Անդրկովկասում Խորհրդային Միության միակ կրկնակի հերոսը՝ Նելսոն Ստեփանյանը:

Կրթության, գիտության, մշակույթի համաշխարհային գանձարանում իրենց ներդրումն են ունեցել շուշեցիներ՝ երաժիշտ, ՀԽՍՀ–ի ժողովրդական արտիստ Ալեքսանդր Ալեքսանդրյանը, Ճարտարապետ Ֆրեյդուն

<sup>1361</sup> Խաչատրյան Ա., Հարությունյան Գ., Շուշիի մանկավարժական ուսումնարանը, էջ 8:

<sup>1362</sup> Հարությունյան Գ., Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում, էջ 95–96:

Աղայանը, նկարիչ Ստեփան Աղաջանյանը, քանդակագործ Հակոբ Գյուրջյանը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արտաշես Առաքելյանը, գրող, մանկավարժ, հրապարակախոս, հասարակական, քաղաքական գործիչ Համբարձում Առաքելյանը, համաձարակաքան, բժշկական գիտությունների դոկտոր Մարգար Առուստամյանը, ճարտարապետ Հայկ Ավետովը, ԱԽՍՀ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Արտաշես Արզումանյանը, Խորհրդային բեմանկարչության հիմնադիր, նկարիչ Միքայել Արուստյանը, մաթեմատիկոս Բահաթուր Բահաթրյանը, երգչուհի, պարուհի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Արև Բաղդասարյանը, կոմպոզիտոր, խմբավար, հասարակական գործիչ Եղիշե Բաղդասարյանը, գրաքննադատ, փիլիսոփա, հասարակական գործիչ Հայկ Գյուլիքնիսյանը, դերասան, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Գուրգեն Գաբրիելյանը, մանկաբույժ Հովհանն Գաբրիելյանը, ռուս քիմիկոս Նիկոլայ Զինինը, բուսաբան, ԽՍՀՄ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Արմեն Թախտաջյանը, դիրիժոր Հովհաննես Հովհաննիսյանը, քիմիկոս, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչե Իսագուլյանցը, պատմաբան, գրականագետ, գրող, հրապարակախոս Լեոն (Առաքել Բաբախանյան), քիմիկոս, գեներալ–մայոր, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Հովհաննես (Իվան) Կնունյանցը, օպերային երգիչ (քնարա–դրամատիկական տենոր) Արշակ Կոստանյանը, հրապարակախոս, գրող, թարգմանիչ Սիմեոն Հախումյանը, մետաղագետ, ֆիզիկոս, քիմիկոս, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, ՌՍՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ռուբեն Համբարձումյանը, բանաստեղծ Միքայել Հարությունյանը, պատմաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, քիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը, գրող, գրականագետ Գուրգեն Հովհաննիսյանը (Հովհանն), կոմպոզիտոր, խմբավար, երգիչ, մանկավարժ Դանիել Ղազարյանը, գրականագետ, թարգմանիչ Եղիշե Մաղաթյանը, ինժեներ–տեխնոլոգ Զավեն Մելիք–Թանգիլը, թառահար Բալա Մելիքյանը, գրող, հասարակական գործիչ Կոնստանդին Մելիք Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան), գրող Սողոմոն Մելիք Շահնազարյանը, ինժեներ–էներգետիկ Հովհաննես Մելիք–Փաշայանը, բժիշկ, հիգենիստ Հայկ Միրզաբեկյանը, գրող Մուրացանը (Գրիգոր Տեր–Հովհաննիսյան), ինժեներ–էներգետիկ Մկրտիչ Յուզբաշյանը, կենդանաբան, պրոֆեսոր Սիմոն Յուզբաշյանը, խմբագիր, հրատարակիչ, հասարակական գործիչ Տիգրան Նազարյանը, ռեժիսոր, դերասան և մանկավարժ Տիգրան Շամիրխանյանը, տնտեսագետ, պրոֆեսոր Անտոն Շաքարյանը, գրականագետ Արֆենիկ Պետրոսյանը, բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր Գրիգոր Սաղյանը, գրականագետ Խորեն Սարգսյանը, Լեռնային ինժեներ Արմենակ Սարգսյանցը, նյարդաֆիզիոլոգ,

նյարդամորֆոլոգ Սիմեոն Սարկիսովը, ճարտարապետ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Սամվել Սաֆարյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանը, մանկավարժ, հասարակական գործիչ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Լևոն Վարդունին, բուսաբույծ-սելեկցիոներ, պրոֆեսոր Եսայի Վարունցյանը, հիդրոէներգետիկ Հովսեփ Տեր-Ասծատրյանը, քիմիկոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ղազար Տեր-Ղազարյանը, մաթեմատիկոս, ինժեներ-մեխանիկ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Աշոտ Տեր-Մկրտչյանը, ինժեներ Բոգդան Փիրումովը, գյուղատնտեսական կենսաքիմիայի հիմնադիրը ՀԽՍՀ-ում, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Քամալյանը:

Ծագումով շուշեցիներ էին կուսակցական, հասարակական, քաղաքական, պետական, ռազմական, հոգևոր գործիչներ՝ ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանը, Սարգիս Բաղդասարյանը, ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմ Իսահակ Դովլաթյանը, ԽՍՀՄ սև մետալուրգիայի նախարար Հովհաննես Թևոսյանը, ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ Սարգիս Կասյանը, Լյուդվիգ Կնունյանցը, Փառանձեմ (Ռիզել) Կնունյանցը, Սարգիս Համբարձումյանը, Եղիշե Շամախյանը, Ալեքսանդր Ծատուրյանը (Ռուբենի), Մարտիրոս (Մարտիկ) Սարուխանյանը (Լևոնյան), Սպանդար Սպանդարյանը, ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ Սահակ Տեր Գաբրիելյանը, Սրբուհի Քարամյանը, գեներալ լեյտենանտ Հովհաննես Լազարյանը (Իվան Լազարև), Հայաստանի հանրապետության հիմնադիր, ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը, Սարգիս Հովհաննիսյանը, Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանը:

Չնայած խորհրդային տարիներին Ադրբեջանի ղեկավարությունն ամեն կերպ ձգտում էր Շուշիից ջնջել հայկական հետքը, այնուամենայնիվ, աշխարհով մեկ ցրված շուշեցիները, հավատով առլեցուն, սպասում էին հայրենի բերդաքաղաքի պայծառ օրվան: Արցախյան մաքրամաքուր շարժումը Շուշին ազատագրեց դժոխային գերությունից: Հայրենի պետության գրկում բերդաքաղաքին սպասում են նոր հորիզոնների նվաճում ու զարգացում:

## Գլուխ 7

# ՇՈՒՇԻՆ ԱՐՑԱԽԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1988-2017 ԹԹ.)

1985 թ. ԽՍՀՄ-ում հռչակված «վերակառուցման» քաղաքականությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նորագույն շրջանի համար: Մտավորականության և ուսանողության շրջանում սկսեցին բարձրաձայն քննարկվել ԼՂԻՄ-ում տասամյակներ շարունակ կուտակված քաղաքական, տնտեսական, մշակութային հիմնահարցերը՝ մատնանշելով հայկական երկրամասը մայր Հայաստանին վերամիավորելու՝ վաղեմի փափագած իղձերի իրագործման ուղիները:

Շուտով շարժումը համաժողովրդական բնույթ ստացավ: Մարզի գյուղերում, ձեռնարկություններում, կազմակերպություններում տեղի ունեցան կոլեկտիվների ժողովներ, որոնցում որոշումներ ընդունվեցին ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու վերաբերյալ: Դրանց հիման վրա, բացառությամբ Շուշիի, մարզի շրջանների ժողովրդական պատգամավորների խորհուրդները նմանատիպ որոշումներ են կայացրել:

Ընդառաջ գնալով մարզի հայ բնակչության ցանկություններին՝ 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց ստանալ Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների միջնորդությունը՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից դուրս բերելու և Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ ընդգրկելու մասին:

Պատմական այդ բախտորոշ նստաշրջանին մարզխորհրդի 150 պատգամավորներից մասնակցել են 111-ը: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանին հրաժարվել են մասնակցել թուրք (ադրբեջանցի), այդ թվում Շուշիից ընտրված, և մի քանի հայ պատգամավորներ<sup>1363</sup>:

<sup>1363</sup> Բալայան Վ., Հակոբյան Տ., Պատմական նստաշրջան, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանին հրաժարվել են մասնակցել թուրք (ադրբեջանցի), այդ թվում Շուշիից ընտրված, և մի քանի հայ պատգամավորներ<sup>1363</sup>:

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության սահմանադրական պահանջներին Ադրբեջանում իշխող կլանը՝ ԽՍՀՄ-ի կենտրոնական իշխանությունների հետ համախորհուրդ, հակադրեցին բիրտ ուժի և բռնության քաղաքականությունը:

Կրոնաազգայնական շաղախով բռնկված հիստերիան շուտով Ադրբեջանում ծավալուն չափեր ստացավ:

Հայաստանի ծրագրերի իրագործման հարթակներ դարձան Սումգայիթը, Բաքուն, Գանձակը (Գյանջան), Աղդամը, Շուշին: Սումգայիթում հայության նկատմամբ կազմակերպված ցեղասպանությունից հետո՝ 1988 թ. մարտին, սկսեցին Շուշիից արտաքսել հայ ազգաբնակչությանը: Բռնությունների ժամանակ սպանվեց 1 հայ տղամարդ<sup>1364</sup>:

1988 թ. մայիսի 14-ին, 15-ին, 16-ին Շուշիում տեղի ունեցան հակահայկական ցույցեր<sup>1365</sup>, որտեղ ջարդերի կոչով հանդես էր եկել շրջկոմի առաջին քարտողար Նիազ Հաջինը: Նա նշել է «... հողը մերն է, մենք էլ կքշենք հայերին: Դուք, շուշեցիներ, ինձ միշտ օգնել եք, հիմա էլ օգնեք Շուշվուց քշենք հայերին»<sup>1366</sup>:

1988 թ. մայիսի 16-ին 200 հայ ընտանիքների Շուշիից արտաքսեցին Ստեփանակերտ: 1988 թ. սեպտեմբերի 18-ին ադրբեջանցիները հրո ձարակ դարձրին Շուշիում գտնվող հայերի տները: Քաղաքում մնացած վերջին հայ ընտանիքները հալածվեցին հարազատ բնօրրանում:

Իրավիճակը տարածաշրջանում առավել սրվեց 1988 թ. նոյեմբերին: Ադրբեջանում հակահայկական շարժման խմորիչի դեր են ստանձնել Շուշիի ադրբեջանցիները: Այս անգամ առիթը Շուշի գյուղխորհրդի 1988 թ. նոյեմբերի 9-ի որոշումն էր՝ կապված Խաչին Տափում (Թոփխանայում) Քանաքեռի ալյումինի գործարանի կողմից փայլաթիթեղի արտադրության կազմակերպման և հայ փախստականների համար քոթեջների կառուցման հետ: Շուշիում սկսված հակահայկական ցույցերի ալիքը նոյեմբերի 17-ին հասավ Բաքու: Ցուցարարները «Փառք Սումգայիթի հերոսներին» վանկարկությամբ տանում էին Սումգայիթի դահլիճների նկարները: Շուտով ցույցերը վերածվեցին մասսայական անկարգությունների և հայկական ջարդերի, որոնք տարածվեցին ողջ Ադրբեջանով:

տաշրջանի 1988 թվականի փետրվարի 20-ի նիստի արձանագրությունը, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ստեփանակերտ, 2008, էջ 12:

<sup>1364</sup> Մելիք-Շահնագարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության դեմ, էջ 47:

<sup>1365</sup> Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, էջ 75:

<sup>1366</sup> Բեգլարյան Հ., Նշվ. աշխ., էջ 473:

1988 թ. նոյեմբերի վերջերին Կիրովաբադից (այժմ Գյանջա), Բաքվից, Շամխորից, Խանլարից, Դաշքեսանից, Մինգեչաուրից և հայաշատ այլ վայրերից հայ բնակչության զանգվածային արտաքսման փաստեր արձանագրվեցին: Նոյեմբերի 24-ին հատուկ դրություն և պարետային ժամ մտցվեց Բաքվում, Կիրովաբադում, Նախիջևանում, իսկ դեկտեմբերի 5-ին՝ նաև Երևանում:

Արցախում ազատագրական շարժման կազմակերպիչների նկատմամբ հալածանքներ սկսվեցին: Անհիմն մեղադրանքներով ձերբակալեցին մի շարք գործիչների:

Շուշիի բանտը վեր էր ածվել համակենտրոնացման ճամբարի: Ադրբեջանցիներից կազմված անձնակազմը դաժան կտտանքների և բռնությունների է ենթարկել հարյուրավոր անմեղ հայերի<sup>1367</sup>:

Շուշիում հապշտապ կազմակերպված հեռուստարևկերությունն ամեն օր լուստանքներ և քարոզ էր կարդում հայերի գլխին ու սողցում մարդկանց նյարդերը: Շուշին լիովին դուրս մնաց մարզային իշխանությունների վերահսկողությունից: Քաղաքը վերածվել էր օմոնականների և Ադրբեջանի ժողձակատայինների գրոհայինների որջի:

Շուշիի հայության հարցը թուրքավարի լուծելուց հետո ադրբեջանական հրոսակախմբերն ավազակային հարձակումներ սկսեցին Քարինտակի և Բերձորի ենթաշրջանի գյուղերի վրա: Այդ գործողություններին իրենց ակտիվ մասնակցությունն էին ունենում նաև Շուշիում տեղաբաշխված ԽՍՀՄ-ի ՆԳՆ-ի ստորաբաժանումները: Վերջիններիս հրամանատարները, կաշառված լինելով Բաքվի և տեղի իշխանությունների կողմից, հատուկ դրության ռեժիմի պահպանման պատրվակի տակ, պարբերաբար «ոնյդեր» էին իրականացնում հայկական բնակավայրերում, ձերբակալում անմեղ քաղաքացիներին<sup>1368</sup>:

Շուշին հատկապես պատուհաս էր դարձել Քարինտակի բնակչության համար: Պայթուցիկներով լցված անվադողերն ու ժայռաբեկորները սարահարթից գլորելով՝ ոչնչացնում էին հայերի տները: 1990 թ. մարտի 28-ին ժամը 5<sup>30</sup>-ին ներքին գործերի զինվորներն ու ադրբեջանցի օմոնականները շրջապատում են Քարինտակ գյուղը և սկսում 4 կողմից կրակել: Այնուհետև, մտնելով տներն ու տեղի էլեկտրագործարանի արտադրամասը՝ ոչինչ չգտնելուց հետո կալանավորեցին մի քանի բնակիչների և տեղափոխեցին Շուշիի մեկուսարանը: Մեկամսյա ձերբակալությունից հետո միայն պարզ-

<sup>1367</sup> Մանրամասները տես՝ Սողոմոնյան Ն., Կոլցո, էջ 28-66:

<sup>1368</sup> Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները դարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, էջ 370:

վեց, որ ձերբակալվածներն անմեղ են, և սահմանված փրկագինը ստանալուց հետո նրանց ազատ արձակեցին<sup>1369</sup>:

Բաքվի իշխանությունները նպատակ ունեին խորհրդային զորքերի օգնությամբ բռնի ուժով տեղահանել Շուշիի և Լաչինի միջև ընկած Քարինտակի ու Բերդաձորի ենթաշրջանի հայկական գյուղերի բնակչությանը և Ստեփանակերտի վրա ձնշումը մեծացնելու համար անարգել զորք ու ռազմական տեխնիկա տեղափոխել բերդաքաղաք: Այդ դեպքերի ականատես, ԼՂԻՄ-ում ԽՍՀՄ-ի ներքին գործերի նախարարության օպերատիվ հետաքննչական խմբի շտաբի պետ Վիկտոր Կրիվոպուսկովը հետագայում գրել է. «Գրեթե ամեն շաբաթ հայկական գյուղերի բնակչության հոգին հանում էին անձնագրային ռեժիմի անհարկի ստուգումներով ...»<sup>1370</sup>:

Մինչդեռ մարզի հայ բնակչությունն ուժերի գերլարումով փորձում էր պաշտպանել իր ֆիզիկական գոյությունը, ԽՍՀՄ-ի կենտրոնական իշխանությունների հրահանգով 1991 թ. մայիս և հունիս ամիսներին ադրբեջանական հատուկ նշանակության (ՕՄՕՆ) զինված ջոկատները խորհրդային բանակի զորքերի հետ համատեղ իրականացրին «Օղակ» ռազմագործողությունը: Մարտական ուղղաթիռների, հրասայլերի և զրահամեքենաների ուղեկցությամբ «անձնագրային ռեժիմի ստուգման» ու «հայ գրոհայիններին զինաթափելու» պատրվակով 1991 թ. ապրիլի 30-ի վաղ առավոտյան հարձակվեցին Գետաշենի, այնուհետև Շահումյանի շրջանի գյուղերի վրա: Հատկապես թե՛ մարտեր բորբոքվեցին Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի տարածքում: Սակայն ուժերն անհավասար էին: Պատմական Արցախը հայաթափ անելու միջոցով նրա տարածքին վերջնականապես տեր դառնալու գործընթացը հաղթական ավարտին հասցնելու հաջորդ քայլը Լեռնային Ղարաբաղի հայության բնաջնջումն էր:

1991 թ. մայիսի 13-16-ը բռնատեղահանվեցին Հաղրութի շրջանի Աղբուլաղ, Արփազյաղուկ, Դոլանլար, Քարազլուխ, Մյուլքադարա, Առաքյուլ, Բանազուր, Բինյաթլու, Զիլան, Պետրոսաշեն, Սպիտակաշեն, Ծամձոր, Ցոր, Խանձաձոր գյուղերի շուրջ 1350 բնակիչների: Մայիսի 18-ին նույն ձևակառուցող արժանացան Շուշիի շրջանի Մեծ շեն, Եղծահող, Հին շեն գյուղերի 550 բնակիչներ: Խորհրդային զորքերի և ադրբեջանցի օմժնականների կողմից հայերի տեղահանությունն ուղեկցվում էր բռնություններով ու թալանով<sup>1371</sup>:

<sup>1369</sup> «Մարտիկ», թերթ, հմ. 3, 21 հունվարի, Ստեփանակերտ, 2007:

<sup>1370</sup> Кривоусков В., Мятажный Карабах, Ереван, 2008, стр. 128.

<sup>1371</sup> Библиотека центра русско-армянских инициатив, депортация населения армянских сел НКАО и прилегающих районов, апрель-июнь 1991 года, составила Седа Вермишева, Ереван, 1995, стр. 11-17.

1991 թ. նոյեմբերից Արցախում նոր ձևավորված ինքնապաշտպանական ջոկատները մարզի բոլոր շրջաններում խիզախորեն դիմակայում էին թշնամու մի քանի անգամ գերազանցող ուժերին:

Մարտական գործողություններին զուգընթաց՝ հակառակորդը նոր զինատեսակներ էր ձեռք բերում: 1991 թ. դեկտեմբերի 29-ին Շուշի բերվեցին 8 ՀՄՄ, 2 ԶՓ, մի քանի օր անց՝ նաև 2 տանկ<sup>1372</sup>:

Քարինտակն օր ու գիշեր ենթարկվում էր հակառակորդի գրոհներին ու սադրանքներին: Միայն 1991 թ. դեկտեմբերի սկզբներից մինչև 1992 թ. հունվարի կեսը գյուղը հինգ անգամ ստիպված էր դիմագրավել ադրբեջանցիների ձեռնարկած լայնածավալ հարձակումներին<sup>1373</sup>:

Թշնամու նախահարձակ գործողությունները զսպելու և Կրկժանն ազատագրելու նպատակով հայկական ինքնապաշտպանական ուժերը 1992 թ. հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը փայլուն ռազմագործողությամբ վնասագերծեցին ռազմական հենակետի վերածված Ստեփանակերտի արվարձանը:

Ռազմական նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները որոշեցին վերջնականապես գրավել անմատչելի բերդի համարում ունեցող Քարինտակը:

1992 թ. հունվարի 26-ի առավոտյան ժամը 6<sup>30</sup>-ին 500 հետևակայիններով և 3 զրահատեխնիկայով տարբեր ուղղություններով ադրբեջանցիներն անցան գրոհի: Հակառակորդի հիմնական ուժերը փորձում էին ձեռքել հայկական պաշտպանական գիծը և Շուշիից Քարինտակ տանող ճանապարհով մտնել գյուղ: Սակայն Քարինտակի պաշտպաններն անընկճելի էին, ուստի հեշտ թալանին սովոր ադրբեջանցիները, հայ մարտիկների հարվածներին չդիմանալով՝ ձողոպրեցին՝ մարտի դաշտում թողնելով շուրջ 132 դիակ և մեկ խփված զրահատեխնիկա: Քարինտակի ջոկատի հրամանատար Վադարշակ Առուշանյանի հետ միասին հերոսաբար զոհվեցին նաև գյուղի 20 պաշտպաններ:

Քարինտակի հաղթանակից հետո Շուշիի պարիսպներից ներս ծվարած թուրքը սարսափով սպասում էր հայ ազատամարտիկների կործանարար հարվածներին: Դրան հակառակ՝ ինքնապաշտպանական ջոկատները, արդարացի պայքարի և սեփական ուժերի նկատմամբ հավատով առլեցուն, նոր համարձակ գործողությունների դիմեցին՝ մեկը մյուսի հետևից ազատագրելով Արցախում ռազմական հենակետեր դարձած ադրբեջանական

<sup>1372</sup> Հարությունյան Մ., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Երևան, 2000, էջ 55:

<sup>1373</sup> Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները ..., էջ 374

բնակավայրերը: Ճակատագրի քմահաճ խաղով այս անգամ հայ մարդը պետք է ազատագրեր նաև իր իսկ ձեռքով ու քրտինքով կառուցած, թշնամական հենակետի վերածված բերդաքաղաքը:

Իրավիճակը փրկելու նպատակով Բաքվի իշխանություններն Ադրբեջանի տարբեր շրջաններից Շուշի էին տեղափոխում զինվորական նոր ստորաբաժանումներ և ռազմական տեխնիկա: 1992 թ. ապրիլի 27-ի դրությամբ Շուշիում կենտրոնացված էր 11 միավոր տանկ, 9 ՀՄՄ, 10 ՋՓ, 2 ՀԻՄՄ-2, 100 մմ-ոց 3 թնդանոթ, 2 ՄՄ-21 հրթիռահրետանային կայանք, «ՈՒԱԶ» մեքենաների վրա խարսխված 3 ԿՊՎԴ գնդացի, մոտ 1500 զինվոր: Մայիսի 6-ին լրացուցիչ Լաչինից Շուշի բերվեցին 15-20 մեքենաներ, 4 ՀՄՄ, 4 ՋՓ<sup>1374</sup>:

Չնայած ադրբեջանցիները սպառազինության և զորքերի տեխնիկական հագեցվածության տեսանկյունից մի քանի անգամ գերազանցում էին հայկական ուժերին, այնուամենայնիվ, կրում էին պարտություն պարտության հետևից: Եվ այդ ամենից զազազած՝ նրանք փորձում էին վրեժխնդիր լինել խաղաղ ազգաբնակչությունից՝ կանանցից, մանուկներից և ծերերից:

1992 թ. փետրվարի 14-ին ադրբեջանցիները Շուշիից առաջին անգամ Ստեփանակերտը հրթիռակոծեցին «Գրադ» հրթիռահրետանային կայանքից: Մայրաքաղաքի վրա ամեն օր հարյուրավոր ռումբեր և արկեր էին պայթում:

Միայն 1992 թ. սկզբից Ստեփանակերտը հրետակոծության է ենթարկվել 170, իսկ Շուշիի կողմից ցամաքային հարձակման՝ 11 անգամ: Քաղաքի վրա արձակվել են տարբեր տիպի 4253 արկ ու հրթիռ, այդ թվում «Գրադ»-ի 2437 ռեակտիվ արկ, «Ալազանի» 527 հրթիռ, 100 մմ տրամաչափի 593 արկ:

Ավերվել է 188 և վնասվել 223 բնակելի շենք կամ մոտ 2000 բնակարան: Լրիվությամբ ավերվել է 54 և վնասվել 147 սոցիալ-մշակութային, կենցաղային ու վարչական նշանակության օբյեկտ: Սպանվել է 90, վիրավորվել՝ 268 քաղաքացի: Ստեփանակերտի բնակիչներից մոտ 10 000 հոգի անօթևան էր մնացել<sup>1375</sup>:

Ինչպես նկատել է ադրբեջանցի հեղինակներից մեկը՝ «Ամեն մի սպա երեկվա խմածությունից գլխացավի պատճառով գիշերը կարող էր զարթնել և համապատասխան կայանքից հրետակոծել Ստեփանակերտը»<sup>1376</sup>:

<sup>1374</sup> Հարությունյան Մ. նշվ. աշխ., էջ 86:

<sup>1375</sup> Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 79-80: Արկադի Տեր Թադևոսյանի (Կոմանդոս) վկայությամբ Շուշին ազատագրելուց հետո ժիրայր Սեֆիյանը գտել էր Ստեփանակերտի գրավման ադրբեջանցիների կազմած պլանը, տես «Голос Армении», 9 мая, Ереван, 2012, [www.yerkramas.org|article|32995](http://www.yerkramas.org/article|32995).

<sup>1376</sup> Мелик-Шахназарян Л., О войне и победе, т. 2, Ереван, 2015, стр. 158.

ԼՂՀ-ի մայրաքաղաքում և հարակից բնակավայրերում օրհասական դրություն էր ստեղծվել: Չկար վառելիք ու էլեկտրաէներգիա: Համարյա դադարեցվել էր քաղաքի ջրամատակարարումը: Հրետակոծության դադարի պահերին մարդիկ դուրսերում ջուր էին կրում: Նկուղներում ապրող մարդկանց նեղում էին ցուրտն ու անտանելի սոցիալական վիճակը: Հացի պակասն ու թերսնումը սովորական էին դարձել: Գրանցվել են սովամահության դեպքեր:

Շուշիի կրակակետերի ոչնչացումը կյանքի և մահվան հարց էր: Վազգեն Սարգսյանն իրավացիորեն նկատել է. «... քանի Շուշին կար, Արցախում ապրելն անհնար էր: Ամեն օր տասնյակ խաղաղ բնակիչներ էին սպանվում: Հեքիաթի աղբյուրի գլխին կախված հրեշ էր Շուշին: Կամ պիտի Արցախը կուլ գնար կամ ոչնչացներ նրան»<sup>1377</sup>:

Ստեղծված կացությունը քննարկելու նպատակով 1992 թ. մայիսի 7-ին հրավիրվեց ԼՂՀ ԳԽ արտահերթ նիստ, որտեղ որոշվեց հանձնարարել Պաշտպանության խորհրդին՝ միջոցներ ձեռնարկել լոցեցելու թշնամու կրակակետերը և ապահովել խաղաղ բնակչության անվտանգությունը<sup>1378</sup>:

1992 թ. մայիսի 7-ին ադրբեջանցիները զրահատեխնիկայի և Մի-24 մարտական երեք ուղղաթիռների ուղեկցությամբ հարձակվեցին Ստեփանակերտի հարավ-արևմտյան մատույցների պաշտպանական դիրքերի վրա: Միաժամանակ Շուշիի ու Ջանհասանի բարձունքներից մայրաքաղաքի վրա արձակվեցին «Գրադ» կայանքի մոտ 200 հրթիռ և մի քանի տասնյակ այլ տիպի արկեր: Արդյունքում զոհվեց երկու բնակիչ, իսկ չորս մարդ վիրավորվեց: Հրթիռակոծության հետևանքով հրդեհ բռնկվեց երկաթուղային կայարանում և քաղաքի մի շարք բնակելի շենքերում<sup>1379</sup>: Թշնամուն հանկարծակիի բերելու, մշտական լարվածության մեջ պահելու, հարվածի հիմնական ուղղությունից շեղելու նպատակով ապրիլի 24-ին, 28-ին, 29-ին և մայիսի 4-ին հայկական կողմը զորքերի կեղծ տեղաշարժեր և հարձակումներ է կազմակերպել:

1992 թ. մայիսի 8-ի գիշերվա ժամը 2<sup>20</sup>-ին հայկական հրետանու համազարկով սկսվեց Շուշիի ազատագրման «Հարսանիք լեռներում» ռազմագործողությունը:

<sup>1377</sup> «Երկիր», հմ. 87, 9 մայիսի, Երևան, 1992:

<sup>1378</sup> Հասրաթյան Ս., Գոյամարտը (ԼՂՀ Պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց), Ստեփանակերտ, 1998, էջ 9; «Արցախ», հմ. 1, 30 մայիսի, Ստեփանակերտ, 1992; «Երկիր», հմ. 87, 9 մայիսի, Երևան, 1992:

<sup>1379</sup> Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, էջ 34:



Հայկական ինքնապաշտպանական ուժերը գրոհեցին չորս ուղղություններով: Հյուսիսային ուղղությամբ գործող ստորաբաժանումների հրամանատարն էր Վալերի Չիթչյանը, արևելյանը՝ Արկադի Կարապետյանը, հյուսիսարևմտյանը՝ Սեյրան Օհանյանը և հարավայինը՝ Սամվել Բաբայանը: Ռազմագործողությունը ղեկավարում էր գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը: Նրա տեղակալն էր Ֆելիքս Գոդոյանը: Հրետանու հրամանատարն էր Ռազմիկ Մելքումյանը, կապի ստորաբաժանմանը՝ Արթուր Փափազյանը: Բուժապասարկման գործը համակարգում էին Վալերի Մարությանը և Մարատ Բոյաջյանը: Հարավային ուղղությամբ գործող ստորաբաժանման մեջ ներգրավված էին ԼՂՀ ԻՊՈՒ 2-րդ, 3-րդ վաշտերը, Բերդաձորի, Ավետարանոցի, Սղնախի, Ակնաղբյուրի, Քարինտակի ջոկատները, ՀՅԴ վաշտը և «Քիրս» խումբը: Հյուսիսային ուղղությամբ գործելու էին ԼՂՀ ԻՊՈՒ 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ վաշտերը, հետախուզական վաշտը և այլ ջոկատներ: Արևելյան ուղղությունը բաժին էր ընկել ԼՂՀ ԻՊՈՒ 1-ին վաշտին, Շոշի, Քարաշենի, Քոսանու ինքնապաշտպանական ջոկատներին և հետախուզական խմբերին: Հյուսիսարևմտյան հատվածում մարտերին մասնակցելու էին Բաղարայի, Բալուջայի, Կումայրիի ջոկատները, «Հրանտ», «Վաչո» և դիվերսիոն-հետախուզական խմբերը:

Խնդիր էր դրված 1. Շոշի ուղղությունում զարգացնել հարձակումը Մխիթարաշենի մոտակա ելման բնագծից՝ քաղաքի ծայրամասում ադրբեջանցի զինյալներին ոչնչացնելու և բանտի ու հիվանդանոցի գծում ամրանալու: 2. «26»-ի ուղղությունում գրավել 1006,6, 1200, 1298,3 բարձունքները և ամրանալ ճանապարհների խաչմերուկ բնագծում, հետագայում պահեստագործի ներգրավումով՝ գրավել Շուշի քաղաքի հյուսիսային ծայրամասը: 3. Լաչինի ուղղությունում զարգացնել հարձակումը Ջառխստի և Լխազորի ուղղությամբ՝ միաժամանակ հարվածելով «Ջաստավ»-ին, և գրավել Շուշի քաղաքի հարավ-արևմտյան ծայրամասը: 4. Քյոսալարի հատվածում հարձակում կազմակերպել երկու ուղղությամբ՝ հիմնական խնդիր ունենալով շեղել հակառակորդի ուշադրությունը, և դեպքերի հաջող զարգացման ընթացքում վնասազերծել Կարազյավն ու Ջանհասանը:

Նախատեսվում էր նաև դարաններ պատրաստել Ղայբալիշեն-Բաշքենդ, Քյոսալար-Ջանհասան, Ջանհասան-Կարազյավ, Շուշի-Լաչին ճանապարհներին<sup>1380</sup>: Ռազմաճակատի գծի ձգվածությունը կազմել է 45 կմ: Շուշիի ռազմագործողությանը, ըստ ԼՂՀ Գերագույն խորհրդի կազմած ցուցակի, մասնակցել են 775 զինվորականներ<sup>1381</sup>:

<sup>1380</sup> Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 93:

<sup>1381</sup> ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 254, ց. 1, գ. 15, թ. 8-28:

Հյուսիսային ուղղությամբ գործող ստորաբաժանումները մայիսի 8-ի կեսօրին կոտրեցին թշնամու դիմադրությունը և հասան քաղաքի մատույցները: Ջինաբախման ժամանակ հայկական կողմը կորցրեց մեկ տանկ: Վերախմբավորելով ուժերը՝ հայ մարտիկները մայիսի 9-ին մտան քաղաք: Արևելյան ուղղությունում հակառակորդը մեծ քանակությամբ ուժեր էր կուտակել և փորձում էր կասեցնել առաջին վաշտի և Շոշ գյուղի ջոկատի գրոհները: Բանտի պարիսպների տակ կատաղի մարտեր ծավալվեցին: Չնայած առաջին վաշտի հրամանատար Աշոտ Ղուլյանը (Բեկոր) վիրավորվել էր, այնուամենայնիվ, առավոտյան հաջողվեց ընկճել հակառակորդին և, զարգացնելով հարձակումը, հասնել Ղազանչեցոց եկեղեցուն, որն ադրբեջանցիները դարձրել էին զինապահեստ: Թշնամու հսկողության տակ էր մնացել քաղաքի հարավային հատվածը:

Հարավային ուղղությամբ մայիսի 8-ին հայկական ջոկատները ոչնչացրին Քիրսի ստորոտում գտնվող հակառակորդի ռազմական հենակետերը և, հետապնդելով թշնամուն, կարողացան գրավել Լխազորի մոտակայքում գտնվող բարձունքներն ու հսկողության տակ առնել Շուշի-Լաչին մայրուղին՝ թույլ չտալով ադրբեջանցիներին պահեստային ուժեր մոտեցնել քաղաքին: Վերոհիշյալ մայրուղին ազատամարտիկներն իրենց հսկողության տակ առան նաև Նաբիլարի ու Տիզկանց քերձի և Ջառխստի հատվածներում:

Չնայած հյուսիս-արևելյան ուղղությամբ գործող ջոկատները բարդ աշխարհագրական դիրքի պայմաններում որոշակի կորուստեր ունեցան, այնուամենայնիվ, նրանց հաջողվեց ոչնչացնել Կարազյավ, Ջանհասան, Քյոսալար բնակավայրերում տեղակայված թշնամու հենակետերը՝ նկատելիորեն նպաստելով Շուշիի ուղղությամբ հայ ազատամարտիկների գրոհներին: Ադրբեջանցիներն ստիպված էին Շուշիից որոշ ջոկատներ տեղափոխել Ջանհասան՝ կանխելու հյուսիս-արևելյան ուղղությամբ գործող հայկական ստորաբաժանումների առաջընթացը: Դա ոչ միայն կասեցրեց թշնամու ուժերի մի մասի առաջընթացը, այլ նաև նպաստեց քաղաքում խուճապային տրամադրությունների ստեղծմանը:

Մայիսի 9-ի առավոտյան թշնամու քարոյալքված զորամասերն սկսեցին ճողոպրել Շուշիից: Հայ մարտիկների շեշտակի հարվածներին չդիմացան նաև չեչեն և աֆղան վարձկանները: Ադրբեջանական «Obozrevatel ... net» շաբաթաթերթին (2005 թ. հունվարի 7-14) տված հարցազրույցում գնդապետ Ա. Ռուստամովը խոստովանել է. «Այդ մարտերում մեզ անզնահատկի օգնություն են ցուցաբերել շուրջ 100 չեչեն կամավորներ Շամիլ Բասաևի և

Սալման Ռադունի գլխավորությամբ: Սակայն նրանք էլ մեծաքանակ զոհերի պատճառով ստիպված էին լքել մարտի դաշտը և հեռանալ»<sup>1382</sup>:

Հայ ազատամարտիկների անկոտրում կամքի շնորհիվ հաջողվեց 2 օրվա ընթացքում կոտրել հակառակորդի դիմադրությունը և մայիսի 9-ին վերջնականապես ազատագրել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Շուշի բերդաքաղաքը: Գերի հանձնված ռուս սպաները լավ են ասել, որ Շուշին կարող է հանձնել միայն թուրքը: Շուշիի ռազմագործողության ժամանակ թշնամուց առգրավվեցին կամ խփվեցին մոտ 10 միավոր զրահատեխնիկա, տասնյակ միավոր այլ փոխադրամիջոցներ, հարյուրավոր հրթիռներ ու արկեր, մի քանի միավոր հրետանի և այլ զենք ու զինամթերք: Մարտերի ընթացքում ադրբեջանցիները տվել են 200-300 սպանված և 600-700 վիրավոր: Հայկական կողմն ունեցել է 57 զոհ և 120 վիրավոր<sup>1383</sup>:

Շուշին իր պատմության մեջ հայ ժողովրդի համար երկու անգամ ճակատագրական դեր է խաղացել: Երկու և կես հարյուրամյակ առաջ Մելիք Շահնազարն այն Փանահ Խանին հանձնելով՝ Արցախի մարզարիտը վերածեց հայի դժոխքի, իսկ 1992 թ. մայիսի 9-ի փառահեղ հաղթանակը դարձավ համահայկական վերածննդի նախերգանքը:

Շուշիի կորստով թաղվեց նաև յոթ միլիոնանոց Արբեջանի հաղթարշավի և իր ազատության համար պայքարող մի բուռ ժողովրդին ոչնչացնելու թուրքերի հյուսած առասպելը:

Շուշիի ազատագրումից երկու օր հետո էլ Ադրբեջանի մասսայական տեղեկատվության միջոցներն իրենց ցեղակիցներին ստահող լուրերով էին կերակրում, թե իբր քաղաքը գտնվում է իրենց ձեռքին: Մինչդեռ գերությունից ազատված Ղազանչեցոց եկեղեցում հայորդիները մոմեր էին վառում և աղոթում աստվածահաճ այդ հաղթանակի համար:

Շուշին ազատագրելուց հետո հայկական կողմը, վերախմբավորելով ուժերը, մայիսի 12-ին մտավ Զառիստ և մայրուղու աջ ու ձախ կողմերի վրա բացազատվելով՝ գրավեց խորհրդային տարիներին ադրբեջանական բնակավայրերի վերածված նախկին հայկական գյուղերն ու արոտավայրերը: Մայիսի 17-ին ոչնչացվեցին Լիսագորում տեղակայված թշնամու ռազմական հենակետերը: Այդ հաջողություններից ոգևորված՝ ինքնապաշտպանական ուժերը նույն օրը առանց մեծ դժվարության ազատագրեցին արդեն մեկ տարի գերության մեջ գտնվող Բերդաձորի ենթաշրջանի Տասը վերստ, Կանաչ Թալա, Մեծ շեն, Հին շեն և Եղծահող գյուղերը:

Հակառակորդի շարքերում դասալքությունը և խուճապային տրամադրություններն աննկարագրելի էին: Մայիսի 18-ի առավոտյան ազատագրվեց Լաչին վերանվանված հայկական Քաշաթաղը:

Մայիսի 18-ին և 19-ի վաղ առավոտյան արդեն վնասագերծվել էին ՀՀ-ի սահմանամերձ Ջիջիմլի, Մալխալաֆ և Մագութու գյուղերը: Շուրջ երեք տարի խուլ շրջափակման մեջ եղած Արցախը մարդասիրական միջանցքով կապվեց մայր հայրենիքի հետ: Շուշին ազատագրվելուց հետո դարձավ հայկական որոշ զորամիավորումների տեղակայման վայր: Դրանցից առաջինը եղել է Շուշիի առանձնակի գումարտակը, որը ստեղծվել է 1992 թ. նոյեմբերի 1-ին Գետաշեն-Շահումյանի կռիվների բովով անցած ՀՅԴ կամավորական ջոկատների հիմքի վրա<sup>1384</sup>:

Գումարտակը պարբերաբար համալրվել է կամավորականներով: Տարբեր ժամանակներում գումարտակում ծառայել են 1600 ազատամարտիկներ, որոնցից 11-ը՝ ԱՄՆ-ից, 7-ը՝ Կանադայից, 6-ը՝ Սիրիայից, 23-ը՝ Լիբանանից, 1-ը՝ Իտալիայից, 7-ը՝ Ֆրանսիայից, 9-ը՝ Իրանից, 6-ը՝ Վրաստանից, 3-ը՝ Ռուսաստանից, 45-ը՝ Ջավախքից<sup>1385</sup>:

Գումարտակի հրամանատարն է եղել Ժիրայր Սեֆիլյանը, տեղակալը՝ Պետրոս Առնոյանը, շտաբի պետը՝ Ռոմիկ Մարգարյանը: Գումարտակի մարտիկները մասնակցել են Գետաշենի ենթաշրջանում, Շահումյանի, Հաղրութի, Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի, Շուշիի, Քելբաջարի, Լաչինի, Ղուբաթլուի, Ջերբայիլի, Ջանգելանի, Ֆիզուլիի, Աղդամի շրջաններում ծավալված մարտական գործողություններին:

Գումարտակը Ղարաբաղյան ճակատում ջախջախել է Խատաբի և Շամիլ Բասաևի գլխավորած չեչեն վարձկանների ջոկատներին: Շամիլ Բասաևը վիրավոր վիճակում ասել է, թե կցանկանար, որ իր զինվորներն այդպես կռվեին: Իսկ Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը հայտարարել է. «եթե ինքը Շուշիի առանձնակի գումարտակի նման երկու գումարտակ ունենար, շատ կարձ ժամկետում կգրավեր Չեչնիան»<sup>1386</sup>:

Ջորամասից զոհվել են 56 (2 սպիտուքահայ), վիրավորվել 157 (6 սպիտուքահայ), անհայտ կորել 3 ազատամարտիկ<sup>1387</sup>:

«Մարտական խաչ» առաջին աստիճանի և Արցախի հերոսի («Ոսկե արծիվ» շքանշան) կոչմանն է արժանացել Պետրոս Առնոյանը: «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով պարգևատրվել են Ժիրայր Սեֆիլյանը, Հովսեփ Հովսեփյանը, Արթուր Ղարիբյանը, Վարդան Ստեփանյա-

<sup>1382</sup> Арешев А., Карабахская проблема в контексте региональной политики, «Карабахский курьер», но. 1, 2010, стр. 38.  
<sup>1383</sup> Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 123-124:

<sup>1384</sup> www.radioyan.com/portfolio/.  
<sup>1385</sup> Operativ.am/?p=75453.  
<sup>1386</sup> www.radioyan.com/portfolio/.  
<sup>1387</sup> Operativ.am/?p=75,453.

նը: Գումարտակի հարյուրավոր քաջորդիներ արժանացել են ԼՂՀ-ի և ՀՀ-ի տարբեր շքանշանների և մեդալների:

1992–1994 թվականներին գումարտակը սատարել է նաև Ադրբեջանից Շուշիում ապաստանած փախստականներին, օգնել բնակչությանը՝ ամոքելու պատերազմի վերքերը, վերականգնելու բերդաքաղաքը: 1992 թ. հուլիսից Շուշիում տեղակայվել էին Քարինտակի և Բերդաձորի ենթաշրջանի գյուղերի կամավորականներից ստեղծված ստորաբաժանումները: Բերդաքաղաքում էր գտնվում նաև Շուշիի Առանձին և Կանանց կամավորական գումարտակները: 1992 թ. օգոստոսին Շուշիում ստեղծվեց ուսումնական գումարտակ, որի հրամանատարն էր Միքայել Գաբրիելյանը:

1993 թ. սկզբներին ռազմաձևատի գծի երկարացման, մարտական գործողությունների գորքերի կառավարման արդյունավետության բարձրացման և ռազմավարական նշանակության նոր տարածքների ազատագրման նպատակով անհրաժեշտություն առաջացավ զինված ուժերի համակարգում կազմավորել նոր պաշտպանական շրջան:

Ինքնապաշտպանական ուժերի կոմիտեի նախագահի 1993 թ. մարտի 4-ի թիվ 111 հրամանով Բերդաձորի, Քարինտակի, 8-րդ և Շուշիի պարետային վաշտերի, «Ուրագան» ջոկատի, ուսումնական և կանանց գումարտակների հիմքի վրա կազմավորվեց 7-րդ (Շուշիի) պաշտպանական շրջանը: Գնդի հրամանատար նշանակվեց Վաչագան Իշխանյանը, շտաբի պետ՝ Միքայել Գաբրիելյանը, պետի տեղակալ՝ Սերգեյ Բեգլարյանը, ՊՇ-ի հրամանատարի սպառազինության գծով տեղակալ՝ Յուրի Խաչատրյանը, թիկունքի գծով տեղակալ՝ Արմեն Սարգսյանը, օպերատիվ բաժնի պետ՝ Միքայել Պողոսյանը, հետախուզության պետ՝ Արայիկ Ավագյանը, կապի պետ՝ Գարեգին Բաբայանը, ինժինեռական ծառայության պետ՝ Արկադի Գաբրիելյանը<sup>1388</sup>:

Ձևավորվեցին երեք գումարտակներ. 51-րդ (հրամանատար Վլադիմիր Կասյան), 52-րդ (հրամանատար Ռաֆայել Գրիգորյան, որին 1993 թ. սեպտեմբերից փոխարինել է Շուշիի պարետ Սամվել Հարությունյանը) և 53-րդ (հրամանատար՝ Մարտիկ Գասպարյան, վերջինիս փոխարինել է Վլադիմիր Ավագյանը):

Շուշիի գունդն անուրանալի դերակատարություն է ունեցել Լաչինի, Քելբաջարի, Ղայբալուի, Հադրութի, Մարտակերտի, Ադղամի, Ֆիզուլիի,

Ջերբայիլի շրջաններում ծավալված ինչպես հարձակողական, այնպես էլ՝ պաշտպանողական մարտերում:

Հայրենիքի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերեցին գնդի 128 զինծառայողներ<sup>1389</sup>: Տասնյակ ազատամարտիկներ արժանացան կառավարական բարձր պարգևների, շքանշանների և մեդալների: Գնդի հրամանատար Վաչագան Իշխանյանի հարթաքանդակը այսօր տեղադրված է Շուշի քաղաքում:

7-րդ (Շուշիի) պաշտպանական շրջանը վերակազմավորվեց 1996 թ. ապրիլի 1-ին: Նրա մեջ ընդգրկված անձնակազմն իր ծառայությունը շարունակեց իրականացնել առաջնագծում գտնվող զորամասերում: Ներկա օրերում Շուշիում տեղակայված են կապի, հակաօդային պաշտպանության մի շարք զորամասեր, որոնք պատվով են կատարում հայրենիքի նկատմամբ իրենց պարտքը:

1992 թ., ԼՂՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց Շուշիի վարչակազմը: Պաշտպանության պետական կոմիտեի ներկայացուցիչ նշանակվեց Սեմյոն Բաբայանը: Խնդիր դրվեց սկսել քաղաքի վերականգնողական ու վերաբնակեցման աշխատանքները:

Քաղաքի բազմաբնակարան շենքերից 8-ը հրդեհված էր, 19-ը՝ վթարային վիճակում, և միայն 13-ն էր բնակության համար պիտանի, որտեղ կար 395 բնակարան: Առանձնատներից անվնաս են մնացել կեսը՝ շուրջ 573 տուն, մնացածները վերականգնման կարիք ունենին: Մարտական գործողությունների ընթացքում մասնակիորեն ավերվել են դպրոցները, մանկապարտեզները, գրադարանները, ակումբները, մշակույթի պալատը, թանգարանը, խանութները, հյուրանոցը, առողջարանները, հանգստյան տները, նախկին շրջկոմի և շրջգործկոմի, փոստի շենքերը, 19-րդ դարից մնացած շինություններն ու պատմական հուշարձանները: Անմխիթար վիճակում էին գտնվում ճանապարհները: Այցելուներից մեկը Շուշին անվանել է «Ուրվական քաղաք»<sup>1390</sup>:

Պատերազմի ավարտից հետո, ինչպես ԼՂՀ կառավարության, այնպես էլ առանձին անհատ բարերարների, բարեգործական հիմնադրամների կողմից Շուշիի վերականգնման ծրագրեր են մշակվել: Ցավոք, այդ աշխատանքները 1990-ական թվականներին դանդաղ էին ընթանում, և ծրագրերի մեծ մասը մնացել է թղթի վրա: Մինչև 1990-ական թվականների

<sup>1389</sup> Հասրաթյան Ա., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, էջ 391:

<sup>1390</sup> Rieff D, Case study in Ethnic strife (Nagorno-Karabakh) Foreign Affairs. 1997, n. 2 vol. 76, n. 2; Նույնը տես՝ Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., նշվ. աշխ., էջ 43:

<sup>1388</sup> ՊԲ արխիվ, ՊԲ հրամանատարի հրամաններ, գ. 1, թ. 343: Նույնը տես՝ Հասրաթյան Ա., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, էջ 381:

վերջերը հիմնականում վերականգնվեցին բնակչության կենսապահովման ենթակառուցվածքները՝ ջրագծերը, հեռախոսակապը: Լուծվեցին էլեկտրականության և գազի մատակարարման հարցերը:

1998 թ. կազմվել են Շուշիի նոր հատակագիծը և քաղաքի զարգացման ծրագիրը, ըստ որի պետք է վերականգնվեն 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին կառուցված 5 տասնյակից ավելի ճարտարապետական արժեք ունեցող շինությունները:

2007 թ. քաղաքի վերականգնողական աշխատանքները նոր թափ են ստացել: Հիմնովին փոխվել են քաղաքի ջրային սնուցման խողովակաշարերը, ներքին ցանցը: Տարեցտարի վերականգնվում են կիսավեր շինությունները, կառուցվում են բնակելի նոր առանձնատներ, շենքեր: «Իսահակի աղբյուր»-ը Ռուբեն Հայրապետյանի միջոցներով ոչ միայն վերանորոգվել, այլ նաև հարևանությամբ կառուցվել է ժամանակակից ռեստորանային համալիր: Բարեկարգ ասֆալտապատ ճանապարհով քաղաքից կարելի է հասնել դեռևս 19-րդ դարից շուշեցիների ամենասիրված հանգստավայրերից մեկը՝ կուսական անտառներով շրջապատված «Իսահակի աղբյուր»-ը:

Ռուսաստանցի բարերար Կոնստանդին Մանուկյանի միջոցներով վերանորոգվել է Մարիամ Ղուկասյան օրհորդաց դպրոցը, որտեղ 2012 թ. հոկտեմբերից գործում է ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը: Բարերարների աջակցությամբ ու Հայ առաքելական եկեղեցու միջոցներով հիմնովին վերանորոգվել են Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ և Հովհաննես Մկրտչի Կանաչ ժամ եկեղեցիները:

1992 թ. Շուշին դարձավ Արցախի թեմական կենտրոնը: Այդ հանգամանքը նպաստել է, որ Շուշին, ինչպես վերաբնակիչների, այնպես էլ այցելուների համար առավել գրավիչ դառնա: Հիմնովին վերանորոգվել են Շուշիի կենտրոնական փողոցները: Նախախորհրդային Շուշիի փառավոր անցյալի դիմագիծը վերականգնելու նպատակով անհրաժեշտություն առաջացավ փոխել Ադրբեջանի գերիշխանության տակ գտնվելու տարիներին քաղաքի փողոցներին «կպցրած» թուրքական անուններն ու ազգանունները:

2017 թ. տվյալներով Շուշիում հաշվառված և պետական պահպանության է վերցված 476 հուշարձան, որոնցից 10-ը մահմեդական են: Շուշիում գտնվող պատմական արժեք ունեցող հուշարձանների մեծ մասը ենթակա է վերանորոգման: Չնայած Ադրբեջանում մասսայականորեն ոչնչացվում են հայկական հուշարձանները, այնուամենայնիվ, ֆրանսահայերի և Երևանում գործող «Արևելյան ժառանգության պահպանության հիմնադրամ»-ի տրամադրած միջոցներով վերականգնվում են Շուշիի մզկիթները: Շուշիում

վերականգնվել են ադրբեջանցիների կողմից ոչնչացված Իվան Թևոսյանի, Նելսոն Ստեփանյանի կիսանդրիները: Մուրացանի կիսանդրին զարդարում է մեծ գրողի անունը կրող դպրոցի բակը: ՀՀ պաշտպանության առաջին նախարար Վազգեն Սարգսյանի հուշարձանը տեղադրվել է քաղաքի՝ նրա անունը կրող կենտրոնական հրապարակում:

Շուշիի ազատագրման համար զոհվածների հիշատակը հավերժացնելու նպատակով քաղաքի մատույցներում կառուցվել է հուշահամալիր, որը տեղացիներն անվանում են «Տանկ հուշարձան»: Ջոհվածների հիշատակին քաղաքում կառուցվել են նաև հուշաղբյուրներ:

Այսօր Շուշիի ազգային դիմագիծը պահպանելու հրատապ անհրաժեշտություն ունենք: Ըստ էության Գյումրին՝ ՀՀ-ում, իսկ Շուշին՝ ԼՂՀ-ում 19-րդ դարից մնացած հայկական ազգային ճարտարապետական-կառուցողական արվեստը ներկայացնող քաղաքների համարում ունեն, որոնց վերականգնումը, պահպանումը և սերունդներին փոխանցումը պատվի ու պարտքի խնդիր է: Ցավալիորեն այդ խնդիրները լուծելու ճանապարհին օրյեկտիվ դժվարությունների հետ մեկտեղ գոյություն ունեն նաև սուբյեկտիվ խոչընդոտներ: Տասնյակ շենքեր ու շինություններ գտնվում են մասնավոր մարդկանց տրամադրության տակ, որոնք տարիներ շարունակ գործնական ոչինչ չեն ձեռնարկում դրանց վերականգնման ուղղությամբ: Մյուս կողմից՝ բյուջեով նախատեսված և մասնավոր ներդրողների գումարները շատ դեպքերում նպատակաուղղվում են ոչ թե հին շենքերի վերանորոգմանը, այլ նորերի կառուցմանը: Թույլ վերահսկողության պայմաններում կիսավեր տների սրբատաշ քարերն օգտագործվում են այս կամ այն անհատների կողմից՝ կամայական ձևով: Երբեմն էլ վերանորոգված շենքերն ու փողոցները չեն համապատասխանում սկզբնական տեսքին: Օրինակ՝ քաղաքի մուտքի պարիսպների վրա նոր շինություններն ու դեպի կենտրոն ձգվող, նախկինում սալահատակված փողոցի՝ ներկայումս ասֆալտապատ վիճակը:

Հար և նման բացերի շտկումը հնարավորություն կտա պահպանել հայոց բերդաքաղաքի ազգային դիմագիծը: Նախատեսվում է քաղաքի երբեմնի մշակութային, կրթական կենտրոնի համբավի ու գործառույթի վերականգնում: Նման քայլերը կնպաստեն, որ Շուշին դառնա զբոսաշրջային գրավիչ կենտրոն:

ՀՅԴ ջանքերով 1992 թ. քաղաքում բացվել է «Արամ Մանուկեան» ազգային վարժարանը: Կրթական հաստատությունում տարբեր տարիների տնօրեններ են եղել Արտաշես Տոռոզյանը, Արարատ Բարսեղյանը, Հովիկ Մուսայելյանը: Շուշիում գործում են Խ. Աբովյանի անվան ավագ և Մուրա-

ցանի անվան հիմնական դպրոցները, 1993 թ. Դանիել Ղազարյանի անվան երաժշտական, 1997 թ. գիշերօթիկ երաժշտական կրթօջախները, 1993 թ. Արսեն Խաչատրյանի անվան մշակութալուսավորական, (1999 թ. հումանիտար) ուսումնարանը, որը գլխավորել է Ալբերտ Արսենի Խաչատրյանը:

Որոշակի հաջողություններ է արձանագրվել արհեստագործական կրթության ապահովման ասպարեզում: 1993–1997 թթ. գործել է քաղաքի պրոֆ-տեխուսումնարանը: Ֆրանսահայ գործարար Եզնիկ Մոզյանի կտակով նախատեսված գումարով և ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ կառուցվել է բարերարի անունը կրող ժամանակակից արհեստագործական ուսումնարան, որն իր դռները սովորողների առաջ բացել է 2015 թ. սեպտեմբերի 1–ին:

Փորձ է կատարվում Շուշիում արմատավորել նաև բարձրագույն կրթության դրվածքը: 1997–2003 թթ. քաղաքում իր գործունեությունն է ծավալել Շուշիի մասնավոր «Ժողովրդական համալսարանը»: Այստեղ է գտնվում Հայաստանի ազգային ազրարային համալսարանի Շուշիի մասնաճյուղը, որի տնօրենն է կենսաբանական գիտությունների դոկտոր Վահրամ Հայրապետյանը:

ԼՂՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 28–ի որոշմամբ հիմնադրվել է Շուշիի տեխնոլոգիական համալսարանը, որը 2016 թ. սեպտեմբերի 1–ից, հիմնովին վերանորոգված և կահավորված վիճակով, սկսել է իր աշխատանքները: Համալսարանի ռեկտոր է ընտրվել պրոֆեսոր Հովհաննես Թոքմաջյանը:

Խոստումնալից ապագա ունեն Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի Շուշիի նորաբաց մասնաճյուղը, Հ. Գյուրջյանի անվան գեղարվեստի ինստիտուտը, որը գլխավորում է քանդակագործ Յուրի Հովհաննիսյանը:

2008 թ. հունվարի 7–ին, ԼՂՀ–ի կառավարության որոշմամբ Շուշիի «Սոս Սարգսյան» մանկապատանեկան, «Երվանդ Մանարյան» տիկնիկային և Շուշիի դրամատիկական թատրոնների միավորմամբ ստեղծվել է հայ թատերական արվեստի մեծ երախտավոր, շուշեցի Մկրտիչ Խանդամիրյանի անունը կրող պետական թատրոնը, որի գլխավոր ղեկուսույցը ԼՂՀ ժողովրդական արտիստ Լեոնիդ Հարությունյանն է: Թատրոնի կոլեկտիվը ձգտում է վերականգնել Շուշիի թատերական կյանքի ոսկե դարաշրջանի նախկին փառքը: Շուշիի պետական թատրոնը մասնակցել է համահայկական հինգ փառատոների, շահել ոսկե մեդալ և մեկ առաջին մրցանակ: Հյուրախաղերով հաճախակի հանդես է գալիս ՀՀ–ում և ԼՂՀ–ում:

ՀՀ–ի և ԼՂՀ–ի սահմաններից դուրս մեծ համարում ունի 1993 թ. «Արամ Մանուկեան» վարժարանում ստեղծված «Վարանդա» մանկապատանեկան երգչախումբը, որի խմբավարն է բեյրութաբնակ Զաքար Քեշիշյանը:

1994 թվականից քաղաքում հրատարակվում է «Շուշի» թերթը, որի առաջին խմբագիրն էր Մուշեղ Բաղդասարյանը:

Շուշեցիների և քաղաքի այցելուների համար սիրելի վայրեր են համարվում Շուշիի պատմության, կերպարվեստի, գորգերի, ակադեմիկոս Գ. Գաբրիելյանցի անվան երկրաբանական թանգարանները: Քաղաքի հյուրերին բարձրորակ սպասարկում են ապահովում «Շուշի», «Ավան պլազա», «Գրանդ հոթել» հյուրանոցները:

Շուշիի բուժմիավորումը, որն ունի 5 բժիշկներ և 10 000 բնակչի հաշվով 45,3 մահճակալներ, լուծում է ոչ միայն քաղաքի, այլ նաև շրջանի մյուս բնակավայրերի հետ կապված առողջապահական հարցերը<sup>1391</sup>:

Քաղաքի ազգաբնակչության ժամանցի, հանգստի կազմակերպման, սպորտի զարգացման համար բացվել են գրադարան, մանկապատանեկան սպորտդպրոց, վերանորոգվել է մարզադաշտը:

Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության շենքում գործում է Արցախի բարբառի և ազգագրության ուսումնասիրության կենտրոն:

Շուշիում հաճախակի կազմակերպվում են սպորտային մրցություններ, գիտաժողովներ, արվեստի փառատոներ:

Շուշին ունի իր գինանշանը, դրոշը և հիմնը: Համայն հայության ուժերը մեկտեղելու և հիմնախնդիրները լուծելու նպատակով 2006 թ. ստեղծվել է «Շուշիի վերածննդի հիմնադրամը»: 2008 թ. հունվարի 19–ին կազմակերպվել է «Երևան–Շուշի–Բեթղեհեմ» հեռուստամարաթոնը:

2013 թ. քաղաքում բացվել է Շուշիի և Լոս Անջելեսի բարեկամության այգին: Լոս–Անջելես, Ֆրանսիայի Բուրգ դե Վալանս և Վիլյորբան քաղաքները Շուշիի քույր քաղաքներն են:

2008 թ. հոկտեմբերի 16–ին ազգային մեծ բարերար Լևոն Հայրապետյանի և նրա համախոհների միջոցներով ու ջանքերով Շուշիի Ղազանչեցոց եկեղեցում և Գանձասարում կազմակերպվել է Արցախի 700 զույգերի պսակադրությունը:

Արցախի ղեկավարության համար ամենամեծ խնդիրներից մեկը եղել և մնում է Շուշիի վերաբնակեցման հարցը:

<sup>1391</sup> ԼՂՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական–վերլուծական զեկույց, Ստեփանակերտ, 2016, էջ 65:

Քաղաքն ազատագրելուց հետո առաջին հերթին իրենց հայրենի օջախներ վերադարձավ 20–րդ դարի 80–ական թվականներին բերդաքաղաքում ապրած շուշեցիների մի մասը: Նրանց հետ միասին քաղաքում հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթածները և պատերազմական գործողությունների հետևանքով ԼՂՀ–ից տեղահանված քաղաքացիները: Հետագա տարիներին Շուշիում վերաբնակվել են տարբեր երկրների և բնակավայրերի հայ քաղաքացիներ: 1996 թ. Շուշիում հաստատված բնակչության ներթնիկ խմբերի հետևյալ պատկերի մասին է պատմում ներքոհիշյալ աղյուսակը<sup>1392</sup>:

Ներթնիկ խումբ	Ընտանիք	Տոկոսը
Շուշեցիներ	221	20,7
Ստեփանակերտցիներ	302	28,3
Բռնագաղթածներ Ադրբեջանից	222	21,0
Տեղահանվածներ ԼՂՀ շրջաններից	200	18,7
Վերաբնակիչներ ՀՀ–ից	121	11,3
Ընդամենը	1066	100,0

Նախկին ժամանակների համեմատ քաղաքը չնայած նույն է բնակեցված, այնուամենայնիվ, տարաբնակեցման որոշ եղանակների ազդեցությամբ գրեթե ողջ տարածքը զբաղեցվել է: Հետպատերազմյան տարիներից առայսօր քաղաքի վերաբնակեցման և բնական աճի մասին պատկերացում կազմում ենք ներքոհիշյալ աղյուսակի<sup>1393</sup> միջոցով:

Տարեթիվ	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005*	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Շուշիի բնակչության թիվը	3609	3609	2900	2600	2745	2893	2994	3052	3119	3191	3320	3429	3599	3880	4136	4247	4281	4310	4233	4246

\*2005 թ. Մարդահամարի տվյալներով

Քաղաքի առանձնատներում ապրող բնակիչների մի մասն իրենց կարիքների համար սահմանափակ չափով զբաղվում է հողագործությամբ ու անասնապահությամբ:

<sup>1392</sup> Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., Նշվ. աշխ., էջ 31:

<sup>1393</sup> Տվյալները մեզ է տրամադրել ԼՂՀ վիճակագրական ազգային ծառայությունը:

Շուշիի ազգաբնակչությունը հիմնականում ներգրավված է պետական հաստատությունների աշխատանքներում: Զգալի թիվ են կազմում զինծառայողները:

Շուշիի ազգաբնակչության զբաղվածության հարցը լուծելու նպատակով քաղաքում ստեղծվել է արտադրական կոմբինատ, ոսկերչական, թեյի արտադրամասեր, որոնք ներկա դրությամբ ինչ–ինչ պատճառներով չեն աշխատում: Քաղաքում ներկայումս տեղակայված է փոքր գորգագործարան, որի արտադրանքն իրացվում է հիմնականում ՀՀ–ում և արտասահմանյան երկրներում: Շուշիում գործում են «Արցախ բանկ»–ի, «Ամերիաբանկ»–ի և «Արդշինբանկ»–ի մասնաձյուղերը:

Անկախության տարիներին Շուշիի շրջանի վարչակազմը ղեկավարել են Սեմյոն Բաբայանը (15.05.1992–26.05.1993), Յուրի Ղազարյանը (01.06.1993–15.09.1994), Վլադիմիր Կասյանը (11.08.1994–21.11.1995), Լևոն Բաղդասարյանը (21.11.1995–02.04.1996), Արշավիր Ղարամյանը (02.04.1996–01.01.1997), Մելս Հակոբջանյանը (01.01.1997–28.11.1997), Սերգեյ Միրզոյանը (28.11.1997–11.08.1998), Վլադիմիր Կասյանը (11.08.1998–28.09.2007), Վարդան Գաբրիելյանը (28.09.2007–21.05.2009), Գեորգի Հայրիյանը (21.05.2009–27.12.2010), Քաջիկ Խաչատրյանը (17.01.2011–24.09.2012): Այդ աշխատանքը 2012 թ. սեպտեմբերի 24–ից նորից շարունակում է Վլադիմիր Կասյանը:

Վերոնշյալ ժամանակաշրջանում Շուշիի քաղաքապետերն են եղել Սամվել Մանգասարյանը (1998–1999), Մայրո Դանիելյանը (1999–2000), Ֆելիքս Հակոբյանը (2000–2009), Կարեն Ավագիմյանը (2009–2013) և ներկայումս՝ Արծվիկ Սարգսյանը:

Համահայկական ջանքերով վերընձյուղված Շուշին բազում դարերի ընթացքում այստեղ ապրած հայ մարդկանց օրինանքի ու արարումի ուժով Արցախի սրտում՝ հայացքը լուսավոր ապագային, փորձում է նորից ու նորից դառնալ հավատի ու մաքառումի անսպառ աղբյուր:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Շուշին Մեծ Հայքի այն քիչ բնակավայրերից է, որ բախտորոշ դերակատարություն է ունեցել հայոց պատմական ճակատագրում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ առաջին անգամ փորձ է կատարվել ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող շուրջ երեքհազարամյա իրադարձությունները, որպես մեկ ամբողջական գործընթացի առանձին հատվածներ, քննության ենթարկել պատմական գուգահեռներում՝ վեր հանելով ճշմարտությունը, երբեմն էլ, ելնելով որոշ անհրաժեշտությունից, առաջադրել հիմնահարցերի լուծման սեփական մոտեցումներ ու հայեցակետեր:

Շուշին բազմադարյան կենսագրության կեռմաններում ձեռքբերումներով ու կորուստներով հանդերձ, հունցվել է տարածաշրջանային զարգացումների հոլովույթում, և այդ ամենը բյուրեղանալով՝ իր վճռորոշ տեղն ու դերն է ունեցել հայոց քաղաքակրթական արժեհամակարգում:

Դրանք այսօր կարիք ունեն նորից արժևորվելու և ՀՀ ու ԼՂՀ հզորացման գործին հավուր պատշաճի օգտագործվելու:

Շուշիի բազմադարյան կենսագրության մեջ հոգևոր, նյութական, հասարակական, պետական նշանակության արժեքների ստեղծման գործում առանցքային դերակատարություն է ունեցել քաղաքի բնա-աշխարհագրական միջավայրը:

Նախախնամության կամքով լեռնային կղզու նման ստեղծված Շուշիի սարահարթը, շրջակայքի հետ համեմատ, առավել քան տիրական էր և մարդու անվտանգ ու ապահով կյանքի համար՝ հարմարավետ:

Այստեղ հայ մարդը շարունակաբար ապրել է մի քանի հազարամյակներ: Աշխարհագրական տեսանկյունից այն, գտնվելով տափաստանից դեպի հայկական լեռնաշխարհի խորքերը տանող առանցքային կետերից մեկում, արդեն վաղ միջնադարից դարձել էր ամրացված բնակավայր: Հյուսիսից և արևելքից դեպի հայկական լեռնաշխարհի սիրտ՝ Այրարատ թափանցել ձգտող հորդաները դեմ էին առնում բնության և մարդու կողմից ներդաշնակորեն ստեղծված ամրություններին ու ջարդուփշուր դառնում:

Տարեցտարի ահագնացող վտանգն Արցախի իշխաններին դրդում էր առավել անխոցելի դարձնել բերդավանը:

Ժամանակի ոգուն համահունչ՝ այն սովորական ամրոցից քայլ առ քայլ վերածվում էր պաշտպանական համակարգի: Հայկական զինական ուժը Շուշիի կիրճի երկայնքով տեղակայված ամրոցները դարձրել էր անխոցելի վահան: Այն առավել ընդգծված դերակատարություն ունեցավ սղախական պայքարի տարիներին, որից մնացած ավանդույթներով բազում սերունդներ դաստիարակվեցին և հուսալիորեն պաշտպանեցին հայրենի սահմանները:

Աշխատության մեջ, սկզբնաղբյուրների հիման վրա, Բ. ա. 1-ին հազարամյակից մինչև 18-րդ դարի կեսերն առաջին անգամ Շուշիի պատմության մութ կողմերի լուսաբանումը և ամբողջական ներկայացումը հնարավորություն է տալիս բացահայտելու Փանահ խանի կողմից 18-րդ դարի երկրորդ կեսին բերդաքաղաքի հիմքերը դնելու մասին ադրբեջանական պատմագիտության մեջ տեղ գտած կեղծ տեսակետը:

Ճակատագրի քմահաճ խաղը 18-րդ դարի երկրորդ կեսին որոշակիորեն աղճատեց Շուշիի հայահունչ դիմագիծը:

Հայ իշխանական տներից մեկի՝ Վարանդայի Մելիք Շահնազարյանների ներկայացուցիչ մելիք Շահնազար Բ-ի անխոհեմ քայլի պատճառով թուրքական ծագում ունեցող Փանահը, այնուհետև Իբրահիմն ամրացան Շուշիում և շուրջ 50 տարի մահ ու ավեր սփռեցին Հայոց Արևելից նահանգներում:

Արցախահայությունը նախկինում իրեն պաշտպան բերդավանը արդեն դիտում էր որպես թշնամական կենտրոն: Ավելին, Շուշիում նստած խաների երկդիմի քաղաքականությունն առիթ էր տալիս նաև արտաքին միջամտությունների:

Անընդհատ կրկնվող պատերազմները, սովը, համաճարակները, մահտարժամը, արտագաղթը քամել էին երկրամասի կենարար հյուսթերը:

Չնայած արնածոր վերքին՝ հայրենի հողին կառչած արցախցին իր մեջ գերբնական ուժ ուներ ու նաև մեծ պատասխանատվություն՝ անցած-գնացած և նաև վաղվա սերունդների առջև:

Արցախահայության ջանադիր մասնակցությամբ ռուսական զորքերի հաղթանակներն ամբողջականացվեցին 1813 թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագրով:

Ճիշտ է, արցախահայությանը չհաջողվեց վերակերտել պետականությունը, այնուամենայնիվ, երկրամասը, հայտնվելով ռուսական կայսրության կազմում, զարգացման և ազգային միատարրության պահպանման հնարավորություն ունեցավ:

Երկրամասի կենտրոն Շուշին, լինելով Ռուսատանը Պարսկաստանի հետ կապող առանցքային կետում, զարգացման նոր հեռանկարներ ստացավ: Սկսվեց Շուշիի պատմության նոր շրջանը: Այն առլեցուն էր հասարակական-քաղաքական տպավորիչ զարգացումներով ու տնտեսական, մշակութային աննախադեպ ձեռքբերումներով:

Շուշին դառնում է հայահավաք կենտրոն: Այսրկովկասի ու հարակից հայաշատ վայրերից մարդիկ նախընտրում էին տեղափոխվել Շուշի և իրենց կյանքը կապել հայոց բերդաքաղաքի հետ:

Նորաբնակները, ենթարկվելով արցախյան միջավայրի ազդեցությանը, մի քանի տասնամյակների ընթացքում հիմնականում մոռանում են իրենց բարբառներն ու սովորույթները, մերվում տեղացիներին և արդեն հանդես գալիս որպես հայկական քաղաքամասի բնակիչներ:

Տարբեր շարժառիթներով 18-րդ դարի երկրորդ կեսից այստեղ հայտնվեցին թուրքեր, պարսիկներ, 19-րդ դարի սկզբներից՝ ռուսներ, լեհեր, հրեաներ, գերմանացիներ ու ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Նրանք էլ իրենց մշակույթը և ապրելակերպը բերեցին հայաշունչ Շուշի: Այդ նոր միջավայրն առլեցուն էր ներքին անտեսանելի բախումներով ու հակասություններով: Լեոն իրավացիորեն գրել է. «Ասիան ու Եւրոպան, մարդկային լուսաւոր միտքը և խաւար նախապաշարմունքները գուցէ ոչ մի տեղ այնքան խիստ կերպով չեն ընդհարել իրար հետ, այնքան կրքոտությամբ չեն պատերազմել իրար հետ, ինչպէս Շուշու ժայռոտ բարձրութեան վրայ»<sup>1394</sup>:

Նմանօրինակ խմորումների մեջ տեսանելի էր հայությանը ներհատուկ տնտեսական, մշակութային, բարոյական, հասարակական-քաղաքական ձեռքբերումներով բյուրեղացած արժեհամակարգի կենսունակությունը: Այդ քուրայում ծնվեցին ու կոփվեցին ազգային կուռ գաղափարներ, որոնք հայությանն ինքնադրսևորման նոր մղումներ հաղորդեցին: Շուշիի հայկական քաղաքամասում ծավալված տնտեսական, մշակութային եռուզեռը, առաջադիմական գաղափարների կուտակումները նոր որակ ու ընթացք տվեցին նաև բերդաքաղաքում ապրող ազգային փոքրամասնությունների, հատկապես թուրքերի կենցաղին, ապրելակերպին և ընդհանրապես՝ կյանքին:

Արցախահայության համար բախտորոշ նշանակության այդ տարիներին Շուշին հայտնվել էր քաղաքական բարդ զարգացումների կիզակետում:

19-րդ դարի վերջերին Արևմտյան Հայստանում սուլթանական բռնաձնշումների սաստկացման, Արևելյան Հայաստանում ցարիզմի հայահավաճ քաղաքականության և հայ-թաթարական արյունալի բախումների

պայմաններում Շուշիում գտնվող հասարակական-քաղաքական կազմակերպությունները, կուսակցությունները, հատկապես ՀՅԴ-ն, հասկացան, որ ապագայում սպասվելիք արհավիրքներին դիմակայելու համար անհրաժեշտ է վերակերտել ազգային պետականությունը: Երկարատև աշխատանքի և պայքարի արդյունքում 1917 թ. դեկտեմբերին Շուշիում դրվեցին արցախահայության ազգային պետականության հիմքերը:

Այդ պատվաբեր առաքելության իրականացման ճանապարհին Շուշին նաև անդառնալի կորուստներ ունեցավ: 1920 թ. ոչնչացվեց քաղաքի հայության մեծ մասը: Թուրք-բոլշևիկյան ալյանսի պայմաններում խորհրդային տարիներին բերդաքաղաքը բազում անակնկալների և հակասությունների հանգուցակետ դարձավ:

Չնայած խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունն ամեն կերպ ձգտում էր Շուշիից ջնջել հայկական հետքը, սպանել հայոց բերդաքաղաքի ֆենմենը, այնուամենայնիվ, աշխարհով մեկ սփռված շուշեցիները հավատով առլեցուն սպասում էին հայրենի բերդաքաղաքի պայծառ օրվան: Արցախյան շարժումը Շուշին ազատագրեց դժոխային գերությունից:

Համայն հայության ջանքերով վերընձյուղված Շուշին բազում դարերի ընթացքում այստեղ ապրած հայ մարդկանց օրհնանքի և արարումի ուժով Արցախի սրտում՝ հայացքը լուսավոր ապագային, փորձում է նորից ու նորից դառնալ հավատի ու մաքառումի անսպառ աղբյուր: Հայրենի պետության գրկում բերդաքաղաքին սպասում է զարգացում ու նոր հորիզոնների նվաճում:

<sup>1394</sup> «Փայլակ», հմ. 18, 16 մարտի, 1917:



## ШУШИ: РОЛЬ И МЕСТО В СИСТЕМЕ АРМЯНСКОЙ ЦИВИЛИЗАЦИИ

Ваграм Балаян

### *Резюме*

